Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Յարգելի Բ.

Արշակունի Ա.

ուսու [illegible]-

[illegible]

[illegible]:

1901 Յունիսի 14

[illegible]

I
1048

Ա. Հ.

ՆՈՐ
ԿՏԱԿԱՐԱՆ

ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

ՅՈՒՆԱԿԱՆ ԲՆԱԳՐԷՆ ԹԱՐԳՄԱՆԵԱԼ

ԱՐԴԵԱՄԲՔ ԵՒ ԾԱԽԻՒՔ
ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ
ԳՐՈՑ

معارف عموميه نظارت جليله‌سنك ١٣ صفر ٣١٥
و ٢ تموز ٣١٣ تاريخلى و ٢٦٢ نومرولى
رخصتنامه‌سيله نشر اولنمشدر

مصارفى آمريقان بيبل شركتى طرفندن تسويه
اولنه‌رق طبع اولنمشدر

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱԿՈԲ ՊՕՅԱՃԵԱՆ

1897

ԱԶԳԱՅԻՆ
ՀԱՄԱՐ
1-1098

ՑԱՆԿ
ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ

	Գլուխք	Երես
ԱՒԵՏԱՐԱՆ		
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ	28	1
ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ	16	84
ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ	24	136
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ	21	225
ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ	28	291
ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ		
ԱՌ ՀՌՈՎՄԱՅԵՑԻՍ	16	379
ԱՌ ԿՈՐՆԹԱՑԻՍ Ա.	16	415
ԱՌ ԿՈՐՆԹԱՑԻՍ Բ.	13	450
ԱՌ ԳԱՂԱՏԱՑԻՍ	6	474
ԱՌ ԵՓԵՍԱՑԻՍ	6	486
ԱՌ ՓԻԼԻՊՊԵՑԻՍ	4	498
ԱՌ ԿՈՂՈՍԱՑԻՍ	4	507
ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ Ա.	5	515
ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ Բ.	3	523
ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ Ա.	6	527
ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ Բ.	4	538
ԱՌ ՏԻՏՈՍ	3	545
ԱՌ ՓԻԼԻՄՈՆ	1	549
ԱՌ ԵԲՐԱՅԵՑԻՍ	13	551
ԹՈՒՂԹ ՅԱԿՈԲՈՒ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ	5	578
ՊԵՏՐՈՍԻ Ա. ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ	5	587
ՊԵՏՐՈՍԻ Բ. ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ	3	597
ՅՈՎՀԱՆՆՈՒ Ա. ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ	5	603
ՅՈՎՀԱՆՆՈՒ Բ.	1	613
ՅՈՎՀԱՆՆՈՒ Գ.	1	614
ՅՈՒԴԱՅԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ	1	616
ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ	22	619

ԱՒԵՏԱՐԱՆ
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

ԳԼՈՒԽ Ա

1 Գիրք ծննդեան Յիսուսի Քրիստոսի Դաւիթի որդ-
ւոյն՝ Աբրահամի որդւոյն։
2 Աբրահամ ծնաւ Իսահակը· Իսահակ ծնաւ Յա-
կոբը· Յակոբ ծնաւ Յուդան ու անոր եղբայրները·
3 Յուդա ծնաւ Փարէսը ու Զարան Թամարէն· Փա-
4 րէս ծնաւ Եսրոնը· Եսրոն ծնաւ Արամը· Արամ
ծնաւ Ամինադաբը· Ամինադաբ ծնաւ Նաասոնը,
5 Նաասոն ծնաւ Սաղմոնը· Սաղմոն ծնաւ Բոոսը
Ռախաբէն· Բոոս ծնաւ Ովբէդը Հռութէն· Ովբէդ
6 ծնաւ Յեսսէն· Յեսսէ ծնաւ Դաւիթ թագաւորը·
Դաւիթ թագաւոր ծնաւ Սողոմոնը Ուրիայի կը-
7 նիկէն· Սողոմոն ծնաւ Ռոբովամը· Ռոբովամ
8 ծնաւ Աբիան· Աբիա ծնաւ Ասան· Ասա ծնաւ
Յովսափատը· Յովսափատ ծնաւ Յովրամը· Յով-
9 րամ ծնաւ Ոզիան· Ոզիա ծնաւ Յովաթամը·
Յովաթամ ծնաւ Աքազը· Աքազ ծնաւ Եզեկիան·
10 Եզեկիա ծնաւ Մանասէն· Մանասէ ծնաւ Ամոնը·
11 Ամոն ծնաւ Յովսիան· Յովսիա ծնաւ Յեքոնիան
ու անոր եղբայրները Բաբելոնեան գերութեանը
12 ատենները· Բաբելոն գերութեան երթալնէն ե-
տև Յեքոնիա ծնաւ Սաղաթիէլը· Սաղաթիէլ
13 ծնաւ Զօրաբաբէլը· Զօրաբաբէլ ծնաւ Աբիուդը·
Աբիուդ ծնաւ Եղիակիմը· Եղիակիմ ծնաւ Ա-
14 զովրը· Ազովր ծնաւ Սադովկը· Սադովկ ծնաւ Ա-
15 քիմը· Աքիմ ծնաւ Եղիուդը· Եղիուդ ծնաւ Եղի-
ազարը· Եղիազար ծնաւ Մատթանը· Մատթան
16 ծնաւ Յակոբը· Յակոբ ծնաւ զՅովսէփ՝ զայրն

Մարիամայ, որմէ ծնաւ Յիսուս, որ կ'ըսուի Քրիս-
17 տոս։ Արդ բոլոր ազգերը Աբրահամէն մինչեւ Դա-
ւիթ տասնուչորս ազգ, և Դաւիթէն մինչեւ Բա-
բիլոնեան գերութիւնը տասնուչորս ազգ, ու
Բաբիլոնեան գերութենէն մինչեւ Քրիստոս՝ տաս-
նուչորս ազգ։
18 Եւ Յիսուսի Քրիստոսի ծնունդը աս կերպով էր.
անոր մայրը Մարիամ Յովսէփին նշանուած, դեռ
իրարու քով չեկած՝ Սուրբ Հոգիէն յղացած
19 գտնուեցաւ։ Եւ Յովսէփ անոր էրիկը արդար
մարդ ըլլալով՝ ու չուզելով որ զանիկա խայտառակ
ընէ, մտածեց որ ծածկաբար արձակէ զանիկա։
20 Եւ քանի որ անիկա աս բանը կը մտածէր, ահա
Տէրոջը հրեշտակը երազի մէջ երեւցաւ անոր ու
ըսաւ, Յովսէփ՝ Դաւիթի որդին, մի վախնար քեզի
առնել քու Մարիամ կնիկդ, ինչու որ անոր
21 ներսի դին ծնածը Սուրբ Հոգիէն է։ Եւ որդի մը
պիտի ծնանի, ու անոր անունը *Յիսուս դնես,
քանզի անիկա իր ժողովուրդը իրենց մեղքերէն
22 պիտի փրկէ։ Եւ աս ամէնը եղաւ որ կատարուի
Տէրոջմէն ըսուածը մարգարէին ձեռքովը, որ կ'ը-
23 սէ, Ահա կոյսը պիտի յղանայ ու որդի պիտի ծնա-
նի, և անոր անունը Էմմանուէլ պիտի կոչեն, որ
24 կը թարգմանուի Աստուած մեզի հետ։ Եւ Յով-
սէփ քունէն արթննալով՝ ինչպէս որ Տէրոջը հը-
րեշտակը իրեն հրամայեց, այնպէս ըրաւ ու իր
25 կնիկը քովն առաւ. Եւ չէր գիտեր զանիկա՝ մինչեւ
իր անդրանիկ որդին ծնաւ, ու անոր անունը
Յիսուս դրաւ։

ԳԼ. Բ

1 Ու երբոր Յիսուս ծնաւ Հրէաստանի Բեթլեհեմին

*Այսինքն Փրկիչ

մէջ Հերովդէս թագաւորին օրերը, ահա արեւել-
2 քէն մոգեր եկան Երուսաղէմ։ Ու ըսին, Ո՞ւր
տեղ է ան՝ որ Հրէաներուն թագաւոր ծնաւ. ին-
չու որ մենք արեւելքի մէջ անոր աստղը տե-
սանք, ու եկանք անոր երկրպագութիւն ընելու։
3 Ու երբոր Հերովդէս թագաւորը լսեց՝ խռովեցաւ,
4 եւ բոլոր Երուսաղէմ իրեն հետ. Եւ ժողվելով
բոլոր քահանայապետները ու ժողովուրդին դը-
պիրները՝ հարցուց անոնց թէ Քրիստոսը ո՞ւր
5 պիտի ծնանի։ Անոնք ալ իրեն ըսին, Հրէաստանի
Բեթլեհեմին մէջ. ինչու որ ասանկ գրուած է
6 մարգարէին ձեռքովը. Եւ դուն, Բեթլէհէմ՝
Յուդայի երկիրը, Յուդայի իշխաններուն մէջ
բնաւ պզտիկ մը չես. ինչու որ քեզմէ իշխան
մը պիտի ելլէ որ իմ Իսրայէլ ժողովուրդս պիտի
7 հովուէ։ Անատենը Հերովդէս ծածկաբար մոգերը
կանչեց, ու ստուգեց անոնցմէ աստղին երեւցած
8 ատենը. Եւ զանոնք Բեթլէհէմ խրկելով՝ ըսաւ,
Գացէք սոյգը իմացէք ան մանուկին վրայով,
ու երբոր գտնէք՝ ինծի իմացուցէք, որ ես ալ
9 գամ՝ անոր երկրպագութիւն ընեմ. Ու երբոր
անոնք թագաւորէն աս բանը լսեցին՝ գացին. և
ահա ան աստղը որ արեւելքի մէջ տեսեր էին՝
անոնց առջեւէն գնաց, մինչեւ որ եկաւ կեցաւ
10 մանուկին եղած տեղին վրայ։ Երբոր տեսան աստ-
11 ղը, շատ մեծ ուրախութիւնով ուրախացան։ Եւ
տունը մտնելով՝ տեսան մանուկը իր մօրը Մա-
րիամին հետ, ու ինկան երկրպագութիւն ըրին ա-
նոր, և իրենց գանձերը բանալով ընծաներ տուին
12 անոր, ոսկի ու կնդրուկ և զմուռս։ Ու հրաման
առնելով երազի մէջ՝ որ նորէն Հերովդէսին
չդառնան, ուրիշ ճամբով գացին իրենց երկիրը։
13 Ու երբոր անոնք գացին, ահա Տէրոջը
հրեշտակը երազի մէջ երեւցաւ Յովսէփին ու ը-
սաւ, Ելիր առ մանուկը ու անոր մայրը, ու Ե-

գիպտոս փախիր, և հոն կեցիր մինչև որ ես քեզի
ըսեմ, քանզի Հերովդէս պիտի փնտռէ այս մա-
14 նուկը կորսնցնելու համար։ Ան ալ ելաւ, մա-
նուկը ու անոր մայրը գիշերով առաւ և գնաց
15 Եգիպտոս, ու մինչև Հերովդէսին մահը հոն էր. Որ
կատարուի Տէրոջմէն ըսուածը մարգարէին ձեռ-
քովը, որ կ'ըսէ, Եգիպտոսէն կանչեցի իմ որդիս։
16 Անատենը երբոր տեսաւ Հերովդէս թէ *խաբ-
ուեցաւ մոգերէն, սաստիկ սրդողեցաւ, ու խըր-
կեց ջարդեց Բեթլեհեմի և անոր ամէն սահման-
ներուն մէջ գտնուած բոլոր տղաքը՝ երկու տար-
ուընէն վար, այն ժամանակին համեմատ որ մո-
17 գերէն ստուգեց։ Անատենը կատարուեցաւ Երե-
միա մարգարէին ձեռքով ըսուածը, որ կ'ըսէ,
18 Ռամայի մէջ ձայն մը լսուեցաւ՝ ողբ, լաց ու մեծ
կոծ. Ռաքէլ կու լար իր տղոցը համար, ու չէր
ուզեր մխիթարուիլ, ինչու որ չկային։
19 Ու երբոր Հերովդէս մեռաւ, ահա Տէրոջը հը-
րեշտակը Եգիպտոս երազի մէջ Յովսէփին երե-
20 ցաւ, Ու ըսաւ, Ելի՛ր՝ առ մանուկը ու անոր մայ-
րը, և գնա Իսրայէլի երկիրը, քանզի մեռան ա-
21 նոնք որ մանուկին կեանքը կը փնտռէին։ Ան ալ
ելաւ՝ մանուկը ու անոր մայրը առաւ և եկաւ Իս-
22 րայէլի երկիրը։ Իսկ երբոր լսեց թէ Արքեղայոս
թագաւորեց Հրէաստանի վրայ իր հօրը Հերով-
դէսին տեղը, վախցաւ հոն երթալու. ու երազի
մէջ պատգամ առնելով՝ Գալիլեայի կողմերը գը-
23 նաց. Եւ եկաւ Նազարէթ ըսուած քաղաքը բնա-
կեցաւ, որ մարգարէներուն խօսքը կատարուի՝
թէ Նազովրեցի պիտի կոչուի։

*Յուն. ծաղրեցաւ

ԳԼ. Գ

1 Այն օրերը Յովհաննէս մկրտիչը եկաւ, ու Հրէաս-
2 տանի անապատին մէջ կը քարոզէր, Ու կ'ըսէր,
Ապաշխարեցէք, ինչու որ երկնից թագաւորու-
3 թիւնը մօտեցած է. Վասն զի ասիկա ան է՝ ո-
րուն համար Եսայի մարգարէին ձեռքով ըսուե-
ցաւ, որ կ'ըսէ, Անապատի մէջ կանչողին ձայնը,
Տէրոջը ճամբան պատրաստեցէք, անոր շաւիղ-
4 ները շիտկեցէք։ Եւ այս Յովհաննէսը իր հան-
դերձը ուղտի մազէ՝ ու իր մէջքը կաշիէ գօտի
ունէր. և իր կերակուրը մարախ ու վայրենի մեղր
5 էր։ Անատենը Երուսաղէմ և բոլոր Հրէաստան ու
6 Յորդանանու բոլոր կողմերը իրեն կ'ելլէին, Եւ կը
մկրտուէին իրմէն Յորդանանու մէջ, ու իրենց
7 մեղքերը կը խոստովանէին։ Ու երբոր տեսաւ
փարիսեցիներէն ու սադուկեցիներէն շատերը իր
մկրտութեանը եկած, ըսաւ անոնց, Իժերու ծը-
նունդներ, ո՛վ իմացուց ձեզի գալու բարկու-
8 թենէն փախչիլ. Ուրեմն ապաշխարութեան ար-
9 ժանաւոր պտուղ բերէք. Եւ մի՛ խորհիք դուք
ձեր ներսի դին ըսել, թէ Մենք [illegible] հայր՝ Աբրա-
համը ունինք. քանզի կ'ըսեմ ձեզի որ Աստուած
կարող է այս քարերէս Աբրահամին որդիներ հա-
10 նել. Ալ հիմա կացինը ծառերուն արմատին քովը
կը դրուի. ուստի ամէն ծառ որ բարի պտուղ
11 չբերեր, կը կտրուի և կրակը կը ձգուի։ Ես ձեզ
ջրով կը մկրտեմ ապաշխարութեան համար, բայց
իմ ետևէս եկողը ինծմէ զօրաւոր է, ու ես ա-
նոր կօշիկները կրելու արժանի չեմ. անիկա ձեզ
12 պիտի մկրտէ Հոգւով Սրբով ու կրակով. Որուն
հեծանոցը իր ձեռքն է, և իր կալը պիտի մաք-
րէ ու իր ցորենը համբարը պիտի ժողվէ, և յարդը
չմարելու կրակով պիտի այրէ։

13 Այն ատենը Յիսուս Գալիլեայէն Յորդանան եկաւ
14 Յովհաննէսին որ անկէ մկրտուի։ Եւ Յովհաննէս
կ'արգիլէր անիկա ու կ'ըսէր, Ինծի պէտք է որ
15 քեզմէ մկրտուիմ, ու դուն ինծի՞ կու գաս։ Յիսուս
պատասխան տուաւ ու ըսաւ անոր, Թող տուր հի-
մա, ինչու որ այսպէս կը վայլէ մեզի որ բոլոր
արդարութիւնը կատարենք։ Ետքը թող տուաւ ա-
16 նոր։ Ու երբոր Յիսուս մկրտուեցաւ՝ շուտ մը ջուրէն
դուրս ելաւ, և ահա երկինքը անոր բացուեցաւ,
ու տեսաւ Աստուծոյ Հոգին որ աղաւնիի պէս կ'իջ-
17 նէր, ու կու գար իր վրայ։ Եւ ահա երկինքէն
ձայն մը եկաւ որ կ'ըսէր, Ասիկա է իմ սիրելի
Որդիս, որուն հաւներ եմ։

ԳԼ. Դ

1 Այն ատենը Յիսուս անապատը տարուեցաւ Սուրբ
2 Հոգիէն՝ որ Սատանայէն փորձուի։ Եւ քառասուն
ցորեկ ու քառասուն գիշեր ծոմ պահելէն ետքը
անօթեցաւ։
3 Եւ փորձողը անոր մօտենալով ըսաւ, Թէ որ դուն
Աստուծոյ Որդին ես, ըսէ որ աս քարերը հաց ըլ-
4 լան։ Անիկա պատասխան տուաւ ու ըսաւ, Գրուած
է թէ Ոչ միայն հացով կ'ապրի մարդ, հապա ան
ամէն խօսքով՝ որ Աստուծոյ բերնէն կ'ելլէ։
5 Այն ատենը Սատանան առաւ տարաւ անիկա սուրբ
քաղաքը, և կայնեցուց զանիկա տաճարին աշ-
6 տարակին վրայ, Ու ըսաւ անոր, Թէ որ դուն Աս-
տուծոյ Որդին ես, քեզ վար ձգէ, ինչու որ
գրուած է թէ Իր հրեշտակներուն պիտի պա-
տուիրէ քեզի համար, ու ձեռքերնուն վրայ պիտի
վերցընեն քեզ, որ չըլլայ թէ ոտքդ քարի զար-
7 նես։ Յիսուս ըսաւ անոր, Դարձեալ գրուած է
թէ Քու Տէր Աստուածդ չփորձես։

8 Սատանան նորէն առաւ հանեց զանիկա խիստ
բարձր լեռան մը վրայ, և ցուցուց անոր աշխարհի
բոլոր թագաւորութիւնները և անոնց փառքը։
9 Ու ըսաւ անոր, Ասոնք ամէնը քեզի կու տամ,
10 թէ որ իյնաս՝ ինծի երկրպագութիւն ընես։ Ան-
ատենը Յիսուս ըսաւ անոր, [Ետեւս] գնա, Սատա-
նայ, ինչու որ գրուած է թէ Քու Տէր Աստուծոյդ
երկրպագութիւն ընես, ու միայն զանիկա պաշ-
11 տես։ Այն ատենը Սատանան զանիկա թողուց։ և
ահա հրեշտակներ եկան ու անոր սպասաւորու-
թիւն կ'ընէին։
12 Եւ երբոր լսեց Յիսուս թէ Յովհաննէս մատնուե-
13 ցաւ, ելաւ գնաց Գալիլեա։ Ու ձգելով Նազա-
րէթը՝ եկաւ բնակեցաւ Կափառնայում ծովեզեր-
եայ քաղաքը՝ Զաբուղոնի ու Նեփթաղիմի սահման-
14 ներուն մէջ։ Որ կատարուի Եսայի մարգարէին
15 ձեռքով ըսուած խօսքը, Զաբուղոնի երկիրը ու
Նեփթաղիմի երկիրը, ծովու ճամբով Յորդանանու
16 անդիի կողմը, հեթանոսաց Գալիլեան։ Խաւարի մէջ
նստող ժողովուրդը մեծ լոյս տեսաւ, և լոյս ծա-
գեցաւ անոնց՝ որ մահուան երկրին ու շուքին մէջ
17 կը նստէին։ Անկէ ետեւ Յիսուս սկսաւ քարոզել
ու ըսել, Ապաշխարեցէք, ինչու որ երկնից թա-
գաւորութիւնը մօտ է։
18 Երբոր Յիսուս Գալիլեացւոց ծովուն քովէրը կը
պտըտէր, տեսաւ երկու եղբայրներ՝ Պետրոս կոչ-
ուած Սիմոնը և անոր եղբայրը Անդրէասը՝ որ
ծովը ուռկան կը ձգէին, ինչու որ ձկնորս էին։
19 Եւ ըսաւ անոնց, Իմ ետեւէս եկէք, ու ձեզ մար-
20 դոց որսորդ ընեմ։ Անոնք ալ շուտ մը ուռկան-
21 ները թողուցին ու անոր ետեւէն գացին։ Եւ անկէ
յառաջ երթալով՝ տեսաւ ուրիշ երկու եղբայրներ՝
Զեբեդեան Յակոբոսը ու անոր եղբայրը Յովհան-
նէսը նաւին մէջ իրենց հօրը Զեբեդէոսի հետ, որ
իրենց ուռկանները կը կարկտէին։ ու կանչեց զա-

22 նոնք. Անոնք ալ շուտ մը նաւը ու հայրերնին
թողուցին, ու անոր ետեւէն գացին։
23 Եւ Յիսուս բոլոր Գալիլեան պտըտելով, կը սոր-
վեցընէր անոնց ժողովարաններուն մէջ, և ար-
քայութեան աւետարանը կը քարոզէր, ու ժողո-
վուրդին մէջի ամէն կերպ հիւանդութիւնները ու
24 ամէն կերպ ցաւերը կը բժշկէր։ Եւ անոր համբաւը
բոլոր Սուրիա տարածուեցաւ, և բերին անոր՝
բոլոր հիւանդները որ կերպ կերպ ցաւերով ու
տանջանքներով կը նեղուէին, և դիւահարները ու
լուսնոտները և անդամալոյծները. ու բժշկեց զա-
25 նոնք։ Եւ շատ ժողովուրդներ անոր ետեւէն կ'եր-
թային՝ Գալիլեայէն ու Դեկապոլիսէն և Երուսա-
ղեմէն ու Հրէաստանէն և Յորդանանու անդիի
կողմէն։

ԳԼ. Ե

1 Եւ տեսնելով ժողովուրդները՝ լեռը ելաւ. ու եր-
բոր նստաւ հոն՝ իր աշակերտները քովը գացին.
2 Եւ իր բերանը բանալով կը սորվեցընէր անոնց ու
կ'ըսէր,
3 Երանի հոգւով աղքատներուն, ինչու որ երկ-
4 նից թագաւորութիւնը անոնցն է։ Երանի սգա-
ւորներուն, ինչու որ անոնք պիտի մխիթարուին։
5 Երանի հեզերուն, ինչու որ անոնք պիտի ժա-
6 ռանգեն երկիրը։ Երանի անոնց՝ որ անօթի ու
ծարաւ են արդարութեան, ինչու որ անոնք
7 պիտի կշտանան։ Երանի ողորմածներուն, ինչու
8 որ անոնք ողորմութիւն պիտի գտնեն։ Երանի ա-
նոնց՝ որ սրտով մաքուր են, ինչու որ անոնք պի-
9 տի տեսնեն զԱստուած։ Երանի խաղաղութիւն
ընողներուն, ինչու որ անոնք Աստուծոյ որդիներ
10 պիտի կոչուին։ Երանի անոնց՝ որ հալածուած են
արդարութեան համար, ինչու որ երկնից թագա-

11 ւորութիւնը անոնցն է։ Երանի է ձեզի՝ երբոր
կը նախատեն ձեզ ու կը հալածեն, և սուտ տեղը
ամէն կերպ գէշ խօսքեր կը խօսին վրանիդ ինծի
12 համար. Ցնծացէք և ուրախ եղէք, ինչու որ ձեր
վարձքը շատ է երկինքը. քանզի աս կերպով
հալածեցին ձեզմէ առաջ եղած մարգարէները։
13 Դուք էք երկրի աղը. հապա թէ որ աղը իր
համը կորսնցընէ, ինքը ինչո՞վ պիտի աղուի. ան-
կէ ետև բանի մը չգար, միայն թէ դուրս ձըգ-
14 ուելու և մարդոց ոտքին տակը կոխուելու։ Դուք
էք աշխարհի լոյսը. քաղաք մը՝ որ լեռան վրայ
15 կեցած է, չկրնար պահուիլ։ Ու ճրագը չեն վառեր
և դներ գրուանի տակ՝ հապա աշտանակի վրայ, և
16 լոյս կու տայ բոլոր տանը մէջ եղողներուն։ Ա-
նանկ թող լուսաւորէ ձեր լոյսը մարդոց առջին,
որ տեսնեն ձեր բարի գործքերը, ու փառաւորեն
ձեր Հայրը որ երկինքն է։
17 Մի կարծէք թէ ես եկայ օրէնքը կամ մար-
գարէները աւրելու. չեկայ աւրելու, հապա կատա-
18 րելու։ Քանզի ճշմարտապէս կ'ըսեմ ձեզի, Մինչև
որ երկինք ու երկիր անցնին, օրէնքէն յովտ մը կամ
նշանագիր մը պիտի չանցնի, մինչև որ բոլորն ալ
19 կատարուի։ Ուստի ով որ աս ամենափոքր պատ-
ուիրանքներուն մէկը աւրէ, ու մարդոց անանկ
սորվեցընէ, անիկա ամենափոքր պիտի կոչուի
երկնից թագաւորութեանը մէջ. բայց ով որ ընէ
և սորվեցընէ, անիկա մեծ պիտի կոչուի երկնից
20 թագաւորութեանը մէջ։ Քանզի կ'ըսեմ ձեզի, թէ
որ ձեր արդարութիւնը դպիրներուն ու փարի-
սեցիներուն արդարութենէն աւելի չըլլայ, բնաւ
պիտի չմտնէք երկնից թագաւորութիւնը։
21 Լսեր էք որ ըսուեցաւ առաջիններուն, Սպա-
նութիւն մի ըներ. և ով որ սպանութիւն ընէ,
22 դատաստանի պարտաւոր պիտի ըլլայ. Բայց ես
ձեզի կ'ըսեմ, Ով որ իր եղբօրը պարապ տեղը

սրդողի, դատաստանի պարտաւոր պիտի ըլլայ․
և ով որ իր եղբօրը Ցիմար ըսէ, ատեանի պար-
տաւոր պիտի ըլլայ․ և ով որ իր եղբօրը Անմիտ
ըսէ, գեհենի կրակին պարտաւոր պիտի ըլլայ․
23 Ուրեմն՝ թէ որ քու ընծադ սեղանին վրայ բե-
րես, ու հոն միտքդ գայ՝ թէ քու եղբայրդ քեզի
24 դէմ բան մը ունի, հոն ձգէ քու ընծադ սեղա-
նին առջևը, և գնա առաջ եղբօրդ հետ հաշտուէ,
25 ու ետքը եկուր որ քու ընծադ մատուցանես․ Քու
ոսոխիդ հետ շուտով միաբանէ՝ քանի որ անոր
հետ ճամբուն մէջն ես․ չըլլայ որ քու ոսոխդ քեզ
դատաւորին մատնէ, և դատաւորը դահիճին, և
26 բանտը ձգուիս․ Ճշմարիտ կ'ըսեմ քեզի, պիտի
չելլես անկէ՝ մինչև որ վերջի նաքարակիտը չը-
վճարես․
27 Լսեր էք որ ըսուեցաւ*, Շնութիւն մի ըներ․
28 Բայց ես ձեզի կ'ըսեմ, Ով որ կնիկ մարդու կը
նայի անոր ցանկանալու համար, ալ անիկա իր
29 սրտին մէջ շնութիւն ըրաւ անոր հետ․ Արդ թէ
որ քու աջ աչքդ քեզ կը գայթակղեցընէ, հանէ
զանիկա ու քեզմէ ձգէ, ինչու որ աղէկ է քեզի
որ անդամներուդ մէկը կորսուի, ու քու բոլոր
30 մարմինդ դժոխքը չձգուի․ Ու թէ որ աջ ձեռքդ
քեզ կը գայթակղեցընէ, կտրէ զանիկա ու քեզմէ
ձգէ, ինչու որ աղէկ է քեզի որ անդամներուդ
մէկը կորսուի, ու քու բոլոր մարմինդ դժոխքը
31 չձգուի․ Իրաւ՝ ըսուեցաւ թէ Ով որ իր կնիկը
կ'արձակէ, թող անոր արձակման թուղթ տայ․
32 Բայց ես ձեզի կ'ըսեմ թէ Ով որ իր կնիկը կ'ար-
ձակէ առանց պոռնկութեան պատճառի, ինքը
պատճառ կ'ըլլայ անոր շնութիւն ընելուն, և ով
որ ան արձակուածը առնէ՝ շնութիւն կը գործէ․
33 Դարձեալ լսեր էք որ ըսուեցաւ առաջիններուն,

*Ոմանք կ'աւելցընեն առաջիններուն

Սուտ երդում մի ըներ, հապա ըրած երդումներդ
34 վճարէ Տէրոջը․ Բայց ես ձեզի կ'ըսեմ, Ամենեւին
երդում մի ընէք, ոչ երկնից վրայ՝ որ Աստուծոյ
35 աթոռն է, Ու ոչ երկրի վրայ՝ որ անոր ոտքերուն
պատուանդանն է, ոչ ալ Երուսաղեմի վրայ՝ որ
36 մեծ թագաւորին քաղաքն է․ Ու ոչ քու գլխուդ
վրայ երդում ընես, ինչու որ չես կրնար մէկ
37 մազ մը ճերմկցընել կամ սեւցընել․ Հապա ձեր
խօսքը ըլլայ այոն՝ այո, և ոչը՝ ոչ․ ու ասկէ աւե-
լին չարէն յառաջ կու գայ․
38 Լսեր էք որ ըսուեցաւ, Աչքի տեղ աչք, ու
39 ակռայի տեղ ակռայ․ Բայց ես ձեզի կ'ըսեմ,
Չարին հակառակ մի կենաք․ հապա թէ որ մէկը
ապտակ մը զարնէ աջ ծնօտիդ՝ դարձուր անոր
40 միւսն ալ։ Ու մէկը որ կ'ուզէ քեզի հետ դատ
վարել ու քու շապիկդ առնել, թող տուր անոր
41 +— վերարկուդ ալ․ Ու ով որ քեզ պահակ բռնէ
ու մղոն մը ճամբայ քշէ, գնա անոր հետ երկուք։
42 Քեզմէ ուզողին տուր, ու երես մի՛ դարձըներ
անկէ՝ որ կ'ուզէ քեզմէ փոխ առնել․
43 Լսեր էք որ ըսուեցաւ, Քու ընկերդ սիրես ու
44 թշնամիդ ատես․ Բայց ես ձեզի կ'ըսեմ, Սիրեցէք
ձեր թշնամիները, օրհնեցէք ձեզ անիծողները,
բարի ըրէք անոնց որ ձեզ կ'ատեն, և աղօթք
ըրէք անոնց համար՝ որ ձեզ կը չարչրկեն ու կը
45 հալածեն․ Որ ձեր երկնաւոր Հօրը որդիքը ըլլաք․
ինչու որ իր արեւը կը ծագեցընէ թէ չարերուն
և թէ բարիներուն վրայ, և անձրև կը ղրկէ թէ
46 արդարներուն և թէ մեղաւորներուն վրայ․ Վասն
զի թէ որ դուք ձեզ սիրողները սիրէք, ի՞նչ վարձք
կ'ունենաք․ չէ՞ որ մաքսաւորներն ալ նոյնը կ'ը-
47 նեն․ Ու թէ որ միայն ձեր եղբայրներուն բարե-
ւաք, ի՞նչ աւելի կ'ընէք ուրիշներէն․ չէ՞ որ մաքսա-
48 ւորներն ալ նոյնը կ'ընեն։ Ուրեմն դուք կատարեալ
եղէք՝ ինչպէս որ ձեր երկնաւոր Հայրն ալ կատար-
եալ է․

ԳԼ. Զ

1 Զգոյշ եղէք որ ձեր ողորմութիւնը մարդոց ա-
ռջեւը չընէք՝ անոնց երեւնալու համար, եթէ ոչ
վարձք չէք առներ ձեր Հօրմէն որ երկինքն է։
2 Ուստի երբոր ողորմութիւն կ'ընես, առջեւդ փող
մի հնչեցըներ, ինչպէս որ կեղծաւորները ժողո-
վարաններուն և փողոցներուն մէջ կ'ընեն, որ
մարդոցմէ փառաւորուին. Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի,
3 անոնք իրենց վարձքը առած կ'ըլլան։ Իսկ դուն
երբոր ողորմութիւն կ'ընես, ձախ ձեռքդ թող
4 չգիտնայ աջ ձեռքիդ ինչ գործելը. Որ քու ո-
ղորմութիւնդ գաղտուկ ըլլայ, և քու Հայրդ որ
գաղտուկը կը տեսնէ, քեզի յայտնապէս հատու-
ցում պիտի ընէ։
5 Ու երբոր աղօթք կ'ընես, կեղծաւորներուն
նման չըլլաս, որ կը սիրեն ժողովարաններու մէջ
ու հրապարակներուն անկիւնները կայնելով ա-
ղօթք ընել, որ մարդոց երեւնան. Ճշմարիտ կ'ը-
սեմ ձեզի, անոնք իրենց վարձքը առած կ'ըլլան։
6 Իսկ դուն երբոր աղօթք կ'ընես, մտիր քու ներքին
սենեակդ ու դուռդ գոցէ, և աղօթք ըրէ քու
Հօրդ որ գաղտուկ տեղ կը գտնուի. և քու Հայրդ
որ գաղտուկը կը տեսնէ, քեզի յայտնապէս հա-
7 տուցում պիտի ընէ։ Եւ երբոր աղօթք կ'ընէք,
հեթանոսներուն պէս շատախօս մի ըլլաք, վասն զի
կը կարծեն թէ իրենց շատ խօսելուն համար պի-
8 տի լսուին։ Ուրեմն անոնց չնմանիք, ինչու որ ձեր
Հայրը ձեզի պէտք եղածը գիտէ՝ դեռ դուք իրմէ
9 չխնդրած։ Ուստի ասանկ աղօթք ըրէք դուք.
Ով Հայր մեր որ երկինքն ես, քու անունդ
10 սուրբ ըլլայ. Քու թագաւորութիւնդ գայ, քու
կամքդ ըլլայ՝ ինչպէս որ երկինքը անանկ ալ
11 երկրիս վրայ. Մեր ամէն աւուր հացը այսօր մեզի

12 տուր. Եւ մեզի ներէ մեր պարտքերը՝ ինչպէս որ
13 մենք ալ կը ներենք մեր պարտականներուն. Ու
մեզ փորձութեան մի տանիր, հապա չարէն մեզ
ազատէ. ինչու որ քուկդ է թագաւորութիւնը
և զօրութիւնը ու փառքը յաւիտեան։ Ամէն։
14 Վասն զի թէ որ դուք ներէք մարդոց իրենց
յանցանքները, ձեր երկնաւոր Հայրն ալ ձեզի կը
15 ներէ. Հապա թէ որ դուք չներէք մարդոց իրենց
յանցանքները, ձեր Հայրն ալ ձեզի չներեր ձեր
յանցանքները։
16 Ու երբոր ծոմ կը պահէք, կեղծաւորներուն պէս
տրտմերես մի ըլլաք. քանզի իրենց երեսները
կ'աւրեն որ մարդոց երեւնան թէ ծոմ կը պա-
հեն. Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Անոնք իրենց
17 վարձքը առած կ'ըլլան։ Բայց դուն երբոր ծոմ
18 կը պահես, գլուխդ օծէ և երեսդ լուա, Որ մար-
դոց ծոմ պահողի պէս չերեւնաս, հապա քու Հօրդ՝
որ գաղտուկ տեղ կը գտնուի. և քու Հայրդ որ
գաղտուկը կը տեսնէ, *քեզի հատուցում պիտի
ընէ։
19 Երկրի վրայ ձեզի գանձեր մի դիզէք, ուր որ ցե-
ցը ու ժանկը կ'ապականեն, և ուր գողերը պատ կը
20 ծակեն ու կը գողնան. Հապա ձեզի գանձեր դիզե-
ցէք երկինքը, ուր որ ոչ ցեցը և ոչ ժանկը կ'ա-
պականէ, ու ոչ գողերը պատ կը ծակեն և կը
21 գողնան։ Քանզի ձեր գանձը ուր որ է, սրտերնիդ
22 ալ հոն պիտի ըլլայ։ Մարմինին ճրագը աչքն է.
հապա թէ որ քու աչքդ պարզ է, բոլոր մարմինդ
23 լուսաւոր կ'ըլլայ. Բայց թէ որ քու աչքդ վատ է,
բոլոր մարմինդ մութ կ'ըլլայ. ուրեմն թէ որ քու
մէջդ եղած լոյսը խաւար է, ալ ան խաւարը ո՛ր-
24 չափ է։ Մարդ մը չկրնար երկու տէրոջ ծառայու-
թիւն ընել. ինչու որ կամ մէկը պիտի ատէ և

---

*Ոմանք քեզի յայտնապէս

միւսը սիրէ, կամ *մէկուն պիտի յարի՝ և միւսը
պիտի արհամարհէ. չէք կրնար ծառայել Աստու-
25 ծոյ ու մամոնայի։ Ուստի կ'ըսեմ ձեզի, Հոգ մի
ընէք ձեր կեանքին համար՝ թէ ինչ պիտի ու-
տէք, կամ ինչ պիտի խմէք. ոչ ալ ձեր մարմին-
ներուն համար՝ թէ ինչ պիտի հագնիք. չէ՞ որ
կեանքը կերակուրէն աւելի է, ու մարմինը՝ հա-
26 գուստէն։ Նայեցէք երկնից թռչուններուն, որ
ոչ կը սերմանեն և ոչ կը հնձեն և ոչ ամբարի մէջ
կը ժողվեն, ու ձեր երկնաւոր Հայրը կը կերակրէ
27 զանոնք. չէ՞ որ դուք անոնցմէ աւելի լաւ էք։ Հի-
մա ձեզմէ ո՞վ կրնայ իր հոգ ընելովը իր հասակին
28 վրայ կանգուն մը աւելցնել։ Ու հագուստի հա-
մար ինչո՞ւ հոգ կ'ընէք. նայեցէք դաշտի շուշան-
ներուն՝ ինչպէս կ'աճին. ոչ կ'աշխատին և ոչ կը
29 մանեն. Բայց ձեզի կ'ըսեմ որ Սողոմոն ալ իր
բոլոր փառաւորութեանը մէջ անոնցմէ մէկուն
30 պէս չհագուեցաւ։ Ուստի թէ որ դաշտի խոտը որ
այսօր կայ և վաղը փուռը կը ձգուի՝ Աստուած
անանկ կը հագուեցունէ, հապա ո՛րչափ աւելի
31 ձեզ, թերահաւատներ։ Ուրեմն հոգ մի ընէք՝ ը-
սելով, Ի՞նչ պիտի ուտենք, կամ Ի՞նչ պիտի խը-
32 մենք, կամ Ի՞նչ պիտի հագնինք. (Ինչու որ ատ
բոլոր բաները հեթանոսները կը խնդրեն.) վասն
զի ձեր երկնաւոր Հայրը գիտէ՝ թէ ատ բոլոր
33 բաները ձեզի պէտք են։ Բայց առաջ խնդրեցէք
Աստուծոյ թագաւորութիւնը և անոր արդարու-
թիւնը, ու ատ բոլոր բաներն ալ ձեզի պիտի տըր-
34 ուին։ Ուստի վաղուան համար հոգ մի ընէք. ինչու
որ վաղուան օրը իրեն համար հոգ պիտի ընէ.
հերիք է օրուան իր նեղութիւնը։

*Կամ մէկը՝ պիտի մեծարէ

ԳԼ. Է

1 Մի դատէք՝ որ չդատուիք. (2) Քանզի ինչ դա-
տաստանով որ դատէք, անով պիտի դատուիք. և
ինչ չափով որ չափէք, անով պիտի չափուի ձեզի։
3 Եւ ինչո՞ւ քու եղբօրդ աչքին մէջի շիւղը կը տես-
նես, ու քու աչքիդ մէջի գերանին չես նայիր։
4 Կամ ի՞նչպէս կրնաս ըսել քու եղբօրդ, Թող տուր
աչքէդ շիւղը հանեմ. և ահա քու աչքիդ մէջը
5 գերան կայ։ Կեղծաւոր, առաջ քու աչքէդ գերա-
նը հանէ, ու ետքը աղէկ պիտի տեսնես եղբօրդ
աչքէն շիւղը հանելու։
6 Սուրբ բանը շուներուն մի տաք, և ձեր մար-
գարիտները խոզերուն առջեւը մի ձգէք, որ ոտ-
քերնուն տակը չկոխկռտեն զանոնք, ու դառ-
նան ձեզ պատառեն։
7 Խնդրեցէք՝ և պիտի տրուի ձեզի. փնտռեցէք՝
և պիտի գտնէք. դուռը զարկէք՝ և պիտի բացուի
8 ձեզի. Վասն զի ամէն ով որ կը խնդրէ՝ կ'առնէ,
և ով որ կը փնտռէ՝ կը գտնէ, և ով որ դուռը
9 կը զարնէ՝ պիտի բացուի անոր։ Ձեզմէ ո՞ր մարդը
կայ՝ որմէն իր որդին հաց որ ուզէ, միթէ քա՞ր
10 պիտի տայ անոր. Եւ կամ թէ որ ձուկ ուզէ, մի-
11 թէ օ՞ձ պիտի տայ անոր։ Ուստի եթէ դուք որ
չար էք՝ ձեր զաւակներուն աղէկ ընծաներ տալ
գիտէք, ո՛րչափ աւելի ձեր Հայրը որ երկինքն է՝
բարի բաներ պիտի տայ անոնց որ իրմէ կը խնդրեն։
12 Ուստի ամէն ինչ որ կ'ուզէք որ մարդիկ ձեզի
ընեն, դուք ալ անոնց անանկ ըրէք, քանզի աս
է օրէնքը ու մարգարէները։
13 Նեղ դռնէն ներս մտէք, ինչու որ լայն է այն
դուռը ու ընդարձակ այն ճամբան, որ դէպ ի կո-
րուստ կը տանի. և շատուոր են անոնք որ անկէ
14 կը մտնեն։ Ինչու որ նեղ է այն դուռը ու նեղ-

նեղ է այն ճամբան, որ դէպ ի կեանք կը տանի.
և քիչուոր են անոնք որ զանիկա կը գտնեն։
15 Զգուշ կեցէք սուտ մարգարէներէն՝ որոնք ձեզի
կու գան ոչխարի հանդերձներով, բայց ներ-
16 սէն յափշտակող գայլեր են։ Իրենց պտուղէն
պիտի ճանչնաք զանոնք. միթէ փուշերէն խաղող
17 կը քաղե՞ն, կամ տատասկէն՝ թուզ. Ասանկ ալ
ամէն բարի ծառ բարի պտուղ կու տայ, և չար
18 ծառ չար պտուղ կու տայ։ Բարի ծառը չկրնար
չար պտուղ տալ, ոչ ալ չար ծառը բարի պտուղ
19 տալ։ Ամէն ծառ որ բարի պտուղ չտար՝ կը կտը-
20 րուի ու կրակը կը ձգուի։ Ուրեմն իրենց պտուղէն
պիտի ճանչնաք զանոնք։
21 Ոչ թէ ամէն մէկը որ ինծի Տէր, Տէր, կ'ըսէ՝
պիտի մտնէ երկնից թագաւորութիւնը, հապա
անիկա որ իմ երկնաւոր Հօրս կամքը կը կատարէ։
22 Շատերը այն օրը ինծի պիտի ըսեն, Տէր, Տէր, չէ՞
որ քու անունովդ մարգարէութիւն ըրինք, և
քու անունովդ դևեր հանեցինք, ու քու անու-
23 նովդ շատ հրաշքներ ըրինք։ Եւ անատենը անոնց
յայտնապէս պիտի ըսեմ թէ Ես բնաւ ձեզ չէի
ճանչնար. մէկդի գացէք քովէս դուք որ անօրէ-
նութիւն կը գործէիք։
24 Արդ ով որ աս իմ խօսքերս կը լսէ ու կը կա-
տարէ անոնք, զանիկա պիտի նմանցնեմ խելացի
25 մարդու մը՝ որ իր տունը վէմի վրայ շինեց. Եւ
անձրև իջաւ ու գետերը վազեցին ու հովերը փչե-
ցին, և զարկին այն տանը, ու չփլաւ, ինչու որ
26 վէմի վրայ հաստատուած էր։ Եւ ով որ աս իմ
խօսքերս կը լսէ ու չկատարեր անոնք, կը նմանի
անխելք մարդու մը՝ որ իր տունը աւազի վրայ շի-
27 նեց. Եւ անձրև իջաւ ու գետերը վազեցին ու
հովերը փչեցին, և զարկին այն տանը, ու փլաւ,
և մեծ էր անոր կործանումը։
28 Ու երբոր Յիսուս լմնցուց աս խօսքերը, ժո-

ղովուրդները կը զարմանային անոր վարդապե-
29 տութեանը վրայ. Ինչու որ իշխանութիւն ունե-
ցողի մը պէս կը սորվեցընէր անոնց՝ ու չէ թէ
դպիրներուն պէս։

ԳԼ. Ը

1 Ու երբոր այն լեռնէն վար իջաւ, շատ ժողո-
2 վուրդներ գացին անոր ետևէն։ Եւ ահա բորոտ
մը եկաւ, երկրպագութիւն կ'ընէր անոր ու կ'ը-
սէր, Տէր, թէ որ ուզես՝ կրնաս զիս մաքրել։
3 Եւ Յիսուս իր ձեռքը երկնցընելով դպաւ անոր
ու ըսաւ, Կ'ուզեմ՝ մաքրուէ. և շուտ մը անոր
4 բորոտութիւնը մաքրուեցաւ։ Եւ Յիսուս ըսաւ
անոր, Զգուշ կեցիր՝ մէկու մը չըսես, հապա գնա՝
քեզ քահանային ցուցուր, և Մովսէսին պատուի-
րած ընծան տուր՝ անոնց վկայութիւն ըլլալու
համար։
5 Ու *երբոր Կափառնայում մտաւ՝ հարիւրապետ
6 մը եկաւ քովը, կ'աղաչէր անոր, Ու կ'ըսէր, Տէր,
իմ ծառաս տունը անդամալոյծ պառկած չարաչար
7 կը տանջուի։ Եւ Յիսուս ըսաւ անոր, Ես կու գամ
8 ու զանիկա կը բժշկեմ։ Եւ հարիւրապետը պա-
տասխան տալով ըսաւ, Տէր, ես արժանի չեմ որ
դուն իմ յարկիս տակը մտնես. միայն թէ խօս-
9 քով զրուցէ, ու իմ ծառաս պիտի բժշկուի. Ին-
չու որ ես ալ իշխանութեան տակ մարդ մըն եմ,
ու իմ հրամանիս տակը զինուորներ ունիմ. և ասոր
կ'ըսեմ, Գնա, ու կ'երթայ. և միւսին՝ թէ Եկուր,
ու կու գայ. և ծառայիս՝ թէ Աս բանը ըրէ, ու
10 կ'ընէ։ Յիսուս երբոր լսեց՝ զարմացաւ, և էր ե-
տևէն գացողներուն ըսաւ, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի,
Իսրայէլի մէջ անգամ ես այսչափ հաւատք չգտայ։

*Ուրանք երբոր Յիսուսը

11 Եւ ձեզի կ'ըսեմ որ արեւելքէն ու արեւմուտքէն
շատեր պիտի գան, ու երկնից թագաւորութեանը
մէջ պիտի բազմին Աբրահամին ու Իսահակին և
12 Յակոբին հետ. Իսկ թագաւորութեանը որդիները
դուրսի խաւարը պիտի հանուին. հոն պիտի ըլլայ
13 լալ ու ակռաներ կրճտել։ Եւ Յիսուս հարիւրա-
պետին ըսաւ, Գնա, ու ինչպէս որ դուն հաւա-
տացիր, անանկ թող ըլլայ քեզի. և նոյն ժամուն
անոր ծառան բժշկուեցաւ։
14 Եւ Յիսուս Պետրոսին տունը գալով՝ տեսաւ որ
15 անոր զոքանչը ջերմէն բռնուած՝ պառկած էր. Եւ
անոր ձեռքէն բռնեց, ու ջերմը թող տուաւ զա-
նիկա. ան ալ ոտքի վրայ ելաւ և *անոնց սպա-
սաւորութիւն կ'ընէր։
16 Երբոր իրիկուն եղաւ՝ շատ դիւահարներ բերին
անոր, ու խօսքով հանեց չար ոգիները և բոլոր
17 հիւանդները բժշկեց. Որ Եսայի մարգարէին ձեռ-
քով ըսուած խօսքը կատարուի, Անիկա մեր հի-
ւանդութիւնները վերցուց և մեր ցաւերը կրեց։
18 Յիսուս իր բոլորտիքը շատ ժողովուրդ տեսնե-
լով, հրաման ըրաւ որ միւս կողմը երթան։
19 Եւ դպիր մը մօտենալով՝ ըսաւ անոր, Վարդա-
պետ, ես քու ետեւէդ պիտի գամ՝ ուր որ երթաս։
20 Եւ Յիսուս ըսաւ անոր, Աղուէսները որջեր ունին,
ու երկնից թռչունները բոյներ, բայց Որդին մար-
21 դոյ տեղ մը չունի, որ հոն իր գլուխը դնէ։ Եւ մէկ
ուրիշը՝ որ անոր աշակերտներէն էր, ըսաւ անոր,
Տէր, ինծի հրաման տուր, որ երթամ առաջ իմ
22 հայրս թաղեմ։ Յիսուս ըսաւ անոր, Եկուր իմ
ետեւէս, ու թող տուր մեռելներուն որ թաղեն
իրենց մեռելները։
23 Ու երբոր նաւը մտաւ, իր աշակերտները իր ե-
24 տեւէն գացին. Եւ ահա մեծ ալէկոծութիւն մը ե-

*Ոմանք անոր

ղաւ ծովուն մէջ, անանկ որ նաւը ալիքներէն կը
25 ծածկուէր. իսկ ինքը կը քնանար։ Եւ աշակերտ-
ները մօտ գացին արթնցուցին զանիկա ու ըսին,
26 Տէր, ազատէ մեզ. ահա կը կորսուինք։ Եւ ըսաւ
անոնց, Թերահաւատներ, ինչո՞ւ անանկ վախկոտ
էք. անատենը ելաւ հովերուն ու ծովուն սաս-
27 տեց, և մեծ խաղաղութիւն եղաւ։ Ու մարդիկը
զարմացան և կ'ըսէին, Ի՞նչպէս մարդ է աս՝ որ
հովերը ու ծովը ասոր կը հնազանդին։
28 Եւ երբոր միւս կողմը *Գերգեսացւոց երկիրը
անցաւ, երկու դիւահար պատահեցան իրեն գե-
րեզմաններէն ելած՝ սաստիկ կատղած, անանկ որ
29 հնար չէր մէկու մը ան ճամբայէն անցնիլ։ Եւ ա-
հա աղաղակեցին ու ըսին, Յիսուս՝ Որդի Աստու-
ծոյ, դուն մեր հետը ի՞նչ բան ունիս, ատենէն
30 առաջ մեզ տանջելո՞ւ համար հոս եկար։ Եւ ա-
նոնցմէ հեռու շատ խոզերու երամակ մը կար,
31 որ կ'արածուէին։ Ու դեւերը կ'աղաչէին իրեն
ու կ'ըսէին, Թէ որ մեզ կը հանես, հրաման տուր
մեզի որ երթանք խոզերուն երամակին մէջը
32 մտնենք։ Եւ ըսաւ անոնց, Գացէք. ու անոնք ելան
գացին խոզերուն երամակին մէջը մտան, և ահա
բոլոր երամակը զահավէժ տեղէն ծովը վազեցին,
33 ու ջուրերուն մէջը մեռան։ Խոզարածներն ալ
փախան, և քաղաքը երթալով բոլորը պատմե-
34 ցին՝ ու դիւահարներուն պատահած բաները։ Եւ
ահա բոլոր քաղաքը Յիսուսին դէմը ելաւ, ու եր-
բոր տեսան զանիկա, աղաչեցին որ իրենց սահման-
ներէն երթայ։

ԳԼ. Թ

1 Եւ նաւը մտնելով՝ անդին կողմը անցաւ, ու եկաւ

*Ոմանք Գադարացւոց

2 իր քաղաքը։ Եւ ահա բերին իրեն անդամալոյծ մը,
որ մահիճի մէջ պառկած էր. և Յիսուս անոնց
հաւատքը տեսնելով՝ ըսաւ անդամալոյծին, Քաջա-
լերուէ, որդեակ, քու մեղքերդ քեզի ներուած
3 են։ Եւ ահա դպիրներէն ոմանք իրենց մտքին մէջ
4 ըսին, Ասիկա հայհոյութիւն կ'ընէ։ Յիսուս ա-
նոնց խորհուրդները իմանալով ըսաւ, Ինչո՞ւ սր-
5 տերնուդ մէջ չար բաներ կը խորհիք. Քանզի ո՞րը
աւելի դիւրին է. Քու մեղքերդ ներուած են՝ ը-
6 սե՞լը, թէ Ելիր ու քալէ՝ ըսելը։ Բայց որպէս զի
գիտնաք թէ Որդին մարդոյ իշխանութիւն ունի
երկրի վրայ մեղքերու թողութիւն տալու, (անա-
տենը անդամալոյծին ըսաւ,) Ելիր՝ մահիճդ ա-
7 ու տունդ գնա։ Ու անիկա ելաւ՝ իր տունը գնաց։
8 Ժողովուրդները երբոր տեսան՝ զարմացան,
ու փառաւորեցին զԱստուած, որ մարդոց անանկ
իշխանութիւն տուեր էր։
9 Եւ Յիսուս անկէ առաջ անցնելով՝ մարդ մը
տեսաւ Մատթէոս անունով, որ մաքս ընդունե-
լու տեղը նստեր էր, ու ըսաւ անոր, Ետեւէս ե-
10 կուր. ան ալ ելաւ անոր ետեւէն գնաց։ Ու եղաւ
որ տունը սեղան նստած ատենը՝ ահա ուրիշ շատ
մաքսաւորներ և մեղաւորներ եկած՝ ու սեղան
նստած էին Յիսուսին ու անոր աշակերտներուն
11 հետ։ Ու փարիսեցիները երբոր տեսան, ըսին ա-
նոր աշակերտներուն, Ինչո՞ւ ձեր վարդապետը
մաքսաւորներուն ու մեղաւորներուն հետ կ'ուտէ։
12 Բայց Յիսուս երբոր լսեց՝ ըսաւ անոնց, Առողջ-
ներուն բժիշկ պէտք չէ, հապա հիւանդներուն։
13 Գացէք՝ սորվեցէք թէ ի՛նչ է սա խօսքը՝ Ողոր-
մութիւն կ'ուզեմ և չէ թէ զոհ. ինչու որ ես ար-
դարները կանչելու չեկայ, հապա մեղաւորները
*ապաշխարութեան։

---

*Ոմանք չունին

14 Անատենը Յովհաննէսին աշակերտները անոր ե-
կան ու ըսին, Ինչո՞ւ մենք ու փարիսեցիները շատ
անգամ ծոմ կը պահենք, և քու աշակերտներդ
15 չեն պահեր։ Ու Յիսուս ըսաւ անոնց, Միթէ կա-
րելի՞ է որ հարսնիքին տղաքը սուգ պահեն՝ քանի
որ փեսան իրենց հետն է. բայց օրեր պիտի գան
որ երբ փեսան իրենցմէ վերցուի՝ անատենը ծոմ
16 պիտի պահեն։ Ու մէկը չձգեր նոր լաթի կտոր հին
հանդերձի վրայ, քանզի ան որ անոր լրութեանը
համար դրուած է, կ'առնէ հանդերձէն, ու պատ-
17 ռուածքը ալ աւելի գէշ կ'ըլլայ. Ու ալ նոր գինին
հին տիկերու մէջ կը դնեն. եթէ ոչ՝ տիկերը կը
պատռին ու գինին կը թափի, և տիկերը կը կո-
րնչին. հապա նոր գինին նոր տիկերու մէջ կը
դնեն, ու երկուքն ալ կը պահուին։
18 Երբոր անիկա անոնց հետ աս բաները կը խօ-
սէր, ահա իշխան մը եկաւ, երկրպագութիւն
կ'ընէր անոր ու կ'ըսէր, Աղջիկս՝ ալ մինչև հիմա
մեռած է, բայց եկուր ձեռքդ անոր վրայ դիր,
19 ու պիտի ապրի։ Եւ Յիսուս ելաւ ու իր աշա-
կերտներուն հետ անոր ետեւէն գնաց։
20 Եւ ահա տասուերկու տարուան տեռատես կին
մը մօտեցաւ ետեւէն՝ անոր հանդերձին քղանցքին
21 դպաւ. Քանզի իր մտքին մէջ կ'ըսէր, Թէ որ միայն
22 անոր հանդերձին դպչիմ՝ պիտի բժշկուիմ։ Բայց
Յիսուս երբոր ետին դարձաւ ու տեսաւ զանիկա,
ըսաւ, Քաջալերուէ, աղջիկ, քու հաւատքդ քեզ
բժշկեց. և կնիկը նոյն ժամէն բժշկուեցաւ։
23 Ու երբոր Յիսուս իշխանին տունը եկաւ, ու տե-
24 սաւ փողահարները և խռոված բազմութիւնը, Ը-
սաւ անոնց, Մէկդի գացէք, ինչու որ աղջիկը
մեռած չէ, հապա կը քնանայ. և ծաղր կ'ընէին
25 անիկա։ Ու երբոր բազմութիւնը դուրս ձգուե-
ցաւ, ինքը ներս մտաւ, անոր ձեռքէն բռնեց,
26 ու աղջիկը ոտք ելաւ։ Եւ աս լուրը ան բոլոր եր-
կիրը տարածուեցաւ։

27 Ու երբոր Յիսուս անկէ՝ առաջ անցաւ, երկու
կոյր իրկան անոր ետեւէն, կ'աղաղակէին ու կ'ը-
28 սէին, Ողորմէ՛ մեզի, Որդի Դաւիթի։ Ու երբոր տուն
եկաւ, կոյրերը իրեն եկան. եւ Յիսուս անոնց ը-
սաւ, Կը հաւատա՞ք թէ կրնամ աս բանը [illegible] ը-
29 նել. ըսին անոր, Այո, Տէր։ Անատենը անոնց
աչքերուն դպաւ ու ըսաւ, Ձեր հաւատքին պէս
30 ըլլայ ձեզի։ Ու անոնց աչքերը բացուեցան. եւ
Յիսուս սաստիկ պատուէր տուաւ անոնց ու ը-
31 սաւ, Զգոյշ կեցէք, մէկը չիմանայ։ Բայց անոնք
ելան ան բոլոր երկրին մէջ անոր համբաւը տա-
րածեցին։
32 Ու երբոր անոնք դուրս ելան, ահա մէկ համր
33 դիւահար մարդ մը բերին իրեն։ Ու երբոր դեւը
ելաւ, համրը խօսեցաւ. եւ ժողովուրդները զար-
մացան ու կ'ըսէին թէ Իսրայէլի մէջ բնաւ ասանկ
34 բան մը տեսնուած չէ։ Բայց փարիսեցիները կ'ը-
սէին թէ Առիկա դեւերուն իշխանովը դեւերը
կը հանէ։
35 Ու Յիսուս կը պտըտէր բոլոր քաղաքները ու
գեղերը, եւ անոնց ժողովարաններուն մէջ կը
սորվեցընէր ու կը քարոզէր արքայութեան աւե-
տարանը, եւ կը բժշկէր բոլոր ախտերը ու բոլոր
36 հիւանդութիւնները ժողովուրդին մէջ։ Ու ժողո-
վուրդները տեսնելով՝ անոնց վրայ խղճաց, ինչու
որ յոգնած ու ցիրուցան եղած էին հովիւ չունեցող
37 ոչխարներու պէս։ Անատենը ըսաւ իր աշակերտա-
ներուն, Հունձքը շատ է, բայց մշակները քիչ.
38 Ուստի հունձքին Տէրոջը աղաչեցէք, որ մշակներ
հանէ իր հունձքին։

ԳԼ. Ժ

1 Ու իր քովը կանչելով իր տասուերկու աշա-
կերտները, անոնց իշխանութիւն տուաւ պիղծ

ոգիներուն վրայ որ զանոնք հանեն, եւ ամէն ցա-
ւերը ու ամէն հիւանդութիւնները բժշկեն։
2 Ու տասուերկու առաքելոց անունները ասոնք
են. առաջինը Սիմոն՝ Պետրոս ըսուածը եւ ա-
3 նոր եղբայրը Անդրէաս, Յակոբոս Զեբեդեան եւ
անոր եղբայրը Յովհաննէս, Փիլիպպոս եւ Բարթո-
ղոմէոս, Թովմաս եւ Մատթէոս մաքսաւոր, Յա-
կոբոս Ալփեան եւ Ղեբէոս որ Թադէոս մական-
4 ուանեցաւ, Սիմոն Կանանացի եւ Յուդա Իսկա-
րիովտացի, որ նաեւ մատնեց զանիկա։
5 Աս տասուերկուքը Յիսուս խրկեց, եւ անոնց
պատուիրեց ըսելով, Հեթանոսներու ճամբայ մի
երթաք ու Սամարացիներու քաղաք մի մտնէք,
6 Հապա աւելի Իսրայէլի տանը կորսուած ոչխարնե-
7 րուն գացէք։ Ու երբոր կ'երթաք՝ քարոզեցէք ու
ըսէք թէ Երկնից թագաւորութիւնը մօտեցած է։
8 Հիւանդները բժշկեցէք, բորոտները *մաքրեցէք,
դեւերը հանեցէք. ձրի առեր էք, ձրի տուէք։
9 Մի ստանաք ոսկի՝ եւ ոչ արծաթ՝ եւ ոչ պղինձ
10 ձեր գօտիներուն մէջ, Ոչ ճամբու համար պարկ,
եւ ոչ կրկին հանդերձ, ոչ կօշիկ, ոչ գաւազան.
11 ինչու որ մշակը իր կերակուրին արժանի է։ Ու որ
քաղաք կամ գեղ մտնէք, հարցուցէք թէ ո՛վ է
անոր մէջը արժանաւոր, ու հոն կեցէք մինչեւ որ
12 անկէ ելլէք։ Ու երբոր տունը կը մտնէք՝ բարեւ
13 տուէք †անոր։ Ու թէ որ ան տունը արժանաւոր
է, ձեր բարեւը անոր վրայ գայ. հապա թէ որ
14 արժանաւոր չէ, ձեր բարեւը ձեզի դառնայ։ Ու
ով որ ձեզ չընդունի՝ ու ձեր խօսքերը մտիկ չընէ,
երբոր ան տունէն կամ քաղաքէն կ'ելլէք, ձեր
15 ոտքերուն փոշին թօթվեցէք։ Ճշմարիտ կ'ըսեմ
ձեզի, Սոդոմացւոց ու Գոմորացւոց երկրին աւե-

*Ոմն. մաքրեցէք, մեռելները յարուցէք
†Ոմն. անոր՝ ու ըսէք, Բարեւ աս տանս

լի դիւրին պիտի ըլլայ դատաստանին օրը՝ քան
թէ այն քաղաքին։
16 Ահա ես ձեզ կը ղրկեմ իբրեւ ոչխարներ գայ-
լերու մէջ. ուստի օձերու պէս խորագէտ եղէք
17 եւ աղաւնիներու պէս՝ միամիտ։ Իսկ մարդոցմէ
զգուշացէք, ինչու որ ձեզ ատեաններու պիտի
մատնեն, ու իրենց ժողովարաններուն մէջը ձեզ
18 պիտի ծեծեն. Եւ իմ անուանս համար կուսա-
կալներու ու թագաւորներու առջեւ պիտի տար-
ուիք՝ անոնց եւ հեթանոսներուն վկայութիւն ըլ-
19 լալու համար։ Բայց երբոր ձեզ մատնեն՝ հոգ մի
ընէք թէ ինտոր կամ ինչ պիտի խօսիք, ինչու որ
ձեզի պիտի տրուի այն ժամուն՝ ինչ որ պիտի խօ-
20 սիք. Վասն զի չէ թէ դուք էք որ կը խօսիք,
հապա ձեր Հօրը Հոգին՝ որ ձեր ներսի դին կը
21 խօսի. Ու եղբայր եղբայրը մահուան պիտի մատ-
նէ, եւ հայրը՝ որդին. եւ որդիք իրենց ծնողացը
22 վրայ պիտի ելլեն ու մեռցնեն զանոնք. Եւ իմ
անուանս համար ամենուն ատելի պիտի ըլլաք.
բայց ով որ մինչեւ վերջը համբերէ՝ անիկա պի-
23 տի ապրի. Ու երբոր այս քաղաքին մէջ ձեզ կը
հալածեն, ուրիշ տեղ փախէք. քանզի ճշմարիտ
կ'ըսեմ ձեզի, Իսրայէլի քաղաքները պիտի չհատ-
24 ցընէք, մինչեւ որ Որդին մարդոյ գայ. Աշակերտը
իր վարդապետէն աւելի չէ, եւ ոչ ծառան՝ իր
25 տիրոջմէն. Հերիք է աշակերտին՝ որ իր վարդա-
պետին պէս ըլլայ, ու ծառային՝ իր տիրոջը պէս.
Թէ որ տանուտէրը Բէեղզեբուղ կոչեցին, ո՞րչափ
26 աւելի անոր ընտանիքը. Ուստի մի վախնաք ա-
նոնցմէ, ինչու որ բան մը չկայ ծածուկ՝ որ պիտի
չյայտնուի, եւ գաղտուկ՝ որ պիտի չգիտցուի.
27 Ինչ որ ձեզի մութի մէջ կ'ըսեմ, անիկա լոյսի մէջ
խօսեցէք, եւ ինչ որ ականջն ի վար կը լսէք, տա-
28 նիքներուն վրայ քարոզեցէք. Եւ մի վախնաք ա-
նոնցմէ՝ որ մարմինը կը սպաննեն, ու չեն կրնար

հոգին սպաննել. հապա աւելի անկէ վախցէք դուք,
որ կրնայ հոգին ու մարմինը գեհենին մէջ կորսըն-
29 ցընել. Չէ՞ որ երկու ճնճղուկ մէկ դանկի կը
ծախուին, եւ անոնցմէ մէկը գետինը չիյնար ա-
30 ռանց ձեր Հօրը. Բայց ձեր գլխուն բոլոր մա-
31 զերն ալ համրուած են. Ուրեմն մի վախնաք,
32 ինչու որ շատ ճնճղուկներէն լաւ էք դուք. Արդ
ով որ մարդոց առջեւ զիս կը դաւանի, ես ալ
անիկա պիտի դաւանիմ իմ Հօրս առջեւը՝ որ եր-
33 կինքն է. Եւ ով որ մարդոց առջեւ զիս կ'ուրա-
նայ, ես ալ անիկա պիտի ուրանամ իմ Հօրս
34 առջեւը՝ որ երկինքն է. Մի կարծէք թէ ես եր-
կրի վրայ խաղաղութիւն ձգելու եկայ. խաղաղու-
35 թիւն ձգելու չեկայ՝ հապա սուր. Ինչու որ եկայ
մարդը իր հօրմէն զատելու, ու աղջիկը՝ իր մօր-
36 մէն, ու հարսը՝ իր կեսուրէն. Եւ մարդուն թըշ-
37 նամիները իր ընտանիքը պիտի ըլլան. Ան որ
հայրը կամ մայրը ինծմէ աւելի կը սիրէ, ինծի
արժանի չէ. եւ ան որ տղան կամ աղջիկը ինծմէ
38 աւելի կը սիրէ, ինծի արժանի չէ. Եւ ան որ իր
խաչը չառներ ու իմ ետեւէս գար, ինծի ար-
39 ժանի չէ։ Ան որ իր անձը կը գտնէ, պիտի կոր-
սընցընէ զանիկա. եւ ան որ իր անձը ինծի համար
40 կը կորսընցընէ, պիտի գտնէ զանիկա։ Ան որ ձեզ
կ'ընդունի, զիս կ'ընդունի. եւ ան որ զիս կ'ըն-
41 դունի, զիս ղրկողը կ'ընդունի. Ան որ մարգարէ
մը կ'ընդունի մարգարէի անունով, մարգարէի
վարձք կ'առնէ. եւ ան որ արդար մը կ'ընդունի
42 արդարի անունով, արդարի վարձք կ'առնէ. Ու
ան որ այս պզտիկներէն մէկուն միայն գաւաթ
մը պաղ ջուր կը խմցընէ աշակերտի անունով,
ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, բնաւ իր վարձքը պիտի
չկորսընցընէ։

ԳԼ. ԺԱ

1 Եւ եղաւ որ երբ Յիսուս լմնցուց իր տասներ-
կու աշակերտներուն պատուէր տալը, գնաց անկէ
անոնց քաղաքներուն մէջ քարոզելու և սորվեցը-
նելու։
2 Իսկ Յովհաննէս բանտին մէջը երբոր լսեց Քրիս-
տոսի գործքերը, իր աշակերտներէն երկուքը
3 ղրկելով՝ Ըսաւ անոր, Դուն ա՞ն ես որ գալու
4 էիր, թէ ուրիշի մը սպասենք։ Եւ Յիսուս պա-
տասխան տալով՝ անոնց ըսաւ, Գացէք պատմե-
ցէք Յովհաննէսին ինչ որ կը լսէք ու կը տես-
5 նէք. Կոյրերը կը տեսնեն, կաղերը կը քալեն,
բորոտները կը մաքրուին, խուլերը կը լսեն, մե-
ռելները յարութիւն կ'առնեն ու աղքատներուն
6 աւետարան կը քարոզուի։ Եւ երանի անոր որ
իմ վրայովս չգայթակղի։
7 Ու երբոր անոնք գացին, Յիսուս սկսաւ ժողո-
վուրդներուն ըսել Յովհաննէսին համար, Ի՞նչ
տեսնելու ելաք անապատին մէջ. եղէ՞գ մը հովէն
8 շարժուած։ Հապա ի՞նչ տեսնելու ելաք. փա-
փուկ հանդերձներ հագած մա՞րդ մը. ահա փա-
փուկ հանդերձներ հագնողները թագաւորաց
9 տուներն են։ Հապա ի՞նչ տեսնելու ելաք. մար-
գարէ՞. այո, կ'ըսեմ ձեզի, մարգարէէ մըն ալ
10 աւելի։ Ինչու որ ասիկա է՝ որուն համար գրուած
է, Ահա ես իմ դեսպանս կը ղրկեմ քու երեսիդ
առջեւէն, որ քու ճամբադ պիտի պատրաստէ
11 քու առջեւէդ։ Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, կիներէն
ծնածներուն մէջը Յովհաննէս մկրտիչէն մեծը
ելած չէ, սակայն երկնից թագաւորութեանը մէջ
12 ամենա պզտիկը անկէ մեծ է։ Ու Յովհաննէս մկրը-
տիչին օրերէն մինչև հիմա երկնից թագաւորու-
թիւնը ուժով կ'առնուի, և ուժեղները կը յա-

13 փշտակեն անիկա։ Ինչու որ բոլոր մարգարէները
ու օրէնքը մինչև Յովհաննէս մարգարէութիւն
14 ըրին. Եւ եթէ կ'ուզէք ընդունիլ, անիկա է Ե-
15 ղիան՝ որ պիտի գար։ Ան որ լսելու ականջ ունի,
16 թող լսէ։ Բայց որո՞ւ նմանցընեմ աս ազգը.
կը նմանի տղոց, որ շուկաները նստելով՝ իրենց
17 ընկերներուն կը կանչեն, Ու կ'ըսեն, Փող հնչե-
ցուցինք ձեզի՝ ու չխաղացիք. ողբ կարդացինք
18 ձեզի՝ ու կոծ չըրիք։ Վասն զի Յովհաննէս եկաւ,
ոչ կ'ուտէր և ոչ կը խմէր, ու կ'ըսեն, Դև կայ
19 անոր ներսի դին։ Որդին մարդոյ եկաւ, կ'ուտէ
ու կը խմէ, և կ'ըսեն, Ահա ուտող և արբեցող
մարդ մը՝ մաքսաւորներու ու մեղաւորներու բա-
րեկամ. և իմաստութիւնը արդարացաւ իր որ-
դւոցմէն։
20 Անատենը սկսաւ նախատել ան քաղաքները,
որոնց մէջ գործուեր էին իր հրաշքներուն շա-
21 տերը, քանզի չապաշխարեցին. Վա՜յ քեզ, Քո-
րազին, վա՜յ քեզ, Բեթսայիդա, ինչու որ եթէ
Տիւրոսի ու Սիդոնի մէջ եղած ըլլային ան հրաշք-
ները՝ որ ձեր մէջը եղան, շատոնցմէ քուրձով ու
22 մոխիրով ապաշխարած պիտի ըլլային։ Բայց ձեզի
կ'ըսեմ, Տիւրոսին ու Սիդոնին աւելի դիւրին պի-
23 տի ըլլայ դատաստանին օրը՝ քան թէ ձեզի։ Եւ
դուն, Կափառնայում, որ մինչև երկինքը բարձ-
րացած ես, մինչև դժոխքը պիտի իջնես, ինչու որ
եթէ Սոդոմի մէջ եղած ըլլային ան հրաշքները՝
որ քու մէջդ եղան, [illegible] որ մինչև աս օրս դե-
24 պիտի մնար։ Բայց ձեզի կ'ըսեմ որ Սոդոմացւոց
երկրին աւելի դիւրին պիտի ըլլայ դատաստանին
օրը՝ քան թէ քեզի։
25 Նոյն ժամանակին պատասխան տուաւ Յիսուս
ու ըսաւ, Շնորհակալ եմ քեզմէ, ով Հայր՝ Տէր
երկնի և երկրի, որ աս բաները ծածուկ պահե-
ցիր իմաստուններէն ու գիտուններէն, ու տղոց

26 յայտնեցիր։ Այո, ով Հայր, ինչու որ քու առջեւդ
27 ատանկ հաճելի եղաւ։ Ամէն բան ինծի տրուեցաւ
իմ Հօրմէս, և մէկը չճանչնար Որդին՝ բայց
Հայրը, եւ մէկը չճանչնար Հայրը՝ բայց Որդին,
28 և ան՝ որուն որ Որդին կ'ուզէ յայտնել։ Եկէք
ինծի, բոլոր յոգնած ու բեռնաւորածներ, և ես
29 ձեզ պիտի հանգչեցընեմ։ Իմ լուծս ձեր վրայ
առէք, և ինծմէ սորվեցէք՝ որ հեզ եմ ու
սրտով խոնարհ, և ձեր անձերուն հանգստու-
30 թիւն պիտի գտնէք. Ինչու որ իմ լուծս քաղցր
է՝ և իմ բեռս թեթեւ։

ԳԼ. ԺԲ

1 Անատենը Յիսուս շաբաթ օրը գնաց արտերուն
մէջէն, և իր աշակերտները անօթեցան, ու սկսան
2 ցորենի հասկեր փրցընել և ուտել։ Փարիսեցիները
երբոր տեսան՝ ըսին անոր, Ահա քու աշակերտ-
ներդ կը գործեն ինչ որ արժան չէ շաբաթ օրը
3 գործել։ Ան ալ անոնց ըսաւ, Չէ՞ք կարդացեր
դուք Դաւիթին ըրածը, երբոր անօթեցաւ ինքը
4 ու անոնք որ իր հետն էին. Ինչպէս մտաւ Աստու-
ծոյ տունը, և առաջաւորութեան հացերը կե-
րաւ, որ ոչ իրեն օրինաւոր էր ուտել, և ոչ ա-
նոնց որ իր հետն էին, բայց միայն քահանանե-
5 րուն։ Կամ թէ օրէնքին մէջը չէ՞ք կարդացեր, որ
քահանաները շաբաթ օրերը տաճարին մէջ շա-
6 բաթը կը պղծեն՝ ու անմեղ են։ Բայց ձեզի կ'ը-
7 սեմ որ աս տեղը տաճարէն մեծ մէկը կայ։ Եւ
թէ որ գիտնայիք թէ ինչ ըսել է, Ողորմութիւն
կ'ուզեմ՝ ու չէ թէ զոհ, [illegible] անպարտները
8 չէիք դատապարտեր. Վասնզի Որդին մարդոյ *շա-
բաթին տէրն է։

---

*Ոմանք՝ շաբաթին ալ

9 Եւ անկէ երթալով՝ եկաւ անոնց ժողովարա-
10 նը։ Եւ հոն մէկ մարդ մը կար՝ որուն ձեռքը չոր-
ցած էր. և հարցուցին անոր՝ ու ըսին թէ Շաբաթ
օրը բժշկել արժա՞ն է, որ անոր վրայով ամբաս-
11 տանութիւն ընեն։ Ան ալ ըսաւ անոնց, Ձեզմէ
ո՞ր մարդը կայ՝ որ մէկ ոչխար մը ունենայ, և ա-
նիկա շաբաթ օրը փոսի մէջ իյնայ, պիտի չբռնէ՞
12 ու վեր հանէ զանիկա։ Արդ ո՞րչափ աւելի է մար-
դը ոչխարէն. ուրեմն շաբաթ օրը բարի գործել
13 արժան է։ Անատենը ըսաւ ան մարդուն, Երկըն-
ցուր ձեռքդ. ան ալ երկընցուց, ու ողջացաւ
14 միւսին պէս։ Իսկ փարիսեցիները դուրս ելլելով՝
անոր վրայ խորհուրդ կ'ընէին թէ ինտո՛ր անիկա
կորսընցընեն։
15 Եւ Յիսուս երբոր գիտցաւ՝ զատուեցաւ անկէ.
և շատ ժողովուրդներ անոր ետեւէն գացին, ու ա-
16 մէնը բժշկեց։ Եւ սաստիկ պատուիրեց անոնց որ
17 զինքը մէկու մը չյայտնեն. Որ կատարուի Եսայի
18 մարգարէին ձեռքով ըսուած խօսքը, Ահա իմ
ծառաս՝ որ ընտրեցի, և իմ սիրելիս՝ որուն հա-
ճեցաւ իմ անձս. իմ Հոգիս անոր վրայ պիտի
դնեմ, ու հեթանոսներուն իրաւունք պիտի
19 պատմէ. Ոչ պիտի վիճի, և ոչ պիտի աղաղակէ,
և ոչ մէկը պիտի լսէ անոր ձայնը հրապարակ-
20 ներուն մէջ. Ջախջախած եղէգը պիտի չփշրէ, ու
պլպլած պատրոյգը պիտի չմարէ, մինչև որ դա-
21 տաստանը յաղթութեան հանէ. Եւ հեթանոս-
ները անոր անուանը պիտի յուսան։
22 Անատենը կոյր ու համր դիւահար մը բերին իրեն,
և զանիկա բժշկեց, անանկ որ համրը ու կոյրը խօ-
23 սեցաւ ու տեսաւ։ Եւ բոլոր ժողովուրդները զար-
մացան ու կ'ըսէին, Արդեօք ասիկա՞ է Դաւիթի
24 որդին։ Բայց փարիսեցիները երբոր լսեցին՝ ըսին,
Ասիկա ուրիշ բանով չհաներ դեւերը՝ բայց դեւե-
25 րուն Բէեղզեբուղ իշխանովը։ Եւ Յիսուս անոնց

խորհուրդները իմանալով՝ ըսաւ անոնց, Ամէն
թագաւորութիւն իրեն դէմ բաժնուած՝ կ'աւե-
րի. և ամէն քաղաք կամ տուն իրեն դէմ բաժ-
26 նուած՝ չկրնար կենալ։ Ու թէ որ Սատանան
Սատանայ կը հանէ, իրեն դէմ բաժնուեցաւ.
ուստի ինտո՞ր պիտի կենայ անոր թագաւորու-
27 թիւնը։ Ու թէ որ ես Բէեղզեբուղով դեւերը
կը հանեմ, ձեր որդիները ինչո՞վ կը հանեն. ու-
րեմն անոնք պիտի ըլլան ձեր դատաւորները։
28 Բայց թէ որ ես Աստուծոյ Հոգիովը կը հանեմ
դեւերը, ուրեմն Աստուծոյ թագաւորութիւնը ձեր
29 վրայ հասած է։ Կամ ինտո՞ր կրնայ մէկը զօրաւոր
մարդու մը տունը մտնել, և անոր կարասիները
յափշտակել, թէ որ առաջ այն զօրաւոր մարդը
30 չկապէ, ու ետքը անոր տունը կողոպտէ. Ան որ
իմ հետս չէ՝ ինծի հակառակ է, և ան որ ինծի
31 հետ չժողվեր՝ ցիրուցան կ'ընէ։ Անոր համար ձե-
զի կ'ըսեմ, Ամէն մեղք ու հայհոյութիւն պիտի
ներուի մարդոց, բայց Սուրբ Հոգւոյն դէմ եղած
32 հայհոյութիւնը պիտի չներուի մարդոց. Ու ով որ
Որդւոյ մարդոյ դէմ բան կ'ըսէ՝ պիտի ներուի
անոր, բայց ով որ Հոգւոյն Սրբոյ դէմ կ'ըսէ՝
պիտի չներուի անոր, ոչ աս աշխարհիս մէջ և ոչ
33 գալու աշխարհին մէջ։ Կամ ծառը բարի ըրէք՝
ու անոր պտուղը բարի, կամ ծառը չար ըրէք՝
ու անոր պտուղը չար. ինչու որ ծառը պտուղէն
34 կը ճանչցուի։ Իժերու ծնունդներ, ի՞նչպէս կըր-
նաք բարի խօսիլ, որ չար էք. ինչու որ սրտին
35 աւելցուքէն բերանը կը խօսի։ Բարի մարդը իր
սրտին բարի գանձէն բարի բաներ կը հանէ, և
չար մարդը իր սրտին չար գանձէն չար բաներ կը
36 հանէ։ Բայց ձեզի կ'ըսեմ թէ Ամէն դատարկ
խօսքերու համար՝ որ մարդիկ կը խօսին, դա-
37 տաստանին օրը հաշիւ պիտի տան։ Ինչու որ քու
խօսքերէդ պիտի արդարանաս, և քու խօսքերէդ
պիտի դատապարտուիս։

38 Անատենը դպիրներէն ու փարիսեցիներէն ոմանք
պատասխան տուին իրեն ու ըսին, Վարդապետ,
39 կ'ուզենք քեզմէ նշան մը տեսնել։ Անիկա պա-
տասխան տուաւ ու անոնց ըսաւ, Չար և շնացող
ազգը նշան կ'ուզէ, և ուրիշ նշան պիտի չտրուի
անոր, բայց միայն Յովնան մարգարէին նշանը։
40 Քանզի ինչպէս որ Յովնան երեք օր ու երեք գի-
շեր կէտ ձուկին փորին մէջն էր, անանկ ալ Որդին
մարդոյ պիտի ըլլայ երկրիս սրտին մէջը երեք օր
41 ու երեք գիշեր։ Նինուէի մարդիկը դատաստանին
օրը աս ազգին դէմ պիտի ելլեն ու պիտի դա-
տապարտեն զանիկա, ինչու որ Յովնանին քարո-
զութեամբը զղջի եկան. և ահա Յովնանէն մեծ
42 մէկը կայ հոս։ Հարաւի թագուհին դատաստանին
օրը աս ազգին դէմ պիտի ելլէ և պիտի դատա-
պարտէ զանիկա, ինչու որ ինքը երկրի ծայրերէն
եկաւ Սողոմոնին իմաստութիւնը լսելու, և ահա
Սողոմոնէն մեծ մէկը կայ հոս։
43 Ու երբոր պիղծ ոգին մարդէ մը կ'ելլէ, անջուր
տեղուանք կը պտըտի, հանգստութիւն կը փնտռէ
44 ու չգտներ. Անատենը կ'ըսէ, Դառնամ նորէն իմ
տունս՝ ուսկից որ ելայ. և կու գայ զանիկա կը
45 գտնէ պարապ, մաքրուած ու զարդարուած։ Ա-
նատենը կ'երթայ և իր հետը կ'առնէ եօթը ուրիշ
ոգիներ իրմէ աւելի չար, ու մտնելով հոն կը
բնակին, և այն մարդուն վերջը առջինէն գէշ
կ'ըլլայ. անանկ պիտի ըլլայ աս չար ազգին ալ։
46 Ու քանի որ ինքը ժողովուրդին կը խօսէր, ահա
իր մայրը ու եղբայրները դուրսը կայներ էին, և
47 կ'ուզէին իր հետը խօսիլ։ Ու մէկը իրեն ըսաւ,
Ահա քու մայրդ ու եղբայրներդ դուրսը կայներ
48 են, և կ'ուզեն հետդ խօսիլ։ Ան ալ իրեն ըսողին
պատասխան տուաւ ու ըսաւ, Ո՞վ է իմ մայրս,
49 և ո՞վ են իմ եղբայրներս։ Ու իր ձեռքը դէպ
իր աշակերտներուն երկնցընելով՝ ըսաւ, Ահա

50 իմ մայրս և իմ եղբայրներս. Վասն զի ով որ իմ
երկնաւոր Հօրս կամքը կատարէ, անիկա է իմ
եղբայրս և քոյրս ու մայրս։

ԳԼ. ԺԳ

1 Այն օրը Յիսուս տունէն ելլելով՝ ծովուն եզերքը
2 նստաւ։ Եւ շատ ժողովուրդներ քովը ժողվուե-
ցան, այնանկ որ ինքը նաւը մտաւ ու նստաւ, և
3 բոլոր ժողովուրդը ծովեզերքը կայներ էր։ Ու շատ
բաներ խօսեցաւ անոնց առակներով, և ըսաւ,
4 Ահա սերմ ցանողը ելաւ որ սերմ ցանէ. ու
երբոր կը ցանէր՝ մէկ քանիները ճամբուն քովը
ինկան, և թռչունները եկան ու կերան զանոնք։
5 Եւ ուրիշները ապառաժուտ տեղերու վրայ ին-
կան՝ ուր որ շատ հող չկար, և շուտ մը բուսան՝
6 հողը խորունկութիւն չունենալուն համար. Սա-
կայն արեւուն ծագած ատենը այրեցան, ու ար-
7 մատ չունենալնուն համար չորցան։ Եւ ուրիշները
ինկան փուշերու մէջ, և փուշերը ելան ու խեղ-
8 դեցին զանոնք։ Եւ ուրիշները ինկան աղէկ հողի
մէջ, ու պտուղ կու տային՝ որը [illegible] հա-
9 րիւր, որը վաթսուն, և որը երեսուն։ Ան որ
լսելու ականջ ունի՝ թող լսէ։
10 Ու աշակերտները մօտենալով՝ ըսին իրեն, ին-
11 չո՞ւ համար առակներով կը խօսիս անոնց։ Ան ալ
պատասխան տուաւ ու ըսաւ անոնց, Անոր հա-
մար՝ որ ձեզի տրուած է գիտնալ երկնից թագա-
ւորութեանը խորհուրդները, և անոնց տրուած
12 չէ։ Վասն զի ով որ ունի, անոր պիտի տրուի ու
պիտի աւելնայ. և ով որ չունի, ունեցածն ալ
13 անկէ պիտի առնուի։ Անոր համար առակներով
կը խօսիմ անոնց, որ կը տեսնեն՝ ու չեն տեսներ,
14 և կը լսեն՝ ու չեն լսեր ու միտք չեն առներ։ Եւ
անոնց վրայ կը կատարուի Եսայիին մարգարէու-

թիւնը որ կ'ըսէ, Լսելով պիտի լսէք՝ ու պիտի չի-
մանաք, և տեսնելով պիտի տեսնէք՝ ու պիտի
15 չտեսնէք։ Ինչու որ աս ժողովուրդին սիրտը թանձ-
րացաւ, և իրենց ականջներովը ծանր լսեցին, ու
աչքերնին գոցեցին, որ չըլլայ թէ բնաւ աչքերով
տեսնեն և ականջներով լսեն և սրտով իմանան ու
16 դարձի գան, և ես անոնք բժշկեմ։ Բայց երանի է
ձեր աչքերուն որ կը տեսնեն, ու ձեր ականջնե-
17 րուն որ կը լսեն։ Քանզի ճշմարիտ կ'ըսեմ ձեզի
որ շատ մարգարէներ և արդարներ փափաքեցան
ձեր տեսածները տեսնելու՝ ու չտեսան, և ձեր
լսածները լսելու՝ ու չլսեցին։
18 Հիմա դուք սերմ ցանողին առակը լսեցէք։
19 Ան ամէնը որ թագաւորութեան խօսքը կը լսէ ու
միտք չառներ, չարը կու գայ ու անոր սրտին մէջ
ցանուածը կը յափշտակէ. ասիկա ան է որ ճամ-
20 բուն քովը ցանուեցաւ։ Եւ ապառաժուտ տեղե-
րու վրայ ցանուածը ան է՝ որ երբ կը լսէ խօսքը,
շուտ մը ուրախութեամբ կ'ընդունի զանիկա.
21 Բայց իր մէջը արմատ չունենալով՝ քիչ ժամանակ
կը տեւէ. ու երբոր նեղութիւն կամ հալածանք
22 ըլլայ խօսքին համար, շուտ մը կը գայթակղի։ Եւ
փուշերուն մէջ ցանուածը ան է՝ որ երբ կը լսէ
խօսքը, աշխարհիս զբաղմունքը և հարստութեան
խաբէութիւնը խօսքը կը խեղդեն, ու կ'ըլլայ ան-
23 պտուղ։ Իսկ աղէկ հողի մէջ ցանուածը ան է՝ որ
երբ կը լսէ խօսքը, միտք կ'առնէ, և պտուղ
կու տայ՝ որը հարիւր, որը վաթսուն, ու որը
երեսուն։
24 Ուրիշ առակ մըն ալ յառաջ բերաւ անոնց ու
ըսաւ, Երկնից թագաւորութիւնը նմանեցաւ մէկ
մարդու մը, որ իր արտին մէջ բարի սերմ ցանեց.
25 Ու երբոր մարդիկ կը քնանային, իր թշնամին ե-
26 կաւ ու ցորենին մէջ որոմ ցանեց և գնաց. Ու
երբոր խոտը բուսաւ ու պտուղ բերաւ, անկէ

27 եւ որոմն ալ երեւցաւ։ Ուստի տանուտիրոջը
ծառաները մօտեցան ու իրեն ըսին, Տէր, չէ՞ որ
դուն քու արտիդ մէջ բարի սերմ ցանեցիր, ու-
28 րեմն որոմը ուսկի՞ց ունի։ Եւ անիկա ըսաւ անոնց,
Մէկ թշնամի մարդ մը ըրած է ատիկա. Ծառա-
ները իրեն ըսին, Հիմա կ'ուզե՞ս որ երթանք ա-
29 նիկա մէկդի քաղենք։ Ան ալ ըսաւ, Ոչ, չըլլայ
թէ որոմը քաղած ատեննիդ ցորենն ալ անոր
30 հետ փրցնէք։ Թող տուէք որ երկուքն ալ
մէկտեղ աճին մինչեւ հունձքի ատենը. եւ հունձքին
ատենը հնձողներուն պիտի ըսեմ, Առաջ որոմը
քաղեցէք, եւ անիկա խուրձ խուրձ կապեցէք այ-
րելու համար, իսկ ցորենը իմ ամբարս ժողվեցէք։
31 Ուրիշ առակ մըն ալ յառաջ բերաւ անոնց ու
ըսաւ, Երկնից թագաւորութիւնը մանանեխի
հատի նման է, որն որ մարդ մը առաւ՝ իր արտին
32 մէջը ցանեց. Որ ամէն սերմերէն պզտիկ է, ու
երբոր աճի՝ ամէն խոտեղէններէն մեծ է, ու ծառ
կ'ըլլայ, անանկ որ երկնից թռչունները կու գան
եւ անոր ճիւղերուն վրայ կը հանգչին։
33 Ուրիշ առակ մըն ալ զրուցեց անոնց ու ըսաւ,
Երկնից թագաւորութիւնը խմորի նման է, որն որ
կնիկ մը առաւ՝ երեք գրիւ ալիւրի մէջ պահեց,
մինչեւ որ ամէնն ալ խմորեցաւ։
34 Յիսուս աս ամէն բաները առակներով խօսեցաւ
ժողովուրդին, ու առանց առակի բան մը չէր
35 խօսեր անոնց. Որ կատարուի մարգարէին ձեռ-
քով ըսուած խօսքը, Առակներով պիտի բանամ
իմ բերանս, աշխարհի սկիզբէն ի վեր ծածկուած
բաները յառաջ պիտի բերեմ։
36 Անատենը Յիսուս ժողովուրդները թողուց, տունը
եկաւ, եւ իր աշակերտները մօտեցան իրեն ու ըսին,
37 Արտին որոմներուն առակը մեկնէ մեզի։ Ան ալ
պատասխան տուաւ ու ըսաւ անոնց, Բարի սերմը
38 ցանողը Որդին մարդոյ է. Եւ արտը աշխարհս է.

իսկ բարի սերմը անոնք են որ թագաւորութեանը
39 որդիքն են, բայց որոմը չարին որդիքն են. Եւ
թշնամին որ անիկա ցանեց՝ Սատանան է, եւ
հունձքը աշխարհիս վերջն է, ու հնձողները հրեշ-
40 տակներն են։ Արդ ինչպէս որ որոմը կը ժողվուի
ու կրակի մէջ կ'այրի, աշխարհիս վերջն ալ անանկ
41 պիտի ըլլայ։ Որդին մարդոյ իր հրեշտակները պի-
տի խրկէ, ու պիտի ժողվեն անոր թագաւորու-
թենէն բոլոր գայթակղութիւնները՝ եւ անոնք որ
42 անօրէնութիւն կը գործեն, Ու կրակի հնոցին
մէջ պիտի ձգեն զանոնք. հոն պիտի ըլլայ լալ
43 ու ակռաներ կրճտել։ Անատենը արեւի պէս պիտի
փայլին արդարները իրենց Հօրը թագաւորու-
թեանը մէջ։ Ան որ լսելու ականջ ունի՝ թող լսէ։
44 Դարձեալ երկնից թագաւորութիւնը արտի մէջ
պահուած գանձի նման է, որ անիկա մէկ մարդ մը
գտնելով՝ կը ծածկէ, եւ ուրախութենէն կ'երթայ
բոլոր ունեցածը կը ծախէ, ու ան արտը կը գնէ։
45 Դարձեալ երկնից թագաւորութիւնը վաճառա-
կան մարդու մը նման է, որ գեղեցիկ մարգարիտ-
46 ներ կը փնտռէ. Եւ մէկ պատուական մարգարիտ
մը գտնելով՝ գնաց իր բոլոր ունեցածը ծախեց,
ու զանիկա գնեց։
47 Դարձեալ երկնից թագաւորութիւնը ծովը ձգ-
ուած ուռկանի մը նման է, որ ամէն տեսակէն կը
48 ժողվէ. Որ երբ լեցուեցաւ՝ ցամաքը հանեցին, ու
նստան՝ աղէկները ամաններու մէջ ժողվեցին եւ
49 անշահը դուրս ձգեցին։ Ասանկ պիտի ըլլայ աշ-
խարհիս վերջը. հրեշտակները պիտի ելլեն՝ ու ար-
50 դարներուն մէջէն չարերը պիտի զատեն, Եւ պիտի
ձգեն զանոնք կրակի հնոցին մէջ. հոն պիտի ըլ-
լայ լալ ու ակռաներ կրճտել։
51 Ըսաւ անոնց Յիսուս, Հասկըցա՞ք աս ամէն
52 բաները. ըսին անոր, Այո, Տէր։ Եւ անիկա ըսաւ
անոնց, Անոր համար ամէն դպիր որ երկնից թա-

դաւորութեան աշակերտեալ է՝ նման է տանու-
տէր մարդու մը որ իր գանձէն նոր ու հին բաներ
կը հանէ։
53 Ու երբոր կատարեց Յիսուս այս առակները,
54 անկէ մեկնեցաւ։ Եւ եկաւ իր գաւառը, ու անոնց
կը սորվեցընէր իրենց ժողովարանին մէջը. մինչեւ
որ կը զարմանային անոնք ու կ'ըսէին, Ասիկա
ուսկի՞ց ունի այս իմաստութիւնը և հրաշքները.
55 Ասիկա հիւսին որդին չէ՞. ասոր մայրը Մարիամ
չը՞ կոչուիր, ու ասոր եղբայրները՝ Յակոբոս և
56 Յովսէս ու Սիմոն և Յուդա. Ու ասոր քոյրերը
ամէնը մեր քովը չե՞ն. ալ ինքը ուսկի՞ց ունի այս
57 ամէն բաները։ Եւ անոր վրայով կը գայթակղէին.
բայց Յիսուս ըսաւ անոնց, Մարգարէ մը ան-
պատիւ չէ՝ բայց միայն իր գաւառին ու իր տանը
58 մէջ։ Եւ հոն շատ հրաշքներ չըրաւ անոնց անհա-
ւատութեանը համար։

ԳԼ. ԺԴ

1 Այն ժամանակը Հերովդէս չորրորդապետը Յիսու-
2 սին համբաւը լսեց. Ու իր ծառաներուն ըսաւ, Ա-
նիկա Յովհաննէս մկրտիչն է, անիկա մեռելներէն
յարութիւն առած է, և անոր համար հրաշքներ
կ'ըլլան անով։
3 Քանզի Հերովդէս Յովհաննէսը բռներ, զանի-
կա կապեր ու բանտը դրեր էր՝ իր եղբօրը Փիլիպ-
4 պոսին կնկանը Հերովդիային համար։ Վասն զի
Յովհաննէս անոր կ'ըսէր, Քեզի օրինաւոր չէ անիկա
5 քեզ ունենալ։ Ուստի կ'ուզէր զանիկա սպաննել,
բայց ժողովուրդէն կը վախնար, ինչու որ իբրև
6 մարգարէ կ'ընդունէին զանիկա։ Ու երբոր Հերով-
դէսին ծննդեան օրը եղաւ, Հերովդիային աղջիկը
խաղաց [illegible] [illegible] մէջ, ու Հերովդէսին
7 հաճելի եղաւ։ Ուստի երդումով խոստացաւ որ

8 տայ անոր ինչ որ ուզելու ըլլայ։ Եւ անիկա ա-
ռաջ իր մօրմէն խրատուելով՝ ըսաւ, Տուր ինծի
հոս Յովհաննէս մկրտչին գլուխը սկուտեղի մը
9 վրայ։ Եւ թագաւորը տրտմեցաւ. բայց երդում-
ներուն համար ու իր հետը նստողներուն համար
10 հրաման ըրաւ որ տրուի։ Եւ մարդ խրկելով՝ Յով-
11 հաննէսը բանտին մէջ գլխատեց։ Եւ անոր գը-
լուխը սկուտեղով բերուեցաւ ու տրուեցաւ աղ-
12 ջըկանը, ան ալ իր մօրը տարաւ։ Եւ անոր աշա-
կերտները եկան ու մարմինը վերցընելով թա-
ղեցին, և գացին Յիսուսին պատմեցին։
13 Ու երբոր լսեց Յիսուս, անկէ նաւով անապատ
տեղ մը գնաց առանձին. երբոր լսեցին ժողո-
վուրդները՝ ոտքով անոր ետեւէն գացին իրենց
քաղաքներէն։
14 Ու *երբոր դուրս ելաւ, շատ ժողովուրդ տես-
նելով խղճաց անոնց վրայ, ու անոնց հիւանդ-
ները բժշկեց։
15 Եւ իրիկուան ատեն իր աշակերտներն իրեն ե-
կան ու ըսին, Հոս անապատ տեղ մըն է, և ժա-
մանակը ուշացած է. արձակէ ժողովուրդները, որ
16 գեղերը երթան ու իրենց կերակուր գնեն։ Եւ
Յիսուս անոնց ըսաւ, Հարկ չէ որ անոնք երթան,
17 դուք տուէք ասոնց որ ուտեն։ Անոնք ալ ըսին
անոր, Հոս ուրիշ բան մը չունինք, բայց միայն
18 հինգ նկանակ ու երկու ձուկ։ Ու ըսաւ անոնց, Հոս
19 ինծի բերէք զանոնք։ Եւ հրաման ըրաւ որ ժողո-
վուրդները խոտին վրայ նստին. և հինգ նկանակը
ու երկու ձուկը առաւ, ու դէպ ի երկինքը նայե-
լով օրհնեց, ու կտրելով նկանակները աշակերտ-
ներուն տուաւ, և աշակերտները՝ ժողովուրդին։
20 Եւ ամէնքը կերան ու կշտացան. և տասուերկու
կողով լեցուն աւելցած կտորուանքները վեր-

*Ոմանք՝ երբոր Յիսուս

21 ցուցին։ Եւ անոնք որ կերան՝ հինգ հազարի չափ
էրիկ մարդիկ էին՝ կիներէն և տղաքներէն ի
զատ։
22 *Եւ շուտ մը աշակերտները արտորցուց որ
նաւը մտնեն, և իրմէ առաջ անդին կողմը անց-
նին, մինչև որ ինքը ժողովուրդները արձակէ։
23 Եւ ժողովուրդները արձակելէն ետքը՝ ինքը լեռը
ելաւ առանձին աղօթք ընելու. ու երբոր իրիկուն
24 եղաւ՝ հոն մինակ էր. Իսկ նաւը արդէն ծովուն
մէջտեղը ալէկոծութեան մէջ էր, ինչու որ հովը
25 դէմ էր։ Ու գիշերուան չորրորդ պահուն Յի-
սուս դէպ ի անոնց գնաց՝ ծովուն վրայ քալելով։
26 Եւ աշակերտները երբոր անիկա տեսան՝ որ ծովուն
վրայ կը քալէր, խռովեցան, և ըսին թէ Աչքի
երևոյթ բան մըն է. ու վախէրնուն կանչուըռ-
27 տեցին։ Եւ շուտ մը Յիսուս խօսեցաւ անոնց ու
28 ըսաւ, Քաջ եղէք, ես եմ, մի վախնաք։ Պետրոս
պատասխան տուաւ անոր ու ըսաւ, Տէր, թէ որ
դուն ես՝ հրաման ըրէ ինծի որ քեզի գամ ջու-
29 րերուն վրայէն։ Ան ալ ըսաւ, Եկուր. Պետրոս
ալ նաւէն իջաւ, ջուրերուն վրայէն քալեց որ
30 Յիսուսի քովը երթայ. Բայց հովը սաստիկ տես-
նելով՝ վախցաւ, ու երբոր սկսաւ ընկղմիլ, աղա-
31 ղակեց ու ըսաւ, Տէր, ազատէ զիս։ Եւ Յիսուս
շուտ մը իր ձեռքը երկնցուց, բռնեց զանիկա ու
անոր ըսաւ, Թերահաւատ, ինչո՞ւ երկմտեցար։
32 Ու երբոր նաւը ելան, հովը դադարեցաւ։
33 Եւ անոնք որ նաւուն մէջն էին՝ եկան երկրպա-
գութիւն ըրին անոր ու ըսին, Իրաւցընէ Որդի
Աստուծոյ ես դուն։
34 Ու անդին կողմը անցնելով՝ Գեննեսարեթի եր-
35 կիրը հասան։ Ու երբոր ան տեղի մարդիկը ճանչ-
ցան զանիկա, լուր խրկեցին բոլոր շրջակայ տեղ-

*Ոմանք Եւ Յիսուս

36 ուանքը, ու բոլոր հիւանդները անոր բերին. Եւ
կ՚աղաչէին անոր, որ միայն իր հանդերձին քղանց-
քին դպչին. և անոնք որ դպան՝ բժշկուեցան։

ԳԼ. ԺԵ

1 Անատենը Յիսուսի եկան դպիրները ու փարիսեցի-
2 ները՝ որ Երուսաղեմէն էին, ու ըսին, Ինչո՞ւ քու
աշակերտներդ ծերերուն աւանդութիւնը զանց
կ՚ընեն, ինչու որ ձեռքերնին չեն լուար, երբոր
3 հաց կ՚ուտեն։ Ան ալ պատասխան տուաւ ու ըսաւ
անոնց, Հապա դուք ինչո՞ւ Աստուծոյ պատուի-
րանքը զանց կ՚ընէք ձեր աւանդութեանը պատ-
4 ճառաւ. Քանզի Աստուած պատուիրեց՝ ըսելով,
5 Քու հայրդ ու մայրդ պատուէ. Եւ՝ Ով որ իր
հայրը կամ մայրը անիծէ, մահով թող մեռնի։
6 Բայց դուք կ՚ըսէք, Ով որ իր հօրը կամ մօրը
ըսէ թէ Ան բանը որ ինծմէ պիտի շահիս՝ Աստու-
ծոյ տուրք ընծայ է. ու իր հայրը կամ իր մայրը
չպատուէ, աղէկ է. և այսպէս ձեր աւանդու-
թեանը պատճառաւ Աստուծոյ պատուիրանքը
7 խափանած էք։ Կեղծաւորներ, աղէկ մարգա-
8 րէութիւն ըրաւ ձեր վրայ Եսայի ու ըսաւ, Աս
ժողովուրդը միայն *շրթունքներովը զիս կը պատ-
ուէ, բայց իրենց սիրտը հեռացած զատուած է
9 ինծմէ. Ու պարապ տեղը զիս կը պաշտեն՝ մար-
դոց պատուիրած բաներն իբրև վարդապետու-
թիւն սորվեցնելով։
10 Եւ ժողովուրդները իրեն կանչելով՝ ըսաւ ա-
11 նոնց, Լսեցէք ու միտք առէք. Չէ թէ ինչ որ
բերանը կը մտնէ՝ կը պղծէ մարդը, հապա ինչ
որ բերնէն կ՚ելլէ՝ անիկա կը պղծէ մարդը։

*Ոմանք բերնովը ինծի կը մօտենայ, և շրթունք-
ներովը

12 Անատենը իր աշակերտները եկան՝ ըսին իրեն,
Գիտե՞ս որ փարիսեցիները գայթակղեցան երբոր
13 լսեցին այն խօսքը։ Ան ալ պատասխան տալով ը-
սաւ, Ամէն տունկ որ իմ երկնաւոր Հայրս չէ
14 տնկեր՝ պիտի խլուի։ Թող տուէք անոնք. իրենք
կոյր են՝ կոյրերու առաջնորդ. իսկ թէ որ կոյրը
կոյրին առաջնորդէ, երկուքն ալ փոսը պիտի իյ-
15 նան։ Եւ Պետրոս պատասխան տալով՝ անոր ըսաւ,
16 Մեկնէ մեզի աս առակը։ Ըսաւ Յիսուս, Դո՞ւք ալ
17 տակաւին անմիտ էք. Ու չէ՞ք հասկընար թէ ա-
մէն ինչ որ բերանը կը մտնէ՝ փորը կ'երթայ ու
18 արտաքնոցը կը ձգուի. Բայց բերնէն ելած բաները
սրտէն յառաջ կու գան, և անոնք կը պղծեն
19 մարդը։ Ինչու որ սրտէն կ'ելլեն չար խորհուրդ-
ներ, սպանութիւններ, շնութիւններ, պոռնկու-
թիւններ, գողութիւններ, սուտ վկայութիւններ,
20 հայհոյութիւններ։ Ասոնք են որ կը պղծեն մար-
դը, բայց անլուայ ձեռքով հաց ուտելը չպղծեր
մարդը։
21 Եւ Յիսուս անկէ ելլելով՝ Տիւրոսի ու Սիդոնի
22 կողմերը գնաց։ Եւ ահա Քանանացի կնիկ մը այն
սահմաններէն ելած՝ կ'աղաղակէր անոր ու կ'ըսէր,
Ողորմէ ինծի, Տէր՝ որդի Դաւթի, աղջիկս դևէն
23 սաստիկ կը չարչարուի։ Եւ ինքը բնաւ պատաս-
խան մը չտուաւ անոր. ու իր աշակերտները մօ-
տենալով կ'աղաչէին իրեն ու կ'ըսէին, Արձակէ
24 զանիկա, վասն զի մեր ետևէն կ'աղաղակէ։ Եւ
ինքը պատասխան տուաւ ու ըսաւ, Ես ուրիշի մը
չղրկուեցայ՝ բայց միայն Իսրայէլի տանը կորսուած
25 ոչխարներուն։ Եւ անիկա եկաւ, երկրպագու-
թիւն կ'ընէր անոր ու կ'ըսէր, Տէր, օգնէ ինծի,
26 Ան ալ պատասխան տուաւ ու ըսաւ, Աղէկ չէ
տղոց հացը առնել ու շուներուն ձգել։ Եւ անի-
27 կա ըսաւ, Այո, Տէր, ինչու որ շուներն ալ իրենց
տիրոջը սեղանէն ինկած փշրանքներէն կը կերա-

28 կրուին։ Անատենը Յիսուս պատասխան տուաւ ա-
նոր ու ըսաւ, Ով կին, քու հաւատքդ մեծ է,
քու ուզածիդ պէս ըլլայ քեզի. և նոյն ժամէն
անոր աղջիկը բժշկուեցաւ։
29 Ու Յիսուս անկէ գնաց՝ Գալիլեայի ծովեզերքը
30 եկաւ, և լեռը ելլելով հոն նստաւ։ Եւ շատ ժո-
ղովուրդներ իրեն եկան, որ իրենց հետ ունէին
կաղեր, կոյրեր, համրեր, հաշմանդամներ և ուրիշ
շատեր. ու ձգեցին անոնք Յիսուսի ոտքը, և
31 բժշկեց զանոնք. Անանկ որ ժողովուրդները
զարմացան, տեսնելով որ համրերը կը խօսէին,
հաշմանդամները կը բժշկուէին, կաղերը կը քա-
լէին և կոյրերը կը տեսնէին, ու Իսրայէլի Աստ-
ուածը կը փառաւորէին։
32 Եւ Յիսուս իր աշակերտները քովը կանչելով ը-
սաւ, Կը խղճամ աս ժողովուրդին վրայ, ինչու որ
հիմա երեք օր է որ իմ քովս են, և բան մը
չունին ուտելու. ու անոնք անօթի արձակել չեմ
33 ուզեր, չըլլայ որ ճամբան մարին։ Իսկ աշակերտ-
ները անոր ըսին, Մենք անապատի մէջ ուսկի՞ց
պիտի ունենանք այնչափ հաց, որ այսչափ բազ-
34 մութիւնը կշտացընենք։ Եւ Յիսուս ըսաւ անոնց,
Քանի՞ նկանակ ունիք. անոնք ալ ըսին, Եօթը,
35 ու քանի մը մանր ձուկեր։ Եւ հրաման ըրաւ ժո-
36 ղովուրդին որ գետնին վրայ նստին։ Ու եօթը
նկանակը և ձուկերը առաւ, գոհացաւ և կտրեց
ու տուաւ աշակերտներուն, աշակերտներն ալ՝
37 ժողովուրդին։ Կերան ամէնքը և կշտացան, ու
եօթը զամբիւղ լեցուն՝ աւելցած կտորուանք-
38 ները վերցուցին։ Եւ անոնք որ կերան՝ չորս հա-
զար էրիկ մարդիկ էին՝ կնիկներէն և տղաքնե-
րէն ի զատ։
39 Ու երբոր ժողովուրդը արձակեց, նաւը մտաւ
ու Մագդաղայի սահմանները եկաւ։

ԳԼ. ԺԶ

1 Եւ փարիսեցիները ու սադուկեցիները քովը ե-
կան, փորձելով՝ իրմէն կ'ուզէին որ երկինքէն
2 նշան մը ցուցընէ իրենց. Անիկա պատասխան
տուաւ ու ըսաւ անոնց, Երբոր իրիկուն կ'ըլլայ,
կ'ըսէք թէ Պարզ պիտի ըլլայ, ինչու որ երկինքը
3 կարմրած է. Եւ առտուանց՝ Այսօր մրրիկ պիտի
ըլլայ, ինչու որ երկինքը միգապատ ու կարմրած
է. Կեղծաւորներ, երկնից երեսը քննել գիտէք,
բայց ժամանակներուն նշանները չէ՞ք կրնար ճանչ-
4 նալ. Չար ու շնացող ազգը նշան կ'ուզէ, և ուրիշ
նշան պիտի չտրուի անոր, բայց Յովնան մարգա-
րէին նշանը. և թողուց անոնք ու գնաց.
5 Ու երբոր իր աշակերտները անդին կողմը ան-
6 ցան՝ հաց առնելու մոռցեր էին։ Եւ Յիսուս ա-
նոնց ըսաւ, Նայեցէք ու զգուշացէք փարիսեց-
7 ւոց և սադուկեցւոց խմորէն. Անոնք մէջերնին
կը խորհէին ու կ'ըսէին թէ Հաց չբերինք հետեր-
8 նիս. Իսկ Յիսուս անոնց խորհուրդը գիտնալով ը-
սաւ անոնց, Մէջերնիդ ինչո՞ւ կը խորհիք, թե-
9 րահաւատներ, թէ հաց չառիք. Տակաւին չէ՞ք
հասկընար և չէ՞ք յիշեր հինգ նկանակը՝ հինգ
10 հազարին, ու քանի կողով վերցուցիք. Ո՛չ ալ
եօթը նկանակը՝ չորս հազարին, ու քանի զամ-
11 բիւղ վերցուցիք. Ի՞նչպէս չէք հասկընար թէ ես
հացի համար չըսի ձեզի՝ փարիսեցւոց և սադու-
12 կեցւոց խմորէն զգոյշ կենալ. Անատենը հասկը-
ցան որ հացի խմորէն զգուշանալ չըսաւ, հապա
փարիսեցւոց ու սադուկեցւոց վարդապետու-
թենէն.
13 Եւ Յիսուս Փիլիպպոսի Կեսարիային կողմերը
երթալով՝ իր աշակերտներուն հարցուց ու ըսաւ,
Մարդիկ ո՞վ կ'ըսեն թէ եմ ես Որդի մարդոյ.

14 Ու անոնք ըսին, Ոմանք կ'ըսեն թէ Յովհաննէս
մկրտիչն ես, ուրիշները՝ Եղիան, ուրիշներն ալ՝
15 Երեմիան կամ մարգարէներէն մէկը. Ըսաւ ա-
նոնց, Հապա դուք ինծի համար ո՞վ կ'ըսէք թէ
16 եմ. Սիմոն Պետրոս պատասխան տուաւ ու ը-
սաւ, Դուն ես Քրիստոս՝ կենդանի Աստուծոյ Որ-
17 դին. Եւ Յիսուս պատասխան տուաւ ու ըսաւ
անոր, Երանի քեզ, Սիմոն՝ Յովնանի որդի. ին-
չու որ մարմինը և արիւնը քեզի չյայտնեց ասիկա,
18 հապա իմ Հայրս որ երկինքն է. Եւ ես քեզի
կ'ըսեմ որ Դուն *Պետրոս ես, ու աս վէմին վրայ
պիտի շինեմ իմ եկեղեցիս, և դժոխքին դռները
19 անիկա պիտի չյաղթեն. Ու երկնից թագաւորու-
թեան բանալիները քեզի պիտի տամ. և ինչ որ
երկրի վրայ կապես, երկնից մէջ կապուած պիտի
ըլլայ. ու ինչ որ երկրի վրայ արձակես, երկնից
20 մէջ արձակուած պիտի ըլլայ. Անատենը աշա-
կերտներուն պատուիրեց, որ մէկու մը չըսեն թէ
ինքը †Քրիստոսն է։
21 Անկէ ետեւ սկսաւ Յիսուս իր աշակերտներուն
ցուցընել թէ պէտք է որ ինքը Երուսաղէմ եր-
թայ, ու շատ չարչարանքներ կրէ ծերերէն և
քահանայապետներէն ու դպիրներէն, և սպան-
22 նուի, ու երրորդ օրը յարութիւն առնէ. Եւ Պետ-
րոս մէկդի առաւ զանիկա, և սկսաւ յանդիմա-
նել զանիկա ու ըսել, Քաւ լիցի քեզ, Տէր, աս
23 բանը քեզի չըլլայ. Եւ ինքը դառնալով՝ Պետրո-
սին ըսաւ, Ետիս գնա, Սատանայ, ինծի գայ-
թակղութիւն ես դուն. ինչու որ Աստուծոյ բա-
ները չես մտածեր, հապա մարդոց բաները.
24 Անատենը Յիսուս իր աշակերտներուն ըսաւ,
Թէ որ մէկը իմ ետեւէս գալ կ'ուզէ, թող իր

*Այսինքն՝ վէմ
†Ոմանք Յիսուս Քրիստոսն

անձը ուրանայ և իր խաչը վերցընէ ու իմ ետե-
25 ւէս գայ։ Վասն զի ով որ կ'ուզէ իր անձը ապ-
րեցընել, պիտի կորսնցընէ զանիկա. և ով որ
ինծի համար իր անձը կը կորսնցընէ, պիտի գըտ-
26 նէ զանիկա։ Քանզի ի՞նչ կը շահի մարդ մը՝ թէ
որ բոլոր աշխարհը վաստըկի և իր անձը կորսըն-
ցընէ, կամ իր անձին համար ի՞նչ ազատչէք պի-
27 տի տայ մարդ։ Վասն զի Որդին մարդոյ իր Հօրը
փառքովը պիտի գայ իր հրեշտակներուն հետ, և
անատենը ամէն մէկուն իր գործքերուն համե-
28 մատ հատուցում պիտի ընէ։ Ճշմարիտ կ'ըսեմ
ձեզի որ հոս ներկայ եղողներէն մէկ քանիները
կան՝ որոնք մահուան համը պիտի չառնեն, մինչև
որ տեսնեն Որդին մարդոյ իր թագաւորութիւ-
նովը եկած ։

ԳԼ. ԺԷ

1 Եւ վեց օրէն ետև Յիսուս իր հետը առաւ Պետ-
րոսը ու Յակոբոսը և անոր եղբայրը Յովհաննէ-
սը, ու անոնք մէկ բարձր լեռ մը հանեց առան-
2 ձին։ Եւ անոնց առջևը այլակերպեցաւ, ու իր ե-
րեսը փայլեցաւ արեգակի պէս, ու իր հանդերձ-
3 ները ճերմըկցան լուսոյ պէս։ Եւ ահա երևցան
անոնց Մովսէս ու Եղիա ու իր հետը կը խօսէին։
4 Պատասխան տուաւ Պետրոս ու ըսաւ Յիսուսին,
Տէր, աղէկ է որ հոս կենանք. թէ որ կ'ուզես,
երեք խըճիթ շինենք հոս, մէկը քեզի՝ և մէկը
5 Մովսէսին՝ ու մէկը Եղիային։ Եւ քանի որ անի-
կա կը խօսէր, ահա լուսաւոր ամպ մը անոնց վը-
րայ հովանի եղաւ. և ահա ամպէն ձայն մը ելաւ
ըսելով, Ասիկա է իմ սիրելի Որդիս՝ որուն հաւ-
6 ներ եմ, անոր մտիկ ըրէք։ Աշակերտները երբոր
լսեցին՝ երեսնուն վրայ ինկան ու խիստ վախ-
7 ցան։ Եւ Յիսուս մօտենալով դպաւ անոնց ու ը-

8 սաւ, Ելէք ու մի վախնաք։ Աչքերնին վերցու-
ցին ու մէկը չտեսան, բայց միայն Յիսուսը։
9 Ու երբոր անոնք լեռնէն վար կ'իջնէին, Յիսուս
պատուիրեց անոնց ու ըսաւ, Այս տեսիլքը մար-
դու մի զրուցէք, մինչև Որդին մարդոյ մեռել-
10 ներէն յարութիւն առնէ։ Եւ իր աշակերտները
իրեն հարցուցին ու ըսին, Ուրեմն ինչո՞ւ համար
դպիրները կ'ըսեն թէ Պէտք է որ առաջ Եղիան
11 գայ։ Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ ա-
նոնց, Յիրաւի առաջ Եղիան կու գայ և ամէն
12 բան կարգի կը դնէ։ Բայց ձեզի կ'ըսեմ որ Եղիան
արդէն եկած է, և անիկա չճանչցան, հապա ինչ
որ ուզեցին՝ ըրին անոր. անանկ ալ Որդին մար-
13 դոյ անոնցմէ պիտի չարչարուի։ Անատենը հաս-
կըցան աշակերտները որ Յովհաննէս մկրտչին հա-
մար ըսաւ անոնց։
14 Ու երբոր ժողովուրդին քովը եկան, մարդ մը
մօտեցաւ անոր, և ծնկան վրայ գալով՝ կ'ըսէր,
Տէր, իմ որդւոյս ողորմէ, որ կը լուսնոտի և չա-
րաչար կը տանջուի, քանզի շատ անգամ կրակի
15 մէջ կ'իյնայ՝ ու շատ անգամ ջուրի մէջ։ Եւ ա-
նիկա քու աշակերտներուդ բերի, ու չկրցան զա-
16 նիկա բժշկել։ Յիսուս պատասխան տուաւ ու ը-
սաւ, Ով անհաւատ և խոտորեալ ազգ, մինչև
ե՞րբ ձեզի հետ պիտի ըլլամ, մինչև ե՞րբ ձեզի
17 պիտի համբերեմ. զանիկա հոս ինծի բերէք։ Եւ
Յիսուս սաստեց անոր, ու դևը անկէ ելաւ, և
18 բժշկուեցաւ տղան նոյն ժամէն։ Անատենը աշա-
կերտները առանձին Յիսուսի քովը երթալով՝
19 ըսին, Մենք ինչո՞ւ չկրցանք անիկա հանել։ Եւ
Յիսուս ըսաւ անոնց, Ձեր թերահաւատութեանը
համար. քանզի ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Թէ որ
մանանեխի հատի չափ հաւատք ունենաք, աս
լեռանս պիտի ըսէք, Ասկէ անդին փոխադրուէ,
և պիտի փոխադրուի. ու բան մը անհնարին պի-

20 տի չըլլայ ձեզի։ Սակայն աս տեսակը ուրիշ բանով
չելլեր, բայց միայն աղօթքով և ծոմապահու-
թեամբ։
21 Ու երբոր անոնք Գալիլեայի մէջ կը պտըտէին՝
Յիսուս ըսաւ անոնց, Որդին մարդոյ պիտի մատ-
22 նուի մարդոց ձեռքը, Եւ զանիկա պիտի մեռցը-
նեն, ու երրորդ օրը յարութիւն պիտի առնէ.
ու խիստ տրտմեցան։
23 Երբոր անոնք Կափառնայում եկան, երկդրամ-
եան տուրքը առնողները Պետրոսին եկան ու ը-
սին, Ձեր վարդապետը երկդրամեանը չը՞հատու-
24 ցաներ. Եւ անիկա ըսաւ, Այո, կը հատուցանէ։ Ու
երբոր տունը մտաւ, Յիսուս անոր դէմը ելաւ ու
ըսաւ, Քեզի ի՞նչպէս կ'երեւնայ, Սիմոն, երկրիս
թագաւորները ուրկէ՞ն կ'առնեն հարկը կամ
տուրքը, իրենց որդիներէ՞ն թէ օտարներէն։
25 Պետրոս անոր ըսաւ թէ Օտարներէն. Յիսուս ա-
26 նոր ըսաւ, Ուրեմն որդիքը ազատ են։ Բայց չըլ-
լայ որ անոնք գայթակղեցնենք, գնա ծովը և
կարթ ձգէ, ու առջի ձուկը որ կ'ելլէ՝ առ, և
անոր բերանը բանալով՝ սատեր մը պիտի գտնես.
զանիկա առ՝ անոնց տուր ինծի և քեզի համար։

ԳԼ. ԺԸ

1 Նոյն ժամանակը աշակերտները Յիսուսի քովը
եկան ու ըսին, Ո՞վ է մեծ երկնից թագաւորու-
2 թեանը մէջ։ Եւ Յիսուս տղայ մը կանչեց իրեն,
3 զանիկա անոնց մէջտեղը կայնեցուց, Ու ըսաւ,
Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Թէ որ դարձի չգաք և
տղոց պէս չըլլաք, երկնից թագաւորութիւնը
4 բնաւ պիտի չմտնէք։ Ուստի ով որ իր անձը աս
տղուն պէս խոնարհեցընէ, անիկա է մեծ երկնից
5 թագաւորութեանը մէջ։ Եւ ով որ ասանկ տղայ
6 մը ընդունի իմ անունովս, զիս կ'ընդունի։ Եւ

ով որ գայթակղեցընէ աս պզտիկներուն մէկը որ
ինծի կը հաւատան, աղէկ է անոր՝ որ իր պարա-
նոցէն իշու աղացքի քար մը կախուի, ու ծովուն
անդունդին մէջ ընկղմի։
7 Վա՜յ աշխարհին՝ գայթակղութիւններու պատ-
ճառաւ. վասն զի հարկ է որ գայթակղութիւն-
ները գան, բայց վա՜յ ան մարդուն՝ որուն ձեռ-
8 քովը գայթակղութիւնը կու գայ։ Արդ թէ որ
քու ձեռքդ կամ ոտքդ քեզ կը գայթակղեցընէ,
կտրէ անիկա ու քեզմէ ձգէ, աղէկ է քեզի կաղ
կամ պակասաւոր մտնել կեանքը, քան թէ եր-
կու ձեռք կամ երկու ոտք ունենալ ու յաւի-
9 տենական կրակին մէջը ձգուիլ։ Եւ թէ որ աչքդ
քեզ կը գայթակղեցընէ, հանէ անիկա և քեզմէ
ձգէ. աղէկ է քեզի մէկ աչքով կեանքը մտնել,
քան թէ երկու աչք ունենալ ու կրակին գեհ-
եանը ձգուիլ։
10 Զգոյշ կեցէք որ չանարգէք աս պզտիկներէն
մէկը. քանզի կ'ըսեմ ձեզի որ երկնից մէջ անոնց
հրեշտակները միշտ կը տեսնեն իմ Հօրս երեսը՝
11 որ երկինքն է։ Ինչու որ Որդին մարդոյ եկաւ
12 կորսուածը փրկելու։ Ի՞նչպէս կ'երեւնայ ձեզի.
Թէ որ մարդ մը հարիւր ոչխար ունենայ, և ա-
նոնցմէ մէկը մոլորի, իննսունիննը ուրիշ *լեռ-
ները չը՞ձգեր, ու՞ երթար մոլորածը փնտռեր։
13 Եւ թէ որ գտնելու ըլլայ զանիկա, ճշմարիտ կ'ը-
սեմ ձեզի որ աւելի ուրախ կ'ըլլայ անոր վրայ,
14 քան թէ իննսունիննին որ մոլորած չեն։ Ա-
սանկ ալ ձեր երկնաւոր Հայրը չհաճիր որ աս
պզտիկներէն մէկը կորսուի։
15 Թէ որ քու եղբայրդ քեզի դէմ մեղանչէ, գնա
յանդիմանէ անիկա՝ երբոր դուն ևս ան մինակ
էք. թէ որ քեզի մտիկ ընէ, շահեցար քու եղ-

*Ոմանք՝ չը՞ձգեր, ու լեռները

16 քայրդ։ Հապա թէ որ մտիկ չընէ քեզի, քու հետդ
մէկ ուրիշ մը կամ երկուք ալ առ, որ երկու
կամ երեք վկաներու բերնէ ամէն բան հաստատ-
17 ուի։ Եւ թէ որ անոնց ալ մտիկ չընէ, եկեղեցի-
ին ըսէ, իսկ թէ որ եկեղեցիին ալ մտիկ չընէ,
հեթանոսի ու մաքսաւորի պէս թող ըլլայ քեզի։
18 Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Երկրի վրայ ինչ որ կա-
պէք, երկնից մէջ կապուած պիտի ըլլայ. ու երկ-
րի վրայ ինչ որ արձակէք, երկնից մէջ արձակ-
19 ուած պիտի ըլլայ։ Դարձեալ կ'ըսեմ ձեզի, Թէ
որ ձեզմէ երկու հոգի երկրի վրայ միաբանին՝ ա-
մէն ինչ բանի համար որ խնդրեն, պիտի ըլլայ
20 անոնց իմ Հօրմէս՝ որ երկինքն է։ Քանզի ուր որ
երկու կամ երեք հոգի ժողվուած ըլլան իմ ա-
նունովս, հոն եմ ես անոնց մէջը։
21 Անատենը Պետրոս մօտեցաւ անոր ու ըսաւ,
Տէր, քանի՞ անգամ թէ որ եղբայրս ինծի դէմ
22 մեղանչէ՝ ներեմ անոր. մինչեւ եօ՞թը անգամ։ Յի-
սուս անոր ըսաւ, Քեզի չեմ ըսեր թէ մինչեւ եօ-
թը անգամ, հապա մինչեւ եօթանասուն անգամ
23 եօթը։ Ասոր համար երկնից թագաւորութիւնը
կը նմանի թագաւորի մը, որ իր ծառաներէն հա-
24 շիւ առնել ուզեց։ Ու երբոր սկսաւ առնել, տա-
սը հազար տաղանդի պարտական մը բերուեցաւ
25 իրեն։ Բայց անիկա վճարելու կարողութիւն չու-
նենալով, իր տէրը հրաման ըրաւ որ անիկա և
անոր կինը ու որդիքը և անոր բոլոր ունեցածը
26 ծախուի ու պարտքը վճարուի։ Իսկ ծառան անոր
առջեւը իյնալով երկրպագութիւն կ'ընէր ու կ'ը-
սէր, Տէր, համբերէ ինծի և ամէնը քեզի կը վճա-
27 րեմ։ Եւ ան ծառային տէրը վրան խղճալով ար-
28 ձակեց զանիկա, ու պարտքը շնորհեց անոր։ Եւ
նոյն ծառան ելաւ, իր ծառայակիցներէն մէկը
գտաւ որ իրեն հարիւր դահեկան պարտք ունէր,
ու զանիկա բռնելով կը խեղդէր ու կ'ըսէր, Վը-

29 ճարէ ինծի ունեցած պարտքդ։ Ուստի անոր ծա-
ռայակիցը անոր ոտքը ինկաւ, կ'աղաչէր անոր
ու կ'ըսէր, Համբերէ ինծի ու *քեզի կը վճարեմ։
30 Եւ ինքը չէր ուզեր, հապա գնաց՝ բանտը դրաւ
31 զանիկա, մինչեւ որ պարտքը վճարէ։ Երբոր իր
ծառայակիցները տեսան եղած բաները՝ խիստ
տրտմեցան, ու եկան իրենց տիրոջը հասկցու-
32 ցին բոլոր եղածը։ Անատենը անոր տէրը կանչեց
զանիկա ու ըսաւ անոր, Չար ծառայ, ան բոլոր
պարտքը ես քեզի շնորհեցի՝ ինծի աղաչելուդ
33 համար. Ուրե՞մն պէտք չէ՞ր քեզի ալ քու ծա-
ռայակցիդ ողորմիլ, ինչպէս որ ես քեզի ողոր-
34 մեցայ։ Եւ անոր տէրը բարկանալով՝ դահիճնե-
րուն մատնեց զանիկա, մինչեւ որ բոլոր պարտքը
35 վճարէ։ Ասանկ ալ իմ երկնաւոր Հայրս պիտի
ընէ ձեզի, թէ որ ձեր սրտերէն չէք ներեր ա-
մէն մէկդ իր եղբօրը իրենց յանցանքները։

ԳԼ. ԺԹ

1 Ու եղաւ որ երբ Յիսուս այս խօսքերը լմնցուց,
Գալիլեայէն ելաւ ու եկաւ Հրէաստանի սահման-
2 ները Յորդանանու անդիի կողմը։ Եւ անոր ե-
տեւէն շատ ժողովուրդներ գացին, ու հոն բը-
ժշկեց զանոնք։
3 Եւ փարիսեցիները անոր մօտենալով զանիկա կը
փորձէին՝ ու կ'ըսէին թէ Արժա՞ն է որ մարդ մը
4 իր կնիկը արձակէ ամէն պատճառի համար։ Ա-
նիկա ալ պատասխան տուաւ ու անոնց ըսաւ,
Չէ՞ք կարդացեր թէ ան որ սկիզբէն ստեղծողը
5 արու և էգ ստեղծեց զանոնք՝ ու ըսաւ, կամ
համար մարդ իր հայրը ու մայրը պիտի թողնէ, կամ
կնկանը պիտի յարի, ու երկուք

*Ոմանք ամէնը քեզի

6 պիտի ըլլան։ Ուստի ալ երկու չեն, հապա մէկ
մարմին. ուրեմն ան որ Աստուած միացուց՝
7 մարդ թող չզատէ։ Ըսին իրեն, Հապա Մովսէս
ինչո՞ւ պատուիրեց արձակման թուղթ տալ և
8 արձակել։ Ըսաւ անոնց, Մովսէս ձեր սրտերուն
կարծրութեանը համար ձեզի հրաման տուաւ կը-
նիկներնիդ արձակել, բայց սկիզբէն անանկ չե-
9 ղաւ։ Սակայն ձեզի կ'ըսեմ, Ով որ առանց պոռ-
նըկութեան պատճառի իր կնիկը արձակէ և ու-
րիշ մը առնէ, շնութիւն կ'ընէ. և ով որ ար-
10 ձակուածը առնէ՝ շնութիւն կ'ընէ։ Իր աշակերտ-
ները ըսին իրեն, Թէ որ անանկ բան կայ էրկան
11 ու կնկան մէջտեղը՝ չամուսնանալը աղէկ է։ Եւ
ինքը անոնց ըսաւ, Ամէնը բաւական չեն աս բա-
12 նին, հապա անոնք՝ որոնց տրուած է։ Ինչու որ
կան ներքինիներ՝ որ էրէնց մօրը որովայնէն ա-
նանկ ծնան, և կան ներքինիներ՝ որ մարդոցմէ
ներքինի եղան, և կան ներքինիներ՝ որ ինք-
զինքնին ներքինի ըրին երկնից թագաւորու-
թեանը համար. ով որ կրնայ առնել՝ թող առնէ։
13 Անատենը մանր տղաք բերուեցան իրեն, որ
անոնց վրայ ձեռք դնէ և աղօթք ընէ, ու աշա-
14 կերտները կը յանդիմանէին զանոնք։ Բայց Յի-
սուս ըսաւ, Թող տուէք աս մանր տղոցը, և մի
արգիլէք զանոնք ինծի գալէն, ինչու որ երկնից
15 թագաւորութիւնը ասանկներունն է։ Եւ անոնց
վրայ ձեռք դնելէն ետև գնաց անկէ։
16 Եւ ահա մէկը մօտենալով՝ ըսաւ անոր, Բարի
վարդապետ, ի՞նչ բարի գործ գործեմ, որ յաւի-
տենական կեանքը ընդունիմ։ Եւ անիկա ըսաւ
27 բեմ։ Ինչո՞ւ զիս բարի կ'անուանես. մէկէն ի
28 ձակեց զմ չկայ, որ է Աստուած. հապա թէ որ
Նոյն ծառաանքը մտնել, պատուիրանքները պա-
գտուաւ որ իրնոր, Որո՞նք. և Յիսուս ըսաւ, Ա-
ու զանիկա բաւութիւն մի ըներ, Շնութիւն մի ը-

ներ, Գողութիւն մի ըներ, Սուտ վկայութիւն մի
19 ըներ, Քու հայրդ ու մայրդ պատուէ, և Քու ըն-
20 կերդ քու անձիդ պէս սիրես։ Պատանին ըսաւ
անոր, Ասոնք ամէնը մանկութենէս 'ի վեր պա-
21 հեր եմ. ալ ի՞նչ բանով պակաս եմ։ Ըսաւ ա-
նոր Յիսուս, Թէ որ կ'ուզես կատարեալ ըլլալ,
գնա ունեցածդ ծախէ և տուր աղքատներուն,
ու երկինքը գանձ պիտի ունենաս, և եկուր իմ
22 ետևէս։ Երբոր պատանին աս խօսքը լսեց՝
տրտմած գնաց, ինչու որ շատ ստացուածք ու-
նէր։
23 Եւ Յիսուս ըսաւ աշակերտներուն, Ճշմարիտ
կ'ըսեմ ձեզի որ հարուստը դժուարաւ պիտի
24 մտնէ երկնից թագաւորութիւնը։ Դարձեալ կ'ը-
սեմ ձեզի, Դիւրին է որ *ուղտը ասեղին ծակէն
անցնի, քան թէ հարուստը Աստուծոյ թագաւո-
25 րութիւնը մտնէ։ Աշակերտները երբոր լսեցին՝
շատ զարմացան ու ըսին, Ուրեմն ո՞վ կրնայ
26 փրկուիլ։ Յիսուս անոնց նայելով ըսաւ, Ատիկա
մարդոց կողմանէ անկարելի է, բայց Աստուծոյ
կողմանէ ամէն բան կարելի է։
27 Անատենը Պետրոս պատասխան տուաւ ու ը-
սաւ անոր, Ահա մենք ամէն բան թողուցինք՝ և
քու ետևէդ եկանք. ուստի մեզի ի՞նչ պիտի
28 ըլլայ։ Ըսաւ անոնց Յիսուս, Ճշմարիտ կ'ըսեմ
ձեզի թէ դուք որ իմ ետևէս եկաք, †միւսան-
գամ գալուստին" երբոր Որդին մարդոյ իր փա-
ռաց աթոռը նստի, դուք ալ տասուերկու ա-
թոռներու վրայ պիտի նստիք՝ Իսրայէլի տաս-
29 ուերկու ցեղերը դատելու։ Եւ ով որ թողուց
տուներ, կամ եղբայրներ, կամ քոյրեր, կամ
հայր, կամ մայր, կամ կին, կամ որդիներ, կամ

*Ոմանք պարանը
†Յուն. վերստին ծննդեանը մէջ

արտեր՝ իմ անուանս համար, հարիւրապատիկ
պիտի առնէ, և յաւիտենական կեանք պիտի ժա-
30 ռանգէ։ Բայց շատ առաջիններ պիտի ըլլան յե-
տին, և յետիններ՝ առաջին։

ԳԼ. Ի

1 Քանզի երկնից թագաւորութիւնը տանուտէր
մարդու մը նման է, որ առտուանց կանուխ ե-
2 լաւ՝ իր այգիին համար բանուորներ բռնելու։ Եւ
բանուորներուն հետ օրը մէկ դահեկանի մը խօսք
3 կապեց, ու զանոնք ղրկեց իր այգին։ Եւ ժամը
երեքին ատենները ելաւ՝ ուրիշները տեսաւ, որ
4 շուկային մէջ պարապ կայներ էին։ Ու ըսաւ ա-
նոնց, Դուք ալ գացէք իմ այգիս, և ինչ որ ար-
5 ժան է՝ կու տամ ձեզի։ Անոնք ալ գացին. ու
նորէն ժամը վեցին և ժամը իննին ատենները ե-
6 լաւ՝ անանկ ըրաւ։ Եւ ժամը տասնումէկին ա-
տենները ելաւ, ուրիշները գտաւ՝ որ պարապ
կայներ էին, ու անոնց ըսաւ, Ինչո՞ւ հոս բոլոր
7 օրը պարապ կայներ էք։ Ըսին իրեն, Անոր հա-
մար որ մէկը մեզ վարձքով չբռներ. ըսաւ ա-
նոնց, Դուք ալ այգին գացէք, ու ինչ որ ար-
8 ժան է՝ պիտի առնէք։ Եւ իրիկուն որ եղաւ,
այգիին տէրը իր տնտեսին ըսաւ, Բանուորնե-
րը կանչէ, և անոնց վարձքը տուր՝ ետքիննե-
9 րէն սկսելով մինչև առջինները։ Ու երբոր եկան
անոնք որ ժամը տասնումէկին գացեր էին, մէյ-
10 մէկ դահեկան առին. Եւ առջինները գալով՝ կը
կարծէին որ աւելի պիտի առնեն, ու անոնք ալ
11 առին մէյմէկ դահեկան։ Երբոր առին՝ տանը
տիրոջը դէմ տրտունջ կ'ընէին ու կ'ըսէին թէ
12 Աս ետքինները մէկ ժամ մը գործեցին, և ա-
նոնք հաւասար ըրիր մեզի, որ օրուան ծանրու-
13 թիւնը ու տաքութիւնը քաշեցինք։ Անիկա պա-

տասխան տուաւ անոնցմէ մէկուն ու ըսաւ, Ըն-
կեր, ես քեզ չեմ զրկեր. չէ՞ որ դուն իմ հետս
14 մէկ դահեկանի մը խօսք կապեցիր. Առ քուկդ
ու գնա. կ'ուզեմ որ աս ետքինին քեզի տուածէս
15 պէս տամ։ Միթէ ես իշխանութիւն չունի՞մ իմ
բաներուս վրայ՝ ինչ որ ուզեմ ընելու. կամ թէ
16 քու աչքդ չա՞ր է՝ որ ես բարերար եմ։ Այսպէս
յետինները առաջին պիտի ըլլան, և առաջիննե-
րը՝ յետին. ինչու որ կանչուածները շատ են,
բայց ընտրուածները քիչ.
17 Ու երբոր Յիսուս Երուսաղէմ կ'ելլէր, ճամբան
տասուերկու աշակերտները հետը առաւ առան-
18 ձին, ու ըսաւ անոնց, Ահա Երուսաղէմ կ'ելլենք,
և Որդին մարդոյ պիտի մատնուի քահանայա-
պետներուն ու դպիրներուն, և զանիկա մահուան
19 պիտի դատապարտեն, Եւ զանիկա հեթանոսնե-
րուն պիտի մատնեն՝ ծաղր ընելու ու ծեծելու և
խաչը հանելու. ու երրորդ օրը յարութիւն պիտի
առնէ։
20 Անատենը Զեբեդէոսին որդւոցը մայրը իր որդ-
ւոցը հետ եկաւ անոր, երկրպագութիւն կ'ընէր
21 ու բան մը կը խնդրէր անկէ։ Ան ալ ըսաւ ա-
նոր, Ի՞նչ կ'ուզես։ Ըսաւ անոր, Ըսէ որ աս իմ
երկու որդիքս մէկը աջ կողմդ՝ և միւսը ձախ
22 կողմդ նստին քու թագաւորութեանդ մէջ. Պա-
տասխան տուաւ Յիսուս ու ըսաւ, Չէք գիտեր
ինչ կը խնդրէք. կրնա՞ք խմել ան գաւաթը՝ որ
ես պիտի խմեմ, կամ ան մկրտութիւնովը մկըր-
տուիլ՝ որ ես պիտի մկրտուիմ. ըսին իրեն,
23 Կրնանք. Եւ ըսաւ անոնց, Իմ գաւաթս պիտի
խմէք, և ան մկրտութիւնովը որ ես մկրտուելու
եմ՝ պիտի մկրտուիք. բայց իմ աջ կողմս ու ձախ
կողմս նստիլը՝ իմս չէ տալը, հապա որոնց որ
24 պատրաստուած է իմ Հօրմէս։ Ու երբոր
տասը աշակերտները լսեցին՝ ան երկու եղբայրնե-

25 րուն նեղացան։ Իսկ Յիսուս իրեն կանչեց զանոնք
ու ըսաւ, Գիտէք որ ազգաց իշխանները կը տի-
րեն անոնց, և մեծամեծները կ'իշխեն անոնց.
26 Բայց ձեր մէջը անանկ պիտի չըլլայ, հապա ձեզմէ
ով որ մեծ ըլլալ կ'ուզէ, թող անիկա ձեր սպա-
27 սաւորը ըլլայ. Ու ձեզմէ ով որ առաջին ըլլալ
28 կ'ուզէ՝ թող անիկա ձեր ծառան ըլլայ. Ինչպէս
Որդին մարդոյ չեկաւ սպասաւորութիւն ընդու-
նելու, հապա սպասաւորութիւն ընելու և իր
կեանքը շատերուն համար փրկանք տալու։
29 Ու երբոր անոնք Երիքովէն ելան, մեծ բազ-
30 մութիւն անոր ետեւէն գնաց։ Եւ ահա ճամբուն
քովը երկու կոյր նստած էին. երբոր լսեցին թէ
Յիսուս կ'անցնի, աղաղակեցին ու ըսին, Ողորմէ
31 մեզի, Տէր՝ Որդի Դաւիթի։ Եւ բազմութիւնը կը
յանդիմանէր զանոնք որ լռեն, բայց անոնք՝ ա-
ւելի կ'աղաղակէին ու կ'ըսէին, Ողորմէ մեզի,
32 Տէր՝ Որդի Դաւիթի։ Եւ Յիսուս կանգ առնելով
կանչեց զանոնք ու ըսաւ, Ի՞նչ կ'ուզէք որ ձեզի
33 ընեմ։ Ըսին անոր, Տէր, որ աչքերնիս բացուին.
34 Եւ Յիսուս խղճալով՝ անոնց աչքերուն դպաւ, և
շուտ մը անոնց աչքերը բացուեցան, ու անոր ե-
տեւէն գացին։

Գլ. ԻԱ

1 Ու երբոր Երուսաղեմին մօտեցան ու եկան Բեթ-
փագէ դէպ ի Ձիթենեաց լեռը, անատենը Յիսուս
2 էր աշակերտներէն երկուքը խրկեց. Եւ ըսաւ ա-
նոնց, Գացէք ատ ձեր դիմացի գեղը, և շուտ մը
պիտի գտնէք կապած էշ մը ու անոր հետ աւա-
3 նակ մը. արձըկեցէք անոնք ու ինծի բերէք. Եւ
թէ որ մէկը ձեզի բան մը ըսէ, ըսէք թէ Տէրոջը
4 պէտք են. և շուտ մը անոնք պիտի խրկէ։ Աս

ամէն բաները եղաւ, որ կատարուի մարգարէին
5 խօսքը որ կ'ըսէ, Ըսէք Սիօնի աղջկանը, Ահա
քու թագաւորդ քեզի կու գայ, հեզ՝ ու իշու վը-
6 րայ հեծած՝ և իշու ձագի՝ աւանակի վրայ։ Աշա-
կերտները գացին, և ինչպէս որ Յիսուս իրենց
7 պատուիրեր էր՝ ըրին. Ու բերին էշը և աւանա-
կը, և անոնց վրայ իրենց հանդերձները դրին, ու
8 *Նստաւ անոնց վրայ։ Եւ ժողովուրդէն շատերը
իրենց հանդերձները ճամբուն վրայ փռեցին, և
ուրիշները ծառերէն ճիւղեր կը կտրէին ու ճամ-
9 բուն վրայ կը տարածէին. Եւ ժողովուրդները որ
առջեւէն ու ետեւէն կ'երթային՝ կ'աղաղակէին ու
կ'ըսէին, Ովսաննա Որդւոյ Դաւիթի, օրհնեալ է
ան որ Տէրոջը անունովը կու գայ. Ովսաննա ի
բարձունս։
10 Ու երբոր անիկա Երուսաղէմ մտաւ, բոլոր քա-
11 ղաքը շարժեցաւ ու ըսաւ, Ո՞վ է աս։ Եւ ժողո-
վուրդները ըսին, Ասիկա Յիսուս մարգարէն է՝
Գալիլեայի Նազարեթէն։
12 Եւ Յիսուս Աստուծոյ տաճարը մտաւ, ու դուրս
հանեց ամէն անոնք որ տաճարին մէջ կը ծախէին
ու կը գնէին, և ստակ փոխողներուն սեղանները
ու աղաւնի ծախողներուն աթոռները կործանեց.
13 Եւ ըսաւ անոնց, Գրուած է թէ Իմ տունս ա-
ղօթքի տուն պիտի կոչուի, բայց դուք ատիկա
աւազակներու այր ըրիք։
14 Եւ տաճարին մէջ կոյրեր ու կաղեր եկան ի-
15 րեն, և բժշկեց զանոնք։ Երբոր քահանայապետ-
ները ու դպիրները տեսան անոր ըրած հրաշք-
ները, և տղաքը որ տաճարին մէջ կ'աղաղակէին
ու կ'ըսէին, Ովսաննա Որդւոյ Դաւիթի, բարկա-
16 ցան. Ու ըսին անոր, Կը լսե՞ս ինչ կ'ըսեն ասոնք.
Եւ Յիսուս ըսաւ անոնց, Այո. բնաւ չէ՞ք կար-

*Ոմանք Նստեցուցին

դացեր, թէ Մանկանց ու կաթնկեր տղայոց բեր-
նէն գովութիւն կատարեցիր։
17 Եւ թողուց անոնք՝ քաղաքէն դուրս Բեթա-
նիա ելաւ, ու գիշերը հոն կեցաւ։
18 Եւ առտուանց երբոր քաղաքը կը դառնար՝
19 անօթեցաւ. Ու ճամբուն վրայ թզենի մը տես-
նելով՝ քովը գնաց, և անոր վրայ տերևներէն ի
զատ բան մը չգտաւ. ու ըսաւ անոր, Ասկէ ետև
քեզմէ պտուղ չըլլայ յաւիտեան. և իսկոյն թզե-
20 նին չորցաւ։ Եւ աշակերտները երբոր տեսան՝
զարմացան ու ըսին թէ ինտո՞ր թզենին շուտ մը
21 չորցաւ։ Յիսուս պատասխան տուաւ ու ըսաւ ա-
նոնց, Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, Թէ որ հաւատք
ունենաք ու չերկմտիք, չէ թէ միայն աս թզե-
նիին եղածը պիտի ընէք, հապա նաև թէ որ աս
լեռանը ըսէք, Ելիր ու ծովը ինկիր, պիտի ըլլայ։
22 Եւ ամէն ինչ որ աղօթքի մէջ հաւատքով կը
խնդրէք, պիտի առնէք։
23 Ու երբոր անիկա տաճարը եկաւ, քահանայա-
պետները և ժողովուրդին ծերերը անոր մօտե-
ցան՝ երբոր կը սորվեցընէր, ու ըսին, Ի՞նչ իշ-
խանութիւնով կ՚ընես աս բաները, և ո՞վ տուաւ
24 քեզի աս իշխանութիւնը։ Պատասխան տուաւ
Յիսուս ու ըսաւ անոնց, Ես ալ ձեզի բան մը
հարցընեմ, որ եթէ անիկա ինծի ըսէք, ես ալ
ձեզի պիտի ըսեմ թէ ինչ իշխանութիւնով կ՚ը-
25 նեմ աս բաները։ Յովհաննէսին մկրտութիւնը
ուսկի՞ց էր, երկինքէ՞ն թէ մարդոցմէ. և անոնք
26 մէջերնին կը խորհէին ու կ՚ըսէին, Թէ որ ըսենք՝
Երկինքէն, մեզի պիտի ըսէ թէ Հապա ինչո՞ւ չհա-
ւատացիք անոր. իսկ թէ որ ըսենք՝ Մարդոցմէ,
ժողովուրդէն կը վախնանք, ինչու որ բոլորն ալ
27 Յովհաննէսը իբրև մարգարէ կ՚ընդունէին։ Եւ պա-
տասխան տալով Յիսուսին՝ ըսին, Չենք գիտեր.
և ինքը ըսաւ անոնց, Ես ալ ձեզի չեմ ըսեր

թէ ինչ իշխանութիւնով կ՚ընեմ աս բաները։
28 Բայց ի՞նչպէս կ՚երևնայ ձեզի. մէկ մարդ մը
երկու որդի ունէր, ու գնաց առջինին ըսաւ,
29 Որդեակ, գնա այսօր այգիիս մէջ գործէ։ Անիկա
պատասխան տուաւ ու ըսաւ, Չեմ ուզեր [illegible]
30 բայց ետքը զղջացաւ ու գնաց։ Միւսին ալ գնաց
և անանկ ըսաւ. անիկա պատասխան տուաւ ու
31 ըսաւ, Կ՚երթամ, տէր. և չգնաց։ Հիմա աս եր-
կուքէն ո՞ր էր հօրը կամքը կատարեց. ըսին ա-
նոր, Առջինը. Յիսուս ըսաւ անոնց, Ճշմարիտ կ՚ը-
սեմ ձեզի որ մաքսաւորները ու պոռնիկները
ձեզմէ առաջ կը մտնեն Աստուծոյ թագաւորու-
32 թիւնը։ Ինչու որ Յովհաննէս արդարութեան ճամ-
բայով եկաւ ձեզի, և դուք անոր չհաւատացիք.
բայց մաքսաւորները ու պոռնիկները անոր հա-
ւատացին. և դուք տեսաք ու ետքը չզղջացիք
անոր հաւատալու։
33 Ուրիշ առակ մըն ալ լսեցէք. Մէկ տանուտէր
մարդ մը կար՝ որ այգի մը տնկեց ու ցանգով
պատեց զանիկա, և անոր մէջը հնձան փորեց ու
աշտարակ շինեց, և զանիկա մշակներու յանձնեց,
34 ու ինքը օտար երկիր մը գնաց։ Երբոր պտուղի
ժամանակը մօտեցաւ, իր ծառաները մշակներուն
35 ղրկեց, որ անոր պտուղները առնեն։ Եւ մշակ-
ները անոր ծառաները բռնեցին, մէկը ծեծեցին,
36 միւսը սպաննեցին, մէկ ուրիշը քարկոծեցին։ Նո-
րէն ուրիշ ծառաներ ղրկեց առջիններէն շատ,
37 և անոնց ալ անանկ ըրին։ Վերջը իր որդին ղըր-
կեց անոնց՝ ըսելով, Գուցէ ամչնան իմ որդիէս։
38 Բայց մշակները երբոր տեսան որդին՝ իրարու ը-
սին, Ասիկա է ժառանգը. եկէք զանիկա սպան-
39 նենք ու անոր ժառանգութեանը տիրենք։ Եւ
առին զանիկա՝ այգիէն դուրս հանեցին ու սպան-
40 նեցին։ Ուստի երբոր այգիին տէրը գայ, ի՞նչ
41 պիտի ընէ աս մշակներուն։ Ըսին իրեն, Ան չա-

րերը չարաչար պիտի կորսնցընէ, և այգին պիտի
յանձնէ ուրիշ մշակներու, որոնք պտուղները
42 իրենց ժամանակին պիտի տան իրեն։ Ըսաւ անոնց
Յիսուս, Բնաւ չէ՞ք կարդացեր գրքին մէջ, Այն
քարը որ շինողները անարգեցին, անիկա անկիւ-
նին գլուխը եղաւ․ ասիկա Տէրոջմէ եղաւ և զար-
43 մանալի է մեր աչքերուն։ Ասոր համար կ՚ըսեմ
ձեզի, որ Աստուծոյ թագաւորութիւնը ձեզմէ
պիտի առնուի, ու անանկ ազգի մը պիտի տըր-
44 ուի՝ որ անոր պտուղները բերէ։ Եւ ով որ աս
քարիս վրայ իյնայ՝ պիտի կոտրուի, և որուն վրայ
որ իյնայ՝ պիտի փշրէ զանիկա։
45 Ու երբոր քահանայապետները և փարիսեցի-
ները անոր առակները լսեցին, իմացան որ իրենց
46 համար կ՚ըսէր։ Եւ կը փնտռէին թէ ինչպէս բռնեն
զանիկա, բայց ժողովուրդէն վախցան, ինչու որ
մարգարէի պէս կ՚ընդունէին զանիկա։

ԳԼ. ԻԲ

1 Դարձեալ պատասխան տուաւ Յիսուս և առակ-
2 ներով ըսաւ անոնց, Երկնից թագաւորութիւնը
թագաւոր մարդու մը կը նմանի, որ իր որդւոյն
3 համար հարսնիք ըրաւ։ Եւ իր ծառաները խըր-
կեց՝ որ կանչեն հարսնիքի հրաւիրուածները, և
4 անոնք չուզեցին գալ։ Նորէն ուրիշ ծառաներ
խրկեց ու ըսաւ, Ըսէք հրաւիրուածներուն, Ահա
իմ ճաշս պատրաստեցի, զուարակներս ու գէր
կենդանիներս մորթուած են, և ամէն բան պատ-
5 րաստ է․ հարսնիք եկէք։ Բայց անոնք անհո-
գութիւն ընելով գացին՝ մէկը իր արտը ու միւսը
6 իր առուտուրին։ Եւ ուրիշները անոր ծառաները
7 բռնեցին, նախատեցին ու սպաննեցին։ Թագա-
ւորն ալ երբոր լսեց՝ բարկացաւ, և իր զօրքերը
խրկեց ու այն սպաննողները սատկեցուց, ու ա-

8 նոնց քաղաքը այրեց։ Անատենը իր ծառանե-
րուն ըսաւ, Հարսնիքը պատրաստ է, բայց հրա-
9 ւիրուածները արժանի չէին։ Ուստի գացէք ճամ-
բու գլուխները, և ով որ գտնելու ըլլաք՝ հարս-
10 նիքի հրաւիրեցէք։ Եւ այն ծառաները ելան ճամ-
բաներուն վրայ, ու ով որ գտան թէ չար և թէ
բարի՝ ամէնն ալ ժողվեցին, ու հարսնիքը հարս-
11 նեւորներով լեցուեցաւ։ Եւ թագաւորը երբոր
մտաւ հարսնեւորները տեսնելու, հոն մէկ մարդ
12 մը տեսաւ որ հարսնիքի հանդերձ հագած չէր․ Եւ
ըսաւ անոր, Ընկեր, ինչո՞ւ համար հոս մտար՝
առանց հարսնիքի հանդերձ ունենալու․ և անի-
13 կա պապանձեցաւ։ Անատենը թագաւորը սպա-
սաւորներուն ըսաւ, Կապեցէք ասոր ոտքերը ու
ձեռքերը, և առէք ու հանեցէք զանիկա դուրսի
խաւարը․ հոն պիտի ըլլայ լալ ու ակռաներ կըր-
14 ճտել․ Ինչու որ կանչուածները շատ են ու ըն-
տրուածները քիչ։
15 Անատենը փարիսեցիները գացին խորհուրդ ը-
րին, թէ ինչպէս անոր որոգայթ մը դնեն խօս-
16 քով։ Եւ իրենց աշակերտները Հերովդէսեաննե-
րուն հետ մէկտեղ խրկեցին անոր ու ըսին, Վար-
դապետ, գիտենք որ ճշմարիտ ես, և ճշմարտու-
թեամբ Աստուծոյ ճամբան կը սորվեցընես, ու
մէկու մը համար հոգ չէ, քանզի մարդոց երես-
17 պաշտութիւն չես ըներ․ Ուստի մեզի ըսէ, քեզի
ի՞նչպէս կ՚երեւնայ, Կայսրին տուրք տալ ար-
18 ժա՞ն է՝ թէ չէ։ Յիսուս գիտնալով անոնց խո-
րամանկութիւնը՝ ըսաւ, Ինչո՞ւ զիս կը փորձէք,
19 կեղծաւորներ․ Ցուցուցէք ինծի տուրքին դրամը․
20 և անոնք դահեկան մը բերին իրեն։ Ու ըսաւ ա-
21 նոնց, Որո՞ւնն է աս պատկերը ու գիրը։ Ըսին ա-
նոր, Կայսրին․ անատենը ըսաւ անոնց․ Ուրեմն
ան որ Կայսրինն է՝ Կայսրին տուէք, և ան որ
22 Աստուծոյն է՝ Աստուծոյ տուէք։ Երբոր լսեցին՝

զարմացան, և թողուցին զանիկա ու գացին։
23 Նոյն օրը անոր քովը եկան սադուկեցիները, ո-
րոնք կ'ըսեն թէ յարութիւն չկայ, և անոր հար-
24 ցուցին՝ ըսելով, Վարդապետ, Մովսէս ըսաւ,
Թէ որ մէկը առանց զաւակի մեռնելու ըլլայ, ա-
նոր եղբայրը առնէ անոր կնիկը, և իր եղբօրը
25 զաւակ հանէ։ Արդ եօթը եղբայրներ կային մեր
մէջը, և առջինը կնիկ առաւ՝ ու մեռաւ, և զա-
ւակ չունենալուն համար իր կնիկը ձգեց իր եղ-
26 բօրը· Նոյնպէս ալ երկրորդը՝ ու երրորդը՝ մին-
27 չև եօթներորդը· Ամենէն ետքը կնիկն ալ մե-
28 ռաւ։ Ուրեմն յարութեան ատենը ան եօթնէն
որո՞ւն կնիկը պիտի ըլլայ, ինչու որ ամէնքն ալ
29 զանիկա կին ունեցան։ Եւ Յիսուս պատասխան
տալով՝ անոնց ըսաւ, Դուք մոլորած էք, որ ոչ
գիրքերը գիտէք՝ և ոչ Աստուծոյ զօրութիւնը·
30 Քանզի յարութեան ատենը ոչ կնիկ կ'առնեն՝ և
ոչ էրկան կը տրուին, հապա երկնից մէջ Աստու-
31 ծոյ հրեշտակներուն պէս են· Բայց մեռելներուն
յարութիւն առնելուն համար՝ չէ՞ք կարդացեր
32 Աստուծմէ ձեզի ըսուած խօսքը· Ես եմ Աբրա-
համին Աստուածը, և Իսահակին Աստուածը, ու
Յակոբին Աստուածը· Աստուած մեռելներուն
33 Աստուածը չէ՝ հապա կենդանիներուն· Ու ժո-
ղովուրդները լսելով՝ կը զարմանային անոր վար-
դապետութեանը վրայ·
34 Բայց փարիսեցիները երբոր լսեցին թէ անիկա
պապանձեցուց սադուկեցիները, մէկտեղ ժող-
35 վուեցան· Եւ անոնցմէ մէկը՝ օրինական մը հար-
36 ցուց, զանիկա փորձելով, ու ըսաւ, Վարդա-
37 պետ, ո՞ր պատուիրանքը մեծ է օրէնքին մէջ· Եւ
Յիսուս ըսաւ անոր, Քու Տէր Աստուածդ սիրես
քու բոլոր սրտովդ և քու բոլոր անձովդ ու քու
38 բոլոր մտքովդ· Աս է առջին ու մեծ պատուի-
39 րանքը· Ու երկրորդը ասոր նման՝ Քու ըն-

40 կերդ սիրես քու անձիդ պէս· Աս երկու պատ-
ուիրանքէս կախուած են բոլոր օրէնքը և մար-
գարէները։
41 Ու երբոր փարիսեցիները ժողվուեցան, Յիսուս
42 հարցուց անոնց ու ըսաւ, Քրիստոսի վրայով ի՞նչ
43 կարծիք ունիք· անիկա որո՞ւ որդին է· Ըսին ի-
րեն, Դաւիթին· Ըսաւ անոնց Յիսուս, Հապա ի՞նչ-
պէս Դաւիթ Հոգիով զանիկա Տէր կը կոչէ ու կ'ը-
44 սէ, Տէրը իմ Տէրոջս ըսաւ, Նստէ իմ աջ կողմս,
մինչև որ քու թշնամիներդ ոտքերուդ պատ-
45 ուանդան ընեմ· Ուրեմն թէ որ Դաւիթ զանիկա
Տէր կը կոչէ, ի՞նչպէս անիկա անոր որդին կ'ըլ-
46 լայ· Եւ մէկը չէր կրնար անոր խօսք մը պատաս-
խանել· ու ան օրէն ետև մէկը չէր համարձակեր
անոր բան մը հարցընելու·

ԳԼ. ԻԳ

1 Անատենը Յիսուս խօսեցաւ ժողովուրդներուն և
2 իր աշակերտներուն ու ըսաւ, Մովսէսին աթոռը
3 դպիրները և փարիսեցիները նստած են· Ուրեմն
ինչ որ ձեզի կ'ըսեն որ պահէք, պահեցէք ու ը-
րէք, բայց անոնց գործքերուն պէս մի ընէք,
4 ինչու որ կ'ըսեն ու չեն ըներ· Քանզի ծանր և
տանելու դժուար բեռներ կը կապեն ու կը դնեն
մարդոց ուսերուն վրայ, և իրենց մատովը չեն
5 ուզեր զանոնք շարժել· Եւ իրենց ամէն գործ-
քերը մարդոց երևնալու համար կ'ընեն· կը լայն-
ցնեն իրենց գրապանակները ու կ'երկընցընեն
6 իրենց հանդերձներուն քղանցքները· Ընթրիքնե-
րու մէջ առջին բազմոցները կը սիրեն, և ժո-
ղովարաններուն մէջ՝ առջին աթոռները· ու
7 շուկաներուն մէջ՝ բարևները։ Եւ մարդոցմէ
8 Ռաբբի Ռաբբի կոչուիլ· Բայց դուք Ռաբբի
մի կոչուիք, ինչու որ ձեր Ուսուցիչը մէկ մըն է՝

այսինքն Քրիստոս, և դուք ամէնքդ եղբայր էք։
9 Ու երկրի վրայ ձեզի Հայր մի կոչէք, ինչու
10 որ ձեր Հայրը մէկ մըն է՝ որ երկինքն է։ Ու դուք
ուսուցիչներ մի կոչուիք, ինչու որ ձեր Ուսուցիչը
11 մէկ մըն է՝ այսինքն Քրիստոս։ Ու ձեր մէջէն
12 մեծը ձեր սպասաւորը պիտի ըլլայ։ Ով որ իր
անձը կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի, և ով որ
իր անձը կը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ։
13 Բայց վա՜յ ձեզի, կեղծաւոր դպիրներ ու փարի-
սեցիներ, որ երկնից թագաւորութիւնը մարդոց
առջևը կը գոցէք. քանզի դուք չէք մտներ, և
14 մտնողներն ալ չէք թողուր որ մտնեն։ Վա՜յ ձեզի,
կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ, որ որբ-
ևայրիներուն տուները կ'ուտէք, ու մարդոց երև-
նալու համար աղօթքը կ'երկընցնէք. անոր հա-
մար աւելի դատապարտութիւն պիտի ընդունիք։
15 Վա՜յ ձեզի, կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ,
որ ծով ու ցամաք կը պտըտիք մէկը նորահա-
ւատ ընելու, ու երբոր ըլլայ, զանիկա ձեզմէ եր-
16 կու անգամ աւելի գեհենի որդի կ'ընէք։ Վա՜յ
ձեզի, կոյր առաջնորդներ, որ կ'ըսէք թէ Ով որ
տաճարին վրայ երդում ընէ՝ բան մը չէ, բայց ով որ
տաճարին մէջի ոսկիին վրայ երդում ընէ՝ պար-
17 տաւոր կ'ըլլայ։ Ով յիմարներ ու կոյրեր, ո՞րը
մեծ է՝ ոսկի՞ն եթէ տաճարը որ կը սրբացնէ
18 ոսկին։ Ու թէ՝ Ով որ սեղանին վրայ երդում ը-
նէ՝ բան մը չէ, բայց ով որ սեղանին վրայի պա-
տարագին վրայ երդում ընէ՝ պարտաւոր կ'ըլ-
19 լայ։ Յիմարներ ու կոյրեր, ո՞րը մեծ է՝ պատա-
րա՞գը եթէ սեղանը որ կը սրբացնէ պատարագը։
20 Ուստի ով որ սեղանին վրայ երդում ընէ, եր-
դում կ'ընէ անոր վրայ՝ և անոր վրայի ամէն բա-
21 ներուն վրայ։ Ու ով որ տաճարին վրայ երդում
ընէ, երդում կ'ընէ անոր վրայ՝ և անոր մէջ բը-
22 նակողին վրայ. Ու ով որ երկնից վրայ երդում
ընէ, երդում կ'ընէ Աստուծոյ աթոռին վրայ՝ և

23 անոր վրան նստողին վրայ։ Վա՜յ ձեզի, կեղծա-
ւոր դպիրներ ու փարիսեցիներ, որ անանուխին
ու սամիթին և չամանին տասանորդը կը վճա-
րէք, ու կը ձգէք օրէնքին ծանր ծանր բաները՝
դատաստանը և ողորմութիւնը ու հաւատքը. ա-
24 սոնք պէտք էր ընել, և անոնք չձգել։ Կոյր ա-
ռաջնորդներ, որ մժղուկը կը քամէք և ուղտը
25 կը կլլէք։ Վա՜յ ձեզի, կեղծաւոր դպիրներ ու փա-
րիսեցիներ, որ գաւաթին ու պնակին դուրսի
կողմը կը մաքրէք, ու ներսէն յափշտակութեամբ
26 և *անիրաւութեամբ լեցուն են։ Կոյր փարիսեցի,
առաջ գաւաթին ու պնակին ներսի կողմը մաք-
րէ, որ անոնց դուրսի կողմն ալ մաքուր ըլլայ։
27 Վա՜յ ձեզի, կեղծաւոր դպիրներ ու փարիսեցի-
ներ, որ կը նմանիք ծեփած գերեզմաններու, ո-
րոնք դուրսէն գեղեցիկ կ'երևնան, և ներսէն
մեռելներու ոսկորներով և ամէն կերպ պղծու-
28 թիւնով լեցուն են։ Նոյնպէս ալ դուք դուրսէն
մարդոց արդար կ'երևնաք, ու ներսէն կեղծա-
29 ւորութեամբ և անօրէնութեամբ լեցուն էք։ Վա՜յ
ձեզի, կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ, որ
մարգարէներուն տապանները կը շինէք, և ար-
30 դարներուն գերեզմանները կը զարդարէք, Ու
կ'ըսէք, Թէ որ մեր հայրերուն օրերը ըլլայինք,
անոնց հետ մարգարէներուն արեանը մասնակից
31 չէինք ըլլար։ Ուրեմն դուք ձեր վրայ կը վկայէք
թէ անոնց զաւակներն էք՝ որ մարգարէները
32 կը սպաննէին։ Ուստի դուք ալ ձեր հայրերուն
33 չափը լեցուցէք։ Օձեր՝ իժերու ծնունդներ, ի՞նչ-
պէս պիտի փախչիք գեհենին դատապարտութե-
34 նէն։ Ատոր համար ահա ես կը խրկեմ ձեզի մար-
գարէներ և իմաստուններ ու դպիրներ, և ա-
նոնցմէ մէկ քանիները պիտի սպաննէք ու խաչը

*Ոմանք անբարեխառնութեամբ

հանէք, և մէկ քանիները ձեր ժողովարաններուն
մէջը պիտի ծեծէք, ու քաղաքէ քաղաք հալածէք·
35 Որպէս զի երկրի վրայ թափուած բոլոր արդար
արիւնը ձեր վրայ գայ՝ արդար Աբելին արիւնէն
մինչև Բարաքիայի որդւոյն Զաքարիային արիւնը,
որ տաճարին ու սեղանին մէջտեղը սպաննեցիք·
36 Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Աս ամէն բաները պիտի
գան աս ազգիս վրայ·
37 Ով Երուսաղէմ՝ Երուսաղէմ, որ մարգարէները
կը սպաննէիր, ու քեզի խրկուածները կը քարկո-
ծէիր, քանի՜ անգամ քու տղաքներդ ժողվել ու-
զեցի՝ ինչպէս որ հաւը իր ձագերը թևերուն
38 տակը կը ժողվէ, և դուք չուզեցիք· Ահա ձեր
39 տունը ձեզի աւերակ պիտի մնայ· Ինչու որ ձեզի
կ'ըսեմ որ ալ ասկէ ետև պիտի չտեսնէք զիս,
մինչև որ ըսէք, Օրհնեալ է ան որ Տէրոջը անու-
նովը կու գայ·

ԳԼ. ԻԴ

1 Եւ Յիսուս տաճարէն դուրս ելլելով՝ կ'երթար,
ու աշակերտները անոր քովը գացին՝ տաճարին
2 շէնքերը իրեն ցուցընելու· Եւ Յիսուս անոնց ը-
սաւ, Չէ՞ք տեսներ աս ամէն բաները· Ճշմարիտ
կ'ըսեմ ձեզի, պիտի չմնայ հոս քար քարի վրայ՝
որ չքակուի·
3 Ու երբոր անիկա Ձիթենեաց լեռը նստեր էր, ա-
շակերտները իրեն եկան առանձին ու ըսին, Ըսէ
մեզի՝ ե՞րբ պիտի ըլլան աս բաները· և քու գա-
լստեանդ ու աշխարհիս վերջին նշանը ի՞նչ պիտի
4 ըլլայ· Եւ Յիսուս պատասխան տուաւ ու ըսաւ ա-
նոնց, Զգոյշ կեցէք՝ չըլլայ որ մէկը ձեզ խաբէ·
5 Ինչու որ շատերը պիտի գան իմ անունովս ու ը-
սեն թէ Ես եմ Քրիստոսը, ու շատերը պիտի մոլոր-
6 ցընեն· Եւ պիտի լսէք պատերազմներ ու պա-

տերազմներու լուրեր· զգոյշ կեցէք որ չխը-
ռովիք· ինչու որ ան ամէն բաները պէտք է որ
7 ըլլան, բայց դեռ վերջը չէ։ Վասն զի ազգ ազգի
վրայ պիտի ելլէ, ու թագաւորութիւն՝ թագա-
ւորութեան վրայ, և տեղ տեղ սովեր ու մահ-
տարաժամներ և երկրաշարժութիւններ պիտի ըլ-
8 լան· Բայց ասոնք ամէնը ցաւերուն սկիզբն են։
9 Անատենը ձեզ նեղութեան պիտի մատնեն և ձեզ
պիտի սպաննեն, ու իմ անունս համար ամէն
10 ազգերուն ատելի պիտի ըլլաք· Եւ անատենը շա-
տերը պիտի գայթակղին, ու մէկզմէկ պիտի մատ-
11 նեն և մէկզմէկ պիտի ատեն· Եւ շատ սուտ մար-
գարէներ պիտի ելլեն ու շատերը պիտի մոլորցը-
12 նեն· Եւ անօրէնութիւնը շատնալուն համար շա-
13 տերուն սէրը պիտի պաղի· Բայց ով որ մինչև
14 վերջը համբերէ, անիկա պիտի ապրի։ Եւ արքա-
յութեան աս աւետարանը բովանդակ աշխարհի
մէջ պիտի քարոզուի՝ բոլոր ազգերուն վկայու-
թիւն ըլլալու, և անկէ ետև վերջը պիտի գայ·
15 Ուստի երբոր տեսնէք աւերմունքին պղծու-
թիւնը՝ որ Դանիէլ մարգարէին ձեռքովը ըսուած
է, թէ սուրբ տեղը կը կենայ· (ով որ կարդայ՝ թող
16 հասկընայ·) Անատենը Հրէաստանի մէջ եղողները
17 լեռները թող փախչին· Եւ ան որ տանիքին վը-
րայ է՝ թող չիջնէ իր տունէն բան մը առնելու·
18 Եւ ան որ արտին մէջն է՝ թող ետ չդառնայ իր
19 հանդերձները առնելու· Բայց վա՜յ ան օրերը յղի
20 եղողներուն ու ծիծ տուողներուն։ Եւ աղօթք
ըրէք որ ձեր փախչիլը ձմեռը չըլլայ, ոչ ալ շա-
21 բաթ օրը· Քանզի անատենը անանկ մեծ նեղու-
թիւն պիտի ըլլայ, որուն նմանը աշխարհի սկիզ-
բէն մինչև հիմա եղած չէ, ոչ ալ պիտի ըլլայ։
22 Եւ թէ որ ան օրերը չքիչնային, բնաւ մէկ մար-
մին մը պիտի չապրէր· բայց ընտրեալներուն հա-
23 մար ան օրերը պիտի քիչնան· Անատենը թէ որ

մէկը ձեզի ըսէ թէ Ահա հոս է Քրիստոսը կամ
24 հոն, մի հաւատաք։ Ինչու որ սուտ քրիստոսներ
և սուտ մարգարէներ պիտի ելլեն, ու մեծ նշան-
ներ և հրաշքներ պիտի ցուցընեն, որ եթէ կա-
25 րելի էր՝ ընտրեալներն ալ մոլորցընեն։ Ահա ձեզի
26 առաջուց ըսի։ Ուստի թէ որ ձեզի ըսեն թէ Ահա
անապատին մէջն է, մի ելլէք. և Թէ՝ Ահա ներ-
27 քին սենեակներուն մէջն է, մի հաւատաք։ Վասն
զի ինչպէս որ փայլակը արևելքէն կ'ելլէ ու մին-
չև արևմուտք կ'երևնայ, անանկ պիտի ըլլայ
28 Որդւոյ մարդոյ գալուստը։ Քանզի ուր որ մեռած
մարմին կայ, հոն պիտի ժողվուին արծիւները։
29 Եւ շուտ մը ան նեղութեան օրերէն ետև արե-
գակը պիտի խաւարի, ու լուսինը իր լոյսը պիտի
չտայ, և աստղերը երկինքէն պիտի իյնան, ու
30 երկնից զօրութիւնները պիտի շարժին։ Եւ ան ա-
տենը Որդւոյ մարդոյ նշանը պիտի երևնայ երկ-
նից մէջ, ու ան ատենը երկրիս բոլոր ազգերը կոծ
պիտի ընեն, ու պիտի տեսնեն Որդին մարդոյ
երկնից ամպերուն վրայ եկած զօրութիւնով ու
31 մեծ փառքով։ Եւ անիկա իր հրեշտակները պիտի
ղրկէ մեծաձայն փողով, ու պիտի ժողվեն իր
ընտրեալները չորս հովերէն՝ երկնից մէկ ծայրէն
մինչև միւս ծայրը։
32 Թզենիէն առակ մը սորվեցէք. որ երբ անոր
ոստերը կը կակուղնան ու տերևները կը ցցուին,
33 գիտէք թէ ամառը մօտ է։ Նոյնպէս ալ դուք
երբոր ասս ամէն բաները տեսնէք, գիտցէք որ
34 մօտ է դռներուն քովը։ Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի
որ աս ազգը պիտի չանցնի մինչև որ աս ամէն
35 բաները ըլլան։ Երկինք ու երկիր պիտի անցնին,
բայց իմ խօսքերս բնաւ պիտի չանցնին։
36 Իսկ ան օրուան և ան ժամուն համար մէկը
չգիտեր, ոչ ալ երկնից *հրեշտակները, հապա

*Ոմանք հրեշտակները, և ոչ Որդին

37 միայն իմ Հայրս։ Բայց ինչպէս որ Նոյի օրերը ե-
ղաւ, Որդւոյ մարդոյ գալուստն ալ այնպէս պիտի
38 ըլլայ։ Քանզի ինչպէս էին ան օրերը ջրհեղեղէն
առաջ, կ'ուտէին, կը խմէին, կնիկ կ'առնէին ու
էրկան կու տային, մինչև ան օրը որ Նոյ տա-
39 պանը մտաւ, Եւ չգիտցան՝ մինչև որ ջրհեղեղը
եկաւ ու ամէնը վերցուց. Որդւոյ մարդոյ գա-
40 լուստն ալ այնպէս պիտի ըլլայ։ Անատենը թէ որ
երկու հոգի արտի մը մէջ ըլլան, մէկը պիտի առ-
41 նուի ու միւսը ձգուի. Եւ թէ որ երկու կնիկ մէկ
աղօրիքի մէջ աղալու վրայ գտնուին, մէկը պիտի
առնուի ու միւսը ձգուի։
42 Ուրեմն արթուն կեցէք, ինչու որ չէք գիտեր
43 թէ ո՛ր ժամուն ձեր Տէրը կու գայ։ Բայց աս
գիտցէք, որ եթէ տանուտէրը գիտնար թէ գի-
շերուան ո՛ր պահուն գողը կու գայ, արթուն կը
կենար և թող չէր տար որ իր տունը ծակեն։
44 Անոր համար դուք ալ պատրաստ կեցէք, քան-
զի Որդին մարդոյ կու գայ անանկ ժամու մէջ՝
45 որ դուք չէք կարծեր։ Ուստի ո՞վ է ան հաւա-
տարիմ ու իմաստուն ծառան՝ որն որ իր տէրը
իր ծառաներուն վրայ դրաւ, որ ատենին անոնց
46 կերակուր տայ։ Երանի է ան ծառային, որն որ իր
տէրը եկած ատենը անանկ ըրած պիտի գտնէ։
47 Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի որ իր բոլոր ունեցածին
48 վրայ պիտի կեցընէ զանիկա։ Հապա թէ որ ան
չար ծառան իր սրտին մէջ ըսէ, Իմ տէրս իր
49 գալը կ'ուշացընէ. Եւ սկսի իր ծառայակիցները
ծեծել, ու գինովներուն հետ ուտել ու խմել,
50 Ան ծառային տէրը պիտի գայ անանկ մէկ օր մը՝
որ չսպասեր, և անանկ մէկ ժամ մը՝ որ չգիտեր,
51 Եւ զանիկա մէջտեղէն պիտի կտրէ, ու անոր բա-
ժինը կեղծաւորներուն հետ պիտի դնէ։ Հոն պի-
տի ըլլայ լալ ու ակռաներ կրճտել։

ԳԼ. ԻԵ

1 Այն ատենը երկնից թագաւորութիւնը պիտի նը-
մանի տասը կոյսերու, որոնք իրենց լապտերները
2 առնելով՝ փեսան դիմաւորելու ելան։ Անոնցմէ
3 հինգը իմաստուն էին, և հինգը յիմար, Որ յի-
մարները առին իրենց լապտերները, ու հետեր-
4 նին եղ չառին։ Բայց իմաստունները իրենց լապ-
5 տերներուն հետ ամաններով եղ ալ առին։ Եւ
փեսան որ ուշացաւ, ամէնն ալ թմրեցան ու քը-
6 նացան։ Եւ կէս գիշերին ձայն մը եղաւ, Ահա
փեսան կու գայ. զանիկա դիմաւորելու ելէք։
7 Այն ատենը բոլոր կոյսերը ելան ու իրենց լապ-
8 տերները շինեցին։ Եւ յիմարները ըսին իմաս-
տուններուն, Տուէք մեզի ձեր եղէն, ինչու որ
9 մեր լապտերները մարելու վրայ են։ Պատասխան
տուին իմաստունները ու ըսին, Չըլլայ որ մեզի
ու ձեզի չբաւականանայ. այլ յաւէտ ծախողնե-
10 րուն գացէք և գնեցէք ձեզի համար։ Երբոր ա-
նոնք գացին գնելու՝ փեսան եկաւ, ու պատ-
րաստ եղողները անոր հետ հարսնիքը մտան, և
11 դուռը գոցուեցաւ։ Ետքը միւս կոյսերը եկան ու
12 ըսին, Տէր, Տէր, բաց մեզի։ Բայց անիկա պա-
տասխան տուաւ ու ըսաւ, Ճշմարիտ կ'ըսեմ ձե-
13 զի թէ Ես ձեզ չեմ ճանչնար։ Ուրեմն արթուն
կեցէք, ինչու որ ոչ օրը գիտէք և ոչ *ժամը։
14 Քանզի ինչպէս օտար երկիր գացող մարդ մը
կանչեց իր ծառաները, և իր ունեցածը անոնց
15 յանձնեց։ Մէկուն տուաւ հինգ տաղանդ, ու մէ-
կուն՝ երկուք, և մէկուն՝ մէկ, ամէն մէկուն իր
կարողութեանը չափ, ու անմիջապէս ճամբայ ե-
16 լաւ։ Եւ ան որ հինգ տաղանդը առած էր, գնաց
անոնցմով գործ տեսաւ, և ուրիշ հինգ տաղանդ

*Որուն ժամը, որուն մէջ Որդին մարդոյ կու գայ

17 շահեցաւ։ Նմանապէս ան որ երկուքը առած էր,
18 ուրիշ երկուք ալ շահեցաւ։ Իսկ ան որ մէկը ա-
ռած էր, գնաց գետինը փորեց, ու իր տիրոջը
19 ստակը պահեց։ Շատ ժամանակէ ետև ան ծա-
ռաներուն տէրը եկաւ, և անոնցմէ հաշիւ ու-
20 զեց։ Եւ հինգ տաղանդը առնողը եկաւ՝ ուրիշ
հինգ տաղանդ ալ բերաւ ու ըսաւ, Տէր, հինգ
տաղանդ յանձնեցիր ինծի, ահա ուրիշ հինգ տա-
21 ղանդ ալ անոնց վրայ շահեցայ։ Ըսաւ անոր իր
տէրը, Ապրիս, բարի ու հաւատարիմ ծառայ.
դուն որ քիչ բանին մէջ հաւատարիմ եղար, քեզ
շատ բաներու վրայ պիտի կեցընեմ. մտիր քու
22 տիրոջդ ուրախութեանը մէջ։ Երկու տաղանդը
առնողն ալ եկաւ ու ըսաւ, Տէր, երկու տա-
ղանդ յանձնեցիր ինծի, ահա ուրիշ երկու տա-
23 ղանդ ալ անոնց վրայ շահեցայ։ Ըսաւ անոր իր
տէրը, Ապրիս, բարի ու հաւատարիմ ծառայ.
դուն որ քիչ բանին մէջ հաւատարիմ եղար,
քեզ շատ բաներու վրայ պիտի կեցընեմ. մտիր
24 քու տիրոջդ ուրախութեանը մէջ։ Մէկ տա-
ղանդը առնողն ալ եկաւ ու ըսաւ, Տէր, գիտէի
որ դուն խիստ մարդ մըն ես, չսերմանած տե-
ղէդ կը հնձես ու չցանած տեղէդ կը ժողվես.
25 Ուստի վախնալով՝ գացի քու տաղանդդ գետնին
26 տակը պահեցի. —— ահա քուկդ քեզի։ Պա-
տասխան տուաւ անոր տէրը ու ըսաւ անոր,
Չար և ծոյլ ծառայ, գիտէիր որ չսերմանած տե-
ղէս կը հնձեմ ու չցանած տեղէս կը ժողվեմ.
27 Ուրեմն պէտք էր քեզի որ իմ ստակս սեղանա-
ւորներուն տայիր, որ ես եկած ատենս շահովը
28 առնէի իմս։ Արդ առէք ատկէ տաղանդը, ու
29 տասը տաղանդ ունեցողին տուէք։ Ինչու որ ա-
մէն ունեցողին պիտի տրուի, ու պիտի աւելնայ,
և չունեցողին ունեցածն ալ անկէ պիտի առնը-
30 ւի։ Եւ այս անպիտան ծառան դուրսի խաւարը

հանեցէք. հոն պիտի ըլլայ լաց ու ակռաները
կրճտել։
31 Ու երբոր Որդին մարդոյ իր փառքովը գայ,
և բոլոր *սուրբ հրեշտակները իր հետը, ան-
32 տենը իր փառաց աթոռը պիտի նստի։ Եւ անոր
առջևը պիտի ժողվուին բոլոր ազգերը, ու զա-
նոնք իրարմէ պիտի զատէ, ինչպէս որ հովիւ մը
33 ոչխարները այծերէն կը զատէ։ Եւ ոչխարները
իր աջ կողմը պիտի կայնեցընէ, ու այծերը՝ ձախ
կողմը։
34 Անտենը Թագաւորը իր աջ կողմը եղողներուն
պիտի ըսէ, Եկէք, իմ Հօրս օրհնածները, աշ-
խարհի սկիզբէն ձեզի համար պատրաստուած
35 թագաւորութիւնը ժառանգեցէք։ Ինչու որ ա-
նօթեցայ, և ինծի ուտելիք տուիք. ծարաւե-
ցայ, ու ինծի խմցուցիք. օտարական էի, և զիս
36 ներս առիք. Մերկ էի, և զիս հագուեցուցիք.
հիւանդ էի, ու ինծի տես եկաք. բանտի մէջ
37 էի, և ինծի եկաք։ Անտենը արդարները անոր
պատասխան պիտի տան ու ըսեն, Տէր, ե՞րբ քեզ
անօթեցած տեսանք՝ ու կերակրեցինք, կամ
38 ծարաւած՝ ու խմցուցինք. Ե՞րբ քեզ օտարական
տեսանք՝ և ներս առինք, կամ մերկ՝ ու հագ-
39 ուեցուցինք. Ե՞րբ քեզ հիւանդ կամ բանտի մէջ
40 տեսանք, ու քեզի եկանք։ Եւ Թագաւորը պա-
տասխան տալով պիտի ըսէ անոնց, Ճշմարիտ
կ'ըսեմ ձեզի, Որովհետև աս իմ եղբայրներուս
պզտիկներէն մէկուն ըրիք, ինծի ըրիք։
41 Անտենը ձախ կողմը եղողներուն ալ պիտի
ըսէ, Մէկդի գացէք ինծմէ, անիծեալներ, յա-
ւիտենական կրակին մէջը՝ որ պատրաստուած է
42 Սատանային ու իր հրեշտակներուն։ Ինչու որ ա-
նօթեցայ, և ինծի ուտելիք չտուիք. ծարաւե-

*Ոմանք չունին

43 ցայ, ու ինծի չխմցուցիք. Օտարական էի, և զիս
ներս չառիք. մերկ էի, և զիս չհագուեցուցիք.
հիւանդ ու բանտի մէջ էի, և ինծի տես չեկաք։
44 Անտենը անոնք ալ պատասխան պիտի *տան
ու ըսեն, Տէր, ե՞րբ տեսանք քեզ անօթեցած՝
կամ ծարաւած՝ կամ օտարական՝ կամ մերկ՝ կամ
հիւանդ՝ կամ բանտի մէջ, ու քեզի սպասաւո-
45 րութիւն չըրինք։ Անտենը պատասխան պիտի
տայ անոնց ու ըսէ, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Ո-
րովհետև ասոնց պզտիկներէն մէկուն չը-
րիք, ինծի ալ չըրիք։
46 Եւ ասոնք պիտի երթան յաւիտենական տան-
ջանքը, իսկ արդարները՝ յաւիտենական կեանքը։

ԳԼ. ԻԶ

1 Ու երբոր Յիսուս լմնցուց աս բոլոր խօսքերը,
2 ըսաւ իր աշակերտներուն, Գիտէք որ երկու օ-
րէն ետև զատիկ կ'ըլլայ, և Որդին մարդոյ կը
մատնուի խաչը ելլելու։
3 Անտենը քահանայապետները ու դպիրները
և ժողովուրդին ծերերը ժողվուեցան քահանա-
յապետին սրահը, որուն անունը Կայիափա էր.
4 Ու խորհուրդ ըրին որ նենգութեամբ բռնեն Յի-
5 սուսը ու մեռցընեն։ Բայց կ'ըսէին թէ Ոչ տօ-
նին ատենը, որ ժողովուրդին մէջ խռովութիւն
չըլլայ։
6 Ու երբոր Յիսուս Բեթանիա էր բորոտ Սիմոնին
7 տունը, կնիկ մը եկաւ անոր՝ որ ունէր ծանրա-
գին եղի շիշ մը, և թափեց անոր գլխուն վրայ՝
8 երբոր անիկա սեղան նստած էր։ Եւ անոր աշա-
կերտները տեսնելով դժուարեցան՝ ու ըսին, Ին-
9 չու՞ աս կորուստը ըլլայ. Քանզի աս եղը կրնար

*Ոմանք տան անոր

սուղ գնով ծախուիլ, ու աղքատներուն տըր-
10 ուիլ։ Եւ Յիսուս իմանալով ըսաւ անոնց, Ինչո՞ւ
անհանգիստ կ'ընէք կնիկը. քանզի ատիկա բարի
11 գործ մը գործեց ինծի։ Ինչու որ աղքատները
ամէն ատեն ձեր հետը ունիք, բայց զիս ամէն ա-
12 տեն չունիք։ Վասն զի ատիկա որ աս եղը իմ
մարմինիս վրայ թափեց, իմ թաղմանս համար
13 ըրաւ։ Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ բոլոր աշխար-
հի մէջ՝ ուր որ աս աւետարանս քարոզուի, ա-
տոր ըրածն ալ պիտի խօսուի՝ իրեն յիշատակ ըլ-
լալու համար։
14 Անատենը տասներկուքէն մէկը՝ որ Յուդա
Իսկարիովտացի կ'ըսուէր, գնաց քահանայա-
15 պետներուն ու ըսաւ, Ի՞նչ կ'ուզէք ինծի տալ,
ու ես ձեզի մատնեմ զանիկա. և անոնք երե-
16 սուն սիկղ արծաթ °խոստացան անոր։ Եւ անկէ
ետև պատեհութիւն մը կը փնտռէր, որ զանիկա
մատնէ անոնց։
17 Եւ բաղարջակերաց առջի օրը աշակերտները Յի-
սուսի եկան ու անոր ըսին, Ո՞ւր կ'ուզես որ քե-
18 զի պատրաստենք՝ զատիկը ուտելու համար։ Եւ
անիկա ըսաւ, Գացէք քաղաքը այս ինչ մարդուն
ու ըսէք անոր, Վարդապետը կ'ըսէ, Ժամանակս
մօտ է. աշակերտներուս հետ մէկտեղ քու քովդ
19 պիտի ընեմ զատիկը։ Աշակերտներն ալ ըրին
ինչպէս որ Յիսուս իրենց հրաման ըրաւ, ու
պատրաստեցին զատիկը։
20 Ու երբոր իրիկուն եղաւ՝ տասներկուքին հետ
21 սեղան նստաւ։ Եւ քանի որ կ'ուտէին՝ ըսաւ,
Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի որ ձեզմէ մէկը զիս պիտի
22 մատնէ։ Ու շատ տրտմեցան, և անոնցմէ ամէն
մէկը սկսաւ ըսել անոր, Տէր, միթէ ե՞ս եմ։
23 Անիկա պատասխան տուաւ ու ըսաւ, Ան որ իմ

*կամ կշռեցին

հետս իր ձեռքը պնակը խօթեց, նոյնը պիտի
24 մատնէ զիս։ Յիրաւի Որդին մարդոյ կ'երթայ՝
ինչպէս որ գրուած է իրեն համար, բայց վայ ան
մարդուն՝ որուն ձեռքովը Որդին մարդոյ կը
մատնուի. աղէկ էր ան մարդուն որ ծնած չըլ-
25 լար։ Պատասխան տուաւ Յուդա որ զանիկա պի-
տի մատնէր՝ ու ըսաւ, Վարդապետ, միթէ ե՞ս
եմ. ըսաւ անոր, Դուն ըսիր։
26 Եւ քանի որ անոնք կ'ուտէին, Յիսուս հաց ա-
ռաւ, օրհնեց ու կտրեց, և տուաւ աշակերտնե-
րուն ու ըսաւ, Առէք, կերէք. աս է իմ մար-
27 մինս։ Եւ գաւաթը առաւ, գոհացաւ, ու տուաւ
անոնց և ըսաւ, Ամէնքդ ալ խմեցէք ասկէ.
28 Ինչու որ ասիկա է իմ արիւնս նոր ուխտի, որ
շատերու համար կը թափուի մեղաց թողութեան
29 համար։ Բայց կ'ըսեմ ձեզի, Ասկէ ետև որթին
բերքէն բնաւ պիտի չխմեմ մինչև ան օրը՝ երբոր
ձեր հետը անիկա նոր խմեմ իմ Հօրս թագաւո-
րութեանը մէջ։
30 Եւ օրհնութիւն մը երգելէն ետև Ձիթենեաց
31 լեռը ելան։ Անատենը Յիսուս ըսաւ անոնց, Դուք
ամէնքդ աս գիշեր իմ վրայովս պիտի գայթակ-
ղիք. ինչու որ գրուած է թէ Հովիւը պիտի զար-
32 նեմ, ու հօտին ոչխարները պիտի ցրուին։ Բայց
յարութիւն առնելէս ետև ձեզմէ առաջ Գալի-
33 լեա պիտի երթամ։ Պատասխան տուաւ Պետրոս
ու ըսաւ անոր, Թէպէտ ամէնքն ալ քու վրա-
յովդ գայթակղին, բայց ես բնաւ պիտի չգայ-
34 թակղիմ։ Ըսաւ անոր Յիսուս, Ճշմարիտ կ'ըսեմ
քեզի, Աս գիշեր դեռ հաւը չխօսած՝ երեք ան-
35 գամ զիս պիտի ուրանաս։ Ըսաւ անոր Պետրոս,
Թէև քեզի հետ մեռնելու ալ ըլլամ՝ բնաւ քեզ
պիտի չուրանամ. ասանկ կ'ըսէին նաև ամէն ա-
շակերտները։
36 Անատենը Յիսուս անոնց հետ տեղ մը եկաւ

որուն անունը Գեթսեմանի էր, ու ըսաւ աշա-
կերտներուն, Հոս նստեցէք մինչև որ ես եր-
37 թամ հոն աղօթք ընեմ. Եւ իր հետը առնելով
Պետրոսը ու Զեբեդէոսին երկու որդիքը, սկսաւ
38 տրտմիլ և վշտանալ։ Անատենը ըսաւ անոնց, Իմ
անձս մեռնելու չափ տրտում է. հոս կեցէք և
39 ինծի հետ արթուն մնացէք. Ու քիչ մը առաջ
երթալով՝ իր երեսին վրայ ինկաւ և աղօթք ը-
րաւ՝ ըսելով, Ով Հայր իմ, թէ որ կարելի է,
թող աս գաւաթը ինծմէ անցնի. բայց չէ թէ
ինչպէս որ ես կ՚ուզեմ, հապա ինչպէս որ դուն
40 կ՚ուզես. Եւ եկաւ աշակերտներուն ու զանոնք
քնացած գտաւ, և ըսաւ Պետրոսին, Այդպէս
մէկ ժամ մըն ալ չկրցա՞ք ինծի հետ արթուն
41 կենալ. Արթուն կեցէք և աղօթք ըրէք, որ
փորձութեան մէջ չմտնէք. հոգին յօժար է,
42 բայց մարմինը տկար։ Դարձեալ երկրորդ անգամ
գնաց աղօթք ըրաւ՝ ըսելով, Ով Հայր իմ, եթէ
անկարելի է որ աս գաւաթը ինծմէ անցնի առանց
43 անկէ խմելուս, թող քու կամքդ ըլլայ։ Եւ եկաւ
զանոնք նորէն քնացած գտաւ, ինչու որ աչքեր-
44 նին ծանրացած էր. Եւ թողուց անոնք, ու նո-
րէն գնաց երրորդ անգամ աղօթք ըրաւ՝ նոյն
45 խօսքը ըսելով. Անատենը եկաւ իր աշակերտնե-
րուն ու ըսաւ անոնց, Ասկէ ետև քնացէք ու
հանգչեցէք. ահա ժամը հասաւ, և Որդին մար-
46 դոյ մեղաւորներուն ձեռքը կը մատնուի։ Ելէք
ասկէ երթանք. ահա մօտեցաւ անիկա որ զիս
պիտի մատնէ.
47 Եւ դեռ անիկա աս որ կը խօսէր, ահա Յու-
դա՝ տասուերկուքէն մէկը եկաւ, և իր հետը
շատ բազմութիւն սուրերով ու բիրերով՝ քա-
48 հանայապետներէն և ժողովուրդին ծերերէն. Եւ
զանիկա մատնողը անոնց նշան մը տուեր էր՝ ը-
սելով, Ով որ ես համբուրեմ՝ ան է, բռնեցէք

49 անիկա. Եւ շուտ մը Յիսուսին մօտենալով՝ ըսաւ,
Ողջոյն քեզ, վարդապետ, ու համբուրեց զանի-
50 կա. Եւ Յիսուս ըսաւ անոր, Ընկեր, ինչո՞ւ հա-
մար եկար դուն. Անատենը մօտեցան՝ ձեռք
51 զարկին Յիսուսին ու բռնեցին զանիկա. Եւ ահա
Յիսուսի հետ եղողներուն մէկը ձեռքը երկըն-
ցուց և իր սուրը հանելով՝ զարկաւ քահանայա-
պետին ծառային, և անոր ականջը մէկդի հա-
52 նեց։ Անատենը Յիսուս ըսաւ անոր, Սուրդ իր
տեղը դարձուր, ինչու որ ամէն սուր առնողները
53 սրով պիտի կորսուին. Կը կարծե՞ս թէ չեմ կըր-
նար հիմա իմ Հօրս աղաչել, և ինծի հասցընէ
54 տասուերկու *գունդէն աւելի հրեշտակներ. Բայց
ի՞նչպէս պիտի կատարուին գիրքերը, թէ պէտք
է ասանկ ըլլալ.
55 Անատենը Յիսուս ըսաւ ան բազմութեանը, Իբր
թէ աւազակի՞ վրայ ելաք սուրերով ու բիրերով
զիս բռնելու. ամէն օր տաճարին մէջ ձեզի հետ
կը նստէի ու կը սորվեցընէի, և զիս չբռնեցիք.
56 Բայց աս ամէն բաները եղաւ՝ որ կատարուին
մարգարէից գիրքերը. Անատենը բոլոր աշակերտ-
ները թողուցին անիկա ու փախան.
57 Եւ անոնք որ Յիսուսը բռնեցին՝ Կայիափա
քահանայապետին տարին, ուր որ դպիրները ու
58 ծերերը ժողվուեր էին։ Եւ Պետրոս հեռուանց
անոր ետևէն գնաց մինչև քահանայապետին գա-
ւիթը, ու ներս մտաւ սպասաւորներուն հետ նըս-
59 տաւ որ վերջը տեսնէ։ Իսկ քահանայապետները
ու ծերերը և բոլոր ժողովքը Յիսուսի դէմ սուտ
վկայութիւն մը կը փնտռէին, որ անիկա մեռցը-
60 նեն, Ու չգտան. թէև շատ սուտ վկաներ ալ ե-
կան, բայց չգտան. ետքը երկու սուտ վկայ ե-
61 կան, Ու ըսին թէ Ասիկա ըսաւ, Ես կրնամ Աս-

*Յուն. լէգէոնէն

տուծոյ տաճարը քակել, և զանիկա երեք օր-
62 ուան մէջ շինել։ Եւ քահանայապետը ոտք ելլե-
լով ըսաւ անոր, Պատասխան մը չե՞ս տար. ի՞նչ
63 կը վկայեն ասոնք քեզի դէմ։ Եւ Յիսուս լռու-
կը կենար։ Պատասխան տուաւ քահանայապետը
ու ըսաւ անոր, Կենդանի Աստուծով քեզ կ'երդ-
մնցընեմ որ մեզի ըսես, թէ դո՞ւն ես Քրիստոս
64 Որդին Աստուծոյ։ Ըսաւ անոր Յիսուս, Դուն ը-
սիր. բայց կ'ըսեմ ձեզի, Ասկէ ետև պիտի տես-
նէք Որդին մարդոյ Զօրութեան աջ կողմը նըս-
65 տած, ու երկնից ամպերուն վրայ եկած։ Անա-
տենը քահանայապետը իր հանդերձները պատ-
ռեց՝ ու ըսաւ, Հայհոյութիւն ըրաւ. ալ ի՞նչ
պէտք է մեզի վկաներ. ահա հիմա լսեցիք անոր
66 հայհոյութիւնը. Ձեզի ի՞նչպէս կ'երևնայ. անոնք
պատասխան տուին ու ըսին, Մահապարտ է։
67 Անատենը անոր երեսը թուքին, ու բռունցով
ծեծեցին անիկա. ոմանք ալ ապտակ զարնելով՝
68 ըսին, Մարգարէացիր մեզի, դուն Քրիստոս, ո՞վ
է ան որ քեզի զարկաւ։
69 Իսկ Պետրոս դուրսը գաւիթը նստեր էր, և
մէկ աղախին մը եկաւ անոր ու ըսաւ, Դուն ալ
70 Գալիլեացի Յիսուսին հետ էիր։ Բայց անիկա ա-
մենուն առջևը ուրացաւ ու ըսաւ, Չեմ գիտեր
71 դուն ինչ կը խօսիս։ Ու երբոր դուռը ելաւ, ու-
րիշ աղախին մը զանիկա տեսաւ, և հոն եղողնե-
րուն ըսաւ, Ասիկա ալ Յիսուս Նազովրեցիին
72 հետ էր։ Եւ Պետրոս նորէն երդում ընելով ու-
73 րացաւ, թէ Ես ան մարդը չեմ ճանչնար։ Ու
քիչ մը ատենէն ետև հոն եղողները եկան և ը-
սին Պետրոսին, Յիրաւի դուն ալ անոնցմէ ես,
ինչու որ քու գրուցուածքդ ալ քեզ յայտնի
74 կ'ընէ։ Անատենը սկսաւ անիծել ու երդում ը-
նել՝ ըսելով թէ Ես ան մարդը չեմ ճանչնար. և
75 իսկոյն հաւը խօսեցաւ։ Եւ Պետրոս միտքը բե-

րաւ Յիսուսի խօսքը՝ որ իրեն ըսեր էր թէ Դեռ
հաւը չխօսած՝ երեք անգամ պիտի ուրանաս
զիս. ու դուրս ելլելով դառնապէս լացաւ։

ԳԼ. ԻԷ

1 Երբոր առտու եղաւ՝ բոլոր քահանայապետները
ու ժողովուրդին ծերերը Յիսուսի դէմ խորհուրդ
2 ըրին որ զանիկա մեռցընեն։ Եւ կապելով զանի-
կա տարին, ու Պոնտացի Պիղատոս կուսակալին
ձեռքը տուին։
3 Անատենը Յուդա՝ որ զանիկա մատնեց, տես-
նելով թէ դատապարտուեցաւ, զղջի եկաւ, ու
երեսուն արծաթը ետ դարձուց քահանայապետ-
4 ներուն և ծերերուն, Ու ըսաւ, Մեղայ, որ ան-
մեղ արիւն մատնեցի. և անոնք ըսին, Մեզի ի՞նչ,
5 դուն նայէ։ Եւ արծաթը տաճարին մէջ ձգեց ու
6 դուրս ելաւ, և գնաց ինքզինքը խեղդեց։ Քա-
հանայապետներն ալ արծաթը առնելով՝ ըսին,
Արժան չէ ասիկա *կորբանին մէջ՝ դնել, ինչու
7 որ արեան գին է։ Ուստի խորհուրդ ըրին, և ա-
նով բրուտին արտը ծախու առին՝ օտարներու
8 գերեզմանատուն ըլլալու համար։ Աս պատճառով
ան արտը Արեան արտ ըսուեցաւ մինչև այսօր։
9 Անատենը կատարուեցաւ †Երեմիա մարգարէին
ձեռքով ըսուած խօսքը, Եւ առին երեսուն ար-
ծաթը՝ գին կտրուածին գինը, որ Իսրայէլի որդ-
10 ւոցմէ ոմանք գին կտրեցին, Ու տուին անիկա
բրուտին արտին, ինչպէս որ ինծի հրաման ըրաւ
Տէրը։
11 Եւ Յիսուս կուսակալին առջևը կայնեցաւ. և
կուսակալը հարցուց անոր ու ըսաւ, Հրէից թա-

---

*Այսինքն տաճարին գանձանակը

†Ոմանք չունին Երեմիա

գաւորը դո՞ւն ես. Եւ Յիսուս ըսաւ անոր, Դուն
12 կ'ըսես։ Ու քահանայապետներէն և ծերերէն ամ-
բաստանուած ատենը բնաւ պատասխան մը չտը-
13 ւաւ. Անոր ատենը Պիղատոս ըսաւ անոր, Չե՞ս լը-
սեր թէ որչափ քեզի դէմ կը վկայեն ատոնք.
14 Եւ անոր բան մը պատասխան չտուաւ, մինչև
շատ զարմացաւ կուսակալը.
15 Բայց կուսակալը սովորութիւն ունէր որ տօնին
ատենը կապուած մը արձակէր ժողովուրդին՝ ով
16 որ ուզէին. Անոր ատենը Բարաբբա անունով մէկ
17 երևելի բանտարկեալ մը ունէին. Երբոր ժող-
վուեցան՝ ըսաւ անոնց Պիղատոս, Ո՞րը կ'ուզէք
որ ձեզի արձակեմ. Բարաբբա՞ն, թէ Յիսուսը՝
18 որ Քրիստոս կ'ըսուի. Քանզի գիտէր թէ նա-
խանձի համար մատնեցին զանիկա.
19 Ու երբոր անիկա ատեանը նստեր էր, անոր
կնիկը մէկը խրկեց անոր ու ըսաւ, Դուն ան ար-
դարին հետ բան մը չունենաս, ինչու որ այսօր
երազիս մէջ շատ դիպուածներ անցան գլխէս ա-
նոր համար։
20 Բայց քահանայապետները և ծերերը ժողովուր-
դը համոզեցին որ Բարաբբան խնդրեն ու Յի-
21 սուսը կորսընցընեն։ Պատասխան տուաւ կուսա-
կալը ու ըսաւ անոնց, Աս երկուքէս ո՞րը կ'ու-
զէք որ ձեզի արձակեմ. և անոնք ըսին, Բա-
22 րաբբան. Ըսաւ անոնց Պիղատոս, Հապա ի՞նչ ը-
23 նեմ Յիսուսը՝ որ Քրիստոս կ'ըսուի. Ամէնքն ալ
ըսին անոր, Թող խաչուի. և կուսակալը ըսաւ,
Բայց ի՞նչ չար գործ ըրաւ. և անոնք ևս առա-
24 ւել կ'աղաղակէին ու կ'ըսէին, Թող խաչուի. Եւ
Պիղատոս տեսնելով որ օգուտ մը չըլլար, հապա
ալ աւելի խռովութիւն կ'ըլլայ, ջուր առաւ՝
ձեռքերը լուաց ժողովուրդին առջևը ու ըսաւ,
Ես աս արդարին արիւնէն անպարտ եմ. դուք
25 մտածեցէք. Եւ բոլոր ժողովուրդը պատասխան

տալով ըսաւ, Ատոր արիւնը մեր վրայ ու մեր
26 որդւոցը վրայ ըլլայ. Անոր ատենը Բարաբբան ար-
ձակեց անոնց, և Յիսուսը ծեծելով՝ անոնց ձեռ-
քը տուաւ որ խաչուի։
27 Անոր ատենը կուսակալին զինուորները պալատին
ներսը առին Յիսուսը, ու բոլոր զինուորներուն
28 գունդը անոր վրայ ժողվեցին. Եւ զանիկա մեր-
կացընելով՝ կարմիր վերարկու մը հագուցին ա-
29 նոր. Ու փուշերէ պսակ մը հիւսելով՝ անոր գը-
լուխը դրին, ու եղէգ մը անոր աջ ձեռքը. և
անոր առջևը ծնկան վրայ գալով ծաղր կ'ընէին
զանիկա, ու կ'ըսէին, Ողջոյն քեզ, Հրէից Թա-
30 գաւոր. Եւ թքնելով անոր վրայ՝ եղէգը կ'առ-
31 նէին ու անոր գլուխը կը ծեծէին. Ու երբոր
ծաղր ըրին անիկա՝ վերարկուն վրայէն հանեցին
ու իր հանդերձները հագուցին անոր, և տարին
զանիկա խաչը հանելու։
32 Եւ դուրս ելլելով՝ Կիւրենացի մարդ մը գտան
Սիմոն անունով, զանիկա պահակ բռնեցին՝ որ
33 անոր խաչը վերցընէ. Ու եկան Գողգոթա ը-
34 սուած տեղը, որ է գանկի տեղ. Եւ լեղիով խառ-
նած քացախ տուին անոր որ խմէ. ու երբոր
35 համը առաւ՝ խմել չէր ուզեր. Եւ զանիկա խաչը
հանելով, անոր հանդերձները վիճակով բաժնե-
ցին. [որ մարգարէէն ըսուածը կատարուի, Իմ
հանդերձներս իրենց մէջը բաժնեցին, և իմ
36 պատմուճանիս վրայ վիճակ ձգեցին.] Ու նստեր
37 անիկա կը պահէին։ Եւ անոր գլխուն վրայ իր
յանցանքը գրուած դրին, Թէ Ասիկա է Յիսուս՝
38 Հրէից Թագաւորը. Անոր ատենը անոր հետ երկու
աւազակ խաչուեցան, մէկը անոր աջ կողմէն, ու
մէկը ձախ կողմէն.
39 Եւ անոնք որ կ'անցնէին՝ կը հայհոյէին անոր,
40 գլուխնին կը շարժէին, Ու կ'ըսէին, Դուն որ
տաճարը կը քակէիր և երեք օրուան մէջ կը շի-

նէիր, ինքզինքդ ազատէ. Թէ որ Աստուծոյ Որ-
41 դին ես, իջիր այդ խաչէդ։ Նոյնպէս ալ քահա-
նայապետները դպիրներուն ու ծերերուն հետ
42 ծաղր ընելով՝ կ'ըսէին, Ուրիշները ազատեց, ինք-
զինքը չկրնար ազատել. Թէ որ Իսրայէլի Թա-
գաւոր է՝ թող հիմա իջնէ խաչէն, և իրեն հա-
43 ւատանք։ Աստուծոյ յուսացեր է, հիմա թող
փրկէ զանիկա՝ եթէ կ'ուզէ զանիկա. ինչու որ ը-
44 սաւ, Թէ Ես Որդի Աստուծոյ եմ։ Իր հետը խա-
չուած աւազակներն ալ նոյնպէս կը նախատէին
զանիկա։
45 Եւ վեցերորդ ժամէն մինչև իններորդ ժամը
46 բոլոր երկրին վրայ խաւար եղաւ։ Եւ ժամը ին-
նին ատենները Յիսուս մեծ ձայնով աղաղակեց
ու ըսաւ, Էլի, Էլի, լա՞մա սաբաքթանի. որ ըսել
է՝ Աստուած իմ, Աստուած իմ, ինչո՞ւ զիս թո-
47 ղուցիր։ Անոնցմէ ոմանք՝ որ հոն կայներ էին,
երբոր լսեցին՝ կ'ըսէին, Ասիկա Եղիան կը կանչէ։
48 Եւ շուտ մը անոնցմէ մէկը վազեց սպունգ մը ա-
ռաւ՝ քացախով լեցուց, ու եղէգի մը անցընե-
49 լով՝ տուաւ անոր որ խմէ։ Ու միւսները կ'ըսէ-
ին, Թող տուր՝ տեսնենք թէ Եղիան կու գա՞յ
զանիկա ազատելու։
50 Եւ Յիսուս դարձեալ մեծ ձայնով աղաղակեց՝
ու հոգին աւանդեց։
51 Եւ ահա տաճարին վարագոյրը վերէն ի վար
երկուքի ճեղքուեցաւ, ու երկիրը շարժեցաւ, և
52 քարերը պատռեցան, Եւ գերեզմանները բաց-
ուեցան, ու շատ սուրբ ննջեցեալներու մարմին-
53 ներ յարութիւն առին։ Եւ գերեզմաններէն ե-
լան անոր յարութենէն ետև, մտան սուրբ քա-
ղաքը ու շատերուն երևցան։
54 Բայց հարիւրապետը և անոր հետ Յիսուսը պա-
հողները՝ երբոր տեսան երկրաշարժը ու եղած
բաները, շատ վախցան՝ ու ըսին, Յիրաւի ասիկա
Որդի Աստուծոյ էր։

55 Եւ հոն շատ կիներ կային որ հեռուէն կը
նայէին, որոնք Գալիլեայէն Յիսուսի ետևէն ե-
56 կան իրեն ծառայութիւն ընելու. Որոնց մէջ էր
Մարիամ Մագդաղենացին և Յակոբոսին ու Յով-
սէսին մայրը Մարիամ և Զեբեդէոսի որդւոցը
մայրը։
57 Ու երբոր իրիկուն եղաւ, Արիմաթիայէն հա-
րուստ մարդ մը եկաւ՝ որուն անունը Յովսէփ
58 էր, որ ինքն ալ Յիսուսի աշակերտ էր։ Ասիկա
Պիղատոսին քովը երթալով՝ Յիսուսի մարմինը
խնդրեց. անատենը Պիղատոս հրաման ըրաւ որ
59 մարմինը տրուի։ Եւ Յովսէփ մարմինը առաւ,
60 մաքուր կտաւով պատեց, Ու դրաւ իր նոր գե-
րեզմանին մէջ՝ որն որ քարէ փորած էր. և գե-
րեզմանին դուռը մեծ քար մը գլտորցընելով
61 գնաց։ Եւ հոն էր Մարիամ Մագդաղենացին և
միւս Մարիամը՝ գերեզմանին դիմացը նստած։
62 Եւ հետևեալ օրը՝ որ ուրբաթէն ետև էր, քա-
հանայապետները ու փարիսեցիները ժողվուեցան
63 Պիղատոսին քովը, Ու ըսին, Տէր, կը յիշենք որ
այն մոլորեցուցիչը իր կենդանութեան ատենը
կ'ըսէր թէ Երեք օրէն ետև յարութիւն կ'առ-
64 նեմ։ Ուստի հրաման ըրէ որ մինչև երրորդ օրը
գերեզմանին զգուշութիւն ընեն. չըլլայ թէ
իր աշակերտները գիշերով գան՝ զանիկա գող-
նան, և ժողովուրդին ըսեն թէ Մեռելներէն յա-
րութիւն առաւ. ու ետքի մոլորութիւնը առջի-
65 նէն գէշ ըլլայ։ Պիղատոս անոնց ըսաւ, Դուք
ունիք պահապան զինուորներ. գացէք՝ զգու-
66 շութիւն ըրէք ինչպէս որ գիտէք։ Անոնք ալ
գացին գերեզմանին զգուշութիւն ըրին, քարը
կնքելով ու պահապան զինուորներ դնելով։

ԳԼ. ԻԸ

1 Եւ շաբաթ գիշերը որ մէկշաբթին կը լուսնար,
եկաւ Մարիամ Մագդաղենացին ու միւս Մա-
2 րիամը գերեզմանը տեսնելու։ Եւ ահա մեծ երկ-
րաշարժ մը եղաւ, ինչու որ Տէրոջը հրեշտակը
երկինքէն իջնելով՝ գնաց դռնէն մէկդի գլոր-
3 ցուց քարը, ու անոր վրայ նստաւ։ Եւ անոր
տեսքը փայլակի պէս էր, ու անոր հանդերձնե-
4 րը՝ ձիւնի պէս ճերմակ։ Եւ անոր վախէն պա-
հապանները խռովեցան, ու մեռածի պէս եղան։
5 Պատասխան տուաւ հրեշտակը ու ըսաւ կիներ-
րուն, Դուք մի վախնաք, քանզի գիտեմ որ կը
6 փնտռէք Յիսուսը՝ որ խաչուեցաւ. Անիկա հոս
չէ, ինչու որ յարութիւն առաւ, ինչպէս որ ը-
սաւ. եկէք տեսէք այն տեղը՝ ուր որ Տէրը պառ-
7 կած էր։ Եւ շուտ մը գացէք անոր աշակերտնե-
րուն ըսէք թէ անիկա մեռելներէն յարութիւն
առաւ, և ահա ձեզմէ առաջ Գալիլեա կ'երթայ,
հոն պիտի տեսնէք զանիկա. ահա ձեզի զրուցեցի։
8 Եւ անոնք շուտ մը գերեզմանէն ելան վախով ու
մեծ ուրախութիւնով՝ և կը վազէին աշակերտ-
ներուն պատմելու։
9 Ու երբոր կ'երթային անոր աշակերտներուն
պատմելու, ահա Յիսուս անոնց դէմը ելաւ՝ ու ը-
սաւ, Ողջոյն ձեզ։ Եւ անոնք մօտենալով՝ անոր ոտ-
քերը բռնեցին, ու երկրպագութիւն ըրին անոր։
10 Անատեն Յիսուս ըսաւ անոնց, Մի վախնաք,
գացէք իմ եղբայրներուս ըսէք որ Գալիլեա եր-
թան, ու հոն զիս պիտի տեսնեն։
11 Երբոր անոնք կ'երթային՝ ահա պահապան զին-
ուորներէն մէկ քանին քաղաքը եկան, ու քա-
հանայապետներուն պատմեցին բոլոր եղած բա-
12 ները։ Եւ անոնք ծերերուն հետ մէկտեղ ժող-

վուելով ու խորհուրդ ընելով՝ շատ ստակ տուին
13 զինուորներուն, Ու ըսին, Ըսէք թէ Անոր աշա-
կերտները գիշերով եկան անիկա գողցան՝ երբոր
14 մենք կը քնանայինք։ Եւ թէ որ աս բանը կու-
սակալին ականջը հասնի, մենք անիկա կը հաճե-
15 ցընենք, և ձեզ *ապահով կ'ընենք։ Անոնք ալ
ստակը առին՝ ու սորվածնուն պէս ըրին. և աս
ձայնը Հրէից մէջ տարածուեցաւ մինչև աս օրս։
16 Իսկ տասնումէկ աշակերտները գացին Գալիլեա՝
17 այն լեռը ուր որ Յիսուս իրենց որոշեր էր։ Ու
երբոր զանիկա տեսան, երկրպագութիւն ըրին
18 անոր, բայց ոմանք տարակուսեցան։ Եւ Յիսուս
մօտենալով՝ խօսեցաւ անոնց ու ըսաւ, Ամէն իշ-
խանութիւն ինծի տրուեցաւ երկնից ու երկրի
19 մէջ։ Ուրեմն գացէք բոլոր ազգերը աշակերտե-
ցէք, մկրտեցէք զանոնք յանուն Հօր և Որդւոյ
20 և Հոգւոյն Սրբոյ. Սորվեցուցէք անոնց որ այն
ամէն բաները պահեն՝ ինչ որ ես ձեզի պատուի-
րեցի. և ահա ամէն օր ես ձեզի հետ եմ մինչև
աշխարհիս վերջը։ Ամէն։

---

*Յուն. անհոգ

ԱՒԵՏԱՐԱՆ
ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ

ԳԼՈՒԽ Ա.

1 Աստուծոյ Որդւոյն Յիսուս Քրիստոսի աւետա-
2 րանին սկիզբը։ Ինչպէս որ մարգարէից մէջ գըր-
ուած է, Ահա ես իմ դեսպանս կը ղրկեմ քու
երեսիդ առջեւէն, որ քու ճամբադ պիտի պատ-
3 րաստէ քու առջեւդ. Անապատի մէջ կանչողին
ձայնը, Տէրոջը ճամբան պատրաստեցէք, անոր
4 շաւիղները շիտկեցէք. Յովհաննէս անապատին
մէջ կը մկրտէր, և ապաշխարութեան մկրտու-
թիւն կը քարոզէր՝ մեղքերու թողութեան հա-
5 մար։ Եւ բոլոր Հրէաստանի երկիրը ու Երուսա-
ղէմացիք կ'երթային անոր, ու ամէնքը կը մը-
կըրտուէին անկէ Յորդանան գետին մէջ՝ մեղ-
6 քերնին խոստովանելով։ Եւ Յովհաննէս հագեր
էր ուղտի մազ, և իր մէջքը կաշիէ գօտի. ու իր
7 կերակուրը մարախ ու վայրենի մեղր էր։ Եւ կը
քարոզէր ու կ'ըսէր, Իմ ետեւէս ինծմէ զօրաւորը
կու գայ, որ ես արժանի չեմ ծռելու և անոր
8 կօշիկներուն կապերը արձըկելու։ Ես ձեզ ջրով
մկրտեցի, բայց անիկա ձեզ Սուրբ Հոգիով պիտի
մկրտէ։
9 Ու եղաւ որ ան օրերը Յիսուս Գալիլեայի Նա-
զարեթէն եկաւ, ու Յովհաննէսէն մկրտուեցաւ
10 Յորդանանու մէջ։ Եւ շուտ մը ջուրէն ելլելուն
պէս՝ երկինքը բացուած տեսաւ, և Հոգին ա-
11 ղաւնիի պէս՝ որ իր վրայ կ'իջնէր։ Եւ ձայն մը

եկաւ երկինքէն՝ որ կ'ըսէր, Դուն ես իմ սիրելի
Որդիս, որուն հաւներ եմ։
12 Եւ շուտ մը Հոգին անապատը հանեց զանիկա։
13 Ու քառասուն օր հոն էր անապատին մէջ՝ Սա-
տանայէն փորձուած. և գազաններու հետ էր.
ու հրեշտակները իրեն սպասաւորութիւն կ'ընէին։
14 Եւ Յովհաննէսին մատնուելէն ետեւ Յիսուս Գա-
լիլեա եկաւ, Աստուծոյ արքայութեան աւետա-
15 րանը կը քարոզէր ու կ'ըսէր, Թէ ժամանակը լը-
րացած է, և Աստուծոյ թագաւորութիւնը մօ-
տեցած է. ապաշխարեցէք ու աւետարանին հա-
ւատացէք։
16 Երբոր Գալիլեացւոց ծովուն քովէրը կը պտը-
տէր, տեսաւ Սիմոնը ու Սիմոնին եղբայրը Անդ-
րէասը՝ ծովը ուռկան ձգած, ինչու որ ձկնորս
17 էին։ Եւ Յիսուս ըսաւ անոնց, Իմ ետեւէս եկէք,
18 ու ես ձեզ ընեմ որ մարդու որսորդ ըլլաք։ Ա-
նոնք ալ շուտ մը իրենց ուռկանները թողուցին
19 ու անոր ետեւէն գացին։ Եւ անկէ քիչ մը առաջ
երթալով՝ տեսաւ Զեբեդեան Յակոբոսը ու անոր
եղբայրը Յովհաննէսը, որ անոնք ալ նաւին մէջ
20 ուռկանները կը կարկըտէին. Եւ շուտ մը զանոնք
կանչեց. անոնք ալ իրենց հայրը Զեբեդէոսը
վարձկաններուն հետ նաւին մէջ ձգելով անոր
ետեւէն գացին։
21 Ու մտան Կափառնայում. և իսկոյն շաբաթ
22 օրը ժողովարանը մտնելով՝ կը սորվեցընէր։ Եւ
կը զարմանային անոր վարդապետութեանը վրայ,
ինչու որ իշխանութիւն ունեցողի մը պէս կը
սորվեցընէր անոնց, ու չէ թէ դպիրներուն պէս։
23 Եւ անոնց ժողովարանին մէջ մարդ մը կար, որ
պիղծ ոգի ունէր իր ներսի դին, ու աղաղակեց
24 ըսելով, Թող տուր, դուն մեզի հետ ի՞նչ բան
ունիս, Յիսուս Նազովրեցի. միթէ մեզ կորսըն-
ցընելու՞ եկար. գիտեմ քեզ՝ ով ես, Աստուծոյ

25 Սուրբը։ Եւ Յիսուս սաստեց անոր՝ ըսելով, Պա-
26 պանձէ ու ել անկէ։ Եւ պիղծ ոգին սաստիկ
ցնցեց զանիկա, ու մեծ ձայնով մը աղաղակեց
27 ու անկէ ելաւ։ Եւ ամէնքը զարմացան, անանկ
որ իրարու հարցուփորձ կ'ընէին ու կ'ըսէին, Աս
ի՞նչ է. ի՞նչ նոր վարդապետութիւն է աս, որ
իշխանութիւնով պիղծ ոգիներուն ալ կը հրա-
28 մայէ, ու իրեն կը հնազանդին։ Եւ շուտ մը իր
համբաւը Գալիլեացւոց ամէն կողմերը ելաւ։
29 Եւ շուտ մը ժողովարանէն ելլելով՝ Սիմոնին ու
Անդրէասին տունը մտան Յակոբոսին և Յովհան-
30 նէսին հետ։ Ու Սիմոնին զօքանչը ջերմէ բռնուած
պառկած էր, և շուտ մը անոր համար ըսին ի-
31 րեն։ Ու Յիսուս մօտեցաւ՝ անոր ձեռքէն բռնեց,
վերցուց զանիկա, և իսկոյն ջերմը թող տուաւ
զանիկա, ու անոնց սպասաւորութիւն կ'ընէր։
32 Ու երբոր իրիկուն եղաւ՝ արեգակին մտած ա-
տենը բոլոր հիւանդները և դիւահարները իրեն
33 կը բերէին։ Ու բոլոր քաղաքը դուռը ժողվուեր
34 էր։ Եւ շատ հիւանդներ կերպ կերպ ցաւերէ՝
բժշկեց, ու շատ դեւեր հանեց. ու դեւերուն խօ-
սիլ չէր տար, ինչու որ զինքը կը ճանչնային։
35 Եւ առաւօտուն շատ կանուխ ելլելով դեռ-
չլուսցած՝ ելաւ ու գնաց անապատ տեղ մը, և
36 հոն աղօթք կ'ընէր։ Ու Սիմոն և իր հետը եղող-
37 ները գացին անոր ետեւէն։ Ու երբոր գտան զա-
նիկա՝ ըսին անոր թէ Ամէնը քեզ կը փնտռեն։
38 Եւ ըսաւ անոնց, Եկէ՛ք երթանք մերձակայ գիւ-
ղաքաղաքները, որ հոն ալ քարոզեմ, քանզի
39 աս բանիս համար ելեր եմ։ Եւ անոնց ժողովա-
րաններուն մէջը կը քարոզէր բոլոր Գալիլեայի
մէջ, ու դեւեր կը հանէր։
40 Մէկ բորոտ մը եկաւ անոր, կ'աղաչէր, ծունկ
կը դնէր, ու կ'ըսէր անոր, Թէ որ ուզես՝ կրնաս
41 զիս մաքրել։ Եւ Յիսուս խղճալով՝ ձեռքը եր-

կնցուց, դպաւ անոր, ու ըսաւ անոր, Կ'ուզեմ՝
42 մաքրուէ։ Ու երբոր աս ըսաւ անոր, շուտ մը
բորոտութիւնը անկէ գնաց, ու մաքրուեցաւ։
43 Եւ սաստիկ պատուէր տալով անոր՝ շուտ մը
44 դուրս հանեց զանիկա, ու ըսաւ անոր, Զգոյշ կե-
ցիր, մէկուն բան մը չըսես, հապա գնա քեզ
քահանային ցուցուր, և տուր քու մաքրուելուդ
ընծան, որ Մովսէս պատուիրեց՝ անոնց վկայու-
45 թիւն ըլլալու համար։ Բայց անիկա ելլելով՝ սկը-
սաւ շատ հրատարակել ու բանը տարածել, ա-
նանկ որ ալ ինքը չէր կրնար յայտնի կերպով
քաղաք մը մտնել. հապա դուրսը անապատ տեղ-
ուանք էր, և ամէն կողմերէն իրեն կու գային։

ԳԼ. Բ

1 Եւ նորէն Կափառնայում մտաւ քանի մը օրէն
2 ետեւ։ Ու լսուեցաւ որ անիկա տան մէջ է, և
շուտով շատ մարդիկ ժողվուեցան, անանկ որ
ալ տեղ չկար, ոչ ալ դրանը քովերը. ու կը խօ-
3 սէր անոնց Աստուծոյ խօսքը։ Եւ կու գային ի-
րեն՝ չորս մարդով վերցուած անդամալոյծ մը
4 կը բերէին։ Ու երբոր բազմութենէն չէին կըր-
նար անոր մօտենալ, քակեցին տանը յարկը՝ ուր
որ Յիսուս էր, ու ծակ մը բանալով՝ վար իջե-
ցուցին մահիճը՝ որուն վրայ պառկած էր անդա-
5 մալոյծը։ Եւ Յիսուս անոնց հաւատքը տեսնե-
լով՝ ըսաւ անդամալոյծին, Որդեակ, քու մեղ-
6 քերդ քեզի ներուած են։ Ու դպիրներէն մէկ
քանիները կային որ հոն նստեր էին, և իրենց
7 սրտերուն մէջ կը խորհէին՝ ըսելով, Ինչո՞ւ հա-
մար ասիկա ասանկ հայհոյութիւններ կը խօսի.
ո՞վ կրնայ մեղաց թողութիւն տալ, բայց միայն
8 Աստուած։ Եւ Յիսուս իսկոյն իմանալով իր հոգ-
ւոյն մէջ՝ որ անոնք այնպէս կը խորհին մէջեր-

նին, ըսաւ անոնց, Ատ ի՞նչ կը խորհիք սրտեր-
9 նուդ մէջ. Ո՞րը աւելի դիւրին է, անդամալոյծին
ըսել՝ Քու մեղքերդ ներուած են, եթէ ըսել՝ Ե-
10 լի՛ր, մահիճդ առ ու քալէ։ Բայց որպէս զի գիտ-
նաք թէ Որդին մարդոյ իշխանութիւն ունի երկ-
րի վրայ մեղքերու թողութիւն տալու, (ըսաւ
11 անդամալոյծին,) Քեզի կ՚ըսեմ, Ելի՛ր, մահիճդ
12 առ ու տունդ գնա։ Ան ալ շուտ մը ելաւ, և իր
մահիճը առնելով՝ ամենուն առջևը դուրս ելաւ,
անանկ որ ամէնքը ապշած մնացին, և փառք
տուին Աստուծոյ, ու ըսին թէ Ասանկ բան մը
ամենևին տեսած չենք։
13 Եւ ելաւ նորէն ծովեզերքը, ու բոլոր ժողո-
վուրդը իրեն կու գային, և կը սորվեցնէր ա-
14 նոնց. Ու երբոր կ՚անցնէր, տեսաւ Ղևի Ալփէոս-
եանը, որ մաքս ընդունելու տեղը նստեր էր, ու
ըսաւ անոր, Եկուր իմ ետևէս. ան ալ ելաւ ա-
15 նոր ետևէն գնաց։ Ու եղաւ որ երբոր սեղան
նստած էր անոր տանը մէջ, շատ մաքսաւորներ
ու մեղաւորներ ալ սեղան նստած էին Յիսուսի
հետ ու անոր աշակերտներուն հետ. քանզի շատ-
16 ուոր էին, ու անոր ետևէն կ՚երթային։ Եւ դը-
պիրները ու փարիսեցիները երբոր տեսան թէ
անիկա մաքսաւորներուն ու մեղաւորներուն հետ
կ՚ուտէ, ըսին անոր աշակերտներուն, Ինչո՞ւ հա-
մար մաքսաւորներուն ու մեղաւորներուն հետ
17 կ՚ուտէ ու կը խմէ. Եւ Յիսուս երբոր լսեց՝ ը-
սաւ անոնց, Առողջներուն բժիշկ պէտք չէ, հա-
պա հիւանդներուն. ես արդարները կանչելու
չեկայ, հապա մեղաւորները*։
18 Եւ Յովհաննէսին ու փարիսեցիներուն աշա-
կերտները ծոմ կը պահէին. և եկան ու ըսին ա-
նոր, Ինչո՞ւ Յովհաննէսին ու փարիսեցիներուն

*Ոմանք յաւելցնեն ապաշխարութեան

աշակերտները ծոմ կը պահեն, ու քու աշա-
19 կերտներդ ծոմ չեն պահեր։ Եւ Յիսուս ըսաւ ա-
նոնց, Միթէ կարելի՞ է որ հարսնիքին տղաքը՝
քանի որ փեսան իրենց հետ է, ծոմ պահեն.
որչափ ժամանակ որ փեսան իրենց հետը ունին,
20 կարելի չէ ծոմ պահել. Բայց օրեր պիտի գան՝ որ
երբ փեսան իրենցմէ վերցուի, հապա ան օրը ծոմ
21 պիտի պահեն։ Մէկը կարկտան չձգեր նոր լաթի
կտոր մը հին հանդերձի վրայ. թէ չէ՝ ան նորը
որ անոր լրութեանը համար դրուած էր, հինէն
կ՚առնէ, ու պատռուածքը ալ աւելի գէշ կ՚ըլ-
22 լայ. Ոչ ալ մէկը նոր գինին հին տիկերու մէջ կը
կը դնէ. եթէ ոչ՝ նոր գինին տիկերը կը պատռէ,
ու գինին կը թափի և տիկերը կը կորնչին. հապա
նոր գինին նոր տիկերու մէջ դնելու է։
23 Ու եղաւ որ շաբաթ օրը ինքը արտերուն մէ-
ջէն կ՚անցնէր, և իր աշակերտները որ կ՚երթա-
24 յին, սկսան ցորենի հասկեր փրցնել։ Ու փարի-
սեցիները ըսին իրեն, Նայէ շաբաթ օրը ի՛նչ կ՚ը-
25 նեն, որ արժան չէ։ Ինքն ալ անոնց ըսաւ, Բնաւ
չէ՞ք կարդացեր դուք Դաւիթին ըրածը՝ երբոր
պէտք ունեցաւ, և անօթեցաւ ինքը ու անոնք
26 որ իր հետն էին. Ինչպէս մտաւ Աստուծոյ տունը
Աբիաթար քահանայապետին օրովը, և առաջա-
ւորութեան հացերը կերաւ, ու տուաւ անոնց
ալ որ իր հետն էին, որ մէկու մը օրինաւոր չէ
27 ուտել, բայց միայն քահանաներուն։ Եւ ըսաւ
անոնց, Շաբաթը մարդուն համար եղաւ, ու չէ
28 թէ մարդը շաբաթին համար։ Ուրեմն Որդին
մարդոյ շաբաթին ալ տէրն է։

ԳԼ. Գ

1 Եւ նորէն ժողովարանը մտաւ, ու հոն մարդ մը
2 կար՝ որուն ձեռքը չորցած էր։ Եւ իրեն կը-

սպասէին թէ արդեօք շաբաթ օրը զանիկա պիտի
բժշկէ՛, որ իր վրայով ամբաստանութիւն ընեն։
3 Ու ինքը ձեռքը չորցած մարդուն ըսաւ, Ելիր
4 մէջտեղը կայնէ։ Ու ըսաւ անոնց, Շաբաթ օրը
բարի՞ք ընել արժան է՝ թէ չարիք ընել, հոգի
մը ազատե՞լ՝ թէ մեռցնել. բայց անոնք լուռ
5 կեցան։ Ու Յիսուս բարկութեամբ շուրջանակի
անոնց վրայ նայելով՝ անոնց սրտերուն կուրու-
թեանը համար տրտմած, ըսաւ այն մարդուն,
Ձեռքդ երկնցուր. ան ալ երկնցուց, և անոր
6 ձեռքը *ողջացաւ։ Ու փարիսեցիները Հերովդէս-
եաններուն հետ մէկտեղ շուտ մը դուրս ելլելով,
անոր դէմ խորհուրդ կ'ընէին թէ ինչպէս կոր-
սնցնեն զանիկա։
7 Բայց Յիսուս իր աշակերտներովը ծովեզերքը
գնաց. և շատ բազմութիւն անոր ետեւէն գացին
8 Գալիլեայէն, ու Հրէաստանէն, Ու Երուսաղեմէն,
ու Եդովմէն, և Յորդանանու անդին կողմէն. ու
անոնք որ Տիւրոսի ու Սիդոնի շրջակայ տեղերէն
էին, շատ բազմութիւն, երբոր լսեցին ինչ որ
9 կ'ընէր՝ իրեն եկան։ Ու իր աշակերտներուն ըսաւ
որ նաւակ մը պատրաստ կենայ իրեն համար՝ ժո-
ղովուրդին բազմութեանը պատճառաւ, որ զին-
10 քը չնեղեն։ Քանզի շատերը բժշկեց, անանկ որ
ցաւ ունեցողները վրան կը դիզուէին որ իրեն
11 դպչին, Ու պիղծ ոգիները երբոր զինքը կը տես-
նէին, կ'իյնային իր առջևը, կը կանչուըռտէին
12 ու կ'ըսէին, Դուն ես Աստուծոյ Որդին. և ինքը
սաստիկ կը յանդիմանէր զանոնք, որ զինքը
չյայտնեն։
13 Ու լեռը ելլելով՝ իր ուզածները իրեն կանչեց,
14 ու գացին անոր քովը։ Ու տասուերկու հոգի ո-
րոշեց, որ իր հետը ըլլան, և որ անոնք խրկէ

*Ոմանք ողջացաւ միւսին պէս

15 քարոզել, Ու իշխանութիւն ունենալ ցաւերը
16 բժշկելու և դեւերը հանելու։ Ու Սիմոնին անունը
17 Պետրոս դրաւ. Ու Զեբեդեան Յակոբոսին ու
Յակոբոսին եղբօրը Յովհաննէսին՝ անոնց անուն-
ները Բանէրգէս դրաւ, որ ըսել է Որդիք Ո-
18 րոտման. Ու Անդրէասը, ու Փիլիպպոսը, և Բար-
թողոմէոսը, ու Մատթէոսը, և Թովմասը, ու
Ալփէոսեան Յակոբոսը, և Թադէոսը, ու Սիմոն
19 Կանանացին, Ու Յուդա Իսկարիովտացին, որ
նաև մատնեց զանիկա։
20 Տուն մը եկան, և նորէն ժողովուրդը ժող-
վուեցաւ, անանկ որ հաց ուտելու ալ ժամանակ
21 չկրցան գտնել։ Ու երբոր իրենները լսեցին՝ ելան
որ զինքը բռնեն, քանզի կ'ըսէին թէ խելըռուած
22 է։ Ու այն դպիրները որ Երուսաղեմէն իջեր էին,
կ'ըսէին թէ Ասոր ներսի դին Բէեղզեբուղ կայ, և
23 դեւերուն իշխանովը դեւերը կը հանէ։ Ու իրեն
կանչելով զանոնք՝ առակներով կ'ըսէր անոնց,
24 Ի՞նչպէս կրնայ Սատանան Սատանայ հանել։ Ու
թէ որ մէկ թագաւորութիւն մը իրեն դէմ բաժ-
25 նուի, այն թագաւորութիւնը չկրնար կենալ։ Ու
թէ որ տուն մը իրեն դէմ բաժնուի, այն տունը
26 չկրնար կենալ։ Ու թէ որ Սատանան իրեն դէմ
ելաւ ու բաժնուած է, անիկա չկրնար կենալ,
27 հապա անոր վերջը հասած է։ Մէկը չկրնար զօ-
րաւոր մարդու մը տունը մտնելով՝ անոր կարա-
սիները յափշտակել, թէ որ առաջ այն զօրաւոր
մարդը չկապէ, ու ետքը անոր տունը կողոպտէ։
28 Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի որ Ամէն մեղքերը պիտի
ներուին մարդոց որդիներուն, և հայհոյութիւն-
29 ները՝ որչափ որ հայհոյեն. Բայց ով որ Հոգւոյն
Սրբոյ դէմ հայհոյէ, յաւիտեան թողութիւն պի-
տի չունենայ, հապա յաւիտենական դատաստանի
30 պարտաւոր պիտի ըլլայ. Վասն զի կ'ըսէին թէ
Պիղծ ոգի կայ անոր ներսի դին։

31 Ետքը անոր մայրը ու եղբայրները եկան, և
դուրսը կայնելով՝ մարդ խրկեցին ու կը կանչէին
32 զանիկա։ Ու ժողովուրդը անոր բոլորտիքը նստեր
էր, ու իրեն ըսին թէ Ահա քու մայրդ ու եղ-
33 բայրներդ դուրսը կեցեր են ու քեզ կ'ուզեն։ Ու
անիկա պատասխան տուաւ անոնց ու ըսաւ, Ո՞վ
34 է իմ մայրս կամ եղբայրներս։ Ու իր բոլորտիքը
նստողներուն նայելով՝ ըսաւ, Ահա իմ մայրս ու
35 իմ եղբայրներս· վասն զի ով որ Աստուծոյ կամքը
կը կատարէ, անիկա է իմ եղբայրս և քոյրս ու
մայրս։

ԳԼ. Դ

1 Դարձեալ սկսաւ սորվեցնել ծովեզերքին վրայ,
և շատ ժողովուրդ անոր քով ժողվուեցաւ, ա-
նանկ որ ինքը նաւը մտաւ ու նստաւ ծովուն
վրայ, և բոլոր ժողովուրդը ցամաքը ծովուն ե-
2 զերքն էր։ Ու անոնց շատ բաներ կը սորվեցը-
նէր առակներով, ու կ'ըսէր անոնց իր վարդա-
3 պետութեանը մէջ, Լսեցէք· ահա սերմ ցանողը
4 ելաւ որ սերմ ցանէ։ Ու երբոր կը ցանէր, մէկ
քանին ճամբուն քով ինկաւ, և *Թռչունները
5 եկան ու կերան զանիկա։ Ու ուրիշը ինկաւ ա-
պառաժուտ տեղի վրայ, ուր շատ հող չկար· և
շուտ մը բուսաւ՝ հողը խորունկութիւն չունե-
6 նալուն համար· Սակայն արևուն ծագած ատենը
այրեցաւ, ու արմատ չունենալուն համար չոր-
7 ցաւ։ Ու ուրիշը ինկաւ փուշերու մէջ, և փուշերը
ելան ու խեղդեցին զանիկա, ու պտուղ չտուաւ։
8 Ու ուրիշը ինկաւ աղէկ հողի մէջ, ու պտուղ կու
տար, որ ելաւ ու մեծցաւ, և կը բերէր մէկուն
տեղը երեսուն, ու մէկուն տեղը վաթսուն, և

*Ոմանք երկնից Թռչունները

9 մէկուն տեղը հարիւր։ Ու կ'ըսէր, Ան որ լսելու ա-
կանջ ունի՝ թող լսէ։
10 Ու երբոր առանձին էր, իր քովը եղողները
տասնուերկուքին հետ մէկտեղ հարցուցին իրեն ան
11 առակը։ Ու ըսաւ անոնց, Ձեզի տրուած է գիտ-
նալ Աստուծոյ թագաւորութեանը խորհուրդը,
բայց անոնց որ դուրսն են ամէն բան առակնե-
12 րով կ'ըլլայ· Որ տեսնելով տեսնեն՝ ու չտեսնեն,
և լսելով լսեն՝ ու չիմանան, որ չըլլայ թէ դարձի
13 գան, և իրենց մեղացը թողութիւն ըլլայ։ Ու ըսաւ
անոնց, Աս առակը չէ՞ք գիտեր· ուրեմն ի՞նչպէս
14 պիտի գիտնաք ամէն առակները։ Սերմ ցանողը
15 խօսքը կը ցանէ։ Ու ճամբուն քովինները անոնք են
որոնց մէջ խօսքը կը ցանուի, ու երբոր կը լսեն,
շուտ մը Սատանան կու գայ՝ և անոնց սրտերուն
16 մէջ ցանուած խօսքը կը հանէ։ Նոյնպէս ալ ապա-
ռաժուտ տեղերու վրայ ցանուածները անոնք են,
որ երբոր կը լսեն խօսքը՝ շուտ մը ուրախութեամբ
17 կ'ընդունին զանիկա· Ու իրենց մէջը արմատ չու-
նենալով՝ քիչ ժամանակ կը տևեն, ետքը երբոր
նեղութիւն կամ հալածանք ըլլայ խօսքին համար,
18 շուտ մը կը գայթակղին։ Ու փուշերուն մէջ ցան-
19 ուածները անոնք են՝ որ երբ խօսքը կը լսեն, Աշ-
խարհիս զբաղմունքները ու հարստութեան խա-
բէութիւնները, և ուրիշ բաներուն ցանկութիւն-
ները մէջ մտնելով՝ խօսքը կը խեղդեն, ու կ'ըլլայ
20 անպտուղ։ Ու աղէկ հողի մէջ ցանուածները ա-
նոնք են, որ խօսքը կը լսեն և կ'ընդունին, ու
պտուղ կու տան՝ մէկուն տեղը երեսուն, և մէկուն
տեղը վաթսուն, ու մէկուն տեղը հարիւր։
21 Ու ըսաւ անոնց, Միթէ ճրագը գրուանին կամ
մահիճին տա՞կը դրուելու համար կու գայ· չէ՞ որ
22 աշտանակին վրայ դրուելու համար։ Ինչու որ ծա-
ծուկ բան մը չկայ, որ պիտի չյայտնուի· և գաղ-
23 տուկ բան մը չէ եղած՝ որ երևան պիտի չելլէ։ Թէ

որ մէկը լսելու ականջ ունի՝ թող լսէ։
24 Ու ըսաւ անոնց, Նայեցէք ինչ կը լսէք. ինչ
չափով որ դուք կը չափէք, նոյն չափովը պիտի
չափուի ձեզի. և ձեզի՝ որ կը լսէք, պիտի աւել-
25 նայ։ Վասն զի ով որ ունի, անոր պիտի տրուի. և
ով որ չունի, ունեցածն ալ անկէ պիտի առնուի։
26 Ու կ'ըսէր, Աստուծոյ թագաւորութիւնը ա-
սանկ է, որպէս թէ մէկ մարդ մը հողին մէջը
27 սերմ ձգէ, Ու քնանայ և արթննայ գիշեր ու
ցորեկ, և սերմը բուսնի ու մեծնայ, — ինքը չգի-
28 տեր թէ ինչպէս։ Քանզի հողը ինքնիրմէն պտուղ
կուտայ, առաջ խոտը, ետքը հասկը, անկէ ետև
29 լեցուն ցորենը հասկին մէջ։ Ու երբոր պտուղը
հասուննայ, շուտ մը մանգաղը կը ղրկէ, ինչու որ
հունձքի ատենը հասած է։
30 Ու կ'ըսէր, Աստուծոյ թագաւորութիւնը ի՞նչ
բանի նմանցընենք, կամ ի՞նչ առակով անիկա
31 բացատրենք։ Մանանեխի հատին նման է, որ հո-
ղի մէջ ցանուած ատենը՝ երկրի վրայ եղած սեր-
32 մերուն ամենէն պզտիկն է. Ու երբոր ցանուի՝
կը բուսնի և ամէն խոտեղէններէն ալ մեծ կ'ըլ-
լայ, ու մեծ ճիւղեր կ'արձակէ, անանկ որ երկ-
նից թռչուններուն հերիք կ'ըլլայ անոր շուքին
տակը բնակելու։
33 Ու ասանկ շատ առակներով կը խօսէր անոնց
34 հետ խօսքը՝ որչափ որ կրնային մտիկ ընել։ Ու
առանց առակի բան մը չէր խօսեր անոնց, բայց
առանձին իր աշակերտներուն կը մեկնէր ամէնը։
35 Ու նոյն օրը երբոր իրիկուն կ'ըլլար՝ ըսաւ ա-
36 նոնց, Եկէք ծովուն անդիի կողմը անցնինք։ Անոնք
ալ ժողովուրդը թող տալով՝ առին զինքը ինչպէս
որ էր նաւուն մէջ. և ուրիշ նաւակներ ալ կային
37 անոր հետ։ Ու հովի մեծ փոթորիկ մը եղաւ, և
ալիքները նաւուն վրայ կու գային, անանկ որ
38 գրեթէ կը լեցուէր։ Ու ինքը նաւուն ետևի կող-

մը բարձի վրայ կը քնանար. արթնցուցին զա-
նիկա և կ'ըսէին անոր, Վարդապետ, հոգ չէ՞
39 որ կը կորսուինք։ Ու ելլելով՝ սաստեց հովին,
և ծովուն ըսաւ, Դադարէ՛ լուռ կեցիր. ու հո-
40 վը դադարեցաւ, և մեծ խաղաղութիւն եղաւ։ Ու
ըսաւ անոնց, ինչո՞ւ ասանկ վախկոտ էք, ի՞նչ-
պէս կ'ըլլայ որ հաւատք չունիք։ Ու անոնք խիստ
վախցան, ու կ'ըսէին իրարու, Արդեօք ո՞վ է ա-
սիկա՝ որ հովը ու ծովը ասոր կը հնազանդին։

ԳԼ. Ե

1 Ու եկան ծովուն անդիի կողմը *Գադարացւոց եր-
2 կիրը։ Ու երբոր ինքը նաւէն ելաւ, գերեզման-
ներէն ելած մարդ մը պատահեցաւ իրեն, որ
3 պիղծ ոգի ունէր։ Որ անոր բնակած տեղն ալ
գերեզմաններուն մէջն էր, ու շղթայով ալ մէկը
4 չէր կրնար զանիկա կապել. Որովհետև շատ ան-
գամ ոտնակապերով և շղթաներով կապուեր
էր, բայց անիկա շղթաները կտրեր ու ոտնակա-
պերը կոտրտեր էր, և մէկը չէր կրնար զանիկա
5 նուաճել։ Ու միշտ գիշեր ու ցորեկ †գերեզման-
ներուն մէջ ու լեռներուն մէջ˝ կը կանչուռ-
տէր, ու իր մարմինը քարերով կը ճեղքրտէր։
6 Երբոր հեռուանց Յիսուսը տեսաւ, վազեց ու
7 երկրպագութիւն ըրաւ անոր, Ու մեծ ձայնով մը
աղաղակեց ու ըսաւ, Դուն իմ հետս ի՞նչ բան
ունիս, Յիսուս՝ Որդի Աստուծոյ բարձրելոյ, քեզ
8 Աստուծով կ'երդմնցընեմ, զիս մի տանջեր։ (Քան-
9 զի կ'ըսէր անոր, Պիղծ ոգի, ելիր այս մարդէն։) Ու
անոր հարցուց թէ Անունդ ի՞նչ է. ու ըսաւ ա-
նոր, Իմ անունս Լէգէոն է, ինչու որ մենք շատ-

---

*Ոմանք Գերգեսացւոց

†Ոմանք լեռներուն մէջ ու գերեզմաններուն մէջ

10 ուոր ենք։ Եւ շատ *կ'աղաչէին անոր՝ որ զիրենք
11 այն երկրէն դուրս չհանէ։ Եւ հոն լերանը մօտ
խոզերու մեծ երամակ մը կար՝ որ կ'արածուէին։
12 Ու բոլոր դեւերը աղաչեցին անոր ու ըսին, Մեզ
13 խոզերուն ղրկէ, որ անոնց մէջը մտնենք։ Եւ Յի-
սուս շուտ մը հրաման տուաւ անոնց. ու երբոր
պիղծ ոգիները ելան՝ խոզերուն մէջը մտան, եւ
երամակը գահավէժ տեղէն ծովը վազեց, (երկու
հազարի չափ կային,) ու ծովուն մէջը խեղդուե-
14 ցան։ Եւ խոզարածները փախան, ու պատմեցին
քաղաքը ու ագարակները. եւ մարդիկ ելան տես-
15 նելու՝ թէ ինչ բան է որ եղաւ։ Ու եկան Յիսու-
սին, եւ տեսան դիւահարը՝ որ լէգէոն ունէր, որ
հագուած ու խելքը վրան եկած նստեր էր, ու
16 վախցան։ Եւ անոնք որ տեսեր էին, պատմեցին
անոնց թէ ինչ եղաւ դիւահարին, նաեւ խոզե-
17 րուն վրայով։ Եւ սկսան աղաչել անոր, որ ի-
18 րենց սահմաններէն երթայ։ Ու երբոր անիկա
նաւը մտաւ, դիւահարը կ'աղաչէր անոր՝ որ հետը
19 ըլլայ։ Եւ Յիսուս թող չտուաւ անոր, հապա ը-
սաւ անոր, Գնա քու տունդ քու ընտանեացդ
ու պատմէ անոնց ինչ որ Տէրը քեզի ըրաւ, եւ
20 ողորմեցաւ քեզի։ Ան ալ գնաց, եւ սկսաւ Դե-
կապոլիսի մէջ քարոզել ինչ որ Յիսուս իրեն
ըրաւ. եւ ամէնը կը զարմանային։
21 Ու երբոր Յիսուս նաւով նորէն ծովուն անդիի
կողմը անցաւ, շատ բազմութիւն ժողվուեցաւ
22 անոր քովը, եւ ինքը ծովեզերքն էր։ Եւ ահա
ժողովրդապետներուն մէկը կու գար, որուն ա-
նունը Յայրոս էր, ու երբոր տեսաւ զանիկա՝
23 անոր ոտքը ինկաւ. Եւ շատ կ'աղաչէր անոր ու
կ'ըսէր թէ Իմ աղջիկս մեռնելու մօտ է, գաս՝
անոր վրայ ձեռք դնես, որպէս զի ապրի, ու

*Կամ կ'աղաչէր

24 պիտի ապրի։ Եւ գնաց անոր հետ, ու շատ բազ-
մութիւն իր ետեւէն կ'երթային ու կը նեղէին
զինքը։
25 Եւ կնիկ մը՝ որ տասնըերկու տարի արիւնի տե-
26 ղատուութեան մէջ էր, Ու շատ նեղութիւն կը-
րած էր շատ բժիշկներէն, եւ իր բոլոր ունեցածը
վատներ էր, ու օգուտ մը չէր գտեր, հապա ևս
27 առաւել գէշցեր էր, Երբոր Յիսուսի վրայով
լսեց, ետեւէն եկաւ բազմութեանը մէջ, ու անոր
28 հանդերձին դպաւ. Քանզի կ'ըսէր, Թէ որ միայն
անոր հանդերձներուն դպչիմ, պիտի բժշկուիմ։
29 Եւ շուտ մը իր արիւնին աղբիւրը ցամքեցաւ, ու
իր մարմնին մէջ իմացաւ թէ տանջանքէն բը-
30 ժշկուեցաւ։ Եւ Յիսուս շուտ մը գիտնալով իր
անձին մէջ այն զօրութիւնը որ իրմէն ելաւ, դար-
ձաւ բազմութեանը մէջ ու ըսաւ, Ո՞վ դպաւ իմ
31 հանդերձներուս։ Եւ իր աշակերտները ըսին ի-
րեն, Կը տեսնես որ բազմութիւնը քեզ կը նեղէ,
32 ու կ'ըսե՞ս թէ Ո՞վ ինծի դպաւ։ Եւ իր բոլոր-
33 տիքը կը նայէր որ աս բանը ընողը տեսնէ։ Ու
կնիկը վախցաւ ու դողաց, ինչու որ գիտէր թէ
իրեն ինչ եղաւ, եւ եկաւ՝ անոր առջեւը ինկաւ,
34 ու բոլոր բաները շիտկէ շիտակ զրուցեց անոր։ Եւ
Յիսուս ըսաւ անոր, Աղջիկ, քու հաւատքդ քեզ
բժշկեց. գնա խաղաղութեամբ, ու բժշկուած ե-
ղիր քու տանջանքէդ։
35 Երբոր ինքը դեռ կը խօսէր, ժողովրդապետին
տունէն «մարդիկ» եկան ու ըսին թէ Աղջիկդ մեռաւ,
36 ալ ինչո՞ւ վարդապետը կը յոգնեցընես։ Իսկ Յի-
սուս ըսուած խօսքը լսածին պէս՝ ժողովրդա-
պետին ըսաւ, Մի վախնար, միայն թէ հաւատա։
37 Եւ մէկը թող չտուաւ իր հետը երթալու, բայց
միայն Պետրոսը ու Յակոբոսը և Յակոբոսին եղ-
38 բայրը Յովհաննէսը։ Ու ժողովրդապետին տունը
գալով՝ տեսաւ աղմուկ և սաստիկ լացողներ ու

39 աղաղակողներ։ Եւ ներս մտնելով՝ ըսաւ անոնց,
Ինչո՞ւ խռովեր էք ու կու լաք. մանուկը մեռած
40 չէ, հապա կը քնանայ։ Եւ ծաղր կ'ընէին անիկա.
բայց ինքը ամէնը դուրս հանելով՝ իր հետը ա-
ռաւ մանուկին հայրը ու մայրը՝ և անոնք որ իր
հետն էին, ու մտաւ հոն ուր որ մանուկը պառ-
41 կած էր։ Եւ մանուկին ձեռքէն բռնելով՝ ըսաւ
անոր, Տալիթա, կումի. որ կը թարգմանուի, Աղ-
42 ջիկ, (քեզի կ'ըսեմ,) ելիր։ Եւ իսկոյն աղջիկը
ոտք ելաւ ու կը քալէր, ինչու որ տասներկու
տարեկան էր։ ու մեծ ապշութեամբ ապշեցան։
43 Եւ սաստիկ պատուէր տուաւ անոնց՝ որ մէկը
չգիտնայ աս բանը, ու ըսաւ որ անոր ուտելիք
տան։

ԳԼ. Զ

1 Եւ անկէ ելլելով եկաւ իր երկիրը, ու անոր ա-
2 շակերտները իր ետևէն գացին։ Եւ շաբաթ օրը
հասնելուն՝ սկսաւ ժողովարանին մէջ սորվեցը-
նել. ու շատերը լսելով կը զարմանային ու կ'ը-
սէին, Ասիկա ուսկի՞ց ունի աս բաները, կամ աս
ի՞նչ իմաստութիւն է ասոր տրուած, որ աստնկ
3 հրաշքներ կ'ըլլան ասոր ձեռքովը։ Ասիկա հիւսը
չէ՞, Մարիամին որդին, և Յակոբոսին ու Յովսե-
սին և Յուդային ու Սիմոնին եղբայրը. ու ասոր
քոյրերը հոս մեր քովը չե՞ն. և անոր վրայով կը
4 գայթակղէին։ Բայց Յիսուս ըսաւ անոնց, Մար-
գարէ մը անպատիւ չէ՝ բայց միայն իր երկրին
5 մէջ ու իր ազգականներուն և իր տանը մէջ։ Ու
չէր կրնար հոն մէկ հրաշք մըն ալ ընել, միայն
թէ քանի մը հիւանդներու վրայ ձեռք դրաւ ու
6 բժշկեց զանոնք։ Եւ անոնց անհաւատութեանը
վրայ կը զարմանար. ու շրջակայ գեղերը պտը-
տելով՝ կը սորվեցընէր։
7 Եւ իրեն կանչեց տասներկուքը, ու սկսաւ

երկու երկու ղրկել զանոնք, ու անոնց իշխա-
8 նութիւն տուաւ պիղծ ոգիներուն վրայ։ Եւ
պատուիրեց անոնց՝ որ ճամբու համար բան մը
չառնեն, բայց միայն գաւազան մը. ոչ պարկ, ոչ
9 հաց, ոչ ստակ՝ գօտիներնուն մէջ. Հապա հողա-
թափ հագնին. և կրկին հանդերձ մի հագնիք՝ ը-
10 սաւ։ Ու ըսաւ անոնց, Ո՛ր տուն որ մտնէք՝ հոն
11 կեցէք մինչև որ անկէ ելլէք։ Եւ անոնք որ ձեզ
չեն ընդունիր ու ձեզի մտիկ չեն ըներ, երբոր
անկէ կ'ելլէք, ոտքերնուդ տակի փոշին թօթվե-
ցէք՝ անոնց վկայութիւն ըլլալու համար։ *Ճշմա-
րիտ կ'ըսեմ ձեզի, Սոդոմացւոց ու Գոմորացւոց
աւելի դիւրին պիտի ըլլայ դատաստանին օրը՝
քան թէ ան քաղաքին։"
12 Եւ անոնք ելլելով՝ կը քարոզէին որ մարդիկ ա-
13 պաշխարեն։ Եւ շատ դևեր կը հանէին, ու շատ
հիւանդներ եղով կ'օծէին ու կը բժշկէին զանոնք։
14 Եւ Հերովդէս թագաւորը լսեց, (ինչու որ ա-
նոր անունը յայտնի եղաւ,) ու կ'ըսէր թէ Յով-
հաննէս մկրտիչը մեռելներէն յարութիւն առեր
15 է, ու անոր համար հրաշքներ կ'ըլլան անով։ Ու-
րիշները կ'ըսէին թէ Եղիան է. ուրիշներն ալ
կ'ըսէին թէ Մարգարէ մըն է, կամ մարգարէից
16 մէկուն պէս։ Բայց երբոր Հերովդէս լսեց՝ ըսաւ,
Ասիկա Յովհաննէսն է՝ որուն գլուխը ես կտրեցի,
մեռելներէն յարութիւն առեր է։
17 Քանզի Հերովդէս ինքը մարդ ղրկեց՝ Յովհան-
նէսը բռնեց, ու կապեց բանտը դրաւ՝ իր եղբօրը
Փիլիպպոսին կնկանը Հերովդիային համար, ինչու
18 որ իրեն կնիկ առեր էր զանիկա։ Վասն զի Յով-
հաննէս Հերովդէսին կ'ըսէր, Քեզի օրինաւոր չէ
19 քու եղբօրդ կնիկը ունենալ։ Եւ Հերովդիա ոխ
ունէր անոր դէմ, ու կ'ուզէր անիկա մեռցընել

*Ոմանք չունին

20 ու չէր կրնար. Ինչու որ Հերովդէս կը վախնար
Յովհաննէսէն, գիտնալով թէ անիկա արդար և
սուրբ մարդ մըն է. և անոր բերանը կը նայէր,
ու անկէ լսելով՝ շատ բան կ՚ընէր, և քաղցրու-
21 թեամբ անոր մտիկ կ՚ընէր։ Ու երբոր դիպուկ օր
մը եղաւ, որ Հերովդէս իր ծննդեան օրը ընթ-
րիք կ՚ընէր իր մեծամեծներուն և հազարապետ-
22 ներուն ու Գալիլեայի երեւելիներուն, Ու Հերով-
դիային աղջիկը [illegible] ներս մտնելով խա-
ղաց, ու հաճելի եղաւ Հերովդէսին և իր հետը
նստողներուն. Թագաւորը ըսաւ աղջկանը, Խնդրէ
ինծմէ ինչ որ կ՚ուզես, ու պիտի տամ քեզի։
23 Ու անոր երդում ըրաւ ըսելով, Ինչ որ դուն
ինծմէ խնդրես՝ պիտի տամ քեզի՝ մինչև թագա-
24 ւորութեանս կէսը։ Ու անիկա դուրս ելլելով՝ իր
մօրը ըսաւ, Ի՞նչ ուզեմ. ան ալ ըսաւ, Յովհան-
25 նէս մկրտչին գլուխը։ Ու շուտ մը արտորալով
թագաւորին քովը մտաւ ու խնդրեց՝ ըսելով,
Կ՚ուզեմ որ շուտով սկուտեղի մը վրայ Յովհան-
26 նէս մկրտչին գլուխը տաս ինծի։ Ու թագաւորը
խիստ տրտմեցաւ, բայց երդումներուն համար
ու իր հետը նստողներուն համար չուզեց որ ա-
27 նոր խնդիրքը մերժէ։ Ու թագաւորը իսկոյն դա-
հիճ խրկեց, ու հրաման ըրաւ անոր գլուխը բե-
րելու. ան ալ գնաց բանտին մէջ գլխատեց զա-
28 նիկա, Ու սկուտեղով մը բերաւ անոր գլուխը ու
տուաւ աղջկանը, և աղջիկը զանիկա իր մօրը
29 տուաւ։ Ու անոր աշակերտները լսելով՝ եկան
անոր մարմինը վերցուցին ու գերեզմանի մէջ
դրին։

30 Ու առաքեալները Յիսուսի քովը ժողվուեցան,
ու պատմեցին անոր ամէն ինչ որ ըրին և ինչ որ
31 սորվեցուցին։ Ու անիկա ըսաւ անոնց, Եկէք
դուք առանձին անապատ տեղ մը՝ և քիչ մը
հանգչեցէք. քանզի շատերը կային որ կու գային

ու կ՚երթային. և հոգ ուտելու ալ ժամանակ
32 չէին ունենար։ Ու նաւով անապատ տեղ մը գա-
33 ցին առանձին։ Ու ժողովուրդները տեսան զա-
նոնք որ կ՚երթային, և շատերը զանիկա ճանչ-
ցան, ու ոտքով բոլոր քաղաքներէն հոն կը վա-
զէին, և անոնցմէ առաջ հասնելով՝ անոր քովը
34 ժողվուեցան։ Ու Յիսուս երբոր դուրս ելաւ, շատ
ժողովուրդ տեսնելով խղճաց անոնց վրայ, ինչու
որ հովիւ չունեցող ոչխարներու պէս էին. և
սկսաւ շատ բաներ սորվեցնել անոնց։

35 Ու երբոր ժամանակը շատ ուշացաւ, իր աշա-
կերտները իրեն եկան ու ըսին, Հոս անապատ
36 տեղ մըն է, ու ժամանակը ուշացած է. Արձակէ
ժողովուրդները որ երթան բոլորտիքի ագարակ-
ները ու գեղերը ու իրենց հաց գնեն, ինչու որ
37 ուտելու բան մը չունին։ Բայց անիկա պատաս-
խան տուաւ ու ըսաւ անոնց, Դուք տուէք ա-
նոնց որ ուտեն։ Ու ըսին իրեն, Երթանք երկու
հարիւր դահեկանի հաց գնե՞նք՝ և տանք անոնց
38 որ ուտեն։ Ըսաւ անոնց, Քանի՞ նկանակ ունիք,
գացէք նայեցէք. ու երբոր գիտցան՝ ըսին, Հինգ,
39 ու երկու ձուկ։ Ու հրաման ըրաւ անոնց՝ որ ա-
մէնը կանանչ խոտին վրայ գունդ գունդ նստե-
40 ցընեն։ Ու դաս դաս նստան՝ հարիւրական ու
41 յիսունական։ Ու հինգ նկանակը ու երկու ձուկը
առաւ ու դէպ ՚ի երկինքը նայելով՝ օրհնեց, և
մանրեց նկանակները ու տուաւ իր աշակերտնե-
րուն, որ անոնց առջևը դնեն, ու երկու ձուկը
42 ամենուն ալ բաժնեց։ Ու ամէնքը կերան ու
43 կշտացան. Ու տասուերկու կողով լեցուն՝ կտո-
44 րուանքները վերցուցին, և ձուկերէն ալ։ Ու ան
հացերէն ուտողները հինգ հազարի չափ էրիկ
մարդիկ էին։

45 Ու շուտ մը իր աշակերտները արտորցուց որ
նաւը մտնեն, և իրմէ առաջ միւս կողմը Բեթսա-

յինքը անցնին, մինչև որ ինքը ժողովուրդը ար-
46 ձակէ։ Եւ անոնցմէ զատուելով՝ լեռը ելաւ ա-
47 ղօթք ընելու։ Ու երբոր իրիկուն եղաւ՝ նաւը
ծովուն մէջտեղն էր, ու ինքը մինակ ցամաքն
48 էր։ Եւ տեսաւ անոնք որ կը տագնապէին հո֊ն
թի քաշելու ատեննին, ինչու որ հովը իրենց դէմ
էր. և գիշերուան չորրորդ պահուն աշակերտները
ծովուն վրայ քալելով կու գայ անոնց, ու կ'ու-
49 զէր անոնցմէ անցնիլ։ Անոնք երբոր տեսան որ
ծովուն վրայ կը քալէր, կարծեցին թէ աչքի ե-
50 րևոյթ բան մըն է, ու կանչուըռտեցին. Քանզի
ամէնքն ալ զանիկա տեսան ու խռովեցան. և
ինքը շուտ մը խօսեցաւ անոնց հետ ու ըսաւ ա-
51 նոնց, Քաջ եղէք՝ ես եմ, մի վախնաք։ Եւ նաւը
ելաւ անոնց քովը, ու հովը դադարեցաւ. և ա-
նոնք մաքերնուն մէջ չափէ դուրս ապշած էին
52 ու կը զարմանային։ Վասն զի հացին վրայ եղած
հրաշքը չիմացան, ինչու որ սիրտերնին թմրած էր։
53 Ու միւս կողմը անցնելով՝ Գեննեսարեթի եր-
54 կիրը հասան և նաւը տեղաւորեցին։ Ու երբոր
նաւէն ելան, ան տեղի մարդիկը իսկոյն ճանչցան
55 զանիկա. Եւ աղդին անդին վազելով բոլոր շրջա-
կայ տեղուանքը, սկսան մահիճներով հիւանդ-
56 ները բերել՝ ուր որ կը լսէին թէ հոն է։ Եւ ուր
որ կը մտնէր՝ գեղերը կամ քաղաքները կամ
ագարակները, հրապարակներուն մէջ կը դնէին
հիւանդները, ու կ'աղաչէին իրեն որ գոնէ իր
հանդերձին քղանցքին դպչին. և որոնք որ դը-
պան՝ բժշկուեցան։

Գլ. Է

1 Եւ իր քովը ժողվուեցան փարիսեցիները ու դը-
պիրներէն ոմանք՝ որ Երուսաղեմէն եկած էին։

2 Ու երբոր տեսան որ անոր աշակերտներէն ո-
մանք պիղծ՝ այսինքն անլուայ ձեռքերով հաց
3 կ'ուտէին, մեղադրեցին. Ինչու որ փարիսեցի-
ները ու բոլոր Հրէաները մինչև որ աղէկ մը
ձեռքերնին չլուան՝ հաց չեն ուտեր, քանզի ծե-
4 րերուն աւանդութիւնը կը բռնեն. Եւ շուկայէն
եկած ատեննին թէ որ չլուացուին՝ չեն ուտեր. և
ուրիշ շատ բաներ կայ որ ընդունած են ու կը
բռնեն, այսինքն գաւաթներու և փարչերու ու
պղնձէ ամաններու և անկողիններու լուացմունք-
5 ները։ Անատենը փարիսեցիները ու դպիրները
հարցուցին անոր, Թէ ինչո՞ւ քու աշակերտներդ
ծերերուն աւանդութեանը պէս չեն երթար, հա-
6 պա անլուայ ձեռքերով հաց կ'ուտեն։ Ան ալ
պատասխան տուաւ ու ըսաւ անոնց, Աղէկ մար-
գարէութիւն ըրաւ Եսայի ձեզի կեղծաւորներուդ
համար, ինչպէս որ գրուած է, Այս ժողովուրդը
միայն շրթունքներովը զիս կը պատուէ, բայց ի-
7 րենց սիրտը հեռացած զատուած է ինծմէ. Ու
պարապ տեղը զիս կը պաշտեն, մարդոց պատ-
ուիրած բաները իբրեւ վարդապետութիւն սոր-
8 վեցնելով. Վասն զի Աստուծոյ պատուիրանքը
թող տալով՝ մարդոց աւանդութիւնը կը բռնէք,
ինչպէս փարչերու և գաւաթներու լուացմունք-
ները, և ասոնց նման շատ ուրիշ բաներ կ'ընէք։
9 Ու ըսաւ անոնց, Աղէկ կ'անարգէք Աստուծոյ
պատուիրանքը, որ ձեր աւանդութիւնը պահէք։
10 Քանզի Մովսէս ըսաւ, Քու հայրդ ու մայրդ
պատուէ. և Ով որ իր հայրը կամ մայրը անիծէ՝
11 մահով թող մեռնի։ Բայց դուք կ'ըսէք, Թէ որ
մէկը իր հօրը կամ մօրը ըսէ, Ան բանը որ ինծմէ
պիտի շահիս, Աստուծոյ տրուած կորբան է, (որ ը-
12 սել է ընծայ,) ազատ կ'ըլլայ անիկա. Եւ ալ թող
չէք տար անոր բան մը ընել իր հօրը կամ իր
13 մօրը. Ու Աստուծոյ խօսքը կը խափանէք ձեր

աւանդութիւնովը որ կ'աւանդէք. և ասոր նման
շատ ուրիշ բաներ կ'ընէք։
14 Եւ բոլոր ժողովուրդը իրեն կանչելով՝ ըսաւ ա-
15 նոնց, Լսեցէք ինծի ամէնքդ ու հասկցէք. Բան
մը չկայ որ դուրսէն մարդուն ներսը մտնէ, ու
կարող ըլլայ զանիկա պղծելու, հապա ան բաները
որ անկէ կ'ելլեն, անոնք են որ մարդը կը պղ-
16 ծեն։ Ով որ լսելու ականջ ունի՝ թող լսէ։
17 Ու երբոր ան բազմութենէն զատուելով տուն
մտաւ, իր աշակերտները հարցուցին իրեն ան ա-
18 ռակին համար։ Ու ըսաւ անոնց, Դո՞ւք ալ ա-
տանկ անմիտ էք. չէ՞ք հասկնար թէ ամէն ինչ
որ դուրսէն մարդուն ներսի դին կը մտնէ, չկըր-
19 նար զանիկա պղծել. վասն զի չէ թէ անոր սըր-
տին մէջը կը մտնէ, հապա փորը, և արտաքնոցը
20 կ'ելլէ, ու բոլոր կերածները կը մաքրէ։ Եւ կ'ը-
սէր թէ ինչ որ կ'ելլէ մարդուն ներսէն, անիկա
21 կը պղծէ մարդը. ինչու որ ներսէն մարդոց սըր-
տէն կ'ելլեն չար խորհուրդները, շնութիւններ,
22 պոռնկութիւններ, սպանութիւններ, Գողու-
թիւններ, ագահութիւններ, չարութիւններ, նեն-
գութիւն, գիճութիւն, չար աչք, հայհոյութիւն,
23 ամբարտաւանութիւն, անզգամութիւն։ Աս բո-
լոր չար բաները ներսէն կ'ելլեն, ու կը պղծեն
մարդը։
24 Եւ անկէ ելլելով Տիւրոսի ու Սիդոնի սահման-
ները գնաց, և տուն մը մտնելով չէր ուզեր որ
25 մէկուն յայտնուի, բայց չկրցաւ ծածկուիլ. Քան-
զի կնիկ մը՝ որուն աղջիկը պիղծ ոգի ունէր [illegible]
[illegible], լսեց անոր վրայով, ու եկաւ՝ անոր
26 ոտքը ինկաւ։ Եւ ան կնիկը *հեթանոս էր՝ ազ-
գով Փիւնիկ Ասորի, ու կ'աղաչէր անոր՝ որ դեւը
27 իր աղջիկէն հանէ։ Եւ Յիսուս ըսաւ անոր, Թող

*Յուն. Յոյն

տուր որ առաջ տղաքը կշտանան, քանզի աղէկ
28 չէ տղոց հացը առնել ու շուներուն ձգել։ Անի-
կա պատասխան տուաւ ու ըսաւ անոր, Այո,
Տէր, ինչու որ շուներն ալ սեղանին տակը տղոցը
29 փշրանքներէն կը կերակրուին։ Եւ ըսաւ անոր,
Աս խօսքիդ համար գնա, քու աղջիկէդ դեւը ե-
30 լաւ։ Եւ [illegible] իր տունը երթալով՝ գտաւ որ դեւը
ելած՝ ու աղջիկը անկողինին վրայ պառկած էր։
31 Եւ նորէն Տիւրոսի ու Սիդոնի սահմաններէն
ելլելով՝ եկաւ Գալիլեայի ծովեզերքը Դեկապո-
32 լիսի սահմաններուն մէջէն։ Եւ մէկը բերին անոր
առջին՝ խուլ ու դժուարախօս, ու կ'աղաչէին
33 որ անոր վրայ ձեռք դնէ։ Եւ ժողովուրդէն մէկ-
դի առնելով զանիկա, իր մատները անոր ականջ-
ներուն մէջը խօթեց ու թուքաւ, և անոր լեզ-
34 ուին դպաւ, Ու երկինքը նայելով՝ հառաչեց ու
35 ըսաւ անոր, Եփփաթա, (որ ըսել է Բացուէ.) Եւ
իսկոյն անոր ականջները բացուեցան, ու անոր
լեզուին կապը քակուեցաւ, և շիտակ կը խօսէր։
36 Ու պատուիրեց անոնց որ մէկու մը չըսեն. և որ-
չափ ինքը կը պատուիրէր անոնց, անոնք՝ ալ
37 աւելի կը քարոզէին. Ու չափէ դուրս կը զար-
մանային և կ'ըսէին, Ամէն բաները աղէկ ըրաւ
ասիկա, որ խուլերուն լսել կու տայ և համրե-
րուն խօսիլ։

ԳԼ. Ը

1 Ան օրերը ժողովուրդը խիստ շատ ըլլալով, և
ուտելու բան մը չունենալով, Յիսուս իրեն կան-
2 չեց իր աշակերտները ու ըսաւ անոնց, Կը խղճամ
տա ժողովուրդին վրայ, ինչու որ հիմա երեք օր
է որ իմ քովս են, և բան մը չունին ուտելու.
3 Եւ թէ որ զանոնք անօթի խրկեմ իրենց տու-
ները, ճամբուն մէջ պիտի մարին, ինչու որ ա-

4 տոնցմէ․ ոմանք հեռու տեղէ եկած են։ Եւ իր
աշակերտները պատասխան տուին իրեն, Աս ա-
նապատիս մէջ ուսկի՞ց կրնայ մէկը հացով կշ-
5 տացընել ասոնք։ Եւ հարցուց անոնց, Քանի՞
6 նկանակ ունիք։ ու անոնք ըսին, Եօթը։ Եւ հր-
րաման ըրաւ ժողովուրդին՝ որ գետնին վրայ
նստին, ու առաւ եօթը նկանակը, գոհացաւ և
կտրեց ու տուաւ աշակերտներուն, որ ժողո-
7 վուրդին առջևը դնեն, և դրին։ Ու քանի մը
մանր ձուկեր ունէին, և օրհնեց ու ըսաւ որ ա-
8 նոնք ալ դնեն անոնց առջևը։ Եւ կերան ու կշ-
տացան, ու աւելցած կտորուանքները վերցու-
9 ցին եօթը զամբիւղ։ Եւ ուտողները չորս հազարի
10 չափ էին, ու արձակեց զանոնք։ Եւ շուտ մը
նաւը մտնելով աշակերտներուն հետ՝ եկաւ Դաղ-
մանութայի կողմերը։
11 Եւ փարիսեցիները ելլելով՝ սկսան անոր հետ
վիճաբանութիւն ընել, և զանիկա փորձելով՝
12 իրմէն նշան մը կ՚ուզէին երկինքէն։ Եւ անիկա
իր հոգիին մէջ հառաչելով ըսաւ, Ի՞նչ է որ աս
ազգը նշան կ՚ուզէ․ ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի որ աս
13 ազգին նշան պիտի չտրուի։ Ու զանոնք թող տա-
լով նորէն նաւը մտաւ, ու գնաց ծովուն միւս
կողմը։
14 Եւ հաց առնելու մոռցեր էին, ու նաւուն մէջ
15 իրենց հետը միայն մէկ նկանակ մը ունէին։ Եւ
կը պատուիրէր անոնց ու կ՚ըսէր, Նայեցէք և
զգուշացէք փարիսեցւոց խմորէն ու Հերովդէսին
16 խմորէն։ Եւ իրարու հետ կը խորհէին ու կ՚ըսէին
17 Թէ Հաց չունենալնուս համար է։ Իսկ Յիսուս ա-
նոնց խորհուրդը գիտնալով ըսաւ անոնց, Ին-
չո՞ւ կը խորհիք թէ հաց չունիք․ տակաւին չէ՞ք
հասկընար ու չէ՞ք իմանար․ դեռ սիրտերնիդ
18 թմրա՞ծ է։ Աչքեր ունիք ու չէ՞ք տեսներ, և ա-
կանջներ ունիք ու չէ՞ք լսեր, և չէ՞ք յիշեր։

19 Երբոր հինգ նկանակը հինգ հազարին կտրեցի,
քանի՞ կողով լեցուն կտորուանք վերցուցիք․ ը-
20 սին անոր, Տասուերկու։ Ու երբոր եօթը նկա-
նակը չորս հազարին կտրեցի, քանի՞ զամբիւղ լե-
ցուն կտորուանք վերցուցիք․ անոնք ալ ըսին,
21 Եօթը։ Ու ըսաւ անոնց, Հապա ինչո՞ւ չէք հաս-
կընար։
22 Եւ Բեթսայիդա եկաւ, ու անոր առջևը կոյր
մը բերին, ու կ՚աղաչէին իրեն որ դպչի անոր։
23 Եւ անիկա կոյրին ձեռքէն բռնելով գեղէն դուրս
հանեց, ու անոր աչքերուն թքնելով՝ ձեռքը
անոր վրայ դրաւ, ու կը հարցընէր անոր թէ
24 բան մը կը տեսնէ՞։ Ան ալ նայեցաւ ու կ՚ըսէր,
Մարդիկ կը տեսնեմ ծառերու պէս որ կը պը-
25 տըտին։ Նորէն ձեռքը անոր աչքերուն վրայ դը-
րաւ, ու անոր նայիլ տուաւ․ և ողջացաւ ու ա-
26 մէն բան համարձակ կը տեսնէր։ Ետքը զանիկա
իր տունը խրկելով՝ ըսաւ, Գեղը մի մտներ ու
գեղին մէջ մէկուն մի ըսեր։
27 Եւ Յիսուս իր աշակերտներուն հետ մէկտեղ
Փիլիպպոսի Կեսարիային գեղերը ելաւ, ու ճամ-
բուն մէջ կը հարցընէր իր աշակերտներուն ու
կ՚ըսէր անոնց, Ինծի համար ո՞վ կ՚ըսեն մարդիկ
28 թէ եմ։ Եւ անոնք պատասխան տուին ու ըսին,
Ոմանք՝ Յովհաննէս մկրտիչը, և ուրիշները՝ Եղի-
29 ան, ուրիշներն ալ՝ մարգարէներէն մէկը։ Եւ
ինքը ըսաւ անոնց, Հապա դուք ինծի համար ո՞վ
կ՚ըսէք թէ եմ․ պատասխան տուաւ Պետրոս ու
30 ըսաւ անոր, Դուն ես Քրիստոսը։ Եւ սաստիկ
պատուիրեց անոնց՝ որ իրեն համար մէկու մը
չըսեն։
31 Ու սկսաւ սորվեցընել անոնց, թէ Պէտք է որ
Որդին մարդոյ շատ չարչարանքներ կրէ, ու ե-
րէցներէն և քահանայապետներէն ու դպիրնե-
րէն մերժուի, ու սպաննուի, և երեք օրէն ետև

32 յարութիւն առնէ։ Ու այս խօսքը յայտնի խօսե-
ցաւ․ և Պետրոս մէկդի առաւ զանիկա, ու սկը-
33 սաւ յանդիմանել զանիկա։ Ու ինքը դարձաւ ու
իր աշակերտներուն նայելով՝ յանդիմանեց Պետ-
րոսը ու ըսաւ, Ետիս գնա, Սատանայ, ինչու որ
դուն Աստուծոյ բաները չես մտածեր, հապա
մարդոց բաները։
34 Ու ժողովուրդը իր աշակերտներուն հետ մէկ-
տեղ իրեն կանչելով՝ ըսաւ անոնց, Ով որ կ'ու-
զէ իմ ետևէս գալ, թող իր անձը ուրանայ, և
35 իր խաչը վերցընէ, ու իմ ետևէս գայ։ Վասն զի
ով որ կ'ուզէ իր անձը ապրեցընել, պիտի կոր-
սնցընէ զանիկա․ և ով որ ինծի ու աւետարա-
նին համար իր անձը կորսնցընէ, պիտի ապրե-
36 ցընէ զանիկա։ Քանզի ի՞նչ օգուտ է մարդուն՝
որ բոլոր աշխարհը վաստըկի, և իր անձը կոր-
37 սնցընէ․ կամ իր անձին համար ի՞նչ ազատչէք
38 պիտի տայ մարդ։ Վասն զի ով որ զիս ու իմ
խօսքերս [illegible] ամօթ սեպէ այս շնացող ու
մեղաւոր ազգին մէջ, Որդին մարդոյ ալ զանիկա
[illegible] ամօթ պիտի սեպէ՝ երբոր գայ իր Հօրը
39 փառքովը սուրբ հրեշտակներուն հետ։ Ու ըսաւ
անոնց, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ հոս ներկայ
եղողներէն մէկ քանիները կան՝ որոնք մահուան
համը պիտի չառնեն, մինչև որ տեսնեն Աստու-
ծոյ թագաւորութիւնը զօրութիւնով եկած։

ԳԼ. Թ

1 Ու վեց օրէն ետև Յիսուս իր հետը առաւ Պետ-
րոսը ու Յակոբոսը և Յովհաննէսը, ու անոնք
մէկ բարձր լեռ մը հանեց առանձին, և անոնց
2 առջևը այլակերպեցաւ։ Ու իր հանդերձները ե-
ղան փայլուն խիստ ճերմակ, անանկ որ երկրի
վրայ թափիչ մը չկրնար այնպէս ճերմըկցընել։

3 Ու Եղիա Մովսէսին հետ երևցաւ անոնց, և Յի-
4 սուսի հետ կը խօսէին։ Ու Պետրոս պատասխան
տուաւ ու ըսաւ Յիսուսին, Ռաբբի, աղէկ է որ
հոս կենանք․ ու երեք խրճիթ շինենք, մէկը քե-
5 զի՝ և մէկը Մովսէսին՝ ու մէկը Եղիային։ Վասն
զի չէր գիտեր թէ ինչ խօսի, ինչու որ զարհու-
6 րեր էին։ Ու մէկ ամպ մը հովանի եղաւ անոնց
վրայ, ու ձայն մը եկաւ ամպէն՝ ըսելով, Ասիկա
7 է իմ սիրելի Որդիս, անոր մտիկ ըրէք։ Ու յան-
կարծ աստին անդին որ նայեցան՝ ալ ուրիշ մէկը
8 չտեսան, հապա մինակ Յիսուսը իրենց հետ։ Ու
երբոր լեռնէն վար կ'իջնէին, պատուիրեց անոնց
որ տեսածնին մէկու մը չպատմեն, բայց միայն
Որդին մարդոյ մեռելներէն յարութիւն առնե-
9 լէն ետև։ Ու անոնք այն խօսքը պահեցին, ու
մէջերնին հարցափորձ կ'ընէին թէ մեռելներէն
10 յարութիւն առնելը ի՞նչ է։ Ու իրեն հարցուցին
ու ըսին, Ան ի՞նչ է որ դպիրները կ'ըսեն թէ
11 Պէտք է որ առաջ Եղիան գայ։ Անիկա պատաս-
խան տուաւ ու ըսաւ անոնց, Յիրաւի առաջ Ե-
ղիան կու գայ, և ամէն բան կարգի կը դնէ․ և
թէ ինտոր գրուած է Որդւոյ մարդոյ համար, որ
շատ չարչարանքներ պիտի կրէ ու անարգուի։
12 Բայց ձեզի կ'ըսեմ որ Եղիան եկաւ ալ, և ինչ
որ ուզեցին՝ ըրին անոր, ինչպէս որ գրուած է
անոր համար։
13 Ու աշակերտներուն քովը գալով՝ տեսաւ շատ
ժողովուրդ անոնց բոլորտիքը՝ և դպիրները, որ
14 վիճաբանութիւն կ'ընէին անոնց հետ։ Ու շուտ
մը բոլոր ժողովուրդը երբոր տեսան անիկա՝
խիստ զարմացան, ու առաջ վազելով բարև կու-
15 տային անոր։ Ու հարցուց դպիրներուն թէ Ի՞նչ
16 վիճաբանութիւն կ'ընէք անոնց հետ։ Ու ժողո-
վուրդէն մէկը պատասխան տալով ըսաւ, Վար-
դապետ, իմ որդիս քեզի բերի, որ համր ոգի

17 ունի. Եւ ուր որ անոր հասնի՝ զանիկա գետինը
կը զարնէ, ան ալ կը փրփրի և իր ակռաները կը
կրճտէ ու կը ցամքի, և քու աշակերտներուդ ը-
18 սի որ զանիկա հանեն, ու չկրցան։ Պատասխան
տուաւ անոնց ու ըսաւ, Ով անհաւատ ազգ,
մինչև ե՞րբ ձեզի հետ պիտի ըլլամ, մինչև ե՞րբ
19 ձեզի պիտի համբերեմ. ինծի բերէք անիկա։ Եւ
զանիկա բերին իրեն. երբոր տղուն տեսաւ զանի-
կա, շուտ մը նոյն ոգին ցնցեց զանիկա, ու գե-
20 տինը ինկած կը թաւալէր ու կը փրփրէր։ Եւ
Յիսուս հարցուց անոր հօրը ու ըսաւ, Ո՞րչափ ա-
տեն է որ աս բանը ասոր եղաւ. ու անիկա ը-
21 սաւ, Տղայութենէն 'ի վեր. Եւ շատ անգամ կրա-
կի ու ջուրի մէջ կը նետէ զանիկա՝ որ կորսն-
ցընէ. բայց թէ որ կարողութիւն մը ունիս, օգնէ
22 մեզի՝ խղճալով մեր վրայ։ Եւ Յիսուս ըսաւ ա-
նոր, Թէ որ կարող ես հաւատալու, ամէն բան
23 կարելի է անոր որ կը հաւատայ. Եւ տղուն հայրը
շուտ մը աղաղակեց ու արցունքով ըսաւ, Կը
հաւատամ, Տէր, օգնէ իմ անհաւատութեանս։
24 Յիսուս երբոր տեսաւ որ ժողովուրդը վրան կը
դիզուի, սաստեց պիղծ ոգիին ու ըսաւ անոր,
Համր ու խուլ ոգի, կը հրամայեմ քեզի, ելիր
25 անկէ, ու մէյմըն ալ չմտնես անոր ներսը։ Եւ
կանչուըռտելով՝ սաստիկ ցնցեց զանիկա ու ե-
լաւ. և տղուն մեռելի պէս եղաւ, անանկ որ շա-
26 տերը ըսին թէ Մեռաւ։ Եւ Յիսուս անոր ձեռ-
քէն բռնելով վերցուց զանիկա. ան ալ կայնե-
27 ցաւ։ Ու երբոր ինքը տուն մտաւ, իր աշակերտ-
ները առանձին հարցուցին իրեն՝ ըսելով, Մենք
28 ինչո՞ւ չկրցանք հանել զանիկա։ Եւ ըսաւ անոնց,
Աս տեսակը կարելի չէ ուրիշ բանով մը ելլել,
բայց միայն աղօթքով ու ծոմապահութեամբ։
29 Եւ անկէ ելլելով՝ Գալիլեայի մէջէն կ'անցնէին,
30 ու չէր ուզեր որ մէկը գիտնայ. ինչու որ կը սոր-

վեցնէր իր աշակերտներուն ու կ'ըսէր անոնց թէ
Որդին մարդոյ պիտի մատնուի մարդոց ձեռքը,
և զանիկա պիտի սպաննեն. ու երբոր սպաննը-
31 ուի՝ երրորդ օրը յարութիւն պիտի առնէ։ Եւ
անոնք չէին հասկընար ան խօսքը, ու կը վախ-
նային իրեն հարցընելու։
32 Եւ եկաւ Կափառնայում, ու երբոր տուն մը-
տաւ՝ հարցուց անոնց, Ի՞նչ վիճաբանութիւն կ'ը-
33 նէիք ճամբան իրարու հետ։ Եւ անոնք լուռ կե-
ցան, ինչու որ ճամբուն մէջ իրարու հետ վիճա-
34 բանութիւն կ'ընէին թէ ո՛վ մեծ է։ Ու երբոր
նստաւ, կանչեց տասուերկուքը ու ըսաւ անոնց,
Թէ որ մէկը կ'ուզէ առաջին ըլլալ, ամենուն յե-
35 տինը պիտի ըլլայ և ամենուն սպասաւորը։ Ու
տղայ մը առաւ կայնեցուց անոնց մէջը, և իր
36 գիրկը առնելով զանիկա՝ ըսաւ անոնց, Ով որ
ասանկ տղոցմէն մէկը ընդունի իմ անունովս,
զիս կ'ընդունի. և ով որ զիս ընդունի, չէ թէ
37 զիս կ'ընդունի, հապա զիս ղրկողը։ Պատասխան
տուաւ անոր Յովհաննէս ու ըսաւ, Վարդապետ,
մէկը տեսանք որ քու անունովդ դեւեր կը
հանէր, ու մեր ետևէն չպտըտիր, և զանիկա
38 արգիլեցինք՝ մեր ետևէն չպտըտելուն համար։ Եւ
Յիսուս ըսաւ, Մի արգիլէք զանիկա, ինչու որ
մէկը չկայ որ իմ անունովս հրաշք գործէ, ու
39 կարենայ շուտ մը զիս հայհոյել. Քանզի ան որ
40 *մեզի հակառակ չէ, մեր" կողմէն է։ Վասն զի
ով որ ձեզի գաւաթ մը ջուր խմցընէ †իմ անու-
նովս" թէ դուք Քրիստոսինն էք, ճշմարիտ կ'ը-
սեմ ձեզի, Անիկա իր վարձքը պիտի չկորսընցը-
41 նէ։ Եւ ով որ գայթակղեցընէ աս պզտիկներէն
մէկը որ ինծի կը հաւատան, աւելի աղէկ էր ա-

---

*Ոմանք ձեզի հակառակ չէ, ձեր
†Ոմանք աս անունով

նոր՝ որ աղացքի քար մը իր վիզէն կախուէր, ու
42 ծովը ձգուէր։ Եւ թէ որ քու ձեռքդ քեզ կը
գայթակղեցնէ, կտրէ անիկա. աղէկ է քեզի
պակասաւոր մտնել կեանքը, քան թէ երկու
ձեռք ունենալ ու գեհեանը երթալ չմարելու
43 կրակին մէջը, Ուր որ անոնց որդը չմեռնիր ու
44 կրակը չմարիր։ Եւ թէ որ քու ոտքդ քեզ կը
գայթակղեցնէ, կտրէ անիկա. աղէկ է քեզի կաղ
մտնել կեանքը, քան թէ երկու ոտք ունենալ
45 ու գեհեանը ձգուիլ չմարելու կրակին մէջը, Ուր
46 որ անոնց որդը չմեռնիր ու կրակը չմարիր։ Եւ
թէ որ քու աչքդ քեզ կը գայթակղեցնէ, հանէ
անիկա. աղէկ է քեզի մէկ աչքով Աստուծոյ
թագաւորութիւնը մտնել, քան թէ երկու աչք
47 ունենալ ու կրակին գեհեանը ձգուիլ. Ուր որ
48 անոնց որդը չմեռնիր ու կրակը չմարիր։ Ինչու
որ ամէն մարդ կրակով պիտի աղուի, և ամէն
49 զոհ աղով պիտի աղուի։ Աղը աղէկ է, բայց թէ
որ աղը անհամնայ, ինչո՞վ պիտի համովցնէք.
ձեր անձին մէջ աղ ունեցէք, և իրարու հետ
խաղաղութիւն ըրէք։

ԳԼ. Ժ

1 Եւ անկէ ելլելով՝ Հրէաստանի սահմանները ե-
կաւ Յորդանանու անդիի կողմէն, ու նորէն ժո-
ղովուրդները անոր քովը կը ժողվուէին. և ինչ-
պէս որ սովորութիւն ունէր՝ դարձեալ կը սոր-
վեցնէր անոնց։
2 Ու փարիսեցիները քովը եկան, և զանիկա փոր-
ձելով կը հարցնէին անոր թէ Արժա՞ն է որ է-
3 րիկը իր կնիկը արձակէ։ Եւ անիկա պատասխան
տուաւ ու անոնց ըսաւ, Մովսէս ձեզի ի՞նչ պատ-
4 ուիրեց։ Եւ անոնք ըսին, Մովսէս հրաման տուաւ
5 արձակման գիր գրել ու արձակել։ Եւ Յիսուս

պատասխան տալով՝ անոնց ըսաւ, Ձեր սրտին
կարծրութեանը համար գրեց ձեզի այս պատ-
6 ուէրը։ Բայց ստեղծագործութեան սկիզբէն Աստ-
7 ուած անոնք արու և էգ ըրաւ, — ըսաւ —, Ասոր
համար մարդ իր հայրը ու մայրը պիտի ձգէ և իր
8 կնկանը պիտի յարի, Ու երկուքը մէկ մարմին
պիտի ըլլան. ուստի ալ երկուք չեն, հապա մէկ
9 մարմին։ Ուրեմն ան որ Աստուած միաւորեց,
10 մարդ թող չզատէ։ Եւ տունը իր աշակերտները
11 նորէն նոյն բանը հարցուցին իրեն։ Ու ըսաւ ա-
նոնց, Ով որ իր կնիկը արձակէ և ուրիշ մը առ-
12 նէ, անոր դէմ շնութիւն կ'ընէ։ Ու կնիկ մը թէ
որ իր էրիկէն զատուի և ուրիշ էրկան մը ըլլայ,
շնութիւն կ'ընէ։
13 Եւ մանր տղաք բերին իրեն, որ անոնց դպչի,
բայց աշակերտները կը յանդիմանէին բերողները։
14 Յիսուս երբոր տեսաւ՝ սրդողելով անոնց ըսաւ,
Թող տուէք այս մանր տղոցը որ ինծի գան, և
մի արգիլէք զանոնք, ինչու որ Աստուծոյ թագա-
15 ւորութիւնը ասանկներունն է։ Ճշմարիտ կ'ըսեմ
ձեզի, Ով որ Աստուծոյ թագաւորութիւնը պզտ-
իկ տղու մը պէս չընդունի, բնաւ պիտի չմտնէ
16 անոր մէջը։ Եւ անոնք գիրկը առաւ, վրանին
ձեռք դրաւ ու օրհնեց զանոնք։
17 Ու երբոր անիկա դուրս ելաւ ճամբուն մէջ,
ահա մէկ մարդ մը վազեց՝ ու անոր առջևը ծունկ
դնելով կը հարցնէր անոր — ըսէր, Բարի վար-
դապետ, ի՞նչ ընեմ որ յաւիտենական կեանքը
18 ժառանգեմ։ Եւ Յիսուս ըսաւ անոր, Ինչո՞ւ զիս
բարի կ'անուանես. մէկէն 'ի զատ բարի չկայ, որ
19 է Աստուած։ Պատուիրանքները գիտես. Շնու-
թիւն մի ըներ, Սպանութիւն մի ըներ, Գողու-
թիւն մի ըներ, Սուտ վկայութիւն մի ըներ, Զըր-
կանք մի ըներ, Քու հայրդ ու մայրդ պատուէ։
20 Անիկա պատասխան տուաւ ու ըսաւ անոր, Վար-

դապետ, ատոնք ամէնը մանկութենէս ի վեր
21 պահեր եմ։ Եւ Յիսուս անոր նայելով՝ սիրեց զա-
նիկա, ու ըսաւ անոր, Մէկ բան մը պակաս է
քեզի. գնա՛ ունեցածդ ծախէ և տուր աղքատ-
ներուն, ու երկինքը գանձ պիտի ունենաս, և
22 խաչը վերցուր ու եկուր իմ ետեւէս։ Եւ անիկա
աս խօսքին համար խոժոռելով՝ տրտմած գնաց,
23 ինչու որ շատ ստացուածք ունէր։ Եւ Յիսուս իր
բոլորտիքը նայելով՝ ըսաւ իր աշակերտներուն,
Որչափ դժուար է անոնց որ հարստութիւն ու-
24 նին Աստուծոյ թագաւորութիւնը մտնել։ Եւ ա-
շակերտները զարմացեր էին անոր խօսքերուն վը-
րայ. բայց Յիսուս նորէն պատասխան տալով՝ ա-
նոնց ըսաւ, Որդեակներ, ո՜րչափ դժուար է իրենց
հարստութեանը յուսացողներուն Աստուծոյ թա-
25 գաւորութիւնը մտնել։ Դիւրին է որ ուղտը ա-
սեղին ծակէն անցնի, քան թէ հարուստը Աս-
26 տուծոյ թագաւորութիւնը մտնէ։ Եւ անոնք
խիստ շատ կը զարմանային ու կ'ըսէին իրարու,
27 Ալ ո՞վ կրնայ փրկուիլ։ Եւ Յիսուս անոնց նա-
յելով ըսաւ, Ատիկա մարդոց կողմանէ անկարելի
է, բայց ոչ Աստուծոյ կողմանէ, քանզի Աստու-
28 ծոյ կողմանէ ամէն բան կարելի է։ Պետրոս սկը-
սաւ ըսել անոր, Ահա մենք ամէն բան թո-
29 ղուցինք և քու ետեւէդ եկանք։ Եւ Յիսուս պա-
տասխան տալով ըսաւ, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի,
Մէկը չկայ որ թողուց տուն, կամ եղբայրներ,
կամ քոյրեր, կամ հայր, կամ մայր, կամ կին,
կամ որդիներ, կամ արտեր՝ ինծի համար ու ա-
30 ւետարանին համար, Որ պիտի չառնէ հարիւրա-
պատիկ հիմա աս ատենն՝ տուներ, ու եղբայր-
ներ, և քոյրեր, ու մայրեր, և որդիներ, ու ար-
տեր՝ հալածանաց հետ, և գալու աշխարհին մէջ՝
31 յաւիտենական կեանքը։ Բայց շատ առաջիններ
պիտի ըլլան յետին, ու յետիններ՝ առաջին։

32 Եւ անոնք դէպ 'ի Երուսաղէմ կ'ելլէին ու-
ճամբուն մէջն էին. և Յիսուս անոնցմէ առաջ
կ'երթար, ու անոնք կը զարմանային, ու ետեւէն
երթալով՝ կը վախնային։ Եւ նորէն քովը առնե-
լով տասուերկուքը, սկսաւ ըսել անոնց ինչ բա-
33 ներ որ իրեն պիտի պատահէին. Ու ըսաւ, Ահա
Երուսաղէմ կ'ելլենք, և Որդին մարդոյ պիտի
մատնուի քահանայապետներուն ու դպիրներուն,
և զանիկա մահուան պիտի դատապարտեն, ու
34 զանիկա հեթանոսներուն պիտի մատնեն. Եւ զա-
նիկա ծաղր պիտի ընեն ու ծեծեն, և անոր վրայ
պիտի թքնեն, ու զանիկա մեռցընեն, ու երրորդ-
օրը յարութիւն պիտի առնէ։
35 Եւ անոր քովը գացին Յակոբոս ու Յովհաննէս՝
Զեբեդէոսի որդիքը, ու ըսին, Վարդապետ,
կ'ուզենք որ [illegible] ինչ որ խնդրենք՝ մեզի ընես։
36 Ան ալ ըսաւ անոնց, Ի՞նչ կ'ուզէք որ ձեզի ը-
37 նեմ։ Ու անոնք ըսին իրեն, Շնորհէ մեզի որ նըս-
տինք մեզմէ մէկը աջ կողմդ և միւսը ձախ կողմդ
38 քու փառացդ մէջ։ Եւ Յիսուս ըսաւ անոնց, Զէք
գիտեր ինչ կը խնդրէք. կրնա՞ք խմել ան գա-
ւաթը որ ես կը խմեմ, և ան մկրտութիւնովը
39 մկրտուիլ՝ որով ես կը մկրտուիմ։ Եւ անոնք ը-
սին իրեն, Կրնանք. ու Յիսուս ըսաւ անոնց, Ան
գաւաթը որ ես կը խմեմ՝ պիտի խմէք, և ան
մկրտութիւնովը որ ես կը մկրտուիմ՝ պիտի
40 մկրտուիք. Բայց իմ աջ կողմս ու ձախ կողմս
նստիլը իմս չէ տալը, հապա որոնց որ պատրաս-
41 տուած է։ Ու երբոր միւս տասը աշակերտները լը-
սեցին՝ սկսան Յակոբոսին ու Յովհաննէսին նե-
42 ղանալ։ Իսկ Յիսուս իրեն կանչեց զանոնք ու ը-
սաւ անոնց, Գիտէք որ ազգաց իշխան սեպուած-
ները կը տիրեն անոնց, և անոնց մեծամեծները
43 կ'իշխեն անոնց. Բայց ձեր մէջը անանկ պիտի չըլ-
լայ, հապա ձեզմէ ով որ մեծ ըլլալ կ'ուզէ՝ ա-

44 նիկա ձեր սպասաւորը ըլլայ. Ու ձեզմէ ով որ
առաջին ըլլալ կ'ուզէ՝ անիկա ամենուն ծառայ
45 ըլլայ։ Քանզի Որդին մարդոյ ալ չեկաւ սպասա-
ւորութիւն ընդունելու, հապա սպասաւորու-
թիւն ընելու, և իր կեանքը շատերուն համար
փրկանք մը տալու։
46 Ու եկան Երիքով. ու երբոր Երիքովէն կ'ել-
լէր աշակերտներովը և շատ բազմութիւնով, Տի-
մէոսի որդին կոյր Բարտիմէոսը ճամբուն քովը
47 նստեր էր մուրալու։ Ու երբոր լսեց թէ Յիսուս
Նազովրեցին է, սկսաւ աղաղակել ու ըսել, Յի-
48 սուս՝ որդի Դաւթի, ողորմէ ինծի։ Եւ շատերը
կը յանդիմանէին զանիկա որ լռէ, բայց անիկա
ալ աւելի կ'աղաղակէր, Որդի Դաւթի, ողորմէ
49 ինծի։ Եւ Յիսուս կանգ առնելով՝ ըսաւ որ ա-
նիկա կանչեն. կանչեցին կոյրը ու ըսին անոր,
50 Քաջ եղիր, ելիր, քեզ կը կանչէ։ Եւ անիկա իր
51 հանդերձը ձգելով՝ ելաւ ու եկաւ Յիսուսին։ Եւ
Յիսուս պատասխան տուաւ ու անոր ըսաւ, Ի՞նչ
կ'ուզես որ քեզի ընեմ. կոյրը ըսաւ անոր, Ռաբ-
52 բունի, որ աչքերս բացուին։ Եւ Յիսուս ըսաւ ա-
նոր, Գնա. քու հաւատքդ քեզ բժշկեց. և շուտ
մը անոր աչքերը բացուեցան, ու ճամբան Յի-
սուսին ետեւէն կ'երթար։

ԳԼ. ԺԱ.

1 Ու երբոր Երուսաղէմին մօտեցան՝ Բեթփագէ ու
Բեթանիա դէպ 'ի Ձիթենեաց լեռը, Յիսուս իր
2 աշակերտներէն երկուքը խրկեց, Եւ ըսաւ անոնց,
Գացէք ատ ձեր դիմացի գեղը. և անոր մէջը
մանելնուդ պէս՝ պիտի գտնէք կապած աւանակ
մը, որուն վրայ մարդ մը նստած չէ. արձըկեցէք
3 անիկա ու բերէք։ Եւ թէ որ մէկը ըսէ ձեզի թէ
Ատ ի՞նչ կ'ընէք, ըսէք թէ Տէրոջը պէտք է. և

4 շուտ մը հոս պիտի խրկէ զանիկա։ Գացին և գը-
տան աւանակը դուրսը փողոցին մէջ դրանը քով
5 կապած, ու արձըկեցին զանիկա։ Եւ հոն կայնող-
ներէն ոմանք ըսին անոնց, Ի՞նչ կ'ընէք որ կ'ար-
6 ձըկէք ատ աւանակը։ Եւ անոնք ըսին անոնց
ինչպէս որ Յիսուս պատուիրեր էր, ու իրենց թող
7 տուին։ Եւ աւանակը Յիսուսի բերին, ու անոր
վրայ իրենց հանդերձները դրին, ու նստաւ անոր
8 վրայ։ Եւ շատերը իրենց հանդերձները ճամբուն
վրայ փռեցին, և ուրիշները ծառերէն ճիւղեր
9 կը կտրէին ու ճամբուն վրայ կը տարածէին։ Եւ
առջեւէն ու ետեւէն գացողները կ'աղաղակէին ու
կ'ըսէին, Ովսաննա. Օրհնեալ է ան որ Տէրոջը ա-
10 նունովը կու գայ. Օրհնեալ է մեր Դաւիթ հօրը
թագաւորութիւնը որ *կու գայ. Ովսաննա 'ի
բարձունս։
11 Եւ Յիսուս մտաւ Երուսաղէմ ու տաճարը, և
չորս կողմը ամէն բաները աչքէ անցուց. և ար-
դէն ժամանակը իրիկուն ըլլալով՝ Բեթանիա ե-
լաւ տասներկուքին հետ մէկտեղ։
12 Ու հետեւեալ օրը երբոր Բեթանիայէն կ'ելլէին՝
13 անօթեցաւ. Եւ հեռուանց տերեւալից թզենի մը
տեսնելով՝ եկաւ որ գուցէ անոր վրայ բան մը
գտնէ. ու երբոր անոր քովը գնաց՝ տերեւներէն
'ի զատ բան մը չգտաւ, ինչու որ դեռ թուզի
14 ատեն չէր. †Եւ պատասխան տուաւ ու ըսաւ ա-
նոր, Ասկէ ետեւ մէկը քեզմէ պտուղ չուտէ յա-
ւիտեան. և իր աշակերտները լսեցին։
15 Ու եկան Երուսաղէմ. և Յիսուս տաճարը մըտ-
նելով՝ սկսաւ դուրս հանել անոնք որ տաճարին
մէջ կը ծախէին ու կը գնէին. և ստակ փոխողնե-
րուն սեղանները ու աղաւնի ծախողներուն ա-

---

*Ոմանք+ Տէրոջը անունովը կուգայ
†Ոմանք+ Եւ Յիսուս

16 թունները կործանեց. Եւ թող չէր տար որ
17 մէկը տաճարին մէջէն աման մը անցընէ. Եւ
կը սորվեցընէր ու կ՚ըսէր անոնց, Գրուած չէ՞ որ
Իմ տունս աղօթքի տուն պիտի կոչուի բոլոր ազ-
գերուն, բայց դուք աւազակներու այր
18 ըրիք։ Եւ դպիրները ու քահանայապետները ա-
լսելով՝ կը փնտռէին թէ ինչպէս կորսընցընեն
զանիկա, քանզի անկէ կը վախնային. ինչու որ
բոլոր ժողովուրդը զարմացեր էր անոր վարդա-
19 պետութեանը վրայ։ Ու երբոր իրիկուն եղաւ՝
քաղաքէն դուրս ելաւ։
20 Եւ առտուանց երբոր անկէ կ՚անցնէին, թզենին
21 տեսան արմատէն չորցած։ Ու Պետրոսին միտքը
եկաւ ու ըսաւ անոր, Ռաբբի, ահա թզենին որ
22 անիծեցիր՝ չորցեր է։ Եւ Յիսուս պատասխան տա-
լով ըսաւ անոնց, Աստուծոյ հաւատք ունեցէք։
23 Քանզի ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, Ով որ աս լերանը
ըսէ, Ելիր ու ծովը ինկիր, և իր սրտին մէջը
չերկմտի, հապա հաւատայ թէ ինչ որ ըսէ՝ կ՚ըլ-
24 լայ, պիտի ըլլայ անոր ինչ որ ըսէ։ Ասոր համար
կ՚ըսեմ ձեզի, ինչ բան որ աղօթքով կը խնդրէք,
հաւատացէք թէ պիտի առնէք, և պիտի ըլլայ
25 ձեզի։ Ու երբոր աղօթքի կը կայնիք, ներեցէք
թէ որ մէկուն դէմ բան մը ունիք, որպէս զի
ձեր Հայրն ալ որ երկինքն է՝ ներէ ձեզի ձեր
26 յանցանքները։ Իսկ թէ որ դուք չէք ներեր,
ձեր Հայրն ալ որ երկինքն է՝ պիտի չներէ ձեր
յանցանքները։
27 Եւ նորէն Երուսաղէմ եկան, ու երբոր տա-
ճարին մէջ կը պտըտէր, քահանայապետները և
28 դպիրները ու ծերերը անոր եկան, Ու ըսին ա-
նոր, Ի՞նչ իշխանութիւնով կ՚ընես աս բաները,
և ո՞վ տուաւ քեզի աս իշխանութիւնը, որ աս
29 բաները ընես։ Պատասխան տուաւ Յիսուս ու ը-
սաւ անոնց, Ես ալ ձեզի բան մը հարցընեմ, ու

թէ որ ինծի պատասխան տաք, ես ալ ձեզի պիտի
ըսեմ թէ ինչ իշխանութիւնով կ՚ընեմ աս բա-
30 ները. Յովհաննէսին մկրտութիւնը երկինքէ՞ն էր՝
31 թէ մարդոցմէ. պատասխան տուէք ինծի։ Եւ ա-
նոնք մէջերնին կը խորհէին ու կ՚ըսէին, Թէ որ
ըսենք՝ Երկինքէն, պիտի ըսէ, Հապա ինչո՞ւ չհա-
32 ւատացիք անոր. իսկ թէ որ ըսենք՝ Մարդոցմէ...
ժողովուրդէն կը վախնային, ինչու որ ամէնքը
*գիտէին Յովհաննէսը թէ ճշմարտապէս մարգարէ
33 էր։ Եւ պատասխան տալով ըսին Յիսուսի, Չենք
գիտեր. և Յիսուս պատասխան տուաւ ու ըսաւ
անոնց, Ես ալ ձեզի չեմ ըսեր թէ ինչ իշխանու-
թիւնով կ՚ընեմ աս բաները։

ԳԼ. ԺԲ

1 Եւ սկսաւ առակներով խօսիլ անոնց հետ ու ը-
սել, Մէկ մարդ մը այգի տնկեց, ու անոր բոլոր-
տիքը ցանգ քաշեց, և ստորահնձան փորեց, ու
աշտարակ շինեց, և զանիկա մշակներու յանձ-
2 նեց, ու ինքը օտար երկիր մը գնաց։ Եւ ատենին
ծառայ մը խրկեց մշակներուն, որ մշակներէն
3 այգիին պտուղէն առնէ։ Իսկ անոնք բռնեցին՝
4 ծեծեցին զանիկա ու պարապ ճամբեցին։ Նորէն
ուրիշ ծառայ մըն ալ խրկեց անոնց, և զանիկա
քարկոծելով գլուխը վիրաւորեցին ու անար-
5 գուած ճամբեցին։ Եւ դարձեալ ուրիշ մը խըր-
կեց, ու զանիկա սպաննեցին, և շատ ուրիշներ
ալ խրկեց, որոնց մէկ քանիները ծեծեցին ու մէկ
6 քանիները սպաննեցին։ Ուստի մէկ սիրելի որդի
մըն ալ ունենալով, վերջապէս զանիկա ալ խըր-
կեց անոնց՝ ըսելով, Գուցէ ամչնան իմ որդիէս։
7 Բայց այն մշակները ըսին իրարու, Ասիկա է ժա-
ռանգը. եկէք զանիկա սպաննենք, ու ժառան-

*Յոյն. ունէին

8 գութիւնը մերը ըլլայ։ Եւ բռնեցին զանիկա ու
9 սպաննեցին, և այգիէն դուրս հանեցին։ Ուստի
այգիին տէրը ի՞նչ պիտի ընէ. պիտի գայ ու կոր-
սընցընէ մշակները, և այգին ուրիշներու պիտի
10 տայ։ Եւ աս գիրը չէ՞ք կարդացեր, Թէ Այն քարը
որ շինողները անարգեցին, անիկա անկիւնին գը-
11 լուխը եղաւ. Ասիկա Տէրոջմէ եղաւ, և զարմա-
նալի է մեր աչքերուն։
12 Եւ կը փնտռէին թէ ինչպէս բռնեն զանիկա,
բայց ժողովուրդէն վախցան, քանզի իմացան որ
այն առակը իրենց համար ըսաւ, և ձգեցին ա-
նիկա ու գացին։
13 Եւ փարիսեցիներէն ու Հերովդէսեաններէն
քանի մը հոգի ղրկեցին անոր, որ խօսքով բըռ-
14 նեն զանիկա։ Եւ անոնք եկան ու ըսին անոր,
Վարդապետ, գիտենք որ ճշմարիտ ես, և մէկու
մը համար հոգ չէ, քանզի մարդոց երեսպաշ-
տութիւն չես ըներ, հապա ճշմարտութեամբ Աս-
տուծոյ ճամբան կը սորվեցընես. Կայսրին տուրք
տալ արժա՞ն է՝ թէ չէ, տա՞նք՝ թէ չտանք։
15 Եւ Յիսուս գիտնալով անոնց կեղծաւորութիւնը՝
ըսաւ անոնց, Ինչո՞ւ զիս կը փորձէք. բերէք ինծի
16 դահեկան մը որ տեսնեմ։ Եւ անոնք բերին. ու
ըսաւ անոնց, Որո՞ւնն է աս պատկերը ու գիրը.
17 և անոնք ըսին անոր, Կայսրին։ Եւ Յիսուս պա-
տասխան տալով ըսաւ անոնց, Այն որ Կայսրինն
է՝ Կայսրին տուէք, և այն որ Աստուծոյն է՝ Աս-
տուծոյ տուէք. ու զարմացան անոր վրայ։
18 Եւ անոր քովը եկան սադուկեցիները, որոնք
կ'ըսեն թէ յարութիւն չկայ, և անոր հար-
19 ցուցին ըսելով, Վարդապետ, Մովսէս մեզի
գրեց որ եթէ մէկուն եղբայրը մեռնի, ու կնիկը
ձգէ և զաւակ չձգէ, անոր եղբայրը առնէ անոր
20 կնիկը, և իր եղբօրը զաւակ հանէ։ Արդ եօթը
եղբայրներ կային, և առջինը կնիկ առաւ ու մե-

21 ռաւ և զաւակ չձգեց։ Ու երկրորդը առաւ զա-
նիկա ու մեռաւ, և ան ալ զաւակ չձգեց. նոյն-
22 պէս ալ երրորդը։ Ու եօթն ալ զանիկա առին
և զաւակ չձգեցին. ամենէն ետքը կնիկն ալ մե-
23 ռաւ։ Ուրեմն յարութեան ատենը, երբոր յա-
րութիւն առնեն, անոնցմէ որո՞ւն կնիկը պիտի
ըլլայ. ինչու որ եօթն ալ զանիկա կնիկ ունեցան։
24 Եւ Յիսուս պատասխան տալով անոնց ըսաւ, Ա-
սոր համար չէ՞ որ մոլորած էք, որ ոչ Գիրքը
25 գիտէք և ոչ Աստուծոյ զօրութիւնը։ Քանզի եր-
բոր մեռելներէն յարութիւն առնեն, ոչ կնիկ
կ'առնեն և ոչ էրկան կը տրուին, հապա երկնից
26 հրեշտակներուն պէս են։ Բայց մեռելներուն հա-
մար՝ թէ յարութիւն կ'առնեն, Մովսէսին գըր-
քին մէջը չէ՞ք կարդացեր մորենիին վրայ, ինչպէս
Աստուած անոր խօսեցաւ ըսելով, Ես եմ Աբրա-
համին Աստուածը, և Իսահակին Աստուածը, ու
27 Յակոբին Աստուածը։ Անիկա մեռելներուն Աստ-
ուածը չէ, հապա կենդանիներուն. ուրեմն դուք
խիստ մոլորած էք։
28 Եւ դպիրներէն մէկը եկաւ, ու մտիկ կ'ընէր ա-
նոնց՝ երբոր վիճաբանութիւն կ'ընէին, որ երբոր
տեսաւ թէ աղէկ պատասխան տուաւ անոնց,
հարցուց անոր ու ըսաւ, Ո՞րն է բոլոր պատուի-
29 րանքներուն առջինը։ Եւ Յիսուս պատասխա-
նեց անոր, Բոլոր պատուիրանքներուն առջինը
աս է. Լսէ, ով Իսրայէլ, մեր Տէր Աստուածը
30 մէկ Տէր մըն է. Եւ քու Տէր Աստուածդ սիրես
քու բոլոր սրտէդ, և քու բոլոր անձէդ, ու քու
բոլոր մտքէդ, և քու բոլոր զօրութենէդ. աս-
31 կա է առջին պատուիրանքը։ Ու երկրորդը ա-
սոր նման, Քու ընկերդ սիրես քու անձիդ պէս.
32 ասոնցմէ մեծ ուրիշ պատուիրանք չկայ։ Եւ դը-
պիրը ըսաւ անոր, Աղէկ, վարդապետ, ճիտակ
խօսեցար թէ Աստուած մէկ է. և անկէ 'ի զատ

33 ուրիշ մը չկայ։ Եւ բոլոր սրտէ, ու բոլոր մտքէ,
և բոլոր անձէ, ու բոլոր զօրութենէ անիկա սի-
րելը՝ ու ընկերը իր անձին պէս սիրելը ամէն ող-
34 ջակէզներէ ու զոհերէ աւելի է։ Եւ Յիսուս տես-
նելով որ անիկա խելացութիւնով պատասխան
տուաւ, ըսաւ անոր, Աստուծոյ թագաւորութե-
նէն հեռու չես։ Եւ ալ ուրիշ մէկը չէր համար-
ձակեր անոր բան մը հարցնելու։
35 Եւ Յիսուս երբոր տաճարին մէջ կը սորվեցը-
նէր՝ պատասխան տուաւ ու ըսաւ, Դպիրները
ինչո՞ւ կ'ըսեն թէ Քրիստոս Դաւիթի որդին է.
36 Եւ ինքը Դաւիթ Սուրբ Հոգիով կ'ըսէ, Տէրը իմ
Տէրոջս ըսաւ, Նստէ իմ աջ կողմս, մինչև որ
քու թշնամիներդ ոտքերուդ պատուանդան ը-
37 նեմ։ Ուրեմն Դաւիթ ինքը որ զանիկա Տէր կը
կոչէ, ի՞նչպէս անիկա անոր որդին կ'ըլլայ։ և ժո-
ղովուրդին շատերը յօժարութեամբ մտիկ կ'ը-
նէին անոր։
38 Եւ իր վարդապետութեանը մէջ կ'ըսէր անոնց,
Զգուշացէք դպիրներէն, որոնք կ'ուզեն փառա-
ւոր հանդերձներով պտըտիլ, և շուկաներու մէջ
39 բարևներ կը փնտռեն, Ու ժողովարաններուն մէջ՝
առաջին աթոռները, և ընթրիքներու մէջ՝ ա-
40 ռաջին բազմոցները։ Որոնք որբևայրիներուն
տուները կ'ուտեն, ու ցուցքով երևնալու համար
աղօթքը կ'երկընցնեն. ասոնք աւելի դատա-
պարտութիւն պիտի ընդունին։
41 Եւ Յիսուս գանձանակին դիմացը նստած՝ կը
նայէր թէ ինչպէս ժողովուրդը գանձանակին մէջ
ստակ կը ձգէ. և շատ հարուստներ շատ բան ձը-
42 գեցին։ Մէկ աղքատ որբևայրի մըն ալ եկաւ ու
երկու լումայ ձգեց՝ որ մէկ նաքարակիտ մը կ'ը-
43 նէ։ Եւ իր աշակերտները իրեն կանչելով ըսաւ
անոնց, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ այս աղքատ
որբևայրին գանձանակը [illegible] ձգողներուն ամե-

44 նէն աւելի ձգեց. ինչու որ ամէնքը իրենց աւել-
ցածէն ձգեցին, բայց ասիկա իր չքաւորութե-
նէն՝ ունեցածին բոլորը ձգեց՝ իր բոլոր ապ-
րուստը։

ԳԼ. ԺԳ

1 Ու երբոր տաճարէն դուրս կ'ելլէր, իր աշա-
կերտներէն մէկը ըսաւ իրեն, Վարդապետ, նայէ
2 ինչոր քարեր են՝ և ինչ կերպ շէնքեր։ Եւ Յի-
սուս պատասխան տալով ըսաւ անոր, Կը տես-
նե՞ս այս մեծ շէնքերը. քար մը քարի վրայ պիտի
չմնայ որ չքակուի։
3 Ու երբոր անիկա Ձիթենեաց լեռը տաճարին
դիմացը նստեր էր, Պետրոս ու Յակոբոս և Յով-
հաննէս ու Անդրէաս հարցուցին իրեն առանձին,
4 Ըսէ մեզի ե՞րբ պիտի ըլլան այս բաները, և ի՞նչ
նշան պիտի ըլլայ այս ամէն բաներուն կատար-
5 ուելու ատենը։ Եւ Յիսուս պատասխան տուաւ
անոնց ու սկսաւ ըսել, Զգոյշ կեցէք՝ չըլլայ որ
6 մէկը ձեզ խաբէ. ինչու որ շատերը պիտի գան
իմ անունովս ու ըսեն թէ Ես եմ Քրիստոսը, ու
7 շատերը պիտի մոլորցնեն։ Բայց երբոր լսէք
պատերազմներ և պատերազմներու լուրեր՝ մի
խռովիք, ինչու որ պէտք է ըլլալ, բայց դեռ
8 վերջը չէ։ Վասն զի ազգ ազգի վրայ պիտի ելլէ,
ու թագաւորութիւն՝ թագաւորութեան վրայ, և
տեղ տեղ երկրաշարժութիւններ պիտի ըլլան,
սովեր ու խռովութիւններ ալ պիտի ըլլան. ա-
9 սոնք ցաւերուն սկիզբներն են։ Զգուշացէք ձեր
անձերուն, քանզի ձեզ ատեաններու պիտի մատ-
նեն, ու ժողովարաններուն մէջ ձեզ պիտի ծե-
ծեն, և իմ [illegible] համար կուսակալներու ու
թագաւորներու առջև պիտի կենաք՝ անոնց վկա-
10 յութիւն ըլլալու համար։ Եւ առաջ պէտք է

որ աւետարանը քարոզուի բոլոր ազգերուն։
11 Բայց երբոր ձեզ մատնելու տանին, առաջուց հոգ
մի ընէք և մի մտածէք թէ ինչ պիտի խօսիք,
հապա ան ժամուն ինչ որ ձեզի տրուի՝ անիկա
խօսեցէք. ինչու որ չէ թէ դուք էք որ կը խօ-
12 սիք, հապա Հոգին Սուրբ։ Ու եղբայր եղբայրը
մահուան պիտի մատնէ, և հայրը՝ որդին, և որ-
դիք ծնողացը վրայ պիտի ելլեն ու մեռ-
13 ցընեն զանոնք։ Եւ իմ անուանս համար ամենուն
ատելի պիտի ըլլաք. բայց ով որ մինչև վերջը
14 համբերէ՝ անիկա պիտի ապրի։ Ու երբոր տես-
նէք աւերմունքին պղծութիւնը՝ որ Դանիէլ
մարգարէին ձեռքովը ըսուած է, թէ արժան չե-
ղած տեղը կը կենայ. (ով որ կարդայ՝ թող հաս-
կընայ.) անատենը Հրէաստանի մէջ եղողները
15 լեռները թող փախչին. Եւ ան որ տանիքին վը-
րայ է՝ թող տուն չիջնէ, ու չմտնէ իր տունէն
16 բան մը առնելու. Եւ ան որ արտին մէջն է՝ թող
17 ետ չդառնայ իր հանդերձը առնելու։ Բայց վա՜յ
ան օրերը յղի եղողներուն ու ծիծ տուողներուն։
18 Եւ աղօթք ըրէք որ ձեր փախչիլը ձմեռը չըլլայ.
19 Քանզի ան օրերը անանկ նեղութիւն պիտի ըլ-
լայ, որուն նմանը Աստուծոյ ստեղծած արարա-
ծոց սկիզբէն մինչև հիմա եղած չէ, ոչ ալ պիտի
20 ըլլայ։ Եւ թէ որ Տէրը ան օրերը չկարճեցընէր,
բնաւ մէկ մարմին մը պիտի չապրէր. բայց ընտր-
եալներուն համար որոնք ընտրեց՝ ան օրերը
21 կարճեցուց։ Եւ անատենը թէ որ մէկը ձեզի ը-
սէ, Ահա հոս է Քրիստոսը՝ կամ Ահա հոն, մի
22 հաւտաք. ինչու որ սուտ Քրիստոսներ և սուտ
մարգարէներ պիտի ելլեն, ու նշաններ և հրաշք-
ներ պիտի ցուցընեն, որ եթէ կարելի էր՝ ընտր-
23 եալներն ալ մոլորցընեն։ Իսկ դուք զգոյշ կե-
ցէք. ահա առաջուց ըսի ձեզի ամէնը։
24 Բայց ան օրերը ան նեղութենէն ետև արե-

գակը պիտի խաւարի, ու լուսինը իր լոյսը պիտի
25 չտայ, Եւ աստղերը երկինքէն պիտի թափթփին,
ու երկնից մէջի զօրութիւնները պիտի շարժին։
26 Եւ անատենը պիտի տեսնեն Որդին մարդոյ՝ ամ-
պերու մէջ եկած մեծ զօրութիւնով ու փառքով։
27 Եւ անատենը իր հրեշտակները պիտի ղրկէ, ու իր
ընտրեալները պիտի ժողվէ չորս հովերէն՝ երկրի
28 ծայրէն մինչև երկնից ծայրը։ Թզենիէն առակ մը
սորվեցէք. որ երբ անոր ոստերը կը կակուղնան
ու տերևները կը ցցուին, գիտէք թէ ամառը մօտ
29 է։ Նոյնպէս ալ դուք երբոր աս բաները եղած
տեսնէք, գիտցէք որ մօտ է դռներուն քովը։
30 Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ աս ազգը պիտի չանց-
31 նի, մինչև որ աս ամէն բաները ըլլան։ Երկինք
ու երկիր պիտի անցնին, բայց իմ խօսքերս բնաւ
32 պիտի չանցնին. Իսկ ան օրուան ու ժամուն հա-
մար մէկը չգիտեր, ոչ երկնից մէջ եղող հրեշ-
33 տակները և ոչ Որդին, հապա միայն Հայրը։ Զգոյշ
կեցէք, արթուն մնացէք և աղօթք ըրէք, ինչու
34 որ չէք գիտեր ատենը ե՛րբ է. Ինչպէս օտար եր-
կիր գացող մարդ մը իր տունը կը թողու, ու իր
ծառաներուն իշխանութիւն կու տայ, և ամէն
մէկուն իր գործը, ու դռնապանին կ'ապսպրէ որ
35 արթուն կենայ. Ուրեմն արթուն կեցէք, ինչու
որ չէք գիտեր թէ երբ կու գայ տանուտէրը, ի-
րիկունը՝ թէ կէս գիշերին՝ թէ հաւախօսին և թէ
36 առտուանց. Զըլլայ որ յանկարծակի գայ ու ձեզ
37 քունի մէջ գտնէ։ Եւ ինչ որ կ'ըսեմ ձեզի՝ ա-
մենուն կ'ըսեմ, Արթուն կեցէք։

ԳԼ. ԺԴ

1 Եւ երկու օրէն ետև զատիկ ու բաղարջակերք
էր. և քահանայապետները ու դպիրները կը փնտ-
ռէին թէ ինչպէս նենգութեամբ բռնեն զանի-
2 կա ու մեռցընեն։ Բայց կ'ըսէին թէ Ոչ տօնին ա-

տենը, որ ժողովուրդին մէջ խռովութիւն չըլլայ։
3 Ու երբոր ինքը Բեթանիա էր բորոտ Սիմոնին
տունը սեղան նստած, կնիկ մը եկաւ՝ որ շիշ մը
պատուական սուղ նարդոսի եղ ունէր, և կոտ-
4 րեց ան շիշը ու անոր գլխուն վրայ թափեց։ Եւ
կային ոմանք որ կը դժուարէին ու կ՚ըսէին, Ին-
5 չո՞ւ համար եղաւ աս եղին կորուստը. Քանզի աս
[եղը] երեք հարիւր դահեկանէն աւելի կրնար
ծախուիլ ու աղքատներուն տրուիլ. և սաստիկ
6 կը յանդիմանէին զանիկա։ Բայց Յիսուս ըսաւ,
Թող տուէք ատոր, ինչո՞ւ անհանգիստ կ՚ընէք
7 ատիկա. բարի գործ մը գործեց ինծի։ Ինչու որ
աղքատները ամէն ատեն ձեր հետը ունիք, ու
երբոր ուզէք՝ կրնաք անոնց բարիք ընել, բայց
8 զիս ամէն ատեն չունիք։ Ատիկա ինչ որ ունէր՝
ըրաւ. առաջուց իմ մարմինս օծեց իմ թաղ-
9 մանս համար. Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, Թէ բոլոր
աշխարհի մէջ՝ ուր որ աս աւետարանս քարոզ-
ուի, ատոր ըրածն ալ պիտի խօսուի՝ իրեն յիշա-
տակ ըլլալու համար։
10 Եւ Յուդա Իսկարիովտացին տասուերկուքէն
մէկը գնաց քահանայապետներուն, որ զանիկա
11 մատնէ անոնց։ Անոնք ալ լսելով ուրախացան,
ու իրեն ստակ տալ խոստացան. և կը փնտռէր
թէ ինչպէս պատեհութիւնով մը մատնէ զանիկա։
12 Եւ բաղարջակերաց առջի օրը որ զատիկը կը
մորթէին, անոր աշակերտները ըսին իրեն, Ո՞ւր
կ՚ուզես երթանք պատրաստենք՝ որ զատիկը ու-
13 տես։ Եւ իր աշակերտներէն երկուքը խրկեց ու
ըսաւ անոնց, Գացէք քաղաքը, ու ձեզի մարդ
մը պիտի պատահի՝ որ ուսին վրայ ջուրի սափոր
14 մը կը տանի, գացէք անոր ետևէն. Եւ ուր որ
մտնէ՝ տանը տիրոջը ըսէք, Վարդապետը կ՚ըսէ,
Ո՞ւր է օթևանը՝ որ հոն աշակերտներուս հետ
15 մէկտեղ զատիկը ուտեմ։ Ան ալ ձեզի յարդար-

ուած ու պատրաստ մեծ վերնատուն մը պիտի
16 ցուցընէ. հոն պատրաստեցէք մեզի։ Եւ իր աշա-
կերտները գացին ու քաղաքը մտան, և ինչպէս
որ իրենց ըսաւ՝ այնպէս գտան, և զատիկը պատ-
րաստեցին։
17 Ու երբոր իրիկուն եղաւ՝ տասուերկուքին հետ
18 մէկտեղ եկաւ։ Ու երբոր սեղան նստան և կ՚ու-
տէին՝ ըսաւ Յիսուս, Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի որ
ձեզմէ մէկը որ հիմա իմ հետս կ՚ուտէ՝ զիս պիտի
19 մատնէ։ Եւ անոնք սկսան տրտմիլ, ու մէկիկ մէ-
կիկ ըսել անոր, Միթէ ե՞ս եմ, և ուրիշ մը՝ Մի-
20 թէ ե՞ս եմ։ Անիկա պատասխան տուաւ ու ը-
սաւ անոնց, Աս տասուերկուքէդ մէկը՝ որ ինծի
21 հետ իր ձեռքը պնակը խօթեց։ Յիրաւի Որդին
մարդոյ կ՚երթայ՝ ինչպէս որ գրուած է իրեն հա-
մար, բայց վա՜յ ան մարդուն՝ որուն ձեռքովը
Որդին մարդոյ կը մատնուի. աղէկ էր ան մար-
դուն որ ծնած չըլլար։
22 Եւ քանի որ անոնք կ՚ուտէին, Յիսուս հաց ա-
ռաւ, օրհնեց ու կտրեց, և տուաւ անոնց ու ը-
23 սաւ, *Առէք, աս է իմ մարմինս։ Եւ գաւաթը
առաւ՝ գոհացաւ, ու տուաւ անոնց, և ամէնքն
24 ալ խմեցին անկէ։ Ու ըսաւ անոնց, Ասիկա է իմ
արիւնս նոր ուխտի, որ շատերուն համար կը
25 թափուի։ Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, ասկէ ետև
որթին բերքէն բնաւ պիտի չխմեմ մինչև ան օրը
երբոր անիկա նոր խմեմ Աստուծոյ թագաւորու-
թեանը մէջ։
26 Եւ օրհնութիւն մը երգելէն ետև Ձիթենեաց
27 լեռը ելան։ Եւ Յիսուս ըսաւ անոնց, Ամէնքդ ալ
աս գիշեր իմ վրայովս պիտի գայթակղիք. ինչու
որ գրուած է թէ Հովիւը պիտի զարնեմ, ու ոչ-
28 խարները պիտի ցրուին։ Բայց յարութիւն առ-

*Ոմանք՝ Առէք, կերէք

նելէս ետև ձեզմէ առաջ Գալիլեա պիտի երթամ։
29 Իսկ Պետրոս ըսաւ անոր, Թէպէտ ամէնքն ալ
30 գայթակղին, բայց չէ թէ ես։ Եւ Յիսուս ըսաւ
անոր, Ճշմարիտ կ'ըսեմ քեզի, որ դուն ալ աս
գիշեր դեռ հաւը երկու անգամ չխօսած՝ երեք
31 անգամ զիս պիտի ուրանաս։ Բայց Պետրոս աւե-
լի կը պնդէր ու կ'ըսէր, Թէև քեզի հետ մեռնիլ
պէտք ըլլայ ինծի, բնաւ քեզ պիտի չուրանամ.
Նոյնպէս կ'ըսէին ամէնքն ալ։
32 Եկան այն տեղը՝ որուն անունը Գեթսեմանի էր,
ու ըսաւ իր աշակերտներուն, Հոս նստեցէք՝ մին-
33 չև որ ես աղօթք ընեմ։ Եւ իր հետը առնելով
Պետրոսը ու Յակոբոսը և Յովհաննէսը, սկսաւ
34 խռովիլ և վշտանալ։ Անատենը ըսաւ անոնց,
Իմ անձս մեռնելու չափ տրտում է. հոս կեցէք
35 և արթուն մնացէք։ Ու քիչ մը առաջ երթա-
լով՝ իր երեսին վրայ գետինը ինկաւ և աղօթք ը-
րաւ, որ եթէ կարելի է՝ այն ժամը իրմէ անցնի։
36 Եւ ըսաւ, Աբբայ Հայր, ամէն բան քեզի հնարա-
ւոր է, աս գաւաթը ինծմէ անցուր. բայց չէ թէ
ինչպէս որ ես կ'ուզեմ, հապա ինչպէս որ դուն
37 կ'ուզես։ Եւ եկաւ ու զանոնք քնացած գտաւ, և
ըսաւ Պետրոսին, Սիմոն, կը քնանա՞ս. չկրցա՞ր
38 ժամ մը արթուն կենալ։ Արթուն կեցէք և ա-
ղօթք ըրէք, որ փորձութեան մէջ չմտնէք. հո-
39 գին յօժար է, բայց մարմինը տկար։ Եւ նորէն
40 գնաց աղօթք ըրաւ՝ նոյն խօսքը ըսելով։ Եւ
դարձաւ ու զանոնք նորէն քնացած գտաւ, ին-
չու որ աչքերնին ծանրացած էր, և չէին գիտեր
41 թէ ինչ պատասխան տան անոր։ Երրորդ ան-
գամ ալ եկաւ ու ըսաւ անոնց, Ասկէ ետև քնա-
ցէք ու հանգչեցէք. բաւական է, ժամը հա-
սաւ. ահա Որդին մարդոյ մեղաւորներուն ձեռքը
42 կը մատնուի։ Ելէք երթանք, ահա մօտեցաւ ա-
նիկա որ զիս պիտի մատնէ։

43 Եւ դեռ անիկա աս որ կը խօսէր, իսկոյն Յուդա՝
տասուերկուքէն մէկը եկաւ, և իր հետը քահա-
նայապետներուն և դպիրներուն ու ծերերուն
կողմէն շատ բազմութիւն՝ սուրերով ու բիրերով.
44 Եւ զանիկա մատնողը անոնց նշան մը տուեր էր՝
ըսելով, Ով որ ես համբուրեմ՝ ան է, բռնեցէք
45 անիկա և զգուշութեամբ տարէք։ Ու անիկա
գալով շուտ մը մօտեցաւ անոր և ըսաւ, Ռաբ-
46 բի, Ռաբբի, ու համբուրեց զանիկա։ Եւ անոնք
47 ձեռք զարկին անոր ու բռնեցին զանիկա։ Եւ քո-
վը կայնողներէն մէկը սուրը քաշեց ու զարկաւ
քահանայապետին ծառային, ու անոր ականջը
48 մէկդի հանեց։ Եւ Յիսուս պատասխան տալով
ըսաւ անոնց, Իբր թէ աւազակի՞ վրայ ելաք սու-
49 րերով ու բիրերով զիս բռնելու։ Ամէն օր ձեր
քովն էի ու տաճարին մէջ կը սորվեցընէի, և զիս
չբռնեցիք. բայց որպէս զի գիրքերը կատարուին։
50 Անատենը բոլոր աշակերտները թողուցին զանիկա
51 ու փախան։ Եւ մէկ երիտասարդ մը անոր ետե-
ւէն կ'երթար՝ մերկ մարմնին վրայ կտաւ մը ա-
52 ռած, ու երիտասարդները զանիկա բռնեցին։ Ան
ալ կտաւը թողուց ու մերկ փախաւ անոնցմէ։
53 Եւ տարին Յիսուսը քահանայապետին, ու անոր
քովը ժողվուեցան բոլոր քահանայապետները և
54 ծերերը ու դպիրները։ Եւ Պետրոս հեռուանց ա-
նոր ետևէն գնաց մինչև ներսը քահանայապետին
գաւիթը, և սպասաւորներուն հետ նստաւ, ու
55 կրակին քովը կը տաքնար։ Իսկ քահանայապետ-
ները ու բոլոր ժողովքը Յիսուսի դէմ վկայու-
թիւն կը փնտռէին որ զանիկա մեռցընեն, և չէին
56 գտներ. ինչու որ շատերը սուտ վկայութիւն կը
վկայէին անոր դէմ, ու վկայութիւնները իրարու
57 համաձայն չէին։ Եւ ոմանք ելան սուտ վկայու-
58 թիւն կ'ընէին անոր դէմ՝ ու կ'ըսէին թէ Մենք
լսեցինք ասկէ որ կ'ըսէր, Ես աս ձեռագործ

տաճարը պիտի քակեմ, և երեք օրուան մէջ ու-
59 րիշ մը պիտի շինեմ առանց ձեռագործի։ Բայց
անանկ ալ իրենց վկայութիւնը համաձայն չէր։
60 Եւ քահանայապետը մէջտեղը ոտք ելլելով՝ հար-
ցուց Յիսուսին ու ըսաւ, Պատասխան մը չե՞ս
61 տար. ի՞նչ կը վկայեն ասոնք քեզի դէմ։ Բայց
անիկա լուռ կը կենար և պատասխան մը չէր
տար. քահանայապետը նորէն կը հարցնէր անոր
ու կ'ըսէր, Դո՞ւն ես Քրիստոսը՝ օրհնեալ Աստու-
62 ծոյ Որդին։ Եւ Յիսուս ըսաւ, Ես եմ. ու պիտի
տեսնէք Որդին մարդոյ Զօրութեան աջ կողմը
63 նստած, ու երկնից ամպերովը եկած։ Եւ քահա-
նայապետը իր հանդերձները պատռեց ու ըսաւ,
64 Ալ ի՞նչ պէտք է մեզի վկաներ։ Անոր հայհոյու-
թիւնը լսեցիք. ձեզի ի՞նչպէս կ'երեւնայ. և ա-
մէնքը դատապարտեցին զանիկա թէ մահա-
պարտ է։
65 Եւ ոմանք սկսան թքնել անոր ու երեսը ծած-
կել և բռունցով ծեծել ու ըսել, Մարգարէա-
ցիր. ու սպասաւորները ապտակ կը զարնէին ա-
նոր։
66 Եւ Պետրոս վարը գաւիթն էր, ու քահանա-
67 յապետին աղախիններէն մէկը եկաւ, Ու տեսնե-
լով Պետրոսը որ կը տաքնար, նայեցաւ անոր ու
ըսաւ, Դուն ալ Յիսուս Նազովրեցիին հետ էիր։
68 Բայց անիկա ուրացաւ ու ըսաւ, Չեմ գիտեր և
չեմ հասկընար թէ դուն ինչ կը խօսիս. ու երբոր
դուրս ելաւ գաւիթին դրանը առջևը, հաւը խօ-
69 սեցաւ։ Եւ աղախինը նորէն տեսաւ զանիկա, ու
սկսաւ բոլորտիքը կայնողներուն ըսել թէ Աս ալ
70 անոնցմէ է. Եւ անիկա նորէն ուրացաւ։ Ու
քիչ մը ատենէն ետքը՝ նորէն բոլորտիքը կայ-
նողները ըսին Պետրոսին, Յիրաւի դուն անոնցմէ
ես, ինչու որ Գալիլեացի ես, և քու զրուցուած-
71 քըդ ալ նման է անոնց։ Բայց անիկա սկսաւ ա-

նիծել ու երդում ընել՝ ըսելով թէ Ես այն մար-
դը չեմ ճանչնար, որուն համար դուք կ'ըսէք։
72 Եւ իսկոյն երկրորդ անգամ հաւը խօսեցաւ. ու
Պետրոս միտքը բերաւ այն խօսքը՝ որ Յիսուս
իրեն ըսեր էր թէ Դեռ հաւը երկու անգամ չխօ-
սած՝ դուն երեք անգամ պիտի ուրանաս զիս.
ու սկսաւ լալ։

ԳԼ. ԺԵ

1 Եւ առտուանց շուտ մը քահանայապետները ծե-
րերուն ու դպիրներուն հետ՝ և բոլոր ժողովքն
ալ խորհուրդ ըրին, Յիսուսը կապեցին ու տա-
2 րին մատնեցին Պիղատոսին։ Եւ Պիղատոս հար-
ցուց անոր ու ըսաւ, Դո՞ւն ես Հրէից Թագաւո-
րը. անիկա ալ պատասխան տալով ըսաւ անոր,
3 Դուն կ'ըսես։ Եւ քահանայապետները շատ ամ-
4 բաստանութիւն կ'ընէին անոր վրայով։ Ու Պի-
ղատոս նորէն հարցուց անոր՝ ըսելով, Պատաս-
խան մը չե՞ս տար. նայէ որչափ քեզի դէմ կը
5 վկայեն։ Եւ Յիսուս տակաւին պատասխան մը
չտուաւ, մինչև որ Պիղատոս զարմացաւ։
6 Բայց տօնին ատենը կապուած մը կ'արձակէր
7 անոնց, որը որ իրենք ուզէին։ Եւ մէկ կար Բա-
րաբբա անունով իր ընկեր խռովարարներուն
հետը կապուած, որոնք խռովութեան ատենը
8 մարդասպանութիւն ըրեր էին։ Եւ ժողովուրդը
աղաղակելով՝ սկսաւ խնդրել որ ընէ ինչպէս որ
9 միշտ կ'ընէր իրենց։ Եւ Պիղատոս անոնց պա-
տասխան տուաւ, ու ըսաւ, Կ'ուզէ՞ք որ Հրէից
10 Թագաւորը արձակեմ ձեզի։ Քանզի գիտէր որ
քահանայապետները նախանձի համար մատներ
11 էին զանիկա։ Բայց քահանայապետները ժողո-
վուրդը գրգռեցին որ ընտրէն յաւէտ Բարաբբան
12 իրենց արձակել։ Նորէն Պիղատոս պատասխան

տուաւ ու ըսաւ անոնց, Հապա Հրէից Թագաւոր
13 ըսածնիդ ի՞նչ կ'ուզէք որ ընեմ։ Եւ անոնք նո-
14 րէն կ'աղաղակէին, Խաչը հանէ զանիկա։ Պիղա-
տոս ըսաւ անոնց, Բայց ի՞նչ չար գործ ըրած է
ատիկա. և անոնք՝ ալ աւելի կ'աղաղակէին ու-
15 ժէն, Խաչը հանէ զանիկա։ Եւ Պիղատոս ժողո-
վուրդը գոհ ընել ուզելով՝ Բարաբբան արձա-
կեց անոնց, ու Յիսուսը ծեծելով՝ ձեռք տուաւ
որ խաչուի։

16 Եւ զինուորները ներս տարին զանիկա գաւի-
թը՝ այսինքն պալատը, և բոլոր գունդը մէկտեղ
17 կանչեցին։ Ու հագցուցին անոր ծիրանիներ, և
18 փշեղէն պսակ հիւսելով՝ անոր գլուխը դրին։ Ու
սկսան բարև տալ անոր ու ըսել, Ողջո՜յն քեզ,
19 Հրէից Թագաւոր։ Եւ անոր գլուխը եղէգով կը
ծեծէին ու կը թքնէին անոր, և ծնկան վրայ
20 գալով երկրպագութիւն կ'ընէին անոր։ Ու եր-
բոր ծաղր ըրին զանիկա, ծիրանիները վրայէն
հանեցին և իր հանդերձները հագցուցին անոր,
ու դուրս հանեցին զանիկա՝ որ խաչը հանեն։
21 Եւ Սիմոն Կիւրենացին՝ Աղեքսանդրոսին և
Ռուփոսին հայրը, որ անկէ կ'անցնէր արտէն ե-
կած, պահակ բռնեցին որ անոր խաչը վերցնէ։
22 Ու տարին անիկա Գողգոթա ըսուած տեղը, (որ
23 կը թարգմանուի Գանկի տեղ.) Եւ անոր զմուռ-
սով խառնուած գինի տուին որ խմէ, բայց ինքը
24 չառաւ։ Ու խաչը հանեցին զանիկա, և անոր
հանդերձները բաժնեցին՝ անոնց վրայ վիճակ ձը-
25 գելով թէ ով ինչ պիտի առնէ։ Ժամը երեքն էր,
26 ու խաչը հանեցին անիկա։ Եւ անոր յանցանքի
27 գիրը գրուած էր Ան Հրէից Թագաւորն է։ Ու ա-
նոր հետ երկու աւազակ խաչը հանեցին, մէկը
28 անոր աջ կողմէն ու մէկը ձախ կողմէն։ Եւ կա-
տարուեցաւ այն գիրը որ կ'ըսէ թէ Անօրէննե-
29 րուն հետ սեպուեցաւ։ Եւ անոնք որ կ'անցնէին՝

կը հայհոյէին անոր, գլուխնին կը շարժէին ու կ'ը-
սէին, Աւա՜ղ որ տաճարը կը քակէիր, և երեք
30 օրուան մէջ կը շինէիր. Ինքզինքդ ազատէ ու ի-
31 ջիր ատ խաչէն։ Նոյնպէս ալ քահանայապետ-
ները դպիրներուն հետ իրենց մէջը ծաղր ընելով
կ'ըսէին, Ուրիշները ազատեց, ինքզինքը չկրնար
32 ազատել։ Ատ Քրիստոսը՝ Իսրայէլի Թագաւորը
թող հիմա խաչէն վար իջնէ, որ տեսնենք ու հա-
ւատանք. և իր հետը խաչը ելողները կը նախա-
տէին զանիկա։
33 Ու վեցերորդ ժամը հասածին պէս՝ բոլոր երկ-
րին վրայ խաւար եղաւ մինչև իններորդ ժամը։
34 Եւ իններորդ ժամուն՝ Յիսուս մեծ ձայնով ա-
ղաղակեց ու ըսաւ, Էլօի, Էլօի, լա՞մա սաբաք-
թանի. որ կը թարգմանուի, Աստուած իմ, Աստ-
35 ուած իմ, ինչո՞ւ զիս թողուցիր։ Եւ քովը կայ-
նողներէն ոմանք երբոր լսեցին՝ կ'ըսէին թէ Ե-
36 ղիան կը կանչէ։ Ու մէկը վազեց սպունգ մը քա-
ցախով լեցուց, ու եղէգի մը անցընելով՝ տուաւ
անոր որ խմէ, և ըսաւ, Թող տուր տեսնենք թէ
Եղիան կու գա՞յ զանիկա վար իջեցնելու։
37 Եւ Յիսուս մեծ ձայն մը հանեց ու հոգի տուաւ։
38 Ու տաճարին վարագոյրը երկուքի պատռեցաւ
39 վերէն 'ի վար։ Եւ հարիւրապետը որ անոր դի-
մացը կեցեր էր, տեսնելով որ այսպէս աղաղա-
կելով հոգի տուաւ, ըսաւ, Յիրաւի Որդի Աս-
40 տուծոյ էր աս մարդը։ Կիներ ալ կային, որ
հեռուանց կը նայէին, որոնց մէջն էր Մարիամ
Մագդաղենացին, և պզտիկ Յակոբոսին ու Յով-
41 սէսին մայրը Մարիամ, և Սողոմէ. Որոնք եր-
բոր Յիսուս Գալիլեա էր՝ իր ետևէն կ'երթային,
և իրեն սպասաւորութիւն կ'ընէին. և ուրիշ շատ
կիներ ալ՝ որ իր հետը Երուսաղէմ ելեր էին։
42 Ու երբոր իրիկուն եղաւ, ան օրը ուրբաթ՝ այ-
43 սինքն շաբաթին առջի օրը ըլլալով, Յովսէփ

Արիմաթացի, երեւելի խորհրդական մը՝ որ ինքն
ալ Աստուծոյ թագաւորութեանը կը սպասէր,
եկաւ ու համարձակութիւն ընելով՝ Պիղատոսին
44 քովը մտաւ, և Յիսուսի մարմինը խնդրեց։ Ու
Պիղատոս զարմացաւ որ արդէն մեռած ըլլայ․ և
հարիւրապետը իրեն կանչելով՝ հարցուց անոր թէ
45 Շատ ատե՞ն է որ մեռաւ։ Ու երբոր ստոյգը ի-
մացաւ հարիւրապետէն, մարմինը Յովսէփին շնոր-
46 հեց։ Ու Յովսէփ կտաւ գնեց, ու զանիկա վար
իջեցնելով՝ կտաւովը փաթթեց, ու դրաւ գե-
րեզմանի մը մէջ՝ որ քարէ փորուած էր․ և քար
47 մը գլորեց գերեզմանին դուռը։ Իսկ Մարի-
ամ Մագդաղենացին ու Յովսէսին մայրը Մարիամ
տեսան այն տեղը ուր որ դրուեցաւ։

Գլ․ ԺԶ

1 Ու երբոր շաբաթը անցաւ, Մարիամ Մագդաղե-
նացին և Յակոբոսին մայրը Մարիամ և Սողոմէ
խունկեր ծախու առին, որ գան օծեն զանիկա։
2 Ու մէկշաբթի առտուանց շատ կանուխ՝ արեւը որ
3 կը ծագէր՝ եկան գերեզմանը, Ու իրարու կ'ըսէ-
ին, Քարը ո՞վ պիտի գլորցընէ մեզի գերեզմա-
4 նին դռնէն, (Ու նայեցան տեսան որ քարը գլը-
5 տորցուած էր,) ինչու որ շատ մեծ էր։ Ու ներս
գերեզմանը մտնելով՝ երիտասարդ մը տեսան որ
աջ կողմը նստեր էր ճերմակ պատմուճան հա-
6 գած, ու զարհուրեցան։ Ու անիկա ըսաւ անոնց,
Մի զարհուրիք․ Յիսուս Նազովրեցին կը փընտ-
ռէք, որ խաչուեցաւ․ անիկա յարութիւն առաւ,
հոս չէ․ Ահա այն տեղը ուր որ դրին զանիկա։
7 Բայց գացէք՝ ըսէք անոր աշակերտներուն և
Պետրոսին, թէ ահա ձեզմէ առաջ Գալիլեա կ'եր-
թայ, հոն պիտի տեսնէք զանիկա՝ ինտոր որ ձեզի
8 ըսաւ։ Ու անոնք դողով ու ապշութեամբ բռնը-

ւած՝ *ելան ու փախան գերեզմանէն, և մէկու
մը բան չըսին, քանզի կը վախնային։
9 Յիսուս մէկշաբթի առտուանց յարութիւն ա-
ռած՝ առաջ Մարիամ Մագդաղենացիին երե-
10 ցաւ, որմէ եօթը դեւ հաներ էր։ Անիկա գնաց
անոնց պատմեց՝ որոնք անոր հետ էին, երբոր
11 սուգ կ'ընէին ու կու լային։ Իսկ անոնք երբոր
լսեցին թէ կենդանի է և թէ իրեն երեւցաւ՝ չհա-
ւատացին։
12 Ետքը ուրիշ կերպարանքով երեւցաւ անոնցմէ
13 երկուքին՝ որ քալելով արտը կ'երթային։ Ու ա-
նոնք գացին ուրիշներուն պատմեցին, ու անոնց
ալ չհաւատացին։
14 Վերջը տասնումէկին երեւցաւ՝ երբոր սեղան
նստած էին, ու երեսնին զարկաւ իրենց անհա-
ւատութիւնը և սրտերնուն կարծրութիւնը, վասն
զի որոնց որ ինքը երեւցաւ մեռելներէն յարու-
թիւն առած՝ իրենք չհաւատացին։
15 Ու ըսաւ անոնց, Գացէք բոլոր աշխարհ, ու ա-
ւետարանը քարոզեցէք բոլոր ստեղծուածներուն։
16 Ան որ հաւատայ ու մկրտուի՝ պիտի փրկուի, և
17 ան որ չհաւատայ՝ պիտի դատապարտուի։ Ու ա-
նոնք որ կը հաւատան, աս նշանները անոնց հետ
պիտի երթան․ Իմ անունովս դեւեր պիտի հա-
18 նեն, Նոր լեզուներ պիտի խօսին․ Ձեռքերնին
օձեր պիտի բռնեն, և թէ որ մահաբեր դեղ մը
խմեն, իրենց պիտի չվնասէ․ հիւանդներու վրայ
ձեռք պիտի դնեն, ու անոնք պիտի առողջանան։
19 Արդ Տէրը անոնց հետ խօսելէն ետքը երկինքը
20 համբարձաւ, ու Աստուծոյ աջ կողմը նստաւ։ Ու
անոնք ելան ու ամէն տեղ կը քարոզէին, և Տէրը
անոնց գործակից էր, ու խօսքը կը հաստատէր
այն նշաններով որ անոնց հետը կ'երթային։ Ամէն։

*Ոմն․ շուտ ելան

ԱՒԵՏԱՐԱՆ

ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ

ԳԼՈՒԽ Ա

1 Որովհետև շատերը մեր մէջը հաստատ գիտցուած
բաներուն վրայով եղած պատմութիւնը կարգի
2 դնելու ձեռք զարկին, Ինչպէս որ սկիզբէն ա-
չօք տեսնողները և խօսքին սպասաւոր եղող-
3 ները աւանդեցին մեզի, Ես ալ որ սկիզբէն ա-
մէն բաներուն ճշդութեամբ տեղեկացեր էի,
յարմար դատեցի կարգաւ գրել քեզի, ով պա-
4 տուական Թէոփիլոս, Որ սորված բաներուդ ստու-
գութիւնը իմանաս։
5 Հրէաստանի Հերովդէս թագաւորին օրերը Ա-
բիայի դասակարգութենէն Զաքարիա անունով
քահանայ մը կար, որուն կնիկը Ահարոնի աղջիկ-
6 ներէն էր, և անոր անունը Եղիսաբէթ։ Ու եր-
կուքն ալ Աստուծոյ առջևը արդար էին, և Տէ-
րոջը բոլոր պատուիրանքներուն ու իրաւունք-
7 ներուն մէջ անարատութեամբ կը քալէին։ Եւ
զաւակ չունէին, ինչու որ Եղիսաբէթ ամուլ էր,
ու երկուքն ալ օրերնին անցուցած էին։
8 Ու երբոր անիկա իր դասակարգութեան օրերը
հասնելուն քահանայական պաշտօնը կը կատարէր
9 Աստուծոյ առջևը, Քահանայութեան սովորու-
թեանը պէս իրեն ինկաւ որ Տէրոջը տաճարը
10 մտնէ խնկարկութիւն ընէ։ Եւ ժողովուրդին բո-
լոր բազմութիւնը դուրսը աղօթքի կայներ էին
11 խունկին ատենը։ Ու երևցաւ անոր՝ Տէրոջը հրեշ-

տակը, որ կայներ էր խունկին սեղանին աջ կողմը։
12 Եւ Զաքարիա երբոր տեսաւ՝ շփոթեցաւ, ու ա-
13 նոր վրայ վախ մը ինկաւ։ Եւ հրեշտակը ըսաւ
անոր, Մի վախնար, Զաքարիա, ինչու որ քու
աղօթքդ լսուեցաւ, և քու կինդ Եղիսաբէթ քե-
զի որդի մը պիտի ծնանի, ու անոր անունը *Յով-
14 հաննէս դնես։ Եւ քեզի ուրախութիւն ու ցնծու-
թիւն պիտի ըլլայ, և շատերը անոր ծնանելուն
15 վրայ պիտի ուրախանան. Ինչու որ Տէրոջը ա-
ռաջևը մեծ պիտի ըլլայ, և գինի ու օղի պիտի չխմէ.
և դեռ իր մօրը որովայնէն Սուրբ Հոգիով պիտի
16 լեցուի։ Ու Իսրայելի որդւոցմէ շատերը իրենց
17 Տէր Աստուծոյն պիտի դարձնէ։ Եւ ինքը անոր
առջևէն պիտի գայ Եղիային հոգիովը ու զօրու-
թիւնովը՝ հայրերուն սիրտերը որդւոցը վրայ
դարձնելու, և անհնազանդները՝ արդարներուն
իմաստութեանը, որ Տէրոջը բարեկարգ ժողո-
18 վուրդ մը պատրաստէ։ Եւ Զաքարիա ըսաւ հրեշ-
տակին, Ինչո՞վ գիտնամ աս բանը, որովհետև
ես ծեր եմ, ու իմ կինս իր օրերը անցուցած է։
19 Եւ հրեշտակը պատասխան տալով ըսաւ անոր,
Ես եմ Գաբրիէլը որ Աստուծոյ առջևը կը կայ-
նիմ, ու խրկուեցայ քեզի գրուցելու և աս բա-
20 ներուն աւետիսը քեզի տալու։ Եւ ահա համր
պիտի ըլլաս դուն, ու պիտի չկրնաս խօսիլ մին-
չև այն օրը՝ որ աս բաները ըլլան, քանզի չհա-
ւատացիր իմ խօսքերուս, որոնք իրենց ատենին
21 պիտի կատարուին։ Ու ժողովուրդը Զաքարիա-
յին կը սպասէր, և կը զարմանային անոր տաճա-
22 րին մէջ ուշանալուն վրայ։ Ու երբոր դուրս ե-
լաւ՝ չէր կրնար խօսիլ անոնց հետ. և իմացան
որ տաճարին մէջ տեսիլք մը տեսած է. ու ինքը
նշանով կը խօսէր անոնց հետ, և համր կը կե-

---

*Այսինքն Տէրոջը շնորհքը

23 նար։ Ու եղաւ որ երբ անոր պաշտօնին օրերը
24 լմնցան, իր տունը գնաց։ Եւ ան օրերէն ետքը
անոր կինը Եղիսաբէթ յղացաւ, ու հինգ ամիս
25 ինքզինքը կը պահէր, և կ՚ըսէր, Այսպէս ըրաւ
ինծի Տէրը աս օրերս, որ իմ վրաս նայեցաւ նա-
խատինքս մարդոց մէջէն վերցնելու։
26 Ու վեցերորդ ամսուն մէջ Գաբրիէլ հրեշտակը
Աստուծմէ խրկուեցաւ Գալիլեայի մէկ քաղաքը՝
27 որուն անունը Նազարէթ էր, Մէկ կոյսի մը՝
մարդու մը նշանուած, որուն անունը Յովսէփ
էր՝ Դաւիթի տունէն, և ան կոյսին անունը Մա-
28 րիամ էր։ Ու հրեշտակը անոր գալով ըսաւ, Ող-
ջոյն քեզ, ով շնորհընկալ կոյս, Տէրը քու հետդ
29 է. դուն կանանց մէջ օրհնեալ ես։ Եւ անիկա
տեսնելով՝ անոր խօսքին վրայ շփոթեցաւ, ու
ինքնիրեն կը մտածէր թէ ինչպէս բան պիտի ըլ-
30 լայ աս ողջոյնը։ Եւ հրեշտակը անոր ըսաւ, Մի
վախնար, Մարիամ, ինչու որ Աստուծմէ շնորհք
31 գտար. Եւ ահա պիտի յղանաս ու որդի մը պիտի
ծնանիս, և անոր անունը Յիսուս պիտի դնես։
32 Անիկա մեծ պիտի ըլլայ, ու Բարձրելոյն Որդին
պիտի ըսուի, և Տէր Աստուած պիտի տայ անոր
իր հօրը Դաւիթին աթոռը. ու Յակոբին տանը
33 վրայ յաւիտեան պիտի թագաւորէ, Եւ անոր
34 թագաւորութիւնը վերջ պիտի չունենայ։ Ու Մա-
րիամ ըսաւ հրեշտակին, Ի՞նչպէս պիտի ըլլայ աս
բանը, որովհետև ես էրիկ մարդ չեմ գիտեր։
35 Եւ հրեշտակը պատասխան տալով ըսաւ անոր,
Հոգին Սուրբ պիտի գայ քեզի, ու Բարձրելոյն
զօրութիւնը քու վրադ հովանի պիտի ըլլայ. աս-
տի ան քեզմէ ծնանելու սուրբը Աստուծոյ Որդի
36 պիտի ըսուի։ Եւ ահա քու ազգականդ Եղիսա-
բէթ՝ անիկա իր պառաւութեան ատենը որու զա-
ւակով մը յղի է. ու ասիկա ան ամուլ ըսուա-
37 ծին վեցերորդ ամիսն է. ինչու որ Աստուծոյ

38 քովը բնաւ մէկ բան մը անհնարին չըլլար։ Եւ
Մարիամ ըսաւ, Ահա ես Տէրոջը աղախինն եմ,
քու ըսածիդ պէս թող ըլլայ ինծի. ու հրեշտակը
անոր քովէն գնաց։
39 Ան օրերը ելաւ Մարիամ՝ ու արտորնօք լեռ-
40 նակողմը Յուդայի մէկ քաղաքը գնաց. Եւ մտաւ
Զաքարիային տունը ու Եղիսաբեթին բարև տը-
41 ւաւ։ Եւ եղաւ որ երբ լսեց Եղիսաբէթ Մարիա-
մին բարևը, մանուկը անոր որովայնին մէջը խա-
ղաց, ու Եղիսաբէթ Սուրբ Հոգիով լեցուեցաւ.
42 Եւ բարձր ձայնով մը կանչեց ու ըսաւ, Օրհնեալ
ես դուն կանանց մէջ, և օրհնեալ է քու որո-
43 վայնիդ պտուղը։ Եւ աս ինծի ուսկի՞ց եղաւ, որ
44 իմ Տէրոջս մայրը ինծի գայ. Վասն զի ահա երբ-
որ քու բարևիդ ձայնը ականջիս եկաւ, մանուկը
45 որովայնիս մէջը խաղաց ուրախութենէն։ Եւ ե-
րանի անոր որ *հաւատացեր է, քանզի՛ պիտի
կատարուի ան բաները որ Տէրոջմէ ըսուեցաւ ի-
46 րեն։ Եւ Մարիամ ըսաւ, Իմ անձս կը մեծցնէ
47 Տէրը, Եւ իմ հոգիս ուրախացաւ իմ փրկիչ Աս-
48 տուծովս։ Ինչու որ իր աղախինին խոնարհու-
թեանը նայեցաւ, քանզի ահա ասկէ ետև բոլոր
49 ազգերը ինծի երանութիւն պիտի տան։ Վասն զի
Հզօրը ինծի մեծամեծ բաներ ըրաւ, ու անոր ա-
50 նունը սուրբ է։ Եւ անոր ողորմութիւնը իրմէն
51 վախցողներուն վրայ է ազգէ ազգ։ Իր բազու-
կովը զօրութիւն ցուցուց, ցիրուցան ըրաւ ամ-
52 բարտաւանները իրենց սրտին խորհուրդովը։ Զօ-
րաւորները իրենց աթոռներէն իջեցուց, ու խո-
53 նարհները բարձրացուց։ Անօթիները բարիքնե-
րով լեցուց, և հարուստները պարապ ճամբեց։
54 Օգնութիւն ըրաւ իր Իսրայէլ ծառային՝ իր ո-
55 ղորմութիւնը միտք բերելով, Ինչպէս որ ինքը

*կամ հաւատացեր է թէ

խօսեցաւ մեր հայրերուն՝ Աբրահամին ու անոր
սերունդին յաւիտեան։
56 Եւ Մարիամ անոր քովը երեք ամիսի չափ կե-
ցաւ, ու իր տունը դարձաւ։
57 Ու Եղիսաբեթին ծնանելու ժամանակը լեցուե-
58 ցաւ, ու որդի մը ծնաւ։ Եւ լսեցին անոնք որ ա-
նոր բոլորտիքը կը բնակէին՝ ու անոր ազգական-
ները, որ Տէրը անոր վրայ իր մեծ ողորմութիւնը
ցուցուց, և անոր հետ կ'ուրախանային։
59 Ու եղաւ որ ութերորդ օրը տղան թլփատե-
լու եկան, և զանիկա իր հօրը անունովը Զաքա-
60 րիա կը կոչէին։ Իսկ անոր մայրը պատասխան
տուաւ ու ըսաւ, Ոչ, հապա Յովհաննէս պիտի
61 կոչուի։ Եւ անոր ըսին թէ Քու ազգականներուդ
62 մէջ մէկը չկայ որ աս անունով կոչուի։ Նշանք կ'ը-
նէին անոր հօրը թէ ինչ անունով կ'ուզէ որ ա-
63 նիկա կոչուի։ Ան ալ տախտակ մը ուզեց ու գը-
րեց՝ ըսելով, Յովհաննէս է անոր անունը. ու
64 ամէնքը զարմացան։ Եւ իսկոյն բացուեցաւ անոր
բերանը ու անոր լեզուն, և կը խօսէր ու կ'օրհ-
65 նէր զԱստուած։ Եւ վախ մը ինկաւ ան ամենուն
վրայ՝ որոնք անոնց բոլորտիքը կը բնակէին. ու
աս ամէն բաները Հրէաստանի բոլոր լեռնակողմը
66 կը զրուցուէր։ Եւ ամէն լսողները իրենց սրտե-
րուն մէջը դրին, ու կ'ըսէին, Արդեօք աս տղան
ի՞նչ պիտի ըլլայ. ու Տէրոջը ձեռքը անոր հետն էր,
67 Եւ անոր հայրը Զաքարիա Սուրբ Հոգիով լեց-
68 ուած՝ մարգարէացաւ ու ըսաւ, Օրհնեալ ըլլայ
Իսրայելի Տէր Աստուածը՝ որ այցելութեան եկաւ
69 և իր ժողովուրդին փրկութիւն ըրաւ. Ու մեզի
փրկութեան եղջիւր մը հանեց իր Դաւիթ ծառա-
70 յին տունէն. (Ինչպէս որ սուրբերուն բերնովը
խօսեցաւ, որոնք աշխարհի սկիզբէն 'ի վեր անոր
71 մարգարէներն էին.) Փրկութիւն մեր թշնամինե-
72 րէն և բոլոր մեզ ատողներուն ձեռքէն, Ողորմու-

թիւն ընելու մեր հայրերուն վրայ, և իր սուրբ
73 ուխտը միտք բերելու, (Ան երդումը որ մեր
74 հօրը Աբրահամին ըրաւ,) մեզի տալու, Որ մեր
թշնամիներուն ձեռքէն ազատուելով առանց
75 վախի զանիկա պաշտենք Սրբութիւնով ու ար-
դարութիւնով անոր առջևը մեր կենացը բոլոր
76 օրերուն մէջ։ Եւ դուն, ով մանուկ, Բարձրե-
լոյն մարգարէն պիտի կոչուիս, 'ինչու որ Տէրոջը
երեսին առջևէն պիտի երթաս՝ անոր ճամբաները
77 պատրաստելու, Անոր ժողովուրդին գիտցնելու
[illegible] փրկութիւնը իրենց մեղքերուն թողու-
78 թիւնովը, Մեր Աստուծոյն գթած ողորմութեանը
համար, որով Ծագող արեւելք վերէն մեզի այ-
79 ցելութեան եկաւ՝ Խաւարի և մահուան ստուերի
մէջ նստողներուն լոյս տալու, ու մեր ոտքերը
խաղաղութեան ճամբուն մէջ շիտկելու։
80 Եւ տղան կը մեծնար ու կը զօրանար հոգիով,
և անապատներուն մէջն էր մինչև ան օրը՝ որ
ինքը Իսրայելին երևցաւ։

ԳԼ. Բ

1 Ու եղաւ որ ան օրերը Օգոստոս կայսրէն հրա-
2 ման ելաւ՝ որ բոլոր աշխարհ գրուի. (Աս առջի
աշխարհագիրը եղաւ Կիւրենոսին Սիւրիայի վրայ
3 կուսակալութիւն ըրած ատենը.) Եւ ամէնքը
կ'երթային աշխարհագիրը մտնելու՝ ամէն մէկը
4 իր քաղաքին մէջ. Յովսէփ ալ Գալիլեայէն Նա-
զարէթ քաղաքէն ելաւ դէպ 'ի Հրէաստան Դա-
ւիթի քաղաքը՝ որ Բեթլէհէմ կ'ըսուի, (ինքը
Դաւիթի տունէն ու ազգատոհմէն ըլլալուն հա-
5 մար,) Աշխարհագիրը մտնելու Մարիամին հետ
6 մէկտեղ, որ ան իր նշանածն էր, և յղի էր։ Ու
եղաւ որ երբ անոնք հոն էին, անոր ծնանելու
7 օրերը լեցուեցան։ Եւ իր անդրանիկ որդին ծը-

նաւ, ու խանձարուրով փաթթեց և զանիկա
մսուրին մէջը պառկեցուց, ինչու որ իջևանին մէջ
իրենց տեղ չկար։
8 Եւ այն տեղը հովիւներ կային դաշտի մէջ կե-
ցած, որոնք իրենց հօտերուն գիշերուան պահ-
9 պանութիւնը կ'ընէին։ Եւ ահա Տէրոջը հրեշտակը
անոնց վրայ իջաւ, ու Տէրոջը փառքը անոնց բո-
10 լորտիքը ծագեցաւ. ու խիստ շատ վախցան։ Եւ
հրեշտակը ըսաւ անոնց, Մի վախնաք, ինչու որ
ահա ես ձեզի մեծ ուրախութեան աւետիս կու-
11 տամ, որ բոլոր ժողովուրդին պիտի ըլլայ. Վասն
զի ձեզի այսօր Փրկիչ մը ծնաւ Դաւիթի քաղա-
12 քին մէջ, որ ինքը Օծեալ Տէր է։ Եւ աս ձեզի
նշան մը ըլլայ. մանուկ մը պիտի գտնէք խանձա-
13 րուրով փաթթած ու մսուրի մէջ պառկած։ Եւ
իսկոյն այն հրեշտակին հետը երկնային զօրքերու
բազմութիւն մը եղաւ, որոնք զԱստուած կ'օրհ-
14 նէին ու կ'ըսէին, [illegible] բարձրութեանը մէջ Աս-
տուծոյ փառք, ու երկրիս վրայ խաղաղութիւն,
15 մարդոց մէջ հաճութիւն։ Ու եղաւ որ երբ հրեշ-
տակները անոնցմէ երկինքը վերցան, հովիւները
իրարու ըսին, Եկէք՝ մինչև Բեթլեհէմ երթանք,
ու տեսնենք թէ ի՞նչ է աս եղած բանը, որն որ
16 Տէրը մեզի ցուցուց։ Ու եկան արտորնօք, և
գտան Մարիամը ու Յովսէփը և մսուրին մէջ
17 պառկած մանուկը։ Ու երբոր տեսան՝ իմացուցին
այն խօսքին վրայով՝ որ աս մանուկին համար ի-
18 րենց զրուցուեցաւ։ Եւ ամէնքը որ կը լսէին՝ կը
զարմանային այն բաներուն վրայ որ հովիւները
19 իրենց կը զրուցէին։ Բայց Մարիամ աս ամէն
բաները կը պահէր, ու իր սրտին մէջը կը մտա-
20 ծէր։ Եւ հովիւները դարձան, կը փառաւորէին
ու կ'օրհնէին զԱստուած այն ամէն բաներուն հա-
մար որ լսեցին ու տեսան, ինչպէս որ իրենց զը-
րուցուած էր։

21 Ու երբոր ութ օրերը լման եղան *մանուկը
թլփատելու, անոր անունը Յիսուս դրուեցաւ, որ
հրեշտակէն կոչուած էր՝ դեռ ինքը մօրը որովայ-
նին մէջ չյղացած։
22 Ու Մովսէսին օրէնքին համեմատ երբոր †անոնց
մաքրութեան օրերը լմնցաւ, Երուսաղէմ տա-
23 րին զանիկա Տէրոջը առջևը հանելու, (ինչպէս որ
գրուած է Տէրոջը օրէնքին մէջ, Թէ Ամէն արու
24 որ արգանդ կը բանայ՝ Տէրոջը սուրբ ըսուի,) Ու
Տէրոջը օրէնքին մէջ ըսուածին պէս ընծայ տա-
լու՝ զոյգ մը տատրակ կամ աղաւնիի երկու ձագ։
25 Եւ ահա Երուսաղեմի մէջ մարդ մը կար՝ որուն
անունը Սիմէոն էր, ու այն մարդը արդար ու
աստուածավախ էր, և Իսրայելի՝ մխիթարու-
թեանը կը սպասէր. ու Սուրբ Հոգին անոր վրայ
26 էր։ Եւ անոր յայտնուած էր Սուրբ Հոգիէն թէ
մահ պիտի չտեսնէ, մինչև որ Տէրոջը Օծեալը
27 տեսնէ։ Եւ Հոգիով տաճարը եկաւ. ու երբոր
ծնողքը բերին Յիսուս մանուկը՝ որ օրէնքին սո-
28 վորութեանը պէս անոր համար ընեն, ինքն ալ
զանիկա իր գիրկը առաւ, և օրհնեց զԱստուած
29 ու ըսաւ, Ալ հիմա, ով Տէր, արձակես քու ծա-
ռադ խաղաղութիւնով քու խօսքիդ համեմատ.
30 Վասն զի իմ աչքերս տեսան քու փրկութիւնդ,
31 Որ բոլոր ժողովուրդներուն առջևը պատրաստե-
32 ցիր, Լոյս մը հեթանոսները լուսաւորելու, և
33 փառք քու Իսրայէլ ժողովուրդիդ։ Եւ Յովսէփ
ու անոր մայրը զարմացած էին այն բաներուն
34 վրայ՝ որ անոր համար կը խօսուէին։ Ու Սիմէոն
օրհնեց զանոնք, և անոր մօրը Մարիամին ըսաւ,
Ահա աս մանուկը Իսրայելի մէջ շատ մարդոց իյ-
նալուն ու ելլելուն համար, ու հակառակութեան

*Որմն. զանիկա
†Որմն. անոր

35 նպատակ մը ըլլալու համար կեցած է. (Եւ քու
սրտէդ ալ թուր մը պիտի անցնի.) որ ասանկով
շատ սրտերէն խորհուրդները յայտնուին։
36 Եւ հոն էր Աննա մարգարէն Փանուէլի աղջիկը՝
Ասերի ցեղէն. ասիկա իր օրերը շատ անցուցած
էր՝ էրկանը հետ եօթը տարի կենալով իր կու-
37 սութեանը ժամանակէն, Եւ որբեւարի էր գրեթէ
ութսունըչորս տարուան, որ տաճարէն չէր զատ-
ուեր, հապա ծոմով և աղօթքով Աստուծոյ ծա-
38 ռայութիւն կ'ընէր գիշեր ու ցորեկ։ Եւ ասիկա
նոյն ժամուն եկաւ, ու Տէրոջը գոհութիւն կու-
տար, ու անոր վրայով կը խօսէր այն ամենուն՝
որոնք Երուսաղէմի մէջ փրկութեան կը սպա-
սէին։
39 Ու երբոր ամէն բան կատարեցին Տէրոջը օրէն-
քին համեմատ, նորէն Գալիլեա դարձան իրենց
40 Նազարէթ քաղաքը։ Եւ մանուկը կը մեծնար ու
հոգւով կը զօրանար՝ իմաստութեամբ լեցուած,
ու Աստուծոյ շնորհքը անոր վրայ էր։
41 Եւ անոր ծնողքը ամէն տարի զատկի տօնին Ե-
42 րուսաղէմ կ'երթային։ Ու երբոր անիկա տաս-
ուերկու տարեկան եղաւ, տօնին սովորութեանը
43 պէս երբոր անոնք Երուսաղէմ ելան, Եւ այն օ-
րերը որ լմնցուցին ու նորէն ետ դարձան, Յի-
սուս մանուկը Երուսաղէմ մնաց. և Յովսէփ ու
44 անոր մայրը չէին գիտեր. Հապա կարծելով թէ
անիկա ճամբորդներուն հետն է, մէկ օրուան
ճամբայ գացին, ու կը փնտռէին զանիկա իրենց
45 ազգականներուն և ճանչուորներուն մէջը։ Ու
երբոր չգտան՝ նորէն Երուսաղէմ դարձան անի-
46 կա փնտռելու։ Ու եղաւ որ երեք օրէն ետքը տա-
ճարին մէջը գտան զանիկա, որ վարդապետնե-
րուն հետ նստեր էր, անոնց մտիկ կ'ընէր ու ա-
47 նոնց բան կը հարցնէր։ Եւ ամէն անոր ականջ
դնողները կը զարմանային անոր իմաստութեանը

48 ու պատասխաններուն վրայ։ Ու երբոր տեսան
անիկա՝ ապշած մնացին. և անոր մայրը ըսաւ ա-
նոր, Որդեակ, ինչո՞ւ համար մեզի այդպէս ըրիր.
ահա քու հայրդ ու ես խիստ վշտացած քեզ կը
49 փնտռէինք։ Եւ ըսաւ անոնց, Զիս ինչո՞ւ կը
փնտռէիք, չէի՞ք գիտեր թէ ինծի պէտք է որ
50 իմ Հօրս °տանը ըլլամ։ Եւ անոնք չհասկցան
51 այն խօսքը որ իրենց զրուցեց։ Եւ իջաւ անոնց
հետ ու գնաց Նազարէթ, և անոնց հնազանդ էր.
բայց անոր մայրը աս ամէն խօսքերը իր սրտին
մէջ կը պահէր։
52 Եւ Յիսուս կը զարգանար իմաստութիւնով ու
հասակով, և Աստուծմէ ու մարդոցմէ շնորհք
գտնելով։

ԳԼ. Գ

1 Տիբերիոս կայսրին թագաւորութեանը տասնու-
հինգերորդ տարին՝ Պոնտացի Պիղատոսին Հրէ-
աստանի վրայ կուսակալութիւն ըրած ատենը, ու
Հերովդէսին Գալիլեացւոց վրայ չորրորդապետու-
թեան ատենը, և անոր եղբօրը Փիլիպպոսին Ի-
տուրացւոց և Տրաքոնացւոց երկրին վրայ չոր-
րորդապետութեան ատենը, և Լիւսանիայի Աբի-
լինացւոց վրայ չորրորդապետութեան ատենը,
2 Եւ Աննայի ու Կայիափայի քահանայապետու-
թեան ատենը՝ Աստուծոյ խօսքը եղաւ Զաքա-
րիայի որդւոյն Յովհաննէսին վրայ անապատին
3 մէջ։ Ու անիկա եկաւ Յորդանանու բոլոր կող-
մերը, և ապաշխարութեան մկրտութիւն կը քա-
4 րոզէր մեղաց թողութեան համար. ինչպէս որ Ե-
սայի մարգարէին խօսքերուն գրքին մէջ գրուած
է՝ ըսելով, Անապատի մէջ կանչողին ձայնը, Տէ-

°Կամ՝ գործերուն մէջ

րոջը ճամբան պատրաստեցէք, անոր շաւիղները
5 շիտկեցէք։ Ամէն ձոր պիտի լեցուի, և ամէն լեռ
ու բլուր պիտի ցածնայ, և ծուռը պիտի շիտ-
կուի, ու խորտուբորտ տեղերը հարթ ճամբաներ
6 պիտի ըլլան։ Եւ ամէն մարմին Աստուծոյ փրկու-
թիւնը պիտի տեսնէ։
7 Ու իրմէն մկրտուելու ելլող ժողովուրդներուն
ըսաւ, Իժերու ծնունդներ, ո՞վ իմացուց ձեզի
8 գալու բարկութենէն փախչիլ։ Ուրեմն ապաշխա-
րութեան արժանաւոր պտուղներ բերէք, և մի
սկսիք ձեր ներսի դին ըսել թէ Մենք մեզի հայր՝
Աբրահամը ունինք, քանզի կ'ըսեմ ձեզի որ Աստ-
ուած կարող է աս քարերէս Աբրահամին որդի-
9 ներ հանելու։ Ալ հիմա կացինը ծառերուն ար-
մատին քովը կը դրուի. ուստի ամէն ծառ որ բա-
րի պտուղ չբերեր, կը կտրուի ու կրակը կը ձըգ-
10 ուի։ Եւ ժողովուրդները կը հարցընէին իրեն ու
11 կ'ըսէին, Ուրեմն ի՞նչ ընենք։ Պատասխան տը-
ւաւ ու ըսաւ անոնց, Ով որ երկու հանդերձ ու-
նի, թող մէկը չունեցողին տայ. և ով որ կերա-
12 կուր ունի, նոյնպէս ընէ։ Մաքսաւորներ ալ ե-
կան մկրտուելու, ու ըսին անոր, Վարդապետ,
13 մենք ի՞նչ ընենք։ Ան ալ ըսաւ անոնց, Ձեզի
14 հրամայուածէն աւելի բան չպահանջէք։ Զին-
ուորներն ալ կը հարցընէին անոր ու կ'ըսէին, Եւ
մենք ի՞նչ ընենք. ըսաւ անոնց, Մէկը մի հա-
րըստահարէք, և մէկու մը վրայ զրպարտութիւն
մի ընէք, ու ձեր թոշակովը բաւականացէք։
15 Երբոր ժողովուրդը կը սպասէր, և ամէնքը ի-
րենց սրտերուն մէջ կը մտածէին Յովհաննէսին
16 համար՝ թէ ա՞ս է արդեօք Քրիստոսը, Յովհան-
նէս պատասխան տուաւ ամենուն ու ըսաւ, Ես
ձեզ ջրով կը մկրտեմ, բայց ինծմէ աւելի զօրա-
ւորը կու գայ, որ ես անոր կօշիկներուն կապերը
քակելու արժանի չեմ, անիկա ձեզ պիտի մկրտէ

17 Հոգւով Սրբով և կրակով։ Որուն հեծանոցը իր
ձեռքն է, և իր կալը պիտի մաքրէ, ու ցորենը
իր ամբարը պիտի ժողվէ, և յարդը չմարելու
18 կրակով պիտի այրէ։ Ուրիշ շատ բաներ ալ կը
քարոզէր՝ ժողովուրդը յորդորելով։
19 Բայց Հերովդէս չորրորդապետը անկէ յանդի-
մանուելով իր *եղբօրը կնկանը Հերովդիային հա-
մար, և բոլոր չարութիւններուն համար որ Հե-
20 րովդէս գործեց, Ան ամենուն վրայ աս ալ ա-
ւելցուց, որ Յովհաննէսը բանտի մէջ գոցեց։
21 Ու երբոր մկրտուեցաւ բոլոր ժողովուրդը, և
Յիսուս ալ մկրտուելով՝ աղօթք կ'ընէր, երկինքը
22 բացուեցաւ, Եւ Սուրբ Հոգին մարմնաւոր երե-
ւութով աղաւնիի պէս անոր վրայ իջաւ, ու եր-
կինքէն ձայն մը եկաւ՝ որ կ'ըսէր, Դուն ես իմ
սիրելի Որդիս, քեզի հաւանեցայ։
23 Եւ ինքը Յիսուս սկսեր էր գրեթէ երեսուն
տարեկան ըլլալ, որ (ինչպէս կը կարծուէր) ինքը
Յովսէփին որդին էր, որ ան Հեղիին, որ ան Մա-
24 տաթին, Որ ան Ղեւիին, որ ան Մեղքիին, որ ան
25 Յաննէին, որ ան Յովսէփին, Որ ան Մատաթիա-
յին, որ ան Ամովսին, որ ան Նաւումին, որ ան
26 Եսղիին, որ ան Նանգէին, Որ ան Մաաթին, որ ան
Մատաթիային, որ ան Սեմէիին, որ ան Յովսե-
27 փին, որ ան Յուդային, Որ ան Յովհաննային, որ
ան Ռեսային, որ ան Զօրաբաբելին, որ ան Սա-
28 ղաթիելին, որ ան Ներիին, Որ ան Մեղքիին, որ
ան Ադդիին, որ ան Կովսամին, որ ան Եղմովդա-
29 դին, որ ան Էրին, Որ ան Յովսեսին, որ ան Ե-
ղիազարին, որ ան Յովրիմին, որ ան Մատաթին,
30 որ ան Ղեւիին, Որ ան Սիմէոնին, որ ան Յուդա-
յին, որ ան Յովսէփին, որ ան Յովնանին, որ ան
31 Եղիակիմին, Որ ան Մելեային, որ ան Մայնա-

* Ոմանք եղբօրը՝ Փիլիպպոսին

նին, որ ան Մատաթային, որ ան Նաթանին, որ
32 ան Դաւիթին, Որ ան Յեսսէին, որ ան Ովբ-
բեդին, որ ան Բոոսին, որ ան Սաղմոնին, որ ան
33 Նաասոնին, Որ ան Ամինադաբին, որ ան Արամին,
որ ան Եսրոնին, որ ան Փարեսին, որ ան Յու-
34 դային, Որ ան Յակոբին, որ ան Իսահակին, որ
ան Աբրահամին, որ ան Թարային, որ ան Նա-
35 քովրին, Որ ան Սերուքին, որ ան Ռագաւին, որ
ան Փաղեկին, որ ան Եբերին, որ ան Սաղա-
36 յին, Որ ան Կայնանին, որ ան Արփաքսադին, որ
37 ան Սեմին, որ ան Նոյին, որ ան Ղամեքին, Որ
ան Մաթուսաղային, որ ան Ենովքին, որ ան
Յարեդին, որ ան Մաղաղիէլին, որ ան Կայնա-
38 նին, Որ ան Ենովսին, որ ան Սեթին, որ ան Ա-
դամին, որ ան Աստուծոյ։

ԳԼ. Դ

1 Եւ Յիսուս Հոգւով Սրբով լեցուած՝ Յորդանա-
նէն դարձաւ, ու Հոգիէն անապատը տարուե-
2 ցաւ, Եւ քառասուն օր Սատանայէն փորձուե-
ցաւ. ու ան օրերը բան մը չկերաւ, և ան օրերը
լմըննալէն ետև անօթեցաւ։
3 Ու Սատանան ըսաւ անոր, Թէ որ Աստուծոյ
4 Որդին ես, ըսէ աս քարին որ հաց ըլլայ։ Եւ Յի-
սուս պատասխան տուաւ անոր ու ըսաւ, Գըր-
ուած է թէ Ոչ միայն հացով կ'ապրի մարդ, հա-
պա Աստուծոյ ամէն խօսքովը։
5 Եւ Սատանան մէկ բարձր լեռ մը հանելով զա-
նիկա, աշխարհի բոլոր թագաւորութիւնները ցու-
6 ցուց անոր մէկ վայրկեանի մը մէջ. Եւ Սատա-
նան ըսաւ անոր, Աս ամէն իշխանութիւնը ու ա-
նոնց փառքը քեզի պիտի տամ, ինչու որ ինծի
յանձնուած է, և որու որ ուզեմ՝ կու տամ ա-

7 նիկա. Ուստի թէ որ դուն իմ առջևս ինկնաս եր-
8 կրպագութիւն ընես, ամէնը քեզի ըլլայ։ Եւ Յի-
սուս պատասխան տուաւ անոր ու ըսաւ, *Գըր-
ուած է թէ Քու Տէր Աստուծոյդ երկրպագու-
թիւն ընես, ու միայն զանիկա պաշտես։
9 Եւ զանիկա տարաւ Երուսաղէմ ու տաճարին
աշտարակին վրայ կայնեցուց, ու ըսաւ անոր, Թէ
որ դուն Աստուծոյ Որդին ես, քեզ ասկէ վար
10 ձգէ. ինչու որ գրուած է թէ Իր հրեշտակնե-
րուն պիտի ապսպրէ քեզի համար որ քեզ պա-
11 հեն. Ու ձեռքերնուն վրայ պիտի վերցընեն քեզ,
12 որ չըլլայ թէ ոտքդ քարի զարնես։ Եւ Յիսուս
պատասխան տուաւ ու ըսաւ անոր, Ըսուած է
13 թէ Քու Տէր Աստուածդ չփորձես։ Ու երբոր Սա-
տանան ամէն փորձութիւնը կատարեց, ատեն մը
ետ կեցաւ անկէ։
14 Եւ Յիսուս Հոգիին զօրութեամբը Գալիլեա
դարձաւ, ու անոր համբաւը ան գաւառին ամէն
15 կողմերը տարածուեցաւ։ Եւ ինքը անոնց ժողո-
վարաններուն մէջը կը սորվեցընէր, ու ամենէն
կը փառաւորուէր։
16 Ու եկաւ Նազարէթ՝ ուր որ ինքը մեծցած էր,
և իր սովորութեանը պէս շաբաթ օրը մտաւ ժո-
17 ղովարանը, ու ելաւ որ կարդայ։ Եւ տուին ա-
նոր Եսայի մարգարէին գիրքը. ու երբոր գիրքը
բացաւ, գտաւ ան տեղը՝ ուր որ գրուած էր,
18 Տէրոջը Հոգին իմ վրաս է. †ինչու որ՝ զիս օծեց
աղքատներուն աւետարան քարոզելու, զիս խըր-
19 կեց կոտրած սիրտ ունեցողները բժշկելու, Գե-
րիներուն ազատութիւն՝ և կոյրերուն տեսութիւն
քարոզելու, հարստահարութիւն կրողները ազատ
թող տալու, Տէրոջը ընդունելի տարին քարոզե-

*Ոմանք Ետևս գնա Սատանայ. ինչու որ գրուած
†Կամ անոր համար

20 լու։ Եւ գիրքը գոցելով՝ տուաւ սպասաւորին ու
նստաւ. և ժողովարանը եղողներուն ամէնը աչ-
21 քերնին տնկած անոր կը նայէին։ Եւ սկսաւ ա-
նոնց ըսել, Այսօր աս գրուածը կատարուեցաւ
22 ու ձեր ականջները լսեցին։ Եւ ամէնքը անոր վը-
րայ կը վկայէին, ու կը զարմանային անոր բեր-
նէն ելած շնորհալի խօսքերուն վրայ, ու կ'ըսէին,
23 Ասիկա Յովսէփին որդին չէ՞։ Եւ ըսաւ անոնց, Ի-
րաւ որ դուք ինծի պիտի ըսէք աս առակը,
Բժիշկ, քու անձդ բժշկէ. որչափ բաներ լսեցինք
որ Կափառնայումի մէջ եղաւ, հոս ալ ըրէ քու
24 քաղաքիդ մէջ։ Եւ ըսաւ, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի,
թէ Մարգարէ մը իր քաղաքին մէջ ընդունելի
25 չէ։ Եւ յիրաւի կ'ըսեմ ձեզի, թէ շատ որբևա-
րիներ կային Եղիային օրերը Իսրայելի մէջ, երբ-
որ երեք տարի ու վեց ամիս երկինքը գոցուե-
ցաւ, անանկ որ մեծ սով եղաւ բոլոր երկրին
26 մէջ. Բայց Եղիա անոնցմէ մէկուն չխրկուեցաւ,
հապա միայն Սիդոնացւոց Սարեփթա քաղաքին
27 մէջ որբևայրի կնկան մը։ Եւ շատ բորոտներ կա-
յին Իսրայելի մէջ Եղիսէ մարգարէին ատենը, ու
անոնցմէ մէկը չմաքրուեցաւ, հապա միայն Նէ-
28 եման Ասորին։ Եւ ժողովարանին մէջ ամէնքն ալ
բարկութիւնով լեցուեցան՝ երբոր աս խօսքերը
29 լսեցին. Ու ելան անիկա քաղաքէն դուրս հանե-
ցին, և տարին զանիկա մինչև ան լեռանը ցցուած
ծայրը, որուն վրայ իրենց քաղաքը շինուած էր,
30 որ զանիկա բարձր տեղէն վար ձգեն։ Բայց ինքը
անոնց մէջէն անցաւ գնաց։
31 Եւ իջաւ Գալիլեայի Կափառնայում քաղաքը,
32 ու շաբաթ օրերը կը սորվեցընէր անոնց։ Եւ կը
զարմանային անոր վարդապետութեանը վրայ,
33 ինչու որ իշխանութիւնով էր անոր խօսքը։ Եւ
ժողովարանին մէջ մարդ մը կար, որ պիղծ դևի
34 ոգի ունէր, ու մեծ ձայնով մը աղաղակեց՝ ըսե-

լով, Թող տուր, դուն մեզի հետ ի՞նչ բան ու-
նիս, Յիսուս Նազովրեցի. միթէ մեզ կորսնցը-
նելո՞ւ եկար. գիտեմ քեզ ով ես, Աստուծոյ
35 Սուրբը։ Եւ Յիսուս սաստեց անոր ըսելով, Պա-
պանձէ ու ել անկէ. ու դևը զանիկա [illegible]
ժողովուրդներուն մէջտեղը գետինը զարկաւ, և ե-
36 լաւ անկէ, ու վնաս մը չտուաւ անոր։ Եւ զար-
մանք եկաւ ամենուն վրայ, և իրարու հետ կը
խօսէին ու կ'ըսէին, Աս ի՞նչ խօսք է, որ իշխա-
նութիւնով և զօրութիւնով կը հրամայէ պիղծ
37 ոգիներուն, ու կ'ելլեն։ Եւ անոր համբաւը տա-
րածուեցաւ շրջակայ գաւառին ամէն տեղերը։
38 Ու ժողովարանէն ելլելով՝ Սիմոնին տունը մը-
39 տաւ։ Սիմոնին զոքանչն ալ սաստիկ ջերմով կը
40 տանջուէր, ու անոր համար աղաչեցին իրեն։ Եւ
Յիսուս անոր վրայ կայնելով՝ սաստեց ջերմին, որ
թողուց զանիկա. և շուտ մը ելաւ ու անոնց
սպասաւորութիւն կ'ընէր։
41 Եւ արևը մարը մտած ատենը՝ ամէն անոնք որ
ունէին տեսակ տեսակ ցաւերով հիւանդներ՝ ի-
րեն բերին զանոնք. ինքն ալ անոնցմէ ամէն մէ-
42 կուն վրայ ձեռք դնելով՝ բժշկեց զանոնք։ Դևեր
ալ կ'ելլէին շատերէն, կ'աղաղակէին ու կ'ըսէին
թէ Դուն ես Քրիստոս՝ Աստուծոյ Որդին. և ինքը
կը սաստէր ու թող չէր տար անոնց որ խօսին,
ինչու որ գիտէին թէ ինքը Քրիստոսն է։
43 Ու երբոր ցորեկ եղաւ՝ ելաւ ու գնաց անա-
պատ տեղ մը, և ժողովուրդները կը փնտռէին
զանիկա. եկան մինչև անոր, ու կը ստիպէին զա-
44 նիկա որ իրենցմէ չերթայ. Բայց անիկա ըսաւ ա-
նոնց, Պէտք է ինծի որ ուրիշ քաղաքներու ալ
Աստուծոյ թագաւորութիւնը քարոզեմ, քանզի
45 աս բանիս համար խրկուած եմ։ Ու Գալիլեայի
ժողովարաններուն մէջ կը քարոզէր։

ԳԼ. Ե

1 Ու եղաւ որ երբ ժողովուրդը անոր բոլորտիքը
դիզուեցաւ Աստուծոյ խօսքը լսելու համար,
ինքն ալ Գեննեսարեթի ծովակին քովը կեցեր
2 էր։ Ու տեսաւ երկու նաւեր որ ծովակին քովը
կեցեր էին, և ձկնորսները անոնց մէջէն ելած՝
3 ուռկանները կը լուային։ Ինքը այն նաւերուն մէ-
կուն մէջը մտաւ որ Սիմոնինն էր, և աղաչեց ա-
նոր որ քիչ մը ցամաքէն ծովուն մէջը տանի. և
նստելով նաւուն մէջէն ժողովուրդներուն կը
սորվեցընէր։
4 Ու երբոր խօսելէն դադարեցաւ՝ ըսաւ Սիմո-
նին, Առաջ տար նաւը դէպ 'ի խորունկը, և ուռ-
5 կաններնիդ ձգեցէք ձուկ որսալու։ Եւ Սիմոն
պատասխան տալով ըսաւ անոր, Վարդապետ,
բոլոր գիշերս աշխատեցանք ու բան մը չբռնե-
ցինք, բայց քու խօսքիդ համար ուռկանը ձը-
6 գեմ։ Ու երբոր ասոր ըրին՝ խիստ շատ ձուկեր
ժողվեցին մէջը, ու իրենց ուռկանը կը պատռը-
7 տէր։ Եւ աչք կ'ընէին միւս նաւուն մէջ եղող
իրենց ընկերներուն՝ որ գան օգնեն իրենց. և ե-
կան ու երկու նաւերն ալ լեցուցին, մինչև որ
8 ընկղմելու մօտ էին։ Սիմոն Պետրոս երբոր տե-
սաւ՝ Յիսուսի ծունկերուն ինկաւ ու ըսաւ, Տէր,
իմ քովէս մեկդի գնա, ինչու որ ես մեղաւոր
9 մարդ մըն եմ։ Վասն զի ապշութիւնը պատեց
զանիկա և անոր հետը եղող ամէնը՝ այն իրենց
10 բռնած ձուկերուն որսին համար։ Նոյնպէս ալ
Զեբեդէոսին որդիքը Յակոբոս և Յովհաննէս, ո-
րոնք Սիմոնին ընկերներն էին. ու Յիսուս ըսաւ
Սիմոնին, Մի վախնար, ասկէ ետև մարդոց որ-
11 սորդ պիտի ըլլաս։ Եւ նաւերը ցամաքը հանե-
լով՝ ամէն բան թողուցին ու անոր ետևէն գացին։

12 Ու եղաւ որ երբ ինքը քաղաքի մը մէջ էր, ա-
հա մէկ մարդ մը բորոտութիւնով լեցուն՝ երբոր
Յիսուսը տեսաւ, երեսի վրայ իյնալով աղաչեց
անոր ու ըսաւ, Տէր, թէ որ ուզես՝ կրնաս զիս
13 մաքրել։ Եւ Յիսուս իր ձեռքը երկնցընելով
դպաւ անոր, ու ըսաւ, Կ'ուզեմ՝ մաքրուէ։ և
14 շուտ մը բորոտութիւնը անկէ գնաց։ Ու ինքը
պատուիրեց անոր որ մէկու մը չըսէ, հապա ը-
սաւ, Գնա քեզ քահանային ցուցուր, և Մովսէ-
սին պատուիրածին պէս քու մաքրուելուդ ըն-
ծան տուր՝ անոնց վկայութիւն ըլլալու համար։
15 Եւ անոր վրայով խօսքը աւելի կը տարածուէր։
ու շատ ժողովուրդներ կը ժողվուէին մտիկ ը-
նելու, և անով իրենց հիւանդութիւններէն բը-
16 ժշկուելու։ Ու ինքը անապատ տեղուանք կը
քաշուէր և աղօթք կ'ընէր։
17 Ու եղաւ որ մէկ օր մը ինքը կը սորվեցընէր,
ու փարիսեցիներ և օրինաց վարդապետներ նըս-
տած էին, որոնք Գալիլեայի ու Հրէաստանի ու
Երուսաղեմի բոլոր գիւղաքաղաքներէն ժողվուած
էին. ու Տէրոջը զօրութիւնը հոն էր անոնք
18 բժշկելու։ Եւ ահա քանի մը մարդիկ մէկ անդա-
մալոյծ մարդ մը մահիճովը բերին, և հնարը կը
փնտռէին թէ ինչպէս զանիկա ներս խօթեն, ու
19 դնեն անոր առջևը։ Ու երբոր բազմութենէն
ճամբայ չէին գտներ՝ որ անկէ ներս խօթեն անի-
կա, տանիքին վրայ ելան, և զանիկա կղմինտր-
ներուն մէջէն մահիճովը մէջտեղը Յիսուսին առ-
20 ջևը իջեցուցին։ Եւ անիկա տեսնելով անոնց հա-
ւատքը՝ ըսաւ անոր, Ով մարդ, քու մեղքերդ
21 քեզի ներուած են։ Եւ դպիրները ու փարիսեցի-
ները սկսան խորհիլ ու ըսել, Ո՞վ է ասիկա՝ որ
հայհոյութիւններ կը խօսի. ո՞վ կրնայ մեղաց թո-
22 ղութիւն տալ, բայց միայն Աստուած։ Եւ Յիսուս
իմանալով անոնց խորհուրդները՝ պատասխան

տալու ու ըսաւ անոնց, Սրտերնուդ մէջ ի՞նչ կը
23 խորհիք։ Ո՞րը աւելի դիւրին է, Քու մեղքերդ
քեզի ներուած են՝ ըսե՞լը, թէ Ելիր ու քալէ՝
24 ըսելը։ Բայց որպէս զի գիտնաք թէ Որդին մար-
դոյ իշխանութիւն ունի երկրի վրայ մեղքերու
թողութիւն տալու, (ըսաւ անդամալոյծին,) Քեզի
25 կ'ըսեմ, Ելիր մահիճդ առ ու տունդ գնա։ Ան
ալ իսկոյն անոնց առջեւ ելաւ, ու վրան առաւ
ինչ բանի վրայ որ պառկած էր, և գնաց իր
26 տունը, ու Աստուծոյ փառք կու տար։ Եւ ա-
մէնքը ապշած մնացին, ու Աստուծոյ փառք կու-
տային, և վախով լեցուած՝ կ'ըսէին թէ Այսօր
նորանշան բաներ տեսանք։
27 Եւ աս բաներէն ետև ելաւ անկէ, ու տեսաւ մէկ
մաքսաւոր մը՝ որուն անունը Ղևի էր, որ մաքս
ընդունելու տեղը նստեր էր, ու ըսաւ անոր, Ե-
28 տևէս եկուր։ Ան ալ թողուց ամէնը և ելաւ
29 գնաց անոր ետևէն։ Ու Ղևի անոր մեծ կոչունք
մը ըրաւ իր տանը մէջ. և շատ բազմութիւն կար
մաքսաւորներու և ուրիշներու՝ որ անոնց հետ
30 սեղան նստեր էին։ Եւ անոնց դպիրները ու փա-
րիսեցիները տրտունջ կ'ընէին անոր աշակերտնե-
րուն ու կ'ըսէին, Ինչո՞ւ համար մաքսաւորներուն
և մեղաւորներուն հետ կ'ուտէք ու կը խմէք։
31 Եւ Յիսուս պատասխան տալով ըսաւ անոնց, Ա-
ռողջներուն բժիշկ պէտք չէ, հապա հիւանդնե-
32 րուն. Ես արդարները կանչելու չեկայ, հապա
մեղաւորները՝ ապաշխարութեան։
33 Անոնք ալ ըսին անոր, Ինչո՞ւ Յովհաննէսին ա-
շակերտները շատ անգամ ծոմ կը պահեն և ա-
ղօթքներ կ'ընեն, նոյնպէս ալ փարիսեցւոց աշա-
կերտները. և քուկիններդ կ'ուտեն ու կը խմեն։
34 Անիկա ալ ըսաւ անոնց, Կրնա՞ք հարսնիքին
տղոցը ծոմ պահել տալ՝ քանի որ փեսան իրենց
35 հետն է։ Բայց օրեր պիտի գան՝ որ երբ փեսան

իրենցմէ վերցուի, հապա ան օրերը ծոմ պիտի
36 պահեն։ Առակ մըն ալ ըսաւ անոնց, թէ Մէկը
չձգեր նոր լաթի կտոր հին հանդերձի վրայ, եթէ
ոչ՝ ան նորը պատռուածք ալ կ'ընէ, ու հինցա-
ծին հետ ալ չմիաբանիր ան նոր լաթէն եղած
37 կտորը։ Եւ մէկը նոր գինին հին տիկերու մէջ
չդներ. եթէ ոչ՝ նոր գինին *տիկերը կը պատռէ,
38 ինքը կը թափի ու տիկերը կը կորսուին. Հապա
նոր գինին նոր տիկերու մէջ դնելու է, ու եր-
39 կուքն ալ կը պահուին։ Եւ մէկը հին գինին խմե-
լէն ետև անմիջապէս նորը չուզեր, քանզի կ'ըսէ
թէ Հինը աւելի ախորժելի է։

ԳԼ. Զ

1 Ու եղաւ որ երկրորդ առաջին շաբաթ օրը ինքը
արտերուն մէջէն կ'անցնէր, և իր աշակերտները
ցորենի հասկեր փրցընելով՝ ձեռքերնուն մէջ կը
2 շփէին ու կ'ուտէին։ Ու փարիսեցիներէն ոմանք
ըսին անոնց, Աս ի՞նչ բան կ'ընէք, որ արժան
3 չէ ընել շաբաթ օրը։ Եւ Յիսուս պատասխան տա-
լով անոնց ըսաւ, Չէ՞ք կարդացեր դուք Դաւի-
թին ըրածը, երբոր անօթեցաւ ինքը և անոնք
4 որ իր հետն էին. Ինչպէս անիկա Աստուծոյ տունը
մտաւ, և առաջաւորութեան հացերը առաւ ու
կերաւ, և տուաւ անոնց ալ որ իր հետն էին. որ
մէկու մը օրինաւոր չէ ուտել, բայց միայն քահա-
5 նաներուն։ Եւ ըսաւ անոնց, Որդին մարդոյ շա-
բաթին ալ Տէրն է։
6 Ու եղաւ որ ուրիշ շաբաթ օր մըն ալ ինքը ժո-
ղովարանը մտաւ ու կը սորվեցընէր. և հոն մարդ
7 մը կար որուն աջ ձեռքը չորցած էր։ Եւ դպիր-
ները ու փարիսեցիները անոր կը սպասէին՝ թէ

*Ոմ.—Ն. հին տիկերը

շաբաթ օրը արդեօք կը բժշկէ՞, որպէս զի ամբաս-
8 տանութեան առիթ մը գտնեն անոր դէմ։ Իսկ
ինքը գիտնալով անոնց խորհուրդները՝ ըսաւ այն
մարդուն որուն ձեռքը չորցած էր, Ելի՛ր՝ մէջ-
9 տեղը կայնէ։ Ան ալ ելաւ կայնեցաւ։ Անատենը
Յիսուս ըսաւ անոնց, Ձեզի բան մը հարցընեմ.
Շաբաթ օրը ի՞նչ արժան է, բարի՞ք ընել թէ
չարիք ընել, հոգի մը ապրեցընե՞լ թէ մեռցընել։
10 Եւ շուրջանակի ամենուն վրայ նայելով՝ ըսաւ ա-
նոր, Ձեռքդ երկընցուր։ Ան ալ այնպէս ըրաւ,
11 ու անոր ձեռքը ողջացաւ միւսին պէս։ Եւ ա-
նոնք կատաղութեամբ լեցուեցան, ու իրարու
հետ կը խօսէին թէ ինչ ընեն Յիսուսին։
12 Եւ եղաւ որ այն օրերը լեռը ելաւ աղօթք ընե-
լու, ու բոլոր գիշերը Աստուծոյ աղօթք ընելով
13 անցուց։ Ու երբոր առտու եղաւ՝ կանչեց իր ա-
շակերտները, ու անոնցմէ տասուերկու հոգի
14 ընտրեց, որոնք առաքեալ ալ անուանեց. Սիմո-
նը՝ որն որ Պետրոս ալ անուանեց, և անոր եղ-
բայրը Անդրէասը, Յակոբոսը ու Յովհաննէսը,
15 Փիլիպպոսը և Բարթողոմէոսը, Մատթէոսը և
Թովմասը, Ալփէոսեան Յակոբոսը և Նախանձա-
16 յոյզ ըսուած Սիմոնը, Յակոբոսին եղբայրը Յու-
դան՝ և Իսկարիովտացի Յուդան՝ որ և մատնիչ
17 եղաւ։ Եւ անոնց հետ իջնելով՝ մէկ տափարակ
տեղ մը կայնեցաւ, նաև իր աշակերտներուն ժո-
ղովը՝ ու մեծ բազմութիւն մը ժողովուրդներու՝
բոլոր Հրէաստանէն ու Երուսաղեմէն և Տիւրոսի
18 ու Սիդոնի ծովեզերքէն, Որոնք եկան անոր խօս-
քերը մտիկ ընելու, ու իրենց հիւանդութիւններէն
բժշկուելու։ և պիղծ ոգիներէն նեղութիւն կրող-
19 ներն ալ եկան ու կը բժշկուէին։ Եւ բոլոր ժողո-
վուրդը կ՚ուզէր իրեն դպչիլ, ինչու որ զօրու-
թիւն կ՚ելլէր իրմէն ու ամէնը կը բժշկէր։
20 Եւ ինքը իր աչքերը դէպ իր աշակերտներուն

վերցուց ու ըսաւ, Երանի՜ ձեզի աղքատներուդ,
ինչու որ ձերն է Աստուծոյ թագաւորութիւնը։
21 Երանի՜ ձեզի որ հիմա անօթի էք, ինչու որ պիտի
կշտանաք. երանի՜ ձեզի որ հիմա կու լաք, ինչու
22 որ պիտի խնդաք։ Երանի է ձեզի՝ երբոր մարդիկ
ձեզ ատեն, ու երբոր ձեզ իրենց ընկերութենէն
մերժեն ու նախատեն, և ձեր վրայով գէշ անուն
23 հանեն Որդւոյ մարդոյ պատճառովը։ Ուրախ ե-
ղէք դուք այն օրը ու ցնծացէք, որ ահա ձեր
վարձքը շատ է երկինքը. վասն զի իրենց հայրերը
24 այդպէս կ՚ընէին մարգարէներուն։ Բայց վա՜յ ձեզի
հարուստներուդ, ինչու որ ձեր մխիթարութիւնը
25 առած էք։ Վա՜յ ձեզի որ կուշտ էք, ինչու որ պի-
տի անօթենաք. վա՜յ ձեզի որ հիմա կը ծիծաղիք,
26 ինչու որ սուգ պիտի ընէք ու լաք։ Վա՜յ ձեզի՝
երբոր *մարդիկ ձեր վրայով աղէկ խօսին, ինչու
որ իրենց հայրերը այդպէս կ՚ընէին սուտ մար-
գարէներուն։
27 Բայց կ՚ըսեմ ձեզի որ մտիկ կ՚ընէք, Սիրեցէք
ձեր թշնամիները, ձեզ ատողներուն բարի ըրէք.
28 Ձեզ անիծողները օրհնեցէք, ձեզի նեղութիւն
29 տուողներուն համար աղօթք ըրէք։ Ան որ քու
մէկ ծնօտիդ կը զարնէ, միւսն ալ մօտեցուր անոր.
և ան որ քու վերարկուդ քեզմէ կը հանէ, մի
30 արգիլեր անկէ շապիկդ ալ։ Ան ամենուն որ քեզմէ
կ՚ուզէ՝ տուր, ու քու բաներդ առնողէն ետ
31 մի պահանջեր։ Եւ ինտոր կ՚ուզէք որ մարդիկ ձե-
32 զի ընեն, դուք ալ անոնց անանկ ըրէք։ Եւ թէ
որ դուք ձեզ սիրողները սիրէք՝ ի՞նչ շնորհ կ՚ու-
նենաք. ինչու որ մեղաւորներն ալ կը սիրեն զի-
33 րենք սիրողները։ Եւ թէ որ դուք ձեզի բարի ը-
նողներուն բարի ընէք, ի՞նչ շնորհ կ՚ունենաք.
34 ինչու որ մեղաւորներն ալ նոյն բանը կ՚ընեն։ Եւ

*Ոմանք բոլոր մարդիկ

թէ որ անանկ մարդոց փոխ տաք՝ որոնցմէ յոյս
ունիք առնելու, ի՞նչ շնորհ կ'ունենաք. ինչու որ
մեղաւորներն ալ մեղաւորներուն փոխ կու տան,
35 որ նոյն չափովը ետ առնեն։ Հապա սիրեցէք դուք
ձեր թշնամիները, ու բարի ըրէք, և փոխ տուէք
առանց փոխարէնի մը սպասելու, և ձեր վարձքը
շատ պիտի ըլլայ, ու Բարձրելոյն որդիքը պիտի
ըլլաք. ինչու որ անիկա բարերար է ապերախտ-
36 ներուն ու չարերուն։ Ուրեմն գթած եղէք՝ ինչ-
37 պէս որ ձեր Հայրն ալ գթած է։ Մի դատէք, ու
պիտի չդատուիք. մի դատապարտէք, ու պիտի
չդատապարտուիք. ներեցէք, ու ձեզի պիտի ներ-
38 ուի. Տուէք, ու ձեզի պիտի տրուի. աղէկ չա-
փով, կոխուած, ցնցուած, լեփլեցուն պիտի
տրուի ձեր գոգը. քանզի այն չափովը որով դուք
կը չափէք, ձեզի պիտի չափուի։
39 Առակ մըն ալ ըսաւ անոնց, Միթէ կոյրը կուրին
կրնա՞յ առաջնորդութիւն ընել, չէ՞ որ երկուքն
40 ալ փոսը պիտի իյնան։ Աշակերտը իր վարդապե-
տէն մեծ չէ, բայց ամէն կատարելապէս վար-
ժուածը իր վարդապետին պէս կ'ըլլայ։
41 Եւ ինչո՞ւ քու եղբօրդ աչքին մէջի շիւղը կը
տեսնես, ու քու աչքիդ մէջի գերանին չես նա-
42 յիր։ Կամ ի՞նչպէս կրնաս ըսել քու եղբօրդ, Եղ-
բայր, թող տուր որ աչքիդ մէջի շիւղը հանեմ.
և դուն քու աչքիդ մէջի գերանը չես տեսներ.
կեղծաւոր, առաջ քու աչքէդ գերանը հանէ, ու
ետքը պարզ պիտի տեսնես քու եղբօրդ աչքին
43 մէջի շիւղը հանելու։ Ինչու որ չկայ բարի ծառ
մը որ չար պտուղ բերէ, ոչ ալ չար ծառ մը որ
44 բարի պտուղ բերէ. վասն զի ամէն ծառ իր պը-
տուղէն կը ճանչցուի. ինչու որ փուշերէն թուզ
չեն քաղեր, ու մորենիէն խաղող չեն ժողվեր։
45 Բարի մարդը իր սրտին բարի գանձէն բարութիւն
կը բղխէ, և չար մարդը իր սրտին չար գանձէն

չարութիւն կը բղխէ. ինչու որ իր բերանը սրտին
աւելցուքէն կը խօսի։
46 Եւ ինչո՞ւ զիս, Տէր, Տէր, կը կոչէք, ու ըսած
47 բաներս չէք կատարեր։ Ան ամէնը որ ինծի կու-
գայ և իմ խօսքերս կը լսէ ու անոնք կը կատա-
48 րէ, ձեզի ցուցնեմ թէ որու կը նմանի։ Անիկա
տուն շինող մարդու մը կը նմանի, որ փորեց ու
խորունկցուց, ու հիմը վէմի վրայ դրաւ. և ջու-
րերուն յորդած ատենը գետը զարկաւ այն տանը,
ու չկրցաւ զանիկա շարժել, ինչու որ վէմի վրայ
49 հաստատուած էր։ Բայց ան որ իմ խօսքերս կը լսէ
ու չկատարեր, կը նմանի այն մարդուն՝ որ հողի
վրայ առանց հիմի տուն կը շինէ. որուն գետը
զարկաւ, և շուտ մը փլաւ, ու այն տանը կործա-
նումը մեծ էր։

ԳԼ. Է

1 Ու երբոր իր բոլոր խօսքերը ժողովուրդին ա-
կանջներուն ըսելը լմնցուց, մտաւ Կափառնա-
2 յում։ Եւ հարիւրապետի մը ծառայ ծանր հի-
ւանդացած՝ մօտ էր մեռնելու, որ սիրելի էր ա-
3 նոր։ Երբոր Յիսուսի վրայով լսեց, Հրէաներէն
քանի մը ծերեր խրկելով՝ աղաչեց անոր որ գայ
4 իր ծառան ապրեցընէ։ Անոնք ալ եկան Յիսուսի
և թախանձանօք կ'աղաչէին անոր ու կ'ըսէին թէ
Անիկա արժանի է՝ որուն աս շնորհը պիտի ընես.
5 ինչու որ մեր ազգը կը սիրէ, ու ժողովարանը
6 անիկա շինեց մեզի։ Եւ Յիսուս անոնց հետ գնաց.
երբոր տունէն շատ հեռու չէր, հարիւրապետը
խրկեց անոր քանի մը բարեկամներ, ու ըսաւ ա-
նոր, Տէր, մի յոգնիր, ինչու որ ես արժանի չեմ
7 որ դուն իմ յարկիս տակը մտնես. Անոր համար
ես ինքզինքս ալ արժանի չսեպեցի քեզի գալու.

հապա խօսքով զրուցէ, և իմ ծառաս պիտի
8 բժշկուի· Ինչու որ ես ալ իշխանութեան տակ
դրուած մարդ մըն եմ, ու իմ հրամանիս տակը
զինուորներ ունիմ· և ասոր կ'ըսեմ, Գնա, ու
կ'երթայ· և միւսին՝ Թէ Եկուր, ու կու գայ, և
9 ծառայիս՝ Թէ Աս բանը ըրէ, ու կ'ընէ։ Յիսուս աս
բաները լսելով՝ զարմացաւ անոր վրայ· և իր ե-
տևէն գացող ժողովուրդին դարձաւ ու ըսաւ,
Ձեզի կ'ըսեմ, որ Իսրայէլի մէջ անգամ ես այս-
10 չափ հաւատք չգտայ։ Ու պատգամաւորները նո-
րէն տուն դարձան, և հիւանդ ծառան առողջա-
ցած գտան։
11 Ու եղաւ որ հետևեալ օրը քաղաք մը կ'եր-
թար՝ որուն անունը Նային էր, և անոր հետը
կ'երթային իր աշակերտներէն շատերը ու մեծ
12 բազմութիւն։ Ու երբոր քաղաքին դրանը մօտե-
ցաւ, ահա մեռել մը դուրս կը հանէին՝ իր մօրը
մէկ հատիկ տղան· և անիկա որբևայրի էր, ու
13 քաղաքին շատ ժողովուրդը անոր հետն էր։ Ու
Տէրը անիկա տեսնելով՝ խղճաց անոր վրայ, ու
14 ըսաւ անոր, Մի լար։ Ու մօտենալով դագաղին
դպաւ, ու տանողները կանգ առին· և ըսաւ, Ով
15 պատանի, քեզի կ'ըսեմ, Ելիր։ Ու մեռելը ելաւ
նստաւ, և սկսաւ խօսիլ· ու տուաւ զանիկա իր
16 մօրը։ Ու ամէնքն ալ վախով բռնուեցան, ու
զԱստուած կը փառաւորէին ըսելով Թէ Մեծ մար-
գարէ մը ելեր է մեր մէջը· և Թէ Աստուած իր
17 ժողովուրդին այցելութիւն ըրաւ։ Ու աս ձայնը
անոր վրայով բոլոր Հրէաստան ելաւ՝ ու բոլոր
շրջակայ տեղուանքը։
18 Ու Յովհաննէսին պատմեցին իր աշակերտները
19 աս ամէն բաներուն վրայով։ Յովհաննէս ալ իր
աշակերտներէն երկուքը իրեն կանչեց, և զանոնք
Յիսուսի խրկեց՝ ըսելով, Դուն ա՞ն ես որ գալու
20 էիր, Թէ ուրիշի մը սպասենք։ Ու ան մարդիկը

եկան անոր ու ըսին, Յովհաննէս մկրտիչը մեզ
խրկեց քեզի, ու կ'ըսէ, Դուն ա՞ն ես որ գալու
21 էիր, Թէ ուրիշի մը սպասենք։ Ու նոյն ժամուն
շատերը բժշկեց իրենց հիւանդութիւններէն ու
հարուածներէն և չար ոգիներէն, ու շատ կոյ-
22 րերու տեսութիւն շնորհեց։ Ու Յիսուս պատաս-
խան տալով անոնց ըսաւ, Գացէք Յովհաննէսին
պատմեցէք ինչ որ տեսաք ու լսեցիք· որ կոյ-
րերը կը տեսնեն, կաղերը կը քալեն, բորոտները
կը մաքրուին, խուլերը կը լսեն, մեռելները յա-
րութիւն կ'առնեն, աղքատներուն աւետարան
23 կը քարոզուի։ Ու երանի անոր որ իմ վրայովս
չգայթակղի։
24 Ու երբոր Յովհաննէսին խրկած մարդիկը գա-
ցին, Յիսուս սկսաւ ժողովուրդներուն ըսել Յով-
հաննէսին համար, Ի՞նչ տեսնելու ելաք անապա-
25 տին մէջ, եղէ՞գ մը հովէն շարժուած։ Հապա
ի՞նչ տեսնելու ելաք, փափուկ հանդերձներ հա-
գած մա՞րդ մը· ահա անոնք որ փառաւոր հա-
գուստներով ու փափկութեան մէջ են, թագա-
26 ւորական պալատներն են։ Հապա ի՞նչ տեսնելու
ելաք, մարգարէ՞· այո՛ կ'ըսեմ ձեզի, մարգարէէ
27 մըն ալ աւելի։ Ինչու որ ասիկա է՝ որուն համար
գրուած է, Ահա ես իմ դեսպանս կը խրկեմ քու
երեսիդ առջևէն, որ քու ճամբադ պիտի պատ-
28 րաստէ քու առջևէդ։ Քանզի կ'ըսեմ ձեզի, Կը-
նիկներէն ծնածներուն մէջ Յովհաննէս մկրտիչէն
մեծ մարգարէ չկայ· սակայն Աստուծոյ թագա-
ւորութեանը մէջ պինտ պզտիկը անկէ մեծ է։
29 Ու բոլոր ժողովուրդը ու մաքսաւորները երբոր
լսեցին, արդարացուցին զԱստուած, որ Յովհան-
30 նէսին մկրտութիւնովը մկրտուեցան։ Բայց փա-
րիսեցիները և օրինականները իրենց անձին դէմ
Աստուծոյ խորհուրդը անարգեցին, որ անկէ չմը-
կրտուեցան։

31 *Ուստի որո՞ւ նմանցնեմ աս ազգին մարդիկը,
32 և որո՞ւ կը նմանին. Կը նմանին տղոց, որ շուկա-
ները նստելով՝ իրարու կը կանչեն ու կ'ըսեն,
Փող հնչեցուցինք ձեզի՝ ու չխաղացիք, ողբ կար-
33 դացինք ձեզի՝ ու չլացիք։ Վասն զի Յովհաննէս
մկրտիչ եկաւ, ոչ հաց կ'ուտէր և ոչ գինի կը
34 խմէր, ու կ'ըսէք, Դև կայ անոր ներսի դին. Որ-
դին մարդոյ եկաւ՝ կ'ուտէ ու կը խմէ, և կ'ըսէք,
Ահա ուտող և արբեցող մարդ մը՝ մաքսաւորնե-
35 րու ու մեղաւորներու բարեկամ. Ու իմաստու-
թիւնը արդարացաւ իր բոլոր որդւոցմէն.
36 Փարիսեցիներէն մէկը կ'աղաչէր անոր որ իր
հետը հաց ուտէ. ան ալ փարիսեցիին տունը մը-
37 տաւ ու սեղան նստաւ։ Ու ահա քաղաքին մէջ
մեղաւոր կնիկ մը կար, երբոր իմացաւ թէ անի-
կա փարիսեցիին տունը սեղան նստեր է, մէկ
38 շիշ մը անուշահոտ եղ բերաւ. Ու ետեւի կողմէն
անոր ոտքերուն քովը կեցեր՝ կու լար. և ար-
ցունքովը սկսաւ անոր ոտքերը թրջել, ու իր
գլխուն մազերովը կը սրբէր, և կը համբուրէր ա-
39 նոր ոտքերը, ու եղով կ'օծէր։ Ու երբոր տեսաւ
փարիսեցին՝ որ զանիկա հրաւիրեր էր, կ'ըսէր
իր մտքին մէջ, Ասիկա թէ որ մարգարէ ըլլար՝
պիտի գիտնար թէ ով՝ և ինչպէս կնիկ է իրեն
40 դպչողը, ինչու որ մեղաւոր է. Ու Յիսուս պա-
տասխան տուաւ ու ըսաւ անոր, Սիմոն, քեզի
բան մը ունիմ ըսելու. ան ալ ըսաւ, Ըսէ, վար-
41 դապետ. Ու ըսաւ, Մէկ փոխ տուող մը երկու
պարտական ունէր, մէկը հինգ հարիւր դահեկան
42 պարտք ունէր, և միւսը յիսուն. Ու որովհետև
հատուցանելու կարողութիւն չունէին, երկուքին
ալ շնորհեց. հիմա ըսէ, Անոնցմէ ո՞րը աւելի
43 պիտի սիրէ զանիկա. Պատասխան տուաւ Սիմոն

*Ոմանք Ու Տէրը ըսաւ, Ուստի

ու ըսաւ, Ինծի աստնկ կ'երեւնայ, թէ որուն որ
շատ շնորհեց. ան ալ ըսաւ անոր, Ուղիղ դատե-
44 ցիր. Ու դառնալով դէպ 'ի ան կնիկը՝ ըսաւ Սի-
մոնին, Կը տեսնե՞ս աս կնիկը. Ես քու տունդ
մտայ, դուն ոտքերուս ջուր չտուիր, բայց ա-
սիկա իր արցունքովը ոտքերս թրջեց, և իր *մա-
45 զերովը սրբեց. Դուն ինծի համբոյր մը չտուիր,
բայց ասիկա հոս մտնելէս 'ի վեր ոտքերս համ-
46 բուրելէն չդադարեցաւ։ Դուն իմ գլուխս ձէթով
չօծեցիր, բայց ասիկա իմ ոտքերս անուշահոտ
47 եղով օծեց. Ասոր համար կ'ըսեմ քեզի, ներուած
են ասոր շատ մեղքերը, ինչու որ շատ սիրեց.
բայց որուն որ քիչ կը ներուի, անիկա քիչ կը սի-
48 րէ. Ու ըսաւ անոր, Քու մեղքերդ ներուած են.
49 Ու անոր հետ սեղան նստողները սկսան իրենց
մէջը ըսել, Ո՞վ է ասիկա որ մեղաց թողութիւն
50 ալ կու տայ. Ու ինքը ըսաւ կնկանը, Քու հա-
ւատքդ քեզ †փրկեց, գնա խաղաղութեամբ.

ԳԼ. Ը

1 Ու եղաւ որ անկէ ետեւ՝ ալ ինքը քաղաքէ քա-
ղաք ու գեղէ գեղ պտըտելով՝ կը քարոզէր, և
Աստուծոյ թագաւորութիւնը կ'աւետարանէր, ու
2 տասներկուքը իր հետն էր. Նաև քանի մը կը-
նիկներ՝ որ չար ոգիներէ ու հիւանդութիւններէ
բժշկուեր էին, Մարիամ որ Մագդաղենացի կ'ըս-
3 ուէր՝ ուսկից որ եօթը դև ելեր էր, Ու Յովհան-
նա՝ Հերովդէսին տանը վերակացուին Քուզային
կնիկը, ու Շուշան և շատ ուրիշներ, որոնք իրենց
ստացուածքովը ‡անոր ծառայութիւն կ'ընէին։

*Ոմանք գլխուն մազերովը
†Կամ բժշկեց
‡Ոմանք անոնց

4 Ու երբոր մեծ բազմութիւն ժողվուեցաւ և շատ
քաղաքներէ իրեն եկան, առակով մը ըսաւ ա-
5 նոնց, Սերմ ցանող մը ելաւ իր սերմը ցանելու.
ու ցանած ատենը մէկ քանին ճամբուն քովը ին-
կաւ և ոտքի տակ կոխուեցաւ, ու երկնքի թռ-
6 չունները կերան զանիկա։ Ու ուրիշը ապառաժի
վրայ ինկաւ, ու բուսածին պէս չորցաւ՝ հողը
7 հիւթ չունենալուն համար։ Ու ուրիշը փուշերու
մէջ ինկաւ, ու փուշերը անոր հետը բուսնելով՝
8 խեղդեցին անիկա։ Ու ուրիշը աղէկ հողի մէջ ին-
կաւ, ու բուսնելով՝ հարիւրապատիկ պտուղ տը-
ւաւ. երբոր աս բաները կը զրուցէր՝ կ'աղաղա-
կէր, Ան որ լսելու ականջ ունի՝ թող լսէ։
9 Ու իր աշակերտները կը հարցնէին իրեն՝ ըսե-
10 լով թէ ի՞նչ պիտի ըլլայ աս առակը։ Ան ալ ը-
սաւ, Ձեզի տրուած է գիտնալ Աստուծոյ թագա-
ւորութեանը խորհուրդները, բայց ուրիշներուն
առակներով կը խօսիմ. որ տեսնելով՝ չտեսնեն, և
լսելով՝ չիմանան։
11 Արդ առակը աս է. Սերմը Աստուծոյ խօսքն է։
12 Ու ճամբուն քովինները անոնք են՝ որ կը լսեն,
ու ետքը Սատանան կու գայ, անոնց սրտէն կը
հանէ խօսքը, որ չըլլայ թէ հաւատան ու փրկ-
13 ուին։ Ու ապառաժին վրայինները անոնք են՝ որ
երբ կը լսեն, ուրախութեամբ կ'ընդունին խօսքը,
բայց արմատ չունին. ատեն մը կը հաւատան, ու
14 փորձութեան ժամանակը կը հեռանան։ Ու փու-
շերուն մէջ ինկածը անոնք են՝ որ կը լսեն, բայց
հոգերով ու հարստութիւնով և աս կեանքիս
ցանկութիւններովը զբաղած ըլլալով՝ կը խեղ-
15 դուին և անպտուղ կ'ըլլան։ Իսկ աղէկ հողի մէջ
ցանուածը անոնք են՝ որ բարի և յօժար սրտի-
լսելով խօսքը՝ կ'ընդունին ու համբերութիւնով
պտուղ կու տան։
16 Չկայ մէկը որ ճրագ վառէ՝ ու ամանի մը տակ

կամ մահիճին ներքևը դնէ, հապա աշտանակի
վրայ կը դնէ, որ ներս մտնողները լոյսը տեսնեն։
17 Վասն զի չկայ ծածուկ բան մը որ պիտի չյայտ-
նուի, ոչ ալ գաղտուկ բան մը որ պիտի չգիտ-
18 ցուի ու երևան չելլէ։ Ուստի նայեցէք թէ ինչ-
պէս կը լսէք, քանզի ով որ ունի՝ անոր պիտի
տրուի, և ով որ չունի՝ ան ալ որ ինքը կը կար-
ծէ թէ ունի, անկէ պիտի առնուի։
19 Ու անոր մայրը ու եղբայրները իրեն եկան, ու
բազմութենէն չէին կրնար անոր քովը երթալ։
20 Ու անոր իմացուցին՝ ըսելով, Քու մայրդ ու եղ-
բայրներդ դուրսը կայներ են, ու քեզ տեսնել կ'ու-
21 զեն։ Ու անիկա պատասխան տալով ըսաւ անոնց,
Իմ մայրս ու իմ եղբայրներս անոնք են, որ Աս-
տուծոյ խօսքը կը լսեն ու զանիկա կը կատարեն։
22 Ու եղաւ որ մէկ օր մը նաւը մտաւ ինքը և իր
աշակերտներն ալ, ու ըսաւ անոնց, Ծովակին
23 միւս կողմը անցնինք. և ճամբայ ելան։ Ու երբոր
նաւով կ'երթային՝ ինքը քնացաւ. ու հովի փո-
թորիկ մը իջաւ ծովակին վրայ, և նաւը կը լեց-
24 ուէր, ու իրենք վտանգի մէջ էին։ Մօտեցան՝
արթնցուցին անիկա ու ըսին, Վարդապետ,
վարդապետ, ահա կը կորսուինք. ան ալ ելաւ
սաստեց հովին ու ջուրերուն խռովութեանը, և
25 հանդարտեցան, ու խաղաղութիւն եղաւ։ Ու ը-
սաւ անոնց, Ո՞ւր է ձեր հաւատքը. և անոնք
վախի մէջ ինկած զարմացան, ու իրարու կ'ըսէ-
ին, Արդեօք ո՞վ է ասիկա՝ որ հովերուն ու ջու-
րին ալ հրաման կու տայ, և կը հնազանդին ասոր։
26 Ու նաւելով իջան *Գադարացւոց երկիրը, որ
27 Գալիլեային դիմացի կողմն է։ Ու ինքը ցամաքը
ելլելուն պէս՝ ան քաղաքէն մարդ մը ելաւ դի-
մացը՝ որուն ներսը շատ ատենէ 'ի վեր դևեր կա-

*Ոմանք Գերգեսացւոց

յին. ու անիկա հանդերձ չէր հագներ, ոչ ալ
տան մէջ կը բնակէր, հապա գերեզմաններուն մէջ։
28 Եւ Յիսուսը տեսնելով՝ աղաղակեց ու ինկաւ ա-
նոր առջեւը, ու բարձր ձայնով ըսաւ, Դուն իմ
հետս ի՞նչ բան ունիս, Յիսուս՝ Որդի Աստուծոյ
29 բարձրելոյ. կ'աղաչեմ քեզի՝ զիս մի տանջեր.(Ին-
չու որ հրամայեց պիղծ ոգիին որ այն մարդէն ել-
լէ. որովհետեւ շատ ատեն էր որ զանիկա յափշ-
տակեր էր, եւ անիկա շղթաներով ու ոտնակա-
պերով կապուած կը պահուէր, բայց կապերը կը
30 կոտրտէր ու դեւէն անապատը կը քշուէր.) Հար-
ցուց անոր Յիսուս ու ըսաւ, Անունդ ի՞նչ է. ան
ալ ըսաւ, Լէգէոն. ինչու որ շատ դեւեր մտեր է-
31 ին անոր ներսի դին։ Եւ կ'աղաչէին անոր որ ան-
32 դունդը երթալու հրաման չընէ իրենց։ Եւ ան
տեղը շատ խոզերու երամակ մը կար՝ որ լեռը
կ'արածուէին. ու աղաչեցին անոր որ իրենց հրա-
ման տայ անոնց մէջը մտնելու. եւ հրաման տուաւ
33 անոնց։ Ու դեւերը մարդէն ելլելով՝ խոզերուն
մէջը մտան, եւ երամակը զառիվէժ տեղէն ծո-
34 վակը վազեց եւ խեղդուեցաւ։ Եւ խոզարածները
աս եղած բանը տեսնելով փախան, ու պատմե-
35 ցին քաղաքը ու ագարակները։ Եւ Մարդիկ ելան
եղած բանը տեսնելու, ու եկան Յիսուսին, եւ
գտան այն մարդը՝ ուսկից որ դեւերը ելեր էին,
հագուած ու խելքը վրան Յիսուսի ոտքերուն
36 քովը նստած, ու վախցան։ Եւ անոնք որ տեսեր
էին՝ պատմեցին անոնց թէ ինչպէս դիւահարը ա-
37 զատեցաւ։ Եւ Գադարացւոց շրջակայ տեղուանքը
գտնուող բոլոր բազմութիւնը կ'աղաչէր անոր,
որ իրենցմէ երթայ, ինչու որ մեծ վախով բռ-
նուած էին. ան ալ նաւը մտնելով ետ դարձաւ։
38 Եւ այն մարդը՝ ուսկից որ դեւերը ելեր էին, կ'ա-
ղաչէր անոր որ հետը ըլլայ, բայց Յիսուս արձա-
39 կեց զանիկա ու ըսաւ, Դարձիր քու տունդ, ու

պատմէ ինչ որ Աստուած քեզի ըրաւ. ան ալ
գնաց, ու բոլոր քաղաքին մէջը քարոզեց ինչ որ
Յիսուս իրեն ըրաւ։

40 Ու երբոր Յիսուս ետ դարձաւ, ժողովուրդը
զանիկա ընդունեց, ինչու որ ամէնքը անոր կը
41 սպասէին։ Եւ ահա Յայրոս անունով մարդ մը ե-
կաւ, ու ինքը ժողովարանին իշխանն էր. եւ Յի-
սուսի ոտքը իյնալով կ'աղաչէր անոր որ իր տունը
42 մտնէ. ինչու որ մէկ հատիկ աղջիկ մը ունէր՝
գրեթէ տասուերկու տարեկան, որ մեռնելու մօտ
էր. ու երբոր անիկա կ'երթար, բազմութիւնը կը
նեղէր զանիկա։

43 Եւ կնիկ մը՝ որ տասուերկու տարիէ 'ի վեր ա-
րիւնի տեռատեսութեան մէջ էր, ու իր բոլոր
ունեցածը բժիշկներուն ծախք ըրած էր, եւ իրեն
44 մէկէ մը բժշկուելու ճար մը եղած չէր, Ետեւէն
մօտենալով՝ անոր հանդերձին քղանցքին դպաւ,
45 եւ իսկոյն իր արիւնին հոսումը դադարեցաւ։ Եւ
Յիսուս ըսաւ, Ո՞վ էր ան որ ինծի դպաւ. երբոր
ամէնքը կ'ուրանային, ըսաւ Պետրոս ու անոր
հետ եղողները, Վարդապետ, բազմութիւնը քեզ
կը հրէ ու կը նեղէ, ու կ'ըսե՞ս թէ Ո՞վ ինծի դը-
46 պաւ։ Եւ Յիսուս ըսաւ, Մէկը ինծի դպաւ, քանզի
47 իմացայ որ ինծմէ զօրութիւն մը ելաւ։ Երբոր
տեսաւ կնիկը որ բանը անյայտ չպահուեցաւ, դողա-
լով եկաւ ու անոր առջեւը ինկաւ, եւ բոլոր ժո-
ղովուրդին առջեւը անոր պատմեց թէ ինչ բանի
համար անոր դպեր էր, եւ թէ ինչպէս ինքը իս-
48 կոյն բժշկուեցաւ։ Եւ Յիսուս ըսաւ անոր, Քա-
ջալերուէ, աղջիկ, քու հաւատքդ քեզ բժշկեց,
գնա խաղաղութեամբ։

49 Երբոր ինքը դեռ կը խօսէր, ժողովրդապետին
տունէն մէկը եկաւ ու ըսաւ անոր, Աղջիկդ մե-
50 ռաւ, ալ վարդապետը մի յոգնեցըներ։ Բայց Յի-
սուս երբոր լսեց, պատասխան տուաւ անոր ու.

ըսաւ, Մի՛ վախնար, միայն հաւատա, ու պիտի
51 ապրի։ Եւ երբ տունը մտաւ՝ ուրիշ մէկը թող
չտուաւ որ մտնէ, բայց միայն Պետրոսը ու Յա-
կոբոսը և Յովհաննէսը ու աղջկան հայրը ու մայ-
52 րը։ Ամէնքն ալ կու լային ու կ'ողբային անոր
վրայ. և ինքը ըսաւ, Մի՛ լաք, անիկա մեռած չէ,
53 հապա կը քնանայ։ Եւ անոնք ծաղր կ'ընէին զա-
54 նիկա, քանզի գիտէին թէ մեռաւ։ Ու ինքը ա-
մէնն ալ դուրս հանելով՝ բռնեց անոր ձեռքէն
55 ու կանչեց ըսելով, Աղջիկ, ելի՛ր։ Եւ անոր հոգին
դարձաւ, ու իսկոյն ոտք ելաւ. և Յիսուս հրա-
56 ման ըրաւ որ ուտելիք տան անոր։ Ու անոր ծը-
նողքը ապշած մնացին. և ինքը անոնց պատուի-
րեց որ եղած բանը մէկու մը չզրուցեն։

ԳԼ. Թ

1 Եւ իր տասուերկու *աշակերտները մէկտեղ իրեն
կանչելով՝ անոնց զօրութիւն ու իշխանութիւն
տուաւ բոլոր դեւերուն վրայ և ախտերը բժշկե-
2 լու։ Եւ զանոնք խրկեց որ Աստուծոյ թագաւո-
3 րութիւնը քարոզեն ու հիւանդները բժշկեն։ Եւ
ըսաւ անոնց, Ճամբու համար բան չառնէք, ոչ
գաւազան և ոչ պարկ, ոչ հաց և ոչ ստակ, ոչ
4 ալ կրկին հանդերձ ունենաք։ Եւ որ տուն որ
5 մտնէք՝ հոն մնացէք ու անկէ ելէք։ Ու անոնք
որ ձեզ չեն ընդունիր, երբոր այն քաղաքէն կ'ել-
լէք, ձեր ոտքերուն փոշին անգամ թօթուեցէք՝
6 իրենց դէմ վկայութիւն ըլլալու համար։ Եւ ա-
նոնք ելան ու գեղէ գեղ կը պտըտէին, և ամէն
տեղ աւետարանը կը քարոզէին ու բժշկութիւն
կ'ընէին։
7 Եւ Հերովդէս չորրորդապետը անոր բոլոր գործ-

*Բնագ. առաքեալները

քերը լսելով՝ տարակուսանաց մէջ էր. որովհե-
8 տև ոմանք ըսած էին թէ Յովհաննէսը յարու-
թիւն առաւ մեռելներէն, և ոմանք՝ թէ Եղիան
յայտնուեցաւ, և ուրիշներն ալ՝ թէ Առջի մար-
9 գարէներէն մէկը յարութիւն առաւ։ Եւ Հերով-
դէս ըսաւ, Յովհաննէսը ես գլխատեցի, հապա
ասիկա ո՞վ պիտի ըլլայ, որուն վրայով ասանկ
բաներ կը լսեմ. ու կ'ուզէր որ տեսնէ զանիկա։
10 Եւ առաքեալները դարձան ու պատմեցին ա-
նոր ինչ որ ըրին. և առաւ զանոնք, առանձին
անապատ տեղ մը քաշուեցաւ քաղաքի մը քով՝
11 որուն անունը Բեթսայիդա էր։ Եւ ժողովուրդ-
ները երբոր իմացան՝ անոր ետևէն գացին, ու
զանոնք ընդունելով՝ կը խօսէր անոնց Աստուծոյ
թագաւորութեանը վրայով. և որոնք որ բժըշ-
կութեան կարօտ էին՝ կը բժշկէր։
12 Ու երբոր օրը սկսաւ իրիկուան մօտենալ, տասն-
ուերկուքը եկան ու ըսին անոր, Արձակէ ժողո-
վուրդները, որ շրջակայ գեղերը ու ագարակները
երթան՝ իջեւանին ու կերակուր գտնեն, ինչու որ
13 հոս անապատ տեղ մըն ենք։ Ըսաւ անոնց, Դուք
տուէք ատոնց ուտելիք. անոնք ալ ըսին, Մենք
հինգ նկանակէն ու երկու ձուկէն աւելի բան
չունինք, թէ որ չերթանք ատ բոլոր ժողովուր-
14 դին համար կերակուր չգնենք։ (Քանզի հինգ
հազարի չափ էրիկ մարդիկ կային։) Ու ըսաւ իր
աշակերտներուն, Ատոնք դաս դաս՝ յիսուն յի-
15 սուն նստեցուցէք։ Եւ անանկ ըրին ու ամէնն ալ
16 նստեցուցին։ Եւ այն հինգ նկանակը ու երկու
ձուկը առնելով ու դէպ 'ի երկինքը նայելով՝
օրհնեց զանոնք ու կտրեց, և կու տար աշակերտ-
17 ներուն, որ ժողովուրդին առջևը դնեն։ Եւ կե-
րան ու կշտացան ամէնքն ալ, ու աւելցած կտոր-
ուանքները տասուերկու կողով վերցուցին։
18 Ու եղաւ որ երբ ինքը առանձին աղօթք կ'ը-

նէր, աշակերտներն ալ իր հետն էին, և հարցուց
անոնց ըսելով, Ժողովուրդները ինծի համար ո՞վ
19 կ'ըսեն թէ եմ։ Անոնք ալ պատասխան տալով
ըսին, Ոմանք Յովհաննէս մկրտիչը, և ուրիշները՝
Եղիան, ուրիշներն ալ՝ թէ Առջի մարգարէներէն
20 մէկը յարութիւն առեր է։ Եւ ինքը ըսաւ ա-
նոնց, Հապա դուք ինծի համար ո՞վ կ'ըսէք թէ
եմ. պատասխան տուաւ Պետրոս ու ըսաւ, Աս-
21 տուծոյ Քրիստոսը։ Եւ ինքը սաստիկ պատուիրեց
22 անոնց որ աս բանը մէկու մը չզրուցեն. Ու ըսաւ
թէ Պէտք է որ Որդին մարդոյ շատ չարչարանք-
ներ կրէ, և ծերերէն ու քահանայապետներէն և
դպիրներէն մերժուի ու սպաննուի, ու երրորդ
23 օրը յարութիւն առնէ։ Եւ ամենուն կ'ըսէր, Թէ
որ մէկը կ'ուզէ իմ ետևէս գալ, թող իր անձը
ուրանայ, և ամէն օր իր խաչը վերցընէ, ու իմ
24 ետևէս գայ։ Վասն զի ով որ կ'ուզէ իր անձը
ապրեցընել, պիտի կորսընցընէ զանիկա. և ով
որ ինծի համար իր անձը կորսընցընէ, պիտի ապ-
25 րեցընէ զանիկա։ Քանզի ի՞նչ կը շահի մարդ մը՝
թէ որ բոլոր աշխարհը վաստըկի, և իր անձը
26 կորսընցընէ կամ վնասէ։ Վասն զի ով որ զիս
ու իմ խօսքերս [illegible] ամօթ սեպէ, Որդին
մարդոյ ալ զանիկա [illegible] ամօթ պիտի սե-
պէ՝ երբոր գայ իր ու Հօրը և սուրբ հրեշտակնե-
27 րուն փառքովը։ Բայց ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ
հոս կայնողներէն մէկ քանիները կան՝ որոնք
մահուան համը պիտի չառնեն, մինչև որ տեսնեն
Աստուծոյ թագաւորութիւնը։
28 Ու եղաւ որ աս խօսքերէն գրեթէ ութ օր ետ-
քը՝ Պետրոսը ու Յովհաննէսը և Յակոբոսը առ-
29 նելով՝ լեռը ելաւ աղօթք ընելու։ Ու երբոր ինքը
աղօթք կ'ընէր՝ իր երեսին տեսքը ուրիշ կերպ
մը եղաւ, ու իր հագուստը ճերմակ ու փայլուն
30 եղաւ։ Եւ ահա երկու մարդիկ իր հետը կը խօ-

31 սէին, որոնք Մովսէս ու Եղիա էին, փառքով ե-
րևցած, և անոր [illegible] ելլելուն վրայով կը
խօսէին, որ Երուսաղէմի մէջ պիտի կատարուէր։
32 Բայց Պետրոս և անոր հետ եղողները քունով
ծանրացած էին, ու երբոր արթնցան՝ տեսան
անոր փառքը և այն երկու մարդիկը՝ որ անոր
33 քովը կեցեր էին։ Ու եղաւ որ երբ անոնք զա-
տուեցան անոր քովէն, Պետրոս ըսաւ Յիսուսի,
Վարդապետ, աղէկ է որ հոս կենանք, ու երեք
խրճիթ շինենք, մէկը քեզի՝ և մէկը Մովսէսին՝
ու մէկը Եղիային, վասն զի չէր գիտեր ինչ կը խօ-
34 սէր։ Եւ քանի որ անիկա աս բաները կը խօսէր,
ամպ մը եկաւ ու անոնց վրայ հովանի եղաւ, և
35 ամպին տակը մտած ատեննին վախցան։ Ու ձայն
մը եղաւ ամպէն՝ ըսելով, Ասիկա է իմ սիրելի
36 Որդիս, ատոր մտիկ ըրէք։ Եւ այն ձայնը որ ե-
ղաւ, Յիսուս մինակ գտնուեցաւ։ Ու իրենք լռե-
կեցան, և իրենց տեսածներէն այն օրերը մէկուն
բան մը չպատմեցին։
37 Ու եղաւ որ հետևեալ օրը՝ երբոր անոնք լեռ-
նէն վար իջան, շատ ժողովուրդ անոր դէմը ե-
38 լաւ։ Եւ ահա ժողովուրդին մէջէն մէկ մարդ մը
աղաղակեց ու ըսաւ, Վարդապետ, կ'աղաչեմ
քեզի՝ նայէ իմ որդիիս, քանզի իմ մէկ հատիկս
39 է. Եւ ահա ոգի մը կը բռնէ զանիկա. ան ալ
յանկարծ կը կանչըռտէ, և զանիկա ցնցելով
կը փրփրեցընէ, ու հազիւ կը զատուի անկէ՝ ջարդ-
40 ուբուրդ ընելով զանիկա. Եւ քու աշակերտնե-
41 րուդ աղաչեցի որ հանեն զանիկա, ու չկրցան։ Պա-
տասխան տուաւ Յիսուս ու ըսաւ, Ով անհաւատ
և խոտորեալ ազգ, մինչև ե՞րբ ձեզի հետ պիտի
ըլլամ ու ձեզի համբերեմ. հոս բեր քու որդիդ։
42 Ու երբոր դեռ կը մօտենար, դևը զանիկա գե-
43 տինը զարկաւ ու սաստիկ ցնցեց։ Իսկ Յիսուս
սաստեց պիղծ ոգիին, և բժշկեց տղան ու զանի-

44 կա իր հօրը տուաւ։ Ու ամէնքը կը զարմանային
Աստուծոյ մեծամեծ գործքերուն վրայ։
Ու քանի որ ամէնքը կը զարմանային Յիսուսի
ըրած բոլոր գործքերուն վրայ, անիկա ըսաւ իր
աշակերտներուն, Դուք աս խօսքերը ականջներնիդ
դրէք, վասն զի Որդին մարդոյ պիտի մատնուի
45 մարդոց ձեռքը։ Բայց անոնք չէին իմանար ան
խօսքը, և անոնցմէ ծածկուած էր որ չհասկը-
նան, ու կը վախնային ան խօսքին համար իրեն
հարցընելու։
46 Խորհուրդ մըն ալ մտաւ անոնց մէջ՝ թէ արդ-
47 եօք իրենց մէջը ո՛վ է մեծ։ Իսկ Յիսուս անոնց
սրտին խորհուրդը իմանալով՝ տղայ մը առաւ ու
48 զանիկա իր քովը կայնեցուց, Ու ըսաւ անոնց,
Ով որ աս տղան իմ անունովս կ՚ընդունի՝ զիս
կ՚ընդունի. և ան որ զիս կ՚ընդունի՝ անիկա զիս
խրկողը կ՚ընդունի. վասն զի ան որ ձեր ամենուն
մէջը պզտիկ է, անիկա մեծ պիտի ըլլայ։
49 Պատասխան տուաւ Յովհաննէս ու ըսաւ, Վար-
դապետ, մէկը տեսանք որ քու անունովդ դևեր
կը հանէր, և զանիկա արգիլեցինք, ինչու որ մեր
50 հետը չպտըտիր։ Ու Յիսուս ըսաւ անոր, Մի ար-
գիլէք, քանզի ան որ *մեզի հակառակ չէ, մեր
կողմէն է։
51 Ու եղաւ որ երբ իր համբառնալու օրերը
կը կատարուէր, ինքն ալ †հաստատ որոշեց՝ Ե-
52 րուսաղէմ երթալ։ Ու իր երեսին առջևէն պատ-
գամաւորներ խրկեց, որ երբոր գացին՝ Սամա-
րացւոց մէկ գեղը մտան որ իրեն համար պատ-
53 րաստութիւն մը ընեն։ Ու չընդունեցին զանիկա,
ինչու որ անոր երեսը դէպ ՚ի Երուսաղէմ երթա-
54 լու ուղղուած էր։ Երբոր իր աշակերտները՝ Յա-

*Ոմանք ձեզի հակառակ չէ, ձեր
†Յուն. երեսը հաստատեց

կոբոս ու Յովհաննէս տեսան, ըսին, Տէր, կ՚ու-
զե՞ս որ ըսենք, ու երկինքէն կրակ իջնէ և սպառ-
55 նեցընէ անոնք, ինչպէս որ Եղիան ալ ըրաւ։ Ու-
դարձաւ յանդիմանեց զանոնք՝ ըսելով, Չէք գի-
56 տեր թէ ինչ հոգիի տէր էք դուք. *Վասն զի Որ-
դին մարդոյ չեկաւ մարդոց հոգիները կորսընցը-
նելու, հապա փրկելու.՞ և ուրիշ գեղ մը գացին։
57 Ու երբոր անոնք ճամբան կ՚երթային, մէկը ը-
սաւ անոր, Տէր, քու ետևէդ գամ՝ ուր որ եր-
58 թաս։ Ու Յիսուս ըսաւ անոր, Աղուէսները որջեր
ունին, ու երկնից թռչունները՝ բոյներ, բայց Որ-
դին մարդոյ տեղ մը չունի, որ հոն իր գլուխը դնէ։
59 Մէկ ուրիշի մըն ալ ըսաւ, Եկուր իմ ետևէս.
ան ալ ըսաւ, Տէր, ինծի հրաման տուր որ առաջ
60 երթամ իմ հայրս թաղեմ։ Յիսուս ըսաւ անոր,
Թող տուր մեռելներուն որ թաղեն իրենց մե-
ռելները, բայց դուն գնա Աստուծոյ թագաւո-
րութիւնը քարոզէ։
61 Մէկ ուրիշ մըն ալ ըսաւ, Տէր, ես քու ետե-
ւէդ պիտի գամ, բայց ինծի հրաման տուր որ ա-
ռաջ իմ տանս մէջ եղողներուն հրաժարական
62 ողջոյն տամ։ Յիսուս ըսաւ անոր, Ոչ մէկը որ
ձեռքը մաճին վրայ կը դնէ ու ետին կը նայի՝
Աստուծոյ թագաւորութեանը յարմար է։

ԳԼ. Ժ

1 Աս բաներէն ետև Տէրը ուրիշ եօթանասուն ալ
որոշեց, և զանոնք իր առջևէն երկու երկու խըր-
կեց բոլոր քաղաքները ու տեղերը՝ ուր որ ինքը
2 պիտի երթար։ Ու կ՚ըսէր անոնց, Հունձքը շատ է,
ու մշակները քիչ. ուստի հունձքին Տէրոջը աղա-
3 չեցէք որ մշակներ հանէ իր հունձքին։ Գացէք.

*Ոմանք չունին

ահա ես ձեզ կը ղրկեմ իբրեւ գառներ գայլերու
4 մէջ։ Չեռնընիդ քսակ մի առնէք, ոչ ալ պարկ,
և ոչ կօշիկներ, ու ճամբան մէկու մը բարեւ մի
5 տաք։ Եւ որ տուն որ մտնէք՝ առաջ ըսէք, *Բա-
6 րեւ աս տանս։ Ու թէ որ հոն †բարեւի արժանա-
ւոր մարդ" կայ, ձեր բարեւը պիտի հանգչի անոր
7 վրայ, հապա թէ չէ՝ ձեզի պիտի դառնայ։ Եւ ան
տանը մէջ մնացէք, ու անոնցմէ կերէք ու խմե-
ցէք, ինչու որ մշակը իր վարձքին արժանի է.
8 տունէ տուն մի փոխուիք։ Եւ որ քաղաք որ
մտնէք ու ձեզ ընդունին, ինչ որ առջեւնիդ դըր-
9 ուի՝ կերէք։ Ու բժշկեցէք անոր մէջի հիւանդ-
ները, և ըսէք անոնց, Աստուծոյ թագաւորու-
10 թիւնը ձեզի մօտեցեր է։ Բայց որ քաղաք որ
մտնէք՝ ու ձեզ չընդունին, անոր հրապարակները
11 ելլելով՝ ըսէք, Ան փոշին ալ որ ձեր քաղաքէն
մեր ոտքերուն փակած է, ձեզի կը թօթվենք. մի-
այն թէ աս գիտնաք որ Աստուծոյ թագաւորու-
12 թիւնը ձեզի մօտեցեր է։ Ձեզի կ'ըսեմ որ ան օրը
Սոդոմի [illegible] աւելի դիւրին պիտի ըլլայ՝
13 քան թէ ան քաղաքին։ Վա՜յ քեզ, Քորազին,
վա՜յ քեզ, Բեթսայիդա, ինչու որ եթէ Տիւրոսի
ու Սիդոնի մէջ եղած ըլլային ան հրաշքները՝ որ
ձեր մէջը եղան, շատոնցմէ քուրձով՝ ու մոխիրի
14 մէջ նստելով ապաշխարած պիտի ըլլային։ Բայց
դատաստանին օրը Տիւրոսին ու Սիդոնին աւելի
15 դիւրին պիտի ըլլայ՝ քան թէ ձեզի։ Եւ դուն,
Կափառնայում, որ մինչեւ երկինքը բարձրացած
16 ես, մինչեւ դժոխքը պիտի իջնես։ Ան որ ձեզի
մտիկ կ'ընէ, ինծի մտիկ կ'ընէ. և ան որ ձեզ կը
մերժէ, զիս կը մերժէ. և ան որ զիս կը մերժէ,
զիս ղրկողը կը մերժէ։

Յոյն. Խաղաղութիւն
†Յոյն. խաղաղութեան որդի

17 Եւ եօթանասուն աշակերտները դարձան ուրա-
խութեամբ ու ըսին, Տէ՛ր, քու անունովդ դեւերն
18 ալ մեզի կը հնազանդին։ Եւ ըսաւ անոնց, Սա-
տանան փայլակի պէս երկինքէն վար ինկած կը
19 տեսնէի։ Ահա ձեզի իշխանութիւն կու տամ օ-
ձերու ու կարիճներու՝ և թշնամիին բոլոր զօրու-
թեանը վրայ կոխկրտելու. ու բնաւ մէկ բան մը
20 ձեզի պիտի չվնասէ։ Բայց դուք անոր վրայ մի
ուրախանաք որ չար ոգիները ձեզի կը հնազան-
դին, հապա ուրախացէք որ ձեր անունները եր-
կինքը գրուած են։
21 Ան նոյն ժամուն Յիսուս հոգիով ուրախացաւ
ու ըսաւ, Շնորհակալ եմ քեզմէ, ով Հայր՝ Տէ՛ր
երկնի և երկրի, որ աս բաները ծածուկ պահե-
ցիր իմաստուններէն և գիտուններէն, ու տղոց
յայտնեցիր. այո, ով Հայր, ինչու որ քու առջիդ
22 ասանկ հաճելի եղաւ։ Ամէն բան ինծի տրուեցաւ
իմ Հօրմէս, ու մէկը չգիտեր թէ ով է Որդին,
բայց միայն Հայրը. և թէ ով է Հայրը, բայց մի-
այն Որդին, և ան՝ որուն որ Որդին կ'ուզէ յայտ-
նել։
23 Եւ աշակերտներուն դառնալով՝ առանձին ը-
սաւ, Երանի ան աչքերուն՝ որ ձեր տեսածները
24 կը տեսնեն. Քանզի կ'ըսեմ ձեզի, որ շատ մար-
գարէներ և թագաւորներ ուզեցին ձեր տեսած-
ները տեսնել, ու չտեսան, և ձեր լսածները լսել
ու չլսեցին։
25 Եւ ահա մէկ օրինական մը ելաւ, ու զանիկա
փորձելով ըսաւ, Վարդապետ, ի՞նչ ընեմ որ
26 յաւիտենական կեանքը ժառանգեմ։ Անիկա ալ
ըսաւ անոր, Օրէնքին մէջ ի՞նչ գրուած է. ին-
27 տո՞ր կը կարդաս։ Պատասխան տուաւ անիկա ու
ըսաւ, Քու Տէր Աստուածդ սիրես քու բոլոր
սրտէդ ու քու բոլոր անձէդ և քու բոլոր զօ-
րութենէդ ու քու բոլոր միտքէդ, և քու ըն-

28 կերդ ալ քու անձիդ պէս։ Եւ ինքը ըսաւ անոր,
Շիտակ պատասխան տուիր. ատիկա ըրէ ու պիտի
29 ապրիս։ Իսկ անիկա ուզելով ինքզինքը արդա-
րացընել՝ ըսաւ Յիսուսին, Բայց իմ ընկերս ո՞վ
30 է։ Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ, Մէկ
մարդ մը Երուսաղեմէն Երիքով կ'իջնէր, ու ա-
ւազակներու ձեռք ինկաւ, որոնք մերկացուցին
զանիկա ու վիրաւորելով կիսամեռ թողուցին ու
31 գացին։ Եւ պատահեցաւ որ քահանայ մը ան ճամ-
բայէն կ'իջնէր, ու զանիկա տեսնելով՝ անդիի
32 կողմէն անցաւ։ Նոյնպէս ալ Ղեւտացի մը ան տեղը
հասնելով՝ գնաց ու տեսաւ, և անդիի կողմէն
33 անցաւ։ Բայց Սամարացի մը որ ճամբորդութիւն
կ'ընէր, եկաւ անոր քովը, ու զանիկա տեսնելով
34 խղճաց. Եւ մօտեցաւ՝ անոր վէրքերը փաթթեց՝
վրան ձէթ և գինի թափելով, ու իր գրաստին
վրայ դնելով՝ տարաւ անիկա մէկ պանդոկ մը,
35 և անոր հոգ տարաւ։ Ու հետեւեալ օրը երբոր
կ'ելլէր անկէ, երկու դահեկան հանեց՝ պանդո-
կապետին տուաւ և անոր ըսաւ, Հոգ տար ատոր,
ու ինչ որ աւելի ծախք ընես, ես դառնալուս
36 ես քեզի կը վճարեմ։ Հիմա ան երեքէն ո՞ր քեզի
կ'երեւնայ ընկեր ըլլալ աւազակներուն ձեռքը ին-
37 կողին։ Եւ անիկա ըսաւ, Ան որ անոր ողորմու-
թիւն ըրաւ։ Անատենը Յիսուս ըսաւ անոր, Գնա՛
դուն ալ այնպէս ըրէ։
38 Ու եղաւ որ երբ անոնք կ'երթային, ինքը գեղ
մը մտաւ, և մէկ կնիկ մը Մարթա անունով զա-
39 նիկա իր տունը ընդունեց։ Եւ անիկա քոյր մը
ունէր, որուն անունը Մարիամ էր, որ եկաւ Յի-
սուսի ոտքերուն քովը նստաւ, ու անոր խօս-
40 քերը մտիկ կ'ընէր։ Բայց Մարթա շատ սպասա-
ւորութիւնով զբաղած էր, եկաւ անոր քովը ու
ըսաւ, Տէր, քու հոգդ չէ՞, որ իմ քոյրս զիս մի-
նակ թողուց սպասաւորութեան մէջ. ուստի ա-

41 տոր զըրուցէ որ ինծի օգնէ։ Պատասխան տուաւ
Յիսուս ու ըսաւ անոր, Մարթա, Մարթա, դուն
շատ բաներու համար հոգ ընելովդ կը տագնա-
42 պիս. Բայց մէկ բան մը պէտք է, և Մարիամ ան
աղէկ բաժինը ընտրեց, որ իրմէ պիտի չառնուի։

ԳԼ. ԺԱ

1 Ու եղաւ որ մէկ տեղ մը աղօթք կ'ընէր. ու երբ-
որ դադարեցաւ, իր աշակերտներէն մէկը ըսաւ
իրեն, Տէր, մեզի աղօթք ընել սորվեցուր, ինչ-
պէս որ Յովհաննէս ալ իր աշակերտներուն սոր-
2 վեցուց։ Եւ ըսաւ անոնց, Երբոր աղօթք կ'ընէք՝
ըսէք, Ով Հայր *մեր՝ որ երկինքն ես", քու ա-
նունդ սուրբ ըլլայ. քու թագաւորութիւնդ գայ.
*քու կամքդ ըլլայ, ինչպէս որ երկինքը՝ անանկ
3 ալ երկրիս վրայ." Մեր ամէն աւուր հացը օրէ
4 օր մեզի տուր. Եւ մեզի ներէ մեր մեղքերը, ին-
չու որ մենք ալ կը ներենք ան ամենուն՝ որ մե-
զի պարտական են. ու մեզ փորձութեան մի տա-
նիր, *հապա չարէն մեզ ազատէ."
5 Եւ ըսաւ անոնց, Ձեզմէ ո՞վ է ան որ բարեկամ
մը ունենայ, ու կէս գիշերուան մէջ երթայ անոր
և ըսէ անոր, Բարեկամ, ինծի երեք նկանակ
6 փոխ տուր. Ինչու որ իմ մէկ բարեկամս ճամ-
բայէ ինծի եկաւ, ու բան մը չունիմ անոր առ-
7 ջեւը դնելու. Անիկա ալ ներսէն պատասխան տայ
և ըսէ, Զիս մի յոգնեցըներ, արդէն դուռը գոց-
ուած է, ու տղաքս իմ քովս անկողինի մէջ են.
8 չեմ կրնար ելլել ու քեզի հաց տալ։ Ձեզի կ'ը-
սեմ, թէ և բարեկամութեան համար չելլէ տայ
անոր, սակայն անոր թախանձանքին համար պի-
9 տի ելլէ ու պէտք եղածը տայ անոր։ Ես ալ կ'ը-

---

*Ոմանք չունին

սեմ ձեզի, Խնդրեցէք և պիտի տրուի ձեզի,
փնտռեցէք ու պիտի գտնէք, դուռը զարկէք և
10 պիտի բացուի ձեզի։ Վասն զի ամէն ով որ կը
խնդրէ՝ կ'առնէ, և ով որ կը փնտռէ՝ կը գտնէ,
և ով որ դուռը կը զարնէ՝ պիտի բացուի անոր։
11 Ձեզմէ ո՞վ է ան հայրը՝ որմէն իր որդին հաց որ
ուզէ, միթէ քա՞ր պիտի տայ անոր. կամ թէ որ
ձուկ ուզէ, միթէ ձուկին տեղը օ՞ձ պիտի տայ ա-
12 նոր. Եւ կամ թէ որ հաւկիթ ուզէ, միթէ կա-
13 րի՞ճ պիտի տայ անոր։ Ուստի եթէ դուք որ չար
էք՝ ձեր զաւակներուն աղէկ ընծաներ տալ գի-
տէք, ո՜րչափ աւելի Ձեր Հայրը երկինքէն Սուրբ
Հոգին պիտի տայ անոնց, որ իրմէ կը խնդրեն։
14 Ու դեւ մը կը հանէր, և անիկա համր էր. ու ե-
ղաւ որ երբ դեւը ելաւ, համրը խօսեցաւ և ժո-
15 ղովուրդները զարմացան։ Բայց անոնցմէ մէկ քա-
նիները ըսին, Ատիկա դեւերուն Բէեղզեբուղ իշ-
16 խանին միջոցովը դեւերը կը հանէ։ Ուրիշներն ալ
փորձելով երկինքէն նշան մը կ'ուզէին անկէ։
17 Բայց ինքը գիտնալով անոնց խորհուրդները՝ ը-
սաւ անոնց, Ամէն թագաւորութիւն իրեն դէմ
բաժնուած՝ կ'աւերի, և տուն մը *իրեն դէմ
18 բաժնուած՝ կը կործանի. Հապա թէ որ Սատանան
իրեն դէմ բաժնուած է, անոր թագաւորութիւնը
ինտո՞ր պիտի կենայ. որովհետև կ'ըսէք թէ Բէ-
19 եղզեբուղով դեւերը կը հանեմ։ Իսկ թէ որ ես
Բէեղզեբուղով դեւերը կը հանեմ, ձեր որդիքը
ինչո՞վ կը հանեն. ուրեմն անոնք պիտի ըլլան ձեր
20 դատաւորները։ Բայց թէ որ ես Աստուծոյ մա-
տովը կը հանեմ դեւերը, ուրեմն Աստուծոյ թա-
21 գաւորութիւնը ձեր վրայ հասած է։ Երբոր զօ-
րաւոր մարդ մը զէնքերը վրան առած՝ իր տանը
բակը կը պահպանէ, անոր բաները խաղաղու-

*Յուն. տան

22 թեան մէջ կը մնան. Բայց երբոր անկէ աւելի զօ-
րաւորը վրան գալով յաղթէ զանիկա, անոր
զէնքերը կ'առնէ՝ որոնց ինքը յուսացեր էր, և
23 անկէ առած կողոպուտը կը բաժնէ։ Ան որ իմ
հետս չէ՝ ինծի հակառակ է, և ան որ ինծի հետ
չժողվեր՝ ցիրուցան կ'ընէ։
24 Երբոր պիղծ ոգին մարդէ մը կ'ելլէ, անջուր
տեղուանք կը պտըտի, հանգստութիւն կը փնտռ-
ռէ, ու երբոր չգտներ՝ կ'ըսէ, Դառնամ նորէն
25 իմ տունս՝ ուսկից որ ելայ. Եւ կու գայ՝ զանիկա
26 մաքրուած ու յարդարուած կը գտնէ։ Անատենը
կ'երթայ՝ և իր հետը կ'առնէ եօթը ուրիշ ոգի-
ներ իրմէ աւելի չար, ու մտնելով հոն կը բնակին,
և ան մարդուն վերջը առջինէն գէշ կ'ըլլայ։
27 Ու եղաւ որ երբ անիկա աս բաները կը խօսէր,
ժողովուրդին մէջէն մէկ կնիկ մը ձայնը վերցուց
ու ըսաւ անոր, Երանի ան որովայնին՝ որ քեզ
28 կրեց, և ան ծիծերուն՝ որ քեզի կաթ տուին։ Եւ
ինքը ըսաւ, Մանաւանդ թէ երանի անոնց որ
Աստուծոյ խօսքը կը լսեն ու կը պահեն։
29 Ու երբոր ժողովուրդները անոր քով կը դիզ-
ուէին, սկսաւ ըսել, Աս ազգը չար է. նշան կ'ու-
զէ, և ուրիշ նշան պիտի չտրուի անոր, բայց մի-
30 այն Յովնան մարգարէին նշանը։ Քանզի ինչպէս
որ Յովնան Նինուէացիներուն նշան եղաւ, անանկ
31 ալ Որդին մարդոյ աս ազգին պիտի ըլլայ։ Հա-
րաւի թագուհին դատաստանին օրը աս ազգին
մարդոցը դէմ պիտի ելլէ, ու պիտի դատապար-
տէ զանոնք, ինչու որ երկրի ծայրերէն եկաւ Սո-
ղոմոնին իմաստութիւնը լսելու. և ահա Սողոմո-
32 նէն մեծ մէկը կայ հոս։ Նինուէի մարդիկը դա-
տաստանին օրը աս ազգին դէմ պիտի ելլեն, ու
պիտի դատապարտեն զանիկա, ինչու որ Յովնա-
նին քարոզութեամբը զղջի եկան. և ահա Յով-
նանէն մեծ մէկը կայ հոս։

33 Մէկը ճրագը չվառեր՝ ծածուկ տեղ մը դներ,
ոչ ալ գրուանի տակ, հապա աշտանակի վրայ, որ
34 ներս մտնողները լոյսը տեսնեն։ Մարմինին ճրագը
աչքն է. ուստի երբոր աչքդ պարզ է, բոլոր մար-
մինդ ալ լուսաւոր կ'ըլլայ. բայց երբոր աչքդ չար
35 է, մարմինդ ալ մութ կ'ըլլայ։ Ուրեմն զգոյշ կե-
ցիր, որ քու մէջդ եղած լոյսը խաւար չըլլայ։
36 Արդ թէ որ քու բոլոր մարմինդ լուսաւոր է, և
մութ մաս մը չունի, բոլորն ալ լուսաւոր կ'ըլ-
լայ, ինչպէս երբոր ճրագ մը իր փայլունութեամբը
քեզ կը լուսաւորէ։
37 Ու երբոր աս բաները կը խօսէր, փարիսեցի մը
կ'աղաչէր անոր՝ որ իր քովը ճաշ ուտէ. անիկա
38 ալ մտաւ՝ սեղան նստաւ։ Իսկ փարիսեցին երբոր
տեսաւ՝ զարմացաւ, որ նախ չլուացուեցաւ ճա-
39 չէն առաջ։ Ու Տէրը ըսաւ անոր, Հիմա դուք,
փարիսեցիներ, գաւաթին ու պնակին դուրսի դին
կը մաքրէք, ու ձեր ներսի դին յափշտակու-
40 թեամբ և չարութեամբ լեցուն է։ Անխելքներ,
ան որ դուրսինը ըրաւ՝ ներսինն ալ ինքը չըրա՞ւ։
41 Սակայն անոնց մէջը եղածներէն ողորմութիւն
տուէք, և ահա ամէն բան մաքուր կ'ըլլայ ձեզի։
42 Բայց վա՜յ ձեզի փարիսեցիներուդ՝ որ անանու-
խին ու փեգենային և բոլոր խոտեղէններուն տա-
սանորդը կը վճարէք, ու զանց կ'ընէք իրա-
ւունքը և Աստուծոյ սէրը. ասոնք պէտք էր ը-
43 նել, և անոնք չձգել։ Վա՜յ ձեզի փարիսեցինե-
րուդ՝ որ ժողովարաններուն մէջ առաջին աթոռ-
ները կը սիրէք, ու շուկաներուն մէջ՝ բարևները։
44 Վա՜յ ձեզի, կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ,
որ անյայտ գերեզմաններու նման էք, որոնց
վրայէն մարդիկ կը քալեն ու չեն գիտեր։
45 Ու օրինականներէն մէկը պատասխան տալով
ըսաւ անոր, Վարդապետ, աս խօսքերը զրուցե-
46 լովդ՝ մեզ ալ վար կը զարնես։ Ու անիկա ըսաւ,

Ձեզ ալ վա՜յ օրինականներուդ, որ տանելու դժ-
ուար բեռներ կը բեռցընէք մարդոց, ու դուք
47 մէկ մատովնիդ այն բեռներուն չէք դպչիր։ Վա՜յ
ձեզի՝ որ մարգարէներուն գերեզմանները կը շի-
48 նէք, ու ձեր հայրերը սպաննեցին զանոնք։ Ու-
րեմն կը վկայէք և հաւանութիւն կու տաք ձեր
հարցը ըրածներուն. ինչու որ իրենք սպաննեցին
զանոնք, ու դուք անոնց գերեզմանները կը շի-
49 նէք։ Անոր համար ալ Աստուծոյ իմաստութիւնը
ըսաւ, Պիտի ղրկեմ անոնց մարգարէներ ու ա-
ռաքեալներ, և անոնցմէ ոմը պիտի սպաննեն ու
50 ոմը հալածեն. Որպէս զի աշխարհի սկիզբէն հետէ
թափուած բոլոր մարգարէներուն արիւնը աս
51 ազգէն պահանջուի, Աբելին արիւնէն մինչև Զա-
քարիային արիւնը, որ սեղանին ու տաճարին մէջ-
տեղը կորսուեցաւ. Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Աս
52 ազգէն պիտի պահանջուի։ Վա՜յ ձեզի օրինական-
ներուդ՝ որ գիտութեան բանալին վերցուցիք.
դուք չմտաք, և մտնողներն ալ արգիլեցիք։
53 Ու երբոր աս բաները անոնց կը զրուցէր, դը-
պիրները ու փարիսեցիները սկսան խիստ դժուա-
րել, և շատ բաներու վրայով անոր բերնէն խօսք
54 փնտռել. Ու անոր դարան պատրաստելով՝ կը
փնտռէին թէ ինչպէս անոր բերնէն բան մը որ-
սան, որ անոր վրայով ամբաստանութիւն ընեն։

ԳԼ. ԺԲ

1 Աս միջոցիս երբոր բիւրաւոր ժողովուրդներ վը-
րան ժողվուեցան՝ մինչև որ մէկզմէկ կը կոխէին,
սկսաւ ըսել իր աշակերտներուն, Զինու առաջ
ինքզինքնիդ զգոյշ պահեցէք փարիսեցւոց խմո-
2 րէն, որ է կեղծաւորութիւն։ Ինչու որ բան մը
չկայ ծածուկ՝ որ պիտի չյայտնուի, և գաղտուկ

3 որ պիտի չգիտցուի։ Ուստի ինչ որ մութ տեղը
զրուցեցիք, անիկա լոյս տեղը պիտի լսուի. և ան
որ ներքին սենեակներուն մէջ ականջի խօսե-
4 ցաք, տանիքներուն վրայ պիտի քարոզուի։ Բայց
ձեզի իմ բարեկամներուս կը զրուցեմ, Մի վախ-
նաք անոնցմէ՝ որ մարմինը կը սպաննեն, ու ան-
կէ ետև աւելի բան մը ընելու [illegible] չու-
5 նին։ Հապա ձեզի ցուցընեմ թէ որմէ պիտի վախ-
նաք. Անկէ վախցէք՝ որ սպաննելէն ետև՝ իշ-
խանութիւն ունի գեհեանը ձգելու. այո, կ'ըսեմ
6 ձեզի, Անկէ վախցէք։ Չէ՞ որ հինգ ճնճղուկ եր-
կու դանկի կը ծախուի, և անոնցմէ մէկը մոռ-
7 ցուած չէ Աստուծոյ առջին։ Բայց ձեր գլխուն բո-
լոր մազերն ալ համրուած է. ուրեմն մի վախ-
նաք, [illegible] դուք շատ ճնճղուկներէն աւելի
8 աղէկ էք։ Եւ ձեզի կ'ըսեմ, Ամէն ով որ զիս կը
դաւանի մարդոց առջևը, Որդին մարդոյ ալ ա-
նիկա պիտի դաւանի Աստուծոյ հրեշտակներուն
9 առջևը։ Բայց ան որ զիս մարդոց առջևը կ'ու-
րանայ, ուրացուած պիտի ըլլայ Աստուծոյ հրեշ-
10 տակներուն առջևը։ Եւ ամէն ով որ Որդւոյ մար-
դոյ դէմ բան կ'ըսէ, պիտի ներուի անոր, բայց
ան որ Սուրբ Հոգիին դէմ հայհոյութիւն կ'ընէ,
11 պիտի չներուի անոր։ Ու երբոր ձեզ ժողովարան-
ները՝ և իշխանութիւններու ու պետութիւննե-
րու առջև տանելու ըլլան, հոգ մի ընէք թէ ինչ-
պէս կամ ինչ պատասխան պիտի տաք, կամ ինչ
12 պիտի ըսէք. Վասն զի Սուրբ Հոգին պիտի սոր-
վեցընէ ձեզի նոյն ժամուն՝ ինչ որ պէտք է խօսիլ։
13 Ժողովուրդին մէջէն մէկը ըսաւ անոր, Վար-
դապետ, զրուցէ եղբօրս, որ [illegible] ժառան-
14 գութիւնը իմ հետս բաժնէ։ Ան ալ ըսաւ անոր,
Մարդ, ո՞վ զիս ձեր վրայ դատաւոր կամ բաժին
15 ընող դրաւ։ Եւ ըսաւ անոնց, Նայեցէք և զգու-
շացէք ագահութենէն. ինչու որ մարդուս ստաց-

ուածքներուն աւելնալէն [illegible] չէ իր կեանքը։
16 Առակ մըն ալ խօսեցաւ անոնց՝ ըսելով, Մէկ
հարուստ մարդու մը արտերը առատ բերքեր
17 տուին. Եւ ինքը կը մտածէր ինքնիրեն ու կ'ըսէր,
Ի՞նչ ընեմ, վասն զի տեղ չունիմ, որ հոն իմ
18 բերքերս ժողվեմ։ Եւ ըսաւ, Աս ընեմ. իմ ամ-
բարներս քակեմ ու ալ աւելի մեծ շինեմ, և հոն
19 ժողվեմ իմ բոլոր բերքերս ու բարիքներս։ Եւ
իմ անձիս ըսեմ, Ո՛վ անձ, շատ բարիքներ ու-
նիս շատ տարիներու համար ժողվուած. հանգչէ,
20 կեր, խմէ ու ուրախ եղիր։ Բայց Աստուած ըսաւ
անոր, Անմիտ, աս գիշեր հոգիդ քեզմէ պիտի
պահանջուի. ուստի ան քու պատրաստած բա-
21 ները որո՞ւն պիտի ըլլայ։ Այսպէս է անիկա որ
իր անձին համար գանձ կը դիզէ, ու Աստուծոյ
չհարստանար։
22 Եւ ըսաւ իր աշակերտներուն, Ասոր համար կ'ը-
սեմ ձեզի, Հոգ մի ընէք ձեր կեանքին համար՝
թէ ինչ պիտի ուտէք, ոչ ալ մարմինին համար՝
23 թէ ինչ պիտի հագնիք։ [illegible] որ կեանքը կերա-
24 կուրէն աւելի է, ու մարմինը՝ հագուստէն։ Նա-
յեցէք ագռաւներուն, որ ոչ կը սերմանեն և ոչ
կը հնձեն, որոնք ոչ շտեմարաններ ունին՝ ոչ ալ
ամբարներ, ու Աստուած անոնք կը կերակրէ.
25 դուք ո՛րչափ աւելի լաւ էք թռչուններէն։ Եւ
ձեզմէ ո՞վ կրնայ իր հոգ ընելովը իր հասակին
26 վրայ կանգուն մը աւելցընել։ Հապա թէ որ ա-
մենափոքր բանին կարող չէք, ուրիշ բաներուն
27 համար ինչո՞ւ հոգ կ'ընէք։ Նայեցէք շուշաննե-
րուն՝ ինչպէս կ'աճին. ոչ կ'աշխատին և ոչ կը
մանեն, բայց ձեզի կ'ըսեմ որ Սողոմոն ալ իր բո-
լոր փառաւորութեանը մէջ անոնցմէ մէկուն պէս
28 չհագուեցաւ։ Ուստի թէ որ խոտը որ այսօր դաշ-
տի մէջ է՝ ու վաղը փուռը կը ձգուի, Աստուած
անանկ կը հագուեցընէ, ո՛րչափ աւելի ձեզ, թե-

29 րահաւատներ։ Ալ դուք մի փնտռէք թէ ինչ պի-
տի ուտէք և ինչ պիտի խմէք, ու մի չփոթիք.
30 Վասն զի աս բոլոր բաները աշխարհիս ազգերը
կը փնտռեն. ու ձեր Հայրը գիտէ որ աս բաները
31 ձեզի պէտք են։ Բայց դուք Աստուծոյ Թագաւո-
րութիւնը խնդրեցէք, և աս բոլոր բաներն ալ
32 ձեզի պիտի տրուի։ Մի վախնար, պզտիկ հօտ,
ինչու որ ձեր Հայրը հաճեցաւ որ Թագաւորու-
33 թիւնը ձեզի տայ։ Ծախեցէք ձեր ստացուածքը
և ողորմութիւն տուէք. ու ձեզի չհիննալու քը-
սակներ պատրաստեցէք, ու երկինքը՝ չպակսե-
լու գանձ մը, ուր ոչ գողը կը մօտենայ և ոչ
34 ցեցը կ'ապականէ։ Քանզի ձեր գանձը ուր որ է,
35 սիրտերնիդ ալ հոն պիտի ըլլայ։ Ձեր մէջքերը
36 գօտեւորած ըլլան, ու ճրագները վառած։ Եւ դուք
ան մարդոցը նման՝ որ իրենց տէրոջը կը սպա-
սեն՝ թէ ե՛րբ պիտի դառնայ հարսնիքէն. որ երբ
37 գայ և դուռը զարնէ, իսկոյն բանան անոր։ Ե-
րանի ան ծառաներուն, որ տէրը երբոր գայ՝
զանոնք արթուն պիտի գտնէ. Ճշմարիտ կ'ըսեմ
ձեզի, որ ինքը գօտին մէջքը պիտի կապէ ու սե-
ղան նստեցընէ անոնք, և առաջ անցնելով սպա-
38 սաւորութիւն պիտի ընէ անոնց։ Եւ թէ որ գի-
շերուան երկրորդ պահուն գայ, կամ երրորդ
պահուն գայ ու անանկ գտնէ, երանելի են ան
39 ծառաները։ Բայց աս գիտցէք, որ եթէ տանու-
տէրը գիտնար թէ ո՛ր ատեն գողը կու գայ, ար-
թուն կը կենար ու թող չէր տար որ իր տունը
40 ծակեն։ Ուրեմն դուք ալ պատրաստ կեցէք,
քանզի Որդին մարդոյ կու գայ անանկ ժամու
մէջ՝ որ դուք չէք կարծեր։
41 Եւ Պետրոս ըսաւ անոր, Տէր, աս առակը մե-
42 զի՞ կ'ըսես թէ ամենուն ալ։ Եւ Տէրը, ըսաւ, Ու-
րեմն ո՞վ է ան հաւատարիմ ու իմաստուն տնտե-
սը, որն որ տէրը իր գերդաստանին վրայ պի-

43 տի դնէ, որ ատենին անոնց ուտելիքը տայ։ Երա-
նի է ան ծառային, որն որ իր տէրը եկած ա-
44 տենը անանկ ըրած պիտի գտնէ։ Ճշմարիտ կ'ը-
սեմ ձեզի, որ իր բոլոր ունեցածին վրայ պիտի
45 կեցընէ զանիկա։ Հապա թէ որ ան ծառան իր
սրտին մէջ ըսէ, Իմ տէրս իր գալը կ'ուշացընէ.
և սկսի ծառաները ու աղախինները ծեծել, և
46 ուտել ու խմել ու գինովնալ, Ան ծառային տէրը
պիտի գայ անանկ մէկ օր մը որ չսպասեր, և անանկ
մէկ ժամ մը որ չգիտեր, և զանիկա մէջտեղէն
պիտի կտրէ, ու անոր բաժինը անհաւատարիմ-
47 ներուն հետ պիտի դնէ։ Եւ ան ծառան՝ որ իր
տէրոջը կամքը գիտէ ու չպատրաստուիր, ոչ ալ
անոր կամքը 'ի գործ կը դնէ, շատ ծեծ պիտի
48 ուտէ։ Բայց ան որ չգիտեր ու ծեծի արժանի
բան մը կ'ընէ, քիչ ծեծ պիտի ուտէ. որուն որ
շատ տրուեցաւ, շատ պիտի ուզուի անկէ, և ո-
րուն որ աւելի յանձնուեցաւ, ալ աւելի պիտի
պահանջուի անկէ։
49 Ես կրակ ձգելու եկայ երկրիս վրայ, ու ի՞նչ
50 կ'ուզեմ թէ որ արդէն բորբոքած է։ Բայց մը-
կրտութիւն մը ունիմ մկրտուելու, և ի՜նչպէս կը
51 տագնապիմ մինչև որ կատարուի։ Կը կարծէք թէ
ես երկրի վրայ խաղաղութի՞ւն տալու եկայ. ձեզի
52 կ'ըսեմ՝ Չէ, հապա բաժանմունք. Ինչու որ ասկէ
ետև մէկ տան մէջ հինգը իրարմէ բաժնուած պի-
տի ըլլան, երեքը երկուքէն ու երկուքը երեքէն.
53 Հայրը պիտի բաժնուի որդիէն և որդին հօրմէն,
Մայրը աղջիկէն ու աղջիկը մօրմէն, կեսուրը իր
հարսէն ու հարսը իր կեսուրէն։
54 Եւ ըսաւ ժողովուրդներուն, Երբոր արևմուտ-
քին կողմէն ամպ մը ելած կը տեսնէք, շուտ մը
կ'ըսէք թէ Անձրև պիտի գայ, և անանկ կ'ըլլայ։
55 Ու երբոր հարաւային հովը կը փչէ, կ'ըսէք թէ
56 Տաք պիտի ըլլայ, և անանկ կ'ըլլայ։ Կեղծաւոր-

ներ, երկրի ու երկնից երեսը քննելը գիտէք,
57 հապա աս ժամանակը ի՞նչպէս չէք քններ. Եւ
58 ինչո՞ւ դուք ձեզմէ չէք որոշեր իրաւունքը. Երբ
որ դուն քու ոսոխիդ հետ իշխանին երթալու
ըլլաս, ճամբուն մէջ անկէ ազատելու համար
ջանք ըրէ, որ չըլլայ թէ քեզ դատաւորին առ-
ջին քաշէ, ու դատաւորը դահիճին ձեռքը տայ
59 քեզ, ու դահիճն ալ բանտը դնէ. Քեզի կ'ըսեմ,
բնաւ պիտի չելլես անկէ՝ մինչև որ վերջի լուման
չվճարես.

ԳԼ. ԺԳ

1 Եւ ոմանք անատենը ներկայ գտնուելով՝ պատ-
մեցին անոր Գալիլեացւոց վրայով, որոնց արիւնը
2 Պիղատոս իրենց զոհերուն հետ խառնեց։ Եւ Յի-
սուս պատասխան տալով ըսաւ անոնց, Կը կար-
ծէ՞ք որ ան Գալիլեացիները բոլոր Գալիլեացինե-
րէն աւելի մեղաւոր էին, որ ասանկ բաներ քա-
3 շեցին. Ձեզի կ'ըսեմ, Ոչ. հապա թէ որ չապաշ-
խարէք, ամէնքդ ալ անանկ պիտի կորսուիք.
4 Կամ թէ ան տասնութը հոգին որոնց վրայ Սի-
լովամին մէջի աշտարակը ինկաւ, և անոնք մեռ-
ցուց. կը կարծէ՞ք որ անոնք Երուսաղեմի մէջ
բնակած բոլոր մարդոցմէն աւելի պարտաւոր է-
5 ին. Ձեզի կ'ըսեմ, Ոչ. հապա թէ որ չապաշխա-
րէք, ամէնքդ ալ նոյնպէս պիտի կորսուիք։
6 Աս առակն ալ ըսաւ. Մարդ մը իր այգիին մէջ
տնկուած թզենի մը ունէր, ու եկաւ անկէ պը-
7 տուղ փնտռելու և չգտաւ. Ուստի ըսաւ այգե-
պանին, Ահա երեք տարի է որ կու գամ աս
թզենիին վրայ պտուղ փնտռելու, ու չեմ գըտ-
ներ. ու ասիկա կտրէ, ինչո՞ւ համար գետինը
8 խափանէ. Անիկա պատասխան տուաւ ու անոր
ըսաւ, Տէր, աս տարի ալ ասիկա թող տուր,

մինչև որ տակը բոլորտիքը բրեմ ու թրիք դնեմ,
9 Եւ թէ որ պտուղ տայ՝ աղէկ, հապա թէ չէ՝ գալ
տարի կտրես ատիկա։
10 Եւ ինքը ժողովարաններուն մէկուն մէջ շաբաթ
11 օրը կը սորվեցընէր. Եւ ահա մէկ կնիկ մը կար,
որ հիւանդութեան ոգի մը ունէր տասնըութը
տարիէ ՚ի վեր, ու կծկտած էր և ամենևին չէր
12 կրնար շիտակ կայնիլ. Ու Յիսուս զանիկա տես-
նելով՝ իրեն կանչեց և ըսաւ անոր, Կնիկ, դուն
13 քու հիւանդութենէդ արձակուած ես. Ու ձեռքը
անոր վրայ դրաւ. և իսկոյն շիտկուեցաւ ու փառք
14 կու տար Աստուծոյ. Իսկ ժողովարանին իշխանը
պատասխան տուաւ բարկանալով՝ որ Յիսուս շա-
բաթ օրը բժշկեց, և ըսաւ ժողովուրդին, Վեց
օր կայ՝ որոնց մէջ արժան է գործ գործել, ուս-
տի ան օրերը եկէք բժշկուեցէք, ու չէ թէ շա-
15 բաթ օրը. Անատենը Տէրը պատասխան տուաւ
անոր ու ըսաւ, *Կեղծաւոր, ձեզմէ ամէն մէկը
շաբաթ օրը իր եզը կամ էշը մսուրէն չա՞րձըկեր
16 որ տանի ջուր տայ. Հապա ասիկա որ Աբրահամի
աղջիկ էր, որ ահա տասնըութը տարի Սատա-
նան զանիկա կապեց, չէ՞ր վայլեր որ շաբաթ օրը
17 ան կապէն արձըկուի. Եւ աս բաները որ ըսաւ, ի-
րեն հակառակ կեցողները ամէնքն ալ ամօթով
մնացին. ու բոլոր ժողովուրդը կ'ուրախանար ան
ամէն փառաւոր գործքերուն համար՝ որ անկէ
կ'ըլլային.
18 Եւ ըսաւ, Աստուծոյ թագաւորութիւնը ի՞նչ
բանի կը նմանի, ու ի՞նչ բանի նմանցընեմ անի-
19 կա. Մանանեխի հատի նման է, որն որ մարդ մը
առաւ՝ իր պարտէզը ձգեց. և աճեցաւ ու մեծ
ծառ եղաւ. ու երկնից թռչունները անոր ճիւ-
ղերուն վրայ բնակեցան.

*Ոմանք՝ կեղծաւորներ

20 Դարձեալ ըսաւ, Աստուծոյ թագաւորութիւնը
21 ի՞նչ բանի նմանցընեմ. Խմորի նման է, որն որ
կնիկ մը առաւ՝ երեք գրիւ ալիւրի մէջ պահեց,
մինչեւ որ ամէնն ալ խմորեցաւ.
22 Եւ քաղաքները ու գեղերը պտըտելով կը սոր-
վեցընէր, ու դէպ ՚ի Երուսաղէմ ճամբայ կ՚ըներ.
23 Եւ մէկը ըսաւ անոր, Տէր, քիչո՞ւր են անոնք
24 որ պիտի փրկուին. Անիկա ալ ըսաւ անոնց, Ջանք
ըրէք որ նեղ դռնէն մտնէք, քանզի կ՚ըսեմ ձե-
զի որ շատերը մտնել պիտի ուզեն և պիտի չկըր-
25 նան. Անկէ ետև որ տանուտէրը ելլէ ու դուռը
գոցէ, և դուք սկսիք դուրսը կենալ, ու դուռը
զարնել և ըսել, Տէր, Տէր, բաց մեզի. ան ալ
պատասխան տալով պիտի ըսէ ձեզի, Ձեզ չեմ
26 ճանչնար ուսկից էք. Անատենը պիտի սկսիք ը-
սել, Մենք քու առջեւդ կերանք ու խմեցինք, և
27 դուն մեր փողոցներուն մէջը սորվեցուցիր. Եւ
անիկա պիտի ըսէ, Ձեզի կ՚ըսեմ, Ձեզ չեմ ճանչ-
նար ուսկից էք, մէկդի կեցէք ինծմէ բոլոր ա-
28 նիրաւութիւն գործողներդ. Հոն պիտի ըլլայ լալ
ու ակռաներ կրճտել, երբոր տեսնէք Աբրահամը
ու Իսահակը և Յակոբը ու բոլոր մարգարէները
Աստուծոյ թագաւորութեանը մէջ, ու ձեզ դուրս
29 հանած. Եւ պիտի գան արևելքէն ու արևմուտ-
քէն և հիւսիսէն ու հարաւէն, ու պիտի բազմին
30 Աստուծոյ թագաւորութեանը մէջ. Եւ ահա կան
յետիններ՝ որ առաջիններ պիտի ըլլան, ու կան
առաջիններ՝ որ յետիններ պիտի ըլլան.
31 Նոյն օրը մէկ քանի փարիսեցիներ եկան ու ը-
սին անոր, Ելիր, ու գնա ասկէ, ինչու որ Հերով-
32 դէս քեզ սպաննել կ՚ուզէ. Եւ ինքը ըսաւ ա-
նոնց, Գացէք, ան աղուէսին ըսէք, Ահա ես դե-
ւեր կը հանեմ ու բժշկութիւններ կը կատարեմ
այսօր և վաղը, ու երրորդ օրը պիտի կատար-
33 ուիմ։ Միայն թէ պէտք է որ այսօր ու վաղը և

մէկալ օրը պտըտիմ, վասն զի կարելի չէ որ մար-
34 գարէ մը Երուսաղեմէն դուրս կորսուի։ Ով Ե-
րուսաղէմ, Երուսաղէմ, որ մարգարէները կը
սպաննէիր, ու քեզի խրկուածները կը քարկո-
ծէիր, քանի՛ անգամ քու տղաքներդ ժողվել
ուզեցի՝ ինչպէս որ հաւը իր ձագերը թեւերուն
35 տակը կը ժողվէ, և դուք չուզեցիք։ Ահա ձեր
տունը ձեզի աւերակ պիտի մնայ. սակայն ձեզի
կ՚ըսեմ, որ ալ զիս պիտի չտեսնէք, մինչև գայ
ան ժամանակը որ պիտի ըսէք, Օրհնեալ է ան
որ Տէրոջը անունովը կու գայ,

ԳԼ. ԺԴ

1 Ու եղաւ որ երբ ինքը շաբաթ օր մը փարիսեց-
ւոց գլխաւորներուն մէկուն տունը մտաւ հաց
2 ուտելու, ու անոնք անոր կը սպասէին։ Եւ ահա
3 հոն ջրգողեալ մարդ մը կար իր առջեւը. Եւ Յի-
սուս պատասխան տուաւ ու խօսեցաւ օրինա-
կաններուն ու փարիսեցիներուն ըսելով, Արժա՞ն
4 է շաբաթ օրը բժշկել. Անոնք ալ լուռ կեցան. և
5 ինքը բռնեց զանիկա, բժշկեց ու ճամբեց. Եւ
պատասխան տալով ըսաւ անոնց, Ձեզմէ որո՞ւն
էշը կամ եզը հորը իյնալու ըլլայ, ու շուտ մը
6 չհանէր անիկա շաբաթ օրը. Եւ աս բաներուս չը-
կրցան անոր պատասխան տալ.
7 Առակ մը զրուցեց ան հրաւիրուած մարդոց
ալ, երբոր տեսաւ թէ ինչպէս առաջին բազմոց-
8 ները կ՚ընտրէին, ու ըսաւ անոնց, Երբոր մէկէ
մը հարսնիքի հրաւիրուիս, առաջին բազմոցին
վրայ մի նստիր. չըլլայ որ քեզմէ աւելի պատուա-
9 ւոր մէկն ալ հրաւիրուած ըլլայ անկէ. Եւ ան որ
քեզ ու անիկա հրաւիրեց, գայ զրուցէ քեզի, Ա-
սոր տեղ տուր, և անկէ ետև սկսիս ամօթով
10 յետին տեղը բռնել. Հապա երբոր հրաւիրուիս,

գնա յետին տեղը նստէ. որ երբ քեզ հրաւիրողը
գայ՝ քեզի ըսէ, Բարեկամ, վեր հրամմէ. անա-
տենը քու հետդ նստողներուն առջեւը քեզի
11 փառք կ'ըլլայ։ Վասն զի ամէն ով որ իր անձը
կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի. և ով որ իր
անձը կը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ։
12 Ու զինքը հրաւիրողին ալ ըսաւ, Երբոր ճաշ
կամ ընթրիք կ'ընես, մի կանչեր քու բարեկամ-
ներդ, ոչ ալ քու եղբայրներդ, և ոչ քու ազ-
գականներդ, ու ոչ ալ հարուստ դրացիներդ,
որ չըլլայ թէ անոնք ալ փոխարէնը քեզ հրաւի-
13 րեն, ու քեզի հատուցում ըլլայ։ Հապա երբոր
հացկերոյթ կ'ընես, աղքատներ, պակասաւորներ,
14 կաղեր ու կոյրեր հրաւիրէ. Ու երանելի պիտի ըլ-
լաս; ինչու որ անոնք չեն կրնար փոխարէնը քե-
զի հատուցանել. քանզի արդարներուն յարու-
թիւն առած ատենը փոխարէնը քեզի պիտի հա-
տուցուի։
15 Ու սեղան նստողներէն մէկը երբոր լսեց աս
ոնք՝ ըսաւ անոր, Երանի անոր որ Աստուծոյ
16 թագաւորութեանը մէջ հաց պիտի ուտէ։ Ու ին-
քը ըսաւ անոր, Մէկ մարդ մը մեծ ընթրիք ը-
17 րաւ ու շատ մարդիկ հրաւիրեց։ Ու ընթրիքին
ատենը ղրկեց իր ծառան, որ հրաւիրուածները
կանչէ՝ [illegible] Եկէք, ինչու որ արդէն ամէն բան
18 պատրաստ է։ Ու ամէնքը մէկէն սկսան ետ քաշ-
ուիլ. առջինը անոր ըսաւ, Ես արտ մը ծախու
առի, ու պէտք է որ ելլեմ տեսնեմ անիկա.
19 կ'աղաչեմ քեզի՝ զիս հրաժարուած սեպէ։ Ու
միւսը ըսաւ, Հինգ զոյգ եզ ծախու առի, ու կ'եր-
թամ որ անոնք փորձեմ. կ'աղաչեմ քեզի՝ զիս
20 հրաժարուած սեպէ։ Ու միւսը ըսաւ, Կնիկ ա-
21 ռի, ու անոր համար չեմ կրնար գալ։ Ան
ծառան եկաւ ու իր տիրոջը պատմեց ասբաները.
Անատենը բարկացաւ տանուտէրը ու ըսաւ իր

ծառային, Շուտով քաղաքին հրապարակները ու
փողոցները ելիր, և աղքատները ու պակասա-
22 ւորները և կաղերը ու կոյրերը հոս մտցուր։ Ծա-
ռան ալ ըսաւ, Տէր, եղաւ ինչ որ հրամայեցիր,
23 ու տակաւին տեղ կայ։ Ու տէրը ըսաւ ծառա-
յին, Ելիր ճամբաները ու ցանկերը, և [illegible]
24 ստիպէ հոս մտնելու, որ տունս լեցուի։ Քանզի
կ'ըսեմ ձեզի որ ան հրաւիրուածներէն մէկն ալ
իմ ընթրիքէս համը պիտի չառնէ։
25 Ու իր հետը շատ ժողովուրդներ կ'երթային. և
26 դառնալով անոնց ըսաւ, Թէ որ մէկը ինծի կու
գայ, ու չատեր իր հայրը և մայրը, ու կինը և
զաւակները, ու եղբայրները և քոյրերը, նաև իր
27 կեանքն ալ, չկրնար իմ աշակերտս ըլլալ։ Ու
ով որ իր խաչը չվերցներ ու իմ ետեւէս գար,
28 չկրնար իմ աշակերտս ըլլալ։ Վասն զի ձեզմէ
ո՞վ աշտարակ մը շինել ուզելով, առաջ չնըս-
տիր, ու հաշիւ ըներ ծախքը, թէ անիկա լմըն-
29 ցընելու [illegible] ունի՞. Որ չըլլայ թէ երբ
հիմը ձգէ ու չկրնայ լմնցընել, բոլոր տեսնող-
30 ները սկսին անիկա ծաղր ընել, Ու ըսել թէ Աս
31 մարդը սկսաւ շինել ու չկրցաւ լմնցընել։ Կամ
թէ ո՞ր թագաւոր ուրիշ թագաւորի մը հետ պա-
տերազմելու երթալով, առաջ չնստիր ու խորհիր,
թէ արդեօք տասը հազարով կրնա՞յ դէմ կենալ
32 անոր՝ որ քսան հազարով իր վրայ կու գայ։ Հա-
պա թէ չէ՝ քանի որ անիկա հեռու է, դեսպան
33 ղրկելով խաղաղութիւն կը խնդրէ։ Ահա ասանկ
ալ ձեր մէջէն ամէն մէկը թէ որ իր բոլոր ստաց-
ուածքէն ետ չկենայ, չկրնար իմ աշակերտս ըլ-
34 լալ։ Աղը աղէկ բան է. բայց թէ որ աղը իր հա-
35 մը կորսնցընէ՝ ինչո՞վ պիտի համեմուի։ Ոչ հողի
ու ոչ թրիքի տեղ օգտակար կ'ըլլայ, հապա ա-
նիկա դուրս կը նետեն։ Ան որ լսելու ականջ
ունի՝ թող լսէ։

ԳԼ. ԺԵ

1 Եւ բոլոր մաքսաւորները ու մեղաւորները անոր
2 կը մօտենային իրմէն լսելու համար։ Եւ փարիսե-
ցիները ու դպիրները տրտունջ կ'ընէին ու կ'ը-
սէին, Ասիկա մեղաւորները կ'ընդունի, ու անոնց
հետ կ'ուտէ։
3 Եւ անիկա այս առակը խօսեցաւ անոնց՝ ըսե-
4 լով, Ձեզմէ ո՞վ է այն մարդը՝ որ հարիւր ոչխար
ունենայ, և անոնցմէ մէկը որ կորսնցընէ, իննս-
ունըինը չ՞ձգեր անապատին մէջ՝ ու այն
կորսուածին ետևէն երթար, մինչև որ զանիկա
5 գտնէ։ Ու երբոր կը գտնէ՝ ուրախանալով իր ու-
6 սերուն վրայ կը դնէ զանիկա, Եւ տունը գալով՝
կը կանչէ բարեկամները ու դրացիները, ու ա-
նոնց կ'ըսէ, Ուրախ եղէք ինծի հետ, ինչու որ
7 իմ կորսուած ոչխարս գտայ։ Ձեզի կ'ըսեմ որ
այսպէս ուրախութիւն պիտի ըլլայ երկինքը մէկ
մեղաւորի մը համար որ կ'ապաշխարէ, քան թէ
իննսունըինը արդարներու համար՝ որ անոնց ա-
8 պաշխարութիւն պէտք չէ։ Կամ թէ ո՞վ է այն
կնիկը որ տասը դրամ ունենայ, ու թէ որ դրամ
մը կորսնցընէ՝ ճրագ չ՞վառեր, ու տանը մէջ
աւել զարներ և զգուշութեամբ փնտռեր, մինչև
9 որ գտնէ։ Ու երբոր կը գտնէ՝ կը կանչէ բարե-
կամները ու դրացիները, և կ'ըսէ, Ուրախ եղէք
ինծի հետ, ինչու որ իմ կորսնցուցած դրամս
10 գտայ։ Անանկ ալ ձեզի կ'ըսեմ, ուրախութիւն
կ'ըլլայ Աստուծոյ հրեշտակներուն առջևը մէկ մե-
ղաւորի մը համար որ կ'ապաշխարէ։
11 Եւ ըսաւ, Մէկ մարդ մը երկու որդի ունէր։
12 Ու անոնցմէ պզտիկը հօրը ըսաւ, Հայր, տուր ըս-
տացուածքէդ ինծի իյնալու բաժինը տուր ինծի.
13 ան ալ բաժնեց անոնց իր ունեցածը։ Եւ շատ օ-

րեր չանցած՝ պզտիկ որդին բոլոր բաները ժող-
վեց ու հեռու երկիր մը գնաց, և հոն անառա-
14 կութեամբ ապրելով իր ունեցածը փճացուց։ Ու
երբոր ամէնը հատցուց, այն երկրին մէջ սաստիկ
15 սով մը եղաւ, ու ինքը սկսաւ չքաւոր ըլլալ։ Եւ
գնաց այն երկրին քաղաքացիներէն մէկուն քովը
մտաւ, ան ալ իր ագարակը ղրկեց զանիկա՝ խո-
16 զեր արածելու համար։ Եւ կը փափաքէր խոզե-
րուն կերած եղջիւրէն իր փորը լեցընելու, ու
17 մէկը չէր տար անոր։ Եւ ինքզինքին գալով ը-
սաւ, Քանի՞ բանուորներ կան իմ հօրս տունը
հացով լեցուած, ու ես հոս սովամահ կը կորնչիմ։
18 Ելլեմ՝ երթամ իմ հօրս, և ըսեմ անոր, Հայր,
19 մեղանչեցի երկնից դէմ ու քու առջևդ, Եւ ալ
արժանի չեմ քու որդիդ ըսուելու. զիս քու
20 վարձկաններուդ մէկուն պէս ըրէ։ Ու ելաւ իր հօրը
եկաւ. և դեռ որ ինքը շատ հեռու էր, հայրը
տեսաւ զանիկա ու գութը շարժեցաւ, և վազե-
լով՝ անոր պարանոցին վրայ ինկաւ ու համբուրեց
21 զանիկա։ Որդին ալ ըսաւ անոր, Հայր, մեղանչե-
ցի երկնից դէմ ու քու առջևդ, և ալ արժանի
22 չեմ քու որդիդ ըսուելու։ Բայց հայրը ըսաւ իր
ծառաներուն, Հանեցէք առաջին պատմուճանը
ու հագցուցէք անոր, և մատանի դրէք անոր
23 ձեռքը, ու կօշիկներ՝ անոր ոտքերը։ Եւ պա-
րարտ զուարակը բերէք՝ մորթեցէք, և ուտենք
24 և ուրախ ըլլանք. ինչու որ աս իմ որդիս մեռած
էր ու ողջնցաւ, կորսուած էր ու գտնուեցաւ։ Եւ
25 սկսան ուրախ ըլլալ։ Ու անոր մեծ որդին ագա-
րակն էր, ու երբոր կու գար ու տանը մօտեցաւ,
26 նուագարաններուն և պարերուն ձայնը լսեց։ Ու
ծառաներէն մէկը իրեն կանչելով՝ կը հարցընէր
27 թէ աս ի՞նչ է։ Անիկա ալ ըսաւ անոր, Եղբայրդ
եկաւ, ու հայրդ պարարտ զուարակը մորթեց,
28 ինչու որ ողջ առողջ ձեռք ձգեց զանիկա։ Իսկ

ինքը բարկացաւ ու չէր ուզեր ներս մտնել. ուստի
29 իր հայրը դուրս ելլելով կ'աղաչէր անոր։ Եւ ա-
նիկա պատասխան տալով ըսաւ հօրը, Ահա այս-
չափ տարի է որ քեզի կը ծառայեմ, ու բնաւ
քու խօսքէդ դուրս չելայ, ու ինծի երբէք մէկ
ուլ մը չտուիր, որ իմ բարեկամներուս հետ ու-
30 րախութիւն ընէի։ Բայց երբոր եկաւ աս քու
որդիդ՝ որ քու ստացուածքդ բոզերու հետ կե-
31 րաւ, անոր մորթեցիր պարարտ զուարակը։ Եւ
անիկա ըսաւ անոր, Որդեակ, դուն միշտ իմ
32 հետս ես, ու իմ բոլոր ունեցածս քուկդ է։ Սա-
կայն պէտք էր ուրախ ըլլալ և խնդալ, ինչու որ
աս քու եղբայրդ մեռած էր ու ողջնցաւ, կոր-
սուած էր ու գտնուեցաւ։

ԳԼ. ԺԶ

1 Ու իր աշակերտներուն ալ ըսաւ, Մէկ հարուստ
մարդ մը կար, որ տնտես մը ունէր, և անոր վը-
րայով գանգատ եղաւ իրեն՝ որպէս թէ իր ու-
2 նեցածը կը փճացընէ։ Ուստի կանչեց զանիկա ու
ըսաւ անոր, Ի՞նչ է աս որ քեզի համար կը լսեմ.
քու տնտեսութեանդ հաշիւը տուր, ինչու որ ալ
3 չես կրնար տնտես ըլլալ։ Եւ տնտեսը իր մտքին
մէջ ըսաւ, Ի՞նչ ընեմ, որովհետև իմ տէրս տըն-
տեսութիւնը ինծմէ կ'առնէ. *հողագործութիւն
4 չեմ կրնար ընել՝, մուրալու կ'ամչնամ։ Գիտեմ
ինչ պիտի ընեմ, որպէս զի երբոր էմ տնտեսու-
թենէս մերժուիմ՝ զիս իրենց տունը ընդունին։
5 Եւ իր տիրոջը պարտականները մէկիկ մէկիկ ի-
րեն կանչելով՝ ըսաւ առջինին, Դուն իմ տիրոջս
6 ո՞րչափ պարտք ունիս։ Ան ալ ըսաւ, Հարիւր մար
ձէթ. և ըսաւ անոր, Գիրդ առ ու շուտով նստէ

*Յուն. չեմ կրնար բրել

7 յիսուն գրէ։ Ետքը միւսին ըսաւ, Դուն ալ ո՞ր-
չափ պարտք ունիս. և անիկա ըսաւ, Հարիւր քոռ
ցորեն. ու ըսաւ անոր, Գիրդ առ և ութսուն
8 գրէ։ Ու տէրը անիրաւ տնտեսը գովեց, որ խե-
լացութիւնով ըրաւ. վասն զի աս աշխարհիս որ-
դիքը իրենց ցեղին մէջ՝ լուսոյ որդիներէն աւելի
9 խելացի են։ Եւ ես ալ ձեզի կ'ըսեմ, Անիրաւ մա-
մոնայէն ձեզի բարեկամներ ըրէք, որ *երբ անի-
կա պակսի՝, ձեզ յաւիտենական բնակարաններու
10 մէջ ընդունին։ Ան որ քիչ բանի մէջ հաւատարիմ
է, շատի մէջ ալ հաւատարիմ է. և ան որ քիչի
11 մէջ անիրաւ է, շատի մէջ ալ անիրաւ է։ Ուստի
թէ որ անիրաւ մամոնային մէջ հաւատարիմ չե-
ղաք, ճշմարիտ հարստութիւնը ո՞վ պիտի հաւա-
12 տայ ձեզի։ Ու թէ որ օտարին բանին մէջ հաւա-
13 տարիմ չեղաք, ձերը ո՞վ պիտի տայ ձեզի։ Մէկ
ծառայ մը չկրնար երկու տէրերու ծառայութիւն
ընել, ինչու որ կամ մէկը պիտի ատէ և միւսը
սիրէ, կամ †մէկուն պիտի յարի՝ և միւսը արհա-
մարհէ. չէք կրնար ծառայել Աստուծոյ ու մա-
մոնայի։
14 Եւ փարիսեցիներն ալ որ արծաթասէր էին, աս
15 ամէն բաները լսելով կը քամահրէին զանիկա։ Եւ
ըսաւ անոնց, Դուք էք որ մարդոց առջեւ ինք-
զինքնիդ կ'արդարացընէք, բայց Աստուած գիտէ
ձեր սիրտերը. ինչու որ մարդոց մէջ բարձր ե-
16 ղածը Աստուծոյ առջեւ պիղծ է։ Օրէնքը ու մար-
գարէները մինչև Յովհաննէս էին. անկէ ետև Աս-
տուծոյ թագաւորութիւնը կը քարոզուի, և ամէն
17 մէկը անոր մէջը մտնելու կ'արտորայ։ Դիւրին է
որ երկինք ու երկիր անցնի, քան թէ օրէնքէն
18 մէկ նշանագիր մը իյնայ։ Ով որ իր կնիկը ար-

*Այսինքն կարօտութեան ժամանակնիդ
†կամ մէկը պիտի մեծարէ

ձակէ և ուրիշ մը առնէ՝ շնութիւն կ՚ընէ, և ով
որ էրիկէ արձակուած կնիկ մը առնէ՝ շնութիւն
կ՚ընէ։
19 Մէկ հարուստ մարդ մը կար, որ ծիրանի ու
բեհեզ կը հագնէր, և ամէն օր փառաւորապէս
20 ուրախութիւն կ՚ընէր։ Ու Ղազարոս անունով
աղքատ մը կար վէրքերով լեցուն, որ անոր
21 դրանը առջին դրուած էր։ Ու կը փափաքէր որ
ան հարուստին սեղանէն ինկած փշրանքներէն
իր փորը լեցնէ. նաև շուներն ալ կու գային և
22 անոր վէրքերը կը լզէին։ Ու եղաւ որ ան աղ-
քատը մեռաւ, ու հրեշտակները Աբրահամին
գոգը տարին զանիկա. հարուստն ալ մեռաւ ու
23 թաղուեցաւ։ Ու դժոխքին մէջը երբոր տանջան-
քի մէջ էր, իր աչքերը վերցնելով հեռուէն տե-
սաւ Աբրահամը՝ ու Ղազարոսը անոր գոգը հան-
24 գչած նստած։ Ու ինքը աղաղակեց ու ըսաւ, Հայր
Աբրահամ, ողորմէ ինծի ու ղրկէ Ղազարոսը, որ
իր մատին ծայրը ջուրը թաթխէ, ու զովացնէ
իմ լեզուս, ինչու որ աս բոցին մէջ կը տանջուիմ։
25 Ու Աբրահամ ըսաւ, Որդեակ, միտքդ բեր, որ
դուն քու կեանքիդ ատենը քու բարիքներդ ա-
ռիր, նոյնպէս ալ Ղազարոս՝ չարիքներ. հիմա
անիկա [հոս] կը մխիթարուի, ու դուն կը տանջ-
26 ուիս։ Ու աս ամէն բաներէն զատ՝ մեր ու ձեր
մէջտեղը մեծ անդունդ մը կայ հաստատուած, ա-
նանկ որ ասկէ ձեզի անցնիլ ուզողները չկրնան,
27 ոչ ալ անկէ մեզի գալ ուզողները անցնին։ Ան ալ
ըսաւ, Ուրեմն կ՚աղաչեմ քեզի, հայր, որ անիկա
28 իմ հօրս տունը ղրկես, Քանզի հինգ եղբայր ու-
նիմ, որ երթայ անոնց վկայութիւն տայ, որ չըլ-
լայ թէ անոնք ալ աս չարչարանքին տեղը գան։
29 Ու Աբրահամ ըսաւ անոր, Անոնք Մովսէսը ու
30 մարգարէները ունին, թող անոնց մտիկ ընեն։ Ան
ալ ըսաւ, Չէ, հայր Աբրահամ, հապա թէ որ

մեռելներէն մէկը անոնց երթայ, պիտի ապաշ-
31 խարեն։ Ու անիկա ըսաւ անոր, Թէ որ Մովսէ-
սին ու մարգարէներուն մտիկ չեն ըներ, ոչ ալ
թէ որ մեռելներէն մէկը յարութիւն առնելու
ըլլայ, պիտի համոզուին։

ԳԼ. ԺԷ

1 Ու ըսաւ իր աշակերտներուն, Անկարելի է որ
գայթակղութիւններ չգան. բայց վա՜յ անոր, ո-
2 րուն ձեռքովը կու գան։ Անոր աւելի աղէկ է,
որ անոր պարանոցէն իշու աղացքի քար մը կախ-
ուի, ու անիկա ծովը ձգուի, քան թէ աս պզ-
3 տիկներէն մէկը գայթակղեցընէ։ Զգուշացէք ձեր
անձերուն։ Թէ որ քու եղբայրդ քեզի դէմ մե-
ղանչէ, յանդիմանէ զանիկա. ու թէ որ ապաշ-
4 խարէ, ներէ անոր։ Ու թէ որ օրը եօթը ան-
գամ քեզի դէմ մեղանչէ՝ ու օրը եօթը անգամ
դառնայ քեզի ու ըսէ, Կ՚ապաշխարեմ, ներես
անոր։
5 Ու առաքեալները ըսին Տէրոջը, Մեր հաւատքը
6 աւելցուր։ Ու Տէրը ըսաւ, Թէ որ մանանեխի
հատի չափ հաւատք ունենայիք, աս թթենիին
կրնայիք ըսել, Արմատաքի խլուէ ու ծովուն մէջը
տնկուէ, ան ալ պիտի հնազանդէր ձեզի։
7 Բայց ձեզմէ ո՞վ է ան մարդը՝ որ ունենայ մէկ
երկրագործ կամ հովիւ ծառայ մը, որ անիկա
երբոր ագարակէն տուն մտնէ, շուտով գրուցէ
8 անոր թէ Անցիր սեղան նստէ. Հապա չըսե՞ր ա-
նոր թէ Պատրաստէ իմ ընթրիքս, ու գօտիդ-
կապած ինծի սպասաւորութիւն ըրէ, մինչև որ
ես ուտեմ ու խմեմ. ու ետքը դուն ալ կեր ու
9 խմէ։ Միթէ շնորհակա՞լ կ՚ըլլայ ան ծառային, ի-
րեն հրամայուած բաները կատարելուն համար.
10 չեմ կարծեր։ Նոյնպէս ալ դուք երբոր բոլոր

ձեզի հրամայուած բաները ընէք, ըսէք թէ Մենք
անպիտան ծառաներ ենք, քանզի ան որ պար-
տական էինք ընելու՝ ըրինք։
11 Ու եղաւ որ երբ ինքը Երուսաղէմ կ'երթար,
12 Սամարիայի և Գալիլեայի մէջտեղէն կ'անցնէր։ Ու
երբոր մէկ գեղ մը պիտի մտնէր, տասը բորոտ
մարդիկ հանդիպեցան անոր, որոնք հեռուէն կայ-
13 նեցան, Եւ ձայներնին վերցուցին ու ըսին, Յիսուս
14 վարդապետ, ողորմէ մեզի։ Եւ տեսնելով՝ անոնց
ըսաւ, Գացէք դուք ձեզ քահանաներուն ցու-
ցուցէք. ու եղաւ որ երբ կ'երթային՝ մաքրուե-
15 ցան։ Եւ անոնցմէ մէկը երբոր տեսաւ թէ բժշ-
կուեցաւ, ետ դարձաւ ու մեծ ձայնով փառք
16 կու տար Աստուծոյ. Ու երեսի վրայ անոր ոտքը
ինալով՝ շնորհակալ կ'ըլլար անոր. և ինքը Սա-
17 մարացի էր։ Պատասխան տուաւ Յիսուս ու ը-
սաւ, Չէ՞ որ տասն ալ մաքրուեցան, իսկ ան ինը
18 ո՞ւր են. Աս օտարազգիէն 'ի զատ ուրիշներ չգըտ-
նուեցա՞ն՝ որ դառնալով Աստուծոյ փառք տան։
19 Եւ ըսաւ անոր, Ելիր գնա, քու հաւատքդ քեզ
բժշկեց։
20 Ու երբոր փարիսեցիները իրեն հարցուցին՝ թէ
Աստուծոյ թագաւորութիւնը ե՞րբ պիտի գայ,
պատասխան տուաւ անոնց ու ըսաւ, Աստուծոյ
թագաւորութիւնը դիտուելով երևցած բաներով
21 չգար. Ու պիտի չըսեն թէ Ահա հոս է, կամ Ահա
հոն, ինչու որ ահա Աստուծոյ թագաւորութիւնը
ձեր ներսի դին է։
22 Աշակերտներուն ալ ըսաւ, Օրեր պիտի գան որ
դուք Որդւոյ մարդոյ օրերուն մէկը տեսնելու
23 պիտի փափաքիք, ու պիտի չտեսնէք։ Եւ թէ որ
ըսեն ձեզի թէ Ահա հոս է, կամ Ահա հոն, մի եր-
24 թաք ու անոնց մի հետևիք։ Վասն զի ինչպէս որ
փայլակը երկնից տակը մէկ դիէն փայլատակելով՝
մինչև երկնից տակը միւս դին լոյս կու տայ, նոյն-

պէս ալ պիտի ըլլայ Որդին մարդոյ իր գալուն օ-
25 րը։ Միայն թէ պէտք է որ ինքը առաջ շատ
26 չարչարանքներ կրէ ու մերժուի աս ազգէն։ Եւ
ինչպէս որ Նոյի օրերը եղաւ, անանկ պիտի ըլլայ
27 Որդւոյ մարդոյ օրերն ալ. Կ'ուտէին, կը խմէին,
կնիկ կ'առնէին, էրկան կը տրուէին, մինչև ան
օրը որ Նոյ տապանը մտաւ, և ջրհեղեղը եկաւ ու
28 ամէնը կորսնցուց. Նմանապէս՝ ինչպէս որ Ղով-
տին օրերը եղաւ, կ'ուտէին, կը խմէին, ծախու
կ'առնէին, կը ծախէին, կը տնկէին, կը շինէին.
29 Բայց ան օրը որ Ղովտ Սոդոմէն ելաւ, երկինքէն
կրակ ու ծծումբ տեղաց և բոլորն ալ կորսնցուց.
30 Նոյնպէս պիտի ըլլայ ան օրը՝ որուն մէջ Որդին
31 մարդոյ պիտի յայտնուի։ Ան օրը՝ ան որ տանի-
քին վրայ է և իր կարասիները տանը մէջ, թող
վար չիջնէ զանոնք առնելու, և ան որ արտին
32 մէջն է՝ նոյնպէս թող ետ չդառնայ. Միտքերնիդ
33 բերէք Ղովտին կնիկը։ Ով որ իր կեանքը կ'ուզէ
ապրեցնել՝ պիտի կորսնցընէ զանիկա, և ով որ
34 կը կորսնցընէ՝ պիտի ապրեցընէ զանիկա։ Ձեզի
կ'ըսեմ, Ան գիշերը թէ որ երկու հոգի մէկ ան-
կողինի մէջ ըլլան, մէկը պիտի առնուի ու միւսը
35 ձգուի. Եւ թէ որ երկու կնիկ մէկտեղ աղալու ըլ-
լան, մէկը պիտի առնուի ու միւսը ձգուի. և թէ
որ երկու հոգի արտի մը մէջ ըլլան, մէկը պիտի
36 առնուի ու միւսը ձգուի։ Եւ պատասխան տալով
ըսին անոր, Տէր, ո՞ւր տեղ պիտի ըլլայ ասիկա.
37 Ան ալ ըսաւ անոնց, Ուր որ մարմին կայ, հոն
պիտի ժողվուին արծիւները։

ԳԼ. ԺԸ

1 Անոնց առակ մըն ալ ըսաւ աս բանիս վրայով՝
թէ պէտք է ամէն ատեն աղօթք ընել ու չձանձ-
2 րանալ. Ըսաւ, Մէկ դատաւոր մը կար քաղաքի

մը մէջ, որ Աստուծմէ չէր վախնար ու մարդէ չէր
3 ամչնար։ Եւ նոյն քաղաքին մէջ որբեւայրի մը կար,
որ անոր կու գար ու կ՚ըսէր, Իրաւունք ըրէ ինծի
4 ու ազատէ զիս իմ ոսոխէս։ Եւ անիկա ժամանակ
մը չէր ուզեր անոր մտիկ ընել, բայց ետքը ըսաւ իր
մտքին մէջ, Թէ և Աստուծմէ չեմ վախնար ու
5 մարդէ չեմ ամչնար, Գոնէ աս որբեւայրին զիս
ձանձրացնելուն համար իրեն իրաւունք ընեմ,
6 որ չգայ ամէն ատեն զիս թախանձէ։ Եւ Տէրը ը-
սաւ, Լսեցէք՝ անիրաւ դատաւորը ի՛նչ կ՚ըսէ։
7 Հապա Աստուած իր ընտրեալներուն իրաւունք
պիտի չընէ՞, որոնք ցորեկ ու գիշեր իրեն կ՚աղա-
ղակեն, թէև երկայնամիտ ալ ըլլայ անոնց վրայ։
8 Ձեզի կ՚ըսեմ որ շուտով անոնց իրաւունք պիտի
ընէ. բայց Որդին մարդոյ երբոր գայ՝ արդեօք
հաւատք պիտի գտնէ՞ երկրի վրայ։
9 Եւ մէկ քանիներուն, որոնք իրենց անձերուն
վրայ կը վստահանային թէ արդար են, և ուրիշ-
10 ները կ՚անարգէին, աս առակը ըսաւ. Երկու մարդ
ելան տաճարը աղօթք ընելու, մէկը փարիսեցի
11 ու միւսը մաքսաւոր։ Փարիսեցին կայներ էր, ու
առանձին այսպէս աղօթք կ՚ընէր. Ով Աստուած,
շնորհակալ եմ քեզմէ, որ ուրիշ մարդոց պէս
չեմ՝ յափշտակող, անիրաւ, շնացող, և կամ աս
12 մաքսաւորին պէս։ [illegible] շաբաթը երկու անգամ
ծոմ կը պահեմ, ու բոլոր ստացածիս տասանորդը
13 կու տամ։ Եւ մաքսաւորը հեռուն կայներ էր, ու
չէր ուզեր աչքն ալ երկինքը վերցնել, հապա իր
կուրծքը ծեծելով կ՚ըսէր, Աստուած, ողորմէ ին-
14 ծի մեղաւորիս։ Ձեզի կ՚ըսեմ թէ ասիկա ան միւ-
սէն աւելի արդարացած իր տունը իջաւ. վասն զի
ով որ իր անձը կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի,
և ով որ իր անձը կը խոնարհեցնէ՝ պիտի բարձ-
րանայ։
15 Մանր տղաք ալ բերին իրեն, որ անոնց դպչի.

ու աշակերտները տեսնելով կը յանդիմանէին զա-
16 նոնք։ Բայց Յիսուս անոնք իրեն կանչելով ըսաւ,
Թող տուէք աս մանր տղոցը որ ինծի գան, և
մի արգիլէք ատոնք, ինչու որ Աստուծոյ թագա-
17 ւորութիւնը ատանկներունն է։ Ճշմարիտ կ՚ըսեմ
ձեզի, Ով որ Աստուծոյ թագաւորութիւնը պզտ-
տիկ տղու մը պէս չընդունի, բնաւ պիտի չմտնէ
անոր մէջը։
18 Եւ մէկ իշխան մը հարցուց անոր ու ըսաւ, Բա-
րի վարդապետ, ի՞նչ գործ գործեմ որ յաւիտե-
19 նական կեանքը ժառանգեմ։ Եւ Յիսուս ըսաւ ա-
նոր, Ինչո՞ւ զիս բարի կ՚անուանես. մէկէն 'ի զատ
20 բարի չկայ, որ է Աստուած։ Պատուիրանքները
գիտես. Շնութիւն մի ըներ, Սպանութիւն մի ը-
ներ, Գողութիւն մի ըներ, Սուտ վկայութիւն մի
21 ըներ, Քու հայրդ ու մայրդ պատուէ։ Ան ալ ը-
սաւ, Ատոնք ամէնը մանկութենէս 'ի վեր պահեր
22 եմ։ Աս լսելով Յիսուս ըսաւ անոր, Մէկ բան
մըն ալ պակաս է քեզի. քու բոլոր ունեցածդ
ծախէ՝ և աղքատներուն բաշխէ, ու երկինքը
23 գանձ պիտի ունենաս, և եկուր իմ ետեւէս։ Ա-
նիկա երբոր աս բանը լսեց՝ տրտմեցաւ, ինչու որ
24 շատ հարուստ էր։ Եւ Յիսուս երբոր անիկա
տրտմած տեսաւ, ըսաւ, Ո՜րչափ դժուար է ա-
նոնց՝ որ հարստութիւն ունին, Աստուծոյ թա-
25 գաւորութիւնը մտնել։ Քանզի դիւրին է որ ուղ-
տը ասեղին ծակէն անցնի, քան թէ հարուստը
26 Աստուծոյ թագաւորութիւնը մտնէ։ Եւ անոնք
27 որ լսեցին կ՚ըսէին, Ալ ո՞վ կրնայ փրկուիլ։ Եւ
ինքը ըսաւ, Մարդոց կողմանէ անկարելի եղած
28 բաները Աստուծոյ կողմանէ կարելի են։ Ու Պետ-
րոս ըսաւ, Ահա մենք ամէն բան թողուցինք և
29 քու ետեւէդ եկանք։ Ու անիկա ըսաւ անոնց,
Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի թէ Մարդ մը չկայ՝ որ թո-
ղուց տուն, կամ ծնողք, կամ եղբայրներ, կամ

կին, կամ որդիներ՝ Աստուծոյ թագաւորութեանը
30 համար, Որ պիտի չառնէ բազմապատիկ աս ա-
տենիս մէջ, և գալու աշխարհին մէջ յաւիտենա-
կան կեանքը։

31 Եւ տասուերկուքը իր քովը առնելով՝ ըսաւ ա-
նոնց, Ահա մենք Երուսաղէմ կ'ելլենք, և մար-
գարէներուն ձեռքովը Որդւոյ մարդոյ համար բո-
32 լոր գրուածները պիտի կատարուին։ Ինչու որ հե-
թանոսներուն պիտի մատնուի, ու ծաղր պիտի
ըլլայ և պիտի նախատուի, ու պիտի թքնեն ա-
33 նոր, Եւ պիտի ծեծեն ու սպաննեն անիկա, ու
34 երրորդ օրը յարութիւն պիտի առնէ։ Բայց ա-
նոնք աս բաներէն մէկն ալ չհասկըցան. ու աս
խօսքը անոնցմէ ծածկուած էր, և ըսած բաները
չէին իմանար։

35 Ու եղաւ որ երբ ինքը Երիքովին կը մօտենար,
36 կոյր մը ճամբուն քովը նստեր էր մուրալու։ Երբ-
որ լսեց բազմութեանը անցնիլը, հարցուց թէ
37 ի՞նչ է ան։ Եւ իրեն ըսին թէ Յիսուս Նազովրե-
38 ցին կ'անցնի։ Ուստի աղաղակեց ու ըսաւ, Յի-
39 սուս՝ Որդի Դաւթի, ողորմէ ինծի։ Եւ անոնք որ
առջևէն կ'երթային՝ կը յանդիմանէին զանիկա,
որ լռէ. բայց անիկա՝ ալ աւելի կ'աղաղակէր,
40 Որդի Դաւթի, ողորմէ ինծի։ Եւ Յիսուս կանգ
առնելով՝ հրաման ըրաւ որ զանիկա իրեն բերեն,
ու երբոր անիկա մօտեցաւ, հարցուց անոր ու ը-
41 սաւ, Ի՞նչ կ'ուզես որ քեզի ընեմ. անիկա ալ ը-
42 սաւ, Տէր, որ աչքերս բացուին։ Եւ Յիսուս ըսաւ
անոր, Թող բացուին. քու հաւատքդ քեզ ըը-
43 ժշկեց։ Եւ իսկոյն անոր աչքերը բացուեցան, ու
անոր ետևէն կ'երթար, և փառք կու տար Աս-
տուծոյ. բոլոր ժողովուրդն ալ տեսնելով՝ զԱստ-
ուած կը գովաբանէին։

ԳԼ. ԺԹ

1 Եւ մտնելով Երիքովի մէջէն կ'անցնէր։ (2)Եւ ա-
հա մարդ մը կար՝ անունը Զաքէոս ըսուած, որ
3 մաքսապետ էր ու հարուստ մէկ մըն էր։ Եւ կ'ու-
զէր տեսնել թէ ով է Յիսուս, ու բազմութենէն
4 չէր կրնար, ինչու որ հասակով կարճ էր։ Եւ ա-
ռաջ վազեց ու ժանտաթզենիի մը վրայ ելաւ, որ
զանիկա տեսնէ. ինչու որ անկէ պիտի անցնէր։
5 Ու երբոր Յիսուս ան տեղը եկաւ, վեր նայելով
զանիկա տեսաւ, ու ըսաւ անոր, Զաքէոս, շուտ
ըրէ, տակէ վար իջիր, ինչու որ պէտք է ինծի
6 այսօր քու տունդ կենալ։ Եւ արտորալով վար
7 իջաւ, և ուրախութեամբ ընդունեց զանիկա։ Երբ-
որ ամէնն ալ տեսան, կը տրտնջէին ու կ'ըսէին
թէ Մեղաւոր մարդու քով մտաւ իջևան ընելու։
8 Եւ Զաքէոս կայնեցաւ ու ըսաւ Տէրոջը, Տէր, ա-
հա իմ ունեցածիս կէսը աղքատներուն կու տամ,
ու թէ որ զրպարտութեամբ մէկու մը զրկանք
ըրած եմ, չորեքպատիկ կը հատուցանեմ անոր։
9 Եւ Յիսուս ըսաւ անոր, Այսօր աս տանը փրկու-
թիւն եղաւ. ինչու որ ասիկա ալ Աբրահամի որ-
10 դի է։ Վասն զի Որդին մարդոյ եկաւ որ կոր-
սուածը փնտռէ ու փրկէ։

11 Ու երբոր անոնք աս բաները կը լսէին, առակ
մըն ալ ըսաւ իր Երուսաղէմ մօտենալուն համար,
և անոնց անանկ կարծելուն համար թէ շուտ մը
Աստուծոյ թագաւորութիւնը պիտի յայտնուի։
12 Ուստի ըսաւ, Մէկ ազնուական մարդ մը հեռու
երկիր գնաց՝ իրեն թագաւորութիւն առնելու և
13 դառնալու։ Եւ իր տասը ծառաները կանչելով՝
տասը մնաս տուաւ անոնց, ու ըսաւ անոնց, Բա-
14 նեցուցէք ատոնք՝ մինչև որ ես գամ։ Եւ անոր
քաղաքացիները զանիկա կ'ատէին, ու դեսպան-

ներ խրկեցին անոր ետեւէն, ըսելով թէ Չենք ու-
զեր որ ասիկա մեր վրայ թագաւորութիւն ընէ։
15 Ու եղաւ որ երբ անիկա թագաւորութիւնը առ-
նելով ետ դարձաւ, իրեն կանչել տուաւ այն ծա-
ռաները՝ որոնց որ ստակը տուեր էր, որ գի-
16 նայ թէ ով ինչ շահ ըրած է։ Եւ առջինը եկաւ
ու ըսաւ, Տէր, քու մնասդ տասը մնաս շահ ը-
17 րաւ։ Եւ ըսաւ անոր, Ապրիս, բարի ծառայ, ո-
րովհետեւ քիչ բանին մէջ հաւատարիմ եղար,
18 տասը քաղաքի վրայ իշխանութիւն ունեցիր։ Ու
երկրորդը եկաւ ու ըսաւ, Տէր, քու մնասդ հինգ
19 մնաս շահ ըրաւ։ Եւ ըսաւ անոր, Դուն ալ հինգ
20 քաղաքի վրայ եղիր։ Եւ ուրիշ մը եկաւ ու ը-
սաւ, Տէր, ահա քու մնասդ՝ որ թաշկինակի մէջ
21 ծրարած կը պահէի. Քանզի կը վախնայի քեզմէ,
ինչու որ դուն խիստ մարդ մըն ես, չդրած բանդ
22 կը վերցնես ու չսերմանածդ կը հնձես։ Եւ անի-
կա ըսաւ անոր, Քու բերնէդ քեզ պիտի դատեմ,
ով չար ծառայ. գիտէիր որ ես խիստ մարդ մըն
եմ. չդրած բանս կը վերցնեմ ու չսերմանածս
23 կը հնձեմ. Եւ ինչո՞ւ համար իմ ստակս սեղանա-
ւորներուն չտուիր, որ ես եկած ատենս շահովը
24 առնէի անիկա։ Եւ հոն կայնողներուն ըսաւ, Ա-
ռէք ատկէ մնասը ու տուէք անոր որ տասը մը-
25 նաս ունի. (Եւ ըսին իրեն, Տէր, անիկա տասը
26 մնաս ունի.) Քանզի կ'ըսեմ ձեզի, թէ Ամէն ու-
նեցողին պիտի տրուի, և չունեցողին ունեցածն
27 ալ անկէ պիտի առնուի։ Բայց այն իմ թշնամի-
ներս՝ որոնք չէին ուզեր որ իրենց վրայ թագա-
ւոր ըլլամ, հոս բերէք ու իմ առջեւս սպաննե-
28 ցէք։ Եւ աս բաները խօսելէն ետեւ՝ յառաջ գնաց
Երուսաղէմ ելլելու։
29 Ու եղաւ որ երբ Բեթփագէին ու Բեթանիային
մօտեցաւ՝ դէպ 'ի այն լեռը որ Ձիթենեաց ը-
30 կ'ըսուի, իր աշակերտներէն երկուքը խրկեց, Եւ

ըսաւ, Գացէք դէպ դիմացը եղած գեղը, և անոր
մէջ մտնելնուդ պէս պիտի գտնէք կապուած ա-
ւանակ մը, որուն վրայ ընաւ մարդ մը նստած
31 չէ. արձըկեցէք անիկա ու բերէք. Եւ թէ որ մէկը
ձեզի հարցընէ թէ Ինչո՞ւ կ'արձըկէք, ասանկ ը-
32 սէք անոր, թէ Տէրոջը պէտք է։ Երբոր գացին
անոնք որ խրկուեցան, ինչպէս որ իրենց զրուցեր
33 էր՝ գտան։ Ու երբոր աւանակը կ'արձըկէին, ա-
նոր տէրերը ըսին անոնց, Ինչո՞ւ կ'արձըկէք աս
34 աւանակը։ Անոնք ալ ըսին, Տէրոջը պէտք է։
35 Եւ զանիկա Յիսուսի բերին, ու իրենց հանդերձ-
ները աւանակին վրայ ձգելով՝ Յիսուսը հեծցու-
36 ցին։ Ու՝ երբոր կ'երթար, իրենց հանդերձները
37 ճամբուն վրայ կը փռէին։ Ու երբոր ա'լ մօտե-
ցաւ, և Ձիթենեաց լեռանը զառ 'ի վայրէն կ'իջ-
նէր, աշակերտներուն բոլոր բազմութիւնը սկսաւ
ուրախութեամբ զԱստուած օրհնել բարձր ձայ-
նով այն բոլոր հրաշքներուն համար՝ որ տեսեր
38 էին. Ու կ'ըսէին, Օրհնեալ է այն թագաւորը որ
Տէրոջը անունովը կու գայ. երկնից մէջ խաղա-
39 ղութիւն, ու փառք՝ բարձրութեան մէջ. Եւ բազ-
մութեանը մէջէն փարիսեցիներուն մէկ քանիները
ըսին անոր, Վարդապետ, այդ քու աշակերտներդ
40 յանդիմանէ։ Եւ անիկա պատասխան տուաւ ու
ըսաւ անոնց, Ձեզի կ'ըսեմ, թէ որ ատոնք լռե-
կենան, քարերը պիտի աղաղակեն։
41 Ու երբոր մօտեցաւ՝ քաղաքը տեսնելով լացաւ
42 անոր վրայ և ըսաւ, Գոնէ աս քու օրուանդ մէջ
գիտնայիր քու խաղաղութիւնդ, բայց հիմա ծած-
43 կուեցաւ քու աչքերէդ։ Ինչու որ օրեր պիտի
գան քու վրադ՝ որ թշնամիներդ քու բոլորտիքդ
պատնէշ պիտի շինեն, ու քեզ պիտի պաշարեն,
44 և ամէն կողմէ քեզ նեղը պիտի ձգեն. Եւ հիմ-
նայատակ պիտի ընեն քեզ ու քու մէջդ եղած
զաւակներդ, և քար մը քարի վրայ ամենեւին

պիտի չթողուն քու մէջդ, անոր համար որ չը-
ճանչցար քու այցելութեան ժամանակը։
45 Եւ տաճարը մտնելով՝ սկսաւ դուրս հանել ա-
46 նոր մէջ ծախողները և գնողները. Եւ ըսաւ ա-
նոնց, Գրուած է թէ իմ տունս աղօթքի տուն
է, բայց դուք աւազակներու այր ըրիք։
47 Եւ ամէն օր տաճարին մէջ կը սորվեցնէր. բայց
քահանայապետները ու դպիրները և ժողովուր-
դին գլխաւորները կը փնտռէին թէ ինչպէս կոր-
48 սընցընեն զանիկա, Ու բան մը չէին կրնար գտնել
թէ ինչ ընեն, ինչու որ բոլոր ժողովուրդը անոր
կապուեր էին մտիկ ընելու։

ԳԼ. Ի

1 Ու եղաւ որ այն օրերուն մէկը՝ երբոր տաճարին
մէջ ժողովուրդին կը սորվեցընէր և աւետարանը
կը քարոզէր, քահանայապետները ու դպիրները
2 ծերերուն հետ մէկտեղ վրայ հասան, Եւ անոր
խօսեցան՝ ըսելով, Ջրուցէ մեզի ի՞նչ իշխանու-
թիւնով կ'ընես ասոնք բաները, կամ ո՞վ է աս իշ-
3 խանութիւնը քեզի տուողը։ Պատասխան տուաւ
ու ըսաւ անոնց, Ես ալ ձեզի բան մը հարցընեմ՝
4 և ըսէք ինծի. Յովհաննէսին մկրտութիւնը եր-
5 կինքէ՞ն էր թէ մարդոցմէ։ Եւ անոնք մէջերնին
6 խորհեցան ու ըսին, Թէ որ ըսենք՝ Երկինքէն,
պիտի ըսէ, Հապա ինչո՞ւ չհաւատացիք անոր. իսկ
թէ որ ըսենք՝ Մարդոցմէ, բոլոր ժողովուրդը
մեզ պիտի քարկոծեն. ինչու որ հաստատ համոզ-
7 ուած են թէ Յովհաննէս մարգարէ էր։ Եւ պա-
8 տասխան տուին թէ չեն գիտեր ուսկից էր։ Եւ
Յիսուս ըսաւ անոնց, Ես ալ ձեզի չեմ ըսեր թէ
ինչ իշխանութիւնով կ'ընեմ աս բաները։
9 Սկսաւ աս առակը զրուցել ժողովուրդին. Մէկ
մարդ մը այգի տնկեց և զանիկա մշակներու

յանձնեց, ու ինքը օտար երկիր երթալով՝ շատ
10 ժամանակ մնաց։ Եւ ատենին ծառայ մը ղրկեց
մշակներուն, որ այգիին պտուղէն անոր տան. իսկ
մշակները ծեծեցին զանիկա ու պարապ ճամբե-
11 ցին։ Եւ ուրիշ ծառայ մըն ալ ղրկեց. իսկ ա-
նոնք զանիկա ալ ծեծեցին, անարգեցին ու պա-
12 րապ ճամբեցին։ Ու երրորդ մըն ալ ղրկեց. իսկ
անոնք զանիկա ալ վիրաւորեցին ու դուրս հա-
13 նեցին։ Անատէնը այգիին տէրը ըսաւ, Ի՞նչ ընեմ.
իմ սիրելի որդիս ղրկեմ, գուցէ զանիկա տես-
14 նելով ամչնան։ Բայց մշակները երբոր տեսան զա-
նիկա, իրարու հետ խորհուրդ ըրին՝ ըսելով, Ա-
սիկա է ժառանգը, եկէք զանիկա սպաննենք՝ որ
15 ժառանգութիւնը մերը ըլլայ։ Եւ զանիկա այգիէն
դուրս հանեցին ու սպաննեցին. ուստի այգիին
16 տէրը ի՞նչ պիտի ընէ անոնց. Պիտի գայ ու կոր-
սընցընէ ան մշակները, և այգին ուրիշներու պի-
17 տի տայ։ Երբոր ասիկա լսեցին՝ ըսին, Քաւ լիցի։ Եւ
ինքը անոնց նայելով ըսաւ, Հապա ի՞նչ է աս
գրուածը, թէ Ան քարը որ շինողները մերժեցին,
18 անիկա անկիւնին գլուխը եղաւ։ Ամէն ով որ ան
քարին վրայ իյնայ՝ պիտի կոտրտի, և որու վրայ
19 որ իյնայ՝ պիտի փշրէ զանիկա։ Եւ քահանայա-
պետները ու դպիրները կը փնտռէին թէ ինչպէս
նոյն ժամուն ձեռք զարնեն անոր, բայց ժողո-
վուրդէն վախցան. քանզի իմացան որ ան առակը
իրենց համար ըսաւ։
20 Ու ետքը յարմար ատենի սպասելով, ղրկեցին քա-
նի մը խաբեբայ մարդիկ՝ որոնք կեղծաւորու-
թեամբ ինքզինքնին արդար կը ձեւացընէին, որ
զանիկա խօսքով բռնեն՝ տէրութեան և կուսա-
21 կալին իշխանութեանը զանիկա մատնելու։ Ու ա-
նոր հարցուցին ըսելով, Վարդապետ, գիտենք որ
շիտակ կը խօսիս ու կը սորվեցընես, և աչառու-
թիւն չես ըներ, հապա ճշմարտութեամբ Աստու-

22 քոյ ճամբան կը սորվեցընես։ Մեզի արժա՞ն է
23 Կայսրին տուրք տալ թէ չէ։ Եւ անոնց խորա-
մանկութիւնը հասկնալով՝ ըսաւ անոնց, Ինչո՞ւ
24 զիս կը փորձէք. Ցուցուցէք ինծի դահեկան մը։
Որո՞ւն պատկերը ու գիրը ունի վրան։ Պատաս-
25 խան տուին ու ըսին, Կայսրինը։ Եւ ինքը ըսաւ
անոնց, Ուրեմն ան որ Կայսրինն է՝ Կայսրին տը-
ւէք, և ան որ Աստուծոյն է՝ Աստուծոյ տուէք։
26 Եւ չկրցան զանիկա խօսքով մը բռնել ժողովուր-
դին առջևը, ու զարմանալով անոր պատասխա-
նին վրայ՝ լուռ կեցան։
27 Եւ Սադուկեցիներէն ոմանք եկան, (որոնք հա-
կառակութիւն կ'ընեն թէ յարութիւն չկայ,) և
28 անոր հարցուցին ըսելով, Վարդապետ, Մովսէս
մեզի գրեց, թէ որ մէկուն եղբայրը կնիկ ունե-
նալով մեռնելու ըլլայ, ու մեռած ատենը զաւակ
չունենայ, անոր եղբայրը առնէ ան կնիկը և իր
29 եղբօրը զաւակ հանէ։ Արդ եօթը եղբայրներ կա-
յին. ու առաջինը կնիկ մը առնելով՝ զաւակ չու-
30 նեցած մեռաւ։ Երկրորդն ալ առաւ ան կնիկը,
31 և ինքն ալ մեռաւ առանց զաւակի։ Երրորդն ալ
առաւ զանիկա, նմանապէս եօթն ալ, ու զաւակ
32 չձգեցին ու մեռան։ Ամենէն ետքը կնիկն ալ մե-
33 ռաւ։ Ուրեմն յարութեան ատենը անոնցմէ ո-
րո՞ւն կնիկը պիտի ըլլայ, ինչու որ եօթն ալ զա-
34 նիկա կնիկ ունեցան։ Եւ Յիսուս պատասխան տա-
լով անոնց ըսաւ, Աս աշխարհիս որդիքը կնիկ
35 կ'առնեն ու էրկան կը տրուին։ Բայց անոնք որ
արժանի պիտի ըլլան ան աշխարհին հասնելու ու
մեռելներէն յարութիւն առնելուն, ոչ կնիկ կ'առ-
36 նեն և ոչ էրկան կը տրուին. Որովհետև ալ չեն
կրնար մեռնիլ. քանզի հրեշտակներուն հաւասար
են, ու Աստուծոյ որդիք են, ինչու որ յարու-
37 թեան որդիք են։ Բայց մեռելներուն յարութիւն
առնելը Մովսէս ալ իմացուց մորենիին պատմու-

թեանը մէջ, երբոր կը կոչէ Տէրը՝ Աբրահամին
Աստուածը, ու Իսահակին Աստուածը, և Յակո-
38 բին Աստուածը։ Ու Աստուած մեռելներուն Աս-
տուածը չէ, հապա կենդանիներուն, ինչու որ ա-
39 մէնը անոր կենդանի են։ Եւ դպիրներէն մէկ քա-
նին պատասխան տուին ու ըսին, Վարդապետ,
40 աղէկ ըսիր։ Ու ալ մէկը համարձակութիւն չէր
ըներ անոր բան մը հարցընելու։
41 Եւ ըսաւ անոնց, Ի՞նչպէս կ'ըսեն թէ Քրիստոս
42 Դաւիթի որդին է. Եւ ինքը Դաւիթ Սաղմոսնե-
րուն գրքին մէջ կ'ըսէ, Տէրը իմ Տէրոջս ըսաւ,
43 Նստէ իմ աջ կողմս, Մինչև որ քու թշնամիներդ
44 ոտքերուդ պատուանդան ընեմ։ Ուրեմն Դաւիթ
որ զանիկա Տէր կը կոչէ, ի՞նչպէս անիկա անոր
որդին կ'ըլլայ։
45 Եւ բոլոր ժողովուրդին առջևը ըսաւ իր աշա-
46 կերտներուն, Զգուշացէք դպիրներէն, որոնք կ'ու-
զեն փառաւոր հանդերձներով պտըտիլ, և շու-
կաներուն մէջ բարևներ կը սիրեն, ու ժողովա-
րաններուն մէջ՝ առաջին աթոռները, և ընթրիք-
47 ներու մէջ՝ առաջին բազմոցները. Որոնք որբևա-
րիներուն տուները կ'ուտեն, ու ձևոց երկնա-
լու համար աղօթքը կ'երկընցընեն. ասոնք աւելի
դատապարտութիւն պիտի ընդունին։

ԳԼ. ԻԱ

1 Ու նայելով՝ տեսաւ հարուստները որ իրենց ըն-
2 ծաները գանձանակը կը ձգէին։ Մէկ տնանկ որբ-
ևայրի մըն ալ տեսաւ, որ հոն երկու լումայ ձգեց։
3 Ու ըսաւ, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի որ աս աղքատ
4 որբևայրին ամենէն աւելի ձգեց. Ինչու որ ամէն
անոնք իրենց աւելցածէն Աստուծոյ ընծաներուն
մէջը ձգեցին, բայց ասիկա իր չքաւորութենէն
բոլոր իր ունեցած ապրուստը ձգեց։

5 Ու երբոր մէկ քանիները տաճարին համար կ՚ը-
սէին թէ Գեղեցիկ քարերով ու նուէրներով զար-
6 դարուած է, ըսաւ, Այս բաները որ կը տեսնէք,
օրեր պիտի գան որ անատենը քար մը քարի վրայ
7 պիտի չմնայ որ չքակուի։ Հարցուցին իրեն ու ը-
սին, Վարդապետ, ե՞րբ պիտի ըլլան այս բաները,
և ի՞նչ է նշանը՝ երբոր այս բաները պիտի ըլլան։
8 Ան ալ ըսաւ, Զգոյշ կեցէք՝ չխաբուիք, ինչու որ
շատերը պիտի գան իմ անունովս ու ըսեն թէ Ես
եմ Քրիստոսը, ու ժամանակը մօտեցած է. ուրեմն
9 անոնց ետեւէն չերթաք։ Բայց երբոր լսէք պա-
տերազմներ և խռովութիւններ՝ մի վախնաք, ին-
չու որ պէտք է առաջ այս բաները ըլլան, բայց
10 վախճանը իսկոյն չէ։ Անատենը ըսաւ անոնց, Ազգ
ազգի վրայ պիտի ելլէ, ու թագաւորութիւն՝
11 թագաւորութեան վրայ. Ու տեղ տեղ մեծ երկ-
րաշարժութիւններ պիտի ըլլան՝ ու սովեր և ման-
տարաժամներ, նաև երկինքէն սոսկալի բաներ և
12 մեծ նշաններ պիտի ըլլան։ Բայց այս ամէն բանե-
րէն առաջ իրենց ձեռքերը ձեզի պիտի զարնեն
ու հալածեն, և ժողովարաններու ու բանտերու
պիտի մատնեն. և իմ անուանս համար թագա-
ւորներու ու կուսակալներու առջև պիտի տար-
13 ուիք։ Ու աս բաները վերջը ձեզի վկայութիւն մը
14 պիտի ըլլայ։ Ուստի ձեր սրտին մէջը դրէք՝ որ ա-
ռաջուց չմտածէք պատասխան տալու վրայով,
15 վասն զի ես ձեզի բերան ու իմաստութիւն պիտի
տամ, որուն պիտի չկրնան դէմ խօսիլ կամ դէմ
16 կենալ ձեր ամէն հակառակորդները։ Ու պիտի
մատնուիք ծնողքներէ ու եղբայրներէ և ազգա-
կաններէ ու բարեկամներէ, ու ձեզմէ պիտի սպան-
17 նեն. Ու իմ անուանս համար ամենուն ատելի
18 պիտի ըլլաք. Բայց մէկ մազ մը ձեր գլխէն պիտի
19 չկորսուի։ Ձեր համբերութիւնովը հոգինիդ պիտի
ստանաք։

20 Ու երբոր տեսնէք Երուսաղէմը չորս կողմէն
զօրքերով պատած, անատենը գիտցէք որ անոր
21 աւերումը մօտ է։ Անատենը Հրէաստանի մէջ ե-
ղողները լեռները թող փախչին, ու անոր մէջ ե-
ղողները թող հեռանան, և անոնք որ ագարակ-
22 ներն են՝ թող չմտնեն անոր մէջը։ Վասն զի ան
օրերը վրէժխնդրութեան օրեր են, որ բոլոր գրը-
23 ուածները կատարուին։ Բայց վա՜յ ան օրերը յղի
եղողներուն ու ծիծ տուողներուն, ինչու որ մեծ
նեղութիւն պիտի ըլլայ երկրին վրայ, ու բարկու-
24 թիւն պիտի ըլլայ աս ժողովուրդին վրայ. Ու սուրի
բերնով պիտի իյնան, ու բոլոր ազգերուն մէջ
գերի պիտի տարուին. ու Երուսաղէմ ազգերուն
ոտքի կոխան պիտի ըլլայ, մինչև որ ազգերուն
25 ժամանակները լմննայ։ Ու արեգակին և լուսնին
ու աստղերուն վրայ նշաններ պիտի ըլլան, ու
երկրի վրայ ազգերը ապշութեամբ պիտի տագ-
նապին, և ծովը ու ալիքները պիտի գոռան.
26 Մարդոց սիրտերը պիտի նուաղին իրենց վախէն՝
և աշխարհի վրայ գալու բաներուն սպասելէն,
ինչու որ երկնից զօրութիւնները պիտի շարժին։
27 Ու անատենը պիտի տեսնեն Որդին մարդոյ ամպի
28 մէջ եկած զօրութիւնով ու մեծ փառքով։ Ու
երբոր աս բաները սկսին ըլլալ, ելէք ու գլուխ-
նիդ բարձրացուցէք, ինչու որ ձեր փրկութիւնը
մօտ է։

29 Ու առակ մը ըսաւ անոնց, Տեսէք թզենին ու
30 ամէն ծառերը. Երբոր կը բողբոջին, տեսնելով՝
դուք ձեզմէ կ՚իմանաք թէ ալ ամառը մօտ է։
31 Նոյնպէս ալ դուք երբոր աս բաները եղած տես-
նէք, գիտցէք որ Աստուծոյ թագաւորութիւնը մօտ
32 է։ Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, որ աս ազգը պիտի չանց-
33 նի, մինչև որ աս ամէն բաները ըլլան։ Երկինք ու
երկիր պիտի անցնին, բայց իմ խօսքերս բնաւ
34 պիտի չանցնին։ Իսկ դուք զգուշացէք ձեր ան-

ձերուն, չըլլայ որ սիրտերնիդ կերուխումով ու
գինովութիւնով և աշխարհային զբաղմունքներով
ծանրանայ, ու յանկարծակի ան օրը ձեր վրայ
35 հասնի. Վասն զի բոլոր երկրին երեսը բնակողնե-
րուն ամենուն վրայ որոգայթի մը պէս պիտի
36 հասնի։ Ուստի արթուն կեցէք, ու ամէն ատեն
աղօթք ըրէք, որ արժանի ըլլաք ան բոլոր ըլլա-
լու բաներէն ազատուելու և Որդւոյ մարդոյ առ-
ջեւը կայնելու։
37 Ու ցորեկները տաճարին մէջ կը սորվեցընէր, և
գիշերները կ'ելլէր Ձիթենեաց ըսուած լեռը կը
38 կենար։ Եւ բոլոր ժողովուրդը առտուանց կանուխ
իրեն կ'երթային տաճարը՝ իր խօսքերը լսելու։

ԳԼ. ԻԲ

1 Բաղարջակերաց տօնը մօտեցաւ որ Զատիկ կ'ըս-
2 ուէր. Եւ քահանայապետները ու դպիրները կը
փնտռէին թէ ինչպէս սպաննեն զանիկա, քանզի
ժողովուրդէն կը վախնային։
3 Եւ Սատանան Իսկարիովտացի մականուանեալ
Յուդային ներսը մտաւ, որ անիկա տասուերկու-
4 քին համրանքէն էր։ Եւ գնաց քահանայապետ-
ներուն ու իշխաններուն հետ խօսք ըրաւ թէ
5 ինչպէս զանիկա մատնէ անոնց։ Անոնք ալ ուրա-
6 խացան և խոստացան անոր ստակ տալ։ Ու ինքը
վրան առաւ, և պատեհութիւն մը կը փնտռէր որ
զանիկա մատնէ անոնց առանց բազմութեանը
ժողվուելուն։
7 Եւ բաղարջակերաց օրը եկաւ, որուն մէջ պէտք
8 էր զատիկը մորթել։ Ու խրկեց Պետրոսը և Յով-
հաննէսը ու ըսաւ, Գացէք պատրաստեցէք մեզի
9 զատիկը որ ուտենք։ Անոնք ալ ըսին անոր, Ո՞ւր
10 կ'ուզես որ պատրաստենք։ Եւ ըսաւ անոնց, Ահա
երբոր քաղաքը մտնէք, ձեզի մարդ մը պիտի

պատահի որ առջին վրայ ջուրի սափոր մը կը տա-
նի. անոր ետեւէն գացէք ան տունը՝ ուր որ ինքը
11 կը մտնէ. Եւ ան տանը տիրոջը ըսէք, Վարդա-
պետը կ'ըսէ քեզի, Ո՞ւր է օթեւանը՝ որ հոն ա-
12 շակերտներուս հետ մէկտեղ զատիկը ուտեմ։ Ան
ալ ձեզի յարդարուած մեծ վերնատուն մը պիտի
13 ցուցընէ, հոն պատրաստեցէք։ Եւ գացին գտան
ինչպէս որ իրենց ըսաւ, ու զատիկը պատրաստե-
ցին։
14 Ու երբոր ժամը հասաւ՝ սեղան նստաւ, և տաս-
15 ուերկու առաքեալները իր հետը։ Ու ըսաւ ա-
նոնց, Փափաքելով փափաքեցայ որ աս զատիկը
16 ձեզի հետ ուտեմ իմ չարչարուելէս առաջ։ Քան-
զի կ'ըսեմ ձեզի որ ալ բնաւ ասկէ պիտի չու-
տեմ՝ մինչեւ որ Աստուծոյ թագաւորութեանը
17 մէջ կատարուի։ Եւ գաւաթը առաւ, գոհացաւ
ու ըսաւ, Առէք ասիկա ու բաժնեցէք ձեր մէջը.
18 ինչու որ ձեզի կ'ըսեմ որ բնաւ որթին բերքէն
պիտի չխմեմ՝ մինչեւ որ Աստուծոյ թագաւորու-
թիւնը գայ։
19 Եւ հաց առաւ, գոհացաւ, կտրեց և տուաւ ա-
նոնց ու ըսաւ, Աս է իմ մարմինս, որ ձեզի հա-
մար տրուած է. ասիկա ըրէք զիս յիշելու հա-
20 մար։ Նոյնպէս ալ գաւաթը առաւ ընթրիքէն ե-
տեւ ու ըսաւ, Աս գաւաթը նոր ուխտ է իմ ա-
րիւնովս, որ ձեզի համար կը թափուի։
21 Բայց ահա զիս մատնողին ձեռքը ինծի հետ աս
22 սեղանս է. Եւ յիրաւի Որդին մարդոյ կ'երթայ՝
ինչպէս որ սահմանուած է, բայց վա՜յ ան մար-
23 դուն՝ որուն ձեռքովը անիկա կը մատնուի։ Եւ
անոնք սկսան մէջերնին հարցափորձ ընել՝ թէ
իրենցմէ ո՞վ է որ ան բանը պիտի ընէ։
24 Վէճ մըն ալ եղաւ անոնց մէջը՝ թէ իրենցմէ ո՛վ
25 մեծ պիտի սեպուի։ Եւ անիկա ըսաւ անոնց, Ազ-
գաց թագաւորները անոնց կը տիրեն, և անոնք

26 որ կ'իշխեն անոնց՝ բարերար կը կոչուին․ Բայց
դուք անանկ պիտի չըլլաք․ հապա ան որ ձեր
մէջը մեծ է՝ պզտիկին պէս թող ըլլայ, և առաջ-
27 նորդը՝ սպասաւորին պէս․ Քանզի ո՞վ է մեծը,
սեղան նստո՞ղը թէ սպասաւորը․ չէ՞ որ սեղան
նստողը․ սակայն ես ձեր մէջը սպասաւորի մը
28 պէս եմ․ Եւ դուք անոնք էք՝ որ միշտ ինծի հետ
29 կը կենայիք իմ փորձութիւններուս մէջ․ Ես ալ
ձեզի թագաւորութիւն մը ուխտ կ'ընեմ, ինչպէս
որ իմ Հայրս ինծի թագաւորութիւն մը ուխտ ը-
30 րաւ․ Որ դուք իմ սեղանէս ուտէք ու խմէք իմ
թագաւորութեանս մէջ, և աթոռներու վրայ
նստիք՝ Իսրայէլի տասուերկու ցեղերը դատելու․
31 Եւ Տէրը ըսաւ, Սիմոն, Սիմոն, ահա Սատանան
32 ձեզ փնտռեց, որ ցորենի պէս խարբալէ․ Բայց
ես քեզի համար աղօթք ըրի որ քու հաւատքդ
չպակսի․ և դուն երբոր դարձի գաս՝ քու եղ-
33 բայրներդ ալ հաստատէ․ Իսկ ինքը ըսաւ անոր,
Տէր, ես պատրաստ եմ քեզի հետ բանտը երթա-
34 լու ալ, մեռնելու ալ․ Եւ անիկա ըսաւ, Պետ-
րոս, քեզի կ'ըսեմ որ այսօր հաւը պիտի չխօսի՝
մինչև որ դուն երեք անգամ ուրանաս՝ ըսելով
թէ զիս չես ճանչնար․
35 Եւ ըսաւ անոնց, Երբոր ձեզ խրկեցի առանց
քսակի ու պարկի և կօշիկներու, բանի մը կարօտ
36 եղա՞ք․ Անոնք ալ ըսին, Բանի մըն ալ չէ․ Ետքը
ըսաւ, Բայց հիմա ան որ քսակ ունի՝ թող հետը
առնէ, նոյնպէս ալ պարկը․ և ան որ սուր չու-
նի, թող իր հանդերձը ծախէ ու իրեն թուր մը
37 ծախու առնէ․ Քանզի կ'ըսեմ ձեզի որ աս գրը-
ուած բանն ալ պէտք է որ իմ վրաս կատարուի,
Եւ անօրէններու հետ սեպուեցաւ․ քանզի ինչ
որ ինծի համար որոշուած է՝ կատարուելու վրայ
38 է․ Անոնք ալ ըսին, Տէր, ահա հոս երկու թուր
կայ․ ան ալ ըսաւ անոնց, Հերիք են․

39 Ու ելաւ իր սովորութեանը պէս Ձիթենեաց
լեռը գնաց․ աշակերտներն ալ իր ետևէն գացին․
40 Երբոր ան տեղը հասաւ՝ ըսաւ անոնց, Աղօթք ը-
41 րէք որ փորձութեան մէջ չմտնէք․ Եւ ինքը ա-
նոնցմէ զատուեցաւ քարընկեցի մը չափ, ու ծըն-
42 կան վրայ գալով աղօթք կ'ընէր, Ու կ'ըսէր,
Հայր, թէ որ կ'ուզես՝ աս գաւաթը ինծմէ ան-
ցուր․ բայց չէ թէ իմ կամքս՝ հապա քուկդ թող
43 ըլլայ․ Ու երկինքէն հրեշտակ մը երևցաւ անոր և
կը զօրացընէր զանիկա․ ու սաստիկ նեղութեան
մէջ ըլլալով՝ աւելի ջերմեռանդութեամբ աղօթք
44 կ'ընէր։ Եւ իր քրտինքը արիւնի մեծ կաթիլնե-
րու պէս էր, որ գետինը կը թափուէր։
45 Եւ աղօթքէն ելլելով աշակերտներուն քովը ե-
կաւ, ու գտաւ անոնք տրտմութենէն քնացած․
46 Եւ ըսաւ անոնց, Ինչո՞ւ կը քնանաք․ ելէք աղօթք
ըրէք որ փորձութեան մէջ չմտնէք․
47 Ու երբոր դեռ կը խօսէր, ահա մէկ բազմու-
թիւն մը, և Յուդա ըսուածն ալ՝ տասուերկու-
քէն մէկը անոնց առջևէն կ'երթար, ու Յիսուսի
48 մօտեցաւ որ զանիկա համբուրէ․ Բայց Յիսուս ը-
սաւ անոր, Յուդա, համբուրելո՞վ կը մատնես
49 Որդին մարդոյ․ Երբոր անոր բոլորտիքը եղողները
տեսան ինչ որ պիտի ըլլար, ըսին անոր, Տէր,
50 թուրով զարնե՞նք․ Եւ անոնցմէ մէկը քահանա-
յապետին ծառային զարկաւ ու մէկդի հանեց ա-
51 նոր աջ ականջը։ Պատասխան տուաւ Յիսուս ու
ըսաւ, Թող տուէք մինչև աս տեղը․ և դպաւ
52 անոր ականջին ու բժշկեց զանիկա․ Եւ Յիսուս իր
վրայ եկող քահանայապետներուն ու տաճարին
իշխաններուն ու ծերերուն ըսաւ, Իբր թէ աւա-
53 զակի՞ վրայ ելաք սուրերով ու բիրերով․ Ամէն
օր ձեզի հետ էի տաճարին մէջ, և ինծի ձեռք
չզարկիք․ բայց աս է ձեր ժամանակը ու խաւա-
րին իշխանութիւնը․

54 Եւ զանիկա բռնելով տարին ու քահանայապե-
տին տունը մտցուցին. Պետրոս ալ հեռուանց անոր
55 ետեւէն կ'երթար։ Երբոր կրակ վառեցին գաւի-
թին մէջ ու մէկտեղ նստան, Պետրոս ալ նստաւ
56 անոնց մէջը։ Մէկ աղախին մը տեսնելով զանիկա
որ կրակին քովը նստեր էր, նայեցաւ անոր ու
57 ըսաւ, Ասիկա ալ անոր հետ էր։ Բայց Պետրոս
ուրացաւ զանիկա ու ըսաւ, Կնիկ, ես անիկա չեմ
58 ճանչնար։ Եւ քիչ մը ետքը մէկ ուրիշ մը տեսաւ
զանիկա ու ըսաւ, Դուն ալ անոնցմէ ես. և Պետ-
59 րոս ըսաւ, Մարդ, ես անոնցմէ չեմ։ Եւ ժամու
մը չափ անցնելէն ետեւ՝ ուրիշ մըն ալ կը պնդէր
ու կ'ըսէր, Յիրաւի ասիկա ալ անոր հետ էր, ին-
60 չու որ Գալիլեացի է։ Բայց Պետրոս ըսաւ, Մարդ,
չեմ գիտեր ինչ կը զրուցես դուն. և քանի որ իր
61 խօսքը բերանն էր՝ իսկոյն հաւը խօսեցաւ։ Եւ
Տէրը դարձաւ ու Պետրոսին նայեցաւ. Պետրոս
ալ միտքը բերաւ Տէրոջը խօսքը որ իրեն ըսեր
էր թէ Դեռ հաւը չխօսած՝ երեք անգամ պիտի
62 ուրանաս զիս։ Ու Պետրոս դուրս ելլելով դառ-
նապէս լացաւ։
63 Եւ այն մարդիկը որ Յիսուսը կը պահէին, ծաղր
64 կ'ընէին զանիկա ու կը ծեծէին. Եւ անոր աչերը
ծածկելով՝ անոր երեսին կը զարնէին, ու կը հար-
ցընէին իրեն ըսելով, Մարգարէացիր՝ ո՞վ է ան
65 որ քեզի զարկաւ։ Եւ ուրիշ շատ բաներ կը զրու-
ցէին իրեն հայհոյելով։
66 Ու երբոր առտու եղաւ՝ ժողովուրդին ծերա-
կոյտը, քահանայապետները և դպիրները ժող-
վուեցան, ու տարին զանիկա իրենց ատեանը՝ և
67 ըսին, Թէ որ Քրիստոսը դուն ես՝ ըսէ մեզի։ Ըսաւ
անոնց, Թէ որ ձեզի ըսեմ ալ՝ պիտի չհաւատաք.
68 Եւ թէ որ ձեզի բան մը հարցընեմ, ինծի պա-
տասխան պիտի չտաք, ո՛չ ալ զիս պիտի արձա-
69 կէք։ Ասկէ ետեւ Որդին մարդոյ Աստուծոյ զօ-

70 րութեանը աջ կողմը պիտի նստի։ Եւ ամէնքը ը-
սին, Ուրեմն դուն Աստուծոյ Որդի՞ն ես. Ինքն
71 ալ ըսաւ անոնց, Դուք կ'ըսէք թէ ես եմ։ Եւ
անոնք ըսին, Ալ ի՞նչ պէտք է մեզի վկայութիւն,
ինչու որ մենք մեզմէ անոր բերնէն լսեցինք։

ԳԼ. ԻԳ

1 Եւ անոնց բոլոր բազմութիւնը ոտք ելլելով՝ տա-
2 րին զանիկա Պիղատոսին. Ու սկսան անոր վրայով
ամբաստանութիւն ընել և ըսել, Ասիկա գտանք՝
որ մեր ազգը կը մոլորցնէր, ու Կայսրին հարկ տա-
լէն կ'արգիլէր, և իրեն համար կ'ըսէր թէ ինքը
3 Քրիստոս — թագաւոր է։ Իսկ Պիղատոս հարցուց
անոր ու ըսաւ, Հրէից թագաւորը դո՞ւն ես. ա-
նիկա ալ պատասխան տուաւ անոր ու ըսաւ,
4 Դուն կ'ըսես։ Անատենը Պիղատոս քահանայա-
պետներուն ու ժողովուրդներուն ըսաւ, Ես աս
5 մարդուն վրայ մէկ յանցանք մը չեմ գտներ։ Բայց
անոնք ոտք կը կոխէին ու կ'ըսէին թէ Ժողո-
վուրդը իրար կ'անցընէ, ու բոլոր Հրէաստանի
մէջ կը սորվեցընէ՝ Գալիլեայէն սկսած մինչև աս
6 տեղս։ Եւ Պիղատոս երբոր լսեց Գալիլեայի հա-
7 մար՝ հարցուց թէ աս մարդը Գալիլեացի՞ է։ Ու
երբոր իմացաւ թէ Հերովդեսի իշխանութեան
տակէն էր, զանիկա Հերովդեսին ղրկեց, քանզի
ան ալ այն օրերը Երուսաղէմ էր։
8 Եւ Հերովդէս երբոր Յիսուսը տեսաւ՝ շատ ու-
րախացաւ, վասն զի ինքը շատոնցմէ կը փափա-
քէր անիկա տեսնելու. ինչու որ անոր վրայով
շատ բաներ լսած էր, և կը յուսար որ անկէ ե-
9 ղած նշան մը տեսնէ։ Ու շատ խօսքերով հար-
ցուփորձ կ'ընէր անոր, բայց անիկա ընաւ իրեն
10 պատասխան մը չտուաւ։ Քահանայապետները ու
դպիրներն ալ կեցեր էին, և սաստիկ ամբաստա-

11 նութիւն կ'ընէին անոր վրայ։ Իսկ Հերովդէս ա-
նարգեց զանիկա իր զօրականներուն հետ, ու
ծաղր ընելէն ետեւ փառաւոր հանդերձներ հագ-
12 ցուց անոր, և նորէն Պիղատոսին խրկեց։ Ու ան
օրը Պիղատոս և Հերովդէս իրարու հետ բարե-
կամ եղան. որովհետեւ առաջ իրենց մէջը թշնա-
մութիւն կար։
13 Եւ Պիղատոս քահանայապետները ու իշխան-
14 ները և ժողովուրդը մէկտեղ կանչեց, Ու ըսաւ
անոնց, Աս մարդը առջեւս բերիք ժողովուրդը
մոլորցնողի մը պէս, և ահա ես ձեր առջեւը քըն-
նութիւն ընելով՝ ատոր համար ձեր ըրած ամ-
բաստանութիւններէն յանցանք մը չգտայ աս
15 մարդուն վրայ. Ոչ ալ Հերովդէս, ինչու որ ձեզ
անոր խրկեցի, և ահա ատիկա մահու արժանի
16 գործ մը ըրած չէ. Ուրեմն պատիժ մը տամ ա-
17 տոր ու արձակեմ. (Իսկ տօնին ատենը պէտք էր
18 որ մէկը արձակէ անոնց.) Եւ բոլոր բազմութիւնը
մէկտեղ աղաղակեցին ըսելով, Վերցուր ատիկա,
19 ու Բարաբբան արձակէ մեզի. (Որ անիկա քաղա-
քին մէջ եղած խռովութեան մը և մարդասպա-
20 նութեան համար բանտը դրուած էր։) Եւ Պի-
ղատոս Յիսուսը արձակել ուզելով՝ նորէն խօսե-
21 ցաւ անոնց։ Բայց անոնք կ'աղաղակէին ու կ'ը-
22 սէին, Խաչը հանէ ատիկա, խաչը հանէ։ Եւ ինքը
երրորդ անգամ ըսաւ անոնց, Բայց ի՞նչ չար
գործ ըրած է ատիկա. ես ատոր վրայ մահու ար-
ժանի յանցանք մը չգտայ. ուրեմն պատիժ մը
23 տամ ատոր ու արձակեմ։ Իսկ անոնք մեծաձայն
աղաղակներով ոտք կը կոխէին, ու կ'ուզէին որ
անիկա խաչուի. և անոնց ու քահանայապետնե-
24 րուն ձայները զօրաւոր եղան։ Ու Պիղատոս վըճ-
25 ռեց որ անոնց խնդիրքը 'ի գործ դրուի։ Եւ ա-
նոնց ուզած մարդը՝ որ խռովութեան և մար-
դասպանութեան համար բանտը դրուած էր, ար-

ձակեց անոնց, և Յիսուսը իրենց կամացը յանձնեց։
26 Ու երբոր զանիկա կը տանէին, Սիմոն Կիւրե-
նացի ըսուած մէկը բռնեցին՝ որ արտէն կու գար,
և խաչը անոր վրայ դրին որ Յիսուսի ետեւէն բե-
27 րէ։ Ու անոր ետեւէն կ'երթար մեծ բազմութիւն
ժողովրդոց, նաեւ կանանց, որոնք կ'ողբային ու
28 կու լային անոր համար։ Եւ Յիսուս դարձաւ ա-
նոնց ու ըսաւ, Ով Երուսաղեմի աղջիկներ, իմ
վրաս մի լաք, հապա ձեր անձերուն վրայ ու ձեր
29 զաւակներուն վրայ լացէք։ Ինչու որ ահա օրեր
կու գան՝ որոնց մէջ պիտի ըսեն, Երանի ամուլ-
ներուն, և ան որովայններուն որ չծնան, և ծի-
30 ծերուն որ կաթ չտուին։ Անատենը պիտի սկսին
ըսել լեռներուն, Մեր վրայ ինկէք, ու բլուրնե-
31 րուն՝ Մեզ ծածկեցէք։ Վասն զի թէ որ դալար
փայտին ասանկ կ'ընեն, հապա չորին ի՞նչ պիտի
ըլլայ։
32 Ուրիշ երկուք ալ, չարագործներ, բերուեցան ա-
33 նոր հետը սպաննուելու։ Երբոր Գագաթ ըսուած
տեղը գացին, հոն խաչը հանեցին զանիկա, և ան
չարագործներն ալ՝ մէկը աջ կողմէն ու միւսը
34 ձախ կողմէն խաչեցին։ Եւ ըսաւ Յիսուս, Հայր,
թողութիւն տուր ասոնց, ինչու որ չեն գիտեր ինչ
կ'ընեն։ Ու անոր հանդերձները բաժնելու ատեն-
35 նին վիճակ ձգեցին։ Եւ ժողովուրդը կայներ կը
նայէր. իշխաններն ալ անոնց հետ կը նախատէին
զանիկա ու կ'ըսէին, Ուրիշները ազատեց, թող
ինքզինքն ալ ազատէ՝ թէ որ ատիկա է Քրիստոս՝
36 Աստուծոյ ընտրեալը։ Ծաղր կ'ընէին անիկա զին-
ուորներն ալ, առջեւը կու գային, քացախ կը մա-
37 տուցանէին անոր, Ու կ'ըսէին, Թէ որ դուն ես
38 Հրէից Թագաւորը՝ քու անձդ ազատէ։ Եւ գիր
մը գրուած էր անոր վրայ Յունարէն ու Լատի-
ներէն և Եբրայեցերէն գրերով, Թէ Աստիկա է
Հրէից Թագաւորը։

39 Եւ ան կախուած չարագործներուն մէկը հայ-
հոյութիւն կ'ընէր անոր ու կ'ըսէր, Թէ որ դուն
Քրիստոսն ես, ազատէ քու անձդ ու մեզ ալ·
40 Իսկ միւսը պատասխան տուաւ և զանիկա յան-
դիմանելով ըսաւ, Դուն Աստուծմէ չե՞ս վախ-
նար, որովհետև նոյն դատապարտութեան մէջն
41 ես։ Ու մենք իրաւունքով, քանզի ահա մեր ը-
րածներուն արժանաւոր հատուցումը կ'առնենք·
42 բայց ասիկա մէկ գէշ բան մը չըրաւ· Եւ ըսաւ
Յիսուսի, Տէր, յիշէ զիս՝ երբոր քու թագաւո-
43 րութիւնովդ գաս։ Յիսուս ալ ըսաւ անոր, Ճշմա-
րիտ կ'ըսեմ քեզի, Դուն այսօր իմ հետս դրախ-
տին մէջը պիտի ըլլաս։
44 Եւ ժամը վեցին տեղերն էր, ու բոլոր երկ-
րին վրայ խաւար եղաւ մինչև իններորդ ժամը. և
45 արևը խաւարեցաւ, Ու տաճարին վարագոյրը մէջ-
46 տեղէն պատռեցաւ, Եւ Յիսուս մեծ ձայնով ա-
ղաղակեց ու ըսաւ, Հայր, քու ձեռքդ կ'աւան-
դեմ իմ հոգիս. ու երբոր աս ըսաւ՝ հոգի տուաւ։
47 Եւ հարիւրապետը եղած բանը տեսնելով՝ Աս-
տուծոյ փառք տուաւ ու ըսաւ, Իրաւցընէ աս
48 մարդը արդար էր· Եւ աս տեսարանը դիտելու
համար ժողվուած բոլոր բազմութիւնները եղած
բաները տեսնելով՝ կուրծքերնուն կը զարնէին ու
49 ետ կը դառնային· Ամէն իր ճանչուորներն ալ հե-
ռուն կայներ էին, նոյնպէս ալ ան կնիկները՝ որ
իր ետևէն եկեր էին Գալիլեայէն, ու կը տեսնէին
աս բաները։
50 Եւ ահա մէկ մարդ մը Յովսէփ անունով՝ որ
51 խորհրդական էր՝ բարի ու արդար մարդ մը, (Ա-
սիկա անոնց խորհուրդին ու գործքին հաւանու-
թիւն տուած չէր,) Հրէաներուն Արիմաթիա քա-
ղաքէն, որ ինքն ալ Աստուծոյ թագաւորութեանը
52 կը սպասէր· Ասիկա Պիղատոսին գնաց, ու Յի-
53 սուսի մարմինը խնդրեց· Եւ զանիկա խաչէն իջե-

ցընելով՝ կտաւով փաթթեց, ու քարէ փորուած
գերեզմանի մը մէջ դրաւ, որ հոն բնաւ մէկը
54 դրուած չէր· Եւ ան օրը ուրբաթ էր, ու շաբա-
թը պիտի *սկսէր·
55 Եւ անոր ետևէն գացին ան կնիկները՝ որ իրեն
հետ Գալիլեայէն եկած էին, ու տեսան գերեզ-
մանը՝ և թէ ինչպէս անոր մարմինը հոն դրուե-
56 ցաւ։ Եւ դառնալով՝ խունկեր ու եղեր պատ-
րաստեցին, և շաբաթ օրը հանգստացան պատ-
ուիրանքին համեմատ·

ԳԼ. ԻԴ

1 Ու մէկշաբթի օրը առտուանց շատ կանուխ գե-
րեզմանը եկան, ու բերին ան խունկերը որ պատ-
րաստեր էին, և ուրիշ կնիկներ ալ անոնց հետ։
2 Ու քարը գերեզմանէն մէկդի գլտորցուած գտան·
3 Եւ ներս մտնելով՝ Տէր Յիսուսի մարմինը հոն չը-
4 գտան· Ու եղաւ որ երբ անոնք աս բանիս հա-
մար տարակուսանաց մէջ էին, ահա երկու մար-
դիկ լուսափայլ հանդերձներով հասան անոնց։
5 Ու երբոր վախով լեցուած՝ երեսնին դէպ 'ի գե-
տինը ծռեցին, ան մարդիկը ըսին անոնց, Ինչո՞ւ
6 համար ողջը մեռելներուն հետ կը փնտռէք· Հոս
չէ ան, հապա յարութիւն առաւ· միտքերնիդ
բերէք ինտոր խօսեցաւ ձեզի՝ երբոր դեռ Գալի-
7 լեայի մէջ էր, Ըսելով Թէ Որդին մարդոյ պէտք է
որ մեղաւոր մարդոց ձեռքը մատնուի ու խաչը
8 ելլէ, ու երրորդ օրը յարութիւն առնէ· Եւ մտա-
9 քերնին բերին անոր խօսքերը· Ու գերեզմանէն
դառնալով աս ամէն բաները պատմեցին տաս-
10 նումէկին ու բոլոր ուրիշներուն· Եւ էին Մարի-
ամ Մագդաղենացին ու Յովհաննա և Յակոբոսին

*Յուն. լուսնար

մայրը Մարիամ, ու անոնց հետ ուրիշներ ալ, որ
11 աս բաները առաքեալներուն պատմեցին։ Եւ ա-
նոնց առջեւը ցնորական խօսքեր երեւցաւ անոնց
12 զրուցածը, ու չէին հաւատար անոնց։ Բայց Պետ-
րոս ելաւ վազեց դէպ 'ի գերեզմանը, ու ծռելով
նայեցաւ եւ տեսաւ որ միայն կտաւները կը կենա-
յին. ու գնաց՝ իր մտքին մէջ զարմանալով այն
եղածին վրայ։
13 Եւ ահա անոնցմէ երկուքը նոյն օրը մէկ գեղ
մը կ'երթային, որ Երուսաղեմէն վաթսուն աս-
պարէզ հեռու էր, եւ անոր անունը Էմմաւուս էր։
14 Եւ անոնք կը խօսէին իրարու հետ աս բոլոր ե-
15 ղած անցքերուն վրայ։ Ու եղաւ որ երբ անոնք
կը խօսակցէին ու խորհրդածութիւն կ'ընէին, Յի-
սուս ինքն ալ մօտենալով հետերնին կ'երթար։
16 Բայց անոնց աչքերը բռնուած էին, որ զինքը
17 չճանչնան։ Եւ ըսաւ անոնց, Ի՞նչ է այդ խօսքերը՝
որ քալելով իրարու հետ կը խօսակցիք, ու տրտ-
18 մած ալ էք։ Պատասխան տուաւ անոնցմէ մէկը՝
որուն անունը Կղէոփաս էր, ու ըսաւ անոր,
Դո՞ւն միայն Երուսաղեմի մէջ կը կենաս, ու չես
19 գիտեր թէ ինչե՛ր եղաւ հոն աս օրերս։ Եւ ինքը
ըսաւ անոնց, Ի՞նչ. անոնք ալ ըսին իրեն, Նա-
զովրեցի Յիսուսին համար, այն որ Աստուծոյ եւ
բոլոր ժողովուրդին առջեւը գործքով ու խօսքով
20 զօրաւոր մարգարէ մը եղաւ. ինչպէս քահա-
նայապետները ու մեր իշխանները մահուան դա-
տաստանի մատնեցին անիկա եւ խաչը հանե-
21 ցին։ Իսկ մենք կը յուսայինք թէ անիկա էր որ
Իսրայէլը պիտի ազատէր. եւ աս ամենուն վրայ
22 աս երրորդ օրն է որ աս բաները եղաւ։ Նաեւ
մեր մէջէն մէկ քանի կիններ ալ մեզ զարմա-
ցուցին, որոնք առտուանց կանուխ գերեզմանը
23 գացին, Ու անոր մարմինը չգտնելով՝ եկան ու ը-
սին թէ հրեշտակներու տեսիլք ալ տեսան, որոնք

24 ըսեր են թէ անիկա ողջ է։ Եւ մերիններէն մէկ
քանիներն ալ գերեզմանը գացին ու անանկ գը-
տան, ինչպէս որ այն կիները զրուցեցին, միայն
25 թէ զինքը չտեսան։ Ան ալ ըսաւ անոնց, Ով ան-
միտներ ու թուլասիրտներ հաւատալու այն բոլոր
26 բաներուն՝ որ մարգարէները խօսեցան. Չէ՞ որ
Քրիստոսի պէտք էր աս չարչարանքները կրել,
27 եւ իր փառքը մտնել։ Ու սկսելով Մովսէսէն եւ
բոլոր մարգարէներէն՝ կը մեկնէր անոնց, ինչ որ
իրեն համար բոլոր գիրքերուն մէջ գրուած էր։
28 Երբոր մօտեցան այն գեղին՝ ուր որ կ'երթային,
ինքն ալ կը ցուցընէր որպէս թէ աւելի հեռու
29 տեղ մը պիտի երթար։ Բայց ստիպեցին զինքը ու
ըսին, Մեր քովը կեցիր, ինչու որ իրիկունը մօտ
է եւ օրը իջած է. եւ մտաւ անոնց հետ կենալու։
30 Ու եղաւ որ երբ ինքը անոնց հետ սեղան նստաւ,
հացը առաւ՝ օրհնեց, ու կտրելով տուաւ անոնց։
31 Անատենը անոնց աչքերը բացուեցաւ ու զինքը
32 ճանչցան, եւ ինքը անոնցմէ աներեւոյթ եղաւ։ Ու
իրարու կ'ըսէին, Չէ՞ որ սիրտերնիս մեր ներսի-
դին կը բորբոքէր, երբոր ինքը մեր հետը կը խօ-
սէր ճամբուն մէջ, եւ գիրքերը կը մեկնէր մեզի։
33 Ու ելան նոյն ժամուն Երուսաղէմ դարձան, ու
մէկտեղ ժողվուած գտան տասնումէկը ու անոնց
34 հետ եղողները, Որոնք կ'ըսէին թէ Իրաւցընէ Տէրը
35 յարութիւն առաւ, ու Սիմոնին երեւցաւ։ Եւ ի-
րենք պատմեցին ինչ որ ճամբուն վրայ եղաւ, եւ
թէ ինտոր ինքզինքը իրենց ճանչցուց հացը կտրած
ատենը։
36 Եւ քանի որ աս բաները կը խօսէին, Յիսուս
ինքը կայնեցաւ անոնց մէջտեղը ու ըսաւ անոնց,
37 Խաղաղութիւն ձեզի։ Բայց անոնք զարհուրելով
կը վախնային, ու կը կարծէին թէ ոգի մը կը
38 տեսնեն։ Եւ ըսաւ անոնց, Ինչո՞ւ խռոված էք,
եւ ինչո՞ւ սիրտերնուդ մէջը խորհուրդներ կ'ելլեն։

39 Տեսէք ձեռքերս ու ոտքերս, որ ես ինքս եմ.
շօշափեցէք զիս ու տեսէք, վասն զի ոգին մար-
մին և ոսկորներ չունենար, ինչպէս որ զիս կը
40 տեսնէք որ ունիմ։ Եւ աս ըսելով ձեռքերը ու
41 ոտքերը ցուցուց անոնց։ Ու երբոր տակաւին ի-
րենց ուրախութենէն չէին հաւատար՝ և զարման-
քի մէջ էին, ըսաւ անոնց, Ուտելիք մը ունի՞ք
42 հոս։ Անոնք ալ կտոր մը խորոված ձուկ ու մեղ-
43 րախորիսխ տուին իրեն։ Եւ առաւ կերաւ անոնց
44 առջևը։ Եւ ըսաւ անոնց, Ասոնք են ան խօսքերը
որ ձեզի խօսեցայ՝ երբոր դեռ ձեր հետ էի, թէ
Պէտք է որ կատարուի ան ամէնը՝ որ Մովսէսի
օրէնքին մէջ ու մարգարէներուն մէջ և սաղմոս-
45 ներուն մէջ ինծի համար գրուած են։ Անատենը
46 անոնց միտքը բացաւ որ գիրքերը հասկընան. Եւ
ըսաւ անոնց թէ Ասանկ գրուած է, և ասանկ
պէտք էր Քրիստոսի չարչարուիլ, ու երրորդ օրը
47 մեռելներէն յարութիւն առնել. Եւ անոր անու-
նովը ապաշխարութիւն ու մեղաց թողութիւն
քարոզուիլ բոլոր ազգերուն մէջ՝ Երուսաղեմէն
48 սկսած։ Ու դուք էք աս բաներուս վկաները։
49 Եւ ահա ես իմ Հօրս խոստմունքը ձեր վրայ կը
ղրկեմ. բայց դուք Երուսաղէմ քաղաքիս մէջը
նստեցէք, մինչև որ վերէն զօրութիւն առնէք
վրանիդ։
50 Եւ զանոնք մինչև Բեթանիա հանեց, ու իր
51 ձեռքերը վեր վերցնելով օրհնեց անոնք։ Եւ ե-
ղաւ որ երբ անոնք կ'օրհնէր, զատուեցաւ ա-
52 նոնցմէ ու վեր կ'ելլէր երկինքը։ Անոնք ալ եր-
կրպագութիւն ընելով անոր՝ մեծ ուրախութեամբ
53 Երուսաղէմ դարձան. Եւ ամէն ատեն տաճարին
մէջն էին, ու կը գովաբանէին և կ'օրհնէին զԱստ-
ուած։ Ամէն։

ԱՒԵՏԱՐԱՆ

ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ

ԳԼՈՒԽ Ա.

1 Սկիզբէն էր Բանը, ու Բանը Աստուծոյ քովն էր,
2 և Բանը Աստուած էր։ Անիկա սկիզբէն Աստուծոյ
3 քովն էր։ Ամէն բան անով եղաւ, և առանց ա-
4 նոր բան մը չեղաւ՝ ինչ որ եղաւ։ Կեանքը անով
5 էր, ու կեանքը մարդո՛ց լոյսն էր. Եւ լոյսը խա-
ւարի մէջ կը լուսաւորէր, ու խաւարը զանիկա
չհասկըցաւ։
6 Աստուծմէ խրկուած մարդ մը կար, որուն ա-
7 նունը Յովհաննէս էր։ Անիկա վկայութեան եկաւ
որ Լուսոյն համար վկայէ, որ ամէնքը անոր մի-
8 ջոցովը հաւատան։ Ինքը չէր ան Լոյսը, հապա ե-
կ— որ Լուսոյն համար վկայութիւն տայ։
9 Ճշմարիտ Լոյսը ան էր, որ աշխարհ *եկող բոլոր
10 մարդիկը կը լուսաւորէ. Ինքը աշխարհի մէջ էր,
և աշխարհս անով եղաւ, ու աշխարհս զանիկա
11 չճանչցաւ։ Իրեններուն եկաւ, և իրենները զինքը
12 չընդունեցին։ Բայց որոնք որ զինքը ընդունե-
ցին, անոնց իշխանութիւն տուաւ Աստուծոյ որ-
դիներ ըլլալու, որոնք կը հաւատան իր անուանը.
13 Որ անոնք ոչ արիւնէ և ոչ մարմինի կամքէ՝ ոչ
14 ալ մարդու կամքէ, հապա Աստուծմէ ծնան։ Եւ
Բանը մարմին եղաւ ու մեր մէջը բնակեցաւ, (և
անոր փառքը տեսանք՝ Հօրմէն միածնի փառքին

*Կամ գալով՝

պէս,) շնորհքով ու ճշմարտութիւնով լեցուն։
15 Յովհաննէս վկայեց անոր համար և աղաղակեց
ըսելով, Ասիկա է՝ որուն համար կը զրուցէի, Ան
որ իմ ետեւէս կու գայ՝ ինծմէ առաջ եղաւ, ին-
16 չու որ ինծմէ առաջ էր։ Եւ անոր լեցունութենէն
17 մենք ամէնքս շնորհք առինք շնորհքի տեղ։ Ին-
չու որ օրէնքը Մովսէսի ձեռքով տրուեցաւ,
բայց շնորհքը ու ճշմարտութիւնը Յիսուս Քրիս-
18 տոսի ձեռքովը եղան։ Մէկը երբեք զԱստուած
տեսած չէ, բայց միածին Որդին որ Հօրը ծոցն է՝
անիկա պատմեց։
19 Ու Յովհաննէսին վկայութիւնը աս է՝ երբոր
Հրէաները Երուսաղէմէն քահանաներ ու Ղեւտա-
ցիներ խրկեցին որ հարցընեն անոր թէ Դուն ո՞վ
20 ես։ Եւ անիկա խոստովանեցաւ ու չուրացաւ.
21 խոստովանեցաւ թէ Ես Քրիստոսը չեմ։ Ու հար-
ցուցին անոր, Հապա ի՞նչ, Եղիա՞ն ես. և ըսաւ,
Չեմ. Ան մարգարէ՞ն ես. պատասխան տուաւ թէ
22 Չէ. Անոնք ըսին անոր, Դուն ո՞վ ես. ըսէ մեզի,
որ պատասխան տանինք մեզ խրկողներուն. դուն
23 ի՞նչ կ'ըսես քեզի համար։ Ըսաւ, Ես անոր ձայնն
եմ՝ որ անապատին մէջ կը կանչէ, Շիտկեցէք Տէ-
րոջը ճամբան, ինտոր որ Եսայի մարգարէն ըսաւ։
24 Եւ ան խրկուածները փարիսեցիներէն էին.(25)Ու
հարցուցին իրեն ըսելով, Հապա ինչո՞ւ մկրտու-
թիւն կ'ընես, թէ որ դուն Քրիստոսը չես, ու ոչ
26 Եղիան, և ոչ մարգարէն։ Պատասխան տուաւ ա-
նոնց Յովհաննէս ու ըսաւ, Ես ջրով կը մկրտեմ,
բայց ձեր մէջը մէկը կայ որ դուք ան չէք ճանչ-
27 նար. Անիկա է իմ ետեւէս եկողը՝ որ ինծմէ ա-
ռաջ եղաւ, որ ես արժանի չեմ անոր կօշիկին
28 կապը քակելու։ Աս բաները Բեթաբարայի մէջ
եղաւ Յորդանանու անդիի կողմը, ուր որ Յով-
հաննէս կը կենար ու կը մկրտէր։
29 Հետեւեալ օրը Յովհաննէս տեսաւ Յիսուսը որ

իրեն կու գար, և ըսաւ, Ահա Աստուծոյ Գառը՝
30 որ աշխարհի մեղքը կը վերցընէ։ Ասիկա է՝ որուն
համար ես կը զրուցէի, Իմ ետեւէս մարդ մը կու
գայ՝ որ ինծմէ առաջ եղաւ, ինչու որ ինծմէ ա-
31 ռաջ էր։ Ու ես զանիկա չէի ճանչնար, բայց ա-
նոր համար ես եկայ ջրով մկրտելու, որ անիկա
32 Իսրայէլին յայտնուի։ Եւ Յովհաննէս վկայութիւն
տուաւ ըսելով թէ Կը տեսնէի Հոգին՝ որ աղաւ-
նիի պէս երկինքէն կ'իջնէր, ու անոր վրայ կը
33 հանգչէր։ Եւ ես զանիկա չէի ճանչնար, բայց ան
որ զիս խրկեց ջրով մկրտելու, ինքը ըսաւ ինծի,
Որու վրայ որ տեսնես Հոգին, որ կ'իջնէ ու կը
հանգչի անոր վրայ, անիկա է որ Սուրբ Հոգիով
34 կը մկրտէ։ Ես ալ տեսայ, ու վկայեցի թէ ասիկա
է Աստուծոյ Որդին։
35 Հետեւեալ օրը դարձեալ Յովհաննէս կայներ էր,
36 և իր աշակերտներէն երկուքը։ Ու նայելով Յի-
սուսի վրայ որ կը պտըտէր՝ ըսաւ, Ահա Աստու-
37 ծոյ Գառը։ Եւ լսեցին անկէ երկու աշակերտները՝
երբոր կը խօսէր, ու գացին Յիսուսի ետեւէն։
38 Յիսուս երբոր դարձաւ ու տեսաւ անոնք որ իր
ետեւէն կու գային՝ ըսաւ անոնց, Ի՞նչ կ'ուզէք.
անոնք ալ ըսին իրեն, Ռաբբի, (որ թարգման-
ուելով վարդապետ ըսել է,) ո՞ւր է քու օթե-
39 ւանդ։ Ըսաւ անոնց, Եկէք ու տեսէք. եկան ու
տեսան ուր տեղ որ էր իր օթեւանը. և ան օրը
անոր քովը կեցան, ինչու որ ժամը տասնի ա-
40 տեններն էր։ Սիմոն Պետրոսին եղբայրը Անդրէաս
ան երկուքէն մէկն էր, որ լսեցին Յովհաննէսէն
41 և անոր ետեւէն գացին։ Ասիկա նախ իր Սիմոն
եղբայրը կը գտնէ և կ'ըսէ անոր, Գտանք Մե-
42 սիան, (որ *Քրիստոս կը թարգմանուի.) Ու տա-
րաւ զանիկա Յիսուսի քովը. Յիսուս անոր նայե-

*Այսինքն Օծեալ

լով՝ ըսաւ, Դուն ես Յովնանի որդին Սիմոն.
դուն Կեփաս պիտի ըսուիս, որ *Պետրոս կը
թարգմանուի։
43 Հետեւեալ օրը Յիսուս Գալիլեա ելլել ուզեց, և
Փիլիպպոսը գտնելով՝ ըսաւ անոր, Եկուր իմ ե-
44 տեւէս։ Եւ Փիլիպպոս Բեթսայիդացին էր՝ Անդրէ-
45 ասին ու Պետրոսին քաղաքէն։ Փիլիպպոս կը
գտնէ Նաթանայէլը և կ'ըսէ անոր, Ան՝ որուն հա-
մար Մովսէս օրինաց մէջ գրեց, և մարգարէներն
ալ, զանիկա գտանք, այսինքն Յիսուս Նազովրե-
46 ցին՝ Յովսեփի որդին։ Եւ Նաթանայէլ ըսաւ ա-
նոր, Նազարեթէն կարելի՞ է որ աղէկ բան մը ըլ-
47 լայ. ըսաւ անոր Փիլիպպոս, Եկուր ու տես։ Յի-
սուս երբոր տեսաւ Նաթանայէլը որ դէպ իրեն
կու գար՝ ըսաւ անոր համար, Ահա իրաւցընէ Իս-
րայելացի մը, որուն ներսը նենգութիւն չկայ։
48 Նաթանայէլ ըսաւ անոր, Ուսկի՞ց կը ճանչնաս
զիս. պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ անոր,
Դեռ Փիլիպպոս քեզ չկանչած, դուն որ թզենիին
49 տակն էիր, ես քեզ տեսայ։ Պատասխան տուաւ
Նաթանայէլ ու ըսաւ անոր, Ռաբբի, դուն ես
Աստուծոյ Որդին, դուն ես Իսրայելի թագաւորը։
50 Յիսուս պատասխան տուաւ և ըսաւ անոր, Անոր
համար՝ որ քեզի ըսի թէ քեզ թզենիին տակը տե-
սայ, կը հաւատա՞ս. ասկէ աւելի մեծ բաներ պի-
51 տի տեսնես։ Ու ըսաւ անոր, Ճշմարիտ ճշմարիտ
կ'ըսեմ ձեզի, Ասկէ ետև պիտի տեսնէք երկինքը
բացուած, և Աստուծոյ հրեշտակները՝ որ կ'ելլեն
ու կ'իջնեն Որդւոյ մարդոյ վրայ։

ԳԼ. Բ

1 Ու երրորդ օրը հարսնիք մը կար Գալիլեայի Կա-
2 նա քաղաքը, և Յիսուսի մայրը հոն էր։ Յիսուս

*Այսինքն վէմ

ալ կանչուեցաւ ան հարսնիքը՝ ու իր աշակերտ-
3 ներն ալ։ Ու երբոր գինին պակսեցաւ՝ Յիսու-
4 սի մայրը ըսաւ անոր, Գինի չունին։ Յիսուս ը-
սաւ անոր, Կնիկ, դուն իմ հետս ի՞նչ բան
5 ունիս. իմ ժամանակս դեռ հասած չէ։ Իր
մայրը սպասաւորներուն ըսաւ, Ինչ որ ձեզի ըսէ՝
6 ըրէք։ Հոն վեց հատ քարէ կարասներ դրուած
էին Հրէից մաքրուելու սովորութեանը համեմատ,
որ անոնց ամէն մէկը երկու կամ երեք մար բան
7 կ'առնէր։ Յիսուս ըսաւ անոնց, Լեցուցէք ատ
կարասները ջրով. ու լեցուցին անոնք մինչև բե-
8 րանը։ Եւ ըսաւ անոնց, Հիմա հանեցէք ու սե-
9 ղանապետին տարէք. անոնք ալ տարին։ Ու սե-
ղանապետը երբոր գինի եղած ջուրին համը ա-
ռաւ, և չէր գիտեր ուսկից ըլլալը. (բայց սպա-
սաւորները որ ջուրը քաշեր էին՝ գիտէին.) սե-
10 ղանապետը կը խօսի փեսային, Ու անոր կ'ըսէ,
Ամէն մարդ աղէկ գինին առաջ կը մատուցանէ,
ու երբոր խմած կ'ըլլան՝ անատենը ստորնագոյնը.
Բայց դուն աղէկ գինին մինչև հիմա պահեցիր։
11 Յիսուս հրաշքներուն սկիզբը աս ըրաւ Գալիլեայի
Կանա քաղաքին մէջ, և իր փառքը յայտնեց. ու
իր աշակերտները հաւատացին իրեն։
12 Ասկէ ետև Յիսուս Կափառնայում իջաւ՝ ինքը
և իր մայրը ու իր եղբայրները և իր աշակերտ-
ները, ու շատ օրեր հոն չկեցան։
13 Եւ Հրէից զատիկը մօտ էր, ու Յիսուս Երու-
14 սաղէմ ելաւ. Եւ տաճարին մէջ գտաւ արջառ ու
ոչխար և աղաւնի ծախողները, ու ստակ փոխող-
15 ներն ալ՝ որ նստեր էին. Եւ չուանէ խարազան
մը շինելով՝ ամէնը տաճարէն դուրս հանեց՝ ոչ-
խարներն ալ ու արջառներն ալ, և ստակ փո-
խողներուն պղինձները ցիրուցան ըրաւ, ու սե-
16 ղանները կործանեց։ Եւ աղաւնի ծախողներուն
ըսաւ, Ասկէ վերցուցէք ատոնք, իմ Հօրս տունը

17 առուտուրի տուն մի ընէք։ Եւ իր աշակերտները
միտքերնին բերին որ գրուած է, Քու տանդ նա-
խանձը զիս կերաւ։
18 Անատենը պատասխան տուին Հրեաները ու ը-
սին անոր, Ի՞նչ նշան կը ցուցընես մեզի՝ որ ատ
19 բաները կ'ընես։ Պատասխան տուաւ Յիսուս ու
ըսաւ անոնց, Քակեցէք աս տաճարը, ու երեք
20 օրուան մէջ անիկա պիտի կանգնեմ։ Եւ Հրեա-
ները ըսին, Քառասունըվեց տարուան մէջ շին-
ուեցաւ աս տաճարը, և դուն երեք օրուան մէջ
21 պիտի կանգնե՞ս անիկա։ Բայց ինքը իր մարմնոյն
22 տաճարին համար կ'ըսէր։ Ուստի երբոր ինքը մե-
ռելներէն յարութիւն առաւ, իր աշակերտները
միտքերնին բերին թէ աս բանը ըսած էր *, ու
հաւատացին գիրքին և Յիսուսի ըսած խօսքին։
23 Ու երբոր զատկի տօնին ատենը Երուսաղէմ
էր, շատ մարդիկ անոր ըրած հրաշքները տես-
24 նելով՝ հաւատացին անոր անուանը։ Բայց ինքը
Յիսուս իր անձը անոնց չէր հաւատար, ինչու որ
25 ինքը գիտէր ամէն մարդ։ Ու պէտք չէր որ մէկը
մարդու համար վկայութիւն տայ իրեն, քանզի
ինքը գիտէր թէ ինչ կայ մարդուն ներսի դին։

ԳԼ. Գ.

1 Եւ փարիսեցիներէն մարդ մը կար Նիկոդեմոս ա-
2 նունով՝ որ Հրէից իշխան էր։ Ասիկա գիշերով
†Յիսուսի քովը եկաւ, և ըսաւ անոր, Ռաբբի,
գիտենք որ դուն Աստուծմէ վարդապետ եկած
ես, ինչու որ մէկը չկրնար ընել աս հրաշքները
որ դուն կ'ընես, թէ որ Աստուած իր հետը չըլ-
3 լայ։ Պատասխան տուաւ Յիսուս և ըսաւ անոր,

*Ոմանք կ'աւելցնեն իրենց
†Ոմանք անոր

ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ քեզի, Թէ որ մէկ մարդ
մը *նորէն չծնանի, չկրնար Աստուծոյ թագաւո-
4 րութիւնը տեսնել։ Նիկոդեմոս ըսաւ անոր, Ին-
տո՞ր կրնայ մարդ մը ծնանիլ, որ ծերացած է.
հնարաւո՞ր բան է որ նորէն իր մօրը որովայնը
5 մտնէ ու ծնանի։ Յիսուս պատասխան տուաւ,
ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ քեզի, Թէ որ մէկ մարդ
մը ջուրէն ու Հոգիէն չծնանի, չկրնար Աստուծոյ
6 թագաւորութիւնը մտնել։ Մարմինէն ծնածը մար-
7 մին է, ու Հոգիէն ծնածը հոգի է։ Դուն մի զար-
մանար որ քեզի ըսի, Պէտք է ձեզի նորէն ծնա-
8 նիլ։ Հովը ուր որ ուզէ՝ կը փչէ, և անոր ձայնը
կը լսես, բայց չես գիտեր ուսկից կու գայ՝ կամ
ուր կ'երթայ. ասանկ ալ է ան ամէնը որ Հոգիէն
9 կը ծնանի։ Պատասխան տուաւ Նիկոդեմոս ու ը-
10 սաւ անոր, Աս ի՞նչպէս կրնայ ըլլալ։ Պատասխան
տուաւ Յիսուս ու ըսաւ անոր, Դուն Իսրայէլի մէջ
վարդապետ մըն ես, և աս բաները չե՞ս գիտեր։
11 Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ քեզի, Թէ ինչ որ գի-
տենք՝ կը խօսինք, և ինչ որ տեսանք՝ կը վկա-
12 յենք, ու մեր վկայութիւնը չէք ընդունիր։ Թէ
որ երկրաւոր բաները ձեզի զրուցեցի՝ ու չէք
հաւատար, ի՞նչպէս պիտի հաւատաք՝ թէ որ եր-
13 կնաւոր բաները ձեզի զրուցեմ։ Եւ մէկը երկինքը
չելաւ, բայց անիկա միայն որ երկինքէն իջաւ՝
14 Որդին մարդոյ, որ երկինքն է։ Եւ ինտոր որ Մով-
սէս անապատին մէջ օձը բարձրացուց, անանկ
15 ալ պէտք է որ Որդին մարդոյ բարձրանայ, Որ
ամէն ով որ անոր հաւատայ՝ չկորսուի, հապա
16 յաւիտենական կեանք ունենայ։ Ինչու որ Աստ-
ուած անանկ սիրեց աշխարհը, մինչև որ իր մի-
ածին Որդին տուաւ, որ ամէն ով որ անոր հա-
ւատայ՝ չկորսուի, հապա յաւիտենական կեանք

*Կամ վերէն

17 ունենայ։ Վասն զի Աստուած իր Որդին չխրկեց
աշխարհ որ աշխարհը դատէ, հապա որ աշխարհս
18 անով փրկուի։ Ան որ կը հաւատայ անոր՝ չդա-
տապարտուիր. և ան որ չհաւատար՝ անիկա ար-
դէն դատապարտուած է, ինչու որ Աստուծոյ մի-
19 ածին Որդւոյն անուանը չհաւատաց։ Եւ աս է
դատապարտութիւնը՝ որ լոյսը աշխարհ եկաւ, ու
մարդիկ խաւարը լոյսէն աւելի սիրեցին, ինչու որ
20 իրենց գործքերը չար էին։ Վասն զի ամէն ով որ
չար կը գործէ՝ անիկա լոյսը կ'ատէ, և լոյսին
քովը չգար որ իր գործքերը չյանդիմանուին։
21 Բայց ան որ ճշմարտութիւն կը գործէ՝ լոյսին
քովը կու գայ, որ իր գործքերը յայտնի ըլլան
թէ Աստուծով գործուեցան։
22 Աս բաներէն ետքը եկաւ Յիսուս և իր աշա-
կերտները Հրէաստանի երկիրը, և հոն կը կենար
անոնց հետ մէկտեղ, ու մկրտութիւն կ'ընէր։
23 Յովհաննէս ալ Այենոնի մէջ Սաղիմի մօտ մկըր-
տութիւն կ'ընէր, որովհետև հոն շատ ջուր կար,
24 ու կու գային և կը մկրտուէին. Ինչու որ Յով-
հաննէս դեռ բանտը դրուած չէր։
25 Անատենը վիճաբանութիւն մը եղաւ Յովհան-
նէսին աշակերտներէն *Հրէաներուն հետ՝ մաք-
26 րութեան վրայով։ Ու եկան Յովհաննէսին և ա-
նոր ըսին, Ռաբբի, անիկա որ քեզի հետ Յորդա-
նանու անդիի կողմն էր, որուն համար դուն վը-
կայութիւն տուիր, ահա ինքը կը մկրտէ, և ա-
27 մէնը անոր կու գան։ Պատասխան տուաւ Յով-
հաննէս և ըսաւ, Մարդ մը չկրնար բան մը առ-
28 նել, թէ որ երկինքէն տրուած չըլլայ անոր։ Դուք
ձեզմէ կը վկայէք ինծի համար, որ ըսի թէ Ես
Քրիստոսը չեմ, հապա անոր առջեւէն խրկուած
29 եմ։ Ան որ հարսն ունի, փեսան անիկա է. բայց

*կամ Հրեայի մը

փեսային բարեկամը՝ որ կը կենայ ու կը լսէ ա-
նոր, մեծապէս կ'ուրախանայ փեսային ձայնին
համար. ուստի աս իմ ուրախութիւնս լցուած է։
30 Անիկա պէտք է որ մեծնայ, բայց ես պզտիկնամ։
31 Ան որ վերէն կու գայ՝ ամենէն վեր է. ան որ
երկրէն է՝ երկրաւոր է, ու երկրէն կը խօսի. ան
32 որ երկինքէն կու գայ՝ ամենէն վեր է. Եւ ինչ որ
տեսաւ ու լսեց՝ ան կը վկայէ, ու անոր վկայու-
33 թիւնը մէկը չընդունիր։ Ան որ անոր վկայու-
թիւնը կ'ընդունի՝ կնքեց թէ Աստուած ճշմարիտ
34 է։ Վասն զի ան որ Աստուած խրկեց՝ Աստուծոյ
խօսքերը կը խօսի, ինչու որ Աստուած անոր չա-
35 փով չտար Հոգին։ Հայրը կը սիրէ Որդին, և ա-
36 մէն բան անոր ձեռքը տուած է։ Ան որ Որդւոյն
կը հաւատայ՝ յաւիտենական կեանք ունի. և ան
որ Որդւոյն չհնազանդիր՝ անիկա կեանք պիտի
չտեսնէ, հապա Աստուծոյ բարկութիւնը անոր
վրայ կը մնայ։

ԳԼ. Դ

1 Արդ երբոր Տէրը իմացաւ որ փարիսեցիները լսեր
են՝ թէ Յիսուս Յովհաննէսէն աւելի աշակերտներ
2 կ'ընէ և կը մկրտէ, (թէպէտ չէ թէ Յիսուս ինքը
3 կը մկրտէր, հապա իր աշակերտները,) Թողուց
4 Հրէաստանը ու նորէն Գալիլեա գնաց։ Ու պէտք
5 եղաւ որ Սամարիայի մէջէն անցնի։ Ուստի եկաւ
Սամարացւոց մէկ քաղաքը՝ որուն անունը Սու-
քար էր, ան տեղին մօտ՝ որն որ Յակոբ իր որդ-
6 ւոյն Յովսէփին տուաւ. Եւ հոն Յակոբին մէկ աղ-
բիւրը կար. Յիսուս ալ ճամբայէն յոգնած ըլլա-
լով՝ ան աղբիւրին վրայ նստաւ. Ու ժամը վեցին
ատենները էր։
7 Սամարիայէն կնիկ մը եկաւ ջուր հանելու. Յի-
8 սուս ըսաւ անոր, Ինծի ջուր տուր խմելու.(Թան-

գի իր աշակերտները քաղաքը գացեր էին, որ ու-
9 տելիք առնեն։) Անոր համար Սամարացի կնիկը ը-
սաւ անոր, Դուն որ Հրեայ ես, ի՞նչպէս կ'ուզես
ջուր խմել ինծմէ՝ Սամարացի կնիկէ մը. վասն զի
Հրեայք Սամարացւոց հետ հաղորդակցութիւն չեն
10 ըներ։ Յիսուս պատասխան տուաւ ու ըսաւ անոր,
Թէ որ դուն գիտնայիր Աստուծոյ պարգեւը, և
թէ ով է ան որ քեզի կ'ըսէ, Ինծի ջուր տուր
խմելու, դուն անկէ պիտի ուզէիր, և ինքը քեզի
11 կենդանի ջուր պիտի տար։ Կնիկը ըսաւ անոր,
Տէր, դուն ջրհան ալ չունիս, ու աս հորը խո-
րունկ է. ուրեմն ուսկի՞ց պիտի ունենաս ան կեն-
12 դանի ջուրը։ Միթէ դուն մեր Յակոբ հօրմէն ա-
ւելի մե՞ծ մըն ես, որ աս հորը մեզի տուաւ, և
ասկէ խմեց ինքը ու իր որդիները և իր անա-
13 սունները։ Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ
անոր, Ամէն ով որ աս ջուրէն խմէ՝ նորէն պի-
տի ծարաւի, բայց ով որ խմէ ան ջուրէն որ ես
անոր պիտի տամ՝ յաւիտեան պիտի չծարաւի.
14 Հապա ան ջուրը որ ես անոր պիտի տամ՝ պիտի
ըլլայ անոր ներսի դին ջուրի աղբիւր մը՝ որ յա-
15 ւիտենական կենաց համար կը բղխէ։ Կնիկը ըսաւ
անոր, Տէր, տուր ինծի ան ջուրը որ չծարաւիմ,
16 և հոս չգամ ջուր հանելու։ Յիսուս ըսաւ անոր,
17 Գնա քու էրիկդ կանչէ, ու հոս եկուր։ Կնիկը
պատասխան տալով ըսաւ, Ես էրիկ չունիմ. Յի-
սուս ըսաւ անոր, Աղէկ ըսիր թէ էրիկ չունիմ,
18 ինչու որ դուն հինգ էրիկ ունեցեր ես, և ան որ
հիմա ունիս՝ քու էրիկդ չէ. ատիկա շիտակ զրու-
19 ցեցիր։ Կնիկը ըսաւ անոր, Տէր, կը տեսնեմ որ
20 դուն մարգարէ մըն ես։ Մեր հայրերը աս լե-
ռանս վրայ երկրպագութիւն ըրին, և դուք կ'ը-
սէք թէ Միայն Երուսաղէմ է տեղը, ուր պէտք
21 է երկրպագութիւն ընել։ Յիսուս ըսաւ անոր,
կնիկ, հաւատա ինծի որ ժամանակ կու գայ, որ

անատենը ոչ աս լեռանը վրայ՝ և ոչ Երուսաղեմի
22 մէջ երկրպագութիւն պիտի ընէք Հօրը։ Դուք
անոր երկրպագութիւն կ'ընէք, որ չէք ճանչնար.
մենք անոր երկրպագութիւն կ'ընենք՝ որ կը
ճանչնանք. ինչու որ փրկութիւնը Հրեաներէն է։
23 Բայց ժամանակ կու գայ ու հիմա ալ է, որ ճըշ-
մարիտ երկրպագողները երկրպագութիւն պիտի
ընեն Հօրը հոգիով ու ճշմարտութիւնով, ինչու
որ Հայրն ալ իրեն անանկ երկրպագողներ կ'ու-
24 զէ։ Աստուած Հոգի է, և իրեն երկրպագողնե-
րուն ալ պէտք է որ հոգիով ու ճշմարտութիւ-
25 նով երկրպագութիւն ընեն։ Կնիկը ըսաւ անոր,
Գիտեմ որ Մեսիան կու գայ, (Քրիստոս ըսուա-
ծը,) երբոր ինքը գայ՝ ամէն բան մեզի պիտի
26 պատմէ։ Յիսուս ըսաւ անոր, Ես ան եմ՝ որ քե-
27 զի հետ կը խօսիմ։ Եւ աս խօսքին վրայ իր աշա-
կերտները եկան, ու զարմացան որ ան կնկանը
հետ կը խօսէր. բայց անոնցմէ մէկը չըսաւ թէ
Ի՞նչ կ'ուզես, կամ Ի՞նչ կը խօսիս անոր հետ։
28 Անատենը կնիկը ձգեց իր սափորը ու քաղաքը
29 գնաց, և ըսաւ մարդոցը, Եկէք տեսէք մէկ մարդ
մը՝ որ ըսաւ ինծի ամէն ինչ որ գործեր եմ.
30 արդեօք անիկա՞ է Քրիստոսը։ Եւ անոնք քաղա-
քէն ելան ու անոր կու գային։
31 Եւ աս միջոցիս աշակերտները իրեն կ'աղաչէին
32 ու կ'ըսէին, Ռաբբի, հաց կեր։ Անիկա ըսաւ ա-
նոնց, Ես կերակուր ունիմ ուտելու՝ որ դուք
33 չէք գիտեր։ Ուստի աշակերտները կ'ըսէին իրա-
րու, Արդեօք մէկը անոր ուտելու բան մը բե-
34 րա՞ւ։ Յիսուս ըսաւ անոնց, Իմ կերակուրս ան է
որ ես զիս խրկողին կամքը ընեմ, և անոր գործը
35 կատարեմ։ Չէ՞ որ դուք կ'ըսէք թէ Տակաւին
չորս ամիս կայ որ հունձքի ատենը գայ. ահա ես
ձեզի կ'ըսեմ, Աչքերնիդ վերցուցէք ու արտե-
րուն նայեցէք, որ արդէն ճերմկած են հնձուե-

36 լու պատրաստ են։ Ու ան որ կը հնձէ՝ վարձք
կ'առնէ, ու յաւիտենական կենաց համար պտուղ
կը ժողվէ, որ սերմանողը ու հնձողը մէկտեղ ու-
37 րախանան։ Վասն զի աս բանիս մէջ ճշմարիտ է
ան խօսքը թէ Ուրիշը կը սերմանէ և ուրիշը կը
38 հնձէ։ Ես ձեզ խրկեցի հնձելու ան որ դուք չաշ-
խատեցաք. ուրիշները աշխատեցան, ու դուք ա-
նոնց աշխատանքին մէջ մտաք։
39 Ու ան քաղաքէն շատ Սամարացիք իրեն հա-
ւատացին ան կնկանը խօսքին համար որ վկայեց,
ըսելով թէ Ինչ որ ես գործեր էի՝ բոլորը ինծի ը-
40 սաւ։ Ու երբոր Սամարացիք անոր եկան՝ կ'աղա-
չէին անոր որ իրենց քովը կենայ. ու երկու օր
41 հոն կեցաւ։ Ու ալ շատերը իրեն հաւատացին իր
42 խօսքին համար։ Ու կ'ըսէին կնկանը, Ասկէ ետև
չէ թէ քու խօսքիդ համար կը հաւատանք, ինչու
որ մենք մեզմէ լսեցինք, և գիտենք որ ասիկա
է ճշմարտապէս աշխարհի Փրկիչը՝ Քրիստոսը։
43 Ու երկու օրէն ետև ելաւ անկէ և Գալիլեա
44 գնաց։ Ինչու որ Յիսուս ինքը վկայեց թէ Մար-
45 գարէ մը իր գաւառին մէջ պատիւ չունենար։ Ու
երբոր Գալիլեա եկաւ, Գալիլեացիները զինքը ըն-
դունեցին, ինչու որ տեսած էին ան բոլոր հրաշք-
ները՝ որ ինքը ըրաւ Երուսաղեմի մէջ տօնին ա-
տենը. վասն զի իրենք ալ ան տօնին գացեր էին։
46 Ու Յիսուս նորէն եկաւ Գալիլեացւոց Կանա քա-
ղաքը, ուր որ ջուրը գինի ըրած էր. և հոն ազ-
նուական մէկը կար, որուն որդին հիւանդ էր
47 Կափառնայումի մէջ։ Ասիկա լսելով որ Յիսուս
Հրէաստանէն Գալիլեա եկեր է, եկաւ անոր ու
կ'աղաչէր որ իջնէ և իր որդին բժշկէ, ինչու որ
48 մեռնելու վրայ էր։ Անատենը Յիսուս ըսաւ ա-
նոր, Թէ որ նշաններ ու հրաշքներ չտեսնէք,
49 բնաւ պիտի չհաւատաք։ Ազնուականը ըսաւ ա-
նոր, Տէր, իջիր քանի որ իմ տղաս մեռած չէ։

50 Յիսուս ըսաւ անոր, Գնա, քու որդիդ ողջ է.
մարդն ալ հաւատաց ան խօսքին որ Յիսուս ի-
51 րեն ըսաւ, ու գնաց։ Ու երբոր կ'իջնէր՝ իր ծա-
ռաները դիմաւորեցին զինքը, և աւետիս տուին
52 ըսելով թէ Քու տղադ ողջ է։ Ուստի հարցուց
անոնց թէ Ո՞ր ժամէն սկսաւ աղէկի դառնալ. և
ըսին իրեն, Երէկ ժամը եօթնին տենդը թողուց
53 զանիկա։ Անատենը գիտցաւ անոր հայրը թէ ան
ժամն էր որ Յիսուս իրեն ըսաւ թէ Քու որդիդ
ողջ է. ու հաւատաց ինքը և իր բոլոր տունը։
54 Աս նորէն երկրորդ հրաշքն է որ Յիսուս ըրաւ,
երբոր Հրէաստանէն Գալիլեա եկաւ։

ԳԼ. Ե

1 Ասկէ ետև Հրէից տօն էր, և Յիսուս Երուսաղէմ
2 ելաւ։ Ու Երուսաղեմի մէջ Ոչխարաց դրանը քով
աւազան մը կայ, որ Եբրայեցերէն Բեթհեզդա
3 կ'ըսուի, որ հինգ սրահ ունի։ Ասոնց մէջ խիստ
շատ հիւանդներ պառկած էին՝ կոյրեր, կաղեր,
չորցածներ, որոնք կը սպասէին ջուրին խառնուե-
4 լուն։ Վասն զի հրեշտակ մը ժամանակ ժամանակ
աւազանը կ'իջնէր ու ջուրերը կը խառնէր, և ով
որ ջուրին խառնուելէն ետև պինտ առաջ անոր
մէջը կը մտնէր, կը բժշկուէր՝ ինչ հիւանդութիւն
5 որ ունենար։ Ու հոն մէկ մարդ մը կար, որ ե-
րեսունութը տարիէ 'ի վեր հիւանդութիւն մը ու-
6 նէր։ Յիսուս երբոր տեսաւ զանիկա որ ինկած
պառկած էր, ու գիտցաւ որ շատ ժամանակէ 'ի
7 վեր է, ըսաւ անոր, Կ'ուզե՞ս առողջանալ։ Հի-
ւանդը պատասխան տուաւ անոր, Տէր, մարդ մը
չունիմ որ երբ ջուրերը խառնուին՝ զիս աւազանը
ձգէ. հապա քանի որ ես ծանր կը շարժիմ, ինծմէ
8 առաջ ուրիշ մը կ'իջնէ։ Յիսուս ըսաւ անոր, Ե-
9 լիր, մահիճդ առ ու քալէ։ Ու իսկոյն մարդը ա-

առողջացաւ, ու իր մահիճը վերցնելով կը քալէր.
10 ու այն օրը շաբաթ էր։ Անատենը Հրէաները ըսին
բժշկուած մարդուն, Շաբաթ է, և արժան չէ որ
11 մահիճդ վերցնես։ Պատասխան տուաւ անոնց ու-
ըսաւ, Ան որ զիս բժշկեց՝ ինքը ինծի ըսաւ, Մա-
12 հիճդ առ ու քալէ։ Ուստի հարցուցին անոր, Ո՞վ
է այն մարդը որ քեզի ըսաւ, Մահիճդ առ ու քա-
13 լէ։ Եւ բժշկուողը չէր գիտեր թէ ով է ան, ին-
չու որ Յիսուս մէկդի քաշուեցաւ՝ այն տեղը բազ-
14 մութիւն ըլլալուն համար։ Անկէ ետքը Յիսուս
զանիկա տաճարին մէջ գտնելով՝ ըսաւ անոր, Ա-
հա բժշկուեցար, ալ մեղք մի գործեր, որ ալ ա-
15 ւելի չար բան մը չպատահի քեզի։ Գնաց մարդը,
ու Հրէաներուն պատմեց թէ Յիսուս էր որ զինքը
բժշկեց։
16 Եւ ասոր համար Հրէաները կը հալածէին Յի-
սուսը, և կը փնտռէին զանիկա սպաննել, որ աս
17 բաները շաբաթ օրը կ'ընէր։ Եւ Յիսուս պատաս-
խան տուաւ անոնց, Իմ Հայրս մինչև հիմա կը
18 գործէ, ես ալ կը գործեմ։ Ասոր համար՝ ալ ա-
ւելի կը փնտռէին Հրէաները զանիկա սպաննել,
վասն զի չէ թէ միայն շաբաթ օրը կը լուծէր, հա-
պա նաև զԱստուած իր Հայրը կ'անուանէր, ու
այսպէս ինքզինքը Աստուծոյ հաւասար կ'ընէր։
19 Իսկ Յիսուս պատասխան տուաւ ու ըսաւ անոնց,
Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Որդին ինքիր-
մէն բան մըն ալ չկրնար ընել, միայն թէ ինչ որ
տեսնէ որ Հայրը կ'ընէ. վասն զի ինչ որ անիկա
20 կ'ընէ, նմանապէս Որդին ալ նոյնը կ'ընէ։ Ինչու
որ Հայրը կը սիրէ Որդին, և ամէն բան կը ցու-
ցնէ անոր՝ ինչ որ ինքը կ'ընէ. և ասոնցմէ ալ
աւելի մեծ գործքեր պիտի ցուցնէ անոր, որ-
21 պէս զի դուք զարմանաք։ Վասն զի ինչպէս որ
Հայրը մեռելները կը յարուցանէ ու կենդանի
կ'ընէ, անանկ ալ Որդին՝ որոնք որ կ'ուզէ կը

22 կենդանացնէ։ Քանզի Հայրը մէկը չդատեր, հա-
23 պա ամէն դատաստանը Որդւոյն տուաւ. Որ
ամէնը պատուեն Որդին, ինչպէս որ Հայրը կը
պատուեն. ան որ Որդին չպատուեր, զանիկա
24 ղրկող Հայրը չպատուեր։ Ճշմարիտ ճշմարիտ կ'ը-
սեմ ձեզի թէ Ան որ իմ խօսքս մտիկ կ'ընէ, և
կը հաւատայ անոր որ զիս ղրկեց՝ յաւիտենական
կեանք ունի, ու դատապարտութեան տակ չիյ-
նար, հապա մահուանէ դէպ 'ի կեանք անցած է։
25 Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ ժամանակ
պիտի գայ և ալ հիմա է, որ անատենը մեռելները
պիտի լսեն Աստուծոյ Որդւոյն ձայնը, և անոնք
26 որ կը լսեն՝ պիտի ապրին։ Վասն զի ինչպէս որ
Հայրը իր անձին մէջը կեանք ունի, անանկ ալ
Որդիին տուաւ որ իր անձին մէջը կեանք ունե-
27 նայ. Եւ դատաստան ընելու ալ իշխանութիւն
տուաւ անոր, քանզի անիկա Որդի մարդոյ է։
28 Ասոր վրայ մի զարմանաք, ինչու որ ժամանակ
պիտի գայ՝ որ բոլոր գերեզմաններու մէջ եղող-
29 ները անոր ձայնը պիտի լսեն, Ու դուրս պիտի
գան, անոնք որ բարի գործեր են՝ կենաց յա-
րութեան համար, և անոնք որ չար գործեր են՝
30 դատապարտութեան յարութեան համար։ Ես ին-
քիրմէս բան մը չեմ կրնար ընել. ինչ որ կը լսեմ՝
անանկ կը դատեմ, և իմ դատաստանս արդար է,
ինչու որ ես իմ կամքս չեմ փնտռեր, հապա *ա-
31 նոր կամքը որ զիս ղրկեց. Թէ որ ես ինծի հա-
32 մար վկայեմ, իմ վկայութիւնս ճշմարիտ չէ։ Ու-
րիշ մըն է որ ինծի համար կը վկայէ. և ես գի-
տեմ որ ճշմարիտ է այն վկայութիւնը՝ որ ինքը
33 ինծի համար վկայեց։ Դուք Յովհաննէսին ղրկե-
34 ցիք, և ինքը ճշմարտութեանը վկայեց։ Բայց ես
չէ թէ մարդոցմէ վկայութիւն կ'առնեմ, հապա

*Որ Հօրը

35 այս բաները կ'ըսեմ որ դուք փրկուիք։ Անիկա
ճրագ մըն էր որ կը վառէր ու լոյս կու տար, և
դուք քիչ մը ատեն ուզեցիք անոր լոյսովը ու-
36 րախանալ։ Բայց ես Յովհաննէսին վկայութենէն ալ
մեծ վկայութիւն ունիմ, քանզի այն գործքերը
որ Հայրը ինծի տուաւ որ անոնք կատարեմ, այն
նոյն գործքերը որ ես կը գործեմ՝ ինծի համար
37 կը վկայեն թէ Հայրը զիս խրկեց։ Ու Հայրը որ
զիս խրկեց, ինքը վկայեց ինծի համար. դուք
բնաւ անոր ձայնը չլսեցիք, ոչ ալ անոր կերպա-
38 րանքը տեսաք. Եւ ոչ անոր խօսքը ձեր մէջը
բնակած ունիք, քանզի այն որ ինքը խրկեց՝ դուք
39 անոր չէք հաւատար։ Գիրքերը քննեցէք, ինչու
որ դուք անոնցմով կը սեպէք յաւիտենական
կեանքը ունենալ, և բուն անոնք են որ ինծի
40 համար կը վկայեն. Եւ դուք չէք ուզեր ինծի գալ,
41 որ կեանք ունենաք։ Ես մարդոցմէ փառք չեմ
42 առներ։ Բայց գիտեմ ձեզ որ Աստուծոյ սէրը
43 մէջերնիդ չունիք։ Ես իմ Հօրս անունովը եկայ,
ու զիս չէք ընդունիր. թէ որ ուրիշ մէկը իր ա-
44 նունովը գայ, անիկա պիտի ընդունիք։ Դուք ին-
տո՞ր կրնաք հաւատալ, որ իրարմէ փառք կ'առ-
նէք, և այն փառքը որ մէկ Աստուծմէն է՝ չէք
45 փնտռեր։ Մի կարծէք թէ ես ձեզի համար ամ-
բաստանութիւն պիտի ընեմ Հօրը. կայ մէկը որ
ձեզի համար ամբաստանութիւն կ'ընէ, Մովսէսը՝
46 որուն դուք յուսացած էք։ Վասն զի թէ որ դուք
Մովսէսին հաւատայիք, ինծի ալ պիտի հաւա-
47 տայիք, ինչու որ անիկա ինծի համար գրեց։ Բայց
թէ որ անոր գրածներուն չէք հաւատար, իմ
խօսքերուս ինտո՞ր պիտի հաւատաք։

ԳԼ. Զ

1 Այս բաներէն ետքը Յիսուս Գալիլեայի՝ այսինքն

2 Տիբերիայի ծովուն անդին կողմը գնաց։ Եւ անոր
ետևէն շատ ժողովուրդ կ'երթար, ինչու որ կը
տեսնէին այն հրաշքները որ հիւանդներուն վրայ
3 կ'ընէր։ Եւ Յիսուս լեռը ելաւ, ու հոն նստաւ իր
4 աշակերտներուն հետ մէկտեղ։ Եւ Հրէից զատկի
տօնը մօտ էր։
5 Յիսուս երբոր իր աչքերը վեր վերցուց ու տեսաւ
որ շատ ժողովուրդ կու գար իրեն, ըսաւ Փիլիպ-
պոսին, Ուսկի՞ց հաց ծախու առնենք որ ասոնք
6 ուտեն։ (Եւ աս կ'ըսէր զանիկա փորձելու համար,
7 քանզի ինքը գիտէր ինչ պիտի ընէր։) Փիլիպպոս
պատասխան տուաւ անոր, Երկու հարիւր դահե-
կանի հաց ասոնց հերիք չէ, որ ամէն մէկը
8 քիչ մը առնէ։ Իր աշակերտներէն մէկը՝ Սիմոն
9 Պետրոսին եղբայրը Անդրէաս ըսաւ իրեն, Հոս
մէկ պատանի մը կայ, որ հինգ գարեղէն հաց ու
երկու ձուկ ունի, բայց անոնք ի՞նչ պիտի ըլլան
10 այդչափ մարդոց։ Իսկ Յիսուս ըսաւ, Նստեցու-
ցէք այս մարդիկը. և այն տեղը շատ խոտ կար,
ու մարդիկը նստան թուով հինգ հազարի չափ։
11 Եւ Յիսուս հացերը առաւ ու գոհացաւ, և աշա-
կերտներուն բաժնեց, աշակերտներն ալ նստող-
ներուն, նոյնպէս ալ ձուկերէն՝ որչափ որ ուզե-
12 ցին։ Ու երբոր կշտացան, ըսաւ իր աշակերտնե-
րուն, Ժողվեցէք աւելցած կտորուանքները՝ որ
13 բան մը չկորսուի։ Ուստի ժողվեցին, և տաս-
ուերկու կողով լեցուցին այն հինգ գարեղէն հա-
ցերէն մնացած կտորուանքները, որ ուտողներէն
14 աւելցաւ։ Իսկ մարդիկը երբոր Յիսուսի ըրած
հրաշքը տեսան, կ'ըսէին թէ Ասիկա է ճշմարտա-
15 պէս այն մարգարէն որ աշխարհ պիտի գար։ Եւ
Յիսուս գիտնալով որ պիտի գան զինքը յափշտա-
կեն՝ որ զինքը թագաւոր ընեն, նորէն մինակ
16 լեռը գնաց։ Ու երբոր իրիկուն եղաւ՝ իր աշա-
17 կերտները ծովեզերքը իջան. Եւ նաւը մտնելով

ծովուն անդիի կողմը Կափառնայում կ'երթային.
և արդէն մութը կոխեր էր, ու Յիսուս դեռ ի-
18 րենց եկած չէր։ Ծովն ալ հովին սաստիկ փչելէն
19 տակնուվրայ կ'ըլլար։ Ու երբոր թի քաշելով քը-
սանըհինգ կամ երեսուն ասպարէզի չափ գացին,
տեսան Յիսուսը որ ծովուն վրայէն քալելով՝ նա-
20 ւուն կը մօտենար, ու վախցան։ Բայց ինքը ըսաւ
21 անոնց, Ես եմ, մի վախնաք։ Անատենը ուզեցին
զանիկա նաւը առնել. և շուտ մը նաւը ան եր-
կիրը հասաւ՝ ուր որ կ'երթային։
22 Հետեւեալ օրը ժողովուրդը որ ծովուն անդիի
կողմն էր, և տեսեր էր որ ուրիշ նաւակ չկար
հոն ան մէկէն 'ի զատ՝ որուն մէջ անոր աշա-
կերտները մտեր էին, և որ Յիսուս իր աշակերտ-
ներուն հետ նաւակը մտած չէր, հապա մինակ ա-
23 նոր աշակերտները գացեր էին։ (Բայց Տիբերիա-
յէն ուրիշ նաւակներ եկան ան տեղին մօտ՝ ուր
24 որ Տէրոջը գոհանալովը հացը կերեր էին.) Անա-
տենը ժողովուրդը տեսնելով թէ ոչ Յիսուս հոն
է, ոչ ալ անոր աշակերտները, իրենք ալ նաւերը
մտան ու եկան Կափառնայում Յիսուսը փնտռե-
25 լու։ Ու երբոր անիկա ծովուն անդիի կողմը գը-
տան, ըսին անոր, Ռաբբի, ե՞րբ եկար դուն հոս։
26 Յիսուս պատասխան տուաւ անոնց և ըսաւ, Ճշմա-
րիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Դուք զիս կը փընտ-
ռէք՝ չէ թէ անոր համար որ հրաշքներ տեսաք,
հապա անոր համար որ հացերէն կերաք ու կըշ-
27 տացաք։ Գոնէ՛՝ գործեցէք՝ չէ թէ կորստական
կերակուրին համար, հապա ան կերակուրին հա-
մար որ յաւիտենական կենաց մէջ կը մնայ, որ
զանիկա Որդին մարդոյ ձեզի պիտի տայ. ինչու
28 որ Հայրն Աստուած զանիկա կնքեց։ Անատենը ը-
սին անոր, Ի՞նչ ընենք որ Աստուծոյ գործքերը
29 գործենք։ Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ
անոնց, Աս է Աստուծոյ գործը, որ անոր խրկա-

30 ծին հաւատաք։ Ըսին անոր, Բայց դուն ի՞նչ նը-
շան կ'ընես որ տեսնենք ու քեզի հաւատանք.
31 ի՞նչ կը գործես։ Մեր հայրերը անապատին մէջ
մանանան կերան, ինչոր որ գրուած է, Երկին-
32 քէն հաց տուաւ անոնց որ ուտեն։ Եւ Յիսուս ը-
սաւ անոնց, Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ
Մովսէս չտուաւ ձեզի երկնաւոր հացը, բայց իմ
Հայրս կու տայ ձեզի ճշմարիտ երկնաւոր հացը։
33 Ինչու որ Աստուծմէ տըրուած հացը ան է որ եր-
կինքէն կ'իջնէ, ու աշխարհիս կեանք կու տայ։
34 Ուստի ըսին անոր, Տէր, ամէն ատեն աս հացը
35 մեզի տուր։ Եւ Յիսուս ըսաւ անոնց, Ես եմ կե-
նաց հացը. ան որ ինծի կու գայ՝ երբէք պիտի
չանօթենայ, և ան որ ինծի կը հաւատայ՝ պիտի
36 չծարաւի։ Բայց ես ձեզի ըսի որ դուք զիս տե-
37 սաք ալ՝ ու չէք հաւատար։ Ան ամէնը որ Հայրը
ինծի կու տայ՝ ինծի պիտի գայ, և ան որ ինծի
38 կու գայ՝ բնաւ դուրս պիտի չհանեմ։ Ինչու որ
ես երկինքէն իջայ՝ չէ թէ իմ կամքս ընելու,
39 հապա անոր կամքը՝ որ զիս խրկեց։ Եւ զիս խըր-
կող Հօրը կամքը աս է որ ան ամէնը որ ինքը
ինծի տուաւ՝ չկորսընցընեմ անկէ, հապա անոր
40 յարութիւն առնել տամ վերջին օրը։ Քանզի զիս
խրկողին կամքը աս է, որ ան ամէնը որ կը տես-
նէ Որդին և կը հաւատայ անոր, յաւիտենական
կեանք ունենայ. ես ալ անոր յարութիւն առ-
նել տամ վերջին օրը։
41 Ուստի Հրէաները տրտունջ կ'ընէին իրեն հա-
մար, ինչու որ ըսաւ թէ Ես եմ երկինքէն իջած
42 հացը. Եւ կ'ըսէին, Ասիկա Յովսէփի որդին Յի-
սուսը չէ՞, որուն հայրը ու մայրը մենք կը ճանչ-
նանք. ուրեմն ի՞նչպէս կ'ըսէ ասիկա թէ Ես եր-
43 կինքէն իջայ։ Պատասխան տուաւ Յիսուս ու ը-
44 սաւ անոնց, Տրտունջ մի ընէք մէջերնիդ։ Մէկը
չկրնար ինծի գալ, թէ որ զիս խրկող Հայրը զա-

Նիկա չքաշէ. ու ես անոր յարութիւն տանիլ
45 պիտի տամ վերջին օրը։ Մարգարէից մէջ գրուած
է, Եւ ամէնքն ալ Աստուծմէ սորված պիտի ըլ-
լան. ան ամէնը որ Հօրմէն կը լսէ ու կը սորվի՝
46 ինծի կու գայ։ Չէ թէ մէկը Հայրը տեսած է՝ ե-
թէ ոչ ան որ Աստուծմէ է, անիկա Հայրը տե-
47 սած է։ Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ Ան
որ ինծի կը հաւատայ՝ յաւիտենական կեանք ու-
48 նի։ Ես եմ կենաց հացը։ (49) Ձեր հայրերը անա-
50 պատին մէջ մանանան կերան՝ ու մեռան. Աս է
ան հացը որ երկինքէն կ'իջնէ, որ եթէ մէկը անկէ
51 ուտէ՝ պիտի չմեռնի։ Ես եմ կենդանի հացը որ
52 երկինքէն իջայ։ Թէ որ մէկը աս հացէն ուտէ՝
յաւիտեան պիտի ապրի. և ան հացը որ ես պի-
տի տամ՝ իմ մարմինս է, որ ես պիտի տամ աշ-
խարհիս կենացը համար։
53 Ասոր վրայ Հրէաները իրարու հետ կը վիճէին
ու կ'ըսէին, Ինտո՞ր կրնայ ասիկա իր մարմինը մե-
54 զի տալ ուտելու։ Իսկ Յիսուս ըսաւ անոնց, Ճըշ-
մարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, թէ որ Որդւոյ
մարդոյ մարմինը չուտէք և անոր արիւնը չխմէք,
55 ձեր անձերուն մէջը կեանք չէք ունենար։ Ով որ
իմ մարմինս ուտէ և իմ արիւնս խմէ, յաւիտե-
նական կեանք կ'ունենայ, ու ես անոր յարու-
56 թիւն տանիլ պիտի տամ վերջին օրը։ Ինչու որ
իմ մարմինս ճշմարիտ կերակուր է, և իմ արիւնս
57 ճշմարիտ ըմպելիք է։ Ան որ իմ մարմինս կ'ուտէ
և իմ արիւնս կը խմէ, անիկա իմ ներսի դիս կը
58 բնակի՝ ու ես անոր ներսի դին։ Ինչպէս որ կեն-
դանի Հայրը զիս խրկեց, ու ես կենդանի եմ Հօրը
ձեռքովը, այնպէս ալ ան որ զիս կ'ուտէ, ինքն
59 ալ իմ ձեռքովս կենդանի կը մնայ։ Աս է ան հացը
որ երկինքէն իջած է. չէ թէ ինտոր որ հայրեր-
նիդ մանանան կերան՝ ու մեռան. ով որ աս հացը
ուտէ՝ յաւիտեան պիտի ապրի։

60 Աս բաները գրուցեց ժողովարանին մէջը՝ երբոր
Կափառնայումի մէջ կը սորվեցնէր։
61 Ու աշակերտներէն շատերը երբոր լսեցին՝ ը-
սին, Խիստ է աս խօսքը, ո՞վ կրնայ ատոր մտիկ
62 ընել։ Յիսուս երբոր ինքնիրենը հասկցաւ որ իր
աշակերտները ան բանին համար տրտունջ կ'ը-
նեն, ըսաւ անոնց, Ասիկա ձեզ կը գայթակղե-
63 ցընէ՞։ Հապա ի՞նչ պիտի ըսէք, թէ որ տեսնէք
Որդին մարդոյ որ ելլէ ուր տեղ որ առաջ էր։
64 Հոգին է կենդանի ընողը, մարմինը շահ մը չըներ,
ան խօսքերը որ ես ձեզի *կը խօսիմ՝ հոգի ու
65 կեանք են։ Բայց ձեր մէջէն կան ոմանք որ չեն
հաւատար. Ինչու որ Յիսուս սկիզբէն գիտէր թէ
ով են անոնք որ չեն հաւատար, և ով է ան որ
66 զինքը պիտի մատնէ։ Ու կ'ըսէր, Ասոր համար
ձեզի ըսի որ մէկը չկրնար ինծի գալ, թէ որ իմ
Հօրմէս տրուած չըլլայ անոր։
67 Աս պատճառով իր աշակերտներուն շատերը
68 ետ գացին, և ալ իր հետը չէին պտըտեր։ Անա-
տենը Յիսուս տասուերկուքին ըսաւ, Միթէ դուք
69 ալ կ'ուզե՞ք երթալ։ Սիմոն Պետրոս պատասխան
տուաւ անոր, Տէր, որո՞ւ պիտի երթանք, դուն
70 յաւիտենական կենաց խօսքեր ունիս. Եւ մենք
հաւատացինք ու գիտցանք թէ դուն ես Քրիս-
71 տոսը †Աստուծոյ Որդին։ Յիսուս պատասխան
տուաւ անոնց, Ես ձեզ տասուերկուքդ չընտրե-
72 ցի՞, ու ձեզմէ ալ մէկը սատանայ է։ Աս կ'ըսէր
Իսկարիովտացի Սիմոնեան Յուդային համար, ին-
չու որ անիկա էր որ զինքը պիտի մատնէր, ու
տասուերկուքէն մէկն էր։

*Ոմանք+ խօսեցայ
†Ոմանք+ կենդանի Աստուծոյ

ԳԼ. Է

1 Եւ աս բաներէն ետև Յիսուս Գալիլեայի մէջ կը
պտըտէր, ինչու որ չէր ուզեր Հրէաստանի մէջ
պտըտիլ, վասն զի Հրէաները զինքը սպաննել
կ'ուզէին։
2 Եւ Հրէաներուն տաղաւարահարաց տօնը մօտ
3 էր։ Ուստի իր եղբայրները ըսին իրեն, Ելիր աս-
կէ ու Հրէաստան գնա, որ քու աշակերտներդ
4 ալ տեսնեն քու գործքերդ որ կ'ընես։ Ինչու որ
մէկը չկայ որ ծածկաբար բան մը ընէ, և ինքը
յայտնի ըլլալ ուզէ։ Թէ որ դուն աս բաները
5 կ'ընես, ինքզինքդ աշխարհին յայտնէ։ Քանզի իր
6 եղբայրներն ալ չէին հաւատար իրեն։ Իսկ Յի-
սուս ըսաւ անոնց, Իմ ժամանակս դեռ հասած
7 չէ, բայց ձեր ժամանակը միշտ պատրաստ է։ Աշ-
խարհ ձեզ չկրնար ատել, բայց զիս կ'ատէ, ինչու
որ ես անոր վրայով կը վկայեմ թէ իր գործ-
8 քերը չար են։ Դուք ելէք աս տօնիս. ես [դեռ]
չեմ ելլեր աս տօնիս, ինչու որ իմ ժամանակս
9 դեռ լցուած չէ։ Աս ըսելով անոնց՝ ինքը Գալիլ-
10 եա մնաց։ Բայց երբոր իր եղբայրները ելան, նա-
քը ինքն ալ ելաւ տօնին, չէ թէ յայտնի՝ հապա
գաղտուկ կերպով մը։
11 Եւ Հրէաները տօնին ատենը կը փնտռէին զինքը
12 ու կ'ըսէին, Ո՞ւր է անիկա։ Եւ ժողովուրդին մէջ
շատ շշնջիւն կար անոր վրայով. ոմանք կ'ըսէին
թէ Աղէկ մարդ է. ուրիշները կ'ըսէին, Չէ, հապա
13 ժողովուրդը կը մոլորցնէ։ Սակայն մէկը անոր
վրայով համարձակ չէր խօսեր Հրէաներուն վա-
խէն։
14 Իսկ երբոր տօնը կէս եղաւ, Յիսուս տաճարը
15 ելաւ ու կը սորվեցընէր։ Եւ Հրէաները կը զար-
մանային ու կ'ըսէին, Ինտո՞ր ասիկա գիրքերը

16 գիտէ, որ սորված չէ։ Յիսուս պատասխան տուաւ
անոնց ու ըսաւ, Իմ վարդապետութիւնս իմս
17 չէ, հապա զիս ղրկողինն է։ Թէ որ մէկը կ'ուզէ
անոր կամքը ընել, պիտի գիտնայ աս վարդա-
պետութեանս համար թէ արդեօք Աստուծմէ՞ է՝
18 թէ ես ինքիրմես կը խօսիմ։ Ան որ ինքիրմէն կը
խօսի՝ իր անձին փառքը կը փնտռէ, բայց ան որ
զինքը ղրկողին փառքը կը փնտռէ, անիկա ճըշ-
մարիտ է, և անոր քովը անիրաւութիւն չկայ։
19 Մովսէս չտուա՞ւ ձեզի օրէնքը, ու ձեզմէ մէկն
20 ալ չպահեր օրէնքը։ Ինչո՞ւ կը փնտռէք զիս ըս-
պաննել. պատասխան տուաւ ժողովուրդը ու ը-
սաւ, Դև կայ քու ներսդ. ո՞վ քեզ կը փնտռէ
21 սպաննել։ Պատասխան տուաւ Յիսուս և ըսաւ
անոնց, Մէկ գործ մը գործեցի, ու ամէնքդ ալ
22 զարմացեր էք։Արդ Մովսէս ձեզի թլփատութիւնը
տուաւ, (որ չէ թէ Մովսեսէն էր՝ հապա Նախ-
նիքներէն,) ու շաբաթ օրը մարդ կը թլփատէք.
23 թէ որ շաբաթ օրը մարդ թլփատութիւն կ'առ-
նէ՝ որ Մովսեսին օրէնքը չքակուի, ինծի կը բար-
կանա՞ք որ ես շաբաթ օրը ամբողջ մարդ մը ըը-
24 ժշկեցի։ Աչքի երևցածին պէս դատաստան մի ը-
նէք, հապա արդար դատաստան ըրէք։
25 Անատենը Երուսաղեմացիներէն ոմանք կ'ըսէին,
26 Ասիկա ան չէ՞ որն որ կը փնտռեն սպաննել. Եւ
ահա յայտնի կը խօսի, ու բան մը չեն ըսեր ա-
նոր. միթէ իշխանները գիտցա՞ծ են թէ ասիկա
27 ճշմարտապէս Քրիստոսն է։ Սակայն մենք ասիկա
գիտենք ուսկից է, բայց Քրիստոս երբոր գայ,
28 մէկը չգիտեր ուսկից է։ Եւ Յիսուս քանի որ
կը սորվեցընէր, տաճարին մէջ աղաղակեց ըսե-
լով, Իս ալ գիտէք, և ուսկից ըլլալս ալ գիտէք.
ու ես ինքիրմես եկած չեմ, հապա ան որ զիս
ղրկեց՝ ճշմարիտ է, որ անիկա դուք չէք գի-
29 տեր։ Բայց ես գիտեմ անիկա, ինչու որ ես անկէ

30 եմ, և անիկա զիս խրկեց։ Ուստի կը փնտռէին
զինքը բռնել, բայց մէկն ալ իրեն ձեռք չզար-
կաւ, ինչու որ իր ժամանակը դեռ հասած չէր։
31 Ու ժողովուրդէն շատ մարդիկ հաւատացին իրեն,
և կ'ըսէին, Քրիստոս երբոր գայ՝ ասոնցմէ աւելի
նշաննե՞ր պիտի ընէ, որչափ որ ասիկա կ'ընէ։
32 Փարիսեցիները լսեցին ժողովուրդին աս շշնջիւնը
անոր վրայով. ու փարիսեցիները և քահանայա-
պետները սպասաւորներ խրկեցին՝ որ զանիկա
33 բռնեն։ Իսկ Յիսուս *ըսաւ, Քիչ մը ժամանակ ալ
ձեզի հետ եմ, ու կ'երթամ անոր որ զիս խրկեց։
34 Իս պիտի փնտռէք ու պիտի չգտնէք, և իմ ե-
35 ղած տեղս դուք չէք կրնար գալ։ Անատենը
Հրէաները ըսին իրարու, Ո՞ւր պիտի երթայ ա-
սիկա, որ մենք զինքը պիտի չգտնենք. միթէ
†հեթանոսաց մէջ ցիրուցան եղածներո՞ւն պիտի
երթայ, և †հեթանոսներուն պիտի սորվեցընէ։
36 Ի՞նչ է ան խօսքը որ զրուցեց, Իս պիտի փընտ-
ռէք ու պիտի չգտնէք, և իմ եղած տեղս դուք
չէք կրնար գալ։
37 Տօնին վերջի մեծ օրը Յիսուս կայներ էր, կ'ա-
ղաղակէր ու կ'ըսէր, Թէ որ մէկը ծարաւ է՝ թող
38 ինծի գայ ու խմէ։ Ան որ ինծի կը հաւատայ,
ինչպէս որ գիրքը կ'ըսէ, անոր փորէն կենդանի
39 ջուրի գետեր պիտի բղխեն. Աս ըսաւ Հոգիին
համար՝ որ իրեն հաւատացողները պիտի առնէին,
վասն զի Սուրբ Հոգին տրուած չէր տակաւին, ին-
40 չու որ Յիսուս դեռ փառաւորուած չէր։ Ժողո-
վուրդէն շատ մարդիկ աս խօսքը որ լսեցին՝ կ'ը-
41 սէին, Իրաւցընէ ասիկա է մարգարէն։ Ուրիշները
կ'ըսէին, Ասիկա է Քրիստոսը. ուրիշներն ալ կ'ը-
42 սէին, Միթէ Քրիստոսը Գալիլեայէ՞ն կու գայ։ Չէ՞

*Ոմանք անոնց ըսաւ
†Յուն. Յունաց

որ գիրքը կ'ըսէ թէ Քրիստոս Դաւիթի սերուն-
դէն ու Դաւիթին եղած գեղէն Բեթլեհեմէն կու
43 գայ։ Ուստի ժողովուրդին մէջ երկպառակու-
44 թիւն եղաւ անոր համար։ Ու անոնցմէ ոմանք
ուզեցին բռնել անիկա, բայց մէկը անոր ձեռք
չզարկաւ։
45 Ու սպասաւորները նորէն եկան քահանայապետ-
ներուն և փարիսեցիներուն. ու ասոնք ըսին ա-
46 նոնց, Ինչո՞ւ անիկա հոս չբերիք։ Պատասխան
տուին սպասաւորները, Երբէք մէկը աս մարդուն
47 պէս խօսած չէ։ Անատենը փարիսեցիները պա-
տասխան տուին անոնց և ըսին, Միթէ դո՞ւք ալ
48 մոլորեցաք. Իշխաններէն կամ փարիսեցիներէն
49 մէկը հաւատա՞ց անոր։ Բայց աս ռամիկ ժողո-
50 վուրդը՝ որ օրէնքը չեն գիտեր, նզոված են։ Նի-
կոդեմոս ըսաւ անոնց, (որ առաջուց գիշեր ա-
51 տեն իրեն եկեր էր, և անոնցմէ մէկն էր,) Միթէ
մեր օրէնքը մարդ կը դատէ՞, թէ որ առաջ ան-
52 կէ բան մը չլսէ, և չգիտնայ թէ ինչ կ'ընէ։ Պա-
տասխան տուին ու ըսին անոր, Միթէ դո՞ւն ալ
Գալիլեայէն ես. քննէ ու նայէ որ Գալիլեայէն
53 մարգարէ չելլեր։ Ու ամէն մէկը իր տունը գնաց։

ԳԼ. Ը

1 Ու Յիսուս Ձիթենեաց լեռը գնաց։ (2)Ու առ-
տուանց նորէն տաճարը եկաւ, և բոլոր ժողո-
վուրդը իրեն կու գար, ու ինքը նստեր կը սոր-
3 վեցընէր անոնց։ Ու դպիրները ու փարիսեցիները
շնութեան մէջ բռնուած կնիկ մը բերին անոր,
4 ու զանիկա մէջտեղը կայնեցընելով՝ Ըսին իրեն,
Վարդապետ, աս կնիկը շնութեան մէջ աս մեղքը
5 գործած ատենը բռնուեցաւ։ Ու օրինաց մէջ
Մովսէս մեզի պատուիրեց ասանկները քարկո-
6 ծել։ Հիմա դուն ի՞նչ կ'ըսես ատոր համար։ Աս

կ'ըսէին՝ անիկա փորձելով, որ անոր վրայ ամ-
բաստանութիւն ընելու առիթ մը ունենան. բայց
Յիսուս դէպ 'ի վար ծռելով՝ մատովը գետնին
7 վրայ կը գրէր։ Սակայն երբոր վրան ինկան՝ հար-
ցընելով իրեն, վեր նայեցաւ ու ըսաւ անոնց,
Ձեզմէ անմեղ եղողը՝ առաջ անիկա թող քար
8 ձգէ անոր վրայ։ Եւ նորէն դէպ 'ի վար ծռելով՝
9 գետնին վրայ կը գրէր։ Եւ անոնք ալ լսելով ու
իրենց խղճմտանքէն յանդիմանուելով՝ մէկիկ մէ-
կիկ դուրս կ'ելլէին, ծերերէն սկսած մինչև յե-
տինները. և Յիսուս մինակ մնաց, ու կնիկը մէջ-
10 տեղը կայնած։ Եւ Յիսուս վեր նայելով ու կնի-
կէն զատ մէկը չտեսնելով՝ ըսաւ անոր, Կնիկ,
ո՞ւր են անոնք որ քու վրայովդ ամբաստանու-
11 թիւն կ'ընէին, մէկը քեզ չդատապարտե՞ց։ Եւ ա-
նիկա ըսաւ, Ոչ մէկը, Տէր. ու Յիսուս ըսաւ ա-
նոր, Ես ալ չեմ դատապարտեր քեզ. գնա ու
ասկէ ետև մեղք մի գործեր։
12 Արդ Յիսուս նորէն խօսեցաւ անոնց ու ըսաւ,
Ես եմ աշխարհի լոյսը. ան որ իմ ետևէս կու
գայ՝ խաւարի մէջ պիտի չքալէ, հապա կենաց
13 լոյսը պիտի ունենայ։ Իսկ փարիսեցիները ըսին
անոր, Դուն քու անձիդ համար կը վկայես, քու
14 վկայութիւնդ ճշմարիտ չէ։ Պատասխան տուաւ
Յիսուս ու ըսաւ անոնց, Թէև ես իմ անձիս հա-
մար վկայեմ, բայց իմ վկայութիւնս ճշմարիտ է,
ինչու որ գիտեմ ուսկից եկայ և ուր կ'երթամ.
բայց դուք չէք գիտեր ուսկից կու գամ կամ ուր
15 կ'երթամ։ Դուք մարմինին նայելով դատաստան
16 կ'ընէք, ես բնաւ մէկը չեմ դատեր. Ու թէև
դատելու ալ ըլլամ, իմ դատաստանս ճշմարիտ
է. ինչու որ ես մինակ չեմ, հապա ես՝ և Հայրը
17 որ զիս ղրկեց։ Ու ձեր օրէնքին մէջն ալ գրուած
է թէ Երկու մարդու վկայութիւնը ճշմարիտ է։
18 Ես եմ որ իմ անձիս համար կը վկայեմ, ու կը

19 վկայէ ինծի համար Հայրն ալ որ զիս ղրկեց։ Ան-
ատենը ըսին անոր, Ո՞ւր է քու Հայրդ. Յիսուս
պատասխան տուաւ, Ոչ զիս գիտէք՝ և ոչ իմ
Հայրս. թէ որ զիս գիտնայիք, իմ Հայրս ալ պի-
տի գիտնայիք։
20 Յիսուս աս խօսքերը խօսեցաւ գանձատունը՝
երբոր տաճարին մէջ կը սորվեցընէր. ու մէկը չը-
բռնեց զանիկա, ինչու որ դեռ անոր ժամանակը
հասած չէր։
21 Ետքը Յիսուս նորէն ըսաւ անոնց, Ես կ'եր-
թամ՝ ու զիս պիտի փնտռէք, և ձեր մեղացը
մէջ պիտի մեռնիք. ուր որ ես կ'երթամ, դուք
22 չէք կրնար գալ։ Անոր վրայ Հրէաները կ'ըսէին,
Միթէ ինքզինքը պիտի մեռցընէ՞, որ կ'ըսէ թէ
23 Ուր որ ես կ'երթամ, դուք չէք կրնար գալ։ Եւ
ըսաւ անոնց, Դուք վարէն էք, ես վերէն եմ.
դուք աս աշխարհէս էք, ես աս աշխարհէս չեմ.
24 Անոր համար ձեզի ըսի թէ Ձեր մեղացը մէջ պի-
տի մեռնիք, ինչու որ եթէ չհաւատաք թէ ես
25 եմ, ձեր մեղացը մէջ պիտի մեռնիք։ Անատենը
ըսին անոր, Դուն ո՞վ ես. և Յիսուս ըսաւ անոնց,
26 Ինչ որ սկիզբէն ձեզի կը խօսիմ։ Շատ բաներ ու-
նիմ ձեզի համար խօսելու և դատելու. բայց ան
որ զիս ղրկեց՝ ճշմարիտ է, և ես ինչ որ իրմէ
27 լսեցի, անիկա կը խօսիմ աշխարհիս մէջ։ Անոնք
չիմացան թէ Հօրը համար կը գրուցէր իրենց։
28 Իսկ Յիսուս ըսաւ անոնց, Երբոր Որդին մարդոյ
բարձրացընէք, անատենը պիտի գիտնաք թէ ես
եմ, ու ինքիրմէս բան մը չեմ ըներ, հապա Հայրս
ինչպէս որ ինծի սորվեցուց՝ անանկ կը խօսիմ։
29 Եւ զիս ղրկողը իմ հետս է. Հայրը զիս մինակ
չթողուց. ինչու որ ես միշտ անոր հաճելի եղած
բաները կ'ընեմ։
30 Երբոր ասոնք խօսեցաւ, շատ մարդիկ իրեն հա-
31 ւատացին։ Անատենը Յիսուս իրեն հաւատացող

Հրէաներուն ըսաւ, Թէ որ դուք իմ խօսքիս մէջ
կենաք, ճշմարտապէս իմ աշակերտներս կ'ըլլաք․
32 Եւ ճշմարտութիւնը պիտի գիտնաք, ու ան ճըշ-
33 մարտութիւնը ձեզ պիտի ազատէ։ Պատասխան
տուին իրեն, Մենք Աբրահամի սերունդ ենք, ու
երբէք մէկու մը չծառայեցինք․ դուն ինտո՞ր կ'ը-
34 սես Թէ Ազատ պիտի ըլլաք։ Յիսուս պատասխան
տուաւ անոնց, Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի
Թէ Ամէն ով որ մեղք կը գործէ, անիկա մեղքի
35 ծառայ է։ Եւ ծառան տանը մէջ յաւիտեան
36 չմնար, բայց որդին յաւիտեան կը մնայ։ Ուստի
Թէ որ Որդին ձեզ ազատ ընէ, ճշմարտապէս ազատ
37 պիտի ըլլաք։ Գիտեմ որ Աբրահամի սերունդ էք,
բայց կը փնտռէք զիս մեռցընել, ինչու որ իմ
38 խօսքս ձեր ներսի դին տեղ չունի։ Ես ինչ որ տեսայ
իմ Հօրս քովը՝ ան կը խօսիմ․ և դուք ալ ինչ որ
39 տեսաք ձեր հօրը քովը՝ ան կ'ընէք։ Պատասխան
տուին ու ըսին անոր, Մեր հայրը Աբրահամն է․
ըսաւ անոնց Յիսուս, Թէ որ Աբրահամի որդիք
ըլլայիք, Աբրահամին գործքերը պիտի գործէիք։
40 Բայց հիմա կը փնտռէք սպաննել զիս, անանկ
մարդ մը՝ որ ձեզի ճշմարտութիւն խօսեցայ, որն
որ Աստուծմէ լսեցի․ Աբրահամ աս բանը չըրաւ։
41 Դուք ձեր հօրը գործքերը կ'ընէք․ անատենը ը-
սին անոր, Մենք պոռնկութենէ չենք ծնած,
42 մենք մէկ Հայր մը ունինք՝ որ է Աստուած։ Յի-
սուս ըսաւ անոնց, Թէ որ Աստուած ձեր Հայրը
ըլլար, պիտի սիրէիք զիս․ ինչու որ ես Աստուծմէ
ելայ ու եկայ․ և չէ թէ ես ինքիրմէս եկայ, հա-
43 պա անիկա զիս խրկեց։ Ինչո՞ւ դուք իմ զրուց-
ուածքս չէք հասկընար․ անոր համար որ չէք
44 կրնար իմ խօսքս մտիկ ընել։ Դուք ձեր հօրմէն
Սատանայէն էք, ու ձեր հօրը բաղձանքը կ'ու-
զէք ընել․ անիկա սկիզբէն հետէ մարդասպան
էր, և ճշմարտութեան մէջ չկեցաւ, ինչու որ ա-

նոր ներսի դին ճշմարտութիւն չկայ․ երբոր ա-
նիկա ստութիւն խօսի՝ իրեններէն կը խօսի,
45 քանզի անիկա ստախօս է և անոր հայրը։ Բայց
որովհետև ես ճշմարտութիւն կը խօսիմ, ինծի
46 չէք հաւտար։ Ձեզմէ ո՞վ կրնայ զիս յանդիմա-
նել մեղքի համար․ իսկ թէ որ ես ճշմարտութիւն
47 կը խօսիմ, ինչո՞ւ ինծի չէք հաւտար։ Ան որ
Աստուծմէ է՝ Աստուծոյ խօսքերը մտիկ կ'ընէ․
դուք անոր համար մտիկ չէք ըներ, որ Աս-
48 տուծմէ չէք։ Պատասխան տուին Հրէաները ու
ըսին անոր, Աղէկ չե՞նք ըսեր մենք թէ դուն
49 Սամարացի ես, ու դև կայ քու ներսդ։ Յիսուս
պատասխան տուաւ և ըսաւ, Իմ ներսս դև չկայ,
հապա ես իմ Հայրս կը պատուեմ, և դուք զիս
50 կ'անարգէք։ Իսկ ես իմ փառքս չեմ փնտռեր․
51 կայ մէկը որ կը փնտռէ ու կը դատէ։ Ճշմարիտ
ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, թէ որ մէկը իմ խօսքս
52 պահէ, յաւիտեան մահ պիտի չտեսնէ։ Անատենը
Հրէաները ըսին անոր, Հիմա գիտցանք որ քու
ներսդ դև կայ․ Աբրահամ մեռաւ՝ ու մարգարէ-
ները, և դուն կ'ըսես, թէ որ մէկը իմ խօսքս
պահէ՝ յաւիտեան մահուան համը պիտի չառնէ։
53 Միթէ դուն աւելի՞ մեծ ես մեր հայր Աբրահա-
մէն որ մեռաւ, ու մարգարէներն ալ մեռան․
54 դուն քեզ ո՞վ կ'ընես։ Յիսուս պատասխան տը-
ւաւ, Թէ որ ես ինքզինքս փառաւորեմ, իմ
փառքս բան մը չէ․ իմ Հայրս է որ զիս կը փա-
ռաւորէ, որուն համար դուք կ'ըսէք թէ *Մեր
55 Աստուածն է․ Եւ անիկա չէք ճանչնար, բայց ես
գիտեմ անիկա․ ու թէ որ ըսեմ թէ անիկա չեմ
գիտեր, ձեզի պէս ստախօս պիտի ըլլամ․ հապա
ես գիտեմ անիկա, և անոր խօսքը կը պահեմ։
56 Ձեր հայրը Աբրահամ ցանկացաւ իմ օրս տես-

---

*Ոմանք ձեր

57 նելու, ու տեսաւ և ուրախացաւ։ Իսկ Հրէաները
ըսին անոր, Դեռ յիսուն տարեկան
58 չես, Աբրահա՞մն ալ տեսար։ Յիսուս ըսաւ անոնց,
Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Աբրահամին ըլ-
59 լալէն առաջ եմ ես։ Անոնք քարեր վերցու-
ցին որ անոր վրայ նետեն. բայց Յիսուս ծած-
կուեցաւ անոնց աչքէն, և անոնց մէջէն անցնե-
լով՝ տաճարէն դուրս ելաւ, ու այսպէս գնաց։

ԳԼ. Թ

1 Ու երբոր կ'անցնէր՝ մէկ մարդ մը տեսաւ կոյր
2 ծնած. Եւ իր աշակերտները հարցուցին իրեն ու
ըսին, Ռաբբի, որո՞ւնն է մեղքը, ասո՞ր թէ իր
3 ծնողացը, որ անիկա կոյր ծնաւ։ Պատասխան
տուաւ Յիսուս, Ոչ ատոր է մեղքը, ոչ ալ իր
ծնողացը, հապա որ Աստուծոյ գործքերը ատոր
4 վրայ յայտնի ըլլան։ Քանի որ ցորեկ է, պէտք է
որ զիս ղրկողին գործքերը գործեմ. գիշերը կու-
5 գայ որ անատենը մէկը չկրնար գործել։ Քանի որ
6 ես աշխարհի մէջ եմ, աշխարհի լոյսն եմ։ Երբոր
աս ըսաւ՝ թուքաւ գետինը և թուքովը կաւ շի-
նեց, ու այն կաւը կոյրին աչքերուն վրայ ծեփեց։
7 Եւ ըսաւ անոր, Գնա՛ լուացուէ Սիլովամի աւա-
զանին մէջ, (որ Ղրկուած կը թարգմանուի.) ասո-
տի գնաց ու լուացուեցաւ, եկաւ ու կը տեսնէր։
8 Իսկ դրացիները և անոնք որ առաջուց տեսած
էին զանիկա որ *կոյր էր, կ'ըսէին, Ասիկա չէ՞
որ կը նստէր և կը մուրար. ոմանք կ'ըսէին, Ա-
9 նիկա է. Ուրիշները կ'ըսէին, Անոր նման մէկն է.
10 է։ Ինքը կ'ըսէր թէ Ես եմ։ Ուստի ըսին իրեն,
11 Հապա ինչպէ՞ս բացուեցան քու աչքերդ։ Ինքը
պատասխան տուաւ ու ըսաւ, Յիսուս կոչուած

*Ոմանք մուրացկան

մարդ մը կաւ շինեց ու աչքերս ծեփեց, և ըսաւ
ինծի, Գնա Սիլովամի աւազանը ու լուացուէ. ես
12 ալ գացի՝ լուացուեցայ ու կը տեսնեմ։ Եւ ըսին
իրեն, Ո՞ւր է անիկա. ըսաւ անոնց, Չեմ գիտեր։
13 Փարիսեցիներուն տարին զանիկա որ առաջ
14 կոյր էր։ Եւ շաբաթ օր էր երբոր Յիսուս կաւը
15 շինեց, ու անոր աչքերը բացաւ։ Նորէն փարիսե-
ցիներն ալ կը հարցնէին իրեն, թէ ինչպէս կը
տեսնէ. անիկա ալ ըսաւ անոնց, Կաւ դրաւ աչ-
քերուս վրայ, ու լուացուեցայ և կը տեսնեմ։
16 Ասոր վրայ փարիսեցիներէն ոմանք կ'ըսէին, Այն
մարդը Աստուծմէ չէ, ինչու որ շաբաթ օրը չպա-
հեր. ուրիշները կ'ըսէին, Ինչպէ՞ս կրնայ մեղաւոր
մարդ մը ասանկ հրաշքներ ընել. ու մէջերնին
17 երկպառակութիւն կար։ Նորէն ըսին կոյրին, Դուն
ի՞նչ կ'ըսես անոր համար՝ որ քու աչքերդ բա-
18 ցաւ. ան ալ ըսաւ թէ Մարգարէ մըն է։ Իսկ
Հրէաները չէին հաւատար անոր համար՝ թէ կոյր
էր ու բացուեցաւ, մինչև որ ան աչքը բացուա-
19 ծին ծնողքը կանչեցին. Եւ անոնց հարցուցին ու
ըսին, Ա՞ս է ձեր որդին, որուն համար դուք կ'ը-
սէք թէ կոյր ծնաւ. հապա հիմա ինչպէ՞ս կը տես-
20 նէ։ Անոր ծնողքը պատասխան տուին անոնց ու
ըսին, Գիտենք որ ասիկա է մեր որդին, և որ
21 ինքը կոյր ծնաւ. Բայց հիմա ինչպէ՛ս կը տեսնէ՝
չենք գիտեր, կամ թէ ո՛վ բացաւ ատոր աչքերը՝
մենք չենք գիտեր. ինքը չափահաս է, իրեն հար-
22 ցուցէք. թող ինքը խօսի իրեն համար։ Աս ըսին
անոր ծնողքը՝ Հրէաներէն վախնալնուն համար,
քանզի Հրէաները միաբան հաւանութեամբ որո-
շեր էին որ եթէ մէկը զանիկա Քրիստոս դաւա-
23 նի, ժողովարանէն դուրս ձգուի։ Ասոր համար
անոր ծնողքը ըսին թէ ինքը չափահաս է, իրեն
24 հարցուցէք։ Ետքը նորէն կանչեցին ան մարդը որ
կոյր էր, ու ըսին անոր, Աստուծոյ փառք տուր,

25 մենք գիտենք որ ան մարդը մեղաւոր է։ Անիկա
ալ պատասխան տուաւ ու ըսաւ, Թէ որ մեղա-
ւոր է՝ ես չեմ գիտեր. միայն աս գիտեմ որ կոյր
26 էի և հիմա կը տեսնեմ։ Նորէն ըսին անոր, Ի՞նչ
27 ըրաւ քեզի, քու աչքերդ ինտո՞ր բացաւ։ Պա-
տասխան տուաւ անոնց, Հիմա ըսի ձեզի ու չլսե-
ցիք. ինչո՞ւ համար նորէն լսել կ'ուզէք. միթէ
28 դո՞ւք ալ կ'ուզէք անոր աշակերտ ըլլալ։ Անոնք
նախատելով զանիկա ըսին, Դուն ես անոր աշա-
կերտը, իսկ մենք Մովսէսի աշակերտներն ենք։
29 Մենք գիտենք որ Աստուած Մովսէսի հետ խօ-
սեցաւ, բայց ասիկա չենք գիտեր թէ ուսկից է։
30 Պատասխան տուաւ մարդը և ըսաւ անոնց, Ա-
սիկա է զարմանալու բանը՝ որ դուք չէք գի-
տեր թէ ուսկից է, և անիկա իմ աչքերս բա-
31 ցաւ։ Գիտենք որ Աստուած մեղաւորներուն մտիկ
չըներ, բայց թէ որ մէկը աստուածապաշտ ըլլայ
32 ու անոր կամքը կատարէ, անոր մտիկ կ'ընէ։ Աշ-
խարհիս սկիզբէն 'ի վեր լսուած չէ որ մարդ մը
33 կոյր ծնածի մը աչքերը բացած է։ Թէ որ Աս-
տուծմէ չըլլար ան մարդը՝ բան մըն ալ չէր կըր-
34 նար ընել։ Պատասխան տուին և ըսին անոր,
Դուն բոլորովին մեղաց մէջ ծնած ես, ու մեզի
վարդապետութի՞ւն կ'ընես. և դուրս ըրին ա-
նիկա։
35 Յիսուս լսեց որ զանիկա դուրս ըրին, ու երբոր
գտաւ զանիկա՝ ըսաւ անոր, Դուն կը հաւատա՞ս
36 Աստուծոյ Որդիին։ Անիկա պատասխան տուաւ
37 ու ըսաւ, Տէր, ո՞վ է՝ որ հաւատամ անոր։ Ու
Յիսուս ըսաւ անոր, Տեսար ալ անիկա, և քեզի
38 հետ խօսողը ան է։ Անիկա ալ ըսաւ, Կը հաւա-
39 տամ, Տէր. ու անոր երկրպագութիւն ըրաւ։ Ու
Յիսուս ըսաւ, Ես դատաստանի համար եկայ աս
աշխարհս, որ չտեսնողները տեսնեն և տեսնող-
ները կ'ուրանան։

40 Ու փարիսեցիներէն ոմանք որ իր հետը էին,
աս բաները լսելով՝ ըսին իրեն, Միթէ մե՞նք ալ
41 կոյր ենք։ Յիսուս ըսաւ անոնց, Թէ որ կոյր ըլ-
լայիք՝ դուք մեղք չէիք ունենար, բայց հիմա
կ'ըսէք թէ կը տեսնենք, ատոր համար ձեր մեղքը
ձեր վրայ կը մնայ։

ԳԼ. Ժ

1 Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Ան որ դռնէն
չմտներ ոչխարներուն բակը, հապա ուրիշ տեղէն
2 կ'ելլէ, անիկա գող ու աւազակ է։ Բայց ան որ
դռնէն կը մտնէ, անիկա ոչխարներուն հովիւն է։
3 Դռնապանը կը բանայ անոր, և ոչխարները անոր
ձայնին կը լսեն, ու իր ոչխարները անունովին կը
4 կանչէ, և դուրս կը հանէ զանոնք։ Ու երբոր իր
ոչխարները կը հանէ, անոնց առջևէն կ'երթայ,
ու ոչխարները իր ետևէն կ'երթան, ինչու որ ա-
5 նոր ձայնը կը ճանչնան։ Սակայն օտարի ետևէ
չեն երթար, հապա անկէ կը փախչին, ինչու որ
օտարներուն ձայնը չեն ճանչնար։
6 Յիսուս աս առակը ըսաւ անոնց, բայց անոնք
7 չէին իմանար թէ ինչ էր որ իրենց կը խօսէր։ Ու
Յիսուս նորէն ըսաւ անոնց, Ճշմարիտ ճշմարիտ
8 կ'ըսեմ ձեզի, Ես եմ ոչխարներուն դուռը։ Ամէն
անոնք որ ինծմէ առաջ եկան՝ գող ու աւազակ
9 էին, բայց անոնց չլսեցին ոչխարները։ Ես եմ
դուռը. թէ որ մէկը ինծմէ ներս մտնէ՝ պիտի
փրկուի, ու պիտի մտնէ ու ելլէ և արօտ գտնէ։
10 Գողը չգար, միայն թէ գողնալու և սպաննելու ու
կորսնցընելու համար. ես եկայ որ կեանք ունե-
11 նան, և ալ աւելի ունենան։ Ես եմ բարի հովի-
ւը. բարի հովիւը իր կեանքը ոչխարներուն հա-
12 մար կը դնէ։ Բայց վարձկանը որ հովիւ չէ ու ոչ-
խարները իրը չեն, երբոր կը տեսնէ գայլը որ կու

գայ, կը թողու ոչխարները ու կը փախչի. և գայլը
կը յափշտակէ ոչխարները ու զանոնք կը ցրուէ։
13 Ու վարձկանը կը փախչի, ինչու որ վարձկան է ու
14 իր հոգը չէ ոչխարներուն համար։ Ես եմ բարի
հովիւը, և կը ճանչնամ իմիններս ու կը ճանչ-
15 ցուիմ իմիններէս։ Ինչպէս որ Հայրը զիս կը ճանչ-
նայ, ես ալ Հայրը կը ճանչնամ, ու իմ կեանքս
16 ոչխարներուն համար կը դնեմ։ Ուրիշ ոչխարներ
ալ ունիմ՝ որոնք աս բակէն չեն. անոնք ալ
պէտք է որ բերեմ, ու իմ ձայնիս պիտի լսեն,
17 և պիտի ըլլան մէկ հօտ ու մէկ հովիւ։ Անոր հա-
մար իմ Հայրս զիս կը սիրէ, որ ես իմ կեանքս
18 կը դնեմ, որ նորէն առնեմ անիկա։ Մէկը չհա-
ներ անիկա ինծմէ, հապա ես կը դնեմ անիկա
ինքիրմէս. իշխանութիւն ունիմ անիկա դնելու,
և իշխանութիւն ունիմ անիկա նորէն առնելու.
աս պատուէրը իմ Հօրմէս առի։
19 Նորէն երկպառակութիւն կ'ըլլար Հրեից մէջ աս
20 խօսքերուն համար։ Ու անոնցմէ շատերը կ'ըսէին,
Դև կայ ատոր ներսի դին, ու խելռած է. ինչո՞ւ
21 ատոր մտիկ կ'ընէք։ Ուրիշները կ'ըսէին, Աս խօս-
քերը դիւահարի խօսքեր չեն. միթէ դևը կրնա՞յ
կոյրերուն աչքերը բանալ։
22 Անատենը Երուսաղէմ Նաւակատիքի տօնը ե-
23 ղաւ, ու ձմեռ էր։ Ու Յիսուս կը պտըտէր տա-
24 ճարին մէջ Սողոմոնին սրահը։ Ու Հրէաները ա-
նոր չորս կողմը առին ու ըսին անոր, Մինչև ե՞րբ
մեզ տարակուսանաց մէջ կը թողուս. թէ որ
25 Քրիստոսը դուն ես՝ մեզի համարձակ ըսէ։ Յիսուս
պատասխան տուաւ անոնց, Ձեզի ըսի ու չէք
հաւատար. ան գործքերը որ ես իմ Հօրս անու-
նովը կը գործեմ՝ անոնք կը վկայեն ինծի համար։
26 Բայց դուք չէք հաւատար, ինչու որ իմ ոչխար-
27 ներէս չէք, *ինտոր որ ձեզի ըսի." Իմ ոչխարներս

*Ոմանք չունին

իմ ձայնիս կը լսեն, ես ալ անոնք կը ճանչնամ,
28 ու իմ ետևէս կու գան. Ու ես անոնց յաւիտե-
նական կեանք կու տամ, ու յաւիտեան պիտի
չկորսուին, և մէկը իմ ձեռքէս պիտի չյափշտակէ
29 զանոնք։ Իմ Հայրս որ անոնք ինծի տուաւ՝ ամենէն
մեծ է, և մէկը չկրնար իմ Հօրս ձեռքէն յափշ-
30 տակել. Ես ու Հայրը մէկ ենք։
31 Անատենը Հրէաները նորէն քարեր՚վերցուցին,
32 որ անիկա քարկոծեն։ Յիսուս պատասխան տուաւ
անոնց, Շատ բարի գործքեր ցուցուցի ձեզի իմ
Հօրմէս, անոնցմէ ո՞ր գործին համար զիս կը
33 քարկոծէք։ Հրէաները պատասխան տուին անոր՝
ըսելով, Բարի գործի համար քեզ չենք քարկո-
ծեր, հապա հայհոյութեան համար, և քանզի
դուն որ մարդ ես, ինքզինքդ Աստուած կ'ընես։
34 Յիսուս պատասխան տուաւ անոնց, Չէ՞ որ ձեր
օրէնքին մէջը գրուած է, Ես ըսի թէ դուք աստ-
35 ուածներ էք։ Թէ որ աստուածներ կ'անուանէ
զանոնք, որոնց որ Աստուծոյ խօսքը եղաւ, (ու
36 կարելի չէ որ ան գրուածը աւրուի,) Հապա ան
որ Հայրը սրբեց և աշխարհք խրկեց, դուք անոր
կ'ըսէ՞ք թէ Հայհոյութիւն կ'ընես՝ Աստուծոյ Որ-
37 դի եմ ըսելուս համար։ Թէ որ իմ Հօրս գործ-
38 քերը չեմ գործեր, ինծի մի հաւատաք. Հապա
թէ որ կը գործեմ, թէև ինծի չէք հաւատար,
գոնէ գործքերուն հաւատացէք, որ գիտնաք ու
*հաւատաք թէ Հայրը իմ մէջս է, և ես անոր
մէջ։
39 Դարձեալ կը փնտռէին զանիկա բռնել, և ա-
40 նոնց ձեռքէն ելաւ. Ու նորէն գնաց Յորդանա-
նու անդիի կողմը՝ ան տեղը, ուր որ Յովհաննէս
41 առաջուց կը մկրտէր, ու հոն կեցաւ։ Ու շատերը
եկան անոր ու կ'ըսէին, Իրաւ Յովհաննէս մէկ

*Ոմանք ճանչնաք

42 հրաշք մը չըրաւ. Բայց ինչ որ Յովհաննէս ըսաւ
անոր համար՝ ամէնը ճշմարիտ էր. և շատ մար-
դիկ հոն անոր հաւատացին։

ԳԼ. ԺԱ

1 Ու Մարիամին և անոր քրոջը Մարթային գեղէն՝
Բեթանիայէն Ղազարոս անունով մէկը հիւանդ էր։
2 Ասիկա այն Մարիամն էր որ Տէրը եղով օծեց, ու
անոր ոտքերը իր մազերովը սրբեց, որուն եղ-
3 բայրը Ղազարոս հիւանդ էր։ Ուստի իր քոյրերը
մարդ խրկեցին անոր ու ըսին, Տէր, ահա անիկա
4 որ դուն կը սիրես՝ հիւանդ է։ Յիսուս երբոր լը-
սեց՝ ըսաւ, Աս հիւանդութիւնը մահուան համար
չէ, հապա Աստուծոյ փառացը համար, որ Աս-
5 տուծոյ Որդին անով փառաւորուի։ Արդ Յիսուս
կը սիրէր Մարթան և անոր քոյրը ու Ղազարոսը։
6 Իսկ երբոր լսեց թէ հիւանդ է, եղած տեղը եր-
7 կու օր ալ կեցաւ։ Ու անկէ ետքը ըսաւ աշա-
կերտներուն, Եկէ՛ք նորէն Հրէաստան երթանք։
8 Աշակերտները իրեն ըսին, Ռաբբի, Հրէաները հի-
մա քեզ կը փնտռէին քարկոծելու, ու նորէն հո՞ն
9 կ'երթաս։ Պատասխան տուաւ Յիսուս, Չէ՞ որ
օրը տասներկու ժամ է. Թէ որ մէկը ցորեկը
քալէ՝ չսահիր, ինչու որ աս աշխարհիս լոյսը կը
10 տեսնէ. Բայց թէ որ մէկը գիշերը քալէ՝ կը սա-
11 հի, ինչու որ իր հետը լոյս չկայ։ Աս բաները ը-
սելէն ետև ըսաւ անոնց, Ղազարոս մեր բարե-
կամը քնացած է, բայց կ'երթամ որ անիկա ար-
12 թընցընեմ։ Իր աշակերտները ըսին, Տէր, թէ որ
13 քնացած է՝ պիտի առողջանայ։ Իսկ Յիսուս անոր
մեռնելուն համար կ'ըսէր, բայց անոնք կը
կարծէին թէ քուն քնանալուն համար կ'ըսէր։
14 Անատենը Յիսուս յայտնապէս ըսաւ անոնց, Ղա-
15 զարոս մեռաւ. Ու ես ուրախ եմ ձեզի համար որ

հոն չէի, որ դուք հաւատաք. բայց եկէ՛ք երթանք
16 անոր։ Թովմաս որ Երկուորեակ կ'ըսուէր՝ ըսաւ
իր աշակերտակիցներուն, Մենք ալ երթանք՝ որ
անոր հետ մեռնինք։
17 Յիսուս երբոր եկաւ, գտաւ որ անիկա արդէն
18 չորս օրուան գերեզմանը դրուած էր։ Ու Բեթա-
նիա Երուսաղեմի մօտ էր՝ տասնուհինգ ասպա-
19 րէզի չափ։ Ու Հրէաներէն շատերը Մարթային ու
Մարիամին եկած էին որ մխիթարեն զանոնք ի-
20 րենց եղբօրը համար։ Արդ երբոր լսեց Մարթա
թէ Յիսուս կու գայ, զանիկա դիմաւորելու գնաց,
21 բայց Մարիամ տանը մէջ նստեր էր։ Ու Մարթա
ըսաւ Յիսուսին, Տէր, թէ որ հոս ըլլայիր՝ իմ եղ-
22 բայրս չէր մեռներ. Բայց գիտեմ որ հիմա ալ
դուն ինչ որ խնդրես Աստուծմէ, Աստուած պի-
23 տի տայ քեզի։ Յիսուս ըսաւ անոր, Քու եղբայրդ
24 յարութիւն պիտի առնէ։ Մարթա ըսաւ ա-
նոր, Գիտեմ որ յարութեան ժամանակը՝ վերջին
25 օրը յարութիւն պիտի առնէ։ Յիսուս ըսաւ ա-
նոր, Ես եմ յարութիւնը և կեանքը. ան որ ինծի
26 կը հաւատայ, թէ և մեռնի՝ պիտի ապրի. Ու ան
ամէնը որ կենդանի է ու ինծի կը հաւատայ, յա-
ւիտեան պիտի չմեռնի. դուն կը հաւատա՞ս ա-
27 սոր։ Ըսաւ անոր, Այո, Տէր, ես հաւատացեր եմ
որ դուն ես Քրիստոսը Աստուծոյ Որդին, որ աշ-
28 խարհք գալու էիր։ Ու երբոր աս ըսաւ, գնաց
իր քոյրը Մարիամը գաղտուկ մը կանչեց՝ ըսե-
29 լով, Վարդապետը եկեր է ու քեզ կը կանչէ։ Ա-
նիկա լսածին պէս՝ շուտ մը ելաւ ու եկաւ անոր։
30 Իսկ Յիսուս դեռ գեղը եկած չէր, հապա ան
տեղն էր, ուր որ Մարթա զանիկա դիմաւորեց։
31 Բայց Հրէաները որ անոր հետ տանը մէջն էին՝ ու
կը մխիթարէին զանիկա, երբոր տեսան որ Մա-
րիամ շուտ մը ելաւ ու գնաց, իրենք ալ անոր ե-
տևէն գացին՝ ըսելով թէ Գերեզմանը կ'երթայ որ

32 հոն լայ։ Իսկ Մարիամ երբոր Յիսուսին եղած
տեղը եկաւ ու զանիկա տեսաւ, անոր ոտքը իյ-
նալով ըսաւ անոր, Տէր, թէ որ հոս ըլլայիր՝ իմ
33 եղբայրս չէր մեռներ։ Յիսուս երբոր տեսաւ զա-
նիկա որ կու լար, և անոր հետ եկող Հրէաները
որ կու լային, իր հոգւոյն մէջ հառաչեց ու խռո-
34 վեցաւ, Եւ ըսաւ, Ո՞ւր դրած էք զանիկա. ըսին
35 իրեն, Տէր, եկուր ու տես։ Յիսուս լացաւ։ (36) Ուս-
տի Հրէաները կ'ըսէին, Նայեցէք ո՛րչափ կը սիրէր
37 զանիկա։ Անոնցմէ ոմանք ալ կ'ըսէին, Ասիկա որ
կոյրին աչքերը բացաւ, չէ՞ր կրնար ընել որ աս
38 ալ չմեռնէր։ Յիսուս նորէն իր սրտին մէջ հառա-
չելով գերեզմանը կու գայ. և անիկա քարայր
39 մըն էր, ու անոր վրայ քար մը դրուած էր։ Յի-
սուս ըսաւ, Մէկդի ըրէք աս քարը. մեռելին
քոյրը Մարթա ըսաւ անոր, Տէր, արդէն հոտած
40 պիտի ըլլայ, ինչու որ չորս օրուան է։ Ըսաւ ա-
նոր Յիսուս, Քեզի չըսի՞ որ եթէ հաւատաս՝ Աս-
41 տուծոյ փառքը պիտի տեսնես։ Անատենը մէկդի
ըրին *քարը. և Յիսուս իր աչքերը վեր վերցուց
ու ըսաւ, Հայր, շնորհակալ եմ քեզմէ, որ ինծի
42 լսեցիր։ Ու ես գիտէի որ ամէնատեն ինծի կը
լսես. բայց աս բոլորտիքս կայնող ժողովուրդին
համար ըսի, որ հաւատան թէ դուն խրկեցիր
43 զիս։ Եւ աս ըսելէն ետքը՝ մեծ ձայնով մը կան-
44 չեց, Ղազարոս, դուրս եկուր։ Մեռելն ալ ելաւ՝
ոտքերը ու ձեռքերը պատանքով կապած և ե-
րեսը վարշամակով պատած. Յիսուս ըսաւ անոնց,
Արձըկեցէք զանիկա ու թողէք որ երթայ։
45 Եւ Հրէաներէն շատերը որ Մարիամին եկեր է-
ին, երբոր [Յիսուսի] ըրածը տեսան՝ հաւատացին
46 իրեն։ Բայց անոնցմէ ոմանք գացին փարիսեցի-
ներուն, ու Յիսուսի ըրածը անոնց պատմեցին։

*Ոմանք+ քարը՝ ուր պառկած էր մեռեալը

47 Ուստի քահանայապետները և փարիսեցիները
ժողով գումարեցին՝ ու ըսին, Ի՞նչ ընենք, քան-
48 զի աս մարդը շատ հրաշքներ կ'ընէ։ Թէ որ անի-
կա ասանկ թող տանք, ամէնքն ալ անոր պիտի
հաւատան, և Հռովմայեցիք պիտի գան ու մեր
49 տեղը ու ազգը պիտի վերցընեն։ Ու անոնցմէ
մէկը Կայիափա անունով՝ որ ան տարուան քահա-
նայապետն էր, ըսաւ անոնց, Դուք բան մը չէք
50 գիտեր, Եւ չէք ալ խորհիր թէ աղէկ է մեզի՝ որ
մէկ մարդ մը ժողովուրդին համար մեռնի, ու
51 բոլոր ազգը չկորսուի։ Բայց աս բանը չէ թէ ինք-
իրմէն զրուցեց, հապա ան տարուան քահանա-
յապետը ըլլալով, մարգարէացաւ թէ Յիսուս
52 ազգին համար պիտի մեռնէր. Եւ չէ թէ մինակ
ազգին համար, հապա որ Աստուծոյ ցիրուցան ե-
ղած որդիներն ալ մէկտեղ ժողվէ։
53 Ալ ան օրէն ետև խորհուրդ ըրին որ սպաննեն
54 զանիկա։ Ուստի Յիսուս անկէ ետքը համարձակ
չէր պտըտեր Հրէից մէջ, հապա անկէ անապա-
տին մօտ տեղ մը գնաց՝ մէկ քաղաք մը որուն
անունը Եփրայիմ էր, ու իր աշակերտներուն հետ
մէկտեղ հոն կը կենար։
55 Եւ Հրէից զատիկը մօտ էր, ու ան տեղէն շատ
մարդիկ զատկէն առաջ Երուսաղէմ ելան որ
56 ինքզինքնին մաքրեն։ Եւ կը փնտռէին Յիսուսը,
ու տաճարին մէջ կեցած ատեննին իրարու կ'ը-
սէին, Ձեզի ի՞նչպէս կ'երևնայ, թէ աս տօնիս
ընաւ պիտի չգա՞յ։ Իսկ քահանայապետները ու
փարիսեցիները պատուէր տուեր էին, որ եթէ
մէկը գիտնայ անոր ուր ըլլալը՝ իմացընէ, որ ա-
նիկա բռնեն։

ԳԼ. ԺԲ

1 Իսկ Յիսուս զատկէն վեց օր առաջ Բեթանիա ե-

կու, ուր էր Ղազարոս մեռեալը, որն որ Յիսուս
2 մեռելներէն յարուց։ Ու հոն անոր ընթրիք մը
ըրին, ու Մարթա սպասաւորութիւն կ'ընէր, և
Ղազարոս անոր հետ սեղան նստողներուն մէկն
3 էր։ Իսկ Մարիամ մէկ լիտր նարդոսի պատուա-
կան մեծագին եղ առնելով, Յիսուսի ոտքերը
օծեց ու իր մազերովը անոր ոտքերը սրբեց. և
տունը եղին անուշահոտութեամբը լեցուեցաւ։
4 Անատենը աշակերտներուն մէկը Իսկարիովտացի
Սիմոնեան Յուդա որ զանիկա պիտի մատնէր, ը-
5 սաւ, Ինչո՞ւ համար աս եղը չծախուեցաւ երեք
հարիւր դահեկանի, որ աղքատներուն տրուէր։
6 Աս ըսաւ՝ չէ թէ աղքատներուն համար իր հոգն
էր, հապա որ գող էր ու գանձանակը ինքը կը
7 պահէր, և ինչ որ ձգուէր՝ ինքը կը կրէր։ Իսկ
Յիսուս ըսաւ, Թող տուր ատոր. աս բանը իմ
8 թաղմանս օրուանը համար պահեց։ Վասն զի աղ-
քատները ամէն ատեն ձեր հետը ունիք, բայց
զիս ամէն ատեն չունիք։
9 Ուստի Հրէաներէն շատ ժողովուրդ անոր հոն
ըլլալը իմացան, ու եկան՝ չէ թէ մինակ Յիսուսի
համար, հապա որ Ղազարոսն ալ տեսնեն, որն
10 որ մեռելներէն յարուց։ Իսկ քահանայապետները
11 խորհուրդ ըրին որ Ղազարոսն ալ մեռցնեն. Ին-
չու որ Հրէաներէն շատերը անոր պատճառովը
կ'երթային ու կը հաւատային Յիսուսի։
12 Հետևեալ օրը շատ ժողովուրդ որ տօնին եկած
էին՝ երբոր լսեցին թէ Յիսուս Երուսաղէմ կու
13 գայ, Արմաւենիի ոստեր առին ու ելան զանիկա
դիմաւորելու, և կ'աղաղակէին, Ովսաննա, օրհ-
նեալ է Իսրայելի թագաւորը՝ որ Տէրոջը անու-
14 նովը կու գայ։ Ու Յիսուս աւանակ մը գտնելով
15 անոր վրայ նստաւ, ինչպէս որ գրուած է, Մի
վախնար, ո՛վ Սիոնի աղջիկ. ահա քու թագա-
16 ւորդ կու գայ իշու աւանակի վրայ նստած։ Ու

անոր աշակերտները առաջ չիմացան աս բաները,
բայց երբոր Յիսուս փառաւորուեցաւ, անատենը
միտքերնին բերին թէ աս բաները անոր համար
գրուած էր, և թէ իրենք աս բաները ըրին ա-
17 նոր։ Ու իր հետը եղող ժողովուրդը վկայութիւն
կու տար թէ Ղազարոսը գերեզմանէն դուրս կան-
18 չեց, ու մեռելներէն յարուց զանիկա։ Ասոր հա-
մար ալ ժողովուրդը զանիկա դիմաւորեց, վասն
19 զի լսեցին թէ անիկա աս հրաշքը ըրած էր։ Իսկ
փարիսեցիները իրարու կ'ըսէին, Կը տեսնէ՞ք որ
օգուտ մը չէք կրնար ընել. ահա բոլոր աշխարհ
անոր ետևէն գնաց։
20 Ու հոն քանի մը Յոյներ կային տօնին երկրպա-
21 գութիւն ընելու եկողներուն մէջ։ Ասոնք Փիլիպ-
պոսին եկան՝ որ Գալիլեայի Բեթսայիդայէն էր,
և կ'աղաչէին անոր ու կ'ըսէին, Տէր, կ'ուզենք
22 Յիսուսը տեսնել։ Փիլիպպոս եկաւ ու Անդրէա-
սին ըսաւ, և նորէն Անդրէաս ու Փիլիպպոս եկ-
23 ան Յիսուսի ըսին։ Յիսուս ալ պատասխան տուաւ
անոնց ու ըսաւ, Ժամանակը հասաւ որ փառա-
24 ւորուի Որդին մարդոյ։ Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ
ձեզի, Թէ որ ցորենին հատը հողին մէջ իյնալով
չմեռնի, ինքը մինակ կը մնայ. հապա թէ որ մեռ-
25 նի, շատ արդիւնք կը բերէ։ Ան որ իր անձը կը
սիրէ, պիտի կորսնցընէ զանիկա. և ան որ իր
անձը աս աշխարհիս մէջ կ'ատէ, յաւիտենական
26 կենաց համար պիտի պահէ զանիկա։ Թէ որ մէկը
ինծի կը ծառայէ, թող իմ ետևէս գայ. ու ես
ուր որ եմ, իմ ծառաս ալ հոն պիտի ըլլայ. Թէ
որ մէկը ինծի կը ծառայէ, Հայրը պիտի պատուէ
27 զանիկա։ Հիմա իմ հոգիս խռոված է, և ի՞նչ ը-
սեմ. Հայր, զիս ազատէ աս ժամէն, բայց ես ա-
28 սոր համար եկայ աս ժամին։ Հայր, փառաւորէ
քու անունդ. անատենը ձայն մը եկաւ երկին-
քէն, Փառաւորեցի ալ, ու նորէն պիտի փառա-

29 ւորեմ. Եւ ժողովուրդը որ կայներ էր ու կը
լսէր, կ'ըսէին, Որոտում կ'ըլլայ. ոմանք ալ կ'ը-
30 սէին, Հրեշտակ խօսեցաւ իրեն հետ։ Յիսուս պա-
տասխան տուաւ ու ըսաւ, Աս ձայնը ինծի համար
31 չեկաւ՝ հապա ձեզի համար. Հիմա է աս աշխար-
հիս դատաստանը, հիմա աս աշխարհիս իշխանը
32 դուրս պիտի ձգուի. Ես ալ երբոր երկրէն բարձ-
33 րանամ, ամենն ալ ինծի պիտի քաշեմ. Աս բանս
կը գրուցէր՝ իմացընելով թէ ինչ կերպ մահով
34 պիտի մեռնէր. Ժողովուրդը անոր պատասխա-
նեց, Մենք օրէնքէն լսեցինք որ Քրիստոս յա-
ւիտեան կը մնայ, և դուն ինտո՞ր կ'ըսես թէ
պէտք է Որդին մարդոյ բարձրանայ. ո՞վ է աս
35 Որդին մարդոյ։ Եւ Յիսուս անոնց ըսաւ, Քիչ մը
ատեն ալ լոյսը ձեր հետն է. քանի որ լոյսը ու-
նիք՝ քալեցէք, որ չըլլայ թէ մութը ձեր վրայ
հասնի. ինչու որ խաւարի մէջ քալողը չգիտեր
36 թէ ուր կ'երթայ. Քանի որ լոյսը ունիք, հաւա-
տացէք ան լոյսին՝ որ լուսոյ որդիք ըլլաք. Յիսուս
աս բաները գրուցեց, ու գնաց պահուեցաւ ա-
նոնցմէ.

37 Եւ թէպէտ այնքան հրաշքներ ըրած էր անոնց
38 առջևը, բայց անոնք չէին հաւատար իրեն. Որ
կատարուի Եսայի մարգարէին խօսքը՝ որ ըսաւ,
Տէր, ո՞վ հաւատաց մեր տուած լուրին, և Տէ-
39 րոջը բազուկը որո՞ւ յայտնուեցաւ. Անոր համար
չէին կրնար հաւատալ, որ դարձեալ կ'ըսէ Եսայի,
40 Անոնց աչքերը կուրցուց, և անոնց սիրտերը
թմրեցուց, որ չըլլայ թէ աչքովնին տեսնեն ու
սրտովնին իմանան և դարձի գան, ու ես անոնք
41 բժշկեմ։ Ասոնք ըսաւ Եսայի՝ երբոր տեսաւ
42 անոր փառքը, ու խօսեցաւ անոր վրայով. Այսու
ամենայնիւ իշխաններէն ալ շատերը իրեն հաւա-
տացին, բայց փարիսեցիներուն համար զանիկա
չէին դաւանէր, որ ժողովարանէն դուրս չձգուին։

43 ինչու որ մարդոց փառքը Աստուծոյ փառքէն ա-
ւելի սիրեցին.
44 Իսկ Յիսուս կ'աղաղակէր ու կ'ըսէր, Ան որ ին-
ծի կը հաւատայ՝ ինծի չհաւատար, հապա զիս
45 խրկողին. Եւ ան որ զիս կը տեսնէ, զիս խրկողը
46 կը տեսնէ. Ես լոյս եկայ աշխարհ, որ ամէն ով որ
47 ինծի հաւատայ՝ խաւարի մէջ չմնայ. Եւ թէ որ
մէկը իմ խօսքերս լսէ ու չհաւատայ, ես անիկա
չեմ դատեր, քանզի ես չեկայ որ աշխարհը դա-
48 տեմ, հապա որ աշխարհը փրկեմ. Ան որ զիս
կ'անարգէ և իմ խօսքերս չընդունիր, կայ մէկը
որ զանիկա կը դատէ. ան խօսքը որ ես խօսե-
49 ցայ, ան պիտի դատէ զանիկա վերջին օրը. Ինչու
որ ես ինքիրմէս չխօսեցայ, հապա Հայրը որ զիս
խրկեց՝ ինքը ինծի պատուիրեց ինչ որ պիտի ը-
50 սեմ՝ և ինչ որ պիտի խօսիմ։ Եւ գիտեմ որ ա-
նոր պատուիրածը յաւիտենական կեանք է. ուս-
տի ինչ որ ես կը խօսիմ, ինտոր որ Հայրը ինծի
ըսաւ, անանկ կը խօսիմ։

ԳԼ. ԺԳ

1 Զատկի տօնէն առաջ Յիսուս գիտնալով թէ իր
ժամանակը հասեր է որ աս աշխարհէս ելլէ Հօրը
քովը, սիրելով իրենները որ աշխարհի մէջ էին,
մինչև վերջն ալ սիրեց զանոնք.
2 Եւ ընթրիքը որ կ'ըլլար, (Սատանան արդէն
Իսկարիովտացի Սիմոնեան Յուդային սրտին մէջը
3 դրեր էր, որ զանիկա մատնէ.) Յիսուս գիտնա-
լով թէ Հայրը ամէն բան իր ձեռքը տուաւ, և
թէ ինքը Աստուծմէ ելաւ ու Աստուծոյ քովը
4 կ'երթայ, Ընթրիքէն ելաւ, և հանդերձները մէկ-
դի դրաւ ու ղենջակ մը առնելով մէջքը փաթ-
5 թեց. Ետքը կոնքին մէջ ջուր լեցուց, ու սկսաւ
աշակերտներուն ոտքերը լուալ, և ան իր փաթ-

6 Թուած ղենջակովը սրբել։ Ուստի եկաւ Սիմոն
Պետրոսին. ան ալ ըսաւ անոր, Տէր, դո՞ւն իմ
7 ոտքերս պիտի լուաս։ Յիսուս պատասխան տուաւ
ու ըսաւ անոր, Ես ինչ որ կ'ընեմ՝ դուն հիմա
8 չես իմանար, հապա ետքը պիտի իմանաս։ Պետ-
րոս ըսաւ անոր, Բնաւ դուն իմ ոտքերս պիտի
չլուաս. պատասխան տուաւ անոր Յիսուս, Թէ
որ քեզ չլուամ, դուն ինծի հետ բաժին չունիս։
9 Սիմոն Պետրոս ըսաւ անոր, Տէր, չէ թէ մինակ
10 ոտքերս, հապա նաև ձեռքերս ու գլուխս։ Յի-
սուս ըսաւ անոր, Լուացուածին՝ ոտքերը լուա-
լէն 'ի զատ ուրիշ բան պէտք չէ, այլ բոլորովին
մաքուր է. և դուք մաքուր էք, բայց չէ թէ
11 ամէնքդ։ Վասն զի գիտէր զանիկա որ զինքը պի-
տի մատնէր. անոր համար ըսաւ, Չէ թէ ամէնքդ
12 ալ մաքուր էք։ Ու երբոր անոնց ոտքերը լուաց,
և իր հանդերձները առնելով նորէն սեղան նըս-
13 տաւ, ըսաւ անոնց, Գիտէ՞ք ինչ ըրի ձեզի։ Դուք
զիս Վարդապետ ու Տէր կը կոչէք, և աղէկ կ'ը-
14 սէք, ինչու որ այնպէս եմ։ Հապա թէ որ ես
Տէրս ու Վարդապետս ձեր ոտքերը լուացի, պէտք
15 է որ դուք ալ իրարու ոտքերը լուաք։ Վասն զի
ձեզի մէկ օրինակ մը տուի, որ ինտոր ես ձեզի
16 ըրի՝ դուք ալ ընէք։ Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ
ձեզի, Ծառան իր տիրոջմէն մեծ չէ, ոչ ալ ղըր-
17 կուածը զինքը ղրկողէն մեծ է։ Եթէ դուք աս
բաները գիտէք, երանելի էք՝ թէ որ զանոնք կա-
18 տարէք։ Չէ թէ ձեր ամենուն համար կ'ըսեմ,
Վասն զի ես կը ճանչնամ անոնք որ ես ընտրեցի,
հապա որ ան գրուածը կատարուի թէ Ան որ իմ
հետս հաց կ'ուտէր, ինծի դէմ կրունկ վերցուց։
19 Հիմակուընէ կ'ըսեմ ձեզի՝ քանի որ չէ եղեր, որ
20 երբոր ըլլայ՝ հաւատաք թէ ես ան եմ։ Ճշմարիտ
ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Ով որ կ'ընդունի անի-
կա որ ես կը ղրկեմ, զիս կ'ընդունի. և ով որ

զիս կ'ընդունի, զիս ղրկողը կ'ընդունի։
21 Յիսուս երբոր աս ըսաւ, իր հոգիին մէջ խռո-
վեցաւ, և վկայեց ըսելով, Ճշմարիտ ճշմարիտ
կ'ըսեմ ձեզի, որ ձեզմէ մէկը զիս պիտի մատնէ։
22 Ուստի աշակերտները տարակուսած իրարու կը
23 նայէին թէ որու համար կը գրուցէ։ Ու աշա-
կերտներէն մէկը կար Յիսուսի *ծոցը նստած, որն
24 որ Յիսուս կը սիրէր։ Ու Սիմոն Պետրոս անոր
աչք կ'ընէր հարցընելու թէ ո՞վ պիտի ըլլայ անի-
25 կա՝ որուն համար կը գրուցէ։ Ան ալ Յիսուսի
կուրծքին վրայ իյնալով՝ ըսաւ անոր, Տէր, ո՞վ
26 է ան։ Յիսուս պատասխան տուաւ, Անիկա է՝ ո-
րուն որ պատառը թրջելով կուտամ. և թրջե-
լով պատառը Իսկարիովտացի Սիմոնեան Յուդա-
27 յին տուաւ։ Ու պատառէն ետքը Սատանան ա-
նոր ներսը մտաւ։ Ու Յիսուս ըսաւ անոր, Ինչ
28 որ պիտի ընես՝ շուտով ըրէ։ Բայց աս բանը սե-
ղան նստողներէն մէկը չհասկըցաւ, թէ ինչու
29 համար ըսաւ անոր։ Վասն զի ոմանք կը խորհէին
թէ, որովհետև գանձանակը Յուդան կը պահէր,
Յիսուս անոր կ'ըսէր, Ծախու առ ինչ որ մեզի
աս տօնիս պէտք է, կամ՝ որ աղքատներուն բան
30 մը տայ։ Անիկա ալ պատառը առածին պէս շուտ
մը դուրս ելաւ, ու գիշեր էր։
31 Ու երբոր անիկա դուրս ելաւ, Յիսուս ըսաւ,
Հիմա փառաւորուեցաւ Որդին մարդոյ, ու Աստ-
32 ուած փառաւորուեցաւ անով. Թէ որ Աստուած
անով փառաւորուեցաւ, Աստուած ալ անիկա իր
անձովը պիտի փառաւորէ, և շուտով պիտի փա-
33 ռաւորէ զանիկա։ Որդեակք, քիչ մը ատեն ալ
ձեզի հետ եմ. զիս պիտի փնտռէք. և ինչպէս որ
Հրեաներուն ըսի թէ Ուր որ ես կ'երթամ՝ դուք
34 չէք կրնար գալ, հիմա ձեզի ալ կ'ըսեմ։ Նոր

---

*Յուն. գոգը

պատուիրան մը կու տամ ձեզի որ մէկզմէկ սի-
րէք, ինչպէս որ ես ձեզ սիրեցի, որ դուք ալ
35 մէկզմէկ սիրէք։ Ասով ամէնը պիտի գիտնան թէ
իմ աշակերտներս էք, թէ որ իրարու վրայ սէր
36 ունենաք։ Սիմոն Պետրոս ըսաւ անոր, Տէր, ո՞ւր
կ'երթաս. Յիսուս պատասխան տուաւ անոր, Ուր
որ ես կ'երթամ, դուն հիմա չես կրնար իմ ե-
տեւէս գալ, բայց ետքը պիտի գաս իմ ետեւէս։
37 Պետրոս ըսաւ անոր, Տէր, ինչո՞ւ հիմա չեմ կըր-
նար քու ետեւէդ գալ. ես իմ կեանքս ալ քեզի
38 համար պիտի դնեմ։ Յիսուս պատասխան տուաւ
անոր, Քու կեա՞նքդ պիտի դնես ինծի համար.
ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ քեզի, Հաւը պիտի չըր-
խօսի՝ մինչեւ որ դուն երեք անգամ զիս ուրա-
նաս։

ԳԼ. ԺԴ

1 Սրտերնիդ չխռովի. Աստուծոյ հաւատացէք,
2 ինծի ալ հաւատացէք։ Իմ Հօրս տունը շատ բնա-
կարաններ կան. ապա թէ ոչ ես ձեզի պիտի ը-
սէի։ Հիմա կ'երթամ ու ձեզի տեղ կը պատրաս-
3 տեմ։ Ու թէ որ երթամ ու ձեզի տեղ պատ-
րաստեմ, նորէն կու գամ և ձեզ քովս կ'առ-
նեմ, որպէս զի ուր որ ես եմ՝ դուք ալ հոն ըլ-
4 լաք։ Ու ուր որ ես կ'երթամ՝ գիտէք, ու ճամ-
բան ալ գիտէք։
5 Թովմաս ըսաւ անոր, Տէր, չենք գիտեր ուր
կ'երթաս, և ի՞նչպէս կրնանք ճամբան գիտնալ։
6 Յիսուս ըսաւ անոր, Ես եմ ճամբան ու ճշմար-
տութիւնը և կեանքը. մէկը Հօրը քով չգար՝ ե-
7 թէ ոչ ինծմով։ Թէ որ զիս ճանչնայիք՝ իմ Հայրս
ալ կը ճանչնայիք, և ասկէ ետեւ կը ճանչնաք ա-
նիկա ու տեսաք անիկա։
8 Փիլիպպոս ըսաւ անոր, Տէր, Հայրը մեզի ցու-

9 ցուր, ու հերիք է մեզի։ Ըսաւ անոր Յիսուս,
Այսքան ժամանակ ձեզի հետ եմ, և զիս չճանչ-
ցար, Փիլիպպոս. ան որ զիս տեսաւ՝ Հայրը տե-
սաւ, և դուն ինտո՞ր կ'ըսես թէ Հայրը մեզի ցու-
10 ցուր։ Չե՞ս հաւատար թէ ես Հօրը մէջն եմ ու
Հայրը իմ մէջս է. այն խօսքերը որ ես ձեզի կը
խօսիմ, չէ թէ ինքիրմէս կը խօսիմ, հապա Հայրը
որ իմ մէջս բնակած է, անիկա կը գործէ այն
11 գործքերը։ Հաւատացէք ինծի, թէ ես Հօրը մէջն
եմ ու Հայրը իմ մէջս է. ապա թէ ոչ գոնէ
12 գործքերուն համար ինծի հաւատացէք։ Ճշմարիտ
ճշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ Ան որ ինծի կը հա-
ւատայ, այն գործքերը որ ես կը գործեմ, ինքն
ալ պիտի գործէ, և անոնցմէ աւելի մեծ գործեր
պիտի գործէ, ինչու որ ես Հօրս քովը կ'երթամ։
13 Ու իմ անունովս ինչ որ խնդրէք, պիտի կատա-
րեմ անիկա, որ Հայրը Որդիովը փառաւորուի.
14 Թէ որ իմ անունովս բան մը խնդրէք, անիկա պի-
15 տի կատարեմ։ Թէ որ զիս կը սիրէք, իմ պատ-
16 ուիրանքներս պահեցէք։ Ես ալ Հօրը պիտի ա-
ղաչեմ, և ուրիշ Մխիթարիչ մը պիտի տայ ձե-
17 զի, որ յաւիտեան ձեզի հետ բնակի, Ճշմարտու-
թեան Հոգին, որ աս աշխարհս անիկա չկրնար
ընդունիլ, ինչու որ չտեսներ անիկա ու չճանչ-
նար անիկա. բայց դուք կը ճանչնաք անիկա, ին-
չու որ ձեր քովը կը բնակի և ձեր մէջը պիտի ըլ-
18 լայ։ Ձեզ որբ չեմ թողուր, կու գամ ձեզի։
19 Քիչ մը ատենէն ետեւ՝ աս աշխարհս զիս չտեսներ,
բայց դուք պիտի տեսնէք զիս, ինչու որ ես կեն-
20 դանի եմ, և դուք կենդանի պիտի ըլլաք։ Ան
օրը պիտի գիտնաք թէ ես իմ Հօրս մէջն եմ, և
21 դուք իմ մէջս, ես ալ ձեր մէջը։ Ան որ իմ
պատուէրներս կը բռնէ ու կը պահէ անոնք, ա-
նիկա է զիս սիրողը. և ան որ զիս կը սիրէ՝ իմ
Հօրմէս պիտի սիրուի. ու ես անիկա պիտի սի-

սիրեմ, և ինքզինքս անոր պիտի յայտնեմ։
22 Ըսաւ անոր Յուդա, (ոչ Իսկարիովտացին,) Տէ՛ր,
ի՞նչպէս կ'ըլլայ որ դուն ինքզինքդ մեզի պիտի
23 յայտնես՝ և ոչ թէ աշխարհին։ Յիսուս պատաս-
խան տուաւ ու ըսաւ անոր, Թէ որ մէկը զիս կը
սիրէ՝ իմ խօսքս պիտի պահէ. ու իմ Հայրս զա-
նիկա պիտի սիրէ, և անոր պիտի գանք ու անոր
24 քովը օթևան պիտի ընենք։ Ան որ զիս չսիրեր,
իմ խօսքերս չպահեր. ու ան խօսքը որ կը լսէք՝
25 իմս չէ, հապա Հօրը՝ որ զիս ղրկեց։ Աս բաները
26 ձեզի խօսեցայ՝ քանի որ ձեր քովն եմ։ Բայց
Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին՝ որ Հայրը իմ անու-
նովս պիտի ղրկէ, անիկա ձեզի բոլորը պիտի սոր-
վեցնէ, և ինչ որ ձեզի ըսի՝ միտքերնիդ պի-
27 տի բերէ։ Խաղաղութիւն կը թողում ձեզի, իմ
խաղաղութիւնս կու տամ ձեզի. չէ թէ ինչպէս
որ աշխարհս կու տայ՝ ես ձեզի կու տամ. սիր-
28 տերնիդ չխռովի ու չվախնայ։ Լսեցիք որ ես ըսի
ձեզի թէ կ'երթամ ու ձեզի կու գամ. թէ որ
զիս սիրէիք՝ պիտի ուրախանայիք, *թէ ես Հօրը
քով կ'երթամ, ինչու որ իմ Հայրս ինծմէ մեծ
29 է։ Ու հիմակուց դեռ չեղած ըսի ձեզի, որ երբոր
30 ըլլայ՝ հաւատաք։ Ալ ձեր հետը շատ պիտի չխօ-
սիմ, ինչու որ աս աշխարհիս իշխանը կու գայ, և
31 իմ վրաս բան մը չունի. Միայն թէ աշխարհս
գիտնայ որ ես Հայրը կը սիրեմ, ու ինչպէս որ
Հայրը ինծի պատուիրեց, անանկ կ'ընեմ. Ելէ՛ք
ասկէ երթանք։

ԳԼ. ԺԵ

1 Ես եմ ճշմարիտ որթը, և իմ Հայրս մշակն է։
2 Ամէն ճիւղ որ իմ վրաս է ու պտուղ չբերեր՝ կը

*Բնա. որ ըսի թէ

կտրէ զանիկա. և ամէնը որ պտուղ կը բերէ՝
կը մաքրէ զանիկա, որ ալ աւելի պտուղ բե-
3 րէ։ Դուք հիմակուընէ մաքուր էք ան խօսքով՝
4 որ ձեզի խօսեր եմ։ Իմ մէջս կեցէք՝ ու ես ձեր
մէջը. ինչպէս որ ճիւղը չկրնար ինքիրմէն պտուղ
բերել, թէ որ որթին վրայ հաստատուած չըլլայ,
նոյնպէս ալ դուք չէք կրնար, թէ որ իմ վրաս
5 հաստատուած չըլլաք։ Ես որթն եմ — դուք
ճիւղերն էք. ան որ իմ վրաս հաստատուած է՝
և ես անոր վրայ, անիկա շատ պտուղ կը բերէ,
ինչու որ առանց ինծի բան մը չէք կրնար ընել։
6 Թէ որ մէկը իմ վրաս հաստատուած չէ, անիկա
ճիւղի մը պէս դուրս ձգուած ու չորցած է. և
կը ժողվեն զանոնք ու կրակը կը նետեն, ու կ'այ-
7 րին։ Թէ որ դուք իմ մէջս կենաք՝ և իմ խօս-
քերս ալ ձեր մէջը կենան, ինչ որ ուզէք՝ պիտի
8 խնդրէք, ու պիտի ըլլայ ձեզի։ Ասով իմ Հայրս
փառաւորուեցաւ, որ դուք շատ պտուղ բերէք,
ու իմ աշակերտներս ըլլաք։
9 Ինչպէս որ Հայրը զիս սիրեց, ես ալ ձեզ սի-
10 րեցի. իմ սիրոյս մէջ հաստատ կեցէք։ Թէ որ իմ
պատուէրներս պահէք, իմ սիրոյս մէջը պի-
տի կենաք, ինչպէս որ ես իմ Հօրս պատուէր-
ները պահեցի, և անոր սիրոյն մէջը կեցեր եմ։
11 Աս բաները ձեզի խօսեցայ որ իմ ուրախութիւնս
ձեր մէջը մնայ, ու ձեր ուրախութիւնը լման ըլ-
12 լայ։ Աս է իմ պատուէրս որ մէկզմէկ սիրէք,
13 ինչպէս որ ես ձեզ սիրեցի։ Ասկէ աւելի մեծ սէր
մէկը չկրնար ունենալ, որ մէկը իր կեանքը բա-
14 րեկամներուն համար դնէ։ Դուք իմ բարեկամ-
ներս էք, թէ որ ընելու ըլլաք ինչ որ ես ձեզի
15 կը պատուիրեմ։ Ասկէ ետքը ձեզ ծառայ չեմ
անուաներ, ինչու որ ծառան չգիտեր իր տէրը
ինչ կ'ընէ. հապա ես ձեզ բարեկամ անուանեցի,
ինչու որ ան ամէն բաները որ իմ Հօրմէս լսեցի՝

16 ձեզի իմացուցի։ Չէ թէ դուք զիս ընտրեցիք,
հապա ես ձեզ ընտրեցի, ու դրի ձեզ որ դուք
երթաք և պտուղ բերէք, ու ձեր պտուղը մնայ.
որպէս զի իմ անունովս ինչ որ Հօրմէն խնդրէք,
17 ձեզի տայ։ Աս կը պատուիրեմ ձեզի որ մէկզմէկ
սիրէք։
18 Թէ որ աշխարհ ձեզ կ'ատէ, գիտցէք որ ձեզ-
19 մէ առաջ զիս ատեց։ Թէ որ աշխարհէս եղած
ըլլայիք, աշխարհ իրենները կը սիրէր. բայց որով-
հետև աշխարհէ չէք՝ հապա ես ձեզ աշխարհէն
ընտրեցի, անոր համար աշխարհ ձեզ կ'ատէ։
20 Միտքերնիդ բերէք ան խօսքը որ ձեզի ըսի թէ
Ծառան իր տիրոջմէն մեծ չէ. Թէ որ զիս հալա-
ծեցին, ձեզ ալ պիտի հալածեն. Թէ որ իմ խօսքս
21 պահեցին, ձերն ալ պիտի պահեն։ Բայց աս ա-
մէն բաները պիտի ընեն ձեզի իմ անուանս հա-
մար, ինչու որ չճանչցան անիկա որ զիս խրկեց։
22 Թէ որ ես եկած և անոնց խօսած չըլլայի, անոնք
մեղք չէին ունենար. բայց հիմա իրենց մեղքին
23 պատճառանք մը չունին։ Ան որ զիս կ'ատէ, իմ
24 Հայրս ալ կ'ատէ։ Թէ որ ան գործքերը իրենց
մէջը ըրած չըլլայի, որոնք ուրիշ մէկը չէ ըրած,
անոնք մեղք չէին ունենար. բայց հիմա տեսան,
25 ու ատեցին զիս ալ, իմ Հայրս ալ։ Սակայն աս ե-
ղաւ որ կատարուի ան խօսքը որ իրենց օրինացը
26 մէջ գրուած է թէ Զուր տեղը զիս ատեցին։ Բայց
երբոր Մխիթարիչը գայ՝ որ ես Հօրմէն ձեզի պի-
տի խրկեմ, ան ճշմարտութեան Հոգին՝ որ Հօր-
27 մէն կ'ելլէ, անիկա ինծի համար պիտի վկայէ. Եւ
դուք ալ կը վկայէք, ինչու որ սկիզբէն 'ի վեր
իմ հետս էք։

ԳԼ. ԺԶ

1 Աս բաները ձեզի խօսեցայ որ չգայթակղիք։
2 Իրենց ժողովարաններէն դուրս պիտի ձգեն ձեզ.

ու ժամանակ ալ պիտի գայ որ ամէն ով որ ձեզ
սպաննէ, անանկ պիտի սեպէ թէ Աստուծոյ պաշ-
3 տօն կը մատուցանէ։ Եւ աս բաները ըսել պիտի
ընեն՝ անոր համար որ ոչ Հայրը ճանչցան՝ ոչ ալ
4 զիս։ Բայց աս բաները ձեզի խօսեցայ որ երբ
ժամանակը գայ՝ միտքերնիդ բերէք թէ ես ըսի
ձեզի. և աս բաները սկիզբէն չըսի ձեզի, ինչու
որ ես հետերնիդ էի։
5 Սակայն հիմա ես կ'երթամ զիս խրկողին քովը,
և ձեզմէ մէկն ալ չհարցըներ ինծի թէ Ո՞ւր կ'եր-
6 թաս։ Բայց որովհետև աս բաները ձեզի խօսե-
7 ցայ, ձեր սիրտերը տրտմութիւնով լեցաւ։ Բայց
ես ճշմարիտը կ'ըսեմ ձեզի, աղէկ է ձեզի թէ որ
ես երթամ. քանզի թէ որ ես չերթամ, Մխի-
թարիչը ձեզի չգար. հապա թէ որ երթամ, ա-
8 նիկա ձեզի կը խրկեմ։ Եւ ինքը երբոր գայ՝ աշ-
խարհը պիտի յանդիմանէ մեղքի համար և ար-
դարութեան համար ու դատաստանի համար։
9 Մեղքի համար՝ որ ինծի չեն հաւատար. (10) Ար-
դարութեան համար՝ որ ես իմ Հօրս քով կ'եր-
11 թամ, և ալ զիս չէք տեսներ. Եւ դատաստանի
համար՝ որ աս աշխարհիս իշխանը դատապարտ-
12 ուած է։ Ձեզի տակաւին շատ բաներ ունիմ ը-
13 սելու, բայց հիմա չէք կրնար տանիլ. Իսկ երբոր
ինքը՝ ճշմարտութեան Հոգին գայ, ամէն ճշմար-
տութեան պիտի առաջնորդէ ձեզի, ինչու որ չէ
թէ ինքիրմէն պիտի խօսի, հապա ինչ որ լսէ՝ ան
պիտի խօսի ու գալիքները ձեզի պիտի պատմէ։
14 Անիկա զիս պիտի փառաւորէ, ինչու որ իմինէս
15 պիտի առնէ ու ձեզի պատմէ։ Ան ամէն բաները
որ Հայրը ունի՝ իմս է. անոր համար ձեզի ըսի թէ
16 իմինէս պիտի առնէ ու ձեզի պատմէ։ Քիչ մը ա-
տենէն՝ ալ զիս պիտի չտեսնէք, և դարձեալ քիչ
մը ատենէն զիս պիտի տեսնէք, քանզի ես Հօրը
կ'երթամ։

17 Ասոր համար աշակերտներէն ոմանք իրարու կ'ը-
սէին, Ի՞նչ է աս որ մեզի կ'ըսէ թէ Քիչ մը ա-
տենէն՝ ալ զիս պիտի չտեսնէք, և դարձեալ քիչ
մը ատենէն զիս պիտի տեսնէք. և Քանզի ես Հօրը
18 կ'երթամ։ Ու կ'ըսէին, Ի՞նչ պիտի ըլլայ այն Քիչ
մըն ալը՝ որ կ'ըսէ. չենք գիտեր ինչ կը զրուցէ։
19 Իսկ Յիսուս գիտնալով որ կ'ուզեն իրեն հարցը-
նել, ըսաւ անոնց, Ասո՞ր համար իրարու կը հար-
ցընէք, որ ըսի թէ Քիչ մը ատենէն՝ ալ զիս պի-
տի չտեսնէք, և դարձեալ քիչ մը ատենէն զիս
20 պիտի տեսնէք։ Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի,
դուք պիտի լաք ու ողբաք, բայց աշխարհս պի-
տի ուրախանայ. դուք պիտի տրտմիք, սակայն
ձեր տրտմութիւնը ուրախութեան պիտի փոխ-
21 ուի։ Կնիկ մը երբոր ծնանելու վրայ է՝ տրտմու-
թիւն կ'ունենայ, ինչու որ իր ժամը հասած է.
բայց երբոր տղան ծնանի, ալ նեղութիւնը միտք
չբերեր ուրախութենէն՝ որ աշխարհ մարդ մը
22 ծնաւ։ Ու յիրաւի դուք հիմա տրտմութիւն ու-
նիք. բայց ես ձեզ նորէն պիտի տեսնեմ, և ձեր
սիրտերը ուրախ պիտի ըլլան, ու ձեր ուրախու-
23 թիւնը մէկը ձեզմէ պիտի չհանէ։ Ու այն օրը ին-
ծի բան մը պիտի չհարցընէք. Ճշմարիտ ճշմարիտ
կ'ըսեմ ձեզի, որ իմ անունովս ինչ որ խնդրէք
24 Հօրմէն, պիտի տայ ձեզի։ Մինչև հիմա իմ ա-
նունովս բան մը չխնդրեցիք. խնդրեցէք ու պիտի
25 առնէք, որ ձեր ուրախութիւնը լման ըլլայ։ Աս
բաները առակներով խօսեցայ ձեզի. բայց ժամա-
նակ պիտի գայ, որ ալ ձեզի առակներով պիտի
չխօսիմ, հապա յայտնապէս Հօրը վրայով պիտի
26 պատմեմ ձեզի։ Այն օրը իմ անունովս պիտի
խնդրէք. և չեմ ըսեր ձեզի թէ ես ձեզի համար
27 պիտի աղաչեմ Հօրը. ինչու որ ինքը Հայրը ձեզ
կը սիրէ, վասն զի դուք զիս սիրեցիք և հաւա-
28 տացիք թէ ես Աստուծմէ ելայ։ Հօրմէն ելայ ու

աշխարհ եկայ. նորէն կը թողում աշխարհը և
Հօրը կ'երթամ։
29 Ըսին անոր իր աշակերտները, Ահա հիմա յայտ-
30 նապէս կը խօսիս, և առակ մըն ալ չես ըսեր. Հի-
մա իմացանք որ ամէն բանը գիտես, և բան մըն
ալ պէտք չէ որ մէկը քեզի հարցընէ. ասով կը
31 հաւատանք որ Աստուծմէ ելար։ Յիսուս պատաս-
խան տուաւ անոնց ու ըսաւ, Հիմա կը հաւա-
32 տա՞ք. Ահա ժամանակ պիտի գայ, ու եկած ալ
է, որ ցիրուցան պիտի ըլլաք ամէն մէկը իր տե-
ղը, ու զիս մինակ պիտի թողուք. բայց ես մի-
33 նակ չեմ, ինչու որ Հայրը իմ հետս է։ Աս բա-
ները ձեզի խօսեցայ, որ ինծմով խաղաղութիւն
ունենաք. աշխարհի մէջ նեղութիւն պիտի ունե-
նաք, բայց քաջասիրտ եղէք. ես աշխարհին յաղ-
թեցի։

ԳԼ. ԺԷ

1 Յիսուս երբոր ասոնք խօսեցաւ, իր աչքերը դէպ
'ի երկինքը վերցուց ու ըսաւ, Հայր, ժամանակը
հասեր է, փառաւորէ քու Որդիդ, որ քու Որ-
2 դիդ ալ քեզ փառաւորէ. ինչպէս որ իրեն իշ-
խանութիւն տուիր ամէն մարմնոյ վրայ, որ յա-
ւիտենական կեանք տայ այն ամենուն որ իրեն
3 տուիր։ Ու աս է յաւիտենական կեանքը, որ ճանչ-
նան քեզ մի միայն ճշմարիտ Աստուածդ, ու Յի-
4 սուս Քրիստոսը՝ որն որ դուն ղրկեցիր։ Ես քեզ
երկրիս վրայ փառաւորեցի, այն գործը որ ինծի
5 տուիր ընելու՝ լմնցուցի։ Ու հիմա, ով Հայր,
փառաւորէ զիս քու քովդ այն փառքովը՝ որ աշ-
6 խարհի ըլլալէն առաջ քովդ ունէի։ Քու անունդ
յայտնի ըրի այն մարդոցը՝ որոնք որ աշխարհէն
ինծի տուիր. քուկդ էին, ու ինծի տուիր ա-
7 նոնք, և քու խօսքդ պահեցին։ Հիմա գիտցան

Թէ ան ամէն բաները որ ինծի տուիր՝ քեզմէ են.
8 ինչու որ ան խօսքերը որ ինծի տուիր, ես ա-
նոնց տուի, անոնք ալ ընդունեցին, և ճշմար-
տութեամբ իմացան որ ես քեզմէ ելայ, ու հա-
9 ւատացին թէ դուն խրկեցիր զիս։ Ես անոնց հա-
մար կ'աղաչեմ. չէ թէ աշխարհի համար կ'աղա-
չեմ, հապա անոնց համար որոնք դուն ինծի
10 տուիր, ինչու որ քուկդ են անոնք։ Եւ ինչ որ
իմս է՝ ան բոլորը քուկդ է, և ինչ որ քուկդ է՝
ան իմս է, ու ես անոնցմով փառաւորուած եմ։
11 Եւ ես՝ ալ աշխարհի մէջ չեմ, բայց անոնք աշ-
խարհի մէջ են, ու ես քեզի կու գամ. ով Սուրբ
Հայր, քու անունովդ պահէ անոնք որ դուն ին-
ծի տուիր, որպէս զի մէկ ըլլան, ինչպէս որ մենք
12 մէկ ենք։ Քանի որ աշխարհի մէջ անոնց հետ էի,
ես կը պահէի անոնք քու անունովդ. որոնք որ
դուն ինծի տուիր՝ ես պահեցի, և անոնցմէ մէկը
չկորսուեցաւ, միայն թէ ան կորստեան որդին,
13 որ գրուածը կատարուի։ Ալ հիմա քեզի կու գամ,
ու աշխարհի մէջ աս բաները կը խօսիմ, որ իմ
ուրախութիւնս իրենց անձերուն մէջ կատարեալ
14 ունենան։ Ես քու խօսքդ անոնց տուի, ու աշ-
խարհս անոնք ատեց. ինչու որ աշխարհէ չեն,
15 ինչպէս որ ես աշխարհէ չեմ։ Չեմ աղաչեր որ
անոնք աշխարհէն վերցընես, հապա որ անոնք
16 չարէն պահես։ Անոնք աշխարհէ չեն, ինչպէս որ
17 ես աշխարհէ չեմ։ Սրբէ անոնք քու ճշմարտու-
18 թիւնովդ. քու խօսքդ ճշմարտութիւն է։ Ինչ-
պէս որ դուն զիս աշխարհք խրկեցիր, ես ալ ա-
19 նոնք աշխարհք խրկեցի։ Եւ անոնց համար ես իմ
անձս կը սրբեմ, որ իրենք ալ ճշմարտութիւնով
20 սրբացած ըլլան։ Բայց չէ թէ միայն անոնց հա-
մար կ'աղաչեմ, հապա անոնց խօսքովը բոլոր
21 ինծի հաւատացողներուն համար ալ. Որ ամէնն
ալ մէկ ըլլան, ինչպէս որ դուն, ով Հայր, իմ

մէջս՝ ու ես քու մէջդ, որ անոնք ալ մեր մէջը
մէկ ըլլան, որպէս զի աշխարհս հաւատայ թէ դուն
22 խրկեցիր զիս։ Եւ ան փառքը որ դուն ինծի տը-
ւիր՝ ես անոնց տուի, որ մէկ ըլլան՝ ինչպէս որ
23 մենք մէկ ենք. (Ես անոնց մէջ՝ և դուն իմ
մէջս,) որ իրենք կատարեալ ըլլան միութեան
մէջ. ու աշխարհս գիտնայ թէ դուն խրկեցիր
զիս, ու սիրեցիր անոնք՝ ինչպէս որ զիս սիրե-
24 ցիր։ Ով Հայր, անոնք որ դուն ինծի տուիր,
կ'ուզեմ որ ուր որ ես եմ՝ անոնք ալ իմ հետս
ըլլան, որպէս զի տեսնեն իմ փառքս որն որ ին-
ծի տուիր. ինչու որ դուն զիս սիրեցիր աշխար-
25 հիս սկիզբէն առաջ։ Ով արդար Հայր, աշխարհս
քեզ չճանչցաւ, բայց ես քեզ ճանչցայ, և ասոնք
26 ճանչցան թէ դուն զիս խրկեցիր։ Եւ քու անունդ
անոնց ճանչցուցի, ու պիտի ճանչցընեմ, որ ան
սէրը որով դուն զիս սիրեցիր, անոնց մէջը ըլլայ,
ու ես ալ անոնց մէջը։

ԳԼ. ԺԸ

1 Յիսուս աս բաները ըսելէն ետև՝ իր աշակերտա-
ներուն հետ մէկտեղ Կեդրոն հեղեղատին անդին
կողմը ելաւ, ուր որ պարտէզ մը կար, որուն
2 մէջը մտաւ ինքը ու իր աշակերտները։ Եւ Յու-
դա ալ որ զանիկա պիտի մատնէր՝ գիտէր ան
տեղը, ինչու որ Յիսուս շատ անգամ իր աշա-
կերտներուն հետ մէկտեղ հոն ժողվուած էր։
3 Ուստի Յուդա զինուորներուն գունդը ու քահա-
նայապետներէն և փարիսեցիներէն սպասաւոր-
ներ հետը առնելով, ան տեղը եկաւ ջահերով ու
4 լապտերներով և զէնքերով։ Իսկ Յիսուս իր վը-
րայ գալու բոլոր բաները գիտնալով՝ ելաւ ու ը-
5 սաւ անոնց, Ո՞վ կը փնտռէք։ Պատասխան տուին
անոր, Նազովրեցի Յիսուսը. ըսաւ անոնց Յիսուս,

Ես եմ։ Յուդա ալ որ զանիկա կը մատնէր՝ անոնց
6 հետ կայներ էր։ Ու երբոր ըսաւ թէ Ես եմ՝ ետ
7 ետ գացին ու գետինը ինկան։ Եւ նորէն հարցուց
անոնց, Ո՞վ կը փնտռէք․ անոնք ալ ըսին, Նա-
8 զովրեցի Յիսուսը։ Յիսուս պատասխան տուաւ,
Ձեզի ըսի թէ Ես եմ․ ուստի թէ որ զիս կը
9 փնտռէք, թող տուէք ասոնք որ երթան։ Որ
կատարուի այն խօսքը որ ինքը ըսեր էր թէ Անոնք
որ ինծի տուիր, անոնցմէ մէկն ալ չկորսնցուցի։
10 Անատենը Սիմոն Պետրոս որ սուր մը ունէր՝ քա-
շեց անիկա ու քահանայապետին ծառային զար-
նելով՝ անոր աջ ականջը կտրեց հանեց․ և այն
11 ծառային անունը Մաղքոս էր։ Իսկ Յիսուս ըսաւ
Պետրոսին, Սուրդ իր պատեանը դիր․ այն գաւա-
թը որ Հայրը ինծի տուաւ՝ պիտի չխմե՞մ անիկա։
12 Ուստի զինուորներուն գունդը ու հազարապետը
և Հրէից սպասաւորները բռնեցին Յիսուսը ու
13 կապեցին․ Եւ առաջ զանիկա Աննային տարին,
քանզի ինքը այն տարուան քահանայապետին Կա-
14 յիափային աներն էր։ Եւ աս Կայիափան էր, որ
Հրէից խրատ տուաւ թէ Աղէկ է որ մէկ մարդ մը
15 կորսուի ժողովուրդին համար։ Ու Յիսուսի ե-
տևէն կ'երթային Սիմոն Պետրոս և ուրիշ աշա-
կերտ մը․ և այն աշակերտը քահանայապետին
ճանչուորը ըլլալով՝ Յիսուսի հետ քահանայապե-
16 տին գաւիթը մտաւ։ Բայց Պետրոս դուրսը դը-
րանը քովը կը կենար․ ուստի ելաւ միւս աշա-
կերտը որ քահանայապետին ճանչուորն էր, և ը-
սաւ դռնապանին, ու ներս մտցուց Պետրոսը։
17 Անատենը դռնապան աղջիկը ըսաւ Պետրոսին,
Միթէ դո՞ւն ալ այն մարդուն աշակերտներէն ես․
18 ան ալ ըսաւ, Չեմ։ Իսկ ծառաները ու սպասա-
ւորները հոն կայներ էին, և կրակ վառած կը
տաքնային, քանզի ցուրտ էր։ Պետրոս ալ անոնց
19 հետ կայներ էր ու կը տաքնար։ Եւ քահանայա-

պետը Յիսուսին հարցուց անոր աշակերտներուն
20 ու վարդապետութեանը վրայով։ Յիսուս պա-
տասխան տուաւ անոր, Ես աշխարհին յայտնի
խօսեցայ․ ես միշտ ատեն ժողովարաններուն մէջ
ու տաճարին մէջ սորվեցուցի, ուր որ բոլոր Հրէա-
ները կը ժողվուին, ու ծածկաբար բան մը չը-
21 խօսեցայ։ Ինչո՞ւ ինծի կը հարցնես, լսողներուն
հարցուր թէ ինչ խօսեցայ իրենց․ ահա ինչ որ
22 խօսեցայ՝ գիտեն իրենք։ Երբոր աս ըսաւ, սպա-
սաւորներէն մէկը որ հոն կայներ էր, Յիսուսին
ապտակ մը զարկաւ՝ ըսելով, Ատա՞նկ պատաս-
23 խան կու տաս քահանայապետին։ Յիսուս անոր
պատասխանեց, Թէ որ չար խօսեցայ, վկայէ չա-
րին համար․ հապա թէ որ բարի խօսեցայ, ինչո՞ւ
24 կը զարնես ինծի։ Եւ Աննա զանիկա կապած՝ Կա-
25 յիափա քահանայապետին ղրկեց։ Սիմոն Պետրոս
ալ հոն կայներ էր ու կը տաքնար․ և ըսին իրեն,
Միթէ դո՞ւն ալ անոր աշակերտներէն ես․ անիկա
26 ուրացաւ ու ըսաւ թէ Չեմ։ Քահանայապետին
ծառաներէն մէկն ալ՝ այն մարդուն ազգականը
որուն ականջը Պետրոս կտրեր էր, ըսաւ, Չէ՞ որ
27 ես քեզ տեսայ պարտէզին մէջը անոր հետ։ Ան-
ատենը Պետրոս նորէն ուրացաւ, և շուտ մը հա-
ւը խօսեցաւ։
28 Ու Յիսուսը Կայիափայի տունէն կուսակալին պա-
լատը տարին, և ալ առտու էր․ ու իրենք պա-
լատը չմտան՝ որ չպղծուին, հապա որ զատիկը
29 ուտեն։ Ուստի Պիղատոս դուրս ելաւ անոնց ու
ըսաւ, Ի՞նչ ամբաստանութիւն կը ներկայացնէք
30 աս մարդուն դէմ։ Պատասխան տուին ու ըսին
իրեն, Թէ որ ասիկա չարագործ մը չըլլար, քեզի
31 չէինք մատներ զանիկա։ Անատենը Պիղատոս ը-
սաւ անոնց, Դուք առէք անիկա, ու ձեր օրէն-
քին համեմատ անոր դատաստանը տեսէք։ Հրէա-
ները իրեն ըսին, Մեզի օրինաւոր չէ մարդ մը

32 մեռցընել. Որ կատարուի Յիսուսի խօսքը, որ ը-
սաւ՝ իմացընելով թէ ինչ մահով պիտի
33 մեռնէր։ Իսկ Պիղատոս նորէն պալատը մտաւ,
կանչեց Յիսուսը ու ըսաւ անոր, Դո՞ւն ես Հրէից
34 Թագաւորը։ Յիսուս պատասխան տուաւ անոր,
Ատիկա դուն քեզմէ՞ կ'ըսես, թէ ինծի համար
35 ուրիշները քեզի ըսին։ Պատասխան տուաւ Պի-
ղատոս, Միթէ ես Հրեա՞յ եմ. քու ազգդ և քա-
հանայապետները քեզ ինծի մատնեցին. ի՞նչ ը-
36 րած ես դուն։ Յիսուս պատասխան տուաւ, Իմ
թագաւորութիւնս աս աշխարհէս չէ. թէ որ աս
աշխարհէս ըլլար իմ թագաւորութիւնս, իմ սպա-
սաւորներս կը կռուէին՝ որ ես Հրէից ձեռքը չը-
մատնուիմ, բայց հիմա իմ թագաւորութիւնս
37 ասկէ չէ։ Անատենը Պիղատոս ըսաւ անոր, Ու-
րեմն դուն թագաւո՞ր մըն ես. պատասխան տը-
ւաւ Յիսուս, Դուն կ'ըսես, քանզի թագաւոր
եմ. ես աս բանիս համար ծնած եմ՝ և ասոր
համար աշխարհք եկած, որ ճշմարտութեան հա-
մար վկայեմ. ան ամէնը որ ճշմարտութենէն է՝
38 իմ ձայնիս ականջ կը դնէ։ Պիղատոս ըսաւ անոր,
Ի՞նչ է ճշմարտութիւնը. և աս ըսելով՝ նորէն
դուրս ելաւ Հրէաներուն և ըսաւ անոնց, Ես մէկ
39 յանցանք մը չեմ գտներ անոր վրայ։ Բայց սո-
վորութիւն ունիք որ մէկ [illegible] մը արձակեմ
ձեզի զատկին. հիմա կ'ուզէ՞ք որ Հրէից Թագա-
40 ւորը արձակեմ ձեզի։ Անատենը ամէնքն ալ նո-
րէն աղաղակեցին՝ ըսելով, Մի [illegible] ատիկա,
հապա Բարաբբան. ու Բարաբբա աւազակ մըն էր։

ԳԼ. ԺԹ

1 Անատենը Պիղատոս առաւ Յիսուսը ու ծեծեց։
2 Զինուորներն ալ փուշերէ պսակ հիւսելով՝ անոր
գլուխը դրին, և անոր ծիրանի հանդերձ մը հագ-

3 ցուցին. Ու կ'ըսէին, Ողջոյն քեզ, Հրէից Թագա-
4 ւոր. և ապտակներ կը զարնէին անոր։ Պիղատոս
նորէն դուրս ելաւ ու ըսաւ անոնց, Ահա անիկա
դուրս կը բերեմ ձեզի, որ գիտնաք թէ ես անոր
5 վրայ յանցանք մը չեմ գտներ. Անատենը Յիսուս
դուրս ելաւ՝ փշեղէն պսակն ու ծիրանի հան-
դերձը հագած. և Պիղատոս ըսաւ անոնց, Ահա
6 ան մարդը։ Քահանայապետները ու սպասաւոր-
ները երբոր տեսան անիկա, աղաղակեցին ու ը-
սին, Խաչը հանէ, խաչը հանէ [ատիկա]։ Պիղա-
տոս ըսաւ անոնց, Դո՛ւք առէք ատիկա ու խաչը
հանեցէք, ինչու որ ես ատոր վրայ յանցանք մը
7 չեմ գտներ. Հրէաները պատասխան տուին իրեն,
Մենք օրէնք ունինք, և մեր օրէնքին համեմատ
պէտք է որ մեռնի, ինչու որ ինքզինքը Աստու-
8 ծոյ Որդի ըրաւ. Երբոր Պիղատոս աս խօսքը լը-
9 սեց, ալ աւելի վախցաւ. Ու նորէն պալատը
մտնելով՝ ըսաւ Յիսուսին, Ուսկի՞ց ես դուն.
10 բայց Յիսուս պատասխան չտուաւ անոր։ Ուստի
Պիղատոս ըսաւ անոր, Ինծի հետ չե՞ս խօսիր. չե՞ս
գիտեր որ ես իշխանութիւն ունիմ քեզ խաչը
հանելու, ու իշխանութիւն ունիմ քեզ արձակե-
11 լու։ Յիսուս պատասխան տուաւ, Դուն իմ վրաս
մէկ իշխանութիւն մըն ալ չէիր ունենար, թէ որ
քեզի վերէն տրուած չըլլար. անոր համար՝ ան
որ զիս քեզի մատնեց, անոր մեղքը աւելի մեծ
12 է։ Ալ անկէ ետև Պիղատոս կը փնտռէր թէ ին-
չպէս զանիկա արձակէ. բայց Հրէաները կ'աղաղա-
կէին ու կ'ըսէին, Թէ որ ատիկա արձակես, Կայս-
րին բարեկամը չես. ամէն ով որ ինքզինքը թա-
գաւոր կ'անուանէ, անիկա Կայսրին հակառակ կը
13 խօսի։ Իսկ Պիղատոս երբոր աս խօսքը լսեց,
դուրս հանեց Յիսուսը, ու նստաւ բեմին վրայ
ան տեղը՝ որ Քարայատակ կ'ըսուէր, և Եբրայե-
14 ցերէն՝ Կապպաթա. (Զատկին ուրբաթ օրն էր ու

ժամը վեցին տեններն էր,) և Հրէաներուն
15 ըսաւ, Ահա ձեր Թագաւորը։ Բայց անոնք աղա-
ղակեցին, Վերցո՛ւր, վերցո՛ւր, խաչը հանէ ատի-
կա. Պիղատոս ըսաւ անոնց, Ձեր Թագաւորը
խա՞չը հանեմ. քահանայապետները պատասխան
տուին, Մենք կայսրէն ՚ի զատ թագաւոր չու-
16 նինք։ Անատենը անոնց ձեռքը տուաւ զանիկա
որ խաչուի։
17 Անոնք ալ առին Յիսուսը ու կը տանէին. և
ինքը իր խաչը վերցնելով՝ ելաւ Գագաթ ըսուած
18 տեղը, որ Եբրայեցերէն Գողգոթա կ'ըսուի։ Հոն
զանիկա խաչը հանեցին, և անոր հետ ուրիշ եր-
կուք ալ մէկ դիէն ու միւս դիէն, և մէջտեղը
19 Յիսուսը։ Տախտակ մըն ալ գրեց Պիղատոս, ու
դրաւ խաչին վրայ, և այսպէս գրուած էր. Յիսուս
20 Նազովրեցի, Թագաւոր Հրէից։ Եւ այն տախտակը
Հրէաներէն շատերը կարդացին, վասն զի քաղա-
քին մօտ էր այն տեղը՝ ուր որ Յիսուս խաչուե-
ցաւ. ու գրուած էր Եբրայեցերէն, Յունարէն և
21 Լատիներէն։ Անատենը Հրէից քահանայապետ-
ները Պիղատոսին ըսին, Մի գրեր Թագաւոր Հը-
րէից, հապա թէ ինքը ըսաւ, Թագաւոր եմ Հը-
22 րէից։ Պիղատոս պատասխան տուաւ, ինչ որ գը-
րեցի՝ գրեցի։
23 Եւ զինուորները երբոր Յիսուսը խաչը հանե-
ցին, անոր հանդերձները առին ու չորս բաժին
ըրին՝ ամէն մէկ զինուորին բաժին մը. նաև պա-
մուճանը. իսկ պամուճանը առանց կարի էր վե-
24 րէն ՚ի վար բոլորը հիւսուած. Ուստի ըսին իրա-
րու, Ատիկա չպատռենք, հապա վիճակ ձգենք
անոր վրայ թէ որու պիտի ըլլայ. որ կատարուի
այն գրուածը որ կ'ըսէ, Իմ հանդերձներս իրենց
մէջը բաժնեցին, և իմ պամուճանիս վրայ վի-
ճակ ձգեցին. ահա զինուորները աս բաները ը-
րին։

25 Եւ Յիսուսի խաչին քովը կայներ էին իր մայրը
և իր մօրը քոյրը Մարիամ՝ Կղէոփասին կինը ու
26 Մարիամ Մագդաղենացին։ Ուստի Յիսուս երբոր
տեսաւ իր մայրը, և այն աշակերտը որ կը սիրէր՝
որ մօտը կայներ էր, ըսաւ իր մօրը, Ով կին, ա-
27 հա քու որդիդ։ Ետքը ըսաւ աշակերտին, Ահա
քու մայրդ. և այն ժամանակէն աշակերտը զա-
նիկա իր քովը առաւ։
28 Անկէ ետև Յիսուս գիտնալով թէ արդէն ա-
մէն բան լմնցած է, (որպէս զի գրուածը կա-
29 տարուի,) ըսաւ, Ծարաւ եմ։ Եւ հոն քացախով
լեցուն աման մը կար. անոնք ալ քացախով
սպունգ մը լեցնելով, զոպայի ճիւղին վրայ փաթ-
30 թած՝ անոր բերնին մօտեցուցին։ Ուստի Յիսուս
երբոր քացախը առաւ՝ ըսաւ, Ամէն բան կատար-
ուեցաւ. ու գլուխը ծռելով հոգին աւանդեց։
31 Իսկ Հրէաները՝ որովհետև ուրբաթ օր էր, որ
չըլլայ թէ այն մարմինները խաչին վրայ մնան մին-
չև շաբաթ օրը, (ինչու որ այն շաբաթը մեծ օր
էր,) Պիղատոսին աղաչեցին որ անոնց սրունք-
32 ները կոտրեն, ու վերցուին։ Ուստի զինուոր-
ները եկան՝ և առջինին սրունքները կոտրեցին,
33 նաև միւսինը՝ որ անոր հետ խաչը ելած էր։ Բայց
երբոր Յիսուսին եկան ու տեսան որ արդէն մե-
34 ռած էր, անոր սրունքները չկոտրեցին. Հապա
զինուորներէն մէկը գեղարդով անոր կողը խո-
35 ցեց, և շուտ մը արիւն ու ջուր ելաւ։ Եւ ան որ
տեսաւ աս բաները՝ վկայեց, ու անոր վկայու-
թիւնը ճշմարիտ է, և ինքը գիտէ որ ճշմարիտ
36 կ'ըսէ, որ դուք [ալ] հաւատաք։ Ինչու որ աս
բաները եղաւ որ կատարուի այն գրուածը թէ
37 Անոր մէկ ոսկորը պիտի չկոտրուի։ Եւ մէյմըն ալ
ուրիշ գրուած մը կ'ըսէ թէ Պիտի նային անոր՝
որ խոցեցին։
38 Ասկէ ետև Յովսէփ՝ որ Արիմաթիայէն էր, (Յի-

սուսի աշակերտ եղած բայց գաղտուկ՝ Հրէանե-
րուն վախէն,) աղաչեց Պիղատոսին, որ Յիսուսի
մարմինը վերցընէ. Պիղատոս ալ հրաման տուաւ.
39 ուստի եկաւ ու վերցուց Յիսուսի մարմինը։ Նի-
կոդեմոս ալ եկաւ, (որ ինքը առաջուց գիշերով
Յիսուսի եկեր էր,) ու բերաւ հարիւր լիտրի չափ
40 զմուռսի ու հալուէի խառնուրդ մը։ Եւ Յիսուսի
մարմինը առին՝ ու խունկերով փաթթեցին զա-
նիկա կտաւներու մէջ, ինչպէս որ Հրէայք սո-
41 վորութիւն ունին թաղելու։ Եւ այն տեղը ուր որ
խաչուեցաւ՝ պարտէզ մը կար, ու այն պարտէզին
մէջ նոր գերեզման մը, որուն մէջը ամենեւին
42 մարդ դրուած չէր։ Հրէաներուն ուրբաթին հա-
մար հոն դրին Յիսուսը, ինչու որ գերեզմանը
մօտ էր։

ԳԼ. Ի

1 Եւ մէկշաբթի օրը Մարիամ Մագդաղենացին առ-
տուանց դեռ չլուսցած գերեզմանը կու գայ, ու
կը տեսնէ որ քարը գերեզմանին դռնէն վեր-
2 ցուած է։ Ետքը կը վազէ կու գայ Սիմոն Պետրո-
սին և միւս աշակերտին՝ որն որ Յիսուս կը սի-
րէր, և կ'ըսէ անոնց, Տէրը գերեզմանէն վերցու-
3 ցին, ու չենք գիտեր ուր դրին անիկա։ Ուստի
ելաւ Պետրոս և միւս աշակերտը, ու դէպ 'ի գե-
4 րեզմանը կու գային։ Ու երկուքն ալ մէկտեղ կը
վազէին. և միւս աշակերտը Պետրոսէն աւելի շուտ
5 վազելով՝ անկէ առաջ գերեզմանը եկաւ։ Եւ ծը-
ռելով նայեցաւ, ու տեսաւ որ կտաւները հոն կը
6 կենային, բայց ինքը ներս չմտաւ։ Սիմոն Պետ-
րոս ալ հասաւ, որ անոր ետեւէն կու գար, ու
գերեզմանը մտաւ, և տեսաւ կտաւները որ հոն
7 կը կենային։ Ու վարշամակը որ անոր գլուխն էր՝
ուրիշ կտաւներուն հետը չէր, հապա ծալլած զատ

8 մէկ կողմը փաթթուած էր։ Անատենը ներս մտաւ
միւս աշակերտն ալ՝ որ առաջ գերեզմանը եկեր
9 էր, տեսաւ ու հաւատաց։ Ինչու որ դեռ գրուա-
ծը չէին գիտեր, թէ պէտք է որ անիկա մեռել-
10 ներէն յարութիւն առնէ։ Ետքը աշակերտները
նորէն իրենց տունը գացին։
11 Բայց Մարիամ գերեզմանին դուրսը կայներ էր
և կու լար, ու երբոր կու լար՝ դէպ 'ի գերեզմանը
12 ծռեցաւ նայելու։ Եւ տեսաւ երկու հրեշտակներ
ճերմակ հանդերձներով, որ նստեր էին ուր որ
Յիսուսի մարմինը դրուած էր, մէկը գլխուն կող-
13 մէն՝ ու միւսը ոտքին կողմէն։ Եւ անոնք իրեն
ըսին, Կնիկ, ինչո՞ւ կու լաս. ըսաւ անոնց. Անոր
համար որ իմ Տէրս գերեզմանէն վերցուցին, ու
14 չեմ գիտեր ուր դրին անիկա։ Աս որ ըսաւ՝ ե-
տին դարձաւ և տեսաւ Յիսուսը որ կայներ էր,
15 ու չէր գիտեր թէ Յիսուս է։ Յիսուս անոր ը-
սաւ, Կնիկ, ինչո՞ւ կու լաս, ո՞վ կը փնտռես։
Ինքը կարծելով թէ անիկա պարտիզպանն է՝ ը-
սաւ անոր, Տէր, թէ որ դուն վերցուցիր անի-
կա, ըսէ ինծի՝ ո՞ւր դրիր ան, որ ես անիկա առ-
16 նեմ։ Յիսուս ըսաւ անոր, Մարիամ. ան ալ դար-
ձաւ ու [Եբրայեցերէն] անոր ըսաւ, Ռաբբունի,
17 որ Վարդապետ ըսել է։ Յիսուս ըսաւ անոր, Ին-
ծի մի դպչիր, ինչու որ դեռ Հօրս քովը ելած
չեմ. հապա գնա եղբայրներուս և ըսէ անոնց,
Ես կ'ելլեմ իմ Հօրս քովը ու ձեր Հօրը քովը, և
իմ Աստուծոյս քովը ու ձեր Աստուծոյն քովը։
18 Մարիամ Մագդաղենացին եկաւ ու աշակերտնե-
րուն պատմեց թէ ինքը Տէրը տեսաւ, և թէ ա-
նիկա աս բաները իրեն զրուցեց։
19 Եւ նոյն օրը մէկշաբթի իրիկունը՝ աշակերտնե-
րուն ժողվուած տեղին դռները գոց ըլլալով՝
Հրէաներէն վախնալնուն համար, Յիսուս եկաւ և
անոնց մէջտեղը կայնեցաւ, ու ըսաւ անոնց, Խա-

20 ղաղութիւն ձեզի։ Եւ աս ըսելով՝ իր ձեռքերը
ու կողը ցուցուց անոնց. աշակերտներն ալ ու-
21 րախացան՝ երբոր Տէրը տեսան։ Եւ Յիսուս նորէն
ըսաւ անոնց, Խաղաղութիւն ձեզի. ինչպէս որ
22 Հայրը զիս ղրկեց, ես ալ ձեզ կը ղրկեմ։ Եւ աս
ըսելով անոնց վրայ փչեց, ու ըսաւ անոնց, Առէք
23 Հոգին Սուրբ. Որոնց որ մեղքերը թողուք, թող-
ուած ըլլայ անոնց. և որոնց որ մեղքերը ալ բըռ-
նէք, բռնուած ըլլայ։
24 Բայց տասներկուքէն մէկը՝ Երկուորեակ ըս-
ուած Թովմաս՝ անոնց հետը չէր երբոր Յիսուս
25 եկաւ։ Ուստի միւս աշակերտները կ'ըսէին անոր
թէ Տէրը տեսանք. ան ալ ըսաւ անոնց, Թէ որ
իր ձեռքերուն վրայ բեւեռներուն նշանը չտես-
նեմ, ու մատս բեւեռներուն տեղը չխոթեմ, և
իմ ձեռքս անոր կողը չխոթեմ՝ չեմ հաւատար։
26 Եւ ութը օրէն ետև դարձեալ աշակերտները
ներսն էին, Թովմաս ալ անոնց հետ. եկաւ Յի-
սուս՝ դռները գոց ըլլալով, ու կայնեցաւ անոնց
27 մէջտեղը և ըսաւ, Խաղաղութիւն ձեզի։ Ետքը
ըսաւ Թովմասին, Մատդ հոս բեր և նայէ իմ
ձեռքերս, ու բեր քու ձեռքդ և իմ կողս խո-
թէ, ու մի ըլլար անհաւատ, հապա հաւատաց-
28 եալ։ Եւ Թովմաս պատասխան տուաւ ու ըսաւ
29 անոր, Իմ Տէրս և իմ Աստուածս։ Յիսուս ըսաւ
անոր, *Որովհետև դուն զիս տեսար՝ հաւատացիր.
երանի անոնց որ տեսած չեն ու կը հաւատան։
39 Եւ Յիսուս շատ ուրիշ նշաններ ալ ըրաւ իր ա-
շակերտներուն առջին, որ աս գրքիս մէջ գըր-
31 ուած չեն. Բայց ասոնք գրուեցան, որ հաւա-
տաք թէ Յիսուսը Քրիստոսն է՝ Աստուծոյ Որ-
դին, և որ հաւատալով կեանք ունենաք անոր
անունովը։

Ոմանք Թովմաս, որովհետեւ.

ԳԼ. ԻԱ

1 Ասկէ ետև Յիսուս նորէն ինքզինքը իր աշա-
կերտներուն յայտնեց Տիբերիայի ծովուն եզերքը,
2 և ասանկ յայտնեց. Մէկտեղ էին Սիմոն Պետրոս
ու Թովմաս, Երկուորեակ ըսուածը, և Նաթանա-
յէլ որ Գալիլեայի Կանայ քաղաքէն էր, ու Զեբե-
դէոսի որդիքը և աշակերտներէն ուրիշ երկուք
3 ալ։ Սիմոն Պետրոս ըսաւ անոնց, Ես ձուկ որսա-
լու կ'երթամ. ըսին անոր, Մենք ալ կու գանք
քեզի հետ. ելան և շուտ մը նաւը մտան, ու ան
4 գիշերը բան մը չբռնեցին։ Ու երբոր ալ առտու
եղաւ, Յիսուս ծովուն եզերքը կայներ էր, բայց
5 աշակերտները չճանչցան թէ Յիսուսն է։ Իսկ Յի-
սուս ըսաւ անոնց, Տղաք, ուտելու բան մը ու-
6 նի՞ք. պատասխան տուին իրեն, Ոչ։ Եւ ըսաւ ա-
նոնց, Ուռկանը նաւին աջ կողմը ձգեցէք ու պի-
տի գտնէք. ուստի ձգեցին, և ձուկերուն շա-
7 տութենէն՝ ալ չէին կրնար զանիկա քաշել։ Ան-
տենը ան աշակերտը որն որ Յիսուս կը սիրէր՝
ըսաւ Պետրոսին, Անիկա Տէրն է. իսկ Սիմոն Պետ-
րոս երբոր լսեց թէ Տէրն է, վերարկուն վրան ա-
ռաւ, ինչու որ մերկ էր, ու ծովը նետուեցաւ։
8 Եւ միւս աշակերտները նաւակովը եկան, (ինչու
որ ցամաքէն հեռու չէին, միայն թէ երկու հա-
րիւր կանգունի չափ,) և ուռկանը ձուկերովը կը
9 քաշէին։ Ու երբոր ցամաքը ելան, հոն վառած
կրակ տեսան, ու վրան ձուկ դրուած, և հաց։
10 Յիսուս ըսաւ անոնց, Բերէք աս ձուկերէն որ
11 դուք հիմա բռնեցիք։ Սիմոն Պետրոս նաւը *մը-
տաւ, և ուռկանը ցամաքը քաշեց հարիւր յի-
սունուիրեք խոշոր ձուկերով լեցուն. և այնչափ

---

*Յուն. ելաւ.

12 բան կար ու չպատռեցաւ ուռկանը։ Յիսուս ը-
սաւ անոնց, Եկէք ճաշ ըրէք. ու աշակերտներէն
մէկն ալ չէր համարձակեր անոր հարցնելու թէ
13 Դուն ո՞վ ես. ինչու որ գիտէին թէ Տէրն է։ Ան-
տենը Յիսուս եկաւ ու առաւ հացը և անոնց
14 տուաւ՝ նոյնպէս ալ ձուկը։ Աս երրորդ անգամն
է որ Յիսուս իր աշակերտներուն երեւցաւ՝ մե-
ռելներէն յարութիւն առնելէն ետեւ։
15 Ու երբոր ճաշը ըրին, Յիսուս ըսաւ Սիմոն Պետ-
րոսին, Սիմոն, Յովնանի որդին, ասոնցմէ ա-
ւելի կը սիրե՞ս. անիկա ըսաւ անոր, Այո, Տէր,
դուն գիտես որ քեզ կը սիրեմ. ըսաւ անոր, Ա-
16 րածէ իմ գառնուկներս։ Նորէն երկրորդ անգամ
ըսաւ անոր, Սիմոն, Յովնանի որդին, զիս կը սի-
րե՞ս. ըսաւ անոր, Այո, Տէր, դուն գիտես որ
քեզ կը սիրեմ. ըսաւ անոր, Արածէ իմ ոչխար-
17 ներս։ Ըսաւ անոր երրորդ անգամ, Սիմոն, Յով-
նանի որդին, զիս կը սիրե՞ս. Պետրոս տրտմեցաւ
որ երեք անգամ իրեն ըսաւ թէ Զիս կը սիրե՞ս.
և ըսաւ անոր, Տէր, դուն ամէն բան գիտես,
դուն գիտես որ ես քեզ կը սիրեմ. ըսաւ անոր Յի-
18 սուս, Արածէ իմ ոչխարներս։ Ճշմարիտ ճշմարիտ
կ'ըսեմ քեզի, որ երբ դուն պատանի էիր, ինքիր-
մէդ գօտի կըկապէիր ու կ'երթայիր ուր որ ուզէիր.
բայց երբոր ծերանաս, ձեռքերդ վեր պիտի բռնես,
և ուրիշը քեզի գօտի պիտի կապէ ու պիտի տանի
19 ուր որ չես ուզեր։ Աս բանը ըսաւ՝ ցուցնելով
թէ անիկա ինչ մահով պիտի փառաւորէ զԱստ-
ուած. ու երբոր աս զրուցեց՝ ըսաւ անոր, Եկուր
20 իմ ետեւէս։ Եւ Պետրոս դարձաւ ու տեսաւ այն
աշակերտը որն որ Յիսուս կը սիրէր, որ ետեւէն
կ'երթար, (որ նաև ընթրիքին ատենը անոր կուրծ-
քին վրայ ինկեր և ըսեր էր, Տէր, ո՞վ է որ քեզ
21 պիտի մատնէ.) Պետրոս անիկա տեսնելով՝ ըսաւ
22 Յիսուսին, Տէր, հապա ասիկա ի՞նչ պիտի ըլլայ։

Յիսուս ըսաւ անոր, Թէ որ ես ուզեմ որ ասիկա
կենայ մինչև որ ես գամ, քու ի՞նչ հոգդ է.
23 դուն իմ ետեւէս եկուր։ Ալ աս խօսքը ելաւ եղ-
բայրներուն մէջ թէ այն աշակերտը պիտի չմեռ-
նի. սակայն Յիսուս չըսաւ անոր թէ Պիտի չմեռ-
նի, հապա՝ Թէ որ ես ուզեմ որ ասիկա կենայ
մինչև որ ես գամ, քու ի՞նչ հոգդ է։
24 Ասիկա այն աշակերտն է՝ որ կը վկայէ աս բա-
ներուս համար, որ գրեց ալ աս բաները. ու գի-
25 տենք որ անոր վկայութիւնը ճշմարիտ է։ Եւ ու-
րիշ շատ բաներ ալ կան, որ Յիսուս ըրաւ, որոնք
եթէ մէկիկ մէկիկ գրուած ըլլային, կարծեմ թէ
աշխարհս ալ բաւական պիտի չըլլար պարունա-
կելու այն գիրքերը որ գրուած ըլլային։ Ամէն։

ԳՈՐԾՔ

ԱՌԱՔԵԼՈՑ

ԳԼՈՒԽ Ա.

1 Առջի պատմութիւնը ըրի, ով Թէոփիլոս, ան ա-
մէն բաներուն վրայ որ Յիսուս սկսաւ ընել և
2 սորվեցընել, Մինչև այն օրը որ Հոգւոյն Սրբոյ
միջոցովը պատուէր տուաւ իր ընտրած առա-
3 քեալներուն, ու համբարձաւ։ Որ անոնց ինքզինքը

ցուցուց կենդանի իր չարչարանքներէն ետեւ շատ
ապացոյցներով, քառասուն օրուան մէջ անոնց
երեւնալով ու Աստուծոյ թագաւորութեանը վրայ
4 խօսելով։ Եւ անոնց հետ մէկտեղ *գտնուած ա-
տենը՝ կ'ապսպրէր անոնց որ Երուսաղեմէն չհե-
ռանան, հապա սպասեն Հօրը խոստմունքին, որ
5 ան ինծմէ լսեցիք ըսէր։ Ինչու որ իրաւ Յովհան-
նէս ջրով մկրտեց, բայց դուք ասկէ շատ օրեր
6 չանցած՝ Սուրբ Հոգիով պիտի մկրտուիք։ Անոնք
ալ մէկտեղ գալով կը հարցնէին իրեն ու կ'ըսէ-
ին, Տէր, Իսրայէլի թագաւորութիւնը ա՞ս ժա-
7 մանակիս մէջ նորէն պիտի հաստատես։ Եւ ըսաւ
անոնց, Ձեզի չվերաբերիր ժամերը և ժամանակ-
ները գիտնալը, որն որ Հայրը իր իշխանութեանը
8 մէջ դրաւ։ Բայց Հոգւոյն Սրբոյ ձեր վրայ եկած
ատենը զօրութիւն պիտի առնէք, ու ինծի հա-
մար վկաներ պիտի ըլլաք Երուսաղեմի մէջ և բո-
լոր Հրէաստանի ու Սամարիայի մէջ ու մինչև
9 երկրի ծայրերը։ Եւ աս բաները որ ըսաւ, երբոր
անոնք կը նայէին՝ համբարձաւ, և ամպ մը զա-
10 նիկա անոնց աչքէն առաւ։ Ու քանի որ աչքեր-
նին տնկած դէպ 'ի երկինքը կը նայէին անոր եր-
թալուն վրայ, ահա երկու մարդ իրենց քովը
11 կայնեցան ճերմակ հանդերձներով, Որոնք նաև
ըսին, Ով Գալիլեացի մարդիկ, ինչո՞ւ կայներ դէպ
'ի երկինքը կը նայիք. աս Յիսուսը որ ձեզմէ եր-
կինքը համբարձաւ, ասանկ պիտի գայ՝ ինչպէս
12 որ տեսաք անոր երկինք երթալը։ Անատենը Ե-
րուսաղէմ դարձան Ձիթենեաց ըսուած լեռնէն,
որ շաբաթ օրուան ճամբու չափ մօտ է Երուսա-
13 ղեմին։ Ու երբոր ներս մտան՝ ելան վերնա-
տունը, ուր որ կը բնակէին Պետրոս և Յակոբոս,
Յովհաննէս և Անդրէաս, Փիլիպպոս և Թովմաս,

*Կամ հաց կերած

Բարթողոմէոս և Մատթէոս, Յակոբոս Ալփէոս-
եան ու Սիմոն Նախանձայոյզ և Յուդա *Յակոբ-
14 եան։ Ասոնք ամէնը միաբանութեամբ միշտ ա-
ղօթք ու աղաչանք կ'ընէին կնիկներուն հետ, և
Յիսուսի մօրը Մարիամին ու անոր եղբայրներուն
հետ մէկտեղ։
15 Եւ ան օրերը ելաւ Պետրոս աշակերտներուն
մէջը, (ուր որ հարիւր քսան հոգիի չափ ժող-
16 վուած բազմութիւն կար,) ու ըսաւ, Մարդիկ
եղբայրներ, պէտք էր որ կատարուէր աս գըր-
ուածը, որն որ առաջուց Հոգին Սուրբ Դաւիթին
բերնովը ըսաւ Յուդային համար՝ որ Յիսուսը
17 բռնողներուն առաջնորդ եղաւ։ Ինչու որ անիկա
մեզի հետ էր մեր համրանքին մէջ, և աս պաշ-
18 տօնէս ալ բաժին ունէր։ Ասիկա անիրաւութեան
վարձքով ագարակ մը ստացաւ, ու գլխիվար իյ-
նալով մէջտեղէն ճեղքուեցաւ, և իր ամէն փո-
19 րոտիքը դուրս թափեցաւ։ Ու աս բանը Երու-
սաղէմ բնակողներուն ամենուն յայտնի եղաւ,
մինչև որ իրենց լեզուովը ան ագարակին անունը
Ակեղդամա դրուեցաւ, այսինքն Արեան ագա-
20 րակ։ Ինչու որ Սաղմոսաց գրքին մէջ գրուած է
թէ Անոր բնակարանը աւերակ ըլլայ, ու անոր
մէջը բնակող մը չըլլայ. և, Անոր պաշտօնը ուրիշը
21 առնէ։ Ուրեմն պէտք է որ աս մարդոցմէն՝ որ
մեր հետը եղան ան բոլոր ատենը, որ Տէր Յի-
22 սուս մէջերնիս մտաւ ու ելաւ, Յովհաննեսին
մկրտութենէն սկսած՝ մինչև ան օրը որ մեզմէ
համբարձաւ, ասոնցմէ մէկը մեզի հետ վկայ ըլլայ
23 անոր յարութեանը։ Եւ երկու հոգի կայնեցու-
ցին, Յովսէփը որ Բարսաբա կը կոչուէր՝ որ
Յուստոս ալ մականուանեցաւ, ու Մատաթիան։

*Այսինքն Յակոբոսին եղբայրը ըստ ընդհանուր կարծեաց։

24 Եւ աղօթք ընելով ըսին, Դուն, ով Տէր, որ ա-
մենուն սիրտը գիտես, աս երկուքէս մէկը որն որ
25 ընտրեցիր՝ ճշդէ յայտնէ. Որ աս պաշտօնիս և ա-
ռաքելութեանս վիճակը առնէ, որ անկէ Յու-
26 դա ինկաւ իր տեղը երթալու։ Եւ անոնց համար
վիճակ ձգեցին, ու վիճակը Մատաթիային ելաւ,
և անիկա տասնումէկ առաքելոց հետ սեպուե-
ցաւ։

ԳԼ. Բ

1 Եւ Պենտեկոստէին օրը հասնելուն՝ ամէնքն ալ
2 միաբան մէկտեղ էին։ Ու յանկարծակի երկին-
քէն ձայն մը եղաւ սաստկաշունչ հովի մը շաչիւնին
պէս, և բոլոր տունը լեցուց՝ ուր որ նստեր էին։
3 Եւ բաժնուած լեզուներ երևցան իրենց որպէս
4 թէ կրակէ, ու ամէն մէկուն վրայ նստաւ։ Եւ
ամէնքն ալ Հոգւով Սրբով լեցուեցան, ու սկը-
սան ուրիշ լեզուներով խօսիլ, ինչպէս որ Հոգին
5 իրենց խօսիլ կու տար։ Ու Երուսաղեմի մէջ բնա-
կած Հրեաներ կային՝ աստուածավախ մարդիկ
երկնից տակը եղած բոլոր ազգերէն ժողվուած։
6 Ու երբոր աս ձայնը եղաւ, բազմութիւնը մէկ-
տեղ եկաւ ու խռովեցաւ, ինչու որ կը լսէին որ
անոնք իրենց ամէն մէկուն լեզուովը կը խօսէին։
7 Ամէնքն ալ կը սքանչանային ու կը զարմանային
և իրարու կ'ըսէին, Չէ՞ որ ահա ասոնք ամէնն
8 ալ որ կը խօսին՝ Գալիլեացի են. Եւ ի՞նչպէս կը
լսենք մենք մեր ամէն մէկ լեզուովը՝ որ անոր
9 մէջը ծնած ենք. Պարթևք և Մարք ու Եղամա-
ցիք, և անոնք որ կը բնակին Միջագետի մէջ, և
Հրէաստանի ու Կապադովկիայի մէջ, Պոնտոսի ու
10 Ասիայի մէջ, Փռիւգիայի և Պամփիւլիայի մէջ,
Եգիպտոսի մէջ, և Կիւրենէի մօտ Լիբէացւոց
կողմերուն մէջ, նաև Հռովմայեցի պանդուխտ-

11 ներ՝ թէ Հրեաներ և թէ նորահաւատներ, Կրե-
տացիներ և Արաբացիներ, կը լսենք անոնցմէ որ
մեր լեզուներով կը խօսին Աստուծոյ մեծամեծ
12 բաները։ Կը սքանչանային ամէնքն ալ ու տարա-
կուսած իրարու կ'ըսէին, Ի՞նչ պիտի ըլլայ աս։
13 Ոմանք ալ ծաղր ընելով կ'ըսէին թէ Անոնք նոր
գինիով լեցուեր են։
14 Բայց Պետրոս ելաւ տասնումէկին հետ մէկ-
տեղ, ձայնը վերցուց ու խօսեցաւ անոնց, Ով
Հրէայ մարդիկ և դուք ամէնքդ որ Երուսաղէմ
կը բնակիք, աս ձեզի յայտնի ըլլայ, ու ականջ
15 դրէք իմ խօսքերուս։ Քանզի չէ թէ ասոնք գի-
նովցած են, ինչպէս որ դուք կը կարծէք, ինչու
16 որ դեռ օրուան երրորդ ժամն է. Հապա ասիկա
ան է որ Յովէլ մարգարէին ձեռքովը ըսուեցաւ.
17 Եւ պիտի ըլլայ որ վերջին օրերը, կ'ըսէ Աստ-
ուած, իմ Հոգիէս ամէն մարմնոյ վրայ պիտի
թափեմ, ու ձեր տղաքը և ձեր աղջիկները պի-
տի մարգարէանան, ու ձեր երիտասարդները
տեսիլքներ պիտի տեսնեն, և ձեր ծերերը երազ-
18 ներ պիտի տեսնեն. Եւ իմ ծառաներուս վրայ ու
իմ աղախիններուս վրայ ալ ան օրերը իմ Հո-
գիէս պիտի թափեմ, և պիտի մարգարէանան։
19 Ու վերը երկինքը հրաշքներ պիտի ցուցընեմ, ու
վարը երկիրը՝ նշաններ, արիւն ու կրակ և ծու-
20 խի մառախուղ. Արևը խաւարի պիտի դառնայ,
և լուսինը՝ արիւնի, դեռ Տէրոջը մեծ ու երևելի
21 օրը չեկած։ Եւ պիտի ըլլայ որ ամէն ով որ Տէ-
22 րոջը անունը կանչէ՝ պիտի փրկուի։ Ով Իսրայէ-
լացի մարդիկ, լսեցէք աս խօսքերը. Յիսուս Նա-
զովրեցին՝ Աստուծմէ ձեզի ցուցուած մարդ մը
զօրութիւններով ու հրաշքներով և նշաններով,
որ Աստուած անոր ձեռքովը ըրաւ ձեր մէջը,
23 ինչպէս որ դուք ալ գիտէք, Անիկա Աստուծոյ
որոշած խորհրդովը և կանխագիտութեամբը

մատնուած ըլլալով՝ առիք և *անօրէններու ձեռ-
24 քով փայտի վրայ գամելով սպաննեցիք։ Որն որ
Աստուած յարուց՝ մահուան ցաւերը քակելով,
25 քանզի հնար չէր որ ինքը անկէ բռնուի։ Ինչու
որ Դաւիթ անոր համար կ'ըսէ, Ամէն ատեն Տէրը
կը տեսնէի իմ առջիս, քանզի իմ աջ կողմս է,
26 որ չսասանիմ։ Անոր համար ուրախ եղաւ իմ
սիրտս, ու իմ լեզուս ցնծաց։ Նաև իմ մարմինս
27 ալ յուսով պիտի հանգստանայ։ Վասն զի իմ
անձս †գերեզմանին մէջը պիտի չթողուս, ու քու
Սուրբիդ ալ ապականութիւն տեսնել պիտի չը-
28 տաս։ Կենաց ճամբաները ինծի ճանչցուցիր։ քու
երեսիդ ուրախութիւնովը զիս պիտի լեցնես։
29 Մարդիկ եղբայրներ, արժան է համարձակ զրու-
ցել ձեզի Դաւիթ նահապետին համար, թէ մե-
ռաւ ու թաղուեցաւ, և անոր գերեզմանը մին-
30 չև այս օրս մեր մէջն է։ Արդ որովհետև անիկա
մարգարէ էր, և գիտէր թէ Աստուած հաստատ
երդում ըրաւ իրեն, թէ իր երիկամանցը պտու-
ղէն մարմնոյ կողմանէ Քրիստոսը պիտի յարու-
31 ցանէ որ իր աթոռը նստի, ինքը կանխատեսու-
թեամբ խօսեցաւ Քրիստոսի յարութեանը հա-
մար, թէ անոր անձը գերեզմանը չթողուեցաւ,
32 և անոր մարմինը ապականութիւն չտեսաւ։ Աս
Յիսուսը Աստուած յարուց, որուն մենք ամէնքս
33 ալ վկայ ենք։ Ուստի Աստուծոյ աջ ձեռքովը
բարձրանալով, ու Հոգւոյն Սրբոյ խոստմունքը
Հօրմէն առնելով՝ թափեց ասիկա, որ դուք
34 հիմա կը տեսնէք և կը լսէք։ Ինչու որ Դաւիթ
երկինքը չելաւ, բայց ինքը կ'ըսէ, Տէրը իմ Տէ-
35 րոջս ըսաւ, Նստէ իմ աջ կողմս, Մինչև որ քու
թշնամիներդ ոտքերուդ պատուանդան դնեմ։

*կամ անօրէն
†կամ դժոխքին

36 Ուստի բոլոր Իսրայէլի տունը ճշմարտապէս թող
գիտնայ, որ Աստուած զանիկա Տէր ալ ըրաւ՝
Օծեալ ալ, այն Յիսուսը որ դուք խաչեցիք։
37 Ու երբ որ լսեցին՝ իրենց սրտերուն մէջ զղջա-
ցին, և ըսին Պետրոսին ու միւս առաքեալնե-
38 րուն, Մարդիկ եղբայրներ, ի՞նչ ընենք։ Ու Պետ-
րոս ըսաւ անոնց, Ապաշխարեցէք, ու ձեզմէ ա-
մէն մէկը թող մկրտուի Յիսուս Քրիստոսի անու-
նովը մեղաց թողութեան համար, և Հոգւոյն
39 Սրբոյ պարգևը պիտի ընդունիք։ Ինչու որ խոստ-
մունքը ձեզի է ու ձեր որդւոցը, և ամէն հեռու
եղողներուն՝ որոնք որ մեր Տէր Աստուածը պի-
40 տի կանչէ։ Ու ուրիշ շատ խօսքերով վկայութիւն
կու տար, ու կը յորդորէր զանոնք և կ'ըսէր, Աս
41 խոտորած ազգէն ինքզինքնիդ ազատեցէք։ Ու
անոնք որ սրտանց ընդունեցին անոր խօսքերը՝
մկրտուեցան. ու այն օրը երեք հազար հոգիի չափ
42 աւելցան։ Ու միշտ առաքելոց վարդապետու-
թեանը ետևէ էին, ու միաբանութեանը և հաց
կտրելուն ու աղօթքներուն։
43 Ու ամէն մարդու վրայ վախ ինկաւ. և առա-
քելոց ձեռքովը շատ հրաշքներ ու նշաններ կը
44 գործուէին։ Ու բոլոր հաւատացեալները մէկտեղ
45 էին, և ամէն բաներնին հասարակաց էր։ Ու
ստացուածքնին և ունեցած բաներնին կը ծախէ-
ին, ու անոնց գինը կը բաժնէին ամենուն, որուն
46 որ բան մը պէտք ըլլար։ Ու ամէն օր միաբա-
նութեամբ տաճարը երթալու ետևէ էին, և տու-
ներնին հաց կը կտրէին, ու կերակուրնին կ'ու-
տէին ուրախութեամբ և միամտութեամբ սրտի.
47 Զաստուած կ'օրհնէին, ու բոլոր ժողովուրդին
առջևը շնորհք կը գտնէին. և Տէրը օրէ օր փըր-
կուածները կ'աւելցընէր եկեղեցիին։

ԳԼ. Գ

1 Արդ Պետրոս ու Յովհաննէս իններորդ ժամու
2 աղօթքին տաճարը մէկտեղ կ'ելլէին։ Եւ
իր մօրը որովայնէն կաղ ծնած մարդ մը կը բեր-
ուէր, որ զանիկա ամէն օր տաճարին Գեղեցիկ
կոչուած դրանը քով կը դնէին, որ տաճարը
3 մտնողներէն ողորմութիւն խնդրէ։ Ասիկա տես-
նելով Պետրոսը և Յովհաննէսը որ տաճարը մըտ-
նելու վրայ էին, կ'աղաչէր որ ողորմութիւն առ-
4 նէ։ Իսկ Պետրոս Յովհաննէսին հետ մէկտեղ ա-
5 նոր նայեցաւ ու ըսաւ. Մեզի նայէ. Ան ալ դէպ
'ի անոնց դարձաւ ու կը յուսար անոնցմէ բան
6 մը առնել։ Եւ Պետրոս ըսաւ, Արծաթ ու ոսկի
չունիմ, հապա ինչ որ ունիմ՝ ան քեզի կու տամ.
Նազովրեցի Յիսուս Քրիստոսին անունովը ելիր ու
7 քալէ։ Եւ անոր աջ ձեռքէն բռնեց՝ վերցուց զա-
նիկա, ու իսկոյն անոր ոտքին թաթերը ու կոճերը
8 զօրացան։ Եւ վեր ցատկելով կայնեցաւ ու կը
քալէր, և անոնց հետ տաճարը մտաւ՝ քալելով
9 ու ցատկելով և զԱստուած օրհնելով։ Ու բոլոր
ժողովուրդը տեսաւ անիկա որ կը քալէր ու
10 կ'օրհնէր զԱստուած։ Եւ կը ճանչնային թէ անի-
կա էր, որ ողորմութեան համար տաճարին Գե-
ղեցիկ կոչուած դրանը քով կը նստէր։ և զար-
մանքով ու ապշութեամբ լեցուեցան անոր եղած
բանին համար։

11 Եւ քանի որ *անիկա Պետրոսին ու Յովհաննէ-
սին յարեր էր, բոլոր ժողովուրդը զարմացած
մէկտեղ վազեցին անոնց քովը ան սրահը որ Սո-
12 ղոմոնինը կ'ըսուէր։ Աս տեսնելով Պետրոս՝ պա-
տասխան տուաւ ժողովուրդին, Ով Իսրայելացի

*Ոմանք ան բժշկուած կաղը

մարդիկ, ինչո՞ւ զարմացեր էք ասոր վրայ, կամ
ինչո՞ւ աչքերնիդ տնկած մեզի կը նայիք, որպէս
թէ մենք մեր զօրութեամբը կամ բարեպաշտու-
13 թեամբը ասոր քալել տուած ըլլանք։ Աբրահա-
մին ու Իսահակին և Յակոբին Աստուածը, մեր
հայրերուն Աստուածը, փառաւորեց իր *Որդին
Յիսուսը, որն որ դուք մատնեցիք, և ուրացաք
Պիղատոսին առջևը՝ երբոր ինքը վճռեց որ ար-
14 ձակէ։ Բայց դուք ան Սուրբը և Արդարը ուրա-
ցաք, ու խնդրեցիք որ մարդասպան մարդ մը
15 ձեզի շնորհուի. Եւ կենաց առաջնորդը սպաննե-
ցիք, որ զանիկա Աստուած մեռելներէն յարուց,
16 որուն մենք վկայ ենք. Եւ անոր անուանը հա-
ւատքով՝ անոր անունը հաստատեց ասիկա, որն
որ դուք կը տեսնէք ու գիտէք. և ան հաւատքը
որ անով է՝ աս առողջութիւնը ասոր տուաւ ձեր
17 ամենուն առջևը։ Եւ հիմա, եղբայրներ, գիտեմ
որ չգիտնալով ըրիք, ինչպէս որ ձեր իշխաններն
18 ալ։ Բայց Աստուած ինչ որ առաջուց իր բոլոր
մարգարէներուն բերնովը յայտներ էր Քրիստոսի
19 չարչարուելուն վրայով, այսպէս կատարեց։ Ուս-
տի ապաշխարեցէք ու դարձի եկէք՝ որ մեղքեր-
20 նիդ ջնջուի. Որպէս զի սփոփանաց ժամանակները
գան Տէրոջը երեսէն, և առաջուց †ձեզի քարոզ-
21 ուած" Յիսուս Քրիստոսը խրկէ. Որ զանիկա պէտք
է որ երկինքը ընդունի մինչև ան ատենները՝ որ
ամէն բաները կարգադրուին, որոնց համար Աստ-
ուած սկիզբէն 'ի վեր իր սուրբ մարգարէներուն
22 բերնովը խօսած է։ ‡Մովսէս մեր հայրերուն ըսաւ
թէ Ձեր Տէր Աստուածը ձեր եղբայրներէն ինծի
պէս մարգարէ մը պիտի հանէ ձեզի. անոր մտիկ

*Կամ ծառան
†Ոմանք ձեզի համար սահմանուած
‡Ոմանք Քանզի Մովսէս

23 ըրէք՝ ամէն ինչ որ ձեզի խօսի։ Եւ պիտի ըլլայ
թէ ամէն ով որ ան մարգարէին մտիկ չընէ, ժո-
24 ղովուրդին մէջէն պիտի կորսուի։ Ու բոլոր մար-
գարէները որ Սամուէլէն 'ի վեր խօսեցան՝ աս օ-
25 րերուս համար ալ իմացուցին։ Դուք էք մար-
գարէներուն որդիքը և ան ուխտին, որ Աստ-
ուած մեր հայրերուն հետ ըրաւ, ու ըսաւ Աբ-
րահամին, Եւ քու սերունդովդ պիտի օրհնուին
26 երկրի բոլոր ազգերը։ Աստուած իր *Որդին յա-
րուցանելով առաջ ձեզի խրկեց զանիկա որ ձեզ
օրհնէ, ամէն մէկերնիդ ձեր չարութիւններէն
դարձընելով։

ԳԼ. Դ

1 Ու երբոր անոնք ժողովուրդին կը խօսէին, քա-
հանաները ու տաճարին իշխանը և սադուկեցի-
2 ները անոնց վրայ հասան, Դժուարելով որ անոնք
ժողովուրդին կը սորվեցընէին, և Յիսուսի միջո-
ցովը մեռելներէն յարութիւն առնելը կը քարո-
3 զէին։ Ու ձեռք զարկին անոնց և բանտը դրին
զանոնք մինչև հետևեալ օրը, ինչու որ ալ իրի-
4 կուն էր։ Բայց ան խօսքը լսողներէն շատերը
հաւատացին, ու մարդոց թիւը հինգ հազարի չափ
եղաւ։
5 Ու եղաւ որ հետևեալ օրը մէկտեղ ժողվուե-
ցան անոնց իշխանները և ծերերը ու դպիրները
6 Երուսաղեմի մէջ, Նաև Աննա քահանայապետը
ու Կայիափա և Յովհաննէս ու Աղեքսանդրոս և
7 ան ամէնը որ քահանայապետի ցեղէ էին։ Եւ
զանոնք մէջտեղը կայնեցուցած՝ կը հարցընէին,
Ի՞նչ զօրութիւնով կամ ի՞նչ անունով ըրիք դուք
8 աս բանը։ Անատենը Պետրոս Հոգւով Սրբով լեց-

*Ոմանք Որդին Յիսուսը

ուած՝ ըսաւ անոնց, Ով ժողովուրդին իշխան-
9 ները և Իսրայելի ծերերը, Թէ որ մենք այսօր
տկար մարդու մը եղած բարիքին համար կը
քննուինք, թէ ինչ միջոցով անիկա բժշկուեցաւ,
10 Յայտնի ըլլայ ձեզի ամէնքնուդ ու բոլոր Իսրայե-
լի ժողովուրդին, որ Նազովրեցի Յիսուս Քրիստո-
սի անունովը՝ որն որ դուք խաչեցիք, և որն որ
Աստուած մեռելներէն յարուց, ահա անով ա-
11 սիկա ձեր առջևը բժշկուած կեցեր է։ Անիկա է
ան քարը ձեզմէ շինողներէդ անարգուած, որ
12 անկիւնի գլուխ եղաւ։ Եւ ուրիշ մէկով մը փըր-
կութիւն չկայ. ինչու որ անկէ 'ի զատ ուրիշ ա-
նուն մը չկայ երկնից տակը մարդոց մէջ տրուած,
13 որ անով կարող ըլլանք փրկուելու։ Իսկ անոնք
Պետրոսին ու Յովհաննէսին համարձակութեանը
նայելով, և հասկընալով որ ագէտ ու առանց
ուսման մարդիկ են, կը զարմանային. և իմացան
14 որ անոնք Յիսուսի հետ էին. Ու ան բժշկուած
մարդը տեսնելով որ անոնց հետ կայներ էր, չէին
15 կրնար անոնց դէմ բան մը խօսիլ։ Եւ հրամայե-
լով անոնց որ ատեանէն դուրս ելլեն, իրարու
16 հետ խորհուրդ ըրին, Եւ ըսին, Ի՞նչ ընենք աս
մարդոցը. ինչու որ Երուսաղեմի բոլոր բնակիչ-
ներուն յայտնի է թէ ասոնց ձեռքովը երևելի
հրաշք մը եղաւ, ու մենք չենք կրնար ուրանալ։
17 Միայն թէ ժողովուրդին մէջը ալ աւելի չտա-
րածուելու համար՝ սաստիկ սպառնալիք ընենք
անոնց, որ ան անունով մէկմըն ալ չըլլայ որ մար-
18 դու բան խօսին։ Եւ զանոնք կանչելով պատուի-
րեցին անոնց որ ամենևին չխօսին և չսորվեցընեն
19 Յիսուսի անունովը։ Բայց Պետրոս ու Յովհաննէս
պատասխան տուին անոնց ու ըսին, Թէ որ Աս-
տուծոյ առջևը ուղիղ է որ Աստուծմէ աւելի ձե-
20 զի մտիկ ընենք, դուք դատեցէք։ Վասն զի մենք
ան որ տեսանք ու լսեցինք՝ չենք կրնար չխօսիլ։

21 Իսկ անոնք նորէն սպառնալիք ընելէն ետեւ ար-
ձակեցին զանոնք, բան մը չգտնելով թէ ինչպէս
պատժեն զանոնք ժողովուրդին համար, ինչու որ
ամէնքն ալ զԱստուած կը փառաւորէին եղած
22 բանին համար։ Վասն զի այն մարդը քառասուն
տարեկանէն աւելի էր, որուն վրայ այս բժշկու-
թեան հրաշքը եղաւ։
23 Եւ անկէ արձակուելով՝ իրենցիններուն քով ե-
կան, ու պատմեցին ինչ որ քահանայապետները
24 և ծերերը իրենց ըսին։ Անոնք ալ երբոր լսեցին,
միաբանութեամբ ձայներնին Աստուծոյ վերցու-
ցին՝ ըսելով, Ով Տէր, դուն ես այն Աստուածը՝
որ երկինքը ու երկիրը և ծովը ու բոլոր անոնց
25 մէջ եղածները ստեղծեցիր, Որ քու ծառայիդ
Դաւիթին բերնովը խօսեցար, Ինչո՞ւ հեթանոս-
ները խռովութիւն ըրին, ու ժողովուրդները պա-
26 րապ բաներ մտածեցին. Երկրի թագաւորները
պատրաստ կայնեցան, և իշխանները մէկտեղ
ժողվուեցան Տէրոջը դէմ և անոր Օծեալին դէմ։
27 Քանզի արդարեւ [այս քաղաքիս մէջ] ժողվուե-
ցան քու սուրբ Որդւոյդ Յիսուսին վրայ՝ որն որ
դուն օծեցիր, Հերովդէս և Պոնտացի Պիղատոս՝
ազգերուն հետ ու Իսրայէլի ժողովուրդներուն
28 հետ, Ընել՝ ինչ որ քու ձեռքդ և խորհուրդդ
29 սահմանեց առաջուց որ ըլլայ։ Եւ հիմա, ով Տէր,
նայէ անոնց սպառնալիքներուն, ու շնորհէ քու
ծառաներուդ որ բոլոր համարձակութիւնով քու
30 խօսքդ խօսինք, Քու ձեռքդ երկընցընելով բը-
ժըշկելու, և քու սուրբ Որդւոյդ Յիսուսի անու-
31 նովը նշաններ ու հրաշքներ ըլլալու։ Ու երբոր
անոնք աղօթք ըրին, շարժեցաւ այն տեղը՝ ուր
որ ժողվուած էին, և ամէնքը Հոգւով Սրբով
լեցուեցան, ու Աստուծոյ խօսքը համարձակ կը
խօսէին։
32 Եւ հաւատացեալներուն բազմութիւնը մէկ

սիրտ ու մէկ հոգի ունէին. և անոնցմէ մէկը չէր
ըսեր իր ստացուածներէն մէկուն համար՝ թէ իրն
է, հապա իրենց ամէն բաները հասարակաց կը
33 սեպէին։ Եւ մեծ զօրութիւնով առաքեալները
վկայութիւն կու տային Տէր Յիսուսի յարու-
թեանը, և անոնց ամենուն վրայ մեծ շնորհք
34 կար։ Ու անոնց մէջ կարօտութիւն քաշող մը
չկար, վասն զի անոնք որ ագարակներու կամ
տուներու տէր էին, կը ծախէին և ծախուածնե-
35 րուն գիները կը բերէին, Ու առաքելոց ոտքը կը
դնէին. և ամէն մէկուն իր կարօտութեանը նա-
36 յելով կը բաժնուէր։ Եւ Յովսէս որ առաքեալ-
ներէն Բառնաբաս մականուանեցաւ, (որ կը
թարգմանուի Մխիթարութեան որդի,) Ղեւտա-
37 ցի, ծննդեամբ Կիպրացի, Ագարակ մը ունենա-
լով, ծախեց ու ստակը բերաւ՝ առաքելոց ոտքը
դրաւ։

ԳԼ. Ե

1 Բայց մէկ մարդ մը Անանիա անունով իր կնկանը
Սափիրային հետ մէկտեղ ստացուածք մը ծա-
2 խեց. Եւ անոր գինէն խորեց, որ կնիկն ալ գի-
տէր, ու մէկ բաժինը բերաւ առաքելոց ոտքը
3 դրաւ։ Եւ Պետրոս ըսաւ, Անանիա, ինչո՞ւ Սա-
տանան քու սիրտդ լեցուց, որ դուն Հոգւոյն
Սրբոյ սուտ խօսիս, ու ագարակին գինէն խորես։
4 Չէ՞ որ քուկդ էր այն՝ քանի որ կեցեր էր, ու
ծախուած ալ՝ քու իշխանութեանդ տակն էր. ատ
ի՞նչ է որ քու սրտիդ մէջ այս բանը դրիր. չէ թէ
5 մարդոց սուտ խօսեցար, հապա Աստուծոյ։ Եւ
Անանիա այս խօսքերը լսելով՝ ինկաւ ու հոգի
տուաւ. և մեծ վախ ինկաւ ամենուն վրայ որ ատ
6 լսեցին։ Ու երիտասարդները ելան ու պատնեցին
7 անիկա, և դուրս հանելով թաղեցին։ Ու երբոր

երեք ժամու չափ վրան անցաւ, անոր կնիկը չը-
8 գիտնալով ինչ որ եղեր էր՝ ներս մտաւ։ Եւ
Պետրոս ըսաւ անոր, Ըսէ ինծի, ագարակը ա՞ն-
չափ գնո՞վ ծախեցիք. ան ալ ըսաւ, Այո, այնչափ։
9 Ու Պետրոս ըսաւ անոր, Ատ ի՞նչ է որ դուք մի-
աբանեցաք Տէրոջը Հոգին փորձելու. ահա քու
էրիկդ թաղողներուն ոտքերը դրանը քովն են,
10 քեզ ալ դուրս պիտի հանեն։ Եւ իսկոյն անոր
ոտքերուն քովը ինկաւ ու հոգի տուաւ. և երի-
տասարդները ներս մտնելով անիկա մեռած գը-
տան, ու հանեցին իր էրկանը քովը թաղեցին։
11 Եւ մեծ վախ մը ինկաւ բոլոր եկեղեցիին վրայ ու
ամենուն վրայ որ աս բաները լսեցին։
12 Եւ առաքեալներուն ձեռքովը շատ նշաններ
ու հրաշքներ կ'ըլլային ժողովուրդին մէջ. և ա-
մէնը միաբանութեամբ Սողոմոնի սրահին մէջն
13 էին։ Եւ ուրիշներէն մէկը չէր համարձակեր ա-
նոնց յարելու, հապա ժողովուրդը կը մեծարէր
14 անոնք։ Եւ Տէրոջը հաւատացողները ալ աւելի
կը շատնային, բազմութիւն էրիկ մարդոց ու կը-
15 նիկներու. Անանկ որ հիւանդները հրապարակ-
ները կը հանէին, և պատգարակներով ու մա-
հիճներով կը դնէին, որ Պետրոսին անցնելու ա-
տենը՝ գոնէ անոր շուքը անոնց մէկուն վրայ
16 հասնի։ Ու շրջակայ քաղաքներուն բազմութիւնը
Երուսաղէմ կը ժողվուէր, հիւանդներ և պիղծ
ոգիներէ նեղութիւն կրողներ բերելով, որոնք
ամէնն ալ կը բժշկուէին։
17 Ոտք ելաւ քահանայապետը և բոլոր իր հետը
եղողները որոնք սադուկեցւոց աղանդէն էին՝
18 նախանձով լեցուած, Ու առաքեալներուն ձեռք
զարկին և հասարակաց բանտը դրին զանոնք։
19 Բայց Տէրոջը հրեշտակը գիշերով բանտին դռները
20 բացաւ, ու դուրս հանելով զանոնք՝ ըսաւ, Գա-
ցէք և տաճարին մէջը կայնելով ժողովուրդին

21 խօսեցէք աս կենաց բոլոր խօսքերը։ Ու երբոր
[illegible] լսեցին, տաճարը մտան առտուանց և կը սոր-
վեցընէին. իսկ քահանայապետը եկաւ ու իր հետը
եղողները՝ ու մէկտեղ կանչեցին ժողովքը ու Իս-
րայէլի որդւոցը բոլոր ծերակոյտը, և մարդ խըր-
22 կեցին բանտը՝ որ զանոնք բերեն։ Ու երբոր սպա-
սաւորները գացին, զանոնք բանտին մէջ չգտնե-
23 լով՝ ետ դարձան, պատմեցին, Եւ ըսին թէ Բան-
տը ամէն զգուշութիւնով գոցուած գտանք, ու
պահապանները դռներուն առջևը կայնած, բայց
24 բանալով՝ ներսը մարդ չգտանք։ Ու երբոր [illegible]
քահանան և տաճարին իշխանը ու քահանայա-
պետները լսեցին աս խօսքերը, կը զարմանային
25 անոնց համար թէ ինչ պիտի ըլլայ ան։ Եւ մէկը
եկաւ պատմեց անոնց թէ Ահա ան մարդիկը որ
բանտը դրիք՝ տաճարը կայներ են և ժողովուր-
26 դին կը սորվեցընեն։ Անատենը իշխանը սպասա-
ւորներովը մէկտեղ գնաց զանոնք բերաւ առանց
բռնութեան, քանզի ժողովուրդէն կը վախնային,
27 որ չքարկոծուին։ Ու բերին զանոնք ատեանը
կայնեցուցին. և քահանայապետը անոնց հար-
28 ցուց՝ Ըսելով, Չէ՞ որ սաստիկ պատուիրեցինք
ձեզի որ աս անունով չսորվեցընէք. և ահա Ե-
րուսաղէմը ձեր ուսմունքովը լեցուցիք, և ան
մարդուն արիւնը կ'ուզէք մեր վրայ բերել։
29 Պատասխան տուաւ Պետրոս և ուրիշ առա-
քեալները ու ըսին, Աստուծոյ հնազան-
30 դիլ պէտք է քան թէ մարդոց։ Մեր հայրերուն
Աստուածը Յիսուսը յարուց, որն որ դուք փայ-
31 տէն կախելով սպաննեցիք։ Զանիկա Աստուած
իր աջ ձեռքովը Առաջնորդ ու Փրկիչ ըլլալու
բարձրացուց, Իսրայէլին ապաշխարութիւն և մե-
32 ղաց թողութիւն տալու։ Եւ մենք աս բաներուս
համար անոր վկաներ ենք, ու Սուրբ Հոգին ալ՝
որն որ Աստուած իրեն հնազանդ եղողներուն

33 տուաւ։ Եւ անոնք ասիկա լսելով խիստ կատղեցան,
ու կը խորհէին որ զանոնք մեռցնեն։
34 Եւ ատեանին մէջ փարիսեցի մը ոտքի վրայ ե-
լաւ՝ որուն անունը Գամաղիէլ էր, օրինաց վար-
դապետ մը՝ բոլոր ժողովուրդին առջեւ պատ-
ուաւոր մէկը, ու հրաման ըրաւ որ առաքեալ-
35 ները քիչ մը դուրս հանեն. Եւ ըսաւ անոնց, Ով
Իսրայելացի մարդիկ, դուք ձեզի զգուշացէք աս
36 մարդոցը համար թէ ինչ պիտի ընէք. Քանզի աս
օրերէս առաջ Թեւդաս ելաւ, իրեն համար ըսե-
լով թէ Երեւելի մէկ մըն է, ու թուով չորս հա-
րիւրի չափ մարդիկ իրեն յարեցան. որ ինքը
սպաննուեցաւ, և ան ամէնը որ իրեն հնազան-
37 դեր էին՝ ցրուեցան ու ոչինչ եղան։ Անոր ետե-
ւէն Յուդա Գալիլեացին ելաւ աշխարհագիր եղած
օրերը, և շատ ժողովուրդ իր կողմը ձգեց. ինքն
ալ կորսուեցաւ, և ան ամէնը որ իրեն հնազան-
38 դեր էին՝ ցիրուցան եղան։ Եւ հիմա ձեզի կ՚ը-
սեմ, Աս մարդոցմէ մէկդի կեցէք ու թող
տուէք զանոնք, ինչու որ եթէ աս խորհուրդը կամ
39 գործը մարդոցմէ է՝ պիտի քակուի. Հապա թէ
որ Աստուծմէ է՝ չէք կրնար անիկա քակել, չըլ-
լայ թէ Աստուծոյ դէմ մարտնչող ալ գտնուիք։
40 Եւ անոնք հաւանութիւն տուին անոր. ու ա-
ռաքեալները կանչելով՝ ծեծեցին, և պատուի-
րելով որ [illegible] ալ Յիսուսի անունովը չխօսին,
41 արձակեցին զանոնք։ Անոնք ալ ժողովքին առ-
ջեւէն գացին, ուրախանալով որ Տէրոջը անուանը
42 համար արժանի եղան անարգուելու։ Եւ ամէն
օր տաճարը ու տուներուն մէջ չէին դադարեր
սորվեցընելէն ու Յիսուս Քրիստոսը քարոզելէն։

ԳԼ. Զ

1 Եւ ան օրերը աշակերտները որ շատցան *Հելլե-

*Այսինքն Հելլենախօս Հրեից

նացւոց կողմէն տրտունջ մը եղաւ Եբրայեցւոց
դէմ, ինչու որ իրենց որբեւայրիները ամէն օր-
ուան ողորմութեան մատակարարութեան մէջ ան-
2 տես կ'ըլլային։ Եւ տասներկուքը կանչեցին ա-
շակերտներուն բազմութիւնը ու ըսին, Մեզի
չվայլեր Աստուծոյ խօսքը ձգել ու սեղաններու
3 ծառայութիւն ընել։ Ուստի, եղբայրներ, ձեզմէ
եօթը հոգի ընտրեցէք՝ բարի վկայուած, Հոգւով
Սրբով և իմաստութիւնով լեցուն, որ զանոնք
4 աս գործիս վրայ դնենք. Եւ մենք աղօթքի ու
5 Աստուծոյ խօսքին պաշտօնին պարապինք։ Եւ աս
խօսքը բոլոր բազմութեան առջեւ հաճոյ երե-
ցաւ. ու ընտրեցին Ստեփաննոսը՝ հաւատքով և
Հոգւով Սրբով լեցուն մարդ մը, ու Փիլիպպոսը,
և Պրոքորոնը, ու Նիկանովրան, և Տիմոնեան, ու
Պարմենան և Նիկողայոս նորահաւատ Անտիոքա-
6 ցին։ Ասոնք առաքեալներուն առջեւ կայնեցու-
ցին. անոնք ալ աղօթք ընելով՝ ձեռքերնին ա-
7 նոնց վրայ դրին։ Եւ Աստուծոյ խօսքը կ'աճէր,
ու աշակերտներուն թիւը խիստ կը շատնար Ե-
րուսաղէմի մէջ. և քահանաներէն մեծ բազմու-
թիւն հաւատքին կը հնազանդէին։
8 Եւ Ստեփաննոս՝ որ *հաւատքով ու զօրու-
թիւնով լցուած մարդ մըն էր, մեծ հրաշքներ և
9 նշաններ կ'ընէր ժողովուրդին մէջ։ Բայց ոմանք
ան ժողովարանէն՝ որ Ազատացւոց և Կիւրենաց-
ւոց ու Աղեքսանդրացւոց ժողովարան կ'ըսուէր,
և ոմանք որ Կիլիկիայէն ու Ասիայէն էին՝ ելան ու
10 Ստեփաննոսին հետ վիճաբանութիւն կ'ընէին. Եւ
չէին կրնար դէմ դնել ան իմաստութեանը ու
11 հոգիին՝ որով կը խօսէր։ Անատենը հրապուրեցին
քանի մը մարդիկ, որ ըսեն թէ Մենք լսեցինք որ
անիկա հայհոյական խօսքեր կը խօսի Մովսէսին

*Ոմանք շնորհքով

12 ու Աստուծոյ դէմ։ Եւ գրգռեցին ժողովուրդը
ու ծերերը և դպիրները, ու վրան հասնելով
13 զինքը բռնեցին ու ատեանը տարին։ Եւ սուտ
վկաներ կայնեցուցին, որոնք կ'ըսէին, Աս մարդը
չդադարիր հայհոյական բաներ խօսելէն սուրբ
14 տեղիս և օրէնքին դէմ. Քանզի լսեցինք անկէ
որ կ'ըսէր թէ Աս Նազովրեցի Յիսուսը պիտի քա-
կէ աս տեղը, ու պիտի փոխէ Մովսէսին մեզի ա-
15 ւանդած սովորութիւնները։ Եւ ատեանը նստող-
ներուն ամէնը երբոր անոր նայեցան, անոր երեսը
հրեշտակի երեսի պէս տեսան։

Գլ. Է

1 Անատենը քահանայապետը ըսաւ, Իրաւցընէ աս
2 բաները ասա՞նկ են։ Եւ անիկա ըսաւ, Մարդիկ
եղբայրներ ու հայրեր, մտիկ ըրէք. Փառաց Աստ-
ուածը մեր հօրը Աբրահամին երևցաւ, քանի որ
Միջագետքի մէջ էր, դեռ Խառանի մէջ չբնակած,
3 և ըսաւ անոր, Ելիր քու երկրէդ և քու ազ-
գականներէդ, ու եկուր ան երկիրը որ ես քեզի
4 պիտի ցուցընեմ։ Անատենը Քաղդէացւոց երկրէն
ելլելով՝ Խառանի մէջ բնակեցաւ. և անոր հօրը
մեռնելէն ետև անկէ փոխադրեց զանիկա աս եր-
5 կիրը, ուր որ դուք հիմա կը բնակիք։ Եւ ասոր
մէջ անոր ժառանգութիւն չտուաւ, ոչ ալ ոտքի
քայլ մը տեղ, բայց խոստացաւ որ անիկա իրեն
տայ իբրև կալուածք, և իրմէ ետև իր սերուն-
6 դին, երբոր դեռ ինքը որդի չունէր։ Եւ Աստ-
ուած այսպէս խօսեցաւ, թէ անոր սերունդը օ-
տար երկրի մէջ պանդուխտ պիտի ըլլայ, ու պի-
տի ծառայեցընեն անիկա և չարչարեն չորս հա-
7 րիւր տարի։ Եւ ան ազգը՝ որուն պիտի ծառա-
յեն, ես պիտի դատեմ, ըսաւ Աստուած, և անկէ
8 ետև պիտի ելլեն ու աս տեղս զիս պաշտեն։ Եւ

անոր թլփատութեան ուխտը տուաւ, ու ետքը
Աբրահամ Իսահակը ծնաւ, և թլփատեց զանիկա
ութերորդ օրը. Իսահակ ալ Յակոբը ծնաւ, Յա-
9 կոբ ալ՝ տասներկու նահապետները։ Եւ նահա-
պետները Յովսէփին վրայ նախանձելով՝ Եգիպ-
տոս ծախեցին. բայց Աստուած անոր
10 հետն էր, Ու փրկեց զանիկա իր ամէն նեղու-
թիւններէն, և անոր շնորհք ու իմաստութիւն
տուաւ Եգիպտոսի փարաւոն թագաւորին առ-
ջև. ան ալ զանիկա իշխան դրաւ Եգիպտոսի ու
11 իր բոլոր տանը վրայ։ Ու Եգիպտոսի և Քանանու
բոլոր երկրին վրայ սով մը եկաւ՝ ու մեծ նեղու-
12 թիւն, և մեր հայրերը ուտելիք չէին գտներ։ Եւ
Յակոբ երբոր լսեց թէ Եգիպտոսի մէջ ցորեն կը
13 գտնուի, առջի անգամին մեր հայրերը ղրկեց։ Եւ
երկրորդ անգամին Յովսէփ իր եղբայրներուն
ճանչցուց ինքզինքը. ու Յովսէփին ազգը փարա-
14 ւոնին յայտնի եղաւ։ Եւ Յովսէփ ղրկեց՝ ու կան-
չեց իր հայրը Յակոբը ու բոլոր ազգատոհմը, եօ-
15 թանասունըհինգ հոգի։ Եւ Յակոբ Եգիպտոս ի-
16 ջաւ, ու մեռաւ ինքը ու մեր հայրերը. Եւ Սիւ-
քէմ տարուելով՝ ան գերեզմանին մէջը դրուե-
ցան, որն որ Աբրահամ արծաթի գնով ծախու
17 առեր էր Սիւքեմի հօրը Եմովրի որդիներէն։ Ու
երբոր մօտեցաւ խոստմունքին ատենը, որ Աստ-
ուած երդումով խոստացեր էր Աբրահամին, ժո-
ղովուրդը աճեցաւ ու շատցաւ Եգիպտոսի մէջ,
18 Մինչև որ ուրիշ թագաւոր մը ելաւ՝ որ Յովսէ-
19 փը չէր ճանչնար։ Անիկա հնարք բանեցուց մեր
ազգին դէմ ու չարչարեց մեր հայրերը, մինչև
անգամ անոնց տղաքը դուրս ձգել տուաւ որ
20 չապրին։ Ան ժամանակը Մովսէս ալ ծնաւ, և
Աստուծոյ առջևը գեղեցիկ էր, որ իր հօրը տանը
21 մեծցաւ երեք ամիս։ Ու երբոր անիկա դուրս
ձգուեցաւ, փարաւոնին աղջիկը զանիկա վերցուց,

22 և իրեն իբրև որդի մեծցուց։ Ու Մովսէս Եգիպ-
տացւոց բոլոր իմաստութիւնովը վարժուեցաւ,
և զօրաւոր էր իր խօսքերովը ու գործքերովը.
23 Ու երբոր քառասուն տարեկան եղաւ, իր սիրտը
ինկաւ իր եղբայրներուն՝ Իսրայէլի որդւոցը այ-
24 ցելութիւն ընել. Ու Իսրայէլացիներէն մէկը հա-
րստահարուած տեսնելով պաշտպանեց, և զըր-
կուածին վրէժը առաւ՝ այն Եգիպտացին սպան-
25 նելով. Կը կարծէր թէ իր եղբայրները պիտի ի-
մանային որ Աստուած իր ձեռքովը անոնց ազա-
26 տութիւն պիտի տար, բայց անոնք չիմացան։ Ու
հետևեալ օրը անոնց դիմացը ելաւ՝ երբոր կը
կռուէին, և խաղաղութիւն ընելու սաստեց զա-
նոնք՝ ըսելով, Մարդիկ, դուք եղբայրներ էք,
27 ինչո՞ւ մէկզմէկ կը զրկէք. Բայց այն որ ընկերը
կը զրկէր՝ մերժեց զանիկա՝ ու ըսաւ, Ո՞վ քեզ
28 մեր վրայ իշխան ու դատաւոր դրաւ. Զի՞ս ալ
սպաննել կ'ուզես, ինչպէս որ երէկ Եգիպտացին
29 սպաննեցիր. Եւ Մովսէս աս խօսքին վրայ փա-
խաւ, ու Մադիամու երկրին մէջ պանդուխտ ե-
30 ղաւ, ուր որ երկու որդի ծնաւ. Եւ քառասուն
տարի անցնելէն ետև՝ Սինայ լեռանը անապատին
մէջ Տէրոջը հրեշտակը երևցաւ անոր մորենիի
31 կրակի բոցով. Մովսէս ալ երբոր տեսաւ՝ զար-
մացաւ այն տեսիլքին վրայ, ու երբոր մօտեցաւ
32 զննելու՝ Տէրոջը ձայնը եկաւ անոր որ կ'ըսէր, Ես
եմ քու հայրերուդ Աստուածը, Աբրահամին
Աստուածը, ու Իսահակին Աստուածը, և Յակո-
բին Աստուածը. Մովսէս ալ դողալով չէր
33 համարձակեր զննելու. Եւ Տէրը ըսաւ անոր, Ոտ-
քերուդ կօշիկները հանէ, ինչու որ աս տեղը որ
34 դուն կայներ ես՝ սուրբ երկիր է. Յիրաւի Եգիպ-
տոսի մէջ եղող ժողովուրդիս չարչարանքը տե-
սայ, ու լսեցի անոնց հառաչանքը, և իջայ զա-
նոնք ազատելու. Եւ հիմա եկուր քեզ Եգիպտոս

35 խրկեմ։ Այն Մովսէսը որ ուրացան ու կ'ըսէին,
Ո՞վ քեզ իշխան ու դատաւոր դրաւ, Աստուած
զանիկա իշխան և փրկիչ խրկեց այն հրեշտակին
36 ձեռքովը՝ որ մորենիին մէջ անոր երևցաւ. Անի-
կա հանեց զանոնք՝ հրաշքներ ու նշաններ ընե-
լով Եգիպտոսի երկրին ու Կարմիր ծովուն մէջ՝
37 և անապատին մէջ քառասուն տարի. Աս Մով-
սէսն է որ ըսաւ Իսրայէլի որդւոցը, Ձեր Տէր
Աստուածը ձեր եղբայրներէն ինծի պէս մարգա-
38 րէ մը պիտի հանէ ձեզի, անոր մտիկ ըրէք. Ասի-
կա այն է որ անապատը ժողովքին մէջն էր՝ Սի-
նայ լեռան վրայ իրեն խօսող հրեշտակին հետ
ու մեր հայրերուն հետ, որ կենդանի պատգամ-
39 ներ առաւ մեզի տալու. Որուն մեր հայրերը չու-
զեցին հնազանդ ըլլալ, հապա մերժեցին և ի-
40 րենց սրտերովը Եգիպտոս դարձան. Ու ըսին Ա-
հարոնին, Մեզի աստուածներ շինէ՝ որ մեր առ-
ջևէն երթան. քանզի այն Մովսէսը որ մեզ Ե-
գիպտոսի երկրէն հանեց, չենք գիտեր թէ ինչ
41 եղաւ անոր. Եւ այն օրերը որթ մը շինեցին, ու
կուռքին զոհ մատուցին, և իրենց ձեռացը գործ-
42 քերովը կը զուարճանային. Աստուած ալ Երես
դարձուց, ու թողուց զանոնք որ երկնից զօրքը
պաշտեն. ինչպէս որ գրուած է մարգարէից գըր-
քին մէջ, Միթէ անապատին մէջ քառասուն
տարի զոհեր ու պատարագնե՞ր մատուցիք ինծի,
43 ով Իսրայէլի տունը. Եւ Մողոքին վրանը առիք
ու ձեր Հռեմփա աստուծոյն աստղը, այն պատ-
կերները որ շինեցիք՝ անոնց երկրպագութիւն ը-
նելու. Ես ալ ձեզ Բաբիլոնէն անդին պիտի փո-
44 խադրեմ. Վկայութեան խորանը անապատին
մէջ մեր հայրերուն հետն էր, ինչպէս որ Մով-
սէսին հետ խօսողը հրաման ըրաւ՝ որ տեսած օ-
45 րինակին պէս շինէ զանիկա. Որ մեր հայրերն ալ
յաջորդաբար առնելով՝ Յեսուին հետ բերին

զանիկա ան ազգերուն կալուածքը, որոնք Աստ-
ուած վռնտեց մեր հայրերուն առջեւէն մինչեւ
46 Դաւիթին օրերը, Որ Աստուծոյ առջեւը շնորհք
գտաւ, եւ ուզեց որ Յակոբին Աստուծոյն բնա-
47 կարան մը գտնէ։ Ու Սողոմոն անոր տուն մը շի-
48 նեց։ Սակայն Բարձրեալը ձեռքով շինուած տա-
ճարներու մէջ չբնակիր, ինչպէս որ մարգարէն
49 կ'ըսէ, Երկինքը իմ աթոռս է, ու երկիրը իմ
ոտքերուս պատուանդանն է. ո՞րպիսի տուն պի-
տի շինէք ինծի, կ'ըսէ Տէրը, կամ ի՞նչ պիտի ըլ-
50 լայ իմ հանգստութեանս տեղը. Չէ՞ որ աս ա-
51 մէնը իմ ձեռքս շիներ է։ Ով խստապարանոց-
ներ ու սրտով եւ ականջով չթլփատուածներ,
դուք ամէն ատեն Հոգւոյն Սրբոյ հակառակ կը-
կենաք, ինչպէս ձեր հայրերը՝ անանկ ալ դուք։
52 Մարգարէներէն ո՞րը չհալածեցին ձեր հայրերը,
ու սպաննեցին զանոնք որ առաջուց պատմեցին
ան Արդարին գալուն համար, որ դուք հիմա ա-
53 նոր մատնիչները եւ սպաննողները եղաք. Դուք
որ օրէնքը առիք հրեշտակներուն մատակարա-
րութեամբը՝ ու չպահեցիք։
54 Եւ անոնք աս բաները լսելով՝ սրտերնուն մէջ
կը կատղէին ու ակռաներնին անոր վրայ կը
55 կրճտէին։ Բայց անիկա Հոգւով Սրբով լեցուած՝
երկինքը նայեցաւ եւ տեսաւ Աստուծոյ փառքը,
ու Յիսուսն ալ որ Աստուծոյ աջ կողմը կայներ
էր, եւ ըսաւ, Ահա կը տեսնեմ երկինքը բաց-
ուած, ու Որդին մարդոյ՝ Աստուծոյ աջ կողմը
56 կայնած։ Իսկ անոնք մեծաձայն աղաղակելով՝ ա-
կանջներնին գոցեցին, եւ ամէնը մէկէն վազեցին
57 անոր վրայ. Ու քաղաքէն դուրս հանելով՝ կը
քարկոծէին զանիկա. եւ վկաները իրենց հանդերձ-
ները վար կը դնէին երիտասարդի մը ոտքերուն
58 քովը, որ Սօղոս կ'ըսուէր։ Եւ կը քարկոծէին
Ստեփաննոսը, որ աղօթք կ'ընէր ու կ'ըսէր, Տէր

59 Յիսուս, ընդունէ իմ հոգիս։ Ու ծնկան վրայ
գալով բարձրաձայն աղաղակեց, Տէր, աս մեղքը
մի սեպեր ատոնց. եւ աս ըսելով՝ ննջեց։ Սօղոս
ալ համակից էր անոր սպաննուելուն։

ԳԼ. Ը

1 Եւ ան օրը մեծ հալածում եղաւ Երուսաղեմի
մէջ եղող եկեղեցիին վրայ, եւ առաքեալներէն 'ի
զատ ամէնն ալ ցիրուցան եղան Հրէաստանի ու
2 Սամարիայի երկիրներուն մէջ։ Եւ աստուածա-
վախ մարդիկ Ստեփաննոսը վերցուցին, ու անոր
3 վրայ մեծ ողբ ըրին։ Բայց Սօղոս եկեղեցիին շատ
վնաս կու տար, տուները կը մտնէր, էրիկ ու կնիկ
մարդիկը կը քաշէր՝ բանտը դնել կու տար։
4 Եւ ան ցիրուցան եղածները կը պտըտէին ու
5 խօսքը կը քարոզէին։ Փիլիպպոս ալ Սամարիայի
մէկ քաղաքը իջնելով՝ Քրիստոսը կը քարոզէր ա-
6 նոնց։ Եւ ժողովուրդները միաբան հաւանու-
թեամբ Փիլիպպոսին ըսածներուն ուշադրութիւն
կու տային՝ լսելով ու տեսնելով ան նշանները որ
7 կ'ընէր։ Վասն զի շատ դիւահարներէն պիղծ ո-
8 գիները մեծաձայն աղաղակելով կ'ելլէին. Եւ շատ
9 անդամալոյծներ ու կաղեր կը բժշկուէին։ Ու մեծ
ուրախութիւն եղաւ ան քաղաքին մէջ։ Բայց
Սիմոն անունով մարդ մը կար՝ որ առաջուց ան
քաղաքին մէջ մոգութիւն կ'ընէր, ու Սամարաց-
ւոց ազգը կ'ապշեցընէր՝ իրեն համար ըսելով թէ
10 մեծ մէկ մըն է. Որ անոր ուշադրութիւն կու-
տային ամէնն ալ պզտիկէն մինչեւ մեծը, եւ կ'ը-
սէին, Ասիկա Աստուծոյ մեծ [ըսուած] զօրու-
11 թիւնն է։ Շատ ժամանակէ 'ի վեր կախարդու-
թիւններով զանոնք ապշեցընելուն համար՝ իրեն
12 ուշադրութիւն կու տային։ Բայց երբոր Փիլիպ-
պոսին հաւատացին՝ որ Աստուծոյ թագաւորու-

թեանը ու Յիսուս Քրիստոսի անուանը վրայով
կը քարոզէր, կը մկրտուէին թէ էրիկ մարդիկ և
13 թէ կնիկ մարդիկ։ Եւ Սիմոն ինքն ալ հաւատաց,
ու մկրտուելով՝ միշտ Փիլիպպոսին հետ էր. և
տեսնելով այն նշանները ու մեծ զօրութիւնները
14 որ կ'ըլլային՝ կը զարմանար։ Իսկ Երուսաղեմի մէջ
եղող առաքեալները երբոր լսեցին թէ Սամարա-
ցիք Աստուծոյ խօսքը ընդուներ են, Պետրոսը ու
15 Յովհաննէսը անոնց խրկեցին. Որոնք իջնելով՝ ա-
ղօթք ըրին անոնց համար որ Սուրբ Հոգին ա-
16 ռնեն. (Ինչու որ դեռ անոնց մէկուն վրայ իջած
չէր, հապա միայն Տէր Յիսուսի անունովը մկրտը-
7 ուած էին.) Անատենը ձեռքերնին դրին անոնց
18 վրայ, ու Սուրբ Հոգին կ'առնէին։ Երբոր տեսաւ
Սիմոն թէ առաքեալները անոնց վրայ ձեռք դնե-
լով՝ Սուրբ Հոգին կը տրուի, անոնց ստակ մա-
19 տուց ու ըսաւ, Ինծի ալ աս իշխանութիւնը
տուէք, որպէս զի որու վրայ ձեռք դնեմ՝ ան-
20 կա Սուրբ Հոգին առնէ։ Բայց Պետրոս ըսաւ ա-
նոր, Քու արծաթդ քեզի հետ թող կորսուի, ին-
չու որ Աստուծոյ պարգևը կարծեցիր թէ ստա-
21 կով կ'առնուի։ Դուն աս բանին մէջ մասն ու
բաժին չունիս, ինչու որ քու սիրտդ Աստուծոյ
22 առջևը շիտակ չէ։ Ուստի աս քու չարութենէդ
զղջի եկուր ու Աստուծոյ աղաչէ, գուցէ ներուի
23 քեզի քու սրտիդ նոր խորհուրդը։ Ինչու որ ես
քեզ մաղձի դառնութեան մէջ և անիրաւութեան
24 կապին մէջ կը տեսնեմ։ Սիմոն պատասխան տը-
ուաւ ու ըսաւ, Դուք ինծի համար աղօթք ըրէք
Տէրոջը, որ աս ձեր ըսածներէն բան մը իմ վրաս
25 չգայ։ Անոնք ալ վկայութիւն տալով Տէրոջը
խօսքը խօսելէն ետև դարձան Երուսաղէմ, և
Սամարացւոց շատ գեղերուն մէջ աւետարանը
քարոզեցին։
26 Եւ Տէրոջը հրեշտակը Փիլիպպոսին խօսեցաւ ը-

սելով, Ելիր ու գնա դէպ հարաւային կողմը այն
ճամբան, որ Երուսաղեմէն դէպ ի Գազա կ'իջնէ,
27 որ անապատ տեղ մըն է։ Ան ալ ելաւ գնաց. և
ահա Եթէովպացի ներքինի մարդ մը՝ Եթէով-
պացւոց կանդակա թագուհիին մէկ զօրաւորը,
որ ինքը անոր բոլոր գանձերուն վրայ էր, որ Ե-
28 րուսաղէմ եկեր էր երկրպագութիւն ընելու. Ե-
տնդէ ետ կը դառնար, ու իր կառքը նստած Ե-
29 սայի մարգարէին գիրքը կը կարդար։ Եւ Հոգին
ըսաւ Փիլիպպոսին, Մօտեցիր և այս կառքին քովը
30 գնա։ Փիլիպպոս ալ վազելով մօտ գնաց՝ ու մը-
տիկ կ'ընէր որ Եսայի մարգարէին գիրքը կը կար-
դար, և ըսաւ, Կարդացածդ կը հասկնա՞ս արդ-
31 եօք։ Ան ալ ըսաւ, Ինտո՞ր կրնամ հասկընալ՝ թէ
որ մէկը ինծի չառաջնորդէ. ու աղաչեց Փիլիպ-
32 պոսին որ ելլէ իր քովը նստի։ Եւ գրքին մէջ
կարդացած տեղը աս էր, Ոչխարի պէս մոր-
թուելու տարուեցաւ, ու իր խուզողին առջևը
մունջ կեցող գառնուկի պէս՝ անանկ իր բերանը
33 չբանար։ Իր խոնարհութեանը մէջ իր դատաս-
տանը վերցուեցաւ, և անոր ազգատոհմը ո՞վ
պիտի պատմէ. ինչու որ անոր կեանքը երկրէն
34 կը վերցուի։ Ներքինին պատասխան տուաւ Փի-
լիպպոսին ու ըսաւ, Կ'աղաչեմ քեզի, մարգարէն
որո՞ւ համար կ'ըսէ աս. իրե՞ն համար թէ մէկ
35 ուրիշի մը համար։ Իսկ Փիլիպպոս իր բերանը բա-
ցաւ, և գրքին աս խօսքէն սկսելով՝ Յիսուսը քա-
36 րոզեց անոր. Ու երբոր ճամբան կ'երթա-
յին, ջուրի մը քով եկան. ու ըսաւ ներքինին,
Ահա ջուր, ալ ի՞նչ բան զիս կ'արգիլէ մկրտուե-
37 լէն։ [Եւ Փիլիպպոս ըսաւ անոր, Թէ որ քու բո-
լոր սրտովդ կը հաւատաս՝ կարելի է. անիկա պա-
տասխան տուաւ ու ըսաւ, Կը հաւատամ թէ Յի-
38 սուս Քրիստոս Որդի Աստուծոյ է։] Ու հրաման
ըրաւ որ կառքը կայնեցընեն. և երկուքն ալ

ջուրը իջան՝ Փիլիպպոս ու ներքինին, և մկրտեց
39 զանիկա։ Ու երբոր ջուրէն դուրս ելան, Տէրոջը
Հոգին յափշտակեց Փիլիպպոսը, և ալ ներքինին
զանիկա չտեսաւ, ու իր ճամբան կ'երթար ուրա-
40 խութեամբ։ Բայց Փիլիպպոս Ազովտոսի մէջ գըտ-
նուեցաւ. ու պտըտելով բոլոր քաղաքներուն ա-
ւետարան կը քարոզէր, մինչև որ Կեսարիա
եկաւ։

ԳԼ. Թ

1 Բայց Սօղոս տակաւին Տէրոջը աշակերտներուն
դէմ սպառնալիք ու մահ փչելով՝ քահանայա-
2 պետին քովը գնաց. Եւ անկէ թուղթեր ուզեց
Դամասկոս ժողովարաններուն համար, որ եթէ ան
ճամբուն հետեւողներ գտնելու ըլլայ՝ էրիկ մար-
դիկ կամ կնիկ մարդիկ, կապած Երուսաղէմ բե-
3 րէ։ Ու երբոր կ'երթար ու Դամասկոսին մօտե-
ցաւ, յանկարծ իր բոլորտիքը երկինքէն լոյս մը
4 փայլատակեց. Եւ ինքը գետինը իյնալով՝ մէկ
ձայն մը լսեց որ կ'ըսէր իրեն, Սաւուղ, Սաւուղ,
5 ինչո՞ւ զիս կը հալածես։ Եւ անիկա ըսաւ, Ո՞վ ես
դուն, Տէր. և Տէրը ըսաւ, Ես եմ Յիսուսը՝ որ
դուն կը հալածես. *դժուար բան է քեզի խթանի
6 դէմ կից զարնել։ Ան ալ դողալով ու ապշու-
7 թեամբ ըսաւ, Տէր, ի՞նչ կ'ուզես որ ընեմ։ Եւ
Տէրը ըսաւ անոր," Ելիր ու քաղաքը մտիր, և
քեզի պիտի զրուցուի ինչ որ պարտիս ընել. Իսկ
ան մարդիկը որ իր հետը կ'երթային՝ ապշած
կեցեր էին, ձայնը միայն կը լսէին, բայց մէկը
8 չէին տեսներ։ Եւ Սօղոս գետնէն ելաւ, ու բաց
աչքերով մէկը չէր տեսներ. ուստի անոր ձեռ-
9 քէն բռնեցին ու Դամասկոս մտցուցին։ Եւ ե-

*Ոմանք չունին

րեք օր կեցաւ առանց տեսնելու, և ոչ կերաւ՝
ոչ ալ խմեց։
10 Ու Անանիա անունով աշակերտ մը կար Դա-
մասկոսի մէջ. և Տէրը տեսիլքի մէջ անոր ըսաւ,
11 Անանիա. ան ալ ըսաւ, Տէր, ահա հոս եմ։ Եւ
Տէրը ըսաւ անոր, Ելիր ու գնա ան փողոցը որ
Ուղիղ կ'ըսուի, և հոն Յուդային տանը մէջ փնտռէ
Սօղոս անունով Տարսոնցի մը. վասն զի ա-
12 հա անիկա աղօթք կ'ընէ. Ու տեսիլքի մէջ մարդ
մը տեսաւ Անանիա անունով՝ ներս մտած և
13 ձեռքը իր վրայ դրած, որ տեսնէ։ Անանիա ալ
պատասխան տուաւ, Տէր, շատերէն լսեցի ան
մարդուն համար թէ որչափ չարիքներ ըրաւ քու
14 սուրբերուդ Երուսաղեմի մէջ. Եւ հոս ալ քա-
հանայապետներէն իշխանութիւն ունի կապելու
15 ան ամէնը, որ քու անունդ կը կանչեն։ Եւ Տէրը
ըսաւ անոր, Գնա դուն, ինչու որ անիկա ինծի
ընտիր աման մըն է, իմ անունս կրելու հեթա-
նոսներուն ու թագաւորներուն և Իսրայելի որդ-
16 ւոց առջևը. Քանզի ես անոր պիտի ցուցընեմ
թէ որչափ պէտք է իրեն իմ անունս համար
17 նեղութիւն կրել։ Եւ Անանիա գնաց ու ան տու-
նը մտաւ, և ձեռքերը անոր վրայ դնելով ըսաւ,
Սաւուղ եղբայր, Տէրը զիս խրկեց, ան Յիսուսը
որ ճամբուն մէջ քեզի երեւցաւ երբոր կու գա-
յիր, որպէս զի տեսութիւնդ առնես, ու Հոգ-
18 ւով Սրբով լեցուիս։ Եւ շուտ մը անոր աչքերէն
թեփերու պէս բաներ ինկան. և իսկոյն տեսաւ
19 ու ելաւ մկրտուեցաւ. Եւ կերակուր ուտելով
ոյժը վրան եկաւ, *ու քանի մը օր Դամասկոսի
մէջ եղող աշակերտներուն հետը կեցաւ։
20 Եւ անմիջապէս ժողովարաններուն մէջ կը քա-
րոզէր †Յիսուսը, թէ անիկա է Աստուծոյ Որդին։

*Ոմանք ու Սօղոս
†Ոմանք Քրիստոսը

21 Եւ ամէն լսողները մեծապէս զարմացեր էին, ու
կ'ըսէին, Ասիկա ան չէ՞, որ Երուսաղէմի մէջ կը
կործանէր անոնք որ աս անունը կը կանչէին. և
հոս ալ ան բանին համար եկած էր, որ զանոնք
22 կապած՝ քահանայապետներուն տանի։ Բայց Սօ-
ղոս՝ ա՛լ աւելի կը զօրանար, և Դամասկոսի մէջ
բնակող Հրէաները կը պապանձեցընէր, ապացու-
23 ցանելով թէ Քրիստոսը ասիկա է։ Ու շատ օրեր
անցնելէն ետքը Հրէաները խորհուրդ ըրին որ
24 անիկա սպաննեն։ Բայց Սօղոսին յայտնուեցաւ
անոնց նենգութիւնը. և ցորեկ ու գիշեր դռները
25 կը պահէին որ անիկա սպաննեն։ Իսկ աշակերտ-
ները գիշերով առին զանիկա, ու զամբիւղով մը
կախելով պատէն վար իջեցուցին։
26 Երբոր Սօղոս Երուսաղէմ եկաւ՝ կը ջանար ա-
շակերտներուն յարելու, բայց ամէնն ալ կը վախ-
նային անկէ՝ չհաւատալով թէ անիկա աշակերտ
27 էր։ Բայց Բառնաբաս զանիկա առնելով առա-
քեալներուն տարաւ, ու պատմեց անոնց թէ ինչ-
պէս ճամբուն վրայ Տէրը տեսաւ, և թէ անոր
հետ խօսեցաւ, և թէ ինչպէս Դամասկոսի մէջ
28 համարձակ քարոզեց Յիսուսի անունովը։ Ու Ե-
րուսաղեմի մէջ անոնց հետ կը մտնէր ու կ'ելլէր՝
Տէր Յիսուսի անունովը համարձակ քարոզելով.
29 նաև *Հելլենացւոց դէմ կը խօսէր և վիճաբա-
նութիւն կ'ընէր. անոնք ալ կը փնտռէին անիկա
30 սպաննել։ Իսկ եղբայրները իմանալով՝ զանիկա
Կեսարիա իջեցուցին, և անկէ Տարսոն խրկեցին
զանիկա։
31 Անտենը եկեղեցիները բոլոր Հրէաստանի և
Գալիլեայի ու Սամարիայի մէջ խաղաղութիւն ու-
նեցան, և շինութիւն կ'ընդունէին, ու Տէրոջը
երկիւղովը և Հոգւոյն Սրբոյ մխիթարութեամբը
քալելով կ'աճէին։

*Այսինքն Հելլենախօս Հրէից

32 Ու երբոր Պետրոս ամէն տեղ կը պտըտէր,
33 Լիւդդեա բնակող սուրբերուն քովն ալ իջաւ։ Եւ
հոն մէկ մարդ մը գտաւ, որուն անունը Ենեա
էր, ութը տարիէ 'ի վեր մահիճը պառկած ան-
34 դամալոյծ. Եւ ըսաւ անոր Պետրոս, Ենեա, Յի-
սուս Քրիստոս քեզ կը բժշկէ. ելիր ու քու ան-
35 կողինդ շիտկէ. ան ալ շուտ մը ելաւ։ Եւ Լիւդ-
դեայի ու Սարոնի մէջ բնակողներուն ամէնը ա-
36 նիկա տեսան, ու Տէրոջը դարձան։ Եւ Յոպպէի
մէջ աշակերտ եղած կնիկ մը կար՝ անունը Տա-
բիթա, (որ թարգմանուելով Այծեմնիկ կ'ըսուի.)
ասիկա լեցուած էր բարի գործքերով ու ողոր-
37 մութիւններով՝ որ ինքը կ'ընէր։ Ու եղաւ որ ան
օրերը ինքը հիւանդացաւ ու մեռաւ. լուացին
38 անիկա և վերի սենեակ մը դրին։ Ու Լիւդդեա
Յոպպէին մօտ էր. ուստի աշակերտները լսելով
թէ Պետրոս հոն է, անոր երկու մարդ խրկեցին,
39 աղաչելով որ չուշանայ իրենց գալու։ Պետրոս
ալ ելաւ անոնց հետը եկաւ. ու երբոր եկաւ,
վերի սենեակը հանեցին զանիկա. և բոլոր որ-
բևարիները անոր բոլորտիքը կայնեցան, կու լա-
յին ու կը ցուցընէին ան բաճկոնները և հան-
դերձները որ կ'ընէր Այծեմնիկ՝ քանի որ իրենց
40 հետն էր։ Պետրոս ալ ամէնը դուրս հանելով՝
ծունկի վրայ եկաւ ու աղօթք ըրաւ, և դէպ 'ի
մարմինը դառնալով ըսաւ, Տաբիթա, ելիր կայ-
նէ. ան ալ իր աչքերը բացաւ, ու Պետրոսը
41 տեսնելով՝ ելաւ շիտակ նստաւ։ Ինքն ալ ձեռքը
անոր տուաւ, ու վերցուց զանիկա. և սուրբերը
ու որբևարիները կանչելով՝ անոնց առջևը ողջ
42 կայնեցուց զանիկա։ Եւ աս բանը բոլոր Յոպպէին
մէջ իմացուեցաւ, ու շատերը Տէրոջը հաւատա-
43 ցին։ Եւ եղաւ որ ինքը շատ օրեր Յոպպէ կեցաւ
Սիմոն անունով կաշի բանողի մը քով.

ԳԼ. Ժ

1 Կեսարիայի մէջ մարդ մը կար Կոռնելիոս անու-
նով, հարիւրապետ՝ Իտալացի ըսուած գունդէն.
2 Բարեպաշտ ու աստուածավախ իր բոլոր տու-
նովը, որ ժողովուրդին շատ ողորմութիւններ
կու տար, և ամէն ատեն Աստուծոյ աղօթք կ'ը-
3 նէր։ Անիկա օրուան ժամը իններն ատենները տե-
սիլքի մէջ Աստուծոյ հրեշտակը յայտնի տեսաւ,
4 որ իր քովը մտաւ և իրեն ըսաւ, Կոռնելիոս. Ան
ալ անոր նայելով ու խիստ վախնալով՝ ըսաւ,
Ի՞նչ է, Տէր. ան ալ ըսաւ անոր, Քու աղօթք-
ներդ ու ողորմութիւններդ Աստուծոյ առջևը ե-
5 լան յիշատակի համար։ Եւ հիմա Յոպպէ մարդիկ
խրկէ, ու կանչէ Սիմոն անունով մէկը որ Պետրոս
6 մականուանեալ է. Անիկա իբրև հիւր կը կենայ
Սիմոն անունով կաշի բանողի մը քով, որուն
7 տունը ծովուն մօտ է.* Ու երբոր գնաց այն հրեշ-
տակը որ †իր հետը կը խօսէր, իր ծառաներէն
երկուքը կանչեց, ու իր քովը սպասողներէն ալ
8 բարեպաշտ զինուոր մը։ Եւ բոլորը անոնց պատ-
մելով՝ Յոպպէ խրկեց զանոնք։
9 Ու հետևեալ օրը երբոր անոնք ճամբայ եր-
թալով՝ քաղաքին մօտեցան, Պետրոս ժամը վե-
10 ցին ատենները տանիքը ելաւ աղօթք ընելու. Եւ
խիստ անօթեցած ըլլալով՝ կ'ուզէր ճաշ ընել. ու
քանի որ [illegible] պատրաստութիւն կը տեսնէ-
ին՝ իր վրայ մտքի յափշտակութիւն մը եկաւ.
11 Եւ տեսաւ երկինքը բացուած, ու չորս ծայրէն
կապուած աման մը մեծ կտաւի մը պէս, որ

*Ոմանք կ'աւելցնեն Անիկա քեզի պիտի գրուցէ ինչ
որ պարտիս ընել
†Ոմանք Կոռնելիոսին

12 *իջաւ երկրի վրայ. Որուն մէջը կար երկրի բոլոր
չորքոտանիները ու գազանները և սողունները ու
13 երկնից թռչունները։ Եւ ձայն մը եկաւ իրեն, Ե-
14 լիր, Պետրոս, մորթէ ու կեր։ Բայց Պետրոս ը-
սաւ, Քաւ լիցի, Տէր, ինչու որ ես ամենևին պիղծ
15 կամ անմաքուր բան կերած չեմ. Նորէն մէյ մըն
ալ ձայն էկաւ իրեն, Ան որ Աստուած մաքրեց,
16 դուն պիղծ մի սեպեր։ Ասիկա երեք անգամ ե-
17 ղաւ, և ամանը երկինքը վերցաւ։ Ու Պետրոս
երբոր իր մտքին մէջ կը զարմանար թէ ինչ պի-
տի ըլլայ ան իր տեսած տեսիլքը, ահա Կոռնելի-
ոսէն խրկուած մարդիկը Սիմոնին տունը հարցու-
18 ցին, ու դրանը առջևը կայնեցան. Եւ կանչելով
կը հարցնէին թէ Սիմոնը որ Պետրոս կ'ըսուի՝
19 հո՞ս կը կենայ։ Ու երբոր Պետրոս այն տեսիլքին
վրայով կը մտածէր, Հոգին Սուրբ ըսաւ անոր,
20 Ահա երեք մարդիկ քեզ կը փնտռեն. Ուստի ե-
լիր՝ իջիր, և անոնց հետը գնա առանց խղճահա-
21 րութեան, ինչու որ ես խրկեցի անոնք։ Պետրոս
ալ †այն մարդոցը քովը իջնելով՝ ըսաւ, Ահա ես
եմ անիկա որ դուք կը փնտռէք. ի՞նչ բանի հա-
22 մար եկած էք։ Անոնք ալ ըսին, Կոռնելիոս հա-
րիւրապետը՝ արդար և աստուածավախ մարդ՝
բոլոր Հրէից ազգէն վկայուած՝ սուրբ հրեշտակէ
մը հրաման առաւ, որ քեզ իր տունը կանչէ և
23 քեզմէ խօսքեր լսէ։ Անատենը ներս կանչեց ա-
նոնք և իր քովը վար դրաւ։
Ու հետևեալ օրը Պետրոս ելաւ՝ անոնց հետը
գնաց, և քանի մըն ալ Յոպպէէն եղող եղբայր-
24 ներէն իր հետը գացին։ Ու հետևեալ օրը Կեսա-
րիա մտան. Կոռնելիոս ալ իր ազգականները և
մտերիմ բարեկամները կանչած՝ անոնց կը սպա-

*Ոմանք իրեն իջաւ
†Ոմանք Կոռնելիոսէն իրեն խրկուած

25 սէր։ Ու երբոր Պետրոս ներս կը մտնէր, Կոռնե-
լիոս անոր դիմացը ելաւ, ու անոր ոտքը իյնա-
26 լով երկրպագութիւն կ'ընէր։ Բայց Պետրոս ա-
նիկա կանգնեցուց ու ըսաւ, Ելի՛ր կայնէ, ես ինքս
27 ալ մարդ եմ։ Եւ անոր հետ խօսակցելով ներս
մտաւ, ու հոն շատ մարդիկ ժողվուած գտաւ։
28 Եւ ըսաւ անոնց, Դուք գիտէք թէ ինչպէս ապօ-
րինաւոր բան է Հրէայ մարդու մը օտարազգիի
հետ հաղորդակցութիւն ընելը կամ անոր մօտե-
նալը. բայց Աստուած ինծի ցուցուց որ մարդոց-
29 մէ մէկուն պիղծ կամ անմաքուր չըսեմ։ Անոր
համար ես ալ որ կանչուեցայ՝ առանց դէմ խօ-
սելու եկայ. բայց հիմա կը հարցնեմ, ի՞նչ բանի
30 համար զիս կանչեցիք։ Կոռնելիոս ալ ըսաւ,
Չորս օր առաջ մինչեւ այս ժամս ծոմ կը պահէի,
ու ժամը իննին տանս մէջ աղօթք կ'ընէի. և ա-
հա փայլուն հանդերձներով մարդ մը կայնեցաւ
31 առջեւս ու ըսաւ, Կոռնելիոս, քու աղօթքդ լը-
սուեցաւ, և քու ողորմութիւններդ Աստուծոյ
32 առջեւը յիշուեցան։ Ուստի մարդ ղրկէ Յոպպէ,
ու կանչէ Սիմոնը որ Պետրոս ալ կ'ըսուի. անի-
կա ծովուն մօտ Սիմոն անունով կաշի բանողի մը
տանը մէջ իբրեւ հիւր կը կենայ. որ երբոր գայ՝
33 քեզի պիտի խօսի։ Ուստի անմիջապէս մարդ
ղրկեցի քեզի, դուն ալ աղէկ ըրիր որ եկար. և
հիմա մենք ամէնքս Աստուծոյ առջեւը կեցեր
ենք՝ լսելու ան ամէն բաները որ Աստուծմէ հրա-
մայուած է քեզի։
34 Պետրոս իր բերանը բացաւ ու ըսաւ, Ճշմար-
տութեամբ կը հասկընամ որ Աստուծոյ քովը ա-
35 չառութիւն չկայ. Հապա ամէն ազգի մէջ ան որ
անկէ կը վախնայ ու արդարութիւն կը գործէ՝
36 անոր ընդունելի է։ Ան խօսքը որ Իսրայելի որդ-
ւոցը ղրկեց Աստուած խաղաղութիւն քարոզելու
Յիսուս Քրիստոսի ձեռքովը, (անիկա է ամենուն

37 Տէրը.) Դուք աղէկ գիտէք ան բանը, որ բոլոր
Հրէաստանի մէջ եղաւ Գալիլեայէն սկսած՝ ան
38 մկրտութենէն ետեւ որ Յովհաննէս քարոզեց. Յի-
սուսը որ Նազարեթէն էր, որ Աստուած զանիկա
օծեց Սուրբ Հոգիով և զօրութիւնով, որ պտը-
տեցաւ բարիք ընելով ու Սատանայէն բոլոր տան-
ջուածները բժշկելով, քանզի Աստուած իր հետն
39 էր։ Եւ մենք վկայ ենք ան ամէն բաներուն որ
ըրաւ Հրէաստանի երկրին մէջ ու Երուսաղեմի
մէջ, որն որ փայտէն կախած սպաննեցին ալ։
40 Աստուած զանիկա երրորդ օրը յարուց, և յայտ-
41 նի ըրաւ զանիկա, Ոչ թէ բոլոր ժողովուրդին,
հապա մեզի առաջուց Աստուծմէ վկայ ըլլալու
ընտրուածներուս, որ մենք իրեն հետ կերանք ու
խմեցինք ալ անոր մեռելներէն յարութիւն առ-
42 նելէն ետքը։ Եւ ինքը պատուիրեց մեզի՝ որ ժո-
ղովուրդին քարոզենք ու վկայութիւն տանք, թէ
անիկա է Աստուծմէ սահմանուած՝ կենդանինե-
43 րուն ու մեռելներուն Դատաւորը։ Անոր կը վկա-
յեն բոլոր մարգարէները թէ ամէն իրեն հաւա-
տացողները իր անունովը մեղաց թողութիւն
կ'առնեն։
44 Ու երբոր Պետրոս այս խօսքերը կը խօսէր, Հո-
գին Սուրբ իջաւ ամենուն վրայ՝ որոնք խօսքը
45 կը լսէին։ Եւ թլփատուածներէն եղող հաւատաց-
եալները՝ որոնք Պետրոսին հետը եկած էին, զար-
մացան որ հեթանոսներուն վրայ ալ Հոգւոյն Սըր-
46 բոյ պարգեւը կը լեցուէր։ Քանզի կը լսէին անոնց-
մէ որ օտար լեզուներով կը խօսէին, և զԱստ-
47 ուած կը փառաւորէին։ Անատենը Պետրոս պա-
տասխան տուաւ, Կրնա՞յ մէկը ջուրը արգիլել որ
ասոնք չմկրտուին, որոնք Հոգին Սուրբն ալ ըն-
48 դունեցին մեզի պէս։ Ու հրաման ըրաւ որ Տէ-
րոջը անունովը մկրտուին. անատենը իրեն աղա-
չեցին որ քանի մը օր հոն մնայ։

ԳԼ. ԺԱ

1 Եւ առաքեալները ու եղբայրները որ Հրէաստա-
նի կողմերն էին, լսեցին որ հեթանոսներն ալ Աս-
2 տուծոյ խօսքը ընդուներ են։ Ու երբոր Պետրոս
Երուսաղէմ ելաւ, թլփատուածներէն եղողները
3 անոր հետ կը վիճէին, Ու կ'ըսէին թէ Դուն ան-
թլփատ մարդոց քովը մտար, և անոնց հետ հաց
4 կերար։ Պետրոս ալ սկսաւ բանը կարգով պատ-
5 մել անոնց, ու ըսաւ, Ես Յոպպէ քաղաքը ա-
ղօթք կ'ընէի, ու մտքի յափշտակութեան մէջ
տեսիլք մը տեսայ. մէկ աման մը մեծ կտաւի
պէս՝ չորս ծայրերէն երկինքէն կախուած իջաւ,
6 ու մինչև ինծի հասաւ։ Որուն վրայ աչքս տնկեր
կը նայէի, և տեսայ երկրի չորքոտանիները ու
գազանները և սողունները ու երկնից թռչուն-
7 ները։ Եւ ձայն մը լսեցի որ կ'ըսէր ինծի, Ելի՛ր,
8 Պետրոս, մորթէ ու կեր։ Բայց ես ըսի, Քաւ լի-
ցի, Տէ՛ր, ինչու որ պիղծ կամ անմաքուր բան
9 մը ամենևին մտած չէ իմ բերանս։ Պատասխան
տուաւ ինծի երկրորդ անգամ ան ձայնը երկին-
քէն, Ան որ Աստուած մաքրեց՝ դուն պիղծ մի
10 սեպեր։ Աս երեք անգամ եղաւ, ու նորէն բո-
11 լորը երկինքը քաշուեցաւ։ Եւ ահա իսկոյն ե-
րեք մարդ Կեսարիայէն ինծի խրկուած՝ եկան իմ
12 եղած տանս առջևը կեցան։ Հոգին ալ ինծի ը-
սաւ որ անոնց հետը երթամ առանց խղճահա-
րութեան. աս վեց եղբայրներն ալ ինծի հետ գա-
13 ցին, ու մտանք ան մարդուն տունը։ Եւ անիկա
մեզի պատմեց թէ ինտո՛ր իր տանը մէջ հրեշտակը
տեսաւ՝ որ կայներ էր և իրեն կ'ըսէր, Մարդ
խրկէ Յոպպէ, ու կանչէ Սիմոնը որ Պետրոս ալ
14 կը կոչուի. Որ ան քեզի խօսքեր պիտի խօսի, ո-
15 րոնցմով փրկուիս դուն և քու բոլոր տունդ։ Ու

երբոր սկսայ խօսիլ, Հոգին Սուրբ անոնց վրայ
16 իջաւ, ինչպէս որ առաջուց մեր վրայ ալ։ Ան-
տենը յիշեցի Տէրոջը խօսքը որ կ'ըսէր, Յովհան-
նէս ջրով մկրտեց, բայց դուք Սուրբ Հոգիով
17 պիտի մկրտուիք։ Ուստի թէ որ Աստուած մի և
նոյն շնորհքը տուաւ անոնց, ինչպէս որ մեզի ալ,
երբոր Տէր Յիսուս Քրիստոսի հաւատացին, ես
18 ո՞վ էի որ կարենայի Աստուծոյ դէմ դնել։ Աս
բաները լսելով ձայներնին կտրեցին, և Աստուած
կը փառաւորէին ու կ'ըսէին, Ուրեմն Աստուած
հեթանոսներուն ալ կենաց համար ապաշխարու-
թիւն տուաւ։
19 Եւ Ստեփաննոսին մահուանը վրայ եկած նեղու-
թենէն ցիրուցան եղածները մինչև Փիւնիկէ ու
Կիպրոս և Անտիոք հասան, ու մէկու մը Աստու-
ծոյ խօսքը չէին խօսեր, միայն թէ Հրեաներուն։
20 Բայց անոնցմէ ոմանք Կիպրացի և Կիւրենացի
մարդիկ էին, որոնք երբոր Անտիոք մտան, *Հել-
լենացելոց հետ կը խօսէին՝ Տէր Յիսուսը քարո-
21 զելով։ Ու Տէրոջը ձեռքը անոնց հետ էր, և բազ-
մաթիւ մարդիկ հաւատալով Տէրոջը դարձան։
22 Եւ անոնց վրայով աս լուրը Երուսաղեմի եկեղե-
ցիին ականջը հասաւ. ու Բառնաբասը խրկեցին
23 որ մինչև Անտիոք երթայ. Որ երբոր եկաւ և Աս-
տուծոյ շնորհքը տեսաւ՝ ուրախացաւ, ու կը յոր-
դորէր ամէնն ալ՝ որ յօժար սրտով Տէրոջը հետ
24 կապուած մնան. Քանզի ինքը բարի մարդ էր՝ ու
Սուրբ Հոգիով և հաւատքով լեցուն. ու Տէրոջը
25 շատ ժողովուրդ աւելցաւ։ Ետքը Բառնաբաս
Տարսոն ելաւ Սօղոսը փնտռելու, և զանիկա գըտ-
26 նելով՝ Անտիոք բերաւ։ Ու եղաւ որ անոնք լման
տարի մը եկեղեցիին հետ մէկտեղ ժողվուելով՝
շատ ժողովուրդի սորվեցուցին. ու պինտ առաջ

---

*Ոմանք Յոյներուն

Անտիոքի մէջ աշակերտները Քրիստոնեայ ան-
ուանեցան։
27 Այն օրերը Երուսաղէմէն մարգարէներ իջան Ան-
28 տիոք։ Եւ անոնցմէ մէկը Ագաբոս անունով՝ ե-
լաւ իմացուց Հոգիին զօրութեամբը՝ թէ մեծ սով
մը պիտի ըլլայ բոլոր աշխարհ, որ և եղաւ *Կղօ-
29 դիոսին օրերը։ Եւ աշակերտները որոշեցին որ ի-
րենցմէ ամէն մէկը ձեռքէն եկածին չափ Հրէ-
աստանի մէջ բնակող եղբայրներուն օգնութիւն
30 ղրկեն. Որ կատարեցին ալ, երէցներուն ղրկե-
լով Բառնաբասին ու Սօղոսին ձեռքովը։

ԳԼ. ԺԲ

1 Այն ատենները Հերովդէս թագաւորը ձեռք զար-
2 կաւ եկեղեցիէն մէկ քանիները չարչարելու։ Եւ
Յովհաննէսին եղբայրը Յակոբոսը սրով սպաննեց։
3 Ու տեսնելով որ Հրէաներուն հաճելի է, անոր
վրայ Պետրոսն ալ բռնեց. ու բաղարջակերաց օ-
4 րերն էին։ Զանիկա երբոր բռնեց՝ բանտը դրաւ,
և չորս կարգ չորսական զինուորներու յանձնեց
որ պահեն, և կ՚ուզէր զատկէն ետև ժողովուր-
5 դին հանել զանիկա։ Ուստի Պետրոս բանտին մէջը
պահուած էր, բայց եկեղեցին անդադար աղօթք
6 կ՚ընէր Աստուծոյ անոր համար։ Ու երբոր Հե-
րովդէս ուզեց զանիկա դուրս բերել, այն գիշերը
Պետրոս երկու զինուորներու մէջտեղը կը քնա-
նար՝ կրկին շղթաներով կապուած. ու պահա-
պանները դրանը առջևը բանտը կը պահպանէին։
7 Եւ ահա Տէրոջը հրեշտակը —— վրան կայնեցաւ,
ու տանը մէջ լոյս մը ծագեց, և Պետրոսին կողը
խթելով արթնցուց զանիկա, ու ըսաւ, Շուտով
ելիր. ու շղթաները անոր ձեռքերէն վար ինկան։

*Ոմանք Կղօդիոս կայսեր

8 Եւ հրեշտակը ըսաւ անոր, Գօտիդ կապէ ու հո-
ղաթափներդ ոտքդ հագիր. անիկա ալ այնպէս
ըրաւ. և ըսաւ անոր, Հանդերձդ վրադ առ ու
9 եկուր իմ ետևէս։ Ան ալ ելլելով անոր ետևէն
կ՚երթար, և չէր գիտեր թէ այն հրեշտակէն ե-
ղած բանը իրաւ է, հապա կը կարծէր թէ տեսիլք
10 կը տեսնէ։ Ու երբոր անոնք առաջին ու երկ-
րորդ պահապաններէն անցան, եկան մինչև եր-
կաթի դուռը՝ որ քաղաքին մէջը կը հանէր, որ
ան ինքիրմէ բացուեցաւ անոնց. և անկէ ելլելով՝
մէկ փողոց մը անցան, հրեշտակն ալ իսկոյն ան-
11 կէ զատուեցաւ։ Ու Պետրոս ինքզինքին գալով
ըսաւ, Հիմա ճշմարտապէս գիտեմ որ Տէրը իր
հրեշտակը ղրկեց, և ազատեց զիս Հերովդէսին
ձեռքէն ու Հրէից ժողովուրդին բոլոր ակնկա-
12 լութենէն։ Եւ մտածելով՝ եկաւ Մարկոս ըսուած
Յովհաննէսին մօրը Մարիամին տունը, ուր որ
13 շատերը ժողվուած աղօթք կ՚ընէին։ Եւ դրանը
դուրսի դուռը որ *զարկաւ, Հռովդէ անունով
14 աղախին մը գնաց ականջ դնելու. Ու երբոր Պետ-
րոսին ձայնը ճանչցաւ, ուրախութենէն դուռը
չբացաւ, հապա ներս վազելով պատմեց թէ Պետ-
15 րոս դրանը առջևը կայներ է։ Իսկ անոնք ըսին
անոր, Խենթեցեր ես. բայց ինքը կը պնդէր թէ
անանկ է. անոնք ալ կ՚ըսէին, Անոր հրեշտակը
16 պիտի ըլլայ։ Սակայն Պետրոս անդադար կը զար-
նէր. ու երբոր բացին՝ զինքը տեսնելով ապշե-
17 ցան։ Բայց անիկա ձեռքով նշան կ՚ընէր անոնց՝
որ լուռ կենան, ու պատմեց անոնց թէ ինչպէս
Տէրը զինքը բանտէն հանեց, և ըսաւ, Ասիկա
Յակոբոսին ու եղբայրներուն պատմեցէք. և ե-
18 լաւ ուրիշ տեղ գնաց։ Ու երբոր առտու եղաւ,
մեծ խռովութիւն կար զինուորներուն մէջը՝ թէ

*Ոմանք Պետրոս զարկաւ

19 արդեօք ինչ եղաւ Պետրոս։ Հերովդէս ալ երբ-
որ ուզեց զանիկա ու չգտաւ, պահապաններուն
հարցուփորձ ընելով՝ հրաման ըրաւ որ սպան-
նուին. և ինքը Հրէաստանէն Կեսարիա իջաւ, ու
հոն կը կենար։
20 Եւ Հերովդէս խիստ թշնամացած էր Տիւրացի-
ներուն ու Սիդոնացիներուն հետ. անոնք ալ մի-
աբան հաւանութեամբ իրեն եկան, ու թագաւո-
րին Բղաստոս սենեկապետը համոզելով՝ հաշտու-
թիւն կը խնդրէին. ինչու որ իրենց երկիրը թա-
21 գաւորին երկրէն ապրուստ կ'առնէր։ Եւ մէկ ո-
րոշուած օր մը Հերովդէս թագաւորական հան-
դերձը հագած ու ատեանը նստած՝ անոնց ատե-
22 նաբանութիւն կ'ընէր։ Ժողովուրդն ալ կ'աղա-
ղակէր թէ Աստուծոյ ձայն է՝ ու չէ թէ
23 մարդու։ Եւ իսկոյն Տէրոջը հրեշտակը զանիկա
զարկաւ, Աստուծոյ փառք չտալուն համար. և
որդնալից ըլլալով մեռաւ։
24 Եւ Աստուծոյ խօսքը կ'աճէր ու կը շատնար։
25 Եւ Բառնաբաս ու Սօղոս երբոր իրենց յանձնուած
պաշտօնը լմընցուցին՝ Երուսաղեմէն դարձան,
Մարկոս ըսուած Յովհաննէսն ալ հետերնին առ-
նելով։

ԳԼ. ԺԳ

1 Եւ Անտիոքի մէջ եղած եկեղեցիէն քանի մը
մարգարէներ ու վարդապետներ կային, Բառնա-
բաս ու Շմաւոն որ Նիգեր կ'ըսուէր, և Ղուկիոս
Կիւրենացի ու Մանայեն՝ Հերովդէս չորրորդա-
2 պետին սննդակիցը, և Սօղոս։ Երբոր ասոնք Տէ-
րոջը պաշտօնին մէջն էին՝ և ծոմ կը պահէին,
Հոգին Սուրբ ըսաւ, Զատեցէք ինծի Բառնաբա-
սը և Սօղոսը այն գործին համար, որուն ես կան-
3 չեր եմ ասոնք։ Անատենը ծոմ պահելով և ա-

ղօթք ընելով՝ ձեռք դրին անոնց վրայ ու խըր-
կեցին։
4 Անոնք ալ Սուրբ Հոգիէն խրկուած՝ Սելեւկիա
5 իջան, ու անկէ նաւով Կիպրոս գացին։ Եւ Սա-
ղամինա հասնելով՝ Հրէից ժողովարաններուն մէջ
Աստուծոյ խօսքը կը քարոզէին, ու Յովհաննէսն
6 ալ իրենց սպասաւոր ունէին։ Եւ պտըտելով այն
[բոլոր] կղզին մինչև Պափոս, հոն գտան սուտ
մարգարէ՝ Հրեայ մոգ մը, որուն անունը Բարե-
7 յեսու էր. Որ ինքը փոխանորդ բդեշխին հետ
էր, որ կ'ըսուէր Սերգիոս Պօղոս, խելացի մարդ
մը. ասիկա Բառնաբասը և Սօղոսը հրաւիրելով՝
8 ուզեց Աստուծոյ խօսքը լսել։ Սակայն անոնց դէմ
կեցաւ Եղիմաս մոգ, (քանզի այսպէս կը թարգ-
մանուի անոր անունը,) որ կ'ուզէր փոխանորդ
9 բդեշխը հաւատքէն դարձընել։ Բայց Սօղոս, որ
Պօղոս ալ կ'ըսուի, Հոգւով Սրբով լեցուած՝ աչ-
10 քերը անոր վրայ տնկեց, Ու ըսաւ, Ով ամէն
խաբեբայութիւնով և ամէն խորամանկութիւնով
լեցուած՝ Սատանայի որդի՝ թշնամի բոլոր արդա-
րութեան, պիտի չդադարի՞ս Տէրոջը շիտակ ճամ-
11 բաները ծռելէն։ Եւ հիմա Տէրոջը ձեռքը ահա
քու վրադ է, ու կոյր պիտի ըլլաս՝ ատեն մը ա-
րեւը չտեսնելով։ Եւ իսկոյն անոր վրայ մէգ ու
խաւար մը իջաւ, ու պտըտելով առաջնորդ կը
12 փնտռէր։ Անատենը փոխանորդ բդեշխը աս բա-
ները որ տեսաւ՝ հաւատաց, մեծապէս զարմա-
նալով Տէրոջը վարդապետութեանը վրայ։
13 Եւ Պօղոս ու իր ընկերները Պափոսէն ելան, ու
եկան Պամփիւլիայի Պերգէն. բայց Յովհաննէս ա-
14 նոնցմէ զատուելով՝ Երուսաղէմ դարձաւ։ Անոնք
ալ Պերգէէն գացին ու եկան Պիսիդիայի Անտի-
ոքը, և շաբաթ օրը ժողովարանը մտնելով՝ նըս-
15 տան։ Ու օրէնքը և մարգարէները կարդացուե-
լէն ետև՝ ժողովրդապետները մարդ խրկեցին ի-

րենց ու ըսին, Մարդիկ եղբայրներ, թէ որ դուք
ժողովուրդին յորդորական խօսք մը ու-
16 նիք՝ խօսեցէք։ Անատենը Պօղոս ոտքի վրայ կայ-
նելով՝ ձեռքը շարժեց ու ըսաւ, Ով Իսրայելացի
մարդիկ, և դուք որ Աստուծմէ կը վախնաք,
17 մտիկ ըրէք։ Աս Իսրայէլ ժողովուրդիս Աստուա-
ծը մեր հայրերը ընտրեց, ու ժողովուրդը բարձ-
րացուց Եգիպտոսի երկրին մէջ պանդխտութեան
ատենը, և բարձր բազուկով զանոնք անկէ հա-
18 նեց։ Ու քառասուն տարուան ժամանակի չափ
19 անապատին մէջ կերակրեց զանոնք։ Եւ Քանա-
նու երկրին մէջ եօթը ազգ կործանելով՝ անոնց
20 երկիրը իրենց տուաւ որ ժառանգեն։ Եւ անկէ
ետև չորս հարիւր յիսուն տարիի չափ դատաւոր-
ներ տուաւ անոնց մինչև Սամուէլ մարգարէն։
21 Ու ետքը թագաւոր ուզեցին· և Աստուած Կիսի
որդին Սաւուղը տուաւ անոնց՝ Բենիամինի ցեղէն
22 մարդ մը՝ քառասուն տարի։ Ու երբոր զանիկա
փոխեց, Դաւիթը հանեց իրենց թագաւոր, որուն
համար վկայութիւն տալով ըսաւ, Յեսսէի որդին
Դաւիթը գտայ իմ սրտիս համեմատ մարդ, որ
23 իմ բոլոր կամքս պիտի կատարէ։ Ասոր սերուն-
դէն Աստուած իր խոստմունքին պէս Իսրայէլին՝
24 փրկիչ Յիսուսը հանեց· Եւ դեռ անիկա իր գալ-
ուստը չեկած՝ Յովհաննէս առաջուց Իսրայէլի բո-
լոր ժողովուրդին ապաշխարութեան մկրտութիւ-
25 նը քարոզեց· Ու երբոր Յովհաննէս իր ընթացքը
կը կատարէր՝ ըսաւ, Ո՞վ կը կարծէք թէ եմ·
ես Քրիստոսը չեմ, հապա անիկա ահա իմ ետե-
ւէս կու գայ, որ ես արժանի չեմ անոր ոտքե-
26 րուն կօշիկները քակելու։ Մարդիկ եղբայրներ,
Աբրահամի տոհմին որդիքը, ու անոնք որ ձեր
մէջը աստուածավախ են, աս փրկութեան խօսքը
27 ձեզի խրկուեցաւ։ Քանզի Երուսաղէմ բնակող-
ները և անոնց իշխանները ոչ անիկա ճանչցան,

ոչ ալ մարգարէներուն ձայները՝ որ ամէն շա-
բաթ օրերը կը կարդացուին, հապա զանոնք կա-
28 տարեցին՝ զինքը դատապարտելով· Եւ մահուան
պատճառ մըն ալ չգտած՝ Պիղատոսէն խնդրեցին
29 որ անիկա սպաննուի։ Ու երբոր անոր համար բո-
լոր գրուած բաները կատարեցին, փայտէն վար
30 իջեցընելով՝ գերեզմանի մէջ դրին· Բայց Աստ-
ուած զանիկա յարուց մեռելներէն։ որ ինքը
31 շատ օրեր երևցաւ անոնց, Որ իր հետը Գալիլ-
եայէն Երուսաղէմ ելեր էին, որոնք հիմա անոր
32 վկաներն են ժողովուրդին առջև։ Մենք ալ ձե-
զի կը քարոզենք այն խոստմունքը որ հայրերուն
33 եղած էր, Որ զանիկա Աստուած կատարեց մեզի
որ անոնց զաւակներն ենք՝ Յիսուսը յարուցա-
նելով, ինչպէս որ երկրորդ սաղմոսին մէջ ալ
գրուած է, Դուն իմ Որդիս ես, ես այսօր քեզ
34 ծնայ։ Եւ որ զանիկա մեռելներէն յարուց, ու
մէյմըն ալ ապականութիւն պիտի չտեսնէ, ա-
սանկ կ'ըսէ թէ Ձեզի պիտի տամ Դաւիթին հա-
35 ւատարիմ սուրբ խոստմունքները։ Ուստի ուրիշ
սաղմոսի մը մէջ ալ կ'ըսէ, Քու Սուրբդ ապա-
36 կանութիւն տեսնել պիտի չտաս։ Ինչու որ Դա-
ւիթ իր դարուն մէջ Աստուծոյ կամացը ծառա-
յելով՝ մեռաւ, ու իր հայրերուն քովը դրուե-
37 ցաւ և ապականութիւն տեսաւ։ Բայց ան որ
Աստուած յարուց՝ ապականութիւն չտեսաւ։
38 Ուրեմն յայտնի ըլլայ ձեզի, մարդիկ եղբայրներ,
որ ասոր միջոցովը ձեզի մեղաց թողութիւն կը
39 քարոզուի· Եւ այն ամէն բաներէն՝ որ Մովսէսին
օրէնքովը չկրցաք արդարանալ, ասով՝ ամէն ով
40 որ հաւատայ կ'արդարանայ։ Արդ զգուշացէք որ
չըլլայ թէ ձեր վրայ գայ ան որ մարգարէներուն
41 մէջ ըսուած է, Նայեցէք, արհամարհողներ, և
զարմացէք ու ոչնչացէք· ինչու որ գործ մը պի-
տի ընեմ ձեր օրերուն մէջ, անանկ գործ մը որ

եթէ մէկը ձեզի պատմէ՝ պիտի չհաւատաք։
42 Ու երբոր անկէ դուրս ելան, *կ'աղաչէին որ
†հետևեալ շաբաթ՝ ալ նոյն խօսքերը իրենց խօս-
43 ուին։ Եւ ժողովուրդը երբոր արձակուեցաւ, Հրէա-
ներէն ու նորահաւատ բարեպաշտներէն շատերը
Պօղոսին ու Բառնաբասին ետևէն կ'երթային. ո-
րոնք կը խօսէին անոնց հետ ու կը յորդորէին
զանոնք, որ միշտ Աստուծոյ շնորհքին մէջը հաս-
44 տատ կենան։ Եւ հետևեալ շաբաթ օրը գրեթէ
բոլոր քաղաքը ժողվուեցաւ Աստուծոյ խօսքը
45 լսելու։ Իսկ Հրէաները երբոր տեսան տան բազմու-
թիւնը, նախանձով լեցուեցան, ու Պօղոսի
գրուցածներուն դէմ կը խօսէին հակառակելով
46 ու հայհոյութիւն ընելով։ Անատենը Պօղոս և
Բառնաբաս համարձակեցան ու ըսին, Պէտք էր
որ առաջ ձեզի խօսուէր Աստուծոյ խօսքը, բայց
որովհետև դուք անիկա կը մերժէք, ու ինք-
զինքնիդ յաւիտենական կենաց արժանի չէք սե-
պեր, ահա մենք հեթանոսներուն կը դառնանք։
47 Ինչու որ Տէրը ասանկ պատուիրած է մեզի. Քեզ
հեթանոսներուն լոյս դրի, որ դուն փրկութեան
48 պատճառ ըլլաս մինչև երկրի ծայրերը։ Ասոր լսե-
լով հեթանոսները կ'ուրախանային, ու Աստու-
ծոյ խօսքը կը փառաւորէին. և որոնք որ յա-
ւիտենական կենաց սահմանուած էին՝ հաւատա-
49 ցին։ Ու Տէրոջը խօսքը բոլոր գաւառը կը տա-
50 րածուէր։ Բայց Հրէաները գրգռեցին բարե-
պաշտ և պատուաւոր կիները ու քաղաքին մե-
ծերը, և Պօղոսին ու Բառնաբասին վրայ հալա-
ծանք հանելով՝ զանոնք իրենց սահմաններէն
51 դուրս ըրին։ Անոնք ալ իրենց ոտքերուն փոշին
52 անոնց դէմ թօթվելով Իկոնիոն եկան։ Ու աշա-

---

*Ոմանք․ հեթանոսները կ'աղաչէին
†Կամ՝ շաբթու մէջ

կերտները ուրախութեամբ և Հոգւով Սրբով կը
լեցուէին։

ԳԼ. ԺԴ

1 Ու եղաւ որ Իկոնիոնի մէջ անոնք մէկտեղ Հրէա-
ներուն ժողովարանը մտան, և այնպէս խօսեցան
որ խիստ շատ Հրէաներ և Յոյներ հաւատացին։
2 Բայց չհաւատացող Հրէաները գրգռեցին ու չա-
րութեան գրգռեցին հեթանոսներուն սիրտը եղ-
3 բայրներուն դէմ. իսկ անոնք շատ ժամանակ
հոն կենալով՝ համարձակ կը քարոզէին Տէրոջմով,
որ իր շնորհաց խօսքին կը վկայէր, և նշաններ ու
4 հրաշքներ ընել կու տար անոնց ձեռքովը։ Եւ
քաղաքին բազմութեանը մէջ երկպառակութիւն
մը եղաւ. ոմանք Հրէաներուն կողմէն եղան, ո-
5 մանք ալ առաքեալներուն։ Ու երբոր հեթա-
նոսները և Հրէաները իրենց իշխաններովը վրանին
յարձակեցան՝ զանոնք նախատելու ու քարկոծե-
6 լու, Իրենք իմանալով Լիկայոնացւոց քաղաք-
ները փախան՝ Լիւստրա ու Դերբէ և շրջակայ
տեղուանքը, ու հոն աւետարանը կը քարոզէին։
7 Եւ Լիւստրայի մէջ մարդ մը նստեր էր ոտքե-
րովը տկար՝ իր մօրը որովայնէն կաղ ծնած, որ
8 բնաւ քալած չէր։ Ասիկա Պօղոսին խօսքերը մտիկ
կ'ընէր. ան ալ աչքը անոր տնկելով և տեսնե-
9 լով թէ բժշկուելու հաւատք ունի, Բարձր ձայ-
նով մը ըսաւ, Ելիր ոտքերուդ վրայ շիտակ կայ-
10 նէ. ան ալ ցատկելով կը քալէր։ Եւ ժողովուրդ-
ները երբոր Պօղոսին ըրածը տեսան՝ ձայներնին
վերցընելով Լիկայոներէն ըսին, Աստուածները
11 մարդոց նմանութիւնով մեզի իջեր են։ Ու Բառ-
նաբասին Դիոս կը կոչէին, և Պօղոսին՝ Հերմէս,
12 ինչու որ անիկա էր գլխաւոր խօսողը։ Իսկ քա-
ղաքին առջևը եղած Դիոսին քուրմը ցուլեր և

պսակներ բերելով դռներուն առջեւը, բազմու-
13 թեանը հետ մէկտեղ կ՚ուզէր որ զոհ ընէ։ Բայց
Բառնաբաս ու Պօղոս առաքեալները երբոր լսե-
ցին, իրենց հանդերձները պատռելով՝ դուրս
14 ցատկեցին բազմութեանը մէջ, կ՚աղաղակէին Ու
կ՚ըսէին, Մարդիկ, ինչո՞ւ համար ատ բաները կ՚ը-
նէք. մենք ալ ձեզի պէս կիրքեր ունեցող մար-
դիկ ենք, ու կը քարոզենք ձեզի որ ատ փուճ
բաներէն կենդանի Աստուծոյն դառնաք, որ ինքը
ստեղծեց երկինքը ու երկիրը և ծովը ու բոլոր
15 անոնց մէջի եղածները։ Որ անցած դարերուն
մէջ թող տուաւ ամէն ազգերուն իրենց ճամբա-
16 ները երթալու։ Այսու ամենայնիւ ինքզինքը ա-
ռանց վկայութեան չթողուց, բարերարութիւնով
երկինքէն *մեզի անձրեւներ ու պտղաբեր եղա-
նակներ տալով, կերակուրներով և ուրախու-
17 թիւնով †մեր սիրտերը լեցնելով։ Ու աս բա-
ները ըսելով՝ հազիւ կրցան ժողովուրդները դադ-
րեցնել, որ իրենց զոհ չընեն։
18 Սակայն Անտիոքէն ու Իկոնիոնէն Հրեաներ հա-
սան, ու ժողովուրդները համոզեցին, և Պօղոսը
քարկոծեցին ու քաղաքէն դուրս քաշեցին՝ կար-
19 ծելով թէ մեռած է։ Բայց աշակերտները երբոր
անոր բոլորտիքը պատեցին, ելաւ քաղաքը մտաւ,
ու հետեւեալ օրը Բառնաբասին հետ մէկտեղ
20 Դերբէ ելաւ։ Եւ անոնք ան քաղաքին մէջ աւե-
տարանը քարոզելով, ու շատերը աշակերտ ընե-
լով՝ Լիւստրա և Իկոնիոն և Անտիոք դարձան,
21 Աշակերտներուն սիրտերը հաստատելով, և յոր-
դորելով որ հաստատ մնան հաւատքի մէջ. և
կ՚ըսէին թէ՝ Շատ նեղութիւններով պէտք է մեզի
22 Աստուծոյ թագաւորութիւնը մտնել։ Ու երբոր

*Ոմանք ձեզի
†Ոմանք ձեր

անոնց ամէն մէկ եկեղեցիին երէցներ ձեռնադ-
րեցին, ծոմապահութեամբ աղօթք ընելով զա-
նոնք յանձնեցին Տէրոջը՝ որուն հաւատացեր է-
23 ին։ Եւ Պիսիդիայի մէջէն պտըտելով եկան Պամ-
24 փիւլիա։ Պերգէի մէջ ալ Տէրոջը խօսքը խօսելէն
25 ետեւ Ատալիա իջան։ Անկէ ալ նաւով Անտիոք
գացին, ուսկից որ Աստուծոյ շնորհքին յանձ-
նուած էին այն գործին համար որ կատարեցին։
26 Ու երբոր եկան, եկեղեցին մէկտեղ ժողվելով՝
պատմեցին ինչ որ Աստուած ըրեր էր իրենց հետ,
և որ հեթանոսներուն հաւատքի դուռ բացեր
27 էր։ Ու հոն շատ ժամանակ աշակերտներուն հետ
կեցան։

ԳԼ. ԺԵ

1 Եւ մէկ քանիները Հրէաստանէն իջած՝ եղբայր-
ներուն կը սորվեցընէին որ Եթէ Մովսէսին աւան-
դած սովորութեանը համեմատ չթլփատուիք, չէք
2 կրնար փրկուիլ։ Ուստի Պօղոս և Բառնաբաս ա-
նոնց դէմ շատ մը հակառակութիւն ու վէճ ը-
նելէն ետքը, վճռեցին որ Պօղոս ու Բառնաբաս
և մէկ քանիներն ալ անոնցմէ՝ Երուսաղէմ ե-
լեն առաքեալներուն ու երէցներուն աս խնդրոյս
3 համար։ Անոնք ալ եկեղեցիէն ճամբայ դրուած՝
Փիւնիկէէն ու Սամարիայէն անցնելով, հեթա-
նոսաց դարձի գալը կը պատմէին, և մեծ ուրա-
4 խութիւն կու տային բոլոր եղբայրներուն։ Ու եր-
բոր Երուսաղէմ հասան, եկեղեցիէն ու առաք-
եալներէն և երէցներէն ընդունուեցան, և պատ-
մեցին ինչ որ Աստուած ըրեր էր իրենց հետ։
5 Փարիսեցւոց աղանդէն հաւատացեալներէն ոմանք
ելան, ու կ՚ըսէին թէ Պէտք է թլփատել անոնք
ու պատուիրել որ Մովսէսի օրէնքը պահեն։
6 Եւ առաքեալները ու երէցները ժողվուեցան

7 աս բանիս վրայով խորհելու։ Եւ շատ վիճաբա-
նութիւն ըլլալէն ետեւ՝ Պետրոս ոտքի վրայ ելաւ
ու ըսաւ անոնց, Մարդիկ եղբայրներ, դուք գի-
տէք որ առջի օրերէն Աստուած զիս ընտրեց մեր
մէջէն, որ իմ բերնովս հեթանոսները աւետա-
8 րանին խօսքը լսեն ու հաւատան։ Եւ սրտագէտն
Աստուած վկայեց անոնց՝ Հոգին Սուրբը տալով
9 անոնց՝ ինչպէս որ մեզի ալ։ Եւ մէկ խտրութիւն
մը չըրաւ մեր ու անոնց մէջը, հաւատքով անոնց
10 սիրտերը մաքրելով։ Ուստի հիմա ինչո՞ւ Աստ-
ուած կը փորձէք՝ աշակերտներուն պարանոցին
վրայ անանկ լուծ մը դնելով, որ անիկա ոչ մեր
11 հայրերը՝ ոչ ալ մենք կրցանք վերցնել։ Բայց
կը հաւատանք որ Տէր *Յիսուսի շնորհքովը կը
փրկուինք մենք, ինչպէս որ անոնք ալ։
12 Եւ բոլոր ժողովուրդը լուռ կեցաւ ու մտիկ
կ'ընէր Բառնաբասին ու Պօղոսին, որոնք կը
պատմէին թէ Աստուած որչափ նշաններ ու հրաշք-
ներ ըրեր էր հեթանոսներուն մէջ իրենց ձեռ-
13 քովը։ Եւ անոնք խօսքերնին կտրելէն ետեւ՝ Յա-
կոբոս պատասխան տուաւ ու ըսաւ, Մարդիկ
14 եղբայրներ, ինծի մտիկ ըրէք. Շմաւոն պատմեց
թէ Աստուած ինչպէս առաջ այցելութիւն ըրաւ,
որ հեթանոսներէն ժողովուրդ առնէ իր անուա-
15 նը համար։ Եւ աս բանիս մարգարէից խօսքերն
16 ալ կը միաբանին, ինչպէս որ գրուած է, Ասկէ
ետեւ պիտի դառնամ ու Դաւիթին ինկած խո-
րանը նորէն պիտի շինեմ, և անոր կործանուած
տեղուանքը նորէն պիտի շինեմ, և կանգնեմ զա-
17 նիկա. Որ մնացած մարդիկը Տէրը փնտռեն, և
բոլոր հեթանոսները՝ որոնց վրայ իմ անունս
կոչուած է, կ'ըսէ Տէրը՝ որ աս ամէն բաները
18 կ'ընէ։ Յայտնի է †Աստուծոյ իր բոլոր գործքերը

*Ոմանք Յիսուս Քրիստոսի
†Ոմանք Տէրոջը

19 աշխարհիս սկիզբէն հետէ։ Ասոր համար ես յար-
մար կը դատեմ նեղութիւն չտալ անոնց որ հե-
20 թանոսներէն Աստուծոյ կը դառնան. Հապա
թուղթ մը գրել անոնց՝ որ ետ կենան կուռք
պղծութիւններէն և պոռնկութենէ ու խեղդուա-
21 ծէ և արիւնէ։ Ինչու որ Մովսէս հին դարերէն
'ի վեր ամէն քաղաքի մէջ զինքը քարոզողներ
ունի, և ժողովարաններու մէջ ամէն շաբաթ օր
կը կարդացուի։
22 Անատենը առաքեալներուն ու երէցներուն՝
բոլոր եկեղեցիին հետ մէկտեղ աղէկ երեւցաւ որ
իրենցմէ մարդիկ ընտրելով Անտիոք ղրկեն Պօ-
ղոսին ու Բառնաբասին հետ, Բարսաբա մական-
ուանեալ Յուդան և Շիղան՝ որոնք գլխաւոր
23 մարդիկ էին եղբայրներուն մէջ. Ու անոնց ձեռ-
քովը թուղթ մը ղրկեցին այսպէս գրուած.
Առաքեալներ ու երէցներ և եղբայրներ՝ Ան-
տիոքի ու Սիւրիայի և Կիլիկիայի մէջ հեթանոս-
24 ներէն եղած եղբայրներուդ ողջոյն։ Որովհետեւ
լսեցինք թէ ոմանք մեր մէջէն ելլելով՝ ձեզ խօս-
քերով խռովեցուցեր և ձեր անձերը խախտեր
են, ըսելով թէ պէտք է թլփատուիլ ու օրէնքը
պահել, որ անոնց մենք այսպէս չպատուիրեցինք։
25 Մեզի միաբանութեամբ ժողվուածներուս աղէկ
երեւցաւ որ մարդիկ ընտրելով ձեզի ղրկենք մեր
26 սիրելիներուն Բառնաբասին ու Պօղոսին հետ, Ո-
րոնք մեր Տէր Յիսուս Քրիստոսի անուանը հա-
27 մար անձերնին մատնած մարդիկ են։ Ուստի ղրը-
կեցինք Յուդան և Շիղան, որ իրենք ալ բերնով
28 նոյն բաները ձեզի զրուցեն։ Ինչու որ աղէկ երե-
ւցաւ Սուրբ Հոգիին ու մեզի ալ ձեր վրայ աւելի
29 բեռ չդնել՝ աս հարկաւոր բաներէս 'ի զատ, Որ ետ
կենաք կուռքերու զոհուածէ և արիւնէ ու խեղ-
դուածէ և պոռնկութենէ. որ աս բաներէն ինք-
զինքնիդ պահելով աղէկ պիտի ընէք։ Ողջ եղէք։

30 Անոնք ալ ճամբայ դրուելով՝ Անտիոք գացին,
և ժողովուրդը մէկտեղ ժողվելով թուղթը տը-
31 ւին։ Ու երբոր կարդացին՝ ուրախացան անմխի-
32 թարութեանը վրայ։ Իսկ Յուդա ու Շիղա, որ ի-
րենք ալ մարգարէ էին, շատ խօսքերով յորդո-
33 րեցին եղբայրները ու հաստատեցին։ Եւ ատեն մը
հոն կենալէն ետև՝ եղբայրներէն խաղաղութեամբ
ճամբայ դրուեցան առաքեալներուն դառնալու։
34 Բայց Շիղային աղէկ երևցաւ հոն մնալ։ (35) Պօ-
ղոս ու Բառնաբաս ալ Անտիոքի մէջ կը կենա-
յին, և ուրիշ շատերու հետ Տէրոջը խօսքը կը
սորվեցընէին ու կը քարոզէին։

36 Եւ քանի մը օրերէ ետև Պօղոս ըսաւ Բառնա-
բասին, Դառնանք ու այցելութիւն ընենք եղ-
բայրներուն՝ ամէն մէկ քաղաքները, ուր որ Տէ-
րոջը խօսքը քարոզեցինք, ու տեսնենք թէ ինչպէս
37 են։ Իսկ Բառնաբաս կ'ուզէր որ Յովհաննէսն ալ
38 առնեն, որ Մարկոս կ'ըսուէր. Բայց Պօղոս ար-
ժան չսեպեց որ Պամփիւլիայի մէջ իրենցմէ զատ-
ուողը ու իրենց հետը գործի չեկողը հետերնին
39 առնեն։ Այսպէս վէճերնին գժտութիւն մը եղաւ,
մինչև որ իրարմէ զատուեցան. և Բառնաբաս ա-
40 ռաւ Մարկոսը ու նաւով Կիպրոս գնաց։ Պօղոս
ալ Շիղան ընտրեց ու ելաւ, եղբայրներէն Աս-
41 տուծոյ շնորհացը յանձնուելով, Եւ Սիւրիայի ու
Կիլիկիայի մէջ կը պտըտէր ու եկեղեցիները կը
հաստատէր։

ԳԼ. ԺԶ

1 Եւ հասաւ Դերբէ ու Լիւստրա. և ահա հոն աշա-
կերտ մը կար Տիմոթէոս անունով, որ հաւա-
տացեալ Հրէայ կնկան մը զաւակ էր, և հայրը
2 Յոյն էր. Որ Լիւստրացի ու Իկոնացի եղբայրնե-
3 րէն ալ բարի վկայուած էր։ Պօղոս ուզեց որ ա-

սիկա իր հետը ելլէ, և առաւ թլփատեց զանիկա
ան տեղուանքը եղած Հրէաներուն համար, վասն
զի ամէնն ալ գիտէին թէ անոր հայրը Յոյն
4 էր։ Ու քաղաքներէն անցնելով, Երուսաղէմ ե-
ղած առաքեալներէն ու երէցներէն ասպրուած
5 հրամանները կ'աւանդէին անոնց՝ որ պահեն։ Ե-
կեղեցիներն ալ հաւատքի մէջ կը հաստատուէին,
և օրէ օր անոնց թիւը կ'աւելնար։
6 Եւ Փռիւգիա ու Գաղատացւոց կողմերը պտը-
տեցան. և Սուրբ Հոգիէն արգիլուելով որ Աս-
7 տուծոյ խօսքը Ասիայի մէջ չխօսին, Միւսիայի
կողմերը որ եկան, կը ջանային դէպ 'ի Բիւթանիա
երթալ. և [Յիսուսի] Հոգին թող չտուաւ անոնց։
8 Եւ Միւսիայի քովէն անցնելով Տրովադա իջան։
9 Եւ հոն գիշերը Պօղոսին տեսիլք մը երևցաւ. Մա-
կեդոնացի մարդ մը կայներ կ'աղաչէր անոր ու
10 կ'ըսէր, Մակեդոնիա անցիր և օգնէ մեզի։ Ու
երբոր ան տեսիլքը տեսաւ՝ շուտ մը ուզեցինք
Մակեդոնիա ելլել, հասկընալով որ Տէրը մեզ կը
հրաւիրէ անոնց աւետարան քարոզելու։
11 Ուստի նաւով Տրովադայէն ելանք ու շիտակ
Սամոթրակէ գացինք, ու հետևեալ օրը Նէապօ-
12 լիս. Եւ անկէ ալ Փիլիպպէ, որ է Մակեդոնիայի
մէկ մասին գլխաւոր քաղաքը՝ *կողոնիա. և ան
13 քաղաքին մէջ քանի մը օր կեցանք. Ու շաբաթ
օրը քաղաքէն դուրս ելանք գետեզերքին քով՝
ուր որ սովորութիւն ունէին աղօթք ընելու, ու
նստելով ժողվուած կնիկներուն կը խօսէինք։
14 Եւ Թիւատիր քաղաքէն ծիրանավաճառ կին մը
Լիդիա անունով, որ աստուածավախ մէկ մըն էր,
մտիկ կ'ընէր. որուն սիրտը Տէրը բացաւ Պօղո-
15 սին ըսածներուն ուշադրութիւն ընելու։ Ու եր-
բոր մկրտուեցաւ ինքը և իր տունը, աղաչեց ու

---

*Այսինքն գաղթականաց տեղ

ըսաւ, Թէ որ զիս Տէրոջը հաւատացեալ կը սե-
պէք, իմ տունս մտէք՝ բնակեցէք։ Եւ ստիպե-
լով տարաւ մեզ։
16 Ու եղաւ որ երբ մենք աղօթքի կ'երթայինք,
աղախին մը պատահեցաւ մեզի որ հարցուկ ոգի
ունէր, որ գուշակութիւն ընելով՝ իր տէրերուն
17 շատ վաստակ կը բերէր։ Ասիկա Պօղոսին եւ մեր
ետեւէն իյնալով կը պոռար ու կ'ըսէր, Աս մար-
դիկը Բարձրեալ Աստուծոյ ծառաներն են, որ
18 *մեզի փրկութեան ճամբան կը քարոզեն։ Եւ աս
բանը շատ օրեր կ'ընէր. իսկ Պօղոս վշտանալով՝
դարձաւ ու ըսաւ այն ոգիին, Յիսուս Քրիստոսի
անունովը հրաման կ'ընեմ քեզի, Ելիր անկէ. եւ
19 նոյն ժամուն ելաւ։ Երբոր տեսան անոր տէրերը
որ իրենց վաստակին յոյսը կտրեցաւ, Պօղոսը ու
Շիղան բռնեցին ու հրապարակը քաշեցին իշխան-
20 ներուն առջին։ Եւ տարին զանոնք զօրագլուխ-
ներուն քովը ու ըսին, Աս մարդիկը մեր քա-
21 ղաքը իրար կ'անցընեն. իրենք Հրեայ են, Եւ ա-
նանկ սովորութիւններ կը քարոզեն, որ արժան
չէ մեզի ընդունիլ՝ ոչ ալ ընել, ինչու որ Հռով-
22 մայեցի ենք։ Եւ բազմութիւնը անոնց վրայ դիզ-
ուեցաւ. զօրագլուխներն ալ բռնութեամբ անոնց
հանդերձները հանեցին, եւ հրաման ըրին որ զա-
23 նոնք ծեծեն. Եւ անոնց շատ վէրքեր տալէն ե-
տեւ բանտը դրին, պատուիրելով բանտապետին
24 որ զգուշութեամբ պահէ զանոնք։ Ան ալ ա-
սանկ հրաման առնելով՝ զանոնք ներսի բանտը
դրաւ ու ոտքերնին կոճղի մէջ ամրցուց։
25 Եւ կէս գիշերին Պօղոս ու Շիղա աղօթք կ'ը-
նէին եւ զԱստուած կ'օրհնէին, ու բանտարկեալ-
26 ներն ալ անոնց մտիկ կ'ընէին։ Եւ յանկարծակի
մեծ շարժ մը եղաւ, անանկ որ բանտին հիմերը

*Ոմանք ձեզի

սասանեցան, եւ անմիջապէս բոլոր դռները բաց-
27 ուեցան, ու ամենուն կապերը արձըկուեցան։ Եւ
բանտապետը երբոր արթընցաւ ու բանտին դը-
ները բացուած տեսաւ, թուրը քաշեց եւ ինք-
զինքը պիտի սպաննէր, կարծելով թէ կապուած-
28 ները փախեր են։ Բայց Պօղոս բարձր ձայնով
կանչեց ու ըսաւ, Դուն քու անձիդ վնաս մը մի
29 ըներ, ինչու որ ամէնքս ալ հոս ենք։ Եւ անիկա
ճրագ մը ուզեց ու ներս վազեց, եւ դողալով Պօ-
30 ղոսին ու Շիղային առջեւը ինկաւ. Եւ անոնք
դուրս բերելով ըսաւ, Տէրեր, ինծի ի՞նչ պէտք
31 է ընել որ փրկուիմ։ Անոնք ալ ըսին, Հաւատա
Տէր Յիսուս Քրիստոսին, ու պիտի փրկուիս դուն
32 եւ քու տունդ։ Եւ Տէրոջը խօսքը խօսեցան ա-
33 նոր, ու այն ամենուն որ իր տանը մէջն էին։ Եւ
առաւ զանոնք գիշերուան նոյն ժամուն ու ա-
նոնց վէրքերը լուաց, եւ շուտ մը մկրտուեցաւ
34 ինքը ու բոլոր իրենները։ Եւ զանոնք իր տունը
տանելով՝ անոնց առջեւը սեղան դրաւ, եւ բոլոր
տունովը ուրախ եղաւ՝ Աստուծոյ հաւատալով։
35 Ու երբոր առտու եղաւ՝ զօրագլուխները ղրկե-
ցին սպասաւորները ու ըսին, Արձակէ այն մար-
36 դիկը։ Բանտապետն ալ այն խօսքերը Պօղոսին
պատմեց, թէ Զօրագլուխները ղրկեցին որ ար-
ձակուիք. ուստի հիմա ելէք եւ խաղաղութեամբ
37 գացէք։ Բայց Պօղոս ըսաւ անոնց, Մեզ յայտ-
նապէս ծեծելով՝ որ չդատապարտուած Հռով-
մայեցի մարդիկ ենք, բանտը դրին, ու հիմա
գաղտա՞ւկ կը հանեն մեզ. անանկ չէ, հապա թող
38 իրենք գան ու մեզ հանեն։ Եւ սպասաւորները
զօրագլուխներուն պատմեցին այն խօսքերը. ա-
նոնք ալ երբոր լսեցին թէ Հռովմայեցի են՝ վախ-
ցան, ու եկան քաղցրութեամբ խօսեցան անոնց
39 հետ. Եւ դուրս հանելով՝ կ'աղաչէին որ այն քա-
40 ղաքէն երթան։ Անոնք ալ բանտէն ելլելով Լի-

դիային տունը մտան, ու եղբայրները տեսնելով
մխիթարեցին զանոնք և գացին։

ԳԼ. ԺԷ

1 Եւ Ամփիպոլիսէն ու Ապողոնիայէն պտըտելով
Թեսաղոնիկէ եկան, ուր էր Հրէաներուն ժողո-
2 վարանը։ Պօղոս ալ իր սովորութեանը պէս ա-
նոնց մէջը մտաւ, և երեք շաբաթ օր խօսեցաւ
3 անոնց հետ գիրքերէն, Մեկնելով և առջևնին
դնելով թէ պէտք էր Քրիստոսի չարչարուիլ, ու
մեռելներէն յարութիւն առնել, և թէ Ան Յի-
սուսը որ ես ձեզի կը քարոզեմ, նա՛, Քրիստոսն
4 է։ Եւ անոնցմէ ոմանք հաւատացին ու Պօղոսի և
Շիղայի հետ միացան. աստուածավախ Յոյներէն
ալ մեծ բազմութիւն, ու երևելի կիներէն ալ
5 հաւատացողները քիչուոր չէին։ Բայց չհաւատա-
ցող Հրէաները նախանձեցան, և քանի մը դա-
տարկապորտ անօրէն մարդիկ առնելով՝ աղմուկ
հանեցին ու քաղաքը տակնուվրայ ըրին, և
Յասոնին տանը վրայ յարձակելով՝ կ'ուզէին զա-
6 նոնք ժողովքին առջևը տանիլ։ Ու երբոր զա-
նոնք չգտան, Յասոնը ու մէկ քանի եղբայրներ
քաշելով տարին քաղաքապետներուն առջևը,
կանչըռտելով թէ Անոնք որ աշխարհը տակնու-
7 վրայ ըրին՝ հոս ալ հասեր են. Որոնք Յասոն ըն-
դուներ է. և ասոնք ամէնը Կայսրին հրամանացը
դէմ կը գործեն, ըսելով թէ ուրիշ Թագաւոր մը
8 կայ Յիսուս։ Եւ խռովեցուցին ժողովուրդը ու
քաղաքապետները, որ աս բաները կը լսէին։
9 Բայց երբոր Յասոնէն և ուրիշներէն երաշխա-
10 ւորութիւն առին, արձակեցին զանոնք։ Իսկ եղ-
բայրները շուտ մը գիշերով Պօղոսը և Շիղան Բե-
րիա խրկեցին. որոնք հոն հասնելով՝ Հրէից ժո-
11 ղովարանը գացին։ Ասոնք Թեսաղոնիկէի մէջ ե-

ղողներէն աւելի ազնիւ մարդիկ էին, որ Աստու-
ծոյ խօսքը կատարեալ յօժարութեամբ ընդու-
նեցին, և ամէն օր գիրքերը կը քննէին թէ աս
12 բաները ասա՞նկ է։ Ուստի անոնցմէ շատերը հա-
ւատացին. և պատուաւոր Յոյն կիներէն ու
մարդոցմէն հաւատացողներն ալ քիչուոր չէին։
13 Բայց երբոր իմացան Թեսաղոնիկեցի Հրէաները
թէ Բերիայի մէջ ալ Աստուծոյ խօսքը քարոզ-
ուեցաւ Պօղոսէն, հոն ալ եկան ու ժողովուրդը
14 գրգռեցին։ Անատենը եղբայրները շուտ մը Պօ-
ղոսը խրկեցին՝ որ մինչև ծովեզերքը երթայ.
15 բայց Շիղա ու Տիմոթէոս հոն մնացին։ Եւ անոնք
որ Պօղոսը կը տանէին՝ մինչև Աթէնք բերին զա-
նիկա. և իրմէն հրաման առնելով Շիղային ու Տի-
մոթէոսին համար որ շուտով իրեն գան՝ գացին։
16 Եւ Պօղոս Աթենքի մէջ անոնց սպասելով՝ իր
հոգին անհանգիստ էր ներսի դին, վասն զի քա-
ղաքը բոլորովին կռապաշտութեան մէջ ընկղմած
17 կը տեսնէր։ Ուստի ժողովարանին մէջ կը խօսէր
Հրէաներուն ու բարեպաշտ մարդոց, և ամէն օր
18 հրապարակներուն մէջ՝ որոնց որ պատահէր։ Ու
Եպիկուրեան և Ստոյիկեան փիլիսոփաներէն մէկ
քանիները իրեն հետ հակառակութիւն կ'ընէին.
և ոմանք կ'ըսէին, Աս սերմնաքաղը ի՞նչ ըսել
կ'ուզէ. ուրիշներն ալ կ'ըսէին, Կ'երևի թէ ան
մը օտար աստուածներու քարոզիչ է. ինչու որ
Յիսուսը ու յարութիւնը կ'աւետարանէր անոնց։
19 Եւ առին զանիկա Արիսպագոս տարին, ու կ'ը-
սէին, Կրնա՞նք իմանալ թէ ինչ է ատ նոր վար-
20 դապետութիւնը որ դուն կը զրուցես. Քանզի
մեր ականջներուն օտար բաներ կը բերես. ուրեմն
կ'ուզենք իմանալ թէ ինչ պիտի ըլլան անոնք.
21 (Ինչու որ Աթենացիները ամէնն ալ, ու հոն կե-
ցող օտարականները ուրիշ բանի չէին պարապեր,
բայց միայն նոր բան զրուցելու կամ լսելու։)

22 Անատենը Պօղոս Արիսպագոսին մէջը կայնեցաւ
ու ըսաւ, Ով Աթենացի մարդիկ, ամէն կողմանէ
23 խիստ կրօնասէր կը տեսնեմ ձեզ։ Քանզի ես
պտըտելով ու ձեր պաշտամունքը զննելով՝ մէկ
սեղան մը գտայ, որուն վրայ գրուած էր ԱՆԾԱ-
ՆՕԹ ԱՍՏՈՒԾՈՅՆ. ուստի անիկա որ դուք
չճանչնալով կը պաշտէք, ես նոյնը ձեզի կը քա-
24 րոզեմ։ Աստուած որ աշխարհը ստեղծեց, և ա-
նոր մէջի բոլոր բաները, անիկա երկնից ու երկ-
րի Տէրն ըլլալով՝ ոչ ձեռագործ տաճարներու մէջ
25 կը բնակի, Ոչ ալ մարդոց ձեռքովը կը պաշտուի՝
բանի մը կարօտի պէս. քանզի ինքը կու տայ ա-
26 մենուն կեանք ու շունչ և ամէն բան. Ու բոլոր
մարդոց ազգերը մէկ արիւնէ մը ըրաւ՝ որ բոլոր
երկրի երեսին վրայ բնակին. և որոշուած ժա-
մանակներ հաստատեց, ու անոնց բնակութեան
27 սահմանները՝ զԱստուած փնտռելու, Որ ըլլայ թէ
խարխափելով զինքը գտնեն. թէպէտև մեր ա-
28 մէն մէկէն ալ հեռու չէ. Ինչու որ անով կ'ապ-
րինք և կը շարժինք ու կանք, ինչպէս որ ձեր
բանաստեղծներէն մէկ քանիներն ալ ըսին, Քանզի
29 մենք անոր ցեղէն ալ ենք։ Ուստի որովհետև
Աստուծոյ ցեղէն ենք, պէտք չէ որ անանկ սե-
պենք թէ Աստուածութիւնը նման ըլլայ ոսկիի
կամ արծաթի կամ քարի, որ մարդուս վար-
պետութիւնովը ու խելքովը քանդակուած է։
30 Արդ Աստուած տգիտութեան ատենները անտես
ընելով՝ հիմա ամէն տեղ կը պատուիրէ բոլոր
31 մարդոց որ ապաշխարեն։ Ինչու որ ինքը մէկ օր
մը սահմանեց, որուն մէջ աշխարհս արդարու-
թեամբ պիտի դատէ այն մարդուն ձեռքովը՝ որն
որ որոշեց, ու ամենուն հաւատացուց՝ զանիկա
մեռելներէն յարուցանելով։
32 Երբոր մեռելոց յարութիւնը լսեցին, ոմանք
ծաղր կ'ընէին, ոմանք ալ կ'ըսէին, Ատ բանիդ

համար ուրիշ անգամ մտիկ պիտի ընենք քեզի։
33 Եւ այսպէս Պօղոս անոնց մէջէն ելաւ։ (34) Սա-
կայն քանի մը մարդիկ իրեն յարելով հաւատա-
ցին, որոնց մէջ էր Դիոնեսիոս Արիսպագացին և
Դամարիս անունով կնիկ մը, ու անոնց հետ ու-
րիշներ ալ։

ԳԼ. ԺԸ

1 Ասկէ ետև Պօղոս Աթենքէն զատուելով Կորըն-
2 թոս եկաւ, Եւ մէկ Հրէայ մը գտաւ Ակիւղաս ա-
նունով, ծննդեամբ Պոնտացի, որ իր Պրիսկիղա
կնկանը հետ նոր եկեր էր Իտալիայէն, (Կղօդիո-
սին հանած հրամանին համար որ բոլոր Հրէաները
3 Հռոմէն հեռանան,) ու անոնց քովը գնաց։ Եւ ո-
րովհետև ինքը արհեստակից էր՝ անոնց քովը կե-
ցաւ և կը բանէր, ինչու որ արհեստով վրանա-
4 գործ էին։ Ու ամէն շաբաթ օրերը ժողովարա-
նին մէջ կը խօսէր, և Հրէաները և Յոյները կը
5 համոզէր։ Ու երբոր Շիղա և Տիմոթէոս Մակե-
դոնիայէն իջան, Պօղոսի հոգին եռանդով վառ-
ուած ըլլալով, Հրէաներուն վկայութիւնով կը
6 հաստատէր թէ Յիսուսը Քրիստոս է։ Անոնք ալ
երբոր դէմ կեցան ու կը հայհոյէին, ինքը հան-
դերձները թօթվելով ըսաւ անոնց, Ձեր արիւնը
ձեր գլուխը, ես անպարտ եմ. ասկէ ետև հե-
7 թանոսներուն պիտի երթամ։ Եւ անկէ երթալով
մտաւ մէկու մը տուն, որուն անունը *Յուստոս
էր՝ աստուածավախ մարդ մը, որուն տունը ժո-
8 ղովարանին կից էր։ Եւ ժողովրդապետը Կրիսպոս
իր բոլոր տունովը հաւատաց Տէրոջը. և Կորնթա-
ցիներէն շատերը լսելով հաւատացին, ու մկրտ-
9 ուեցան։ Եւ գիշերը տեսիլքի մէջ Տէրը ըսաւ Պօ-

*Ոմանք Տիտոս Յուստոս

գիշերին, Մի վախնար, հապա խօսէ և լուռ մի կե-
10 նար, ինչու որ ես քեզի հետ եմ, և մէկը քեզի
դէմ պիտի չելլէ՝ քեզի վնաս մը հասցընելու.
քանզի աս քաղաքիս մէջ ես շատ ժողովուրդ
11 ունիմ. Եւ հոն տարի մը ու վեց ամիս կեցաւ, ու
Աստուծոյ խօսքը անոնց մէջ կը սորվեցընէր.
12 Եւ Աքայիայի փոխանորդ բդեշխին Գաղիոնին
օրերը Հրէայք միաբանելով՝ Պօղոսին դէմ ելան,
13 և զանիկա ատեանը տարին, Ըսելով թէ Ասիկա
կը հրապուրէ մարդիկ օրէնքէն դուրս Աստուած
14 պաշտելու. Ու երբոր Պօղոս իր բերանը բանալու
պատրաստ էր, Գաղիոն ըսաւ Հրէաներուն, Թէ
որ անիրաւութեան մը կամ չար գործքի մը հա-
մար ըլլար, ով Հրէաներ, արժան էր ինծի որ
15 ձեզի մտիկ ընէի: Բայց թէ որ վէճը խօսքի ու
անուններու և ձեր օրէնքին վրայով է, դուք
ձեզմէն տեսէք. ինչու որ ես ատանկ բաներու
16 դատաւոր ըլլալ չեմ ուզեր. Եւ զանոնք ատեա-
17 նէն վռնտեց. Անատենը բոլոր Յոյները Սոսթե-
նէս ժողովրդապետը բռնեցին ու ատեանին առ-
ջևը կը ծեծէին. և աս բաներուս վրայով Գաղիոն
բնաւ հոգ չէր ըներ.
18 Պօղոս ալ տակաւին շատ մը օրեր հոն մնալէն
ետքը, եղբայրներէն հրաժարելով՝ նաւով դէպ
'ի Սիւրիա գնաց, ու իր հետն ալ Պրիսկիղա և
Ակիւղաս, որ Կենքրայի մէջ էր գլուխը փոք-
19 րած, ինչու որ ուխտաւոր էր. Ու Եփեսոս որ
հասաւ՝ անոնք հոն ձգեց, և ինքը ժողովարանը
20 մտնելով՝ Հրէաներուն հետ կը խօսէր. Եւ իրեն
կ'աղաչէին որ ալ աւելի ժամանակ իրենց քովը
21 մնայ, բայց յանձնառու չեղաւ. Հապա հրաժարե-
ցաւ անոնցմէ ըսելով, *Պէտք է որ անպատճառ
աս առաջիկայ տօնը Երուսաղէմի մէջ ընեմ, բայց*

*Ոմանք չունին

Աստուծոյ կամքովը նորէն ձեզի կը դառնամ.
22 ու Եփեսոսէն նաւով ճամբայ ելաւ. Եւ Կե-
սարիա հասնելով՝ Երուսաղէմ ելաւ, ու եկեղե-
23 ցիին բարեւ տուաւ, ու ետքը իջաւ Անտիոք. Եւ
ատեն մը հոն կենալէն ետև ելաւ, ու կարգով
Գաղատացւոց երկիրը և Փռիւգիա կը պտըտէր,
ու բոլոր աշակերտները կը հաստատէր.
24 Եւ Ապողոս անունով Հրէայ մը, ծննդեամբ Ա-
ղեքսանդրացի, ճարտասան մարդ մը եկաւ հա-
սաւ Եփեսոս, որ ինքը զօրաւոր էր սուրբ գիր-
25 քերով: Ասիկա Տէրոջը ճամբուն մէջ վարժուած
էր, և ջերմեռանդ հոգի ունենալով՝ կը խօսէր
ու կը սորվեցընէր ճշդութեամբ Տէրոջը վրայով.
բայց ինքը միայն Յովհաննէսին մկրտութիւնը գի-
26 տէր. Ասիկա սկսաւ ժողովարանին մէջ համար-
ձակ խօսիլ. ու երբոր Ակիւղաս ու Պրիսկիղա
լսեցին անկէ, ալ զանիկա իրենց քովն առին, և
աւելի ճշդիւ Աստուծոյ ճամբան անոր հասկըցու-
27 ցին. Ու երբոր անիկա ուզեց Աքայիա երթալ,
եղբայրները քաջալերեցին զանիկա, ու գիր գրե-
ցին ան տեղի աշակերտներուն որ զանիկա ընդու-
նին. որ հոն հասնելով՝ շատ օգտակար եղաւ
28 շնորհքով՝ հաւատացեալներուն. Քանզի հրապա-
րակաւ սաստիկ կը յանդիմանէր Հրէաները, սուրբ
գիրքերէն ցուցընելով թէ Յիսուսը Քրիստոսն է.

ԳԼ. ԺԹ

1 Եւ քանի որ Ապողոս Կորնթոսի մէջ էր, Պօ-
ղոս վերի կողմերը պտըտելով Եփեսոս եկաւ, և
2 քանի մը աշակերտներ գտնելով՝ Ըսաւ անոնց,
Երբոր հաւատացիք՝ Սուրբ Հոգին առի՞ք արդ-
եօք. անոնք ալ ըսին իրեն, Բայց մենք լսած
3 ալ չենք թէ Սուրբ Հոգի կայ. Եւ ըսաւ անոնց,

Հապա ինչո՞վ մկրտուեցաք. անոնք ալ ըսին,
4 Յովհաննէսին մկրտութիւնովը։ Պօղոս ալ ըսաւ,
Յովհաննէս ապաշխարութեան մկրտութիւնով
մկրտեց, ժողովուրդին ըսելով թէ ան որ իրմէ
ետքը պիտի գայ՝ անոր հաւատան, այսինքն
5 Քրիստոս Յիսուսի։ Ու երբոր ասիկա լսեցին՝ Տէր Յի-
6 սուսի անունովը մկրտուեցան։ Եւ Պօղոս երբոր
անոնց վրայ ձեռք դրաւ, Սուրբ Հոգին անոնց
վրայ եկաւ, և լեզուներ կը խօսէին ու կը մար-
7 գարէանային։ Եւ ան բոլոր մարդիկը տասուեր-
8 կուքի չափ էին։ Ու ժողովարանը մտնելով՝ երեք
ամիս համարձակութեամբ Աստուծոյ թագաւո-
րութեանը վրայով կը խօսէր ու կը համոզէր։
9 Իսկ երբոր մէկ քանիները կը յամառէին ու դէմ
կը դնէին՝ բազմութեան առջևը ան ճամբան բամ-
բասելով, ինքը անոնցմէ հեռացաւ և աշակերտ-
ները զատեց, ու ամէն օր Տիւրան անունով մէկու
10 մը դպրատանը մէջ կը խօսէր։ Եւ աս երկու տա-
րի քշեց՝ մինչև որ բոլոր Ասիայի մէջ բնակող
Հրէաները ու Յոյները *Տէրոջը խօսքը լսեցին։
11 Եւ Աստուած նշանաւոր հրաշքներ կ'ընէր Պօղո-
12 սին ձեռքովը. Անանկ որ անոր մարմինէն թաշ-
կինակներ ու գոգնոցներ կը տանէին հիւանդնե-
րուն, և իրենց ցաւերէն կը բժշկուէին, ու չար
13 ոգիները կ'ելլէին։ Բայց աստանդական Հրէանե-
րէն մէկ քանիները որ երդմնեցուցիչ էին՝ †յան-
դըգնեցան Տէր Յիսուսի անունը կանչել անոնց
վրայ որոնք չար ոգիներ ունէին, և կ'ըսէին, Ձեզ
կ'երդմնեցընենք Յիսուսով, որն որ Պօղոս կը քա-
14 րոզէ։ Եւ աս բանը ընողները Սկեւա ըսուած Հրէ-
15 այ քահանայապետի մը եօթը որդիքն էին։ Իսկ
չար ոգին պատասխան տուաւ ու ըսաւ, Յիսուսը

*Ոմանք՝ Տէր Յիսուսի
†Յուն. ձեռք զարկին

կը ճանչնամ ու Պօղոսը գիտեմ, բայց դուք ո՞վ
16 էք։ Եւ ան մարդը որուն ներսի դին էր չար ո-
գին, անոնց վրայ ցատկելով՝ բռնեց զանոնք ու
յաղթեց, մինչև որ ան տունէն մերկ ու վիրա-
17 ւորուած դուրս փախան։ Եւ աս բանը Եփեսոսի
մէջ բնակող բոլոր Հրէաներուն ու Յոյներուն
յայտնի եղաւ. և անոնց ամենուն վրայ վախ մը
ինկաւ, ու Տէր Յիսուսի անունը կը մեծարուէր։
18 Եւ հաւատացեալներէն շատերը կու գային, ու կը
խոստովանէին ու կը պատմէին իրենց ըրածները։
19 Եւ կախարդութեան հետևողներուն շատերը գիր-
քերնին մէկտեղ բերելով՝ ամենուն առջևը կ'այ-
րէին. և անոնց գինը հաշուեցին ու յիսուն հա-
20 զար արծաթ [illegible] դրամ։ Այսպէս Տէրոջը
խօսքը մեծապէս կ'աճէր և կը զօրանար։
21 Ու երբոր աս բաները լմնցաւ, Պօղոս միտքը
դրաւ որ Մակեդոնիայէն ու Աքայիայէն պտըտե-
լով Երուսաղէմ երթայ. ու կ'ըսէր թէ Հոն եր-
թալէս ետքը պէտք է ինծի որ Հռոմ ալ տես-
22 նեմ։ Եւ իրեն սպասաւորութիւն ընողներէն եր-
կուքը՝ Տիմոթէոսը ու Երաստոսը խրկեց Մակե-
դոնիա, ու ինքը ատեն մըն ալ Ասիայի մէջ կե-
ցաւ։
23 Եւ ան ատենները շատ խռովութիւն եղաւ Տէ-
24 րոջը ճամբուն համար։ Քանզի Դեմետրիոս անու-
նով արծաթագործ մը Արտեմիսին փոքրիկ տա-
ճարներ կը շինէր արծաթէ, ու քիչ շահ չէր բե-
25 րեր վարպետներուն. Որոնք ասիկա մէկտեղ ժող-
վեց նոյն արհեստին բանուորներուն հետ, ու ը-
սաւ, Մարդիկ, դուք գիտէք որ աս գործէս է
26 մեր շահը. Եւ կը տեսնէք ու կը լսէք որ աս Պօ-
ղոսը չէ թէ միայն Եփեսացւոց, հապա գրեթէ
բոլոր Ասիացւոց շատ ժողովուրդները համոզե-
լով՝ մաքերնին դարձուց, ըսելով թէ Ձեռքով
27 շինուածները աստուածներ չեն։ Ուստի վտանգ

կայ որ չէ թէ միայն աս մեր *կողմը պիտի նա-
խատուի, հապա մեծ աստուածուհւոյն Արտեմի-
սին տաճարն ալ ոչինչ պիտի սեպուի, և անոր
մեծափառութիւնը պիտի խափանուի, որն որ
28 բոլոր Ասիա ու աշխարհք կը պաշտեն։ Ու երբոր
ասոնք լսեցին՝ բարկութեամբ լեցուած կը կանչուըռ-
տէին ու կ'ըսէին, Մեծ է Եփեսացւոց Արտեմիսը։
29 Եւ բոլոր քաղաքը խռովութեամբ լեցուեցաւ. և
յափշտակելով Գայիոս ու Արիստարքոս Մակե-
դոնացիները՝ Պօղոսին ճանապարհորդակիցները,
30 ամէնը մէկէն թէատրոնը վազեցին։ Իսկ Պօղոս
երբոր ուզեց ժողովուրդին մէջը մտնել, աշա-
31 կերտները թող չտուին զինքը։ Ասիապետներէն
ալ ոմանք որ իր բարեկամներն էին՝ մարդ խրկե-
լով իրեն կ'աղաչէին որ չհամարձակի թէատրոնը
32 երթալու։ Ուստի մէկը մէկ կերպ ու միւսը ու-
րիշ կերպ բան կը կանչուըռտէին, ինչու որ ժո-
ղովքը շփոթութեան մէջ էր, և շատերը չէին գի-
33 տեր թէ ինչ բանի համար ժողվուած են։ Եւ
բազմութեանը մէջէն յառաջ բերին Աղեքսանդ-
րոսը, որն որ Հրէայք յառաջ քշեցին. Աղեք-
սանդրոս ալ ձեռքը շարժելով՝ կ'ուզէր որ ժո-
34 ղովուրդին պատասխան տայ։ Իսկ երբոր գիտցան
թէ անիկա Հրէայ է, ամէնքը մէկ բերան եղած՝
երկու ժամու չափ կը կանչուըռտէին թէ Մեծ է
35 Եփեսացւոց Արտեմիսը։ Սակայն ատենադպիրը
բազմութիւնը հանդարտեցնելով՝ ըսաւ, Ով Ե-
փեսացի մարդիկ, ո՞ր մարդն է որ չգիտնայ թէ
Եփեսացւոց քաղաքը †մեծ Արտեմիսին և Դիոսէն
36 ինկած կուռքին տաճարին պաշտօնեան է։ Ուրեմն
աս որ անվիճելի բան մըն է, պէտք է ձեզի հան-
դարտ կենալ, և յանդգնութեամբ բան մը չընել։

*կամ արհեստը
†Ոմանք մեծ աստուածուհւոյն

37 Քանզի դուք աս մարդիկը հոս բերիք, որոնք
ոչ տաճար կողոպտողներ են, ոչ ալ ձեր աստ-
38 ուածուհւոյն հայհոյանք ըրեր են։ Ուստի թէ որ
Դեմետրիոս և իր հետը եղած վարպետները մէ-
կու մը հետ բան մը ունին, դատի օրեր կան ու
փոխանորդ բդեշխ կայ. թող իրարու դէմ ամ-
39 բաստանութիւն ընեն. Հապա թէ որ ուրիշ բա-
ներու համար է ձեր պահանջմունքը, օրինաւոր
40 ժողովքի մէջ թող որոշուի։ Ինչու որ մենք ալ
աս օրուան եղածին համար իբրև խռովայոյզ
մարդիկ ամբաստանուելու վտանգի մէջ ենք,
քանզի պատճառ մը չկայ որով կարող ըլլանք
աս խառնամբոխ բազմութեանը համար պատաս-
խան տալ։ Եւ ասանկ ըսելով ժողովքը արձակեց։

ԳԼ. Ի

1 Եւ աղմուկը դադարելէն ետև Պօղոս աշակերտ-
ները իրեն կանչեց, ու հրաժարական ողջոյն տա-
2 լով ելաւ որ Մակեդոնիա երթայ։ Եւ ան կող-
մերը պտըտելէն ու շատ խօսքերով զանոնք յոր-
3 դորելէն ետև Եղլադա եկաւ։ Եւ հոն երեք ամիս
կենալէն ետքը, Հրէաները իրեն դէմ նենգու-
թեան խորհուրդ ըրին՝ երբոր կ'ուզէր Սիւրիա
ելլել. անոր համար որոշեց Մակեդոնիայի վրայէն
4 դառնալ։ Ու մինչև Ասիա իր հետը կ'երթար Բե-
րիացի [Պիւռոսի որդին] Սոպատրոս, և Թեսաղո-
նիկեցիներէն Արիստարքոս ու Սեկունդոս, և Գա-
յիոս Դերբեացին ու Տիմոթէոս, և Ասիացիք Տիւ-
5 քիկոս ու Տրոփիմոս։ Ասոնք յառաջ գացին ու
6 Տրովադայի մէջ մեզի կը սպասէին։ Մենք ալ բա-
ղարջակերաց օրերէն ետև Փիլիպպէէն նաւե-
ցինք, և հինգ օրուան մէջ Տրովադա եկանք ա-
նոնց քովը, ու հոն եօթը օր կեցանք։

7 Եւ մէկշաբթի օրը երբոր *ժողվուեր էինք՝ հաց
կտրելու, Պօղոս անոնց կը քարոզէր, ինչու որ
հետեւեալ օրը ճամբայ պիտի ելլէր. և խօսքը եր-
8 կընցուց մինչև կէս գիշեր։ Ու շատ լապտերներ
կային այն վերի սենեակը՝ ուր որ մենք ժողվուած
9 էինք։ Եւ մէկ երիտասարդ մը Եւտիքոս անուն
պատուհանին վրայ նստած՝ խորունկ քնոյ մէջ
մտեր էր. երբոր Պօղոս խօսքը երկնցուց, անի-
կա խորունկ քնով բռնուած երրորդ դստիկոնէն
10 վար ինկաւ ու զանիկա մեռած վերցուցին։ Եւ
Պօղոս վար իջնելով՝ անոր վրայ ինկաւ ու գրկեց
զանիկա՝ ու կ'ըսէր, Մի խռովիք, ինչու որ անոր
11 հոգին իր մէջն է։ Եւ վեր ելլելով՝ հացը կտրեց
ու կերաւ. ու երկար խօսելով մինչև առտու՝
12 ետքը ելաւ գնաց։ Եւ այն պատանին ողջ բերին
13 ու մեծապէս մխիթարուեցան։ Իսկ մենք նաւը
մտնելով ճամբայ ելանք դէպ 'ի Ասոն, որ անկէ
Պօղոսը պիտի առնէինք, ինչու որ անանկ ապըս-
պըրեր էր, որովհետև ինքը †ցամաքով պիտի եր-
14 թար։ Ու երբոր Ասոնի մէջ մեզի հանդիպեցաւ,
15 առինք անիկա և Միտիլինէ եկանք։ Անկէ ալ
նաւելով հետեւեալ օրը Քիոսի դիմացը հասանք.
և միւս օրը Սամոս հասանք, ու գիշերը Տրոգի-
16 լիոն կենալով՝ միւս օրը Միլիտոս եկանք. Ինչու
որ Պօղոս միտքը դրեր էր որ նաւով անցնի Ե-
փեսոսի քովէն, որ չըլլայ թէ Ասիայի մէջ ժա-
մանակ անցընէ, որովհետև կ'արտորար որ եթէ
կարելի է իրեն՝ Պենտէկոստէին օրը Երուսաղէմ
ըլլայ։
17 Եւ Միլիտոսէն մարդ ղրկեց Եփեսոս ու եկե-
18 ղեցիին երէցները կանչեց։ Ու երբոր իրեն եկան,
ըսաւ անոնց, Դուք գիտէք որ այն առջի օրէն

*Ոմանք աշակերտները ժողվուեր էին
†Կամ քալելով

հետէ որ ես Ասիա եկայ, ինտո՛ր ձեր հետը վար-
19 ուեցայ բոլոր ժամանակը. Ամենայն խոնարհու-
թեամբ Տէրոջը ծառայելով, և շատ արցունքով
ու փորձութիւններով՝ որ Հրէից նենգութիւննե-
20 րէն ինծի պատահեցան. Ինտո՛ր վախնալով ետ չկե-
ցայ օգտակար բաներուն ընաւ մէկը ձեզի զրու-
ցելէն, ու ձեզի հրապարակաւ և տան մէջ սոր-
21 վեցընելէն. Վկայութիւն տալով Հրէից և Յունաց
ալ՝ դէպ 'ի Աստուած ապաշխարութեան հա-
մար, ու մեր Տէր Յիսուս Քրիստոսի վրայ եղած
22 հաւատքին համար։ Եւ հիմա ահա ես հոգւով
կապուած՝ Երուսաղէմ կ'երթամ, և հոն ինչ որ
23 ինծի պիտի պատահի՝ չեմ գիտեր. Միայն թէ Հո-
գին Սուրբ ամէն քաղաքի մէջ ինծի կը վկայէ ու
կ'ըսէ թէ կապեր ու նեղութիւններ ինծի կը սպա-
24 սեն։ Բայց ես բանի մը համար հոգ չեմ ըներ, և
իմ անձս պատուական չեմ սեպեր, միայն թէ իմ
ընթացքս ուրախութեամբ կատարեմ, և այն
պաշտօնը՝ որ Տէր Յիսուսէն առի Աստուծոյ շնոր-
25 հացը աւետարանին վկայ ըլլալու։ Եւ հիմա ահա
ես գիտեմ որ ալ իմ երեսս պիտի չտեսնէք դուք
ամէնքդ, որ մէջերնիդ պտըտեցայ Աստուծոյ թա-
26 գաւորութիւնը քարոզելով. Ուստի սա օրս կը
վկայեմ ձեզի, որ ես անպարտ եմ ամենուն ա-
27 րիւնէն. Ինչու որ ետ չկեցայ Աստուծոյ բոլոր
28 կամքը ձեզի յայտնելէն։ Ուրեմն զգուշացէք ձեր
անձերուն և բոլոր հօտին, որուն վրայ Հոգին
Սուրբ ձեզ տեսուչ դրաւ՝ *Աստուծոյ եկեղեցին
29 հովուելու, որն որ իր արիւնովը ստացաւ։ Քանզի
գիտեմ որ իմ զատուելէս ետքը ձեր մէջը †յա-
փըշտակող գայլեր պիտի մտնեն, որ պիտի չխնա-
30 յեն հօտին։ Եւ ձեզմէ ալ անանկ մարդիկ պիտի

*Ոմանք Տէրոջը
†Կամ Վնասակար

* ելլեն, որ ծուռ բաներ պիտի խօսին՝ աշակերտ-
31 ները իրենց ետեւէն քաշելու համար։ Ուստի ար-
թուն կեցէք, և միտքերնիդ բերէք՝ որ երեք
տարի գիշեր ու ցորեկ չդադարեցայ ամէն մէկը
32 արցունքով խրատելէն։ Եւ հիմա, եղբայրներ, կը
յանձնեմ ձեզ Աստուծոյ ու անոր շնորհացը խօս-
քին, որ կարող է շինելու և բոլոր սրբուածնե-
33 րուն հետ ձեզի ժառանգութիւն տալու։ Մէկու
մը արծաթին կամ ոսկիին կամ հագուստին չցան-
34 կացայ. Դուք ձեզմէ գիտէք որ ինծի և իմ հետս
եղողներուն պէտք եղածը աս ձեռքերս հոգա-
35 ցին։ Ամէն բան ձեզի ցուցուցի, թէ ասանկ պէտք
է աշխատիլ ու տկարներուն օգնութիւն ընել, և
միտք բերել Տէր Յիսուսի խօսքը՝ որ ինքը ը-
սաւ, Աւելի երանելի է տալը քան թէ առնելը։
36 Եւ աս որ ըսաւ, անոնց ամենուն հետ ծնկան
37 վրայ գալով աղօթք ըրաւ։ Ամէնքն ալ սաստիկ
կու լային, ու Պօղոսի պարանոցին վրայ իյնալով
38 զանիկա կը համբուրէին։ Սիրտերնին կը ցաւէր
մանաւանդ ան խօսքին համար՝ որ կ'ըսէր թէ ալ
պիտի չտեսնեն իր երեսը. և զանիկա ճամբայ
դրին մինչեւ նաւը ղրկելու։

ԳԼ. ԻԱ

1 Ու երբոր ելանք ու անոնցմէ զատուեցանք՝ շի-
տակ նաւելով Կով եկանք, և միւս օրը Հռոդոն,
2 ու անկէ Պատարա։ Եւ նաւ մը գտանք որ Փիւ-
նիկէ կ'երթար, ու անոր մէջը մտնելով ճամբայ
3 ելանք։ Եւ Կիպրոս որ երեցաւ, զանիկա ձախ
կողմերնիս թող տալով՝ դէպ 'ի Սիւրիա նաւե-
ցինք և Տիւրոս ելանք, ինչու որ նաւը հոն պի-
4 տի թափէր իր բեռը։ Եւ աշակերտները գտնե-
լով՝ եօթը օր հոն կեցանք, որոնք Սուրբ Հոգի-
5 ով կ'ըսէին Պօղոսին որ Երուսաղէմ չելլէ։ Ու երբ-

որ ան օրերը անցուցինք՝ ելանք ու կ'երթայինք.
ամէնն ալ կնիկներով ու տղաքներով մինչեւ քա-
ղաքէն դուրս մեզ ճամբայ դրին. և ծովուն ե-
6 զերքը ծնկան վրայ գալով աղօթք ըրինք։ Ու ի-
րարու հրաժարական ողջոյն տալով՝ մենք նաւը
7 ելանք, անոնք ալ տեղերնին դարձան։ Իսկ մենք
Տիւրոսէն նաւելով և ծովու ճամբորդութիւնը
լմնցնելով Պտղեմայիս հասանք, ու եղբայր-
8 ները բարեւելով օր մը քովերնին կեցանք։ Եւ
հետեւեալ օրը *տնէն ելանք ու Կեսարիա եկանք,
և Փիլիպպոս աւետարանչին տունը մտնելով, որ
9 ինքը եօթնէն մէկն էր, անոր քովը կեցանք։ Ա-
նիկա չորս կոյս աղջիկ ունէր, որ մարգարէու-
10 թիւն կ'ընէին։ Եւ հոն շատ օրեր որ կեցանք,
Հրէաստանէն մարգարէ մը իջաւ Ագաբոս անու-
11 նով. Ու երբոր մեզի եկաւ, Պօղոսին գօտին առ-
նելով իր ձեռքերը ու ոտքերը կապեց, և ըսաւ,
Ասանկ կ'ըսէ Հոգին Սուրբ. Ան մարդը՝ որունն է
աս գօտին, ասանկ պիտի կապեն Հրէաները Ե-
րուսաղեմի մէջ, ու հեթանոսներուն ձեռքը պի-
12 տի մատնեն։ Ու երբոր աս լսեցինք, աղաչեցինք
մենք ալ և տեղացիք ալ որ Երուսաղէմ չելլէ։
13 Իսկ Պօղոս պատասխան տուաւ, Ի՞նչ կ'ընէք,
ի՞նչու կու լաք ու իմ սիրտս կը ճմլէք. քանզի
ես չէ թէ միայն Երուսաղեմի մէջ կապուելու,
հապա նաեւ մեռնելու ալ պատրաստ եմ Տէր Յի-
14 սուսի անուանը համար։ Եւ ինքը որ մտիկ չը-
րաւ՝ լուռ կեցանք, ու ըսինք, Տէրոջը կամքը
թող ըլլայ։
15 Եւ ան օրերէն ետեւ պատրաստուելով Երուսա-
16 ղէմ ելանք։ Կեսարացի աշակերտներէն ալ մէկ
քանիները մեր հետը եկան, և հին աշակերտ Մնասոն ...

*Բնաբ. մենք որ Պօղոսին ընկերներն էինք՝ տնէն

աշակերտի մը՝ Կիպրացի Մնասոնին, որուն քովը
17 պիտի կենայինք։ Ու երբոր Երուսաղէմ մտանք,
եղբայրները ուրախութեամբ մեզ ընդունեցին։
18 Եւ հետեւեալ օրը Պօղոս մեզի հետ Յակոբոսին
19 քովը գնաց, ու բոլոր երէցներն ալ եկան։ Եւ
զանոնք բարեւելով մի ըստ միոջէ կը պատմէր ինչ
որ Աստուած հեթանոսներուն մէջը ըրաւ իր ծա-
20 ռայութիւնովը։ Անոնք ալ լսելով փառք կու-
տային *Տէրոջը. և ըսին իրեն, Կը տեսնե՞ս, եղ-
բայր, քանի՛ բիւրաւոր հաւատացեալ Հրեաներ
կան, ու ամէնքն ալ օրէնքին նախանձաւոր են։
21 Բայց քու վրայովդ իմացան թէ դուն բոլոր հե-
թանոսներուն մէջ եղած Հրեաներուն Մովսէսէն
ապստամբիլ կը սորվեցընես, ըսելով որ տղաք-
նին չթլփատեն, և սովորութիւններուն համեմատ
22 չվարուին։ Արդ ի՞նչ պիտի ըլլայ. անշուշտ բազ-
մութիւն պիտի ժողվուի, ինչու որ պիտի լսեն
23 թէ եկեր ես։ Ուստի աս բանը ըրէ որ քեզի կ'ը-
սենք. Մեր քովը չորս մարդ կայ, որոնք իրենց
24 վրայ ուխտ դրած են. Անոնք առ՝ իրենց հետը
մաքրուէ, և անոնց համար ծախք ըրէ, որ իրենց
գլուխը ածիլեն. որպէս զի ամէնն ալ գիտնան թէ
քու վրայովդ իմացած բաներնին ոչինչ է, հապա
դուն ալ ճր հետը կը քալես օրէնքը պահելու
25 մէջ։ Բայց հաւատքի եկող հեթանոսներուն հա-
մար մենք թուղթ խրկեցինք՝ ինչպէս որ որոշե-
ցինք, որ անոնք բնաւ ասանկ բաներ չպահեն,
միայն թէ զգուշանան կուռքերու զոհուածէ ու
26 արիւնէ և խեղդուածէ ու պոռնկութենէ։ Անա-
տենը Պօղոս ան մարդիկը առաւ, ու հետեւեալ
օրը անոնց հետ մաքրուած՝ տաճարը մտաւ,
մաքրութեան օրերը լմննալը ցուցընելու հա-
մար, մինչեւ որ անոնց ամէն մէկուն համար պա-
տարագ մատուցուեցաւ։

---

*Ոմանք Աստուծոյ

27 Ու երբոր եօթը օրերը լմննալու վրայ էին, Ա-
սիացի Հրեաները զանիկա տաճարին մէջը տես-
նելով՝ բոլոր բազմութիւնը խռովեցուցին, և ա-
28 նոր ձեռք զարկած՝ կը կանչուըռտէին, Իսրայէ-
լացի մարդիկ, օգնութեան հասէք. աս ան մարդն
է՝ որ ամէն տեղ ժողովուրդին և օրէնքին ու աս
տեղին դէմ բան կը սորվեցընէ ամենուն, մինչեւ
որ տաճարին մէջը Յոյներ ալ մտցուց, և աս
29 սուրբ տեղը պղծեց. (Ինչու որ առաջուց Եփե-
սացի Տրոփիմոսը իրեն հետ քաղաքին մէջը տե-
սեր էին, և կը կարծէին թէ Պօղոս զանիկա տա-
30 ճարը մտցուց.) Ու բոլոր քաղաքը շարժեցաւ և
ժողովուրդը դիզուեցաւ, ու բռնեցին Պօղոսը
տաճարէն դուրս քաշեցին. և շուտ մը դռները
31 գոցուեցան։ Ու երբոր անոնք կ'ուզէին անիկա
սպաննել, լուր հասաւ գունդին հազարապետին
32 թէ բոլոր Երուսաղէմ իրար անցեր է։ Ան ալ
անմիջապէս զինուորներ և հարիւրապետներ ա-
ռած՝ անոնց վրայ վազեց. անոնք ալ հազարա-
պետը ու զինուորները տեսնելով՝ Պօղոսը ծեծե-
33 լէն դադարեցան։ Անատենը հազարապետը մօ-
տենալով բռնեց զանիկա, և հրաման ըրաւ որ
կրկին շղթայով կապեն. ու կը հարցընէր թէ ա-
34 նիկա ո՞վ է ու ի՞նչ ըրեր է։ Եւ բազմութեանը
մէջէն մէկը մէկ կերպ՝ ու միւսը ուրիշ կերպ բան
կը կանչուըռտէին. իսկ երբոր չկրցաւ ան շփո-
թութենէն ստոյգը գիտնալ, հրաման ըրաւ որ
35 զանիկա բերդը տանին։ Ու երբոր սանդուխը հա-
սաւ, անանկ պատահեցաւ որ զինուորները վեր
վերցընեն անիկա՝ ժողովուրդին բռնութեանը հա-
36 մար. ինչու որ ժողովուրդին բազմութիւնը ետե-
37 ւէն կ'երթար, ու կ'ըսէին, Վերցուր ատիկա։ Ու
երբոր Պօղոս բերդը մտնելու վրայ էր, հազարա-
պետին ըսաւ, Արդեօք կարելի՞ է որ քեզի բան
38 մը խօսիմ։ Ան ալ ըսաւ, Յունարէն գիտե՞ս. Չէ՞

որ դուն ան Եգիպտացին ես, որ աս օրերէս ա-
ռաջ չորս հազար *սրիկայ մարդիկ ապստամբե-
39 ցուցեր, ու անապատը հաներեր։ Պօղոս ալ ը-
սաւ, Ես Հրեայ մարդ մըն եմ Կիլիկիոյ Տարսո-
նէն, չէ թէ աննշան քաղաքի մը քաղաքացի, ու
կ'աղաչեմ քեզի՝ ինծի հրաման տուր որ ժողո-
վուրդին խօսիմ։
40 Ու երբոր անիկա հրաման տուաւ, Պօղոս սան-
դուխին վրայ կայնելով՝ ձեռքը շարժեց ժողո-
վուրդին, ու երբոր աղէկ մը լռութիւն եղաւ,
Եբրայական լեզուով խօսեցաւ անոնց, ու ըսաւ,

ԳԼ. ԻԲ

1 Մարդիկ եղբայրներ և հայրեր, ինծի մտիկ ըրէք
2 որ հիմա ձեզի պատասխան կու տամ. (Երբոր
լսեցին որ Եբրայական լեզուով կը խօսէր իրենց,
3 ալ աւելի լուռ կեցան. Եւ անիկա ըսաւ,) Ես
Հրեայ մարդ մըն եմ Կիլիկիոյ Տարսոնին մէջ ծը-
նած՝ և աս քաղաքիս մէջ Գամաղիէլին ոտքը
մեծցած, ու մեր հայրենի օրէնքին ճշդութեանը
պէս կրթուած, նախանձաւոր էի Աստուծոյ՝ ինչ-
4 պէս որ այսօր դուք ամէնքդ էք։ Որ ես էրիկ
մարդիկ ու կնիկ մարդիկ կապելով, ու բանտե-
րու մատնելով աս ճամբան հալածեցի մինչև 'ի
5 մահ. Ինչպէս որ քահանայապետն ալ կը վկայէ
ինծի համար՝ և բոլոր ծերակոյտը. որ իրենցմէ
թուղթեր ալ առնելով եղբայրներուն՝ Դամաս-
կոս կ'երթայի, որ հոն եղածներն ալ կապուած
6 Երուսաղէմ բերեմ որ պատժուին։ Ու եղաւ որ
երբ կ'երթայի ու Դամասկոսին մօտեցայ, կէս
օրուան դէմ յանկարծակի երկինքէն մեծ լոյս մը

*Յուն. սիկարեան, այսինքն դաշնակակիր մար-
դասպան

7 փայլատակեց իմ բոլորտիքս. Եւ գետինը ինկայ,
ու ձայն մը լսեցի որ ինծի կ'ըսէր, Սաւուղ, Սա-
8 ւուղ, ինչո՞ւ զիս կը հալածես։ Ես ալ պատաս-
խան տուի թէ Դուն ո՞վ ես, Տէր. ան ալ ինծի
ըսաւ, Ես Յիսուս Նազովրեցին եմ, որ դուն կը
9 հալածես։ Բայց անոնք որ իմ հետս էին՝ լոյսը
տեսան ու վախով լեցուեցան, սակայն ինծի խօ-
10 սողին ձայնը չլսեցին։ Եւ ըսի, Ի՞նչ ընեմ, Տէր. և
Տէրը ինծի ըսաւ, Ելիր գնա Դամասկոս, ու հոն
քեզի պիտի զրուցուի ան ամէն բաներուն հա-
11 մար, որ սահմանուած է որ ընես։ Ու երբոր չէի
տեսներ ան լոյսին փառքէն, հետս եղողները
12 ձեռքէս բռնած՝ Դամասկոս մտայ։ Եւ Անանիա
անուն մարդ մը՝ օրէնքին համեմատ աստուածա-
վախ, ու Դամասկոս բնակող բոլոր Հրեաներէն
13 բարի վկայուած, ինծի եկաւ, ու քովս կայնելով
14 ինծի ըսաւ, Սաւուղ եղբայր, վեր նայէ։ Ես ալ
նոյն ժամուն վեր նայեցայ իրեն. և անիկա ըսաւ,
Մեր հայրերուն Աստուածը առաջուց քեզ ընտ-
րեց, որ իր կամքը ճանչնաս ու ան Արդարը տես-
15 նես, և անոր բերնէն ձայն լսես. Քանզի բոլոր
մարդոց առջև անոր վկայ պիտի ըլլաս ան բա-
16 ներուն համար, որ տեսար ու լսեցիր։ Եւ հիմա՝
ալ ի՞նչ կ'ուշանաս. ելիր՝ մկրտուէ ու մեղքերդ
17 լուա *անոր անունը կանչելով։ Եւ եղաւ որ եր-
բոր Երուսաղէմ դարձայ՝ ու տաճարին մէջ ա-
ղօթք կ'ընէի, մտքի յափշտակութիւն մը եկաւ
18 վրաս, Եւ զինքը տեսայ, որ ինծի կ'ըսէր, Ար-
տորցիր՝ շուտով Երուսաղէմէն ելիր, ինչու որ
քու ինծի համար ըրած վկայութիւնդ պիտի չըն-
19 դունին։ Ես ալ ըսի, Տէր, իրենք աղէկ գիտեն թէ
ես էի որ քեզի հաւատացողները բանտը կը դնէի,
20 և ժողովարաններուն մէջ կը ծեծէի։ Ու երբոր

*Ոմանք Տէրոջը

քու Ստեփաննոս վկայիդ արիւնը կը թափուէր,
ես ինքս ալ ներկայ էի և կամակից էի *անոր
սպաննուելուն". ու զանիկա սպաննողներուն հան-
21 դերձները ես կը պահէի։ Եւ ինծի ըսաւ, Գնա,
ինչու որ ես քեզ հեռաւոր հեթանոսներուն պի-
տի խրկեմ։
22 Եւ անոնք մինչև այս խօսքս ականջ դրին իրեն,
ետքը ձայներնին վերցուցին ու ըսին, Վերցուր
աշխարհէն այսանկ մարդը, քանզի չվայլեր անոր
23 ողջ մնալ։ Ու երբոր կը կանչըռտէին ու հան-
դերձնին կը նետէին և փոշին դէպ 'ի օդը կը ցա-
24 նէին, Հազարապետը հրաման ըրաւ որ զանիկա
բերդը մտցընեն, ու ըսաւ որ ծեծով հարցու-
փորձ ընեն անոր, որ գիտնայ թէ ինչ յանցանքի
25 համար անոր դէմ անանկ կը կանչըռտէին։ Ու
երբոր կաշի կապերով զինքը կապեցին, Պօղոս
վերակացու հարիւրապետին ըսաւ, Արժա՞ն է
ձեզի Հռովմայեցի ու չդատապարտուած մարդ
26 մը ծեծել։ Հարիւրապետը երբոր աս լսեց, գնաց
հազարապետին պատմեց ու ըսաւ, †Ի՞նչ պիտի
27 ընես, ինչու որ այս մարդը Հռովմայեցի է։ Հա-
զարապետն ալ քովը գնաց ու ըսաւ անոր, Ըսէ
ինծի, դուն Հռովմայեցի՞ ես. ան ալ ըսաւ, Այո։
28 Հազարապետը պատասխան տուաւ, Ես շատ ստա-
կով ձեռք բերի այս քաղաքացիութեան իրա-
ւունքը. և Պօղոս ըսաւ, Ես բուն անոր մէջը ծը-
29 նած եմ։ Ու անոնք որ իրեն հարցուփորձ պիտի
ընէին, շուտ մը ետ կեցան իրմէն. և հազարա-
պետն ալ վախցաւ՝ երբոր իմացաւ թէ Հռովմա-
յեցի է, և որովհետև զանիկա կապեր էր։
30 Ու հետևեալ օրը ուզելով որ շիտակը գիտնայ
թէ ինչ է Հրեաներուն ըրած ամբաստանութիւնը

*Ոմանք՝ սպանէն
†Ոմանք՝ Նայէ ինչ

անոր դէմ, *արձըկեց զանիկա, և հրաման ըրաւ
որ քահանայապետները ու բոլոր ժողովքը մէկ-
տեղ գան. և Պօղոսը իջեցընելով անոնց առջևը
կայնեցուց։

ԳԼ. ԻԳ

1 Եւ Պօղոս իր աչքերը ժողովքին վրայ դարձընե-
լով ըսաւ, Մարդիկ եղբայրներ, ես բոլորովին
բարի խղճմտանքով կեանք վարեր եմ Աստուծոյ
2 առջևը մինչև այս օրս։ Անանիա քահանայապետն
ալ հրաման ըրաւ իր քովը կայնողներուն՝ որ ա-
3 նոր բերնին զարնեն։ Անատենը Պօղոս ըսաւ ա-
նոր, Աստուած քեզի պիտի զարնէ, ծեփած պատ,
որ դուն նստեր ես օրէնքին համեմատ զիս դա-
տելու, և օրէնքէն դուրս հրամա՞ն կ'ընես որ
4 ինծի զարնեն։ Եւ բոլորտիքը կայնողները ըսին,
5 Աստուծոյ քահանայապե՞տը կը նախատես։ Պօղոս
ալ ըսաւ, Եղբայրներ, չէի գիտեր որ քահանա-
յապետ է. ինչու որ գրուած է, Քու ժողովուրդիդ
6 իշխանին դէմ չարախօսութիւն մի ըներ։ Եւ Պօ-
ղոս գիտնալով որ մէկ կողմը սադուկեցիներ են
ու միւսը փարիսեցիներ, կ'աղաղակէր ժողովքին
մէջ, Մարդիկ եղբայրներ, ես փարիսեցի եմ՝
փարիսեցիի որդի. մեռելոց յարութեանը յոյսին
7 համար կը դատուիմ։ Ու երբոր աս ըսաւ՝ փա-
րիսեցւոց և սադուկեցւոց մէջը երկպառակու-
թիւն ինկաւ, և բազմութիւնը բաժնուեցաւ։
8 Քանզի սադուկեցիք կ'ըսեն թէ յարութիւն չկայ,
և ոչ հրեշտակ ոչ ալ հոգի. բայց փարիսեցիք
9 երկուքն ալ կը դաւանին։ Եւ մեծ աղաղակ մը
եղաւ. ու փարիսեցւոց կողմէն եղող դպիրները
ոտքի վրայ ելլելով՝ դէմ կը կենային ու կ'ըսէին,

*Ոմանք՝ կապերէն արձըկեց

Մենք աս մարդուն վրայ չարութիւն մը չենք
գտներ. հապա թէ որ հոգի մը կամ հրեշտակ մը
10 անոր խօսած է, *Ի՞նչ։ Ու երբոր աղմուկը շատ-
ցաւ, հազարապետը՝ վախնալով որ չըլլայ թէ
Պօղոս անոնցմէ պատառուի, զինուորներուն հրա-
ման ըրաւ որ իջնեն զանիկա անոնց մէջէն յա-
11 փշտակեն ու բերդը բերեն։ Եւ հետեւեալ գիշերը
Տէրը անոր քովը կայնեցաւ ու ըսաւ, Քաջասիրտ
եղիր, Պօղոս, վասն զի ինչպէս որ Երուսաղեմի
մէջ ինծի համար վկայեցիր, անանկ պէտք է քե-
զի որ Հռոմմայ մէջ ալ վկայես։
12 Ու երբոր առտու եղաւ՝ Հրէաներէն ոմանք
միաբանեցան, ու ինքզինքնին անէծքի տակ դրին՝
ըսելով որ չուտեն ու չխմեն մինչեւ որ Պօղոսը
13 սպաննեն։ Եւ քառասունէն աւելի էին որ աս
14 երդումը իրարու հետ ըրին։ Որ ասոնք քահա-
նայապետներուն եւ ծերերուն գացին ու ըսին,
Անէծքով անիծեցինք անձերնիս՝ որ բան մը չու-
15 տենք մինչեւ որ Պօղոսը սպաննենք։ Ուստի դուք
ժողովքին հետ մէկտեղ հազարապետին իմացու-
ցէք որ վաղը զանիկա ձեզի իջեցընէ, որպէս թէ
դուք աւելի ճիշդ քննութիւն ընել կ'ուզէք ա-
նոր վրայով. եւ մենք անոր մօտ գալէն առաջ
16 պատրաստ ենք զանիկա սպաննելու։ Եւ Պօղոսին
քրոջը որդին երբոր աս դաւաճանութիւնը լսեց,
17 եկաւ բերդը մտաւ ու Պօղոսին պատմեց։ Պօղոս
ալ հարիւրապետներուն մէկը իրեն կանչելով՝ ը-
սաւ, Աս պատանին հազարապետին տար, ինչու
18 որ բան մը ունի անոր իմացընելու։ Ան ալ առաւ
զանիկա եւ տարաւ հազարապետին ու ըսաւ, Բան-
տարկեալ Պօղոսը զիս կանչեց, եւ աղաչեց որ աս
պատանին քեզի բերեմ, որ քեզի խօսելիք ունի։
19 Եւ հազարապետը անոր ձեռքէն բռնելով մէկդի

*Ոմանք Աստուծոյ հետ չմարտնչինք

զնաց, ու հարցուց թէ ի՞նչ բան ունիս ինծի ի-
20 մացընելու։ Եւ անիկա ըսաւ, Հրէաները միաբա-
նեցան քեզի աղաչելու որ վաղը Պօղոսը ատեանը
իջեցընես, որպէս թէ կ'ուզեն աւելի ճիշդ քննու-
21 թիւն մը ընել անոր վրայով։ Բայց դուն անոնց
մտիկ չընես, քանզի որ անոնցմէ քառասունէն ա-
ւելի մարդիկ դարանամուտ եղած են անոր հա-
մար, որոնք ինքզինքնին անէծքի տակ դրին որ
չուտեն ու չխմեն մինչեւ որ անիկա սպաննեն. ու
հիմա պատրաստ են, եւ քու հրամանիդ կը սպա-
22 սեն։ Անատենը հազարապետը պատանին ճամ-
բեց, պատուիրելով թէ Մէկու մը մի ըսեր որ
աս բանը ինծի իմացուցիր։
23 Եւ հարիւրապետներէն երկուքը կանչեց ու ը-
սաւ, Երկու հարիւր զինուոր պատրաստեցէք, ու
եօթանասուն ձիաւոր եւ երկու հարիւր գեղար-
դաւոր, որ մինչեւ Կեսարիա երթան գիշերուան
24 ժամը երեքին։ Եւ գրաստներ պատրաստեցէք,
որ Պօղոսը հեծցընեն ու ապահովութեամբ Փե-
25 լիքս կուսակալին տանին։ Եւ թուղթ մը գրեց
26 աս օրինակին պէս։ Կղօդիոս Լիւսիաս՝ պատուա-
27 կան Փելիքս կուսակալիդ ողջոյն։ Աս մարդը Հրէ-
աներէն բռնուեր էր, եւ անոնցմէ պիտի սպան-
նուէր, իսկ ես զինուորներով վրայ հասած՝ ազա-
28 տեցի զանիկա, իմանալով որ Հռոմմայեցի է։ Եւ
ուզելով պատճառը գիտնալ՝ որուն համար անոր
վրայ ամբաստանութիւն կ'ընէին, իջեցուցի զանի-
29 կա անոնց ատեանը։ Որ գտայ ամբաստանուած
իրենց օրէնքին վերաբերեալ խնդիրներու համար,
եւ մեռնելու կամ կապուելու արժանի յանցանք
30 մը չունէր։ Ու երբոր լուր առի որ Հրէայք աս
մարդուն համար որոգայթ պիտի լարեն, իսկոյն
քեզի ղրկեցի, հրաման ընելով ամբաստանողնե-
րուն ալ՝ որ քու առջեւդ խօսին անոր վրայով։
Ողջ եղիր։

31 Զինուորներն ալ իրենց հրամայուածին համե-
մատ առին Պօղոսը ու գիշերով Անտիպատրոս
32 տարին։ Եւ հետեւեալ օրը թողուցին ձիաւորները
անոր հետ երթալու, ու իրենք բերդը դարձան։
33 Անոնք ալ Կեսարիա մտան, ու թուղթը կուսա-
կալին տուին, և Պօղոսը անոր առջեւը կայնեցու-
34 ցին։ Երբոր *կարդաց՝ հարցուց թէ ո՞ր գաւառէն
35 է, և իմանալով որ Կիլիկիայէն է, Ըսաւ, Պիտի
լսեմ քեզի՝ երբոր քու ամբաստանողներդ ալ
գան։ և հրաման ըրաւ որ զանիկա Հերովդէսին
պալատը պահեն։

Գլ. ԻԴ

1 Եւ հինգ օրէն ետքը Անանիա քահանայապետը
ծերերուն հետ ու Տերտիւղոս անուն ճարտասանի
մը հետ իջաւ. և անոնք կուսակալին իմացուցին
2 իրենց ամբաստանութիւնը Պօղոսին դէմ։ Ու եր-
բոր կանչեցին անիկա, Տերտիւղոս սկսաւ ամ-
բաստանել ու ըսել, Որովհետև քու ձեռքովդ
շատ խաղաղութիւն՝ ու քու խնամքովդ այս ազ-
գին բաներուն աղէկ կարգադրութիւնը կը վայե-
3 լենք, Ամէն կերպով ու ամէն տեղ բոլորովին
գոհ ըլլալով՝ շնորհակալ ենք, ով պատուական
4 Փելիքս։ Բայց չըլլայ որ ալ աւելի ձանձրութիւն
տամ քեզի, կ'աղաչեմ որ քու քաղցրութեամբդ
մեզի ականջ դնես, որ համառօտաբար պէտք է խօ-
5 սինք։ Ինչու որ մենք այս մարդը գտանք ապա-
կանիչ և խռովարար բոլոր Հրէաներուն որ աշ-
խարհիս մէջ են, և Նազովրեցւոց աղանդին ա-
6 ռաջնորդ. Որ տաճարն ալ ուզեց պղծել. որն որ
բռնեցինք ու մեր օրէնքին համեմատ ուզեցինք
7 դատաստանը ընել. Բայց Լիւսիաս հազարապետը

*Ոմանք կուսակալը կարդաց

8 Եկաւ մեծ բռնութեամբ մեր ձեռքէն առաւ, Եւ
հրաման ըրաւ որ անոր դատախազները քեզի
գան, որն որ դուն քննելով՝ կարող պիտի ըլլաս
տեղեկանալ այն ամէն բաներուն, որոնց համար
մենք ամբաստանութիւն կ'ընենք ատոր վրայ։
9 Հրէաներն ալ ամէնը մէկ եղած՝ ըսին թէ այդ-
պէս է։
10 Պատասխան տուաւ Պօղոս, (երբոր կուսակալը
անոր աչք ըրաւ որ խօսի.) Գիտնալով որ շատ
տարիներէ հետէ դուն այս ազգին դատաւորն ես,
աւելի յօժարութեամբ ինծի վերաբերեալ բանե-
11 րուն համար պատասխան կու տամ. Որովհետև
կրնաս գիտնալ որ ես տասուերկու օրէն աւելի
չէ՝ քանի որ Երուսաղէմ ելայ երկրպագութիւն
12 ընելու։ Եւ զիս տաճարին մէջ մէկու մը հետ վի-
ճաբանութիւն ընելու վրայ՝ կամ բազմութիւնը
մէկտեղ ժողված չգտան, ոչ ալ ժողովարաննե-
13 րուն մէջ, Եւ ոչ քաղաքին մէջ. ոչ ալ կրնան
ապացուցանել այն բաները, որոնց համար հիմա
14 ամբաստանութիւն կ'ընեն ինծի դէմ։ Բայց աս
կը խոստովանիմ քեզի՝ թէ այն ճամբուն համե-
մատ որ ատոնք հերձուած կ'ըսեն, ես անանկ կը
պաշտեմ իմ հայրենի Աստուածս, հաւատալով
այն ամէն բաներուն որ օրինաց և մարգարէից
15 մէջ գրուած են. Եւ յոյս ունիմ առ Աստուած,
ինչպէս որ ատոնք ալ ակնկալութիւն ունին, որ
մեռելոց յարութիւն պիտի ըլլայ՝ թէ արդարնե-
16 րուն և թէ մեղաւորներուն։ Եւ ես աս բանիս
համար կը ջանամ, որ ամէն ատեն մաքուր
խղճմտանք ունենամ Աստուծոյ առջեւը ու մար-
17 դոց առջեւը։ Արդ ես շատ տարիներէ ետև եկայ
իմ ազգիս ողորմութիւններ բերելու ու ընծաներ
18 տալու. Ասանկով քանի մը Ասիացի Հրէաներ զիս
տաճարին մէջը մաքրուած գտան՝ ոչ բազմու-
19 թիւնով և ոչ ամբոխով, Որ անոնց պէտք էր

առջեւդ գալ ու ամբաստանութիւն ընել, թէ որ
20 իմ վրայովս բողոքելու բան մը ունենային։ Կամ թէ ա-
սոնք իրենք թող ըսեն՝ ինչ անիրաւութիւն գը-
21 տան իմ վրաս, երբոր ատեանը կայներ էի․ Մի-
այն թէ աս մէկ խօսքիս համար, որ երբ մէջեր-
նին կայներ էի՝ կանչեցի թէ Մեռելոց յարու-
22 թեանը համար ես այսօր ձեզմէ կը դատուիմ։ Եւ
Փելիքս *ուրիշ անգամի թողուց անոնք, ինչու
որ աղէկ տեղեկութիւն ունէր այն ճամբուն վրա-
յով․ ու ըսաւ, Երբոր Լիւսիաս հազարապետը
23 հոս իջնէ, պիտի քննեմ ձեր գործը։ Եւ հարիւ-
րապետին հրաման ըրաւ որ զանիկա պահէ, և
ընդարձակութիւն տայ, ու իրեններէն մէկը չար-
գիլէ անոր սպասաւորութիւն ընելէն կամ անոր
քովը երթալէն։
24 Եւ քանի մը օրէն ետև Փելիքս եկաւ իր Դրու-
սիղա կնկանը հետ որ Հրէայ էր, ու Պօղոսը կան-
չել տուաւ, և լսեց անկէ այն հաւատքին համար
25 որ Քրիստոս Յիսուսի վրայ է։ Ու երբոր անիկա
արդարութեան ու ժուժկալութեան և գալու
դատաստանին վրայով կը խօսէր, Փելիքս զար-
հուրելով պատասխան տուաւ, Դուն հիմա գնա,
ու երբոր ժամանակ ունենամ՝ ես քեզ նորէն կը
26 կանչեմ։ Նաև յոյս ունէր որ Պօղոսին կողմէն ի-
րեն ստակ †տրուի, անոր համար շատ անգամ
կանչել կու տար զանիկա ու հետը կը խօսակցէր։
27 Բայց երկու տարի որ եղաւ, Փելիքսին տեղը
Պորկիոս Փեստոս եկաւ, Փելիքս ալ Հրէաներուն
շնորհք ընել ուզելով՝ Պօղոսը կապուած թողուց։

ԳԼ. ԻԵ

1 Արդ երբոր Փեստոս իր իշխանութեանը գաւառը

*Ոմանք․ աս բաները լսելով՝ ուրիշ
†Ոմանք․ տրուի, որ զանիկա արձակէ

հասաւ, երեք օրէն ետև Կեսարիայէն Երուսա-
2 ղէմ ելաւ։ Եւ քահանայապետը ու Հրէից գլխա-
ւորները անոր իմացուցին իրենց ամբաստանութիւ-
3 նը Պօղոսին դէմ, Եւ կ'աղաչէին իրեն ու շնորհք
կը խնդրէին անոր դէմ, որ զանիկա Երուսաղէմ
բերել տայ․ ու իրենք դարան կը պատրաստէին
4 ճամբուն մէջ զանիկա սպաննելու։ Բայց Փեստոս
պատասխան տուաւ, որ Պօղոս Կեսարիայի մէջ
պահուի, և որ ինքը շատ չանցած հոն պիտի եր-
5 թայ։ Ուստի ձեզմէ որոնք որ կարող են, ըսաւ,
ինծի հետ թող իջնեն, և թէ որ այն մարդուն վրայ
յանցանք մը կայ, թող անոր դէմ ամբաստանու-
6 թիւն ընեն։ Եւ հոն *ութը կամ տասը օրէն ա-
ւելի չկենալով,* Կեսարիա իջաւ․ ու հետևեալ
օրը ատեանը նստելով՝ հրաման ըրաւ որ Պօղոսը
7 բերեն։ Ու երբոր անիկա եկաւ, Երուսաղեմէն
իջնող Հրէաները անոր բոլորտիքը կայնելով, շատ
ու ծանր ամբաստանութիւններ կը բերէին Պօ-
ղոսի դէմ, որոնք չէին կրնար ապացուցանել․
8 Ինչու որ Պօղոս պատասխան կու տար թէ Ես ոչ
Հրէաներուն օրէնքին՝ և ոչ տաճարին՝ ոչ ալ
9 կայսրին դէմ յանցանք մը ըրած եմ։ Բայց Փես-
տոս ուզելով որ Հրէաներուն շնորհք ընէ, պա-
տասխան տուաւ Պօղոսին ու ըսաւ, Կ'ուզե՞ս Ե-
րուսաղէմ ելլել, և հոն այս բաներուն վրայով
10 իմ առջևս դատուիլ։ Պօղոս ալ ըսաւ, Կայսրին
ատեանը կայներ եմ, ուր որ պէտք է ինծի
դատուիլ․ Ես Հրէաներուն անիրաւութիւն մը ը-
րած չեմ, ինչպէս որ դուն ալ աղէկ գիտես։
11 Քանզի թէ որ անիրաւութիւն մը և մահուան ար-
ժանի բան մը ըրած եմ, ես մեռնելէն չեմ քաշ-
ուիր․ բայց թէ որ չկայ իմ վրաս այն բաներէն
մէկն ալ՝ որոնց համար ասոնք ինծի դէմ ամ-

*Ոմանք․ տասը օրէն աւելի կենալով,

բաստանութիւն կ՚ընեն, մէկը չկրնար զիս անոնց
12 շնորհել։ Կայսերին կը բողոքեմ։ Անատենը Փես-
տոս խորհրդականաց հետը խօսելով՝ պատաս-
խան տուաւ թէ Կայսերին բողոքեցիր, Կայսերին
պիտի երթաս։
13 Եւ քանի մը օր անցնելէն ետեւ՝ Ագրիպպաս
Թագաւորը և Բերինիկէ Կեսարիա եկան Փեստո-
14 սը ողջունելու։ Եւ շատ օրեր որ հոն անցուցին,
Փեստոս Պօղոսին համար Թագաւորին իմացուց
ու ըսաւ, Հոս մարդ մը կայ՝ որն որ Փելիքս բան-
15 տարկուած թողուցեր է, Որուն վրայով՝ երբոր
Երուսաղէմ գացի, քահանայապետները ու Հրէից
ծերերը իմացուցին ինծի, և կը խնդրէին որ ա-
16 նոր դէմ դատապարտութեան վճիռ տրուի։ Ո-
րոնց պատասխան տուի թէ Հռովմայեցւոց սո-
վորութիւնը չէ մարդ մը կորստեան շնորհել,
մինչև որ ամբաստանուածը ամբաստանողները
դիմացը չունենայ, ու ան ամբաստանութեանը
պատասխան տալու պատեհութիւն չառնէ իրեն։
17 Ուստի երբոր անոնք իմ հետս հոս եկան, ամենե-
ւին չուշացուցի, հապա հետևեալ օրը ատեանը
18 նստելով՝ հրաման ըրի որ մարդը բերեն։ Անոր
դատախազներն ալ ներկայանալով, իմ կասկած
ըրած յանցանքներէս մէկն ալ յառաջ չէին բե-
19 րեր։ Հապա մէկ քանի խնդիրներ ունէին անոր
հետ իրենց կրօնքին վրայ, և Յիսուս անունով մե-
ռածի մը վրայ, որուն համար Պօղոս կ՚ըսէր թէ
20 կենդանի է։ Ու երբոր տարակուսանքի մէջ էի
աս բանիս քննութեանը վրայով, ըսի թէ Կ՚ու-
զե՞ս Երուսաղէմ երթալ, և հոն աս բաներուն
21 համար դատուիլ։ Բայց Պօղոս երբոր բողոքեց
որ պահուի Վեհափառ Կայսրին *"դիմացը ելլե-
լու," հրաման ըրի որ զինքը պահեն՝ մինչև որ

*Յուն. քննութեանը,

22 Կայսերին ղրկեմ։ Եւ Ագրիպպաս ըսաւ Փեստո-
սին, Ես ալ կ՚ուզէի աս մարդը մտիկ ընել։ Ան
ալ ըսաւ, Վաղը մտիկ կ՚ընես։
23 Ու հետևեալ օրը երբոր Ագրիպպաս ու Բերի-
նիկէ մեծ հանդէսով եկան, ու ատեանը մտան
հազարապետներով և քաղաքին պատուաւոր
մարդոցմով մէկտեղ, Փեստոս ալ հրաման ընե-
24 լով՝ բերին Պօղոսը։ Եւ ըսաւ Փեստոս, Ագրիպ-
պաս արքայ, և դուք ալ բոլոր մարդիկ որ մեր
հետն էք, ասիկա կը տեսնէք. ասոր վրայով Հրէ-
ից բոլոր բազմութիւնը ինծի ներկայացան Երու-
սաղեմի մէջ և հոս ալ, ու կ՚աղաղակէին թէ
25 Պէտք չէ որ ալ ասիկա ողջ մնայ։ Բայց ես որ
հասկցայ թէ անիկա մեռնելու արժանի բան մը
ըրած չէ, և ինքը որ Վեհափառ Կայսրին բողո-
26 քեց, որոշեցի որ ղրկեմ զանիկա։ Որուն համար
մէկ հաստատ բան մը չունիմ գրելու իմ տիրոջս.
ուստի ասիկա ձեր առջևը բերի, և մանաւանդ
քու առջևդ, ով Ագրիպպաս արքայ, որպէս զի
քննութիւն ըլլալէն ետեւ՝ գրելու բան մը ունե-
27 նամ։ Ինչու որ ինծի անվայել կ՚երևնայ որ մէկ
բանտարկեալ մը ղրկեմ, և անոր վրայ տրուած
յանցանքները չիմացընեմ։

ԳԼ. ԻԶ

1 Եւ Ագրիպպաս ըսաւ Պօղոսին, Հրաման է քեզի
որ դուն քեզի համար խօսիս։ Անատենը Պօղոս
ձեռքը երկընցընելով իրեն համար պատասխան
2 տուաւ. Հրէաներուն իմ վրաս ըրած բոլոր ամ-
բաստանութիւններուն համար, ով Ագրիպպաս
արքայ, ես զիս երանելի կը սեպեմ, որ այսօր
3 քու առջևդ պատասխան պիտի տամ։ Մանա-
ւանդ որ դուն Հրէաներուն բոլոր սովորութիւն-
ները և խնդիրները աղէկ գիտես, անոր համար

կ'աղաչեմ որ երկայնմտութեամբ ինծի մտիկ ը-
4 նես։ Արդ իմ մանկութենէս 'ի վեր իմ ինչպէս
ապրելուս, սկիզբէն Երուսաղէմ իմ ազգիս մէջը
5 ըլլալովս, բոլոր Հրէաները տեղեակ են։ Քանզի
առաջուց 'ի վեր զիս գիտեն, (թէ որ ուզեն վկա-
յել,) որ մեր կրօնքին պինդ զգուշաւոր ճամ-
6 բուն պէս՝ փարիսեցի ապրեր եմ։ Եւ հիմա ա-
տեանը կեցեր կը դատուիմ՝ Աստուծմէ մեր հայ-
7 րերուն եղած խոստմունքին յուսոյն համար. Որ
մեր տասուերկու ցեղը անդադար գիշեր ու ցո-
րեկ պաշտելով՝ կը յուսան անոր հասնելու. ես
աս յոյսին համար Հրէաներէն կ'ամբաստանուիմ,
8 ով Ագրիպպաս արքայ։ Ի՞նչ. չհաւատալի՞ բան
կ'երեւնայ ձեզի թէ Աստուած մեռելները կը յա-
9 րուցանէ։ Ես ինքնս ալ ինծի պարտք կը սեպէի
Յիսուս Նազովրեցիին անուանը դէմ շատ բաներ
10 ընել. Որ ըրի ալ Երուսաղեմի մէջ, և քահանա-
յապետներէն իշխանութիւն առած՝ սուրբերէն
շատերը բանտարկեցի, ու անոնց սպաննուած ա-
11 տենը հաւանութիւն տուի։ Եւ բոլոր ժողովա-
րաններուն մէջը շատ անգամ զանոնք պատժե-
լով՝ կը բռնադատէի որ հայհոյեն, և անոնց դէմ
սաստիկ կատղած՝ մինչև օտար քաղաքները կը
12 հալածէի։ Ասանկով երբոր Դամասկոս ալ կ'եր-
թայի՝ քահանայապետներէն իշխանութիւն ու
13 հրաման առած, կէս օրուան ատենը ճամբուն
վրայ, ով արքայ, երկինքէն լոյս մը տեսայ ա-
րեւին լուսաւորութենէն աւելի՝ բոլորտիքս ծա-
գած, նաև անոնց բոլորտիքը որ իմ հետս կ'եր-
14 թային։ Ու երբոր մենք ամէնքս գետինը ինկանք,
ձայն մը լսեցի որ Եբրայական լեզուով ինծի կ'ը-
սէր, Սաւուղ, Սաւուղ, ինչո՞ւ զիս կը հալածես.
դժուար բան է քեզի խթանի դէմ կից զարնել.
15 Ես ալ ըսի, Դուն ո՞վ ես, Տէր. և անիկա ըսաւ,
16 Ես եմ Յիսուսը որ դուն կը հալածես. Բայց ելիր

ու ոտքիդ վրայ կայնէ. ինչու որ ասոր համար
քեզի երևցայ, որ քեզ ձեռք առնեմ պաշտօն-
եայ և վկայ ընելու ան բաներուն որ տեսար, ու
ան բաներուն որոնցմով պիտի երևնամ քեզի,
17 Քեզ ազատելով աս ժողովուրդէն ու հեթանոս-
18 ներէն, որոնց հիմա քեզ կը ղրկեմ, Անոնց աչ-
քերը բանալու, խաւարէն՝ լոյսի, ու Սատանայի
իշխանութենէն Աստուծոյ դարձընելու, որ անոնք
մեղաց թողութիւն առնեն, և սուրբերուն հետ
19 մասնակից ըլլան ինծի հաւատալով։ Ուստի, Ագ-
րիպպաս արքայ, ան երկնային տեսիլքին անհնա-
20 զանդ չեղայ ես. Հապա առաջ Դամասկոս ու Ե-
րուսաղէմ եղողներուն, և բոլոր Հրէաստանի եր-
կիրը ու հեթանոսներուն քարոզեցի որ ապաշ-
խարեն ու Աստուծոյ դառնան, և ապաշխարու-
21 թեան արժանաւոր գործքեր գործեն։ Աս պա-
տճառով Հրէաները զիս տաճարին մէջ բռնե-
22 ցին, և կը ջանային որ սպաննեն։ Սակայն Աս-
տուծմէ օգնութիւն հասնելով՝ մինչև աս օրս ողջ
մնացի՝ պզտիկին ու մեծին վկայութիւն տալով,
բան մը չըրուցելով ան բաներէն դուրս՝ որ մար-
գարէները և Մովսէս խօսեցան թէ պիտի ըլլա-
23 յին. Թէ Քրիստոս պիտի չարչարուէր, և թէ ա-
նիկա պիտի առաջ մեռելներէն յարութիւն ա-
ռած՝ լոյս պիտի քարոզէր ժողովուրդին ու հե-
թանոսներուն։
24 Եւ քանի որ անիկա ասանկ պատասխան կու-
տար իրեն համար, Փեստոս բարձր ձայնով մը ը-
սաւ, Կը խելագարիս, Պօղոս. շատ կարդացողու-
25 թիւնդ քեզ կը յիմարեցընէ։ Պօղոս ալ ըսաւ, Ես
չեմ խելագարիր, ով պատուական Փեստոս, հա-
պա ճշմարտութեան և զգաստութեան խօսքեր
26 կը զրուցեմ. Քանզի աս բաները թագաւորը գի-
տէ, որուն առջևը ես ալ համարձակ կը խօսիմ.
ինչու որ չեմ կարծեր թէ ասոնցմէ մէկ բան մը

անկէ ծածկուած ըլլայ, վասն զի աս բանը մէկ
27 անկիւնի մը մէջ եղած չէ։ Մարգարէներուն կը
հաւատա՞ս, Ագրիպպաս արքայ. գիտեմ որ կը
28 հաւատաս։ Եւ Ագրիպպաս ըսաւ Պօղոսին, Քիչ
29 մնաց որ զիս համոզես քրիստոնեայ ըլլալու։ Պօ-
ղոս ալ ըսաւ, Աստուծմէ կը խնդրէի որ թէ քի-
չով և թէ շատով, չէ թէ մինակ դուն, հապա
ամէնքն ալ որ այսօր ինծի կը լսեն, անանկ ըլ-
լան ինչպէս որ ես եմ՝ աս կապերէս 'ի զատ։
30 *Ոտքի վրայ ելաւ թագաւորը և կուսակալը ու
Բերենիկէ, և անոնք որ իրենց հետը նստեր էին։
31 Ու դուրս ելլելէն ետև՝ իրարու հետ խօսեցան ու
ըսին թէ Աս մարդը մեռնելու կամ կապուելու
32 արժանի բան մը չըներ։ Ագրիպպաս ալ Փեստո-
սին ըսաւ, Կարելի էր աս մարդը արձակել, թէ
որ Կայսրին բողոքած չըլլար։

Գլ. ԻԷ

1 Երբոր որոշուեցաւ որ նաւով Իտալիա երթանք,
Պօղոս և ուրիշ քանի մը կապուածներ յանձնե-
ցին հարիւրապետի մը՝ որուն անունը Յուլիոս էր՝
2 Սեբաստեան գունդէն։ Եւ մէկ Անդրամիտացի
նաւ մը մտնելով ճամբայ ելանք, ու Ասիայի կող-
մերէն պիտի նաւէինք. Թեսաղոնիկէէն եղող Ա-
3 րիստարքոս Մակեդոնացին ալ մեր հետ էր։ Եւ
հետևեալ օրը Սիդոն իջանք. և Յուլիոս մարդա-
սիրութիւն ցուցընելով Պօղոսին, հրաման տուաւ
որ բարեկամներուն երթայ ու դարման գտնէ։
4 Եւ անկէ ելլելով՝ Կիպրոսին վարի կողմէն նաւե-
5 ցինք հովը դէմ ըլլալուն համար։ Ետքը Կիլիկի-
այի ու Պամփիւլիայի ծովուն մէջտեղէն նաւելով՝
6 Լիկիայի Միւռա քաղաքը իջանք։ Եւ հարիւրապետը

*Ոմանք Եւ երբոր աս բաները ըսաւ՝ ոտքի

հոն Աղեքսանդրացի նաւ մը գտնելով՝ որ Իտա-
7 լիա կ'երթար, մեզ անոր մէջ մտցուց։ Եւ շատ
օրեր կամաց կամաց նաւելով՝ հազիւ թէ Կնիդո-
սին քովերը հասանք. և հովը մեզի դէմ ըլլա-
լով՝ Կրետէին վարի կողմէն Սաղմոնայի քովէն
8 նաւեցինք։ Եւ դժուարաւ անկէ անցնելով՝ մէկ
տեղ մը եկանք, որ Գեղեցիկ նաւահանգիստ կ'ը-
սուէր, որուն մօտ էր Ղասեա քաղաքը։
9 Ու երբոր շատ ժամանակ անցաւ, և նաւին
ճամբայ ելլելն ալ վտանգաւոր էր, ծոմին ատենն
ալ արդէն անցած ըլլալով, Պօղոս խրատ կու
10 տար, Եւ կ'ըսէր անոնց, Մարդիկ, ես կը տես-
նեմ որ աս նաւին ճամբայ ընելը տառապանքով
ու շատ վնասով պիտի ըլլայ, չէ թէ մինակ բե-
11 ռին ու նաւին՝ հապա մեր անձերուն ալ։ Բայց
հարիւրապետը աւելի նաւապետին և նաւավա-
րին միտ կ'ըներ՝ քան թէ Պօղոսին խօսքերուն։
12 Ու որովհետև այն նաւահանգիստը յարմար չէր
ձմեռը հոն անցընելու, շատերը խորհեցան անկէ
երթալ, որ գուցէ կարող ըլլան Փիւնիկէ հասնե-
լու ու ձմեռը հոն կենալու, որ Կրետէի նաւա-
հանգիստ մըն է, ու դէպ 'ի հարաւ և արևմտեան
13 հիւսիս կը նայի։ Ու երբոր հարաւային մեղմ հով
մը փչեց, կարծելով թէ իրենց դիտաւորութեանը
հասեր են, ճամբայ ելան ու Կրետէին քովերէն
14 կ'անցնէին։ Եւ շատ ատեն չանցած՝ մրրկալից հով
15 մը ելաւ անոր դէմ, որ Եւրակիկլոն կ'ըսուի։ Եր-
բոր նաւը յափշտակուեցաւ և հովին դէմ չկըր-
ցաւ դիմանալ, թող տուած կ'երթայինք կու
16 գայինք. Եւ դէպ 'ի մէկ փոքր կղզիի մը ետևի
կողմը դիմելով՝ որ Կղօդա կ'ըսուէր, հազիւ կըր-
17 ցանք մակոյկը բռնել. Որն որ առին՝ ու օգնու-
թիւններ գործածելով նաւը տակէն կապեցին.
և վախնալով որ չըլլայ թէ *յորձանուտը իյնան,

*կամ ծանծաղուտը

առագաստը իջեցուցած՝ անանկ կ'երթային ու
18 կուգային։ Եւ սաստիկ ալէկոծութեան մէջ որ
էինք, հետեւեալ օրը բեռները դուրս նետեցին։
19 Ու երրորդ օրը նաւին գործիքները ձեռքովնիս
20 դուրս նետեցինք։ Ու երբոր շատ օրեր ոչ արեւ
ոչ ալ աստղեր կ'երեւնային, և փոթորիկը քիչ
չէր վրանիս, ալ բոլորովին մեր ազատուելու
21 յոյսը վերցաւ։ Եւ որովհետեւ շատ օրերէ 'ի վեր
անօթի էին, անատենը Պօղոս անոնց մէջը կայ-
նելով ըսաւ, Ով մարդիկ, պէտք էր ձեզի որ ին-
ծի մտիկ ընէիք ու Կրետէէն չելլէիք, և աս տա-
22 ռապանքը ու վնասը չքաշէիք։ Ու հիմա ձեզ կը
յորդորեմ որ սիրտ առնէք, քանզի ձեզմէ մէ-
կուն անձին վնաս մը պիտի չըլլայ՝ բայց միայն
23 նաւին։ Ինչու որ աս գիշեր երեւցաւ ինծի այն Աս-
տուծոյն հրեշտակը, որ ես Անորն եմ ու զԱնիկա
24 կը պաշտեմ, Եւ ըսաւ, Մի վախնար, Պօղոս,
Կայսրին գիմացը պէտք է որ ելլես դուն. և ահա
Աստուած քեզի շնորհեց այն ամէնը՝ որ քու հետդ
25 նաւին մէջն են։ Ուստի, մարդիկ, սիրտ առէք,
ինչու որ ես կը հաւատամ Աստուծոյ՝ որ անանկ
26 պիտի ըլլայ, ինչպէս որ ինծի զրուցուեցաւ։ Մի-
այն թէ պէտք է որ մէկ կղզի մը իյնանք։
27 Ու երբոր տասնուչորսերորդ գիշերն էր որ Ադ-
րիական ծովուն մէջ կը տարուբերուէինք, կէս գի-
շերին նաւավարները կը կարծէին թէ մէկ երկրի
28 մը մօտեցեր են. Եւ գնտակը ձգելով՝ քսան գըր-
կաչափ գտան. ու քիչ մըն ալ յառաջ երթա-
լով՝ նորէն ձգեցին, և տասնուհինգ գրկաչափ
29 գտան. Ու վախնալով որ չըլլայ թէ քարոտ տեղ-
ուանք իյնան, ետեւի կողմէն չորս խարիսխ ձգե-
30 ցին, և առտու ըլլալուն կը փափաքէին։ Իսկ նա-
ւավարները նաւէն փախչիլ ուզելով՝ մակոյկը
ծովը իջեցուցին, պատճառելով որպէս թէ առ-
31 ջեւի կողմէն ալ խարիսխներ պիտի ձգեն։ Բայց

Պօղոս ըսաւ հարիւրապետին ու զինուորներուն,
թէ որ ատոնք նաւին մէջը չկենան՝ դուք չէք
32 կրնար ազատիլ։ Անատենը զինուորները մակոյ-
կին չուանները կտրեցին, և թողուցին որ դուրս
33 իյնայ։ Ու երբոր առտու ըլլալու վրայ էր, Պօղոս
կ'աղաչէր ամենուն որ կերակուր ուտեն, ըսելով,
Այսօր տասնուչորս օր է որ դուք սպասելով ա-
34 նօթի մնացեր էք, ու բան մը կերած չէք։ Ուստի
կ'աղաչեմ ձեզի որ կերակուր ուտէք, ինչու որ
աս ալ ձեր ազատութեանը համար է. քանզի
ձեզմէ մէկուն գլխէն մազ մը պիտի չկորսուի։
35 Եւ այսպէս ըսելով՝ հաց առաւ, ու ամենուն առ-
ջեւը Աստուծմէ գոհացաւ, և կտրելով սկսաւ ու-
36 տել։ Եւ ամէնն ալ սիրտ առին, ու իրենք ալ
37 կերակուր կերան։ Եւ նաւին մէջը ամէնքս երկու
38 հարիւր եօթանասունուվեց հոգի էինք։ Երբոր
կշտացան կերակուրով, նաւը թեթեւցուցին՝ ցո-
րենը ծովը թափելով։
39 Ու երբոր առտու եղաւ՝ ցամաքը չէին ճանչ-
նար, միայն թէ մէկ ծոց մը կը նշմարէին որ ծո-
վեզերք ունէր, ու կը խորհէին որ եթէ կարելի է
40 նաւը անոր մէջը մխեն։ Եւ խարիսխները կտրե-
լով՝ ծովը ձգեցին, ու ղեկերուն կապերը թուլ-
ցուցին, և առագաստը հովին բանալով՝ դէպ 'ի
41 այն ծովեզերքը կ'երթային։ Եւ անանկ տեղ մը
իյնալով որ երկու կողմը ծով էր, նաւը նստե-
ցուցին. և նաւին առջեւի կողմը խրելով՝ ան-
շարժ մնաց, ու ետեւի կողմը ալիքներուն սաստ-
42 կութենէն կը քակուէր։ Զինուորներն ալ խոր-
հուրդ ըրին որ կապուածները սպաննեն, որ չըլ-
43 լայ թէ մէկը լողայ ու փախչի։ Բայց հարիւրա-
պետը որ Պօղոսը ազատել կ'ուզէր՝ արգիլեց զա-
նոնք այն խորհուրդէն, և հրաման ըրաւ թէ ո-
րոնք որ կրնան լողալ, թող անոնք առաջ նետ-
44 ուին ու ցամաքը ելլեն. Եւ մնացածները՝ ոմանք

տախտակներով և ոմանք նաւին ուրիշ բաներո-
վը· և այսպէս ամէնը ազատեցան՝ ցամաքը ելան։

ԳԼ. ԻԸ

1 Ու երբոր ազատեցան՝ գիտցան որ այն կղզիին ա-
նունը Մելիտէ էր· և բարբարոսները քիչ մար-
2 դասիրութիւն չցուցուցին մեզի. ինչու որ կրակ
վառեցին, և մեզ ամէնքս ալ ընդունեցին՝ վրա-
նիս հասած անձրևին համար ու ցուրտին համար։
3 Ու երբոր Պօղոս շատ մը խռիւ ժողվեց և կրա-
կին վրայ դրաւ, տաքութենէն իժ մը ելաւ, ա-
4 նոր ձեռքը բռնեց։ Բարբարոսներն ալ երբոր այն
գազանը տեսան անոր ձեռքէն կախուած՝ իրա-
րու կ'ըսէին, Անշուշտ ասիկա մարդասպան մըն
է, որ թէպէտ ծովէն ազատեցաւ, բայց իրա-
5 ւունքը թող չտուաւ որ ապրի։ Իսկ անիկա գա-
զանը կրակին մէջը թօթուելով՝ իրեն մէկ վնաս
6 մը չեղաւ։ Ու անոնք կը սպասէին որ անիկա ու-
ռենայ՝ կամ յանկարծակի մեռած իյնայ· բայց
երբոր շատ մը սպասեցին, ու տեսան որ իրեն
վնաս մը չեղաւ, կարծիքնին փոխելով՝ կ'ըսէին
7 թէ աստուած մըն է։ Ու այն տեղին բոլորտիքը
կղզիին գլխաւոր մարդուն ագարակները կային,
որուն անունը Պուպլիոս էր, որ ինքը մեզ ընդու-
նեց և երեք օր հիւրասիրութեամբ իր քովը պա-
8 հեց։ Ու եղաւ որ Պուպլիոսին հայրը ջերմով և
թանչքով հիւանդցած պառկած էր· ու Պօղոս
անոր քովը մտաւ, և աղօթք ընելով ձեռքերը
9 վրան դրաւ ու բժշկեց զանիկա։ Ու երբոր ասի-
կա եղաւ, ուրիշ հիւանդներն որ այն կղզիին մէջն
10 էին՝ կու գային և կը բժշկուէին. Որոնք շատ
պատիւներով ալ մեզ պատուեցին, ու երթալու
ատեննիս պէտք եղած բաները տուին։
11 Ու երեք ամիսէն ետև Աղեքսանդրացի նաւով

մը ճամբայ ելանք, որ ձմեռը այն կղզին անցու-
12 ցեր էր, ու Դիոսկուրացւոց նշանը ունէր։ Ու Սի-
13 րակուսա իջնելով՝ երեք օր հոն կեցանք։ Անկէ
ալ պտոյտ մը ընելով՝ Հռեգիոն հասանք· և մէկ
օրէն ետև որ հարաւ փչեց, երկրորդ օրը Պա-
14 տիողոս եկանք։ Ու հոն եղբայրներ գտանք, ո-
րոնք աղաչեցին որ եօթը օր իրենց քովը մնանք·
15 ու ետքը Հռոմ ելանք։ Ու անկէ եղբայրները
երբոր մեր վրայով լսեցին, մեզ դիմաւորելու ե-
լան մինչև Ապփիոսի վաճառանոցը ու Երեք պան-
դոկները. և Պօղոս անոնք տեսնելով՝ գոհութիւն
տուաւ Աստուծոյ և սիրտ առաւ։
16 Ու երբոր Հռոմ մտանք, հարիւրապետը կապ-
ուածները զօրապետին յանձնեց· իսկ Պօղոսին
հրաման եղաւ որ իր պահապան զինուորին հետ
17 զատ կենայ։ Ու եղաւ որ երեք օրէն ետև անի-
կա Հրէից գլխաւորները կանչեց· ու երբոր մէկ-
տեղ եկան՝ ըսաւ անոնց, Մարդիկ եղբայրներ,
ես ժողովուրդին կամ հայրենական սովորու-
թեանց դէմ բան մը չըրած, Երուսաղէմէն կապ-
18 ուած՝ Հռոմայեցւոց ձեռքը մատնուեցայ· Որոնք
երբոր զիս քննեցին, ուզեցին որ արձակեն, ինչու
19 որ իմ վրաս մեռնելու յանցանք մը չկար։ Բայց
երբոր Հրէաները հակառակ կեցան, պէտք եղաւ
որ կայսրին բողոքեմ, չէ թէ իմ ազգիս դէմ
20 ամբաստանութիւն մը ունեցողի պէս։ Ուստի աս
պատճառով աղաչեցի որ ձեզ տեսնեմ ու ձեզի
խօսիմ. ինչու որ Իսրայէլի յուսոյն համար ես
21 աս շղթան վրաս ունիմ։ Անոնք ալ ըսին իրեն,
Մենք քու վրայովդ Հրէաստանէն ոչ թուղթեր
առինք, և ոչ եղբայրներէն մէկը հոս գալով՝ քու
վրայովդ չարութիւն մը պատմեց կամ խօսեցաւ։
22 Բայց կ'աղաչենք որ քեզմէ լսենք թէ դուն ինչ
միտքի վրայ ես. ինչու որ մենք աս աղանդին
վրայով տեղեկացած ենք՝ որ ամէն տեղ ատոր

23 դէմ կը խօսէին։ Ու մէկ օր մը որոշելով՝ անոր
շատերը անոր գացին իր բնակած տեղը, որոնց
Աստուծոյ թագաւորութիւնը կը ծանուցանէր
վկայութիւնով, և կը համոզէր զանոնք Յիսուսի
վրայով Մովսէսին օրէնքէն ու մարգարէներէն՝
24 առտուընէ մինչև իրիկուն։ Ու ոմանք կը հաւա-
տային ըսածներուն, ու ոմանք չէին հաւատար։
25 Ու իրարու հետ չմիաբանած գացին, երբոր Պօ-
ղոս մէկ խօսք մը ըսաւ՝ Թէ Հոգին Սուրբ աղէկ
խօսեցաւ մեր հայրերուն՝ Եսայի մարգարէին ձեռ-
26 քովը, Ու ըսաւ, Գնա աս ժողովուրդին ու ըսէ,
Լսելով պիտի լսէք՝ ու չիմանաք, և տեսնելով
27 պիտի տեսնէք՝ ու չտեսնէք. Ինչու որ աս ժողո-
վուրդին սիրտը թանձրացաւ, և իրենց ականջնե-
րովը ծանր լսեցին, ու աչքերնին գոցեցին, որ
չըլլայ թէ իրենց աչքերովը տեսնեն, ու ականջ-
ներովը լսեն, և սրտերովը իմանան, ու դարձի
28 գան, և ես բժշկեմ զանոնք։ Ուստի յայտնի ըլ-
լայ ձեզի որ Աստուծոյ փրկութիւնը հեթանոսնե-
րուն խրկուեցաւ, և անոնք մտիկ պիտի ընեն։
29 *Ու երբոր աս գրուցեց, Հրէաները դուրս ելան,
շատ վիճաբանութիւն ունենալով մէջերնին։*
30 Ու լման երկու տարի իր վարձքով բռնած տունը
31 կեցաւ. Ու իրեն եկողներուն ամէնը կ'ընդունէր,
32 կը քարոզէր Աստուծոյ թագաւորութիւնը, և Տէր
Յիսուս Քրիստոսի վրայով առանց արգիլուելու
կը սորվեցընէր ամենայն համարձակութեամբ։

---

*Ոմանք չունին աս 29 համարը։

ԹՈՒՂԹ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑՆ
ԱՌ ՀՌՈՎՄԱՅԵՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս՝ Յիսուսի Քրիստոսի ծառայ՝ առաքեալ
ըլլալու կանչուած, Աստուծոյ աւետարանին հա-
2 մար որոշուած, (Ան որ առաջուց իր մարգարէ-
ներուն ձեռքովը սուրբ գիրքերով խոստացաւ,)
3 Իր Որդւոյն մեր Տէր Յիսուս Քրիստոսին վրայով՝
որ մարմնոյ կողմանէ Դաւիթի սերունդէն եղաւ,
4 Ան որ սրբութեան հոգիին կողմանէ Որդի Աս-
տուծոյ յայտնուեցաւ զօրութեամբ՝ մեռելներէն
5 յարութիւն առնելով. Որով շնորհք և առաքե-
լութիւն առինք՝ հաւատքի հնազանդութեան հա-
մար բոլոր ազգերուն մէջ, անոր անուանը հա-
6 մար. Որ անոնց մէջը դուք ալ Յիսուս Քրիս-
7 տոսի կանչուածներն էք. Ձեր ամենուն որ Հռով-
մայ մէջ էք՝ Աստուծոյ սիրելիներուդ, սուրբ ըլ-
լալու կանչուածներուդ՝ շնորհք և խաղաղութիւն
ձեզի Աստուծմէ մեր Հօրմէն ու Տէր Յիսուս Քրիս-
տոսէն։
8 Նախ կը գոհանամ իմ Աստուծմէս Յիսուս
Քրիստոսի ձեռքովը ձեր ամենուն համար, որ
9 ձեր հաւատքը բոլոր աշխարհ կը պատմուի։ Քանզի
վկայ է ինծի Աստուած, որն որ ես կը պաշտեմ
իմ հոգիովս անոր Որդւոյն աւետարանին մէջ,

10 թէ ինչպէս անդադար ձեզ կը յիշեմ, ամէն ա-
տեն իմ աղօթքներուս մէջ խնդրելով՝ որ գուցէ
անգամ մը Աստուծոյ կամքովը ինծի յաջողու-
11 թիւն մը ըլլայ ձեզի գալու։ Քանզի կը փափա-
քիմ ձեզ տեսնելու, որ ձեզի հոգեւոր շնորհք մը
12 հաղորդեմ՝ որպէս զի հաստատուիք։ Այսինքն
ձեր հետը ես ալ մխիթարակից ըլլամ իմ ու ձեր
13 փոխադարձ հաւատքին միջոցովը։ Սակայն չեմ
ուզեր որ չգիտցող ըլլաք, եղբայրներ, որ շատ
անգամ ուզեցի գալ ձեզի, (և մինչև հիմա ար-
գիլուեցայ,) որ ձեր մէջն ալ պտուղ մը ունե-
նամ, ինչպէս որ ուրիշ հեթանոսաց մէջ ալ։
14 Յոյներուն ու Բարբարոսներուն, իմաստուններ-
15 րուն ու անմիտներուն ալ պարտական եմ։ Ուս-
տի որչափ որ ձեռքէս կու գայ՝ յօժարութիւն
ունիմ ձեզի ալ որ Հռոմմայ մէջ էք՝ աւետարանը
քարոզելու։
16 Ինչու որ ես ամօթ չեմ սեպեր *աւետարանը,
վասն զի Աստուծոյ զօրութիւնն է ան բոլոր հա-
ւատացեալներուն փրկութեան համար, առաջ
17 Հրէային ու ետքը Յոյնին։ Ինչու որ անով Աս-
տուծոյ արդարութիւնը որ է հաւատքէն՝ հա-
ւատքի համար կը յայտնուի։ ինտոր որ գրուած
է թէ Արդարը հաւատքէն պիտի ապրի։
18 Քանզի Աստուծոյ բարկութիւնը երկինքէն կը
յայտնուի մարդոց բոլոր ամբարշտութեանը և ա-
նիրաւութեանը վրայ, որոնք ճշմարտութիւնը
19 անիրաւութեամբ բռներ են։ Վասն զի Աստուծոյ
վրայով գիտնալու բանը իրենց մէջը յայտնի է,
20 որովհետև Աստուած անոնց յայտնեց։ Ինչու որ
իր աներևոյթ բաները աշխարհի սկիզբէն ստեղծ-
ուածներովը կ'իմացուին կը տեսնուին, այսինքն
է իր մշտնջենաւոր զօրութիւնը ու աստուածու-

*Ոմանք Քրիստոսի աւետարանը

21 թիւնը, որպէս զի անպատասխանի մնան։ Ինչու
որ իրենք Աստուած ճանչնալով՝ Աստուծոյ պէս
չփառաւորեցին կամ շնորհակալ չեղան, հապա
իրենց խորհուրդներուն մէջ ունայնացան, և
22 *սիրտերնին անմտութիւնով՝ խաւարեցաւ։ Իրենք
23 իմաստուն ենք՝ ըսելով յիմարեցան։ Եւ անեղծ
Աստուծոյ փառքը փոխեցին՝ նմանցնելով եղ-
ծանելի մարդու և թռչուններու ու չորքոտանի-
24 ներու և սողուններու պատկերին։ Անոր համար
Աստուած ալ պղծութեան մատնեց զանոնք ի-
րենց սիրտերուն ցանկութիւններովը՝ իրենց մար-
25 մինները իրենց մէջը խայտառակելու։ Որոնք Աս-
տուծոյ ճշմարտութիւնը սուտի հետ փոխեցին, ու
երկրպագութիւն և պաշտօն մատուցին ստեղծ-
ուածներուն քան թէ Ստեղծողին, ան որ յա-
26 ւիտեան օրհնեալ է։ Ամէն։ Անոր համար Աս-
տուած զանոնք անարգ կիրքերու մատնեց, որ ի-
րենց էգերը անգամ բնական պէտքը բնութեան
27 դէմ եղող պէտքի փոխեցին։ Նոյնպէս ալ արու-
ները կնկան բնական պէտքը թողուցած՝ իրենց
ցանկութիւնովը իրարու հետ վառուեցան. արու-
ները արուներու հետ խայտառակութիւն կը գոր-
ծէին, և իրենց մոլութեանը վայլած հատուցումը
28 իրենց վրայ կ'ընդունէին։ Եւ որովհետև չուզե-
ցին զԱստուած իրենց գիտութեանը մէջ պահել,
Աստուած ալ զանոնք անարգ խորհուրդներու
29 մատնեց անվայել բաներ ընելու։ Որոնք լեցուած
էին ամէն անիրաւութիւնով, պոռնկութիւնով,
անզգամութիւնով, ագահութիւնով, չարութիւ-
նով, նախանձով լեցուն, մարդասպանութիւնով,
հակառակութիւնով, նենգութիւնով, չարասըր-
30 տութիւնով, և էին քսուներ, Չարախօսներ,
Աստուած ատողներ, նախատողներ, հպարտներ,

*Յուն. անմիտ սիրտերնին

ամբարտաւաններ, չար բաներ հնարողներ, ծնո-
31 ղաց անհնազանդներ, Անմիտներ, ուխտ չպահող-
ներ, անգութներ, անհաշտներ, անողորմներ․
32 Որոնք գիտնալով Աստուծոյ դատաստանը, թէ
անոնք որ ասանկ բաներ կ'ընեն՝ մահուան ար-
ժանի են, չէ թէ միայն ան բաները կ'ընեն, հա-
պա ընողներուն հաւանութիւն ալ կու տան։

ԳԼ. Բ

1 Ուստի, ով մարդ, ով որ ըլլաս դուն որ կը դա-
տես, պատասխան չունիս տալու․ քանզի ինչ
բանով որ ուրիշը կը դատես, անով քու անձդ
կը դատապարտես, վասն զի դուն ալ որ կը դա-
2 տես՝ նոյն բաները կ'ընես։ Բայց գիտենք որ Աս-
տուծոյ դատաստանը ճշմարտութիւնով կ'ըլլայ
3 անոնց վրայ՝ որ անանկ բաներ կը գործեն։ Արդ,
ով մարդ, դուն որ ասանկ բաներ ընողները կը
դատես, և դուն նոյն բաները կ'ընես, աս միտ-
քէդ կ'անցընե՞ս թէ դուն Աստուծոյ դատաս-
4 տանէն ազատ պիտի մնաս․ Կամ թէ անոր ան-
չափ քաղցրութիւնը և համբերութիւնը ու եր-
կայնմտութիւնը կ'արհամարհե՞ս, չգիտնալով որ
Աստուծոյ քաղցրութիւնը քեզ դէպ 'ի ապաշ-
5 խարութիւն կ'առաջնորդէ։ Բայց դուն քու խըս-
տութիւնովդ և անզեղջ սրտովդ քու անձիդ
բարկութիւն կը դիզես՝ բարկութեան և Աստու-
ծոյ արդար դատաստանին յայտնուելու օրուանը
6 համար․ Ան որ ամէն մէկուն իր գործքերուն
7 փոխարէնը պիտի հատուցանէ․ Յաւիտենական
կեանք անոնց որ բարի գործքերու մէջ համբե-
րութեամբ յարատեւելով՝ փառք ու պատիւ և
8 անմահութիւն կը խնդրեն․ Բայց անոնց որ հա-
կառակ են, և ճշմարտութեան անհնազանդ ու
անիրաւութեան հնազանդած՝ բարկութիւն և

9 սրտմտութիւն, նեղութիւն և տառապանք պիտի
ըլլայ ամէն մարդու վրայ որ չար կը գործէ, ա-
10 ռաջ Հրէային ու ետքը Յոյնին․ Իսկ փառք ու
պատիւ և խաղաղութիւն ան ամենուն որ բարի կը
11 գործէ, առաջ Հրէային ու ետքը Յոյնին։ Ինչու
12 որ Աստուծոյ քովը աչառութիւն չկայ։ Քանզի
անոնք որ առանց օրէնքի մեղք գործեցին, ա-
ռանց օրէնքի պիտի կորսուին․ և անոնք որ օ-
րէնքի տակ մեղք գործեցին, օրէնքով պիտի
13 դատուին, (Ինչու որ չէ թէ օրէնքը լսողները
Աստուծոյ առջեւ արդար են, հապա օրէնքը կա-
14 տարողները պիտի արդարանան։ Քանզի հեթա-
նոսները որ օրէնք չունին՝ երբոր բնականաբար
օրէնքին գործքերը կը գործեն, օրէնք չունենա-
լով՝ իրենց անձերուն օրէնքը բուն իրենք կ'ըլ-
15 լան։ Որ օրէնքին գործքը իրենց սրտին մէջը
գրուած կը ցուցընեն իրենց խղճմտանքին վկա-
յութեամբը, և իրենց խորհուրդներուն իրար
16 յանդիմանելովը՝ կամ իրաւունք տալովը,) Ան
օրը որ Աստուած մարդոց ծածուկ բաները պիտի
դատէ Յիսուս Քրիստոսի ձեռքովը՝ իմ
աւետարանիս համեմատ։
17 Ահա դուն Հրէայ ըսուեր ես, և օրէնքին կըռ-
18 թներ ես, ու Աստուծով կը պարծենաս, Եւ ա-
նոր կամքը գիտես, ու տարբեր բաները կը զա-
19 նազանես՝ օրէնքէն խրատուած ըլլալով․ Եւ քու
անձիդ վրայ վստահութիւն ունիս՝ թէ կոյրերուն
20 առաջնորդ ես, խաւարածներուն լոյս, Անմիտ-
ներուն խրատ տուող, տղայոց վարժապետ, և թէ
գիտութեան ու ճշմարտութեան կերպարանքը
21 օրէնքէն ունիս։ Իսկ արդ՝ դուն որ ընկերիդ կը
սորվեցընես, քու անձիդ չե՞ս սորվեցըներ․ որ կը
22 քարոզես գողութիւն չընել, կը գողնա՞ս․ Որ կ'ը-
սես շնութիւն չընել, շնութի՞ւն կ'ընես․ որ կը
23 զզուիս կուռքերէն, սրբապղծութի՞ւն կ'ընես․ Որ

օրէնքով կը պարծենաս, օրինազանց ըլլալով՝
24 զԱստուած կ'անարգե՞ս. ինչու որ Աստուծոյ ա-
նունը ձեր պատճառովը հեթանոսաց մէջ կը հայ-
հոյուի, ինչպէս որ գրուած է։
25 Արդ թլփատութիւնը շահ կ'ունենայ, թէ որ օ-
րէնքը պահես. իսկ թէ որ օրէնքին դէմ յան-
ցաւոր ես, քու թլփատութիւնդ անթլփատու-
26 թիւն եղաւ։ Ուստի թէ որ անթլփատութիւնը
օրէնքին իրաւունքները պահէ, չէ՞ որ անոր ան-
թլփատութիւնը թլփատութիւն պիտի սեպուի.
27 Եւ 'ի բնէ եղած անթլփատութիւնը օրէնքը կա-
տարելով՝ պիտի դատապարտէ քեզ, որ գիրով
28 ու թլփատութիւնով օրէնքին յանցաւոր ես։ Ին-
չու որ Հրեայ չէ ան որ դրսուանց է, և թլփա-
29 տութիւն չէ ան որ դրսուանց մարմինով է. Հա-
պա Հրեայ ան է որ ներսուանց է, և թլփատու-
թիւն սրտինը՝ հոգիով, ու չէ թէ գիրով. որուն
գովութիւնը չէ թէ մարդոցմէ է, հապա Աս-
տուծմէ։

ԳԼ. Գ

1 Ուրեմն Հրէան ի՞նչ աւելի բան ունի, կամ թլ-
2 փատութենէն ի՞նչ շահ կայ։ Շատ՝ ամէն կեր-
պով. նախ առաջ ան՝ որ Աստուծոյ պատգամ-
3 ները անոնց հաւատացուեցաւ։ Քանզի թէ որ ա-
նոնցմէ ոմանք չհաւատացին, ի՞նչ. միթէ անոնց
անհաւատութիւնը Աստուծոյ հաւատարմութիւնը
4 կը խափանէ՞ր. քաւ լիցի. Սակայն Աստուած ճըշ-
մարիտ թող ըլլայ, և բոլոր մարդիկ՝ սուտ. ինչ-
պէս որ գրուած է, Որ քու խօսքերուդ մէջ ար-
դար ըլլաս, և դատուելու ատենդ դուն յաղ-
5 թես։ Ուրեմն թէ որ մեր անիրաւութիւնը Աս-
տուծոյ արդարութիւնը յայտնի կը ցուցնէ. ի՞նչ
ըսենք. արդեօք անիրա՞ւ է Աստուած որ կը բար-

6 կութիւնը վրանիս կը բերէ. (Մարդկօրէն կ'ըսեմ.)
քաւ լիցի. հապա թէ չէ՝ ի՞նչպէս Աստուած պիտի
7 դատէ աշխարհը։ Ինչու որ եթէ Աստուծոյ ճըշ-
մարտութիւնը իմ ստութիւնովս կ'աւելնայ իր
փառքին համար, ալ ես ինչո՞ւ մեղաւորի մը պէս
8 կը դատուիմ։ Եւ ինչո՞ւ համար պէտք չէ ըսել,
ինչպէս որ ոմանք մեր վրայ չարախօսութիւն ը-
նելով՝ կ'ըսեն թէ մենք կ'ըսենք, Չարը գործենք
որ բարին գայ. որոնց դատապարտութիւնը իրա-
ւունքով է։
9 Ուստի ալ ի՞նչ ըսենք. բանով մը աւելի՞ ենք
հելլենացիներէն. իրաւ որ բանով մըն ալ չէ. ինչու
որ առաջ մեղադրեցինք Հրեաները և հեթանոս-
10 ները թէ ամէնքը մեղաց տակ են. ինչպէս որ
գրուած է թէ Արդար մը չկայ՝ ոչ մէկ հատ մը.
11 Մէկը չկայ որ հասկընայ, մէկը չկայ որ զԱստ-
12 ուած փնտռէ. Ամէնքը խոտորեցան, մէկտեղ ան-
պիտան եղան. աղէկութիւն ընող մը չկայ, մէկ
13 մըն ալ չկայ. Անոնց կոկորդը բաց գերեզման է,
իրենց լեզուովը նենգաւոր եղան, իժերու թոյն
14 կայ անոնց շրթունքներուն տակը. Անոնց բերանը
15 անէծքով ու դառնութեամբ լեցուն է. Անոնց
16 ոտքերը շուտ են արիւն թափելու. Կործանում
և թշուառութիւն կայ իրենց ճամբաներուն մէջը.
17 Եւ խաղաղութեան ճամբան չճանչցան։ (18) Աս-
տուծոյ վախը չկայ անոնց աչքերուն առջին։
19 Սակայն գիտենք որ օրէնքը ինչ որ կ'ըսէ, ա-
նոնց կ'ըսէ՝ որ օրէնքին տակն են. որպէս զի ա-
մէն բերան գոցուի, և բոլոր աշխարհ դատապար-
20 տուած ըլլայ Աստուծոյ առջևը։ Ինչու որ անոր
առջևը մէկ մարմին մը պիտի չարդարանայ օրէն-
քին գործքերովը, քանզի օրէնքով է մեղքը
ճանչնալը։
21 Բայց հիմա առանց օրէնքի Աստուծոյ արդա-
րութիւնը յայտնուած է, օրէնքէն և մարգարէ-

22 Ներէն վկայուած ըլլալով. Այսինքն Աստուծոյ
արդարութիւնը որ Յիսուս Քրիստոսի հաւատքէն
է՝ ամէն հաւատացողներուն ու անոնց ամենուն
23 վրայ կ'ըլլայ. քանզի խտրութիւն չկայ. Ինչու որ
ամէնքը մեղք գործեցին, և Աստուծոյ փառքէն
24 պակաս են։ Եւ անոր շնորհքովը ձրի կ'արդա-
րանան Քրիստոս Յիսուսով եղած փրկութեամբը.
25 Որ զանիկա առաջուց սահմանեց Աստուած՝ քա-
ւութիւն ըլլալու անոր արեանը հաւատքով, Աս-
տուծոյ երկայնմտութեան ատենները առաջուց
գործուած մեղքերուն թողութիւն տալովը՝ իր
26 արդարութիւնը ցուցընելու համար. Այսինքն իր
արդարութիւնը աս ժամանակիս մէջ ցուցընելու
համար, որ ինքը արդար ըլլայ, և արդարացընէ
27 Յիսուսի հաւատքէն եղողը. Ուրեմն ո՞ւր մնաց
պարծենալը. խափանեցաւ. ո՞ր օրէնքէն, գործ-
քերո՞ւն օրէնքէն. չէ, հապա հաւատքի օրէնքէն.
28 Ինչու որ կը սեպենք թէ մարդը հաւատքով կ'ար-
29 դարանայ առանց օրէնքին գործքերուն։ Միթէ
Աստուած միայն Հրէաներո՞ւնն է ու հեթանոս-
30 ներունը չէ՞. այո, հեթանոսներունն ալ. Որով-
հետև Աստուած մէկ է՝ որ թլփատութիւնը հա-
ւատքէն կ'արդարացընէ, և անթլփատութիւնը՝
31 նոյն հաւատքով։ Ուստի մենք հաւատքով օրէնքը
կը խափանե՞նք. քաւ լիցի. հապա օրէնքը կը
հաստատենք.

Գ Լ. Դ

1 Ուրեմն ի՞նչ պիտի ըսենք թէ գտաւ Աբրահամ
2 մեր նահապետը մարմնոյ կողմանէ. Ինչու որ եթէ
Աբրահամ գործքով արդարացած ըլլար, իրեն
օրէն պարծանք կ'ունենար, բայց ոչ թէ Աստու-
3 ծոյ առջեւը. Քանզի գիրքը ի՞նչ կ'ըսէ. Աբրա-
համ Աստուծոյ հաւատաց, և ան իրեն արդա-

4 րութիւն սեպուեցաւ։ Բայց ան որ գործ մը կ'ը-
նէ, վարձքը շնորհքէ եղած չսեպուիր անոր՝ հա-
5 պա պարտքէ։ Իսկ ան որ չգործեր, բայց կը հա-
ւատայ անոր որ ամբարիշտը կ'արդարացընէ, ա-
նոր հաւատքը իրեն արդարութիւն կը սեպուի.
6 Ինչպէս որ Դաւիթ ալ կը գրուցէ ան մարդուն ե-
րանութիւնը, որուն Աստուած արդարութիւն կը
7 սեպէ առանց գործքերու. Երանի անոնց, կ'ըսէ,
որոնց անօրէնութիւնները ներուեցան, և որոնց
8 մեղքերը ծածկուեցան. Երանի ան մարդուն որ
9 Տէրը մեղք չսեպեր անոր. Ուստի աս երանու-
թիւնը թլփատութեա՞ն վրայ է, թէ անթլփա-
տութեան վրայ ալ. քանզի կ'ըսենք թէ հա-
ւատքը Աբրահամին արդարութիւն սեպուեցաւ.
10 Ուրեմն ինչպէ՞ս սեպուեցաւ. թլփատութեա՞ն մէջ
եղած ատենը, թէ անթլփատութեան մէջ. չէ
թէ թլփատութեան մէջ, հապա անթլփատու-
11 թեան. Ու ինքը թլփատութեան նշանը առաւ՝
իբրեւ անթլփատութեան ատենէն ունեցած հա-
ւատքին արդարութեանը մէկ կնիք մը, որ ինքը
հայր ըլլայ ան բոլոր հաւատացողներուն որոնք
անթլփատութենէ են, (անոնց ալ արդարութիւն
12 սեպուելու համար,) Եւ հայր թլփատութեան՝ չէ
թէ միմիայն թլփատութենէ եղողներուն, հապա
անոնց ալ՝ որ մեր հօրը Աբրահամին անթլփա-
տութեան ատենի հաւատքին շաւիղներուն մէջը
13 կը քալեն։ Ինչու որ Աբրահամին և անոր սերուն-
դին՝ աշխարհը ժառանգելու համար եղած
խոստումը չէ թէ օրէնքով եղաւ, հապա հա-
14 ւատքին արդարութիւնովը. Քանզի եթէ օրէն-
քէն եղողները ժառանգ ըլլային, հաւատքը փուճ
պիտի ըլլար, և խոստումը պիտի խափանուէր.
15 Վասն զի օրէնքը բարկութիւն կը գործէ. քանզի
ուր որ օրէնք չկայ, օրինազանցութիւն ալ չկայ։
16 Անոր համար ժառանգ ըլլալը հաւատքէն է, որ

շնորհքով եղած ըլլայ, խոստմունքը հաստատուն
ըլլալու համար բոլոր սերունդին, չէ թէ միայն
անոր որ օրէնքէն է, հապա անոր ալ՝ որ Աբրա-
համի հաւատքէն է, որ մեր ամենուն հայրն է,
17 (ինչպէս որ գրուած է թէ Քեզ շատ ազգերու
հայր ըրի,) Աստուծոյ առջեւ, որուն ինքը հա-
ւատաց, ան որ մեռելները կ՚ողջնցընէ, և չեղած
18 բաները եղածներու պէս կը կանչէ։ Որ չյուսա-
ցուելու բանին յուսով հաւատաց՝ թէ ինքը շատ
ազգերու հայր պիտի ըլլայ, (ինչպէս որ ըսուե-
ցաւ ալ, Թէ Քու սերունդդ ասանկ պիտի ըլլայ·)
19 Եւ ինքը հաւատքի մէջ չտկարացած՝ չնայեցաւ
իր մարմինին արդէն մեռածի պէս ըլլալուն, (ո-
րովհետեւ ինքը հարիւր տարեկանի չափ էր,) ոչ
20 ալ Սառային արգանդին մեռած ըլլալուն· Եւ ան-
հաւատութիւնով չտարակուսեցաւ Աստուծոյ
խոստմունքէն, հապա հաւատքով զօրացած՝ Աս-
21 տուծոյ փառք տուաւ, Եւ իր միտքին մէջ հաս-
տատ պահեց թէ ան որ խոսք տուաւ, ինքը կա-
22 րող է ընելու ալ։ Ասոր համար իրեն արդարու-
թիւն սեպուեցաւ։
23 Բայց չէ թէ միայն անոր համար գրուեցաւ որ
24 իրեն սեպուեցաւ· Հապա մեզի համար ալ՝ որոնց
պիտի սեպուի, որ կը հաւատանք անոր որ մե-
25 ռելներէն յարուց մեր Տէր Յիսուսը, Ան որ մեր
յանցանացը համար մատնուեցաւ, և մեզ արդա-
րացընելու համար յարութիւն առաւ։

ԳԼ. Ե

1 Ուստի մենք հաւատքով արդարացած ըլլալով՝
խաղաղութիւն ունինք Աստուծոյ հետ մեր Տէ-
2 րոջը Յիսուս Քրիստոսի ձեռքովը· Որուն միջո-
ցովը ընդունեցինք հաւատքով աս շնորհքիս մօ-
տենալն ալ, որուն մէջը կեցեր ենք, և Աստու-

3 ծոյ փառաց յուսովը կը պարծինք։ Եւ ոչ միայն
այսքան՝ հապա նաեւ նեղութիւններու մէջ կը
պարծինք· ինչու որ գիտենք թէ նեղութիւնը
4 համբերութիւն կը գործէ, Եւ համբերութիւնը՝
5 փորձառութիւն, ու փորձառութիւնը՝ յոյս· Եւ
յոյսը ամօթով չձգեր· ինչու որ Աստուծոյ սէրը
մեր սրտերուն մէջը տարածուած է Հոգւոյն Սըր-
6 բոյ ձեռքովը, որ մեզի տրուեցաւ։ Վասն զի երբ-
որ մենք դեռ տկար էինք, յարմար ժամանա-
կին Քրիստոս ամբարիշտներուն համար մեռաւ։
7 Ինչու որ արդարի մը համար հազիւ կ՚ըլլայ որ
մէկը մեռնի· (բայց մէկ բարի մարդու մը համար՝
8 կարելի է որ մէկը համարձակի մեռնելու·) Սա-
կայն Աստուած իր սէրը որ մեր վրայ ունէր՝
9 յայտնեց, որ երբ դեռ մեղաւոր էինք, Քրիստոս
մեզի համար մեռաւ։ Ուրեմն հիմա որ իր արիւ-
նովը արդարացանք, ո՛րչափ աւելի իրմով պիտի
10 ազատինք բարկութենէն։ Վասն զի թէ որ թշնա-
մի եղած ատեննիս Աստուծոյ հետ հաշտուեցանք
իր Որդւոյն մահովը, ո՛րչափ աւելի մեր հաշտուած
11 ատենը պիտի ապրինք անոր կեանքովը։ Եւ ոչ
միայն աս, հապա Աստուծմով ալ կը պարծենանք
մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի ձեռքովը, որով
հիմա հաշտութիւնը ընդունեցինք։
12 Վասն զի ինչպէս որ մէկ մարդէ մը մեղքը աշ-
խարհք մտաւ, և ան մեղքէն մահը, և այնպէս
ամէն մարդոց վրայ տարածուեցաւ մահը, *քանզի
13 ամէնքը մեղանչեցին։ (Վասն զի մինչեւ օրէնքին
ատենը աշխարհի մէջ մեղք կար· բայց մեղք
14 չսեպուիր՝ ուր որ օրէնք չկայ։ Սակայն մահը Ա-
դամէն մինչեւ Մովսէս թագաւորեց՝ նաեւ Ադա-
մին յանցանքին նման չմեղանչողներուն վրայ ալ,
որ ան օրինակ էր անոր որ ետքէն պիտի գար։

*կամ որով

15 Բայց չէ թէ ինչպէս յանցանքը՝ անանկ ալ շը-
նորհքն է. ինչու որ եթէ մէկուն յանցանքովը
շատերը մեռան, ալ ո՛րչափ աւելի Աստուծոյ շը-
նորհքը և ան պարգևը որ Յիսուս Քրիստոս մէկ
մարդուն շնորհքովն է՝ շատերուն վրայ աւելցաւ։
16 Եւ չէ թէ աս պարգևը անանկ է՝ ինչպէս մէկէ մը
որ մեղանչեց. ինչու որ դատաստանը մէկ մեղքէն
դատապարտութեան մէջ էր, բայց շնորհքը
17 շատ մեղքերէն արդարութեան պարգև. Վասն զի
թէ որ մէկ մարդուն մեղքովը մահը թագաւո-
րեց ան մէկովը, ո՛րչափ աւելի անոնք որ շնորհքի
ու արդարութեան պարգևին առատութիւնը
կ՚առնեն, կենաց մէջ պիտի թագաւորեն մէկ Յի-
18 սուս Քրիստոսին ձեռքովը։) Ուրեմն ինչպէս որ
մէկուն յանցանքովը բոլոր մարդոց դատապար-
տութեան վճիռ եղաւ, անանկ ալ մէկուն արդա-
րութիւնովը բոլոր մարդոց կենաց արդարու-
19 թեան շնորհք եղաւ. Վասն զի ինչպէս որ մէկ մար-
դուն անհնազանդութիւնովը շատերը մեղաւոր
եղան, անանկ ալ մէկուն հնազանդութիւնովը
20 շատերը արդար պիտի ըլլան։ Սակայն օրէնքը
մէջտեղը ինկաւ որ յանցանքը շատնայ. բայց ուր
որ աւելի եղաւ մեղքը, ալ աւելի եղաւ շնորհքը.
21 Որ ինչպէս մեղքը թագաւորեց մահուամբ, ա-
նանկ ալ շնորհքը թագաւորէ արդարութեամբ
մինչև յաւիտենական կեանքը մեր Տէրոջը Յի-
սուս Քրիստոսի ձեռքովը։

ԳԼ. Զ

1 Ալ հիմա ի՞նչ պիտի ըսենք. մեղքերու մէջ մը-
2 նա՞նք արդեօք, որ շնորհքը շատնայ։ Քաւ լիցի.
մենք որ մեղքին մեռանք, ի՞նչպէս դեռ անոր
3 մէջը կենանք։ Չէ՞ք գիտեր, թէ մենք որ Յի-
սուս Քրիստոսով մկրտուեցանք, անոր մահուանը

4 մկրտուեցանք։ Անոր հետ թաղուեցանք մկրտու-
թիւնով մահուան համար, որ ինչպէս Քրիստոս
Հօրը փառքովը յարութիւն առաւ մեռելներէն,
անանկ ալ մենք կենաց նորոգութեան մէջ պտը-
5 տինք։ Ինչու որ եթէ մենք տնկակից եղանք ա-
նոր մահուանը նմանութիւնովը, նաև անոր յա-
րութեանը նմանութիւնովն ալ կցորդ պիտի ըլլանք։
6 Աս գիտնանք որ մեր հին մարդը անոր հետ խաչ-
ուեցաւ, որ մեղաց մարմինը փճանայ, որ ասկէ
7 ետև մեղքի չծառայենք։ Վասն զի ան որ մեղքէն
8 մեռած է՝ մեղքէն արդարացած է։ Արդ թէ որ
մենք Քրիստոսի հետ մեռանք, կը հաւատանք որ
9 անոր հետ պիտի ապրինք ալ. Քանզի գիտենք
որ Քրիստոս մեռելներէն յարութիւն առած ըլ-
լալով՝ նորէն չմեռնիր, ալ մահը անոր վրայ իշ-
10 խանութիւն չունի։ Վասն զի քանի որ մեռաւ՝
մեղքին մեռաւ մէկ անգամ, և որ կենդանի է՝
11 Աստուծոյ կենդանի է։ Անանկ ալ դուք ձեր ան-
ձերը մեղքին մեռած սեպեցէք, բայց Աստուծոյ
կենդանի՝ մեր Տէրոջը Քրիստոս Յիսուսի ձեռ-
12 քովը։ Ուստի ալ մեղքը չթագաւորէ ձեր մահ-
կանացու մարմնոյն վրայ, որ անոր ցանկութիւն-
13 ներուն հնազանդիք։ Եւ ձեր անդամները անի-
րաւութեան գործիք ըլլալու մի ընծայէք մեղ-
քին, հապա ձեր անձերը Աստուծոյ ընծայեցէք՝
որպէս թէ մեռելներէն ողջնցած. և ձեր ան-
դամները արդարութեան գործիքներ՝ Աստուծոյ։
14 Քանզի մեղքը վրանիդ պիտի չիշխէ. ինչու որ օ-
րէնքի տակ չէք, հապա շնորհաց տակ։
15 Ուրեմն ի՞նչ. մե՞ղք գործենք որ օրէնքի տակ
16 չենք՝ հապա շնորհքի տակ. քաւ լիցի։ Չէ՞ք գի-
տեր թէ որուն որ անձերնիդ ծառայ կ՚ընծայէք
հնազանդելու, ծառայ էք անոր՝ որուն որ կը
հնազանդիք, թէ մեղքի՝ որ մահուան կը տանի, և
17 թէ հնազանդելու՝ որ արդարութեան։ Բայց փա-

հութիւն Աստուծոյ, որ թէեւ դուք մեղաց ծա-
ռայ էիք, սակայն սրտանց հնազանդեցաք ան
վարդապետութեան գաղափարին որ ձեզի յանձ-
18 նուեցաւ։ Ուստի դուք մեղքէն ազատ ըլլալով՝
19 արդարութեան ծառայ եղաք. (Մարդու սովո-
րութեան պէս կ'ըսեմ՝ ձեր մարմինին տկարու-
թեանը համար.) քանզի ինչպէս որ ձեր անդամ-
ները անօրէնութեան համար ընծայեցիք՝ պղծու-
թեան և անօրէնութեան ծառաներ ըլլալու, ա-
նանկ ալ հիմա ձեր անդամները սրբութեան հա-
մար ընծայեցէք՝ արդարութեան ծառաներ ըլ-
20 լալու։ Վասն զի երբոր դուք մեղաց ծառաներ
21 էիք, արդարութենէն ազատ էիք։ Ուրեմն ան
ժամանակը ի՞նչ պտուղ ունէիք ան բաներէն՝ ո-
րոնցմով հիմա կ'ամչնաք. ինչու որ անոնց վերջը
22 մահ է։ Բայց հիմա մեղքէն ազատուած և Աստու-
ծոյ ծառաներ եղած՝ ձեր պտուղը ունիք սրբու-
23 թիւնով, ու վերջը յաւիտենական կեանք։ Քանզի
մեղաց վարձքը մահ է, բայց Աստուծոյ ձրի պար-
գեւը յաւիտենական կեանք՝ մեր Տէրոջը Յիսուս
Քրիստոսի ձեռքովը։

Գլ. Է

1 Միթէ չէ՞ք գիտեր, եղբայրներ, (քանզի ես օ-
րէնքը գիտցողներուն կը խօսիմ,) որ օրէնքը
մարդուս վրայ կ'իշխէ՝ որչափ ժամանակ որ ողջ
2 է։ Ինչու որ էրիկ ունեցող կնիկը իր ողջ էրկանը
կապուած է օրէնքով. բայց թէ որ էրիկը մեռ-
3 նի, արձակուած է էրկանը օրէնքէն։ Ուրեմն քա-
նի որ էրիկը ողջ է, շուն պիտի ըսուի՝ թէ որ ու-
րիշ էրկան մը ըլլայ. բայց թէ որ էրիկը մեռնի՝
ան օրէնքէն ազատ կ'ըլլայ, անանկ որ շնացող
4 չըլլար՝ թէ որ ուրիշ էրկան մը ըլլայ։ Ուստի
դուք ալ, իմ եղբայրներս, Քրիստոսի մարմի-

նովը օրէնքին մեռաք, որ ուրիշի մը ըլլաք, ա-
նոր՝ որ մեռելներէն յարութիւն առեր է, որ
5 Աստուծոյ պտուղ բերող ըլլանք։ Քանզի քանի
որ մենք մարմնով էինք՝ մեղաց կիրքերը որ օ-
րէնքով կ'ըլլային, մեր անդամներուն մէջը կը
ներգործէին, որ մենք մահուան պտուղ բերենք։
6 Բայց հիմա ան օրէնքէն արձակուեցանք, ինչու
որ մեռանք անոր՝ որով բռնուած էինք, որ
մենք ծառայենք հոգւոյն նորոգութեամբը, և չէ
թէ գրոյն հնութեամբը։
7 Ուրեմն ի՞նչ ըսենք. օրէնքը մե՞ղք է. քաւ լի-
ցի. բայց ես մեղքը չէի ճանչնար՝ եթէ ոչ օրէն-
քով. ինչպէս ցանկութիւնն ալ չէի գիտեր, թէ
8 որ օրէնքը ըսած չըլլար, Մի ցանկար։ Բայց մեղ-
քը պատուիրանքէն առիթ առնելով՝ իմ մէջս
բոլոր ցանկութիւնները գոյացուց. ինչու որ ա-
9 ռանց օրէնքի մեղքը մեռած է։ Ես ալ առանց
օրէնքի ատեն մը կենդանի էի. բայց երբոր պատ-
10 ուիրանքը վրաս հասաւ, մեղքը ողջընցաւ, ու ես
մեռայ. ու ան պատուիրանքը որ կենաց համար
11 էր, նոյնը ինծի մահուան համար եղաւ։ Ինչու որ
մեղքը պատուիրանքէն առիթ առնելով՝ զիս խա-
12 բեց, ու անով մեռցուց։ Ուստի օրէնքը սուրբ է,
ու պատուիրանքը սուրբ և արդար ու բարի։
13 Ուրեմն բարի՞ն ինծի մահ եղաւ. քաւ լիցի. հա-
պա մեղքը, որպէս զի երեւնայ մեղքը որ ան բարի
բանով ինծի մահ գործեց, որ մեղքը պատուի-
14 րանքով աւելի մեղաւոր ըլլայ։ Վասն զի գիտենք
որ օրէնքը հոգեւոր է, բայց ես մարմնաւոր եմ՝
15 մեղքի տակ ծախուած։ Քանզի ինչ որ կ'ընեմ
չեմ ճանչնար. չէ թէ ինչ որ կ'ուզեմ՝ ան կ'ը-
16 նեմ, հապա ինչ որ կ'ատեմ՝ ան կ'ընեմ։ Բայց
թէ որ չուզածս կ'ընեմ, հաւանութիւն կու տամ
17 օրէնքին թէ բարի է։ Իսկ արդ չէ թէ ես կ'ընեմ
անիկա, հապա մեղքը՝ որ իմ ներսի դին կը բնա-

18 կի։ Քանզի գիտեմ որ իմ ներսիդիս՝ այսինքն
իմ մարմինիս մէջ մէկ բարի բան մը չբնակիր.
ինչու որ կամեցողութիւն կայ քովս, բայց բարին
19 'ի գործ դնելը չեմ գտներ։ Քանզի չէ թէ բարին
որ կ'ուզեմ՝ կ'ընեմ, հապա չարը որ չեմ ուզեր՝
20 ան կ'ընեմ։ Իսկ թէ որ չուզած բանս կ'ընեմ, ալ
չէ թէ ես կ'ընեմ անիկա, հապա մեղքը՝ որ իմ
21 ներսիդիս բնակած է։ Ուստի ես կը գտնեմ օ-
րէնք մը, որ երբ բարին ընելը կը կամենամ՝ չարը
22 իմ քովս է։ Վասն զի ներսի մարդուն նայելով՝
23 Աստուծոյ օրէնքին կը հաւնիմ. Բայց ուրիշ օրէնք
մը կը տեսնեմ իմ անդամներուս մէջ՝ որ իմ
մտքիս օրէնքին դէմ կը պատերազմի, և զիս
գերի կ'ընէ մեղաց օրէնքին որ իմ անդամներուս
24 մէջն է։ Ի՜նչ խղճալի մարդ եմ ես. ո՞վ զիս պիտի
25 ազատէ աս մահացու մարմինէն։ Գոհութիւն Աս-
տուծոյ մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի ձեռքովը.
ուրեմն ես ինքս մտքով Աստուծոյ օրէնքին կը
ծառայեմ, ու մարմնով՝ մեղաց օրէնքին։

ԳԼ. Ը

1 Իսկ արդ դատապարտութիւն չկայ Քրիստոս Յի-
սուսով եղողներուն՝ որոնք մարմնաւոր կերպով
2 չեն վարուիր*։ Ինչու որ Քրիստոս Յիսուսով կե-
նաց Հոգիին օրէնքը զիս ազատեց մեղաց և մահ-
3 ուան օրէնքէն։ Վասն զի ան որ անկարելի էր օ-
րէնքին՝ որովհետև տկար էր մարմնով, Աստուած
իր Որդին ղրկեց մեղանչական մարմնի նմանու-
թեամբ ու մեղքի համար, և դատապարտեց մեղ-
4 քը ան մարմինին մէջ. Որ օրէնքին արդարու-
թիւնը կատարուի մեր մէջը, որ մարմնաւորա-

*Ոմանք կ'աւելցնեն՝ այլ հոգևոր կերպով

5 պէս չենք քալեր՝ հապա հոգևորապէս։ Ինչու որ
մարմնաւոր եղողները մարմինին բաները կը մտա-
6 ծեն, ու հոգևոր եղողները՝ հոգիին բաները։ Վասն
զի մարմնաւոր խորհուրդը մահ է, և հոգևոր
7 խորհուրդը՝ կեանք ու խաղաղութիւն։ Քանզի
մարմնաւոր խորհուրդը Աստուծոյ դէմ թշնա-
մութիւն է. ինչու որ Աստուծոյ օրէնքին չհնա-
8 զանդիր, մանաւանդ չկրնար ալ։ Վասն զի մար-
մինով եղողները չեն կրնար Աստուծոյ հաճոյ ըլ-
9 լալ։ Բայց դուք մարմինով չէք՝ հապա հոգւով,
թէ որ Աստուծոյ Հոգին ձեր մէջը բնակած է.
իսկ թէ որ մէկը Քրիստոսի Հոգին չունի՝ անիկա
10 անորը չէ։ Ու թէ որ Քրիստոս ձեր մէջն է, ալ
մարմինը մեռած է մեղքի համար, ու հոգին կեն-
11 դանի է արդարութեան համար։ Իսկ թէ որ Յի-
սուսը մեռելներէն յարուցանողին Հոգին ձեր
մէջը բնակած է, ալ անիկա որ Քրիստոսը մե-
ռելներէն յարուց, պիտի կենդանացընէ ձեր
մահկանացու մարմինները իր Հոգիովը որ ձեր
մէջը կը բնակի։
12 Ապա ուրեմն, եղբայրներ, պարտական ենք,
չէ թէ մարմինին՝ մարմնաւորապէս ապրելու.
13 Ինչու որ եթէ մարմնաւորապէս ապրելու ըլլաք՝
պիտի մեռնիք. բայց թէ որ Հոգիով մարմինին
14 գործքերը սպաննէք՝ պիտի ապրիք։ Վասն զի
որոնք որ Աստուծոյ Հոգիովը կ'առաջնորդուին,
15 անոնք Աստուծոյ որդիքն են։ Ինչու որ դուք
ծառայութեան հոգին չառիք կրկին վախնալու,
հապա որդեգրութեան հոգին առիք, որ անով
16 կը կանչենք Աբբա Հայր։ Նոյն ինքն Հոգին վկա-
յութիւն կու տայ մեր հոգիին հետ, թէ մենք
17 Աստուծոյ որդիքն ենք. Ու թէ որ որդիք, ու-
րեմն ժառանգներ, Աստուծոյ ժառանգներ ու
Քրիստոսի ժառանգակիցներ. որ, եթէ իր չար-
չարանացը կցորդ ըլլանք, իր փառացն ալ հա-
ղորդ ըլլանք։

18 Վասն զի ես այսպէս կը դատեմ որ աս ժամա-
նակիս չարչարանքները բան մը չեն գալու փառ-
19 քին քով՝ որ մեզի պիտի յայտնուի։ Ինչու որ
ստեղծուածոց եռանդուն ակնկալութիւնը Աս-
20 տուծոյ որդւոցը յայտնուելուն կը սպասէ։ Ինչու
որ ունայնութեան հնազանդեցան ստեղծուած-
ները՝ (չէ թէ իրենց կամքովը՝ հապա անոր հա-
21 մար որ հնազանդեցուց,) Ան յուսով՝ որ ստեղծ-
ուածները իրենք ալ ապականութեան ծառա-
յութենէն ազատուելով՝ Աստուծոյ որդւոցը փա-
22 ռաւոր ազատութեանը հասնին։ Քանզի գիտենք
որ ամէն ստեղծուածները մինչեւ հիմա մէկտեղ
23 կը հառաչեն ու ծնանելու ցաւ կը քաշեն։ Եւ ոչ
միայն անոնք, հապա մենք ալ որ Հոգիին առջի
պտուղը ունինք, մենք մեզմէ մեր անձերուն մէջ
կը հառաչենք որդեգրութեան՝ այսինքն մեր մար-
24 մինին ազատութեանը սպասելով։ Ինչու որ յու-
սով փրկուեցանք. բայց յոյսը որ կը տեսնուի՝
յոյս չէ. վասն զի ան բանը որ կը տեսնէ մէկը՝
25 ալ ինչո՞ւ պիտի յուսայ։ Հապա թէ որ չտեսած
բաներնուս կը յուսանք, ալ համբերութիւնով
26 կը սպասենք անոր։ Անանկ ալ Հոգին օգնութեան
կը հասնի մեր տկարութիւններուն. քանզի ինչ
բանի համար աղօթելու ենք ըստ արժանւոյն՝
չենք գիտեր. բայց ինքը Հոգին բարեխօս կ'ըլ-
լայ մեզի համար անբարբառ հառաչանքներով։
27 Եւ սիրտերը Քննողը գիտէ Հոգիին ինչ խորհիլը,
քանզի Աստուծոյ կամքին համեմատ բարեխօսու-
թիւն կ'ընէ սուրբերուն համար։
28 Սակայն գիտենք որ ամէն բաները բարիի գոր-
ծակից կ'ըլլան անոնց որ Աստուած կը սիրեն, ո-
րոնք անոր նախասահմանութեամբը կանչուած
29 են։ Վասն զի անոնք որ առաջ կը ճանչնար, ա-
ռաջուց ալ սահմանեց իր Որդւոյն պատկերին
կերպարանակից ըլլալու, որ անիկա անդրանիկ ըլ-

30 լայ շատ եղբայրներու մէջ։ Եւ որոնք որ առաջուց
սահմանեց, նաեւ կանչեց զանոնք. եւ որոնք որ
կանչեց, նաեւ արդարացուց զանոնք. եւ որոնք
որ արդարացուց, նաեւ փառաւորեց զանոնք։
31 Ուրեմն ի՞նչ ըսենք աս բաներուս համար. թէ որ
Աստուած մեր կողմն է՝ ո՞վ պիտի ըլլայ մեզի հա-
32 կառակ։ Ան որ իր Որդւոյն չխնայեց՝ հապա մեր
ամենուն համար մատնեց զանիկա, ալ ի՞նչպէս
33 անոր հետ ամէն բաները մեզի չպարգեւեր։ Ո՞վ է
որ Աստուծոյ ընտրածներուն դէմ մեղադիր ըլ-
34 լայ. Աստուած է որ կ'արդարացընէ, Ո՞վ է
որ կը դատապարտէ. Քրիստոս է որ մեռաւ,
մանաւանդ թէ յարութիւն ալ առաւ, ու Աս-
տուծոյ աջ կողմն է, որ նաեւ մեզի համար բա-
35 րեխօսութիւն կ'ընէ. Ո՞վ պիտի զատէ
մեզ Քրիստոսի սէրէն. տառապա՞նքը, կամ նե-
ղութի՞ւնը, կամ հալածա՞նքը, կամ սո՞վը, կամ
մերկութի՞ւնը, կամ վտա՞նգը, կամ սո՞ւրը.
36 (Ինչպէս որ գրուած է, Ամէն օր քեզի համար
կը սպաննուինք, մորթուելու ոչխարի պէս կը
37 սեպուինք.) Հապա աս ամէն բաներուն մէջ՝ ալ
աւելի յաղթող կ'ըլլանք անով որ մեզ սիրեց.
38 Ինչու որ ես հաստատ գիտեմ թէ ոչ մահը, եւ
ոչ կեանքը, ու ոչ հրեշտակները, եւ ոչ իշխա-
նութիւնները, ու ոչ զօրութիւնները, եւ ոչ ներ-
39 կայ բաները, ու ոչ գալու բաները, Եւ ոչ բարձ-
րութիւնը, ու ոչ խորունկութիւնը, եւ ոչ մէկ
ուրիշ արարած մը կրնայ մեզ զատել Աստուծոյ
սէրէն՝ որ Քրիստոս Յիսուս մեր Տէրոջմով է։

ԳԼ. Թ

1 Ստոյգը կ'ըսեմ Քրիստոսով ու չեմ ստեր, (իմ
2 խիղճս ալ ինծի կը վկայէ Հոգւով Սրբով,) Որ
մեծ տրտմութիւն է ինծի՝ ու իմ սրտիս անպա-

3 կաս ցաւ։ Քանզի ես ինքս կը խնդրէի նզովուած
ըլլալ Քրիստոսէն՝ իմ մարմնոյ կողմանէ եղբայր-
4 ներուս ու ազգականներուս համար, Որոնք Իս-
րայելացի են. որ իրենցն է որդեգրութիւնը ու
փառքը և ուխտերը ու օրինադրութիւնը և պաշ-
5 տօնը ու խոստմունքները. Իրենցն են նահա-
պետները, իրենցմէ է— Քրիստոս ալ մարմնոյ
կողմանէ, որ ինքն է ամենուն վրայ Աստուած
6 օրհնեալ յաւիտեանս. Ամէն։ Բայց ոչ իբր թէ
Աստուծոյ խօսքը գետինը ինկած է. քանզի չէ
թէ ամէն Իսրայելէն եղողները Իսրայելացի են.
7 Եւ չէ թէ Աբրահամի սերունդ ըլլալնուն համար
ամէնը որդիք են. հապա՝ Իսահակով քեզի սե-
8 րունդ պիտի կոչուի։ Այսինքն՝ չէ թէ անոնք որ
մարմինի որդիք են՝ Աստուծոյ որդիք ալ են,
հապա խոստմունքի որդիքը սերունդ կը սեպ-
9 ուին։ Ինչու որ խոստմունքին խօսքը աս էր, թէ
Աս ատենս պիտի գամ, ու Սառա որդի պիտի
10 ունենայ։ Եւ ոչ միայն այսքան, հապա Ռեբեկա-
յէն ալ յայտնի է որ յղացաւ մէկէ մը՝ այսինքն
11 մեր Իսահակ հօրմէն. Ինչու որ տղաքը դեռ չծը-
նած, և դեռ մէկ աղէկ կամ գէշ բան մը չգոր-
ծած, (որ Աստուծոյ նախասահմանութիւնը հաս-
12 տատ մնայ ընտրութեանը պէս՝ Չէ թէ գործքե-
րէն, հապա անկէ որ կանչեց,) իրեն ըսուեցաւ
13 թէ, Մեծը պզտիկին պիտի ծառայէ. ինչպէս որ
գրուած է թէ Յակոբը սիրեցի, բայց Եսաւը ա-
տեցի։
14 Ուրեմն ի՞նչ ըսենք. միթէ Աստուծոյ քովը ա-
15 նիրաւութի՞ւն կայ. քաւ լիցի։ Ինչու որ Մովսե-
սին կ'ըսէ, Որուն որ պիտի ողորմիմ՝ կ'ողորմիմ,
16 ու որուն վրայ որ պիտի գթամ՝ կը գթամ։ Ու-
րեմն ոչ անկէ է որ կը կամի, ու ոչ անկէ որ կը
17 վազէ, հապա Աստուծմէ որ կ'ողորմի։ Քանզի
գիրքը Փարաւոնին կ'ըսէ, Անոր համար քեզ

վերցուցի, որ իմ զօրութիւնս քեզմով ցուցնեմ,
18 ու բոլոր երկրի մէջ իմ անունս պատմուի։ Ուստի
որուն որ կ'ուզէ՝ կ'ողորմի, և որն որ կ'ուզէ՝ կը
19 խստացընէ։ Ուրեմն ինծի պիտի ըսես թէ Ալ ին-
չո՞ւ մեղադիր կ'ըլլայ. վասն զի ո՞վ անոր կամացը
20 դէմ դրաւ։ Բայց դուն ո՞վ ես, մարդ, որ Աս-
տուծոյ դէմ պատասխան կու տաս. միթէ ստեղ-
ծուածը կը Ստեղծողին կրնայ ըսել թէ Զիս ին-
21 չո՞ւ ատանկ շինեցիր։ Բրուտը իշխանութիւն չու-
նի՞ կաւին վրայ՝ նոյն շաղուածքէն աման շինե-
լու, մէկը պատուոյ՝ և միւսը անարգանաց համար։
22 Հապա ի՞նչ ըսելիք ունի մէկը, թէ որ Աստուած իր
բարկութիւնը ցուցնել՝ ու իր զօրութիւնը յայտ-
նել ուզելով, շատ երկայնմտութեամբ համբե-
րեց կորսուելու պատրաստուած բարկութեան
23 ամաններուն. Եւ յամ որ իր փառքին մեծութիւ-
նը յայտնի ընէ ողորմելու ամաններուն վրայ, ո-
րոնք որ փառքի համար առաջուց պատրաստեց.
24 Այսինքն մեզ որ կանչեց, չէ թէ միայն Հրէանե-
25 րէն, հապա հեթանոսներէն ալ. Ինչպէս Ովսէէին
մէջ ալ կ'ըսէ, Իմ ժողովուրդս չեղողին իմ ժո-
ղովուրդս պիտի կանչեմ, ու սիրելի չեղողին՝ սի-
26 րելի։ Եւ պիտի ըլլայ թէ ան տեղը որ անոնց ըս-
ուեցաւ թէ Դուք իմ ժողովուրդս չէք, հոն ա-
նոնք կենդանի Աստուծոյն որդիքը պիտի ըսուին։
27 Եսայի ալ Իսրայելին համար կ'աղաղակէ, Թէև
Իսրայելի որդւոցը թիւը ծովու աւազին պէս ըլ-
28 լայ, միայն մնացորդ մը պիտի ազատի։ Քանզի
Տէրը համառօտ և կարճ բան մը կ'ընէ արդարու-
թեամբ. ինչու որ Տէրը կարճ բան մը պիտի ընէ
29 երկրի վրայ։ Եւ ինչպէս որ Եսայի առաջուց ը-
սաւ, Թէ որ զօրաց Տէրը մեզի սերունդ մը թո-
ղուցած չըլլար, մենք Սոդոմի պէս պիտի ըլլա-
յինք, ու Գոմորին պիտի նմանէինք։
30 Ուրեմն ի՞նչ ըսենք. թէ հեթանոսները որ ար-

դարութեան չէին հետեւեր՝ արդարութեան հա-
31 սան, այն արդարութեանը որ հաւատքէն է. Բայց
Իսրայէլ որ արդարութեան օրէնքին կը հետեւէր՝
32 արդարութեան օրէնքին չհասաւ։ Ինչո՞ւ համար.
վասն զի ոչ թէ հաւատքէն՝ հապա որպէս թէ օ-
րինաց գործքերէն ուզեց արդարանալ. ինչու որ
33 գայթակղութեան վէմին վրայ գլորեցան. ինչպէս
որ գրուած է, Ահա Սիոնի մէջ գայթակղութեան
քար մը կը դնեմ ու գլորելու վէմ մը. և ամէն
ով որ անոր հաւատայ՝ պիտի չամչնայ։

ԳԼ. Ժ

1 Եղբայրներ, իմ սրտիս փափաքը ու աղօթքը ա-
2 Աստուած *Իսրայէլի փրկուելուն համար է. Ինչու
որ ես կը վկայեմ անոնց համար, թէ Աստուծոյ
նախանձաւորութիւնը ունին, բայց ոչ թէ գի-
3 տութեամբ. Վասն զի անոնք Աստուծոյ արդա-
րութիւնը չգիտնալով, ու իրենց արդարութիւնը
հաստատել ուզելով, Աստուծոյ արդարութեանը
4 չհնազանդեցան. Քանզի օրէնքին վախճանը Քրիս-
տոս է ամէն հաւատացեալին արդարութեան հա-
մար։
5 Ինչու որ Մովսէս օրէնքէն եղած արդարու-
թիւնը կը ստորագրէ թէ, Զանոնք կատարող
6 մարդը անոնցմով պիտի ապրի. Բայց հաւատքէն
եղած արդարութիւնը ասանկ կ'ըսէ. Մի ըսեր
քու սրտիդ մէջը, Ո՞վ պիտի ելլէ երկինքը, (այ-
7 սինքն Քրիստոսը իջեցնելու.) Կամ թէ Ո՞վ պի-
տի իջնէ անդունդը, (այսինքն Քրիստոսը մեռել-
8 ներէն հանելու.) Հապա ի՞նչ կ'ըսէ. Խօսքը քեզի
մօտ է, քու բերնիդ մէջը և քու սրտիդ մէջն է,
այսինքն հաւատքին խօսքը որ մենք կը քարո-

*Յոյն. անոնց

9 զենք. Ինչու որ եթէ քու բերնովդ Յիսուսը Տէր
խոստովանիս, ու քու սրտիդ մէջը հաւատաս թէ
Աստուած զանիկա մեռելներէն յարուց, պիտի
10 փրկուիս. (Վասն զի սրտով կը հաւատայ մէկը
արդարանալու, ու բերնով կը խոստովանի փըր-
11 կուելու.) Քանզի գիրքը կ'ըսէ, Ամէն ով որ ա-
12 նոր հաւատայ՝ պիտի չամչնայ։ Ինչու որ խտրու-
թիւն չկայ Հրէային ու Յոյնին մէջտեղը. վասն զի
ամենուն Տէրը նոյնն է, առատ ամենուն որ իրեն
13 կը կանչեն. Քանզի ով որ Տէրոջը անունը կանչէ՝
պիտի փրկուի։
14 Ուրեմն ի՞նչպէս պիտի կանչեն անոր՝ որուն որ
չհաւատացին. կամ ի՞նչպէս պիտի հաւատան ա-
նոր՝ որուն վրայով չլսեցին. կամ ինտո՞ր պիտի
15 լսեն՝ առանց մէկու մը քարոզելուն. Կամ ի՞նչ-
պէս պիտի քարոզեն՝ թէ որ չխրկուին. ինչպէս
որ գրուած է, Ինտո՛ր գեղեցիկ են խաղաղու-
թիւն աւետարանողներուն ու բարի բաներու ա-
16 ւետիս տուողներուն ոտքերը։ Բայց ամէնը հնա-
զանդ չեղան աւետարանին. քանզի Եսայի կ'ըսէ,
17 Տէր, ո՞վ հաւատաց մեր տուած լուրին։ Ուրեմն
հաւատքը լսելէն է, ու լսելը Աստուծոյ խօսքէն։
18 Բայց կ'ըսեմ, Միթէ չլսեցի՞ն. մանաւանդ Բոլոր
երկիրը ելաւ անոնց հնչիւնը, ու անոնց խօսքը՝
19 մինչև աշխարհի ծայրերը։ Բայց կ'ըսեմ, Միթէ
Իսրայէլ չգիտցա՞ւ. առաջ Մովսէս կ'ըսէ, Ես ձեզ
նախանձի պիտի գրգռեմ *անպիտան ժողովուր-
դով մը, ու անմիտ ազգով մը ձեզ պիտի բար-
20 կացնեմ։ Բայց Եսայի կը համարձակի ու կ'ըսէ,
Ես անոնց գտնուեցայ՝ որ զիս չէին փնտռեր,
յայտնի եղայ անոնց՝ որ զիս չէին հարցներ։
21 Սակայն Իսրայէլին վրայով կ'ըսէ, Բոլոր օրը իմ
ձեռքերս երկընցուցի անհնազանդ ու հակառա-
կող ժողովուրդի մը։

*Յոյն. ոչ

ԳԼ. ԺԱ

1 Ուրեմն կ'ըսեմ, Միթէ Աստուած իր ժողովուրդը
մերժե՞ց. քաւ լիցի. ինչու որ ես ալ Իսրայելացի
եմ, Աբրահամի սերունդէն, Բենիամինի ցեղէն։
2 Չմերժեց Աստուած իր ժողովուրդը՝ որն որ ինքը
առաջուց ճանչցաւ. միթէ չե՞ք գիտեր Եղիային
պատմութեանը մէջ գիրքը ի՞նչ կ'ըսէ. ինտոր ա-
նիկա Իսրայելին համար գանգատ կ'ընէ Աստու-
3 ծոյ ըսելով, Տէ՛ր, քու մարգարէներդ մեռցուցին
ու քու սեղաններդ փլցուցին, ու մինակ ես մնա-
4 ցեր եմ, և իմ անձս կը փնտռեն։ Բայց ի՞նչ կ'ը-
սէ անոր՝ աստուածային պատասխանը. ինծի թո-
ղուցի, չ'ըսէ, եօթը հազար մարդիկ՝ որոնք Բա-
5 հաղին ծնրադրութիւն չըրին։ Անանկ ալ աս ա-
տենս շնորհաց ընտրութեանը համեմատ մնացորդ
6 մը կայ. Եւ թէ որ շնորհքով, ուրեմն ալ գործ-
քերէն չէ. ապա թէ ոչ՝ շնորհքը ալ շնորհք չըլ-
լար. *իսկ թէ որ գործքերէն է, ալ շնորհք չէ.
7 ապա թէ ոչ՝ գործը ալ գործ չըլլար։" Ուրեմն
ի՞նչ. Իսրայէլ չհասաւ ան բանին որ կը փնտռէր.
բայց ընտրուածները հասան, ու մնացածները
8 կուրցան, (ինչպէս որ գրուած է, Աստուած անոնց
թմրութեան ոգի տուաւ, աչքեր՝ որոնցմով պիտի
չտեսնեն, ու ականջներ՝ որոնցմով պիտի չլսեն,)
9 մինչև աս օրուան օրս։ Եւ Դաւիթ կ'ըսէ, Անոնց
սեղանը իրենց որոգայթ ու որս և գայթակղու-
10 թիւն ու հատուցում ըլլայ. Անոնց աչքերը մթա-
նան որ չտեսնեն, ու անոնց կռնակը միշտ վար
11 ծռէ։ Ուրեմն կ'ըսեմ, Միթէ անո՞ր համար ա-
նոնք յանցանք ըրին որ կործանին. քաւ լիցի.
հապա իրենց յանցանքովը հեթանոսաց փրկու-

*Ոմանք չունին

12 թիւն եղաւ, որ գիրենք նախանձի գրգռէ։ Ուստի
թէ որ անոնց յանցանքը աշխարհի մեծութիւն
եղաւ, ու անոնց նուաստութիւնը՝ հեթանոսնե-
րուն մեծութիւն, ալ ո՛րչափ աւելի անոնց լրու-
13 թիւնը։ Բայց ձեզի կ'ըսեմ հեթանոսներուդ, ո-
րովհետև հեթանոսներուն առաքեալ եմ՝ իմ
14 պաշտօնս կը մեծարեմ. Որ գուցէ իմ մարմինս
եղողները նախանձի գրգռեմ, ու անոնցմէ մէկ
15 քանիները ազատեմ։ Վասն զի թէ որ անոնց
մերժուիլը աշխարհին հաշտութիւն է, հապա ա-
նոնց ընդունուիլը ի՞նչ պիտի ըլլայ, բայց եթէ՝
16 մեռելներէն կենդանի ըլլալ։ Արդ թէ որ երա-
խայրին սուրբ է, նաև զանգուածը. և թէ որ
17 արմատը սուրբ է, ուրեմն ճիւղերն ալ։ Թէ որ ան
ճիւղերէն մէկ քանիները կոտրեցան, ու դուն որ
վայրենի ձիթենի էիր՝ անոնց մէջ պատուաստուե-
ցար, ու ձիթենիին արմատին և պարարտու-
18 թեանը հաղորդ եղար, ճիւղերուն դէմ մի պար-
ծենար. հապա թէ որ պարծենաս, չէ թէ դուն
արմատը վեր բռներ ես, հապա արմատը քեզ։
19 Ուրեմն պիտի ըսես, ճիւղերը կոտրեցան որ ես
20 պատուաստուիմ։ Աղէկ, անոնք անհաւատու-
թիւնով կոտրեցան, ու դուն հաւատքով հաս-
տատուեցար. մի հպարտանար, հապա վախցիր.
21 Վասն զի եթէ Աստուած բնական ճիւղերուն չխը-
22 նայեց, գուցէ քեզի ալ չխնայէ։ Ուստի տես Աս-
տուծոյ քաղցրութիւնը ու խստութիւնը. կոր-
ծանուածներուն վրայ խստութիւնը՝ և քու վրադ
քաղցրութիւնը, թէ որ ան քաղցրութեանը մէջ
կենաս. ապա թէ ոչ՝ դուն ալ պիտի կտրուիս։
23 Եւ անոնք ալ թէ որ իրենց անհաւատութեանը
մէջ չկենան, պիտի պատուաստուին. ինչու որ կա-
րող է Աստուած անոնք նորէն պատուաստել։
24 Քանզի եթէ դուն [illegible] բնական եղող վայրենի
ձիթենիէն կտրուեցար, ու ան բարի ձիթենիին

վրայ որ քեզի բնական չէր՝ պատուաստուեցար, ալ
ո՛րչափ աւելի անոնք որ բնական ճիւղեր են՝ պի-
25 տի պատուաստուին իրենց ձիթենիին վրայ։ Վասն
զի չեմ ուզեր, եղբայրներ, որ չգիտնաք աս
խորհուրդս, (որպէս զի ինքզինքնիդ իմաստուն
չսեպէք,) որ ըստ մասին կուրութիւն եղաւ Իս-
րայէլին, մինչեւ որ հեթանոսներուն լրութիւնը
26 մտնէ. Եւ այսպէս բոլոր Իսրայէլ պիտի փրկուի.
ինչպէս որ գրուած է, Սիոնէն պիտի գայ Փրկիչը,
ու Յակոբէն ամբարշտութիւնները մէկդի պիտի
27 դարձնէ. Եւ աս է իմ ուխտս անոնց, երբոր
28 անոնց մեղքերը վերցընեմ։ Աւետարանին նայե-
լով՝ անոնք թշնամի են ձեր սիրոյն համար. բայց
ընտրութեանը նայելով՝ սիրելի են իրենց հարցը
29 սիրոյն համար։ Ինչու որ Աստուծոյ պարգեւները
30 ու կոչումը առանց զղջանալու են։ Վասն զի ինչ-
պէս որ դուք ալ ատեն մը Աստուծոյ չէիք հա-
ւատար, ու հիմա ողորմութիւն գտաք *անոնց
31 անհաւատութիւնովը, Անանկ ալ անոնք հիմա
անհաւատ եղան, որ ձեր ողորմութիւն գտնելովը
32 անոնք՝ ալ ողորմութիւն գտնեն։ Ինչու որ Աստ-
ուած ամէնն ալ անհաւատութեան մէջ արգի-
լեց, որ ամենուն ողորմի։
33 Ո՛վ Աստուծոյ մեծութեան ու իմաստութեան
եւ գիտութեան խորունկութիւնը. ինչպէս ան-
քննելի են իր դատաստանները, ու անզննելի են
34 իր ճամբաները։ Վասն զի ո՞վ գիտցաւ Տէրոջը
35 միտքը, կամ ո՞վ անոր խորհրդակից եղաւ. Կամ
ո՞վ առաջուց անոր բան մը տուաւ, որ փոխա-
36 րէնը իրեն տրուի։ Ինչու որ ամէն բաները անկէ
ու անով եւ անոր համար են. իրեն փառք յա-
ւիտեանս։ Ամէն։

---

*Կամ անոնց անհաւատութեան ատենը, Անանկ ալ անոնք հիմա անհաւատ եղան ձեր ողորմութիւն գտած ատենը՝ որ անոնք

ԳԼ. ԺԲ

1 Արդ կ'աղաչեմ ձեզի, եղբայրներ, Աստուծոյ ո-
ղորմութեամբը, որ ձեր մարմինները ընծայէք
կենդանի զոհ մը՝ սուրբ, Աստուծոյ հաճելի, որ
2 է ձեր բանաւոր պաշտօնը. Եւ մի կերպարանիք
աս աշխարհիս կերպարանքովը, հապա ձեր մտքին
նորոգութեամբը նորոգուեցէք, որ քննէք թէ
ինչ է Աստուծոյ կամքը, ան որ բարի ու հաճելի
3 եւ կատարեալ է։ Քանզի ինծի տրուած *շնորհ-
քովը աս կ'ըսեմ ձեր մէջը եղող ամէն մէկուն,
որ արժան եղածէն մտածելէն աւելի բան չմտածէ,
հապա զգաստ կենալ մտածէ, ինտոր որ Աստ-
ուած ամէն մէկուն բաժնեց հաւատքին չափը։
4 Վասն զի ինչպէս որ մէկ մարմնի մէջ շատ ան-
դամներ ունինք, ու ան ամէն անդամները մի եւ
5 նոյն գործը չունին. Ասանկ ալ մենք շատուոր-
ներս մէկ մարմին մըն ենք Քրիստոսով, եւ ամէն
6 մէկերնիս իրարու անդամներ ենք։ Ուստի մենք
զանազան պարգեւներ ունենալով ան շնորհքին
համեմատ որ մեզի տրուած է, թէ որ մարգարէ-
7 ութիւն՝ հաւատքին չափովը գործածենք. Թէ որ
սպասաւորութիւն՝ սպասաւորութեան մէջ ըլ-
լանք. Թէ ան որ կը սորվեցընէ՝ սորվեցընելու
8 եռանդէ ըլլայ. Թէ ան որ կը յորդորէ՝ յորդորե-
լու եռանդէ, ան որ կը բաշխէ՝ պարզմտութեամբ
թող ընէ, ան որ վերակացու է՝ ջանքով, ան որ
9 կ'ողորմի՝ յօժարութեամբ. Սէրը առանց կեղծա-
ւորութեան ըլլայ, չարէն զզուելով, բարիին յա-
10 րելով. Եղբայրսիրութեան մէջ իրարու վրայ գո-
րովալից եղէք. պատուելու մէջ իրարմէ անցէք.
11 Ջանքի մէջ թուլասիրտ չըլլաք. հոգիով բորբո-

---

*Ոմանք Աստուծոյ շնորհքովը

12 քեցէք. Տէրոջը ծառայեցէք. Յուսով ուրախ ե՛-
ղէք. նեղութեան մէջ համբերեցէք. ստէպ աղօթ-
13 քի կեցէք. Սուրբերուն պիտոյքը հաղորդեցէք.
14 հիւրասիրութեան ետեւէ եղէք. Ձեզ հալածողները
15 օրհնեցէք, օրհնեցէք ու մի անիծէք. Խնդացող-
ներուն հետ խնդացէք, և լացողներուն հետ լա-
16 ցէք. Իրարու վրայ մի և նոյն խորհուրդը ունե-
ցէք. ամբարտաւանութիւն մի ընէք, հապա խո-
նարհներուն հետ խոնարհեցէք. Ինքզինքնիդ ի-
17 մաստունի տեղ մի դնէք. Չարութեան փոխարէն
մէկուն չարութիւն մի հատուցանէք. ամէն մար-
18 դոց առջեւ բարի բաներ ընելու հոգ տարէք. Որ-
չափ որ կարելի է ձեզի՝ ամէն մարդոց հետ խա-
19 ղաղութիւն ունեցէք. Սիրելիք, վրէժխնդրու-
թիւն մի ընէք ձեր անձերուն համար, հապա
բարկութեան տեղ տուէք. Ինչու որ գրուած է,
Վրէժխնդրութիւնը իմս է, ես պիտի հատուցա-
20 նեմ, կ'ըսէ Տէրը։ Ուստի թէ որ քու թշնամիդ
անօթեցեր է՝ հաց տուր անոր, և թէ որ ծա-
րաւ է՝ ջուր տուր անոր. քանզի աս ընելով՝ ա-
նոր գլխուն վրայ կրակի կայծեր պիտի դիզես։
21 Չարէն մի յաղթուիր, հապա բարիով յաղթէ
չարին։

ԳԼ. ԺԳ

1 Ամէն մարդ իր վրան եղած իշխանութիւններուն
թող հնազանդի. վասն զի չկայ իշխանութիւն մը
որ Աստուծմէ չըլլայ. և *անոնք որ կան՝ Աս-
2 տուծմէ կարգուած են. Ուրեմն ով որ իշխանու-
թեան դէմ կը կենայ, Աստուծոյ հրամանին դէմ
կը կենայ. և անոնք որ դէմ կը կենան՝ անձեր-
3 նուն դատապարտութիւն կ'ընդունին։ Վասն զի

*Որոնք են իշխանութիւնները

իշխանները բարի գործքերու վախ տուող չեն,
հապա չարերու. Կ'ուզե՞ս չվախնալ իշխանութե-
նէն. բարի գործէ, ու անկէ գովութիւն պիտի
4 ընդունիս. Ինչու որ անիկա Աստուծոյ սպասա-
ւորն է քեզի բարիի համար. բայց թէ որ դուն
չար կը գործես՝ վախցիր. ինչու որ դատարկ
տեղը մէջքը թուր չէ կապեր, քանզի Աստուծոյ
սպասաւորն է, և վրէժխնդիր՝ բարկութիւն հաս-
5 ցնելու անոր վրայ որ չար կը գործէ։ Ասոր հա-
մար պէտք է հնազանդ ըլլալ, չէ թէ մինակ
բարկութեանը համար՝ հապա խղճմտանքի հա-
6 մար ալ։ Աս պատճառով է որ տուրք ալ կու
տաք. ինչու որ Աստուծոյ սպասաւորներն են այն
7 նոյն բանին հոգ տանելու։ Ուստի հատուցէք
պէտք եղածը ամենուն. որուն որ տուրք տրուե-
լու է՝ տուրքը, որուն որ մաքս՝ մաքսը, որուն
որ վախ՝ վախնալը, որուն որ պատիւ՝ պատիւը։
8 Բնաւ մէկուն պարտական մի գտնուիք, միայն
թէ մէկզմէկ սիրելու. վասն զի ով որ ընկերը կը
9 սիրէ՝ օրէնքը կը կատարէ. Ինչու որ ան Մի շնա-
ներ, Մի սպաններ, Մի գողնար, Սուտ վկա-
յութիւն մի ըներ, Մի ցանկար, և ուրիշ ինչ
պատուէր որ կայ՝ բոլորը աս խօսքիս մէջ կը բո-
վանդակուի, Թէ Քու ընկերդ սիրես քու անձիդ
10 պէս։ Սէրը ընկերին գէշութիւն չըներ. ուրեմն
օրէնքին լրումը սէր է։
11 Եւ այսպէս ըրէք՝ գիտնալով աս ատենս, որ
հիմա ժամանակ է մեզի քունէ արթննալու. ին-
չու որ հիմա մօտ է մեզի փրկութիւնը՝ քան թէ
12 անատենը որ հաւատացինք. Գիշերը շատ անցած
է ու ցորեկը մօտեցած. ուստի մէկդի ընենք խա-
ւարին գործքերը, ու վրանիս հագնինք լուսոյ
13 զէնքերը։ Որպէս թէ ցորեկ ատեն պարկեշտու-
թեամբ պտըտինք, չէ թէ անառակութիւններով
ու գինովութիւններով, և չէ թէ [illegible] անկո-

գիններով ու պղծութիւններով, ո՛չ թէ հակա-
14 ռակութիւնով ու նախանձով. Հապա դուք
հագէք Տէր Յիսուս Քրիստոսը, ու մարմնոյ խը-
նամք մի՛ տանիք ցանկութիւններու համար։

ԳԼ. ԺԴ

1 Հաւատքի մէջ տկար եղողը ընդունեցէք՝ ոչ թէ
2 *տարակուսական որոշումներով. Մէկը կը հա-
ւատայ որ ամէն բան կրնայ ուտել, և ան որ
3 տկար է՝ կանանչեղէն կ'ուտէ։ Ան որ կ'ուտէ՝
չուտողը թող չանարգէ, ու ան որ չուտեր՝ ու-
տողը թող չդատէ, ինչու որ Աստուած զանիկա
4 ընդունեց է։ Դուն ո՞վ ես որ ուրիշին ծառան
կը դատես. իր Տէրոջը կը կանգնի կամ կ'իյնայ.
բայց պիտի կանգնի, ինչու որ †Աստուած կարող
5 է զանիկա կանգնեցնել. Մէկը մէկ օրը ուրիշ
օրէն աւելի կը սեպէ, մէկն ալ ամէն օրը մէկ կը
սեպէ. թող ամէն մարդ իր միտքը հաճեցնէ.
6 Ան որ կը հոգայ օրը, Տէրոջը կը հոգայ, և ան որ
չհոգար օրը, Տէրոջը չհոգար. ու ան որ կ'ուտէ,
Տէրոջը կ'ուտէ, քանզի Աստուծմէ կը գոհանայ.
և ան որ չուտեր, Տէրոջը չուտեր, ու Աստուծմէ
7 կը գոհանայ. Ինչու որ մեզմէ մէկը իր անձին հա-
մար չապրիր, ու մէկը ինքզինքին համար չմեռ-
8 նիր. Քանզի թէ որ ապրինք, Տէրոջը համար
կ'ապրինք, և թէ որ մեռնինք, Տէրոջը համար
կը մեռնինք. ուրեմն թէ ապրինք և թէ մեռ-
9 նինք, մենք Տէրոջն ենք. Վասն զի Քրիստոս ալ
անոր համար մեռաւ ‡ու ապրեցաւ, որ [illegible] հա-
10 [illegible] մեռելներուն ու կենդանիներուն իշխէ. Իսկ

*Յուն. կարծեաց
†Ոմանք Տէրը
‡Ոմանք ու յարութիւն առաւ, և նորէն

դուն ինչո՞ւ քու եղբայրդ կը դատես, կամ դուն
ինչո՞ւ քու եղբայրդ կ'անարգես. վասն զի ա-
մէնքս ալ Քրիստոսի ատեանին առջևը պիտի
11 կայնինք. Ինչու որ գրուած է, Ես կենդանի եմ,
կ'ըսէ Տէրը, որ ամէն ծունկ ինծի պիտի ծռի,
12 և ամէն լեզու Աստուծոյ պիտի խոստովանի. Ու-
րեմն մեզմէ ամէն մէկը Աստուծոյ հաշիւ պիտի
13 տայ իր անձին համար։ Ուստի ալ իրար չդա-
տենք, հապա աւելի աս որոշումը ըրէք մտքեր-
նուդ մէջ՝ խոչ կամ գայթակղութիւն չդնել եղ-
14 բօրը. Աս գիտեմ ու հաստատուած եմ Տէր Յի-
սուսով, որ մէկ բան մը ինքիրմէ պիղծ չէ, բայց
ով որ պիղծ կը սեպէ մէկ բան մը, անոր պիղծ
15 է ան. Իսկ թէ որ կերակուրի համար քու եղ-
բայրդ տրտմի, ալ դուն սիրով չվարուեցար. քու
կերակուրովդ մի՛ կորսնցըներ զանիկա՝ որուն հա-
16 մար որ Քրիստոս մեռաւ։ Արդ չըլլայ որ ձեր
17 բարիին համար չար խօսին. Ինչու որ Աստուծոյ
արքայութիւնը կերակուր ու խմելիք չէ, հապա
արդարութիւն և խաղաղութիւն ու խնդութիւն
18 Հոգւով Սրբով։ Քանզի թէ որ մէկը աս բանե-
րով Քրիստոսի կը ծառայէ, անիկա Աստուծոյ
19 հաճելի է՝ ու մարդոց գովելի. Ապա ուրեմն խա-
ղաղութեան և իրարու շինութեան ետևէ ըլլանք։
20 Չըլլայ որ կերակուրի պատճառով Աստուծոյ գոր-
ծը քակես. ամէն բան մաքուր է. միայն թէ ան
մարդուն է գէշ, որ ուրիշին գայթակղութիւն
21 տալով կ'ուտէ. Աղէկ է միս չուտել և գինի չխը-
մել, ոչ ալ բան մը ընել՝ որով քու եղբայրդ կը
գլորի կամ կը գայթակղի կամ կը տկարանայ։
22 Դուն հաւատք ունի՞ս. անիկա քեզի պահէ Աս-
տուծոյ առջևը. երանի անոր որ իր անձը չդա-
23 տապարտեր անով՝ որ ինքը *կ'ընդունի. Բայց

*Կամ կը փորձէ

ան որ խիղճ կ'ընէ, թէ որ ուտէ կը դատապար-
տուի, վասն զի չէ թէ հաւատքով կ'ուտէ. քանզի
ինչ բան որ հաւատքով չէ՝ մեղք է։

ԳԼ. ԺԵ

1 Պէտք է մեզի որ կարող ենք՝ տկարներուն տկա-
րութիւնը վերցընել, և չէ թէ մեր անձին
2 հաճոյ ըլլալ. Հապա մեզմէ ամէն մէկը շինու-
թեան համար իր ընկերին հաճոյ ըլլայ բարի բա-
3 ներու մէջ. Քանզի Քրիստոս ալ չէ թէ իր անձին
հաճոյ եղաւ, հապա ինչպէս որ գրուած է, Քեզ
նախատողներուն նախատինքները իմ վրաս ին-
4 կան. Վասն զի ինչ որ առաջուց գրուեցաւ, մեր
սորվելուն համար գրուեցաւ, որ համբերութիւ-
նով ու գիրքերուն մխիթարութիւնովը յոյս ու-
5 նենանք. Եւ համբերութեան ու մխիթարութեան
Աստուածը տայ ձեզի իրարու հետ մի և նոյն խոր-
հուրդը ունենալ Քրիստոս Յիսուսի կամքին պէս.
6 Որ մէկ սրտով ու մէկ բերնով փառաւորէք
զԱստուած ու մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի Հայ-
7 րը. Ասոր համար մէկզմէկ ընդունեցէք, ինչպէս
որ Քրիստոս ալ *մեզ ընդունեց Աստուծոյ փառ-
քին համար.
8 Բայց կ'ըսեմ թէ Յիսուս Քրիստոսի թլփատու-
թեան պաշտօնեայ ըլլալը Աստուծոյ ճշմարտու-
թեանը համար էր, որ նախահայրերուն տրուած
9 խոստմունքները հաստատէ. Սակայն հեթանոս-
ները ողորմութեան համար զԱստուած փառա-
ւորեն. ինչպէս որ գրուած է, Ասոր համար ազ-
գերուն մէջը քեզ պիտի գովեմ, և քու ան-
10 ուանդ սաղմոս պիտի երգեմ. Եւ դարձեալ կ'ը-
սէ թէ, Ով ազգեր, անոր ժողովուրդին ուրա-

*Ոմանք ձեզ

11 խացէք. Եւ դարձեալ թէ, Օրհնեցէք Տէրը,
ով բոլոր ազգեր, ու գովեցէք անիկա, ով բոլոր
12 ժողովուրդներ. Եւ դարձեալ Եսայի կ'ըսէ, Յեսսէին
մէկ արմատը պիտի ըլլայ, ու ան որ ազգերուն
իշխան պիտի կայնի, ազգերը անոր պիտի յու-
13 սան. Արդ յուսոյ Աստուածը ձեզ լեցընէ բոլոր
ուրախութիւնով ու խաղաղութիւնով հաւատա-
լու մէջ, որ առատանաք յուսով Հոգւոյն Սրբոյ
զօրութեամբը։
14 Ես ինքնս ալ հաստատուած եմ ձեզի համար,
իմ եղբայրներս, որ դուք լեցուն էք բարու-
թիւնով, լեցուած էք ամէն գիտութիւնով, և
15 կրնաք մէկզմէկ խրատել։ Սակայն մէկ կողմանէ
համարձակարար գրեցի ձեզի, իմ եղբայրներս,
որպէս թէ մաքերնիդ ձգեմ ու Աստուծմէ ինծի տրուած
16 է, Որ ես Յիսուս Քրիստոսի պաշտօնեայ ըլլամ
հեթանոսներուն մէջ, և Աստուծոյ աւետարանը
մատակարարեմ, որպէս զի հեթանոսաց ընծա-
ուիլը ընդունելի ըլլայ՝ Սուրբ Հոգիով սրբուե-
17 լով. Ուստի Աստուծոյ քովը պարծանք ունիմ
18 Քրիստոս Յիսուսով. Ինչու որ չեմ համարձակիր
խօսելու ան բաներէն մէկը, որ Քրիստոս իմ
ձեռքովս գործած չէ՝ հեթանոսները հնազանդե-
19 ցընելու համար՝ խօսքով ու գործքով, Նշաննե-
րու ու հրաշքներու զօրութիւնով, *Աստուծոյ
Հոգւոյն զօրութիւնովը. անանկ որ ես Երուսա-
ղեմէն սկսած՝ և շրջան ընելով մինչև Իլիւրիկացւոց
20 կողմերը Քրիստոսի աւետարանը լեցուցի։ Անանկ
ջանացի աւետարանը քարոզելու, չէ թէ ուր որ
Քրիստոսի անունը յիշուած էր, որ չըլլայ թէ
մէկ ուրիշի մը դրած հիման վրայ շինեմ. Հապա
21 ինչպէս որ գրուած է թէ, Որոնց որ չպատմուե-

*Ոմանք Սուրբ

ցաւ անոր վրայով՝ պիտի տեսնեն, ու որոնք որ
22 չլսեցին՝ պիտի իմանան։ Անոր համար ալ շատ
23 արգիլուեցայ ձեզի գալէն։ Բայց հիմա որ աս
կողմերս՝ ալ ինծի տեղ չկայ, ու շատ տարիներէ
24 'ի վեր խիստ կը փափաքիմ ձեզի գալու, Երբոր
դէպ 'ի Սպանիա երթամ, *կը յուսամ որ անց-
նելու ատենս ձեզ տեսնեմ, ու ձեզմէ յուղարկ-
ուիմ հոն երթալու, թէ որ առաջ քիչ մը ձեզմով
25 լեցուիմ։ Բայց հիմա Երուսաղէմ կ'երթամ սուր-
26 բերուն սպասաւորելու։ Վասն զի Մակեդոնացիք
և Աքայեցիք յօժարեցան որ Երուսաղեմի մէջ ե-
ղած աղքատ սուրբերուն քիչ մը հաղորդութիւն
27 ընեն. Յօժարեցան, ինչու որ անոնց պարտական
ալ են. վասն զի թէ որ անոնց հոգևոր բաներուն
հաղորդ եղան հեթանոսները, կը պարտաւորին
որ հաղորդութիւն ընեն անոնց՝ մարմնաւոր բա-
28 ներու մէջ ալ։ Ուրեմն ասիկա կատարելով՝ ու
կնքելով անոնց աս պտուղը՝ ձեզմէ Սպանիա պի-
29 տի անցնիմ։ Եւ աս գիտեմ որ իմ ձեզի գալու
ատենս՝ Քրիստոսի †աւետարանին լեցուն օրհ-
նութիւնովը պիտի գամ։
30 Ձեզի կ'աղաչեմ, եղբայրներ, մեր Տէր Յիսուս
Քրիստոսով ու Հոգւոյն սիրովը, որ ինծի հետ
պատերազմակից ըլլաք ձեր աղօթքներուն մէջ առ
31 Աստուած ինծի համար, Որ Հրէաստանի մէջ հա-
ւատքի չհնազանդողներէն ազատուիմ, ու իմ Ե-
րուսաղէմ ընելու սպասաւորութիւնս սուրբե-
32 րուն ընդունելի ըլլայ, Որպէս զի Աստուծոյ կամ-
քովը ուրախութեամբ ձեզի գալով՝ ձեզի հետ
33 հանգչիմ։ Եւ խաղաղութեան Աստուածը ձեր ա-
մենուդ հետը ըլլայ։ Ամէն։

*Յոյն. ձեզի պիտի գամ. վասն զի կը յուսամ
†Յոյն. չունի

ԳԼ. ԺԶ

1 Ձեզի կը յանձնեմ մեր Փիբէ քոյրը, որ Կենք-
2 րայի եկեղեցւոյն սպասաւորն է. Որ անիկա ըն-
դունիք Տէրոջմով՝ ինչպէս որ սուրբերուն ար-
ժան է, և անոր խնամք տանիք ինչ բանի մէջ որ
ձեր օգնութեանը կարօտի. քանզի ինքն ալ շա-
տերուն խնամք տարաւ, ու ինծի ալ։
3 Բարև ըրէք Պրիսկէին ու Ակիւղասին՝ Քրիստոս
4 Յիսուսով իմ գործակիցներուս. (Որոնք իմ
կեանքիս համար իրենց պարանոցները տուին. որ
անոնցմէ չէ թէ մինակ ես շնորհակալ կ'ըլլամ,
հապա հեթանոսներուն բոլոր եկեղեցիներն ալ.)
5 Եւ անոնց տանը մէջի եկեղեցւոյն ալ։ Բարև ը-
րէք Եպենետոս իմ սիրելիիս, որ *Աքայիայէն
6 առջի պտուղ մըն է Քրիստոսի։ Բարև ըրէք Մա-
7 րիամին, որ մեր վրայ շատ աշխատեցաւ։ Բարև
ըրէք Անդրոնիկոսին ու Յունիային՝ իմ ազգա-
կաններուս և գերութեան ընկերներուս, որոնք
առաքեալներուն մէջը երևելիներ են, որոնք ինծ-
8 մէ ալ առաջ Քրիստոսի եղան։ Բարև ըրէք Ամպ-
9 ղիա իմ սիրելիիս Տէրոջմով։ Բարև ըրէք Ուր-
բանոս մեր գործակցին Քրիստոսով, ու Ստաքես
10 իմ սիրելիիս։ Բարև ըրէք Ապեղեսին որ ընտ-
11 րեալ է Քրիստոսով։ Բարև ըրէք անոնց որ Արիս-
տաբուղոսի տունէն են։ Բարև ըրէք Հերովդիոն
իմ ազգականիս։ Բարև ըրէք անոնց որ Նարկէ-
12 սին տունէն են Տէրոջմով։ Բարև ըրէք Տրիփո-
նէին ու Տրիփոսէին՝ Տէրոջմով աշխատողներուն։
Բարև ըրէք Պերսիդէ սիրելիին, որ շատ աշխա-
13 տեցաւ Տէրոջմով։ Բարև ըրէք Ռուփոսին՝ Տէ-
րոջմով ընտրուածին, ու անոր մօրը և իմին։

*Յոյն. Ասիայէն

14 Բարև ըրէք Ասինկրիտոսին, Փղեգոնին, Երմա-
սին, Պատրոբային, Երմեսին ու անոնց հետ եղող
15 եղբայրներուն։ Բարև ըրէք Փիղողոգոսին ու Յու-
լիային, Ներէոսին ու անոր քրոջը, և Ողիմպա-
16 սին ու անոնց հետ եղող բոլոր սուրբերուն։ Բա-
րև ըրէք իրարու սրբութեան համբոյրով։ Բա-
րև կ'ընեն ձեզի Քրիստոսի [բոլոր] եկեղեցիները։
17 Կ'աղաչեմ ձեզի, եղբայրներ, որ դիտէք այն-
պիսիները որոնք ձեր սորված վարդապետութե-
նէն դուրս հերձուածողութիւններ ու գայթակ-
18 ղութիւններ կ'ընեն, և անոնցմէ ետ կեցէք։ Ին-
չու որ անանկները մեր Տէրոջը *Քրիստոսի չեն
ծառայեր, հապա իրենց որովայնին. և անոյշ
խօսքերով ու գովութիւններով պարզամիտնե-
19 րուն սիրտերը կը խաբեն։ Քանզի ձեր հնազան-
դութիւնը ամենուն հասած է. ուստի ձեր վրայ
ուրախ եմ. բայց կ'ուզեմ որ դուք իմաստուն
20 ըլլաք բարիին, ու միամիտ՝ չարին։ Եւ խաղաղու-
թեան Աստուածը խորտակէ Սատանան շուտով
ձեր ոտքերուն տակը։ Մեր Տէր Յիսուս Քրիստո-
սի շնորհքը ձեր հետը ըլլայ։*
21 Բարև կ'ընէ ձեզի Տիմոթէոս՝ իմ գործակիցս,
և Ղուկիոս ու Յասոն և Սոսիպատրոս՝ իմ ազ-
22 գականներս։ (Բարև կ'ընեմ ձեզի Տէրոջմով ես
23 ալ Տերտիոս, որ աս թուղթը գրեցի։) Բարև
կ'ընէ ձեզի Գայիոս՝ իմ ու բոլոր եկեղեցւոյն
հիւրընկալը։ Բարև կ'ընէ ձեզի Երաստոս՝ քաղա-
24 քիս գանձապետը, ու Կուարտոս եղբայրը։ Մեր
Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր ամենուն
հետն ըլլայ։ Ամէն։
25 Արդ անոր՝ որ կարող է ձեզ հաստատել իմ
աւետարանիս պէս ու Յիսուս Քրիստոսի քարո-

*Ոմանք. Յիսուս Քրիստոսի
†Ոմանք. կ'աւելցնեն Ամէն։

զութեանը պէս, այն խորհուրդին յայտնուելուն
պէս՝ որ յաւիտենական ատեններէն ՚ի վեր ծած-
26 կուած էր, Եւ հիմա յայտնուեցաւ, ու մարգարէ-
ական գիրքերով յաւիտենական Աստուծոյ հրա-
մանովը բոլոր հեթանոսներուն ճանչցուեցաւ հա-
27 ւատքի հնազանդելու համար, Մի միայն իմաս-
տուն Աստուծոյն՝ Յիսուս Քրիստոսի ձեռքովը
փառք յաւիտեանս։ Ամէն։

ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

ԱՌ ԿՈՐՆԹԱՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա.

1 Պօղոս՝ Աստուծոյ կամքովը Յիսուս Քրիստոսի
առաքեալ ըլլալու կանչուած, ու Սոսթենէս եղ-
2 բայրը, Կորնթոսի մէջ եղած Աստուծոյ եկեղեց-
ւոյն՝ Քրիստոս Յիսուսով սրբուածներուն՝ սուր-
բեր ըլլալու կանչուածներուն, այն ամենուն հետ՝
որ ամէն տեղ մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունը
3 կը կանչեն, իրենցը ու մերը. Ձեզի շնորհք և խա-
ղաղութիւն Աստուծմէ մեր Հօրմէն ու Տէր Յի-
սուս Քրիստոսէն։
4 Ամէն ատեն իմ Աստուծմէս ձեզի համար կը

գոհանամ Աստուծոյ շնորհքին վրայ, որ ձեզի
5 տրուած է Քրիստոս Յիսուսով. Որ դուք անով
ամէն բանի մէջ հարստացաք ամէն խօսքով և
6 ամենայն գիտութեամբ. Ինչպէս որ Քրիստոսի
7 վկայութիւնը ձեր մէջը հաստատուեցաւ. Որ դուք
բնաւ մէկ շնորհքով մըն ալ չնուազիք՝ մեր Տէր
8 Յիսուս Քրիստոսի յայտնուելուն սպասելով. Որ
նաև ձեզ պիտի հաստատէ մինչև վերջը՝ անմե-
ղադրելի ըլլալու մեր Տէր Յիսուս Քրիստոսի օրը։
9 Հաւատարիմ է Աստուած, որ իրմով կանչուե-
ցաք հաղորդ ըլլալու իր Որդւոյն՝ մեր Տէր Յի-
սուս Քրիստոսին։
10 Ձեզի կ'աղաչեմ եղբայրներ, մեր Տէր Յիսուս
Քրիստոսի անունովը, որ մի և նոյն խօսքը ու-
նենաք ամէնքդ, ու երկպառակութիւններ չըլ-
լայ ձեր մէջը. հապա դուք մէկ միտքի ու մէկ
11 խորհուրդի վրայ †հաստատուած ըլլաք։ Ինչու որ
ձեզի համար ինծի լուր հասաւ, եղբայրներ,
Քղուէի տունէն եղողներէն, թէ ձեր մէջը հակա-
12 ռակութիւններ կայ։ Հիմա աս կը զրուցեմ, որ
ձեզմէ ամէն մէկը կ'ըսէ եղեր թէ Ես Պօղոսեան
եմ, ու մէկը՝ թէ ես Ապողոսեան, և ուրիշը՝ թէ
ես Կեփասեան, ու մէկը՝ թէ ես Քրիստոսեան։
13 Միթէ Քրիստոս բաժնուա՞ծ է. միթէ Պօղո՞ս խա-
չը ելաւ ձեզի համար, կամ թէ Պօղոսի՞ անու-
14 նովը մկրտուեցաք։ Կը գոհանամ Աստուծմէ որ
ձեզմէ մէկը չմկրտեցի, միայն թէ Կրիսպոսը ու
15 Գայիոսը. որ մէկը չըսէ թէ իմ անունովս մկըր-
16 տեցի։ Իրաւ Ստեփաննեսին ընտանիքն ալ մկըր-
տեցի. ալ ուրիշ մէկը չեմ գիտեր ամենևին թէ
մկրտեցի։
17 Ինչու որ Քրիստոս զիս մկրտելու չղրկեց, հա-
պա աւետարանը քարոզելու, չէ թէ խօսքերու

†Յուն. կատարելագործուած

ճարտարութիւնով, որ Քրիստոսի խաչը ոչինչ չըլ-
18 լայ. Քանզի խաչին քարոզութիւնը կորսուածնե-
րուն յիմարութիւն է, բայց մեզի փրկուածնե-
19 րուս Աստուծոյ զօրութիւնն է. Վասն զի գրուած
է, Իմաստուններուն իմաստութիւնը պիտի կոր-
սընցընեմ, ու հանճարեղներուն հանճարը պիտի
20 խափանեմ. Ո՞ւր է իմաստունը, ո՞ւր է դպիրը,
ո՞ւր է աս աշխարհիս քննողը. չէ՞ որ Աստուած
21 յիմարեցուց աս աշխարհիս իմաստութիւնը. Քան-
զի որովհետև Աստուծոյ իմաստութեամբը աշ-
խարհ չճանչցաւ զԱստուած իր իմաստութիւնովը,
Աստուած հաճեցաւ քարոզութեան յիմարութիւ-
22 նովը հաւատացեալները ապրեցընելու։ Ինչու որ
Հրէաները նշան կ'ուզեն, և Յոյները իմաստու-
23 թիւն կը փնտռեն. Իսկ մենք կը քարոզենք խաչ-
եալ Քրիստոսը՝ Հրէաներուն գայթակղութիւն,
24 ու Յոյներուն յիմարութիւն. Բայց անոնց որ
կանչուած են, թէ Հրէաներուն և թէ Յոյներուն,
Քրիստոսը՝ Աստուծոյ զօրութիւնը և Աստուծոյ
25 իմաստութիւնը. Ինչու որ Աստուծոյ յիմարը մար-
դոցմէն աւելի իմաստուն է, և Աստուծոյ տկարը
26 մարդոցմէն աւելի զօրաւոր է. Արդարև դուք
ձեր կոչումը կը տեսնէք, եղբայրներ, որ չէ թէ
մարմնոյ կողմանէ շատ իմաստուններ, և չէ թէ
շատ զօրաւորներ, և չէ թէ շատ ազնուականներ
27 կանչուեցան. Բայց Աստուած աշխարհիս յիմարները
ընտրեց, որ ամօթով ընէ իմաստունները. ու աշ-
խարհիս տկարները ընտրեց Աստուած, որ ամօթով
28 ընէ զօրաւորները. Եւ աշխարհիս ցածազգիները
ու անարգները ընտրեց Աստուած՝ և ոչինչները, որ
29 բան մը եղողները խափանէ. Որպէս զի մէկ մար-
30 մին մը չպարծի Աստուծոյ առջին։ Իսկ դուք ան-
կէ էք Քրիստոս Յիսուսով, որ ան մեզի Աստուծ-
մէ իմաստութիւն, արդարութիւն, սրբութիւն և
31 փրկութիւն եղաւ. Որ ինչպէս գրուած է, Ան որ
կը պարծենայ՝ Տէրոջմով թող պարծենայ։

ԳԼ. Բ

1 Ու ես, եղբայրներ, որ ձեզի եկայ, չէ թէ խօս-
քի կամ իմաստութեան գերազանցութիւնով մը
Աստուծոյ վկայութիւնը ձեզի յայտնելու եկայ։
2 Վասն զի ես միտքս չդրի ձեր մէջը ուրիշ բան մը
գիտնալ, բայց միայն Յիսուս Քրիստոսը, ու ան՝
3 խաչը ելած։ Ու ես տկարութիւնով ու վախով
4 և շատ դողով ձեր քովը կեցայ։ Ու իմ խօսքս
և քարոզութիւնս չէ թէ *մարդկային իմաստու-
թեան համոզիչ խօսքերով էր, հապա Հոգւոյն
5 և զօրութեան ապացուցութեամբը. Որպէս զի
ձեր հաւատքը մարդոց իմաստութիւնովը չըլլայ,
6 հապա Աստուծոյ զօրութիւնովը։ Սակայն կա-
տարեալներուն հետ իմաստութիւն կը խօսինք,
բայց չէ թէ աս աշխարհիս իմաստութիւնը, և ոչ
7 աս աշխարհիս ոչնչանալու իշխաններունը. Հապա
Աստուծոյ ծածուկ իմաստութիւնը կը խօսինք
խորհրդով, որ աշխարհէն առաջ սահմանեց Աստ-
8 ուած մեր փառքին համար. Որ զանիկա աս աշ-
խարհիս իշխաններէն մէկը չճանչցաւ. քանզի թէ
որ ճանչցած ըլլային, ալ փառաց Տէրը խաչը չէին
9 հաներ։ Հապա ինչպէս որ գրուած է, Ան բաները
որ աչք չէ տեսեր և ականջ չէ լսեր ու մարդու
սրտին մէջ չէ ինկեր, Աստուած զինքը սիրողնե-
10 րուն պատրաստեց։ Բայց Աստուած մեզի յայտ-
նեց իր Հոգիովը, ինչու որ Հոգին ամէն բան կը
11 քննէ, Աստուծոյ խորունկ բաներն ալ։ Վասն զի
մարդոցմէն ո՞վ գիտէ մարդուն բաները, բայց
միայն մարդուն հոգին որ իր մէջն է. անանկ ալ
Աստուծոյ բաները մէկը չգիտեր, բայց միայն Աս-
12 տուծոյ Հոգին։ Իսկ մենք չէ թէ աս աշխարհիս

*Ոմանք չունին

հոգին առինք, հապա ան Հոգին որ Աստուծմէ
է. որ մենք ճանչնանք ան բաները որ Աստուծմէ
13 տրուեցաւ մեզի. Որոնք նաև կը խօսինք, չէ թէ
մարդկային իմաստութեան սորվեցուցած խօս-
քերովը, հապա *Հոգիին սորվեցուցածներովը, և
հոգևոր բաները հոգևորի հետ կը յարմարցընենք։
14 Իսկ շնչաւոր մարդը Աստուծոյ Հոգիին բաները
չընդունիր, ինչու որ անոնք իրեն յիմարութիւն
են, ու չկրնար ալ գիտնալ, ինչու որ հոգևոր
15 կերպով կը քննուին։ Բայց ան որ հոգևոր է՝ ա-
մէն բան կը քննէ, ու ինքը մէկէ մը չքննուիր։
16 Քանզի ո՞վ գիտցաւ Տէրոջը միտքը, որ անոր
խրատ տուող ըլլայ. բայց մենք Քրիստոսի
միտքը ունինք։

ԳԼ. Գ

1 Ու ես, եղբայրներ, չկրցայ խօսիլ ձեզի՝ որպէս
թէ հոգևորներու, հապա որպէս թէ մարմնա-
2 ւորներու, Որպէս թէ Քրիստոսով տղայոց. ձեզի
կաթ կերցուցի և չէ թէ կերակուր, ինչու որ
դեռ կարող չէիք, ու հիմա ալ տակաւին կարող
3 չէք, վասն զի դեռ մարմնաւոր էք։ Որովհետև
տակաւին ձեր մէջը նախանձ ու հակառակութիւն
և բաժանումներ կան, չէ՞ որ մարմնաւոր էք, ու
4 մարդկօրէն կը քալէք։ Քանզի երբոր ձեզմէ մէկը
կ'ըսէ թէ Ես Պօղոսեան եմ, և միւսը՝ թէ Ես Ա-
պօղոսեան, չէ՞ որ մարմնաւոր էք։ Ուրեմն ո՞վ է
5 Պօղոս կամ ո՞վ է Ապօղոս. Պաշտօնեաներ են,
որոնցմով հաւատացիք, և ինչպէս որ Տէրը
6 տուաւ անոնց ամէն մէկուն։ Ես տնկեցի, Ապօղոս
7 ջուր տուաւ, բայց Աստուած աճեցուց։ Ուստի
ոչ տնկողը բան մըն է, և ոչ ջուր տուողը, հա-

*Ոմանք Սուրբ Հոգիին

8 պը Աստուած՝ որ աճեցուց։ Տնկողը ու ջուր
տուողը մէկ են, և ամէն մէկը իր վարձքը պիտի
9 առնէ իր աշխատութեանը չափովը։ Ինչու որ
մենք Աստուծոյ գործակից ենք. դուք Աստուծոյ
մշակութիւնն էք. Աստուծոյ շինութիւնն էք։
10 Աստուծոյ շնորհացը չափովը որ ինծի տրուեցաւ,
իմաստուն ճարտարապետի մը պէս հիմ դրի, բայց
անոր վրայ շինողը ուրիշ է. միայն թէ ամէն մէկը
11 թող զգուշանայ թէ ինչպէս կը շինէ։ Ինչու որ
մէկը՝ ալ ուրիշ հիմ չկրնար դնել դրուածէն 'ի
12 զատ, որ է Յիսուս Քրիստոս։ Թէ որ մէկը աս
հիմին վրայ կը շինէ ոսկի, արծաթ, պատուական
13 քարեր, փայտ, խոտ, եղէգ, Ամէն մէկուն գործը
յայտնի պիտի ըլլայ. քանզի օրը երևան պիտի
հանէ, ինչու որ կրակով պիտի յայտնուի. և ա-
մէն մէկուն գործին ինչ տեսակ ըլլալը կրակը պի-
14 տի փորձէ։ Թէ որ մէկուն շինած գործը մնալու
15 ըլլայ, ինքը վարձք պիտի առնէ. Ու թէ որ մէ-
կուն շինածը այրելու ըլլայ, անիկա վնաս պիտի
քաշէ. բայց ինքը պիտի ազատի, սակայն անանկ՝
16 իբր թէ կրակի մէջէն։ Չէ՞ք գիտեր որ Աստուծոյ
տաճար էք դուք, և Աստուծոյ Հոգին ձեր մէջը
17 բնակած է։ Թէ որ մէկը Աստուծոյ տաճարը կ'ա-
պականէ, Աստուած զանիկա պիտի ապականէ,
ինչու որ Աստուծոյ տաճարը սուրբ է՝ որ դուք
էք։
18 Չըլլայ որ մէկը ինքզինքը խաբէ. թէ որ ձեզմէ
մէկը զինքը իմաստուն կը սեպէ աս աշխարհիս
19 մէջ, թող յիմար ըլլայ՝ որ իմաստուն ըլլայ։ Ին-
չու որ աս աշխարհիս իմաստութիւնը Աստուծոյ
առջևը յիմարութիւն է. վասն զի գրուած է թէ
Անիկա իմաստունները իրենց խորամանկութեանը
20 մէջ կը բռնէ։ Ու դարձեալ թէ Տէրը գիտէ ի-
մաստուններուն խորհուրդները՝ որ ունայն են։
21 Ուրեմն մէկը թող չպարծենայ մարդոցմով. (22) Ին-

չու որ ամէն բան ձերն է, թէ Պօղոս, թէ Ապո-
ղոս, թէ Կեփաս, թէ աշխարհ, թէ կեանք, թէ
մահ, թէ ներկայ բաները և թէ գալիքները՝ ա-
23 մէն բան ձերն է. Դուք ալ Քրիստոսինն էք, և
Քրիստոս՝ Աստուծոյ։

ԳԼ. Դ

1 Թող մարդիկ մեզ ասանկ սեպեն՝ որպէս թէ Քրիս-
տոսի սպասաւորները ու Աստուծոյ խորհուրդնե-
2 րուն տնտեսները։ Ուստի տնտեսներուն մէջ կը
3 փնտռուի որ մէկը հաւատարիմ գտնուի։ Բայց
ինծի անիկա ոչինչ բան մըն է, որ ձեզմէ դա-
տուիմ՝ կամ մարդոց *դատողութենէն, մանա-
4 ւանդ որ ես ալ իմ անձս չեմ դատեր. (Վասն
զի ես իմ անձիս վրայօք բան մը չեմ գիտեր.
բայց չէ թէ ասով կ'արդարանամ.) հապա զիս
5 դատողը Տէրն է։ Ուրեմն ժամանակէն առաջ
դատողութիւն մի ընէք, մինչև որ գայ Տէրը՝ որ
խաւարին գաղտնիքը 'ի լոյս պիտի հանէ, ու սըր-
տերուն խորհուրդները յայտնի պիտի ընէ. և ան-
ատենը ամէն մէկուն գովութիւնը Աստուծմէ պի-
տի ըլլայ։
6 Ասոնք օրինակ բերի, եղբայրներ, իմ վրաս ու
Ապողոսին վրայ ձեզի համար, որ դուք մեզմէ
սորվիք [illegible] գրուածէն աւելի բան մը
չխորհիլ, որ չըլլայ թէ ձեզմէ մէկը հպարտանայ
7 մէկու մը համար ուրիշի մը դէմ։ Քանզի ո՞վ է
ան որ քեզ տարբեր կ'ընէ ուրիշներէն. և ի՞նչ
ունիս որ չես առեր դուն. և թէ որ առիր՝ ին-
չո՞ւ չառածի պէս կը պարծենաս։
8 Արդէն կշտացած էք, արդէն հարուստցաք,
առանց մեզի թագաւորեցիք. և երանի թէ թա-

---

* Յուն. օրուընէն

թագաւորէիք, որ մենք ալ ձեր հետ թագաւորէինք։
9 Քանզի կարծեմ թէ Աստուած յետիններ ըրաւ մեզ
առաքեալներս մահապարտներու նման. ինչու որ
տեսարան եղանք աշխարհի և հրեշտակներուն ու
10 մարդոց։ Մենք յիմարներ ենք Քրիստոսի համար,
և դուք իմաստուններ Քրիստոսով. մենք տկար՝
և դուք զօրաւոր. դուք փառաւորեալ՝ ու մենք
11 անարգեալ։ Մինչև այս օրուան ատենը կ՚անօթե-
նանք ալ, կը ծարաւինք ալ, մերկ ալ կը մնանք,
կը ծեծուինք ալ, աստանդական ալ կը պտը-
12 տինք, Եւ մեր ձեռքերովը գործելով կ՚աշխա-
տինք. երբոր մեզ կը նախատեն՝ կ՚օրհնենք. եր-
13 բոր կը հալածեն՝ կը համբերենք. Երբոր գէշ կը
խօսին՝ կ՚աղաչենք. իբրև աշխարհի աղտեղու-
թիւնը՝ ամենուն անարգը ըլլալով մինչև հիմա։
14 Աս բաները կը գրեմ՝ չէ թէ ձեզ ամչցնելու հա-
մար, հապա կը խրատեմ զձեզ սիրելի որդիներուս
15 պէս։ Վասն զի թէև դուք տասը հազար վարժա-
պետներ ունենաք Քրիստոսով, բայց չէ թէ շատ
հայրեր ունէք, ինչու որ Քրիստոս Յիսուսով ես
16 ձեզ ծնայ աւետարանովը։ Ուրեմն կ՚աղաչեմ ձե-
17 զի՝ ինծի նմանող եղէք։ Ասոր համար ձեզի խրկե-
ցի Տիմոթէոսը, որ իմ սիրելի որդիս է՝ ու Տէ-
րոջմով հաւատարիմ. որ անիկա ձեր միտքը պի-
տի ձգէ Քրիստոսով իմ բռնած ճամբաներս, ինչ-
պէս որ ամէն տեղ ամէն եկեղեցիներուն մէջ կը
18 սորվեցրնեմ։ Մէկ քանիները հպարտացան, որ-
19 պէս թէ ես պիտի չգամ ձեզի։ Բայց շուտով
պիտի գամ ձեզի՝ թէ որ Տէրը կամենայ, և պիտի
հասկընամ չէ թէ հպարտացողներուն խօսքերը,
20 հապա զօրութիւնը։ Վասն զի Աստուծոյ թագա-
ւորութիւնը չէ թէ խօսքով է, հապա զօրու-
21 թիւնով։ Ի՞նչպէս կ՚ուզէք, գաւազանո՞վ գամ
ձեզի, թէ սիրով և հեզութեան հոգիով։

ԳԼ. Ե

1 Առ հասարակ կը լսուի ձեր մէջը պոռնկութիւն
ըլլալ, և անանկ պոռնկութիւն՝ որ հեթանոսնե-
րուն մէջ ալ *չկայ, որպէս թէ մէկը իր հօրը
2 կնիկը ունենայ։ Ու դուք հպարտացեր էք, և ոչ
մանաւանդ սուգ ըրիք, որ ձեր մէջէն վերցուի
3 աս բանը ընողը։ Ինչու որ թէպէտ ես մարմնով
հեռու եմ, բայց հոգիով ներկայ եմ. ուստի հի-
մա որպէս թէ ներկայ ըլլալով որոշեցի, որ աս
4 բանը ընողը՝ Երբոր մեր Տէր Յիսուս Քրիստոսի
անունովը մէկտեղ ժողվուիք դուք՝ ու իմ հո-
գիս մեր Տէր Յիսուս Քրիստոսի զօրութիւնովը,
5 Անանկը Սատանայի՛ն մատնէք՝ մարմինը կորսուե-
լու համար, որ հոգին փրկուի Տէր Յիսուսի օրը։
6 Աս ձեր պարծանքը աղէկ չէ. չէ՞ք գիտեր որ
7 քիչ մը խմորը բոլոր զանգուածը կը խմորէ։ Մաք-
րեցէք հին խմորը մէկդի, որ ըլլաք նոր զանգ-
ուած, ինտոր որ անխմոր էք. ինչու որ Քրիստոս
8 մեր զատիկը մեզի համար զոհուեցաւ։ Ուստի տօն
կատարենք՝ չէ թէ հին խմորով և չէ թէ չարու-
թեան ու անզգամութեան խմորովը, հապա ան-
կեղծութեան ու ճշմարտութեան անխմոր հացովը։
9 Գրեցի ձեզի թուղթին մէջ, որ պոռնիկներուն
10 հետ չխառնուիք։ Ու ըսածս՝ չէ թէ աս աշխար-
հիս պոռնիկներուն հետ, կամ ագահներուն հետ,
կամ յափշտակողներուն հետ, կամ կռապաշտ-
ներուն հետ. հապա թէ չէ՝ պէտք էր որ դուք
11 աշխարհէս դուրս ելլէիք։ Բայց հիմա ձեզի գրեցի
չխառնուիլ, այսինքն թէ որ մէկը եղբայր ըս-
ուած՝ կամ պոռնիկ ըլլայ, կամ ագահ, կամ
կռապաշտ, կամ նախատող, կամ գինով, կամ

*Ոմանք չյիշուիր

յափշտակող, անանկին հետ հաց ալ չուտել։
12 Վասն զի ի՞նչ պէտք է ինծի դուրսիններն ալ
դատել. չէ՞ որ դուք ներսինները կը դատէք.
13 Իսկ դուրսինները Աստուած պիտի դատէ. ուստի
չարը ձեր մէջէն վերցուցէք։

ԳԼ. Զ

1 Ձեզմէ մէկը՝ թէ որ մէկ բան մը ունենայ իր ըն-
կերին հետ, կը համարձակի՞ անիրաւներուն առ-
ջեւը դատուիլ՝ ու չէ թէ սուրբերուն առջեւը։
2 Չէ՞ք գիտեր որ սուրբերը պիտի դատեն աշխար-
հը. ու թէ որ աշխարհս ձեզմէ կը դատուի, ու-
րեմն արժանի չէ՞ք դուք չնչին դատեր տեսնելու։
3 Չէ՞ք գիտեր որ մենք հրեշտակները պիտի դա-
տենք. ո՛ւր կը մնան հապա աշխարհային բաները։
4 Ուրեմն թէ որ ձեր մէջը աշխարհային դատեր ու-
նիք, եկեղեցւոյն անարգները ձեզի դատաւոր
5 դրէք։ Ձեզ ամչցնելու համար կը զրուցեմ. այն-
չափ եղաւ որ ձեր մէջը մէկ իմաստուն մը չկա՞յ,
որ կարող ըլլայ իրաւունքը որոշել իր եղբայր-
6 ներուն մէջ. Հապա եղբայր եղբօր հետ դատի կը
7 մտնէ, ան ալ անհաւատներուն առջեւը։ Արդարեւ
բոլորովին յանցանք մըն է աս ձեր մէջը, որ ի-
րարու հետ դատեր ունիք. ինչո՞ւ մանաւանդ
դուք անիրաւութիւն չէք կրեր. ինչո՞ւ մանա-
8 ւանդ դուք զրկանք չէք քաշեր։ Հապա դուք
անիրաւութիւն ու զրկանք կ՚ընէք, և ան ալ եղ-
9 բայրներուն։ Չէ՞ք գիտեր որ անիրաւները Աս-
տուծոյ արքայութիւնը պիտի չժառանգեն. մի
խաբուիք, ոչ պոռնիկները, ոչ կռապաշտները,
10 ոչ շնացողները, ոչ իգացեալները, ոչ արուա-
գէտները, ոչ գողերը, ոչ ագահները, ոչ գինով-
ները, ոչ նախատողները ու ոչ յափշտակողները
Աստուծոյ թագաւորութիւնը պիտի չժառան-

11 գեն։ Եւ դուք մէկ քանիներդ անանկներ էիք.
բայց լուացուեցաք, բայց սրբուեցաք, բայց ար-
դարացաք Տէր Յիսուսի անունովը ու մեր Աս-
տուծոյ Հոգիովը։
12 Ամէն բան ինծի օրինաւոր է, բայց չէ թէ ամէն
բան օգտակար. ամէն բան ինծի օրինաւոր է,
բայց ես մէկ բանի մը իշխանութեան տակ պիտի
13 չըլլամ. Կերակուրները փորին համար է, փորն
ալ կերակուրներուն. բայց Աստուած աս ալ ա-
նոնք ալ պիտի խափանէ։ Իսկ մարմինը պոռն-
կութեան համար չէ, հապա Տէրոջը, ու Տէրը՝
14 մարմնին համար։ Եւ Աստուած որ Տէրը յա-
րուց, մեզ ալ պիտի յարուցանէ իր զօրութե-
15 նովը։ Չէ՞ք գիտեր որ ձեր մարմինները Քրիստո-
սի անդամներն են. ուստի Քրիստոսի անդամները
առնելով՝ պոռնիկի անդամնե՞ր ընեմ. քաւ լիցի։
16 Չէ՞ք գիտեր թէ ան որ պոռնիկի կը մօտենայ՝
անոր հետ մէկ մարմին կ՚ըլլայ. քանզի [illegible] կ՚ը-
17 սէ, Երկուքը մէկ մարմին պիտի ըլլան։ Իսկ ան
որ Տէրոջը կը մօտենայ՝ անոր հետ մէկ հոգի կ՚ըլ-
18 լայ։ Պոռնկութենէն փախէք. ամէն մեղք որ
մարդ կը գործէ, իր մարմինէն դուրս է. բայց
ան որ կը պոռնկի՝ իր մարմնին դէմ կը մեղան-
19 չէ։ Չէ՞ք գիտեր որ ձեր մարմինները տաճար են
Սուրբ Հոգիին որ ձեր մէջն է, որ անիկա Աս-
տուծմէ ունիք, ու դուք ձեր անձին տէրը չէք.
20 Քանզի գնով ծախու առնուեցաք. ուստի փա-
ռաւորեցէք զԱստուած ձեր մարմիններուն ու
հոգիներուն մէջը, որ Աստուծոյ են։

ԳԼ. Է

1 Արդ ան բաներուն համար որ դուք ինծի գրե-
2 ցիք, աղէկ է մարդուս որ կնկան չմօտենայ։ Բայց
պոռնկութիւնը արգիլելու համար ամէն մարդ

թող իր կնիկը ունենայ, ու ամէն կնիկ իր էրիկը
3 թող ունենայ։ Էրիկը իր կնկանը թող պարտքը
4 վճարէ, նոյնպէս կնիկն ալ իր էրկանը։ Կնիկը իր
մարմինին իշխեր, հապա էրիկը, անանկ ալ է-
5 րիկը իր մարմինին իշխեր, հապա կնիկը։ Մէկըզ-
մէկ մի զրկէք, եթէ ոչ միաբանութեամբ ատեն
մը՝ աղօթքի պարապելու համար, ու նորէն ի-
րարու դարձէք, որ Սատանան ձեզ չփորձէ ձեր
6 անժուժկալութեանը համար։ Աս կը գրուցեմ
7 թոյլ տալով՝ և չէ թէ հրամայելով։ Քանզի կ'ու-
զէի որ ամէն մարդիկ ինծի պէս ըլլային․ բայց
ամէն մէկը իր պարգևը ունի Աստուծմէ, մէկը
8 աստանկ՝ ու միւսը անանկ։ Բայց չամուսնացած-
ներուն ու որբևարիներուն կ'ըսեմ, Աղէկ է ա-
9 նոնց՝ թէ որ ինծի պէս կենան։ Հապա թէ որ
ժուժկալութիւն չունին՝ թող ամուսնանան, ին-
չու որ աղէկ է ամուսնանալը քան թէ բորբո-
10 քիլը։ Բայց ամուսնացածներուն կը պատուիրեմ
չէ թէ ես, հապա Տէրը, որ կնիկը էրիկէն չզա-
11 տուի, (իսկ թէ որ զատուի ալ՝ առանց ամուսնա-
նալու մնայ, կամ իր էրկանը հետ հաշտուի,) ու
12 էրիկը իր կնիկը թող չձգէ։ Բայց ուրիշներուն ես
կ'ըսեմ՝ չէ թէ Տէրը․ Թէ որ մէկ եղբայր մը ան-
հաւատ կնիկ ունենայ, ու անոր հաճելի ըլլայ ի-
13 րեն հետ բնակիլը, թող չձգէ զանիկա։ Եւ կնիկ
մը որ անհաւատ էրիկ ունենայ, ու անոր հաճելի
ըլլայ իրեն հետ բնակիլը, թող չձգէ զանիկա։
14 Ինչու որ անհաւատ էրիկը սրբուած է կնիկովը,
և անհաւատ կնիկը սրբուած է էրիկովը․ ապա
թէ ոչ՝ ձեր որդիքը պիղծ պիտի ըլլային, բայց
15 հիմա սուրբ են։ Իսկ թէ որ անհաւատը զատ-
ուի՝ թող զատուի․ եղբայր մը կամ քոյր մը ա-
նանկ պարագաներու մէջ գերի չէ․ սակայն Աստ-
16 ուած խաղաղութեան կանչեց մեզ։ Քանզի ի՞նչ
գիտես դուն, կնիկ, գուցէ քու էրիկդ պիտի ապ-

րեցընես․ կամ դուն ի՞նչ գիտես, էրիկ, գուցէ
17 քու կնիկդ պիտի ապրեցընես։ Միայն թէ ամէն
մէկուն ինչպէս որ Տէրը բաժնեց, ամէն մէկը ինչ-
պէս որ Աստուած կանչեց, անանկ թող երթայ,
ու ամէն եկեղեցիներուն մէջ ես աստանկ պատ-
ուէր կու տամ։
18 Թէ որ թլփատուած մէկը հաւատքի կանչուե-
ցաւ, թող նորէն անթլփատ չըլլայ․ չթլփատ-
ուածներէն մէկը կանչուեցաւ, թող չթլփատուի,
19 Ինչու որ թլփատութիւնը բան մը չէ, ու անթըլ-
փատութիւնը բան մը չէ․ հապա Աստուծոյ պատ-
20 ուիրանքներուն պահպանութիւնը պէտք է։ Բայց
ամէն մէկը ինչ կոչումի մէջ որ կանչուեցաւ, թող
21 անոր մէջը կենայ։ Ծառա՞յ կանչուեցար, հոգ չըլ-
լայ քեզի․ բայց թէ որ կրնաս ազատ ըլլալ, ան
22 ընտրէ։ Վասն զի ան ծառան որ Տէրոջմով կան-
չուած է՝ Տէրոջը ազատացեալն է անիկա․ նոյն-
պէս ալ ան ազատը որ կանչուած է, Քրիստոսի
23 ծառան է։ Դուք գնով ծախու առնուեցաք,
24 մարդոց ծառայ մի ըլլաք։ Եղբայրներ, ամէն մէ-
կը ինչ կոչումի մէջ որ կանչուեցաւ, թող անոր
մէջը կենայ Աստուծոյ առջևը։
25 Բայց կոյսերուն համար Տէրոջմէն հրաման մը
չունիմ, միայն թէ Տէրոջմէն հաւատարիմ ըլլա-
լու ողորմութիւն գտածի մը պէս խրատ կու
26 տամ։ Ուրեմն ես կը սեպեմ որ ասիկա աղէկ է
հիմակուան նեղութեանը համար, այսինքն աղէկ
27 է մարդուս որ աստանկ ըլլայ։ Կապուա՞ծ ես կըն-
կան, մի փնտռեր արձակուիլ․ արձակուա՞ծ ես
28 կնիկէ, մի փնտռեր կնիկ։ Իսկ թէ որ ամուսնա-
նաս՝ չմեղանչեցիր, և թէ որ կոյսը ամուսնանայ՝
չմեղանչեց․ բայց անանկները մարմնոյ նեղութիւն
պիտի ունենան․ սակայն ես ձեզի կը խնայեմ։
29 Բայց աս կ'ըսեմ, եղբայրներ, որ ժամանակը
կարճըցած է․ ալ անոնք որ կնիկ ունին՝ անանկ

30 ըլլան որպէս թէ չունին, Եւ անոնք որ կու լան՝
որպէս թէ չեն լար, ու անոնք որ կը խնդան՝
որպէս թէ չեն խնդար, և անոնք որ ծախու
31 կ'առնեն՝ որպէս թէ բան մը չունին, Եւ անոնք
որ աշխարհս կը գործածեն՝ որպէս թէ դէշ կեր-
պով չեն գործածեր. ինչու որ աս աշխարհիս
32 կերպարանքը կ'անցնի։ Բայց ես կ'ուզեմ որ դուք
անհոգ ըլլաք. Վասն զի չամուսնացած մարդը Տէ-
րոջը բաները կը հոգայ, թէ ինչպէս Տէրոջը հա-
33 ճելի ըլլայ. Իսկ ամուսնացածը աշխարհիս բաները
կը հոգայ, թէ ինտոր իր կնկանը հաճելի ըլլայ։
34 Եւ ամուսնացած կնիկը ու կոյսը կը տարբերին ի-
րարմէ. Ինչու որ կոյսը Տէրոջը բաները կը հոգայ,
որ ինքը սուրբ ըլլայ հոգւով ու մարմնով. Իսկ
ամուսնացած կնիկը աշխարհիս բաները կը հոգայ,
35 թէ ինտոր իր էրկանը հաճելի ըլլայ։ Բայց աս
բանը ձեր օգուտին համար կը գրուցեմ, չէ թէ
ձեր վրայ վարմ մը ձգելու, հապա պարկեշտու-
թեան համար ու առանց զբաղանաց Տէրոջը ծա-
36 ռայելու համար։ Իսկ թէ որ մէկը ամօթ կը սե-
պէ իր կոյսին համար՝ թէ որ չափը անցեր է,
ու պէտք է անանկ ըլլալ, ինչ որ կ'ուզէ՝ թող
37 ընէ, մեղք չգործեր. թող ամուսնանան։ Բայց
ան որ իր սրտին մէջ հաստատ կը կենայ, ու իր
վրայ հարկ մըն ալ չկայ, հապա իր կամքին վրայ
իշխանութիւն ունի, ու իր սրտին մէջ այսպէս ո-
38 րոշեր է որ իր կոյսը պահէ, աղէկ կ'ընէ։ Ուստի
ան որ իր կոյսը կ'ամուսնացընէ, աղէկ կ'ընէ. ու
39 ան որ չամուսնացըներ, աւելի աղէկ կ'ընէ։ Կնիկը
*կապուած է՝ որչափ ժամանակ որ իր էրիկը ողջ
է. հապա թէ որ իր էրիկը մեռնի, ազատ է ա-
մուսնանալու որու որ ուզէ, միայն թէ Տէրոջ-
40 մով։ Բայց իմ դատումիս նայելով աւելի երա-

*Ոմանք օրէնքով կապուած

նելի է՝ թէ որ անանկ կենայ. և կարծեմ թէ ես
ալ Աստուծոյ Հոգին ունիմ։

ԳԼ. Ը

1 Բայց կուոց զոհերուն վրայով՝ գիտենք որ ա-
մէնքս ալ գիտութիւն ունինք. գիտութիւնը կը
2 հպարտացընէ, բայց սէրը շինութիւն կ'ընէ։ Եւ
թէ որ մէկը կը կարծէ թէ բան մը գիտէ, դեռ
բնաւ մէկ բան մը չգիտեր՝ ինչպէս որ պէտք է
3 գիտնալ. Իսկ թէ որ մէկը զԱստուած կը սիրէ,
4 ինքը անկէ ճանչցուած է։ Ուստի կուոց զոհուած-
ները ուտելու վրայով՝ գիտենք որ կուռքը
ոչինչ է աշխարհիս մէջ, և որ մէկէն ՚ի զատ ու-
5 րիշ Աստուած մը չկայ։ Քանզի թէև ըլլան ալ ա-
նունով աստուածներ՝ թէ երկինքը և թէ երկ-
րիս վրայ, (ինչպէս որ կան շատ աստուածներ ու
6 շատ տէրեր,) Բայց մենք մէկ Աստուած ունինք՝
Հայրը, ուսկից են ամէն բաները, և մենք ալ
*անով. ու մէկ Տէր Յիսուս Քրիստոս, որ անով
7 են ամէն բաները, ու մենք ալ անով։ Բայց ա-
մենուն քովը գիտութիւն չկայ. և ոմանք կուռ-
քի վրայով խղճմտանք ունենալով՝ մինչև հիմա
կ'ուտեն կուոց զոհուածի պէս, և իրենց խղճմը-
8 տանքը որովհետև տկար է՝ կը պղծուի։ Սակայն
կերակուրը մեզ Աստուծոյ առջևը չկեցըներ. քան-
զի ոչ եթէ ուտենք՝ կ'աւելնանք, և ոչ եթէ չու-
9 տենք՝ կը պակսինք։ Բայց զգոյշ կեցէք, որ չըլ-
լայ թէ աս ձեր իշխանութիւնը տկարներուն
10 գայթակղութիւն ըլլայ։ Քանզի եթէ մէկը տեսնէ
քեզ՝ որ գիտութիւն ունիս, կուռատունի մէջ սե-
ղան նստած, չէ՞ որ ան տկար մարդուն խղճ-
մտանքը համարձակութիւն պիտի առնէ կուոց

*Կամ անոր համար

11 զոհուածը ուտելու, Եւ քու գիտութեամբդ այն
տկար եղբայրը կորսուի, որուն համար որ Քրիս-
12 տոս մեռաւ։ Եւ այսպէս եղբայրներուն դէմ մե-
ղանչելով՝ ու անոնց տկար խղճմտանքը վիրա-
13 ւորելով՝ Քրիստոսի դէմ կը մեղանչէք։ Ուստի
թէ որ կերակուրը կը գայթակղեցընէ իմ եղ-
բայրս, միս պիտի չուտեմ յաւիտեան՝ որ իմ եղ-
բայրս չգայթակղեցընեմ։

Գլ. Թ

1 Չէ՞ որ ես առաքեալ եմ. չէ՞ որ ես ազատ եմ.
չէ՞ որ մեր Տէր Յիսուս Քրիստոսը տեսայ.
2 չէ՞ որ դուք էք իմ գործս Տէրոջմով։ Թէ-
պէտ ուրիշներուն առաքեալ չըլլամ ալ, բայց
անտարակոյս ձեզի եմ. ինչու որ իմ առաքելու-
3 թեանս կնիքը դուք էք Տէրոջմով։ Իմ պատաս-
4 խանս անոնց որ զիս կը քննեն՝ աս է. Միթէ մենք
5 իշխանութիւն չունի՞նք ուտելու ու խմելու։ Մի-
թէ մենք իշխանութիւն չունի՞նք Քրիստոնեայ քոյր
եղող կնիկ մը ձեր հետը պտըտցընելու, ինչպէս որ
ուրիշ առաքեալները ու Տէրոջը եղբայրները ու
6 Կեփաս կ'ընեն։ Միթէ ես ու Բառնաբա՞ս միայն
7 իշխանութիւն չունինք չգործելու։ Ո՞վ իր ա-
պրուստովը զինուորութիւն կ'ընէ. ո՞վ այգի կը
տնկէ ու անոր պտուղէն չուտեր. կամ ո՞վ ոչ-
խարներ կ'արածէ ու ոչխարներուն կաթէն չու-
8 տեր։ Միթէ մարդկօրէ՞ն կը գրուցեմ աս բանե-
րը, կամ չէ՞ որ օրէնքն ալ նոյնը կը գրուցէ։
9 Քանզի Մովսէսին օրէնքին մէջն ալ գրուած է,
Կալի մէջ աշխատող եզին դունչը չկապես։ Միթէ
10 եզերո՞ւն համար Աստուծոյ հոգն էր. Չէ՞ որ մա-
նաւանդ մեզի համար կ'ըսէ. վասն զի մեզի հա-
մար գրուեցաւ. որովհետեւ ան որ կը հերկէ՝
պէտք է որ յուսով հերկէ, և ան որ ցորենը կը

11 ծեծէ՝ պէտք է որ *վայելելու յուսով" ընէ։ Թէ
որ մենք ձեզի հոգեւոր բաներ սերմանեցինք,
մե՞ծ բան մըն է՝ թէ որ ձեզմէ մարմնաւոր բա-
12 ներ հնձենք։ Թէ որ ուրիշները ձեր վրայ աս իշ-
խանութիւնը ունին, չէ՞ որ ալ աւելի մենք. բայց
մենք աս իշխանութիւնը չգործածեցինք, հապա
ամէն բանի կը համբերենք, որ Քրիստոսի աւե-
13 տարանին արգելք մը չըլլանք։ Չէ՞ք գիտեր որ
տաճարին մէջ աշխատողները տաճարէն կ'ուտեն,
ու անոնք որ սեղանին պաշտօնեաներն են՝ սե-
14 ղանէն բաժին կ'առնեն։ Ասանկ ալ Տէրը հրա-
ման տուաւ, որ աւետարանը քարոզողները ա-
15 ւետարանէն ապրին։ Բայց ես աս բաներուն մէկը
չգործածեցի, ոչ ալ աս բաները գրեցի որ ինծի
ասանկ ըլլայ. քանզի աւելի աղէկ է ինծի որ մեռ-
նիմ, քան թէ մէկը իմ պարծանքս պարապ հա-
16 նէ։ Վասն զի թէ որ ես աւետարանը քարոզեմ,
ինծի պարծանք մը չկայ, ինչու որ իմ վրաս հարկ
մըն է. մանաւանդ վա՜յ է ինծի՝ թէ որ աւետա-
17 րանը չքարոզեմ։ Ինչու որ եթէ սիրով կամաւ
ընեմ, վարձք կ'ունենամ. իսկ եթէ ակամայ՝
18 ան ինծի յանձնուած տնտեսութիւն մըն է։ Ու-
րեմն ի՞նչ վարձք կ'ըլլայ ինծի. — Ն'ըլլայ որ քա-
րոզելու ատենս Քրիստոսի աւետարանը ձրի տամ,
որ չըլլայ թէ աւետարանին մէջ իմ իշխանութիւնս
19 գէշ կերպով գործածեմ. Քանզի թէեւ ես ամե-
նէն ազատ էի, իմ անձս ամենուն ծառայ ըրի,
20 որ շատերը շահիմ. Հրէաներուն հետ Հրէայի պէս
21 եղայ՝ որ Հրէաները շահիմ. Օրէնքի տակ եղող-
ներուն հետ օրէնքի տակ եղողի պէս եղայ, [չէ
թէ ես օրէնքի տակ էի,] որ օրէնքի տակ եղող-
ներն ալ շահիմ. օրէնքի տակ չեղողներուն հետ
օրէնքի տակ չեղողի պէս եղայ, (չէ թէ ես Աս-

*Ոմանք իր յոյսը վայելելու համար

տուծմէ օրէնք չունէի, հապա Քրիստոսի օրէն-
քին տակն էի,) որ օրէնք չունեցողներն ալ շա-
22 հիմ. Տկարներուն հետ տկարի պէս եղայ, որ
տկարները շահիմ. ամենուն հետ ամէն բան եղայ,
23 որ ըլլայ թէ մէկ քանիները ապրեցնեմ։ Եւ ա-
ւետարանին համար կ'ընեմ, որ անոր
24 կցորդ ըլլամ։ Չէ՞ք գիտեր որ ասպարէզին մէջ
վազողները իրաւ կը վազեն ամէնը, բայց մէկը
կ'առնէ մրցանակը. անանկ վազեցէք որ հասնիք։
25 Եւ ամէն ով որ կը մրցի՝ ամէն բանի մէջ չափա-
ւորութիւն կը պահէ. անոնք եղծանելի պսակը
26 առնելու համար, ու մենք՝ անեղծանելին։ Ուստի
ես անանկ կը վազեմ, չէ թէ որպէս թէ անստու-
գութեամբ. ես անանկ բռնամարտութիւն կ'ը-
27 նեմ, չէ թէ որպէս թէ հովը ծեծելով. Բայց
իմ մարմինս կը ճնշեմ ու կը նուաճեմ, որ չըլ-
լայ թէ ուրիշներուն քարոզելէս ետեւ՝ ես ինքս
խոտելի գտնուիմ։

ԳԼ. Ժ

1 Չեմ ուզեր որ չգիտցող ըլլաք, եղբայրներ, որ
մեր հայրերը ամէնքն ալ ամպին տակն էին, ու
2 ամէնքն ալ ծովէն անցան, Եւ ամէնքն ալ Մով-
3 սէսով մկրտուեցան ամպին ու ծովին մէջ, Եւ ա-
4 մէնքն ալ նոյն հոգեւոր կերակուրը կերան, Ու
ամէնքն ալ նոյն հոգեւոր խմելիքը խմեցին, ին-
չու որ կը խմէին այն հոգեւոր վէմէն որ անոնց
5 հետը կ'երթար. ու այն վէմը Քրիստոս էր։ Բայց
չէ թէ անոնցմէ շատերուն հաճեցաւ Աստուած,
6 ինչու որ անապատին մէջ փռուած ինկան։ Ու այն
բաները մեզի օրինակ եղան, որ չար բաներու
ցանկացող չըլլանք, ինտոր որ անոնք ցանկա-
7 ցան։ Ոչ ալ կռապաշտ ըլլաք, ինչպէս որ անոնց-
մէ ոմանք. ինտոր որ գրուած է, Ժողովուրդը

նստաւ ուտելու և խմելու, ու ելան խաղալու։
8 Եւ պոռնկութիւն չընենք, ինտոր որ անոնցմէ ո-
մանք պոռնկեցան, ու մէկ օրուան մէջ քսան-
9 ուերեք հազար հոգի ինկան։ Եւ Քրիստոսը չփոր-
ձենք, ինչպէս որ անոնցմէ ոմանք փորձեցին, ու
10 օձերէն ջարդուեցան։ Եւ տրտունջ չընէք, ին-
տոր որ անոնցմէ ոմանք տրտունջ ըրին, ու սա-
11 տակիչէն ջարդուեցան։ Բայց աս ամէն բաները
իբրև օրինակ կը պատահէր անոնց. իսկ մեզի՝ ո-
րոնց դարերուն վերջը հասաւ, խրատ ըլլալու
12 համար գրուեցաւ։ Ուստի ան որ կը սեպէ թէ
հաստատուն կեցած է, թող զգուշանայ որ չըլ-
13 լայ թէ իյնայ։ Ձեզի մարդկային փորձութենէ 'ի
զատ ուրիշ չէ պատահած. բայց Աստուած հա-
ւատարիմ է, որ ձեզ պիտի չթողու ձեր կարո-
ղութենէն աւելի փորձուելու, հապա փորձու-
թեանը հետ ազատութեան միջոց մըն ալ պիտի
տայ, որ կարող ըլլաք համբերելու։
14 Անոր համար, իմ սիրելիներս, կռապաշտութե-
15 նէ փախէք։ Որպէս թէ իմաստուններու հետ կը
խօսիմ. դուք դատեցէք ինչ որ կը գրուցեմ։
16 Օրհնութեան գաւաթը որ մենք կ'օրհնենք՝ չէ՞
որ Քրիստոսի արեանը հաղորդութիւնն է. հացը
որ մենք կը կտրենք՝ չէ՞ որ Քրիստոսի մարմնոյն
17 հաղորդութիւնն է։ Ինչու որ մենք շատերնիս
մէկ հաց՝ մէկ մարմին ենք, վասն զի ամէնքս ալ
18 այն մէկ հացէն կը վայելենք։ Նայեցէք մարմնա-
ւոր Իսրայելին. չէ՞ որ այն զոհուածները ուտող-
19 ները սեղանին հաղորդ են։ Ուրեմն ի՞նչ կ'ըսեմ,
թէ կուռքը բա՞ն մըն է, կամ թէ կուռոց զոհ-
20 ուածը բա՞ն մըն է։ Բայց — կ'ըսեմ թէ այն բա-
ները որ հեթանոսները զոհ կ'ընեն՝ դեւերուն կը
զոհեն ու չէ թէ Աստուծոյ. ու չեմ ուզեր որ
դուք դեւերուն հաղորդ ըլլաք. չէք կրնար խմել
21 Տէրոջը գաւաթը ու դեւերուն գաւաթը։ Չէք

կրնար վայելել Տէրոջը սեղանէն ու դեւերուն սե-
22 ղանէն։ Նախանձի՞ գրգռենք Տէրը. միթէ մենք
անկէ զօրաւո՞ր ենք։
23 Ամէն բան ինծի օրինաւոր է, բայց չէ թէ ամէն
բան օգտակար. ամէն բան ինծի օրինաւոր է,
24 բայց չէ թէ ամէն բան շինութիւն կ՚ընէ։ Չըլլայ
որ մէկը միայն իր անձին օգուտը փնտռէ, հապա
25 իր ընկերին ալ։ Ամէն ինչ որ սպանդանոցին մէջ
կը ծախուի՝ կերէք, ու քննութիւն մի ընէք
26 խղճմտանքի համար. ինչու որ երկիրը իր լեցու-
27 թեամբը Տէրոջն է։ Ու թէ որ անհաւատներէն
մէկը ձեզ կերակուրի հրաւիրէ, և ուզէք երթալ,
ամէն ինչ որ առջեւնիդ դրուի՝ կերէք, ու քննու-
28 թիւն մի ընէք խղճմտանքի համար։ Հապա թէ
որ մէկը ձեզի ըսէ թէ Ասիկա կուռքի զոհուած
է, [illegible] իրեն համար որ ձեզի իմացուց՝ ու
29 խղճմտանքի համար մի ուտէք.* Սակայն խղճ-
մտանք կ՚ըսեմ՝ չէ թէ ձերը, հապա ընկերինը։
Բայց ինչո՞ւ իմ ազատութիւնս պիտի դատուի
30 ուրիշին խղճմտանքէն. Թէ որ ես †շնորհակալու-
թեամբ կը վայելեմ՝ ինչո՞ւ հայհոյուիմ, որուն
31 համար որ կը գոհանամ։ Արդ թէ ուտէք, թէ
խմէք և թէ ինչ գործ որ ընէք, ամէն բան
32 Աստուծոյ փառքին համար ըրէք։ Գայթակղու-
թեան պատճառ մի ըլլաք՝ ոչ Հրէաներուն, ոչ
‡Հեթանոսներուն և ոչ Աստուծոյ եկեղեցիին.
33 Ինչպէս որ ես ալ ամէն կերպով ամենուն հաճոյ
կ՚ըլլամ, ու չեմ փնտռեր իմ անձիս օգուտը,
հապա շատերունը՝ որ փրկուին։

---

*Ոմանք կ՚աւելցընեն ինչու որ երկիրը իր լեցու-
թեամբը Տէրոջն է.
†Կամ շնորհքով
‡Յուն. Յոյներուն

ԳԼ. ԺԱ

1 Ինծի նմանող եղէք, ինչպէս որ ես ալ Քրիստո-
2 սի։ Արդ ձեզ կը գովեմ, եղբայրներ, որ ամէն
բանի մէջ զիս կը յիշէք, ու ապսպրածներս կը
3 բռնէք՝ ինչոր որ ես ձեզի աւանդեցի։ Բայց կ՚ու-
զեմ որ գիտնաք թէ ամէն էրիկ մարդուն գլուխը
Քրիստոս է, ու կնկանը գլուխը՝ էրիկ մարդը. և
4 Քրիստոսի գլուխը՝ Աստուած։ Ամէն էրիկ մարդ
որ գլուխը գոց աղօթքի կը կայնի կամ մարգա-
րէութիւն կ՚ընէ՝ անպատիւ կ՚ընէ իր գլուխը։
5 Ու ամէն կնիկ որ գլուխը բաց աղօթքի կը կայնի
կամ մարգարէութիւն կ՚ընէ՝ անպատիւ կ՚ընէ իր
գլուխը. ինչու որ մի և նոյն բան կը սեպուի որ-
6 պէս թէ ածիլուած էր։ Վասն զի թէ որ կնիկը
չծածկուիր, թող իր մազերն ալ կտրէ. հապա
թէ որ ամօթ է կնկան մը իր մազերը կտրել կամ
7 ածիլուիլ՝ թող ծածկուի։ Էրիկ մարդու պէտք չէ
իր գլուխը ծածկել, ինչու որ Աստուծոյ պատ-
կերը ու փառքն է. բայց կնիկը էր էրկանը փառքն
8 է։ Քանզի չէ թէ էրիկ մարդը կնիկէն է, հապա
9 կնիկը՝ էրիկ մարդէն։ Ինչու որ էրիկ մարդը չըս-
տեղծուեցաւ կնկանը համար, հապա կնիկը՝ էր-
10 կանը համար։ Աս պատճառով պէտք է որ կնիկը
իր գլխուն *շուք դնէ հրեշտակներուն համար։
11 Բայց ոչ կնիկը առանց էրիկ մարդու կ՚ըլլայ, ու
12 ոչ էրիկ մարդը առանց կնկան՝ Տէրոջմով. վասն
զի ինչպէս որ կնիկը էրիկ մարդէն է, անանկ ալ
էրիկ մարդը կնկան միջոցով, բայց ամէնը Աս-
13 տուծմէ։ Դուք ձեզմէ դատեցէք. կը վայլէ՞ կնիկ
մարդու գլուխը բաց աղօթքի կայնիլ Աստուծոյ
14 առջեւը. Չէ՞ որ բնութիւնն ալ կը սորվեցընէ ձեզի

---

*Յուն. իշխանութիւն

որ էրիկ մարդ մը թէ որ երկար մազերով է՝ ի-
15 րեն անարգանք է. Բայց կնիկը թէ որ երկար
մազերով է՝ իրեն փառք է. ինչու որ մազերը
16 ծածկոցի տեղ տրուած են իրեն։ Սակայն թէ որ
մէկը հակառակող ըլլալ կ'ուզէ, մենք անանկ սո-
վորութիւն չունինք, ոչ ալ Աստուծոյ եկեղեցի-
ները.
17 Բայց աս պատուիրելով՝ ձեզ չեմ գովեր, ին-
չու որ ձեր ժողվուիլը չէ թէ աղէկ՝ հապա գէշ
18 արդիւնք կ'ունենայ։ Քանզի նախ՝ երբոր մէկտեղ
կը ժողվուիք եկեղեցւոյն մէջ, կը լսեմ որ բա-
ժանմունքներ կան ձեր մէջը, և ըստ մասին
19 կը հաւատամ. Վասն զի հարկաւ ձեր մէջը
հերձուածողութիւններ ալ պիտի ըլլան, որ ձեր
20 մէջը եղող ընտիրները երեւնան. Ուստի դուք
որ մէկտեղ կը ժողվուիք, անիկա Տէրունական
21 ընթրիքը ուտել չէ. Ինչու որ ուտելու ատենը
ամէն մէկը առաջ իր ընթրիքը կ'առնէ. ու
մէկը անօթի կը մնայ ու միւսը կը գինովնայ.
22 Միթէ ուտելու ու խմելու համար տուն չունի՞ք,
կամ թէ Աստուծոյ եկեղեցի՞ն կ'անարգէք, և
ամօթով կ'ընէք չքաւորները. ձեզի ի՞նչ ըսեմ,
23 ձեզ գովե՞մ. աս բանին մէջ չեմ գովեր. Ինչու
որ ես Տէրոջմէն ընդունեցի ան որ ձեզի ալ ա-
ւանդեցի՝ թէ Տէր Յիսուս իր մատնուած գիշերը
24 հաց առաւ. Եւ գոհանալով՝ կտրեց ու ըսաւ,
Առէք ու կերէք, աս է իմ մարմինս որ ձեզի
համար կը կտրուի. ասիկա ըրէք զիս յիշելու
25 համար. Նոյնպէս ալ գաւաթը ընթրիքէն ետե-
ւ առաւ ու ըսաւ, Աս գաւաթը նոր ուխտ է իմ
արիւնովս. ասիկա ըրէք քանի անգամ որ խմե-
26 լու ըլլաք՝ զիս յիշելու համար. Վասն զի քանի
անգամ որ աս հացը ուտէք ու աս գաւաթը
խմէք, Տէրոջը մահը կը պատմէք՝ մինչև որ ինքը
27 գայ. Ուստի ով որ աս հացը ուտէ կամ Տէրոջը

գաւաթը խմէ անարժանաբար, պարտական պիտի
28 ըլլայ Տէրոջը մարմնոյն և արեանը։ Ուրեմն թող
մարդ իր անձը փորձէ, ու այսպէս ան հացէն
29 ուտէ և ան գաւաթէն խմէ. Վասն զի ան որ
անարժանաբար կ'ուտէ ու կը խմէ, իր անձին
դատապարտութիւնը կ'ուտէ ու կը խմէ, ինչու որ
30 Տէրոջը մարմինը չորոշեր. Ասոր համար ձեր մէջը
շատ հիւանդներ ու ցաւագարներ կան, և շա-
31 տեր ալ կը ննջեն. Ինչու որ եթէ ինքզինքնիս
32 դատելու ըլլայինք՝ պիտի չդատուէինք. Իսկ
երբոր կը դատուինք՝ Տէրոջմէ կը խրատուինք,
33 որ աշխարհի հետ չդատապարտուինք. Ուստի,
իմ եղբայրներս, երբոր մէկտեղ կը ժողվուիք
34 ուտելու, իրարու սպասեցէք։ Իսկ թէ որ մէկը
անօթի է՝ թող իր տանը մէջ ուտէ, որ չըլլայ թէ
դատապարտութեան համար ժողվուիք. Եւ ու-
րիշ բաները ձեզի եկած ատենս պիտի պատուիրեմ.

ԳԼ. ԺԲ

1 Բայց հոգևոր պարգևներուն վրայով չեմ ուզեր,
2 եղբայրներ, որ չգիտցող ըլլաք. Դուք գիտէք
որ երբ հեթանոս էիք, մունջ կուռքերուն
կը տարուէիք՝ ինչպէս որ կ'առաջնորդուէիք.
3 Ուստի ես ձեզի կ'իմացընեմ թէ մէկը չըլլար որ
Աստուծոյ Հոգիովը խօսի՝ ու Յիսուսը նզովեալ
կոչէ. և մէկն ալ չկրնար Յիսուսը Տէր կոչել՝
4 եթէ ոչ Հոգւով Սրբով. Եւ պարգևները զանա-
5 զան են, բայց նոյն Հոգին է. Նաև պաշտօնները
6 զանազան են, բայց նոյն Տէրն է. Նոյնպէս ներ-
գործութիւնները զանազան են, բայց նոյն
Աստուածն է՝ որ կը ներգործէ ամէնը ամէն
7 բանի մէջ։ Բայց ամէն մէկուն Հոգւոյն յայտնու-
8 թիւնը տրուած է օգուտի համար. Մէկու մը՝
Հոգիով իմաստութեան խօսք տրուած է, ուրի-

չին գիտութեան խօսք՝ նոյն Հոգիին տուած չա-
9 փովը. °Միւսին հաւատք՝ նոյն Հոգիովը. ուրիշին
10 բժշկութեան պարգեւներ՝ նոյն Հոգիովը. Ուրիշին՝
հրաշագործութիւններ, ուրիշին՝ մարգարէու-
թիւն, ուրիշին՝ հոգւոց ընտրութիւն, ուրիշին՝
զանազան լեզուներ, ուրիշին՝ լեզուներու թարգ-
11 մանութիւն։ Բայց աս ամէնը մի եւ նոյն Հոգին
կը ներգործէ, եւ ամէն մէկուն զատ զատ կը բաժնէ՝
ինչպէս որ կ'ուզէ։
12 Վասնզի ինչպէս որ մարմինը մէկ է ու շատ ան-
դամներ ունի, եւ °ան մարմինին բոլոր անդամները
որ շատ են՝ մէկ մարմին են, անանկ ալ Քրիս-
13 տոս։ Ինչու որ մենք ամէնքս մէկ Հոգիով մէկ
մարմին ըլլալու մկրտուեցանք, թէ Հրեաներ, թէ
հեթանոսներ, թէ ծառաներ, թէ ազատներ, եւ
14 ամէնքս ալ մէկ Հոգիէ խմեցինք։ Ինչու որ մար-
15 մինը մէկ անդամ մը չէ, հապա շատ։ Թէ որ
ոտքը ըսէ, Որովհետեւ ես ձեռք չեմ՝ մարմինէն
16 չեմ, չէ թէ անով ան մարմինէն չէ։ Եւ թէ որ
ականջը ըսէ, Որովհետեւ ես աչք չեմ՝ մարմինէն
17 չեմ, չէ թէ անով ան մարմինէն չէ։ Թէ որ բո-
լոր մարմինը աչք ըլլար, լսելիքը ո՞ւր պիտի ըլլար.
ւ թէ որ բոլորը լսելիք ըլլար, ո՞ւր պիտի ըլլար
18 հոտոտելիքը։ Բայց հիմա Աստուած անդամները
դրաւ՝ անոնց ամէն մէկը մարմինին մէջ, ինչպէս
19 որ ինքը ուզեց։ Հապա թէ որ ամէնը մէկ ան-
20 դամ ըլլար, մարմինը ո՞ւր պիտի ըլլար։ Բայց
հիմա անդամները շատ են, ու մարմինը՝ մէկ։
21 Չկրնար աչքը ըսել ձեռքին թէ Դուն ինծի պէտք
չես. եւ ոչ գարձեալ գլուխը ոտքերուն՝ թէ Ինծի
22 պէտք չէք։ Մանաւանդ մարմնոյն ան անդամ-
ները որ շատ տկար կ'երեւնան՝ աւելի հարկաւոր
23 են. Ու մարմնոյն ան անդամները որ յաւէտ ան-

°Ոմանք ան մէկ

պատիւ ըլլալ կը սեպենք, անոնց վրայ աւելի
պատիւ կը դնենք. ու մեր անվայելուչ
24 անդամները աւելի վայելչութիւն ունին։ Ու մեր
վայելուչ անդամներուն բան մը պէտք չէ. բայց
Աստուած մարմինը բարեխառնեց, ու պակասու-
25 թիւն ունեցողին աւելի պատիւ տուաւ, Որպէս զի
մարմնոյն մէջ երկպառակութիւն չըլլայ, հապա
անդամները մի եւ նոյն հոգը ունենան իրարու վրայ։
26 Եւ թէ որ մէկ անդամը նեղութիւն կրէ, բոլոր
անդամները կը նեղին անոր հետը. եւ թէ որ փա-
ռաւորի մէկ անդամը, բոլոր անդամները կ'ու-
27 րախանան անոր հետը։ Արդ դուք Քրիստոսի
մարմինն էք, ու մասնաւորապէս անոր անդամ-
28 ները։ Եւ Աստուած եկեղեցւոյն մէջը դրաւ մէկ
քանիները, նախ՝ առաքեալներ, երկրորդ՝ մար-
գարէներ, երրորդ՝ վարդապետներ, ետքը հրաշք-
ներ, ետքը բժշկութիւններու պարգեւներ, օգ-
նութիւններ, կառավարութիւններ, լեզուներու
29 տեսակներ։ Միթէ ամէնը առաքեալնե՞ր են. միթէ
ամէնը մարգարէնե՞ր են. միթէ ամէնը վարդա-
պետնե՞ր են. միթէ ամէնը հրաշքնե՞ր կը գործեն.
30 Միթէ ամէնը բժշկութեան պարգեւնե՞ր ունին.
միթէ ամէնը լեզունե՞ր կը խօսին. միթէ ամէնը
թարգմանութի՞ւն կ'ընեն։
31 Բայց դուք նախանձաւոր եղէք ան շնորհք-
ներուն որ լաւագոյն են. եւ ես՝ ալ աւելի աղէկ
ճամբայ մը կը ցուցընեմ ձեզի։

ԳԼ. ԺԳ

1 Թէ որ մարդոց ու հրեշտակներուն լեզուները
խօսիմ՝ եւ սէր չունենամ, ես ձայն տուող պղինձի
2 պէս եղայ, կամ հնչեցող ծնծղաներու պէս։ Եւ
թէ որ մարգարէութիւն ունենամ, ու հասկընամ
ամէն խորհուրդները ու ամէն գիտութիւնը, եւ

թէ որ ունենամ ամէն հաւատքը մինչեւ լեռները
3 տեղափոխելու, ու սէր չունենամ՝ ոչինչ եմ։ Ու
թէ որ իմ բոլոր ստացուածքս աղքատներուն կեր-
ցնեմ, ու իմ մարմինս այրուելու տամ, և սէր
4 չունենամ՝ օգուտ մը չեմ ունենար։ Սէրը եր-
կայնամիտ է, քաղցր է. սէրը չնախանձիր, սէրը
5 չգոռոզանար, չհպարտանար, Անվայել վարմունք
չունենար, իրենը չփնտռեր, բարկութեան չգրգռ-
6 ուիր, չարութիւն չխորհիր, Անիրաւութեան վրայ
չխնդար, հապա ճշմարտութեան խնդակից կ՚ըլ-
7 լայ։ Ամէն բանի կը դիմանայ, ամէն բանի կը հա-
ւատայ, ամէն բանի կը յուսայ, ամէն բանի կը
8 համբերէ։ Սէրը բնաւ չիյնար. բայց թէ որ մար-
գարէութիւններ ըլլան՝ պիտի խափանին, թէ որ
լեզուներ՝ պիտի դադարին, թէ որ գիտութիւն՝
9 պիտի խափանի։ Ինչու որ շատէն քիչը գիտենք՝
10 ու շատէն քիչը կը մարգարէանանք։ Բայց երբոր
կատարեալը գայ, անատենը շատէն քիչը պիտի
11 խափանի։ Երբոր տղայ էի՝ տղայի պէս կը խօսէի,
տղայի պէս կը խորհէի, տղայի պէս համարում
ունէի. բայց երբոր այր եղայ, տղայութեան բա-
12 ները մէկդի ձգեցի։ Քանզի հիմա մենք որպէս թէ
հայելիի մէջ կը տեսնենք անյայտ կերպով, բայց
անատենը երես առ երես. հիմա շատէն քիչ մը
տեղեակ եմ, բայց անատենը անանկ պիտի ճանչ-
13 նամ՝ ինչպէս որ ճանչցուեցայ։ Ուստի հիմա կը
մնայ հաւատք, յոյս, սէր՝ աս երեքը, ու ասոնց
մեծագոյնը սէրն է։

ԳԼ. ԺԴ

1 Սիրոյ ետեւէն գացէք, ու հոգեւոր պարգեւներուն
նախանձաւոր եղէք, մանաւանդ մարգարէութիւն
2 ընելու։ Վասն զի ան որ օտար լեզուով կը խօսի՝
չէ թէ մարդոց կը խօսի, հապա Աստուծոյ. ինչու

որ մէկը չկայ որ իմանայ, բայց անիկա հոգիով
3 խորհուրդներ կը խօսի։ Սակայն ան որ կը մար-
գարէանայ, մարդոց կը խօսի՝ շինութիւն ու յոր-
4 դորանք և մխիթարութիւն տալու։ Ան որ օտար
լեզուով կը խօսի՝ իր անձին շինութիւն կ՚ընէ, ու
ան որ կը մարգարէանայ՝ եկեղեցւոյն շինութիւն
5 կ՚ընէ։ Կ՚ուզեմ որ դուք ամէնքդ լեզուներ խօ-
սիք, բայց մանաւանդ որ մարգարէութիւն ընէք,
ինչու որ ալ աղէկ է ան՝ որ կը մարգարէանայ,
քան թէ ան՝ որ լեզուներ կը խօսի. միայն թէ
թարգմանելու ըլլայ, որ եկեղեցին շինութիւն
առնէ։
6 Ու հիմա, եղբայրներ, թէ որ ես ձեզի գամ լե-
զուներ խօսելով, ի՞նչ օգուտ պիտի ընեմ ձեզի՝
թէ որ չխօսիմ ձեզի կամ յայտնութիւնով, կամ
գիտութիւնով, կամ մարգարէութիւնով, կամ
7 վարդապետութիւնով։ Ու ձայն տուող ան-
կենդան բաները անգամ, թէ սրինգ և թէ
քնար, եթէ ձայներու զանազանութիւն չընեն՝
ի՞նչպէս պիտի ճանչցուի սրինգով կամ քնա-
8 րով հնչուածը։ Ինչու որ եթէ փողն ալ անո-
րոշ ձայն հանէ, ո՞վ պիտի պատրաստուի պա-
9 տերազմի։ Անանկ ալ դուք թէ որ լեզուով բա-
ցայայտ խօսք չըրուցէք, խօսուածը ինտո՞ր պի-
տի հասկցուի. ինչու որ օդին խօսողներ պիտի
10 ըլլաք։ Ահա աշխարհի մէջ այնքան տեսակ ձայ-
ներ կան, և անոնց մէկը առանց նշանակութեան
11 չէ։ Ուստի թէ որ ան ձայնին զօրութիւնը չգիտ-
նամ, ես խօսողին բարբարոս մը պիտի ըլլամ,
12 խօսողն ալ ինծի բարբարոս մը պիտի ըլլայ։ Ա-
նանկ ալ դուք որովհետև հոգևոր պարգևներու
նախանձաւոր էք, եկեղեցւոյն շինութեանը հա-
մար խնդրեցէք որ աւելնաք նոյն պարգևներովը։
13 Անոր համար ան որ օտար լեզուով կը խօսի, ա-
14 ղօթք թող ընէ որ թարգմանէ ալ։ Քանզի թէ որ

Ես աղօթք ընեմ օտար լեզուով, իմ հոգիս ա-
15 ղօթք կ'ընէ, բայց միտքս անպտուղ է։ Ուրեմն
ի՞նչ է. աղօթք ընեմ հոգիով, աղօթք ընեմ
մտաւորութեամբ ալ. սաղմոս երգեմ հոգիով,
16 սաղմոս երգեմ մտաւորութեամբ ալ։ Հապա թէ
չէ՝ թէ որ դուն հոգիով օրհնութիւն ընես, անի-
կա որ տգէտի տեղ կայներ է՝ ինտո՞ր Ամէն պիտի
ըսէ քու գոհութիւն տալու ատենդ. ինչու որ ան
17 քու ըսածդ չիմանար։ Որ թէպէտ դուն աղէկ
գոհութիւն կ'ընես, բայց միւսը շինութիւն չառ-
18 ներ։ *Աստուծմէ կը գոհանամ որ ձեր ամենէն
19 աւելի լեզուներով կը խօսիմ. Բայց եկեղեցւոյն
մէջ կ'ուզեմ հինգ խօսք մտաւորութեամբս խօսիլ,
որ ուրիշներուն ալ սորվեցընեմ. քան թէ բիւ-
րաւոր խօսքեր օտար լեզուով։
20 Եղբայրներ, մտքով տղաք մի ըլլաք. հապա
չարութիւն ճանչնալու կողմէ տղաք եղէք, ու մտ-
21 քով չափահաս եղէք։ Օրէնքին մէջ գրուած է
թէ Օտար լեզուներով ու օտար շրթունքներով
աս ժողովուրդին հետ պիտի խօսիմ, սակայն և
այնպէս ինծի մտիկ պիտի չընեն, կ'ըսէ Տէրը։
22 Ուրեմն լեզուները նշանի համար են՝ ոչ թէ հա-
ւատացեալներուն, հապա անհաւատներուն, բայց
մարգարէութիւնը ոչ թէ անհաւատներուն, հա-
23 պա հաւատացեալներուն։ Արդ թէ որ բոլոր ե-
կեղեցին մէկտեղ գայ, ու ամէնն ալ օտար լե-
զուներով խօսելու ըլլան, և հոն մտնեն տգէտ-
ներ կամ անհաւատներ, պիտի չըսե՞ն թէ դուք
24 խենթեցեր էք։ Իսկ թէ որ ամէնն ալ մարգարէ-
անան, ու հոն մէկ անհաւատ մը կամ տգէտ մը
մտնէ, ամենէն ալ կը յանդիմանուի, ամենէն ալ
25 կը քննուի, Ու անոր սրտին ծածուկ բաները
յայտնի կ'ըլլան. և այսպէս երեսի վրայ ինկած՝

*Ոմանք. իմ Աստուծմէս

Աստուծոյ երկրպագութիւն պիտի ընէ, ու խոս-
տովանի թէ իրաւցընէ Աստուած ձեր մէջն է։
26 Ուստի ի՞նչ է, եղբայրներ. երբոր մէկտեղ կը
ժողվուիք, ձեզմէ ամէն մէկը սաղմոս ունի, վար-
դապետութիւն ունի, լեզու ունի, յայտնութիւն
ունի, թարգմանութիւն ունի. ամէնը շինութեան
27 համար թող ըլլայ։ Թէ որ մէկը օտար լեզու կը
խօսի, երկու հոգի, և թէ շատը՝ երեք թող ըլ-
լան, և ան ալ՝ մէկիկ մէկիկ, ու մէկը թող թարգ-
28 մանէ։ Բայց թէ որ թարգմանող չըլլայ, եկե-
ղեցւոյն մէջ լուռ թող կենայ, և ինքնիրեն ու
29 Աստուծոյ թող խօսի։ Իսկ մարգարէները երկու
կամ երեք հոգի թող խօսին, ու միւսները թող
30 քննութիւն ընեն։ Հապա թէ որ նստողներէն ու-
րիշ մէկուն ալ բան մը յայտնուելու ըլլայ, առա-
31 ջինը թող լռէ։ Ինչու որ ամէնքդ ալ կրնաք
մէկիկ մէկիկ մարգարէանալ, որ ամէնն ալ սոր-
32 վին ու ամէնն ալ մխիթարուին։ Եւ մարգարէ-
ներուն հոգիները մարգարէներուն հնազանդ են։
33 Ինչու որ Աստուած խռովութեան Աստուած չէ,
հապա խաղաղութեան, ինչպէս որ սուրբերուն
բոլոր եկեղեցիներուն մէջ։
34 Ձեր կնիկները եկեղեցիներուն մէջ լուռ կենան,
ինչու որ անոնց հրաման չկայ խօսելու, հապա
հնազանդ ըլլալու, ինչպէս որ օրէնքն ալ կ'ըսէ։
35 Բայց թէ որ բան սորվիլ կ'ուզեն, տունը իրենց
էրիկներուն թող հարցընեն. քանզի կնիկներուն
36 անվայել է եկեղեցւոյ մէջ խօսիլը։ Միթէ Աս-
տուծոյ խօսքը ձեզմէ՞ ելաւ, կամ թէ միայն ձեզի՞
37 հասաւ։ Թէ որ մէկը կը կարծէ թէ ինքը մար-
գարէ է, կամ հոգևոր, թող հաստատ գիտնայ
թէ ինչ որ ձեզի գրեցի՝ Տէրոջը պատուէրներն են.
38 Բայց թէ որ մէկը տգէտ է՝ թող տգէտ ըլլայ։
39 Ուստի, եղբայրներ, մարգարէութիւն ընելու նա-
խանձաւոր եղէք, ու լեզուներ խօսիլն ալ մի ար-
40 գիլէք։ Եւ ամէն բան վայելչութեամբ և կարգաւ
թող ըլլայ։

ԳԼ. ԺԵ

1 Եղբայրներ, ձեզի կ՚իմացընեմ այն աւետարանը
որ ես ձեզի քարոզեցի, որ նաև ընդունեցիք ու
2 անոր վրայ հաստատուած էք. Որով կը փրկուիք
ալ, թէ որ ամուր բռնէք այն խօսքը որ ես ձեզի
քարոզեցի, միայն՝ եթէ պարապ տեղը հաւատա-
3 ցած չէք։ Ինչու որ պինտ առաջ ես ձեզի ա-
ւանդեցի անիկա՝ որն որ ես ալ ընդունեցի, թէ
Քրիստոս մեր մեղքերուն համար մեռաւ գիրքե-
4 րուն ըսածին համեմատ, Եւ թէ թաղուեցաւ ու
յարութիւն առաւ երրորդ օրը՝ գիրքերուն ըսա-
5 ծին համեմատ, Եւ թէ երևցաւ Կեփասին, ու ետքը
6 տասներկուքին. Ետքը հինգ հարիւրէն աւելի
եղբայրներուն մէկտեղ երևցաւ, որոնցմէ շատերը
7 մինչև հիմա կան, և ոմանք ալ ննջեցին. Ու ետքը
երևցաւ Յակոբոսին, ետքը բոլոր առաքեալնե-
8 րուն։ Ամենէն ետքը որպէս թէ վիժածի մը՝ ինծի
9 ալ երևցաւ։ Վասն զի ես առաքեալներուն ա-
մենէն յետինն եմ, որ արժանի ալ չեմ առաքեալ
ըսուելու, ինչու որ Աստուծոյ եկեղեցին հալա-
10 ծեցի։ Միայն թէ Աստուծոյ շնորհօքն եմ՝ ինչ որ
եմ. և անոր շնորհքը որ իմ վրաս է, պարապ
բան մը չեղաւ, հապա ես անոնց ամենէն աւելի
աշխատեցայ. և չէ թէ ես, հապա Աստուծոյ
11 շնորհքը որ իմ հետս էր։ Ուստի թէ ես և թէ
անոնք ասանկ կը քարոզենք, ու դուք ասանկ
հաւատացիք։

12 Ուրեմն թէ որ Քրիստոս կը քարոզուի՝ որ մե-
ռելներէն յարութիւն առած է, ի՞նչպէս ձեզմէ
մէկ քանիները կ՚ըսեն թէ Մեռելոց յարութիւն
13 չկայ։ Թէ որ մեռելոց յարութիւն չկայ, ուրեմն
14 Քրիստոս ալ յարութիւն առած չէ. Եւ թէ որ
Քրիստոս յարութիւն առած չէ, ուրեմն մեր քա-

րոզութիւնը պարապ է, ու ձեր հաւատքն ալ
15 պարապ է. Եւ մենք ալ Աստուծոյ սուտ վկա-
ները գտնուած կ՚ըլլանք. որովհետև Աստուծոյ
համար վկայութիւն տուինք, թէ Ինքը մեռելնե-
րէն յարուց Քրիստոսը. որ իրաւ չյարուց զանի-
կա, թէ որ մեռելները յարութիւն չեն առներ.
16 Քանզի թէ որ մեռելները յարութիւն չեն առ-
17 ներ, Քրիստոս ալ յարութիւն առած չէ. Եւ թէ
որ Քրիստոս յարութիւն առած չէ, ձեր հաւատ-
քը պարապ է, դուք տակաւին ձեր մեղքերուն մէջն
18 էք. Նոյնպէս ալ Քրիստոսով ննջողները կորսը-
19 ւած են։ Թէ որ միայն այս կեանքիս համար Քրիս-
տոսի յուսացած ենք, մենք բոլոր մարդոցմէն
20 աւելի խղճալի ենք։ Բայց հիմա Քրիստոս մեռել-
ներէն յարութիւն առած է՝ ննջեցելոց առջի պը-
21 տուղը։ Քանզի որովհետև մարդով եղաւ մահը,
22 մարդով ալ մեռելոց յարութիւնը։ Վասն զի ինչ-
պէս որ Ադամով ամէնը կը մեռնին, անանկ ալ
23 Քրիստոսով ամէնը կենդանի պիտի ըլլան։ Բայց
ամէն մէկը իր կարգովը. առջի պտուղը Քրիս-
տոս, ետքը Քրիստոսինները՝ իր գալու ատենը.
24 Անկէ ետև կու գայ վախճանը, երբոր թագաւո-
րութիւնը պիտի տայ Աստուծոյ ու Հօրը ձեռքը,
երբոր խափանէ ամէն իշխանութիւնը և ամէն
25 պետութիւնը ու զօրութիւնը։ Ինչու որ անոր
պէտք է թագաւորութիւն ընել՝ մինչև որ բոլոր
26 թշնամիները իր ոտքերուն տակը դնէ։ Վերջին
թշնամին որ պիտի խափանի՝ մահն է. վասն զի
գրուած է, Ամէն բան անոր ոտքերուն տակը
27 հնազանդեցուց. Բայց երբոր կ՚ըսէ թէ Ամէն բան
անոր հնազանդած է, յայտնի է թէ բաց ՚ի անկէ՝
28 որ ամէնը անոր հնազանդեցուց։ Ու երբոր ամէնը
անոր հնազանդ ըլլայ, անատենը Որդին ինքն ալ
պիտի հնազանդի անոր՝ որ իրեն հնազանդեցուց
ամէնը, որպէս զի Աստուած ըլլայ ամէնը ամէն

29 բանի մէջ․ Հապա թէ չէ՝ ի՞նչ պիտի ընեն ա-
նոնք որ մեռելներուն համար կը մկրտուին, թէ
որ մեռելները բնաւ յարութիւն չառնեն․ ինչո՞ւ
30 ուրեմն անոնց համար կը մկրտուին․ Ինչո՞ւ հա-
մար մենք ալ վտանգի մէջ կը մնանք ամէն
31 ժամ, Վկայ կը բերեմ ան պարծանքը՝ որ ձեր
վրայ ունիմ Քրիստոս Յիսուս մեր Տէրոջմով, որ
32 ես ամէն օր կը մեռնիմ։ Թէ որ Եփեսոսի մէջ
մարդոց նման գազաններու հետ մարտնչեցայ,
ի՞նչ օգուտ է *ինծի, թէ որ մեռելները յարու-
թիւն չառնեն․" ուտենք ու խմենք, ինչու որ վա-
33 ղը կը մեռնինք։ Մի խաբուիք․ չար ընկերակցու-
34 թիւնները աղէկ բարքը կ՚ապականեն։ Արդարու-
թիւնով զգաստացէք ու մեղք մի գործէք, ին-
չու որ ձեզմէ ոմանք Աստուծոյ գիտութիւնը չու-
նին․ ձեզ ամչցնելու համար կը գրուցեմ․
35 Բայց պիտի ըսէ մէկը թէ Ինտո՞ր մեռելները
յարութիւն կ՚առնեն, կամ թէ ի՞նչ մարմնով
36 կու գան․ Անմիտ, դուն անիկա որ կը սերմանես,
37 թէ որ չմեռնի՝ չկենդանանար․ Ու ան որ կը սեր-
մանես, չէ թէ ան մարմինը որ պիտի բուսնի՝ կը
սերմանես, հապա մերկ հատ մը՝ թէ ցորենի ըլ-
38 լայ և թէ մէկ ուրիշ սերմի․ Ու Աստուած անոր
մարմին կու տայ ինչպէս որ կ՚ուզէ, և ամէն մէկ
39 սերմին իր յատուկ մարմինը․ Ամէն մարմին մէկ
մարմին չէ, հապա մարդոց մարմինը ուրիշ է, ու
անասնոց մարմինը ուրիշ, ձուկերուն ալ ուրիշ,
40 և թռչուններունը ուրիշ․ Երկնաւոր մարմիններ
ալ կան, երկրաւոր մարմիններ ալ․ բայց երկնա-
ւորներուն փառքը ուրիշ է, ու երկրաւորնե-
41 րունը ուրիշ․ Արևուն փառքը ուրիշ է, ու լուս-
նին փառքը ուրիշ, և աստղերուն փառքը ու-

*կամ ինծի․ թէ որ մեռելները յարութիւն չառ-
նեն,

րիշ․ ու մէկ աստղը միւս աստղէն տարբեր է
42 փառքով։ Ասանկ ալ է մեռելոց յարութիւնը․
Մարմինը ապականութիւնով կը սերմանուի, ու
43 անապականութիւնով յարութիւն կ՚առնէ․ Անար-
գութիւնով կը սերմանուի, ու փառքով յարու-
թիւն կ՚առնէ․ տկարութիւնով կը սերմանուի,
44 ու զօրութիւնով յարութիւն կ՚առնէ․ Կը սեր-
մանուի շնչաւոր մարմին, և յարութիւն կ՚առնէ
հոգևոր մարմին․ շնչաւոր մարմին կայ, հոգևոր
45 մարմին ալ կայ․ Ու այսպէս գրուած է, Առջի
մարդը Ադամ կենդանի շունչ եղաւ, վերջի Ադամը՝
46 կենդանարար հոգի․ Բայց չէ թէ առաջ հոգևորը,
47 հապա շնչաւորը՝ ու ետքը հոգևորը․ Առջի մարդը
երկրէն է՝ հողեղէն, բայց երկրորդ մարդը Տէր
48 է՝ երկինքէն․ Ինչպէս էր հողեղէնը՝ անանկ ալ
հողեղէնները, ու ինչպէս երկնաւորը՝ անանկ ալ
49 երկնաւորները․ Ու ինտոր որ հողեղէնին կերպա-
րանքը հագեր ենք, երկնաւորին կերպարանքն ալ
50 պիտի հագնինք․ Բայց աս կ՚ըսեմ, եղբայրներ,
որ մարմին ու արիւն Աստուծոյ թագաւորու-
թիւնը չեն կրնար ժառանգել․ ոչ ալ ապակա-
նութիւնը կը ժառանգէ անապականութիւն։
51 Ահա ձեզի խորհուրդ մը կը գրուցեմ․ Ամէնքս
պիտի չննջենք, բայց ամէնքս ալ պիտի փոխուինք,
52 Յանկարծակի աչք գոցել բանալու մէջ՝ վերջին
փողին հնչուելու ատենը․ որովհետև փողը պիտի
հնչուի, ու մեռելները յարութիւն պիտի առնեն
առանց ապականութեան, և մենք ալ պիտի
53 փոխուինք․ Վասն զի պէտք է որ աս ապակա-
նացու մարմինը անապականութիւն հագնի, ու
54 աս մահկանացուս անմահութիւն հագնի․ Բայց
երբոր աս ապականացու մարմինը անապականու-
թիւն հագնի, և աս մահկանացուս անմահութիւն
հագնի, անատենը պիտի կատարուի ան խօսքը
որ գրուեցաւ թէ Մահը յաղթութեան մէջ ըն-

55 կլլուեցաւ. Ո՞ւր է, ով մահ, քու խայթոցդ. ո՞ւր
56 է, ով գերեզման, քու յաղթութիւնդ։ Մահին
խայթոցը մեղքն է, ու մեղքին ոյժը՝ օրէնքը։
57 Բայց գոհութիւն Աստուծոյ, որ մեզի յաղթու-
թիւն կու տայ մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռ-
58 քովը. Ուստի, իմ սիրելի եղբայրներս, հաստատ
եղէք, անշարժ կեցէք և ամէն ատեն աւելցէք
Տէրոջը գործին մէջ, գիտնալով որ ձեր աշխա-
տութիւնը պարապ չէ Տէրոջմով։

ԳԼ. ԺԶ

1 Բայց սուրբերուն համար ողորմութեան ժողվելու
վրայով, ինչպէս որ պատուէր տուի Գաղատա-
2 ւոց եկեղեցիներուն, դուք ալ անանկ ըրէք. Ա-
մէն մէկշաբթի օրերը ձեզմէ ամէն մէկը իր քովը
3 թող դիզէ ինչ որ կը յաջողի, Որ չըլլայ թէ երբ-
որ գամ, անատենը ժողովումներ ըլլան. ու երբ-
որ գամ, որոնց որ դուք *հաճիք, ես զանոնք
թուղթերով՝ պիտի խրկեմ՝ ձեր պարգևները Ե-
4 րուսաղէմ տանելու. Եւ թէ որ իմ երթալս ալ
5 արժան սեպուի, իմ հետս թող երթան. Սակայն
ես ձեզի պիտի գամ՝ երբոր Մակեդոնիայէն անց-
6 նիմ. (քանզի Մակեդոնիայէն կ'անցնիմ.) Եւ կա-
րելի է որ ձեր քովը մնամ, կամ ձմեռն ալ անցը-
նեմ. որ դուք զիս ճամբայ դնէք, ուր որ ես
7 պիտի երթամ. Ինչու որ չեմ ուզեր ձեզ հիմա
հարևանցի մը տեսնել, բայց յոյս ունիմ որ ա-
տեն մը ձեր քովը կենամ, թէ որ Տէրը հրաման
8 տայ. Սակայն հիմա ես Եփեսոս պիտի մնամ մին-
9 չև Պենտէկոստէ. Ինչու որ ինծի մեծ ու արդիւ-
նաւոր դուռ մը բացուած է, ու շատ հակառա-
կորդներ կան.

*Կամ յանձնարարութիւն ընէք թուղթերով, ես զանոնք

10 Արդ թէ որ Տիմոթէոս գայ, նայեցէք որ ձեր
քովը առանց վախի ըլլայ. քանզի անիկա Տէրոջը
11 գործը կը գործէ, ինչպէս որ ես ալ. Ուստի չըլ-
լայ որ մէկը անիկա արհամարհէ, հապա խաղա-
ղութեամբ անիկա ճամբայ դրէք, որ ինծի գայ.
ինչու որ անոր կը սպասեմ եղբայրներով մէկտեղ.
12 Իսկ Ապողոս եղբօրը համար, շատ աղաչեցի անոր՝
որ ձեզի գայ եղբայրներուն հետ մէկտեղ. ու
բնաւ կամք չունեցաւ որ հիմա գայ, բայց պիտի
գայ՝ երբոր յարմար ժամանակ գտնէ.
13 Արթուն կեցէք, հաւատքի մէջ հաստատ կե-
14 ցէք, ժիր եղէք, զօրացէք. Ձեր ամէն բաները
սիրով ըլլայ.
15 Կ'աղաչեմ ձեզ, եղբայրներ, (գիտէք դուք
Ստեփանանեսին ընտանիքը թէ Աքայիայի առջի
պտուղն է, ու անձերնին սուրբերուն սպասաւո-
16 րութեանը նուիրեցին.) Որ հնազանդ ըլլաք ա-
նանկներուն, և ամենուն որ իր հետը մէկտեղ
17 կը գործէ ու կ'աշխատի. Ուրախ եմ ես Ստեփա-
նեսին ու Փորտունատոսին ու Աքայիկոսին գա-
լուն վրայ, որ ձեր պակասութիւնը անոնք լեցու-
18 ցին. Քանզի հանգստացուցին իմ հոգիս ու ձերը.
ուստի անանկները ճանչցէք.
19 Բարև կ'ընեն ձեզի Ասիայի եկեղեցիները. շատ
բարև կ'ընեն ձեզի Տէրոջմով Ակիւղաս ու Պրիս-
կիղա՝ իրենց տանը մէջի եկեղեցիով մէկտեղ.
20 Բարև կ'ընեն ձեզի բոլոր եղբայրները. բարև
տուէք իրարու սուրբ համբուրով։
21 Աս բարևը իմ ձեռքիս՝ Պօղոսինն է. (22) Թէ
որ մէկը Տէր Յիսուս Քրիստոսը չսիրեր, նզովեալ
23 ըլլայ՝ *Էրբ մեր Տէրը գայ.՞ Տէր Յիսուս Քրիս-
24 տոսի շնորհքը ձեր հետը. Իմ սէրս ձեր ամենուն
հետը ըլլայ Քրիստոս Յիսուսով. Ամէն.

*Յոյն. (Ասորերէնէն) Մարան աթա.

ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

ԱՌ ԿՈՐՆԹԱՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս առաքեալ Յիսուսի Քրիստոսի՝ Աստուծոյ
կամքովը, ու Տիմոթէոս մեր եղբայրը. Կորնթոսի
մէջ եղած Աստուծոյ եկեղեցիին, և բոլոր Աքա-
2 յիայի մէջ եղող ամէն սուրբերուն. Շնորհք և
խաղաղութիւն ձեզի Աստուծմէ մեր Հօրմէն ու
Տէր Յիսուս Քրիստոսէն։
3 Օրհնեալ ըլլայ Աստուած ու մեր Տէր Յիսուս
Քրիստոսի Հայրը, գթութեանց Հայրը և ամէն
4 մխիթարութեան Աստուածը. Ան որ մեզ կը մխի-
թարէ մեր ամէն նեղութիւններուն մէջ, որ մենք
կարող ըլլանք մխիթարել զանոնք՝ որ ամէն նե-
ղութիւններու մէջ են, ան մխիթարութիւնովը՝
5 որով մենք Աստուծմէ կը մխիթարուինք. Քանզի
ինչպէս որ Քրիստոսի չարչարանքները մեր վրայ
շատ եղան, նմանապէս Քրիստոսի ձեռքովը մեր
6 մխիթարութիւնն ալ շատ կ'ըլլայ. Ու թէ նեղու-
թիւն քաշենք՝ ձեր մխիթարութեանը ու փրկու-
թեանը համար է, և թէ մխիթարուինք՝ ձեր
մխիթարութեանը ու փրկութեանը համար է, որ
կը յաջողի համբերելով ան չարչարանքներուն՝

7 որոնցմով մենք ալ կը չարչարուինք. Ու մեր յոյ-
սը հաստատուն է ձեզի համար, ինչու որ գի-
տենք թէ ինչպէս որ չարչարանքներուն հաղորդ
էք, անանկ ալ մխիթարութեանը պիտի ըլլաք։
8 Վասն զի Ասիայի մէջ մեզի պատահած նեղու-
թիւններուն վրայով՝ չեմ ուզեր որ չգիտցող ըլ-
լաք, եղբայրներ, թէ մեր կարողութենէն շատ ա-
ւելի ծանրաբեռնեցանք, մինչև որ կեանքերնուս
9 ալ անյոյս եղանք. Բայց մահուան վճիռը մենք
մեզանիս պահեցինք, որ ինքզինքնուս չյուսա-
նինք, հապա Աստուծոյ՝ որ մեռելները կը յա-
10 րուցանէ. Որ ինքը անանկ մեծ մահուանէ մեզ
11 փրկեց ու կը փրկէ. Որուն կը յուսանք թէ տա-
կաւին պիտի փրկէ, մեզի համար ձեր ըրած ա-
ղօթքին օգնականութիւնովը. որ շատերուն ա-
ղօթքին պատճառովը մեզի եղած շնորհքին համար՝
շատերէն գոհութիւն տրուի մեզի համար։
12 Ինչու որ մեր պարծանքը աս է, մեր խղճմը-
տանքին վկայութիւնը՝ թէ մենք Աստուծոյ ա-
ռջեւ պարզմտութեամբ և անկեղծութեամբ, ու չէ
թէ մարմնաւոր իմաստութիւնով մը, հապա Աս-
տուծոյ շնորհքովը աշխարհի մէջ վարուեցանք,
13 բայց աւելի դէպ 'ի ձեզի. Քանզի ուրիշ բան չենք
գրեր ձեզի, հապա ան որ դուք կը կարդաք ու
կը ճանչնաք. և կը յուսամ թէ մինչև վերջը պի-
14 տի ճանչնաք. Ինչպէս որ քիչ շատ ճանչցաք մեզ,
որ ձեր պարծանքն ենք, ինչպէս որ դուք ալ
մերը՝ Տէր Յիսուսի օրը։
15 Ու աս վստահութիւնով կ'ուզէի առաջ ձեզի
գալ, որ դուք երկրորդ անգամ շնորհք ընդու-
16 նիք, Ու ձեզմէ անցնիլ դէպ 'ի Մակեդոնիա, և
դարձեալ Մակեդոնիայէն ձեզի գալ, ու ձեզմէ
17 ճամբայ դրուիլ դէպ 'ի Հրէաստան։ Ուստի աս
որ ես մտածեցի, միթէ թեթևութիւնո՞վ չարժե-
ցայ. կամ թէ ան որ ես կը խորհիմ, մարմնաւո-

րապէ՞ս կը խորհիմ, *որ իմ կողմանէս այո այո
18 և ոչ ոչ ըլլայ։" Սակայն հաւատարիմ է Աստ-
ուած, որ մեր խօսքը ձեզի որ հասաւ՝ այո և ոչ
19 չէր։ Ինչու որ Աստուծոյ Որդին Յիսուս Քրիստոս՝
որ մեզմով ձեզի քարոզուեցաւ, (ինծմով և Սիղ-
ուանոսով ու Տիմոթէոսով,) այո ու ոչ չեղաւ,
20 հապա իր մէջը եղաւ այոն. Քանզի որչափ որ Աս-
տուծոյ խոստմունքները կան՝ իր մէջը Այո են,
ու իր մէջը Ամէն են՝ Աստուծոյ փառքին համար
21 մեր ձեռքովը։ Բայց ան որ մեզ ձեզի հետ մէկ-
տեղ Քրիստոսով հաստատեց, ու մեզ օծեց, Աստ-
22 ուած է. Որ մեզ կնքեց ալ, և Ժեղէ տուաւ Հոգ-
23 ւոյն գրաւը մեր սրտերուն մէջը։ Բայց ես զԱստ-
ուած վկայ կը կանչեմ իմ անձիս, որ ձեզ խնա-
յելուս համար տակաւին Կորնթոս չեկայ. [illegible]
չէ թէ ձեր հաւատքին վրայ կը տիրապետենք,
հապա գործակից ենք ձեր ուրախութեանը. Ին-
չու որ դուք հաւատքով կը կենաք։

ԳԼ. Բ

1 Սակայն ես ինծմէ աս որոշեցի, որ նորէն տըրտ-
2 մութիւնով չգամ ձեզի։ Ինչու որ եթէ ես ձեզ
տրտմեցընեմ, ալ ո՞վ է որ զիս պիտի ուրախա-
3 ցընէ, թէ չէ ան որ ինծմէ կը տրտմի։ Ու աս
†գրեցի, որ չըլլայ թէ երբոր գամ՝ տրտմութիւն
մը կրեմ անոնցմէ, ուսկից որ պէտք է ինծի ու-
րախ ըլլալ, քանզի ձեր ամենուն վրայ վստահ
4 եմ, որ իմ ուրախութիւնս ձեր ամենունն է։ Ին-
չու որ շատ նեղութենէ և սրտի տագնապէ ես
ձեզի գրեցի շատ արցունքով. չէ թէ՝ որ դուք

*կամ՝ չէ. հապա որ իմ կողմանէս այոն այո ըլ-
լայ, ու ոչը ոչ։
†Ոմանք գրեցի ձեզի

տրտմիք, հապա որ գիտնաք ան սէրը՝ որ ես
ունիմ աւելի ձեր վրայ,
5 Բայց թէ որ մէկը տրտմեցուց, չէ թէ զիս
տրտմեցուց, հապա *ըստ մասին (որ [illegible] ծանր
6 չըլնեմ) ձեզ ամէնքդ." Հերիք է անանկ մարդուն
7 ան պատիժը, որ շատերէն եղաւ։ Ուստի ընդհա-
կառակն պէտք է աւելի ներել անոր ու մխի-
թարել, որ չըլլայ թէ անանկը աւելի տրտմու-
8 թենէն ընկղմի։ Ուստի կ'աղաչեմ ձեզ, որ անոր
9 վրայ ձեր սէրը հաստատէք. (Քանզի ասոր համար
ալ գրեցի, որ ձեզ փորձելով գիտնամ թէ ամէն
10 բանի մէջ հնազա՞նդ էք։ Եւ որուն որ դուք բան
մը կը ներէք, ես ալ կը ներեմ. Ինչու որ եթէ ես
ալ ներեմ, որու որ ներեմ՝ ձեզի համար է Քրիս-
11 տոսի †կողմանէ.) Որ չըլլայ թէ զրկանք մը կրենք
Սատանայէն. քանզի անոր խորհուրդները չգիտ-
ցող չենք։
12 Արդ երբոր ես Տրովադա հասայ Քրիստոսի ա-
ւետարանը քարոզելու, և ինծի դուռ մը բաց էր
13 Տէրոջմով, իմ հոգւոյս մէջ հանգստութիւն չու-
նէի, ինչու որ իմ Տիտոս եղբայրս հոն չգտայ.
հապա անոնցմէ հրաժարելով՝ Մակեդոնիա գացի։
14 Բայց գոհութիւն Աստուծոյ՝ որ միշտ յաղթող
կ'ընէ մեզ Քրիստոսով, ու զինքը ճանչնալուն
15 հոտը մեզմով յայտնի կ'ընէ ամէն տեղ. Ինչու որ
մենք Աստուծոյ առջևը Քրիստոսի անոյշ հոտն
ենք փրկուածներուն մէջ և կորսուածներուն
16 մէջ. Ոմանց մահուան հոտ դէպ 'ի մահ, և ոմանց
կենդանութեան հոտ դէպ 'ի կեանք. և աս բա-
17 ներուն ո՞վ բաւական է։ Քանզի մենք շատերուն
պէս չենք, որ Աստուծոյ խօսքին խարդախու-

*կամ ըստ մասին, որ ձեր ամենուն վրայ ծան-
րութիւն չձըգեմ։
†կամ առջևը

թիւն կ՚ընենք. հապա որպէս թէ անկեղծութեամբ,
հապա որպէս թէ Աստուծմէ՝ Աստուծոյ առջեւը
Քրիստոսով կը խօսինք։

ԳԼ. Գ

1 Կը սկսի՞նք նորէն անձերնիս յանձն ընել. կամ
թէ ոմանց պէս պէ՞տք է մեզի յանձնարարու-
2 թեան թուղթեր ձեզի կամ ձեզմէ։ Հապա մեր
թուղթը դուք էք մեր սրտերուն մէջ գրուած,
ճանչցուած ու կարդացուած ամէն մարդոցմէն.
3 Յայտնի ըլլալով որ դուք Քրիստոսի թուղթն էք
մեր սպասաւորութիւնովը, չէ թէ մելանով գըր-
ուած, հապա կենդանի Աստուծոյ Հոգիովը, չէ
թէ քարեղէն տախտակներու վրայ, հապա սրտին
4 մարմնեղէն տախտակներուն վրայ։ Եւ ասանկ
վստահութիւն ունինք մենք Աստուծոյ վրայ Քրիս-
5 տոսի ձեռքովը. Չէ թէ մենք ինքնիրեննիս բա-
ւական ենք բան մը խորհելու՝ որպէս թէ մեզմէ,
6 հապա մեր բաւականութիւնը Աստուծմէ է. Որ
մեզ բաւական ալ ըրաւ նոր կտակարանին պաշ-
տօնեաներ ըլլալու՝ չէ թէ գիրին, հապա հոգիին.
ինչու որ գիրը կը սպաննէ, բայց հոգին կ՚ապրե-
7 ցընէ։ Իսկ թէ որ քարերու վրայ գրով փորուած
մահուան պաշտօնը փառքով եղաւ, որ Իսրայէլի
որդիքը կարող չեղան Մովսէսին երեսը նայելու՝
անոր երեսին փառացը համար, որ պիտի խա-
8 փանուէր. Ո՞չ է հոգիին պաշտօնը ի՞նչպէս աւելի
9 փառքով պիտի չըլլայ։ Ինչու որ եթէ դատա-
պարտութեան պաշտօնը փառքով էր, ո՛րչափ
աւելի արդարութեան պաշտօնը փառքով պիտի
10 ըլլայ։ Վասն զի ան որ փառաւոր էր՝ աս մասին
փառաւոր չէ գերազանց փառքին պատճառովը։
11 Քանզի եթէ ան որ պիտի խափանուէր՝ փառքով
էր, ո՛րչափ աւելի ան որ կը կենայ՝ փառքով

12 պէտք է ըլլայ։ Ուստի ասանկ յոյս որ ունինք, շատ
համարձակութեամբ կը վարուինք մեր խօսքին մէջ.
13 Եւ չէ թէ ինչպէս որ Մովսէս իր երեսին վրայ
ծածկոց կը ձգէր, որ Իսրայէլի որդիքը չնային
14 ան խափանուելու բաներուն վախճանին։ Սակայն
անոնց միտքերը կուրցան. ինչու որ մինչեւ աս-
օրուան օրս նոյն ծածկոցը ձգուած է հին կտա-
կարանին ընթերցմունքին վրայ, ու չվերնար,
15 (ինչու որ Քրիստոսով կը խափանուի,) Հապա
մինչեւ ցայսօր, երբոր Մովսէսին գիրքը կը կար-
դան, անոնց սրտին վրայ ծածկոց մը կը կենայ։
16 Բայց երբոր Տէրոջը դառնան, անատենը պիտի
17 վերնայ ան ծածկոցը։ Արդ Տէրը Հոգին է. և ուր
որ Տէրոջը Հոգին կայ, հոն ազատութիւն կայ։
18 Բայց մենք ամէնքս բաց երեսով Տէրոջը փառքը
որպէս թէ հայելիի մէջ տեսնելով, նոյն պատկե-
րին կը նորոգուինք փառաց ի փառս, որպէս թէ
Տէրոջը Հոգիէն։

ԳԼ. Դ

1 Ուստի աս պաշտօնը ունենալով՝ ինչպէս որ ո-
2 ղորմութիւն գտանք, չենք ձանձրանար. Հապա
հրաժարեցանք ամօթալի ծածուկ բաներէն, ու
խորամանկութիւնով չենք վարուիր, և խարդա-
խութիւն չենք ըներ Աստուծոյ խօսքին մէջ. հապա
ճշմարտութիւնը յայտնելով՝ անձերնիս մարդոց
ամէն խղճմտանքին կ՚ընծայենք Աստուծոյ առ-
3 ջեւ։ Իսկ թէ որ մեր աւետարանը ծածկուած ալ
4 է, կորսուածներուն մէջ ծածկուած է. Որոնց մէջ
աս աշխարհիս աստուածը անհաւատներուն միտ-
քերը կուրցուց, որ Քրիստոսի փառաց աւետա-
րանին լոյսը անոնց վրայ չծագէ, որ ինքն է Աս-
5 տուծոյ պատկերը։ Ինչու որ չէ թէ անձերնիս
կը քարոզենք, հապա Քրիստոս Յիսուս Տէրը, ու

6 մեզ՝ ձեր ծառաները Յիսուսի համար· Վասն զի
Աստուած որ հրաման ըրաւ խաւարէն լոյս ծագել,
ինքը մեր սրտերուն մէջ ծագեց՝ Աստուծոյ փա-
ռաց գիտութեան լոյսը տալու համար Յիսուս
7 Քրիստոսի անձովը· Արդ մենք աս գանձը հողէ
ամաններու մէջ ունինք, որ զօրութեան առա-
ւելութիւնը Աստուծմէ ըլլայ, ու չէ թէ մեզմէ։
8 Ամէն կողմանէ վշտացած ենք, բայց նեղը ինկած
չենք· կարօտեալ ենք, բայց յուսահատած չենք·
9 Հալածուած ենք, բայց երեսէ ձգուած չենք·
10 վար ձգուած ենք, բայց կորսուած չենք· Ամէն
ատեն *Յիսուսի մահը մեր մարմիններուն մէջը
կը կրենք, որ Յիսուսի կեանքն ալ մեր մարմին-
11 ներուն մէջը յայտնուի· Վասն զի մենք որ կեն-
դանի ենք՝ Յիսուսի համար միշտ մահուան կը մատ-
նուինք, որ Յիսուսի կեանքն ալ մեր մահկանա-
12 ցու մարմիններուն մէջը յայտնի ըլլայ· Ուստի
մահը մեր մէջը կը ներգործէ, և կեանքը՝ ձեր
13 մէջը· Բայց հաւատքին նոյն հոգին ունինք, ինչ-
պէս որ գրուած է, Հաւատացի, անոր համար խօ-
սեցայ· մենք ալ կը հաւատանք, ու անոր համար
14 կը խօսինք· Աս գիտնալով թէ ան որ Տէր Յի-
սուսը յարոյց՝ մեզ ալ Յիսուսով պիտի յարու-
ցանէ, ու անոր առջևը պիտի կայնեցընէ ձեզմով
15 մէկտեղ· Ինչու որ ամէն բան ձեզի համար է, որ
ան շնորհքը առատացած՝ շատերուն գոհութիւն
ընելովը աւելնայ Աստուծոյ փառքին համար·
16 Վասն որոյ չենք ձանձրանար· բայց թէպէտ
աս մեր դուրսի մարդը կ'ապականի, սակայն մեր
17 ներսի մարդը օրէ օր կը նորոգուի· Ինչու որ մեր
վայրկենական թեթև նեղութիւնը առաւել քան
զառաւել փառաց յաւիտենական գերազանցու-
18 թիւն կը գործէ մեզի։ Վասն զի մենք երևցած

*Ոմանք Տէր Յիսուսի

բաներուն չենք նայիր, հապա չերևցածներուն.
ինչու որ երևցած բաները ժամանակաւոր են,
բայց չերևցածները՝ յաւիտենական·

ԳԼ. Ե

1 Վասն զի գիտենք որ եթէ մեր վրանի նման երկ-
րաւոր տունը քակուի, մէկ շինուածք մը ունինք
Աստուծմէ՝ անձեռագործ յաւիտենական տուն մը
2 երկնից մէջ· Ու յիրաւի ասոր մէջ կը հառաչենք՝
մեր երկնաւոր բնակութիւնը հագնելու փափա-
3 գելով· Միայն թէ երբոր ան հագնելու ըլլանք,
4 մերկ չգտնուինք· Վասն զի մենք որ աս վրանին
տակն ենք՝ կը հառաչենք ծանրութիւն քաշելով·
ինչու որ չենք ուզեր վրանուս հանել, հապա
[illegible] [illegible] վրայէն հագնիլ, որ մահկանացու-
5 թիւնը ընկղմի կեանքէն· Իսկ ան որ մեզ աս բա-
նիս կը պատրաստէ՝ Աստուած է, որ նաև մեզի
6 տուաւ Հոգւոյն գրաւը։ Ուստի ամէն ատեն վստա-
հութիւն ունինք, և գիտենք թէ որչափ որ մար-
7 մնի մէջ կը կենանք, Տէրոջմէ հեռու ենք· (Ին-
չու որ հաւատքով կը քալենք, ու չէ թէ երևու-
8 թով·) Ուստի վստահութիւն ունինք՝ և ալ ա-
ւելի կ'ուզենք մարմինէն հեռանալ ու Տէրոջը
9 քովը կենալ· Ասոր համար կը ջանանք ալ, որ
թէ կենանք և թէ հեռանանք՝ անոր հաճոյ ըլ-
10 լանք· Վասն զի պէտք է որ ամէնքս ալ Քրիս-
տոսի ատեանին առջևը ներկայանանք, որ ամէն
մէկը իր մարմնովը ըրածներուն փոխարէնը առնէ՝
ինչ որ գործեր է, թէ բարի և թէ չար։
11 Ուստի Տէրոջը վախը գիտնալով՝ մարդոց միտքը
կը հաճեցընենք· սակայն մենք Աստուծոյ առջևը
յայտնի ենք, և կը յուսամ որ ձեր խղճմտանքին
12 մէջն ալ յայտնի ենք։ Չէ թէ նորէն անձերնիս
ձեզի կ'ընծայենք· հապա առիթ կու տանք ձեզի՝

մեր վրայով պարծենալու. որ բան մը ունենաք
պատասխանելու անոնց՝ որ աչքի երեւցածովը կը
13 պարծենան, ու չէ թէ սրտով։ Ինչու որ եթէ
խելքէ ելած ենք՝ ան Աստուծոյ համար է, և թէ որ
14 զգաստ ենք՝ ան ձեզի համար է. Ինչու որ Քրիս-
տոսի սէրը մեզ կը ստիպէ. քանզի մեր դատումը
աս է որ եթէ մէկը ամենուն համար մեռաւ, ու-
15 րեմն ամէնն ալ մեռան. Եւ ամենուն համար մե-
ռաւ, որ կենդանի եղողները ա՛լ իրենց անձե-
րուն կենդանի չըլլան, հապա անոր՝ որ իրենց
16 համար մեռաւ ու յարութիւն առաւ։ Ուստի
ասկէ ետև մենք մէկ մը մարմնով չենք գիտեր.
ու թէև Քրիստոսը մարմնով ճանչցանք, բայց
17 հիմա՝ ալ անանկ չենք ճանչնար։ Ուրեմն թէ որ
մէկը Քրիստոսի մէջ է, անիկա նոր ստեղծուած-
մըն է. հինները անցան, և ահա ամէն բան նոր
18 եղաւ։ Սակայն ամէն բան Աստուծմէ է, որ մեզ
իրեն հետ հաշտեցուց Յիսուս Քրիստոսի ձեռքովը,
19 ու տուաւ մեզի հաշտութեան պաշտօնը. Այսինքն
Աստուած էր, որ Քրիստոսով աշխարհս իրեն հետ
հաշտեցուց, և անոնց յանցանքները իրենց չսե-
պեց, ու հաշտութեան խօսքը մեր մէջը դրաւ։
20 Ուրեմն Քրիստոսի կողմանէ դեսպանութիւն կ՚ը-
նենք, իբրև թէ Աստուած կը բարեխօսէր մեզ-
մով. կ՚աղաչենք ձեզի Քրիստոսի կողմանէ, հաշ-
21 տուեցէք Աստուծոյ հետ։ Վասն զի Աստուած զա-
նիկա որ մեղք չէր գիտեր, մեզի համար *մեղա-
ւոր սեպեց," որ մենք անոր միջոցովը Աստուծոյ
արդարները ըլլանք։

ԳԼ. Զ

1 Ուստի մենք ալ գործակից ըլլալով՝ կ՚աղաչենք

*Յուն. մեղք ըրաւ,

որ Աստուծոյ շնորհքը պարապ տեղը ընդունած
2 չըլլաք. Ինչու որ՝ Ընդունելի ժամանակի մը մէջ
լսեցի քեզի, կ՚ըսէ, և փրկութեան օրը օգնու-
թիւն ըրի քեզի. ահա հիմա է ընդունելի ժամա-
3 նակը, ահա հիմա է փրկութեան օրը. Բնաւ մէկ
բանով մը գայթակղութիւն չենք տար, որ մեր
4 պաշտօնը չպարսաւուի. Բայց ամէն բանի մէջ
մեր անձը կ՚ընծայենք Աստուծոյ սպասաւորներու
պէս՝ շատ համբերութիւնով վիշտերու մէջ, տա-
5 ռապանքներու, նեղութիւններու, ծեծերու,
բանտերու, խռովութիւններու, աշխատութիւն-
6 ներու, հսկումներու, ծոմերու մէջ, Մաքրու-
թիւնով, գիտութիւնով, երկայնմտութիւնով,
քաղցրութիւնով, Սուրբ Հոգիով, անկեղծ սիրով,
7 ճշմարտութեան խօսքով, Աստուծոյ զօրութիւ-
նով, արդարութեան զէնքերով՝ որ աջ կողմէն
8 ու ձախ կողմէն է. փառքով ու անարգութիւ-
նով, պարսաւանքով և գովութիւնով. մոլորցը-
9 նողներու պէս՝ ու ճշմարիտներ. Անծանօթներու
պէս՝ և ծանօթներ. մեռնողներու պէս՝ և ահա
կենդանի ենք. պատժուածներու պէս՝ ու չսպան-
10 նուածներ. Տրտմածներու պէս՝ ու միշտ ուրախ
ենք. աղքատներու պէս՝ ու շատերը կը հարստա-
ցընենք. բան մը չունեցողներու պէս՝ և ամէն
11 բան ստացած ենք։ Մեր բերանը ձեզի բացուած
12 է, ով Կորնթացիք, և մեր սիրտը լայնցած. Դուք
մեր կողմէն չէք նեղուիր, հապա *ձեր [illegible]
13 գթոյն կողմէ" կը նեղուիք. Ուստի անոր հատու-
ցումը ընելու համար (իբրև որդիներուս կը խօսիմ
ձեզի,) դուք ալ ինծի լայնցէք։
14 Անհաւատներուն հետ օտարախառն լծակից մի
ըլլաք. քանզի ի՞նչ մասնակցութիւն ունի արդա-
րութիւնը անօրէնութեան հետ, և ի՞նչ հաղոր-

*Կամ ձեր ներսի դին

15 դութիւն ունի լոյսը խաւարին հետ. Ու ի՞նչ միա-
բանութիւն ունի Քրիստոս Բելիարին հետ, կամ
ի՞նչ բաժին ունի հաւատացեալը անհաւատին
16 հետ. Ու ի՞նչ յարմարութիւն ունի Աստուծոյ
տաճարը կռոց հետ. վասն զի դուք կենդանի Աս-
տուծոյ տաճարն էք, ինչպէս որ Աստուած ըսաւ,
Թէ Անոնց մէջը պիտի բնակիմ, ու անոնց մէջը
պիտի քալեմ, և անոնց Աստուած պիտի ըլլամ,
17 ու անոնք ինծի ժողովուրդ պիտի ըլլան. Անոր
համար ելէք անոնց մէջէն ու զատուեցէք, կ՚ըսէ
18 Տէրը, և պիղծ բանի մի՛ դպչիք. Ու ես ձեզ պի-
տի ընդունիմ, և ես ձեզի Հայր պիտի ըլլամ, ու
դուք ինծի տղաքներ ու աղջիկներ պիտի ըլլաք՝
կ՚ըսէ Ամենակալ Տէրը։

ԳԼ. Է

1 Ուստի, սիրելիք, որովհետև մենք այս խոստ-
մունքները ունինք, մեր անձերը մարմինի ու հո-
գիի ամէն կեղտ պղծութիւնէն մաքրենք, և սրբու-
թիւնը կատարելագործենք Աստուծոյ վախովը.
2 *Ընդունեցէք մեզ*. մէկու մը վնաս չտուինք,
3 ոչ մէկը եղծեցինք, և ոչ մէկը զրկեցինք. Չէ թէ
ձեզ դատապարտելու համար աս կը զրուցեմ. ո-
րովհետև ես առաջուց ըսեր եմ որ դուք մեր
սիրտերուն մէջն էք՝ մեռնելու ու ապրելու ձեզի
4 հետ։ Շատ է իմ համարձակութիւնս ձեր վրայ.
շատ է իմ պարծանքս ձեզի համար. լեցուն եմ
մխիթարութիւնով, աւելցած եմ ուրախութիւ-
5 նով մեր ամէն նեղութիւններուն մէջ. Վասն զի
երբոր մենք Մակեդոնիա հասանք, բնաւ մեր
մարմինը հանգստութիւն չունեցաւ, հապա ամէն
կողմանէ նեղութիւն կը քաշէինք. դուրսէն պա-

*Կամ Համբերեցէք մեզի

6 տերազմներ կային, — ներսէն՝ վախեր. Բայց
Աստուած որ խոնարհները կը մխիթարէ՝ մեզ
7 մխիթարեց Տիտոսի գալովը։ Ու չէ թէ միայն ա-
նոր գալովը, հապա այն մխիթարութիւնովն ալ՝
որով ինքը մխիթարուեր էր ձեզմով, երբոր մեզի
պատմեց ձեր բաղձանքը, ձեր ողբը, ձեր ինծի
համար ունեցած նախանձաւորութիւնը, անանկ
8 որ ալ աւելի ուրախ եղայ. Ինչու որ եթէ ձեզ
տրտմեցուցի այն թուղթովը, չեմ զղջար, (թէև
զղջացեր էի,) քանզի կը տեսնեմ որ այն թուղթը
9 ձեզ տրտմեցուց, թէև քիչ մը ատեն։ Արդ ու-
րախ եմ, չէ թէ՝ որ տրտմեցաք, հապա որ ա-
պաշխարութեան համար տրտմեցաք. որովհետև
դուք Աստուծոյ ուզածին պէս տրտմեցաք, ա-
նանկ որ բանով մըն ալ մեզմէ վնաս չքաշէք։
10 Ինչու որ Աստուծոյ ուզածին պէս եղած տրտ-
մութիւնը փրկութեան համար ապաշխարութիւն
կը գործէ, որ զղջալու բան չէ. բայց աշխարհի
11 տրտմութիւնը մահ կը գործէ. Քանզի ահա այս
բանը՝ որ դուք Աստուծոյ ուզածին պէս տրտմե-
ցաք, ձեր մէջը որչափ ջանք գործեց, որչափ
չքմեղութիւն, որչափ սրտմտութիւն, որչափ վախ,
որչափ բաղձանք, որչափ նախանձաւորութիւն,
որչափ վրէժխնդրութիւն. ամէն կերպով ինք-
զինքնիդ ցուցուցիք թէ այս բանին մէջ մաքուր
12 էք. Ուրեմն ան որ ես ձեզի գրեցի, չէ թէ զըր-
կանքը ընողին համար էր, և չէ թէ զրկանքը կրո-
ղին համար, հապա որ ձեր վրայ մեր ունեցած
13 հոգը յայտնի ըլլայ ձեզի Աստուծոյ առջեւ. Ուստի
ան ձեր մխիթարութեանը համար մենք մխի-
թարուեցանք. շատ աւելի ալ ուրախացանք Տի-
տոսի ուրախութեանը համար, ինչու որ անոր հո-
14 գին ձեր ամենէն հանգստութիւն գտեր էր. Վասն
զի ինչ որ ես անոր առջեւ ձեզի համար պարծե-
ցայ՝ ամօթով չեղայ. հապա ինչպէս որ ամէն բան

ճշմարտութիւնով խօսեցանք ձեզի, անանկ ալ
Տիտոսին առջեւը պարծենալնիս ճշմարիտ եղաւ։
15 Նաեւ անոր սէրը աւելի է ձեր վրայ, երբոր կը յիշէ
ձեր ամենուն հնազանդութիւնը, թէ ինչպէս վա-
16 խով ու դողով անիկա ընդունեցիք։ Ուստի ու-
րախ եմ որ ամէն բանի մէջ ձեր վրայ վստահու-
թիւն ունիմ։

ԳԼ. Ը

1 Արդ, եղբայրներ, ձեզի կը ծանուցանենք Աս-
տուծոյ շնորհքը, որ Մակեդոնացւոց եկեղեցինե-
2 րուն տրուած է. Որ նեղութեան մեծ փորձին մէջ
իրենց ուրախութեանը առատութիւնը եղեր է,
և իրենց ծանր աղքատութիւնը աւելի մեծ առա-
3 տաձեռնութիւն եղաւ։ Ինչու որ ես կը վկայեմ
որ իրենց կարողութեանը չափովը՝ ու կարողու-
4 թենէն ալ աւելի յօժարակամ ըլլալով, Շատ ա-
ղաչանքով կ'աղաչէին որ տուրքերը ու սուրբե-
րուն համար եղած պաշտօնին մասնակցութիւնը
5 ընդունինք։ Եւ չէ թէ որչափ որ մենք կը յու-
սայինք, հապա անձերնին ալ տուին, առաջ Տէ-
6 րոջը ու ետքը մեզի՝ Աստուծոյ կամքովը. Որ Տի-
տոսին աղաչեցինք թէ ինչպէս որ անիկա առա-
ջուց սկսեց, անանկ ալ ձեր մէջը կատարէ աս
7 շնորհքն ալ. Բայց ինչպէս որ ամէն բանով ա-
ռատացած էք դուք, (հաւատքով ու խօսքով
ու գիտութիւնով և ամէն ջանքով ու ձեզմէ մեր
վրայ եղած սիրովը,) նոյնպէս որ աս շնորհքով ալ
8 առատանաք. Չէ թէ հրամայելով մը կը գրուցեմ,
հապա ուրիշներուն ջանքին պատճառովը, և որ
9 փորձեմ ձեր սիրոյն հարազատութիւնը. Քանզի
դուք գիտէք մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը,
թէ ինքը ձեզի համար աղքատ եղաւ՝ ան որ հա-
րուստ էր, որ դուք անոր աղքատանալովը հա-

10 րըստանաք. Եւ աս բանիս մէջ խրատ մը կու-
տամ. ինչու որ ասիկա ձեր օգտին համար է,
դուք որ չէ թէ միայն ընելը, հապա կամե-
նալն ալ առաջուց սկսեցիք անցած տարուընէ
11 հետէ. Ուստի հիմա ընելն ալ կատարեցէք, որ
ինչպէս կամաց յօժարութիւն կայ, նոյնպէս ալ
12 ընելը ունեցածներնուդ չափովը ըլլայ. Վասն զի
թէ որ առաջ յօժարութիւնը ըլլայ՝ մարդ ունե-
ցածին չափովը ընդունելի է, ու չէ թէ չունեցա-
13 ծին չափովը։ Ինչու որ չէ թէ ես ուրիշներուն
հանգստութիւն կ'ուզեմ, ու ձեզի նեղութիւն.
14 Հապա հաւասարութիւնով՝ հիմակուան ատեն
ձեր աւելին անոնց պակսութիւնը լեցնէ, որպէս
զի անոնց աւելին ալ մը օգնութիւն ըլլայ ձեր
պակսութեանը, որ հաւասարութիւն ըլլայ. Ինչպէս
15 որ գրուած է թէ, Ան որ շատ ժողվեց՝ չաւելցաւ,
16 ու ան որ քիչ՝ չպակսեցաւ։ Բայց գոհութիւն Աս-
տուծոյ, որ նոյն հոգը ձեր վրայ Տիտոսին սիրտը
17 դրեց. Ինչու որ մեր աղաչանքը ընդունեց, և իր
յօժարամտութիւնը շատ ըլլալով՝ իր կամքովը
18 ելաւ ձեզի եկաւ. Ու անոր հետ խրկեցինք ան
եղբայրը, որուն գովութիւնը աւետարանին մէջն
19 է՝ բոլոր եկեղեցիներուն մէջ. Եւ ոչ միայն այս-
քան, հապա նաեւ եկեղեցիներէն ընտրուեցաւ
մեզի ճամբորդութեան ընկեր ըլլալու աս տուր-
քերուն մէջ, որ մենք կը ծառայենք Տէրոջը
20 փառքին համար, ու *ձեր յօժարութեանը. Բայց
աս մասին զգուշութիւն կ'ընէինք, որ չըլլայ թէ
մէկը արատ մը դնէ մեր վրայ աս առատու-
21 թեանս մէջ, որուն մենք կը ծառայենք. Քանզի
ոչ միայն Տէրոջը առջեւը, հապա մարդոց առջեւն
22 ալ բարի բաներ ընելու հոգ կը տանինք. Եւ ա-
նոնց հետը մեր եղբայրը խրկեցինք, որն որ շատ

*Ոմանք մեր

բաներու մէջ փորձելով՝ շատ անգամ յօժարա-
միտ գտեր ենք, ու հիմա՝ աւելի յօժարամիտ՝
ան մեծ վստահութիւնովը որ ձեր վրայ ունի։
23 Բայց թէ որ Տիտոսին համար կը հարցնէք, անի-
կա իմ ընկերս է, և ձեր մէջը իմ գործակիցս.
իսկ թէ որ մեր եղբայրներուն համար, անոնք ե-
կեղեցիներուն ղրկածներն են, ու Քրիստոսի
24 փառքը։ Ուստի ձեր սիրոյն՝ և մեր ձեր վրայով
պարծենալուն ապացոյցը անոնց վրայ ցուցուցէք
եկեղեցիներուն առջևը,

ԳԼ. Թ

1 Քանզի սուրբերուն ըլլալու պաշտօնին վրայով
2 ինծի աւելորդ է ձեզի գրել. Ինչու որ գիտեմ ես
ձեր յօժարամտութիւնը, որուն վրայով կը պար-
ծենամ ձեզի համար Մակեդոնացւոց մէջ, թէ
Աքայեցիք անցած տարուընէ հետէ պատրաստ
են. ու ձեր քովէ նախանձը շատերը գրգռեց։
3 Եւ ահա եղբայրները ղրկեցի, որ մեր ձեզի հա-
մար պարծենալը աս մասին մէջ պարապ չըլլայ,
հապա պատրաստ գտնուիք՝ ինչպէս որ ըսեր եմ.
4 Որ չըլլայ թէ երբոր Մակեդոնացիք իմ հետս գան
ու ձեզ անպատրաստ գտնեն, մենք (որ չը-
սենք թէ դուք,) ամօթով մնանք աս *պարծան-
5 քին վստահութեանը մէջ։ Ուստի հարկաւոր սե-
պեցի եղբայրներուն աղաչել, որ առաջուց ձեզի
գան, ու առաջուց կարգի դնեն ան ձեր առաջուց
ծանուցուած ընծան՝ որ պատրաստ ըլլայ, անանկ
որ ընծայի պէս ըլլայ, ու չէ թէ ագահութեան
6 պէս։ Բայց ասիկա կը ծանուցանեմ թէ ան որ
խնայելով կը սերմանէ՝ խնայելով պիտի հնձէ, ու
ան որ առատութիւնով կը սերմանէ՝ առատու-

*Ոմանք՝ ըսանին։

7 թիւնով պիտի հնձէ։ Ամէն մէկը ինչպէս որ իր
սրտովը կը յօժարի՝ նոյնպէս տայ, չէ թէ
տրտմութեամբ կամ ստիպմամբ. ինչու որ Աստ-
8 ուած յօժարակամ տուողը կը սիրէ։ Բայց կա-
րող է Աստուած բոլոր շնորհքները ձեզի առատօ-
րէն տալու, որ ամէն բանի մէջ ամէն ատեն բո-
լոր ձեզի պէտք եղածը ունենալով՝ ամէն բարի
9 գործքերով առատանաք. Ինչպէս որ գրուած է,
Տարածեց ու աղքատներուն տուաւ. անոր ար-
10 դարութիւնը յաւիտեան կը մնայ։ Եւ անիկա որ
սերմ ցանողին սերմ կը պարգևէ, *և կերակուրի
համար հաց, ձեր սերմանիքը պարգևէ և աւել-
ցընէ," ու ձեր արդարութեան պտուղները †շատ-
11 ցընէ. Որ ամէն բանի մէջ հարստանաք ամէն կերպ
առատութիւնով, որ մեր ձեռքովը կը պատճառէ
12 գոհութիւն տալ Աստուծոյ։ Ինչու որ աս պաշտօ-
նիս մատակարարութիւնը չէ թէ միայն սուրբե-
րուն պակասութիւնը լեցնելու համար է, հապա
նաև աւելի շատցընելու Աստուծոյ գոհութիւն
13 տալը. Երբոր աս ձեր պաշտօնին փորձովը փառա-
ւորեն զԱստուած՝ Քրիստոսի աւետարանը խոս-
տովանելնուդ հնազանդութեանը համար, և ան
առատաձեռնութեանը համար՝ որով հաղորդակ-
14 ցութիւն կ'ընէք անոնց ու ամենուն. Եւ իրենց
աղօթքը ձեզի համար մատուցանեն, փափաք ու-
նենալով ձեր վրայ՝ Աստուծոյ գերազանց շնորհ-
15 քին համար որ ձեր մէջն է։ Ալ գոհութիւն Աս-
տուծոյ՝ անոր չպատմուելու պարգևին համար։

ԳԼ. Ժ

1 Բայց ես Պօղոս ձեզի կ'աղաչեմ Քրիստոսի հե-

*Ոմանք՝ կերակուրի համար հաց ալ պիտի պար-
գևէ, և ձեր սերմանիքը պիտի աւելցընէ,
†Ոմանք՝ պիտի շատցընէ

զութիւնովը ու քաղցրութիւնովը, որ երես առ
երես գտնուած ատեն խոնարհ եմ ձեր մէջը, բայց
2 հեռուէն կը համարձակիմ ձեզի. Կ'աղաչեմ՝ որ
չըլլայ թէ մօտէն ալ համարձակիմ այն վստահու-
թիւնովը՝ որով միտք ունիմ յանդգնիլ մէկ քա-
նիներուն վրայ, որոնք որ մեր վրայով անանկ
կը կարծեն թէ մարմնաւորապէս կը քալենք։
3 Քանզի թէպէտ մարմինի մէջ կը քալենք, բայց
չէ թէ մարմնաւորապէս զինուորութիւն կ'ընենք.
4 Ինչու որ մեր զինուորութեան զէնքերը մարմնա-
ւոր չեն, հապա Աստուծմէ զօրութիւն առած՝
ամրոցները քակելու. մենք խորհուրդներ կը քա-
5 կենք, Եւ Աստուծոյ գիտութեանը դէմ բոլոր
հպարտացած բարձր բաները, ու բոլոր միտքերը
6 Քրիստոսի հնազանդութեանը գերի կ'ընենք. Եւ
պատրաստութիւն ունինք վրէժ առնելու ամէն
անհնազանդութենէ, երբոր ձեր հնազանդութիւնը
7 կատարեալ ըլլայ։ Դուրսի երեւութի՞ն կը նայիք.
թէ որ մէկը վստահ ըլլայ իր անձին վրայ՝ թէ
ինքը Քրիստոսինն է, աս նորէն ինքիրմէ խորհի՝
որ ինչպէս ինքը Քրիստոսինն է, անանկ ալ մենք*։
8 Քանզի թէ որ աւելի ալ պարծենալու ըլլամ աս
մեր իշխանութեանը վրայով՝ որ Տէրը մեզի տուաւ՝
ձեզ շինելու ու չէ թէ քակելու համար, պիտի
9 չամչնամ. Որ անանկ չերեւիմ՝ որպէս թէ ես
10 թուղթերովս ձեզի վախ մը կը ձգեմ. Քանզի՝
Անոր թուղթերը, կ'ըսէ մէկը, ծանր ու զօրաւոր
են, բայց անոր մարմնոյն երեւոյթը տկար է, ու
11 խօսքը՝ անարգ. Անանկ մարդը աս թող խորհի,
որ մենք հեռուէն ինչպէս որ ենք խօսքով մեր
թուղթերովը, մօտէն ալ անանկ պիտի ըլլանք
12 գործքով։ Ինչու որ մենք չենք համարձակիր մեր
անձը կշիռքի դնել ու բաղդատել ոմանց հետ,

---

*Ոմանք կ'աւելցընեն Քրիստոսինն ենք

որ ինքզինքնին կը գովեն. բայց անոնք իրենցմով
իրենց անձերը չափելով, և զիրենք իրենց հետ
13 բաղդատելով՝ չեն հասկնար։ Բայց մենք չափէ
դուրս բաներով պիտի չպարծենանք, հապա այն
կանոնին չափովը՝ որ Աստուած մեզի բաժին տուաւ
14 մինչև ձեզի հասնելու։ Չէ թէ որպէս թէ մենք
ձեզի հասած չենք, ու ինքզինքնիս չափէն աւելի
կ'երկընցընենք. ինչու որ Քրիստոսի աւետարա-
15 նովը մինչև ձեզի հասանք։ Եւ չէ թէ չափէ դուրս
բաներով՝ ուրիշներուն աշխատանքովը կը պար-
ծենանք, հապա յոյս ունինք որ ձեր հաւատքը
աւելնալուն՝ մեր կանոնին չափովը ձեզմով աւելի
16 ընդարձակինք, Ձեզմէ անդին կողմերը աւետա-
րանը քարոզելու, և չէ թէ պատրաստ բաներու
17 վրայ պարծենալու ուրիշի մը կանոնով։ Բայց ան
որ կը պարծենայ՝ թող Տէրոջմով պարծենայ։
18 Վասն զի չէ թէ ան որ իր անձը կը գովէ՝ անիկա
է ընտրուածը, հապա ան որ Տէրը զանիկա կը գովէ։

ԳԼ. ԺԱ

1 Երանի թէ քիչ մը ներէիք իմ անմտութեանս.
2 և իրաւցընէ համբերեցէք ինծի։ Վասն զի ձեր
վրայ նախանձաւոր եմ Աստուծոյ նախանձովը.
ինչու որ ես ձեզ մէկ էրկան մը նշանեցի՝ մաքուր
3 կոյսի մը պէս Քրիստոսի դիմացը հանելու։ Միայն
թէ կը վախնամ՝ չըլլայ թէ ինչպէս որ օձը Ե-
ւան խաբեց իր խորամանկութիւնովը, անանկ ալ
ձեր միտքերը ապականին Քրիստոսի վրայ եղած
4 միամտութենէն։ Վասն զի թէ որ մէկը գալու ըլ-
լայ և ուրիշ Յիսուս քարոզէ՝ որ մենք ան չքա-
րոզեցինք, կամ ուրիշ հոգի առնէք՝ որ չառիք,
կամ ուրիշ աւետարան՝ որն որ չէք ընդունած,
5 անանկներուն աղէկ կը համբերէիք։ Քանզի ես ա-
նանկ կը սեպեմ՝ որ ամենէն երեւելի առաքեալ-

6 Ներքին բանով մըն ալ պակաս չեմ։ Նաև թէպէտ
խօսքի կողմէ անկիրթ եմ, բայց չէ թէ գիտու-
թեան կողմէ. սակայն ամէն բանի մէջ բոլորովին
7 անձերնիս ձեզի յայտնի ըրինք։ Միթէ յանցա՞նք
գործած եղայ՝ որ Աստուծոյ աւետարանը ձեզի
ձրի քարոզելով իմ անձս խոնարհեցուցի, որ
8 դուք բարձրանաք։ Ուրիշ եկեղեցիները կողոպ-
տեցի՝ անոնցմէ թոշակ առնելով ձեզի ծառայելու
9 համար։ Ու ձեր քովը գտնուած ատենս՝ երբոր
պակասութիւն մը ունեցայ, ոչ մէկուն ձանձ-
րութիւն չտուի. ինչու որ իմ պակասութիւնս լե-
ցուցին Մակեդոնիայէն եկող եղբայրները. և ա-
մէն կերպով ձեզի ծանրութիւն տալէն իմ անձս
10 պահեցի՝ ու պիտի պահեմ ալ։ Քրիստոսի ճշմար-
տութիւնը իմ ներսի դիս է, որ աս իմ պարծե-
նալս պիտի չխափանուի ինծմէ Աքայիայի կող-
11 մերը։ Ինչո՞ւ. որպէս թէ չե՞մ սիրեր ձեզ. ան
12 Աստուած գիտէ։ Բայց ան որ կ'ընեմ՝ պիտի ը-
նեմ ալ, որ կտրեմ անոնց պատճառը՝ որոնք
պատճառ կը փնտռեն, որ ինչ բանով կը պարծե-
13 նան, իրենք ալ մեզի պէս գտնուին։ Ինչու որ
անանկները սուտ առաքեալներ՝ խաբեբայ բան-
ւորներ ըլլալով, Քրիստոսի առաքեալներուն
14 կերպարանքը վրանին կ'առնեն։ Նաև զարմանք մը
չէ. ինչու որ ինքը Սատանան ալ լուսաւոր հրեշ-
15 տակի կերպարանք կ'առնէ։ Ալ մեծ բան մը չէ,
որ անոր պաշտօնեաներն ալ արդարութեան
պաշտօնեաներու նման կերպարանք կ'առնեն. ո-
րոնց վերջը իրենց գործքերուն համեմատ պիտի
16 ըլլայ։ Դարձեալ կ'ըսեմ, չըլլայ որ մէկը զիս ան-
միտ սեպէ, հապա թէ չէ՝ գոնէ անմիտի մը պէս
զիս ընդունեցէք, որ ես ալ քիչ մը պարծենամ։
17 Ան որ ես կը խօսիմ՝ չէ թէ Տէրոջը կամօքը պէս
կը խօսիմ, հապա որպէս թէ անմտութիւնով մը
18 աս պարծենալուն վստահութիւնովը։ Որովհետև

շատերը մարմնոյ կողմանէ կը պարծենան, ես ալ
19 պիտի պարծենամ։ Քանզի դուք իմաստուն ըլ-
լալով՝ յօժարութեամբ կը համբերէք անմիտնե-
20 րուն։ Ինչու որ կը համբերէք, թէ որ մէկը ձեզ
ծառայեցընէ, թէ որ մէկը ձեր ստացուածքը ու-
տէ, թէ որ մէկը ձեզմէ բան մը առնէ, թէ որ
մէկը ձեր վրայ հպարտանայ, թէ որ մէկը ձեր ե-
21 րեսին զարնէ։ Քամահրանքի ձևով կը խօսիմ,
իբր թէ մենք տկար էինք, բայց ինչ բանով որ
մէկը պարծենալու կը համարձակի՝ (անմտութեամբ
22 կը խօսիմ,) ես ալ կը համարձակիմ։ Անոնք Եբ-
րայեցի՞ են, ես ալ. Իսրայելացի՞ են, ես ալ. Աբ-
23 րահամու՞ սերունդ են, ես ալ. Քրիստոսի պաշտօն-
եանե՞ր են, (յիմարաբար կը խօսիմ՝) ալ աւելի
ես. աշխատանքներով՝ աւելի, ծեծերով՝ ալ ա-
ւելի, բանտարկութիւններով՝ աւելի, մահուան
24 վտանգներով շատ անգամ։ Հրէաներէն հինգ ան-
գամ քառասունէն մէկ մը պակաս ծեծ կերայ.
25 Երեք անգամ ձաղկով ծեծուեցայ. մէկ անգամ
քարկոծուեցայ. երեք անգամ նաւաբեկութեան
հանդիպեցայ. գիշեր մը ու ցորեկ մը ծովուն ան-
26 դունդը մնացի. Շատ անգամ ճամբորդութեանց
մէջ չարչարուեցայ. գետերէն վտանգներ, աւա-
զակներէն վտանգներ, իմ ազգէս վտանգներ, հե-
թանոսներէն վտանգներ, քաղաքի մէջ վտանգ-
ներ, անապատի մէջ վտանգներ, ծովու վրայ
վտանգներ, սուտ եղբայրներու մէջ վտանգներ
27 կրեցի. Ջանքի ու աշխատանքի մէջ, շատ անգամ
քնահատութեան մէջ, անօթութեան ու ծարա-
ւութեան մէջ, շատ անգամ ծոմ կենալու մէջ,
28 ցուրտի ու մերկութեան մէջ էի. Զատ արտաքին
նեղութիւնները, ամէն օրուան զբաղմունքը՝ բոլոր
29 եկեղեցիներուն հոգը վրաս կը դիզուէր։ Ո՞վ կը
տկարանայ, ու ես չեմ տկարանար. ո՞վ կը գայ-
30 թակղի, ու իմ սիրտս չայրիր։ Թէ որ պարծե-

նալ պէտք ըլլայ, տկարութեանս բաներուն վրայ
31 պարծենամ։ Աստուած և մեր Տէր Յիսուս Քրիս-
տոսի Հայրը՝ որ յաւիտեան օրհնեալ է, գիտէ որ
32 սուտ չեմ զրուցեր։ Դամասկոսի մէջ Արետա
թագաւորին ազգապետը գիս բռնել ուզելով՝
Դամասկացւոց քաղաքը պահապաններ դրեր էր.
33 Ու ես պատուհանէ մը զամբիւղով պարսպէն վար
թող տրուեցայ, ու անոր ձեռքէն փախայ։

ԳԼ. ԺԲ

1 Պարծենալ *իրաւցընէ ինծի անօգուտ է. միայն
թէ Տէրոջը տեսիլքներուն ու յայտնութիւննե-
2 րուն գամ։ Մարդ մը գիտեմ Քրիստոսով տասն-
ւչորս տարի առաջ, (եթէ մարմինով էր՝ չեմ
գիտեր, և եթէ առանց մարմնի՝ չեմ գիտեր,
Աստուած գիտէ,) որ անանկ մէկը յափշտակուե-
3 ցաւ մինչև երրորդ երկինքը։ Ու գիտեմ անանկ
մարդ մը, (եթէ մարմինով և եթէ առանց մար-
4 մնի՝ չեմ գիտեր, Աստուած գիտէ,) Որ դրախտը
յափշտակուեցաւ ու լսեց չպատմուելու խօսքեր,
5 որ մարդու արժան չէ խօսիլ։ Ես անանկին հա-
մար պիտի պարծենամ. բայց իմ անձիս համար
պիտի չպարծենամ, հապա միայն տկարութեանս
6 վրայ։ Ինչու որ եթէ պարծենալ ալ ուզեմ՝ ան-
միտ պիտի չըլլամ, որովհետև շիտակը պիտի զրու-
ցեմ. բայց կը խնայեմ [illegible]՝ որ չըլլայ թէ մէկը
իմ վրաս աւելի համարուի ունենայ, քան որչափ
7 որ իմ վրաս կը տեսնէ կամ ինծմէ կը լսէ։ Ու
որ չըլլայ թէ ես հպարտանամ խիստ շատ յայտ-
նութիւններուն համար, ինծի մարմնի խայթոց մը
տրուեցաւ, Սատանայի հրեշտակ մը՝ զիս նեղելու
8 համար, որ չըլլայ թէ հպարտանամ։ Անոր համար

*Ոմանք պէտք է, բայց

երեք անգամ աղաչեցի Տէրոջը, որ մէկդի ընէ
9 ինծմէ։ Ու ըսաւ ինծի, Իմ շնորհքս հերիք է
քեզի, ինչու որ իմ զօրութիւնս տկարութեան
մէջ կը կատարուի. ուստի մեծ յօժարութեամբ
աւելի իմ տկարութիւններուս վրայ պիտի պար-
ծենամ, որ Քրիստոսի զօրութիւնը իմ վրաս
10 հանգչի։ Անոր համար հաճեր եմ ես տկարու-
թիւններու, նախատինքներու, տառապանքնե-
րու, հալածանքներու ու նեղութիւններու՝ Քրիս-
տոսի համար. ինչու որ երբոր կը տկարանամ,
11 այն ատենը զօրաւոր եմ։ Ես անմիտ եղայ *պար-
ծենալով. դուք ստիպեցիք զիս. վասն զի ինծի
պէտք էր ձեզմէ վկայութիւն առնել, քանզի ես
երևելի առաքեալներէն բանով մը պակաս չըր-
12 նուեցայ, թէ և ես ոչինչ եմ։ Ցիրաւի ձեր մէջը
առաքեալի նշաններ գործուեցան ամէն համբե-
րութիւնով, նշաններով և սքանչելիքներով ու
13 զօրութիւններով. Վասն զի ալ ի՞նչ կայ, որ անով
պակաս գտնուեցաք ուրիշ եկեղեցիներէն, միայն
թէ անով՝ որ ես ձեզի ծանրութիւն չտուի. ներ-
եցէք ինծի այս յանցանքը։
14 Ահա աս երրորդ անգամ է որ կը պատրաստուիմ
ձեզի գալու. և ես ձեզի ծանրութիւն պիտի չտամ,
ինչու որ ձեր ունեցածը չեմ փնտռեր, հապա ձեզ.
որովհետև որդիները պարտաւոր չեն ծնողքնե-
րուն համար բան դիզել, հապա ծնողքները՝ որ-
15 դիներուն համար։ Ու ես մեծ յօժարութեամբ
ծախք պիտի ընեմ, ու ծախք պիտի ըլլամ ալ
ձեր անձերուն համար, թէպէտև ձեզ աւելի սի-
րելով [illegible] քիչ սիրուիմ ալ։
16 Սակայն թող ըլլայ որ ես ձեզի ծանրութիւն մը
չտուի, բայց [illegible] [illegible] [illegible] խորագէտ ըլլա-
17 լով նենգութեամբ ձեզ բռնեցի։ Միթէ իմ ձեզի

*Ոմանք [illegible]

խրկածներուս մէկուն ձեռքովը ձեզմէ բան մը
18 քաշեցի՞։ Տիտոսին աղաչեցի, ու անոր հետը ան
եղբայրը խրկեցի. միթէ Տիտոս ձեզմէ բան մը
քաշե՞ց. չէ՞ որ երկուքնիս ալ նոյն հոգիով քալե-
ցինք, չէ՞ որ նոյն ճամբով պտըտեցանք։
19 Դարձեալ կը կարծէք որ ձեր առջին ջատագո-
վութի՞ւն կ'ընենք մեր անձերուն. Աստուծոյ առ-
ջեւը Քրիստոսով կը խօսինք. և ամէն բան, սի-
20 րելիք, ձեր շինութեանը համար է. Քանզի կը վախ-
նամ որ չըլլայ թէ երբոր գամ՝ ձեզ ուզածիս պէս
չգտնեմ, և ես ալ ձեզի ձեր չուզածին պէս գըտ-
նուիմ. չըլլայ թէ ձեր մէջը գտնուին վէճեր, նա-
խանձներ, սրտմտութիւններ, գրգռութիւններ,
չարախօսութիւններ, բանսարկութիւններ, ամ-
21 բարտաւանութիւններ, խռովութիւններ. Չըլլայ
թէ երբոր նորէն գամ՝ իմ Աստուածս զիս նկուն
ընէ ձեր քովը, ու սուգ ընեմ շատերուն համար՝
որ առաջուց մեղք գործեցին, ու չապաշխարեցին
իրենց գործած պղծութեանը և պոռնկութեանը
ու գիճութեանը վրայ։

ԳԼ. ԺԳ

1 Աս երրորդ անգամ է որ ձեզի կուգամ. երկու
կամ երեք վկաներու բերնէ պիտի հաստատուի
2 ամէն բան։ Առաջուց ըսեր եմ՝ և նորէն առա-
ջուց կը գրուցեմ (որպէս թէ երկրորդ անգամ
ներկայ կը գտնուիմ՝ թէև հիմա հեռուէն կը
գրեմ) առջի մեղանչողներուն և ուրիշ ամենուն,
3 որ եթէ նորէն գամ՝ պիտի չխնայեմ. Որովհե-
տև Քրիստոսի ինծմով խօսելուն ապացոյցը կը
փնտռէք, որ ինքը ձեր վրայ տկարացած չէ, հա-
4 պա ձեր մէջը զօրացած է. Որ թէպէտ խաչուե-
ցաւ տկարութիւնով, բայց կենդանի է Աստու-
ծոյ զօրութեամբը. քանզի մենք ալ թէպէտ կը

տկարանանք անով, բայց կենդանի պիտի ըլլանք
անոր հետ Աստուծոյ զօրութեամբը ձեր մէջը։
5 Փորձեցէք ձեր անձերը թէ հաւատքին մէ՞ջն էք.
քննեցէք ձեր անձերը. չէ՞ք գիտեր ինքզինքնիդ,
որ Յիսուս Քրիստոս ձեր մէջն է, միայն թէ որ
6 խոտելի չըլլաք։ Բայց կը յուսամ որ պիտի գիտ-
7 նաք թէ մենք խոտելի չենք։ Եւ կը խնդրեմ Աս-
տուծմէ որ դուք մէկ չարութիւն մը չընէք. չէ
թէ՝ որ մենք ընտիր երևինք, հապա որ դուք
բարին գործէք, թէև մենք իբրև խոտելի ըլլանք։
8 Ինչու որ ճշմարտութեան դէմ կարողութիւն մը
9 մը չունինք, հապա ճշմարտութեան համար։ Քան-
զի ուրախ ենք՝ երբոր մենք կը տկարանանք ու
դուք զօրաւոր կ'ըլլաք, և մենք ալ աս ձեր
10 հաստատութեանը համար կ'աղօթենք։ Ուստի աս
կը գրեմ ձեզի հեռուէն, որ չըլլայ թէ երբոր
գամ՝ սաստկութեամբ վարուիմ ան իշխանու-
թեանը համեմատ, որ Տէրը ինծի տուաւ շինելու
և չէ թէ քակելու համար։
11 Վերջապէս, եղբայրներ, ողջ եղէք, հաստա-
կեցէք, մխիթարուեցէք, միաբան եղէք, խաղա-
ղութիւն ըրէք. և սիրոյ ու խաղաղութեան Աստ-
12 ուածը ձեր հետը պիտի ըլլայ։ Բարև տուէք ի-
րարու սուրբ համբուրով. բարև կ'ընեն ձեզի բո-
13 լոր սուրբերը։ Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը և
Աստուծոյ սէրը ու Հոգւոյն Սրբոյ հաղորդու-
թիւնը ձեր ամենուն հետը ըլլայ։ Ամէն։

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

ԱՌ ԳԱՂԱՏԱՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս առաքեալ եղած՝ չէ թէ մարդոցմէ ու չէ
թէ մարդու ձեռքով, հապա Յիսուս Քրիստոսի
ձեռքովը, և Հօր Աստուծոյ՝ որ զանիկա մեռել-
2 ներէն յարուց, Եւ բոլոր եղբայրները որ իմ
3 հետս են՝ Գաղատիոյ եկեղեցիներուդ. Շնորհք և
խաղաղութիւն ձեզի Հօր Աստուծմէ ու մեր Տէր
4 Յիսուս Քրիստոսէն, Ան որ իր անձը տուաւ մեր
մեղքերուն համար, որ մեզ փրկէ հիմակուան չար
աշխարհէն՝ Աստուծոյ ու մեր Հօրը կամացը հա-
5 մեմատ, Որուն փառք յաւիտեանս յաւիտենից.
Ամէն.

6 Կը զարմանամ որ այդպէս շուտով ուրիշ աւե-
տարանի կը փոխուիք անկէ՝ որ ձեզ Քրիստոսի
7 շնորհացը կանչեց. Որ չկայ ուրիշ աւետարան.
միայն թէ կան ոմանք՝ որ ձեզ կը խռովեցընեն,
ու կ'ուզեն Քրիստոսի աւետարանը խանգարել.
8 Բայց թէ որ մենք կամ երկինքէն հրեշտակ մը
գայ, աւետարանէ ձեզի անկէ ուրիշ՝ որ մենք ա-
9 ւետարանեցինք ձեզի, Նզովեալ ըլլայ։ Ինչպէս որ
առաջ ըսինք, հիմա ալ նորէն կ'ըսեմ, թէ որ

մէկը ձեր ընդունածէն ուրիշ աւետարան քարո-
10 զելու ըլլայ ձեզի, Նզովեալ ըլլայ։ Քանզի հիմա
մարդի՞կ կը հաճեցընեմ թէ զԱստուած. կամ
մարդո՞ց հաճելի ըլլալ կը փնտռեմ. ինչու որ ե-
թէ ես տակաւին մարդոց հաճելի ըլլայի, ալ Քրիս-
տոսի ծառայ չէի ըլլար։
11 Կը ծանուցանեմ ձեզի, եղբայրներ, ան աւե-
տարանը որ ինծմէ քարոզուեցաւ, թէ անիկա
12 մարդու բան չէ։ Որովհետև ես ալ մարդէ չառի
անիկա, և մէկէ մըն ալ չսորվեցայ, հապա Յիսուս
13 Քրիստոսի յայտնութենէն. Վասն զի լսած էք
դուք իմ առջի ժամանակի վարմունքս Հրէու-
թեան մէջ, ինտոր չափէ դուրս կը հալածէի Աս-
14 տուծոյ եկեղեցին՝ ու կը կործանէի զանիկա. Եւ
իմ հայրենի աւանդութիւններուս խիստ նախան-
ձաւոր ըլլալով՝ իմ ազգիս մէջ եղած շատ հա-
սակակիցներէս աւելի յառաջադէմ էի Հրէու-
15 թեան մէջ։ Բայց երբոր ուզեց Աստուած՝ (որ
որոշեց զիս իմ մօրս որովայնէն, և իր շնորհքովը
16 զիս կանչեց,) *Ինծի իր Որդին յայտնել, որ զա-
նիկա հեթանոսաց մէջ քարոզեմ, մէկէն ՚ի մէկ
17 բան մը չիմացուցի մարմինին ու արիւնին, Ոչ ալ
Երուսաղէմ ելայ ինծմէ առաջ առաքեալ եղող-
ներուն քովը, հապա Արաբիա գացի, ու նորէն
18 Դամասկոս դարձայ։ Ետքը երեք տարիէն ետև
Երուսաղէմ ելայ Պետրոսը տեսնելու, և տասն-
19 ուհինգ օր անոր քովը կեցայ. Սակայն առաքեալ-
ներէն ուրիշ մէկը չտեսայ, բայց միայն Յակոբոս՝
20 Տէրոջը եղբայրը։ Բայց աս որ կը գրեմ ձեզի՝
ահա Աստուծոյ առջևը կը հաստատեմ, որ սուտ
21 չեմ զրուցեր։ Անկէ ետքը եկայ Սիւրիայի ու Կի-
22 լիկիայի կողմերը. Եւ զիս դէմ առ դէմ չէին
ճանչնար ան եկեղեցիները՝ որ Հրէաստանի մէջ

---

*Կամ ինծմով

23 էին Քրիստոսով. Միայն թէ անոնք լսած էին
թէ Ան որ ատենօք մեզ կը հալածէր, հիմա ինքը
ան հաւատքը կը քարոզէ՝ որ ատեն մը կը կործա-
24 նէր. Ու ինծմով զԱստուած կը փառաւորէին։

ԳԼ. Բ

1 Ետքը տասնըչորս տարիէն ետև նորէն Երու-
սաղէմ ելայ Բառնաբասին հետ՝ Տիտոսն ալ մէկ-
2 տեղ առնելով։ Ու ելայ յայտնութիւնով, և ա-
նոնց իմացուցի ան աւետարանը՝ որ հեթանոս-
ներուն մէջ կը քարոզեմ, բայց առանձին անոնց
որ երևելիներ էին, որ չըլլայ թէ պարապ տեղը
3 վազեմ կամ վազած ըլլամ։ Բայց չէ թէ իմ հետս
եղող Տիտոսն ալ՝ որ Յոյն էր, պարտաւորեցաւ
4 թլփատուելու. Մանաւանդ ներս սպրդած սուտ
եղբայրներուն համար՝ որոնք սահելով ներս մտան
Քրիստոս Յիսուսով մեր ունեցած ազատութիւնը
5 լրտեսելու համար, որ մեզ ծառայեցնեն. Որ
անոնց քիչ մը ատեն անգամ մոլիկ չըրինք հնա-
զանդելու, որ աւետարանին ճշմարտութիւնը հաս-
6 տատուն մնայ ձեր մէջը։ Բայց անոնք որ կը կար-
ծուէին բան մը ըլլալ, ինչ որ էին՝ ան իմ հոգս
չէ. Աստուած մարդոց աչառութիւն չըներ. վասն
զի անոնք կարծուածները բան մը չիմացուցին
7 ինծի։ Հապա անոր հակառակը՝ երբոր տեսան որ
անթլփատներուն աւետարանը ինծի յանձնուած
է, ինչպէս Պետրոսին ալ՝ թլփատուածներունը.
8 (Վասն զի ան որ Պետրոսին յաջողեց թլփատուած-
ներուն առաքելութիւն ընելու, ինծի ալ յաջո-
9 ղեց հեթանոսներունը.) Ու երբոր ինծի տրուած
շնորհքը գիտցան Յակոբոս ու Կեփաս և Յովհան-
նէս՝ որոնք սիւներ սեպուած էին, աջ ձեռքեր-
նին տուին ինծի ու Բառնաբասին 'ի նշան հաղոր-
դակցութեան, որ մենք հեթանոսներուն մէջը

10 երթանք, ու անոնք՝ թլփատուածներուն. Միայն
թէ կը խնդրէին որ աղքատները յիշենք. որ ես ալ
11 փոյթ ունեցայ ան բանը ընելու։ Բայց երբոր
Պետրոս Անտիոք եկաւ, ես անոր դէմ կեցայ.
12 որովհետև ինքը մեղադրուելու էր։ Ինչու որ դեռ
Յակոբոսին քովէն մէկ քանի հոգի չեկած, ինքը
հեթանոսներուն հետ անխտրաբար կ'ուտէր. բայց
երբոր եկան՝ մէկդի կը քաշուէր, ու ինքզինքը
կը զատէր, վախնալով անոնցմէ՝ որ թլփատուած-
13 ներէն էին։ Եւ անոր հետ կեղծաւորեցան միւս
Հրէաներն ալ, անանկ որ Բառնաբաս ալ անոնց
14 կեղծաւորութեանը ծռեցաւ։ Բայց ես երբոր տե-
սայ որ աւետարանին ճշմարտութեանը մէջ շիտակ
չեն քալեր, ամենուն առջին Պետրոսին զրուցեցի,
Եթէ դուն, որ Հրէայ ես, հեթանոսի պէս ու չէ
թէ Հրէայի պէս կ'ապրիս, ի՞նչպէս հեթանոսները
15 կը ստիպես Հրէայի պէս վարուելու։ Մենք որ
բուն Հրէայ ենք, և չէ թէ հեթանոսներէն մե-
16 ղաւորներ, Աս գիտնալով որ մարդ օրէնքին
գործքերէն չկրնար արդարանալ, հապա Յիսուս
Քրիստոսի հաւատքէն, մենք ալ Քրիստոս Յի-
սուսի հաւատացինք՝ որ արդարանանք Քրիս-
տոսի հաւատքէն, և չէ թէ օրէնքին գործքե-
րէն, որովհետև օրէնքին գործքերէն մէկ մար-
17 մին մը պիտի չարդարանայ։ Իսկ եթէ մենք որ
կ'ուզենք Քրիստոսով արդարանալ՝ մեղաւոր
գտնուինք, ուրեմն Քրիստոս մեղաց պաշտօնեա՞յ
18 եղաւ. քաւ լիցի։ Քանզի թէ որ ես իմ քակած
բաները նորէն կը շինեմ, իմ անձս յանցաւոր
19 կը ցուցնեմ։ Ինչու որ ես օրէնքով մեռայ օ-
րէնքին, որ Աստուծոյ կենդանի ըլլամ։ Քրիս-
20 տոսի հետ խաչը ելայ. Եւ ալ կենդանի եմ չէ
թէ ես՝ հապա Քրիստոս կենդանի է իմ մէջս.
բայց ես որ հիմա մարմինովս կ'ապրիմ՝ Աստու-
ծոյ Որդւոյն հաւատքովը կ'ապրիմ, ան որ զիս

21 սիրեց ու իր անձը ինծի համար մատնեց։ Ես
Աստուծոյ շնորհքը չեմ խափաներ. ինչու որ
եթէ արդարութիւնը օրէնքէն էր, ուրեմն Քրիս-
տոս պարապ տեղը մեռաւ։

ԳԼ. Գ

1 Ո՛վ անմիտ Գաղատացիք, ո՞վ ձեզ հրապուրեց*.
որ ձեր աչքերուն առջեւ Յիսուս Քրիստոս ձեր
2 մէջը խաչը ելած նկարագրուեցաւ։ Ասիկա միայն
կ'ուզեմ ձեզմէ սորվիլ. Օրէնքի՞ն գործքերովը
3 դուք Հոգին առիք՝ թէ հաւատքին լսելովը։ Այդ-
չափ անմի՞տ էք. հոգիով սկսեցիք, ու հիմա
4 մարմինո՞վ կը վերջանաք։ Այնչափ դիպուածները
պարա՞պ տեղը ձեր վրայէն անցան, (թէ որ պա-
5 րապ ըլլայ ալ։) Ուստի ան որ ձեզի Հոգին բաշ-
խեց և ձեր մէջը զօրութիւններ գործեց, օրէն-
քի՞ն գործքերովն էր՝ թէ հաւատքին լսելովը։
6 Ինչպէս որ Աբրահամ Աստուծոյ հաւատաց, ու
7 անոր արդարութիւն սեպուեցաւ։ Ուրեմն գիտ-
ցէք թէ անոնք որ հաւատքէն են՝ անոնք են
8 Աբրահամի որդիքը։ Եւ գիրքը առաջուց գիտ-
նալով թէ Աստուած հեթանոսները հաւատքով
կ'արդարացընէ՝ առաջուց աւետիս տուաւ Աբ-
րահամին, թէ Քեզմով պիտի օրհնուին բոլոր ազ-
9 գերը։ Ուստի անոնք որ հաւատքէն են՝ կ'օրհ-
10 նուին հաւատացեալ Աբրահամին հետ։ Վասն զի
անոնք որ օրէնքին գործքերէն են՝ անէծքի տակ
են. ինչու որ գրուած է թէ Անիծեալ ըլլայ ա-
մէն մարդ՝ որ օրէնքին գիրքը ամէն գրուածնե-
11 րուն մէջ չկենար՝ որ զանոնք կատարէ։ Եւ թէ
օրէնքով մէկը չկրնար արդարանալ Աստուծոյ

*Ոմանք կ'աւելցընեն ճշմարտութեանը չհնազանդելու։

առջեւ, ան յայտնի է. քանզի Արդարը հաւատ-
12 քէն պիտի ապրի։ Բայց օրէնքը հաւատքէն չէ,
հապա Ան որ կը կատարէ ան բաները՝ անոնցմով
13 պիտի ապրի։ Քրիստոս մեզ ծախու առաւ օրէն-
քին անէծքէն՝ ինքը մեզի համար անէծք ըլլա-
լով. (ինչու որ գրուած է թէ Անիծեալ է ան ա-
14 մէնը՝ որ փայտէ կը կախուի.) Որ Աբրահամին
օրհնութիւնը հեթանոսներուն վրայ ըլլայ Քրիս-
տոս Յիսուսով. որ մենք ալ Հոգւոյն խոստման-
15 քը առնենք հաւատքով։ Մարդու սովորութեանը
պէս կը զրուցեմ, եղբայրներ. իրաւ որ մարդու
մը հաստատած կտակը մէկը չխափաներ, ոչ ալ
16 անոր վրայ ուրիշ պատուէր մը կ'աւելցընէ։ Արդ
խոստումները Աբրահամին ու անոր սերուն-
դին եղան. չըսեր, Եւ քու սերունդներուդ՝ որ-
պէս թէ շատերու համար, հապա որպէս թէ մէ-
կու մը համար, Եւ քու սերունդիդ, որ ան Քրիս-
17 տոս է։ Բայց աս կը զրուցեմ. Ան կտակը՝ որ ա-
ռաջուց Աստուծմէ հաստատուեցաւ Քրիստոսով,
օրէնքը չորս հարիւր երեսուն տարիէն ետեւ որ
դրուեցաւ, չկրնար անվաւեր ընել՝ խոստմունքը
18 խափանելու համար։ Վասն զի թէ որ ժառան-
գութիւնը օրէնքէն կ'ըլլայ, ուրեմն ա՛լ խոստ-
մունքէն չէ. բայց Աբրահամին խոստմունքով
շնորհեց Աստուած։

19 Հապա ինչո՞ւ համար է օրէնքը. յանցանաց հա-
մար վրայ աւելցաւ, (մինչեւ որ գայ ան սերունդը՝
որուն որ խոստացուեր էր,) հրեշտակներով տըր-
20 ուած՝ միջնորդի մը ձեռքով։ Բայց միջնորդը մէ-
կու մը միջնորդ չէ. սակայն Աստուած մէկ է։
21 Ուրեմն օրէնքը հակառա՞կ բան մըն է Աստուծոյ
խոստումներուն. քաւ լիցի. քանզի թէ որ
տրուած ըլլար այնպիսի օրէնք մը՝ որ կարող ըլլար
կենդանի ընել, ան ատենը իրաւցընէ արդարու-
22 թիւնը օրէնքէն կ'ըլլար։ Բայց գիրքը ամէնը

մեղքի տակ գոցեց, որ խոստմունքը Յիսուս
Քրիստոսի հաւատքովը տրուի հաւատացեալնե-
23 րուն։ Բայց քանի որ հաւատքը չէր եկած, օրէն-
քին տակը գոցուած կը պահուէինք, սպասելով
24 ան հաւատքին՝ որ պիտի յայտնուէր։ Ուրեմն օ-
րէնքը մեր դաստիարակը եղաւ՝ մեզ Քրիստոսի
բերելու, որ մենք հաւատքով արդարանանք։
35 Բայց երբոր հաւատքը եկաւ, ալ դաստիարակի
26 տակ չենք։ Ինչու որ ամէնքդ ալ Աստուծոյ որ-
դիք էք՝ Քրիստոս Յիսուսի վրայ եղած հաւատ-
27 քով։ Քանզի դուք ամէնքդ որ Քրիստոսով
մկրտուեցաք, Քրիստոսը վրանիդ հագած էք։
28 Այսուհետեւ ոչ Հրեայ կայ, ոչ ալ Յոյն. ոչ ծա-
ռայ կայ, ոչ ալ ազատ. ոչ արու կայ, ոչ ալ էգ.
ինչու որ դուք ամէնքդ ալ մէկ էք Քրիստոս
29 Յիսուսով։ Հապա թէ որ դուք Քրիստոսինն էք,
ուրեմն Աբրահամին սերունդն էք, ու խոստմուն-
քին նայելով ժառանգներ։

ԳԼ. Դ

1 Բայց ես կը զրուցեմ, որչափ ժամանակ որ ժա-
ռանգը տղայ է՝ ծառայէն տարբերութիւն մը
2 չունի, թէեւ ամենուն տէրն է. Հապա խնամա-
կալներու ու հոգաբարձուներու տակ է՝ մինչեւ
3 հօրը որոշած ժամանակը։ Ասանկ ալ մենք երբոր
տղայ էինք, աշխարհիս սկզբունքներուն տակը
4 ծառայ եղած էինք։ Բայց երբոր ժամանակը
լեցուեցաւ, խրկեց Աստուած իր Որդին՝ որ կնիկէ
5 մը եղաւ, ու օրէնքի տակ մնաւ. Որպէս զի օ-
րէնքի տակ եղողները փրկէ, որ մենք որդեգրու-
6 թիւնը ընդունինք։ Եւ որովհետեւ դուք որդիք
էք, Աստուած իր Որդւոյն Հոգին *ձեր սրտե-

*Ոմանք մեր

րուն մէջը խրկեց, որ կ'աղաղակէ Աբբա Հայր։
7 Ուստի ալ ծառայ չես, հապա որդի. եւ թէ որ
որդի, ալ Աստուծոյ ժառանգը Քրիստոսով։
8 Բայց անատենը որ չէիք գիտեր զԱստուած, կը
ծառայէիք անոնց՝ որոնք 'ի բնէ Աստուածներ
9 չէին։ Սակայն հիմա որ ճանչցաք զԱստուած՝ մա-
նաւանդ որ դուք Աստուծմէ ճանչցուեցաք, ին-
տա՞ր նորէն կը դառնաք ան տկար ու չքաւոր
սկզբունքներուն, որոնց նորէն կ'ուզէք ծառա-
10 յութիւն ընել։ Օրերը կը զանազանէք, ու ամիս-
11 ները եւ ժամանակները ու տարիները։ Կը վախ-
նամ ձեզմէ, որ գուցէ պարապ տեղը ձեր վրայ
աշխատած ըլլամ։
12 Ինծի պէս եղէք, ինչու որ ես ալ ձեզի պէս ե-
ղայ, եղբայրներ, ձեզի կ'աղաչեմ. դուք ինծի
13 վնաս մը հասուցած չէք։ Գիտէք դուք որ մարմ-
նոյս տկարութեամբը ձեզի առջի անգամ աւե-
տարանը քարոզեցի. եւ իմ մարմինիս վրայ եղած
14 փորձութիւնս Չանարգեցիք ու չարհամարհեցիք,
հապա Աստուծոյ հրեշտակի մը պէս զիս ընդու-
15 նեցիք՝ Քրիստոս Յիսուսի պէս։ Ուրեմն *ի՞նչ էր
ան ձեր երանութիւնը. քանզի ես կը վկայեմ ձե-
զի, որ եթէ կարելի էր՝ ձեր աչքերը պիտի հա-
16 նէիք ու ինծի տայիք։ Ուստի ձեր թշնամի՞ն ե-
17 ղայ ձեզի ճշմարիտը խօսելուս համար։ Ձեզի նա-
խանձաւոր են անոնք՝ չէ թէ բարիին, եւ կ'ուզեն
†ձեզ արգիլել, որ իրենց նախանձաւոր ըլլաք։
18 Սակայն աղէկ է ամէն ատեն բարիին նախանձա-
ւոր ըլլալ, ու չէ թէ միայն երբոր ձեր մէջը ըլ-
19 լամ։ Իմ որդեակներս, որ ձեզմով նորէն ծնըն-
դական ցաւ կը քաշեմ՝ մինչեւ որ Քրիստոս ձեր
20 մէջը ձեւակերպի։ Կ'ուզէի հիմա ձեր մէջը ներ-

*կամ ո՞ւր է
†Ոմանք մեզ

կայ ըլլալ, ու փոխել իմ ձայնս. ինչու որ ես
ձեր վրայով տարակուսած եմ։
21 Ըսէք ինծի, դուք որ օրէնքին տակը կ'ուզէք
22 ըլլալ, օրէնքը չէ՞ք լսեր։ Վասն զի գրուած է թէ
Աբրահամ երկու որդի ունէր, մէկը՝ աղախինէն,
23 ու միւսը՝ ազատ կնիկէն։ Բայց ան որ աղախի-
նէն էր՝ մարմնոյ կողմանէ ծնած էր, իսկ ան որ
24 ազատ կնիկէն՝ խոստմունքին համեմատ։ Որ աս
բաները այլաբանօրէն կը մեկնուին. ինչու որ ա-
սոնք են երկու կտակարանները, մէկը Սինայ լեռ-
նէն՝ որ ծառայութեան համար կը ծնանի, որ է
25 Հագար։ Ինչու որ Հագար Արաբիայի մէջ Սինայ
լեռն է, և կը համեմատի հիմակուան Երուսաղե-
մին՝ որ իր զաւակներովը մէկտեղ կը ծառայէ։
26 Բայց վերի Երուսաղէմը ազատ է, որ մեր *ամե-
27 նուն մայրն է։ Ինչու որ գրուած է, Ով չծնա-
նող ամուլ, ցնծա. ով ծննդական ցաւ չքաշող,
գոչէ և աղաղակէ. քանզի երեսէ ձգուածին
տղաքները էրիկ ունեցողին տղաքներէն շատ պիտի
28 ըլլայ։ Ուստի մենք, եղբայրներ, Իսահակին պէս
29 խոստմունքին որդիներն ենք։ Բայց ինչպէս որ
անատենը մարմնոյ կողմանէ ծնածը կը հալածէր
զանիկա որ Հոգիին կողմանէ էր, անանկ ալ հի-
30 մա։ Սակայն գիրքը ի՞նչ կ'ըսէ. Դուրս հանէ աս
աղախինը ու անոր որդին, ինչու որ աղախինին
որդին ազատ կնկանը որդւոյն հետ ժառանգու-
31 թիւն պիտի չառնէ։ Ուստի, եղբայրներ, մենք
աղախինին զաւակները չենք, հապա ազատին։

ԳԼ. Ե

1 Ուստի ամուր կեցէք ան ազատութիւնովը՝ որով
Քրիստոս մեզ ազատեց, և նորէն ծառայութեան

*Ոմանք չունին

2 լուծի տակ մի մտնէք։ Ահա ես Պօղոս կը զրու-
ցեմ ձեզի որ եթէ թլփատուիք Քրիստոս ձեզի
3 օգուտ մը չըներ։ Ու դարձեալ ամէն թլփատ-
ուող մարդու կը վկայեմ թէ պարտական է բո-
4 լոր օրէնքը կատարելու։ Խափանած էք դուք
Քրիստոսէն, որ օրէնքով արդարանալ կ'ուզէք,
5 ու շնորհքէն ինկած էք։ Ինչու որ մենք Հոգիով
կը սպասենք արդարութեան յոյսին՝ հաւատ-
6 քովը։ Վասն զի Քրիստոս Յիսուսի քով ոչ թըլ-
փատութիւնը բանի մը կարող է, ոչ ալ անթըլ-
փատութիւնը, հապա հաւատքը՝ որ սիրով 'ի
7 գործ կը դրուի։ Դուք աղէկ կը վազէիք. ո՞վ ձեզ
ետ կեցուց՝ որ ճշմարտութեան չհնազանդիք։
8 Աս դրդումը անկէ չէ՝ որ ձեզ կանչեց։ (9) Քիչ
10 մը խմորը բոլոր զանգուածը կը խմորէ։ Բայց ես
յոյս ունիմ ձեր վրայ Տէրոջմով, որ ուրիշ կերպ
բան մը պիտի չխորհիք. և ան որ ձեզ կը խռո-
վեցընէ, դատապարտութիւն պիտի կրէ՝ ով որ
11 ըլլայ։ Սակայն, եղբայրներ, թէ որ ես տակաւին
թլփատութիւն կը քարոզեմ, ալ ինչո՞ւ կը հա-
լածուիմ. ուրեմն խաչին գայթակղութիւնը խա-
12 փանուած է։ Երանի թէ բոլորովին կտրուէին ա-
անոնք որ ձեզ կը խռովեցընեն։
13 Վասն զի դուք ազատութեան կանչուած էք,
եղբայրներ. միայն թէ չէր ազատութիւնը մարմ-
նոյ ցանկութիւններու պատճառ չըլլայ, հապա սի-
14 րով իրարու ծառայութիւն ըրէք։ Ինչու որ բո-
լոր օրէնքը աս մէկ խօսքին մէջ կը կատարուի,
15 թէ Քու ընկերդ սիրես քու անձիդ պէս։ Հապա
թէ որ իրար խածնէք և ուտէք, զգուշ կեցէք
16 որ չըլլայ թէ իրարմէ սպառիք։ Միայն թէ ես կը
զրուցեմ. Հոգիով գնացէք, ու մարմինին ցան-
17 կութիւնը պիտի չկատարէք։ Ինչու որ մարմինը
կը ցանկայ հոգիին հակառակ, ու հոգին մարմի-
նին հակառակ. և ասոնք իրարու հակառակ են,

18 որ չըլլայ թէ ինչ որ կ'ուզէք՝ ան ընէք։ Բայց
թէ որ Հոգիէն կ'առաջնորդուիք, ալ օրէնքին
19 տակը չէք։ Արդ մարմինին գործքերը յայտնի
են, որ ասոնք են. շնութիւն, պոռնկութիւն,
20 պղծութիւն, գիճութիւն, կռապաշտութիւն, կա-
խարդութիւն, թշնամութիւններ, կռիւներ, նա-
խանձներ, բարկութիւններ, հակառակութիւն-
21 ներ, երկպառակութիւններ, բաժանումներ, Չար
նայուածքներ, մարդասպանութիւններ, գինո-
վութիւններ, անառակութիւններ, ու ինչ որ ա-
սոնց նման են. որ հիմակուց ես ձեզի կը գրու-
ցեմ, ինչպէս առաջուց ալ կը գրուցէի, որ ա-
սանկ բաներ գործողները Աստուծոյ արքայու-
22 թիւնը պիտի չժառանգեն։ Բայց Հոգիին պտուղը
աս է. սէր, խնդութիւն, խաղաղութիւն, եր-
23 կայնմտութիւն, Քաղցրութիւն, բարութիւն, հա-
ւատարմութիւն, հեզութիւն, ժուժկալութիւն.
24 ասանկ բաներուն դէմ օրէնք չկայ։ Եւ անոնք
որ Քրիստոսիններն են՝ իրենց մարմինը խաչ հա-
նեցին անոր կիրքերով ու ցանկութիւններով
25 մէկտեղ։ Թէ որ Հոգիով կ'ապրինք, Հոգիին հա-
26 մեմատ քալենք։ Սնապարծ չըլլանք՝ մէկզմէկ
գրգռելով ու իրարու վրայ նախանձելով։

Գլ. Զ

1 Եղբայրներ, թէ որ մէկը յանկարծ ինչ և իցէ
յանցանքով բռնուելու ըլլայ, դուք որ հոգևոր
էք՝ անանկը հեզութեան հոգիով ուղղութեան
բերէք. քու անձիդ ալ զգուշութիւն ըրէ որ չըլ-
2 լայ թէ փորձութեան մէջ իյնաս։ Իրարու նեղու-
թիւնները կրեցէք, և այնպէս Քրիստոսի օրէնքը
3 կատարեցէք։ Քանզի թէ որ մէկը ինքզինքը բան
մը ըլլալ կը սեպէ ու չէ, անիկա իր անձը կը խա-
4 բէ։ Բայց ամէն մարդ իր գործը թող կշռէ, ու

ետքը միայն իր անձին վրայ պարծանք ունենայ,
5 և չէ թէ ուրիշին վրայ։ Ինչու որ ամէն մէկը իր
բեռը պիտի կրէ։
6 Խօսքին աշակերտութիւն ընողը իր վարդապե-
7 տը ամէն բարի բաներու մասնակից ընէ։ Մի խաբ-
8 ուիք, Աստուած ծաղր չըլլար։ Վասն զի ինչ որ
մէկ մարդ մը կը սերմանէ՝ նոյնը պիտի հնձէ. ան
որ իր մարմինին կը սերմանէ, ան մարմինէն ա-
պականութիւն պիտի հնձէ. ու ան որ Հոգիին կը
սերմանէ, ան Հոգիէն յաւիտենական կեանք պի-
9 տի հնձէ։ Բայց բարի գործելէն չձանձրանանք,
քանզի յարմար ժամանակին պիտի հնձենք՝ թէ
10 որ չթուլնանք։ Ուստի քանի որ ժամանակը ձեռ-
քերնիս է, բարիք ընենք ամենուն՝ մանաւանդ
հաւատքին ընտանիներուն։
11 Նայեցէք՝ ինչպէս գիրերով գրեցի ձեզի իմ
12 ձեռքովս։ Որոնք որ կ'ուզեն մարմնոյ կողմանէ
բարի երևնալ, անոնք ձեզ կը ստիպեն որ թլը-
փատուիք, միայն որ Քրիստոսի խաչին համար
13 չհալածուին։ Քանզի անոնք ալ որ թլփատուած
են, իրենք օրէնքը չեն պահեր, հապա կ'ուզեն
որ դուք թլփատուիք, որ իրենք ձեր մարմնովը
14 պարծենան։ Բայց ես՝ քաւ լիցի որ պարծենամ,
հապա միայն մեր Տէր Յիսուս Քրիստոսի խաչովը,
որ անով աշխարհ ինծի խաչը ելած է, ես ալ աշ-
15 խարհի։ Ինչու որ Քրիստոս Յիսուսով ոչ թլփա-
տութիւնը բան մըն է, ոչ ալ անթլփատութիւնը,
16 հապա նոր ստեղծուած ըլլալն է բանը։ Եւ ան ա-
մէնը որ աս կանոնիս համեմատ կը քալեն, խա-
ղաղութիւն ու ողորմութիւն ըլլայ անոնց վրայ,
17 ու Աստուծոյ Իսրայէլին վրայ։ Ասկէ ետև մէկը
զիս թող չյոգնեցընէ. ինչու որ ես Տէր Յիսու-
սին վէրքի նշանները իմ մարմնոյս վրայ կը կրեմ։
18 Եղբայրներ, մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը
ձեր հոգիին հետը ըլլայ։ Ամէն։

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

ԱՌ ԵՓԵՍԱՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա.

1 Պօղոս՝ Յիսուս Քրիստոսի առաքեալը Աստուծոյ
կամքովը, Եփեսոսի մէջ եղած սուրբերուն՝ և
2 Քրիստոս Յիսուսի հաւատացողներուն. Շնորհք և
խաղաղութիւն ձեզի՝ Աստուծմէ մեր Հօրմէն ու
Տէր Յիսուս Քրիստոսէն։
3 Օրհնեալ է Աստուած և մեր Տէր Յիսուս Քրիս-
տոսի Հայրը, ան որ մեզ օրհնեց ամէն հոգևոր
օրհնութիւններով երկնաւորներուն մէջ Քրիս-
4 տոսով. Ինչպէս որ մեզ անով աշխարհիս սկիզ-
բէն առաջ ընտրեց, որ մենք սուրբ ու անարատ
5 ըլլանք իր առջևը սիրով. Եւ առաջուց մեզ սահ-
մանեց իրեն որդեգիր ըլլալու Յիսուս Քրիստոսի
6 ձեռքովը իր կամքին հաճութեանը պէս, Իր փա-
ռաւոր շնորհացը գովութեանը համար, որով մեզ
7 զարդարեց Սիրելիին ձեռքովը. Որ անով փրկու-
թիւն ունինք մենք իր արեանը միջոցով, մեղաց
թողութիւնը՝ իր շնորհքին ճոխութեանը չափովը.
8 Որ մեր վրայ աւելցուց բոլոր իմաստութեամբ
9 ու գիտութեամբ, Մեզի յայտնելով իր կամքին

խորհուրդը իր հաճութեանը պէս, որն որ *իր
10 մէջը* նախասահմաներ էր. Որ ժամանակաց լրա-
նալուն տնտեսութեանը մէջ ամէն բան բովան-
դակէ Քրիստոսով, ինչ որ երկինքը ու ինչ որ
11 երկրի վրայ կայ, անով՝ Որով մենք ալ ժառան-
գութիւն առինք՝ առաջուց որոշուած ըլլալով
անոր նախասահմանութիւնովը, որ ամէն բան իր
12 կամքին խորհրդովը 'ի գործ կը դնէ. Որ մենք
անոր փառքին գովութիւն ըլլանք՝ առաջուց
13 Քրիստոսի վրայ յուսացողներս. Որուն վրայ դուք
ալ յուսացիք՝ երբոր լսեցիք ճշմարտութեան
խօսքը՝ ձեր փրկութեան աւետարանը, որուն
նաև հաւատալով՝ խոստացեալ Սուրբ Հոգւոյն
14 կնիքովը կնքուեցաք. Որ ան մեր ժառանգ ըլ-
լալուն գրաւն է մինչև ստացուածքին փրկու-
թիւնը՝ իր փառացը գովութեանը համար։
15 Ուստի ես ալ երբոր լսեցի Տէր Յիսուսի վրայ
ունեցած հաւատքնիդ, ու բոլոր սուրբերուն վրայ
16 ըրած սէրը, Չեմ դադարիր ձեզի համար
գոհութիւն ընելէն՝ ձեզ իմ աղօթքներուս մէջ
17 յիշելով. Որ մեր Տէր Յիսուս Քրիստոսի Աստ-
ուածը, փառաց Հայրը, տայ ձեզի իմաստութեան
18 ու յայտնութեան հոգին իր գիտութիւնովը. Որ-
պէս զի սրտերնուդ աչքերը լուսաւորուելով՝
գիտնաք թէ ինչ է անոր կոչելուն յոյսը,
ու ինչ է անոր ժառանգութեանը փառքին ճո-
19 խութիւնը սուրբերուն մէջ, Եւ ինչ է իր զօրու-
թեանը գերազանց մեծութիւնը հաւատացեալնե-
րուս մէջ՝ իր կարող զօրութեանը գործադրու-
20 թեամբը, Որն որ Քրիստոսի վրայ 'ի գործ դրաւ,
երբոր զանիկա մեռելներէն յարուց, ու նստե-
21 ցուց իր աջ կողմը երկնից մէջ Ամէն իշխանու-
թեան ու պետութեան և զօրութեան ու տէրու-

---

*Որմով անով

թեան վրայ, և ամէն անուան վրայ որ կ'անուա-
նի, չէ թէ միայն աս աշխարհիս մէջ, հապա գա-
22 լիքին մէջ ալ. Եւ ամէն բան անոր ոտքերուն
տակը հնազանդեցուց, և զանիկա ամէն բաներու
23 վրայ եկեղեցիին գլուխ դրաւ, Որ ան անոր
մարմինն է, անոր լրումը՝ որ կը լեցընէ ամէնը ա-
մէն բանի մէջ.

ԳԼ. Բ

1 Եւ դուք որ յանցանքներու ու մեղքերու մէջ
2 մեռած էիք նորէն կենդանացուց. Որոնց մէջը
ատենօք կը քալէիք աս աշխարհիս բռնած ճամ-
բովը, աս օդուս իշխանութեանը իշխանին ուզա-
ծին պէս, ան ոգիին՝ որ հիմա ապստամբութեան
3 որդւոցը ներսի դին կը ներգործէ. Որ ատենօք
մենք ամէնքս ալ անոնց մէջը կը պտըտէինք մեր
մարմինին ցանկութիւններովը, և մարմինին ու
միտքին ուզածը կը կատարէինք. և բնութեամբ
բարկութեան որդիք էինք՝ ինչպէս ուրիշները.
4 Բայց Աստուած որ մեծ է ողորմութիւնով, իր
5 առատ սիրոյն համար՝ որով մեզ սիրեց, Երբոր
յանցանքներու մէջ մեռած էինք, մեզ Քրիստո-
սի հետ կենդանացուց, (դուք շնորհքով փրկը-
6 ուած էք,) Եւ անոր հետ մէկտեղ յարուց, ու անոր
հետ նստեցուց երկնաւորներուն մէջ Քրիստոս
7 Յիսուսով, Որ գալու դարերուն մէջը ցուցընէ իր
շնորհքին գերազանց մեծութիւնը՝ Քրիստոս Յի-
8 սուսով մեզի ցուցուցած քաղցրութիւնովը։ Վասն
զի շնորհքով փրկուած էք դուք հաւատքի մի-
9 ջոցով. և աս չէ թէ ձեզմէ է, հապա Աստուծոյ
9 պարգեւն է. Չէ թէ գործքերէն, որ մէկը չպար-
10 ծի. Ինչու որ մենք անոր ձեռագործն ենք, Քրիս-
տոս Յիսուսով ստեղծուած բարի գործքերու

համար, որոնց Աստուած առաջուց պատրաստեց
մեզ, որ անոնց մէջը քալենք.
11 Ուստի միտքերնիդ բերէք որ դուք ատեն մը
մարմինով հեթանոսներ ըլլալով, (որոնք ան-
թլփատութիւն կ'ըսուին անոնցմէ՝ որ թլփատու-
12 թիւն կ'ըսուին մարմինի մէջ ձեռքով եղած,) Որ
ան ատենը դուք առանց Քրիստոսի էիք, ու հե-
ռացած էիք Իսրայէլի քաղաքացիութենէն, և
օտարացած՝ խոստմունքին ուխտերէն, ու յոյս
մըն ալ չունէիք, և աշխարհի մէջ անաստուած
13 էիք. Բայց հիմա Քրիստոս Յիսուսով դուք որ
ատեն մը հեռաւոր էիք, մերձաւոր եղաք Քրիս-
14 տոսի արիւնովը. Վասն զի անիկա է մեր խաղա-
ղութիւնը, որ երկուքը մէկ ըրաւ, ու մէջտեղի
բաժանող պատը՝ այսինքն իրարու հետ եղած
15 թշնամութիւնը իր մարմինովը քակեց, Եւ հրա-
մաններով եղած պատուիրանքներուն օրէնքը
խափանեց. որ իրմով ան երկուքը մէկ նոր մարդ
16 մը հաստատէ, ու այսպէս խաղաղութիւն ընէ. Եւ
երկուքն ալ մէկ մարմին եղած հաշտեցընէ Աս-
տուծոյ հետ իր խաչովը. Ինչու որ անով սպան-
17 նեց թշնամութիւնը. Եւ եկաւ խաղաղութիւն
քարոզեց ձեզի որ հեռու էիք, ու անոնց՝ որ
18 մօտ էին. Քանզի անոր ձեռքովը մենք երկուք-
նիս ալ մէկ Հոգիով՝ Հօրը մօտենալու արտօնու-
19 թիւնը ունինք. Ուրեմն ալ ասկէ ետև դուք օ-
տար ու պանդուխտ չէք, հապա սուրբերուն քա-
20 ղաքակիցները և Աստուծոյ ընտանիքը՝ Առաք-
եալներուն ու մարգարէներուն հիման վրայ շի-
նուած, որ անոր անկիւնին գլուխը Յիսուս Քրիս-
21 տոս է. Որով բոլոր շէնքը մէկտեղ յարմարու-
թեամբ կազմուած՝ կ'աճի սուրբ տաճար մը կ'ըլ-
22 լայ Տէրոջմով. Որ անով դուք ալ մէկտեղ կը
շինուիք՝ Աստուծոյ բնակարան ըլլալու Հոգւով
Սրբով.

ԳԼ. Գ

1 Ուստի ես Պօղոս՝ Յիսուս Քրիստոսի կապուածը
2 ձեզի հեթանոսներուդ համար. Որ դուք անշուշտ
լսած էք Աստուծոյ շնորհքին տնտեսութիւնը, որ
3 ինծի տրուած է ձեզի համար, թէ ինծի ան խոր-
հուրդը յայտնութիւնով ցուցուեցաւ. (ինչպէս
4 առաջուց ալ ձեզի համառօտաբար գրեցի: Որով
կրնաք կարդալ ու միտք առնել իմ տեղեակ ըլ-
5 լալս Քրիստոսի խորհուրդին վրայով.) Որ ուրիշ
դարերուն մէջ մարդոց որդիներուն չերեւցաւ, ին-
չպէս որ հիմա Հոգւով Սրբով յայտնուեցաւ իր
6 սուրբ առաքեալներուն ու մարգարէներուն. Որ
հեթանոսները Քրիստոսով ժառանգակից ու մար-
մնակից և անոր խոստմունքին հաղորդ ըլլան ա-
7 ւետարանով. Որուն ես սպասաւոր եղայ՝ Աստու-
ծոյ շնորհաց պարգեւին համեմատ՝ որ ինծի տըր-
ուեցաւ իր զօրութեանը ներգործութիւնովը,
8 (Ինծի՝ որ ամէն սուրբերուն փոքրագոյնն եմ,
աս շնորհքը տրուեցաւ,) հեթանոսներուն մէջ
Քրիստոսի անքննելի ճոխութիւնը քարոզելու,
9 Եւ ամէնը լուսաւորելու, որ [illegible] թէ ինչ է
ան խորհուրդին տնօրէնութիւնը՝ որ 'ի յաւիտե-
նից ծածկուած էր Աստուծոյ քով, որ ամէն բանը
10 *ստեղծեց. Որ հիմա Աստուծոյ բազմատեսակ ի-
մաստութիւնը եկեղեցիին ձեռքովը յայտնի ըլլայ
երկինքը եղող իշխանութիւններուն ու պետու-
11 թիւններուն Իր յաւիտենական նախասահմանու-
թեանը համեմատ, որ ըրաւ մեր Տէրոջը Քրիստոս
12 Յիսուսի ձեռքովը. Որով մենք ալ համարձակու-
թիւն ու մօտենալու [illegible] ունինք վստա-
հութեամբ՝ իրեն հաւատալով.

---

*Ոմանք Յիսուս Քրիստոսով ստեղծեց

13 Ուստի կ'աղաչեմ որ չձանձրանաք իմ նեղու-
թիւններուս պատճառովը, որ ձեզի համար են,
14 և որ ձեր փառքն են: Ասոր համար ծնկան վրայ
գալով մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հօրը առջեւը,
15 Ուսկից որ ամէն ազգատոհմ երկնից մէջ ու երկ-
16 րի վրայ անուն կ'առնէ, Կ'աղաչեմ որ տայ ձեզի
իր փառաց ճոխութեանը չափովը՝ զօրութիւնով
հաստատուիլ իր Հոգիովը ներսի մարդուն մէջ.
17 Որ Քրիստոս հաւատքով ձեր սրտերուն մէջը
բնակի, և դուք սիրով արմատացած ու հաս-
18 տատուած ըլլաք, Որ կարենաք հասկընալ բոլոր
սուրբերուն հետ մէկտեղ, թէ ինչ է լայնութիւնը
ու երկայնութիւնը և խորութիւնը ու բարձրու-
19 թիւնը. Այսինքն ճանչնալ Քրիստոսի սէրը որ
գիտութենէ գերազանց է, որ լցուիք Աստուծոյ
20 ամէն լրութիւնովը: Արդ անոր որ կարող է ա-
ռատութեամբ ընել ամէն բաներէն աւելի՝ որ
մենք կը խնդրենք կամ կը խորհինք, ան զօրու-
21 թիւնովը որ մեր մէջը կը ներգործուի, Իրեն
փառք եկեղեցւոյն մէջ Քրիստոս Յիսուսով բոլոր
դարերուն մէջ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ԳԼ. Դ

1 Ուստի կ'աղաչեմ ձեզի ես որ Տէրոջը համար
կապուած եմ, որ դուք այնպէս քալէք՝ ինչպէս
որ կը վայլէ ան կոչմանը որով կանչուեցաք,
2 Բոլոր խոնարհութիւնով ու հեզութիւնով, եր-
կայնմտութեամբ, սիրով իրարու ներողամիտ
3 ըլլալով. Ջանալով Հոգւոյն Սրբոյ միաբանու-
4 թիւնը խաղաղութեան կապովը պահել. Մէկ
մարմին ու մէկ հոգի, ինչպէս որ կանչուեցաք
5 ձեր կոչմանը մէկ յուսովը. Տէրը մէկ է, հաւատ-
6 քը մէկ, մկրտութիւնը մէկ. Մէկ է Աստուած և
ամենուն Հայրը, որ ամենուն վրայ ու ամենուն

7 հետ և *ձեր ամենուն մէջն է։ Բայց մեր ամէն
մէկուն ալ շնորհք տրուած է Քրիստոսի պարգե-
8 ւին չափովը։ Անոր համար կ'ըսէ թէ Բարձրը ե-
լաւ, գերութիւնը գերի բռնեց ու մարդոց պար-
9 գեւներ տուաւ։ Ան ելաւ ըսելը ի՞նչ է, միայն
թէ՝ որ ինքը առաջ երկրին վարի կողմերը իջաւ։
10 Ան որ իջաւ՝ նոյն ինքն է, որ բոլոր երկինքնե-
11 րէն վեր ելաւ, որ ամէն բան լեցնէ։ Եւ ինքը
մէկ քանին տուաւ առաքեալներ ըլլալու, մէկ
քանին մարգարէներ, մէկ քանին աւետարանիչ-
ներ, մէկ քանին հովիւներ ու վարդապետներ.
12 Սուրբերուն կատարելութեանը համար, պաշտօ-
նին գործքին համար, Քրիստոսի մարմնոյն շի-
13 նութեանը համար։ Մինչև որ ամէնքս ալ հա-
նինք հաւատքին ու Աստուծոյ Որդին ճանչնալու
միաբանութեանը, կատարեալ մարդ ըլլալու,
14 Քրիստոսի լման հասակին չափը ունենալու։ Որ
ալ ասկէ ետև տղաք չըլլանք երերած ու վար-
դապետութեան ամէն հովերէն ասդին անդին
տարուբերուած՝ մարդոց խաբէութիւնովը, որ
15 խորամանկութեամբ կը խաբեն մոլորցնելու։ Հա-
պա սիրով ճշմարտութեան հետևելով՝ ամէն բան
Անով աճեցնենք որ գլուխ է՝ այսինքն Քրիս-
16 տոս։ Որ անկէ բոլոր մարմինը մէկտեղ կազ-
մուած, և ամէն յօդուածները իրարու հաղոր-
դուելով կցուած՝ ամէն մէկ մասին չափով ներ-
գործելով՝ մարմինին աճում կու տայ իրեն շի-
նութեանը համար սիրով։
17 Ուստի աս կ'ըսեմ ու Տէրոջմով վկայութիւն
կ'ընեմ, որ դուք մէյմըն ալ անանկ չքալէք, ինչ-
պէս որ ուրիշ հեթանոսները կը քալեն իրենց
18 միտքին ունայնութեանը մէջ. Որոնց իմացողու-
թիւնը խաւարած է, ու օտարացած են Աստու-

*Ոմանք մեր

ծոյ կեանքէն՝ իրենց մէջը եղած տգիտութեան
պատճառովը իրենց սրտին *կուրութեանը հա-
19 մար. Որոնք անզգայ ըլլալով, ինքզինքնին անա-
ռակութեան տուին, ամէն կերպ պղծութիւն գոր-
20 ծելու †ագահութիւնով. Բայց դուք ասանկ չսոր-
21 վեցաք Քրիստոսը, Թէ որ անոր վրայով լսեցիք
ու անկէ սորված էք, ինչպէս որ ճշմարտութիւնը
22 Յիսուսի մէջ է. Որ ձեր վրայէն մէկդի հանէք ան
ձեր առջի վարմունքին պէս եղած հին մարդը՝
23 խաբեբայ ցանկութիւններով ապականուածը. Եւ
24 ձեր միտքին հոգիովը նորոգուիք, Եւ նոր մարդը
վրանիդ հագնիք, ան որ Աստուծոյ ‡կերպէն
պէս ստեղծուած է արդարութիւնով ու ճշմա-
25 րիտ սրբութիւնով։ Ուստի ստութիւնը մէկդի
ձգելով՝ ճշմարտութիւն խօսեցէք ամէն մէկեր-
նիդ իր ընկերին հետ, ինչու որ մենք իրարու
21 անդամներ ենք։ Թէ որ բարկանաք՝ մեղք մի
գործէք. արևը ձեր բարկութեանը վրայ մարը
27 չմտնէ։ Ու Սատանային տեղ մի տաք. (28) Ան
որ գողութիւն կ'ընէր, ալ թող չգողնայ. այլ
մանաւանդ աղէկ գործի մը պարապելով՝ իր
ձեռքերովը աշխատի, որ կարող ըլլայ ‡տալ կա-
29 րօտ եղողին. Բնաւ ձեր բերնէն ապականեալ
խօսք մը չելլէ, հապա ինչ որ աղէկ է՝ պէտք ե-
ղած շինութեանը համար, որ լսողներուն շնորհք
30 տայ. Եւ Աստուծոյ Սուրբ Հոգին մի տրտմեցը-
նէք, որով դուք կնքուեցաք փրկութեան օր-
31 ուանը համար. Ամէն դառնութիւն և բարկու-
թիւն ու սրտմտութիւն և աղաղակ ու հայհոյու-
թիւն վերցուի ձեզմէ ամէն չարութիւններով
32 մէկտեղ. Եւ իրարու հետ քաղցր եղէք, գթած,

*Յուն. բթութեանը
†Կամ անյագութիւնով
‡Յուն. հաղորդել

ներելով իրարու, ինչպէս որ Աստուած Քրիստո-
սով ներեց ձեզի։

ԳԼ. Ե

1 Արդ Աստուծոյ նմանող եղէք սիրելի զաւակնե-
2 րու պէս. Եւ սիրով վարուեցէք՝ ինչպէս որ Քրիս-
տոս ալ մեզ սիրեց, ու իր անձը մեզի համար
մատնեց՝ անուշահոտ պատարագ ու զոհ ըլլալով
3 Աստուծոյ։ Բայց պոռնկութեան և ամէն կերպ
պղծութեան կամ ագահութեան անունը անգամ
չյիշուի ձեր մէջը, (ինչպէս որ կը վայլէ սուրբե-
4 րուն,) Եւ գարշելի բաներ կամ յիմարական խօս-
քեր կամ խեղկատակութիւն, որ չվայլեր, այլ
5 մանաւանդ գոհութիւն. *Քանզի աս գիտէք," որ
ամէն պոռնիկ կամ պիղծ կամ ագահ, որ կռա-
պաշտ է, Քրիստոսի ու Աստուծոյ թագաւորու-
6 թեանը մէջ ժառանգութիւն չունի։ Զըլլայ որ
մէկը ձեզ խաբէ փուճ խօսքերով. ինչու որ աս
բաներուն համար Աստուծոյ բարկութիւնը կու
7 գայ անհնազանդութեան որդւոց վրայ։ Ուստի
8 անոնց հաղորդ մի ըլլաք։ Քանզի ըէ-ը ատեն մը
դուք խաւար էիք, բայց հիմա լոյս էք Տէրոջմով.
9 լուսոյ որդիներու պէս քալեցէք. Ինչու որ †Հոգ-
ւոյն պտուղը ամէն կերպ բարութիւնով և ար-
10 դարութիւնով ու ճշմարտութիւնով է. Քննեցէք
11 ինչ է Տէրոջը հաճելին. Ու կցորդ մի ըլլաք խա-
ւարին անպտուղ գործքերուն, այլ մանաւանդ
12 ղանոնք յանդիմանեցէք։ Ինչու որ անոնց մէջը
գաղտուկ գործուած բաները խօսիլն ալ ամօթ
13 է։ Բայց ամէն բան յանդիմանուած՝ լուսով
յայտնի կ'ըլլայ. ինչու որ ամէն բան որ յայտնի

*Կամ Աս իմանալով գիտնաք
†Ոմանք լուսոյ

14 կ'ըլլայ՝ լոյս է։ Անոր համար կ'ըսէ, Արթընցիր
դուն որ կը քնանաս, և կանգնէ մեռելներէն,
ու Քրիստոս քեզի լոյս պիտի տայ։
15 Ուստի նայեցէք թէ ինչպէս զգուշութեամբ
16 պիտի քալէք, չէ թէ անմիտներու պէս, հապա
իմաստուններու պէս. ժամանակը ծախու առէք,
17 ինչու որ օրերս չար են։ Անոր համար անմիտ մի
ըլլաք, հապա իմացէք թէ ինչ է Տէրոջը կամքը։
18 Եւ մի գինովնաք գինիով, որուն մէջ անառա-
19 կութիւն կայ, հապա Հոգիով լեցուեցէք. Եւ
սաղմոսներով ու օրհնութիւններով և հոգևոր
երգերով մէջերնիդ խօսակցելով՝ երգեցէք ու
20 սաղմոս ըսէք Տէրոջը ձեր սրտերուն մէջ. Ամէն
ատեն ամէն բանի համար գոհութիւն տուէք Աս-
տուծոյ ու Հօրը՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի ա-
նունովը։
21 Իրարու հնազանդ եղէք *Աստուծոյ վախովը։
22 Կնիկները իրենց էրիկներուն հնազանդ ըլլան՝ որ-
23 պէս թէ Տէրոջը. Ինչու որ էրիկը կնկանը գլուխն
է, ինչպէս որ Քրիստոս ալ եկեղեցւոյն գլուխն
24 է, ու ինքը մարմնին փրկիչն է։ Ուստի ինչպէս
որ եկեղեցին հնազանդ կ'ըլլայ Քրիստոսի, անանկ
ալ կնիկները ամէն բանի մէջ իրենց էրիկներուն։
25 Էրիկներ, սիրեցէք ձեր կնիկները, ինչպէս որ
Քրիստոս ալ սիրեց եկեղեցին, ու իր անձը մատ-
26 նեց անոր համար. Որ զանիկա սրբէ ու մաքրէ
27 աւազանին ջրովը՝ խօսքով. Որ ինքը իր դիմացը
փառաւոր կեցընէ եկեղեցին, որ մէկ արատ մը
կամ խորշոմութիւն կամ ուրիշ ասոնց պէս բան
մը չունենայ, հապա որ սուրբ ու անարատ ըլլայ։
28 Նոյնպէս ալ պէտք է որ էրիկները իրենց կնիկ-
ները սիրեն իրենց մարմիններուն պէս. ան որ իր
29 կնիկը կը սիրէ՝ իր անձը կը սիրէ. Ինչու որ մէկը

*Ոմանք Քրիստոսի

բնաւ իր անձը չատեր, հապա կը սնուցանէ ու
կը խնամէ զանիկա, ինչպէս *Տէրն ալ եկեղեցին.
30 վասն զի մենք անոր մարմնին անդամներն ենք՝
31 անոր մարմինէն ու անոր ոսկորներէն: Ասոր հա-
մար մարդը պիտի ձգէ իր հայրը ու մայրը, և իր
կնկանը պիտի յարի, ու երկուքը մէկ մարմին
32 պիտի ըլլան. Աս խորհուրդը մեծ է, բայց ես կը
33 գրուցեմ Քրիստոսի ու եկեղեցւոյն վրայով. Սա-
կայն ձեզմէ ամէն մէկն ալ իր կնիկը անանկ սի-
րէ՝ որպէս թէ իր անձը, ու կնիկը իր էրիկէն
ակնածութիւն ընէ.

Գլ. Զ

1 Որդիք, ձեր ծնողացը հնազանդ եղէք Տէրոջմով,
2 որ ան է արժանը. Պատուէ քու հայրդ ու մայ-
րըդ, (որ առջի պատուիրանքն է խոստմունքով,)
3 Որ քեզի աղէկ ըլլայ, ու երկար կեանք ունենաս
4 երկրի վրայ. Ու դուք, հայրեր, ձեր որդիները
մի բարկացընէք, հապա անոնք մեծցուցէք Տէ-
5 րոջը վարժութիւնովը ու խրատովը. Ծառաներ,
հնազանդ եղէք ձեր մարմնաւոր տէրերուն ահով
ու դողով՝ ձեր սրտին միամտութիւնովը, որպէս
6 թէ Քրիստոսի. Չէ թէ մարդահաճոյի պէս աչքի
առջև ծառայելով, հապա Քրիստոսի ծառաներու
7 պէս՝ սրտանց Աստուծոյ կամքը ընելով. Յօժա-
րութեամբ ծառայելով որպէս թէ Տէրոջը, ու չէ
8 թէ մարդոց. Գիտնալով որ ամէն մէկը ինչ բա-
րիք որ ընէ, նոյնը Տէրոջմէն պիտի ընդունի,
9 թէ ծառայ ըլլայ և թէ ազատ. Դուք ալ, տէ-
րեր, նոյնը ըրէք անոնց, ու սպառնալիքը թող
տուէք, գիտնալով որ անոնց ալ ձեր ալ Տէրը
երկինքն է. ու անոր քովը աչառութիւն չկայ.

*Ոմանք Քրիստոս

10 Ալ ասկէ ետև, եղբայրներս, զօրացէք Տէրոջ-
մով ու անոր զօրութեան կարողութիւնովը.
11 Վրանիդ հագէք Աստուծոյ սպառազինութիւնը,
որ կարող ըլլաք Սատանային հնարքներուն դէմ
12 դնելու. Ինչու որ մեր պատերազմը արիւնի ու
մարմինի հետ չէ, հապա իշխանութիւններու ու
պետութիւններու հետ, և աս *խաւար աշխար-
հիս" իշխաններուն հետ, երկնաւորներուն մէջը
13 եղող չար ոգիներուն հետ. Ասոր համար վրանիդ
առէք Աստուծոյ սպառազինութիւնը, որ կարող
14 ըլլաք չարութեան օրը դէմ դնելու, Ու ամէն
բանը լմնցընելէն ետև՝ հաստատուն կենալու.
Ուստի ձեր տեղը կայնեցէք, մէջքերնիդ ճշմար-
տութեամբ ամուրցընելով, ու արդարութեան
15 զրահը հագնելով. Ու ոտքերնուդ հագցընելով
խաղաղութեան աւետարանին պատրաստութիւ-
16 նը. Ու ամէն բանին վրայ հաւատքին վահանը ա-
ռէք, որով կարող պիտի ըլլաք չարին ամէն կրա-
17 կոտ նետերը մարելու. Ու փրկութեան սաղա-
ւարտը առէք, ու Հոգիին սուրը՝ որ Աստուծոյ
18 խօսքն է. Ամէն աղօթքով ու խնդրուածքով
ամէն ատեն աղօթք ըրէք Հոգիով, ու աս բա-
նիս վրայ հսկեցէք կատարեալ յարատևութեամբ
19 ու աղաչանքով՝ բոլոր սուրբերուն համար, Ինծի
համար ալ, որ ինծի խօսք տրուի որ բերանս
բանամ համարձակութեամբ աւետարանին խոր-
20 հուրդը յայտնելու. Որուն համար ես դեսպա-
նութիւն կ'ընեմ կապանքովս, որ անով համար-
ձակութիւն ունենամ խօսելու՝ ինչպէս որ
պէտք է.
21 Բայց որ դուք ալ գիտնաք իմ վրայովս՝ թէ
ինչ կ'ընեմ ես, ամէն բանը պիտի ցուցընէ ձեզի
Տիւքիկոս սիրելի եղբայրը ու հաւատարիմ պաշ-

*Յուն. աշխարհիս խաւարին

22 տօնեան Տէրոջմով․ Որն որ յատկապէս աս բա-
նին համար ձեզի խրկեցի, որ գիտնաք դուք մեր
վրայով, ու ինքը ձեր սիրտերը մխիթարէ։
23 Խաղաղութիւն եղբայրներուն և սէր հաւատ-
քով մէկտեղ Հօր Աստուծմէն՝ ու Տէր Յիսուս
24 Քրիստոսէն։ Շնորհք ան ամենուն հետ՝ որոնք
մեր Տէր Յիսուս Քրիստոսը անկեղծութեամբ կը
սիրեն։ Ամէն։

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

ԱՌ ՓԻԼԻՊՊԵՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս և Տիմոթէոս՝ Յիսուս Քրիստոսի ծառա-
ները, Քրիստոս Յիսուսով բոլոր սուրբերուն որ
Փիլիպպեցւոց կողմերն են՝ եպիսկոպոսներով ու
2 սարկաւագներով․ Շնորհք ու խաղաղութիւն
ձեզի Աստուծմէ մեր Հօրմէն ու Տէր Յիսուս
Քրիստոսէն։
3 Կը գոհանամ իմ Աստուծմէս ամէն անգամ որ
4 ձեզ կը յիշեմ, (Միշտ իմ ամէն խնդրուածքիս

մէջ ձեր ամենուն համար ուրախութեամբ ա-
5 ղօթք կ'ընեմ,) Աւետարանին հաղորդ ըլլալնուդ
6 համար առջի օրուընէ մինչև հիմա․ Աս մասին
վստահ ըլլալով՝ թէ ան որ ձեր մէջը բարի գործ
մը սկսեց, մինչև Յիսուս Քրիստոսի օրը պիտի
7 կատարէ․ ինչպէս որ ինծի արժան ալ է ձեր ա-
մենուն վրայ աս բանը խորհիլ՝ *ձեզ իմ սրտիս
մէջը ունենալուս" համար իմ կապերուս մէջ, և
աւետարանին ջատագովութեանը ու հաստատու-
թեանը մէջ, և ամէնքդ ինծի եղած շնորհքին
8 հաղորդ ըլլալնուդ համար։ Քանզի վկայ է ինծի
Աստուած, որ ինչպէս փափաք ունիմ ձեր ամե-
9 նուն վրայ Քրիստոս Յիսուսի գութովը։ Եւ աս
աղօթքը կ'ընեմ, որ ձեր սէրը հետզհետէ աւելի
շատնայ գիտութիւնով ու բոլոր ընտրողութիւ-
10 նով, Որ դուք տարբեր բաները զանազանէք,
որպէս զի մինչև Քրիստոսի օրը անկեղծ և առանց
11 գայթակղութեան ըլլաք․ Արդարութեան պտուղ-
ներով լցուած Յիսուս Քրիստոսի ձեռքովը՝ Աս-
տուծոյ փառքին ու գովեստին համար։
12 Կ'ուզեմ որ գիտնաք, եղբայրներ, թէ ինչ որ
ինծի պատահեցաւ՝ ալ աւելի աւետարանին յա-
13 ռաջադիմութեանը պատճառ եղաւ․ Մինչև իմ
կապերս որ Քրիստոսի համար են՝ բոլոր պալա-
տին մէջը և ուրիշ ամենուն ալ յայտնի եղան․
14 Եւ Տէրոջմով եղբայրներուն շատերը սիրտ առին
իմ կապերէս՝ ալ աւելի համարձակիլ Աստուծոյ
15 խօսքը խօսելու առանց վախի։ Ոմանք նախանձէ
ու հակառակութենէ և ոմանք բարեսիրութենէ
16 [illegible] Քրիստոսը կը քարոզեն․ †Անոնք հա-
կառակութեան համար Քրիստոսը կը պատմեն,
չէ թէ անկեղծութեամբ, կարծելով վիշտ աւել-

*Կամ դիս ձեր սրտերուն մէջը ունենալնուդ
†Ոմանք 17երորդ տունը 16երորդէն առաջ կը դնեն

17 ցընել իմ կապերուս վրայ. Իսկ ասոնք սիրոյ
համար, ինչու որ գիտեն թէ ես աւետարանին
18 համար պատասխան տալու կեցեր եմ։ Բայց ի՞նչ
է. ո՛ր կերպով որ ըլլայ՝ թէ պատճառանքով և
թէ ճշմարտութիւնով Քրիստոս կը պատմուի, ու
ասոր վրայ ուրախ եմ և ուրախ ալ պիտի ըլլամ
19 Քանզի գիտեմ որ ասոր վախճանը իմ փրկու-
թեանս համար պիտի ըլլայ ձեր խնդրուածքովը,
ու Յիսուս Քրիստոսի Հոգւոյն օգնականութեամ-
20 բը, իմ եռանդուն ակնկալութեանս ու իմ յոյ-
սիս համեմատ, որ բանով մը ամօթով պիտի չըլ-
լամ. հապա կատարեալ համարձակութիւնով
ինչպէս որ ամէն ատեն՝ անանկ ալ հիմա Քրիստոս
իմ մարմինիս մէջ պիտի փառաւորի՝ թէ ապրե-
21 լովս և թէ մեռնելովս։ Ինչու որ ինծի համար՝
22 ապրիլը Քրիստոս է, ու մեռնիլը՝ օգուտ։ Հապա
թէ որ մարմինի մէջ ապրիլս իմ գործոյս պտուղ
23 կը բերէ, ալ չեմ գիտեր ո՛րը ընտրեմ։ Երկու
կողմանէ ալ նեղը մնացած եմ, մեկնելու ու
Քրիստոսի հետ ըլլալու փափաք ունենալով. քան-
24 զի ան շատ աւելի աղէկ է։ Բայց մարմինի մէջ
25 կենալը ձեզի համար աւելի հարկաւոր. Եւ աս
բանիս համոզուած ըլլալով՝ գիտեմ որ ձեր ա-
մենուն հետը պիտի կենամ ու մնամ, որ դուք
26 զարգանաք և ուրախ ըլլաք հաւատքով. Որ ձեր
պարծանքը իմ վրայովս աւելի ըլլայ Քրիստոս
Յիսուսով՝ իմ նորէն ձեզի գալուս պատճառովը։
27 Միայն թէ Քրիստոսի աւետարանին ինչպէս որ
կը վայլէ՝ անանկ վարուեցէք. որ եթէ գամ ու
ձեզ տեսնեմ, և կամ հեռու ըլլամ, ձեր վրա-
յովը լսեմ որ դուք հաստատուն կը կենաք մէկ
հոգիով, ու մէկ շունչով պատերազմակից կ՚ըլ-
28 լաք աւետարանին հաւատքին համար. Եւ մէկ
բանով մըն ալ մի զարհուրիք հակառակորդնե-
րէն, որ անոնց կորստեան ապացոյց մըն է, ու

29 ձեզի՝ փրկութեան. Ան ալ Աստուծմէ է. ինչու
որ ձեզի տրուեցաւ Քրիստոսի համար՝ չէ թէ
միայն անոր հաւատալ, հապա անոր համար չար-
30 չարուիլ ալ, Նոյն պատերազմը ունենալով՝ որ
իմ վրաս տեսաք ու հիմա իմ վրայովս կը լսէք։

ԳԼ. Բ

1 Ուստի թէ որ Քրիստոսով մխիթարութիւն մը
կայ, թէ սիրոյ սփոփանք մը, թէ Հոգիի հաղոր-
դութիւն մը, թէ գթութիւն ու ողորմութիւն
2 մը, իմ ուրախութիւնս դուք լեցուցէք, նոյն
խորհուրդը ունեցէք, մի և նոյն սէրը [illegible]
3 ունենալով, մէկ շունչ, մէկ մտածմունք. Բան
մը գրգռութիւնով կամ սնապարծութիւնով մի
ընէք. հապա խոնարհութիւնով մէկզմէկ ձեր ան-
4 ձէն լաւ սեպեցէք. Մինակ անձերնուդ շահը մի
5 նայիք. հապա ամէն մէկը եւ ընկերինն ալ։ Ձեզ-
մէ ամէն մէկը նոյն միտքը թող ունենայ, որ
6 Քրիստոս Յիսուսի մէջն էր. Որ Աստուծոյ կեր-
պարանքը ունենալով, *յափշտակութիւն մը չսե-
7 պեց Աստուծոյ հաւասար ըլլալը. Հապա անձը
ունայնացուց ծառայի կերպարանք առնելով՝
մարդոց նման ըլլալով. և կերպարանքովը մար-
8 դու պէս գտնուելով, ինքզինքը խոնարհեցուց՝
մինչև մահուան հնազանդ եղաւ, ու ան ալ խաչին
9 մահուանը։ Ասոր համար Աստուած ալ զանիկա
խիստ բարձրացուց, ու անոր անուն մը տուաւ՝
10 որ ամէն անունէն վեր է. Որ Յիսուսի անունին
ամէն ծունկ ծռի՝ երկնաւորներուն ու երկրա-
11 ւորներուն և սանդարամետականներուն, Եւ ա-
մէն լեզու դաւանի թէ Յիսուս Քրիստոս Տէր է՝
12 Հօր Աստուծոյ փառքին համար։ Ուստի, իմ սի-

---

*Կամ յափշտակելու բան

ընկերներս, ինչպէս որ ամէն ատեն հնազանդ ե-
ղաք՝ ոչ միայն իմ ներկայութեանս, հապա ալ
աւելի հիմա՝ իմ բացակայութեանս ատենը, ահով
ու դողով անձերնուդ փրկութիւնը գործեցէք.
13 Ինչու որ Աստուած է որ ձեր մէջը կը ներգործէ
14 կամենալը ու ընելը իր հաճութեանը համար։ Ա-
մէն բան առանց տրտունջներու ու վիճաբանու-
15 թիւններու ըրէք. Որ ըլլաք անբիծ ու անարատ՝
Աստուծոյ որդիներ առանց մեղադրանքի՝ կա-
մակոր ու խոտորեալ ազգին մէջ, որոնց մէջը
դուք լուսաւորներու պէս կը փայլիք աշխարհիս
16 մէջ, կենաց խօսքը ամուր բռնելով՝ ինծի պար-
ծանք ըլլալու համար Քրիստոսի օրը, թէ պա-
րապ տեղը չքալեցի, և պարապ տեղը չաշխատե-
17 ցայ։ Բայց թէպէտ և ձեր հաւատքին պատարա-
գին ու պաշտօնին վրայ ընծայուիմ, կ'ուրախա-
նամ և ձեր ամենուն հետը ուրախակից կ'ըլլամ.
18 Նոյնպէս ալ դուք ուրախացէք ու իմ հետս ու-
րախակից եղէք։
19 Արդ կը յուսամ Տէր Յիսուսով որ Տիմոթէոսը
շուտով ձեզի խրկեմ, որ իմ սիրտս ալ հանգչի,
20 երբոր ձեր վիճակը գիտնամ։ Ինչու որ անոր նման
սրտակից մէկը չունիմ, որ մտերմաբար ձեզի
21 համար հոգ տանի։ Քանզի ամէնը իրենցը կը
22 փնտռեն՝ ու չէ թէ Յիսուս Քրիստոսինը։ Բայց
դուք անոր փորձը գիտէք, որ ինչպէս որդի մը
հօրը հետ՝ անանկ ինծի հետ ծառայութիւն ըրաւ
23 աւետարանին մէջ։ Ուստի կը յուսամ անիկա
խրկել շուտ մը՝ իմ ինչպէս ըլլալիքս ստուգա-
24 ծիս պէս։ Բայց վստահութիւն ունիմ Տէրոջմով՝
25 որ ես ալ քիչ ատենէն պիտի գամ։ Միայն թէ
հարկաւոր սեպեցի հիմա ձեզի խրկել Եպափրոդի-
տոս իմ եղբայրս և գործակիցս ու զինուորակիցս՝
26 ձեր խրկածը ու իմ պիտոյիցս ծառայողը։ Որով-
հետև ինքն ալ շատ փափաք ունէր ձեզ ամէնքդ

տալ [տեսնելու]. ու կը տրտմէր, որ դուք լսած
27 էիք թէ ինքը հիւանդացաւ։ Եւ յիրաւի ինքը
հիւանդացաւ մահուան մօտ, բայց Աստուած ո-
ղորմեցաւ անոր. չէ թէ միայն անոր՝ հապա ինծի
ալ, որ տրտմութեան վրայ տրտմութիւն չունե-
28 նամ։ Ասոր համար աւելի փութով խրկեցի, որ
դուք զանիկա տեսնելով նորէն ուրախ ըլլաք,
29 ու ես առանց տրտմութեան ըլլամ։ Ուրեմն ըն-
դունեցէք անիկա Տէրոջմով ամէն ուրախու-
թեամբ, ու անանկները պատուականներու կար-
30 գը բռնեցէք. Քանզի Քրիստոսի գործին համար
մինչև մահուան մօտեցաւ՝ իր կեանքը վտանգի
մէջ ձգելով, որ ձեր ինծի ծառայելու պակա-
սութիւնը ինքը լեցնէ։

ԳԼ. Գ

1 Ուստի, իմ եղբայրներս, ուրախ եղէք Տէրոջ-
մով. Նոյն բաները ձեզի գրելը ինծի ձանձրու-
2 թիւն չէ, ու ձեզի ապահովութիւն է։ Զգուշա-
ցէք շուներէն, զգուշացէք չար մշակներէն, զգու-
3 շացէք կրճատութենէն։ Ինչու որ թլփատութիւ-
նը մենք ենք, որ հոգիով Աստուած կը պաշ-
տենք, ու կը պարծենանք Քրիստոս Յիսուսով,
4 և մարմնի վրայ չէ վստահութիւննիս։ Թէպէտ
ես ալ նոյն վստահութիւնը ունիմ մարմնի վրայ.
թէ որ ուրիշ մէկը կը կարծէ թէ վստահութիւն
5 ունի մարմնի վրայ, ալ աւելի ես. Ութ օրուան
թլփատուած, Իսրայէլի ազգէն, Բենիամինի ցե-
ղէն, Եբրայեցի՝ Եբրայեցիներէ, օրէնքին նայե-
6 լով փարիսեցի. Նախանձաւոր ըլլալու կողմանէ
եկեղեցին կը հալածէի. օրէնքին արդարութեանը
7 կողմանէ անարատ էի։ Բայց ինչ որ ինծի շահ էր,
8 անիկա Քրիստոսի համար վնաս սեպեցի։ Եւ ի-
րաւ բոլոր բաները ալ վնաս կը սեպեմ իմ Տէ-

բոլոր Քրիստոս Յիսուսի գերազանց գիտութեանը
համար. որուն համար ամէն բանէն զրկուեցայ,
և աղտեղութիւն կը սեպեմ, որ Քրիստոսը շա-
9 հիմ, Ու իր մէջը գտնուիմ, չէ թէ իմ արդա-
րութիւնս ունենամ որ օրէնքէն է, հապա Քրիս-
տոսի հաւատքովը եղած արդարութիւնը՝ որ Ա-
10 տուծմէ է հաւատքով. Ճանչնալու զանիկա և
անոր յարութեանը զօրութիւնը ու անոր չար-
չարանքներուն հաղորդ ըլլալը, անոր մահուան
11 կերպարանքը առնելով. Որ ըլլայ թէ մեռելնե-
12 րուն յարութեանը հասնիմ. Որ չէ թէ ես արդէն
առեր եմ, կամ արդէն կատարեալ եղեր եմ,
հապա ետեւէ ինկած եմ որ բռնեմ մրցանակը, ո-
րուն համար ալ բռնուեցայ Քրիստոս Յիսուսէն.
13 Եղբայրներ, ես չեմ սեպեր որ բռներ եմ. բայց
մէկ բան մը կայ, որ ետեւի եղածները մոռցած
14 եմ, ու առջեւի եղածներուն կը դիմեմ. Նպա-
տակը դիտելով՝ Քրիստոս Յիսուսով եղած Ա-
տուծոյ վերին կոչմանը մրցանակին կը վազեմ.
15 Ուստի մենք ամէնքս որ կատարեալ ենք՝ ասիկա
խորհինք, և թէ որ բան մը ուրիշ կերպով խոր-
հելու ըլլաք, զանիկա ալ ձեզի պիտի յայտնէ
16 Աստուած. Միայն թէ ինչ աստիճանի որ հասեր
ենք՝ նոյն կանոնին համեմատ քալենք, նոյն խոր-
17 հուրդը ունենանք. Ինծի նմանող եղէք, եղբայր-
ներ, ու նայեցէք անոնց որ այնպէս կը քալեն,
18 ինտոր որ մեզ ձեզի օրինակ ունիք. Ինչու որ շա-
տերը կը քալեն, որոնց համար շատ անգամ ձե-
զի կ'ըսէի, և հիմա լալով ալ կը գրուցեմ, այս-
ինքն Քրիստոսի խաչին թշնամիներուն համար.
19 Որ անոնց վերջը կորուստ է, որոնց աստուածը
իրենց որովայնն է, ու անոնց փառքը իրենց ա-
մօթն է, որոնք միայն երկրաւոր բաները կը մտա-
20 ծեն. Բայց մեր *քաղաքականութիւնը երկինքն

*Կամ կենցաղավարութիւնը

է, ուսկից ալ Փրկչին կը սպասենք՝ Տէր Յիսուս
21 Քրիստոսին. Որ պիտի նորոգէ մեր խոնարհ մար-
մինը՝ իր փառաւոր մարմինին կերպարանակից
ըլլալու, ան զօրութիւնովը որ կարող է ամէնը
իր տակը հնազանդեցընելու.

ԳԼ. Դ

1 Ուստի, իմ սիրելի ու բաղձալի եղբայրներս, իմ
ուրախութիւնս ու պսակս, ասանկ հաստատուն
կեցէք Տէրոջմով, սիրելիներս.
2 Եւոդիային կ'աղաչեմ ու Սինտիքէին կ'աղա-
չեմ՝ որ մի և նոյն խորհուրդը ունենան Տէրոջմով.
3 Իրաւ քեզի ալ կ'աղաչեմ, ո՛վ հարազատ լծա-
կից, դուն ալ օգնական եղիր անոնց, որոնք իմ
հետս աշխատեցան աւետարանին մէջ Կղեմէսին
և իմ ուրիշ գործակիցներուս հետ, որոնց անուն-
4 ները կենաց գրքին մէջն են. Ուրախ եղէք Տէ-
րոջմով ամէն ատեն. դարձեալ կ'ըսեմ՝ ուրախ
5 եղէք. Ձեր քաղցրութիւնը ամէն մարդոց թող
6 յայտնի ըլլայ. Տէրը մօտ է. Բանի մը համար հոգ
մի ընէք. հապա ամէն բանի մէջ աղօթքով ու
աղաչանքով, գոհութիւնով մէկտեղ, ձեր խնդ-
7 րուածքը Աստուծոյ յայտնի ըլլայ. Եւ Աստու-
ծոյ խաղաղութիւնը որ ամէն միտքէ վեր է՝ ձեր
սրտերը ու միտքերը Քրիստոս Յիսուսով պիտի
8 պահպանէ. Վերջապէս, եղբայրներ, ինչ որ ճըշ-
մարտութիւնով է, ինչ որ պարկեշտութիւնով,
ինչ որ արդարութիւնով, ինչ որ մաքրութիւ-
նով, ինչ որ սիրով, ինչ որ բարի համբաւով,
ինչ առաքինութիւն և ինչ գովութիւն որ կայ,
9 ան բաները խորհեցէք. Ինչ որ սորվեցաք ու ա-
ռիք և լսեցիք ու տեսաք իմ վրաս, ան ըրէք.
և խաղաղութեան Աստուածը ձեր հետը պիտի
ըլլայ.

10 Մեծապէս ուրախացայ Տէրոջմով, որ իմ վրաս
ունեցած հոգերնիդ հիմա նորոգուեցաւ, ինչպէս
որ կը հոգայիք ալ, միայն թէ պատեհութիւն
11 չունէիք։ Չէ թէ կարօտութեան համար կ'ըսեմ,
ինչու որ ես սորվեցայ գոհ ըլլալ իմ գտնուած
12 վիճակիս մէջ. Գիտեմ չքաւորութիւն քաշելը,
գիտեմ շատը ունենալը. ամէն բանի մէջ ամէն
կերպով աղէկ սորվեր եմ թէ կշտանալը՝ թէ ա-
նօթենալը, թէ շատ ունենալը և թէ պակսու-
13 թիւն քաշելը։ Ամէն բանի կարող եմ *անով՝ որ
14 զիս զօրացուց։ Բայց աղէկ ըրիք որ իմ նեղու-
15 թեանս մէջ ինծի հաղորդ եղաք։ Դուք ալ գի-
տէք, փիլիպպեցիներ, որ աւետարանին սկիզբը
երբոր ես Մակեդոնիայէն ելայ, մէկ եկեղեցի
մըն ալ հետս հաղորդութիւն չըրաւ տալու և
16 առնելու կողմէ, հապա միայն դուք. Որ Թեսա-
ղոնիկէի մէջ ալ մէկ երկու անգամ ինծի պէտք
17 եղածը ղրկեցիք։ Չէ թէ ես տուրք կը փնտռեմ,
հապա պտուղ կը փնտռեմ՝ որ ձեր հաշիւին վրայ
18 աւելնայ։ Բայց ես ամէն բան առած եմ ու ա-
ռատօրէն ունիմ. լցուած եմ՝ Եպափրոդիտոսէն
ձեռքովը ձեր ղրկածները ընդունելով, որ անոյշ
հոտ մըն է՝ ընդունելի պատարագ՝ Աստուծոյ հա-
19 ճելի։ Եւ իմ Աստուածս ձեր ամէն պիտոյքը պի-
տի լեցնէ իր ճոխութեանը չափովը փառքով՝
20 Քրիստոս Յիսուսի ձեռքովը։ Արդ Աստուծոյ ու
մեր Հօրը փառք յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։
21 Բարեւ ըրէք բոլոր սուրբերուն Քրիստոս Յիսու-
22 սով։ Ձեզի բարեւ կ'ընեն իմ հետս եղող եղբայր-
23 ները։ Ձեզի բարեւ կ'ընեն բոլոր սուրբերը, մա-
24 նաւանդ անոնք որ Կայսրին տունէն են։ Տէր Յի-
սուս Քրիստոսի շնորհքը ձեր ամենուն հետը ըլ-
լայ։ Ամէն։

*Յոյնը՝ Քրիստոսով

ԹՈՒՂԹ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ
ԱՌ ԿՈՂՈՍԱՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս՝ Յիսուս Քրիստոսի առաքեալը Աստուծոյ
2 կամքովը, և Տիմոթէոս եղբայրը, Կողոսայի մէջ
եղող սուրբ ու հաւատացեալ եղբայրներուն Քրիս-
3 տոսով. Շնորհք և խաղաղութիւն ձեզի Աստուծ-
մէ մեր Հօրմէն *և Տէր Յիսուս Քրիստոսէն։
Ամէն ատեն ձեզի համար աղօթք ընելով՝ կը
գոհանանք Աստուծմէ ու մեր Տէր Յիսուս Քրիս-
4 տոսի Հօրմէն, Լսելով ձեր հաւատքը՝ որ Քրիս-
տոս Յիսուսի վրայ, և այն սէրը՝ որ բոլոր սուր-
5 բերուն վրայ ունիք. Այն յոյսին համար որ եր-
կինքը կը պահուի ձեզի, որուն վրայով առաջուց
լսեցիք աւետարանին ճշմարտութեան խօսքովը.
6 Որ ձեզի հասաւ՝ ինչպէս որ բոլոր աշխարհ, ու
պտղաբեր ըլլալով [կ'աճի], ինչպէս ձեր մէջն ալ,
այն օրուընէն որ դուք լսեցիք ու ճանչցաք Աս-
7 տուծոյ շնորհքը ճշմարտութիւնով. Ինչպէս որ
սորվեցաք մեր սիրելի ծառայակիցէն Եպափրա-
սէն, որ ձեզի համար հաւատարիմ պաշտօնեայ

*Յոյնը չունին

8 մըն է Քրիստոսի. Որ ինքն ալ մեզի պատմեց ձեր
սէրը Հոգիով.
9 Անոր համար մենք ալ այն օրուընէ որ լսեցինք՝
չենք դադարիր ձեզի համար աղօթք ընելէն ու
խնդրուածք մատուցանելէն, որ կատարեալ ըլ-
լաք անոր կամքին գիտութեամբը՝ բոլոր իմաս-
10 տութիւնով ու հոգեւոր հանճարով. Որ դուք
Տէրոջը արժանի կերպով քալէք ամէն բանի մէջ
զինքը հաճեցընելով, ամէն բարի գործքերու մէջ
պտղաբեր ըլլալով, ու աճեցուն՝ Աստուծոյ գի-
11 տութիւնովը. Իր փառաւոր զօրութեանը համե-
մատ ամենայն ուժով ուժովցած՝ բոլոր համբե-
րութեան ու երկայնմտութեան համար ուրա-
12 խութեամբ. Գոհանալով Հօր Աստուծմէն, որ մեզ
լուսոյ մէջ բնակող սուրբերուն վիճակին մասնա-
13 կից ըլլալու արժանացուց. Որ մեզ ազատեց խա-
ւարին իշխանութենէն, ու իր սիրելի Որդւոյն
14 թագաւորութեանը փոխադրեց. Որ անով մենք
փրկութիւն ունինք իր արիւնովը, այսինքն մե-
15 ղաց թողութիւն. Որ ինքը աներեւոյթ Աստուծոյ
պատկերն է՝ բոլոր ստեղծուածներուն անդրա-
16 նիկը. Ինչու որ անով ամէն բան ստեղծուեցաւ,
ինչ որ երկինքը ու ինչ որ երկրի վրայ, անոնք
որ կ'երեւնան և անոնք որ չեն երեւնար, թէ ա-
թոռները՝ թէ տէրութիւնները՝ թէ պետութիւն-
ները՝ թէ իշխանութիւնները. բոլոր բաները ա-
17 նով ու անոր համար ստեղծուեցան. Ու անիկա
ամէն բանէն առաջ է, և ամէն բան անով հաս-
18 տատ կը կենայ. Ու անիկա է մարմնին՝ այսինքն
եկեղեցւոյն գլուխը. որ ինքը սկիզբն է՝ մեռել-
ներէն անդրանիկը, որ ինքը ըլլայ ամէն բանի մէջ
19 նախապատիւ. Ինչու որ Հայրը հաճեցաւ որ Աստ-
ուածութեան բոլոր լեցունութիւնը անոր մէջը
20 բնակի. Ու անով ամէնը հաշտեցընէ իրեն հետ,
խաղաղութիւն ընելով անոր խաչին վրայ թափած

արիւնովը, թէ երկրի վրայ և թէ երկնից մէջ ե-
ղողները.
21 Ու ձեզ ալ՝ որ ատեն մը օտարացած էիք, ու
չար գործքերով թշնամիներ՝ չէք խորհուրդնե-
22 րովը, Հիմա հաշտեցուց բուն իր մարմինովը՝
մահուամբ, որ ձեզ անոր դիմացը սուրբ ու ամ-
23 բիծ և անարատ կայնեցընէ. Թէ որ կենաք հա-
ւատքին մէջ հիմնուած ու հաստատ և առանց
խախտելու աւետարանին յոյսէն՝ որ լսեցիք, որ
երկնից տակը եղած բոլոր ստեղծուածներուն
քարոզուեցաւ, որուն ես Պօղոս սպասաւոր ե-
24 ղայ. Հիմա ուրախ եմ իմ ձեզի համար կրած չար-
չարանքներուս վրայ, ու Քրիստոսի կրած նեղու-
թիւններուն պակասութիւնը իմ մարմինիս մէջը
կը լեցընեմ անոր մարմինին համար, որ եկեղե-
25 ցին է. Որուն ես սպասաւոր եղայ Աստուծոյ
տնտեսութիւնովը՝ որ ինծի տրուեցաւ ձեզի հա-
26 մար՝ Աստուծոյ խօսքը լման քարոզելու, Ան
խորհուրդը՝ որ ծածկուած էր [illegible] դարերէն ու
ազգերէն հետէ, ու հիմա իր սուրբերուն յայտ-
27 նուեցաւ. Որոնց ուզեց Աստուած գիտցընել, թէ
ինչ է աս խորհուրդիս փառաւոր ճոխութիւնը
հեթանոսներուն մէջ. որ ան է Քրիստոս ձեր
28 մէջը՝ փառաց յոյսը. Որ անիկա մենք կը քա-
րոզենք, ու ամէն մարդ կը խրատենք, և կը սոր-
վեցընենք ամէն մարդ բոլոր իմաստութիւնով,
որ ամէն մարդ կատարեալ կեցընենք Քրիստոս
29 Յիսուսով. Որուն համար ես ալ կ'աշխատիմ՝
ջանք ընելով իր ներգործութեանը համեմատ՝ որ
զօրութիւնով իմ մէջս ի գործ կը դրուի.

ԳԼ. Բ

1 Քանզի կ'ուզեմ որ գիտնաք թէ ինչպէս մեծ
անձկութիւն ունիմ ձեզի համար ու Լաւոդի-

կեցւոց համար, ու ամէն անոնց համար՝ որ իմ
2 երեսս մարմնով չեն տեսեր. Որ անոնց սիրտերը
մխիթարուին՝ սիրով միացած, ու կատարեալ ի-
մացողութեան բոլոր ճոխութեանը հասնին, այս-
ինքն Հօր Աստուծոյ և Քրիստոսի խորհուրդին
3 գիտութեանը. Որուն մէջը իմաստութեան ու գի-
4 տութեան բոլոր գանձերը պահուած են։ Եւ աս
կ'ըսեմ, որ չըլլայ թէ մէկը հրապուրական խօս-
5 քերով ձեզ մոլորցընէ։ Որ թէպէտ մարմնով հե-
ռու եմ, բայց հոգւով ձեզի հետ եմ, և կ'ու-
րախանամ երբոր ձեր բարեկարգութիւնը կը տես-
նեմ, ու ձեր հաւատքին հաստատութիւնը Քրիս-
6 տոսի վրայ։ Ուստի ինչպէս որ ընդունեցիք Քրիս-
7 տոս Յիսուս Տէրը՝ անով քալեցէք, Արմատ կա-
պած ու անոր վրայ շինուած, և հաւատքին մէջ
հաստատուած՝ ինչպէս որ սորվեցաք, և անոր
8 մէջը աճեցէք գոհութիւնով։ Զգուշացէք՝ չըլլայ
որ մէկը ձեզ գերի վարէ փիլիսոփայութիւնով ու
փուճ խաբէութիւնով, որ մարդոց աւանդութեան
պէս է ու աշխարհիս սկզբունքներուն պէս, և
և չէ թէ Քրիստոսի վարդապետութեանը պէս.
9 ինչու որ անոր մէջը կը բնակի Աստուածութեան
10 բոլոր լեցունութիւնը՝ մարմնապէս։ Եւ դուք ալ
անով լցուած էք, որ ինքը գլուխ է բոլոր իշխա-
11 նութեան ու պետութեան. Որ անով դուք ան-
ձեռագործ թլփատութիւնով թլփատուեցաք՝
*մեղաց մարմինը մերկանալով Քրիստոսի թլփա-
12 տութիւնովը. Թաղուելով անոր հետ մկրտու-
թիւնով, որով նաև անոր հետ յարութիւն առիք
Աստուծոյ զօրութեանը հաւատալով, որ ինքը
13 զանիկա մեռելներէն յարուց։ Եւ ձեզ՝ որ ատեն մը
յանցանքներու մէջ ու ձեր մարմնին անթլփա-
տութեանը մէջ մեռած էիք, կենդանացուց անոր

*Ոմանք մարմնոյ մեղաց

14 հետ. Ձեր ամէն յանցանքները ներեց մեզի, Ու
հրամաններով եղած մեզի հակառակ եղող ձե-
ռագիրը որ մեզի դէմ կը կենար՝ ջնջեց, զանիկա
մէջ տեղէն վերցուց ու խաչափայտին վրայ գա-
15 մեց. Եւ իշխանութիւնները ու պետութիւնները
մերկացուց, ու յայտնապէս խայտառակեց՝ յաղ-
թելով անոնց *անով.
16 Ուստի ալ մէկը թող չդատէ ձեզ ուտելու կամ
խմելու, կամ տօներու կամ ամսագլուխներու կամ
17 շաբաթներու կողմանէ. Որոնք գալու բաներուն
շուքն են, բայց բուն մարմինը Քրիստոսինն է։
18 Չըլլայ որ մէկը զրկէ ձեզ մրցանակէն, որ ուզէ
խոնարհութիւնով ու հրեշտակներու կրօնքով
չտեսած բաներուն միջամուխ ըլլալ, իր մարմնոյն
19 միտքովը փուճ տեղը հպարտանալով. Եւ չբռնէ
Գլուխը՝ ուսկից որ բոլոր մարմինը յօդուածներով
ու խաղերով հաղորդուած ու մէկտեղ կցուած՝
20 Աստուծոյ աճումովը կ'աճի։ Իսկ եթէ դուք Քրիս-
տոսի հետ աս աշխարհիս սկզբունքներէն մեռաք,
ալ ինչո՞ւ համար աշխարհիս մէջ կենդանի եղող-
ներու պէս անանկ կանոններու կը հնազանդիք,
21 ըսելով, Մի մօտենար, համը մի առներ, մի դպչիր,
22 (Որոնց ամէնը ապականութեան համար են գոր-
ծածութեամբ,) մարդոց պատուիրանքներուն ու
23 սորվեցուցածներուն համեմատ, Որոնք իմաստու-
թեան կերպարանք մը ունին ինքնակամ կրօն-
քով ու խոնարհութիւնով և մարմինի չխնայե-
լով, բայց չէ թէ պատիւ մը արժանի են, հապա
մարմինը յագեցընելու կը ծառայեն։

Գլ. Գ

1 Արդ թէ որ Քրիստոսի հետ յարութիւն առիք,

*կամ իր անձովը

ուրեմն վերի բաները փնտռեցէք, ուր որ Քրիս-
2 տոս կը նստի Աստուծոյ աջ կողմը։ Վերի բաները
3 մտածեցէք, չէ թէ աս երկրիս վրայինները։ Ին-
չու որ դուք մեռաք, ու ձեր կեանքը պահուած
4 է Աստուծոյ քովը Քրիստոսի հետ։ Երբոր Քրիս-
տոս՝ մեր կեանքը յայտնուի, անատենը դուք ալ
անոր հետ փառքով պիտի յայտնուիք։
5 Ուստի ձեր երկրաւոր անդամները սպաննեցէք.
պոռնկութիւնը, պղծութիւնը, [illegible] կիրքը,
չար ցանկութիւնը և ագահութիւնը՝ որ կռա-
6 պաշտութիւն է. Որոնց համար Աստուծոյ բար-
կութիւնը անհնազանդութեան որդւոց վրայ կու-
7 գայ. Որ ատեն մը դուք ալ անոնց մէջը կը քա-
8 լէիք, երբոր անոնց մէջը կ'ապրէիք։ Բայց հիմա
մէկդի ձգեցէք դուք ալ այն ամէնը. բարկու-
թիւնը, սրտմտութիւնը, չարութիւնը, հայհոյու-
թիւնը, անհամեստ խօսքերը ձեր բերաններէն,
9 Իրարու սուտ մի զրուցէք, հին մարդը իր գործ-
10 քերովը ձեր վրայէն հանեցէք. Եւ հագէք այն
նորը գիտութիւնով նորոգուած՝ իր Ստեղծողին
11 պատկերին պէս. Ուր որ Յոյն ու Հրեայ, Թլփա-
տութիւն ու անթլփատութիւն, Բարբարոս, Սկիւ-
թացի, ծառայ կամ ազատ չկայ. հապա Քրիստոս
12 է ամէնը՝ և ամէն բանի մէջ։ Ուստի Աստուծոյ
ընտրեալ սուրբերու ու սիրելիներու պէս վրա-
նիդ հագէք գութը, ողորմութիւնը, քաղցրու-
թիւնը, խոնարհութիւնը, հեզութիւնը, երկայն-
13 մտութիւնը, Իրարու համբերելով և իրարու նե-
րելով՝ թէ որ մէկը մէկու մը դէմ տրտունջ մը
ունենայ. ինչպէս որ Քրիստոս ձեզի ներեց, ա-
14 նանկ ալ դուք։ Եւ աս ամէն բաներուն վրայ
15 սէրը հագէք, որ կատարելութեան կապն է. Ու
*Աստուծոյ խաղաղութիւնը ձեր սրտերուն մէջը

*Ոմանք Քրիստոսի

թագաւորէ, որ դուք անոր կանչուեցաք մէկ
16 մարմինով. ու գոհացող եղէք։ Քրիստոսի խօսքը
ձեր մէջը բնակի առատապէս ամէն իմաստու-
թիւնով իրար սորվեցընելու ու խրատելու՝ սաղ-
մոսներով և օրհնութիւններով ու հոգևոր եր-
գերով ձեր սրտերուն մէջը շնորհքով զԱստուած
17 օրհնելու։ Եւ ամէն ինչ որ կ'ընէք թէ խօսքով
և թէ գործքով՝ բոլորը Տէր Յիսուսի անունովը
ըրէք, Աստուծոյ ու Հօրը գոհութիւն մատուցա-
նելով անոր ձեռքովը։
18 Կնիկներ, հնազանդ եղէք ձեր էրիկներուն, ինչ-
19 պէս որ կը վայլէ Տէրոջմով. Էրիկներ, սիրեցէք
20 ձեր կնիկները, ու դառն մի ըլլաք անոնց։ Որդի-
ներ, ամէն բանի մէջ հնազանդ եղէք ձեր ծնողք-
ներուն, ինչու որ ան է Տէրոջը առջևը հաճելի։
21 Հայրեր, ձեր որդիները մի բարկացընէք, որ
22 չվհատին։ Ծառաներ, ամէն բանի մէջ հնազանդ
եղէք ձեր մարմնաւոր տէրերուն, չէ թէ աչքի
առջև ծառայելով մարդահաճոներու պէս, հա-
պա սրտի միամտութեամբ՝ Տէրոջմէ վախնալով.
23 Ինչ որ կ'ընէք՝ սրտանց ըրէք, որպէս թէ Տէ-
24 րոջը ու չէ թէ մարդոց, Գիտնալով որ ժառան-
գութեան հատուցումը Տէրոջմէ պիտի առնէք.
25 ինչու որ Տէր Քրիստոսին կը ծառայէք։ Բայց
անօրէնը իր անօրէնութեանը [illegible] պիտի ըն-
դունի, և աչառութիւն չկայ։

ԳԼ. Դ

1 Տէրեր, ձեր ծառաներուն իրաւունք ու հաւա-
սարութիւն տուէք, գիտնալով որ դուք ալ Տէր
ունիք երկինքը։
2 Շարունակ աղօթքի եռանդ եղէք, անոր մէջը
3 արթուն մնալով գոհութեամբ։ Աղօթք ըրէք
նաև մեզի համար, որ Աստուած խօսքին դուռը

բանայ մեզի Քրիստոսի խորհուրդը խօսելու, ո-
4 րուն համար կապուած ալ եմ, Որ յայտնի ընեմ
5 զանիկա՝ ինչպէս որ ինծի կը վայլէ խօսիլ։ Խոհե-
մութեամբ վարուեցէք դուրսիններուն հետ՝ ժա-
6 մանակը ծախու առնելով։ Ձեր խօսքը ամէն ատեն
շնորհքով՝ [illegible] աղով համեմուած ըլլայ, ու
գիտնաք թէ ինչպէս կը վայլէ ձեզի ամէն մէկուն
պատասխան տալ։
7 Ալ իմ վրայովս բոլորը պիտի իմացնէ ձեզի
Տիւքիկոս սիրելի եղբայրը և հաւատարիմ պաշ-
8 տօնեան ու ծառայակիցը Տէրոջմով։ Որն որ աս
բանին համար ձեզի խրկեցի, որ *գիտնայ ձեր
9 վրայով, ու ձեր" սրտերը մխիթարէ, Ոնեսիմոս
հաւատարիմ ու սիրելի եղբօրը հետ մէկտեղ՝ որ
ձեզմէ մէկն է. իրենք ամէն բանը ձեզի պիտի ի-
10 մացնեն՝ ինչ որ հոս կայ։ Բարեւ կ'ընէ ձեզի Ա-
րիստարքոս՝ իմ գերութեան ընկերս, և Մար-
կոս՝ Բառնաբասին եղբօրորդին, (որուն համար
պատուէր առիք. թէ որ ձեզի գալու ըլլայ, ըն-
11 դունեցէք զանիկա,) Ու Յիսուս՝ որ Յուստոս
ըսուած է, որոնք թլփատութենէն են. ասոնք
միայն՝ ինծի գործակից եղան Աստուծոյ թագա-
ւորութեանը մէջ, որոնք ինծի մխիթարութիւն
12 եղան։ Բարեւ կ'ընէ ձեզի Եպափրաս՝ Քրիստոսի
ծառան, որ ձեզմէ մէկն է, ամէն ատեն աղօթքի
մէջ ձեզի համար ջանք ընելով, որ դուք կա-
տարեալ ու լման կենաք Աստուծոյ բոլոր կամացը
13 մէջ։ Քանզի անոր վրայով ես կը վկայեմ, թէ
շատ նախանձաւորութիւն ունի ձեզի համար ու
Լաւոդիկէի և Յերապոլիսի մէջ եղողներուն հա-
14 մար։ Բարեւ կ'ընէ ձեզի սիրելի Ղուկաս բժիշկը
15 ու Դեմաս։ Բարեւ ըրէք եղբայրներուն՝ որ Լա-
ւոդիկիա են, և Նիմփասին ու անոր տանը մէջի

*Ուրիշ՝ որ գիտնաք մեր վրայով, ու ինք ձեր

16 եկեղեցւոյն։ Ու երբոր աս թուղթը ձեր մէջը
կարդացուի, Լաւոդիկեցւոց եկեղեցւոյն մէջն ալ
կարդալ տուէք. և դուք ալ Լաւոդիկիայէն եկած
17 թուղթը կարդացէք։ Ու ըսէք Արքիպպոսին,
Զգոյշ եղիր քու պաշտօնութեանդ՝ որ Տէրոջ-
18 մով առիր, որ անիկա կատարես։ Աս բարեւը իմ
ձեռքիս՝ Պօղոսինն է. իմ կապերս միտքերնիդ
թող ըլլան։ Շնորհքը ձեզի հետ։ Ամէն։

ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս և Սիղուանոս ու Տիմոթէոս՝ Թեսաղոնի-
կեցւոց եկեղեցւոյդ՝ Հայր Աստուծով ու Տէր Յի-
2 սուս Քրիստոսով. Շնորհք և խաղաղութիւն ձեզի
*Աստուծմէ մեր Հօրմէն ու Տէր Յիսուս Քրիս-
տոսէն"։
Կը գոհանանք Աստուծմէ ամէն ատեն ձեր ա-
մենուն համար՝ ձեզ յիշելով մեր աղօթքներուն

*Ուրիշ՝ չկան

3 մէջը. Անդադար յիշելով ձեր հաւատքին գործը
ու սիրոյ աշխատութիւնը և մեր Տէր Յիսուս
Քրիստոսի յուսին համբերութիւնը՝ Աստուծոյ ու
4 մեր Հօրը առջևը. Ու գիտնալով, Աստուծմէ
5 սիրուած եղբայրներ, ձեր ընտրութիւնը. Որ մեր
աւետարանը չէ թէ միայն խօսքով եղաւ ձեզի,
հապա զօրութիւնով ալ և Հոգւով Սրբով ու
շատ ապահովութիւնով, ինչպէս որ գիտէք ալ թէ
6 ինչպէս կեցանք ձեր մէջը ձեզի համար. Դուք ալ
մեզի ու Տէրոջը նմանող ըլլալով՝ ընդունեցիք
խօսքը շատ նեղութեան մէջ Հոգւոյն Սրբոյ ու-
7 րախութիւնովը. Անանկ որ դուք օրինակ եղաք
բոլոր հաւատացեալներուն՝ որոնք Մակեդոնիայի
8 ու Աքայիայի մէջ են. Ինչու որ ձեզմէ հնչակուե-
ցաւ Տէրոջը խօսքը, չէ թէ միայն Մակեդոնիայի
ու Աքայիայի մէջ, հապա նաև ամէն տեղ ձեր
հաւատքը որ դէպ 'ի Աստուած է՝ տարածուե-
ցաւ, անանկ որ ալ պէտք չէ մեզի բան մը խօ-
9 սիլ. Քանզի իրենք կը պատմեն մեզի համար, թէ
ինչպէս եղաւ մեր ձեր քովը մտնելը, և ինչպէս
դուք կուռքերէն Աստուծոյ դարձաք՝ կենդանի
10 ու ճշմարիտ Աստուծոյ ծառայելու, Ու սպասե-
լու անոր Որդւոյն երկինքէն. որ ինքը մեռելնե-
րէն յարուց զանիկա՝ այսինքն Յիսուսը, որ կ'ա-
զատէ մեզ գալու բարկութենէն.

ԳԼ. Բ

1 Քանզի, եղբայրներ, դուք ինքնիրեննիդ գիտէք
ձեր մէջը մտնելնիս՝ որ պարապ տեղը չեղաւ.
2 Հապա առաջ Փիլիպպէի մէջ չարչարանք կրելով
ու անարգուելով ինչպէս որ գիտէք, համարձա-
կութիւն ըրինք մեր Աստուծովը՝ ձեզի պատմելու
Աստուծոյ աւետարանը մեծ հակառակութեան
3 մէջ. Ինչու որ մեր յորդորանքը ոչ մոլորութենէ

4 է ու ոչ պղծութենէ և ոչ խաբէութեամբ. Հապա
ինչպէս որ մենք Աստուծմէ ընտրուեցանք ու
աւետարանը մեզի հաւատացուեցաւ, այնպէս կը խօ-
սինք, չէ թէ մարդոց հաճոյ ըլլալու համար, հապա
5 Աստուծոյ՝ որ մեր սիրտերը կը քննէ. Ինչու որ
մենք բնաւ շողոքորթութեան խօսքեր չգործա-
ծեցինք, ինչպէս որ գիտէք, ոչ ալ ագահութեան
6 պատճառանք, Աստուած վկայ է, Ու մարդոցմէ
փառք չփնտռեցինք, ոչ ձեզմէ՝ ոչ ալ ուրիշնե-
7 րէն, թէև կրնայինք իբրև Քրիստոսի առաքեալ-
ներ ծանրութիւն տալ. բայց մենք հեզ եղանք
ձեր մէջը, ինչպէս որ դայեակ մը իր երախաները
8 կը խնամէ. Նոյնպէս ալ մենք ձեր վրայ փափաք
ունենալով կը յօժարէինք, ոչ միայն Աստուծոյ
աւետարանը ձեզի տալ, հապա մեր անձերն ալ,
9 ինչու որ դուք մեզի սիրելիներ եղաք. Քանզի
կը յիշէք, եղբայրներ, մեր աշխատութիւնը ու
ջանքը, որ ձեզմէ մէկու մը ծանրութիւն չտալու
համար գիշեր ու ցորեկ գործելով՝ ձեզի Աստու-
10 ծոյ աւետարանը քարոզեցինք. Դուք վկայ էք,
և Աստուած ալ՝ թէ ինչպէս սրբութիւնով ու
արդարութիւնով և անարատութիւնով վարուե-
11 ցանք ձեզի հետ՝ որ հաւատացիք. Ինչպէս գի-
տէք ալ, որ ձեզմէ ամէն մէկը՝ ինչպէս հայր մը
12 իր որդիները՝ Անանկ կը յորդորէինք ու կը մխի-
թարէինք և վկայութիւն կը դնէինք՝ որ դուք
Աստուծոյ վայլածին պէս քալէք, ան որ ձեզ իր
13 թագաւորութեանը ու փառքին կանչեց: Ասոր
համար մենք ալ անդադար կը գոհանանք Աս-
տուծմէ, որ մեզմէ Աստուծոյ խօսքը լսելով ըն-
դունեցիք, չէ թէ իբրև մարդոց խօսք, հապա
ինչպէս որ ճշմարտապէս է՝ Աստուծոյ խօսք, որ
նաև կը ներգործէ ձեր մէջը որ կը հաւատաք.
14 Քանզի դուք, եղբայրներ, նմանող եղաք Աս-
տուծոյ եկեղեցիներուն՝ որ Հրէաստանի մէջ են

Քրիստոս Յիսուսով. ինչու որ դուք ալ նոյն չար-
չարանքները կրեցիք ձեր համազգիներէն, ինչպէս
15 որ անոնք ալ Հրեաներէն. Որոնք Տէր Յիսուսն ալ
մեռցուցին՝ *մարգարէներն ալ, և մեզ հալածե-
ցին, ու Աստուծոյ անհաճոյ՝ և բոլոր մարդոց
16 հակառակ են. Ու մեզ կ'արգիլեն հեթանոսնե-
րուն խօսելէն՝ անոնց փրկութեանը համար, որ
իրենց մեղքերուն չափը լեցնեն ամէն ատեն. և
բարկութիւնը անոնց վրայ հասեր է մինչև վերջը։
17 Իսկ մենք, եղբայրներ, իրաւ քիչ մը ատեն
ձեզմէ որբ մնացինք երեսով ու ոչ թէ սրտով,
բայց աւելի ջանացինք ձեր երեսը տեսնելու մեծ
18 փափաքով. Անոր համար ես Պօղոս մէկ երկու
անգամ ուզեցի ձեզի գալ, բայց Սատանան մեզ
19 արգիլեց. Ինչու որ ո՞վ է մեր յոյսը կամ ուրա-
խութիւնը կամ մեր պարծանքին պսակը, եթէ ոչ
դուք՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի առջևը անոր
20 գալու ատենը. Որովհետև դուք էք մեր փառքը
և ուրախութիւնը.

ԳԼ. Գ

1 Ասոր ալ չկրնալով աւելի համբերել, աղէկ ե-
2 րեւցաւ մեզի մինակ Աթէնք մնալ. Ու Տիմոթէոս
մեր եղբայրը ու Աստուծոյ պաշտօնեան և մեր
գործակիցը Քրիստոսի աւետարանին մէջ՝ խրկե-
ցինք ձեզ հաստատելու ու մխիթարելու ձեր հա-
3 ւատքին համար. Որ աս նեղութիւններուն մէջ
ձեզմէ մէկը չխախտի. ինչու որ դուք ինքնիրեն-
նիդ գիտէք որ մենք աս բաներուն համար կե-
4 ցեր ենք. Քանզի երբոր մենք ձեր քովն էինք,
առաջուց ձեզի կը զրուցէինք թէ նեղութիւննե-
րու պիտի հանդիպինք, ինչպէս որ եղաւ ալ, ու
5 գիտէք. Ասոր համար ես ալ չկրնալով աւելի

*Ոմանք իրենց մարգարէներն

համբերել, մարդ խրկեցի ձեր հաւատքը գիտ-
նալու, որ չըլլայ թէ փորձողը ձեզ փորձած ըլ-
6 լայ, և մեր աշխատութիւնը պարապ ըլլայ. Բայց
հիմա երբոր Տիմոթէոս ձեզմէ մեզի եկաւ, ու
ձեր հաւատքին և սիրոյն աւետիսը մեզի տուաւ,
որ ամէն ժամանակ մեր բարի յիշատակը միտեր-
նիդ ունիք, և կը փափաքիք մեզ տեսնելու, ինչ-
7 պէս որ մենք ալ ձեզ, Ասոր համար, եղբայրներ,
ձեր վրայ մխիթարուեցանք մեր բոլոր վիշտերուն
ու նեղութիւններուն վրայ ձեր հաւատքովը.
8 Ինչու որ հիմա կենդանի ենք մենք, թէ որ դուք
9 հաստատուն կենաք Տէրոջմով. Քանզի ի՞նչ գո-
հութիւն կրնանք մատուցանել Աստուծոյ ձեր
վրայով՝ այն ամէն ուրախութեանը համար՝ որ
կ'ուրախանանք ձեզի համար մեր Աստուծոյ առ-
10 ջևը, Ու գիշեր ու ցորեկ խիստ շատ աղաչանք
կ'ընենք ձեր երեսը տեսնելու, ու ձեր հաւատ-
11 քին պակասութիւնները լեցնելու. Բայց Աստուած
ինքն ու մեր Հայրը և մեր Տէրը Յիսուս Քրիստոս
12 մեր ճամբան դէպ 'ի ձեզի յաջողէ. Ու Տէրը աճե-
ցընէ ու աւելցընէ ձեր սէրը իրարու վրայ ու ա-
մենուն վրայ, ինչպէս որ մենք ալ ձեր վրայ ու-
13 նինք, Հաստատելով ձեր սրտերը անարատ՝ սըր-
բութեան մէջ Աստուծոյ և մեր Հօրը առջևը՝
մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի գալու ատենը իր
բոլոր սուրբերուն հետ մէկտեղ.

ԳԼ. Դ

1 Ալ հիմա, եղբայրներ, ձեզի կ'աղաչենք ու կը
յորդորենք Տէր Յիսուսով, որ ինչպէս մեզմէ ա-
ռիք՝ թէ ինչպէս պէտք է ձեզի քալել ու Աս-
տուծոյ հաճոյ ըլլալ, ալ աւելի անոր մէջը շատ-
2 նաք. Քանզի գիտէք թէ ինչ պատուէրներ տը-
3 ւինք ձեզի Տէր Յիսուսով. Ինչու որ Աստուծոյ
կամքը աս է՝ այսինքն ձեր սուրբ ըլլալը, որ

4 դուք եա կենաք պոռնկութենէ. Ձեզմէ ամէն
մէկը գիտնայ իր անօթը սրբութիւնով ու պատ-
5 ուով ստանալ. Ոչ թէ ցանկութեան կիրքով՝
ինչպէս հեթանոսները՝ որոնք Աստուած չեն ճանչ-
6 նար. Չըլլայ որ *աս բանին" մէջ չափէ անցնի
մէկը ու իր եղբայրը զրկէ, ինչու որ Տէրը աս բո-
լոր բաներուն համար վրէժխնդիր է. ինչպէս ա-
ռաջուց ըսինք ձեզի ու վկայութիւն տուինք.
7 Ինչու որ Աստուած մեզ պղծութեան չկանչեց,
8 հապա սրբութեան. Ուստի ան որ կ'անարգէ՝ չէ
թէ անիկա մարդ մը կ'անարգէ, հապա զԱստ-
ուած՝ որ իր Սուրբ Հոգին ալ †մեզի տուաւ.
9 Բայց եղբայրսիրութեան վրայով պէտք չէ ձեզի
բան գրել, ինչու որ դուք ինքնիրեննիդ Աս-
10 տուծմէ սորված էք մէկզմէկ սիրել. Եւ իրաւ
աս բանը կ'ընէք դուք բոլոր Մակեդոնիայի մէջ
եղող ամէն եղբայրներուն. սակայն կ'աղաչենք
ձեզի, եղբայրներ, որ ալ աւելի առատանաք.
11 Եւ ջանք ընէք որ հանդարտ կենաք, ու ամէն
մէկերնիդ իր գործը գործէ, ու ձեր ձեռքերովը
աշխատիք, (ինչպէս որ ձեզի պատուիրեցինք,)
որ դուրսիններուն հետը պարկեշտութեամբ վա-
րուիք, ու ‡բանի մը կարօտ չըլլաք:
12 Չենք ուզեր, եղբայրներ, որ ագէտ ըլլաք նն-
ջեցեալներուն վրայով, որ չտրտմիք ինչպէս ու-
13 րիշները՝ որոնք յոյս չունին. Քանզի թէ որ կը
հաւատանք թէ Յիսուս մեռաւ ու յարութիւն
առաւ, անանկ ալ Աստուած ննջեցեալները Յի-
14 սուսով պիտի բերէ անոր հետ: Վասն զի աս կը
զրուցենք ձեզի Տէրոջը խօսքովը, թէ մենք որ
մինչև Տէրոջը գալուստը ողջ կը մնանք, բնաւ
15 ննջեցեալներէն առաջ պիտի չանցնինք. Ինչու որ

---

*Կամ բանի մը †Ոմանք ձեզի
‡Կամ մէկու

Տէրը ինք ազդարարութեան հրամանով՝ հրեշ-
տակապետին ձայնովը ու Աստուծոյ փողովը եր-
կինքէն պիտի իջնէ, և Քրիստոսով մեռածները
16 առաջ յարութիւն պիտի առնեն. Ետքը մենք
ալ որ ողջ մնացած ենք՝ անոնցմով մէկտեղ պի-
տի յափշտակուինք ամպերով Տէրոջը առջևը ել-
լելու օդին մէջը, և անանկ յաւիտեան Տէրոջը
17 հետ պիտի ըլլանք: Ուստի մէկզմէկ մխիթարեցէք
աս խօսքերով.

ԳԼ. Ե

1 Բայց ան ժամերուն ու ժամանակներուն համար,
2 եղբայրներ, պէտք չէ բան մը գրել ձեզի. Քանզի
դուք ինքնիրեննիդ աղէկ գիտէք՝ թէ Տէրոջը օրը
3 գիշերուան գողի պէս անանկ կը հասնի: Երբոր
ըսելու ըլլան թէ խաղաղութիւն ու ապահովու-
թիւն է, անատենը կորուստը յանկարծակի անոնց
վրայ պիտի հասնի յղիին երկանցը պէս, ու պիտի
4 չազատին. Բայց դուք, եղբայրներ, խաւարի մէջ
չէք, որ ան օրը գողի մը պէս ձեր վրայ հասնի.
5 Ինչու որ դուք ամէնքդ լուսոյ որդիք էք՝ ու
ցորեկուան որդիք. գիշերուան չենք, խաւարինը
6 չենք. Ուրեմն չքնանանք ինչպէս որ ուրիշները,
7 հապա արթուն ու զգաստ ըլլանք. Քանզի անոնք
որ կը քնանան՝ գիշերը կը քնանան, և անոնք որ
8 կ'արբենան՝ գիշերը կ'արբենան: Բայց մենք ո-
րովհետև ցորեկուան ենք, զգաստ ըլլանք, և
հաւատքին ու սիրոյն զրահը վրանիս հագնինք,
ու փրկութեան յուսոյն սաղաւարտը [illegible]
9 [illegible]. Ինչու որ Աստուած մեզ բարկութեան
համար չորոշեց, հապա փրկութիւն ստանալու
10 համար մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռքովը. Որ
ինքը մեզի համար մեռաւ. որպէս զի թէ ար-
թուն ըլլանք և թէ քնանանք, իր հետը մէկտեղ

11 ապրինք. Անոր համար մէկզմէկ մխիթարեցէք և
իրարու շինութիւն տուէք, ինչպէս որ կ'ընէք ալ.
12 Եւ ձեզի կ'աղաչենք, եղբայրներ, որ ճանչնաք
ձեր աշխատաւորները ու վերակացուները Տէրոջ-
13 մով, ու ձեզի խրատ տուողները. Եւ զանոնք մե-
ծապէս պատուեցէք սիրով իրենց գործքին հա-
14 մար. իրարու հետ խաղաղութիւն ունեցէք. Եւ
ձեզի կ'աղաչենք, եղբայրներ, անկարգ վարմունք
ունեցողները խրատեցէք, վատասիրտները մխի-
թարեցէք, տկարներուն ձեռնտու եղէք, ամէ-
15 նուն ալ երկայնամիտ եղէք. Զգուշացէք՝ չըլլայ
որ մէկը չարութեան փոխարէն չարութիւն հա-
տուցանէ մէկու մը. հապա ամէն ատեն բարիք
ընելու ետևէ եղէք թէ իրարու և թէ ամենուն։
16 Ամէն ատեն ուրախ եղէք. (17) Անդադար աղօթք
18 ըրէք։ Ամէն բանի մէջ գոհութիւն տուէք. ին-
չու որ ատ է Աստուծոյ կամքը Քրիստոս Յիսու-
19 սով ձեր վրայ. Սուրբ Հոգին մի մարէք. (20) Մար-
21 գարէութիւնները մի արհամարհէք։ Ամէն բան
22 փորձեցէք, բարին ամուր բռնեցէք. Ամէն տե-
23 սակ գէշ բաներէն ետ կեցէք. Եւ ինքը խա-
ղաղութեան Աստուածը ձեզ բոլորովին սուրբ
ընէ, ու ձեր բոլոր հոգին և շունչը ու մարմինը
անարատ պահուի մինչև մեր Տէր Յիսուս Քրիս-
24 տոսի գալու ատենը. Հաւատարիմ է ան որ ձեզ
կանչեց, որ ինքը պիտի կատարէ ալ.
25 Եղբայրներ, աղօթք ըրէք մեզի համար։ (26) Բա-
րև տուէք բոլոր եղբայրներուն սուրբ համբու-
27 րով։ Կ'երդմընցընեմ ձեզ Տէրոջմով, որ աս
թուղթը բոլոր սուրբ եղբայրներուն կարդացուի։
28 Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր հետը
ըլլայ. Ամէն.

ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս և Սիղուանոս ու Տիմոթէոս՝ Թեսաղոնի-
կեցւոց եկեղեցւոյդ մեր Հայր Աստուծով ու Տէր
2 Յիսուս Քրիստոսով. Շնորհք և խաղաղութիւն
ձեզի Աստուծմէ մեր Հօրմէն ու Տէր Յիսուս
Քրիստոսէն։
3 Պարտինք ամէն ատեն Աստուծմէ գոհանալ
ձեզի համար, եղբայրներ, ինչպէս որ կը վայլէ.
քանզի ձեր հաւատքը շատ աճելու վրայ է, և
ձեր ամէն մէկուն սէրը իրարու վրայ կը շատնայ.
4 Անանկ որ մենք ալ ձեզմով կը պարծենանք Աս-
տուծոյ եկեղեցիներուն մէջը՝ ձեր համբերու-
թեանը ու հաւատքին համար ձեր բոլոր հալա-
ծանքներուն ու նեղութիւններուն մէջ, որոնց որ
5 դուք կը համբերէք. Որ է Աստուծոյ արդար
դատաստանին ապացոյցը՝ որ դուք արժանանաք
Աստուծոյ թագաւորութեանը, որուն համար ալ
6 նեղութիւն կը կրէք. Քանզի Աստուծոյ առջևը
իրաւունք է՝ ձեզի նեղութիւն տուողներուն նե-
7 ղութիւն հատուցանել, Եւ ձեզի նեղութիւն կրող-

ներուդ՝ մեզի հետ հանգիստ, Տէր Յիսուսի եր-
կինքէն յայտնուելու ատենը իր զօրաւոր հրեշ-
8 տակներովը, Բորբոքած կրակով վրէժ առնելու
անոնցմէ՝ որ Աստուած չեն ճանչնար, և որ մեր
Տէր Յիսուս Քրիստոսի աւետարանին չեն հնազան-
9 դիր· Որոնք պիտի պատժուին յաւիտենական
սատակումով՝ Տէրոջը երեսէն ու անոր զօրու-
10 թեանը փառքէն, Երբոր ինքը գայ փառաւորուե-
լու իր սուրբերուն մէջը, և հիանալի ըլլալու բո-
լոր հաւատացեալներուն մէջը, (ինչու որ մեր
վկայութիւնը ձեր մէջը հաւատացուեցաւ,) այն
11 օրը։ Ասոր պատճառաւ ալ ամէն ատեն ձեզի հա-
մար աղօթք կ'ընենք, որ մեր Աստուածը ձեզ
արժանի ընէ իր կոչմանը, և իր բարութեան բո-
լոր հաճութիւնը կատարէ, ու հաւատքին գործը՝
12 զօրութիւնով· Որ մեր Տէր Յիսուս Քրիստոսի
անունը փառաւորուի ձեր մէջը, և դուք ալ անոր
մէջը՝ մեր Աստուծոյն ու Տէր Յիսուս Քրիստոսի
շնորհացը համեմատ։

ԳԼ. Բ

1 Կ'աղաչենք ձեզի, եղբայրներ, մեր Տէր Յիսուս
Քրիստոսի գալստեանը ու մեր անոր քովը ժող-
2 վուելուն համար, Չըլլայ որ շուտ մը խախտիք
ձեր միտքէն, ու չըլլայ որ խռովիք՝ ոչ հոգիով
ու ոչ խօսքով, ոչ ալ թուղթով մը իբր թէ
մեզմէ ղրկուած, որպէս թէ Քրիստոսի օրը եկած
3 հասած ըլլայ։ Չըլլայ որ մէկը ձեզ խաբէ մէկ
կերպով մը· ինչու որ այն օրը պիտի չգայ՝ թէ որ
ապստամբութիւնը առաջ չգայ, ու յայտնուի մե-
4 ղաց մարդը՝ կորստեան որդին, Ան հակառակորդը
հպարտացած ամենուն վրայ որ Աստուած կ'ըսուի
կամ կը պաշտուի, մինչև անիկա Աստուծոյ տա-
ճարին մէջ *պիտի նստի, և ինքզինքը ցուցընէ

* Ոմանք Աստուծոյ պէս պիտի

5 թէ Աստուած է։ Չե՞ք յիշեր որ երբ ձեր քովն
6 էի, աս բաները կ'ըսէի ձեզի։ Եւ հիմա դուք
[illegible] գիտէք ինչ է ան որ կ'արգիլէ, որ
7 ինքը իր ատենին յայտնուի։ Ինչու որ անօրէնու-
թեան խորհուրդը հիմակուընէ կը զօրանայ· բայց
ան որ հիմա կ'արգիլէ, պիտի արգիլէ՝ մինչև որ
8 ինքը մէջտեղէն վերնայ։ Ու ետքը պիտի յայտ-
նուի ան անօրէնը, որն որ Տէր [Յիսուս] իր բեր-
նին հոգիովը պիտի սպառէ, ու իր գալուն յայտ-
9 նուելովը պիտի կորսընցընէ· Որուն գալը Սատա-
նային ազդեցութիւնովն է բոլոր զօրութիւնով և
10 նշաններով ու սուտ հրաշքներով, Եւ կորսուելա-
ներուն վրայ անիրաւութեան բոլոր խաբէութիւ-
նովը· որովհետև անոնք ճշմարտութեան սէրը
չընդունեցին՝ որ փրկուին· անոր համար Աստուած
ալ պիտի ղրկէ անոնց ուժով մոլորութիւն մը՝
11 որ ստութեան հաւատան· Որ դատապարտուին
ամէն անոնք որ չհաւատացին ճշմարտութեան,
հապա անօրէնութեան յօժարեցան։
12 Բայց մեզի պէտք է միշտ Աստուծմէ գոհանալ
ձեզի համար, Տէրոջմէ սիրուած եղբայրներ, ին-
չու որ Աստուած առաջուց ձեզ ընտրեց փրկուե-
լու Հոգիին սրբելովը ու ճշմարտութեան հաւատ-
13 քովը· Որուն ձեզ կանչեց մեր աւետարանելովը՝
մեր Տէր Յիսուս Քրիստոսի փառքը ստանալու։
14 Ուստի, եղբայրներ, հաստատ կեցէք, ու պինդ
բռնեցէք ան աւանդութիւնները որ սորվեցաք
15 թէ խօսքով ու թէ մեր թուղթովը։ Եւ ինքը
մեր Տէր Յիսուս Քրիստոս՝ ու մեր Հայրը Աստ-
ուած, որ մեզ սիրեց ու տուաւ մեզի յաւիտե-
նական մխիթարութիւն և բարի յոյս շնորհքով,
16 Ձեր սիրտերը մխիթարէ և ձեզ հաստատէ ամէն
բարի խօսքերու և գործքերու մէջ։

ԳԼ. Գ

1 Վերջապէս, եղբայրներ, մեզի համար աղօթք
ըրէք, որ Տէրոջը խօսքը յառաջանայ ու փառա-
2 ւոր ըլլայ, ինչպէս որ ձեր մէջը· Եւ որ անիրաւ
ու չար մարդոցմէն ազատինք· ինչու որ ամէնը
3 *հաւատք չունին։ Բայց Տէրը հաւատարիմ է, որ
4 ձեզ պիտի հաստատէ, ու չարէն պահէ։ Եւ ձեր
վրայ վստահութիւն ունինք Տէրոջմով, թէ ինչ որ
ձեզի պատուիրեցինք՝ կ'ընէք, ու պիտի ընէք ալ։
5 Եւ Տէրը ձեր սիրտերը Աստուծոյ սիրոյն ու Քրիս-
տոսի համբերութեանը ուղղէ։
6 Եւ ձեզի կը պատուիրենք, եղբայրներ, մեր Տէր
Յիսուս Քրիստոսի անունովը, որ ետ քաշուիք
ամէն եղբօրմէ՝ որ անկարգութեամբ կը վարուի,
ու չէ թէ ան աւանդութեանը պէս՝ որ մեզմէ
7 առաւ։ Ինչու որ դուք ինքնիրեննիդ գիտէք թէ
ինչպէս պարտիք մեզի նմանող ըլլալ· քանզի մենք
9 ձեր մէջը անկարգութեամբ չվարուեցանք, Ոչ ալ
մէկուն հացը ձրի կերանք· հապա ջանքով և աշ-
խատանքով գիշեր ու ցորեկ կը գործէինք՝ ձեզմէ
9 մէկուն ծանրութիւն չտալու համար· Չէ թէ՝ որ
մենք իշխանութիւն չունէինք, հապա որ անձեր-
նիս ձեզի օրինակ ընենք՝ որ մեզի նմանող ըլլաք։
10 վասն զի երբոր մենք ձեր քովը էինք՝ աս ձեզի
կը պատուիրէինք, թէ ան որ չուզեր գործ գոր-
11 ծել, հաց ալ թող չուտէ։ Արդ կը լսենք որ ձեր
մէջէն ոմանք անկարգութեամբ կը վարուին, ու
գործ մը չեն գործեր, հապա հետաքրքիր կը պտը-
12 տին։ Անանկներուն պատուէր կու տանք ու կ'ա-
ղաչենք մեր Տէր Յիսուս Քրիստոսով, որ հան-
դարտութեամբ գործեն և իրենց հացը ուտեն։

*Կամ հաւատարմութիւն

13 Բայց դուք, եղբայրներ, մի ձանձրանաք բարիք
14 գործելէն։ Իսկ թէ որ մէկը չհնազանդիր մեր
խօսքին աս թուղթով, դուք նշանակեցէք ա-
նիկա, ու անոր հետ մի խառնուիք, որ ամչնայ։
15 Բայց չըլլայ թէ թշնամիի պէս սեպէք անիկա, հապա
16 եղբօր պէս խրատեցէք։ Եւ ինքը խաղաղութեան
Տէրը ամէն կերպով ձեզի խաղաղութիւն տայ
ամէն ատեն. Տէրը ձեր ամենուն հետ ըլլայ։
17 Աս ողջոյնը իմ ձեռքիս՝ Պօղոսինն է, որ ամէն
18 թուղթերուն մէջ նշան է. ասանկ կը գրեմ։ Մեր
Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր ամենուն հետ
ըլլայ։ Ամէն։

ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս՝ Յիսուս Քրիստոսի առաքեալը մեր Փրկիչ
Աստուծոյ և մեր յոյսը եղող *Քրիստոս Յիսուսի
2 հրամանովը, Տիմոթէոսի՝ իմ հարազատ որդւոյս
հաւատքով, շնորհք, ողորմութիւն ու խաղաղու-

*Ոմանք Տէր Յիսուս Քրիստոսի

թիւն Աստուծմէ մեր Հօրմէն և Քրիստոս Յիսուսէ
մեր Տէրոջմէն.
3 Ինչպէս որ քեզի աղաչեցի Եփեսոս մնալու, երբ-
որ ես Մակեդոնիա կ'երթայի, որ պատուիրես
մէկ քանիներուն օտար ուսմունք չսորվեցնել,
4 Ու չնայիլ առասպելներու ու ազգահամարներու՝
որ վերջ չունին, որոնք աւելի վէճեր կը պատ-
ճառեն քան թէ Աստուծոյ հաճելի *շինութիւնը՝
5 որ կ'ըլլայ հաւատքով. Իսկ պատուիրանքին վախ-
ճանը սէր է սուրբ սրտով ու բարի խղճմտան-
6 քով և անկեղծ հաւատքով. Որոնցմէ խոտորե-
7 լով ոմանք փուճ խօսքերու ետևէ գացին. Օրի-
նաց վարդապետ ըլլալ կ'ուզեն, բայց իրենք չեն
հասկընար ինչ որ կը խօսին, ոչ ալ ան բաները՝
8 որոնց համար ոտք կը կոխեն։ Արդ գիտենք որ
օրէնքը աղէկ է, թէ որ մէկը անիկա օրինաւոր
9 կերպով գործածելու ըլլայ. Բայց աս թող գիտ-
նայ որ արդարներուն համար չէ օրէնքը, հապա
անօրէններուն ու անհնազանդներուն համար,
ամբարիշտներուն և մեղաւորներուն, անսուրբ-
ներուն և պիղծերուն, հայր ու մայր զարնողնե-
10 րուն, մարդասպաններուն, Պոռնիկներուն, ար-
ուագէտներուն, մարդ գողցողներուն, սուտ-
զրուցներուն, սուտ երդում ընողներուն, և թէ
ուրիշ ինչ որ հակառակ է ողջամիտ վարդապե-
11 տութեան, Որ երանելի Աստուծոյ փառաւոր ա-
ւետարանին համեմատ է, ան որ ինծի յանձնուե-
12 ցաւ. Եւ շնորհակալ եմ անոր՝ որ զիս զօրացուց,
այսինքն Քրիստոս Յիսուս մեր Տէրոջը, որ հա-
ւատարիմ սեպելով զիս՝ աս սպասաւորութեանը
13 մէջ դրաւ. Որ առաջուց հայհոյիչ էի ու հալա-
ծող և թշնամանող. բայց ողորմութիւն գտայ,
ինչու որ անհաւատութեան մէջ չգիտնալով ըրի.

*կամ կենցաղավարութիւնը

14 Եւ մեր Տէրոջը շնորհքը խիստ շատ եղաւ ինծի
հաւատքով ու սիրով՝ որ Քրիստոս Յիսուսով է։
15 Աս խօսքը հաւատարիմ է ու բոլորովին ընդու-
նելութեան արժանի, որ Քրիստոս Յիսուս աշ-
խարհք եկաւ մեղաւորները փրկելու, որոնց
16 գլուխը ես եմ. Բայց անոր համար ողորմութիւն
գտայ, որ պինտ առաջ Յիսուս Քրիստոս իմ վրաս
ցուցընէ բոլոր երկայնմտութիւնը՝ օրինակ ըլլա-
լու անոնց որ պիտի հաւատային իրեն յաւիտե-
17 նական կենաց համար։ Արդ յաւիտենական թա-
գաւորին՝ որ անեղծ ու աներևոյթ է, մի *միայն
Աստուծոյն փառք ու պատիւ յաւիտեանս յա-
ւիտենից. Ամէն.
18 Աս պատուէրը կ'աւանդեմ քեզի, իմ որդ-
եակս Տիմոթէոս, քու վրայովդ առաջուց եղած
մարգարէութիւններուն համեմատ, որ անոնցմով
19 պատերազմիս ան բարի պատերազմը, Եւ ունե-
նաս հաւատք ու մաքուր խղճմտանք, որն որ
մէկ քանիները իրենցմէ մէկդի ձգելով՝ նաւակո-
20 ծութիւն կրեցին հաւատքին կողմանէ. Որոնցմէ
են Հիմենոս ու Աղեքսանդրոս, որոնք ես Սա-
տանային մատնեցի, որ սորվին հայհոյութիւն չը-
նել.

ԳԼ. Բ

1 Արդ կ'աղաչեմ ամէն բանէն առաջ աղօթք ը-
նել, խնդրուածք, աղաչանք, գոհութիւն ամէն
2 մարդոց համար, Մանաւանդ թագաւորներուն և
բոլոր իշխանաւորներուն համար, որ խաղաղ ու
հանդարտ կեանք վարենք բոլորովին աստուած-
3 պաշտութիւնով ու պարկեշտութիւնով. Ինչու որ
ան է աղէկը ու ընդունելին մեր Փրկիչ Աստու-

*Ոմանք միայն իմաստուն

4 ծոյն առջեւ, Որ կ'ուզէ թէ ամէն մարդիկ փըր-
5 կուին ու ճշմարտութիւնը ճանչնալու գան։ Քանզի
մէկ Աստուած մը կայ, ու մէկ միջնորդ մը Աս-
տուծոյ ու մարդոց մէջ՝ Քրիստոս Յիսուս մար-
6 դը. Որ իր անձը ամենուն տեղը փրկանք տուաւ՝
7 իր ատենին վկայութիւն ըլլալու. Որ ես անոր
քարոզիչ ու առաքեալ դրուեցայ, (ճշմարիտ կ'ը-
սեմ *Քրիստոսով ու սուտ չեմ խօսիր,) հեթանոս-
ներուն վարդապետ եղայ հաւատքով ու ճշմար-
8 տութիւնով. Արդ կ'ուզեմ որ էրիկ մարդիկ ամէն
տեղ աղօթք ընեն՝ սուրբ ձեռքեր վերցնելով ա-
9 ռանց բարկութեան ու երկմտութեան. Նոյնպէս
ալ կիները վայելուչ հագուստով, ամօթխածու-
թեամբ և պարկեշտութեամբ ինքզինքնին զար-
դարեն, չէ թէ հիւսուածքներով կամ ոսկիով
կամ մարգարիտներով կամ մեծածախ հանդերձ-
10 ներով, Հապա բարի գործքերով՝ ինչոր որ կը
վայլէ աստուածպաշտութիւնը դաւանող կիներ-
11 րուն. Կնիկ մարդը թող սորվի լռութեամբ՝ ա-
12 մենայն հնազանդութիւնով։ Բայց կնիկ մարդու
հրաման չեմ տար սորվեցնելու, ոչ ալ էրիկ
13 մարդուն իշխելու, հապա լուռ կենալու. Ինչու
որ առաջ Ադամ ստեղծուեցաւ, ու ետքը Եւա.
14 Եւ Ադամ չխաբուեցաւ, հապա կինը խաբուեցաւ
15 ու յանցանք գործեց. Սակայն պիտի փրկուի ա-
նիկա որդեծնութեամբ, թէ որ կենան հաւատքի
և սիրոյ ու սրբութեան մէջ պարկեշտութիւնով.

ԳԼ. Գ

1 Աս խօսքը հաւատարիմ է, թէ որ մէկը եպիս-
կոպոսութեան կը ցանկայ՝ աղէկ գործի կը ցան-
2 կայ. Ուստի պէտք է եպիսկոպոսին անպարտ ըլ-

*Ոմանք չունին

լալ, մէկ կնկան մը էրիկ, զգաստ, խոհեմ, պար-
3 կեշտ, հիւրասէր, սորվեցնելու յարմար, Ոչ
գինեմոլ, ոչ զարնող, *հապա հանդարտ, ոչ կռո-
4 ւող, ոչ արծաթասէր. Որ իր տանը աղէկ վե-
րակացութիւն ընող ըլլայ, իր զաւակները հնա-
զանդութեան մէջ պահելով բոլոր ծանրաբարո-
5 յութեամբ. (Հապա թէ որ մէկը իր տանը վերա-
կացութիւն ընելը չգիտնայ, ի՞նչպէս Աստուծոյ
6 եկեղեցւոյն հոգաբարձու պիտի ըլլայ.) Ոչ ալ
նորահաւատ ըլլայ, որ չըլլայ թէ հպարտանալով
Սատանային դատապարտութեանը մէջ իյնայ.
7 Հապա պէտք է անոր դուրսէն եղողներէն ալ
բարի վկայութիւն ունենալ, որ չըլլայ թէ նա-
խատինքի մէջ ու Սատանային որոգայթին մէջը
իյնայ.
8 Նոյնպէս ալ սարկաւագները ըլլան ծանրաբա-
րոյ, ոչ երկլեզու, ոչ գինեսէր, ոչ անարգ շա-
հախնդրութեան ետեւէ եղող. Հապա հաւատքին
9 խորհուրդը պահեն մաքուր խղճմտանքով. Եւ
10 ասոնք ալ առաջ թող փորձուին, ետքը՝ թէ որ
անմեղադրելի գտնուին, սարկաւագութեան պաշ-
տօնը կատարեն. Անանկ ալ անոնց կնիկները ծան-
11 րաբարոյ ըլլան, ոչ չարախօս, հապա զգաստ, ա-
մէն բանի մէջ հաւատարիմ. Սարկաւագները մէկ
12 կնկան մը էրիկ ըլլան, և իրենց զաւակներուն ու
իրենց տանը աղէկ վերակացութիւն ընող ըլլան.
13 Քանզի անոնք որ սարկաւագութեան պաշտօնը
աղէկ կը կատարեն, բարի աստիճան մը իրենց կը
շահին, ու Քրիստոս Յիսուսի վրայ եղած հա-
ւատքին մէջ շատ համարձակութիւն։
14 Աս բաները կը գրեմ քեզի՝ յուսալով մօտերս
15 քեզի գալ. Բայց եթէ ուշանալու ըլլամ, որ

*Ոմանք ոչ անարգ շահախնդրութեան ետեւէ ե-
ղող, հապա

գիտնաս թէ ինչպէս պէտք է քեզի Աստուծոյ
տանը մէջ պտըտիլ, որ կենդանի Աստուծոյ ե-
կեղեցին է, ճշմարտութեան սիւնը ու հաստա-
16 տութիւնը։ Եւ յայտնապէս մեծ է աստուածպաշ-
տութեան խորհուրդը․ Աստուած մարմնով
յայտնուեցաւ, Հոգիով արդարացաւ, հրեշտակ-
ներուն երեւցաւ, հեթանոսաց մէջ քարոզուեցաւ,
աշխարհի մէջ հաւատացուեցաւ ու փառքով համ-
բարձաւ։

ԳԼ. Դ

1 Բայց Հոգին յայտնի կ'ըսէ թէ ետքի ատենները
մէկ քանիները հաւատքէն պիտի ապստամբին, և
մոլորեցուցիչ ոգիներու ու դիւաց ուսմունքնե-
2 րու ուշադրութիւն պիտի տան, Ստախօսներուն
կեղծաւորութեամբը, որոնց խղճմտանքը խան-
3 ձուած է․ Որոնք ամուսնանալէն պիտի արգիլեն,
ու ետ պիտի պահեն կերակուրներէն՝ որ Աստ-
ուած ստեղծեր է որ հաւատացեալները և ճշմար-
տութիւնը ճանչցողները գոհութեամբ վայելեն։
4 Ինչու որ Աստուծոյ ամէն ստեղծածը բարի է, ու
մերժելու բան մը չկայ, թէ որ գոհութեամբ ըն-
5 դունուի․ Քանզի Աստուծոյ խօսքովը ու աղօթ-
6 քով կը սրբուի։ Աս բաները եղբայրներուն յի-
շեցնելով՝ Յիսուս Քրիստոսի բարի պաշտօնեայ
մը պիտի ըլլաս, ու պիտի սնանիս հաւատքին
խօսքերովը և ան բարի վարդապետութիւնովը՝
7 որուն հետեւող եղար։ Բայց պիղծ ու պառաւա-
կան առասպելներէն ետ կեցիր, և քու անձդ
8 աստուածպաշտութեան վարժեցուր։ Ինչու որ
մարմնին վարժութիւնը քիչ բանի օգտակար է,
բայց աստուածպաշտութիւնը ամէն բանի օգտա-
կար է, որ թէ ներկայ և թէ ապառնի կենաց
9 խոստումները ունի։ Աս խօսքը հաւատարիմ է և

10 բոլորովին ընդունելու արժանի։ Ինչու որ բուն
աոր համար կ'աշխատինք ու նախատինք կը
կրենք, վասն զի կենդանի Աստուծոյ յուսացեր
ենք, որ ամէն մարդոց Փրկիչն է՝ մանաւանդ
11 հաւատացեալներուն։ Աս բաները պատուիրէ ու
12 սորվեցուր։ Չըլլայ որ մէկը քու մանկութիւնդ
անարգէ․ հապա դուն օրինակ եղիր հաւատաց-
եալներուն՝ խօսքով, վարմունքով, սիրով, *հա-
13 ւատքով ու մաքրութեամբ։ Մինչև որ ես գամ՝
միտք դիր կարդալու, յորդորելու, սորվեցընե-
14 լու։ Անհոգ մի ըլլար քու վրադ եղած պարգե-
ւին վրայով, որ մարգարէութեամբ քեզի տըր-
ուեցաւ՝ երէցներուն ձեռքերը †ու վրադ դըրուե-
15 լովը։ Ատոնց վրայ խորհէ ու ատոնց մէջը պա-
րապէ, որ քու յառաջդիմութիւնդ †ամենուն
16 յայտնի ըլլայ։ Զգուշացիր քու անձիդ ու վար-
դապետութեանը, ու միշտ ատոնց մէջը կեցիր․
քանզի այդպէս ընելով՝ քեզ ալ պիտի ապրեցը-
նես, ու անոնք ալ որ քեզի մտիկ կ'ընեն։

ԳԼ. Ե

1 Ծերը սաստիկ մի յանդիմաներ, հապա հօր պէս
յորդորէ զանիկա․ երիտասարդները՝ եղբայրներու
2 պէս, Պառաւները՝ մայրերու պէս, դեռահասակ
կնիկները՝ քոյրերու պէս ամէն չէրով մաքրու-
3 թիւնով։ Որբեւարիները պատուէ՝ անոնք որ ճըշ-
4 մարտապէս որբեւարի են։ Հապա թէ որ մէկ որ-
բեւարի մը զաւակներ կամ թոռներ ունենայ,
թող անոնք առաջ սորվին իրենց տանը մէջ որ-
դիական գութ ցուցընել, ու փոխարէն հատու-
ցանել իրենց ծնողացը․ ինչու որ ան է բարի և

*Ո՛ւանց հոգւով, հաւատքով
†կամ ամէն բանի մէջ

5 ընդունելի Աստուծոյ առջեւը։ Բայց ան որ ճըշ-
մարտապէս որբեւարի է ու մինակ մնացած, իր
յոյսը Աստուծոյ վրայ դրած է, և գիշեր ցորեկ
6 աղօթքի ու աղաչանքի կը պարապի. Բայց փափ-
7 կասէր որբեւարին կենդանւոյն մեռած է։ Եւ աս
8 բաները պատուիրէ որ անարատ ըլլան։ Բայց թէ
որ մէկը իրեններուն ու մանաւանդ իր ընտան-
եացը հոգ չտանիր, անիկա հաւատքը ուրացած
9 է, ու անհաւատէ մըն ալ գէշ է։ Որբեւարին
ուրիշներուն կարգը թող սեպուի, որ վաթսուն
տարուընէ պակաս չէ, մէկ էրկան մը կնիկ եղած,
10 Բարի գործքերով վկայուած. թէ զաւակներ
մեծցուցած ըլլայ, թէ հիւրեր ընդունած ըլլայ,
թէ սուրբերուն ոտքերը լուացած ըլլայ, թէ նեղ-
եալներուն օգնութիւն ըրած ըլլայ, թէ ամէն տե-
սակ բարեգործութեան մէջ յարատեւած ըլլայ։
11 Բայց դեռահասակ որբեւարիները մերժէ. քանզի
երբոր Քրիստոսի դէմ յանդգնելով հեշտասիրու-
թեան անձնատուր կ'ըլլան, ամուսնանալ կ'ու-
12 զեն. Եւ դատապարտութիւն կ'ընդունին, ինչու
13 որ առջի հաւատքնին մէկդի ձգեցին։ Նաև ծոյլ
ըլլալ կը սորվին, տունէ տուն պտըտողներ. և ոչ
միայն ծոյլ, հապա շատախօսներ ու հետաքրքիր-
14 ներ, և անպատեհ բաներ կը խօսին։ Ուստի կ'ու-
զեմ որ դեռահասակ կնիկները ամուսնանան,
զաւակներ ծնանին, տնաշէն ըլլան ու նախատա-
15 նաց պատճառ չտան հակառակորդին։ Քանզի
արդէն ոմանք Սատանային ետեւէն երթալու խո-
16 տորեցան։ Թէ որ հաւատացեալ էրիկ մարդ մը
կամ կնիկ մը որբեւարիներ ունենայ, թող օգնու-
թիւն ընէ անոնց, և եկեղեցին չծանրաբեռնի, որ
ճշմարտապէս որբեւարիներուն օգնութիւն ընէ։
17 Աղէկ վերակացութիւն ընող երէցները կրկին
պատուոյ արժանի թող սեպուին, մանաւանդ ա-
նոնք որ կ'աշխատին խօսքը քարոզելով ու սոր-

18 վեցընելով։ Ինչու որ գիրքը կ'ըսէ թէ Կալի մէջ
աշխատող եզին դունչը չկապես. և թէ Մշակը
19 իր վարձքին արժանի է։ Երէցի վրայով ամբաս-
տանութիւն մի ընդունիր, բայց միայն երկու կամ
20 երեք վկաներով։ Անոնք որ մեղք կը գործեն՝ ա-
մենուն առջեւը յանդիմանէ, որ ուրիշներն ալ
21 վախնան։ Վկայութիւն կը դնեմ Աստուծոյ առ-
ջեւը և *Յիսուս Քրիստոսի ու ընտրեալ հրեշտակ-
ներուն, որ աս բաները պահես առանց նախա-
պաշարման, բան մը աչառութեամբ չընելով։
22 Շուտով մէկուն վրայ ձեռք չդնես, և ուրիշնե-
րուն մեղացը հաղորդ չըլլաս. դուն քեզ մաքուր
պահէ։
23 Ասկէ ետեւ լոկ ջուր չխմես, հապա քիչ մըն ալ
գինի գործածէ քու ստամոքսիդ ու յաճախ հի-
ւանդութիւններուդ համար։
24 Կան մարդիկ՝ որ իրենց մեղքերը յայտնի են,
ու առաջուց դատաստանի հասած. և կան՝ որ ի-
25 րենց ետեւէն կ'երթան։ Անանկ ալ ոմանց բարի
գործքերը յայտնի են. ու անոնք որ ուրիշ կերպ
բան մըն են՝ չեն կրնար ծածուկ մնալ։

ԳԼ. Զ

1 Ան ամէնը որ ծառայութեան լուծի տակ են՝
իրենց տէրերը ամէն պատուոյ արժանի սեպեն,
որ Աստուծոյ անունը ու վարդապետութիւնը
2 չհայհոյուի։ Եւ անոնք որ հաւատացեալ տէրեր
ունին, թող չարհամարհեն՝ եղբայրներ ըլլալնուն
պատճառաւը, հապա աւելի ծառայութիւն ընեն,
ինչու որ անոնք հաւատացեալ են ու սիրելի, ո-
րոնք բարերարութիւն ընելու մէջ մասնակից են.
3 աս բաները սորվեցուր ու յորդորէ։ Թէ որ մէկը

*Ոմանց Տէր Յիսուս

ուրիշ կերպ բան մը սորվեցընէ, ու մօտիկ չըլնէ
մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի ողջամիտ խօսքե-
րուն, և ան վարդապետութեանը որ աստուած-
4 պաշտութեան համեմատ է, Այնպիսին հպարտա-
ցած է ու բան մը չգիտեր, հապա վէճերով ու
հակառակութիւններով ախտացած է. որոնցմէ
կ'ըլլայ նախանձ, կռիւ, հայհոյութիւններ, գէշ
5 կասկածներ, Միտքով ապականած ու ճշմարտու-
թենէն հեռացած մարդոց գրաբանութիւնները,
որոնք աստուածպաշտութիւնը շահավաճառու-
թիւն մը կը սեպեն. անանկներէն մէկդի կեցիր.
6 Սակայն աստուածպաշտութիւնը գոհունակու-
թիւնով մէկտեղ մեծ շահավաճառութիւն մըն է.
7 Ինչու որ բան մը չբերինք աշխարհ, ու յայտնի է
8 որ չենք կրնար անկէ բան մը տանիլ. Հապա կե-
րակուր ու հանդերձ ունենալով՝ անոնցմով բա-
9 ւականանանք: Բայց անոնք որ հարստանալ կ'ու-
զեն, կ'իյնան փորձութեան ու որոգայթի և շատ
յիմարական ու վնասակար ցանկութիւններու մէջ,
որոնք սատակումի ու կորստեան մէջ կ'ընկղմեն
10 մարդիկ. Ինչու որ ամէն չարութիւններուն ար-
մատը արծաթսիրութիւնն է. որուն մէկ քանի-
ները անձնատուր ըլլալով՝ հաւատքէն մոլորե-
ցան, ու ինքզինքնին շատ ցաւերով խոցեցին.
11 Բայց դուն, ով մարդ Աստուծոյ, փախիր աս
բաներէն, ու գնա արդարութեան, աստուած-
պաշտութեան, հաւատքի, սիրոյ, համբերութեան
12 ու հեզութեան ետևէն. Պատերազմէ հաւատքին
բարի պատերազմը, բռնէ յաւիտենական կեանքը՝
որուն որ կանչուեցար, և շատ վկաներու առջև
13 դաւանեցար բարի դաւանութիւնը. Կը պատուի-
րեմ քեզի Աստուծոյ առջևը՝ որ կենդանի կ'ընէ
բոլորը, և Քրիստոս Յիսուսի առջևը՝ որ Պոնտացի
Պիղատոսին առջին վկայեց բարի դաւանութիւնը,
14 Որ դուն ան պատուէրը ամբիծ, անարատ պահես

մինչև մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի յայտնու-
15 թիւնը. Որն որ իր ատենին պիտի ցուցընէ Երա-
նելին ու մի միայն Հզօրը, Թագաւորներուն Թա-
16 գաւորը ու տէրերուն Տէրը. Որ ինքը միայն ունի
անմահութիւն՝ անմերձենալի լուսոյ մէջ բնակած.
որն որ մարդոցմէն մէկը չտեսաւ, ոչ ալ տես-
նելու կարող է, որուն պատիւ և զօրութիւն յա-
ւիտեան. Ամէն.
17 Աս աշխարհիս մէջ հարուստ եղողներուն պատ-
ուէր տուր որ չհպարտանան, և անստոյգ հա-
րստութեան վրայ յոյսերնին չդնեն, հապա կեն-
դանի Աստուծոյ վրայ՝ որ ամէն բանը մեզի ա-
18 ռատօրէն կու տայ վայելելու, Բարիք գործեն,
բարի գործքերով հարստանան, առատաձեռն,
19 և սրտէն ողորմած հաղորդ ըլլան. Բարի հիմ
գանձեն անձերնուն հանդերձեալին համար, որ
*յաւիտենական կեանքը ձեռք ձգեն.
20 Ով Տիմոթէոս, քեզի տրուած աւանդը պահէ,
փախչելով պիղծ ունայնաբանութիւններէն և
սուտանուն գիտութեան հակառակութիւններէն,
21 Որն որ մէկ քանիները դաւանելով՝ հաւատքէն
մոլորեցան: Շնորհքը քու հետդ ըլլայ: Ամէն:

*Ոմանք ճշմարիտ

ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս՝ Յիսուս Քրիստոսի առաքեալը Աստու-
ծոյ կամքովը կենաց խոստմունքին պէս՝ որ Քրիս-
2 տոս Յիսուսով է, Տիմոթէոս իմ սիրելի որդիիս՝
շնորհք, ողորմութիւն և խաղաղութիւն Հօր Աս-
տուծմէն ու Քրիստոս Յիսուս մեր Տէրոջմէն։
3 Շնորհակալ եմ Աստուծոյ՝ որն որ կը պաշտեմ
իմ նախնիքներէս մաքուր խղճմտանքով, (երբոր
անդադար քեզ իմ աղօթքներուս մէջ կը յիշեմ
4 գիշեր ու ցորեկ, ցանկալով քեզ տեսնել, ու
միտք բերելով քու արցունքներդ, որ ուրախու-
5 թիւնով լեցուիմ.) Մտածելով քու վրադ եղած
անկեղծ հաւատքը, որ առաջ քու մեծ մօրդ
Լաւոդեային ու քու մօրդ Եւնիկէին վրայ բնա-
կեցաւ, և համոզուած եմ որ քու վրադ ալ կայ։
6 Անոր համար քու միտքդ կը ձգեմ որ արծարծես
Աստուծոյ պարգևը, որ քեզի տրուած է իմ
7 ձեռքերուս քու վրադ դրուելովը։ Ինչու որ Աստ-
ուած մեզի երկչոտութեան հոգի չտուաւ, հա-
պա զօրութեան ու սիրոյ և զգաստութեան։
8 Ուստի ամօթ մի սեպեր մեր Տէրոջը վկայութիւ-

նը, ոչ ալ զիս անոր համար կապուածս. հա-
պա մասնակից եղիր աւետարանին չարչարանք-
9 ներուն՝ Աստուծոյ զօրութեանը համեմատ. Որ
մեզ փրկեց ու սուրբ կոչումով կանչեց՝ չէ թէ
մեր գործքերուն նայելով, հապա իր նախասահ-
մանութեանը ու շնորհացը նայելով, որ Քրիստոս
Յիսուսով մեզի տրուեցաւ յաւիտենական դարե-
10 րէն առաջ. Բայց հիմա յայտնուեցաւ մեր Փրկչին
Յիսուս Քրիստոսի երևնալովը. որ մահը խա-
փանեց, և 'ի լոյս հանեց կեանքը ու անմահու-
11 թիւնը աւետարանին միջոցովը. Որ ես անոր քա-
րոզիչ ու առաքեալ դրուեցայ ու հեթանոսնե-
12 րուն վարդապետ։ Անոր համար ես չարչարանք-
ներն ալ կը կրեմ. բայց ամօթ մը չեմ սեպեր,
ինչու որ գիտեմ թէ որու եմ հաւատացեր, և
համոզուած եմ որ իմ իրեն աւանդած բանս կըր-
13 նայ պահել մինչև ան օրը։ Ամուր բռնէ ան ող-
ջամիտ խօսքերուն օրինակը որ ինծմէ լսեցիր,
հաւատքով ու սիրով՝ որ Քրիստոս Յիսուսով է։
14 Ան բարի աւանդը պահէ Հոգւոյն Սրբոյ ձեռ-
15 քովը որ մեր մէջը բնակած է։ Աս գիտես որ
ինծմէ երես դարձուցին ան ամէնը որ Ասիա էին,
16 որոնցմէ են Փիգեղոս ու Հերմոգինէս։ Տէրը ո-
ղորմութիւն տայ Ոնեսիփորոսին տանը, ինչու որ
շատ անգամ զիս հանգստացուց ու իմ շղթաս
17 ամօթ չսեպեց. Հապա երբոր Հռոմ եկաւ, շատ
18 ջանքով փնտռեց զիս ու գտաւ։ (Տէրը իրեն տայ
որ ան օրը Տէրոջմէն ողորմութիւն գտնէ.) և Ե-
փեսոսի մէջ ալ որչափ սպասաւորութիւն որ ը-
րաւ ինծի, դուն անիկա շատ աղէկ գիտես։

ԳԼ. Բ

1 Արդ դուն, իմ որդեակս, զօրացիր ան շնորհ-
2 քովը որ Քրիստոս Յիսուսով է։ Ու ան բաները

որ ինծմէ լսեցիր շատ վկաներով՝ հաւատարիմ
մարդոց յանձնէ, որոնք կարող ըլլան ուրիշնե-
3 րուն ալ սորվեցնելու։ Արդ դուն նեղութիւն-
ներու համբերէ Յիսուս Քրիստոսի բարի զինուո-
4 րի մը պէս։ Մէկ զինուորեալ մը աս կեանքիս
գործառնութիւններովը չզբաղիր, որ զօրավարին
5 հաճոյ ըլլայ։ Եւ թէ որ մէկը մրցի, չպսակուիր՝
6 թէ որ ըստ օրինի չմրցի։ Աշխատող երկրագոր-
7 ծին պէտք է առաջ պտուղներէն վայելել։ Իմա-
ցիր ինչ որ կ'ըսեմ. Տէրը քեզի իմաստութիւն
8 տայ ամէն բանի մէջ։ Միտքդ բեր Դաւիթի ցեղէն
եղող Յիսուս Քրիստոսը մեռելներէն յարութիւն
առած՝ իմ քարոզած աւետարանիս համեմատ.
9 Որուն մէջը չարագործի մը պէս կը չարչարուիմ
մինչեւ անգամ կապերով. բայց Աստուծոյ խօսքը
10 կապուած չէ։ Ուստի ամէն բանի կը համբերեմ
ընտրեալներուն համար, որ անոնք ալ հասնին
այն փրկութեանը որ Քրիստոս Յիսուսով է յա-
11 ւիտենական փառքով։ Աս խօսքը հաւատա-
րիմ է. վասն զի թէ որ անոր հետը մեռանք,
12 անոր հետ ալ պիտի ապրինք։ Թէ որ համ-
բերենք, անոր հետ ալ պիտի թագաւորենք։
Թէ որ զինքը ուրանանք, ինքն ալ մեզ պիտի
13 ուրանայ։ Թէ որ չհաւատանք, ինքը հաւատա-
14 րիմ կը մնայ, իր անձը չկրնար ուրանալ։ Աս բա-
ները անոնց միտքը ձգէ՝ Տէրոջը առջեւը վկայու-
թիւն գնելով, խօսքերու վրայ վէճ չընել՝ որ
բանի մը օգտակար չէ, հապա միայն լսողներուն
15 կործանմանը համար է։ Ջանք ըրէ քու անձդ
ընտիր ցուցընելու Աստուծոյ առջեւը՝ անանկ բան-
ուոր մը ըլլալով որ պիտի չամչնայ, ճշմարտու-
16 թեան խօսքը շիտակ բացատրելով։ Բայց պիղծ
ու փուճ խօսքերէն մէկդի կեցիր, քանզի անոնք
աւելի յառաջ կ'երթան ամբարշտութեան մէջ.
17 Եւ անոնց խօսքը քաղցկեղի պէս կը ճարակէ. ո-

18 րոնց կարգն են Հիմենոս ու Փիղետոս. Որոնք
ճշմարտութենէն մոլորեցան, ու կ'ըսեն թէ մե-
ռելներուն յարութիւնը արդէն եղած է, եւ կը
19 կործանեն մէկ քանիներուն հաւատքը։ Բայց Աս-
տուծոյ հիմը հաստատուն կը կենայ, ու աս կնիքը
ունի, Թէ Տէրը կը ճանչնայ անոնք որ իրն են.
Եւ՝ Անիրաւութենէ մէկդի թող կենայ ան ամէնը
20 որ *Քրիստոսի անունը կ'անուանէ։ Սակայն մէկ
մեծ տան մը մէջ չէ թէ միայն ոսկիէ ու արծա-
թէ ամաններ կան, հապա փայտէ ու հողէ ամա-
ներ ալ կան. եւ ոմանք պատուոյ համար են ու
21 ոմանք անարգանաց համար։ Ուստի թէ որ մէկը
իր անձը անանկ բաներէն մաքրէ, անիկա մէկ
պատուական անօթ մը պիտի ըլլայ՝ սրբուած ու
իր Տէրոջը պիտանի, ամէն բարի գործքերու հա-
22 մար պատրաստուած։ Երիտասարդական ցանկու-
թիւններէն ալ փախիր, ու գնա արդարութեան,
հաւատքի, սիրոյ, խաղաղութեան ետեւէ անոնց
հետ որ Տէրոջը անունը կը կանչեն մաքուր սըր-
23 տով։ Բայց յիմարական ու անիմաստ վէճերէն
մէկդի քաշուէ, գիտնալով որ անոնցմէ կռիւներ
24 կը ծնանին. Ու Տէրոջը ծառային պէտք չէ կռիւ
ընել, հապա հեզահոգի ըլլալ ամենուն, սորվե-
25 ցընող, ոխ չպահող. Քաղցրութեամբ խրատել
հակառակ կեցողները, որ ըլլայ թէ Աստուած
ապաշխարութիւն տայ անոնց՝ ճշմարտութիւնը
26 ճանչնալու համար, Եւ Սատանային որոգայթէն
զգաստանան, որ անկէ բռնուած են իր կամքին
ծառայելու։

ԳԼ. Գ

1 Եւ աս գիտցիր որ ետքի օրերը չար ժամանակ-

*Ոմանք Տէրոջը

2 ներ պիտի գան. Ինչու որ մարդիկ պիտի ըլլան
անձնասէր, արծաթասէր, ամբարտաւան, հպարտ,
հայհոյիչ, ծնողաց անհնազանդ, ապերախտ, ան-
3 սուրբ, Անգութ, անհաշտ, բանսարկու, անժուժ-
4 կալ, դաժանաբարոյ, բարին չսիրող, Մատնիչ,
յանդուգն, գոռոզ, աւելի հեշտասէր քան թէ
5 աստուածասէր. Որոնք աստուածպաշտութեան
կերպարանքը ունին, բայց անոր զօրութիւնը ու-
6 րացած են. և դուն ասոնցմէ մէկդի կեցիր. Ին-
չու որ ասոնցմէ են որ տուներէն ներս կը մտնեն,
ու գերի կ'ընեն մեղքով բեռնաւորուած ակա-
րամիտ կնիկները զանազան ցանկութիւններէ
7 վարուած, Որ միշտ կը սորվին, ու բնաւ ճշմար-
8 տութիւնը ճանչնալու չեն կրնար հասնիլ. Հապա
ինչպէս որ Յանէս ու Յամբրէս հակառակ կեցան
Մովսէսին, անանկ ալ ասոնք ճշմարտութեանը
հակառակ կը կենան. ապականած մտքով մար-
9 դիկ, հաւատքի մէջ անպիտաններ են։ Բայց ա-
ւելի յառաջ պիտի չերթան, ինչու որ ասոնց ան-
մտութիւնը ամենուն յայտնի պիտի ըլլայ, ինչպէս
10 որ անոնցը եղաւ։ Իսկ դուն տեղեակ եղար իմ
վարդապետութեանս, վարմունքիս, դիտաւորու-
թեանս, հաւատքիս, երկայնմտութեանս, սիրոյս,
11 համբերութեանս, Հալածանքներուս, չարչա-
րանքներուս, ինչպէս որ ինծի եղան Անտիոքի ու
Իկոնիոնի ու Լիւստրայի մէջ, ինտոր հալածանք-
ներու համբերեցի, ու ամենէն ալ ազատեց Տէ-
12 րը. Եւ ամէն անոնք որ կ'ուզեն աստուածպաշ-
տութեամբ ապրիլ Քրիստոս Յիսուսով՝ հալա-
13 ծանք պիտի կրեն։ Բայց չար ու խաբեբայ մար-
դիկ չարութեան մէջ պիտի յառաջանան՝ մոլորցը-
14 նելով ու մոլորելով։ Սակայն դուն հաստատուն
կեցիր ան բաներուն մէջ որ սորվեցար ու հա-
ւատացիր, ինչու որ գիտես թէ որմէ սորված ես.
15 Նաև տղու մանկութենէդ 'ի վեր սուրբ գիրքերը

գիտես, որոնք կրնան իմաստուն ընել քեզ փըր-
կուելու՝ Քրիստոս Յիսուսի վրայ եղած հաւատ-
16 քովը. *Բոլոր Գիրքը Աստուծոյ շունչն է, և օգ-
տակար" է սորվեցնելու, յանդիմանելու, շիտ-
17 կելու ու արդարութեան խրատելու համար, Որ
Աստուծոյ մարդը կատարեալ ըլլայ՝ ամէն բարի
գործքերու պատրաստուած.

ԳԼ. Դ

1 Ես վկայութիւնը կը դնեմ Աստուծոյ առջևը և
Յիսուս Քրիստոսի՝ որ պիտի դատէ կենդանիներ-
ը ու մեռելները իր յայտնուելուն ու թագա-
2 ւորութեանը ատենը. Խօսքը քարոզէ, մտադրու-
թեամբ [illegible] պարապէ ատենին ու ատենէ
դուրս, յանդիմանէ, սաստէ, յորդորէ ամենայն
3 երկայնմտութեամբ ու վարդապետութեամբ. Ին-
չու որ ժամանակ պիտի գայ որ ողջամիտ վար-
դապետութեանը պիտի չհամբերեն, հապա իրենց
լսելիքին եռքովը իրենց ցանկութիւններուն հա-
4 մեմատ վարդապետներ պիտի դիզեն իրենց. Եւ
ճշմարտութենէն ականջներնին պիտի դարձընեն,
5 ու առասպելներու ետևէ պիտի մոլորին. Բայց
դուն ամէն բանի մէջ արթուն կեցիր, նեղու-
թիւններու համբերէ, աւետարանիչի գործ գոր-
6 ծէ, քու պաշտօնդ կատարէ. Ինչու որ ես արդէն
զոհ ըլլալու նուիրուած եմ, ու իմ մեկնելուս
7 ատենը հասեր է. Բարի պատերազմը պատերազ-
մեցայ, ընթացքը կատարեցի, հաւատքը պահե-
8 ցի։ Ասկէ ետև կայ կը մնայ ինծի արդարութեան
պսակը, որ Տէրը՝ արդար Դատաւորը պիտի հա-
տուցանէ ինծի ան օրը, ու չէ թէ միայն ինծի,
հապա ան ամենուն ալ՝ որ անոր յայտնուիլը սի-
րեցին։

---

*կամ Բոլոր աստուածաշունչ Գիրքը օգտակար ալ

9 Ջանք ըրէ շուտով ինծի գալու. (10) Ինչու որ
Դեմաս զիս թողուց ու աս աշխարհը սիրեց, և գնաց
Թեսաղոնիկէ. Կրէսկէս գնաց Գաղատիա, Տիտոս՝
11 Դաղմատիա. Մինակ Ղուկաս իմ հետս է. Մար-
կոսը առնես՝ քու հետդ բերես, ինչու որ ինծի
12 օգտակար է սպասաւորութեան համար։ Եւ ես
13 Տիւքիկոսը Եփեսոս խրկեցի։ Այն վերարկուն՝ որ
Տրովադա Թողուցի Կարպոսին քովը, երբոր գաս՝
բեր, գիրքերն ալ՝ մանաւանդ մագաղաթները։
14 Պղնձագործ Աղեքսանդրոսը շատ չարութիւն ըրաւ
ինծի. Տէրը անոր *հատուցանէ իր գործքերուն
15 համեմատ: Դուն ալ անկէ զգուշանաս, ինչու որ
16 մեր խօսքերուն շատ դէմ կեցաւ։ Առջի անգամ
ատեանին առջևը պատասխան տալուս՝ իմ կող-
մանէս մէկը չկայնեցաւ ինծի հետ, հապա ամէնն
17 ալ զիս թողուցին. աս իրենց չսեպուի։ Բայց
Տէրը իմ քովս կայնեցաւ ու զիս զօրացուց, որ
քարոզութիւնը իմ միջոցովս լման ըլլայ, ու բո-
լոր հեթանոսները լսեն. և ես առիւծին բերնէն
18 ազատեցայ։ Եւ Տէրը ամէն չար գործէ պիտի ա-
զատէ զիս, և ապահովութեամբ իր երկնային
թագաւորութեանը պիտի հասցընէ. իրեն փառք
յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։
19 Բարև տուր Պրիսկէին և Ակիւղասին, ու Օնե-
20 սիփորոսին տանը։ Երաստոս Կորնթոսի մէջ մնաց.
և Տրոփիմոսը Մեղիտոսի մէջ թողուցի հիւանդա-
21 ցած։ Ջանք ըրէ ձմեռէն առաջ գալ։ Բարև կ'ը-
նեն քեզի Եւբուղոս ու Պուդէս և Լինոս ու Կղօ-
22 դիա և բոլոր եղբայրները։ Տէր Յիսուս Քրիստոս
քու հոգիիդ հետը ըլլայ. շնորհքը ձեզի հետ։ Ամէն։

*Ոմանք պիտի հատուցանէ

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

ԱՌ ՏԻՏՈՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Պօղոս՝ Աստուծոյ ծառայ և Յիսուս Քրիստոսի
առաքեալ, Աստուծոյ ընտրեալներուն հաւատ-
քին՝ ու աստուածպաշտութեան հետ կից եղող
2 ճշմարտութեան գիտութեանը համեմատ, Յա-
ւիտենական կենաց յուսովը, որ ինքն անսուտ
Աստուած խոստացաւ յաւիտենական դարերէն
3 առաջ, Բայց իր խօսքը իր ժամանակին յայտնեց
քարոզութիւնով, որ ինծի յանձնուեցաւ մեր
4 Փրկիչ Աստուծոյ հրամանովը, Տիտոսին էմ հարա-
զատ որդւոյս հասարակաց հաւատքովը՝ շնորհք
*և խաղաղութիւն Հօր Աստուծմէն ու մեր Փրկի-
չէն՝ Տէր Յիսուս Քրիստոսէն։
5 Ասոր համար ես քեզ Կրետէ թողուցի, որ ինչ
պակաս բան որ կայ, շտկես, ու ամէն մէկ քա-
ղաքի մէջ երէցներ կարգես, ինչպէս որ ես քեզի
6 պատուիրեցի. Թէ որ մէկը անմեղադրելի ըլլայ,
մէկ կնկան մը էրիկ, հաւատացեալ զաւակներ
ունենայ, որ անառակութեան համար ամբաս-

*Ոմանք ողորմութիւն և.

7 տանուած՝ կամ անհնազանդ չըլլան։ Ինչու որ
եպիսկոպոսին պէտք է անմեղադրելի ըլլալ Աս-
տուծոյ տնտեսին պէս. ոչ յանդուգն, ոչ բար-
կացող, ոչ գինեմոլ, ոչ զարնող, ոչ անարգ շա-
8 հախնդրութեան ետեւէ եղող, Հապա հիւրասէր,
բարեսէր, խոհեմ, արդար, սուրբ, ժուժկալ,
9 Հաստատ բռնելով վարդապետութեան հաւա-
տարիմ խօսքը, որ կարող ըլլայ ողջամիտ վար-
դապետութիւնով յորդորել, և հակառակ կե-
10 ցողները յանդիմանել։ Քանզի շատ են անհնա-
զանդները, ունայնութիւն խօսողները ու միտք
խաբողները, մանաւանդ անոնք որ թլփատու-
11 թենէն են. Որոնք պէտք է պապանձեցընել, որ
ամբողջ տուներ կը կործանեն, ու անպատեհ բա-
ներ կը սորվեցընեն անարգ շահախնդրութեան
12 համար։ Անոնցմէ մէկը գրուցեց՝ որ իրենց բուն
մարգարէն էր, Կրետացիները միշտ սուտլըուց
13 են, չար գազաններ, դատարկապորտներ։ Աս
վկայութիւնը ճշմարիտ է. անոր համար սաստիկ
յանդիմանէ անոնք, որ առողջանան հաւատքին
14 մէջ. Ու չնային Հրէական առասպելներուն և
ճշմարտութենէ հեռացող մարդոց պատուէրնե-
15 րուն։ Ամէն բան մաքուր է մաքուրներուն, բայց
պղծերուն ու անհաւատներուն մէկ բան մը մա-
քուր չէ, հապա անոնց միտքն ալ խղճմտանքն
16 ալ պղծուած են։ Կը խոստովանին թէ զԱստ-
ուած կը ճանչնան, և իրենց գործքովը կ՚ու-
րանան, պիղծ ու անհնազանդ ըլլալովնին, և ա-
մէն բարի գործի անպիտան։

ԳԼ. Բ

1 Բայց դուն խօսէ ինչ որ կը վայլէ ողջամիտ վար-
2 դապետութեանը. Ծերերուն զգաստ ըլլալ, ծան-
րաբարոյ, խոհեմ, ողջամիտ՝ հաւատքով, սիրով,

3 համբերութիւնով։ Նոյնպէս ալ պառաւներուն
անանկ վարմունք ունենալ, ինչպէս որ կը վայլէ
սրբութեան, ոչ բանսարկու ըլլալ, ոչ *գինեմոլ,
4 հապա բարի խրատ տուող. Որ խրատեն նորահա-
սակ կնիկները՝ էրիկնին սիրող, զաւակնին սիրող
5 ըլլալ, Խոհեմ, ողջախոհ, տնաշէն, բարեգործ,
իրենց էրիկներուն հնազանդ, որ չըլլայ թէ Աս-
6 տուծոյ խօսքը հայհոյուի։ Անանկ ալ երիտա-
7 սարդները յորդորէ խոհեմ ըլլալ. Ամէն կողմէ
քու անձդ բարի գործքերու օրինակ ցուցընե-
լով, վարդապետութեան մէջ անեղծութիւն,
8 պարկեշտութիւն, Ողջամիտ ու անմեղադրելի
խօսք, որ հակառակ կեցողը ամչնայ, ու մեր
9 վրայով գէշ բան մը չունենայ ըսելու։ Ծառանե-
րուն սորվեցուր իրենց տէրերուն հնազանդ ըլ-
լալ, և ամէն բանի մէջ հաճելի. ոչ հակառակա-
10 խօսներ, Ոչ խորողներ, հապա բոլորովին բարի
հաւատարմութիւն ցուցընեն, որ մեր փրկիչ Աս-
տուծոյ վարդապետութիւնը ամէն բանի մէջ զար-
11 դարեն։ Ինչու որ Աստուծոյ փրկարար շնորհքը
12 բոլոր մարդոց երեւցաւ. Որ մեզ կը խրատէ՝ որ
ամբարշտութիւնը ու աշխարհային ցանկութիւն-
ները ուրանանք, և զգաստութիւնով ու արդա-
րութիւնով և բարեպաշտութիւնով ապրինք աս
13 աշխարհիս մէջ, Ու սպասենք ան երջանիկ յոյ-
սին, և մեծ Աստուծոյ ու մեր փրկիչ Յիսուս
14 Քրիստոսին փառացը յայտնուելուն. Որ իր անձը
մեզի համար տուաւ, որ մեզ ամէն անօրէնու-
թենէ ազատէ, ու մաքրէ իրեն սեպհական ժո-
ղովուրդ ընէ՝ բարի գործքերու նախանձաւոր։
15 Աս բաները խօսէ և յորդորէ ու յանդիմա-
նէ բոլորովին սաստելով. չըլլայ որ մէկը քեզ ա-
նարգէ։

*Յուն. շատ գինիի ծառայ եղած

ԳԼ. Գ

1 Անոնց միտքը ձգէ իշխանութիւններուն և պե-
տութիւններուն հնազանդիլ ու հպատակ ըլլալ,
ու ամէն բարի գործքերու պատրաստ գտնուիլ.
2 Մէկու մը հայհոյութիւն չընել, կռուարար չըլ-
լալ, հապա հեղահոգի, ամէն մարդոց բոլորովին
3 քաղցրութիւն ցուցընել. Ինչու որ մենք ալ ա-
տեն մը անմիտ էինք, անհնազանդ, մոլորեալ, և
զանազան ցանկութիւններու ու հեշտութիւննե-
րու կը ծառայէինք. չարութիւնով ու նախան-
ձով կը վարուէինք, ատելի էինք և մէկզմէկ կ'ա-
4 տէինք. Բայց երբոր մեր Փրկիչ Աստուծոյն քաղ-
ցրութիւնը ու մարդասիրութիւնը յայտնուեցաւ,
5 Ոչ թէ արդարութեան գործքերէն՝ որ մենք ը-
րինք, հապա իր ողորմութեանը համեմատ մեզ
փրկեց նորէն ծնանելու աւազանին միջոցովը ու
6 Սուրբ Հոգիին նորոգելովը, Որն որ առատօրէն
թափեց մեր վրայ Յիսուս Քրիստոս մեր Փրկչին
7 ձեռքովը, Որ անոր շնորհքովը արդարացած՝ յա-
ւիտենական կենաց յուսով ժառանգ ըլլանք.
8 Աս խօսքը հաւատարիմ է. և կ'ուզեմ որ ա-
սոնք հաստատես, որ Աստուծոյ հաւատացողները
հոգ տանին բարի գործքեր ընելու վրայ ըլլալ.
ասոնք են բարի ու մարդոց օգտակար բաները:
9 Բայց դուն յիմարական վէճերէն ու ազգահա-
մարներէն ու հակառակութիւններէն և օրէնքի
վրայով եղած կռիւներէն մէկդի կեցիր, ինչու որ
10 անօգուտ են ու ունայն. Հերձուածող մարդէն՝
առաջին ու երկրորդ անգամ խրատելէն ետև ետ
11 քաշուէ. Գիտնալով որ անանկը խոտորած է, և
մեղք կը գործէ ինքզինքը դատապարտելով.
12 Երբոր Արտեման կամ Տիւքիկոսը քեզի խըր-
կեմ, ջանք ըրէ ինծի գալու Նիկոպոլիս, ինչու

13 որ միտքս դրի ձմեռը հոն անցընելու: Զենաս օ-
րինականը ու Ապողոսը փութով ճամբայ դիր,
14 հոգ տանելով որ անոնց բան մը չպակսի. Եւ մե-
րիններն ալ թող սորվին բարի գործքեր ընելու
վրայ ըլլալ հարկաւոր պարագաներու մէջ, որ
15 անպտուղ չըլլան. Բարև կ'ընեն քեզի ամէնն ալ
որ իմ հետս են. բարև տուր անոնց որ մեզ կը
սիրեն հաւատքով. շնորհքը ձեր ամենուն հետը
ըլլայ: Ամէն:

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

ԱՌ ՓԻԼԻՄՈՆ

1 Պօղոս՝ Յիսուս Քրիստոսի կապեալը՝ և Տիմոթէ-
ոս եղբայրը, Փիլիմոն մեր սիրելիին ու գործակ-
2 ցին, Եւ Ապփիա սիրելիին, ու Արքիպպոս մեր
զինուորակցին, ու քու տանդ մէջի եկեղեցիին.
3 Շնորհք և խաղաղութիւն ձեզի Աստուծմէ մեր
Հօրմէն և Տէր Յիսուս Քրիստոսէն.
4 Կը գոհանամ միշտ իմ Աստուծմէս՝ քեզ իմ
5 աղօթքներուս մէջ յիշելով, Երբոր կը լսեմ քու
սէրդ ու հաւատքդ՝ որ ունիս Տէր Յիսուսի վրայ
6 և բոլոր սուրբերուն վրայ, Որ քու հաւատքիդ

հաղորդակցութիւնը պտղաբեր ըլլայ՝ Քրիստոս
Յիսուսով *ձեր վրայ եղած ամէն բարութեանը
7 ճանչցուելովը. Քանզի շատ ուրախութիւն և մխի-
թարութիւն ունինք քու սիրոյդ վրայ, որ սուր-
բերուն սիրտերը քեզմով հանգստացած են, եղ-
բայր։
8 Անոր համար թէև շատ համարձակութիւն ու-
նիմ Քրիստոսով՝ վայելուչ եղածը քեզի հրամա-
9 յելու, Բայց յաւէտ սիրոյ համար կ'աղաչեմ, ա-
նանկ մէկը ըլլալով՝ ինչպէս որ եմ ես Պօղոս
ծերացած, ու հիմա Յիսուս Քրիստոսի համար
10 կապուած ալ. Կ'աղաչեմ քեզի իմ որդւոյս Ոնե-
սիմոսին համար՝ որն որ իմ կապանքներուս մէջը
11 ծնայ. Որ ատեն մը անպիտան էր քեզի, բայց
12 հիմա քեզի ալ ինծի ալ պիտանի է. Անիկա ետ
խրկեցի. դուն ալ ընդունէ զանիկա՝ որ է իմ ա-
13 ղիքս. Որն որ կ'ուզէի իմ քովս պահել, որ քու
տեղդ ինծի սպասաւորութիւն ընէ աւետարանին
14 կապանքներուն մէջ. Բայց առանց քու կամքիդ
չուզեցի բան մը ընել, որ քու բարերարութիւնդ
իբր թէ ստիպմամբ եղած չըլլայ, հապա կամաւ.
15 Քանզի գուցէ աս պատճառով անիկա քիչ մը ա-
տեն զատուեցաւ, որ զանիկա յաւիտեան ունե-
16 նաս, Ոչ թէ ալ ծառայի մը պէս, հապա ծառա-
յէն վեր՝ սիրելի եղբօր պէս. և թէ որ ինծի այս-
պէս սիրելի է, ո՛րչափ աւելի պիտի ըլլայ քեզի՝
17 թէ մարմինի կողմանէ ու թէ Տէրոջը. Ուստի թէ
որ զիս քեզի հաղորդ կը սեպես, ընդունէ անի-
18 կա՝ որպէս թէ զիս. Ու թէ որ քեզի անիրաւու-
թիւն մը ըրած է կամ պարտք մը ունի, ան իմ
19 հաշիւիս անցուր. Ես Պօղոս իմ ձեռքովս գրե-
ցի, ես կը վճարեմ. որ չըսեմ քեզի թէ դուն ալ
20 քու անձդ ինծի պարտական ես։ Այո, եղբայր,

*Ոմանք մեր

թող քեզմէ ունենամ աս օգուտը Տէրոջմով.
21 հանգչեցուր իմ աղիքս *Տէրոջմով. Քու հնա-
զանդութեանդ վստահանալով քեզի գրեցի, քան-
զի գիտեմ որ ըսածէս ալ աւելի պիտի ընես.
22 Ասկէ 'ի զատ ինծի բնակարան մըն ալ պատ-
րաստէ, ինչու որ կը յուսամ թէ ձեր աղօթքնե-
23 րուն միջոցովը ձեզի պիտի շնորհուիմ. Բարե-
կ'ընէ քեզի Եպափրաս՝ իմ գերութեան ընկերս
24 Քրիստոս Յիսուսով. Նաև Մարկոս, Արիստար-
25 քոս, Դեմաս, Ղուկաս՝ իմ գործակիցներս։ Մեր
Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր հոգիին հե-
տը ըլլայ. Ամէն.

ԹՈՒՂԹ

[ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ]

ԱՌ ԵԲՐԱՅԵՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա

1 Շատ մասերով ու շատ կերպերով առաջուց խօ-
սելով Աստուած հայրերուն հետ մարգարէնե-
2 րով, Աս ետքի օրերս էր Որդիովը խօսեցաւ մեր
հետը, որ զանիկա ամէն բանի ժառանգ դրաւ,
3 որ անով աշխարհքն ալ ստեղծեց. Որ անիկա իր

*Ոմանք Քրիստոսով

փառացը լոյսն է և իր էութեանը բուն պատկե-
րը. ան որ իր զօրութեան խօսքովը ամէն բան կը
բռնէ, իր անձովը մեր մեղքերը սրբելով՝ բարձ-
րերը Աստուծոյ մեծութեանը աջ կողմը նստաւ։
4 Եւ այնչափ աւելի եղաւ հրեշտակներէն, որչափ
5 որ անոնցմէ աւելի ազնիւ անուն ժառանգեց։ Ին-
չու որ հրեշտակներէն որո՞ւն ըսաւ երբէք, Դուն
իմ Որդիս ես, ես այսօր քեզ ծնայ. և դարձեալ՝
Ես անոր Հայր պիտի ըլլամ, ու անիկա ինծի Որ-
6 դի պիտի ըլլայ. Եւ դարձեալ՝ երբոր Անդրանիկը
աշխարհք կը մտցնէ՝ կ'ըսէ, Աստուծոյ բոլոր
հրեշտակներն ալ անոր երկրպագութիւն թող ը-
7 նեն։ Եւ հրեշտակներուն վրայով կ'ըսէ, Որ իր
հրեշտակները հոգիներ կ'ընէ, ու իր պաշտօնեա-
8 ները՝ կրակի բոց։ Սակայն Որդիին կ'ըսէ, Քու ա-
թոռդ, ով Աստուած, յաւիտեանս յաւիտենից
է. քու թագաւորութեանդ գաւազանդ ուղղու-
9 թեան գաւազան է. Արդարութիւնը սիրեցիր ու
անօրէնութիւնը ատեցիր. անոր համար, ով
Աստուած, քու Աստուածդ ուրախութեան եղով
10 օծեց քեզ քու ընկերներէդ աւելի. Եւ՝ Դուն, ով
Տէր, սկիզբէն երկրին հիմերը դրիր, ու երկինքը
11 քու ձեռքերուդ գործքն է. Անոնք պիտի կոր-
սուին, բայց դուն կը կենաս ու կը մնաս. ու ա-
12 մէնը լաթի պէս պիտի մաշին, Ու վերարկուի պէս
պիտի գալարես զանոնք, և պիտի փոխուին. բայց
դուն նոյն ինքն ես, ու քու տարիներդ պիտի
13 չպակսին. Եւ հրեշտակներէն որո՞ւն ըսաւ երբէք,
Իմ աջ կողմս նստէ, մինչև որ քու թշնամիներդ
14 ոտքերուդ պատուանդան դնեմ. Չէ՞ որ անոնք
ամէնը սպասաւորող հոգիներ են, որոնք սպա-
սաւորութեան կը խրկուին անոնց համար՝ որ
փրկութիւն պիտի ժառանգեն։

ԳԼ. Բ

1 Անոր համար պէտք է մեզի՝ ալ աւելի ուշադ-
րութիւն տալ մեր լսած բաներուն, որ չըլլայ թէ
2 երբեք պակսինք. Վասն զի թէ որ ան խօսքը որ
հրեշտակներուն ձեռքովը գրուցուեցաւ՝ հաստա-
տուն եղաւ, և ամէն յանցաւորութիւն ու ան-
3 հնազանդութիւն արդար հատուցում առաւ, Հա-
պա— մենք ինտո՞ր պիտի ազատինք՝ թէ որ անհոգ
ըլլանք անանկ մեծ փրկութենէ մը, որ խօսելուն
սկիզբը Տէրոջմէն առաւ, ու լսողներուն ձեռքովը
4 մեզի հաստատուեցաւ. Աստուած ալ վկայեց
նշաններով ու հրաշքներով և զանազան զօրու-
թիւններով ու Սուրբ Հոգիին պարգեւներովը՝ ին-
տոր որ ինքը կամեցաւ։
5 Ինչու որ չէ թէ հրեշտակներուն հնազանդեցուց
ան գալու աշխարհը, որուն վրայով մենք կը խօ-
6 սինք. Հապա մէկը մէկ տեղ մը վկայեց ու ըսաւ,
Մարդը ի՞նչ է՝ որ զանիկա կը յիշես, կամ մար-
7 դու որդին՝ որ անոր այցելութիւն կ'ընես. Քիչ
մը վար ըրիր զանիկա հրեշտակներէն. փառքով
ու պատուով պսակեցիր զանիկա, և քու ձե-
8 ռացդ գործքերուն վրայ կեցուցիր զանիկա. Ա-
մէն բան անոր ոտքերուն տակը հնազանդեցու-
ցիր. ուստի ամէնը որ անոր հնազանդեցուց, ա-
նոր չհնազանդած բան մը չձգեց. բայց հիմա դեռ
9 չենք տեսներ ամէնը անոր հնազանդած. Սակայն
Յիսուսը փառքով ու պատուով պսակուած կը
տեսնենք՝ որ հրեշտակներէն քիչ մը վար եղած
էր մահուան չարչարանքին համար, որ Աստուծոյ
10 շնորհքովը ամենուն համար մահ ճաշակէ. Որով-
հետեւ կը վայլէր Անոր, (որուն համար ամէնը՝ և
անով ամէն բաները եղած են,) շատ որդիներ
փառքին մէջ մտցնելու ատենը՝ անոնց փրկու-
թեան Առաջնորդը չարչարանքով կատարել։

11 Վասն զի ան որ կը սրբէ ու ան որ կը սրբուի,
ամէնն ալ մէկէ մըն են. անոր համար ինքը ա-
12 մօթ չսեպեր եղբայր կոչել զանոնք՝ ըսելով, Քու
անունդ եղբայրներուս պիտի պատմեմ, ժողով-
13 քին մէջ քեզ պիտի գովեմ։ Եւ դարձեալ՝ Ես
անոր պիտի յուսամ. ու դարձեալ՝ Ահա ես ու
14 ան զաւակները որ Աստուած ինծի տուաւ։ Ուս-
տի որովհետեւ զաւակները մարմինին ու արիւնին
հաղորդ եղան, ինքն ալ նմանապէս անոնց բա-
ժանորդ եղաւ, որ իր մահովը փճացընէ զանիկա
որ մահուան իշխանութիւնը ունէր, այսինքն է
15 Սատանան. Եւ ազատէ զանոնք որ մահուան վա-
16 խովը միշտ ծառայութեան մէջ կ'ապրէին։ Քանզի
բնաւ հրեշտակներուն ձեռք չբռներ, հապա Ա-
17 բրահամի սերունդին ձեռք կը բռնէ։ Անոր համար
պէտք էր անոր բոլորովին եղբայրներուն նման
ըլլալ, որ ինքը ողորմած ըլլայ ու հաւատարիմ
քահանայապետ Աստուծոյ կողմանէ, ժողովուր-
18 դին մեղքերը քաւելու համար։ Քանզի ինչ բա-
նով որ ինքը չարչարուեցաւ՝ փորձութիւն կրե-
լով, կրնայ փորձանաւորներուն ալ օգնական ըլ-
լալ։

ԳԼ. Գ.

1 Ուստի, սուրբ եղբայրներ, երկնային կոչմանը
մասնակիցներ, նայեցէք մեր դաւանութեանը Ա-
ռաքեալին ու Քահանայապետին՝ Քրիստոս Յի-
2 սուսի. Որ հաւատարիմ է անոր՝ որ զինքը դրաւ,
ինչպէս որ Մովսէս ալ՝ անոր բոլոր տանը մէջ.
3 Ինչու որ ինքը Մովսէսէն այնչափ աւելի փառքի
արժանացաւ, որչափ որ աւելի պատիւ կ'ունենայ
4 տունը շինողը քան թէ տունը։ Քանզի ամէն տուն
մէկէ մը կը շինուի. բայց ան որ ամէն բաները
5 ըրաւ՝ Աստուած է։ Եւ յիրաւի Մովսէս անոր

բոլոր տանը մէջ հաւատարիմ էր ծառայի մը
պէս՝ զրուցուելու բաներուն վկայ ըլլալու հա-
6 մար. Բայց Քրիստոս որդիի մը պէս իր տանը
վրայ, որուն տունը մենք ենք, միայն թէ ան հա-
մարձակութիւնը և յոյսին պարծանքը մինչև վեր-
ջը հաստատ բռնենք։
7 Ուստի ինչպէս որ կ'ըսէ Հոգին Սուրբ, Այսօր
8 թէ որ անոր ձայնին պիտի լսէք, Ձեր սիրտերը
մի խստացնէք բարկացնելու ատենին պէս ա-
9 նապատին մէջ փորձութեան օրը, Ուր որ ձեր
հայրերը զիս փորձեցին, քննեցին զիս՝ [illegible]
10 քառասուն տարի իմ գործքերս տեսան. Անոր
համար զզուեցայ ան ազգէն, ու ըսի, Միշտ մո-
լորած են սրտովնին, և իմ ճամբաներս չճանչցան
11 անոնք. Ուստի երդում ըրի իմ բարկութեանս
12 մէջ թէ իմ հանգիստս պիտի չմտնեն։ Նայեցէք,
եղբայրներ, չըլլայ որ ձեզմէ մէկուն ներսի դին
անհաւատութեան չար սիրտ ըլլայ՝ ապստամբ ըլ-
13 լալու կենդանի Աստուծմէն. Հապա ամէն օր
մէկզմէկ յորդորեցէք՝ քանի որ այսօր կ'ըսուի,
որ չըլլայ թէ ձեզմէ մէկը խստանայ մեղքին խա-
14 բէութիւնովը. Քանզի մենք Քրիստոսի մասնակից
եղած ենք, միայն թէ ան հաստատութեան սկիզ-
15 բը մինչև վերջը պինդ բռնենք. Քանի որ կ'ըս-
ուի, Այսօր թէ որ անոր ձայնին պիտի լսէք, ձեր
սիրտերը մի խստացնէք բարկացնելու ատենին
16 պէս։ Քանզի *ոմանք լսեցին ու բարկացուցին,
բայց չէ թէ* ան ամէնը որ Եգիպտոսէն ելած էին
17 Մովսէսին ձեռքովը։ Որոնցմէ՞ զզուեցաւ ան քա-
ռասուն տարին. չէ՞ որ մեղանչողներէն, որոնց
18 ոսկորները անապատին մէջ ինկան։ Եւ որո՞նց
համար երդում ըրաւ իր հանգիստը չմտնելու, ե-
19 թէ ոչ՝ անհաւատներուն համար։ Եւ կը տես-

*կամ որո՞նք լսեցին ու բարկացուցին. չէ՞ որ

նենք որ չկրցան մտնել իրենց անհաւատութեանը
համար։

ԳԼ. Դ

1 Ուրեմն ա՛լ վախնանք, որ չըլլայ թէ անոր հան-
գիստը մտնելու խոստումը որ դեռ մնացեր է,
2 ձեզմէ մէկը անկէ զրկուած գտնուի։ Ինչու որ
մենք ալ անոնց պէս աւետիս առած ենք. բայց
անոնց շահ մը չըրաւ այն խօսքը լսելը, քանզի
3 հաւատքով խառնուած չէր լսողներուն մէջ։ Իսկ
մենք որ հաւատացինք՝ հանգիստը կը մտնենք.
ինչպէս որ ըսաւ, Ուստի երդում ըրի իմ բար-
կութեանս մէջ թէ իմ հանգիստս պիտի չմտնեն.
թէ և իր գործքերը աշխարհի սկիզբէն եղած է-
4 ին։ Ինչու որ Գիրքը ասանկ կ'ըսէ մէկ տեղ մը
եօթներորդ օրուանը համար, Ու Աստուած եօթ-
5 ներորդ օրը հանգչեցաւ իր բոլոր գործքերէն. Ու
հոս նորէն կ'ըսէ թէ իմ հանգիստս պիտի չմտնեն։
6 Ուստի որովհետև ոմանց կը մնայ հոն մտնել, և
անոնք որ առաջուց աւետիսը առած էին, ան-
7 հաւատութեան համար չմտան, Նորէն օր մը կը
սահմանէ՝ ու կ'ըսէ Այսօրը Դաւիթին բերնովը
այնքան ժամանակէ ետև, ինչպէս որ ըսուեցաւ,
Այսօր թէ որ անոր ձայնին պիտի լսէք, ձեր սիր-
8 տերը մի խստացնէք։ Ինչու որ եթէ Յեսու
հանգչեցուցած ըլլար զանոնք, ալ անկէ ետքը
9 ուրիշ օրուան համար չէր գրուեր։ Ուրեմն Աս-
տուծոյ ժողովուրդին դեռ հանգիստ մը կը մնայ։
10 Վասն զի ան որ անոր հանգիստը մտաւ, ալ
հանգչեցաւ իր գործքերէն, ինչպէս որ Աստուած
11 ալ իրեններէն։ Ուրեմն ջանանք այն հանգիստը
մտնելու, որ չըլլայ թէ մէկը նոյն անհաւատու-
12 թեան օրինակին պէս իյնայ։ Ինչու որ Աստուծոյ
խօսքը կենդանի է ու զօրեղ՝ և ամէն երկսայրի

սուրէ կտրուկ, որ կը թափանցէ մինչև շունչը ու
ոգին և յօդուածները ու ծուծը բաժնելու, և
կը քննէ սրտին խորհուրդները ու մտածմունք-
13 ները. Եւ չկայ մէկ արարած մը անոր դիմացը
չերևցած, հապա ամէն բան բաց ու յայտնի է
անոր աչքերուն առջևը, որուն պէտք տըրուի մեր
հաշիւը։
14 Արդ մենք որ մեծ Քահանայապետ մը ունինք
երկինքը անցած, Յիսուսը՝ Աստուծոյ Որդին, ա-
15 մուր բռնենք մեր դաւանութիւնը։ Քանզի չէ թէ
անանկ քահանայապետ մը ունինք՝ որ կարող
չըլլայ մեր տկարութիւններուն կարեկից ըլլալու,
հապա ինքը ամէն կերպով փորձը առած է մեզի
16 նման, բայց առանց մեղքի։ Ուստի ա՛լ համար-
ձակութիւնով մօտենանք շնորհաց աթոռին ա-
ռաջևը, որ ողորմութիւն ընդունինք ու շնորհք
գտնենք պէտք եղած ատենը մեզի օգնելու։

ԳԼ. Ե

1 Ինչու որ ամէն քահանայապետ մարդոց մէջէն
առնուած՝ մարդոց համար կը կենայ Աստուծոյ
կողմը, որ պատարագներ ու զոհեր մատուցանէ
2 մեղքերու համար. Եւ կարող է կարեկից ըլլալ ա-
նոնց՝ որ տգէտ ու մոլորեալ են, ինչու որ ինքն
3 ալ տկարութիւնով պաշարուած է. Եւ աս պատ-
ճառով պարտաւոր է ինչպէս ժողովուրդին հա-
մար՝ անանկ ալ իր անձին համար մեղքի պատա-
4 րագ մատուցանել։ Եւ չէ թէ մէկը ինքիրմէ աս
պատիւը կ'առնէ, հապա ան որ Աստուծմէ կան-
5 չուած է՝ ինչպէս որ Ահարոն։ Անանկ ալ Քրիս-
տոս չէ թէ իր անձը մեծարեց քահանայապետ
ըլլալու, հապա անիկա՝ որ գրուեցաւ անոր թէ
6 Դուն իմ Որդիս ես, ես այսօր քեզ ծնայ. Ինչ-
պէս ուրիշ տեղ մըն ալ կ'ըսէ, Դուն յաւիտեան

7 քահանայ ես Մելքիսեդեկի կարգին պէս։ Որ իր
մարմինին օրերը սաստիկ գոչումով ու արցուն-
քով աղօթք և աղաչանք մատուց անոր՝ որ կա-
րող էր զինքը մահուանէ ազատելու, ու լսուե-
8 ցաւ իր *բարեպաշտութեանը պատճառով.* Թէ-
պէտ ինքը Որդի է, բայց իր չարչարանքներէն
9 հնազանդութիւն սորվեցաւ. Ու երբոր կատար-
ուեցաւ, բոլոր իրեն հնազանդողներուն յաւիտե-
10 նական փրկութեան պատճառ եղաւ. Ու Աստուծ-
մէ կոչուեցաւ Քահանայապետ Մելքիսեդեկի կար-
11 գին պէս։ Որուն վրայով շատ ըսելիք ունինք,
որ դժուարին ալ է մեկնելու, ինչու որ ձեր լսե-
12 լիքները բթացած են. Որ պէտք էր ձեզի ժա-
մանակին նայելով սորվեցնող ըլլալ, բայց նորէն
պէտք է ձեզի սորվիլ թէ ինչ են Աստուծոյ
պատգամներուն առջի սկզբունքները. ու դուք
կաթի կարօտ եղաք՝ և չէ թէ հաստատուն կե-
13 րակուրի. Քանզի ան ամէնը որ կաթնկեր է՝ ար-
դարութեան խօսքին անհմուտ է, որովհետև
14 տղայ է։ Բայց հաստատուն կերակուրը կատար-
եալներուն է, որոնց զգայարանքները սովորու-
թեամբ կրթուած են բարին ու չարը զանազա-
նելու։

ԳԼ. Զ

1 Ուստի Քրիստոսի վրայով առջի սորվելիքները
ձգելով՝ կատարեալին գանք, առանց նորէն հիմ
ձգելու մեռած գործքերէն ապաշխարելու, ու
2 առ Աստուած հաւատք ունենալու, Եւ մկրտու-
թիւններուն վարդապետութեանը, ու ձեռք դը-
նելուն, և մեռելներուն յարութեանը, ու յա-
3 ւիտենական դատաստանին։ Եւ աս պիտի ընենք՝

*Կամ երկիւղէն ազատելով.

4 թէ որ Աստուած հրաման տայ։ Ինչու որ անհնար
է մէկ անգամ լուսաւորուածներուն՝ որոնք երկ-
նաւոր պարգևին համը առին, ու Հոգւոյն Սրբոյ
5 հաղորդ եղան, Եւ Աստուծոյ բարի խօսքին ու
գալու աշխարհին զօրութիւններուն համը առին,
6 թէ որ ինկան՝ նորէն ապաշխարութիւնով նո-
րոգուիլ. որովհետև կրկին Աստուծոյ Որդին խա-
չը կը հանեն իրենց անձին, ու կը խայտառակեն։
7 Ինչու որ ան երկիրը՝ որ իր վրայ շատ անգամ
եկած անձրևը կը խմէ, և արդիւնք կը բերէ
պիտանի անոնց՝ որոնց համար որ կը մշակուի, Աս-
8 տուծմէ օրհնութիւն կ՚ընդունի. Բայց ան որ
փուշեր ու տատասկներ կը բերէ՝ անպիտան է ու
9 անէծքի մօտ, և անոր վերջը այրուիլ է. Իսկ
մենք, սիրելիներ, ձեր վրայով լաւագոյն և փըր-
կութեան վերաբերեալ յոյսեր ունինք, թէ և
10 ասանկ կը խօսինք. Քանզի Աստուած անիրաւ
չէ, որ ձեր գործը մոռնայ, ու ան սէրը որ իր
անուանը համար ցուցուցիք, որ սուրբերուն ծա-
ռայեցիք ու կը ծառայէք.
11 Բայց մենք կը բաղձանք որ ձեզմէ ամէն մէկը
նոյն ջանքը ցուցընէ յոյսին հաստատուելուն մին-
12 չև վերջը. Որ դուք չհեղգանաք, հապա նմանող
ըլլաք անոնց որ հաւատքով ու համբերութիւնով
13 խոստումնքները ժառանգեցին։ Վասն զի երբոր
Աստուած Աբրահամին խոստումնք ըրաւ, որով-
հետև իրմէ մեծը չկար՝ որ անոր վրայ երդում
14 ընէր, Իր անձին վրայ երդում ըրաւ՝ ու ըսաւ,
Այո՝ օրհնելով պիտի օրհնեմ քեզ, ու շատցը-
15 նելով պիտի շատցընեմ քեզ. Եւ այսպէս համ-
16 բերելով խոստումնքին հասաւ։ Քանզի մարդիկ
իրենցմէ մեծին վրայ երդում կ՚ընեն, ու անոնց
բոլոր հակառակութեանը հաստատ վճիռ տուողը
17 երդումն է։ Որ անով Աստուած իր խորհուրդին
անփոփոխ ըլլալը ա՛լ աւելի ցուցընել ուզելով

խոստմունքին ժառանգորդներուն, երդումը
18 մէջ ձգեց. Որ երկու անփոփոխելի բաներով՝ ո-
րոնցմով անկարելի է Աստուծոյ սուտ գրուցել,
հաստատուն մխիթարութիւն ունենանք մենք՝ որ
ապաստանեցանք առջենիս դրուած յոյսը ամուր
19 բռնելու. Որ այն յոյսը ունինք իբրև մէկ հաստատ
ու անշարժ խարիսխ մը մեր անձին, որ վարա-
20 գուրին ներսի կողմն ալ կը մտնէ. Ուր որ Յիսուս
իբրև Առաջնորդ մտաւ մեզի համար՝ յաւիտենա-
կան Քահանայապետ ըլլալով Մելքիսեդեկի կար-
գին պէս։

ԳԼ. Է

1 Քանզի աս Մելքիսեդեկը Սաղեմի թագաւորն էր՝
Բարձրեալ Աստուծոյ քահանան, որ ինքը Աբրա-
համը դիմաւորեց՝ երբոր անիկա թագաւորնե-
րուն կոտորածէն կը դառնար, ու օրհնեց զանի-
2 կա. Որուն Աբրահամ ալ տասանորդ տուաւ բո-
լոր բաներէն. որ նախ արդարութեան թագաւոր
կը թարգմանուի, ետքը Սաղեմի թագաւոր՝ որ
3 է խաղաղութեան թագաւոր. Առանց հօր, ա-
ռանց մօր, ազգահամար չունեցող, որ ոչ անոր
օրերուն սկիզբը կայ՝ ոչ ալ կեանքին վերջը. և
Աստուծոյ Որդւոյն նման ըլլալով՝ կը կենայ ու
կը մնայ միշտ քահանայ։
4 Արդ նայեցէք թէ որչափ մեծ մէկ մըն էր ա-
սիկա, որ անոր Աբրահամ նահապետն ալ տա-
5 սանորդ տուաւ աւարէն։ Եւ Ղևիի որդիներէն
եղողները որ քահանայութիւն կ'առնեն, պատ-
ուէր ունին որ ժողովուրդէն տասանորդ առնեն
օրէնքին համեմատ, այսինքն իրենց եղբայրնե-
րէն. թէպէտև անոնք Աբրահամին երանքէն ելեր
6 են. Բայց անիկա՝ որուն ազգահամարը անոնցմէ
չէր, Աբրահամէն տասանորդ առաւ, ու օրհնեց

7 զանիկա՝ որ խոստմունքները առած էր։ Սակայն
ասիկա անհակառակելի բան մըն է, որ պզտիկը
մեծէն կ'օրհնուի։
8 Եւ հոս մահկանացու մարդիկ տասանորդ կ'առ-
նեն, բայց հոն անիկա կ'առնէ, որուն համար
9 վկայուած է թէ կենդանի է։ Եւ կրնայ ըսուիլ
թէ Ղևին ալ որ տասանորդ կ'առնէ՝ Աբրահա-
10 մին ձեռքովը տասանորդ տուաւ. Ինչու որ տա-
կաւին իր հօրը երանքն էր, երբոր Մելքիսեդեկ
զանիկա դիմաւորեց։
11 Արդ թէ որ կատարելութիւնը Ղևտացւոց քա-
հանայութեան ձեռքովն ըլլար, (որովհետև ժո-
ղովուրդը անոր ատենը օրէնքին տակը դրուե-
ցաւ,) ալ ի՞նչ պէտք էր որ Մելքիսեդեկի կար-
գին պէս ուրիշ քահանայ մը ելլէ, ու չըսուի Ա-
12 հարոնի կարգին պէս։ Արդ քահանայութիւնը
փոխուելուն պէս՝ հարկ էր որ օրէնքին ալ փո-
13 փոխութիւն ըլլայ։ [illegible], ինչու որ ան՝
որուն համար ասանկ կ'ըսուի, ուրիշ ցեղի հա-
ղորդութիւն ունեցաւ, որ ան ցեղէն բնաւ մէկը
14 սեղանին չմօտեցաւ. Քանզի յայտնի է թէ Յու-
դայի ցեղէն յառաջ եկաւ մեր Տէրը, որ ան ցե-
ղին վրայով Մովսէս բան մը չգրուցեց քահանա-
15 յութեան համար։ Ու ալ աւելի յայտնի է որ
[illegible], քանի որ Մելքիսեդեկին նմանու-
16 թիւնովը ուրիշ քահանայ մը կ'ելլէ, Որ ան չէ
թէ մարմնաւոր պատուէրի օրէնքին պէս եղաւ,
հապա անվախճան կենաց զօրութեանը պէս։
17 Ինչու որ կը վկայէ թէ Դուն յաւիտեան քահա-
18 նայ ես Մելքիսեդեկի կարգին պէս։ Քանզի առա-
ջի պատուէրը կը խափանուի իր տկարութեանը
19 ու անշահութեանը համար, (ինչու որ օրէնքը
մէկ բան մը կատարեալ չըրաւ,) և անոր տեղը
կը մտնէ լաւագոյն յոյս մը՝ որով Աստուծոյ կը
կը մօտենանք։

20 Եւ որքան որ Յիսուս չէ թէ առանց երդումի
քահանայ եղաւ.(ինչու որ անոնք առանց երդումի
21 քահանայ եղած են. Բայց ասիկա երդումով՝ ա-
նոր ձեռքովը որ իրեն ըսաւ, Տէրը երդում ը-
րաւ ու պիտի չզղջայ, Դուն յաւիտեան քահանայ
22 ես Մելքիսեդեկի կարգին պէս.) Այնքան աւելի
աղէկ ուխտի մը երաշխաւոր եղաւ Յիսուս։
23 Ու անոնք շատ քահանաներ եղած են՝ իրենց
միշտ մնալուն մահը արգելք ըլլալուն համար.
24 Բայց ասիկա յաւիտեան կենալուն համար՝ ան-
25 անցանելի ունի քահանայութիւնը. Ուստի բոլո-
րովին կարող ալ է ապրեցընելու անոնք՝ որ իր-
մով Աստուծոյ կու գան. որովհետև ինքը միշտ
կենդանի է անոնց համար բարեխօս ըլլալու։
26 Վասն զի մեզի ճիշդ ասանկ քահանայապետ մը
կը վայլէր, սուրբ, անմեղ, անարատ, մեղաւոր-
ներէն զատուած ու երկինքէն վեր բարձրացած.
27 Որուն ամէն օր հարկ չէ ինչպէս ուրիշ քահանա-
յապետներուն՝ առաջ իր մեղքերուն համար պա-
տարագ մատուցանել, ու ետքը ժողովուրդին
մեղքերուն համար. վասն զի ինքը մէկ անգամ մը
ըրաւ ասիկա՝ իր անձը պատարագ մատուցանե-
28 լով. Ինչու որ օրէնքը տկարութիւնով պաշար-
ուած մարդիկը քահանայապետ կը կարգէ, բայց
երդումին խօսքը որ օրէնքէն ետև էր, Որդին՝
որ յաւիտեան կատարեալ է։

ԳԼ. Ը

1 Եւ գրուած խօսքերուս բովանդակութիւնը աս
է. ասանկ քահանայապետ մը ունինք մենք՝ որ
ինքը երկինքը Աստուծոյ մեծութեանը աթոռին
2 աջ կողմը նստաւ. Սրբարանին պաշտօնեայ, ու
ճշմարիտ խորանին՝ որ Տէրը կանգնեց և չէ թէ
3 մարդ. Քանզի ամէն քահանայապետ պատարագ-

ներ ու զոհեր մատուցանելու համար որոշուած
է. ուստի հարկ է որ ասիկա ալ բան մը ունե-
4 նայ մատուցանելու։ Որ եթէ երկրի վրայ ըլլար,
քահանայ անգամ պիտի չըլլար, ինչու որ կան
քահանաներ՝ որոնք պատարագներ կը մատու-
5 ցանեն օրէնքին համեմատ. (Որ անոնք երկնային
բաներուն նմանութիւնովը ու շուքովը կը ծա-
ռայեն, ինչպէս որ Մովսէսին հրամայուեցաւ՝
երբոր խորանը պիտի շինէր. քանզի ըսաւ, Նայէ
որ լեռը քեզի ցուցուած օրինակին պէս շինես
6 ամէնը.) Բայց հիմա Յիսուս՝ ալ աւելի գերազանց
պաշտօնի մը հասաւ, որչափ որ լաւագոյն խոստ-
մունքներով հաստատուած լաւագոյն ուխտի մը
միջնորդ է։
7 Ինչու որ եթէ առաջինը անմեղադրելի ըլլար,
8 ուրիշ երկրորդին տեղ չէր փնտռուեր։ Քանզի
կը յանդիմանէ անոնք ու կ'ըսէ, Ահա օրեր կու
գան, կ'ըսէ Տէրը, որ Իսրայելի տանը հետ ու
9 Յուդայի տանը հետ նոր ուխտ պիտի ընեմ, Չէ
թէ այն ուխտին պէս՝ որ անոնց հայրերուն հետ
ըրի, այն օրը որ անոնց ձեռքէն բռնեցի՝ զանոնք
Եգիպտոսի երկրէն հանելու համար. ինչու որ ա-
նոնք իմ ուխտիս մէջ չկեցան, ես ալ անհոգ
10 եղայ անոնց վրայով, կ'ըսէ Տէրը։ Քանզի աս է
այն ուխտը՝ որ Իսրայելի տանը հետ պիտի ընեմ
այն օրերէն ետքը, կ'ըսէ Տէրը. իմ օրէնքներս
անոնց միտքին մէջը պիտի դնեմ, և անոնց սըր-
տին վրայ պիտի գրեմ զանոնք, ու ես անոնց
Աստուած պիտի ըլլամ, ու անոնք ինծի ժողո-
11 վուրդ պիտի ըլլան։ Ու ընաւ պիտի չսորվեցընեն
ամէն մէկը իր ընկերին, և ամէն մէկը իր եղբօ-
րը, ըսելով Թէ Տէրը ճանչցիր. ինչու որ անոնց
պզտիկէն մինչև մեծը ամէնը զիս պիտի ճանչնան.
12 Վասն զի ես անոնց անիրաւութիւններուն ներող
պիտի ըլլամ, և անոնց մեղքերը ու անօրէնու-
թիւնները ա՛լ պիտի չյիշեմ։

13 Նոր ուխտ ըսելովը առաջինը հնցուց. ու ան
որ կը հիննայ և կը ծերանայ՝ ալ կորստեան մօտ է.

ԳԼ. Թ

1 Արդարև առաջին ուխտն ալ ունէր պաշտամուն-
քին կանոնադրութիւնները ու աշխարհային սուրբ
2 տեղը. ինչու որ առաջին խորանը որ Սրբութիւն
կ'ըսուէր՝ առանձ կազմուեցաւ, որուն մէջը կար
աշտանակը ու սեղանը և առաջաւորութեան հա-
3 ցը. Եւ երկրորդ վարագուրին ետին ան խորանը՝
4 որ Սրբութիւն սրբութեանց կ'ըսուէր. Որուն
մէջն էր ոսկի բուրվառը, և ուխտին տապանակը
ամէն կողմէն ոսկիով պատած. որուն մէջն էր
ոսկիէ սափորը մանանայով լեցուն, և Ահարոնին
գաւազանը որ ծաղկեցաւ, և ուխտին տախտակ-
5 ները, Եւ անոր վրայէն փառաց քերովբէները՝
որ քաւութիւնին վրայ հովանի կ'ընէին, որոնց
համար պէտք չէ հիմա մէկիկ մէկիկ զրուցել.
6 Եւ աս բաները այսպէս կարգադրուած ըլլա-
լով, առաջին խորանը ամէն ատեն կը մտնէին
7 քահանաները՝ պաշտամունքը կատարելու. Բայց
երկրորդը՝ տարին անգամ մը միայն քահանա-
յապետը կը մտնէր. ան ալ չէ թէ առանց արիւնի,
որն որ իրեն համար ու ժողովուրդին սխալմունք-
8 ներուն համար կը մատուցանէր, Հոգին Սուրբ աս
ցուցընելով՝ թէ սրբարանին ճանապարհը յայտնի
եղած չէր, քանի որ տակաւին առջի խորանը կը
9 կենար. Որ ան օրինակ մըն էր ան ժամանակին՝
որ պատարագներ ու զոհեր կը մատուցուէին, ո-
րոնք խղճմտանքի կողմանէ չէին կրնար կատար-
եալ ընել պաշտօն մատուցանողը, հապա միայն
10 կերակուրներով ու խմելիքներով, Եւ կերպ կերպ
լուացումներով՝ մարմնաւոր արարողութիւններ
էին, որոնք մինչև ուղղութեան ատենը կը կե-

11 նային. Բայց Քրիստոս որ եկաւ՝ գալու բարիք-
ներուն Քահանայապետը՝ աւելի մեծ ու կատար-
եալ և անձեռագործ խորանով, այսինքն ան որ
12 աս ստեղծուածներէն չէ, Ոչ ալ նոխազներու ու
զուարակներու արիւնով, հապա իր արիւնովը
մէկ անգամ մը սրբարանը մտաւ՝ յաւիտենական
13 փրկութիւն ստանալով. Վասն զի թէ որ ցուլե-
րուն ու նոխազներուն արիւնը և երինջին մո-
խիրը սրսկուելով՝ պղծեալները կը սրբէր մար-
14 մինի մաքրութեան կողմանէ, Ալ ո՛րչափ աւելի
Քրիստոսի արիւնը՝ որ յաւիտենական Հոգիին
ձեռքովը իր անձը անարատ պատարագ մատուց
Աստուծոյ, պիտի սրբէ ձեր խղճմտանքը մեռած
գործքերէն՝ կենդանի Աստուածը պաշտելու.
15 Եւ ասոր համար ինքը Նոր ուխտին միջնորդն
է, որ էր մահը առջի ուխտին ժամանակը գոր-
ծուած յանցանքներուն քաւութեանը համար ե-
ղած ըլլալով, հրաւիրուածները յաւիտենական
16 ժառանգութեան խոստմունքը առնեն։ Քանզի
ուր որ կտակ մը ըլլայ, հարկ է որ կտակը ընո-
17 ղին մահը մէջ մտնէ. ինչու որ կտակը մեռնելէն
ետև հաստատ կ'ըլլայ. քանզի բնաւ վաւերակա-
նութիւն չունենար քանի որ կտակը ընողը ողջ է.
18 Անոր համար առջի ուխտն ալ առանց արիւնի չէր
19 հաստատուեր. Վասն զի երբոր Մովսէս օրէնքին
ամէն պատուէրները բոլոր ժողովուրդին պատ-
մեց, ցուլերուն ու նոխազներուն արիւնը առնե-
լով՝ ջուրով ու կարմիր բուրդով և զոպայով
բուն գիրքին և բոլոր ժողովուրդին վրայ սրսկեց։
20 Եւ ըսաւ, Ասիկա է ան ուխտին արիւնը, որ Աստ-
21 ուած ձեզի պատուիրեց. Եւ խորանին վրայ ու
պաշտօնին բոլոր գործիքներուն վրայ նոյնպէս
22 սրսկեց արիւնը. Եւ գրեթէ ամէն բան արիւնով
կը մաքրուի օրէնքին նայելով, ու արիւն չթափ-
ուած թողութիւն չըլլար.

23 Ուստի հարկ էր որ երկնաւոր բաներուն օրի-
նակները ասոնցմով մաքրուին. բայց բուն երկ-
24 նաւորները ասոնցմէ աւելի աղէկ զոհերով։ Քանզի
Քրիստոս չէ թէ ձեռագործ սրբարանը մտաւ, որ
ճշմարիտին օրինակն է, հապա բուն երկինքը՝ որ
հիմա մեզի համար Աստուծոյ առջեւը ներկայա-
25 նայ. Ոչ թէ՝ որ շատ անգամ իր անձը պատարագ
մատուցանէ, ինչպէս քահանայապետը՝ որ ամէն
տարի սրբարանը կը մտնէ իրը չեղած արիւնով.
26 Ապա թէ ոչ՝ պէտք էր իրեն աշխարհի սկիզբէն
հետէ շատ անգամ չարչարուիլ. բայց հիմա մէկ
անգամ մը դարերուն վերջը իր անձին պատա-
րագովը յայտնուեցաւ՝ մեղքը մէկդի ձգելու հա-
27 մար։ Եւ ինչպէս որ մարդոց սահմանուած է մէկ
անգամ մը մեռնիլ, ու անկէ ետքը դատաստան,
28 Անանկ ալ Քրիստոս մէկ անգամ մը պատարագ
մատուցուեցաւ՝ շատերուն մեղքերը վերցնելու
համար, բայց երկրորդ անգամին առանց մեղքի
պիտի յայտնուի փրկութեան համար անոնց ո-
րոնք անոր կը սպասեն։

ԳԼ. Ժ

1 Քանզի օրէնքը գալու բարիքներուն շուքը, ու
չէ թէ այն բաներուն բուն կերպարանքը ունե-
նալով, միշտ ամէն տարի մատուցուած նոյն զո-
հերով երբեք չկրնար կատարեալ ընել անոնք
2 որ կը մօտենան. Ապա թէ ոչ պիտի չդադարէի՞ն
մատուցուելէն՝ պաշտօն մատուցանողները մէկ
անգամ մաքրուելէն ետեւ՝ ալ մեղքի վրայով
խղճմտանքի յանդիմանութիւն մը չունենալնուն
3 համար. Բայց անոնցմով ամէն տարի մեղաց յի-
4 շատակութիւն կ՚ըլլայ. Ինչու որ նոխազներուն ու-
ցուլերուն արիւնը չկրնար մեղքերը վերցնել.
5 Անոր համար իր աշխարհ մտնելու ատենը կ՚ըսէ,

Զոհ ու ընծայ չուզեցիր դուն, հապա ինծի մար-
6 մին մը պատրաստեցիր. Ողջակէզներու ու մեղքի
7 պատարագներու չհաւնեցար։ Անատենը ըսի, Ահա
կու գամ ես, (գիրքի տոմսի մէջ ինծի համար
գրուած է,) քու կամքդ ընելու, ով Աստուած.
8 Վերը ըսելով թէ Զոհ ու ընծայ և ողջակէզներ
ու մեղքի պատարագներ չուզեցիր՝ ու անոնց
չհաւնեցար, (որոնք օրէնքին համեմատ կը մա-
9 տուցուին,) Ետքը կ՚ըսէ, Ահա կու գամ ես քու
կամքդ ընելու, ով Աստուած. առջինը կը հերքէ
10 որ երկրորդը հաստատէ. Որ այն կամքովը մենք
ալ սրբուեցանք՝ Յիսուս Քրիստոսի մարմինին
մէկ անգամ պատարագուելովը.
11 Եւ ամէն քահանայ օր ըստ օրէ իր պաշտօնին
մէջ կը կենայ, և նոյն զոհերը շատ անգամ կը
մատուցանէ, որոնք երբեք չեն կրնար մեղքերը
12 վերցնել. Բայց ասիկա մէկ զոհ մը մատուցա-
նելով մեղքերու համար, մշտնջենաւորապէս Աս-
13 տուծոյ աջ կողմը նստաւ. Եւ ասկէ ետեւ կը սպա-
սէ՝ մինչեւ որ իր թշնամիները իր ոտքերուն պատ-
14 ուանդան դրուին։ Ինչու որ մէկ պատարագով
մը մշտնջենաւորապէս կատարեց սրբուածները.
15 Բայց Հոգին Սուրբ ալ մեզի վկայութիւն կու
16 տայ. քանզի առաջուց ըսելէն ետեւ թէ, Աս է այն
ուխտը՝ որ ես անոնց հետ պիտի ընեմ այն օրե-
րէն ետքը, (կ՚ըսէ Տէրը,) իմ օրէնքներս անոնց
սրտին մէջը պիտի դնեմ, ու անոնց միտքին մէջը
17 պիտի գրեմ զանոնք. Ետքը կ՚ըսէ թէ Անոնց
մեղքերը և անոնց անօրէնութիւնները ալ պիտի
18 չյիշեմ. Իսկ ուր որ ասոնց թողութիւն կայ, ալ
մեղքի համար պատարագ պէտք չէ.
19 Ուրեմն, եղբայրներ, համարձակութիւն ունե-
նալով սուրբ տեղը մտնելու Յիսուսի արիւնովը,
20 Այն նոր ու կենդանի ճամբովը՝ որ բացաւ մեզի
21 վարագուրին մէջէն՝ որ է իր մարմինը, Եւ մեծ

քահանայ մը ունենալով Աստուծոյ տանը վրայ,
22 Մօտենանք ճշմարիտ սրտով, լեցուն հաւատքով,
սիրտերնիս չար խիղճէն մաքրուած, ու մարմին-
23 նիս մաքուր ջրով լուացուած։ Անխախտ պա-
հենք յոյսին դաւանութիւնը, ինչու որ հաւա-
24 տարիմ է անիկա որ խոստացաւ։ Եւ իրարու
հոգ տանինք՝ սիրոյ և բարեգործութեան գրգռե-
25 լով։ Եւ մէկտեղ ժողվուիլը չթողունք, ինչոր
ոմանք սովորութիւն ունին. հապա մէկզմէկ յոր-
դորենք, ու այնչափ աւելի՝ որչափ որ այն օ-
րուան մօտենալը կը տեսնէք։
26 Վասն զի թէ որ ճշմարտութեան գիտութիւնը
ընդունելէն ետեւ՝ կամաւ մեղք գործելու ըլլանք,
ալ անկէ ետեւ մեղքերու համար ուրիշ զոհ մը
27 չմնար, Հապա մէկ զարհուրելի սպասել մը դա-
տաստանին, ու կրակի բարկութիւն մը կը մնայ,
28 որ պիտի լափէ հակառակորդները։ Մէկը թէ որ
Մովսէսին օրէնքը անարգէր, առանց ողորմու-
թեան երկու կամ երեք վկաներով կը մեռնէր։
29 Ալ որչափ սաստիկ պատժոյ արժանի պիտի սեպ-
ուի կը կարծէք անիկա, որ Աստուծոյ Որդին
ոտքի տակ առաւ, և ուխտին արիւնը անմա-
քուր սեպեց, որ անով ինքը սրբուեցաւ, և
30 շնորհաց Հոգին նախատեց։ Քանզի գիտենք անի-
կա որ ըսաւ, Իմս է վրէժխնդրութիւնը, ես պի-
տի հատուցանեմ, կ՚ըսէ Տէրը. և դարձեալ՝ Տէրը
31 պիտի դատէ իր ժողովուրդը։ Սարսափելի բան է
կենդանի Աստուծոյ ձեռքը իյնալը։
32 Արդ միտքերնիդ բերէք այն առջի օրերը՝ որ
լուսաւորուելէն ետեւ շատ սաստիկ չարչարանք-
33 ներ կրեցիք. Երբեմն նախատինքներով ու վիշ-
տերով խայտառակուած, երբեմն ալ ասանկ վի-
34 ճակի մէջ եղողներուն կցորդ ըլլալով։ Ինչու որ
*իմ կապերուս մէջ ինծի՝ չարչարակից եղաք, ու

*Ոմանք կապուածներուն

ձեր ստացուածքին կողոպտուիլը ուրախութեամբ
ընդունեցիք, գիտնալով որ լաւագոյն և մնայուն
35 ստացուածքներ ունիք ձեզի երկինքը։ Ուստի
չեղէ մի ձգէք ձեր վստահութիւնը, որ այն մեծ
36 վարձքի հատուցում ունի։ Ինչու որ պէտք է
ձեզի համբերութիւն, որ Աստուծոյ կամքը ընե-
37 լով խոստումնքը վայելէք։ Քանզի ալ ասկէ քիչ
մը ատենէն այն որ գալու է՝ պիտի գայ ու պիտի
38 չուշանայ։ Եւ Արդարը հաւատքէն պիտի ապրի.
ու թէ որ մէկը ետ քաշուի՝ իմ հոգիս անոր
39 չհաճիր։ Բայց մենք ետ չենք քաշուիր որ կոր-
սուինք, հապա կը հաւատանք որ մեր հոգին
փրկուի։

ԳԼ. ԺԱ

1 Արդ հաւատքը յուսացուած բաներուն հաստա-
տութիւնը ու չերեւցած բաներուն ապացոյցն է։
2 Վասն զի անով առջինները վկայութիւն ընդու-
նեցին։
3 Հաւատքով կ՚իմանանք թէ աշխարհքը Աստու-
ծոյ խօսքովը հաստատուեցաւ, ու աներեւոյթ
բաներէն աս երեւցածները եղան։
4 Հաւատքով Աբէլ Կայէնէն աւելի աղէկ զոհ
մատուց Աստուծոյ, որ անով վկայուեցաւ ար-
դար ըլլալը. ինչու որ իր պատարագներուն վրայ
Աստուծմէ վկայութիւն եղաւ իրեն. և անով,
թէպէտ մեռաւ, դեռ տակաւին կը խօսի։
5 Հաւատքով Ենովք երկինք փոխադրուեցաւ որ
մահ չտեսնէ. ու մէկ տեղ մը չէր գտնուէր, ինչու
որ Աստուած փոխադրեց զանիկա. քանզի անոր
փոխադրուելէն առաջ վկայուեցաւ թէ Աստու-
6 ծոյ հաճելի էր։ Բայց առանց հաւատքի անհնար
է Աստուծոյ հաճոյ ըլլալ. վասն զի ան որ Աստու-
ծոյ կը մօտենայ, պէտք է որ հաւատայ թէ Աստ-
ծոյ կը մօտենայ, պէտք է որ հաւատայ թէ Աստ-

ուած կայ, և թէ վարձահատոյց կ՚ըլլայ անոնց որ
զինքը կը փնտռեն։
7 Հաւատքով Նոյ պատգամ առնելով Աստուծմէ՝
դեռ չերևցած բաներուն համար, վախնալով
տապանը շինեց իր տունը փրկելու համար, որով
աշխարհս դատապարտեց, և ժառանգաւոր եղաւ
ան արդարութեանը՝ որ հաւատքով կ՚ըլլայ։
8 Հաւատքով՝ Աբրահամ երբոր կանչուեցաւ՝
մտիկ ըրաւ ան տեղը ելլելու, որն որ ժառան-
գութիւն պիտի առնէր. և ելաւ գնաց, ու չէր
9 գիտեր թէ ուր կ՚երթայ։ Հաւատքով պանդըխ-
տացաւ աւետեաց երկրին մէջ որպէս թէ օտա-
րութեան մէջ, և վրաններու մէջ բնակեցաւ
Իսահակին ու Յակոբին հետ մէկտեղ, որոնք իր
10 հետը ժառանգորդ էին նոյն խոստմունքին. ին-
չու որ ինքը կը սպասէր ան հիմերով հաստատ-
ուած քաղաքին, որուն ճարտարապետը ու ա-
րարիչը Աստուած է։
11 Հաւատքով ինքը Սառան ալ որդեծնութեան
սերմը առնելու զօրութիւն ընդունեց, և ատենը
անցած հասակի մէջ զաւակ ծնաւ. ինչու որ հա-
ւատարիմ սեպեց զանիկա՝ որ խոստմունքը ըրեր
12 էր։ Ուստի ան մէկէն ծնան, (ան ալ մեռածի
պէս,) շատութեան կողմէ երկնից աստղերուն
պէս, ու ծովեզերքը եղած աւազին պէս առանց
համրանքի։
13 Ասոնք ամէնն ալ հաւատքով մեռան՝ խոստ-
մունքները չառած, հապա հեռուէն տեսան զա-
նոնք ու *ողջունեցին, և խոստովանեցան թէ
իրենք օտարներ ու պանդուխտներ են երկրի
14 վրայ։ Քանզի անոնք որ ասանկ բաներ կը խօսին,
յայտնի կ՚ընեն թէ մէկ գաւառ մը կը փնտռեն։
15 Եւ յիրաւի թէ որ անիկա յիշէին՝ ուսկից որ ե-

*Որոնք հաւատալով ողջունեցին

16 լան, ժամանակ ունէին հոն դառնալու։ Բայց հի-
մա լաւագոյն հայրենիք մը կը փափաքին՝ այսինքն
երկնաւորին. ուստի ամօթ չսեպեր Աստուած
անոնց Աստուածը ըսուիլը, ինչու որ ինքը անոնց
քաղաք մը պատրաստեց։
17 Հաւատքով Աբրահամ իր փորձուած ատենը
Իսահակը պատարագ մատուց. և ան որ խոստ-
մունքները առած էր, իր մէկ հատիկ որդին կը
18 մատուցանէր. Որուն ըսուեցաւ թէ Իսահակով
19 քեզի սերունդ պիտի կոչուի. Քանզի կը մտածէր
թէ Աստուած մեռելներէն ալ կարող է յարու-
ցանել. ուսկից օրինակով մը ընդունեց զանիկա։
20 Հաւատքով Իսահակ գալու բաներուն համար
21 մարգարէանալով՝ օրհնեց Յակոբը ու Եսաւը։ Հա-
ւատքով Յակոբ իր մեռնելու ատենը՝ Յովսէփին
որդիներէն ամէն մէկը օրհնեց, ու երկրպագու-
22 թիւն ըրաւ իր գաւազանին գլխուն վրայ։ Հա-
ւատքով Յովսէփ իր վախճանելու ատենը յիշե-
ցուց Իսրայելի որդւոցը Եգիպտոսէն ելլելը, ու իր
ոսկորներուն համար պատուէր տուաւ։
23 Հաւատքով, երբոր ծնաւ Մովսէս, իր ծնողք-
ներուն ձեռքովը երեք ամիս գաղտուկ պահուե-
ցաւ. ինչու որ տղան գեղեցիկ տեսան, ու չվախ-
24 ցան թագաւորին հրամանէն։ Հաւատքով Մով-
սէս երբոր մեծցաւ՝ չընդունեց փարաւոնի աղջկա-
25 նը որդի ըսուիլը, Քանզի աւելի աղէկ սեպեց
Աստուծոյ ժողովուրդին հետ չարչարուիլ, քան
թէ մեղաց ժամանակաւոր զուարճութիւնը վա-
26 յելել. Եւ աւելի մեծ հարստութիւն սեպեց Քրիս-
տոսի նախատինքը՝ քան թէ Եգիպտոսի գանձե-
րը. ինչու որ դիտելով կը սպասէր վարձքի հա-
27 տուցմանը։ Հաւատքով Եգիպտոսը թողուց, ու
չվախցաւ թագաւորին բարկութենէն. ինչու որ
համբերեց՝ որպէս թէ Աներևոյթին կը տեսնէր։
28 Հաւատքով ըրաւ զատիկը և արիւն սրսկելը, որ

անդրանիկները սատկեցընողը իրենց չդպչի։
29 Հաւատքով Կարմիր ծովէն անցան որպէս թէ
ցամաքէ. որուն փորձը ընելով Եգիպտացիները
ընկղմեցան։
30 Հաւատքով Երիքովի պարիսպները ինկան՝ եօ-
թը օր անոնց բոլորտիքը պտըտելով։
31 Հաւատքով Ռախաբ պոռնիկը անհաւատներուն
հետ չկորսուեցաւ, որ լրտեսները խաղաղու-
թեամբ ընդուներ էր։
32 Եւ ալ ի՞նչ ըսեմ. ինչու որ ժամանակը բաւա-
կան չէ որ պատմեմ Գեդէոնին ու Բարակին և
Սամփսոնին ու Յեփթայէին և Դաւիթին ու Սա-
33 մուէլին և ուրիշ մարգարէներուն համար։ Որոնք
հաւատքով թագաւորութիւններու յաղթեցին,
արդարութիւն գործեցին, խոստումներու հա-
34 սան, առիւծներու բերաններ գոցեցին, Կրակի
զօրութիւն մարեցին, սուրի բերնէ ազատեցան,
տկարութենէ ուժովցան, պատերազմի մէջ զօ-
րաւոր եղան, օտարներու բանակներ ցրուեցին,
35 Կիններ իրենց մեռելները ընդունեցին յարու-
թիւն առած. ոմանք չարչարուեցան և չընդու-
նեցին ազատութիւնը, որ լաւագոյն յարութեան
36 հասնին. Ուրիշներ ալ նախատինքներու ու ծե-
ծերու, նաև կապերու ու բանտերու փորձը ա-
37 ռին. Քարկոծուեցան, սղոցուեցան, փորձանքի
մէջ ինկան, սրով սպաննուելով մեռան, ոչխարի
մորթերով ու այծի մորթերով պտըտեցան, կա-
րօտութիւն քաշելով, նեղը [illegible], չարչար-
38 ուելով, (Որ անոնց արժանի չէր աշխարհս,) ա-
նապատներու ու լեռներու և այրերու ու երկրի
խոռոչներու մէջ մոլորելով։
39 Եւ ասոնք ամէնը հաւատքով վկայուած՝ խոստ-
40 մունքը չառին. Քանզի Աստուած մեզի համար ա-
ւելի աղէկ բան մը նախապատրաստեց, որ անոնք
առանց մեզի չկատարուին։

ԳԼ. ԺԲ

1 Ուստի մենք ալ՝ որ այսչափ վկաներուն *բազ-
մութիւնը մեր բոլորտիքը պատած ունինք, ամէն
ծանրութիւնը մեր վրայէն մէկդի ձգենք, և մեզ
դիւրաւ պաշարող մեղքը, ու համբերութիւնով
վազենք մեր առջևը դրուած ասպարէզի ընթաց-
2 քը. Յիսուսի նայինք՝ [illegible] հաւատքին առաջնոր-
դին ու կատարողին. որ ինքը ան ուրախութեանը
համար որ իր առջևը կեցած էր, խաչը յանձն ա-
ռաւ, ամօթը արհամարհեց, ու Աստուծոյ աթո-
ռին աջ կողմը նստաւ.
3 Արդ միտք բերէք անիկա, որ այսանկ համբե-
րեց մեղաւորներուն իրեն դէմ հակառակ խօսե-
լուն, որ չըլլայ թէ ձեր անձովը յոգնիք ու թուլ-
4 նաք. Տակաւին արիւն [illegible] չափ պատերազ-
5 մելով հակառակ չկեցաք մեղքին. Եւ մոռցաք
ան յորդորանքը որ ձեր հետը կը խօսի որպէս
թէ որդիներու հետ, Որդեակ իմ, Տէրոջը խրա-
տը մի անարգեր, ու անկէ յանդիմանուելով՝ մի
6 թուլնար. Վասն զի Տէրը իր սիրածը կը խրատէ,
և կը ծեծէ ամէն որդին՝ որ ինքը կ'ընդունի։
7 Թէ որ խրատի համբերէք, Աստուած ձեզի հետ
որպէս թէ որդիներու հետ կը վարուի. քանզի
ո՞ր որդին է ան՝ որ հայրը չպատժեր զանիկա։
8 Իսկ թէ որ դուք առանց խրատի ըլլաք, որուն
ամէնը մասնակից եղան, ուրեմն խորթ էք դուք՝
9 ու չէ թէ որդիներ։ Նաև մեր մարմնաւոր հայրե-
րը մեզի խրատիչ ունենալով՝ անոնցմէ կ'ամչնա-
յինք. չէ՞ որ ալ աւելի պիտի հնազանդինք հո-
10 գիներուն Հօրը ու ապրինք։ Ինչու որ անոնք քիչ
օրեր մեզ կը խրատէին իրենց հաճոյ երևցածին

---

*Յոյն. ամպը

պէս, բայց անիկա մեր օգուտին համար՝ որ իր
11 սրբութեանը հաղորդ ըլլանք։ Եւ յիրաւի ամէն
խրատ նոյն ատենը ուրախարար չթուիր, հապա
տրտմական, բայց ետքը արդարութեան խաղա-
ղարար պտուղը կը հատուցանէ անով վարժուող-
ներուն։
12 Ուստի թուլցած ձեռքերը ու տկար ծունկերը
13 հաստատեցէք։ Եւ շիտակ ճամբաներ ըրէք ձեր
ոտքերուն, որ չըլլայ թէ ան որ կաղ է՝ *խոտո-
14 րի, այլ մանաւանդ բժշկուի։ Խաղաղութեան ե-
տեւէ եղէք ամենուն հետ և սրբութեան, որ ա-
15 ռանց անոր մէկը պիտի չտեսնէ Տէրը։ Զգուշա-
ցէք, չըլլայ որ մէկը Աստուծոյ շնորհքէն ետ
մնայ. չըլլայ որ դառնութեան արմատ մը վեր ե-
րեւնալով՝ ձեզ նեղէ, ու անով շատերը պղծուին։
16 Չըլլայ որ մէկը պոռնիկ ըլլայ, կամ անսուրբ՝ Ե-
սաւին պէս, որ կերակուրի մը համար իր անդ-
17 րանկութիւնը ծախեց։ Քանզի գիտէք որ թէպէտ
ետքը ուզեց օրհնութիւնը ժառանգել, բայց
մերժուեցաւ. ինչու որ ապաշխարութեան տեղ
չգտաւ հօրը քով, թէպէտև արցունքով խնդրեց
զանիկա։
18 Ինչու որ դուք մօտեցած չէք շօշափելի լեռա-
նը, որ կրակով կը վառէր, ոչ ալ մէգին և խա-
19 ւարին ու մրրիկին, Եւ փողին հնչուելուն, ու
խօսքերուն ձայնին, որ անիկա լսողները աղաչե-
20 ցին որ մէյ մըն ալ ան խօսքը չըսուի իրենց. Ին-
չու որ չէին կրնար տանիլ ան հրամանին, թէ որ
գազան մըն ալ լեռանը դպչի՝ պիտի քարկոծ-
21 ուի†. Եւ այնպէս ահագին էր ան երեւոյթը՝ որ
Մովսէս ըսաւ, Սաստիկ կը վախնամ ու կը դո-
22 ղամ։ Բայց դուք Սիոն լեռանը մօտեցեր էք, ու

*Կամ գլորի
†Ոմանց Յունարէնին կամ նետով զարնուի

կենդանի Աստուծոյ քաղաքին՝ երկնաւոր Երու-
23 սաղէմին, և բիւրաւոր հրեշտակներուն, Ու ե-
րկինքը գրուած անդրանիկներուն հանդիսաւոր
ժողովին ու եկեղեցիին, և Աստուծոյ՝ որ ամե-
նուն Դատաւորն է, ու արդարոց հոգիներուն՝ որ
24 կատարուեր են, Եւ Յիսուսի՝ որ նոր ուխտին
միջնորդն է, ու սրսկուելու արեանը՝ որ Աբելին
արիւնէն աւելի աղէկ կը խօսի։
25 Զգուշացէք՝ չըլլայ որ մերժէք զանիկա որ ձեզի
կը խօսի. վասն զի թէ որ անոնք երկրի վրայ Ա-
ստուծոյ պատգամները խօսողը մերժելով չազա-
տեցան, որչափ աւելի մենք՝ թէ որ երկինքէն
26 խօսողէն երես դարձնենք. Որ անոր ձայնը ա-
տենը երկիրը շարժեց, և հիմա խոստացեր է ու
կ'ըսէ, Նորէն պիտի շարժեմ՝ չէ թէ միայն եր-
27 կիրը, հապա նաև երկինքը։ Եւ ան Նորէն խօսքը
կը ցուցնէ շարժուած բաներուն յեղափոխու-
թիւնը շինուած բաներու պէս, որ անշարժ բա-
28 ները հաստատուն մնան։ Ուստի անշարժ թա-
գաւորութիւնը առած ըլլալով՝ ամուր բռնենք
ան շնորհքը, որով Աստուած պաշտենք հաճոյա-
կան կերպով, ակնածութեամբ և բարեպաշտու-
29 թեամբ. Ինչու որ մեր Աստուածը մաշող կրակ է։

ԳԼ. ԺԳ

1 Եղբայրսիրութիւնը ձեր մէջ հաստատ մնայ։
2 Հիւրասիրութիւնը մի մոռնաք, ինչու որ անով
ոմանք հրեշտակներ ընդունեցին չգիտնալով։
3 Միտքերնիդ ըլլան կապուածները, որպէս թէ ա-
նոնց հետ դուք ալ կապուած էք. և չարչար-
ուածները՝ որպէս թէ դուք ալ մարմին ունեցող
4 էք։ Ամուսնութիւնը բոլորովին պատուական է,
ու անկողինը անարատ է. բայց պոռնիկները ու
5 շնացողները Աստուած պիտի դատէ։ Բարքերնիդ

արծաթասէր չըլլայ, բաւական սեպեցէք որչափ
բան որ ձեռքերնիդ կայ. ինչու որ ինքը գրուեցեց
թէ Բնաւ քեզ պիտի չթողում, ու բնաւ քեզ
6 երեսէ պիտի չձգեմ. Անանկ որ համարձակ ըլ-
լանք ըսելու, Տէրը իմ օգնականս է, ու ես պի-
7 տի չվախնամ, մարդը ինծի ի՞նչ պիտի ընէ. Յի-
շեցէք ձեր առաջնորդները՝ որ Աստուծոյ խօսքը
ձեզի խօսեցան, և անոնց վարմունքին վախճանին
8 նայելով՝ իրենց հաւատքին նմանող եղէք. Յիսուս
Քրիստոս նոյն է երէկ ու այսօր և յաւիտեան։
9 Կերպ կերպ և օտարաձայն ուսմունքներով մի
տարուբերիք. քանզի աղէկ է որ սիրտը շնորհ-
քով հաստատուի ու չէ թէ կերակուրներով. որ
անոնցմով օգուտ մը չունեցան անոնք որ անանկ
10 գացին. Սեղան մը ունինք մենք, ուսկից իշխա-
նութիւն չունին ուտելու անոնք որ խորանին
11 ծառայութիւն կ'ընեն. Քանզի ո՛ր անասուննե-
րուն արիւնը որ սուրբ տեղը կը տարուի մեղաց
համար քահանայապետին ձեռքովը, անոնց մար-
12 մինները բանակէն դուրս կ'այրուին. Ուստի Յի-
սուս ալ իր արիւնովը ժողովուրդը սրբելու հա-
13 մար՝ դռնէն դուրս չարչարուեցաւ։ Ուրեմն եկէք
իրեն ելլենք բանակէն դուրս, վրանիս առնելով
14 անոր նախատինքը. Ինչու որ մենք հոս մնայուն
քաղաք չունինք, հապա հանդերձեալը կը փնտռ-
15 ռենք. Ուստի անոր ձեռքովը ամէն ատեն Աս-
տուծոյ օրհնութեան պատարագ մատուցանենք,
այսինքն մեր շրթունքներուն պտուղը՝ որ իր ա-
16 նունը կը դաւանին. Իսկ բարերարութիւնը ու
[illegible] հաղորդակցութիւնը մի մոռնաք, ին-
չու որ Աստուած անանկ պատարագներուն կը
17 հաւնի։ Ձեր առաջնորդներուն մտիկ ըրէք ու
անոնց հնազանդ կեցէք, ինչու որ անոնք ձեր
հոգիներուն համար կը հսկեն, որպէս թէ հաշիւ
պիտի տան. որ խնդութիւնով ընեն ան գործը,

և չէ թէ հառաչելով, որ ան ձեզի օգտակար չէ։
18 Մեզի համար աղօթք ըրէք, ինչու որ մենք հա-
մոզուած ենք թէ աղէկ խղճմտանք ունինք, և
ամէն բանի մէջ կ'ուզենք աղէկ վարմունք ու-
19 նենալ. Եւ մանաւանդ կ'աղաչեմ որ ասիկա ընէք,
որ աւելի շուտով ձեզի դառնամ.
20 Եւ խաղաղութեան Աստուածը՝ որ մեռելներէն
յարոյց մեր Տէր Յիսուսը, որ յաւիտենական
ուխտին արիւնովը ոչխարներուն մեծ Հովիւն է,
21 Ձեզ ամէն բարի գործի մէջ հաստատէ իր կամքը
ընելու, և ձեր մէջը իր առջևը հաճոյ եղածը ընէ
Յիսուս Քրիստոսի ձեռքովը, որուն փառք յա-
ւիտեանս յաւիտենից. Ամէն.
22 Կ'աղաչեմ ձեզի, եղբայրներ, աս յորդորական
խօսքիս համբերել, ինչու որ համառօտաբար
23 գրեցի ձեզի. Գիտցէք որ *մեր եղբայրը Տիմո-
թէոս արձակուած է, որուն հետ՝ թէ որ շու-
24 տով գայ՝ պիտի տեսնեմ ձեզ. Բարև ըրէք ձեր
բոլոր առաջնորդներուն ու բոլոր սուրբերուն.
ձեզի բարև կ'ընեն անոնք որ Իտալիայէն են։
25 Շնորհքը ձեր ամենուն հետը ըլլայ։ Ամէն.

---

*[illegible]

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹՈՒՂԹ

ՅԱԿՈԲՈՒ ԱՌԱՔԵԼՈՅՆ

ԳԼՈՒԽ Ա

1 Յակոբոս՝ Աստուծոյ ու Տէր Յիսուս Քրիստոսի
ծառան, տասնուերկու ցեղերուդ՝ որ ամէն կողմ
ցրուած էք, ողջոյն։
2 Եղբայրնե՛ր, բոլորովին ուրախութեան արժանի
բան սեպեցէք, երբոր կերպ կերպ փորձանքնե-
3 րու մէջ կ՚իյնաք, Գիտնալով որ ձեր հաւատքին
4 փորձառութիւնը համբերութիւն կը գործէ։ Բայց
համբերութիւնը կատարեալ գործ թող ունենայ,
որ կատարեալ ու ամբողջ ըլլաք, ու բանի մը
պակասութիւն չունենաք։
5 Հապա թէ որ ձեզմէ մէկը իմաստութենէ պակ-
սած ըլլայ, թող խնդրէ Աստուծմէ՝ որ ամենուն
առատապէս կու տայ ու չնախատեր, և անոր
6 պիտի տրուի։ Միայն թէ հաւատքով թող խընդ-
րէ ու չերկմտի, վասն զի ան որ երկմիտ է՝ ծո-
վուն հողմակոծեալ ու տատանեալ ալիքներուն
7 նման է. Ան մարդը թող չկարծէ որ Տէրոջմէ բան
8 մը պիտի առնէ. Երկմիտ մարդը անհաստատ է իր
բոլոր ճամբաներուն մէջ։
9 Խոնարհ եղբայրը իր բարձրութեանը վրայ թող
10 պարծենայ, Եւ ան որ հարուստ է՝ իր խոնար-
հութեանը վրայ, ինչու որ անիկա խոտի ծաղկի
11 մը պէս պիտի անցնի. Քանզի արեւը սաստիկ տա-
քութիւնով մը կը ծագի ու կը ցամքեցընէ խո-
տը, և անոր ծաղիկը կը թափի, ու անոր երեսու-
թին գեղեցկութիւնն ալ կը կորսուի. անանկ ալ
հարուստը իր ճամբաներուն մէջ պիտի թառամի։
12 Երանելի է ան մարդը որ փորձութեան կը համ-
բերէ. ինչու որ եթէ փորձուելով ընտիր գտնը-
ւի, կենաց պսակը պիտի առնէ, որն որ Տէրը
13 զինքը սիրողներուն խոստացաւ։ Չըլլայ որ մէկը
որ փորձութեան մէջ է՝ ըսէ թէ Աստուծմէ կը
փորձուիմ. ինչու որ Աստուած չար բաներով
14 չփորձուիր, ոչ ալ ինքը մէկը կը փորձէ։ Սակայն
ամէն մէկը կը փորձուի՝ իր ցանկութիւններէն
15 հրապուրուած ու խաբուած. Անկէ ետեւ ցան-
կութիւնը յղանալով՝ մեղք կը ծնանի, և մեղքը
16 որ կատարուի՝ մահ կը ծնանի։ Մի խաբուիք, իմ
17 սիրելի եղբայրներս. Ամէն բարի տուրք ու ամէն
կատարեալ պարգեւ վերէն է, և լուսոյ Հօրմէն
կ՚իջնէ, որուն մէջ ընաւ փոփոխութիւն կամ
18 դառնալու շուք մը չկայ։ Իր ուզելովը մեզ ծնաւ
ճշմարտութեան խօսքովը, որ մենք իր ստեղ-
19 ծածներուն երախայրի մը ըլլանք։ Ուստի, իմ
սիրելի եղբայրներս, ամէն մարդ թող շուտ ըլլայ
լսելու, ու ծանր՝ խօսելու, և ծանր՝ բարկանա-
20 լու. Ինչու որ մարդուն բարկութիւնը Աստուծոյ
արդարութիւնը չգործեր։
21 Ուստի ամէն աղտեղութիւնը ու չարութեան
առաւելութիւնը մէկդի ձգելով, հեզութեամբ
ընդունեցէք ձեր մէջը սերմանուած խօսքը, որ
կրնայ ձեր հոգիները փրկել։
22 Բայց խօսքը կատարողներ եղէք, և չէ թէ մի-
23 այն լսողներ՝ ինքզինքնիդ խաբելով. Ինչու որ
եթէ մէկը միայն լսող ըլլայ խօսքին ու կատա-
րող չըլլայ, անիկա նման է մարդու մը՝ որ հայե-
լիի մէջ աչքերը տնկած իր բնական երեսը կը դի-
24 տէ. Ինչու որ դիտելով տեսաւ ինքզինքը ու ան-

ցաւ գնաց, և շուտ մը մոռցաւ թէ ինչպէս մէկ
25 մըն էր. Բայց ան որ ազատութեան կատարեալ
օրէնքին աչք տնկելով կը նայի, և անոր մէջը կը
կենայ, անիկա խօսքը լսող ու մոռցող չըլլալով,
հապա գործը կատարող, երանելի պիտի ըլլայ իր
26 կատարելուն մէջ. Թէ որ *մէկը զինքը կրօնասէր
կը սեպէ ու իր լեզուին սանձ չդներ, հապա իր
սիրտը կը խաբէ, անանկին կրօնասիրութիւնը
27 փուճ է. Աստուծոյ ու Հօրը քով մաքուր ու ա-
նարատ կրօնասիրութիւնը աս է, Որբերուն ու
որբևայրիներուն տես երթալ իրենց նեղութեան
ատենը, ու անձը անարատ պահել աշխարհէն.

ԳԼ. Բ

1 Իմ եղբայրներս, չըլլայ որ աչառութեամբ բռնէք
մեր Տէր Յիսուս Քրիստոսի հաւատքը, որ ինքը
2 փառաց Տէրն է. Քանզի թէ որ ձեր ժողովքին
մէջ մէկ մարդ մը մտնելու ըլլայ՝ որ ունենայ ոս-
կի մատանի և փառաւոր հանդերձներ, հոն մէկ
աղքատ մըն ալ մտնելու ըլլայ աղտոտ հանդերձ-
3 ներով, Ու նայիք անոր վրայ որ փառաւոր հան-
դերձներ ունի, ու ըսէք թէ Դուն հոս նստէ
պատուով, և ան աղքատին ըսէք թէ Դուն հոդ
ոտքի վրայ կայնէ, կամ թէ Եկուր նստէ պատ-
4 ուանդանիս քովը, Ձեր մէջը խտրութիւններ ը-
նող ու չար խորհուրդներու դատաւոր չէ՞ք ըլ-
5 լար. Մտիկ ըրէք, սիրելի եղբայրներս. չէ՞ որ
Աստուած աշխարհիս աղքատները ընտրեց, ո-
րոնք հաւատքով հարուստ են, ու ժառանգա-
ւոր՝ արքայութեանը, որ զինքը սիրողներուն
6 խոստացաւ. Բայց դուք աղքատները անարգե-
ցիք. հարուստները չե՞ն որ ձեզ կը հարստահա-

*Բնագ. ձեզմէ մէկը

րեն, ու ձեզ դատաստանարանները կը քաշեն:
7 Անոնք չե՞ն որ կը հայհոյեն ան բարի անունը՝ որ
8 ձեր վրայ կանչուած է. Արդ թէ որ դուք ար-
քունական օրէնքը կը կատարէք Գրքին ըսածին
համեմատ՝ թէ Քու ընկերդ սիրես քու անձիդ
9 պէս, աղէկ կ'ընէք. Բայց թէ որ աչառութիւն
կ'ընէք, մեղք կը գործէք, և օրէնքէն կը յան-
10 դիմանուիք օրինազանցներու պէս. Քանզի ով որ
բոլոր օրէնքը պահէ, ու մէկ բանի մը մէջ յան-
ցաւոր ըլլայ, անիկա ամենուն պարտական կ'ըլ-
11 լայ. Վասն զի ան որ ըսաւ թէ Շնութիւն մի ը-
նէր, ըսաւ ալ թէ Մի սպաններ. ուստի թէ որ
շնութիւն չընես՝ բայց սպանութիւն ընես, օրի-
12 նազանց կ'ըլլաս. Անանկ խօսեցէք և անանկ ը-
րէք՝ որպէս թէ ազատութեան օրէնքովը պիտի
13 դատուիք. Վասն զի դատաստանը անողորմ պի-
տի ըլլայ անոր որ ողորմութիւն չըներ. և ողոր-
մութիւնը կը պարծենայ դատաստանին դիմացը.
14 Ի՞նչ օգուտ է, եղբայրներս, թէ որ մէկը ըսէ
թէ հաւատք ունի, ու գործք չունենայ. միթէ
15 հաւատքը կրնա՞յ փրկել զանիկա. Թէ որ եղբայր
մը կամ քոյր մը մերկ ըլլայ՝ կամ օրուան կերա-
16 կուրին կարօտ, Ու ձեզմէ մէկը անոնց ըսէ, Գա-
ցէք խաղաղութեամբ, տաքցէք ու կշտացէք. և
մարմինին պէտք եղած բաները անոնց չտաք,
17 ի՞նչ օգուտ է. Ասանկ ալ հաւատքը թէ որ հետը
18 գործ չունենայ՝ ըստ ինքեան մեռած է. Նաև
կրնայ մէկը ըսել թէ Դուն հաւատք ունիս, ես
ալ գործքեր ունիմ. դուն քու հաւատքդ ցու-
ցուր ինծի առանց գործքերու, ու ես քեզի ցու-
19 ցընեմ իմ հաւատքս իմ գործքերէս. Դուն կը
հաւատաս որ Աստուած մէկ է, աղէկ կ'ընես.
20 դեւերն ալ կը հաւատան և կը սարսափին. Բայց
կ'ուզե՞ս գիտնալ դուն, ով սնոտի մարդ, որ հա-
21 ւատքը առանց գործքերու մեռած է. Աբրա-

համ մեր հայրը գործքերով չարդարացա՞ւ, եր-
բոր իր որդին Իսահակը սեղանին վրայ հանեց ողջ
22 ընելու։ Կը տեսնե՞ս որ հաւատքը անոր գործքե-
րուն հետ մէկտեղ գործեց, ու ան գործքերով
23 հաւատքը կատարեալ եղաւ. Ու Գրքին խօսքը
կատարուեցաւ որ կ'ըսէ, Աբրահամ Աստուծոյ
հաւատաց, ու ան իրեն արդարութիւն սեպուե-
24 ցաւ. և ինքը Աստուծոյ բարեկամ ըսուեցաւ։ Կը
տեսնէ՞ք որ մարդս գործքերով կ'արդարանայ,
25 ու չէ թէ միայն հաւատքով, Նոյնպէս ալ Ռա-
խաբ պոռնիկը չէ՞ որ գործքերով արդարացաւ,
երբոր լրտեսները ներս առաւ, և ուրիշ ճամբա-
26 յով արձակեց զանոնք։ Քանզի ինչպէս որ մար-
մինը առանց հոգիի մեռած է, նոյնպէս ալ հա-
ւատքը առանց գործքերու մեռած է։

ԳԼ. Գ

1 Եղբայրներս, շատ վարդապետներ մի ըլլաք՝
գիտնալով որ աւելի մեծ դատաստան պիտի ըն-
2 դունինք. Ինչու որ ամէնքս ալ շատ յանցանք-
ներ կ'ընենք. թէ որ մէկը խօսքով յանցանք չը-
նէ՝ անիկա կատարեալ մարդ է, որ կարող է բո-
3 լոր մարմինն ալ սանձելու։ Տես որ ձիերուն բե-
րանը սանձ կը դնենք՝ որ անոնք մեզի հնազան-
դին, ու անոնց բոլոր մարմինը կը կառավարենք.
4 Ահա նաւերն ալ որչափ մեծ բաներ են, և սաս-
տիկ հովերէն կը քշուին, բայց ամենափոքր ղե-
կով մը կը կառավարուին՝ ղեկավարին կամքը որ
5 կողմը որ ուզէ։ Ասանկ ալ լեզուն մէկ պզտիկ
անդամ մըն է, ու մեծ բաներ կը խօսի. ահա
6 քիչ մը կրակը որչափ բան բոցի կու տայ։ Լեզուն
ալ կրակ մըն է՝ անիրաւութեան աշխարհք մը.
լեզուն մեր անդամներուն մէջ անանկ դրուած
է, որ բոլոր մարմինը կ'ապականէ, և բնութեան

շրջանը կը բռընկցընէ, ու ինքը գեհենէն կը
7 բռնկի։ Բոլոր գազաններուն ու թռչուններուն
և սողուններուն ու ծովու մէջ եղածներուն բնու-
թիւնը կը նուաճի՝ և նուաճեալ է մարդկային
8 բնութենէն։ Բայց լեզուն մարդոց մէկը չկրնար
նուաճել. անիկա անզուսպ չար է, ու մահաբեր
9 թունով լեցուն. Անով կ'օրհնենք զԱստուած ու
Հայրը, և անով կ'անիծենք մարդիկ՝ որոնք Աս-
10 տուծոյ նմանութեամբը ստեղծուած են։ Մի և
նոյն բերնէն կ'ելլեն օրհնութիւն ու անէծք. եղ-
11 բայրներս, պէտք չէ որ ասանկ ըլլայ։ Միթէ
աղբիւր մը մի և նոյն բերնէն անոյշ ու լեղի կը
12 բղխէ՞։ Միթէ կարելի՞ է, եղբայրներս, որ թզե-
նին ձիթապտուղ բերէ, կամ որթը՝ թուզ. նմա-
նապէս կարելի չէ որ մէկ աղբիւրէ մը աղի ու ա-
13 նոյշ ջուր ելլէ։ Ձեր մէջը իմաստուն ու խելացի
ո՞վ կայ. թող անիկա բարի վարմունքովը ցու-
ցընէ իր գործքերը իմաստութեան հեզութիւնով։
14 Հապա թէ որ դառն նախանձ և հակառակու-
թիւն ունենաք սրտերնուդ մէջ, մի պարծենաք
15 ու ճշմարտութիւնը սուտ հանէք։ Աս իմաստու-
թիւնը վերէն իջած չէ, հապա երկրաւոր, շնչա-
16 ւոր և դիւական է։ Քանզի ուր որ նախանձ ու
կռիւ կայ, հոն է անկարգութիւնը և ամէն չար
17 բաները։ Հապա վերին իմաստութիւնը նախ սուրբ
է, ետքը խաղաղարար, հեզ, հլու, ողորմութիւ-
նով ու բարի պտուղներով լեցուն, անկողմնասէր
18 ու անկեղծ։ Ու արդարութեան պտուղը խաղա-
ղութիւնով կը սերմանուի անոնց՝ որոնք խաղա-
ղութիւն կ'ընեն։

ԳԼ. Դ

1 Ուսկի՞ց են պատերազմները, և ուսկի՞ց կռիւներ
ձեր մէջը. չէ՞ որ ձեր ցանկութիւններէն՝ որ ձեր

2 անդամներուն մէջ կը պատերազմին։ Կը ցանկաք
ու չունիք, կը սպաննէք ու կը նախանձիք, և
չէք կրնար ձեր ուզածին հասնիլ. կը պատերազ-
միք ու կը կռուիք, բայց չունիք, ինչու որ չէք
3 խնդրեր. Կը խնդրէք ու չէք առներ, ինչու որ
չարաչար կը խնդրէք՝ որ ձեր ցանկութիւններուն
4 բանեցընէք։ Շնացողներ, չէ՞ք գիտեր որ աս աշ-
խարհիս սէրը Աստուծոյ դէմ թշնամութիւն է.
ուստի ով որ կ'ուզէ աշխարհի բարեկամ ըլլալ,
5 ինքզինքը Աստուծոյ թշնամի կ'ընէ։ Կամ թէ կը
կարծէք որ Գիրքը պարա՞պ տեղը *կ'ըսէ թէ
Նախանձի կը փափաքի մեր մէջը բնակող հոգին."
6 Սակայն աւելի շնորհք կու տայ. անոր համար
կ'ըսէ, Աստուած ամբարտաւաններուն հակառակ
կը կենայ, բայց խոնարհներուն շնորհք կու տայ։
7 Ուստի հնազանդեցէք Աստուծոյ. Սատանային
հակառակ կեցէք, և անիկա ձեզմէ պիտի փախչի։
8 Աստուծոյ մօտեցէք, ու անիկա ձեզի պիտի մօ-
տենայ. սրբեցէք ձեռքերնիդ, մեղաւորներ, և
9 մաքրեցէք սրտերնիդ, երկմիտներ. Տառապանք
քաշեցէք, սուգ ըրէք ու լացէք. ձեր ծիծաղը
սուգի դառնայ, ու ձեր ուրախութիւնը՝ տրտմու-
10 թեան։ Տէրոջը առջեւ խոնարհեցէք, ու ան
ձեզ պիտի բարձրացընէ։
11 Մէկզմէկ մի բամբասէք, եղբայրներ. ան որ իր
եղբայրը կը բամբասէ կամ իր եղբայրը կը դա-
տէ, օրէնքը կը բամբասէ և օրէնքը կը դատէ.
հապա թէ որ օրէնքը դատես, ալ դուն օրէնքը
12 կատարող չես՝ հապա դատաւոր։ Մէ՛յն մէկ Օ-
րէնսդիր [ու Դատաւոր] մը կայ, որ ինքը կարող
է փրկելու և կորսընցընելու. դուն ո՞վ ես որ
ուրիշը կը դատես։

*կամ կը խօսի. Նախանձի՞ կը փափաքի մեր մէջը
բնակող Հոգին

13 Հիմա մտիկ ըրէք դուք որ կ'ըսէք, Այսօր կամ
վաղը երթանք այս անուն քաղաքը, ու հոն տարի
մը կենանք, և առուտուր ընենք ու վաստը-
14 կինք. (Դուք որ վաղը չէք գիտեր. (15) Քանզի
ի՞նչ է ձեր կեանքը. յիրաւի շոգի մըն է, որ
քիչ մը ատեն կ'երեւնայ ու ետքը կ'ոչնչանայ.)
անոր տեղը ըսելու էիք, Թէ որ Տէրը կամենայ
16 ու ապրինք, աս կամ ան բանը ընենք։ Բայց հի-
մա ձեր ամբարտաւանութիւնովը կը պարծենաք.
բոլոր ասանկ պարծանքները չարութիւն են։
17 Ուստի ով որ բարին ընելը գիտնայ ու չընէ, ան
մեղք է անոր։

ԳԼ. Ե

1 Աղէ հիմա, հարուստներ, լացէք ու ողբացէք
ան թշուառութիւններուն համար՝ որ ձեր վրայ
2 պիտի գան։ Ձեր հարստութիւնը ապականած է,
ու ձեր հանդերձները՝ ցեցի կերակուր եղած։
3 Ձեր ոսկին ու արծաթը ժանգոտած է, և անոնց
ժանգը ձեզի դէմ վկայ պիտի ըլլայ, ու ձեր մար-
մինը պիտի ուտէ կրակի պէս. վերջի օրերուն հա-
4 մար գանձ դիզեցիք։ Ահա ձեր արտերը հնձող
բանուորներուն վարձքը որ ետ պահեցիք՝ կ'ա-
ղաղակէ, ու հնձողներուն բողոքը զօրութեանց
5 Տէրոջը ականջներուն հասաւ։ Երկրի վրայ փափ-
կութեամբ և հեշտութեամբ ապրեցաք, սրտեր-
նիդ սնուցիք՝ որպէս թէ մորթուելու օրուան
6 համար։ Դատապարտեցիք ու սպաննեցիք ար-
դարը, որ ձեզի հակառակ չկենար։
7 Ուստի համբերող եղէք, եղբայրներ, մինչև
Տէրոջը գալուստը. ահա երկրագործը կը սպասէ
երկրի պատուական պտուղին՝ անոր համար համ-
բերելով, մինչև որ առջի ու վերջի անձրևը առ-
8 նէ։ Դուք ալ համբերութիւն ըրէք, սիրտերնիդ

հաստատ բռնեցէք. ինչու որ Տէրոջը գալուստը
9 մօտ է։ Իրարու դէմ մի հառաչէք, եղբայրներ,
որ չդատապարտուիք. ահա Դատաւորը դրանը
10 քովը կայներ է։ Եղբայրներս, չարչարանքներու
և համբերութեան օրինակ առէք մարգարէները,
11 որոնք Տէրոջը անունովը խօսեցան։ Ահա համբե-
րողներուն երանի կու տանք. Յոբին համբերու-
թիւնը լսեցիք դուք, և Տէրոջը տուր ըրած վախ-
ճանը տեսաք, որ Տէրը բազմագութ ու ողոր-
մած է։
12 Արդ ամէն բանէն առաջ, եղբայրներս, երդում
չընէք, ոչ երկնից վրայ, ոչ երկրի վրայ, ոչ ալ
մէկ ուրիշ երդում մը. հապա ձեր այոն այո ըլ-
լայ, և ոչը՝ ոչ. որ չըլլայ թէ դատապարտու-
թեան տակ իյնաք։
13 Թէ որ ձեզմէ մէկը նեղութեան մէջ է՝ աղօթք
թող ընէ. թէ որ մէկը ուրախ է՝ սաղմոս թող
14 երգէ։ Թէ որ ձեզմէ մէկը հիւանդ է, եկեղեցիին
երէցները թող կանչէ, ու անոր վրայ աղօթք
թող ընեն, ու Տէրոջը անունովը եղով օծեն զա-
15 նիկա. Եւ հաւատքով եղած աղօթքը պիտի փրկէ
հիւանդը, ու Տէրը զանիկա ոտք պիտի հանէ. և
թէ որ մեղք ալ գործեր է, պիտի ներուի անոր։
16 Ձեր յանցանքները իրարու խոստովանեցէք, ու
աղօթք ըրէք իրարու համար՝ որ բժշկուիք. ար-
դարին ջերմեռանդ աղօթքը շատ ազդեցութիւն
17 ունի։ Եղիա մեզի պէս կրից ենթակայ մարդ մըն
էր, ու աղօթք ըրաւ որ անձրև չգայ, և երեք
18 տարի ու վեց ամիս երկրի վրայ անձրև չեկաւ։ Եւ
նորէն աղօթք ըրաւ, ու երկինքը անձրև տուաւ
և երկիրը իր պտուղը բուսցուց։
19 Եղբայրներ, թէ որ ձեզմէ մէկը ճշմարտութե-
20 նէն մոլորի, ու մէկը զանիկա դարձի բերէ, Գիտ-
ցած ըլլայ թէ ան որ մեղաւորը իր մոլորութեան
ճամբայէն կը դարձընէ, հոգի մը մահուանէ կ'ա-
զատէ, ու մեղաց բազմութիւնը կը ծածկէ։

ԱՌԱՋԻՆ
ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹՈՒՂԹ
ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

ԳԼՈՒԽ Ա

1 Պետրոս՝ Յիսուս Քրիստոսի առաքեալ, օտարա-
կաններուդ որ ցրուած էք Պոնտոսի, Գաղատիա-
յի, Կապադովկիայի, Ասիայի ու Բիւթանիայի
2 մէջ, ընտրուած՝ Հօր Աստուծոյ կանխագիտու-
թեանը համեմատ՝ Հոգիին սրբացընելովը, հնա-
զանդութեան և Յիսուս Քրիստոսի արեանը սրս-
կուելուն համար, շնորհք և խաղաղութիւն ձեր
վրայ շատնայ։
3 Օրհնեալ է Աստուած ու մեր Տէր Յիսուս Քրիս-
տոսի Հայրը, որ իր առատ ողորմութեանը հա-
մեմատ մեզ նորէն ծնաւ կենդանի յոյսի համար՝
Յիսուս Քրիստոսի մեռելներէն յարութիւն առ-
4 նելովը, Անեղծ ու անարատ և անթառամ ժա-
ռանգութեանը համար՝ որ երկինքը պահուած է
5 ձեզի, Որ Աստուծոյ զօրութեամբը պահպանուած
էք հաւատքով ան փրկութեանը համար՝ որ պատ-
6 րաստուած է վերջի ժամանակը յայտնուելու. Որ
անով կ'ուրախանաք, թէ և հիմա, ինչպէս որ
հարկը կը պահանջէ, քիչ մը ատեն տրտմած էք
7 զանազան փորձութիւններով. Որպէս զի ձեր

հաւատքին փորձառութիւնը՝ (որ կորստական
ոսկիէն աւելի պատուական է, թէև անիկա
կրակով կը փորձուի,) գտնուի գովութիւնով ու
պատուով և փառքով Յիսուս Քրիստոսի յայտ-
8 նուելու ատենը. Ան որ դուք չտեսած՝ կը սիրէք,
որ անիկա հիմա չէք տեսներ, բայց կը հաւատաք,
և ուրախ էք անպատմելի ու փառաւորեալ խըն-
9 դութիւնով. Ձեր հաւատքին վախճանը ընդու-
10 նելով, այսինքն հոգիներնուդ փրկութիւնը։ Որ
ան փրկութեանը համար փնտռեցին ու քննեցին
մարգարէները՝ որոնք մարգարէացան ձեզի ըլ-
11 լալու շնորհքին համար. Ու կը քննէին թէ երբ
կամ ինչոր ատեն կ՚իմացընէր իրենց մէջը եղած
Քրիստոսի Հոգին՝ որ առաջ կը վկայէր Քրիստոսի
չարչարուիլը, ու անկէ ետև փառաւորուիլը։
12 Որոնց յայտնուեցաւ, որ չէ թէ իրենց՝ հապա
մեզի մատակարարեցին ան բաները, որոնք հիմա
ձեզի պատմուեցան անոնց ձեռքովը՝ որ աւետա-
րանը քարոզեցին ձեզի Հոգւով Սրբով որ եր-
կինքէն խրկուեցաւ. որ ան բաներուն՝ հրեշտակ-
ները կը ցանկան ակնկառոյց նայելու։
13 Ուստի ձեր մտքերուն մէջքը գօտեւորած՝ ար-
թուն կեցած, կատարելապէս յուսացէք ան ձեր
վրայ հասնելու շնորհացը՝ Յիսուս Քրիստոսի
14 յայտնուելու ատենը, Հնազանդ զաւակներու
պէս, չէ թէ ձեր տգիտութեան ատենին առջի
15 ցանկութիւններովը վարուելով. Հապա ձեզ կան-
չող Սուրբին պէս՝ դուք ալ սուրբ եղէք ձեր բո-
16 լոր վարմունքներուն մէջ. Ինչու որ գրուած է
17 թէ Սուրբ եղէք, քանզի ես սուրբ եմ։ Ու թէ
որ Հայր կը կոչէք անիկա որ առանց աչառու-
թեան կը դատէ ամէն մէկուն գործքին համե-
մատ, ուրեմն ձեր պանդխտութեան ժամանակը
18 վախով անցուցէք, Գիտնալով որ դուք չէ թէ
ապականացու արծաթով կամ ոսկիով փրկուե-

ցաք ձեր հայրերէն աւանդուած ունայն ճամբա-
19 ներէն, Հապա Քրիստոսի պատուական արիւնովը՝
20 որպէս թէ անբիծ ու անարատ գառի մը. Որ ա-
ռաջուց ճանչցուած էր աշխարհիս սկիզբէն ա-
ռաջ, ու ետքի ատենները յայտնուեցաւ ձեզի
21 համար, Որ անոր միջոցովը Աստուծոյ հաւատա-
ցիք, որ զանիկա մեռելներէն յարուց, և անոր
փառաւորութիւն տուաւ. որ ձեր հաւատքը ու
22 յոյսը Աստուծոյ վրայ ըլլայ։ Ձեր անձերը մաք-
րելով Հոգիին միջոցովը՝ ճշմարտութեանը հնա-
զանդելով, եղբայրսիրութեան մէջ անկեղծ ըլլա-
23 լով, սուրբ սրտով մէկզմէկ պինդ սիրեցէք, Նո-
րէն ծնած ըլլալով՝ չէ թէ ապականացու սերմէն,
հապա անապականացուէն Աստուծոյ կենդանի
24 ու յաւիտենական խօսքովը։ Վասն զի ամէն մար-
մին խոտի պէս է, և մարդուն բոլոր փառաւո-
րութիւնը՝ խոտի ծաղիկի պէս. խոտը կը չորնայ
25 ու անոր ծաղիկը կը թափթըփի. Բայց Տէրոջը
խօսքը յաւիտեան կը մնայ, այսինքն է ան խօս-
քը որ աւետարանով ձեզի քարոզուեցաւ։

ԳԼ. Բ

1 Ուրեմն մէկդի ձգելով ամէն չարութիւնը ու ա-
մէն խաբէութիւնը ու կեղծաւորութիւնները, և
2 նախանձը ու ամէն չարախօսութիւնը, Նորածին
մանկանց պէս բանական ու անխարդախ կաթին
փափաքեցէք, որ անով մեծնաք [մինչև փրկու-
3 թիւնը], Թէ որ Տէրոջը քաղցր ըլլալուն համը ա-
4 ռիք. Որուն մօտենալով ան կենդանի վէմին, որ
թէպէտ մարդոցմէ անարգուած է, բայց Աստուծ-
5 մէ ընտրուած ու պատուական է, Դուք ալ կեն-
դանի քարերու պէս շինուիք հոգեւոր տաճար
մը, սուրբ քահանայութիւն մը, Յիսուս Քրիստո-
սի ձեռքովը Աստուծոյ հաճելի հոգեւոր պատա-

6 րագնէր մատուցանելու։ Որովհետեւ գիրքին մէջն
ալ կայ թէ Ահա Սիօնի մէջ ընտիր, պատուական
անկեան վէմ մը կը դնեմ. և ով որ անոր հա-
7 ւատայ՝ բնաւ պիտի չամչնայ։ Ուստի ձեզի հա-
ւատացեալներուդ պատուական է ան, բայց ան-
հաւատներուն՝ այն քարը որ շինողները անարգե-
8 ցին, անիկա անկիւնին գլուխը եղաւ. Եւ գլոր-
ման վէմ ու գայթակղութեան քար անոնց՝ որ
չհաւատալով խօսքին կը գայթակղին, որուն
9 սահմանուած ալ էին։ Բայց դուք ընտիր ցեղ մըն
էք, թագաւորական քահանայութիւն, սուրբ
ազգ, սեպհական ժողովուրդ մը, որ քարոզէք
անոր առաքինութիւնները, որ ձեզ խաւարէն
10 իր սքանչելի լոյսին կանչեց. Որ առեն մը ժողո-
վուրդ չէիք, բայց հիմա Աստուծոյ ժողովուրդն
էք. որ առանց ողորմութեան էիք, բայց հիմա
ողորմութիւն գտաք։
11 Սիրելիներ, կ՚աղաչեմ՝ պանդուխտներու և օ-
տարականներու պէս մէկդի կեցէք մարմնաւոր
ցանկութիւններէն, որ հոգիի դէմ կը պատերազ-
12 մին, Ձեր վարմունքը հեթանոսաց մէջ բարի պա-
հելով, որ ինչ բանով որ ձեզ չարագործներու
պէս կը բամբասեն, ձեր բարի գործքերը տես-
նելով՝ փառաւորեն զԱստուած այցելութեան
13 օրը։ Ուստի հնազանդ եղէք ամէն մարդկային
սահմանադրութեան՝ Տէրոջը համար, թէ թագա-
14 ւորին՝ վերնագոյն մէկու մը պէս, Թէ կուսա-
կալներուն՝ անոր կողմէն խրկուածներու պէս՝
չարագործները պատժելու և բարեգործները գո-
15 վելու համար։ Ինչու որ Աստուծոյ կամքը այանկ
է, որ բարեգործ ըլլալով՝ անխելք մարդոց տգի-
16 տութիւնը պապանձեցընէք. Ազատներու պէս
ըլլալով, և ոչ թէ ձեր ազատութիւնը չարու-
թեան ծածկոցի մը պէս գործածելով, հապա
17 Աստուծոյ ծառաներու պէս։ Ամէնը պատուեցէք.

եղբայրութիւնը սիրեցէք. Աստուծմէ վախցէք.
թագաւորը պատուեցէք։
18 Ծառաները ամէն բանի մէջ վախով հնազանդ
ըլլան իրենց տէրերուն, ոչ թէ միայն բարերար-
ներուն ու հեզերուն, հապա ժանտաբարոներուն
19 ալ. Քանզի աս շնորհք մըն է, թէ որ մէկը տա-
Աստուած ունեցած խղճմտանքովը անիրաւ տեղը
20 կրած վիշտերուն համբերելու ըլլայ։ Վասն զի ի՞նչ
գովութիւն կ՚ըլլայ ձեզի, թէ որ մեղք գործելով
ծեծուիք ու համբերէք. հապա թէ որ բարիք
գործելով չարչարուիք ու համբերէք, անիկա
21 Աստուծոյ քովը շնորհք մըն է. Քանզի դուք աս
բանիս համար կանչուեցաք, որ Քրիստոս ալ ձեզի
համար չարչարուեցաւ, ու ձեզի օրինակ թողուց՝
22 որ իր շաւիղներուն հետեւիք. Որ ինքը մեղք մը
չգործեց, ու իր բերնին մէջ նենգութիւն մը
23 չգտնուեցաւ. Որ կը նախատուէր, և փոխարէնը
չէր նախատեր. կը չարչարուէր, ու սպառնալիք
չէր ըներ. հապա ինքզինքը արդարութեամբ դա-
24 տողին կը յանձնէր. Որ մեր մեղքերը իր մար-
մնովը խաչափայտին վրայ վերցուց, որ մենք
մեղքերէն ազատինք, ու արդարութեան համար
ապրինք. որուն վէրքերովը դուք բժշկուեցաք։
25 Ինչու որ մոլորեալ ոչխարներու պէս էիք, բայց
հիմա ձեր հոգիներուն Հովիւին ու Տեսուչին դար-
ձաք։

ԳԼ. Գ

1 Նմանապէս կնիկները հնազանդ ըլլան իրենց է-
րիկներուն, որ եթէ ոմանք խօսքին հնազանդ
չըլլան ալ, առանց խօսքի շահուին կնիկներուն
2 վարմունքովը, Տեսնելով ձեր երկիւղած պար-
3 կեշտ վարքը։ Որ իրենց զարդարանքը չըլլայ
դրսէն մազերու հիւսուածքներով և ոսկիներու

զարդերով կամ ոսկեղէն հանդերձներ հագնելով.
4 Հապա սրտին ծածուկ մարդը՝ անեղծութիւնով
հեզ ու հանդարտ հոգիին զարդը թող ըլլայ, որ
5 Աստուծոյ առջեւ խիստ պատուական է. Ինչու
որ ատենօք սուրբ կիները՝ որ իրենց յոյսը Աս-
տուծոյ վրայ դրած էին, անձերնին այսպէս կը
զարդարէին՝ իրենց էրիկներուն հնազանդ ըլլա-
6 լով. Ինչպէս որ Սառա հնազանդ էր Աբրահա-
մին, և զանիկա տէր կը կոչէր. որ դուք բարե-
գործ ըլլալով ու մէկ երկիւղէ մը չվախնալով՝
անոր զաւակները կ'ըլլաք։
7 Նմանապէս էրիկները խոհեմութիւնով անոնց
հետ բնակին, տկար անօթի պէս պատիւ տալով
կիներուն՝ իբրեւ կենաց շնորհքին ժառանգա-
կիցներ, որ ձեր աղօթքներուն արգելք չըլլայ։
8 Վերջապէս ամէնքնիդ մէկ միտքի վրայ ըլլաք,
կարեկից, եղբայրասէր, ողորմած ու *քաղցրա-
9 բարոյ. Չըլլայ որ չարութեան փոխարէն չարու-
թիւն հատուցանէք, կամ նախատանաց փոխա-
րէն՝ նախատինք. այլ ընդհակառակն օրհնեցէք,
գիտնալով որ աս բանիս համար կանչուեցաք, որ
10 օրհնութիւն ժառանգէք։ Վասն զի ան որ կ'ուզէ
կեանքը սիրել ու բարի օրեր տեսնել, իր լեզուն
թող դադրեցընէ չարութենէն, ու իր շրթունք-
11 ները՝ նենգութիւն խօսելէն. Չարութենէ ետ
քաշուի ու բարութիւն ընէ, խաղաղութիւն
12 փնտռէ և անոր ետեւէն երթայ։ Ինչու որ Տէրոջը
աչքերը արդարներուն վրայ են, ու իր ականջ-
ները՝ անոնց աղօթքին. բայց Տէրոջը երեսը չա-
13 րագործներուն վրայ է. Եւ ո՞վ ձեզի չարիք մը
պիտի հասցընէ՝ թէ որ դուք բարիին հետեւող
14 ըլլաք. Բայց թէ որ արդարութեան համար չար-
չարուիք ա՛լ երանելի էք. և անոնց ահէն մի

*Ոմանք խոնարհ

15 վախնաք ու մի՛ խռովիք. Հապա Տէր Աստուածը
սրտերնուդ մէջ սուրբ պահեցէք. և միշտ պատ-
րաստ եղէք հեզութեամբ ու երկիւղածութեամբ
պատասխան տալու ամենուն որ ձեր ունեցած
16 յոյսին պատճառը ձեզի կը հարցընեն. Եւ բարի
խղճմտանք ունենաք, որ ինչ բանով որ ձեզ կը
բամբասեն իբրեւ չարագործներ, ամօթով մնան
անոնք՝ որ Քրիստոսով եղած ձեր բարի վար-
17 մունքը կը պախարակեն. Ինչու որ աւելի աղէկ է
բարեգործութիւն ընելով չարչարուիլ՝ թէ որ Աս-
տուծոյ կամքը ան ըլլայ, քան թէ չարագործու-
18 թիւն ընելով. Վասն զի Քրիստոս ալ մեղքի հա-
մար մէկ անգամ չարչարուեցաւ, Արդարը ան-
արդարներուն վրայ, որ մեզ Աստուծոյ մօտե-
ցընէ. որ թէպէտ մեռաւ մարմինով, բայց կեն-
19 դանի եղաւ հոգիով. Որով բանտի մէջ եղած
20 հոգիներուն ալ գնաց ու քարոզեց. Որոնք ատեն
մը ապստամբ էին, երբոր Աստուծոյ երկայն-
մտութիւնը կը համբերէր անոնց Նոյի օրերը՝ երբ-
որ տապանը կը շինուէր, որուն մէջը քիչ ան-
21 ձինք՝ այսինքն ութը հոգի ջուրէն ապրեցան. Որ
մեզ ալ ան օրինակին պէս մկրտութիւնը հիմա
կ'ապրեցընէ, (չէ թէ մարմինին աղտը մէկդի
ձգելը, հապա բարի խղճմտանքին վկայութիւնը
առ Աստուած,) Յիսուս Քրիստոսի յարութիւ-
22 նովը. Որ անիկա երկինք գացած՝ Աստուծոյ աջ
կողմն է՝ հրեշտակները ու իշխանութիւնները և
զօրութիւնները իրեն հնազանդելով։

ԳԼ. Դ

1 Ուստի Քրիստոս որ մեզի համար չարչարուեցաւ
մարմինով, դուք ալ նոյն միտքով զինուորեցէք.
վասն զի ան որ մարմինով չարչարուեցաւ, մեղ-
2 քէն դադարած է. Որ ալ չէ թէ մարդոց ցան-

կութիւններուն պէս՝ հապա Աստուծոյ կամքին
3 պէս ապրիք մարմնի մէջ մնացած ատենը։ Ին-
չու որ հերիք է մեզի կենաց անցեալ ժամանա-
կը, որուն մէջ հեթանոսներուն կամքը կատա-
րեցինք, ու գիճութիւններով, ցանկութիւննե-
րով, գինեմոլութիւններով, անառակութիւննե-
րով, արբեցութիւններով ու անօրէն կռապաշ-
4 տութիւններով վարուեցանք։ Ու աս բանիս կը
զարմանան՝ որ դուք նոյն չափազանց անառա-
կութեան մէջ անոնց հետ չէք վազեր, ու հայ-
5 հոյութիւն կ՚ընեն. Որոնք պատասխան պիտի
տան անոր՝ որ պատրաստ է դատելու կենդանի-
6 ները ու մեռելները։ Քանզի ատոր համար մե-
ռելներուն ալ աւետարանը քարոզուեցաւ, որ
դատուին մարդոց կողմանէ մարմինով, ու կեն-
դանի ըլլան Աստուծոյ կողմանէ հոգիով։
7 Սակայն ամէն բանին վախճանը մօտեցեր է.
ուստի զգաստ եղէք ու աղօթքի մէջ արթուն
8 կեցէք։ Եւ ամէն բանէն առաջ իրարու հետ սըր-
տանց սէր ունեցէք. ինչու որ սէրը մեղաց բազ-
9 մութիւնը կը ծածկէ։ Իրարու հիւրասիրութիւն
10 ցուցուցէք առանց տրտունջ ընելու։ Ամէն մէկը
ինչ տեսակ շնորհք որ առաւ, անիկա իրարու
մատակարարեցէք Աստուծոյ զանազան շնորհացը
11 բարի տնտեսներուն պէս։ Թէ որ մէկը խօսի,
Աստուծոյ պատգամներուն պէս թող խօսի. Թէ որ
մէկը մատակարարութիւն ընէ, որպէս թէ Աս-
տուծոյ շնորհած զօրութենէն թող ընէ, որ ամէն
բանի մէջ Աստուած փառաւորուի Յիսուս Քրիս-
տոսի ձեռքովը. որուն փառք և զօրութիւն յա-
ւիտեանս յաւիտենից։ Ամէն։
12 Սիրելիներ, օտար բան մի սեպէք ան նեղու-
թեան բոցը, որ ձեզ փորձելու համար կ՚ըլլայ,
որպէս թէ օտար բան մը ձեզի հանդիպած է.
13 Հապա ուրախ եղէք՝ քանի որ Քրիստոսի չարչա-

րանքներուն հաղորդ եղած էք, որ անոր փառ-
քին յայտնուելու ատենն ալ ցնծութեամբ ու-
14 րախանաք։ Թէ որ Քրիստոսի անուանը համար
նախատուիք, երանելի էք. ինչու որ փառաց [և
զօրութեան] և Աստուծոյ Հոգին ձեր վրայ հանգ-
չած է. *յիրաւի անոնց կողմանէ կը հայհոյուի ա-
15 նիկա, բայց ձեր կողմանէ կը փառաւորուի* Չըլ-
լայ որ ձեզմէ մէկը չարչարուի իբրև մարդա-
պան, կամ գող, կամ չարագործ, կամ իբրև
16 ուրիշին բանին խառնուող. Բայց թէ որ չարչար-
ուի իբրև քրիստոնեայ՝ թող չամչնայ, հապա աս
17 մասին թող Աստուծոյ փառք տայ։ Քանզի ժա-
մանակ է որ դատաստանը Աստուծոյ տունէն
սկսի. և թէ որ առաջ մեզմէ կը սկսի, հապա ա-
նոնց վերջը ի՞նչ պիտի ըլլայ՝ որոնք Աստուծոյ
18 աւետարանին չեն հնազանդիր։ Եւ թէ որ ար-
դարը դժուարաւ կը փրկուի, հապա ամբարիշտը
19 ու մեղաւորը ո՞ւր պիտի գտնուի։ Ուստի անոնք,
որ Աստուծոյ կամացը համեմատ կը չարչարուին,
բարիք գործելով իրենց հոգիները թող անոր
յանձնեն՝ իբրև հաւատարիմ Ստեղծողին։

ԳԼ. Ե

1 Ձեր մէջը եղող երէցներուն կ՚աղաչեմ՝ ես ալ ա-
նոնց պէս երէց ըլլալով, ու Քրիստոսի չարչա-
րանացը վկայ, և յայտնուելու հանդերձեալ փառ-
2 քին մասնակից. Աստուծոյ հօտը որ ձեր մէջն է՝
արածեցէք, վերակացու ըլլալով չէ թէ ակամայ՝
հապա կամաւ, չէ թէ անարգ շահախնդրութեամբ՝
3 հապա յօժարութեամբ, Չէ թէ վիճակներուն
4 վրայ տիրելով՝ հապա հօտին օրինակ ըլլալով. Եւ
Հովուապետին երևցած ատենը փառաց անթա-
ռամ պսակը պիտի ընդունիք։

---

*Ոմանք չունին

5 Նմանապէս դուք, երիտասարդներ, հնազանդ-
եղէք ծերերուն. և ամէնքդ իրարու հնազանդ-
ըլլալով՝ խոնարհութիւն հագէք. ինչու որ Աստ-
ուած ամբարտաւաններուն հակառակ կը կենայ,
6 բայց խոնարհներուն շնորհք կու տայ։ Ուրեմն
Աստուծոյ հզօր ձեռքին տակը խոնարհեցէք, որ
7 ձեզ ժամանակին բարձրացընէ։ Ձեր ամէն հոգը
անոր ձգեցէք, վասն զի անիկա ձեզի համար կը
հոգայ։
8 Արթուն կեցէք, հսկեցէք, ինչու որ ձեր հա-
կառակորդը Սատանան մռնչող առիւծի պէս կը
9 պտըտի, ու կը փնտռէ թէ ով կլլէ։ Որուն դէմ
կեցէք հաւատքով հաստատուած, գիտնալով որ
ձեր եղբայրներն ալ աշխարհի մէջ նոյն չարչա-
րանքները կը կրեն։
10 Եւ բոլոր շնորհաց Աստուածը՝ որ մեզ իր յա-
ւիտենական փառքին կանչեց Քրիստոս Յիսուսի
ձեռքովը, քիչ մը ատեն նեղութիւն կրելնէդ-
ետքը, ինքը ձեզ կատարեալ ընէ, հաստատէ,
11 զօրացընէ ու հիմնէ։ Իրեն փառք և զօրութիւն
յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։
12 Սիղուանոս հաւատարիմ եղբօրը ձեռքովը՝
(ինչպէս ես կը կարծեմ,) համառօտ մը ձեզի
գրեցի, յորդորելով ու վկայելով թէ աս է Աս-
տուծոյ ճշմարիտ շնորհքը, որուն մէջը հաստատ
13 կեցեր էք։ Բարեւ կ'ընէ ձեզի Բաբելոնի մէջ եղած
էկեղեցին որ ձեզի հետ ընտրուած է, ու իմ որդիս
14 Մարկոս ալ։ Բարեւ տուէք իրարու սիրոյ համ-
բուրով։ Խաղաղութիւն ձեր ամենուն հետ որ
Քրիստոս Յիսուսի մէջ էք։ Ամէն։

ԵՐԿՐՈՐԴ

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹՈՒՂԹ

ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

ԳԼՈՒԽ Ա

1 Շմաւոն Պետրոս՝ Յիսուս Քրիստոսի ծառայ և
առաքեալ, ձեզի՝ որ մեր հետը նոյն պատուական
հաւատքին հասաք մեր Աստուծոյն ու փրկչին
2 Յիսուս Քրիստոսի արդարութիւնովը։ Շնորհք և
խաղաղութիւն ձեր վրայ աւելնայ Աստուծոյ ու
մեր Տէրոջը Յիսուսի գիտութիւնովը։
3 Ինչպէս որ իր աստուածային զօրութիւնը կե-
նաց և աստուածպաշտութեան վերաբերեալ ա-
մէն բաները մեզի տուաւ անոր գիտութիւնովը՝
որ մեզ փառքով ու առաքինութիւնով հրաւի-
4 րեց։ Որոնցմով ամենամեծ ու պատուական
խոստմունքներ տրուած են մեզի, որպէս զի ա-
սոնցմով աստուածային բնութեանը հաղորդ ըլ-
լաք՝ աշխարհի մէջ ցանկութենէ յառաջ եկած
5 ապականութենէն փախչելով։ Եւ աս բանիս հա-
մար բոլոր ջանքերնիդ դրած՝ ձեր հաւատքին
վրայ առաքինութիւն աւելցուցէք, ու առաքի-
6 նութեան վրայ գիտութիւն, Եւ գիտութեան
վրայ ժուժկալութիւն, ու ժուժկալութեան վրայ
համբերութիւն, և համբերութեան վրայ աստ-

7 ուածպաշտութիւն, Ու աստուածպաշտութեան
վրայ եղբայրսիրութիւն, ու եղբայրսիրութեան
8 վրայ սէր։ Վասն զի քանի որ աս բաները ձեր
վրայ կը գտնուին ու կ'աճին, պարապ ու ան-
պտուղ չեն ըներ ձեզ մեր Տէր Յիսուս Քրիստոսը
9 ճանչնալուն մէջ։ Բայց որուն քով որ աս բաներս
չկայ, անիկա կոյր է ու կարճատես, որ մոռցեր
10 է իր առջի մեղքերէն մաքրուիլը։ Ասոր համար,
եղբայրներ, աւելի ջանք ըրէք որ ձեր կոչումը
ու ընտրութիւնը հաստատէք, ինչու որ աս ընե-
11 լով՝ բնաւ պիտի չվրիպիք։ Քանզի այսպէս ձեզի
առատօրէն պիտի շնորհուի մեր Տէր ու Փրկիչ
Յիսուս Քրիստոսի յաւիտենական թագաւորու-
թիւնը մտնելը։
12 Ուստի ես միշտ աս բաները մտքերնիդ ձգելու
վրայով զանցառու պիտի չըլլամ, թէև գիտէք
և հաստատուած էք ներկայ ճշմարտութեանս
13 վրայ։ Եւ իրաւունք կը սեպեմ, թէ քանի որ
աս *մարմինիս մէջն եմ՝ մտքերնիդ ձգելով ձեզ
14 արթընցընեմ։ Քանզի գիտեմ որ ես շուտով
աս իմ մարմինս պիտի մերկանամ, ինչպէս որ
15 մեր Տէր Յիսուս Քրիստոսը յայտնեց ինծի։ Ուս-
տի պիտի ջանամ որ իմ աշխարհէ ելլելէս ետքն
16 ալ միշտ կարող ըլլաք աս բաները յիշելու։ Ինչու
որ չէ թէ մենք վարպետութեամբ շինուած ա-
ռասպելներու ետևէ երթալով՝ մեր Տէր Յիսուս
Քրիստոսի զօրութիւնը ու գալուստը ձեզի ցու-
ցուցինք, հապա անոր մեծափառութեանը ակա-
17 նատես ըլլալով։ Վասն զի ինքը Հօր Աստուծմէ
փառք ու պատիւ առաւ, ան մեծվայելչութեան
փառքէն անանկ ձայն մը գալով, թէ Աստիկա է
18 իմ սիրելի Որդիս, որուն հաւներ եմ։ Եւ աս
երկինքէն եկած ձայնը մենք լսեցինք, որ անոր

*Յուն. վրանիս

19 հետ էինք սուրբ լեռանը վրայ։ Եւ մարգարէա-
կան խօսքն ալ ունինք՝ որ աւելի հաստատուն
է. ու աղէկ կ'ընէք՝ թէ որ անոր մտադրութիւն
ընէք, որպէս թէ մութ տեղը լոյս տուող ճրագի
մը, մինչև որ ցորեկը լուսնայ ու արուսեակը
20 սրտերնուդ մէջը ծագի։ Բայց առաջ աս գիտնաք,
որ գրոց ամէն մարգարէութիւն իր յատուկ մեկ-
21 նութիւնը չունի։ Ինչու որ մարգարէութիւն մը
երբեք մարդոց կամքին պէս չըսուեցաւ, հապա
Աստուծոյ սուրբ մարդիկը Սուրբ Հոգիէն շար-
ժուած՝ խօսեցան։

ԳԼ. Բ

1 Բայց սուտ մարգարէներ ալ կ'ըլլային ժողովուր-
դին մէջ, ինչպէս որ ձեր մէջն ալ սուտ վարդա-
պետներ պիտի ըլլան, որ գաղտուկ պիտի մտցընեն
կորուսիչ հերձուածողութիւններ, ու զիրենք
ծախու առնող Տէրը ուրանալով՝ իրենց վրայ
2 պիտի բերեն արագահաս կորուստը։ Եւ շատերը
անոնց *կորստական ընթացքը՝ ետևէն պիտի եր-
թան, որոնց համար ճշմարտութեան ճամբան
3 պիտի հայհոյուի։ Եւ ագահութիւնով՝ խորաման-
կութեամբ հնարուած խօսքերով ձեզ վաճառա-
շահութեան պիտի գործածեն. որոնց դատապար-
տութիւնը շատոնցմէ պատրաստ ըլլալով չուշա-
նար, ու անոնց կորուստը չմրափեր։
4 Վասն զի թէ որ Աստուած մեղք գործող հրեշ-
տակներուն չխնայեց, հապա խաւարի կապերով
տարտարոսը ձգած՝ դատաստանի պահել տուաւ.
5 Ու առջի աշխարհին ալ չխնայեց. միայն թէ Նոյ
ութերորդ անձը՝ արդարութեան քարոզիչը պա-
հեց, երբոր ջրհեղեղը ամբարիշտներուն աշխար-

*Ոմանք. անառակութեանցը

6 հին վրայ բերաւ. Եւ Սոդոմի ու Գոմորի քաղաք-
ները մոխիր դարձնելով ու կործանելով դա-
տապարտեց, ետքէն ամբարշտութիւն ընելու
7 մարդոց օրինակ ընելով զանոնք. Եւ ազատեց ար-
դար Ղովտը՝ որ անօրէններուն անառակ վար-
8 մունքէն ձանձրացեր էր. (Ինչու որ այն արդարը
անոնց մէջը կենալով՝ աչքովը տեսնելով ու ա-
կանջովը լսելով, օրէ օր իր արդար հոգին կը
9 տանջէր անոնց անօրէն վարմունքովը.) Տէրը գի-
տէ բարեպաշտները փորձութենէ ազատելը, և
անիրաւները տանջանքի համար դատաստանի օր-
ուան պահելը.
10 Մանաւանդ անոնք որ պղծալից ցանկութեամբ
մարմնի ետևէ կ'երթան, և տէրութիւնը կ'անար-
գեն, ինքնահաւան ու յանդուգն են, չեն վախ-
11 նար փառաւորներուն դէմ հայհոյելու. Երբոր
հրեշտակները՝ որ անոնցմէ շատ մեծ են զօրու-
թիւնով ու կարողութիւնով, Տէրոջը առջևը
հայհոյութեամբ դատապարտութիւն չեն բերեր
12 անոնց վրայ. Բայց ասոնք անբան անասուններու
պէս՝ (որ բնականաբար որսի ու ապականութեան
համար եղած են,) չգիտցած բաներնուն դէմ կը
հայհոյեն, և իրենց ապականութիւնովը պիտի ա-
13 պականին, Անիրաւութեան վարձքը ընդունելով.
որ ցորեկուան մէջ եղած զեխութիւնը զուար-
ճութիւն կը սեպեն. արատ ու բիծ են, իրենց
խաբէութիւններովը զուարճանալով՝ ձեզի հետ
14 կերուխումի նստած ատեննին. Շնութեամբ լե-
ցուն աչքեր ունին, որ մեղքէ չեն դադարիր. ան-
հաստատ հոգիները կը խաբեն. ագահութեան
սովրած սիրտեր ունին. անիծեալ զաւակներ են.
15 Շիտակ ճամբան ձգելով մոլորեցան՝ Բէովրեան
Բաղաամին ճամբուն հետևելով, որ անիրաւու-
16 թեան վարձքը սիրեց. Բայց իր անօրէնութեանը
յանդիմանութիւնը առաւ. անխօս էշը մարդկա-

յին ձայնով խօսելով՝ մարգարէին յիմարութիւնը
17 արգիլեց. Ասոնք ջուր չունեցող աղբիւրներ են,
ու փոթորիկէ քշուած մէգեր, որոնց համար
18 թանձր խաւարը պահուած է յաւիտեան: Քանզի
ունայնութեան հպարտ խօսքեր ընելով՝ գիճու-
թիւններով, մարմնոյ ցանկութիւններով կը խա-
բեն զանոնք որ քիչ մը առաջ փախեր էին ա-
19 նոնցմէ՝ որ մոլորութեան մէջ կը պտըտին. Անոնց
ազատութիւն կը խոստանան, և իրենք ապակա-
նութեան ծառաներ են. վասն զի ինչ բանէ որ
20 մէկը կը յաղթուի, անոր ծառայ ալ կ'ըլլայ: Ին-
չու որ եթէ Տէր ու Փրկիչ Յիսուս Քրիստոսի գի-
տութիւնովը աշխարհիս պղծութիւններէն հրա-
ժարելէն ետև՝ դարձեալ անոնց բաներէն բռնուած
յաղթուին, անոնց վերջը առջինէն գէշ կ'ըլլայ.
21 Ինչու որ աղէկ էր անոնց՝ որ բնաւ արդարու-
թեան ճամբան ճանչցած չըլլային, քան թէ ճանչ-
նալով ետ դառնային այն սուրբ պատուիրանքէն՝
22 որ իրենց յանձնուեցաւ. Սակայն անոնց հանդի-
պեցաւ այն ճշմարիտ առակին բանը, թէ Շունը
նորէն իր փսխածին կը դառնայ, ու լուացուած
խոզը ցեխի մէջ թաւալըլորկելու.

ԳԼ. Գ

1 Սիրելիներ, աս երկրորդ թուղթը հիմա ձեզի կը
գրեմ, որոնցմով ձեր անկեղծ միտքը կ'արթըն-
2 ցընեմ յիշելու, Որ սուրբ մարգարէներէն առա-
ջուց գրուցուած խօսքերը, և մեր՝ այսինքն Տէ-
րոջը ու Փրկչին առաքեալներուն պատուէրները
3 միտքերնիդ բերէք: Բայց առաջ աս գիտնաք,
որ վերջի օրերը ծաղր ընողներ պիտի գան, ո-
րոնք իրենց ցանկութիւններուն համեմատ պիտի
4 քալեն, Եւ պիտի ըսեն, Ո՞ւր է անոր գալուն
խոստմունքը. վասն զի քանի որ հայրերը քնա-

ցան, ամէն բան անանկ կայ կը մնայ արարածոց
5 սկիզբէն հետէ։ Քանզի անոնք (որ իրենց ուզածը
աս է՝) ան բանը մոռցեր են, թէ երկինքը առա-
ջուց եղաւ, ու երկիրը ջուրերէն և ջուրերով
6 հաստատ կեցեր է Աստուծոյ խօսքովը. Որով հին
աշխարհը ջրհեղեղով ապականած կորսուեցաւ.
7 Եւ հիմակուան երկինքը ու երկիրը նոյն խօսքով
պահպանուած են, մինչև դատաստանին ու ամ-
բարիշտ մարդոց կորստեան օրը կրակի համար
8 պահուած։ Եւ աս մէկ բանը ձեզմէ ծածուկ
չմնայ, սիրելիներ, որ Տէրոջը քովը մէկ օրը հա-
զար տարուան պէս է, ու հազար տարին՝ մէկ
9 օրուան պէս։ Տէրը չուշացըներ իր խոստմունքը,
ինչպէս որ ոմանք ուշացուցած կը սեպեն, հապա
մեզի երկայնամիտ կ'ըլլայ. ինչու որ չուզեր որ
մէկը կորսուի, հապա որ ամէնքը ապաշխարանքի
10 գան։ Սակայն Տէրոջը օրը *գողի պէս պիտի գայ,
որ անատենը երկինքը սաստիկ շառաչիւնով պի-
տի անցնի, ու տարերքները բռնկած պիտի
լուծուին, երկիրս ալ՝ ու ինչ գործքեր որ անոր
11 մէջը կը գտնուին՝ պիտի այրուին։ Ուստի աս ա-
մէն բաները որ պիտի լուծուին, ձեզի ի՞նչպէս
մարդիկ ըլլալ կը վայելէ սուրբ վարմունքով ու
12 բարեպաշտութեամբ, սպասելով Ու արտորալով
Աստուծոյ օրուանը գալուն, որուն մէջ երկինքը
կրակով այրուած պիտի լուծուի, ու տարերք-
13 ները բռնկած պիտի հալին։ Սակայն իր խոստ-
մունքին համեմատ նոր երկնից ու նոր երկրի մը
կը սպասենք, որոնց մէջ արդարութիւն կը բնակի։
14 Ուստի, սիրելիներ, ասոնց սպասելով ջանա-
ցէք, որ ան ձեզ անբիծ ու անարատ գտնէ խա-
15 ղաղութիւնով. Եւ մեր Տէրոջը երկայնմտութիւ-
նը փրկութիւն սեպեցէք. ինչպէս որ մեր սիրելի

*Ոմանք գիշերուան գողի

եղբայրը Պօղոս ալ իրեն տրուած իմաստութիւ-
16 նովը գրեց ձեզի. Ինչպէս որ ամէն թուղթերուն
մէջ ալ աս բաներուս վրայով կը խօսի. որոնց
մէջ քանի մը դժուարիմաց բաներ կը գտնուին,
որ զանոնք տգէտները ու անհաստատները ծուռ
կողմը կը դարձընեն, ինտոր ուրիշ գիրքերն ալ
17 իրենց անձին կորստեանը համար։ Ուրեմն դուք,
սիրելիներ, առաջուց գիտնալով զգոյշ եղէք, որ
չըլլայ թէ անօրէններուն խաբէութենէն բռ-
18 նուած՝ ձեր հաստատութենէն իյնաք. Հապա
աճեցէք մեր Տէր ու Փրկիչ Յիսուս Քրիստոսի
շնորհքովը ու գիտութիւնովը. անոր փառք հիմա
ալ ու մինչև յաւիտենական օրն ալ։ Ամէն։

ԱՌԱՋԻՆ
ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹՈՒՂԹ
ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅՆ

ԳԼՈՒԽ Ա

1 Կենաց Բանին վրայով որ սկիզբէն էր, որուն
համար լսեցինք, որն որ մեր աչքերովը տեսանք,
2 որուն նայեցանք ու մեր ձեռքերը շօշափեցին. (Եւ
կեանքը յայտնուեցաւ, ու տեսանք և կը վկայենք
ու ձեզի կը պատմենք ան յաւիտենական կեանքը,
3 որ Հօրը քովն էր ու մեզի յայտնուեցաւ.) Ան որ

տեսանք ու լսեցինք՝ ձեզի կը պատմենք, որ
դուք ալ մեզի հետ հաղորդութիւն ունենաք․ և
մեր հաղորդութիւնը Հօրը հետ է՝ ու իր Որդ-
4 ւոյն Յիսուս Քրիստոսի հետ։ Եւ այս բաները կը
գրենք ձեզի, որ ձեր ուրախութիւնը կատար-
եալ ըլլայ։
5 Եւ ասիկա է այն պատգամը որ իրմէն լսեցինք
ու ձեզի կը պատմենք, թէ Աստուած լոյս է, ու
6 անոր մէջը բնաւ խաւար չկայ։ Թէ որ ըսենք թէ
Անոր հետ հաղորդութիւն ունինք, ու խաւարի
մէջ պտըտինք, սուտ կը զրուցենք և ճշմարտու-
7 թիւնը չենք ըներ։ Հապա թէ որ լոյսի մէջ քա-
լենք, ինչպէս որ անիկա լոյսի մէջ է, իրարու
հետ հաղորդութիւն կ՚ունենանք, ու անոր Որդ-
ւոյն Յիսուս Քրիստոսի արիւնը մեզ ամէն մեղքէ
8 կը սրբէ։ Թէ որ ըսենք թէ Մենք մեղք մը չու-
նինք, ինքզինքնիս կը խաբենք, ու մեր մէջը
9 ճշմարտութիւն չկայ։ Թէ որ խոստովանինք մեղ-
քերնիս, հաւատարիմ ու արդար է անիկա մեր
մեղքերուն թողութիւն տալու, և մեզ բոլոր ա-
10 նիրաւութենէ սրբելու։ Թէ որ ըսենք թէ Մեղք
մը չգործեցինք, սուտաղրուց կ՚ընենք անիկա, ու
անոր խօսքը մեր մէջը չէ։

ԳԼ. Բ

1 Իմ որդեակներս, այս բաները ձեզի կը գրեմ որ
մեղք չգործէք․ և թէ որ մէկը մեղք գործելու
ըլլայ, Հօրը քով բարեխօս ունինք Յիսուս Քրիս-
2 տոս արդարը․ Եւ անիկա մեր մեղքերուն քա-
ւութիւն է, և ոչ թէ միայն մերիններուն, հա-
պա բոլոր աշխարհին ալ։
3 Ու ասով գիտենք թէ անիկա ճանչցանք, թէ
4 որ անոր պատուիրանքները պահենք։ Ան որ կ՚ը-
սէ թէ Ես անիկա ճանչցայ, ու անոր պատուի-

րանքները չպահեր, ստախօս է, և անոր մէջը
5 ճշմարտութիւն չկայ։ Բայց ան որ անոր խօսքը
կը պահէ, իրաւցընէ իր մէջը կատարեալ է Աս-
տուծոյ սէրը․ ասով կը ճանչնանք թէ անոր մէջն
6 ենք։ Ան որ կ՚ըսէ թէ անոր մէջը կը բնակի, ա-
նանկ պէտք է որ քալէ՝ ինչպէս որ անիկա քա-
լեց։
7 *Եղբայրներ, չէ թէ մէկ նոր պատուիրանք մը
կը գրեմ ձեզի, հապա այն հին պատուիրանքը որ
սկիզբէն ՚ի վեր ունէիք․ և հին պատուիրանքը
8 այն խօսքն է, որ դուք սկիզբէն լսեցիք։ Դարձ-
եալ նոր պատուիրանք մը կը գրեմ ձեզի, որ
ճշմարիտ է անոր մէջը ու ձեր մէջը․ ինչու որ
խաւարը կ՚անցնի, ու ճշմարիտ լոյսը արդէն կ՚ե-
9 րեւնայ։ Ան որ կ՚ըսէ թէ լոյսի մէջ է, ու իր եղ-
բայրը կ՚ատէ, անիկա տակաւին խաւարի մէջ է։
10 Ան որ իր եղբայրը կը սիրէ, լոյսի մէջ կը բնակի,
11 ու իր մէջը գայթակղութիւն չկայ․ Բայց ան որ
իր եղբայրը կ՚ատէ, խաւարի մէջ է ու խաւարի
մէջ կը քալէ, և չգիտեր թէ ուր կ՚երթայ, ինչու
որ խաւարը անոր աչքերը կուրցուցեր է։
12 Կը գրեմ ձեզի, որդեակներ, ինչու որ ձեր
մեղքերը թողուած են անոր անուանը համար։
13 Կը գրեմ ձեզի, հայրեր, ինչու որ դուք ճանչ-
ցաք անիկա որ սկիզբէն է։ Կը գրեմ ձեզի, երի-
տասարդներ, ինչու որ դուք չարին յաղթեցիք։
14 Կը գրեմ ձեզի, տղաքներ, ինչու որ դուք ճանչ-
ցաք Հայրը։ Գրեցի ձեզի, հայրեր, ինչու որ դուք
ճանչցաք անիկա որ սկիզբէն է։ Գրեցի ձեզի, ե-
րիտասարդներ, ինչու որ դուք ուժով էք, և
Աստուծոյ խօսքը ձեր մէջը կը բնակի, ու չարին
15 յաղթեցիք։ Մի սիրէք աշխարհս, ոչ ալ ինչ որ
16 աշխարհիս մէջ է։ Թէ որ մէկը աշխարհը կը սի-

*Ոմանք Սիրելիներ

րէ, անոր ներսը դէն Հօրը սէրը չկայ. քանզի
ամէն բան որ աշխարհի մէջ է, մարմնոյ ցանկու-
թիւնը ու աչաց ցանկութիւնը և աս կեանքիս
ամբարտաւանութիւնը, Հօրմէն չէ, հապա աս
17 աշխարհէս է։ Աշխարհս ալ կ'անցնի, անոր ցան-
կութիւնն ալ. բայց ան որ Աստուծոյ կամքը կը
կատարէ՝ յաւիտեան կը մնայ։
18 Որդեակներ, վերջին ժամանակն է. ու ինչպէս
որ լսեցիք թէ 'Նեռը պիտի գայ, և արդէն շատ
նեռեր ելած են. անկէ կ'իմանանք թէ վերջին
19 ժամանակ է։ Մեզմէ ելան ոմանք, բայց մեզմէ
չէին. ինչու որ եթէ մեզմէ ըլլային, մեր հետը
պիտի մնային. հապա դուրս ելան, որ յայտնի ըլ-
20 լան թէ անոնք ամէնը մեզմէ չէին։ Բայց դուք
օծութիւն ունիք Սուրբէն, ու ամէն բան գիտէք։
21 Չգրեցի ձեզի՝ իբր թէ ճշմարտութիւնը չէք գի-
տեր, հապա թէ գիտէք անիկա, ու նաև թէ ա-
22 մէն ստութիւն ճշմարտութենէ չէ։ Ո՞վ է ստա-
խօս, եթէ ոչ ան որ կ'ուրանայ թէ Յիսուս
Քրիստոս չէ. անիկա է 'Նեռը որ կ'ուրանայ Հայ-
23 րը ու Որդին։ Ամէն ով որ կ'ուրանայ Որդին,
անիկա Հայրն ալ չընդունիր. [Բայց ան որ կը
խոստովանի Որդին, անիկա Հայրն ալ կ'ընդու-
24 նի։] Ուրեմն ինչ որ դուք սկիզբէն լսեցիք, թող
անիկա ձեր մէջը բնակի. թէ որ ան սկիզբէն
լսածնիդ ձեր մէջը բնակի, դուք ալ Որդւոյն ու
25 Հօրը մէջ պիտի բնակիք։ Եւ ասիկա է ան խոստ-
մունքը որ ինքը մեզի խոստացաւ, այսինքն յա-
26 ւիտենական կեանքը։ Աս բաները ձեզի գրեցի՝
27 ձեզ մոլորցընողներուն համար։ Եւ ան օծութիւ-
նը որ դուք իրմէն ընդունեցիք՝ ձեր մէջը կը
մնայ, ու պէտք չէ որ մէկը ձեզի սորվեցընէ.
հապա ինչպէս որ նոյն օծութիւնը ձեզի կը սոր-
վեցընէ ամէն բանի վրայով, և ճշմարիտ է ու
սուտ չէ, և ինչպէս որ անիկա ձեզի սորվեցուց,
անոր մէջը կեցէք։

28 Ու հիմա, որդեակներ, անոր մէջը կեցէք, որ
երբ անիկա յայտնուի՝ մենք համարձակութիւն
ունենանք, ու անկէ չամչնանք իր գալու ատե-
29 նը։ Թէ որ գիտէք թէ անիկա արդար է, կ'ի-
մանաք թէ ամէն ով որ արդարութիւն կը գոր-
ծէ՝ անկէ ծնած է։

Գլ. Գ

1 Տեսէք՝ Հայրը ինչպէս սէր շնորհեց մեզի, որ մենք
Աստուծոյ որդիք ըսուինք. ասոր համար աշխարհ
մեզ չճանչնար, ինչու որ զանիկա ալ չճանչցաւ։
2 Սիրելիներ, հիմա մենք Աստուծոյ որդիքն ենք,
և տակաւին յայտնի չէ թէ ինչ պիտի ըլլանք.
բայց գիտենք որ երբ անիկա յայտնուի, անոր
պէս պիտի ըլլանք. վասն զի անիկա պիտի տես-
նենք՝ ինչպէս որ է։
3 Եւ ամէն ով որ աս յոյսը անոր վրայ ունի,
ինքզինքը կը մաքրէ, ինչպէս որ անիկա մաքուր
4 է։ Ամէն ով որ մեղք կը գործէ, անիկա անօրէ-
նութիւն ալ կը գործէ, և բուն մեղքը անօրէ-
5 նութիւն է։ Եւ գիտէք որ անիկա անոր համար
յայտնուեցաւ, որ մեր մեղքերը վերցընէ. ու իր
6 մէջը մեղք չկայ։ Ամէն ով որ անոր մէջը կը կե-
նայ՝ մեղք չգործեր. ամէն ով որ մեղք կը գոր-
ծէ՝ զանիկա տեսած չէ ու զանիկա ճանչցած չէ։
7 Որդեակներ, մէկը ձեզ չխաբէ. ան որ արդարու-
թիւն կը գործէ՝ արդար է, ինչպէս որ Անիկա
8 արդար է։ Եւ ան որ մեղք կը գործէ՝ Սատանա-
յէն է, ինչու որ Սատանան սկիզբէն 'ի վեր կը
մեղանչէ. ասոր համար Աստուծոյ Որդին յայտ-
9 նուեցաւ, որ Սատանային գործքերը քակէ։ Ա-
մէն ով որ Աստուծմէ ծնած է՝ մեղք չգործեր,
ինչու որ անոր սերմը իր մէջը կը մնայ, ու չկրնար
10 մեղք գործել, քանզի Աստուծմէ ծնած է։ Ասով

յայտնի են Աստուծոյ որդիքը ու Սատանայի որ-
դիքը։ Ամէն ով որ արդարութիւն չգործեր՝ ա-
նիկա Աստուծմէ չէ. և ան ալ՝ որ իր եղբայրը
11 չսիրեր։ Ինչու որ ասիկա այն պատուիրանքն է որ
12 դուք սկիզբէն լսեցիք, որ մէկզմէկ սիրենք։ Ոչ
թէ Կայենին պէս որ չարէն էր, ու իր եղբայրը
սպաննեց. և ինչո՞ւ համար զանիկա սպաննեց.
անոր համար որ իր գործքերը չար էին, ու իր
13 եղբօրը գործքերը՝ արդար։ Մի զարմանաք, եղ-
14 բայրներս, թէ որ աշխարհ ձեզ ատէ։ Մենք գի-
տենք որ մահէն կեանքի փոխուեցանք, ինչու որ
եղբայրները կը սիրենք. ան որ եղբայրը չսիրեր՝
15 մահուան մէջ կը մնայ. Ամէն ով որ իր եղբայրը
կ'ատէ՝ մարդասպան է. ու գիտէք որ ամէն մար-
դասպան իր մէջը բնակած յաւիտենական կեանք
16 չունի։ Ասով գիտցանք Քրիստոսի սէրը, որ անի-
կա իր կեանքը մեզի համար դրաւ. մենք ալ
պարտաւոր ենք մեր եղբայրներուն համար դնել
17 մեր կեանքը։ Բայց ան որ աշխարհիս բարիքը ու-
նի, և իր եղբայրը բանի մը կարօտ կը տեսնէ ու
իր գութը անկէ կը գոցէ, ինտո՞ր Աստուծոյ սէրը
18 անոր մէջը բնակած կ'ըլլայ։ Որդեակներս, չէ թէ
խօսքով ու լեզուով սիրենք, հապա գործքով
ու ճշմարտութիւնով։
19 Եւ ասով կը ճանչնանք թէ ճշմարտութենէն
ենք, ու մեր սրտերուն համարձակութիւնը ա-
20 նոր առջևը պիտի երևնանք։ Քանզի թէ որ մեր
սրտերը մեզ կը մեղադրեն, հապա Աստուած մեր
21 սրտերէն մեծ է՝ և ամէն բան գիտէ։ Սիրելի-
ներ, թէ որ մեր սրտերը մեզ չմեղադրեն, հա-
մարձակութիւն կ'ունենանք Աստուծոյ առջևը։
22 Եւ ինչ որ խնդրենք՝ կ'առնենք անկէ, ինչու որ
իր պատուիրանքները կը պահենք, ու իր առջին
23 հաճոյ եղած բաները կ'ընենք։ Եւ ասիկա է ա-
նոր պատուիրանքը, որ իր Որդւոյն Յիսուս Քրիս-

տոսի անուանը հաւատանք ու մէկզմէկ սիրենք,
24 ինչպէս որ մեզի պատուէր տուաւ։ Եւ ան որ
անոր պատուիրանքները կը պահէ՝ անոր մէջը
կը կենայ, ու անիկա ալ ասոր մէջը. և ասկէ
գիտենք որ անիկա մեր մէջը կը կենայ, այսինքն
այն Հոգիէն որ մեզի տուաւ։

ԳԼ. Դ

1 Սիրելիներ, ամէն հոգիի մի հաւատաք, հապա հո-
գիները փորձեցէք՝ թէ արդեօք Աստուծմէ են.
ինչու որ աշխարհիս մէջ շատ սուտ մարգարէներ
2 ելած են։ Ասով կրնաք ճանչնալ Աստուծոյ Հո-
գին. ամէն հոգի որ Յիսուս Քրիստոսը մարմնով
3 եկած կը խոստովանի, անիկա Աստուծմէ է. Եւ
ամէն հոգի որ Յիսուս Քրիստոսը մարմնով եկած
չխոստովանիր, անիկա Աստուծմէ չէ. ու ասիկա
Նեռին հոգին է, որուն համար լսեցիք թէ պիտի
4 գայ, ու հիմակուընէ ալ աշխարհիս մէջ է։ Դուք
Աստուծմէ էք, որդեակներ, ու անոնց յաղթե-
ցիք. քանզի մեծ է անիկա որ ձեր մէջն է, քան
5 թէ անիկա որ աշխարհիս մէջն է. Անոնք աշ-
խարհէ են. անոր համար աշխարհի վրայով կը խօ-
6 սին, և աշխարհս մտիկ կ'ընէ անոնց։ Մենք Աս-
տուծմէ ենք. ան որ զԱստուած կը ճանչնայ՝ մեզի
մտիկ կ'ընէ. ան որ Աստուծմէ չէ՝ մեզի մտիկ չը-
ներ. ասով կը ճանչնանք ճշմարտութեան Հոգին
ու խաբէութեան հոգին։
7 Սիրելիներ, մէկզմէկ սիրենք, ինչու որ սէրը
Աստուծմէ է. ու ամէն ով որ կը սիրէ՝ Աստուծմէ
8 ծնած է, ու կը ճանչնայ զԱստուած։ Ան որ չսի-
րեր՝ զԱստուած չճանչնար. ինչու որ Աստուած
9 սէր է։ Աս բանիս մէջ Աստուծոյ սէրը մեր վրայ
յայտնի եղաւ, որ Աստուած իր միածին Որդին
աշխարհք խրկեց, որ անոր միջոցովը ապրինք։

10 Աս բանիս մէջ է սէրը, որ չէ թէ մենք սիրեցինք
զԱստուած, հապա որ անիկա մեզ սիրեց, ու իր
Որդին ղրկեց մեր մեղքերուն քաւութիւն ըլլա-
11 լու։ Սիրելիներ, թէ որ Աստուած մեզ ասանկ
սիրեց, ուրեմն մենք ալ կը պարտաւորինք մէկ-
12 զմէկ սիրել։ Մէկը երբեք զԱստուած տեսած չէ.
թէ որ մէկզմէկ կը սիրենք, Աստուած մեր մէջը
կը բնակի, ու անոր սէրը մեր մէջը կատարեալ է։
13 Ասով գիտենք թէ մենք անոր մէջը կը բնակինք՝
ու անիկա մեր մէջը, որ իր Հոգիէն մեզի տուաւ։
14 Ու մենք տեսանք ու կը վկայենք որ Հայրը իր
15 Որդին ղրկեց աշխարհի Փրկիչը ըլլալու։ Ով որ
կը խոստովանի թէ Յիսուս Որդի Աստուծոյ է,
Աստուած անոր մէջը կը բնակի, ան ալ՝ Աստուծոյ
16 մէջ։ Ու մենք ճանչցանք ու հաւատացինք ան
սէրը որ Աստուած մեր վրայ ունի. Աստուած
սէր է. և ան որ սիրոյ մէջ կը բնակի՝ Աստուծոյ
17 մէջ կը բնակի, ու Աստուած՝ անոր մէջը։ Ասով
սէրը մեր վրայ կատարեալ կ'ըլլայ, որ համարձա-
կութիւն ունենանք դատաստանին օրը. վասն զի
ինչպէս է ինքը, անանկ ալ մենք ենք աս աշ-
18 խարհիս մէջ։ Սիրոյ մէջ վախ չկայ, հապա կա-
տարեալ սէրը վախը մէկդի կը ձգէ. ինչու որ
վախը տանջանքի ենթակայ է. ուստի ան որ կը
19 վախնայ՝ սիրոյ մէջ կատարեալ չէ։ Մենք զանիկա
կը սիրենք, ինչու որ առաջ անիկա մեզ սիրեց։
20 Թէ որ մէկը ըսէ թէ Ես Աստուած կը սիրեմ, ու
իր եղբայրը ատէ, անիկա ստախօս է. քանզի ան
որ իր եղբայրը չսիրեր՝ որ կը տեսնէ, զԱստուած՝
21 որ չտեսներ, ինչո՞ւ կրնայ սիրել։ Ու անկէ աս
պատուէրը ունինք, թէ ան որ զԱստուած կը
սիրէ՝ իր եղբայրն ալ սիրէ։

ԳԼ. Ե

1 Ամէն ով որ կը հաւատայ թէ Յիսուսը Քրիս-
տոսն է, Աստուծմէ ծնած է. և ամէն ով որ
2 ծնողը կը սիրէ՝ անկէ ծնածն ալ կը սիրէ։ Ասով
կը ճանչնանք թէ Աստուծոյ որդիները կը սիրենք,
երբոր Աստուած սիրենք ու անոր պատուիրանք-
3 ները պահենք։ Ինչու որ ասիկա է Աստուծոյ սէրը,
որ անոր պատուիրանքները պահենք. և անոր
4 պատուիրանքները ծանր բան չեն։ Վասն զի ան
ամէնը որ Աստուծմէ ծնած է՝ աշխարհին կը յաղ-
թէ. և ասիկա է յաղթութիւնը որ աշխարհին
5 կը յաղթէ, այսինքն մեր հաւատքը։ Ո՞վ է որ
աշխարհին կը յաղթէ, եթէ ոչ անիկա որ կը հա-
ւատայ թէ Յիսուս Որդի Աստուծոյ է։
6 Ասիկա է որ եկաւ ջուրով և արիւնով, այսինքն
Յիսուս Քրիստոս. չէ թէ միայն ջուրով, հապա
ջուրով ու արիւնով. և Հոգին է որ կը վկայէ,
7 ինչու որ Հոգին ճշմարտութիւն է։ Վասն զի երեք
են որ *երկնից մէջ կը վկայեն, Հայրը, Բանը ու
8 Սուրբ Հոգին, և աս երեքը մէկ են։ Ու երեք են
որ երկրի վրայ* կը վկայեն, Հոգին, ջուրը ու
9 արիւնը, և երեքը միաբան են։ Թէ որ մարդոց
վկայութիւնը կ'ընդունինք, Աստուծոյ վկայու-
թիւնը աւելի մեծ է. ինչու որ ասիկա է Աստու-
ծոյ վկայութիւնը, որ իր Որդւոյն համար վկայեց։
10 Ան որ Աստուծոյ Որդւոյն կը հաւատայ՝ վկայու-
թիւնը իր մէջը ունի. ան որ Աստուծոյ չհաւա-
տար՝ ստախօս կ'ընէ անիկա, ինչու որ չհաւատար
ան վկայութեանը՝ որ Աստուած իր Որդւոյն հա-
11 մար վկայեց։ Ու վկայութիւնը աս է, որ Աստուած
մեզի յաւիտենական կեանք տուաւ, ու աս կեանքը

*Շատ հին ձեռագիրները չունին աս հատուածը։

12 անոր Որդւոյն մէջն է։ Ան որ Որդին ընդունած
է՝ կեանք ունի, և ան որ Աստուծոյ Որդին ըն-
դունած չէ՝ կեանք չունի։
13 Ասս բաները գրեցի ձեզի՝ որ գիտնաք թէ յա-
ւիտենական կեանք ունիք դուք՝ որ Աստուծոյ
14 Որդւոյն անուանը կը հաւատաք*։ Եւ ան հա-
մարձակութիւնը որ մենք անոր քովը ունինք՝
աս է, որ ինչ բան որ խնդրելու ըլլանք իր կամ-
15 քին համեմատ՝ կը լսէ մեզի։ Եւ թէ որ գիտնանք
թէ մեզի կը լսէ, ինչ որ խնդրելու ըլլանք, ասկէ
կը գիտնանք թէ կ'առնենք խնդիրքնիս՝ որ կը
խնդրենք իրմէն։
16 Թէ որ մէկը տեսնէ որ իր եղբայրը մեղք մը
գործեց՝ չէ թէ մահացու, թող խնդրէ, ու Աստ-
ուած անոր կեանք պիտի տայ՝ ան մահացու չե-
ղած մեղքը գործողին. մեղք կայ որ մահացու է,
17 չեմ ըսեր որ անոր համար խնդրէ։ Ամէն անի-
րաւութիւն մեղք է, և մեղք կայ որ մահացու չէ։
18 Գիտենք որ ան ամէնը որ Աստուծմէ ծնած է՝
մեղք չգործեր. հապա ան որ Աստուծմէ ծնած է՝
19 իր անձը կը պահէ, ու չարը իրեն չդպչիր։ Գի-
տենք որ մենք Աստուծմէ ենք, ու բոլոր աշ-
20 խարհք չարին մէջն է։ Եւ գիտենք որ Աստուծոյ
Որդին եկաւ, ու մեզի միտք տուաւ, որ ճշմա-
րիտը ճանչնանք, և ան ճշմարիտին մէջն ենք՝ իր
Որդւոյն Յիսուս Քրիստոսի մէջ. ասիկա է ճշմա-
21 րիտ Աստուած ու յաւիտենական կեանք։ Որ-
դեակներ, ինքզինքնիդ կուռքերէն պահեցէք։†

---

*Ոմանք կ'աւելցընեն և. որպէս զի Աստուծոյ Որդ-
ւոյն անուանը հաւատաք։
†Ոմանք կ'աւելցընեն Ամէն։

ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅՆ

1 Երէցէն՝ ընտրեալ Տիկնոջը ու անոր որդիներուն,
որ ես ճշմարտութեամբ կը սիրեմ, (և չէ թէ մի-
նակ ես, հապա ամէնքն ալ՝ որ ճշմարտութիւնը
2 կը ճանչնան,) Ան ճշմարտութեանը համար՝ որ
մեր մէջը կը մնայ, ու յաւիտեան մեր հետը պի-
3 տի ըլլայ. Շնորհք, ողորմութիւն, խաղաղութիւն
Հայր Աստուծմէն և Տէր Յիսուս Քրիստոսէն՝ Հօրը
Որդիէն ձեր հետը ըլլայ ճշմարտութիւնով ու սի-
րով։
4 Շատ ուրախ եղայ ես, որ քու որդիներէդ
դտայ որ ճշմարտութեամբ կը քալեն ան պատ-
5 ուիրանքին համեմատ՝ որ Հօրմէն առինք։ Եւ հի-
մա քեզի կ'աղաչեմ, ով Տիկին, ոչ իբր թէ նոր
պատուիրանք մը քեզի կը գրեմ, հապա ան որ
6 սկիզբէն ունէինք, որ մէկզմէկ սիրենք։ Եւ սէրը
աս է՝ որ անոր պատուիրանքներուն համեմատ
քալենք. ու պատուիրանքը աս է՝ որ ինչպէս
սկիզբէն 'ի վեր լսեցիք, անոր համեմատ քալէք։
7 Ինչու որ շատ մոլորեցուցիչներ ելան աշխարհիս
մէջ, որոնք Յիսուս Քրիստոսը մարմինով եկած
չեն խոստովանիր. անանկ մէկը մոլորեցուցիչ ու
8 Նեռն է։ Զգուշացէք ձեր անձերուն, որ աշխա-
տանքնիս չկորսնցընենք, հապա որ լման վարձք
9 առնենք։ Ամէն ով որ յանցանք կը գործէ ու

Քրիստոսի վարդապետութեանը մէջ չկենար, ա-
նիկա Աստուած չունի. ան որ Քրիստոսի վար-
դապետութեանը մէջ կը կենայ, անիկա Հայրն ալ
10 ունի Որդին ալ։ Թէ որ մէկը ձեզի գայ՝ ու աս
վարդապետութիւնը չբերէ, զանիկա տուներնիդ
11 մի ընդունիք, և անոր Բարև մի ըսէք. Քանզի
ով որ անոր Բարև կ'ըսէ, անոր չար գործքե-
րուն հաղորդ կ'ըլլայ։
12 Շատ բան ունէի ձեզի գրելու, բայց չուզեցի
թղթով ու մելանով ընել. ինչու որ յոյս ունիմ
որ ձեզի գամ, ու բերան առ բերան խօսիմ, որ
13 մեր ուրախութիւնը կատարեալ ըլլայ։ Բարև
կ'ընեն քեզի քու ընտրեալ քրոջդ որդիքը։*

ԵՐՐՈՐԴ ԹՈՒՂԹ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅՆ

1 Երէցէն Գայիոս սիրելիին, որն որ ես կը սիրեմ
2 ճշմարտութեամբ։ Սիրելի, աղօթք կ'ընեմ որ ա-
մէն կողմէ յաջողութեան մէջ ու առողջ ըլլաս,
ինչպէս որ քու հոգիդ ալ յաջողութեան մէջ է։
3 Ինչու որ շատ ուրախացայ, երբոր քանի մը եղ-

*Ոմանք չ'ունեցընեն Ամէն.

բայրներ եկան, ու քու ճշմարտութեանդ վրայով
վկայեցին, ինչպէս որ դուն ճշմարտութեամբ կը
4 քալես։ Ասկէ մեծ ուրախութիւն մը չունիմ, որ
կը լսեմ թէ իմ որդիներս ճշմարտութեան մէջ
5 կը քալեն։ Սիրելի, դուն հաւատարմաբար կ'ը-
նես, ինչ որ կ'ընես եղբայրներուն և օտարնե-
6 րուն։ Որոնք եկեղեցիին առջևը վկայեցին քու
սիրոյդ վրայով. որ եթէ աստուածահաճոյ կեր-
պով զանոնք ճամբայ դնես, աղէկ պիտի ընես։
7 Ինչու որ Աստուծոյ անուանը համար ելան, ու
8 հեթանոսներէն բան մը չեն առներ։ Ուստի մենք
պարտաւոր ենք անանկները ընդունել, որ ճըշ-
մարտութեանը գործակից ըլլանք։
9 Եկեղեցիին գրեցի. բայց Դիոտրեփէս՝ որ մէ-
ջերնին առաջին ըլլալ կ'ուզէ, մեզ չընդունիր։
10 Ասոր համար թէ որ գամ, անոր ըրած գործ-
քերը պիտի յիշեմ, որ մեզի դէմ չաղակրատե-
լով չարախօսութիւն կ'ընէ. և ասով ալ գոհ
չեղած՝ ինքը չընդունիր եղբայրները, ու անոնք
որ կ'ուզեն ընդունիլ՝ կ'արգիլէ, ու եկեղեցիէն
11 ալ կը հանէ։ Սիրելի, չարին նմանող մի ըլլար,
հապա բարիին. ան որ բարիք կը գործէ՝ Աս-
տուծմէ է, բայց ան որ չարիք կը գործէ՝ անիկա
12 զԱստուած տեսած չէ։ Դեմետրիոսին համար ա-
մէնն ալ կը վկայեն, բուն իսկ ճշմարտութիւնն
ալ. մենք ալ կը վկայենք, և դուք գիտէք որ
մեր վկայութիւնը ճշմարիտ է։
13 Շատ բան ունէի գրելու, բայց չեմ ուզեր մե-
14 լանով ու գրիչով քեզի գրել։ Սակայն յոյս ու-
նիմ մօտերս քեզ տեսնելու, ու բերան առ բե-
15 րան պիտի խօսինք։ Խաղաղութիւն քեզի. բարե-
կամները քեզի բարև կ'ընեն. բարև ըրէ մեր բա-
րեկամներուն՝ ամէն մէկուն անունովը։

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹՈՒՂԹ

ՅՈՒԴԱՅԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ

1 Յուդա՝ Յիսուս Քրիստոսի ծառայ ու Յակոբո-
սին եղբայրը, ձեզի՝ որ Հայր Աստուծմէն սրբուած
էք, և Յիսուս Քրիստոսէն պահուած ու կան-
2 չուած. Ողորմութիւն ու խաղաղութիւն և սէր
ձեր վրայ շատնայ։
3 Սիրելիներ, բոլոր ջանքը վրաս առնելով ձեզի
գրելու հասարակաց փրկութեանը համար, իմ ան-
ձէս հարկ սեպեցի ձեզի գրել ու յորդորել որ
մրցիք այն հաւատքին համար որ անգամ մը սուր-
4 բերուն աւանդուեցաւ։ Քանզի մէկ քանի մար-
դիկ գաղտուկ մտան, անոնք որ առաջուց աս
դատապարտութեանը համար որոշուած էին, ամ-
բարիշտներ, որ մեր Աստուծոյ շնորհքը անառա-
կութեան դարձուցին, և մի միայն *Իշխանը ու
5 մեր Տէր Յիսուս Քրիստոսը ուրացան։ Արդ կ'ու-
զեմ միտքերնիդ բերել, թէև արդէն գիտէք ա-
սիկա, թէ Տէրը որ ժողովուրդը Եգիպտոսի երկ-
րէն ազատեց, ետքը չհաւատացողները կորսն-
6 ցուց. Եւ այն հրեշտակները՝ որ իրենց իշխանու-
թիւնը չպահեցին, հապա իրենց բնակութիւնը
ձգեցին, մշտնջենաւոր կապերով խաւարի մէջ

*Ոմն. Աստուած Իշխանը

7 պահեց մեծ օրուան դատաստանին։ Ինչպէս Սո-
դոմ ու Գոմոր և անոնց բոլորտիքը եղած քա-
ղաքները՝ որոնք ասոնց նման պոռնկեցան ըն-
կերներուն մարմինին ետևէն երթալով, առջևնիս
օրինակ կեցեր են՝ յաւիտենական կրակին դա-
8 տապարտութիւնը ընդունելով։ Նմանապէս աս
ցնորածներն ալ մարմինը կը պղծեն, տէրու-
թիւնը կ'անարգեն, փառաւորներուն դէմ կը
9 հայհոյեն։ Բայց Միքայէլ հրեշտակապետը երբոր
Սատանային դէմ դնելով՝ Մովսէսին մարմինին
համար կը վիճէր, չհամարձակեցաւ հայհոյութեան
դատապարտութիւն բերել անոր վրայ, հապա
10 ըսաւ, Տէրը յանդիմանէ քեզ։ Իսկ ասոնք այն
բաներուն որ չեն հասկընար՝ հայհոյութիւն կ'ը-
նեն. և այն բաները որ բնականաբար անբան անա-
սուններու պէս գիտեն, անոնց մէջ կ'ապականին։
11 Վա՜յ անոնց՝ որ Կայենին ճամբովը գացին, ու
Բաղաամին մոլորութեանը պէս ցանկութեամբ
վարձքի ետևէ գացին, և Կորխին հակառակու-
12 թեանը պէս կորսուեցան։ Ասոնք ձեր սիրոյ
խնճոյքներուն մէջ արատներ են, ու ձեզի հետ
կերուխումի նստած ատեննին աներկիւղ իրենց
անձը կը կերակրեն. անջուր ամպեր հովերէն
քշուած. պտուղնին կորսնցուցած ծառեր, բերք
չունեցող, երկու անգամ մեռած, արմատէն
13 խլուած. Ծովու կատղած ալիքներ, որ իրենց
անձերուն ամօթը կը փրփրցընեն. մոլորական
աստղեր, որոնց համար խաւարին մէգը պահուած
է յաւիտեան։
14 Անոնց վրայ մարգարէացաւ Ենովք ալ՝ որ եօթ-
ներորդ էր Ադամէն, ու ըսաւ, Ահա Տէրը իր
15 բիւրաւոր սուրբերովը եկաւ, Ամենուն դատաս-
տան ընելու, ու բոլոր ամբարիշտները յանդի-
մանելու իրենց ըրած ամբարշտութեանը բոլոր
գործքերուն համար, և բոլոր խիստ խօսքերուն

համար՝ որ ամբարիշտ մեղաւորները անոր դէմ
16 խօսեցան։ Ասոնք տրտնջողներ ու քրթմնջողներ
են, որոնք իրենց ցանկութիւններուն համեմատ
կ'երթան, և իրենց բերանները ամբարտաւան
խօսքեր կը գրուցեն, և շահի համար երեսպաշ-
17 տութիւն կ'ընեն։ Բայց դուք, սիրելիներ, միտ-
քերնիդ բերէք ան խօսքերը որ մեր Տէր Յիսուս
Քրիստոսի առաքեալներէն առաջուց գրուցուե-
18 ցաւ. Որ ձեզի կ'ըսէին թէ վերջի ժամանակը
ծաղր ընողներ պիտի ըլլան, որոնք իրենց ամբա-
րիշտ ցանկութիւններուն համեմատ պիտի երթան։
19 Ասոնք ինքզինքնին զատող, շնչաւորներ են, որ
20 Հոգին չունին։ Բայց դուք, սիրելիներ, անձեր-
նիդ շինելով ձեր ամենասուրբ հաւատքին վրայ,
21 և Սուրբ Հոգիով աղօթք ընելով, Անձերնիդ Աս-
տուծոյ սիրոյն մէջ պահեցէք՝ մեր Տէր Յիսուս
Քրիստոսի ողորմութեանը սպասելով յաւիտե-
22 նական կենաց համար։ Եւ խտրութիւն ընելով՝
23 ոմանց ողորմեցէք. Եւ ոմանք վախով ազատե-
ցէք՝ կրակէն յափշտակելով զանոնք, ատելով
մարմինէն աղտոտուած հանդերձն ալ.
24 Եւ անոր՝ որ կարող է ձեզ անբիծ պահել, և
իր փառքին առջևը անարատ կայնեցընել ցնծու-
25 թիւնով, Մեր Փրկչին մի միայն *Աստուծոյ [մեր
Տէր Յիսուս Քրիստոսին ձեռքովը] փառք ու մե-
ծութիւն, զօրութիւն ու իշխանութիւն [բոլոր
դարերէն առաջ,] և հիմա ու բոլոր դարերու
մէջ։ Ամէն։

*Ոմանք իմաստուն Աստուծոյ

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅՆ

ԵՒ

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ ԱՒԵՏԱՐԱՆՉԻՆ

ԳԼՈՒԽ Ա

1 Յիսուս Քրիստոսի յայտնութիւնը, որ Աստուած
անոր տուաւ իր ծառաներուն ցուցընելու ինչ որ
շուտով պէտք է ըլլալ. և իր հրեշտակին ձեռ-
քովը խրկելով՝ իր Յովհաննէս ծառային իմա-
2 ցուց, Որ Աստուծոյ խօսքին վկայութիւնը ըրաւ,
ու Յիսուս Քրիստոսի վկայութիւնը՝ ինչ որ տե-
3 սաւ։ Երանի անոր որ կը կարդայ, ու անոնց որ
կը լսեն աս մարգարէութեանս խօսքերը, և կը
պահեն ինչ որ անոր մէջը գրուած է. ինչու որ
ժամանակը մօտ է։
4 Յովհաննէսէն եօթը եկեղեցիներուն որ Ասիայի
մէջ են. շնորհք և խաղաղութիւն ձեզի Անկէ որ
է և որ էր և որ պիտի գայ, ու եօթը Հոգինե-
5 րէն՝ որ անոր աթոռին առջևն են, Եւ Յիսուս
Քրիստոս հաւատարիմ վկայէն, որ մեռելներուն
անդրանիկն է ու երկրի թագաւորներուն իշխանը.
անոր որ մեզ սիրեց, ու մեզ իր արիւնովը մեր
6 մեղքերէն լուաց, Եւ մեզ թագաւորներ ու քա-

համաններ ըրաւ Աստուծոյ ու իր Հօրը, անոր
փառք և զօրութիւն յաւիտեանս յաւիտենից.
Ամէն.
7 Ահա ամպերով կու գայ. ու ամէն աչք պիտի
տեսնէ զանիկա, և անոնք որ զանիկա խոցեցին.
և անոր վրայ կոծ պիտի ընեն երկրիս բոլոր ազ-
8 գերը: Այո, Ամէն. Ես եմ Ալֆա և Օմեղա,* կ'ըսէ
Տէր [Աստուած], որ է և որ էր և որ պիտի գայ՝
Ամենակալը.
9 Ես Յովհաննէս ձեր եղբայրը՝ և Յիսուս Քրիս-
տոսի նեղութեանը ու արքայութեանը և համ-
բերութեանը մէջ ընկերակիցը, Պատմոս ըսուած
կղզին էի՝ Աստուծոյ խօսքին համար ու Յիսուս
10 Քրիստոսի վկայութեանը համար: Ես †կիրակի օրը
Հոգին իմ վրաս եկաւ, ու ետեւէս մեծ ձայն մը
11 լսեցի փողի ձայնի պէս, որ կ'ըսէր, ‡Ինչ որ կը տես-
նես՝ գիրքի մը մէջ գրէ, ու ղրկէ ||եօթը եկե-
ղեցիներուն, որ Եփեսոսի, ու Զմիւռնիայի, և
Պերգամոնի, ու Թիւատիրի, և Սարդիկէի, ու
12 Փիլադելփիայի, և Լաւոդիկիայի մէջ են. Եւ
դարձայ ան ձայնը տեսնելու՝ որ ինծի կը խօսէր.
ու երբոր դարձայ՝ եօթը ոսկեղէն աշտանակներ
13 տեսայ. Եւ եօթը աշտանակներուն մէջ՝ մէկը
Որդւոյ մարդոյ նման, պճղնաւոր պատմուճան մը
հագած ու կուրծքին վրայ ոսկի գօտի մը կա-
14 պած. Եւ իր գլուխը ու մազերը՝ բուրդի պէս
ճերմակ ու ձիւնի պէս, ու իր աչքերը՝ կրակի
15 բոցի պէս. Եւ իր ոտքերը՝ ոսկեպղինձի նման,
որպէս թէ հնոցի մէջ կրակ դարձած, ու իր

*Ոմանք կ'աւելցնեն Առաջինը ու Վերջինը,
†Այսինքն՝ տէրունական
‡Ոմանք Ես եմ Ալֆա և Օմեղա, Առաջինը և Վեր-
ջինը. և ինչ
||Ոմանք Ասիա եղած եօթը

16 ձայնը՝ շատ ջուրերու ձայնի պէս. Եւ իր աջ ձեռ-
քին մէջ եօթը աստղ ունէր, ու իր բերնէն սրած
երկբերան սուր մը կ'ելլէր, և իր երեսը արեւու
17 պէս էր՝ որ իր զօրութեամբը կը փայլի. Ու երբոր
տեսայ անիկա, իր ոտքը ինկայ մեռելի պէս. ու
իր աջ ձեռքը իմ վրաս դրաւ ու ըսաւ ինծի,
18 Մի վախնար. Ես եմ Առաջինը ու Վերջինը. Եւ
ես կենդանի եմ, ու ես ան եմ որ մեռայ, և
ահա կենդանի եմ յաւիտեանս յաւիտենից.* և
ես ունիմ մահուան ու դժոխքին բանալիները.
19 [Ուստի] գրէ ինչ որ կը տեսնես, ան որ կայ ու
20 ան որ ետքը պիտի ըլլայ. Եօթը աստղերուն խոր-
հուրդը՝ որ իմ աջ ձեռքիս մէջը տեսար, և եօթը
ոսկեղէն աշտանակները. ան եօթը աստղերը
եօթը եկեղեցիներուն հրեշտակներն են. և եօթը
աշտանակները† եօթը եկեղեցիներն են.

ԳԼ. Բ

1 Եփեսոսի մէջ եղած եկեղեցւոյն հրեշտակին գրէ,
Այսպէս կ'ըսէ անիկա որ իր աջ ձեռքին մէջ եօ-
թը աստղերը ունի, ու եօթը ոսկեղէն աշտա-
2 նակներուն մէջը կը պտըտի. Գիտեմ քու գործ-
քերդ և քու աշխատութիւնդ ու քու համբերու-
թիւնդ, և որ չարերուն չես կրնար տանիլ, ու
փորձեցիր անոնք որ կ'ըսեն թէ իրենք առաք-
3 եալ են, ու չեն, և գտար թէ ստախօս են. Ու
համբերութիւն ունենալով՝ նեղութիւն կրեցիր ‡իմ
4 անուանս համար՝ ու չթուլցար. Բայց քեզի դէմ
բան մը ունիմ, որ քու առջի սէրդ ձգեցիր.
5 Միտքդ բեր հիմա ուսկից որ ինկար, ու ապաշ-

*Ոմանք կ'աւելցնեն Ամէն.
†Ոմանք կ'աւելցնեն որոնք տեսար,
‡Ոմանք և իմ անուանս համար աշխատեցար

խարէ և քու առջի գործքերդ ըրէ. եթէ ոչ՝ շու-
տով կու գամ քեզի, ու քու աշտանակդ իր
տեղէն պիտի շարժեմ՝ թէ որ չապաշխարես:
6 Բայց ասիկա ունիս, որ Նիկողայոսեանց գործքերը
7 կ'ատես, որոնք ես ալ կ'ատեմ. Ան որ ականջ
ունի՝ թող լսէ թէ Հոգին ինչ կ'ըսէ եկեղեցինե-
րուն. Ան որ կը յաղթէ, անոր ուտել պիտի տամ
կենաց ծառէն՝ որ Աստուծոյ դրախտին մէջն է.
8 Եւ Զմիւռնիայի մէջ եղած եկեղեցւոյն հրեշտա-
կին գրէ, Այսպէս կ'ըսէ Առաջինը ու վերջինը,
9 որ մեռաւ ու կենդանացաւ. Գիտեմ քու գործ-
քերդ ու նեղութիւնդ և աղքատութիւնդ, (բայց
հարուստ ես,) ու անոնց հայհոյութիւնը՝ որ կ'ը-
սեն թէ իրենք Հրեայ են, ու չեն, հապա Սա-
10 տանայի ժողովք մը. Բնաւ մի վախնար ան բա-
ներէն որ պիտի կրես. ահա Բանսարկուն ձեզմէ
մէկ քանիները բանտը պիտի ձգէ որ փորձուիք,
և տասը օր նեղութիւն պիտի ունենաք. մինչև
'ի մահ հաւատարիմ եղիր, ու քեզի կենաց պսա-
11 կը պիտի տամ. Ան որ ականջ ունի՝ թող լսէ թէ
Հոգին ինչ կ'ըսէ եկեղեցիներուն. Ան որ կը յաղ-
թէ՝ երկրորդ մահէն պիտի չվնասուի.
12 Եւ Պերգամոնի մէջ եղած եկեղեցւոյն հրեշտա-
կին գրէ, Այսպէս կ'ըսէ անիկա որ սրած երկսը-
13 րան սուրը ունի. Գիտեմ քու գործքերդ, և թէ
ուր կը բնակիս՝ այսինքն Սատանային աթոռին
եղած տեղը, ու իմ անունս կը պահես, և իմ
հաւատքս չուրացար ան օրերը անգամ՝ որ Ան-
թիպաս իմ հաւատարիմ վկաս սպաննուեցաւ ձեր
մէջը, ուր որ Սատանան կը բնակի: Բայց քեզի
դէմ քիչ մը բան ունիմ, որ հոդ Բաղաամին
վարդապետութիւնը բռնողներ ունիս, որ Բաղա-
կին սորվեցուց Իսրայելի որդւոց առջև գայ-
թակղութիւն դնել, որ անոնք կռոց զոհուած-
15 ներ ուտեն ու պոռնկութիւն ընեն: Ասանկ ալ

դուն Նիկողայոսեանց վարդապետութիւնը բռ-
16 նողներ ունիս, որն որ ես կ'ատեմ. [Ուստի] ա-
պաշխարէ, եթէ ոչ՝ շուտով կու գամ քեզի, ու
իմ բերնիս սրովը պիտի պատերազմիմ անոնց
17 հետ. Ան որ ականջ ունի՝ թող լսէ թէ Հոգին
ինչ կ'ըսէ եկեղեցիներուն. Ով որ կը յաղթէ՝
պահուած մանանայէն ուտել պիտի տամ անոր,
ու ճերմակ խիճ մը պիտի տամ անոր, և ան խի-
ճին վրայ նոր անուն մը գրուած, որն որ մէկը
չգիտեր, բայց միայն ան՝ որ կ'ընդունի.
18 Եւ Թիւատիրի մէջ եղած եկեղեցւոյն հրեշտա-
կին գրէ, Այսպէս կ'ըսէ Աստուծոյ Որդին, որ
կրակի բոցի պէս աչքեր ունի, ու իր ոտքերը ոս-
19 կեպղինձի նման են. Գիտեմ քու գործքերդ և
սէրդ ու ծառայութիւնդ, և քու հաւատքդ ու
համբերութիւնդ, և թէ քու վերջին գործքերդ
20 առաջիններէն շատ են. Բայց քեզի դէմ *բան մը
ունիմ, որ թող կու տաս Յեզաբէլ կնոջը, որ ինք-
զինքը մարգարէուհի կ'անուանէ, ու իմ ծառա-
ներս մոլորցնելով՝ կը սորվեցնէ պոռնկութիւն
21 ընել և կռոց զոհուածներ ուտել. Եւ ես անոր
ժամանակ տուի իր պոռնկութեանը վրայ ապաշ-
22 խարելու, ու չապաշխարեց. Ահա ես զանիկա
անկողինը պիտի ձգեմ, ու անոր հետ շնութիւն
ընողները՝ մեծ նեղութեան մէջ, թէ որ իրենց
23 գործքերուն վրայ չապաշխարեն: Եւ անոր զա-
ւակները մահով պիտի սպաննեմ. ու բոլոր եկե-
ղեցիները պիտի գիտնան թէ ես ան եմ՝ որ ե-
րիկամունքները ու սիրտերը կը քննեմ. և ամէն
մէկերնուդ ձեր գործքերուն համեմատ պիտի հա-
24 տուցանեմ. Բայց ձեզի կ'ըսեմ միւսներուդ որ
Թիւատիրի մէջ էք, ու աս վարդապետութիւնը
չունիք, որ չճանչցաք Սատանային խորունկ բա-

---

*Ոմանք քիչ մը բան

նե՛րը՝ (ինչպէս որ կ՚ըսեն.) Ձեր վրայ ուրիշ ծան-
25 րութիւն չեմ ձգեր. Հապա ան որ ունիք՝ պա-
26 հեցէք մինչեւ որ ես գամ. Եւ ան որ կը յաղ-
թէ ու իմ գործքերս մինչեւ վերջը կը պահէ, ա-
նոր իշխանութիւն պիտի տամ ազգերուն վրայ,
27 (Եւ պիտի հովուէ զանոնք երկաթէ գաւազանով.
անոնք բրուտի ամաններու պէս պիտի փշրուին.)
28 ինչպէս որ ես ալ իմ Հօրմէս առի. ու անոր պի-
29 տի տամ առաւօտեան աստղը։ Ան որ ականջ
ունի՝ թող լսէ թէ Հոգին ինչ կ՚ըսէ եկեղեցինե-
րուն.

Գլ. Գ

1 Եւ Սարդիկէի մէջ եղած եկեղեցւոյն հրեշտակին
գրէ, Այսպէս կ՚ըսէ անիկա որ ունի Աստուծոյ
եօթը Հոգիները ու եօթը աստղերը. Գիտեմ քու
գործքերդ՝ որ դուն անուն ունիս թէ կենդանի
2 ես, ու մեռած ես. Արթուն կեցիր և հաստատէ
մնացած բաները որ մեռնելու վրայ են, ինչու որ
քու գործքերդ Աստուծոյ առջեւը կատարեալ
3 չգտայ. Հիմա միտքդ բեր թէ ինչպէս ընդունե-
ցիր ու լսեցիր, ու պահէ և ապաշխարէ. բայց
թէ որ արթննալու չըլլաս, գողի պէս քու վրադ
պիտի գամ, ու բնաւ պիտի չգիտնաս թէ ո՛ր
4 ժամուն քու վրադ պիտի գամ. Սակայն քանի
մը անձինք ունիս Սարդիկէի մէջ, որոնք իրենց
հանդերձները չաղտոտեցին, և ճերմակներով պի-
5 տի պտըտին ինծի հետ, քանզի արժանի են. Ան
որ կը յաղթէ՝ ճերմակներ պիտի հագնի. ու ես
անոր անունը կենաց գիրքէն պիտի չաւրեմ, և
անոր անունը պիտի դաւանիմ իմ Հօրս առջեւը
6 ու անոր հրեշտակներուն առջեւը. Ան որ ականջ
ունի՝ թող լսէ թէ Հոգին ինչ կ՚ըսէ եկեղեցինե-
րուն.

7 Եւ Փիղադելփիայի մէջ եղած եկեղեցւոյն հրեշ-
տակին գրէ, Այսպէս կ՚ըսէ ան Սուրբը՝ ան ճըշ-
մարիտը որ Դաւիթի բանալին ունի, կը բանայ ու
մէկը չկայ որ գոցէ, և կը գոցէ ու մէկը չկայ որ
8 բանայ. Գիտեմ քու գործքերդ. ահա քու առ-
ջեւդ բացուած դուռ մը դրի, որ մէկը չկրնար
գոցել, ինչու որ դուն քիչ մը կարողութիւն ու-
նիս, և իմ խօսքս պահեցիր ու իմ անունս չու-
9 րացար. Ահա ես քեզի կու տամ Սատանային ժո-
ղովքէն եղողները՝ որոնք կ՚ըսեն թէ իրենք
Հրեայ են ու չեն, հապա սուտ կ՚ըսեն. ահա պի-
տի ստիպեմ զանոնք որ գան ու երկրպագու-
թիւն ընեն քու ոտքերուդ առջեւը, և ճանչնան
10 թէ ես քեզ սիրեցի։ Որովհետեւ իմ համբերու-
թեանս խօսքը պահեցիր, ես ալ քեզ պիտի պա-
հեմ փորձութեան ժամանակը, որ պատրաստ է
գալու բոլոր աշխարհի վրայ՝ երկրիս երեսը բնա-
11 կողները փորձելու համար։ Ահա ես շուտով կու
գամ. ունեցածդ ամուր բռնէ, որ մէկը չառնէ
12 քու պսակդ. Ան որ կը յաղթէ՝ անիկա իմ Աս-
տուծոյս տաճարին մէջ սիւն մը պիտի ընեմ, ու
ալ դուրս պիտի չելլէ. և անոր վրայ իմ Աստու-
ծոյս անունը պիտի գրեմ, ու իմ Աստուծոյս
քաղաքին անունը՝ այսինքն նոր Երուսաղէմին՝
որ երկինքէն իմ Աստուծմէս կ՚իջնէ, և իմ նոր
13 անունս. Ան որ ականջ ունի՝ թող լսէ թէ Հոգին
ինչ կ՚ըսէ եկեղեցիներուն.
14 Եւ Լաւոդիկէի մէջ եղած եկեղեցւոյն հրեշտա-
կին գրէ, Այսպէս կ՚ըսէ Ամէնը՝ հաւատարիմ ու
ճշմարիտ վկան, Աստուծոյ արարածոց Սկիզբը.
15 Գիտեմ քու գործքերդ՝ որ ոչ պաղ ես ու ոչ
16 տաք. Երանի թէ պաղ ըլլայիր կամ տաք. Ուս-
տի դուն որ գաղջ ես, ու ոչ տաք՝ ոչ ալ պաղ,
17 քեզ բերնէս դուրս փսխելու վրայ եմ. Քանզի
կ՚ըսես, Ես հարուստ եմ ու մեծցայ, և բանի մը

կարօտ չեմ. ու չես գիտեր որ դուն խեղճ ու
թշուառական ես՝ և աղքատ ու կոյր ու մերկ։
18 Ես քեզի խորհուրդ կուտամ. ինծմէ կրակի մէջ
փորձուած ոսկի ծախու առ որ հարստանաս, ու
ճերմակ հանդերձներ՝ որ հագնիս, որ քու ամօ-
թալի մերկութիւնդ չերեւնայ. և աչքերդ դեղ
19 դիր որ տեսնես։ Ես իմ ամէն սիրածս կը յան-
դիմանեմ ու կը խրատեմ. ուստի նախանձաւոր
20 եղիր ու ապաշխարէ։ Ահա ես դուռը կայներ եմ
ու կը զարնեմ. թէ որ մէկը իմ ձայնս լսէ ու
դուռը բանայ, անոր քովը պիտի մտնեմ և անոր
հետը ընթրիք պիտի ընեմ, ան ալ իմ հետս.
21 Ան որ կը յաղթէ՝ իմ հետս իմ աթոռս նստել
պիտի տամ անոր, ինտոր որ ես ալ յաղթեցի ու
22 իմ Հօրս հետ անոր աթոռը նստայ. Ան որ ա-
կանջ ունի՝ թող լսէ թէ Հոգին ինչ կ'ըսէ եկե-
ղեցիներուն։

ԳԼ. Դ

1 Աս բաներէն ետքը տեսայ, և ահա երկնից մէջ
բացուած դուռ մը կար, և առջի ձայնը որ լսե-
ցի՝ փողի նման էր, որ ինծի հետ կը խօսէր ու
կ'ըսէր, Հոս ելիր ու ասկէ ետքը ըլլալու բաները
2 քեզի ցուցնեմ. Ու շուտ մը Հոգին իմ վրաս ե-
կաւ. և ահա աթոռ մը դրուած էր երկնից մէջ.
3 Ու աթոռին վրայ մէկը նստեր էր. և նստողը
յասպիս ու սարդիոն քարերու երեւութին նման
4 էր։ Ու աթոռին բոլորտիքը ծիածան՝ զմրուխտի
երեւութի նման. ու աթոռին բոլորտիքը քսան-
ուչորս աթոռներ, և ան աթոռներուն վրայ քը-
սանուչորս երէցներ *նստեր էին՝ ճերմակ հան-
դերձներ հագած, ու գլուխնին ոսկիէ պսակներ

*Ոմանք՝ Նստած տեսայ

5 ունէին. Ու աթոռէն փայլակներ ու ձայներ և ո-
րոտումներ կ'ելլէին, ու աթոռին առջին եօթը
հատ բորբոքած կրակի ջահեր կային, որոնք
6 Աստուծոյ եօթը Հոգիներն են։ Ու աթոռին առ-
ջևը իբրև ապակեղէն ծով մը՝ ակնվանիի նման,
և աթոռին մէջը ու աթոռին բոլորտիքը՝ չորս
կենդանիներ, որ աչքերով լեցուն էին առջևէն
7 ու ետևէն։ Ու առջի կենդանին առիւծի նման
էր, ու երկրորդ կենդանին՝ զուարակի նման, և
երրորդ կենդանին մարդու երես ունէր, ու չոր-
8 րորդ կենդանին՝ թռչող արծիւի նման. Ու չորս
կենդանիներուն ամէն մէկը շուրջանակի վեց վեց
թև ունէր, ու ներսէն աչքերով լեցուն էին. ու
չէին հանգչեր ոչ ցորեկը ոչ ալ գիշերը՝ ըսելով,
Սուրբ՝ Սուրբ՝ Սուրբ՝ Տէր Աստուած Ամենակալ,
9 որ էր և որ է և որ պիտի գայ. Ու երբոր ան
կենդանիները փառք ու պատիւ և գոհութիւն
կու տային աթոռին վրայ նստողին՝ որ կենդանի
10 է յաւիտեանս յաւիտենից, Քսանուչորս երէցնե-
րը աթոռին վրայ նստողին առջևը կ'իյնային ու
երկրպագութիւն կ'ընէին յաւիտեանս յաւիտե-
նից կենդանի եղողին, և իրենց պսակները աթո-
11 ռին առջևը կը ձգէին՝ ըսելով, Արժանի ես,
Տէր, փառք ու պատիւ և զօրութիւն առնելու,
ինչու որ ամէն բան դուն ստեղծեցիր, և քու
կամքովդ եղան ու ստեղծուեցան։

ԳԼ. Ե

1 Ու աթոռին վրայ նստողին աջ ձեռքը մէկ գիրք
մը տեսայ՝ ներսէն ու դուրսէն գրուած, և եօթը
2 կնիքով կնքուած։ Ու մէկ զօրաւոր հրեշտակ մը
տեսայ՝ որ մեծ ձայնով կը կանչէր, Ո՞վ արժանի
է աս գիրքը բանալու և անոր կնիքները քա-
3 կելու. Ու ոչ երկնից մէջ՝ ոչ երկրի վրայ ու ոչ

երկրի տակը գտնուեցաւ մէկը՝ որ կարող ըլլար
4 այն գիրքը բանալու, ոչ ալ անոր նայելու։ Ես ալ
շատոնց կու լայի որ մէկը արժանի չգտնուեցաւ
5 այն գիրքը բանալու*, ոչ ալ անոր նայելու։ Ու
երէցներէն մէկը ըսաւ ինծի, Մի լար. ահա Յու-
դայի ցեղէն եղող Առիւծը՝ Դաւիթի Արմատը
յաղթեց այն գիրքը բանալու ու անոր եօթը կնիք-
6 ները քակելու։ Եւ տեսայ որ աթոռին ու չորս
կենդանիներուն մէջտեղը և երէցներուն մէջտեղը
կայնած Գառնուկ մը կար՝ որպէս թէ մորթուած,
որ եօթը եղջիւր ու եօթը աչք ունէր, որոնք Աս-
տուծոյ եօթը Հոգիներն են՝ որ բոլոր երկիրը կը
7 խրկուին։ Եւ անիկա եկաւ ու աթոռին վրայ նստ-
8 ողին աջ ձեռքէն գիրքը առաւ։ Ու երբոր գիր-
քը առաւ, չորս կենդանիները ու քսանըչորս
երէցները Գառնուկին առջեւ ինկան, ու ամէնքն
ալ քնարներ ունէին, ու ոսկիէ խնկամաններ
9 խունկով լեցուն՝ որ սուրբերուն աղօթքն է։ Եւ
նոր երգ մը կ'երգէին՝ ըսելով, Արժանի ես դուն
այս գիրքը առնելու և անոր կնիքները բանա-
լու. ինչու որ մորթուեցար, ու մեզ ծախու ա-
ռիր Աստուծոյ՝ քու արիւնովդ ամէն ցեղէ ու
10 լեզուէ և ժողովուրդէ ու ազգէ. Եւ †մեզ մեր
Աստուծոյ թագաւորներ ու քահանաներ ըրիր,
11 ու երկրի վրայ պիտի ‡թագաւորենք։ Եւ նայե-
ցայ՝ ու շատ հրեշտակներու ձայն լսեցի, որոնք
աթոռին ու կենդանիներուն և երէցներուն բո-
լորտիքն էին. ու անոնց թիւն էր բիւրք բիւրուց
12 և հազարք հազարաց. Որոնք մեծ ձայնով կ'ը-
սէին, Այս մորթուած Գառնուկը արժանի է զօ-
րութիւն ու հարստութիւն և իմաստութիւն ու
կարողութիւն և պատիւ ու փառք ու օրհնու-

*Ոմանք չ'աւելցնեն ու կարդալու

†Ոմանք զանոնք ‡Ոմանք թագաւորեն

13 թիւն առնելու։ Եւ բոլոր արարածները որ երկ-
նից մէջ ու երկրի վրայ ու երկրի տակը ու ծո-
վու մէջ, ու ամէն ինչ որ անոնց մէջը կայ՝ լսեցի
որ կ'ըսէին, Աթոռին վրայ նստողին և Գառնուկին
օրհնութիւն ու պատիւ և փառք ու զօրութիւն
14 յաւիտեանս յաւիտենից։ Եւ չորս կենդանիները
կ'ըսէին, Ամէն. ու *երէցները ինկան ու երկըր-
պագութիւն ըրին†։

ԳԼ. Զ

1 Եւ տեսայ՝ երբոր Գառնուկը ‡կնիքներուն մէկը
բացաւ ու չորս կենդանիներուն մէկէն որոտումի
պէս ձայն մը լսեցի որ կ'ըսէր, Եկուր ու տես։
2 Ու տեսայ, և ահա ճերմակ ձի մը, ու անոր վրայ
հեծնողը աղեղ մը ունէր. և պսակ մը տրուեցաւ
անոր, և անիկա յաղթող էր ու յաղթելու ելաւ։
3 Ու երբոր երկրորդ կնիքը բացաւ, երկրորդ
4 կենդանիէն լսեցի որ կ'ըսէր, ||Եկուր։ Եւ ուրիշ
ձի մը ելաւ շառագոյն, ու անոր վրայ հեծնողին
իշխանութիւն տրուեցաւ որ երկրէս խաղաղու-
թիւնը առնէ, որ իրար սպաննեն. ու անոր մէկ
մեծ սուր մը տրուեցաւ։
5 Ու երբոր երրորդ կնիքը բացաւ, երրորդ կեն-
դանիէն լսեցի որ կ'ըսէր, Եկուր ու տես. ու տե-
սայ, և ահա սեւ ձի մը, ու անոր վրայ հեծնողը
6 իր ձեռքը կշիռ մը ունէր։ Ու չորս կենդանինե-
րուն մէջէն ձայն մը լսեցի որ կ'ըսէր, Կապիճ մը
ցորենը մէկ դահեկանի, ու երեք կապիճ գարին

*Ոմանք քսանըչորս երէցները

†Ոմանք չ'աւելցնեն յաւիտեանս յաւիտենից կեն-
դանի եղողին

‡Ոմանք եօթը կնիքները

||Ոմանք Եկուր ու տես

մէկ՝ դահեկանի· և ձէթին ու գինիին վնաս չընես։
7 Ու երբոր չորրորդ կնիքը բացաւ, չորրորդ կեն-
դանիէն ձայն մը լսեցի որ կ'ըսէր, Եկուր ու տես·
8 Ու տեսայ, և ահա դեղին ձի մը, ու անոր վրայ
հեծնողին անունը Մահ էր, և Դժոխքը անոր ե-
տևէն կ'երթար· ու անոնց իշխանութիւն տրուե-
ցաւ երկրի չորրորդ մասին վրայ, որ սրով ու
սովով և մահով ու երկրի գազաններով սատ-
կեցընեն։
9 Ու երբոր հինգերորդ կնիքը բացաւ, սեղանին
տակը տեսայ ան մարդոց հոգիները, որ սպան-
նուած էին Աստուծոյ խօսքին համար, ու անոր
10 վկայութեանը համար՝ որ իրենք ունէին· Եւ մեծ
ձայնով աղաղակեցին ու ըսին, Ով սուրբ ու ճըշ-
մարիտ Տէր, մինչև ե՞րբ չես դատեր ու մեր ար-
11 իւնին վրէժը երկրի բնակիչներէն պահանջեր· Եւ
ճերմակ հանդերձներ տրուեցաւ անոնց, ու ըսուե-
ցաւ անոնց որ քիչ մը ատեն ալ հանգչին, մինչև
որ անոնց ծառայակիցները ու անոնց եղբայրները
լման ըլլան, որոնք իրենց պէս պիտի սպաննուէին·
12 Եւ տեսայ՝ երբոր վեցերորդ կնիքը բացաւ, ու
մեծ շարժ մը եղաւ, ու արևը սևցաւ մազեղէն
քուրձի մը պէս, և լուսինը [բոլորովին] արիւնի
13 պէս եղաւ· Ու երկնից աստղերը գետինը թափ-
թըփեցան, ինչպէս որ սաստիկ հովէն շարժուած
14 թզենին իր տհաս պտուղները կը թափէ· Եւ երկին-
քը գալարուող տոմսի պէս կը փաշուէր· ու բոլոր
լեռները և կղզիները իրենց տեղերէն շարժեցան·
15 Ու երկրի թագաւորները և մեծամեծները ու հա-
րուստները, հազարապետները և զօրաւորները,
ու բոլոր ծառաները ու բոլոր ազատները այրե-
րուն և լերանց ապառաժներուն մէջ պահուըտե-
16 ցան· Եւ լեռներուն ու ապառաժներուն կ'ըսէին,
Վրանիս ինկէք ու մեզ ծածկեցէք անոր երեսէն՝
որ աթոռին վրայ կը նստի, ու Գառնուկին բար-

17 կութենէն· Ինչու որ անոր բարկութեանը մեծ
օրը եկաւ, և ո՞վ կրնայ դիմանալ·

ԳԼ. Է

1 Եւ ասկէ ետև տեսայ չորս հրեշտակներ՝ որոնք
երկրի չորս անկիւնը կեցեր էին, ու երկրի չորս
հովերը բռներ էին, որ երկրի վրայ հով չփչէ,
ու ոչ ծովու վրայ, ոչ ալ մէկ ծառի մը վրայ·
2 Եւ մէկ ուրիշ հրեշտակ մը տեսայ որ արևելքէն
ելաւ, ու կենդանի Աստուծոյ կնիքը ունէր· և
մեծ ձայնով մը աղաղակեց ան չորս հրեշտակնե-
րուն, որոնց իշխանութիւն տրուած էր երկրին ու
3 ծովուն վնասելու, Ու ըսաւ, Երկրին վնաս մի ը-
նէք, ոչ ծովուն, ոչ ալ ծառերուն, մինչև որ
մեր Աստուծոյն ծառաներուն ճակատները կնը-
4 քենք· Եւ կնքուածներուն համրանքը լսեցի՝ որ
էր հարիւր քառասունըչորս հազար՝ Իսրայելի
5 որդւոցը բոլոր ցեղերէն կնքուած· Յուդայի ցե-
ղէն տասուերկու հազար կնքուած, Ռուբէնի ցե-
ղէն տասուերկու հազար կնքուած, Գադի ցեղէն
6 տասուերկու հազար կնքուած, Ասերի ցեղէն
տասուերկու հազար կնքուած, Նեփթաղիմի ցե-
ղէն տասուերկու հազար կնքուած, Մանասէի
7 ցեղէն տասուերկու հազար կնքուած, Շմաւոնի
ցեղէն տասուերկու հազար կնքուած, Ղևիի ցե-
ղէն տասուերկու հազար կնքուած, Իսաքարի
8 ցեղէն տասուերկու հազար կնքուած, Զաբուղոնի
ցեղէն տասուերկու հազար կնքուած, Յովսէփի
ցեղէն տասուերկու հազար կնքուած, Բենիամինի
ցեղէն տասուերկու հազար կնքուած·
9 Ասկէ ետքը տեսայ, և ահա մեծ բազմութիւն՝
որն որ մէկը չէր կրնար համրել, բոլոր ազգերէն
ու ցեղերէն և ժողովուրդներէն ու լեզուներէն,
որոնք աթոռին առջևը ու Գառնուկին առջևը

կեցեր էին՝ ճերմակ հանդերձներ հագած և ձեռ–
10 քերնին արմաւենիներ բռնած. Ու մեծաձայն
կ՚աղաղակէին ըսելով, Փրկութիւնը մեր Աստու–
ծոյ՝ որ աթոռին վրայ կը նստի, ու Գառնուկին.
11 Ու բոլոր հրեշտակները աթոռին ու երէցներուն
և չորս կենդանիներուն բոլորտիքը կեցեր էին,
ու իրենց երեսներուն վրայ աթոռին առջևը ին–
12 կան ու Աստուծոյ երկրպագութիւն ըրին, Ըսե–
լով, Ամէն. օրհնութիւն ու փառք և իմաստու–
թիւն ու գոհութիւն և պատիւ ու զօրութիւն և
կարողութիւն մեր Աստուծոյն յաւիտեանս յա–
13 ւիտենից. Ամէն. Ու երէցներէն մէկը պատասխան
տալով՝ ինծի ըսաւ, Ասոնք որ ճերմակ հանդերձ–
14 ներ հագած են՝ ո՞վ են, և ուսկի՞ց եկան։ Ես ալ
ըսի անոր, Տէր իմ, դուն գիտես. ու ըսաւ ինծի,
Ասոնք են մեծ նեղութենէ եկողները, որ իրենց
հանդերձները լուացին, ու զանոնք Գառնուկին
15 արիւնովը ճերմկցուցին. Անոր համար Աստուծոյ
աթոռին առջևն են, և իրեն կը ծառայեն ցորեկ
ու գիշեր իր տաճարին մէջը. և աթոռին վրայ
նստողը իր վրանը պիտի տարածէ անոնց վրայ.
16 Այսուհետև ոչ պիտի անօթենան ու ոչ ծարա–
ւին, ոչ ալ արևը կամ մէկ տաքութիւն մը ա–
17 նոնց վրայ պիտի իյնայ. Վասն զի Գառնուկը որ
աթոռին մէջն է՝ պիտի հովուէ զանոնք, ու կեն–
դանի ջուրերու աղբիւրները պիտի առաջնորդէ
զանոնք. և Աստուած բոլոր արցունքները պիտի
սրբէ անոնց աչքերէն։

ԳԼ. Ը

1 Ու երբոր եօթներորդ կնիքը բացաւ, լռութիւն
եղաւ երկինքը կէս ժամու չափ.
2 Ու տեսայ այն եօթը հրեշտակները, որ Աստու–
ծոյ առջևը կը կայնէին. ու անոնց եօթը փող

3 տրուեցաւ։ Ու ուրիշ հրեշտակ մը եկաւ սեղանին
առջևը կայնեցաւ, ու ոսկեղէն խնկանոց մը ու–
նէր. և իրեն շատ խունկ տրուեցաւ, որ բոլոր
սրբոց աղօթքներուն հետ աթոռին առջևը եղող
4 ոսկի սեղանին վրայ մատուցանէ. Ու խունկերուն
ծուխը սրբոց աղօթքներուն հետ հրեշտակին
5 ձեռքէն Աստուծոյ առջևը ելաւ։ Ու հրեշտակը
առաւ խնկանոցը ու զանիկա սեղանին կրակէն
լեցուց, և ձգեց երկրին վրայ. ու եղաւ ձայներ
և որոտումներ ու փայլակներ ու երկրաշարժ.
6 Ու եօթը հրեշտակները որ եօթը փողերը ունէին՝
պատրաստուեցան որ հնչեցնեն.
7 Ու առջի հրեշտակը փողը հնչեցուց, ու եղաւ
կարկուտ ու կրակ արիւնով խառնուած, ու երկրի
վրայ ձգուեցաւ, [ու երկրին երրորդ մասը այ–
րեցաւ,] և ծառերուն երրորդ մասը այրեցաւ,
ու ամէն կանանչ խոտ այրեցաւ։
8 Ու երկրորդ հրեշտակը փողը հնչեցուց, և որ–
պէս թէ մէկ մեծ լեռ մը կրակով բորբոքած՝
ծովը ձգուեցաւ, ու ծովուն երրորդ մասը արիւն
9 եղաւ. Ու ծովուն մէջի շնչաւոր արարածներուն
երրորդ մասը մեռաւ, ու նաւերուն երրորդ մասը
կորսուեցաւ։
10 Ու երրորդ հրեշտակը փողը հնչեցուց, ու եր–
կինքէն մէկ մեծ աստղ մը ինկաւ ջամբարի պէս
բորբոքած, և գետերուն ու ջուրի աղբիւրներուն
11 երրորդ մասին վրայ ինկաւ. Ու այն աստղին ա–
նունը Օշինդր էր. ու ջուրերուն երրորդ մասը
օշինդր եղաւ, և շատ մարդիկ ջուրերէն մեռան,
քանզի դառն եղան.
12 Ու չորրորդ հրեշտակը փողը հնչեցուց, ու ա–
րևին երրորդ մասը և լուսնին երրորդ մասը ու
աստղերուն երրորդ մասը զարնուեցաւ, անանկ որ
անոնց երրորդ մասը խաւարի, և օրուան երրորդ
մասը լոյս չտայ, նոյնպէս ալ գիշերուանը.

13 Ու նայեցայ՝ ու երկնից մէջ թռչող *հրեշտակի
մը ձայն լսեցի, որ մեծ ձայնով կ'ըսէր, Վա՜յ, վա՜յ,
վա՜յ երկրի վրայ բնակողներուն՝ ան մնացած
փողի ձայներուն համար, որ երեք հրեշտակները
պիտի հնչեցնեն։

ԳԼ. Թ

1 Ու հինգերորդ հրեշտակը փողը հնչեցուց, ու
տեսայ որ երկինքէն աստղ մը ինկաւ երկրի վրայ,
և անդունդի գուբին բանալին անոր տրուեցաւ.
2 Ու անդունդին գուբը բացաւ, ու ան գուբէն
ծուխ կ'ելլէր մեծ հնոցի մը ծուխին պէս. ու
խաւարեցաւ արևը ու օդը գուբին ծուխէն։
3 Ու ծուխէն մարախներ կ'ելլէր երկրի վրայ, ու
անոնց զօրութիւն տրուեցաւ երկրի կարիճներուն
4 ունեցած զօրութեանը պէս. Ու անոնց ըսուեցաւ
որ չվնասեն երկրի խոտին, ոչ ալ կանանչեղէնի մը
և ոչ մէկ ծառի մը, հապա միայն ան մարդոց,
որոնք իրենց ճակատներուն վրայ Աստուծոյ
5 կնիքը չունին։ Ու անոնց հրաման տրուեցաւ որ
չսպաննեն զանոնք, հապա չարչարեն զանոնք
հինգ ամիս. ու անոնց տուած չարչարանքը կա-
րիճի տուած չարչարանքին պէս էր՝ երբոր մարդը
6 կը զարնէ։ Ու ան օրերը մարդիկ մահը պիտի
փնտռեն ու պիտի չգտնեն. և պիտի ուզեն մեռ-
7 նիլ, ու մահը անոնցմէ պիտի փախչի։ Ու մարախ-
ներուն նմանութիւնը՝ պատերազմի պատրաս-
տուած ձիերու պէս, ու անոնց գլուխներուն
վրայ †ոսկեղէն պսակներու պէս, և անոնց երես-
8 ները մարդոց երեսներու պէս էր. Ու անոնք
մազեր ունէին կանանց մազերուն պէս, ու ա-

*Ոմանք արծուի
†Ոմանք ոսկւոյ նման

նոնց ակռաները առիւծներու ակռաներուն պէս
9 էր։ Ու զրահներ ունէին երկաթէ զրահներու
պէս. ու անոնց թևերուն ձայնը պատերազմի
վազող շատ ձիեր լծուած կառքերու ձայնին պէս
10 էր. Ու կարիճներու նման պոչեր ունէին, ու պո-
չերնուն վրայ խայթոց. և իշխանութիւն ունէին
11 հինգ ամիս մարդոց վնասելու։ Ու իրենց վրայ
թագաւոր ունէին անդունդին հրեշտակը, որուն
անունը Եբրայեցերէն *Աբադոն, և Յոյն լեզուով
12 կ'ըսուի *Ապողիոն։ Մէկ վայը անցաւ. ասկէ ե-
տև ահա երկու վայեր ալ կու գան։
13 Ու վեցերորդ հրեշտակը փողը հնչեցուց, ու
ձայն մը լսեցի Աստուծոյ առջևը եղող ոսկի սե-
14 ղանին չորս եղջիւրներէն, Որ կ'ըսէր վեցերորդ
հրեշտակին որ փողը ունէր, Եփրատ մեծ գետին
15 վրայ կապուած չորս հրեշտակները արձակէ։ Ու
ան չորս հրեշտակները արձակուեցան, որ պատ-
րաստուած էին ժամի ու օրուան և ամսի ու
տարիի համար, որ մարդոց երրորդ մասը մեռ-
16 ցնեն։ Ու ձիաւոր զօրքերուն համրանքը երկու
բիւրք բիւրուց էր, ու լսեցի անոնց համրանքը։
17 Ու տեսիլքին մէջ այսպէս տեսայ ձիերը, ու ա-
նոնց վրայ հեծնողները՝ որ ունէին հրեղէն ու
յակնթեղէն և ծծմբեղէն զրահներ. և ձիերուն
գլուխները առիւծներու գլուխներուն պէս էր,
ու անոնց բերնէն կրակ ու ծուխ և ծծումբ կ'ել-
18 լէր։ Աս երեք [հարուած]ներէն մարդոց երրորդ
մասը մեռաւ, այսինքն կրակէն ու ծուխէն ու
19 ծծումբէն՝ որ անոնց բերնէն կ'ելլէր։ Ինչու որ
†անոնց զօրութիւնը բերաններնուն մէջն է ու
պոչերնուն մէջ. քանզի անոնց պոչերը օձերու
նման էին, ու գլուխներ ունէին որոնցմով կը

*Այսինքն կորուսիչ
†Ոմանք ան ձիերուն

20 մնացածին. Եւ ուրիշ մարդիկ որ աս հարուածնե-
րէն չսպաննուեցան, իրենց ձեռացը գործքերէն
չապաշխարեցին, որ երկրպագութիւն չընեն դե-
ւերուն, ու ոսկիէ և արծաթէ ու պղնձէ և քարէ
ու փայտէ շինուած կուռքերուն, որոնք ոչ կըր-
21 նան տեսնել՝ ոչ ալ լսել ու ոչ քալել· Նաև չա-
պաշխարեցին իրենց մարդասպանութիւններէն,
ոչ ալ իրենց կախարդութիւններէն, ոչ ալ իրենց
պոռնկութենէն և ոչ իրենց գողութիւններէն։

Գլ. Ժ

1 Եւ տեսայ ուրիշ զօրաւոր հրեշտակ մը որ եր-
կինքէն կ'իջնէր, ու ամպ հագած էր և իր գլխուն
վրայ ծիածան կար. ու իր երեսը արևի պէս էր,
2 և իր ոտքերը՝ կրակի սիւներու պէս. Եւ իր
ձեռքը գրքոյկ մը ունէր բացուած. ու իր աջ
ոտքը ծովուն վրայ դրաւ, և ձախը՝ ցամաքին
3 վրայ. Եւ մեծ ձայնով աղաղակեց առիւծի մը
գոչելուն պէս. ու երբոր աղաղակեց՝ եօթը որո-
4 տումները իրենց ձայներովը խօսեցան։ Ու երբոր
եօթը որոտումները *խօսեցան, պիտի գրէի. ու
երկինքէն ձայն մը լսեցի որ †կ'ըսէր, Կնքէ ան
բաները որ եօթը որոտումները խօսեցան, ու զա-
5 նոնք մի գրեր. Եւ այն հրեշտակը որ ծովուն վրայ
ու ցամաքին վրայ կայնած տեսայ, իր [աջ] ձեռքը
6 երկինք վերցուց. Ու երդում ըրաւ յաւիտեանս
յաւիտենից կենդանի եղողին վրայ, որ ստեղծեց
երկինքը ու ինչ որ անոր մէջն է, ու երկիրը և
ինչ որ անոր մէջն է, և ծովը ու ինչ որ անոր
7 մէջն է, թէ ալ ժամանակ պիտի չըլլայ. Հապա
եօթներորդ հրեշտակին ձայնին օրերը՝ երբոր

*Ոմանք իրենց ձայներովը խօսեցան
†Ոմանք ինծի կ'ըսէր

փողը հնչեցընէ, Աստուծոյ խորհուրդը պիտի կա-
տարուի, ինչպէս որ իր ծառաներուն մարգարէ-
ներուն աւետիս տուաւ.
8 Եւ այն ձայնը որ երկինքէն լսեցի՝ նորէն խօ-
սեցաւ ինծի ու ըսաւ, Գնա առ այն բաց գրքոյկը՝
որ ծովուն ու ցամաքին վրայ կայնող հրեշտակին
9 ձեռքն է. Ես ալ հրեշտակին գացի ու ըսի անոր,
Տուր ինծի աս գրքոյկը. ու ըսաւ ինծի, Առ
ասիկա ու կեր. և քու փորիդ մէջ դառնութիւն
պիտի պատճառէ, բայց բերնիդ մէջ մեղրի պէս
10 անոյշ պիտի ըլլայ. Եւ գրքոյկը հրեշտակին ձեռ-
քէն առի ու կերայ զանիկա. և իմ բերնիս մէջը
մեղրի պէս անոյշ էր, և ուտելէս ետքը փորիս
11 մէջը դառնութիւն եղաւ. Ու ըսաւ ինծի, Պէտք
է որ դուն նորէն մարգարէութիւն ընես շատ
ժողովուրդներու և ազգերու ու լեզուներու և
թագաւորներու *վրայով.

Գլ. ԺԱ

1 Եւ ինծի մէկ եղէգ մը տրուեցաւ գաւազանի
պէս, և հրեշտակը կայներ էր ու կ'ըսէր, Ելիր ու
չափէ Աստուծոյ տաճարը ու սեղանը, և անոր
2 մէջ երկրպագութիւն ընողները. Ու գաւիթը որ
տաճարին դուրսն է՝ ձգէ և մի չափեր, ինչու որ
անիկա հեթանոսներուն տրուած է, ու անոնք
սուրբ քաղաքը պիտի կոխկռտեն քառասուն-
3 երկու ամիս. Եւ իմ երկու վկաներուս զօրութիւն
պիտի տամ, և անոնք քուրձ հագած հազար
երկու հարիւր ու վաթսուն օր մարգարէութիւն
4 պիտի ընեն. Ասոնք այն երկու ձիթենիները ու
երկու աշտանակներն են, որ երկրին Տէրոջը առ-
5 ջևը կը կենան. Եւ թէ որ մէկը ուզէ անոնց վնաս

*Կամ առջև.

ընել, անոնց բերաններէն կրակ կ'ելլէ, ու իրենց
թշնամիները կ'ուտէ. և թէ որ մէկը ուզէ անոնց
վնաս ընել, պէտք է որ անիկա այսպէս սպան-
6 նուի։ Ասոնք իշխանութիւն ունին երկինքը գո-
ցելու՝ որ իրենց մարգարէութեան օրերը անձրև
չգայ, ու ջուրերուն վրայ իշխանութիւն ունին՝
անոնք արիւն դարձնելու, և ամէն կերպ պա-
տուհասներով երկիրը զարնելու՝ քանի անգամ
7 որ ուզեն։ Ու երբոր իրենց վկայութիւնը կատա-
րեն, անատենը անդունդէն ելլող գազանը անոնց
հետ պատերազմ պիտի ընէ, և անոնց պիտի
8 յաղթէ ու պիտի սպաննէ անոնք։ Եւ անոնց դի-
երը ինկած պիտի մնան այն մեծ քաղաքին հրապա-
րակին մէջ, որ հոգևորապէս կ'ըսուի Սոդոմ ու
9 Եգիպտոս, ուր որ *մեր Տէրն ալ խաչուեցաւ։ Եւ
ժողովուրդներէն ու ցեղերէն և լեզուներէն ու
ազգերէն պիտի տեսնեն անոնց դիերը երեք ու
կէս օր. ու թող պիտի չտան անոնց դիերը գերեզ-
10 մաններու մէջ թաղելու։ Եւ անոնք որ երկրի
վրայ կը բնակին՝ ուրախ պիտի ըլլան ու խնդան
անոնց վրայ, մինչև անգամ իրարու ընծաներ
պիտի խրկեն. ինչու որ այս երկու մարգարէները
երկրի բնակիչները չարչարեցին։
11 Եւ երեք ու կէս օրէն ետև Աստուծմէ կենդա-
նութեան հոգի մտաւ անոնց մէջ, ու իրենց ոտ-
քերուն վրայ կայնեցան. և զանոնք տեսնողնե-
12 րուն վրայ մեծ վախ ինկաւ։ Ու երկինքէն մեծ
ձայն մը †լսեցին, որ կ'ըսէր անոնց, Վեր ելէք՝
հոս ելէք. և անոնք ամպով երկինքը վերացան,
13 ու անոնց թշնամիները զանոնք տեսան։ Եւ նոյն
ժամուն մեծ երկրաշարժ մը եղաւ, ու քաղաքին
տասներորդ մասը կործանեցաւ, և այն երկրա-
շարժէն եօթը հազար մարդիկ մեռան, ու մնա-

*Ոմանք՝ իրենց

†Ոմանք՝ լսեցի

ցածները վախով լեցուեցան ու փառք տուին
14 երկնից Աստուծոյն։ Երկրորդ վայը անցաւ. ահա
երրորդ վայը շուտով կու գայ։
15 Ու եօթներորդ հրեշտակը փողը հնչեցուց. ու
երկնից մէջ մեծ ձայներ եղան որ կ'ըսէին, Աշ-
խարհին թագաւորութիւնները մեր Տէրոջը ու
իր Օծեալինը եղան, և ինքը պիտի թագաւորէ
16 յաւիտեանս յաւիտենից։ Եւ քսանըչորս երէց-
ները որ իրենց աթոռներուն վրայ նստած էին
Աստուծոյ առջևը, իրենց երեսներուն վրայ ին-
կան և Աստուծոյ երկրպագութիւն ըրին՝ ըսելով,
17 Քեզի գոհութիւն կը մատուցանենք, Ամենակալ
Տէր Աստուած, որ ես և որ էիր*, որ քու մեծ
18 զօրութիւնդ առիր ու թագաւորեցիր։ Եւ ազ-
գերը բարկացան. ու քու բարկութիւնդ եկաւ,
և մեռելներուն ժամանակը՝ որ դատուին, ու
վարձք տաս քու ծառաներուդ մարգարէներուն
և սուրբերուն ու քու անունէդ վախցողներուն՝
պզտիկներուն ու մեծերուն, և երկրի ապականիչ-
ները ապականես։
19 Ու երկնից մէջ Աստուծոյ տաճարը բացուեցաւ,
և †անոր ուխտին տապանակը իր տաճարին մէջը
երևցաւ. ու եղան փայլակներ ու ձայներ և որո-
տումներ ու երկրաշարժ և խոշոր կարկուտ։

ԳԼ. ԺԲ

1 Ու երկնից մէջ մեծ նշան մը երևցաւ. մէկ կնիկ
մը արևը իր վրան առած, ու լուսինը իր ոտքե-
րուն տակը. և իր գլխուն վրայ տասուերկու
2 աստղէ պսակ մը. Եւ յղի էր, ու երկանց մէջ

*Ոմանք՝ Կաս ու էիր և որ պիտի գաս

†Ոմանք՝ Տէրոջը

ըլլալով եւ ծնանելու համար շատ նեղութիւն քա-
շելով կը պոռար։
3 Ու երկնից մէջ ուրիշ նշան մը երեւցաւ, եւ ա-
հա մէկ մեծ շառագոյն վիշապ մը, որ եօթը գլուխ
ու տասը եղջիւր ունէր, եւ իր գլուխներուն վրայ
4 եօթը թագ։ Եւ անոր պոչը երկնից աստղերուն
երրորդ մասը կը քաշէր, ու զանոնք երկրի վրայ
ձգեց. եւ վիշապը կեցեր էր այն կնկանը առջեւը
որ ծնանելու վրայ էր, որ երբոր ծնանի, անոր
5 զաւակը կլլէ։ Ու ինքը արու զաւակ մը ծնաւ, որ
երկաթէ գաւազանով պիտի հովուէր բոլոր ազ-
գերը. եւ անոր զաւակը յափշտակուեցաւ Աստու-
6 ծոյ քովը ու անոր աթոռին քովը։ Եւ կինը ա-
նապատը փախաւ, ուր որ անոր տեղ պատրաս-
տուած էր Աստուծմէ, որ հոն կերակրուի հազար
երկու հարիւր ու վաթսուն օր։
7 Ու երկնից մէջ պատերազմ եղաւ. Միքայէլ ու
իր հրեշտակները վիշապին հետ պատերազմեցան.
վիշապն ալ իր հրեշտակներովը պատերազմեցաւ.
8 Ու չկրցան դէմ կենալ, ու երկնից մէջ ալ տեղ
9 չգտնուեցաւ անոնց։ Եւ վար ձգուեցաւ մեծ վի-
շապը՝ այն առջի օձը որ Բանսարկու ու Սատա-
նայ կ'ըսուի, որ բոլոր աշխարհ մոլորցուց. ու իր
հրեշտակները իրեն հետ վար ձգուեցան երկրի
10 վրայ։ Եւ մեծ ձայն մը լսեցի երկնից մէջ որ
կ'ըսէր, Հիմա եղաւ մեր Աստուծոյ փրկութիւնը
ու զօրութիւնը եւ թագաւորութիւնը, ու անոր
Օծեալին իշխանութիւնը. ինչու որ մեր եղբայր-
ներուն դէմ չար խօսողը վար ձգուեցաւ, որ ա-
նոնց դէմ չարախօսութիւն կ'ընէր մեր Աստու-
11 ծոյն առջեւը ցորեկ ու գիշեր։ Եւ անոնք անոր
յաղթեցին Գառնուկին արիւնովը, ու իրենց վկա-
յութեանը խօսքովը. եւ իրենց կեանքը չսիրեցին
12 մինչեւ 'ի մահ։ Ասոր համար ուրախացէք, ով եր-
կինք ու անոր մէջը բնակողներ. վա՜յ երկրին ու

ծովուն*, որ Բանսարկուն ձեզի իջաւ, որ շատ
բարկութիւն ունի՝ գիտնալով որ քիչ ժամանակ
պիտի կենայ։
13 Ու երբոր վիշապը տեսաւ որ ինքը երկրի վրայ
ձգուեցաւ, արու զաւակ ծնանող կնկանը ետեւէն
14 ինկաւ։ Եւ այն կնկանը մեծ արծիւի երկու թե-
ւեր տրուեցաւ, որ անապատ իր տեղը թռչի,
ուր որ պիտի կերակրուէր ժամանակ ու ժամա-
15 նակներ ու կէս ժամանակ՝ օձին երեսէն։ Եւ օձը
իր բերնէն գետի պէս ջուր վազցուց կնկանը ե-
16 տեւէն, որ զանիկա հեղեղով ընկղմէ։ Ու երկիրը
օգնեց կնկանը, ու երկիրը իր բերանը բացաւ եւ
կլլեց այն գետը, որ վիշապը իր բերնէն վազցուց։
17 Ու վիշապը բարկացաւ կնկանը դէմ, եւ գնաց
պատերազմելու անոր ուրիշ զաւակներուն հետ,
որոնք Աստուծոյ պատուիրանքները կը պահէին,
ու †Յիսուսի վկայութիւնը ունէին։
18 Եւ ‡կայնեցայ ծովուն աւազին վրայ։

ԳԼ. ԺԳ

1 Ու տեսայ որ ծովէն գազան մը կ'ելլէր, եւ ունէր
եօթը գլուխ ու տասը եղջիւր. եւ անոր եղջիւր-
ներուն վրայ տասը թագ, ու անոր գլուխներուն
2 վրայ հայհոյութեան անուններ կար։ Եւ այն գա-
զանը որ տեսայ՝ ընձու նման էր, ու իր ոտքերը
արջու պէս, եւ իր բերանը առիւծի բերնի պէս.
ու վիշապը անոր տուաւ իր զօրութիւնը եւ իր ա-
3 թոռը ու մեծ իշխանութիւն։ Եւ անոր գլուխ-
ներուն մէկը մահու չափ վիրաւորուածի պէս ||էր.
ու անոր մահուան վէրքը առողջացաւ. եւ բոլոր

*Ոմանք՝ Վա՜յ երկրի ու ծովու բնակչացդ
†Ոմանք՝ Յիսուսի Քրիստոսի
‡Ոմանք՝ կայնեցաւ
||Ոմանք՝ տեսայ

4 երկիրը գազանին ետեւէն զարմացաւ։ Եւ երկրպագութիւն ըրին վիշապին՝ որ գազանին իշխանութիւն տուաւ, ու երկրպագութիւն ըրին գազանին՝ ըսելով, Ո՞վ է աս գազանին նման. և
5 ո՞վ կրնայ անոր հետ պատերազմ ընել։ Եւ անոր մեծ բաներ ու հայհոյութիւններ խօսող բերան տրուեցաւ. և քառասունուերկու ամիս անոր իշխանութիւն տրուեցաւ էր ի—մ+ը ընելու։
6 Ու իր բերանը հայհոյութեամբ Աստուծոյ դէմ բացաւ, անոր անունը ու անոր խորանը ու եր-
7 կինքը բնակողները հայհոյելու։ Եւ անոր էշէ—նու—ընէ—ն տրուեցաւ սուրբերուն հետ պատերազմ ընելու ու անոնց յաղթելու. և անոր իշխանութիւն տրուեցաւ բոլոր ցեղերու [և ժողովուրդ-
8 ներու] ու լեզուներու և ազգերու վրայ. Եւ անոր երկրպագութիւն պիտի ընեն երկրի վրայ բոլոր բնակողները, որոնց անունները աշխարհիս սկիզբէն 'ի վեր՝ մորթուած Գառնուկին կենաց
9 գրքին մէջը գրուած չեն։ Ով որ ականջ ունի՝
10 թող լսէ։ Ով որ գերութեան քշէ, ինքը գերի պիտի տարուի. ով որ սրով սպաննէ, պէտք է որ ինքը սրով սպաննուի. Հոս է սուրբերուն համբերութիւնը ու հաւատքը։
11 Եւ մէկ ուրիշ գազան մը տեսայ՝ որ երկրէն կ'ելլէր, ու գառնուկի նման երկու եղջիւր ու-
12 նէր, ու կը խօսէր վիշապին պէս։ Եւ առջի գազանին բոլոր իշխանութիւնը կը վարէր անոր առջեւը, ու երկիրը *և անոր բնակիչները կը ստիպէր որ երկրպագութիւն ընեն առջի գազանին՝ որուն
13 մահուան վէրքը առողջացաւ։ Եւ մեծ նշաններ կ'ընէր, ու մինչեւ անգամ երկինքէն կրակ կ'ի-
14 ջեցնէր երկրի վրայ մարդոց առջեւը։ Ու երկրի վրայ բնակողները կը մոլորցնէր այն նշաններով,

*Ոմանք և բոլոր

որ իր ձեռքը տրուած էր գազանին առջեւը ընելու. ու երկրի բնակիչներուն կ'ըսէր որ պատկեր շինեն այն գազանին, որ սրով վիրաւորուած էր
15 ու առողջացաւ։ Եւ էշէ—նու—ընէ—ն տրուեցաւ անոր, որ գազանին պատկերին հոգի տայ, որ գազանին պատկերը խօսի. և ով որ գազանին պատկերին երկրպագութիւն չընէ, զանիկա սպաննել
16 տայ։ Եւ կը ստիպէր ամէնը՝ այսինքն պզտիկները ու մեծերը և հարուստները ու աղքատները և ազատները ու ծառաները, որ իրենց աջ ձեռքին վրայ կամ իրենց ճակատին վրայ դրոշմ ընդու-
17 նին. Եւ որ մէկը չկրնայ գնել կամ ծախել, բայց միայն այն որ ունի դրոշմը կամ գազանին անու-
18 նը կամ անոր անուանը թիւը։ Հոս է իմաստութիւնը. ով որ միտք ունի՝ թող հաշուէ գազանին թիւը. *քանզի մարդու մը թիւ է, ու անոր թիւը վեց հարիւր վաթսունուվեց է։

ԳԼ. ԺԴ

1 Եւ տեսայ՝ և ահա Գառնուկը կայներ էր Սիօն լեռանը վրայ, ու անոր հետը հարիւր քառասունուչորս հազարը, որոնք ունէին [անոր անունը և] անոր Հօրը անունը իրենց ճակատներուն
2 վրայ գրուած։ Ու երկինքէն ձայն մը լսեցի՝ շատ ջուրերու ձայնի պէս ու մեծ որոտումի ձայնի մը պէս, ու լսած ձայնս քնարահարներուն իրենց
3 քնարները զարնելու յ—յնէն կը նմանէր։ Եւ *նոր երգ կ'երգէին աթոռին առջեւը ու չորս կենդանիներուն ու երէցներուն առջեւը. և մէկը չէր կրնար այն երգը սորվիլ բայց 'ի այն հարիւր քառասունուչորս հազարէն, որոնք երկրէն փըր-
4 կուած էին։ Ասոնք անոնք են որ կնիկներու հետ

*Ոմանք որպէս թէ նոր

չխառնակեցան, քանզի կոյս են. ասոնք Գառնուկին ետեւէն կ'երթան՝ ուր որ ան երթայ. ասոնք մարդոց մէջէն փրկուեցան Աստուծոյ ու
5 Գառնուկին երախայրի ըլլալու. Եւ անոնց բերանը սուտ չգտնուեցաւ, ինչու որ անբիծ են*.
6 Եւ ուրիշ հրեշտակ մը տեսայ՝ որ կը թռչէր երկնից մէջ, և ունէր յաւիտենական աւետիսը՝ քարոզելու բոլոր ազգերուն ու ցեղերուն և լեզուներուն ու ժողովուրդներուն որ երկրի վրայ կը
7 բնակին. Եւ մեծ ձայնով կ'ըսէր, Աստուծմէ վախցէք ու փառք տուէք անոր, ինչու որ անոր դատաստանին ժամը եկաւ. ու երկրպագութիւն ըրէք անոր՝ որ ստեղծեց երկինքը ու երկիրը և ծովը ու ջուրերուն աղբիւրները։
8 Եւ անոր ետեւէն ուրիշ հրեշտակ մը եկաւ ու ըսաւ, Ինկաւ, ինկաւ մեծ †Բաբելոնը, ինչու որ բոլոր ազգերը արբեցուց իր կատաղի պոռնկու-
9 թեանը գինիէն։ Եւ անոնց ետեւէն ‡երրորդ հրեշտակ մըն ալ եկաւ, ու մեծ ձայնով մը ըսաւ, Ով որ գազանին ու անոր պատկերին երկրպագութիւն կ'ընէ, և դրոշմը իր ճակատին վրայ կամ
10 իր ձեռքին վրայ կ'ընդունի, Անիկա Աստուծոյ սրտմտութեանը գինիէն պիտի խմէ՝ որ անխառն լեցուած է անոր բարկութեանը գաւաթին մէջ, և կրակով ու ծծումբով պիտի տանջուի սուրբ հրեշտակներուն առջեւը ու Գառնուկին առջեւը։
11 Եւ անոնց տանջանքին ծուխը կ'ելլէ յաւիտեանս յաւիտենից. և ցորեկ ու գիշեր հանգստութիւն չունին անոնք՝ որ գազանին ու անոր պատկերին երկրպագութիւն կ'ընեն, և անոր անուանը
12 դրոշմը կ'ընդունին։ Հոս է սուրբերուն համբե-

---

*Ոմանք. չ'աւելցընեն Աստուծոյ աթոռին առջեւը
†Ոմանք. Բաբելոն քաղաքը
‡Ոմանք. ուրիշ

րութիւնը, *որոնք Աստուծոյ պատուիրանքները
13 ու Յիսուսի հաւատքը կը պահեն։ Ու երկինքէն ձայն մը լսեցի՝ որ †կ'ըսէր, Գրէ, Այսուհետեւ երանելի են այն մեռելները՝ որոնք Տէրոջմով կը ննջեն. այո, կ'ըսէ Հոգին, որ իրենց աշխատութիւնէն հանգչին. ու իրենց գործքերը իրենց ետեւէն կ'երթան։
14 Եւ տեսայ՝ և ահա ճերմակ ամպ մը, ու այն ամպին վրայ մէկը նստեր էր Որդւոյ մարդոյ նման. և իր գլուխը ոսկիէ պսակ մը՝ ու իր ձեռքը սուր մանգաղ մը ունէր։
15 Եւ տաճարէն ուրիշ հրեշտակ մը կ'ելլէր, որ ամպին վրայ նստողին մեծ ձայնով կ'աղաղակէր ու կ'ըսէր, Երկընցուր քու մանգաղդ ու հնձէ. ինչու որ հնձելու ժամանակը ‡եկաւ, ինչու որ
16 երկրի հունձքը հասունցած է։ Եւ ան որ ամպին վրայ կը նստէր, իր մանգաղը երկրին վրայ երկընցուց, ու երկիրը հնձուեցաւ։
17 Ու երկնից մէջի տաճարէն ուրիշ հրեշտակ մը
18 ելաւ, և անիկա ալ սուր մանգաղ մը ունէր։ Ու սեղանէն ուրիշ հրեշտակ մը ելաւ, որ կրակի վրայ իշխանութիւն ունէր, ու մեծ ձայնով կանչեց անոր՝ որ սուր մանգաղը ունէր, ու ըսաւ, Երկընցուր քու սուր մանգաղդ, ու երկրի այգիին ողկոյզները կթէ, ինչու որ անոր խաղող-
19 ները հասունցած են։ Եւ ան հրեշտակը իր մանգաղը երկրին վրայ երկընցուց, ու երկրին այգիին խաղողները կթեց, ու Աստուծոյ բարկութեանը
20 մեծ հնձանին մէջ ձգեց։ Եւ հնձանը քաղաքին դուրսը կոխուեցաւ. ու հնձանէն արիւն կ'ելլէր, ու մինչեւ ձիերուն սանձերը ու հազար վեց հարիւր ասպարէզ կը հոսէր։

---

*Ոմանք. հոս են անոնք որ
†Ոմանք. ինծի կ'ըսէր
‡Ոմանք. քեզի եկաւ

Գլ. ԺԵ

1 Եւ ուրիշ մեծ ու զարմանալի նշան մը տեսայ
երկնքին մէջ, եօթը հրեշտակներ՝ որոնք եօթը
վերջին հարուածները ունէին, որովհետև անոնց-
2 մով կը կատարուէր Աստուծոյ բարկութիւնը։ Ու
տեսայ որպէս թէ ապակեղէն ծով մը կրակով
խառնուած. և անոնք որ յաղթեցին գազանին
ու անոր պատկերին *և անոր անուանը թուոյն,
ապակեղէն ծովուն վրայ կայներ էին, ու Աստու-
3 ծոյ քնարները ունէին։ Եւ Աստուծոյ ծառային
Մովսէսին երգը կ'երգէին, ու Գառնուկին երգը՝
ըսելով, Մեծ ու զարմանալի են քու գործքերդ,
ով Տէր Աստուած Ամենակալ. արդար ու ճշմա-
րիտ են քու ճամբաներդ, ով թագաւոր †սրբոց։
4 Տէր, ո՞վ պիտի չվախնայ քեզմէ, ու քու անունդ
չփառաւորէ, ինչու որ դուն միայն սուրբ ես.
քանզի բոլոր ազգերը պիտի գան ու քու առջիդ
երկրպագութիւն պիտի ընեն, ինչու որ քու ար-
դար դատաստաններդ յայտնուեցան։
5 Եւ ասկէ ետև տեսայ՝ ու բացուեցաւ վկայու-
6 թեան խորանին տաճարը որ երկինքն էր. Ու եօ-
թը հարուածները ունեցող եօթը հրեշտակները
մաքուր ու պայծառ կտաւ հագած՝ և իրենց
կուրծքերուն վրայովը ոսկեղէն գօտի կապած՝
7 տաճարէն ելան։ Եւ չորս կենդանիներէն մէկը
եօթը հրեշտակներուն եօթը ոսկեղէն սկաւառակ-
ներ տուաւ յաւիտեանս յաւիտենից կենդանի
8 եղող Աստուծոյ բարկութիւնովը լեցուն։ Եւ տա-
ճարը Աստուծոյ փառքէն ու անոր զօրութենէն
ծուխով լեցուեցաւ. ու մէկը չէր կրնար տաճա-

*Ոմանք և անոր դրոշմին և
†Ոմանք ազգաց

րը մտնել, մինչև որ կատարուին եօթը հրեշտակ-
ներուն եօթը հարուածները։

Գլ. ԺԶ

1 Եւ տաճարէն մեծ ձայն մը լսեցի՝ որ եօթը հրեշ-
տակներուն կ'ըսէր, Գացէք Աստուծոյ բարկու-
թեանը [եօթը] սկաւառակները երկրի վրայ թա-
փեցէք։
2 Եւ առջի հրեշտակը գնաց ու իր սկաւառակը
երկրի վրայ թափեց. ու չարաչար պալարներ ե-
ղաւ այն մարդոցը վրայ, որոնք գազանին դրոշմը
ունէին ու անոր պատկերին երկրպագութիւն
կ'ընէին։
3 Ու երկրորդ հրեշտակը իր սկաւառակը ծովուն
վրայ թափեց, ու ծովը մեռած մարդու արիւն
դարձաւ, և ծովուն մէջի բոլոր կենդանիները
մեռան։
4 Ու երրորդ հրեշտակը իր սկաւառակը գետե-
րուն և ջուրերու աղբիւրներուն վրայ թափեց,
5 ու անոնք արիւն դարձան։ Եւ ջուրերուն հրեշ-
տակէն լսեցի՝ որ կ'ըսէր, Արդար ես դուն, *որ
ես և որ էիր, և սուրբ ես, որ ասանկ դատաս-
6 տաններ ըրիր. ինչու որ անոնք սուրբերուն ու
մարգարէներուն արիւնը թափեցին. և դուն ա-
7 նոնց արիւն խմել տուիր, քանզի արժանի են։ Եւ
սեղանէն †լսեցի՝ որ կ'ըսէր, Այո, Ամենակալ
Տէր Աստուած, քու դատաստաններդ արդար ու
ճշմարիտ են։
8 Եւ չորրորդ հրեշտակը իր սկաւառակը արևին
9 վրայ թափեց։ Ու անոր զօրութիւն տրուեցաւ որ
խորշակահար ընէ մարդիկը կրակով. և սաստիկ
տաքէն խորշակահար եղան մարդիկ, և հայհոյեցին

*Ոմանք Ով Տէր, որ
†Ոմանք ուրիշ մը լսեցի

Աստուծոյ անունը, որ աս հարուածներուն վրայ
իշխանութիւն ունի. ու չապաշխարեցին որ անոր
փառք տան։
10 Ու հինգերորդ հրեշտակը իր սկաւառակը գա-
զանին աթոռին վրայ թափեց, ու անոր թագա-
ւորութիւնը խաւարեցաւ. և ցաւէն լեզուներնին
11 կը ծամէին. Ու երկնից Աստուածը հայհոյեցին ի-
րենց ցաւերուն և իրենց պալարներուն պատճա-
ռովը. ու իրենց գործքերէն չապաշխարեցին։
12 Ու վեցերորդ հրեշտակը իր սկաւառակը մեծ
գետին Եփրատին վրայ թափեց, ու անոր ջուրե-
րը ցամքեցան, որ արևելքի թագաւորներուն
13 ճամբան պատրաստուի։ Ու տեսայ որ վիշապին
բերնէն ու գազանին բերնէն և սուտ մարգարէին
բերնէն երեք պիղծ ոգիներ ելլէին գորտերու
14 նման. ինչու որ անոնք դևերու ոգիներ են՝ որ
նշաններ կ'ընեն, *ու բոլոր աշխարհին թագաւոր-
ներուն կ'երթան, որ զանոնք Ամենակալ Աստու-
ծոյ ան մեծ օրուանը պատերազմին համար ժող-
15 վեն. (Ահա գողի պէս կու գամ. երանի անոր որ
արթուն կը կենայ ու իր հանդերձները կը պա-
16 հէ, որ մերկ չպտըտի ու իր ամօթը երևնայ.) Ու
զանոնք մէկ տեղ մը ժողվեցին, որ Եբրայեցերէն
Արմագեդոն կ'ըսուի։
17 Ու եօթներորդ հրեշտակը իր սկաւառակը օդին
վրայ թափեց. ու երկնից տաճարէն՝ աթոռէն
18 մեծ ձայն մը ելաւ՝ ըսելով, Եղաւ։ Ու †փայլակ-
ներ ու ձայներ և որոտումներ՝ եղան. ու մեծ
երկրաշարժ մը եղաւ, անանկ որ մարդոց երկրի
վրայ ըլլալէն 'ի վեր անանկ մեծ երկրաշարժ մը
19 եղած չէր։ Ու մեծ քաղաքը երեք մաս եղաւ,
ու ազգերուն քաղաքները կործանեցան, և մեծ

*Ոմանք ու երկրին և

†Ոմանք ձայներ և որոտումներ ու փայլակներ

Բաբելոնը Աստուծոյ առջև յիշուեցաւ, որ իր
սաստիկ բարկութեանը գինիին գաւաթը անոր
20 տայ։ Ու ամէն կղզի փախաւ, ու լեռները չգըտ-
21 նուեցան։ Ու խոշոր կարկուտ գրեթէ մէկ տա-
ղանդի մը կշիռքով երկինքէն կ'իջնէր մարդոց
վրայ. ու մարդիկ հայհոյեցին զԱստուած կար-
կուտին հարուածին համար, ինչու որ խիստ մեծ
էր ան հարուածը։

ԳԼ. ԺԷ

1 Ու եօթը սկաւառակները ունեցող եօթը հրեշ-
տակներէն մէկը եկաւ, ու ինծի հետ խօսեցաւ՝
ըսելով, Եկուր՝ ու քեզի ցուցընեմ ան մեծ պոռ-
նիկին դատաստանը, որ շատ ջուրերուն վրայ կը
2 նստի. Որուն հետ երկրի թագաւորները պոռնը-
կեցան, ու երկրի բնակիչները անոր պոռնկու-
3 թեանը գինիովը գինովցան։ Ու զիս —— անա-
պատը տարաւ հոգիով. ու տեսայ մէկ կնիկ մը՝
որ կարմիր գազանի մը վրայ նստեր էր. և ան
գազանը լեցուն էր հայհոյութեան անուններով,
4 ու եօթը գլուխ և տասը եղջիւր ունէր։ Ու կնիկը
ծիրանի ու կարմիր հագած էր, և զարդարուած
էր ոսկիով ու պատուական քարերով և մարգա-
րիտներով, և իր ձեռքը ոսկիէ գաւաթ մը ունէր
պղծութիւններով ու իր պոռնկութեանը անմաք-
5 րութիւններով լեցուն. Ու անոր ճակատին վրայ
անուն մը գրուած էր՝ Խորհուրդ, Մեծ Բաբելոն՝
պոռնիկներուն ու երկրի պղծութիւններուն մայ-
6 րը։ Ու տեսայ ան կնիկը որ սուրբերուն արիւ-
նովը ու Յիսուսի վկաներուն արիւնովը գինով-
ցած էր. ու երբոր տեսայ անիկա, մեծ զարման-
7 քով զարմացայ։ Ու հրեշտակը ինծի ըսաւ, Ին-
չո՞ւ զարմացար. ես քեզի ըսեմ ան կնկանը խոր-
հուրդը, ու ան գազանին՝ որ զանիկա վրան կը

8 կրէ, ու եօթը գլուխ և տասը եղջիւր ունի։ Այն
գազանը որ տեսար, կար ու չկայ, և անդունդէն
ելլելու ու կորուստը երթալու վրայ է. ու երկրի
վրայ բնակողները՝ որոնց անունները աշխարհի
սկիզբէն 'ի վեր կենաց գրքին մէջը գրուած չեն,
պիտի զարմանան երբոր տեսնեն այն գազանը թէ
9 կար ու չկայ, *թէ և կայ։ Հոս պէտք է իմաս-
տութիւն ունեցող միտք մը. այն եօթը գլուխը
եօթը լեռներ են, ուր որ կինը անոնց վրայ կը
10 նստի. և եօթը թագաւորներ են. Հինգը ինկած
են, մէկը կը կենայ, և միւսը դեռ եկած չէ, ու
11 երբոր գայ՝ քիչ ատեն պիտի մնայ։ Եւ այն գա-
զանը որ կար ու չկայ, անիկա ալ ութերորդ է,
12 ու եօթնէն է, ու դէպ 'ի կորուստը կ'երթայ։ Եւ
տասը եղջիւրը որ տեսար՝ տասը թագաւորներ
են, որոնք դեռ թագաւորութիւն առած չեն,
հապա գազանին հետ մէկ ժամու չափ թագա-
13 ւորներու պէս իշխանութիւն կ'առնեն։ Անոնք
մէկ կամք ունին, ու իրենց զօրութիւնը և իշ-
14 խանութիւնը գազանին կու տան։ Ասոնք Գառ-
նուկին հետ պիտի պատերազմին. և Գառնուկը
անոնց պիտի յաղթէ, քանզի անիկա տէրերուն
Տէրն է ու թագաւորներուն Թագաւորը. և անոր
հետը եղողները կանչուած ու ընտրուած և հա-
15 ւատարիմ են։ Ու ըսաւ ինծի, Այն ջուրերը որ
տեսար՝ որոնց վրայ պոռնիկը նստեր է, ժողո-
վուրդներ են ու բազմութիւններ և ազգեր ու
16 լեզուներ։ Եւ տասը եղջիւրները որ գազանին
վրայ տեսար, անոնք պիտի ատեն պոռնիկը, ու
զանիկա ամայի ու մերկ պիտի ընեն, և անոր
մարմինը պիտի ուտեն, ու զանիկա կրակով այ-
17 րեն։ Ինչու որ Աստուած անոնց սրտին մէջը
դրաւ որ իր կամքը կատարեն ու մէկ կամք ըլ-

*Ոմն. և մօտ է

լան, և իրենց թագաւորութիւնը գազանին տան,
18 մինչև որ Աստուծոյ խօսքերը կատարուին։ Եւ
կինը որ տեսար՝ այն մեծ քաղաքն է, որ կը
թագաւորէ երկրի թագաւորներուն վրայ։

ԳԼ. ԺԸ

1 Եւ ասկէ ետքը [ուրիշ] հրեշտակ մը տեսայ որ
երկինքէն կ'իջնէր, և մեծ իշխանութիւն ունէր,
2 ու երկիրը անոր փառքէն լուսաւորուեցաւ։ Եւ
*զօրաւոր ձայնով աղաղակեց՝ ըսելով, Ինկաւ,
ինկաւ մեծ Բաբելոնը, և դեւերու բնակարան
եղաւ, ու բոլոր պիղծ ոգիներու արգելանոց, և
բոլոր պիղծ ու ատելի թռչուններու վանդակ.
3 ինչու որ անոր կատաղի պոռնկութեանը գինիէն
խմեցին բոլոր ազգերը, ու երկրի թագաւորները
անոր հետ պոռնկեցան, և երկրի վաճառական-
ները անոր չափազանց զեղխութենէն հարստա-
4 ցան։ Ու երկինքէն ուրիշ ձայն մը լսեցի որ կ'ը-
սէր, Ելէք անոր մէջէն, իմ ժողովուրդս, որ
անոր մեղքերուն հաղորդ չըլլաք, ու անոր
5 հարուածներէն բաժին չառնէք. ինչու որ անոր
մեղքերը մինչև երկինքը հասան կցուեցան. ու
6 Աստուած անոր անիրաւութիւնները յիշեց։ Հա-
տուցէք անոր՝ ինչպէս որ ինքը †հատուց. ու
իր գործքերուն համեմատ կրկնապատիկ փոխա-
րինեցէք անոր. այն գաւաթը որ ինքը լեցուց՝
7 կրկնապատիկ լեցուցէք իրեն։ Որչափ որ փա-
ռաւորեց զինքը և զեղխութեամբ ապրեցաւ,
այնչափ ալ տանջանք և սուգ հատուցէք անոր.
ինչու որ իր սրտին մէջը կ'ըսէ թէ Ես թագուհի
կը նստիմ, ու որբևայրի չեմ, ու բնաւ սուգ

*Ոմն. զօրութեամբ՝ մեծ
†Ոմն. ձեզի հատուց

8 պիտի չտեսնեմ։ Անոր համար մէկ օրուան մէջ
պիտի գան անոր հարուածները՝ մահ ու սուգ և
սով, ու կրակով պիտի այրի. ինչու որ հզօր է
9 Տէր Աստուած որ զանիկա դատեց։ Ու երկրի
թագաւորները՝ որ անոր հետ պոռնկեցան ու
հեշտացան, պիտի լան ու կոծեն անոր վրայ երբոր
10 անոր հրկիզութեանը ծուխը տեսնեն. Եւ անոր
տանջանքին վախէն հեռուն պիտի կայնին ու
ըսեն, Վա՜յ, վա՜յ քեզի, մեծ Բաբելոն քաղաք՝
հզօր քաղաք, որ մէկ ժամու մէջ եկաւ քու դա-
11 տաստանդ։ Ու երկրի վաճառականները պիտի
ողբան ու սուգ ընեն անոր վրայ. ինչու որ ալ
12 մէկը ծախու չառներ անոնց վաճառքը. Ոսկիի,
ու արծաթի, և պատուական քարերու, ու մար-
գարիտներու, և բեհեզի, ու ծիրանիի, և մե-
տաքսի, ու որդան կարմիրի վաճառքը, և ամէն
խունկի փայտերը, ու ամէն փղոսկրեայ աման-
ները, և ամէն պատուական փայտէ ու պղնձէ և
13 երկաթէ ու մարմարիոնէ ամանները, Եւ կինա-
մոնը, [ու ամոմոնը] և խունկերը, ու անուշահոտ
եղը, ու կնդրուկը, և գինին, ու ձէթը, և նա-
շիհը, ու ցորենը, և արջառները, ու ոչխարները,
և ձիերը, ու կառքերը, և մարմինները ու մար-
14 դոց հոգիները։ Եւ քու հոգիիդ ցանկացած
պտուղները քեզմէ գնաց, ու բոլոր շքեղ ու
փայլուն բաները քեզմէ կորսուեցաւ, և ալ բնաւ
15 պիտի չգտնես զանոնք։ Աս բաներուն վաճառա-
կանները՝ որ անկէ հարստացած էին, հեռուն
պիտի կայնին անոր տանջանքին վախէն՝ լալով
16 ու սուգ ընելով, Ու պիտի ըսեն, Վա՜յ, վա՜յ,
մեծ քաղաք, որ բեհեզ ու ծիրանի և որդան
կարմիր հագած էիր, ու ոսկիով և պատուական
քարերով ու մարգարիտներով զարդարուած էիր.
17 ինչու որ այնքան հարստութիւնը մէկ ժամու մէջ
փճացաւ։ Ու ամէն նաւավարները, և ան ամէնը

որ նաւով տեղ տեղ կ'երթան, ու նաւաստիները
և որոնք որ ծովու մէջ կը բանին՝ հեռուն կայ-
18 նեցան. Եւ տեսնելով անոր հրկիզութեանը ծուխը՝
կ'աղաղակէին ըսելով, Ո՞վ նման է աս մեծ քա-
19 ղաքին. Ու իրենց գլուխներուն վրայ հող ցանե-
ցին, և լալով ու սուգ ընելով՝ կ'աղաղակէին ը-
սելով, Վա՜յ, վա՜յ ան մեծ քաղաքին, որուն մէջ
իր պատուականութենէն հարստացան ամէնքը որ
նաւեր ունէին ծովուն վրայ. ինչու որ մէկ ժա-
20 մու մէջ ամայացաւ։ Ուրախացէք անոր վրայ,
երկինք ու սուրբ առաքեալներ և մարգարէներ,
որ Աստուած ձեր վրէժը անկէ առաւ։
21 Եւ մէկ զօրաւոր հրեշտակ մը քար մը առաւ
աղօրիքի մեծ քարի նման, ու ծովը ձգեց՝ ըսե-
լով, Ասանկ ուժով վար պիտի ձգուի Բաբելոն
22 մեծ քաղաքը, ու ալ պիտի չգտնուի։ Եւ քնա-
րահարներուն ու երաժիշտներուն և սրնգահար-
ներուն ու փողահարներուն ձայնը ալ պիտի
չլսուի քու մէջդ. և արհեստի վարպետ մը ալ
պիտի չգտնուի քու մէջդ, ու աղօրիքին ձայնը
23 ալ պիտի չլսուի քու մէջդ. Եւ ճրագին լոյսը
ալ պիտի չերևնայ քու մէջդ. ու փեսային ձայնը
և հարսին ձայնը ալ պիտի չլսուի քու մէջդ.
քանզի քու վաճառականներդ երկրի մեծամեծ-
ներն էին. ինչու որ քու կախարդութիւնովդ բո-
24 լոր ազգերը մոլորեցան։ Եւ մարգարէներուն ու
սուրբերուն ու երկրի վրայ բոլոր սպաննուած-
ներուն արիւնը անոր մէջը գտնուեցաւ։

Գլ. ԺԹ

1 Եւ անկէ ետքը շատ բազմութեան մեծ ձայն մը
լսեցի երկինքը՝ ըսելով, Ալէլուիա. փրկութիւն
ու փառք և պատիւ ու զօրութիւն մեր *Աստու-

*Ոմանք Տէր Աստուծոյն

2 ձայն. Ինչու որ ճշմարիտ ու արդար են անոր
դատաստանները, քանզի դատեց այն մեծ պոռ-
նիկը, որ իր պոռնկութիւնովը երկիրը ապակա-
նեց, ու իր ծառաներուն արեան վրէժը անոր
3 ձեռքէն պահանջեց։ Ու կրկին անգամ ըսին, Ա-
լէլուիա. ու անոր ծուխը յաւիտեանս յաւիտե-
4 նից կ'ելլէ։ Ու քսանըչորս երէցները ու չորս
կենդանիները ինկան ու երկրպագութիւն ըրին
Աստուծոյ՝ որ աթոռը կը նստի, ըսելով, Ամէն,
5 Ալէլուիա։ Ու աթոռէն ձայն մը ելաւ՝ ըսելով,
Մեր Աստուծոյն օրհնութիւն տուէք, իր բոլոր
ծառաները, ու դուք որ իրմէն կը վախնաք՝
6 պզտիկներ ու մեծեր։ Ու լսեցի շատ բազմութեան
ձայնի պէս, ու շատ ջուրերու ձայնի պէս, ու
սաստիկ որոտումներու ձայնի պէս՝ որ կ'ըսէին,
Ալէլուիա, ինչու որ [մեր] Ամենակալ Տէր Աստ-
7 ուածը թագաւորեց։ Խնդանք և ուրախանանք
ու փառք տանք անոր, քանզի Գառնուկին հարս-
նիքը հասաւ, ու անոր կինը ինքզինքը պատրաս-
8 տեց։ Ու իրեն տրուեցաւ որ մաքուր ու լուսա-
փայլ բեհեզ հագնի, (որ այն բեհեզը սուրբերուն
9 արդարութիւնն է։) Ու ինծի ըսաւ, Գրէ. Երա-
նելի են անոնք որ Գառնուկին հարսանեացը ընթ-
րիքին կանչուած են. ու ինծի ըսաւ, Ասոնք են
10 Աստուծոյ ճշմարիտ խօսքերը։ Ես ալ անոր ոտ-
քերուն առջեւ ինկայ, որ անոր երկրպագութիւն
ընեմ. ու ըսաւ ինծի, Զգուշացիր, մի՛ ըներ. ես
ալ քու ծառայակիցդ եմ ու քու եղ-
բայրներուդ, որոնք Յիսուսի վկայութիւնը ու-
նին. Աստուծոյ երկրպագութիւն ըրէ. (ինչու որ
Յիսուսի վկայութիւնը մարգարէութեան հոգին է։)
11 Ու տեսայ երկինքը բացուած. և ահա մէկ
ճերմակ ձի մը, ու անոր վրայ հեծնողը Հաւա-
տարիմ ու Ճշմարիտ կ'ըսուի, և արդարութեամբ
12 դատաստան կը տեսնէ ու կը պատերազմի. Ու

անոր աչքերը կրակի բոցի պէս էր, ու անոր
գլխուն վրայ շատ թագեր կար, ու գրուած ա-
նուն մը ունէր՝ որ մէկը չգիտեր, բայց միայն
13 ինքը. Ու արիւնով ներկուած հանդերձ մը հա-
գեր էր. ու անոր անունը Բան Աստուծոյ կ'ըսուի։
14 Ու երկնից մէջ եղող զօրքերը անոր ետեւէն կ'եր-
թային ճերմակ ձիերով, ճերմակ ու մաքուր բե-
15 հեզներ հագած։ Ու անոր բերնէն սրած սուր մը
կ'ելլէր, որ անով ազգերը զարնէ. ու ինքը եր-
կաթէ գաւազանով պիտի հովուէ զանոնք, ու
Ամենակալ Աստուծոյ սաստիկ բարկութեանը գի-
16 նիին հնձանը ինքը պիտի կոխէ։ Ու իր պատմու-
ճանին վրայ ու իր ազդրին վրայ գրուած գիր մը
ունէր, ԹԱԳԱՒՈՐ ԹԱԳԱՒՈՐԱՑ ԵՒ ՏԷՐ ՏԵՐԱՆՑ։
17 Ու մէկ հրեշտակ մը տեսայ՝ որ արեւին մէջը
կայներ էր, ու մեծ ձայնով աղաղակեց երկնից
մէջ թռչող բոլոր թռչուններուն՝ ըսելով, Եկէք՝
18 *Աստուծոյ մեծ ընթրիքին" ժողվուեցէք. Որ ու-
տէք թագաւորներուն մարմինները, ու հազարա-
պետներուն մարմինները, զօրաւորներուն մար-
մինները, ու ձիերուն և անոնց վրայ հեծնողնե-
րուն մարմինները, ու ամենուն մարմինները՝ թէ
ազատներուն և թէ ծառաներուն, թէ պզտիկ-
ներուն և թէ մեծերուն։
19 Ու տեսայ գազանը ու երկրի թագաւորները
ու անոնց զօրքերը մէկտեղ ժողվուած պատե-
րազմ ընելու անոր հետ՝ որ ձիուն վրայ հեծեր
20 էր, ու անոր զօրքերուն հետ։ Ու գազանը բռ-
նուեցաւ, ու անոր հետ սուտ մարգարէն՝ որ
անոր առջեւ նշաններ ըրաւ, որոնցմով մոլորցուց
գազանին դրոշմը ընդունողները, և անոր պատ-
կերին երկրպագութիւն ընողները. երկուքն ալ
ողջ ողջ ծծումբով վառած կրակին լիճը ձգուե-

*Ոմանք մեծ Աստուծոյ ընթրիքին

21 ցան։ Եւ ուրիշներն ալ սպաննուեցան ձիուն
վրայ հեծնողին սուրէն՝ որ իր բերնէն կ'ելլէր, ու
բոլոր թռչունները անոնց մարմիններէն կշտացան։

ԳԼ. Ի

1 Եւ հրեշտակ մը տեսայ՝ որ երկինքէն կ'իջնէր,
ու անդունդին բանալին և մեծ շղթայ մը ունէր
2 իր ձեռքը։ Ու բռնեց վիշապը այսինքն առջի օ-
ձը՝ որ Բանսարկուն ու Սատանան է, և կապեց
3 զանիկա հազար տարի։ Ու անդունդը ձգեց զա-
նիկա, և գոցեց ու վրայէն կնքեց, որ ալ չմո-
լորցնէ ազգերը՝ մինչև որ հազար տարին լմըն-
նայ, և անկէ ետքը պէտք է որ արձակուի անի-
կա քիչ մը ժամանակ։
4 Եւ աթոռներ տեսայ, ու նստան անոնց վրայ.
և անոնց դատաւորութիւն տրուեցաւ։ Նաև Յի-
սուսի վկայութեանը համար ու Աստուծոյ խօս-
քին համար գլխատուածներուն հոգիները տեսայ,
և անոնք որ երկրպագութիւն չըրին գազանին՝
ոչ ալ անոր պատկերին, ու անոր դրոշմը իրենց
ճակատներուն վրայ ու իրենց ձեռքին վրայ չըն-
դունեցին. և ապրեցան՝ ու Քրիստոսի հետ հա-
5 զար տարի թագաւորեցին։ Եւ ուրիշ մեռելները
չապրեցան մինչև որ հազար տարին կատարուե-
6 ցաւ. ասիկա է առջի յարութիւնը։ Երանելի և
սուրբ է ան որ առջի յարութեանը մէջ բաժին
ունի. ասոնց վրայ երկրորդ մահը իշխանութիւն
չունի, հապա անոնք Աստուծոյ և Քրիստոսի քա-
հանաները պիտի ըլլան, ու անոր հետ հազար
տարի պիտի թագաւորեն։
7 Եւ հազար տարին լրանալուն՝ պիտի արձակուի
Սատանան իր բանտէն. և պիտի ելլէ ու մոլոր-
ցընէ երկրի չորս անկիւնները եղող ազգերը՝
Գոգը ու Մագոգը, որ զանոնք պատերազմի

ժողվէ, որոնց համրանքը ծովու աւազին չափ է։
8 Ու երկրի ընդարձակութեանը մէջ ելան, և սուր-
բերուն բանակը ու սիրելի քաղաքը չորս կողմէն
9 պատեցին։ Եւ երկինքէն Աստուծմէ կրակ իջաւ
ու սպառեց զանոնք. և Բանսարկուն որ անոնք
մոլորցուց՝ ձգուեցաւ կրակի ու ծծումբի լիճին
10 մէջ, ուր որ էր գազանը, Եւ սուտ մարգարէն.
ու պիտի չարչարուին ցորեկ ու գիշեր յաւիտեանս
յաւիտենից։
11 Եւ մեծ ճերմակ աթոռ մը տեսայ, ու անոր
վրայ մէկը նստած, որուն երեսէն երկիրը ու եր-
12 կինքը փախան, և տեղ չգտնուեցաւ անոնց։ Եւ
տեսայ պզտիկ ու մեծ մեռելները՝ որ *Աստուծոյ
առջևը կայնած էին. ու գիրքերը բացուեցան, և
ուրիշ գիրք մը բացուեցաւ՝ այսինքն կենաց գիրքը.
և գիրքերուն մէջը գրուածներէն մեռելները
13 դատուեցան իրենց գործքերուն համեմատ։ Եւ
ծովը իր մէջի մեռելները տուաւ, ու մահը և
դժոխքը իրենց մէջի մեռելները տուին. ու ամէն
մէկը իրենց գործքերուն համեմատ դատուեցան։
14 Եւ մահը ու դժոխքը կրակի լիճին մէջը ձգուե-
15 ցան. ասիկա է երկրորդ մահը։ Եւ ով որ կենաց
գրքին մէջը գրուած չգտնուեցաւ, կրակի լիճին
մէջը ձգուեցաւ։

ԳԼ. ԻԱ

1 Եւ նոր երկինք մը ու նոր երկիր մը տեսայ. ին-
չու որ առջի երկինքը ու առջի երկիրը անցաւ,
2 և ալ ծով չկար։ †Եւ սուրբ քաղաքը նոր Երու-
սաղէմը տեսայ՝ որ երկինքէն Աստուծմէ կ'իջնէր,
իր էրկանը համար զարդարուած հարսի մը պէս

*Ոմանք՝ աթոռին
†Ոմանք՝ Եւ ես Յովհաննէս

3 պատրաստուած։ Ու երկինքէն մեծ ձայն մը լսե-
ցի՝ որ կ'ըսէր, Ահա Աստուծոյ խորանը մարդոց
մէջը, ու անիկա անոնց հետ պիտի բնակի. և ա-
նոնք անոր ժողովուրդը պիտի ըլլան, և Աստուած
ինքը անոնց հետը պիտի ըլլայ իբրև անոնց Աստ-
4 ուածը. Ու *ինքը անոնց աչքերէն բոլոր ար-
ցունքները պիտի սրբէ, և ալ մահ պիտի չըլլայ,
ոչ սուգ և ոչ աղաղակ և ոչ ցաւ պիտի ըլլայ ա-
5 կէ ետև. ինչու որ առջի բաները անցան։ Ու ան
որ աթոռին վրայ կը նստէր՝ ըսաւ, Ահա ամէն
բաները նոր կ'ընեմ. ու ըսաւ ինծի, Գրէ, ինչու
որ աս խօսքերը ճշմարիտ ու հաւատարիմ են։
6 Նաև ըսաւ ինծի, Եղաւ. ես եմ Ալֆա և Օմեղա՝
Սկիզբը ու Վերջը. ես ծարաւին ձրի պիտի տամ
7 կենաց ջուրին աղբիւրէն։ Ան որ կը յաղթէ, †ա-
մէն բաները պիտի ժառանգէ. ու ես անոր Աստ-
ուած պիտի ըլլամ, ան ալ ինծի որդի պիտի ըլ-
8 լայ։ Բայց վախկոտներուն, ու անհաւատներուն,
և պղծերուն, ու մարդասպաններուն, ու պոռ-
նիկներուն, և կախարդներուն, ու կռապաշտնե-
րուն, և բոլոր ստախօսներուն բաժինը կրակով
ու ծծումբով վառած լիճին մէջը պիտի ըլլայ, որ
է երկրորդ մահը։
9 Ու եօթը վերջին հարուածներով լեցուն եօթը
սկաւառակները ունեցող եօթը հրեշտակներէն
մէկը ինծի եկաւ, և հետս խօսեցաւ ու ըսաւ,
Եկուր ցուցընեմ քեզի հարսը՝ Գառնուկին կնիկը։
10 Ու հոգիով մէկ մեծ ու բարձր լեռան մը վրայ
տարաւ զիս, և ցուցուց ինծի սուրբ Երուսաղէմ
11 ‡քաղաքը, որ երկինքէն Աստուծմէ կ'իջնէր. Ու
Աստուծոյ փառքը ունէր, և անոր լուսաւորու-
թիւնը խիստ պատուական քարի նման էր՝ ակն-

*Ոմանք Աստուած †Ոմանք աս
‡Ոմանք մեծ քաղաքը

12 վանիի երևութով յասպիս քարի պէս։ Ու անոր
պարիսպը մեծ ու բարձր էր, և տասուերկու
դռներ ունէր, ու դռներուն վրայ տասուերկու
հրեշտակներ կար, և դռներուն վրայ անուններ
գրուած էր՝ այսինքն Իսրայելի որդւոցը տասու-
13 երկու ցեղերուն անունները։ Արևելեան կողմէն
երեք դուռ, ու հիւսիսային կողմէն երեք դուռ,
և հարաւային կողմէն երեք դուռ, ու արևմտ-
14 եան կողմէն երեք դուռ։ Ու քաղաքին պարիս-
պը տասուերկու հիմեր ունէր ու անոնց վրայ
Գառնուկին տասուերկու առաքեալներուն [տաս-
15 ուերկու] անունները գրուած էր։ Ու իմ հետս
խօսողը ձեռքը ոսկիէ եղէգ մը ունէր, որ չափէ
քաղաքը և անոր դռները ու անոր պարիսպները
16 չափէ։ Ու քաղաքը քառակուսի էր, ու անոր
երկայնութիւնը լայնութեանը չափ էր. և քա-
ղաքը նոյն եղէգով տասուերկու հազար ասպա-
րէզ չափեց, անոր երկայնութիւնը ու լայնու-
17 թիւնը և բարձրութիւնը հաւասար էր. Ու անոր
պարիսպը հարիւր քառասունըչորս կանգուն չա-
փեց, մարդու չափով՝ այսինքն հրեշտակին չափո-
18 վը։ Ու անոր պարիսպին շինուածքը յասպիս քարէ
էր, ու քաղաքը զուտ ոսկի էր մաքուր ապակիի
19 նման։ Ու քաղաքին պարիսպին հիմերը ամէն տե-
սակ պատուական քարերով զարդարուած էին. ա-
ռաջին հիմը յասպիս էր, երկրորդը՝ շափիւղայ, եր-
20 րորդը՝ քաղկեդոն, չորրորդը՝ զմրուխտ, հինգե-
րորդը՝ եղնգնաքար, վեցերորդը՝ սարդիոն, եօթ-
ներորդը՝ ոսկեքար, ութերորդը՝ բիւրեղ, իննե-
րորդը՝ տպազիոն, տասներորդը՝ քրիսոպրասոս,
մետասաներորդը՝ յակինթ, երկոտասաներորդը՝
21 ամեթոյս։ Ու տասուերկու դռները տասուերկու
մարգարիտ էին, ամէն մէկ դուռը մէյմէկ ամբողջ
մարգարիտէ էր. ու քաղաքին հրապարակը մա-
22 քուր ոսկի էր թափանցիկ ապակիի նման։ Ու

անոր մէջը տաճար չտեսայ, ինչու որ Տէր Աստուած
23 Ամենակալն ու Գառնուկը անոր տաճարն է։ Եւ
քաղաքը արեւի ու լուսնի պէտք չունի, որ զա-
նիկա լուսաւորեն, ինչու որ Աստուծոյ փառքը
զանիկա կը լուսաւորէ, ու անոր ճրագը Գառ-
24 նուկն է։ Եւ [փրկուած] ազգերը անոր լոյսովը
պիտի քալեն, ու երկրի թագաւորները իրենց
25 փառքը ու պատիւը անոր մէջը պիտի բերեն։ Եւ
անոր դռները ցորեկը պիտի չգոցուին. (վասն զի
26 հոն գիշեր պիտի չըլլայ.) Եւ ազգաց փառքը ու
27 պատիւը անոր մէջը պիտի բերեն։ Եւ հոն բնաւ
*անմաքրութիւն մը պիտի չմտնէ, ոչ ալ պղծու-
թիւն ու ստութիւն գործող մը, հապա միայն
անոնք՝ որ Գառնուկին կենաց գրքին մէջը
գրուած են։

ԳԼ. ԻԲ

1 Եւ ինծի կենաց ջուրի †գետ մը ցուցուց ակնվա-
նիի պէս պայծառ, որ կ՚ելլէր Աստուծոյ ու Գառ-
2 նուկին աթոռէն։ Եւ ան քաղքին հրապարակին
մէջ, ու ան գետին մէկ կողմէն ու միւս կողմէն
կենաց ծառ կար՝ որ տասուերկու [illegible] պտուղ
կը բերէր, ու ամէն ամիս իր պտուղը կու տար.
և ան ծառին տերեւները հեթանոսներուն բժըշ-
3 կութիւն կ՚ըլլար։ Եւ ալ բնաւ նզովք պիտի չըլ-
լայ. ու անոր մէջը պիտի ըլլայ Աստուծոյ ու
Գառնուկին աթոռը, և անոր ծառաները պիտի
4 պաշտեն զանիկա. Եւ անոր երեսը պիտի տեսնեն,
ու անոր անունը իրենց ճակատներուն վրայ պի-
5 տի ըլլայ։ Եւ հոն՝ ալ գիշեր պիտի չըլլայ, և ճը-
րագ ու արեւու լոյս պէտք չէ. քանզի Տէր Աստ-

---

*Ոմանք՝ անմաքրութիւն ընող

†Ոմանք՝ մաքուր գետ

ուած պիտի լուսաւորէ զանոնք, և յաւիտեանս
յաւիտենից պիտի թագաւորեն։
6 Եւ ըսաւ ինծի, Աս խօսքերը հաւատարիմ են
ու ճշմարիտ. և *սուրբ մարգարէներուն Տէր
Աստուածը իր հրեշտակը ղրկեց՝ իր ծառանե-
րուն ցուցընելու ինչ որ շուտով պէտք է ըլլալ.
7 Ահա ես շուտով կու գամ. Երանի անոր որ կը
պահէ աս գրքիս մարգարէութեան խօսքերը։
8 Եւ ես Յովհաննէս լսեցի ու տեսայ աս բանե-
րը. և երբ լսեցի ու տեսայ, ինկայ որ երկրպա-
գութիւն ընեմ ան հրեշտակին ոտքերուն առ-
9 ջեւ՝ որ աս բաները ինծի կը ցուցընէր։ Եւ ըսաւ
ինծի, Զգուշացիր, մի՛ ըներ. ինչու որ ես քուկին
ու քու եղբայրներուդ մարգարէներուն և աս
գրքիս խօսքերը պահողներուն ծառայակիցն եմ.
10 Աստուծոյ երկրպագութիւն ըրէ։ Եւ ըսաւ ինծի,
Աս գրքիս մարգարէութեան խօսքերը մի կնքեր,
11 ինչու որ ժամանակը մօտ է։ Ան որ անիրաւու-
թիւն կ՚ընէ՝ ալ անիրաւութիւն թող ընէ, ու ան
որ աղտոտ է՝ ալ աղտոտ ըլլայ, և ան որ արդար
է՝ ալ արդար ըլլայ, ու ան որ սուրբ է՝ ալ սուրբ
12 ըլլայ։ Ահա ես շուտով կու գամ, և իմ վարձքս
իմ հետս է՝ ամէն մէկուն իր գործքին համեմատ
13 հատուցանելու։ Ես եմ Ալֆա և Օմէղա՝ Առա-
14 ջինը ու Վերջինը՝ Սկիզբը և Վախճանը։ Երանելի
են անոնք որ անոր պատուիրանքները կը կա-
տարեն, որ իշխանութիւն ունենան կենաց ծառին
15 վրայ, և դռներէն ներս քաղաքը մտնեն։ Բայց
դուրս պիտի մնան շուները ու կախարդները և
պոռնիկները ու սպանութիւն ընողները և կռա-
պաշտները ու ան ամէնը որ ստութիւն կը սիրէ
և կ՚ընէ։
16 Ես Յիսուս իմ հրեշտակս ղրկեցի՝ աս բաները

---

*Ոմանք՝ մարգարէից հոգիներուն

ձեզի վկայելու եկեղեցիներուն *մէջ. Ես Դաւիթի
արմատը ու ցեղն եմ, ու առաւօտեան պայծառ
17 աստղը։ Ու Հոգին ու հարսը կ'ըսեն, Եկուր. և
ան որ կը լսէ՝ թող ըսէ, Եկուր. ու ան որ ծա-
րաւ է՝ թող գայ, և ան որ կ'ուզէ՝ կենաց ջուրը
ձրի առնէ։
18 †Ես կը վկայեմ ամենուն՝ որ աս գրքիս մար-
գարէութեան խօսքերը կը լսէ. թէ որ մէկը ա-
սոնց վրայ բան մը աւելցնէ, Աստուած ալ ա-
նոր վրայ պիտի աւելցնէ ան հարուածները որ աս
19 գրքիս մէջը գրուած են։ Ու թէ որ մէկը աս մար-
գարէութեանս գրքին խօսքերէն բան մը պակ-
սեցնէ, Աստուած ալ անոր բաժինը պիտի պակ-
սեցնէ կենաց ‡գրքէն և սուրբ քաղաքէն ||որ
20 աս գրքիս մէջը գրուած են. Աս բաներուն վկա-
յութիւն տուողը կ'ըսէ, Այո, շուտով կու գամ
21 ես։ Ամէն, եկուր, Տէր Յիսուս։ Մեր Տէրոջը Յի-
սուս Քրիստոսի շնորհքը **ձեր ամենուն՝ հետ ըլ-
լայ։ Ամէն։

*կամ վրայով
‡Ոմանք ծառէն
||Ոմանք և ան բաներէն որ
**Ոմանք բոլոր սուրբերուն
†Ոմանք Քանզի

ՎԵՐՋ

-75.000-

2)

ՀՀ Ազգային գրադարան
NL1016430

I
1048